



ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԳԱԼՈՒՄՑ ԿԻԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՂՈՆՑ

Ե Ր Կ Ե Ր

ՀԻՆԳ ՀԱՏՈՐՈՎ

Դ

**ՔՆՆԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ**

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱՎՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2009



FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Աղոնց Ն. Գ.

Ա 205 Երկեր. հատ. Դ., Քննական պատմություն Հայոց/Հրատարակության պատրաստեց Պ. Հ. Հովհաննիսյանը. Եր.: ԵՊՀ հրատ., 2009.- 720 էջ + 2 ներդիր:

Նիկողայոս Աղոնցի երկերի չորրորդ հատորն ընդգրկում է ականավոր հայագետի «կարապի երգը»՝ մահվան նախօրյակին գրված քառահատոր «Քննական պատմություն Հայոց»-ի առաջին՝ «Հայաստանի պատմություն: Ակունքները. X-VI դդ. Ք. ա.» հատորը, ինչպես նաև հայ ժողովրդի կազմավորմանը վերաբերող հոդվածները: Ընթերցողի ուշադրությանն ենք մերկայացնում նաև անավարտ մնացած երկրորդ-երրորդ հատորներից առանձին՝ առավել ամբողջական հատվածներ:

Հասցեագրվում է հայագետներին և ընթերցող հանրությանը:

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-5-8084-1146-3

© Հովհաննիսյան Պ. Հ., 2009 թ.
© ԵՊՀ, հրատարակություն, 2009 թ.

Խմբագրական հանճնաժողով

**Հովհաննիսյան Պ. Հ.
Մադոյան Ա. Գ.
Ստեփանյան Պ. Գ.**

Հատորը հրատարակության պատրաստեց

Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՂՈՆՑԻ «ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ»
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

1946 թ. Փարիզում ֆրանսերենով, հետմահու, լույս տեսավ Նիկողայոս Աղոնցի «Հայաստանի պատմություն: Ակունքները. X-VI դդ. Ք. ա.» սովորածավալ աշխատությունը¹, որը ներկայացնում էր նշված ժամանակաշրջանի հայ ժողովրդի քաղաքական պատմության և ներքին կյանքի մանրամասները²: Բնական է, որ այս գրքում հիմնական շեշտը դրված էր ուրարտական պատմաշրջանի (Ք. ա. X-VI դդ.) իրադարձությունների վրա: Դա է պատճառը, որ պատմագիտության մեջ տարբեր առիթներով կարծիք է հայտնվել, թե իբր Ն. Աղոնցը կյանքի վերջին շրջանում լրջորեն զբաղվել է Ուրարտուի պատմության ուսումնասիրությամբ և նրա այդ հետազոտության արդյունքները տեղ են գտել նշված գրքում³: Քննադատությունը ևս, թեև ըստ արժանվույն գնահատեց կատարված վիթխարի ու կարևոր աշխատանքը⁴, սակայն միևնույն ժամանակ տարակուսանք արտահայտեց: Հայտնի է, որ Ն. Աղոնցը և կրթությամբ և նախասիրություններով միջնադարագետ էր, համաշխարհային համբավ ու ճանաչում ունեցող բյուզանդագետ: Սույն բնագավառին վերաբերող նրա կարևոր հոդվածները լույս էին տեսնում եվրոպական նշանավոր բյուզանդագիտական հանդեսների էջերում, մեծագույն պատիվ էր համարվում նրա համագործակցությունը համաշխարհային բյուզանդագիտական կենտրոնների հետ: Սակայն ինչո՞վ էր պայմանավորված նշանավոր բյուզանդագետի, այն էլ կյանքի վերջալույսին, այդ անսպասելի հրապուրանքը և իր նախասիրած

¹ Սույն ներածական խոսքի ընդարձակ տարբերակը տե՛ս «Պատմա-քանասիրական հանդես», 2001, № 1, էջ 64-78:

² Nicolas Adontz, Histoire d' Arménie. Les origines du X siècle au VI (Av. J. C.), Paris, 1946, 445 p. (այսուհետև՝ NAHA): Տե՛ս նաև սույն գրքի Վ. Պ. Սեդրոսյանի հայերեն թարգմանությունը՝ Երևան, 1972, 430 էջ (այսուհետև՝ ՆԱՀՊ):

³ Ն. Վ. Հարությունյան, Նիկողայոս Աղոնցը և ուրարտագիտությունը, «Պատմա-քանասիրական հանդես», 1997, № 2, էջ 215-224:

⁴ Գրախոսությունները տե՛ս «Էջմիածին», 1947, մայիս-հունիս, էջ 90: «Հայաստանի կոչնակ», Նյու Յորք, 1948, № 28, էջ 683-685, № 31, էջ 730-731, № 33-39: «Հայրենիք», Բոստոն, 1950, № 4(291), էջ 112:

պատմաշրջանից կտրուկ շրջադարձը դեպի Հայաստանի պատմական անցյալի հեռավոր խորքերը՝ Զ. ա. X-VI դարերը:

Ինչպես ցույց են տալիս փաստերը, Ն. Ադոնցը երբեք նպատակ չի ունեցել հատուկ զբաղվելու Ուրարտուի պատմության ուսումնասիրությամբ, և Հին Հայաստանի պատմությանը նվիրված խնդրո առարկա գիրքը չպետք է դիտել նշված պարագծում: Իրականում խոսքն ավելի մեծ ու վիթխարի մեկ այլ աշխատանքի մասին էր՝ բազմահատոր մի աշխատության, որտեղ Ուրարտուի պատմությանը նվիրված հատվածը միայն մի մասն էր կազմելու այն ամբողջի, որ անվանի պատմաբանը պատրաստվում էր կյանքի կոչել օր առաջ: Նրա կյանքի մեծ ու վեհ նպատակն էր ստեղծել «Հայոց քննական պատմություն», մի բազմահատոր աշխատություն, որը բոլոր առումներով նորույթ կլիներ բովանդակ հայագիտական գրականության մեջ: Միևնույն ժամանակ այն կհամապատասխաներ եվրոպական չափանիշներին և օտարներին կներկայացներ հայ ժողովրդի գիտական ու անաչառ պատմության լուսաբանումը:

Համակարգված և համընդհանուր հայոց պատմության գիրք ստեղծելու գաղափարը Ադոնցի մտքում ծագել էր դեռևս 1920-ական թվականների վերջերին, երբ Փարիզում գործող Սանասարյան ժողովրդական համալսարանի¹ ուսանողների համար վարում էր «Հայոց պատմություն» դասընթացը: Նրա ունկնդիրներից Հ. Պերպերյանը վկայում է. «Ֆրանսահայ երիտասարդ գրողների «Հարդգող» միությունը Փարիզի մեջ 1927-են 1928-ի տարիներուն հաստատեց ժողովրդական համալսարան մը, բազմաթիվ ճյուղերով: Հայագիտության բաժինն էլ հանձնված էր փրոֆ. Ն. Ադոնցին, ուր բազմահմուտ գիտնականը կը դասավանդեր Հայոց քննական պատմություն»²: Թեև համալսարանը կարճ կյանք ունեցավ և պարապմունքները շուտով դադարեցին, սակայն Ն. Ադոնցը շարունակում էր հայոց պատմության տարբեր պատմաշրջանների վերաբերյալ դասախոսություններով հանդես գալ երիտասարդական, ուսանողական, գրական, արվեստագիտական և այլ միությունների հրավիրած հանդեսների ժամանակ³: Տարիների ընթացքում նա այդ նյութերն սկսում է դասակարգել և ենթարկել մի

ընդհանուր համակարգի, թեև «Հայոց պատմության» ստեղծման աշխատանքները կանոնավոր ու հետևողական ընթացքի մեջ դնելու ուղությամբ որևէ գործնական քայլ չի ձեռնարկում: Բրյուսել տեղափոխվելուց հետո (1931 թ. աշուն), որտեղ գլխավորում էր տեղի Ազատ համալսարանի հայագիտության ամբիոնը և դասավանդում «հայագիտական և հայ-բյուզանդական խնդիրների սահմաններում»¹, Ադոնցի համար առավել նպաստավոր պայմաններ են ստեղծվում իր ծրագիրն իրականացնելու համար: Հիմնական արգելքը հայագիտական գրքերի, մանավանդ հայաստանյան հրատարակությունների, պակասն էր: Նույն օրերին Լոնդոն՝ Արշակ Սաֆրաստյանին հղած նամակներից մեկում նա գանգատվում է. «Այստեղ գրքերի սով է, որ շատ է դժվարացնում աշխատությանս (խոսքը «Հայոց պատմության» մասին է - Պ. Հ.) պատրաստումը»²: Նույն նամակով նա Սաֆրաստյանին է դիմում հետևյալ խնդրանքով. «Մի անգամ ասացիք ինձ, եթե չեմ սխալվում, որ Աշխարխնդրանքով. «Մի անգամ ասացիք ինձ, եթե չեմ սխալվում, որ Աշխարհաբեկ Քալանթարի մի հնագիտական աշխատություն ունեք»³: Եթե կարող եք դրկեք ինձ մի քանի ժամանակով»: Դժվար չէ ենթադրել, որ Հայաստանի հնագիտությանը վերաբերող Ա. Քալանթարի աշխատությունն Ադոնցին անհրաժեշտ էր ոչ միայն սոսկ ընթերցանության, այլ գիտական ուսումնասիրությունների համար: Ա. Սաֆրաստյանն ինքը հավաստում է. «Վերջին անգամ սիրելի Ադոնցին տեսա 1938-ին, իր մնայուն գանգատն էր գիրք չունենալն»⁴: Արդյոք նույն նպատակով չէր, որ Երուսաղեմի, Վիեննայի, Վենետիկի, Փարիզի հայագիտական հիմնարկներից ու անհատ հայագետներից պարբերաբար գրքեր էր խնդրում: Այսպես, 1939 թվականի ընթացքում նա Վիեննայի Մխիթարյան միաբանության տպարանից խնդրել է Ն. Ակինյանի «Զաքարիա եպիսկոպոս Գնունյանց», «Կյուրիոն կաթողիկոս վրաց», Երեմիա Քյոնուրճյանի «Ստամպոլոյ պատմութիւն» ուսումնասիրությունները և բազմաթիվ այլ գրքեր⁵:

Ինչպես ակներև է, թեև Ն. Ադոնցը վաղուց էր մտորում «Հայոց քննական պատմություն» ստեղծելու մասին և անգամ նախապատրաս-

¹ Տե՛ս Հ. Ադոնցյան, Ն. Ադոնցի նամակները, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3, էջ 118:

² Տե՛ս ՀՀ Ազգային արխիվ, Ա. Սաֆրաստյանի ֆոնդ, 412, ցուցակ 1, գործ 872, ք. 4:

³ Կարծում ենք խոսքը վերաբերում է Ա. Քալանթարի «Քարե դարը Հայաստանում» աշխատությանը, տե՛ս «Նորք», Երևան, 1925, № 5, 6:

⁴ Ա. Սաֆրաստյան, Ուսուցչապետ Ն. Ադոնցի Պատմություն Հայաստանի, տե՛ս «Հայաստանի կոչման», Նյու Յորք, 1948, № 31, էջ 730:

⁵ Տե՛ս Վիեննայի Մխիթարյան միաբանության արխիվ, պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, № 32:

¹ Սանասարյան համալսարանի և Ադոնցի պարապմունքների մասին տե՛ս «Հառաջ», Փարիզ, 1928, 13, 17 հունիսի: «Հայրենիք», Բոստոն, 1928, № 5, էջ 174-178:

² Հ. Պերպերյան, Քրոնիկ. Փրոֆ. Ն. Ադոնց, տե՛ս «Զվարթնոց», Փարիզ, 1944, էջ 233: Հմմտ. «Հառաջ», 1928, 13 հունիսի:

³ «Հայ մշակույթի օր», Փարիզ, 1932, էջ 153-155:

տական ինչ-ինչ աշխատանքներ էր ձեռնարկել, սակայն առարկայորեն իր ծրագրերն սկսեց իրականացնել միայն 1930-ական թվականների վերջերին: Դա պայմանավորված էր երկու կարևոր հանգամանքով: Հետեղեռնյան շրջանում բազմաթիվ հայեր հաստատվել էին Ֆրանսիայում և եվրոպական այլ երկրներում: Հայ գաղթականների թվառ ու անտեղունչ վիճակը, եվրոպական քաղաքներից հեռացված հայերի նկատմամբ տարածված քամահրական վերաբերմունքը թյուր կարծիքներ էին ստեղծել հայերի մասին, որպես ժողովրդի: Հաճախ, մասնավորապես Գերմանիայում և Ֆրանսիայում, հայերը դիտվում էին որպես անհայրենիք ու պատմություն չունեցող մի ժողովուրդ՝ դրանից հետևող ճնշումների, հետապնդումների, բացահայտ արգահատական վերաբերմունքի անցանկալի՝ դրսևորումներով: Անշուշտ, Ադոնցից առաջ բավականին հետևողական աշխատանք կատարվել էր հայերի նկատմամբ նման թյուրըմբռնումները սրբագրելու ուղղությամբ: Այստեղ պետք է հիշատակել այն վիթխարի ծառայությունը, որ մատուցել է հայությանը նշանավոր մտավորական Արշակ Չոպանյանը: Նա Ադոնցից ավելի վաղ հայության մասին ֆրանսերեն բազմահատոր մի աշխատության ծրագիր էր հղացել և մասամբ իրականացրել: Ա. Չոպանյանի ջանքերով եվրոպական հասարակայնությանն էին ներկայացվել հայ գրականությանն ու մանրանկարչությանը, ընդհանրապես արվեստին վերաբերող «Վարդենիք Հայաստանյայց» եռահատոր պատկառելի աշխատությունը¹: Ցնցող էր ու անկրկնելի Չոպանյանի այս հատորների տպավորությունը եվրոպական գրական-հասարակական միջավայրում: Դրանք ոչ միայն կարևոր դեր խաղացին հայ մշակույթի տարածման և պրոպագանդման, այլև հայերի՝ որպես ժողովրդի մասին առավել դրական, ամբողջական ու ստույգ պատկերացում կազմելու գործում: Ե՛հիշտ է նկատված, որ Չոպանյանի այս գործը «հուշարձան էր եվրոպայի սրտում ի պատիվ հայ մշակույթի»²:

Սակայն որքան էլ կարևոր ու անգնահատելի էր Ա. Չոպանյանի կատարած դերը՝ հայերին եվրոպական հասարակայնությանը ներկայացնելու ուղղությամբ, բայց այն բավարար չէր: Անհրաժեշտ էր նաև հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի պատմագիտական վերլուծության միջոցով վեր հանել ու ցույց տալ նրա տեղն ու դերը համաշխարհային պատմության մեջ: Անհրաժեշտ էր ստեղծել Չոպանյանի

նշված աշխատությանը հավասար, սակայն զուտ պատմագիտական մի երկ, որն ընթերցելուց հետո կարելի կլիներ ասել՝ «Ահա մի ժողովուրդ՝ մեծ իր հանճարով, երազով ու ողբերգությամբ» (Ա. Իսահակյան)¹: Անհրաժեշտ էր ստեղծել մի աշխատություն, որի շնորհիվ Արևմուտքը ճիշտ պատկերացում կկազմեր հայերի բնօրրանի, նրանց զարգացման օրինաչափությունների, ապրած ցնցումների, տարածքային ու մարդկային կորուստների մասին, կիմանար դառն և սոսկալի ճշմարտությունը հայերի ապրած ահավոր ողբերգության, նրա տարագիր ու թվառ վիճակի իրական պատճառների մասին:

Ահա թե ինչու «Հայոց քննական պատմություն» աշխատության գրելն Ադոնցի համար անհրաժեշտություն էր, դա լինելու էր նրա հավատամքը, պարտքն ու տուրքն իրեն ծնող ժողովրդի, հեռավոր հայրենիքի հանդեպ: Ուրիշ ո՞վ, եթե ոչ ինքը՝ բազմաթիվ լեզուների քաջածանոթ, պատմագիտական հզոր պատրաստության տեր, համաեվրոպական ճանաչում և հեղինակություն վայելող պատմաբանը, շուրջ 40 տարի իրեն հայոց պատմության հիմնահարցերի մշակմանը նվիրած գիտնականը, պիտի ձեռնարկեր նման մի պատասխանատու աշխատանքի ստեղծումը: Եվ որքան ճիշտ է նկատել ֆրանսիացի ակադեմիկոս պատմաբան, ակադեմիկոս Ռենե Գրուսեն, թե Ադոնցն իր կյանքի վերջին մարիներին այնքան էր առաջացել նյութերի պատրաստության մեջ, որ կարող էր «շենքը կանգնեցնելու գործը սկսել»²:

Երկրորդ հանգամանքը, թեև ավելի կազմակերպչական-տեխնիկական բնույթ էր կրում, սակայն արագացրեց Ադոնցի մտահղացման իրականացումը: Հայտնի է, որ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) 1930 թվականից Մելքոնյան հիմնադրամի եկամուտներով տարեկան 3000 ոսկի էր տրամադրում Խորհրդային Հայաստանին՝ հայագիտական ուսումնասիրությունների հրատարակման համար³: Մինչև 1937 թվականը այդ գումարների հաշվին հրատարակվեց շուրջ 30 գիտական մեծարժեք գիրք: Սակայն խորհրդային իշխանությունները 1937 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ Մելքոնյան ֆոնդի գործունեությունը Հայաստանում արգելեցին⁴: ՀԲԸ միության կենտրոնական վարչությունը, բնականաբար, չէր կարող Հայաստանի համար նախատեսված գումարներն անուշադրության մատնել կամ օգ-

¹ A. Tchobanian, La Roseraie d' Arménie, t. I-III, Paris, 1918, 1923, 1929.

² Կ. Դալարյան, Արշակ Չոպանյան, Երևան, 1987, էջ 363:

¹ «Գրական թերթ», 1965, 29 հոկտեմբերի:

² René Grousset, Préface, տե՛ս NAHA, p. IV, հմմտ. ՆԱՀՊ, էջ 4:

³ Տե՛ս «Միություն», Փարիզ, 1929, № 128, էջ 118:

⁴ «Խորհրդային Հայաստան», 1937, 8 դեկտեմբերի:

տագործել այլ նպատակներով, ուստի 1939 թ. որոշում կայացրեց այդ գումարների մի մասը հատկացնել «պատմական և գրական մեծարժեք երկերու տպագրության» համար: Իրադարձություններին քաջատեղյակ Հրանտ-Սամուելը վկայում է. «Երբ Հայաստանի դուռները բոլորովին փակվեցան տարագիր հայության առջև և Մելքոնյան ֆոնդի դրամները կարելի չեղավ Հայաստան փոխադրել հատկացնելու համար հայ պատմության և մշակույթի վերաբերյալ նյութերու հրատարակության, Հայ բարեգործական ընդհանուր միությունը որոշեց Մելքոնյան ֆոնդի գումարները հատկացնել արտասահմանի մեջ նույն նյութերի մասին գրվելիք գործերի տպագրության»¹: Այդ աշխատանքները կազմակերպելու նպատակով ԴԲԸ միության կենտրոնական վարչությունը Փարիզում ստեղծեց Մելքոնյան հրատարակչական ֆոնդի արտասահմանյան հանձնախումբ, որի կազմի մեջ մտան նշանավոր գիտնականներ և մասնագետներ, այդ թվում Ն. Ադոնցը: Հանձնախմբի նախագահ ընտրվեց բարեգործականի պատասխանատուներից Լ. Կյունուշկերտանը (Լևոն Կերտան), իսկ քարտուղար՝ Արամ Անտոնյանը²: Հանձնախումբը կազմեց «Խմբագրվելիք և մշակվելիք» գրքերի մի ցուցակ, որի մեջ տեղ գտան Ա. Չոպանյանի, Ա. Սազրգյանի, Լ. Բաշալյանի, Ս. Տեր-Ներսեսյանի ուսումնասիրությունները, Տիրայր արքեպ. Տեր-Հովհաննիսյանի «Ֆրիկի դիվանը», Արիստակես Վարդանյանի «Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքի մեկնութիւն» երկասիրության ոսկեդարյան թարգմանության քննական բնագիրը և այլն»³:

Հայոց պատմությունը շարադրելու Ն. Ադոնցի ծրագիրը հավանության արժանացավ Մելքոնյան հրատարակչական ֆոնդի արտասահմանյան հանձնախմբի կողմից. «Հանձնաժողովը միաձայն որոշեց տպագրել Հայոց հնագույն պատմության վերաբերյալ պրոֆ. Ն. Ադոնցի աշխատությունը, որը պետք է կազմեր „Հայ ժողովրդի պատմության“ բազմա-հատորյակի առաջին հատորը»⁴: Հետաքրքիր է, որ հանձնախումբը

¹ Հրանտ-Սամուել, Նիկողայոս Ադոնց, տե՛ս «Ազատ Հայաստան», Բեռլին, 1943, № 1, էջ 12: Հմտ. նույնի՝ Նիկողայոս Ադոնց. կյանքն ու գործը, «Հայկաչեն», գիրք երկրորդ, Փարիզ, 1948, էջ 37:

² Ա. Չոպանյան, Նիկողայոս Ադոնց. բազմավաստակ քանասերը, «Անահիտ». Փարիզ, 1949, ԺԵ տարի, № 1, էջ 33:

³ Հետաքրքրությունից զուրկ չէ Ն. Ադոնցի առաջարկը Մելքոնյան հրատարակչական ֆոնդի պատասխանատուներին, թե ի՞նչ գրքեր է նպատակահարմար տպագրել (տե՛ս Համագրայինի Բեյրութի գրական պահոց, պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան Ձ/Ա- 8, ք. 5):

⁴ Տե՛ս NAHA, ք. XIII. Տարակուսանքի տեղիք է տալիս գրքի հայերեն թարգմանությունում ոչ միայն Ն. Ադոնցի կենսագրական ակնարկի, այլև նշանավոր պատմաբան, պրոֆ. Անրի

խոստացավ ոչ միայն հոգալ գրքի հրատարակության հետ կապված բոլոր ծախսերը, այլև իր 1939 թ. մայիսի 25-ի նիստում որոշեց Ադոնցին առաջարկել միաժամանակ կազմակերպել նաև ֆրանսերեն բազմահատորյակի հայերեն թարգմանության հարցը¹: Սույն իրողությունը հաստատում է նաև Ա. Չոպանյանը. «Մելքոնյան հրատարակչական ֆոնդի արտասահմանյան հանձնախումբը խնդրեց Ն. Ադոնցին, որ իր ֆրանսերենով գրել սկսած Հայոց պատմությունը հայերեն լեզվով ալ շարադրե»²: Դժվար է ասել Ն. Ադոնցը որևէ գործնական քայլ կատարել է Մելքոնյան ֆոնդի այս առաջարկն ի կատար ածելու ուղղությամբ, թե ոչ: Մեր ձեռքի տակ եղած նյութերն այդ մասին լուր մե: Սակայն մի բան ակներև է՝ նրա ամբողջ ուշադրությունն ու ժամանակը բեռնված էին ֆրանսերեն «Հայոց քննական պատմության» վրա, չհաշված զուգահեռաբար շարունակվող Մովսես Կաղանկատվացու Պատմության քննությունը: Համեմատության կարգով նշենք, որ եթե 1938 թ. նա հրատարակել է 11 ամուն ուսումնասիրություն, որից վեցը ֆրանսերենով և այդ թվում «Սամուել Հայը բուլղարների թագավոր» մենագրությունը³, ապա 1939 թ. հրատարակել է ընդամենը երկու հոդված, իսկ 1940 և 1941 թվականներին՝ և ոչ մեկը: Անգամ մերժել է «Հայրենիք» ամսագրի՝ «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի առթիվ հատուկ հոդված գրելու առաջարկը և ստիպված է եղել արդարանալ. «Ցավում եմ, որ ոչ մի հնարավորություն կա գլուխ հանելու այն հոդվածները, որ ծրագրել եմ տարիներ ի վեր „Հայրենիք“-ի համար»⁴: Բնականաբար, նա զբաղված էր իր գլխավոր ծրագրի՝ «Հայոց պատմության» ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքներով: Արդեն նախընթաց ուսումնասիրությունները, որ «մեծ մասով մասնավոր խնդիրների էին վերաբերում, մի տեսակ նախապատրաստություն էին ընդհանուր կարգավորյալ համադրության համար»⁵: Նորությունը Հայաստանի նախապատմական և հնագույն դարաշրջանների պատմության հիմնահարցերն էին, որոնք Ադոնցը մանրամասն ու խորությամբ ուսումնասիրում է մասնագիտական գրականության միջոցով: Հենց սկզբից նա նախաձեռնեց Հայաստանի քննական պատմության

Գրեզուարի գնահատական խոսքի բացակայությունը: Վերջինիս հայերեն թարգմանությունը տե՛ս «Ալիք», օրաթերթ, Թեհրան, 1946, 2 ապրիլի, № 73; 7 ապրիլի, № 76:

¹ Համագրայինի Բեյրութի գրական պահոց, պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան Գ/Ա-8:

² Ա. Չոպանյան, Նիկողայոս Ադոնց..., էջ 33:

³ N. Adontz, Samuel l'Arménien, roi des Bulgares, Bruxelles, 1938, 63 p.

⁴ Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1963, № 5, էջ 25:

⁵ Գ. Հովսեփյանց, Պրոֆ. Ն. Ադոնց, տե՛ս «Հասկ», Անթիլիաս, 1954, № 3, էջ 92:

«ամենից դժվար մասը՝ Հայաստանի հին պատմությունը, Բ. ա. X դարից մինչև Բ. ա. VI դարը»¹, հարցեր, որոնք նախապես երբեք չէր հետազոտել: Ադոնցը ստիպված էր լրջորեն ու հիմնավորապես ուսումնասիրել գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով լույս տեսած շուրջ 100-ի հասնող մասնագիտական գրքեր, խեթական, ասորական և ուրարտական արձանագրությունների տպագիր ժողովածուներ, ծանոթանալ Հայաստանի սեպագրական շրջանի պատմությանը նվիրված բոլոր հայտնի աշխատություններին:

«Հայոց քննական պատմության» կանոնավոր շարադրանքը Ադոնցը սկսեց 1939 թ. ընթացքում, որը հաստատվում է Հրանտ-Սամուելի հետևյալ վկայությամբ. «Փրոֆ. Ն. Ադոնց սկսեց շարադրել ֆրանսերեն լեզվով Հայոց պատմություն մը՝ սկիզբեն մինչև մեր օրերը: 1939 թվից այս գործին պատրաստության հատկացրած էր իր ամբողջ ժամանակը»²: Ադոնցն աշխատում էր մեծ թափով և սկսված գործը արագորեն առաջ էր ընթանում: Թեև սաստկացող ծանր հիվանդությունը (թոքախտ), ինչպես նաև 1940 թ. կեսերին գերմանացիների կողմից Բելգիայի ռազմակալումը դանդաղեցնում էին աշխատանքները, այնուհանդերձ, գարնան-աշնան ամիսներին նա օրնիբուն շարունակում էր աշխատանքը «Հայոց քննական պատմության» վրա: Յուրաքանչյուր շաբաթվա վերջում աշխատանքի ավարտում մասերը հանձնում էր իր մտերիմ սաներից Հ. Եսեկյուլյանին, որը վկայում է. «Մաս առ մաս կ'առնեի իրմե՝ մեքենագրության հանձնելու»³ և այսպես մինչև վերջին օրերը: Կարծես զգալով վերահաս մահվան չարագույժ շունչը և կանխազգալով, որ իր կյանքի մեծ գործը մնալու է անավարտ, Ադոնցը 1940 թ. Ա. Չիլինկիրյանին դառնորեն գրում է. «Վախենում եմ, որ ծրագրած գործերս էլ մնան թերի և կամ նույնչափ վիատ, ինչպես ես»⁴: Վիատության ու հոգեկան խռով պահերից մեկի ժամանակ Հ. Եսեկյուլյանին խոստովանել է. «Պետք է ավարտել այս աշխատանքը («Հայոց քննական պատմությունը» - Պ. Հ.), գիտե՞ս թե որքան տառապագին է տարիներով հավաքել հոս՝ գլխում մեջ ունենալ, նույնիսկ դասավորված ու չկարենալ գեթ թուղթին հանձնել: Հիմա կը զգամ, թե գործ մը երբեք չպետք է հետաձգել»⁵: Ահա թե ինչու հաղթահարելով սոսկալի

ցավերը, կամքի գերագույն լարումով շարունակում էր աշխատանքը և այսպես մինչև հիվանդանոց տեղափոխվելը: Հ. Եսեկյուլյանը վկայում է. «Չափազանցված չեմ ըլլար, եթե ըսեմ թե՛ գրիչը ձեռքին մեռավ, գիտակից իր կոչումին վեհությանը, այն հանդուգն զորավարի պես, որ ծանրորեն վիրավոր կը մնա պատնեշին վրա, զենքը ձեռքին, մինչև իր վերջին շունչը»¹: Ցավոք, Ադոնցին վիճակված չէր ավարտելու իր կյանքի մեծ գործը, նա իրոք մահացավ գրիչը ձեռքին, վերջակետ չդրած²:

1941 թ. հոկտեմբերի վերջերին Ն. Ադոնցի առողջական վիճակը կտրուկ վատթարացավ և նրան տեղափոխեցին հիվանդանոց, որտեղ էլ մահացավ ուղիղ երեք ամիս անց՝ 1942 թ. հունվարի 27-ին: Կարծում ենք, թե միայն հավուր պատշաճի խոսքեր չեն, որ Ռ. Դարբինյանը նրա մասին գրում է այդ օրերին. «Հանձին պրոֆ. Նիկողայոս Ադոնցի հայ պատմագրությունը, հայ բանասիրությունը, հայ իրականությունը կը կորսնցնեն իրենց ամենեն ընտիր մշակներեն մեկը, իսկ հայ ժողովուրդն ալ իր ամենեն ազնվական զավակներեն մեկը: Ցավալի է նրա մահը մանավանդ, որ կիսատ ձգեց իր գործը: Վերջին տարիները ձեռնարկած էր «Հայոց քննական պատմության» պատրաստության, բայց չենք գիտեր, թե որ աստիճան առաջ տարած էր այդ աշխատությունը»³:

Ն. Ադոնցի մահվան առիթով ֆրանսահայ մտավորականները, Ա. Չոպանյանի և Հ. Չավոյանի նախաձեռնությամբ, 1942 թ. ապրիլի 12-ին Փարիզի սրահներից մեկում կազմակերպում են հիշատակի հավաքույթ⁴: Այստեղ որոշվում է ստեղծել հանձնախումբ՝ Ն. Ադոնցի թողոնի նյութերն ուսումնասիրելու, իսկ գրադարանը Փարիզի Նուպարյան գրադարան տեղափոխելու համար:

Առավել մտահոգողն, անշուշտ, «Հայոց քննական պատմության» ճակատագիրն էր: Ա. Չոպանյանի առաջարկով Բրյուսել ուղարկվեց հանգուցյալի վաղեմի բարեկամ, իրավաբան Հովհաննես Չավոյանը:

¹ Հ. Եսեկյուլյան, նշվ. աշխ., էջ 183:

² Ն. Ադոնցի վերջին տարիների և օրերի մասին արժեքավոր են Մուշեղ Իշխանի հիշողությունները՝ «Փրոֆ. Ն. Ադոնցը», տե՛ս «Ազդակ շաբաթօրյակ», Բեյրութ, 1944, 11, 18, 25 օգոստոսի, 1, 15, 22, 29 սեպտեմբերի, 6, 13 հոկտեմբերի: Նույնի՝ «Փրոֆ. Ն. Ադոնց (հուշեր և տպավորություններ)», տե՛ս «Ազդարար», Բեյրութ, 1951, 12, 19, 26 հոկտեմբերի, 2, 16 նոյեմբերի, 7, 14, 21 դեկտեմբերի: Նույնի՝ «Փրոֆ. Ն. Ադոնց», տե՛ս «Հայրենիք», 1951, № 7, էջ 22-43: Նույնի՝ «Երեք մեծ հայերը. փրոֆ. Նիկողայոս Ադոնց», Բեյրութ, 1952, էջ 5-41: Նույնի՝ «Իմ ուսուցիչներս. Փրոֆ. Նիկողայոս Ադոնց», Բեյրութ, 1984, էջ 37-69:

³ «Հայրենիք», Բոստոն, 1942, 11 փետրվարի, հմմտ. 12 փետրվարի:

⁴ Տե՛ս Համազգայինի Բեյրութի գրական պահոց, պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան Ե/Ա-8:

¹ René Grousset, Préface, p. IV.

² Հրանտ-Սամուել, նշվ. աշխ., էջ 12:

³ Հ. Եսեկյուլյան, Նիկողայոս Ադոնց. Հիշատակներ և տպավորություններ, տե՛ս «Պայքար», Բոստոն, 1953, էջ 183:

⁴ Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1963, № 5, էջ 25:

⁵ Հ. Եսեկյուլյան, նշվ. աշխ., էջ 183:

Բրյուսելում ծանոթանալով Ն. Ադոնցի թողոմի նյութերին՝ Ջավրյանն այստեղ որևէ ավարտուն գործ չգտավ, բացառությամբ ֆրանսերենով շարադրված «Հայոց քննական պատմության» առաջին հատորի: Փարիզ վերադառնալուց հետո Ջավրյանը դրա մեքենագիր օրինակը հանձնեց Մելքոնյան հրատարակչական ֆոնդի արտասահմանյան հանձնախմբին, որն իրավաբանորեն հանդիսանում էր ոչ միայն այդ գրքի պատվիրատուն, այլև նրա սեփականատերը: Ա. Չոպանյանի, Հրանտ-Սամուելի և Ա. Խոնդկարյանի հավաստմամբ Ջավրյանը Ադոնցի մնացած ամբողջ ծեռագիր ժառանգությունը հանձնել է Փարիզի Նուպարյան մատենադարանին, իսկ գրադարանը թողել Բրյուսելի հայ համայնքին¹: Իրադարձություններին քաջատեղյակ Ա. Չոպանյանը հավաստում է. «Ջավրիս իր հետ բերավ ծեռագիրը՝ Ադոնցի ֆրանսերեն լեզվով շարադրված Հայոց պատմության առաջին մասի»²: Տարիներ անց, 1952 թվականին ֆրանսիացի պատմաբան Ռընե Գրուսեի հիշատակին նվիրված իր խոսքում Ա. Չոպանյանը հարկ է համարել կրկնելու, թե Ջավրյանի բերածը Ադոնցի «անավարտ կարևոր գործի մի մասն էր»³: Նույնն է հավաստում նաև Արշամ Խոնդկարյանը. «Պատերազմի շրջանում, երբ մենք բոլորս զրկվեցինք հնարավորությունից որևէ բան հրատարակելու, Հ. Ջավրյանը զբաղվեցավ Ն. Ադոնցի թողած ծեռագիրները կարգի բերելով: Այդ ծեռագիրների մեջ էր ֆրանսերեն լեզվով գրված «Հայոց պատմության» առաջին հատորը»⁴:

Այսպիսով, 1942 թվականին Հ. Ջավրյանը Բրյուսելից Փարիզ է բերել Ն. Ադոնցի «Հայոց քննական պատմության» առաջին հատորի հեղինակային մեքենագիր օրինակը, այն էլ, ինչպես կտեսնենք, անավարտ: Շուտով պարզվում է, որ աշխատանքը տպագրության պատրաստ չէր նաև տեխնիկական տեսակետից և կարիք ուներ լեզվաոճական որոշակի խմբագրման: Հ. Ջավրյանը ազնվորեն ու մեծ նվիրումով ստանձնեց «հրատարակության հետ կապված բոլոր աշխատանքները՝ index-ի պատրաստում, քարտեզ, սրբագրություն, հեղինակի կենսագրություն և այլն»⁵: Ցավոք, Հ. Ջավրյանի հիվանդության և ապա վերահաս մահվան պատճառով (10 նոյեմբերի 1945 թվական) աշխատանքները դարձյալ ընդհատվեցին: Գրքի հրատարակության հետ կապված հետագա աշ-

խատանքներն իրականացրեց Ա. Չոպանյանը¹: Հենց Չոպանյանի առաջարկով էր, որ Մելքոնյան հրատարակչական հանձնախումբը «Հայոց քննական պատմության» ընդհանուր խմբագրումը հանձնարարեց ակադեմիկոս Ռընե Գրուսեին: Ֆրանսիացի պատմաբանը ոչ միայն «հղկումի և սրբագրումի հոգնեցուցիչ աշխատանքը կատարեց այդ ամբողջ ստվար հատորի»², այլև «Մեծ գիտնականի վերջին գրքի համար գրեց հատուկ առաջաբան»³: 1946 թ. ապրիլի վերջերին գիրքն արդեն պատրաստ էր տպագրության: Դա է հավաստում 1946 թ. ապրիլին Պ. Քոլոյանին հղած Ա. Չոպանյանի նամակը. «Մյուս կողմն պարտք կհամարենք Ձեզի հայտնել, թե ողբացյալ փրոֆեսսոր Նիկոլայոս Ադոնցի հոյակապ գործը՝ Հայոց պատմության սկզբնական շրջանի մասին, որին տպագրության ավարտումը հանգուցյալ Հ. Ջավրիսի հիվանդության պատճառով հապաղած էր, ի մոտո պիտի պատրաստ ըլլա հրապարակ ելլելու»⁴:

Ի վերջո, 1946 թ. կեսերին «Հայոց քննական պատմության» առաջին մասը, որ կրում էր «Հայաստանի պատմություն: Ակունքները» խորագիրը, լույս տեսավ «Imprimerie de Navarre» հրատարակչության կողմից: Գիրքն ավարտվում է «Ուրարտուի վախճանը և նրա պատմական դերը» եզրափակիչ հատվածով:

Անկասկած է, որ Ն. Ադոնցի կանոնավոր աշխատանքը գրքի վրա ընդհատվել է հենց այստեղ: Մյուսները հավելվածներ են, որ կիսավարտ աշխատանքին ավելացվել են հետագայում Ն. Ադոնցի մահից հետո: Անկասկած է նաև, որ այդ հավելումները կատարել է Հ. Ջավրյանը, նա, ով առաջինն էր ծանոթացել հանգուցյալ պատմաբանի թողոմի նյութերին և իր վրա պարտականություն վերցրել կատարելու գրքի հրատարակության հետ կապված բոլոր աշխատանքները: Չեռքի տակ ունենալով 375 էջանոց մեքենագիր տեքստը, որն ավարտվում էր «Ուրարտուի վախճանը և նրա պատմական դերը» եզրափակիչ հատվածով Հ. Ջավրյանը որպես հավելված դրան ավելացրել է նաև Ն. Ադոնցի «Հայերի ծագումը» անավարտ ուսումնասիրությունը, ինչպես նաև առավել ամբողջական տեսք ունեցող «Ասուրական արշա-

¹ Ա. Չոպանյան, Նիկոլայոս Ադոնց..., էջ 34:

² Նույն տեղում:

³ Ա. Չոպանյան, Ռընե Գրուսե, տե՛ս «Հասկ», Անթիլիաս, 1952, № 10-12, էջ 541:

⁴ Ա. Խոնդկարյան, Հովհաննես Ջավրյանի հիշատակին, տե՛ս «Ալիք», Թեհրան, 1946, 19 ապրիլի:

⁵ Նույն տեղում:

¹ Տե՛ս NAHA, p. XIII. Տարակուսելի է գրքի հայերեն թարգմանությունում Ուրարտուի քարտեզի բացակայությունը, որը մասնագիտական գրականության մեջ առաջիններից մեկն էր:

² Նույն տեղում:

³ René Grousset, նշվ. աշխ., էջ 3-8: Ռընե Գրուսեի սույն Առաջաբանի հայերեն թարգմանությունը, տե՛ս ՆԱՀՊ, էջ 3-8:

⁴ Տե՛ս Ա. Չոպանյան, Նամականի, կազմեց և ծանոթագրեց Գոհար Ազնավուրյանը, Երևան, 1980, էջ 257:

վանքները Ուրարտուի դեմ»¹, «Հայաստանը և ցեղերի պայքարը Արևելքում», «Մի հիմ պաշտամունքի հետքերը Հայաստանում» և «Վաղ շրջանի փոխառությունները հայերենում» հոդվածները², որոնք ոչ մի կերպ չեն աղերսվում ավարտուն այնպիսի տեքստերի հետ, ինչպիսիք են նախորդ չորս գլուխները: Ակներև է այս բոլորի մեխանիկական, անզամ կամայական միավորումը մեկ ամբողջության մեջ: Այս համոզման օգտին են խոսում նաև հետևյալ փաստերը: Ն. Ադոնցի թողնում առկա են «Հայաստանի պատմությունը» գրքի ֆրանսերեն մեքենագիր երկու օրինակներ, յուրաքանչյուրը 375 մեքենագիր էջ³: Բացի այդ, թողնում առկա են նաև առանձին մեքենագրված (միանգամայն այլ տառատեսակով) ֆրանսերեն տպագիր 291-րդից 405-րդ էջերի, այսինքն՝ հավելվածի, նյութերը⁴: Պարզ է, որ դրանք հիմնական չորս գլուխներին են միացվել հետագայում, բոլոր դեպքերում ոչ Ադոնցի կողմից՝ հատորին քիչ թե շատ ավարտուն տեսք տալու միտումով: Բացի այդ, մենք ունենք նաև Արշակ Սաֆրաստյանի ուղղակի ցուցումն այն մասին, որ 1940 թվականի ընթացքում Ադոնցն արդեն ավարտել էր իր «Հայոց քննական պատմության» Ուրարտուին նվիրված մասը, իսկ գրքում զետեղված մյուս նյութերը հավելումներ էին⁵:

Ինչևէ, անզամ այս տեսքով Ն. Ադոնցի կատարած աշխատանքը գիտական ու քաղաքացիական սխրանք էր: Առաջին անգամ էր, որ հայ ժողովրդի պատմության ուղեծրի մեջ տեղ էին գտնում Հայաստանի, Իշուվայի, Նախիբի, Ուրարտուի պատմության հարցերը, դրանք դիտվում էին մի ամբողջության մեջ, որպես միասնական երկրի՝ Հայաստանի և մեկ միասնական հայրենիքի բաղկացուցիչ մասեր: Եվ որքան ճիշտ է նկատել Ռենե Գրուսենը՝ գրելով. «Ափսոսալի է, որ, անգութ ճակատագրի երեսից, Ադոնցի սկսած Հայաստանի մեծ պատմությունը կանգ է առնում առաջին իսկ գլուխներում: Ափսոսանքն ավելի ցավալի է դառնում, մանավանդ, այն պատճառով, որ այդ գլուխների հաջողությունը մեզ կատարյալ է թվում: Այնուամենայնիվ, մենք անչափ ուրախ ենք, որ այսպիսով մեր ձեռքի տակ ունենք ըստ ամենայնի մի կատարյալ գործ հայոց պատմության այն մասի վերաբերյալ, որը մինչև

հիմա շատ քչերին էր մատչելի, եթե ոչ բոլորին անծանոթ: Դա հռչակավոր գիտնականի կողմից մի փառավոր նվեր է իր հայրենակիցներին, քանի որ Ադոնցը նրանց վերադարձնում է մոտավորապես տասը դար: Սա Ադոնցի՝ մահվան ժամին ընծայած արքայական պարգևն է իր երկրին, որի պատմությունը նա կրկնապատկում է»¹:

Վերոշարադրվածից ակներև է, որ Ն. Ադոնցի «Հայոց քննական պատմությունը» պետք է լիներ բազմահատոր մի աշխատություն և պատահական չէ, որ Ա. Չոպանյանը լույս տեսած ֆրանսերեն գիրքն անվանում է «Քննական ընդարձակ Հայոց պատմության առաջին մասը»²: Նույնն է հավաստում նաև Մատթեոս Արամ Գալենտերը, որն Ադոնցին նվիրված իր հուշերում շեշտում է, թե լույս տեսած ֆրանսերեն գիրքը «պիտի ըլլար առաջին հատորը Ընդհանուր Հայոց պատմության: Ադոնց եկած է մինչև ուրարտական շրջանին պատմության վերջավորությունը, բայց կարելի չէ եղած լրացնել հեղինակին տարածած և դառնակակիծ մահվան պատճառով»³:

Այս բոլորից հետո ընթերցողին բնականաբար պետք է հետաքրքրի մի կարևորագույն հարց: Արդյո՞ք տպագրված ֆրանսերեն հատորով ավարտվում են Ն. Ադոնցի՝ «Հայոց քննական պատմության» նյութերը, թե հնարավոր է նաև այլ նյութերի (անգամ ավարտուն) առկայությունը նրա թողնում: Չէ՞ որ պատմաբանը սովորություն ուներ միաժամանակ նրա թողնում: Չէ՞ որ պատմաբանը սովորություն ուներ միաժամանակ նրա թողնում: Այդ հարցին կարող էր լիարժեք պատասխան տալ միայն նրա թողնած մանրամասն ուսումնասիրությունը: Երկար տարիներ անհայտ էր, թե որտեղ է գտնվում պատմաբանի թողնը և ընդհանրապես այն գոյություն ունի, թե ոչ: Բարեբախտաբար ադոնցյան թողնը, իրերի բարեպատեհ բերումով, ոչ միայն փրկվել էր, այլև հանգրվանել Համազգայինի Բեյրութի գրական պահոցում: Թե ե՞րբ և ի՞նչ ճանապարհով է այն հայտնվել այստեղ, կարելի է միայն ենթադրել:

1992-1993 թվականների ընթացքում հնարավորություն ունեցանք ծանոթանալու ադոնցյան ձեռագրերին: Դրանք չափազանց անկանոն և անխնամ դասավորված էին քսան թղթածրարներում⁴: Այժմ անդ-

¹ Այն հայտորեն այս հատվածն իր տեղում չէ, բնական է, որ այն պետք է տեղ գտներ աշխատության 2-րդ կամ 3-րդ գլուխներից մեկում:

² N.A.H.A., p. 291-405, հմմտ. ՆԱՀՊ, էջ 287-392:

³ Համազգայինի Բեյրութի գրական պահոց, պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան I, գրոց Բ, թղթածրար 4, ք. 1-375 (անկասկած է, որ Հ. Էսեկյույանի մեքենագրած օրինակներն են):

⁴ Նույն տեղում, թղթածրար 5, հմմտ. թղթածրար 6:

⁵ Ա. Սաֆրաստյան, ճշվ. աշխ., էջ 730:

¹ ՆԱՀՊ, էջ 8 (ընդգծումը մերն է - Պ. Հ.):

² «Անահիտ», 1949, № 1, էջ 33:

³ Գալենտեր Մատթեոս, Նիկողայոս Ադոնց և իր «Պուկարաց թագավոր Սամուել Հայագլին», տե՛ս «Պայքար», Բոստոն, 1961, էջ 76 (ընդգծումը մերն է - Պ. Հ.):

⁴ Ն. Ադոնցի թողնած ընդհանուր նկարագրի համար տե՛ս մեր և Ե. Փամպուքյանի հրատարակումները, «Ազդակ», Բեյրութ, 1993, 9 մարտի, էջ 4, 7; «Ազատամարտ», Երևան, 1993, 9-15 ապրիլի, էջ 13 և այլն:

րադառնանք նախապես մեզ հետաքրքրող հարցին, արդյո՞ք Ն. Ադոնցի «Հայոց քննական պատմության» այլ հատվածներ կամ բաժիններ առկա են այստեղ, թե ոչ: Հենց սկզբից պետք է դրականորեն պատասխանել այս հարցադրումին: Դրանք առկա են և բավականին զգալի քանակությամբ: Ադոնցի ձեռագիր նյութերի մեջ գերազանցում են հայերի և Հայաստանի մասին տարաբնույթ և տարալեզու (հունական, լատինական, արաբական, ասորական, պարսկական և այլն) սկզբնաղբյուրներից քաղված վկայություններ, ժամանակագրական աղյուսակներ ու հաշվարկներ, արդեն ֆրանսերենով (հիմնականում), ռուսերենով և հայերենով շարադրված ամբողջական բաժիններ (թերի, երբեմն էլ ավարտուն): Մենք ցուցակագրեցինք եղած ամբողջ նյութերն ու փորձեցինք կազմել դրանց ցանկ, որից հետո հնարավոր եղավ «Հայոց քննական պատմության» առկա նյութերը դասակարգել ըստ պայմանական բաժինների և ստվերագծել հատորների հերթակառուցությունը՝ պայմանական, քանզի այդ բաժանումը հեղինակային չէ:

Թողնում առկա նյութերի մի խումբն ավարտվում է Զ. հ. I դարի կետերի, իսկ մյուսը սկսվում է Զ. հ. IV դարի կետերի պատմությամբ: Նկատելի է Զ. հ. I-IV դարերի պատմության վերաբերյալ շարադրանքի, և անգամ նյութերի, իսպառ բացակայությունը. դա հիմք է տալիս մեզ ենթադրելու, որ նշված դարերը եղել են «Հայոց քննական պատմության» երկրորդ և երրորդ հատորների բաժանման սահմանագիծը: Դրա օգտին են խոսում նաև ուրվագծված հատորների ծավալային տվյալները՝ յուրաքանչյուրը մոտ 600 ձեռագիր էջի սահմաններում: Ենթադրելի է, որ երկրորդ հատորը պետք է ունենար հետևյալ կառուցվածքը.

1. Արմենների երթուղին Փռյուզիայից Ուրարտու (ֆրանսերեն, 95 էջ, բազմաթիվ էջեր թափված)¹,

2. Մարական կայսրություն. կազմավորումը, զարգացումը (ռուսերեն, 28 էջ, որոշ էջեր թափված),

3. Հայաստանը Մարական կայսրության կազմավորումից մինչև Կուրաքսայի ճակատամարտը՝ Օրոնտեսի և Տիրիբագոսի օրոք (ֆրանսերեն, 25 էջ, բազմաթիվ էջեր թափված),

¹ Էջակաումը և խորագրերը հիմնականում հեղինակային են: Բացակա էջերը դեռևս ապացույց չեն դրանց կորստի: Ավելի ուշադիր և մանրագրին քննությունը կարող է դրանք ի հայտ բերել այլ թղթածրարներում, որոնցում առկա են մեզ համար անորոշ մնացած բազմաթիվ թղթեր:

4. Երկրամաս և բնակչություն. XIII և XVIII սատրապությունների կազմավորումը, հարկերը (ֆրանսերեն, 18 էջ),
5. Քսենոփոնի նահանջի երթուղին Հայաստանում (ֆրանսերեն, 9 էջ),
6. Երվանդունիները Հայաստանում Աքեմենյանների օրոք (հայերեն, 11 էջ),
7. Հայաստանը Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների շրջանում (ռուսերեն, 8 էջ),
8. Արևելքը մակեդոնական տիրապետության շրջանից մինչև Զ. հ. I դարի կետերը՝ Զ. ա. 334 թ.- Զ. հ. 66 թ. (ֆրանսերեն, 143 էջ),
9. Միհրդատ Եվպատոր (ֆրանսերեն, 8 էջ),
10. Տիգրան Մեծ (ֆրանսերեն, 10 էջ),
11. Տիգրան Մեծն ըստ Մոնթենի և Ռեյնաքի: Տիգրան Մեծի մասին անտիկ սկզբնաղբյուրներից քաղված վկայություններ (ֆրանսերեն, 40 էջ),
12. Լուկուլլոսի և Պոմպեոսի արշավանքները Հայաստան (ֆրանսերեն, 20 էջ),
13. Մարկոս Կրասոսի Արևելյան արշավանքը. Արտավազդ II (ֆրանսերեն, 32 էջ, որոշ էջեր թափված),
14. Մարկոս Անտոնիոս (ֆրանսերեն, 12 էջ),
15. Հայ Արշակունիների թագավորության կազմավորումը. Զ. հ. 12-66 թթ. (ֆրանսերեն, 40 էջ),
16. Հայ-պարթևական հարաբերությունները Զ. հ. 16-66 թթ. (ֆրանսերեն, 60 էջ),
17. Տրդատ I Արշակունու ճանապարհորդությունը Հռոմ և Արտաշատի նորոգումը (ֆրանսերեն, 7 էջ):
Բացի նշվածներից, առանձին թղթածրարներում առկա են նաև Զ. ա. VI - Զ. հ. I դդ. հայոց պատմությանը վերաբերող 160 էջ ռուսերենով նոթեր, նյութեր, ժամանակագրական տախտակներ, աղբյուրագիտական ու պատմագիտական առանձին վկայություններ: Այսպիսով, երկրորդ հատորի նյութերը, ժամանակագրական առումով վերաբերում են Զ. ա. VII դարի վերջերից Զ. հ. I դարի վերջերը, ընդգրկելով 800 տարվա պատմություն: Ամբողջը կազմում է 614 ձեռագիր էջ, որից՝ ֆրանսերեն - 567, ռուսերեն - 36, հայերեն - 11 էջ:
Հավանաբար երրորդ հատորի բովանդակությունը պետք է կազմեն հետևյալ գլուխները՝
1. Հայաստանը 350-387 թվականներին (ֆրանսերեն, 54 էջ),

2. Պարսկա-բյուզանդական հարաբերությունները V-VI դարերում և Հայաստանի ճակատագիրը (ռուսերեն, 96 էջ),

3. Պարսկա-բյուզանդական պատերազմները VI դարի կեսերից - նույն դարի վերջերը և Հայաստանը (ռուսերեն, 80 էջ),

4. Հողատիրության ձևերը, հարկերն ու տուրքերը Արշակունյաց և մարզպանության պատմաշրջաններում (հայերեն, 30 էջ),

5. Հայաստանը 849-902 թվականներին (հայերեն, 43 էջ),

6. Հայաստանի պատմությունը Աշոտ II երկաթից մինչև Մելիքշահի տիրապետությունը (ֆրանսերեն, 100 էջ),

7. Բագրատունյաց թագավորության անկումը (հայերեն, 5 էջ),

8. Սյունյաց թագավորությունը (հայերեն, 16 էջ),

9. Չաքարյան Հայաստանի պատմությունը (հայերեն, 40 էջ),

10. Հայ ազատագրական շարժումները 1547-1711 թվականներին (հայերեն, 11 էջ),

11. Պետրոս Մեծի և Իսրայել Օրու բանակցությունները (հայերեն, 36 էջ, բազմաթիվ էջեր թափված),

12. Դավիթ Բեկի պատերազմներն ըստ Ստեփանոս Շահումյանի (հայերեն, 2 էջ):

Ժամանակագրական առումով այս նյութերի շարադրանքը վերաբերում է IV-XVIII դարերի պատմությանը, ընդգրկելով շուրջ 1200 տարվա դեպքեր: Ամբողջը կազմում է 520 ձեռագիր էջ, որից ֆրանսերեն - 154, ռուսերեն - 176, հայերեն - 190 էջ:

Բացի այդ, առանձին թղթածրարներում խնամքով դասավորված են V-IX դարերի հայոց պատմությանը վերաբերող բյուզանդական սկզբնաղբյուրներից քաղված 300 էջից ավելի ֆրանսերենով ու հայերենով նյութեր, նոթեր, ժամանակագրական աղյուսակներ, բյուզանդական կայսրերի ու արաբական խալիֆների, հայոց կաթողիկոսների գավազանացանկեր:

Արդյո՞ք «Հայոց քննական պատմությունն» ավարտվելու էր այս երեք հատորների շրջանակում (հնագույն ժամանակներից մինչև XVIII դարի վերջերը), թե ունենալու էր ևս մեկ XIX-XX դարերի պատմության հարցերն ընդգրկող հատոր, դժվար է ասել: Սակայն թողո՞նում նշված դարերի պատմությանը վերաբերող առանձին նյութերի առկայությունը վկայում է այն բանի օգտին, որ ավելի քան հավանական է վերջին

չորրորդ հատորի, եթե ոչ շոշափելի իրողությունը, ապա գոնե ուրվագիծը¹:

Այսպիսով, վերոշարադրանքը ցույց է տալիս, որ կյանքի վերջին տարիներին Ն. Աղոնցը ծրագրել էր տարիների իր պատմագիտական աշխատանքների արդյունքները հանրագումարի բերել «Հայոց քննական պատմություն» քառահատոր աշխատության մեջ (հնագույն ժամանակներից մինչև XX դարի սկիզբը): Սակայն նա հասցրել է մասամբ ավարտել միայն առաջին հատորը (հայկական հնագույն ցեղային միությունների և Ուրարտուի պատմության ժամանակաշրջանները): Մեր ձեռքի տակ եղած նյութերը ցույց են տալիս, որ Ն. Աղոնցը միաժամանակ աշխատել է նաև երկրորդ և երրորդ հատորների վրա, նախապես շարադրել ամբողջական գլուխներ, անգամ բաժիններ, հավաքել նյութեր, սկզբնաղբյուրային վկայություններ, կազմել ժամանակագրական տախտակներ ու գավազանացանկեր: Խոսքը վերաբերում է գլխավորապես վերջնական խմբագրման չենթարկված նյութերին, որոնք բոլորն էլ, բացառությամբ առանձին դեպքերի, դեռևս աննշակ են: Անկասկած է, որ «Քննական պատմություն Հայոց»-ը մնացել է անավարտ:

Ն. Աղոնցի երկերի սույն չորրորդ հատորում զետեղված են «Քննական պատմության» առաջին հատորի («Հայաստանի պատմություն: Ակունքները») հայերեն թարգմանությունը, ինչպես նաև երկրորդ-երրորդ հատորներից առանձին հատվածներ: Ցավոք, Ն. Աղոնցի գրքի ֆրանսերեն բնագրի հրատարակիչների ոչ բավարար ուշադրության պատճառով տեքստում սպրդել են զգալի թվով երկրանունների, ցեղանունների, տեղանունների, ազգանունների և այլ կարգի փաստերի աղավաղումներ, որոնք, ինչպես երևում է գրքում բերված աղբյուրների և մասնագիտական գրականության համադրությունից, մեծանուն գիտնականի գրչին չեն պատկանել: Այս իրողությունը ցավալիորեն ոչ միայն փոխանցվել է «Հայաստանի պատմության» հայերեն թարգմանությանը, որն իրականացրել է Վ. Պ. Սեղբոսյանը, այլև համալրվել է թարգմանական համաբնույթ ու այլ կարգի մեծաքանակ վրիպումներով ևս:

Նշանավոր ուրարտագետ Ն. Վ. Հարությունյանը մեր ուշադրությունը հրավիրելով այդ կարգի աղավաղումների վրա, սիրահոժար մեզ տրա-

¹ Արդյո՞ք դրա օգտին չի խոսում թողո՞նում Հայկական հարցին վերաբերող մի շարք հոդվածների ուրվագծերի առկայությունը (ավելի մանրամասն տե՛ս Ն. Աղոնց, Հայկական հարց, կազմել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պ. Հ. Հովհաննիսյանը, Երևան, 1996):

մադրեց գրքում տեղ գտած ակնառու աղճատումների ու աղավաղումների իր ուղղումների ցանկը (մեքենագիր 32 էջ), որոնց զգալի մասը մենք շնորհակալությամբ հաշվի ենք առել «Հայաստանի պատմության» հայերեն այս երկրորդ հրատարակությունն իրականացնելիս: Սույն հրատարակությունն իրավամբ կարելի է անվանել՝ բարեփոխված հրատարակություն, քանզի Վ. Սեդրոսյանի թարգմանությունը ֆրանսերեն հրատարակության բնագրի հետ ուշադրությամբ համեմատել, բացթողումները լրացրել և խմբագրել է Օ. Ս. Վարդազարյանը: Միաժամանակ հարկ համարեցինք հրատարակել նաև Ռընե Գրուսեի Առաջաբանը¹ և Գ. Խ. Սարգսյանի «Վերջաբանի փոխարեն»-ը² խմբագրական անհրաժեշտ միջամտություններով:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում Համագգայինի Բեյրութի գրական պահոցի և Հայագիտական բարձրագույն հիմնարկի աշխատակիցներին, մանավանդ Ե. Փամպուքյանին, Ա. Էթեմեզյանին, որոնք հնարավորություն ընձեռեցին ծանոթանալու Ն. Ադոնցի թողոնի նյութերին, ինչպես նաև պատմական գիտությունների թեկնածու Ա. Մովսիսյանին, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Օ. Վարդազարյանին, բանասիրական գիտությունների թեկնածու Դ. Գյուրջիմյանին և բոլոր նրանց, ովքեր արժեքավոր առաջարկություններով ու դիտողություններով իրենց նպաստը բերեցին հատորի հրատարակությանը:

Պ. Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՔՆՆԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Հատոր I

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ:
ԱԿՈՒՆՔՆԵՐԸ (X-VI դարեր Զ. Ա.)

¹ Ռընե Գրուսեի Առաջաբանը (տե՛ս աստ, էջ 25-30) ժամանակին թարգմանվել և հրատարակվել է հայկական պարբերական մամուլի տարբեր օրգաններում («Պայքար-բացատիկ», տարեգիրք, Բոստոն, 1950: «Ազդարար», օրաթերթ, Բեյրութ, 1951, 27 հունիսի, № 456; 3 օգոստոսի, № 457 և այլն):

² Տե՛ս ՆԱՀՊ, էջ 393-396:

ԱՌԱՋԱԲԱՆ

Ինձ համար մեծ պատիվ և միևնույն ժամանակ ցավալի պարտակա-
նություն է՝ ներկայացնել պրոֆեսոր Ադոնցի գործի հետմահու հրա-
տարակությունը և վերհիշել հանգուցյալի ազդեցիկ անձնավորությունը:
Պատերազմից քիչ առաջ առիթ ունեցա նրան [կրկին] հանդիպելու
Բրյուսելում, որտեղ նա անմիջապես գրավել էր առաջնակարգ տեղ:
Մենք ուշադրությամբ լսում էինք նրան, երբ նա այնքան աշխուժորեն և
երիտասարդական եռանդով խոսում ու վիճում էր մեզ ոգևորող
պատմական և հնագիտական մեծ խնդիրների շուրջ: Այն ժամանակ իմ
մտքով չէր կարող անցնել, որ մենք վերջին անգամն ենք իրար հան-
դիպում: Օժտված նորարարության կարողությամբ, որի գաղտնիքն իր
գիտության, ինչպես նաև իր երկրի նկատմամբ տածած սիրո մեջ էր, նա
1896-1920 թվականներին, բազմաթիվ գիտական հրատարակություն-
ներով Ռուսաստանում փայլուն հեղինակություն ստեղծելով իր համար,
կարողացավ իր աշխատանքային երկրորդ կյանքն սկսել Փարիզում,
Լոնդոնում և Բրյուսելում, ֆրանսերեն լեզվով հրատարակելով հիանալի
գործեր, որոնք պատիվ են բերում մեր մասնագիտական այնպիսի
հանդեսների, ինչպիսիք են «Revue de l'Orient chrétien», «Revue des
Etudes Arméniennes», «Byzantion» և այլն: Այստեղ էլ Ն. Ադոնցը ամբողջ
հասակով մեկ հանդես էր գալիս այնպես, ինչպես նախ՝ էջմիածնում,
ապա՝ Ս. Պետերբուրգի համալսարանում, որպես ի ծնե լեզվաբան, որը
տիրապետում էր գիտելիքների մի ամբողջ ստեղնաշարի՝ սանսկրիտից
ու պահլավերենից սկսած մինչև սեպագիրը, բյուզանդական հունա-
րենից մինչև ժամանակակից պարսկերենը: Նա միաժամանակ հնագետ,
պատմաբան և բանասեր էր, ուստի և նրա ամենափոքր ծանո-
թագրությունն իսկ գիտական նշանակություն ունի: Ափսո՛ս, սակայն, որ
վստահելի մեթոդի վրա հիմնված գիտելիքների այդ բազմազա-
նությունը նա չհասցրեց գործադրել իր ամբողջական գործը՝ Հայաս-
տանի քննական պատմությունը մեզ տալու համար: Ն. Ադոնցը, ավելի
քան որևէ մեկը, ձեռնհաս էր այդ անելու:

Ձերևս ավելի ճիշտ կլիներ ասել, և մենք դրանում բոլորովին չենք
կասկածում, որ նա արդեն շարադրել էր Հայաստանի՝ մեր ցանկացած

խաղեալ կերպով իրենց ստեղծողներից երկար ապրեցին՝ հազարամյակների ընթացքում նույն անուններով անփոփոխ հարատևելով, իսկ Ուրարտուի կործանումից հետո ժառանգություն մնալով ծնվող Հայաստանին:

Այստեղ մենք հավում ենք Ադոնցի աշխատության ամենահետաքրքրական մասերից մեկին, որտեղ նա, սեպագիր բնագրերը ձեռքին, մեզ ցույց է տալիս, որ հայկական դասական քաղաքակրթությունը գալիս է ուրարտականից և ամբողջապես սուզվում է այդ քաղաքակրթության մեջ ճիշտ այնպես, ինչպես որ այսօր մեզ ծանոթ հունական տեղանունների և «հելլենական քաղաքակրթության» բառերի մի մասը հանդիսանում է հին էգեացիներից ժառանգած ավանդ: Էգեամի մասը հանդիսանում է հին էգեացիներից ժառանգած ավանդ: Էգեական քաղաքակրթությունը իրականում չի մահացել: Միկենեի միջնորդությամբ և դորիական միջնադարին հակառակ, դա է դասական հելլենականության սկիզբը: Ուրարտուն Հայաստանի համար խաղացել է ոչ նվազ դեր, քան մինոսյան կրետեն՝ Հունաստանի համար: Չնայած քրակա-փոյուզիական ներգաղթի հետևանքով տեղի ունեցած անխուսափելի ցնցմանը, Ուրարտուի և Հայաստանի միջև ընկած է հաջորդականության իրական կապը: Ադոնցն ի դեմս հին ուրարտացիների իրավամբ ողջունում է հայ ժողովրդի մի մասի նախահայրերին այնպես, ինչպես հելլենական կամ լատինական ցեղերը, չնայած իրենց լեզվական ու պատմական հնդեվրոպական շրջանակներին, մասամբ արյունակից են էգեական և էտրուսկյան ցեղերին: Ահա թե ինչու համեմատությունն այստեղ չպետք է կանգ առնի, որովհետև գոյություն ունեն քիչ հնդեվրոպական ժողովուրդներ, նույնիսկ նրանցից ամենահայտնիները, որոնք իրենց հասունությամբ պարտական չլինեն նախնական մշակութային տարրի առկայությանը: Օրինակ, գիտե՞նք արդյոք մենք, թե Գալլիայում կելտական խավը, որը մեզ մոտ համեմատաբար ուշ շրջանին է առնչվում, մեզալիթյան քաղաքակրթությանը ժամանակակից որքան հնագույն ցեղեր է կլանել: Գիտե՞նք, թե Իրանում մեղապարսիկները որքան են պարտական Սուզայի նախնական ցեղերին և քաղաքակրթությանը: Հնդկաստանում նույնպես հնդկական միակցությունը պարտական է ոչ միայն Ինդոսի նախաարիական քաղաքակրթությանը, այլ նաև դրավիդյան հանճարին: Այս բոլոր դեպքերում հնդեվրոպական հանճարը հին քաղաքակրթության ժառանգությունը վերանորոգել է, նրա վրա ավելացնելով իր սեփականը, բայց ինքն էլ է փոփոխվել այդ քաղաքակրթության միջոցով:

Ադոնցի տեսությունը, այսպիսով, տալիս է հայ ժողովրդին իր հնդեվրոպական ազնվական տիտղոսների հետ մեկտեղ դեռ ավելի հին տիտղոսներ: Նա ցույց է տալիս, որ այս ժողովուրդը, եթե կարելի է այդպես ասել, **ավելի հին է, քան ինքը**: Հնդեվրոպական է, անշուշտ, իր ցեղային պատկանելությամբ և լեզվով, բայց առնչվում է նաև, իր բնօրրանում գտած մշակույթով հազարամյա քաղաքակրթություններին, ասիանիկ այն հին ժողովուրդներին, որոնց Առաջավոր Ասիան գուցե պարտական է իր ամենափայլուն զարգացմամբ, մի մշակույթ, որը նախամիտանական և նախախեթական շրջանների միջոցով հասնում է Ք. ա. XVII դարից դեռ ավելի վաղ ժամանակները:

Ադոնցը ցույց է տալիս, որ ուրարտական պետությունը, երբ այնքան փառավոր պատմությունից հետո անհետացավ քարտեզից, արդեն կատարել էր իր առաքելությունը՝ փրկելով հայկական միջնաբերդը Միկատեղից խուժող ասպատակություններից: Ո՛չ Աշշուրը, ո՛չ էլ Բաբելոնը, որոնք առժամանակ զավթել էին հին աշխարհի մնացած մասը, չկարողացան գերության ենթարկել ապագա Հայաստանը: Ուրարտուն ջախը իսկույն հանձնեց հնդեվրոպական երիտասարդ այն ազգին, որը նրանից ստացավ նույն առաքելության պարտականությունը:

Մի քանի հուզիչ էջերով, որոնց մեջ գիտնականը գրիչը զիջում է հայրենասերին, Ադոնցը ցույց է տալիս այդօրինակ ժառանգության ողբերգական մեծությունը: Հետևենք նրա ընթացքին: Հայկական ամբողջը, ինչպես ուրարտական բաստիոնն էր՝ կպաշարվի: Անկասկած, նա կհարմարվի աքեմենյան գերիշխանությանը, որը, այնուհանդերձ, ինչպես **Անաբազիսն** է վկայում, կհարգի նրա ինքնավարությունը: Նա նույնիսկ կխուսափի մակեդոնական հաղթանակի զոհ դառնալուց, և դրանից հետո հելլենիստական անիշխանության շնորհիվ է, որ հին Հայաստանը կհասնի իր ընդարձակման գագաթնակետին, և դա կլինի Տիգրան թագավորի օրոք: Սա մի չճանաչված մեծ իշխող է, որ, անկասկած, շատ ավելի մեծ արժանիքներ ունի, քան նրա ժամանակակից Միհրդատը, որով հիացել է պատմությունը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Միհրդատը փայլուն կերպով «ինքնասպանության մղեց իր պետությունը», մինչդեռ Տիգրանը իր ժողովրդի ապրելու իրավունքն ապահովեց հավիտենականության համար:

Տիգրան Մեծի առջև ծառայած էր մի էական խնդիր՝ ընտրություն կայացնել Արևելքի և Արևմուտքի՝ Հռոմի և պարթևների միջև: Նա, համաձայնելով Պոմպեոսի հետ, ընտրեց Արևմուտքը: Սա մի վճռական ընտրություն էր, որովհետև դա էր լինելու ամբողջ հայ ազգի ուղին հե-

տագա ժամանակներում: Բայց որքան տառապանքների գնով էր լինելու դա,- նկատում է Ադոնցը: Մեր բարեկամն այդ ժամանակաշրջանն ուսումնասիրած ամենափայլուն բյուզանդագետներից մեկն էր, ուստի և հենց նա կարողացավ ճշգրիտ ու անկողմնակալ հողվածներով ցույց տալ, թե Բյուզանդիան ինչեր է պարտական Հայաստանին, սկսած «մակեդոնական» մեծ հարստությունից, որը ծերացած պետության անջն բացեց X դարի զարմանալի վերածննդի դռները: Ադոնցը մեզ ցույց է տալիս նաև, թե Բյուզանդիան որքան վատ վարձատրեց Հայաստանին՝ նրա մոծած ավանդի դիմաց: Որպես ապացույց, ես ուզում եմ հիշատակել Գուստինիանոսի ժամանակաշրջանի Հայաստանին վերաբերող փայլուն ավարտաճառը, որով Ադոնցը ներկայացնում է Արևելքի կայսրության կանոնավորապես հետամուտ ջանքերը՝ ապագայնացնելու Հայաստանի այն մասը, որը նրան էր հանձնվել Թեոդոսյան բաժանումից հետո: Բյուզանդիան էր, որ սելջուկյան ներխուժման դեմ Մեծ Հայքի պաշտպանությունը անձամբ իր ձեռքն առնելու պատրվակով XI դարում վերջ տվեց Բագրատունյաց և Արծրունյաց ժողովուն պետություններին, կարճ ասած, վերջ տվեց հայկական անկախությանը, որպեսզի դրանից անմիջապես հետո թուրքերին լքի այս երկիրը: Բայց կարելի՞ է ասել, որ Արևմուտքը սկսած խաչակիրներից մինչև XX դար, ծանր պատասխանատվություն չի կրում մի ժողովրդի նկատմամբ, որին պարբերաբար մղել է արկածախնդրությունների, վտանգի պահին լքելու համար:

Այսպիսի ծրագրից հետո որքան ավստասալի է, որ, անգուր ճակատագրի երեսից, Ադոնցի սկսած Հայաստանի մեծ պատմությունը կանգ է առնում առաջին իսկ գլուխներում: Ավստասանքն ավելի ցավալի է դառնում, մանավանդ, այն պատճառով, որ այդ գլուխների հաջողությունը մեզ կատարյալ է թվում: Այնուամենայնիվ, մենք անչափ ուրախ ենք, որ այսպիսով մեր ձեռքի տակ ունենք ըստ ամենայնի կատարյալ մի գործ հայոց պատմության այն մասի վերաբերյալ, որը մինչև հիմա շատ քչերին էր մատչելի, եթե ոչ բոլորին անծանոթ: Դա հռչակավոր գիտնականի կողմից մի փառավոր նվեր է իր հայրենակիցներին, քանի որ Ադոնցը նրանց վերադարձնում է մոտավորապես տասը դար: Սա Ադոնցի՝ մահվան ժամին ընծայած արքայական պարգևն է իր երկրին, որի պատմությունը նա կրկնապատկում է:

ՈՒՆԵ ԳՐՈՒՄԵ

ԳՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ

Նախապատմական շրջանն ընդգրկում է դպրությանը նախորդող ժամանակը և իր տվյալները հայթայթում է հնագիտական ու մարդաբանական նյութից:

Հայաստանի նախապատմական անցյալը դեռևս բավարար չափով լուսաբանված չէ (1): Նրա հետազոտությունն սկսվել է, բայց հետևողական կանոնավորությամբ չի ընթացել: Հողն իր ընդերքում դեռևս շատ անակնկալներ է քաղցնում: Այդ բնագավառում կատարված սակավաթիվ աշխատանքները այնուհանդերձ թույլ են տալիս որոշ գաղափար կազմելու երկրի հեռավոր անցյալի մասին:

Առաջին պեղումները ձեռնարկվել են 1876 թվականին մի քանի ռուս հնագետների կողմից: Սրանք Դիլիջանի մոտ, Ռեդիկին-լագեր վայրում հայտնաբերեցին 75 դամբարաններից բաղկացած մի մեծ գերեզմանատուն¹:

Ավելի սիստեմատիկ հետազոտությունների պատիվը պատկանում է Ժ. դը Մորգանին: Ալավերդու և Ախթալայի շրջակայքում, Թիֆլիս-Ալեքսանդրապոլ երկաթուղագծի հատվածում նա պեղեց ավելի քան 576 դամբարան²:

Ապա գերմանացի ճարտարապետ Վ. Բելլը, Գետաբակի մոտ, Գանձակ-Ելիզավետպոլից ոչ հեռու պեղեց մոտավորապես 300 դամբարան³:

Շատ չանցած, 1892 թվականին, Մոսկվայի Հնագիտական ընկերության կողմից գործուղված Ա. Իվանովսկին պեղեց բազմաթիվ գերեզմանոցներ և

¹ Արդյունքները հրատարակվեցին Ֆրիդրիխ Բայերի Contribution à l'archéologie du Caucase, précédée d'une introduction biographique par E. Chantre (Lyon, 1882) խորագիրը կրող աշխատության մեջ: Friedrich Bayem, Untersuchungen über die ältesten Cräber und Schatzfunde in Kaukasien, herausgegeben mit einem Vorwort, versehen von Rud. Virchow, «Zeitschrift für Ethnologie», 1885, Berlin.

² J. de Morgan, Mission scientifique au Caucase. Etudes archéologiques et historiques, tome premier. Les premiers âges des métaux dans l'Arménie russe.

³ Verhandlungen der Berliner Gesellschaft für Anthropologie, Ethnographie und Urgeschichte, 1894.

հայտնաբերեց 91 դամբարան Գետաբակում, Կալաքենդում, Առաջածորում, Վանքում և այլ վայրերում¹:

Ժ. դը Մորգանից հետո, անշուշտ, ամենակարևոր պեղումները պատկանում են Հայկական ազգագրական ընկերության նախագահ Ե. Լալայանին, որը հայտնաբերեց 500-ից ավելի դամբարաններ²:

Թուրքահայաստանում ուսումնասիրված է ընդամենը մեկ գերեզմանաբուրք Վանա բերդի մոտ, Շամիրամ-ալթիում³: Այսպիսով, Հայաստանի մեծ մասը դեռևս չի հետազոտված:

Նախապատմական երկու առաջին դարաշրջաններից՝ պալեոլիթ և մեոլիթ, առաջինը գոյություն չի ունեցել Հայաստանում և ոչ էլ Իրանում, իսկ երկրորդը, եթե դա իսկապես գոյություն է ունեցել, երկար չի տևել: Այդպես է կարծում Ժ. դը Մորգանը, որը նեոլիթի դարաշրջանից հայտնաբերել է գերեզմանի քանի առանձին առարկաներ, իսկ պալեոլիթյան ժամանակաշրջանի արտադրանքի և ոչ մի հետք չի գտել: Նրա կարծիքով, Հայաստանը սառցե դարում անմարդաբնակ է եղել:

Դրանից հետո, 1925 թվականին, Չանգու գետի ափին, գործարան կառուցելու հետ կապված հողային աշխատանքների ժամանակ, վեց մետր խորության վրա գտնվեց մարդու մի կմախք, դիմացը մի կայծքար: Հնագետները, տեղում քննելով կմախքը, գտան, որ դա պալեոլիթյան տիպ է⁴: Եթե այդ կարծիքը վերջնականապես հաստատվի, դը Մորգանի վարկածը կխախտվի⁵:

Գալով նեոլիթի շրջանին, Մորգանից հետո կատարված կարևոր հայտնաբերումները հաստատում են դրա անվիճելի գոյությունը Հայաստանում: 1913 թվականին Էջմիածնի մոտ գտնվող Շրեշ-բլրի հետազոտությունը և 1927 թվականին Երևանից 15 կիլոմետր հեռու գտնվող Էլար գյուղի գանազան վայրերում կատարված պեղումները շատ արդյունավետ եղան: Այստեղ պեղվեց հարուստ գույք ունեցող մոտավորապես հարյուր դամբարան: Այդ գերեզմանները արտաքինից նման են մեծ մասամբ բուրբակ, 30-150 սանտիմետր բարձրություն ունեցող փոքր հողակույտերի, որոնք հողի շերտերի և քարերի տակ բացցնում են առանձին շիրիմներ, հաճախ

ծածկված սալաքարերով: Այնտեղ, 150 սանտիմետր խորությամբ տարածվող մոխրաշերտերում գտնվել են նեոլիթյան շրջանին պատկանող քարե առարկաներ:

Հայտնաբերվել են նաև հուղարկավորության համար նախատեսված սափորներ, որոնք վկայում են դիակիզման կիրառության մասին: Մարդկային ոսկորների կույտերի մեջ երբեմն պատահում են նաև անասունների ոսկորներ:

Էլարում պեղումների ժամանակ գտնվեց մոխրով լի մի ժայռափոր ստորերկրյա քարե սարկոֆագ, որը պարունակում էր բազալտե մի մուրճ, ձիու մեկ առան և խեցու կտորտանք:

Շիրիմներում գտնված գույքի մեջ կային զանազան սկավառակներ և մեկ փոքրիկ գնդակ, որոնք թերևս մաս են կազմել վուշ մանող գործիքի - ապացույց այն բանի, որ մանածագործությունը և հագուստների արտադրությունը հայանի են եղել երկրի նեոլիթյան բնակիչներին:

Մեգալիթյան կառուցումները, որոնք այնքան բնորոշ են նեոլիթի դարաշրջանին, Հայաստանում ամենուրեք առատ են՝ դոլմենների, մենհիրների, կրոմլեխների, բրգածև քարակույտերի և կիկլոպյան պարիսպների ձևով: Այս տեսակետից Արագած (թուրքերի կողմից աղավաղված՝ Ալագյոզ) լեռան շրջակայքը ներկայացնում է հնագիտական մի բնական քանդարան, այնքան հարուստ է այն նախապատմական կոթողներով: Արագած լեռից սկիզբ առնող և Արաքս թափվող Ջասախ գետի ափին տարածված հին Արագածոտն գավառը ամբողջապես ծածկված է մեգալիթյան հետքերով: Օշական, Փարպի, Կոշ, Ամբերդ, Աղց գյուղերի շրջակայքում կան բազմաթիվ կիլոմետրեր տարածվող դաշտեր, որոնցով մեկ ցրված են հարյուրավոր դոլմեններ, կրոմլեխներ, մենհիրներ: Օշականի մոտ գտնվող մի քարքարոտ վայրում կան բազմաթիվ դոլմեններ: Փարպի գյուղի և Ամբերդի հյուսիսում գոյություն ունեն կրոմլեխների դաշտեր: Շամիրամում պահպանված են մեծ քանակությամբ մենհիրներ: Վերջերս գրանցվեցին մեգալիթյան ավելի քան քսան խմբեր: Նմանօրինակ հուշարձաններով հարուստ են նաև երկրի մյուս մասերը: Միսիանի շրջանի Հարաքիլիսա գյուղի մոտ, ինչպես նաև Շուշիից ոչ հեռու, Քաչալակ լեռան վրա, դրանք հաճախ են հանդիպում:

Մեգալիթյան դաշտերում, ավելի բարձր տեղասաների վրա նկատվել են խոշոր վեներից բաղկացած կառույցներ: Դրանք կազմված են նվազող բարձրության բազմաթիվ՝ մեկը մյուսին ընդգրկող շրջանաձև պարիսպներից: Հայտնաբերվել է այս տիպի տասներկու կառույց, որոնցից ամենալավ պահպանվածը գտնվում է Կոշի և Աղավնատան միջև: Այդ կառույցների

¹ Материалы по археологии Кавказа, 1911.

² Ե. Լալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931:

³ L. W. King, The prehistoric cemetery at Shamiram-alti near Van in Armenia, «Proceedings of the Society of the Biblical Archaeology», XXXIV (1912), էջ 198 և շար.:

⁴ Նույն՝ 1925 թ. «Պաղեստինում, Տիրիսիական լճի մոտ հայտնաբերվեց նեանդերթալյան մարդու դիմագծերով մի գանգ, «Revue biblique», 1925, էջ 583 և շար., Adolf Lods, Israël, էջ 46:

⁵ Ա. Քալամբար, Քարե դարը Հայաստանում, «Նորք», հանդես, 1925, № 5 և 6: Խ. Մեմուկյան, Քարե դարը, Երևան, 1931:

նպատակը հայտնի չէ: Թվում է, թե նրանց մի մասը եղել են բերդեր, մանավանդ այնպիսիները, որոնք մի քանի հարկանի են, մյուսները, հավանաբար, շրջապատել են սրբավայրերը:

Վերոհիշյալ կառույցներին առավել առեղծվածային բնույթ են տալիս այն պատերը, որոնք սկսվում են արտաքին պարիսպներից և իջնում մինչև դաշտավայր: Սրանք կառուցված են միջին չափսերի հասարակ քարերից և ունեն մի քանի հարյուր մետր երկարություն: Նման պատերը երբեմն խաչաձևվում են և շրջափակում առանձին հատվածներ, որոնք, հավանաբար, որպես բնակարաններ են ծառայել: Հետագա ավելի մանրամասն հետազոտությունները կճշգրտեն դրանց նպատակը¹:

Արաքս գետը թափվող Արփայի ակունքների վրա ընկած Դայլակյա գյուղի մոտ հայտնաբերված պարիսպը պատկանում է, ըստ երևույթին, ցեղերի տիպի հուշարձանների: Այդ պարսպի շրջակայքում կան բուրձարձակ սենյակներ, որոնց պատերը կառուցված են մանր քարերով, իսկ տրամադրված սենյակներով: Տանիքին թողնված անցքը լուսամուտի տեղ է ծառայել: Ենթադրվում է, որ սենյակները հատկացված են եղել բնակչության համար: Այնտեղ գտնվել են՝ մեկ քարե մուրճ, օբսիդաքարե երկու սղոց և մեկ դանակ՝ նույնպես օբսիդաքարից: Շրջակայքում կան շատ հողակույտեր, որոնցից մի քանիսը, պեղված են, բայց երկու մետր խորության վրա գտնված է միայն մոխիր:

Քարե դարը ներկայացված է գրեթե բացառապես այն կոթողներով, որոնք պահպանվել են հողի մակերեսի վրա: Հետագա պեղումներն ի հայտ կբերեն այնպիսիները, որոնք թաքնված են հողի ընդերքում:

Կատարված պեղումները հայտնաբերել են բազմաթիվ այնպիսի դամբարաններ, որոնք համարյա բոլորը պատկանում են մետաղի դարին, որը հաջորդեց հղկված քարի, կամ մետաղի դարին: Դրանց թիվը հասնում է 1700-ի: Հայտնաբերված է մեծ քանակությամբ գույք: Դամբարանների հասակին վերաբերող ժամանակագրական հարցը քննելուց առաջ անհրաժեշտ է տալ դրանց պարունակության հակիրճ ամփոփումը:

Պեղված գերեզմաններն իրենց կառուցվածքով միևնույն ոճի են: Բնորոշ ձևը ներկայացնում է մի տեսակ արկղ, որին որպես կողմեր են ծառայում չորս մեծ սալաքարեր և որպես ծածկոց՝ մեկ կամ երկու լայն քաբ:

¹ Երևանում 1923 թվականից սկսած գոյություն ունի Հայկական հնագիտական ընկերություն, որը բազմաթիվ գիտական արշավախմբեր է կազմակերպել վերոհիշյալ երկրագծոտների շրջանում: Մեզալիթյան հայտնագործություններ արվեցին հենց այդ արշավների ժամանակ: Արշավախմբի գործունեության արդյունքներն ամփոփել է Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր Ա. Քալանթարը վերոհիշյալ աշխատությունում «Քարե դարը Հայաստանում», տե՛ս «Նորք», № 5 (1925):

² Բերքերյանը այդ մասին մի լավ և լիակատար հաշվետվություն է ներկայացրել «Revue des Etudes Arméniennes», VII, պրակ 2, 1927:

Տարբերությունը արկղերի չափսերի և մանավանդ այն վարպետության մեջ է, որով քարերն ընտրված և դասավորված են: Փաստորեն դամբարանները վերաբառադրում են դուրեմների ձևերը: Այդ իսկ պատճառով գերեզմանները որքան ավելի են նմանվում ու մոտենում դուրեմներին, այնքան ավելի հին են:

Որոճաքարերով պարսպված և սալաքարերով ծածկված կամ պարզապես որոճաքարերով կամարակապված դամբարանները պետք է դիտել որպես ավելի նոր դամբարաններ:

Դիակը գերեզման է դրվել կողքի վրա կամ, ավելի հաճախ, վերին մասով: Կան շիրիմներ, որտեղ դիակները տեղավորված են կարասների մեջ, ինչպես դագաղներում: Երբեմն գործածված են երկու միակցված կարասներ: Մեռածի մարմինը տեղավորել են մեկում, իսկ ոտքերը՝ մյուսում¹: Դիակները դրված են նստած կամ կքանստած վիճակում:

Դամբարաններում եղած իրերն են՝ զենքեր, գործիքներ, զարդեր և խեցեղենի կտորաանց: Չենքերի խումբը բաղկացած էր սրերից, միզակներից, կացիններից, աղեղներից և նետասլաքներից: Ավելի շատ են դաշույնները, քան սրերը: Այսպես, գերեզմանոցների մի խմբում գտնվել է 76 դաշույն և միայն յոթ սուր: Այս դաշույններից 69-ը պղնձից են, իսկ յոթը՝ երկաթից: Առաջինները երկու տեսակի են՝ մեկի շեղքն ու կոթը մի կտոր են կազմում, մյուսը տարբեր կտորներից է: Երկաթե զենքերը՝ դաշույնները թե սրերը, պատկանում են վերջին տեսակին:

Բրոնզե և երկաթե սլաքները միևնույն ձևի են. դրանց տերևանման շեղքի միջնագիծը ցցուն է և անցքի միջոցով ամրացվում էր փայտե կոթին: Կացինները շատ հազվադեպ են պատահում: Դրանցից գտնվել է մեկ հատ բրոնզից, իսկ հինգը՝ երկաթից, որոնցից չորսն ունեն կոթառ և հատու սայր, իսկ մեկը՝ կոթառ և սուր սայր: Դժվար է ասել, այդ կացինները ծառայել են որպես զենք, թե պարզապես գործիքներ են եղել:

Պեղված գերեզմանոցներում աղեղներ չկան: Մակայն պատկերազարդ գոտիները, որոնց մասին խոսվելու է ավելի ուշ, բավական որոշակի գաղափար են տալիս անտարակույս գործածության մեջ եղած աղեղների ձևի մասին: Դրանք բաղկացած են եղել երեք կեռ մասից, որը ուշագրավ է:

Նետասլաքները բավական բազմազան են: Դրանք օբսիդաքարից, բրոնզից և երկաթից են: Մի մասն ունի փայտի մեջ ամրացվող պուչեր, մյուս-

¹ Դամբարանի այս ինքնատիպ ձևը հայտնի է եղել նաև Պաղեստինում: Այնտեղ գտնվել են երիտաների կմախքներ, պարփակված մեկ կամ երկու՝ բերաններով հակադիր սափորներում (A. Lods, Israël, p. 130):

ները՝ կոնաձև անցքեր: Դրանցից մի քանիսը եռանկյունաձև են, ատամնավոր և ոչ-ատամնավոր: Մետաղե սլաքները քարե սլաքների ձևն ունեն:

Պետք է նշել նաև քարե կամ բրոնզե մի քանի գուրգերի գլխիկներ, ինչպես նաև ատամնավոր մի մատանի, որ կռփամարտի գործիք է եղել:

Կմախքների ոտքերի տակ գտնվել են 3-4 սանտիմետր տրամաչափի բրոնզե փոքր օղակներ, որոնց դերը մնում է անհայտ. ենթադրելի է, որ դրանք կազմել են լասոյի մեկ մասը¹:

Գործիքների խումբը բաղկացած է բրոնզե և երկաթե ուղիղ կամ կոր դանակներից, որոնք ունեն ոսկրե, փայտե, մետաղե քառակուսի կամ կլոր կոթեր, բրոնզե կամ ոսկյա սանրերից՝ զարդարված բրոնզե օղակներով, և մեկ կամ երկու անցքով սրաքարերից [հեսան], որոնք երբեմն ունեն բրոնզե օղակ: Կամանց դամբարաններում կան բրոնզե, երկաթե և ոսկրե կարճ ու երկար ասեղներ, ինչպես և մագախանման նրբուներկներ: Գրանցված են նաև երկու բրոնզե մանգաղ և երեք եղան (մեկը հայտնաբերվել է Մորգանի կողմից, երկուսը՝ Լալայանի), որոնց դերն անհայտ է:

Չարդերի գույքամատյանում հիշատակվում են ականջօղեր, մագերի օղեր, մանյակներ, ապարանջաններ, մատանիներ, գոտիներ, ճարմանդներ, գնդասեղներ, մեդալիոններ, շոթայիկներ, կախոցներ և այլն:

Ականջօղերը կազմված են միմիայն բրոնզե օղակներից, հազվադեպ՝ արծաթյա, երբեմն՝ թելի վրա շարված մեկ կամ բազմաթիվ սարդիոնի կամ ապակու ուլունքներով: Որոշ դամբարաններում հայտնաբերված փոքրիկ ուլունքները հավանաբար գործածվել են որպես զինդեր, որոնք թելով կապում էին ականջներից: Կան զինդեր, որոնք ուլունքների փոխարեն երկու ծակած ոսկոր են կրում: Կան նաև այնպիսի զինդեր, որոնք կազմված են օղակաձև ոլորված բրոնզե լարից, որի ծայրը վերջանում է պարուրաձև օղակի մեջտեղում:

Մանյակները կազմված են սարդիոնի, ապակու և ճեմապակու ուլունքներից: Որոշ մանյակներ կվարցից, ագաթից և կարմիր սարդիոնից են: Մի քանի մանյակների մեջ կարմիր սարդիոնից ուլունքները թելով մեջընդմեջ կապված են կապարե փոքրիկ ուլունքների հետ, իսկ կապարե կախոցները մեդալիոնների դեր են խաղում: Մանյակներն ընդհանրապես կազմված են 40-80 ուլունքներից: Պատահում են նաև մանյակներ՝ լայն օղակներով, որոնց ծայրերը կորացված են: Ապակյա ու սարդիոնե խոշոր ուլունքները, ինչպես նաև նոճու ճյուղի կեղևները կարծես ծառայել են պարանոցից կախելու համար:

Հայտնաբերվել են նաև մեծ քանակությամբ ապարանջաններ, որոնք պատրաստված են միևնույն նյութից, ինչ որ զինդերը, այսինքն՝ բրոնզից, երկաթից, արծաթից, կապարից և բազմազան ուլունքներից: Տափակ կամ կլոր այս զարդերը մարդիկ կրում էին քևերի, բազուկների և ոտքերի վրա: Մեծ մասն էլ պարզապես թեթև հղկված հարթ օղակներ են և գործածվել են որպես զարդ և որպես դրամ: Որպես զարդ գործածվածներն ունեն մախշեր և զանազան ուռուցիկ զարդարանքներ: Օղակների ծայրերը երբեմն վերջանում են օձի գլխի կերպարանքով:

Մատանիները, որ ավելի հազվադեպ են, քան ապարանջանները, նույնպես սովորական օղակներ են՝ վրան փաթաթված լարով կամ պատված բրոնզե շերտով, առանց որևէ քարի: Դրանցից գտնվել են կանանց, տղամարդկանց և նույնիսկ երեխաների գերեզմաններում:

Գոտիները մնան են բրոնզե շեղբերի, որոնց եզրերը ծածկված են երկրաչափական զարդերով, իսկ միջին մասը քանդակապատ է: Շեղբը երբեմն այնքան լայն է, որ նրա վրա որսի տեսարաններ են պատկերված: Հատուկ ուշադրության են արժանի գոտիներից երկուսը: Մեկը ներկայացնում է կենդանու գլխով մի մարդու, որը կանգնած է երկու ձիով լծված կառքին, իսկ դիմացը պատկերված է այծյամների հոտը հետապնդող մի նետաձիգ: Մյուսի վրա պատկերված է թռչունի գլխով մի աղեղնավոր, որը կանգնած է երկու ձիերի ետևում, իսկ ձիերի վերևում թռչում է մի սրբաբզեզ, դիմացը՝ նետ և երկրորդ աղեղնավորը: Արդյո՞ք սա դիցաբանական մի տեսարան չէ:

Ճարմանդները բրոնզե լարից կազմված և ասեղով ամրացված աղեղի մնան են: Վերջինը որոշ մնուշներում աղեղի հետ միասին կազմում է մի կտոր: Հետաքրքիր է նշել, որ գտնվել է մի մեծ ճարմանդ, որը մնան է Հայաստանում մինչև օրս էլ գործածվող այն ճարմանդներին, որոնցով անասուններին ախոռում կապում են մտորին:

Գնդասեղները բազմաթիվ են և բազմազան: Դրանց բրոնզե կոթերի վրա բացված են անցքեր: Տարբերությունը գլխի ձևի մեջ է: Կան այնպիսիները, որոնց գլուխները բավականաչափ ընդգծված չեն, մյուսներինը կոնաձև են կամ պրիզմայաձև: Կան նաև բավական հաստ և ծանր գլխիկներով գնդասեղներ: Մի քանիսի գլխիկները թռչունի կերպարանք ունեն: Հաճախ գնդասեղներն ունեն կախոցներ և բրոնզե զանազան զարդարանքներ, օրինակ՝ բրոնզե փոքրիկ միաձույլ գլաններ կամ գնդասեղից շոթայիկներով կախված զանգակներ:

Կան նաև մեծ քանակությամբ կոճակներ, որոնք գործածվել են ոչ միայն հագուստները կոճկելու համար, այլ նաև ծառայել որպես հագուստների և գոտիների զարդարանք: Որոշ դամբարաններում հայտնաբերվել են 200-ից

¹ Ծ. Լալայան, ճշվ. աշխ., էջ 168:

ավելի կոճակներ: Չեով կոճակները կլոր են, կիսագնդաձև, շեղանկյուն, ծակ-ձիթապտղաձև և այլն:

Խեցեղենը կազմում է դամբարանային գույքի մի ստվար մասը. կան դամբարաններ, որոնցից հանվել է մինչև քսան անոթ: Միայն Լալայանի պեղումների ժամանակ հայտնաբերվել է 672 կտոր խեցեղեն, չհաշված փորելու և փոխադրության ընթացքում ջարդվածները: Ըստ պատրաստման եղանակի խեցեղենը բաժանվում է երկու տեսակի՝ ձեռքով և դուրզով պատրաստվածների:

Առաջին տեսակի նմուշները նյութի և ձևի առումով պարզունակ են: Կժերն ունեն կանթեր, իսկ անոթները, որ բազմաթիվ են՝ տափակ հատակ: Կաթսաները տարբեր ձևի են, դրանցից մի քանիսն ունեն ոտքեր: Չեռքով պատրաստված ոչ մի խեցեղեն զարդարանք չունի:

Դուրզի օգնությամբ պատրաստված ամանեղենը շատ ավելի գեղեցիկ ձև ունի և նուրբ կավից է: Ջրի կամ զինու համար գործածված կժերն ու անոթները տարբեր տրամաչափի են. ստորին մասում զնդաձև և թեթևակի կոճաձև են, վիզը՝ կարճ, հատակը՝ տափակ:

Ճաշ եփելու համար նախատեսված կաթսաները կամ անոթները բավական լայն են և գրեթե զնդաձև: Սրանք ունեն երկու կանթ, բերանը սեղմված, վերին մասը ծածկված է հորիզոնական զժերով: Ամենափոքրերն ունեն միայն մեկ կանթ: Կան այնպիսիները, որ կանթ չունեն: Դրանցից մեկը հետաքրքրական ձև ունի՝ այն իրենից ներկայացնում է թաթերի վրա նստած մի չորքոտանու: Գավաթները զամազան ձևի են՝ ըստ կավագործի ճաշակի: Մի քանիսը նման են բաժակի, իսկ մյուսները՝ երկար կանթով զլանաձև լայն սկահակի: Կա եղջերուի գլխի տեսք ունեցող կանթի մի նմուշ:

Պնակները կոպիտ են, քամիչները նույնպես: Ավելի խնամքով պատրաստված ամանների եզրերը զարդարված են փորագրություններով: Փոքր ու խորունկ պնակները գործածվել են ճրագի փոխարեն, որպիսիք դեռևս մեր օրերում կիրառվում են հայկական գյուղերում:

Պեղումների ժամանակ հայտնաբերվել են հիշարժան ևս մի քանի առարկաներ՝ բրոնզե հայելիներ, սանձի առանձին կտորներ (ձիերի ոսկորների մեջ), մի սայլակ և բազմաթիվ կամեր¹: Կամը մի տախտակ է, որի վրա շարված են սրածայր փոքր քարեր կամ երկաթե ատամներ՝ հասկերը ճզմելու համար: Սա նույնպես այժմ գործածության մեջ է Հայաստանում:

Դամբարաններից հանել են նաև բրոյա կտորեղենի մնացորդներ: Երկաթյա զենքերի ժանգի վրա դրոշմված որոշ կտորների հետքեր թույլ են

տալիս ենթադրելու կանեփի կամ վուշի հյուսվածքի գործածությունը այդ ժամանակներում: Թելերի հաստության ու նրբության տեսակետից կտորները այլազան են: Գտնվել են նաև պարանների, ժապավենների և կաշվե փոկերի մնացորդներ: Բրոնզե գոտիների վրայի պատկերները ցույց են տալիս, որ հազուստները կարվում էին ոչ թե մեկ, այլ բազմատեսակ կտորներից:

Այս հակիրճ ակնարկը թույլ է տալիս որոշ չափով գաղափար կազմելու երկրի մշակույթի մասին: Նախքան վերջինիս բնութագրումը, անդրադառնանք պեղված դամբարանների ժամանակագրության հարցին:

Ժ. դը Մորգանը փորձեց դրանք բաժանել չորս կարգի և ամենահինը վերագրեց երրորդ հազարամյակին (Ք. ա.): Նրա կարծիքով, պղինձն ու երկաթը հայտնաբերվել են Հայաստանում, և հենց այստեղ է ծնունդ առել երկաթի արդյունաբերությունը, Ք. ա. քսաներորդ դարից առաջ: Ավելի վաղ ժամանակներում երկիրն ապրել է բրոնզե դարը: Սակայն բրոնզի արդյունաբերություն Հայաստանում դեռևս չկար: Բրոնզը հանդիսանալով պղնձի և անագի խառնուրդ, կարող էր հնարվել միայն անագ ունեցող երկրում: Հայաստանում և անբողջ Առաջավոր Ասիայում այս մետաղը գոյություն չունի: Անագ հայթայթելու համար պետք էր մինչև Չինաստան գնալ: Ժ. դը Մորգանը Չինաստանն ընդունում է որպես բրոնզի հայրենիք: Այնտեղից է Հայաստան հասել բրոնզի հետ ծանոթությունը: Բրոնզե դարը Հայաստանում երկար չի տևել և իր տեղը զիջել է երկաթե դարին: Ֆրանսիացի գիտնականը այս մետաղի գյուտի պատիվը վերագրում է Հայաստանին: Նա գտնում է, որ Միջագետքը հանքեր չունեիր. ուստի և երկաթը ներմուծում էր Հայաստանից: Ո՛չ Ասորեստանը, ո՛չ Եգիպտոսը չէին կարող երկաթ հայթայթել, քանի որ նրանք նույնպես չունեն այդ մետաղը:

Պեղումները հաստատել են երկաթի գոյությունը Քաղդեայում՝ ակկադյան դարաշրջանում, Սարգոն I-ի և Նարամսինի օրով: Հեռևաբար, Հայաստանն այդ դարաշրջանից առաջ արդեն երկաթ ուներ: Այս հանգամանքը նրան թույլ է տալիս բրոնզե դարը, որ երկաթե դարից առաջ է, ետ մղել դեպի երրորդ հազարամյակ:

Ժ. դը Մորգանը մոռացել է, որ անագի հանքերը նախնիներին ծանոթ էին Չինաստանից ավելի մոտ շրջաններում, հատկապես Պարսկաստանի արևելյան մահանգ Դրանգիանում¹: Անագ կար նաև Ինդոսի կողմերում, և այդ հանքը նշանավոր էր իր բարձր որակով²: Այդ հանքերը հաջողությամբ

¹ Կամ, *tribulana*, *tribolon* - ցարեն ծնծելու, կախելու գործիք:

¹ *Strabo*, XV, 2, 10. *γίνεται δε παρ' αὐτοῖς κατ'εσπερος*.

² «Աշխարհացոյց», հրատ. Ա. Մաքրիի, Վենետիկ, 1881, էջ 39:

կարող էին իրենց արտադրանքը մատակարարել Քաղղեային և Էլամին՝ բրոնզ ստանալու համար: Ամազը նույն անունն ունի հայերենում՝ անագ, ասուրերենում՝ anaku, հնդկերենում՝ naga: Նույնությունը բացատրվում է, անշուշտ, փոխառությամբ, բայց ո՞ր ուղղությամբ: Դա մնում է անհայտ¹: Հայկական լեռնաշխարհը շատ քիչ է հետազոտված, հետևաբար դժվար է եզրակացնել, թե այդ երկրում անագի հանքեր չկան: Մորզանը ինքը նշում է, թե մի օր կարող են հայտնաբերվել հազարավոր տարիներ ի վեր մոռացված հանքեր²:

Մի կողմ թողնելով մետաղագործության ծագման բարդ ու համարյա անլուծելի խնդիրը, մեր նպատակն է հաստատել, որ Միջագետքում և Էգեականում քաղաքակրթությունը գուգադիպել է բրոնզե դարին, այսինքն՝ այդ քաղաքակրթությունը հիմնվել է բրոնզի արդյունաբերության վրա: Էգեական աշխարհում բրոնզե դարն սկսվել է Ք. ա. երրորդ հազարամյակում: Քաղղեայում պղինձը երևան է գալիս առաջին պատմական դինաստիայի օրով, մոտ 2500 թ.³: Բրոնզը նույնպես հայտնի է՝ սաղավարտները, կացինները, միզակների ծայրերը և այլ զենքեր, բոլորը բրոնզից, սովորական էին: Հայաստանը, իր աշխարհագրական դիրքի բերմամբ, չէր կարող մեկուսացած մնալ Միջագետքի մշակույթից: Նարամսինը Պիր Հուսեյնում՝ Ամիդի մոտ գտնվող մի գյուղում, թողել է մի քարակոթող⁴: Ասուրական արշավանքները դեպի Հայաստան արդյո՞ք նպատակ չունեին, ի միջի այլոց, ձեռք բերելու անհրաժեշտ մետաղը:

Ամենուրեք բրոնզե դարին հաջորդել է երկաթե դարը: Երկաթի ճանաչումը և դրա գործածությունը հետզհետե տարածվեց մինչև այն պահը, երբ այն մարդկության առջև բացեց առաջադիմության մի նոր դարաշրջան: Միջագետքին միջոց էր հայտնի երկաթը: Էգեացիները երկաթը գործածում էին սկսած հենց երկրորդ հազարամյակից Ք. ա.: Սակայն երկաթի արդյու-

նաբերությունը Միջագետքում և Էգեականում դուրս մղեց բրոնզի արդյունաբերությունը երկրորդ հազարամյակի կեսերին:

Պետք է որ այդպես եղած լինի նաև Հայաստանում: Պեղված գերեզմանոցների մեծ մասում հայտնաբերվել է բրոնզե և երկաթե գույք: Դա ապացուցում է, որ դրանք պատկանում են բրոնզե դարի վերջին կամ երկաթե դարի սկզբին: Որոշ շիրիմներում կան կծկված կմախքներ, բրոնզե առարկաներով օժտված և, միևնույն ժամանակ, այլ կմախքներ՝ պառկած, կողքին՝ երկաթե զենքեր: Ակնհայտ է, որ վերջին կմախքները դամբարան են դրվել հետագա դարաշրջանում: Այն բավական հազվագյուտ դամբարանները, որոնց գույքը բաղկացած է բացառապես բրոնզից, անշուշտ ավելի հին են:

Տրոյայի ավերակներում երկաթի հետքեր չեն գտնվել: Թիզլաթալասարը (1117-1080) իր ավարի մեջ երկաթ չի հիշատակում, մինչդեռ նա մեծ ավար է ձեռք բերել Միջագետքի հյուսիսային մասում, Հայաստանի սահմանների մոտ կատարած արշավանքներում¹: Մակայն Աշուրնասիրպալը (884-859) հաստատում է, որ ինքը Չավան երկրից, Ամիդի շրջանից բերել է, հարուստ ավարի հետ մեկտեղ, 300 փխտու երկաթ՝ parzillu²: Չանագան անոթներից բաղկացած ավարի առարկաները բոլորը պատրաստված էին siparru բրոնզից (կամ պղնձից): Թիզլաթալասարը բրոնզե (կամ պղնձե) aqqulat ere կացիններ է գործածել՝ Կաշիարի (Մասիուս) լեռներում ճանապարհ բանալու համար, մինչդեռ Աշուրնասիրպալը իր տրամադրության ներքո ուներ ոչ միայն բրոնզե կացիններ, այլև երկաթի փոքր կացիններ, kalabate parzilli³:

Կարելի է ասել, որ երկաթե դարը Ք. ա. XII դարից հետո է եղել: Երկաթե դարի դամբարանները Հայաստանում բաժանվում են երկու խմբի՝ ըստ գտնված իրերի երկրաչափական և կամ բնական ոճի: Մարդկանց և անասունների պատկերներ կրող բրոնզե գոտիները համարվում են բնական ոճի առաջին փորձերը: Որոշ մնացորդներ են գտել այդ գոտիների և Հալլատատյան կոշված մշակույթի միջև: Դա սկիզբ է առել Ք. ա. IX դարում, մի հանգա-

¹ Anaku սեպագիր արձանագրությունների մեջ նշանակում է կապար: Արճիճ հայերեն բառը իրականում փոխառություն է, նշանակում է կապար. բայց արդի պարսկերենում նրա համազոր arziz-ը ունի անագի իմաստ: Գրաբար հայերենով կապար է, որը հիշեցնում է շումերերեն Ku-Babbar, արձաք: Ասորերեն՝ awāra, կապար: Եթե հաշվի առնվի շումերերենը, կարելի է եզրակացնել, որ այդ բառը բաղկացած է kub և abbar-ից, իսկ ասորերենը պահպանել է միայն վերջին տարրը:

² J. de Morgan, Mission, I, էջ 35, հմմտ. L'Humanité préhistorique, էջ 125.

³ L. W. King, նշվ. աշխ., էջ 42:

⁴ Նարամսինը ապրել է Կյուրոսի (555-532) ժամանակակից Նաբոնիդից 3200 տարի առաջ, ինչպես որ այդ հաշվել է Նաբոնիդի (Նաբոնահիդ) գրագիրը: Լ. Քինգը (History of Sumer and Akkad, 1910, էջ 61) այս թվականը գտնում է չափազանցված և առաջարկում 2600 թ.: Ըստ Կ. Լեման-Հաուպտի (Zwei Hauptprobleme der Babylonischen Geschichte, էջ 172 և շար.), Նաբոնիդի գրագիրը սխալվել է՝ գրելով 3200 փոխանակ 2200-ի:

¹ A. B. W. Budge and L. W. King, Annals of Kings of Assyria, էջ 41 և 43:

² Նույնը, էջ 238-347 և այլն: Ավարի ցուցակում կան 2 փխտու kaspi, 2 փխտու hurasu, 100 փխտու anaku, 200 փխտու siparru, 300 փխտու parzillu, 1000 դիկար siparru, 200 կապի siparru և այլն: Նշված մետաղներն են՝ kaspu արծաթ, hurasu ոսկի, anaku անագ կամ կապար, siparru պղինձ, parzillu երկաթ: Երև մետաղը այս ցուցակում չկա. գուցե դա նշանակում է պղինձ, իսկ siparru-ն՝ բրոնզ: Անգլերեն բարձրագույնագույն երկուսի համար երբեմն պղինձ, երբեմն բրոնզ է ցույց տալիս: Ժ. դը Մորզանը ըմբռնել է siparru իբրև պղինձ, Ժ. Մրնանի բարձրագույնագույն «երկաթի» փոխարեն, և սա ազդել է նրա եզրակացությունների վրա (Missions, I, էջ 201):

³ Նույնը, էջ 39, 230, 331:

մանք, որն իրավունք է տալիս գոտիները վերագրելու ուրարտական դարաշրջանին, որն սկսվում է IX դարից: Ուրարտուի թագավորներ Ռուսա II-ի (680-645) և Ռուսա III-ի (605-585) բրոնզե վահանները այդ մույն բնական ոճի երաշայի նմուշներ են: Դրանցից գտնվել են նաև Օսեթիայում և Թալիշում, որն առիթ է հանդիսացել, թեպետև իզուր, ենթադրելու օսեթի՝ VII դ. դեպի Հայաստան կատարած արշավանքի մասին¹: Ավելի հավանական կլիներ հիշատակել կիսմերձերի և սկյութների ներխուժումը միևնույն դարում: Սկյութների մի մասը տեղաբաշխվեց Հայաստանում, Շակաշենի շրջանում²: Հետաքրքիր է, որ գեղաքանդակ գոտիները հայտնաբերված են հենց Գանձակի (Ելիզավետպոլի) շրջակայքում, որը գրեթե համապատասխանում է նախկին Շակաշենին:

Երկաթե դարով արդեն սկսվում է պատմական դարաշրջանը: Թիզլաթ-պալասարի դարաշրջանի բազմաթիվ փոքր պետություններ վերջ ի վերջո միացան և IX և VII դարերում կազմեցին Ուրարտուի պետությունը: Մինչև այժմ չի հայտնաբերված ոչ մի դամբարան, որը պատկաներ հաջորդ դարաշրջանին՝ մինչև քրիստոնեության սկզբնավորման ժամանակները: Գուցե թաղման սովորությունը վերացել էր իրանական մագդեիզմի ազդեցության հետևանքով: Պեղված դամբարանների մեծ մասը վերաբերում է բրոնզե դարավարտին: Դրանք ներկայացնում են տվյալ ժամանակաշրջանի երկրի մշակույթը՝ իր բնորոշ գծերով: Զանի որ դամբարանը համարվում էր անդրշիրիմյան կյանքի բնակարան, ուստի դրանով կարելի է գաղափար կազմել բնակելի տան մասին, որի պատճենն էր, անշուշտ, դամբարանը: Վերջինը ցույց է տալիս, որ տները ժամանակին կառուցվում էին առանց շաղախի, իրար վրա շարված խոշոր քարերով: Կային նաև ստորերկրյա տներ: Ընտանեկան գույքը բաղկացած էր մանավանդ խեցեղեն անոթներից: Պեղված բազմաթիվ սենյակներ ցուցադրում են խեցեղենի հարստությունը և նրա ձևի ու գույնի զանազանությունը: Դրանցից կան ամեն մեծության՝ գոլաներից սկսած մինչև հսկա կարասները, և ամեն գույնի՝ սև, կարմիր, գորշ-կանաչավուն:

Հագուստները կարճ էին, պնդված դրոշմազարդ գոտիով, արձակ տաքատներ և սոնապաններ:

Թանկարժեք քարերն ու զարդերը հարզի էին և՛ կանանց, և՛ տղամարդկանց մոտ: Մի դամբարանում մեռած կնոջ մարմինը ծանրաբեռնված էր ամեն տեսակ զարդերով՝ ակամջի կլոր գինդեր, պարանոցին երկու

մանյակ, բրոնզե գոտի՝ երկու կախոցներով, մեկը՝ զանգակի ձևով, մյուսը՝ կարապի տեսքով, ձախ ձեռքի վրա՝ ութ տափակ ու կլոր ապարանջան, մատներին՝ երեսուն մատանի, երկու ապարանջան էլ զարդարում էին ոտքերը: Միևնույն դամբարանում հայտնաբերվել է մի դաշույն, որը ցույց է տալիս մեռյալի արտոնյալ անձնավորություն՝ գուցե իշխանուհի լինելը:

Սիրված զարդեր էին զանազան նյութերի հատիկները և ուլունքները: Բրոնզե հայելիները, գնդասեղները և զանազան կախազարդերը կազմում էին կնոջ արդուզարդի անհրաժեշտ մասը: Վարսակալը (դիադեմ) բրոնզե լայն երիզով, որը գնալով նեղանում էր դեպի ծայրերը, հասարակ գլխարկ չէր, այլ ավելի շուտ վերապահված էր բարձր դիրքի տեր անձանց:

Չենքերի առատությունը բացատրվում է տվյալ դարաշրջանի երկրի բնակչության մարտական ու պատերազմական բնույթով: Որսորդությունը, մանավանդ՝ բազեով, ևս անտեսված չէր:

Տրիբուլաները մատնանշում են երկրագործության առկայությունը: Ընտանի կենդանիների՝ ձիերի, եզների, կովերի, ոչխարների, խոզերի, այծերի, զոմեշների և թռչունների ոսկորները անասնաբուծության զարգացումը ցույց տվող փաստեր են:

Մետաղագործությունը հասել էր զարգացման որոշ աստիճանի: Բրոնզը, պղինձը, կապարը, արծաթը և երկաթը հայանի էին: Ոսկին հազվագյուտ էր: Գիտեին հալելու, դրվագելու, ձգելու և դարբնելու արվեստը:

Ջաղաքական ու սոցիալական կյանքին վերաբերող որևէ տվյալ իսպառ բացակայում է: Հավանաբար, բնակչությունը բաժանված էր ցեղերի և տոհմերի: Կարելի է ենթադրել ցեղերի դաշնակցություն կամ խմբավորում: Այդ երկիրը Թիզլաթպալասարի դեմ հանեց մի կռալիցիա՝ բաղկացած 60 արքայիկներից, որոնք Հայկական լեռնաշխարհի ամբողջ ուժը չէ որ ներկայացնում էին:

Անհատական դամբարանի տարածումը ցույց է տալիս, որ ցեղային կարգերն արդեն կազմալուծվել էին՝ տեղի տալով ընտանիքին: Գույքի առկայությունը դամբարանում իր հերթին ապացույց է այն փաստի, որ ըստ գոյություն ունեցող հավատալիքների՝ հանգուցյալը շարունակում է ապրել իր դամբարանում: Կարծում էին, որ թաղվածը ենթակա է քաղցի ու ծարավի: Շիրիմն ընդմիջտ չէին փակում: Բավարարվում էին միայն մուտքը դժվարամատույց դարձնելով՝ վայրի անասուններից ու գողերից պաշտպանելու համար: Եթե պեղումների շրջանում հայտնաբերված քարե

¹ J. de Morgan, Missions, I, էջ 204:

² Strabo, XI, 8, 4.

ձկնակերպ¹ մեծ հուշարձանները պատկանում են խնդրո առարկա դարաշրջանին, ապա դա կարող է որոշ հիշատակություն լինել այն պաշտամունքի մասին, որ ընդունված էր երկրում վաղ ժամանակներում:

Ավելացնենք, որ վերջերս Գառնիի շրջանի ժայռերի ու Թալինի մերձակայքում գտնվող քարանձավի պատերի վրա, ինչպես և այլ վայրերում հայտնաբերվել են գրության կամ առեղծվածային նշանների մեկ կամ մույնիսկ երկու համակարգ (2): Ենթադրվում է, որ այդ գրությունները պատկանում են ուրարտական պետությունից ավելի վաղ դարաշրջանի²:

Պեղումների ժամանակ գտնված ամենաթանկագին հայտնաբերումներից են մարդկային զանգերը, որոնց ուսումնասիրությունը կարող է որոշ լույս սփռել երկրի բնակիչների ցեղային պատկանելության վրա:

1887-1888 թթ. պեղումների ընթացքում գտնվեցին մեկ տասնյակ զանգեր: 1893 թ. հայտնաբերվեց յոթ արական և երկու իգական զանգ, 1906 թ.՝ տասներեք զանգ, 1908 թ.՝ երեսուցյոթ, որոնցից քսանչորսը տղամարդկանց և տասներեքը՝ կանանց: Դժբախտաբար, ոսկորներն այն աստիճան էին փտել, որ չէր կարելի դրանց դիպչել առանց փոշի դարձնելու: Ավագոտ հորում մնացածները ավելի լավ էին պահպանվել:

Մարդաբանությունը ձգտում է մարդկային ցեղերը բնորոշել և դասակարգել ըստ գլուխների ձևի: Նրա գլխավոր չափանիշը զանգային հատկանիշն է: Այսպես, նկատի է առնվում գլխի լայնության հարաբերությունը նրա երկարությանը, կամ երկու տրամաչափերի համեմատությունը: Երկարությունը 100 ընդունելով, լայնությունը կարտահայտվի 100-ի կոտորակով: Քանի գլուխը լայն է, այնքան զանգային հատկանիշն աճում է: Եթե այդ հատկանիշն անցնում է 80-ից, ուրեմն կարճագլուխ է, եթե 75-ից ցածր է, ուրեմն երկարագլուխ է: 75-ի և 80-ի միջև եղած հատկանիշը բնորոշում է միջակագլուխներին:

1908 թվականի պեղումների ժամանակ հայտնաբերված 37 զանգերը մասնագետներից մեկի մանրագին ուսումնասիրության առարկա դարձան³: Եզրակացությունը եղավ այն, որ այդ զանգերը շեշտված երկարագլուխ են: Արական զանգերի զանգային հատկանիշը հավասար է 72,7-ի,

¹ Նախընտրելի է այս հուշարձանները կոչել ձուկն, քան վիշապ: Փղտացիների daggon, dag և ձուկն բառերի մեջ հավանաբար կապ գոյություն ունի:

² Հայտնագործումը հրատարակվել է «Խորհրդային Հայաստան» թերթում, 1926 թ. դեկտեմբերի 19-ին և 1927 թ. հունվարի 4-ին, տե՛ս հաշվետվությունը «Revue des Etudes Arméniennes» հանդեսում, հ. VII, պրակ 2 (= 1927), էջ 291:

³ В. В. Бунак, "Русский антропологический журнал", 1929, պրակ 3-4, տե՛ս Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 219:

իսկ կանացիներինը՝ 76,3-ի: Դիմային հատկանիշը 54,4 և 52,2 է, որը զանգերը կապում է լեպտոպրոտոպ [«նրբադեմ», նեղ ու երկար դեմք] խմբին: Ըստ ռնգային հատկանիշի՝ 43,5 և 47 լեպտոռնինյան [«նրբաքիթ», նեղ քիթ] են, իսկ ակնախորշի 83,5-ը ավելի շուտ խոսում է միկրոսենի օգտին:

Այս բոլորը բնորոշ են երկարագլխությանը և ապացուցում են, որ Հայաստանի բնակիչները տվյալ դարաշրջանում կազմում էին երկարաձև զանգ ունեցող ռասա:

Իտալացի մարդաբան Սերջին ապացուցել է, որ Միջերկրականի ավագանը նախապես գրավվել է երկարագլուխ ռասայի կողմից, որը կոչվում է homo mediterraneus: Ընդհակառակն, Փոքր Ասիան բնակեցված է եղել, ըստ մույն գիտնականի, կարճագլուխ ռասայով¹:

Անգլիացի Ու. Ռիպլին համաձայն չէ Սերջիի տեսությանը: Ըստ նրան՝ Փոքր Ասիայի ամենահին էթնիկական խավը մույնպես պատկանել է երկարագլուխ տիպին և ներկայացնում էր մույն միջերկրածովյան ռասայի ճյուղը: Դա վերաբերում է ամբողջ Եվրոպային²:

Եթե այդ կարծիքը հաստատվի, կարելի է ընդունել, որ Հայաստանի երկարագլուխները մույն միջերկրածովյան ռասայի մասն են կազմել: Երկարագլուխների աիրապետությունը համընկնում է բրոնզե դարին, մինչդեռ հետագա դարը, որ հայտնի է երկաթի արդյունաբերությամբ, դիտվում է որպես կարճագլուխ ռասայի քաղաքակրթության ժամանակ, որին պատկանում են նաև Նաիրիի և Ուրարտուի բնակիչները:

¹ Sergi, Europa, l'origine dei populi europei, Turin, 1908.

² W. Ripley, The races of Europe, էջ 448:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

1. ԱՐԵՎԵԼԵԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՐՎԱԳՏԵՐԸ

Մեր գիտելիքների ներկա սահմաններում միջագետյան քաղաքակրթության դարը հազիվ մտնում է Զ. ա. երրորդ հազարամյակի շերտը: Պատմության լույսը դեռ չի թափանցել 3000 թ. առաջ մարդկության վրա տիրող խավարը (3):

Ամենահին քաղաքակրթությունը, որը կոչվում է շումերա-աքքադական, ընդգրկում է երրորդ հազարամյակն ամբողջապես: Այն ստեղծողները շումերներն ու ակկադական սեմիտներն էին, որոնք չէին լքելու հին աշխարհի քաղաքական ու մշակութային գերիշխանությունը հազար տարի շարունակ, 3000-ից մինչև 2000 թթ. Զ. ա., որքան էլ բախտի փոփոխությունները լուրջ լինեին:

Երկրորդ հազարամյակի սկզբում հանդես են գալիս էթնիկական նոր տարրեր, որոնք տեղաշարժում են քաղաքական տիրապետության կենտրոնը:

Ի՞նչ վիճակում էր Հայաստանը շումերա-ակկադական դարաշրջանում: Արդյոք կազմո՞ւմ էր քաղաքակիրթ աշխարհի մի մասը և ինչպե՞ս էր կոչվում այս հեռավոր անցյալում: Հիմնականում բացարձակապես ոչինչ հայանի չէ: Այդ մասին տվյալներ չկան: Ամիդի (Դիարբեքի) մոտ, Պիր-Հուսեյն գյուղում հայտնաբերվել է ակկադացի Սարգոնի մերձավոր հաջորդներից մեկի՝ Նարամսինի քարակոթողը, բայց դա գտնվում է միայն Հայկական լեռնաշխարհի փեշին¹: Որոշ վավերագրեր հիշատակում են Տուգրիշ կոչված մի երկիր, որ վերջերս ցանկացան նույնացնել Հայաստանի հետ: Աշշուրացի Սարգոնը (1880-1948), որ տարբեր է ակկադացի Սարգոնից (2633-2579), իր արձանագրություններից մեկում նշում է, թե ինքը նվաճել է այն

¹ Քարակոթողի գոյությունը դեռևս ապացույց չէ, թե Նարամսինը երկիրը նվաճել է մինչև Ամիդ: Հնարավոր է, որ ակկադացի թագավորը քարակոթողը կանգնեցրել է մի արշավանքի ժամանակ, ինչպես Թիզբաթալասար I-ը հայկական հողի վրա՝ Մանգլիկի մոտ, բայց էլ իր հարթական արշավանքի հիշատակը Նաիրիի թագավորների դեմ, առանց կարեճալու ամբողջ երկիրը գրավել: Գուցե քարակոթողը որպես ավար թեղվել է Բարեմոնի, որտեղ նախապես կանգնեցվել էր, հմմտ. Hall, The ancient history of the Near East, էջ 186, ծան. 2:

երկրները, որոնք տարածվում են «Ստորին ծովից մինչև Արևմտադարձի ծովը», և ճանապարհների ցանցով ծածկել այդ երկրները:

Նշված երկրներն են՝ Աշշուր, Ակկադ, Ամուրրու, Անգան, Էլամու, Մարխաշի, Լուլլուբի, Տուգրիշ, Շուրարու: Դրանք բոլորը ծանոթ են, բացի Տուգրիշից: Այդ երկիրը Հայաստանում տեղավորելը չէր համապատասխանի բնագրի իմաստին, ըստ որի՝ թվարկված բոլոր ինը երկրները տեղավորված են Ստորին ծովի, այսինքն՝ Պարսից ծոցի և Արևմտյան ծովի՝ Միջերկրականի միջև: Մույն արձանագրությունը բույլ է տալիս Տուգրիշը փնտրել միայն կա՛մ Էլամի սահմանների լեռներում, կա՛մ պետության արևմուտքում՝ Ամանուսի շրջանում¹:

Համնուրաբին (1955-1913) Տուգրիշը Գուտիումի և Շուրարուի հետ միասին դասում է յոթ լեռնային երկրների շարքը²: Շամշի-Ադադ I-ը (1879-1847) ճանաչում է Տուգրիշի բազմաթիվ թագավորների: Նա ասում է, որ «Տուգրիշի թագավորներից և Վերին երկրի թագավորներից հարկ է ստացել իր Աշշուր քաղաքում»³: Ընդունված է կարծել, թե Վերին երկիր կոչվածն այն երկիրն է, որ խեթական տեքստերում նույն անունն ունի և գտնվում է Փոքր Հայքում. այստեղից էլ միտք է ծագել՝ Տուգրիշը նույնացնել Մեծ Հայքի հետ: Սակայն շատ կասկածելի է, որ Շամշի-Ադադ I-ը իր գործն ու զենքը հասցրած լինի այնքան հեռու գտնվող Փոքր Հայք: Վերին երկիր այստեղ

¹ Այդ վավերագիրը պարունակող սալիկը պատկանում է աշշուրացի Շարրուկին-Սարգոնին (4): Այն դեռևս հրատարակված չէ, բայց Է. Ֆորրերն օգտագործել է Ասորեստանի պատմության վերաբերյալ իր վավերագրական հոդվածում (Reallexikon der Assyriologie, I, էջ 239-243): Այդ սալիկը պարունակում է Սարգոնի պետության երկրների մի ցանկ, որտեղ ցույց է տրվում յուրաքանչյուր երկրի ճանապարհների երկարությունը՝ ribit-ներով. ribit haq. beru-ի «երկնային ծամ», մի չափ է, մոտավորապես 10 կմ 600 մ (ավելի ճիշտ՝ 692 մ, ըստ Ֆ. Թյուրո-Դանսենի՝ «Revue d'Assyriologie», XVIII, էջ 133): Այսպիսով, 1) Աշշուր՝ 120 թիֆու=1275 կմ, 2) Ակկադ՝ 180 թ = 1903 կմ, 3) Անգան՝ 90 թ = 952 կմ, 4) Էլամ՝ 90 թ = 952 կմ, 5) Մարխաշի՝ 40 թ. = 425 կմ, 6) Լուլլուբի՝ 90 թ = 925 կմ, 7) Տուգրիշ՝ 60 թ = 638 կմ, 8) Շուրարու՝ 120 թ = 1275 կմ: Է. Ֆորրերի համաձայն, այս երկրներն են՝ Ասուր, Բարեթոն, Պարսկաստանը կարմանիայով հանդերձ, Շոշանը, Արևմտյան Մարաստանը, Ասորպատականը, Հայաստանը, Միջագետքը և Միրիայի ափը: Նա չի բերում ո՛չ այս նույնացմանը բերող նկատառումները, ո՛չ էլ բացատրում է, թե ինչ օգուտ կարելի է քաղել այս քիչ հարմարավետ թվերից: Մույն տվյալների իրական արժեքը չափաքան է չափազանցել՝ երեք երկրներ ունեն 120 թ, երեք ուրիշներ՝ 90 թ, մեկը՝ 180 (2X90), Տուգրիշը՝ 60 թ (120-ի կեսը), Մարխաշին՝ 40 թ (զույգ 30 թ, այդ դեպքում ամենուրեք 30-ի բազմապատիկը կունենանք): Այս կարգի տվյալները չեն կարող օգտակար ծառայություն մատուցել: E. Weidner, Die Inschriften der altassyrischen Königen, էջ 24, իրավունք ունի Տուգրիշը տեղադրելու Էլամի մոտակա լեռներում:

² E. Weidner, Die Inschriften der altassyrischen Königen, էջ 243:

³ Նույնը, էջ 245:

միայն կարող է նշանակել Տուգրիշի մերձակա շրջանը՝ Էլամի կամ Ամանոսի հյուսիսում¹:

Աշշուրացի Սարգոնի նույն արձանագրության մեջ, ուր խոսվում է ինը երկրների մասին, քվարկվում են նաև Աշշուրի նահանգները, որոնք վեցն են՝ Չուպրիյան Մարի, Ռ-ապիգում, Տիգրիսի կամ Աշշուրի մարզը բառիս նեղ իմաստով, Առապխա մինչև Լուրդի, Լուլլուրի և «Միմեսյան» Արմանի: Առապխան Քերկուկի մարզն է, Լուլլուրին՝ Սուլեյմանիեի, իսկ Միմեսյան Արմանի նահանգը գտնվում է Լուլլուրիի և Առապխայի հարավում, հետևաբար՝ Խանեկիմի մարզում:

Արմանին ոչ մի կապ չունի Հայաստանի անվան հետ. պետք է խուսափել նման փորձերից: Ուշադրություն դարձնենք Չուպրիի վրա, որը հետագայում երևան կգա Սուլայրի անվան տակ՝ Հայաստանին սահմանամերձ մի մարզ ցույց տալու համար: Լուրդին Ասարխադոնի օրով (681-669) նույնպես կոչանա Արգանենի մի շրջանի անունը: Միմեսիսն այն կիրճի անունն է, որով անցավ Մալմանասար III-ի տուրտանը, երբ Գիլգամեից վերադառնում էր մայրաքաղաք՝ Պարսուայի և Նամրիի վրայով: Միմեսիի կիրճը գտնվում է Խանեկիմի մարզից հյուսիս: Էթնիկական կամ աշխարհագրական տերմինների այս շարժումը դեպի հյուսիս, ինչպես՝ Սուլայրին, Լուրդին, Միմեսին, արժանի է հատուկ ուշադրության: Հենց այս երևույթի լույսի ներքո Արմանին չի կարող համապատասխանել Հայաստանին, որովհետև Արմանին «Խալման»-ի մեկ ուրիշ տարբերակ է (5):

Արմանի անունով մի ուրիշ երկիր հայտնի է ակկադացի Սարգոնի պետության արևմտյան սահմանների մոտ: Գոյություն ունի մոտավորապես 2550 թվականին ապրած ակկադացի Սարգոնի երրորդ հետնորդի՝ Նարամսինի դեմ տասնյոթ թագավորների դաշնակցության վերաբերյալ մի վավերագիր: Դաշնակիցների ցուցակը պահպանված է, և մենք այն բերում ենք առդատակի ծանոթության մեջ²:

¹ Է. Ֆորրերը նույնացնում է երկու Վերին երկրները, մինչդեռ Պ. Հաուպը՝ *Akkadische und Sumerische Keilschrifttexte*, էջ 41, կարծում է, թե ասորեստանցիների Վերին երկիրը նույնն է, ինչ որ Էլամը:

² Կուլիցիայի կազմը՝ 1) Ամնաիլա՝ Գուդուսուայի կամ Գուսուայի թագավոր, 2) Ռակկիի թագավոր Բուանա, 3) Լապանիլա՝ Ուլլիվիի թագավոր, 4) ... ճիպլա ...-ի թագավոր, 5) Պամբա՝ Խաթթիի թագավոր, 6) Չիպանի՝ Կանեշի թագավոր, 7) Ռուր... (Պուրուշասանդայից), 8) Հուվարուվա՝ Անուրուի թագավոր, 9) Թիսսենի՝ Պարասիի թագավոր, 10) ..., 11) Մադա-կիմա՝ Արմանիի թագավոր, 12) Կիպու՝ եղևիների թագավոր, Ամանու, 13) Թասսի՝ ...-ի թագավոր, 14) Ուր-խարակ՝ Լարակի թագավոր, 15) Ուր-բանդա՝ Նիկկիի թագավոր, 16) Իլուշխու-մալի՝ Թուրկիի թագավոր, 17) Թիսրիմի՝ Կուրասուրայի թագավոր, տես Բ. Forrer, *Die Boghazköi-Texte in Umschrift*, II, էջ 2: A. H. Sayce, *JRAS*, 1928, էջ 206: B. Hrozný, *Archiv Orientalni*, I, № 1:

Այստեղից երևում է, որ հինգերորդ դաշնակիցը Խաթթի երկրի մի թագավոր է, իսկ տասնմեկերորդը՝ Արմանի երկրի թագավոր Մադակիման է: Դժվար է ցույց տալ երկրի ճշգրիտ տեղը, պետք է այն փնտրել Սիրիայի (Ասորիքի) հյուսիսում: Շատ հնարավոր է, որ այդ Արմանին լինի Խալմանի (Հալեպի) մեկ ուրիշ տարբերակը, այնպես, ինչպես Միմեսիի Արմանին Խալմանի տարբերակն է: Մակայն թվում է, թե ավելի իրավաչափ է այն նույնացնել Հերմոնի հետ, որն սուրբգրային անուն է¹:

Փաստորեն մենք կատարյալ մթության մեջ ենք Հայաստանի՝ շումերական կադակադական դարաշրջանի անվան ու ճակատագրի կապակցությամբ²:

Հիշենք, որ հայերենը պահպանել է մի քանի այնպիսի բառեր, որոնց գոյությունը այդ դարաշրջանի վավերագրերում հաստատված է: Փոքր Ասիայում, այդ միևնույն ժամանակաշրջանում, կար առևտրականներից (թանկար) բաղկացած սեմական մի գաղութ: Դժգոհ լինելով Պուրուշասանդա քաղաքի բնիկ իշխան Նուր-Դագանից՝ նրանք պատվիրակների (*sukallu*) միջոցով խնդրում են ակկադացի Սարգոնին (2633-2579) միջամտել: Խնդրանքն ընդունվում է. ակկադացի թագավորն արշավանքի է դուրս գալիս, հասնում Պուրուշասանդա քաղաքը, գրավում այն և խելքի բերում հարստահարիչ Նուր-Դագանին: Սարգոնն առիթից օգտվում է և իր երկիրն է տեղափոխում մի քանի տեսակ բույսեր, պտղատու ծառեր և սովորական ծառեր, ներառյալ *hashuru*, *tittu*, *saluru*, *sirdu*³: Դրանք հայերենում պահպանված բառեր են՝ խնձոր, թութ, սալոր կամ շլոր, սիրը *στοιβή*: Մա շատ կարևոր մի իրողություն է, որը նույն բնույթի ուրիշ բառային նյութերի հետ միասին մի տեսակ ջահ կժառայի՝ Հայաստանի նախահայկական ժողովուրդների ցեղային պատկանելության վրա լույս սփռելու համար:

Երկրորդ հազարամյակը նշանավոր է դառնում էթնիկական նոր տարրերի գերիշխանությամբ: Խեթերը ասպարեզ են գալիս Փոքր Ասիայում, իսկ խուրրիները՝ Հյուսիսային (Վերին) Միջագետքում կամ Շուրարտում,

¹ E. Dhorme, *«Revue Biblique»*, 1929, էջ 132, նաև նույն հեղինակի՝ *«L'Evolution religieuse d'Israël. I. La religion des Hébreux nomades»*, էջ 170: Հիշենք, որ Արման-ակարասի կոչված մի բնակավայր նշված է Ադադնիլարի I-ի դաշնագրում (1336-1305), որ նա կնքեց Բաբելոնի թագավորի դեմ վարած հաղթական պատերազմից հետո: Ըստ այս դաշնագրի՝ երկու երկրների սահմանն անցնում էր Պիլասի-Արման-ակարասի-Լուլուսն (Լուլլուրի) գծով: L. W. King, *The Annals of the Kings of Assyria*, էջ XXXII:

² E. Weidner, *Der Zug Sargons von Akkad nach Kleinasien*, 1922, *Boghazköi-Studien*-ի մեջ տեքստը վերծանված և բարձրանված է: E. Dhorme, *«Revue Biblique»*, 33, 1924, էջ 5-22, ֆրանսերեն բարձրանություն, մեկնաբանությամբ Լ. դե Լապրոսի՝ *Les Hittites*, էջ 38 և շար., *L'Evolution de l'humanité* գրքում:

³ N. Adontz, *Emprunts de haute époque en arménien*, *«Revue des Etudes indoeuropéennes»*, 1938, հատ. I, պրկ. 2-4, էջ 457-467 (6):

ինչպես որ այն կոչում են ասուրա-բաբելոնացիները. վերջապես՝ կասսիտները ներխուժում են Հարավային (Մտորին) Միջագետք կամ Բաբելոն: Առանձնապես անհրաժեշտ է նշել, որ այս ժողովուրդների հետ միասին պատմության աղջամուղջից դուրս է գալիս հնդեվրոպական մի ցեղ, որպեսզի աշխարհին ցույց տա իր կազմակերպչական համճարի առաջին ապացույցը: Իհարկե, սա չի նշանակում, թե խեթերը, խուրրիները և կասսիտները բոլորը հնդեվրոպական ցեղեր են: Պետք է խոստովանել, որ մենք դեռևս ոչինչ չգիտենք այս ժողովուրդների ծագման մասին: Հավաստիացնում են, որ վերոհիշյալ ժողովուրդների բարձր խավը՝ ղեկավարող դասակարգը, բաղկացած էր հնդեվրոպական տարրերից (7), որոնք որպես խմորիչ են ծառայել քաղաքական մեծ շարժում սկսելու համար: Կարելի է պատկերացնել այն հույժ հետաքրքրությունը, որ ներկայացնում է այս իրողությունը ապագա Հայաստանի պատմության համար՝ մի հարևան երկիր, որ խոսում է հնդեվրոպական լեզվով: Խեթական ու խուրրիական տիրապետությունը տևեց մինչև Ք. ա. 1200 թվականը, ապա կործանվեց իսկական հնդեվրոպացիների ներխուժման հարվածների տակ, հանձնիս փռայուզիացիների, որոնց մասն էին կազմում հայերը (8):

Ի՞նչ է հայտնի մեզ Հայաստանի մասին 2000-1200 թվականների ընթացքում: Նախքան Հայաստանի ճակատագրին անդրադառնալը, անհրաժեշտ է պարզել նույն ժամանակաշրջանի դեպքերի շրջանակը՝ խեթերի և խուրրիների պատմության սահմաններում:

Նարամսինի դեմ խմբված դաշնակիցների շարքում վերը մենք նշեցինք ոմն Պամբայի՝ Խաթթիի թագավորին: Սա ամենահին հիշատակումն է Խաթթիի՝ Փոքր Ասիայի փոքր պետություններից մեկի, որի հետ Կանեշի (Կեսարիայի մոտ) սեմական վաճառականներն առևտրական հարաբերություններ ունեին: Ավելի ուշ, աշշուրացի Սարգոնի օրով (1980-1948), ուրեմն՝ երկրորդ հազարամյակի սկզբին, երևան են գալիս ասիական փոքր պետություններ, որոնք պայքար են մղում հնդեվրոպական ծագում ունեցող տարրերի դեմ: Ո՞րտեղից և ե՞րբ են եկել սրանք, հայտնի չէ: Թվում է, թե նրանք այդ տեղերում բնակվել են ոչ շատ ժամանակ առաջ: Նրանք բազմաքանակ չեն եղել, բայց ունեին լավ զինված հեծելազոր (մինչ այդ ձին անծանոթ էր այս երկրում): Նոր եկողները զավթում են իշխանությունը և նույնիսկ իրենց լեզուն պարտադրում տեղական ժողովրդին: Այսպիսով, խեթերը հնդեվրոպականանում են՝ դառնում նեո-խեթեր: Ընդունված է դրանց կոչել խեթեր, և որպեսզի զանազանեն հին, կամ իսկական, խեթերից, վերջիններիս անվանում են մախա-խեթեր:

Փոքր Ասիայի քաղաքական զարգացումը ներկայացնում է գրեթե նույն պատկերը, ինչ որ տեղի է ունեցել Բաբելոնում: Հնդեվրոպական տարրերը խեթական միջավայրում խաղալու էին նույն դերը, ինչ որ սեմիտները կատարեցին շումերների նկատմամբ: Այնպես, ինչպես սեմիտները միավորեցին շումերների քաղաք-պետությունները՝ միապետական կարգեր ստեղծելու համար, նույնն էլ անելու էին հնդեվրոպացիները ասիական փոքր իշխանությունների նկատմամբ և հիմնելու էին մի հզոր միապետություն:

Մեզ ծանոթ ամենահին խեթական թագավորը՝ Կուշարի արքա Pitheas-ն է¹: Նա էր, որ երկիրը քաղաքականապես միավորեց: Նրա որդին ու հաջորդը՝ Անիտտան, աշշուրացի Սարգոնի ժամանակակիցը, պատմում է, որ իր հայրը պատերազմ է մղել Նեսայի թագավորի դեմ² և նրան որպես ռազմագերի բերել է իր նստավայրը: Նույն Անիտտան կռվել է չորս թագավորների դեմ՝ Hattus-ի թագավոր Piuista-ի, Huzziia-ի թագավոր Zalpuwa-ի, Purushanda-ի թագավորի և Salatiwara-ի թագավորի դեմ: Այս բոլոր երկրներն ու քաղաքները ծանոթ են ըստ Կանեշի ցուցակի, ակկադացի Սարգոնի դարաշրջանում: Անիտտան նրանց հպատակեցնում և ընդունում է մեծ թագավորի տիտղոս³:

Անիտտային հաջորդեց Թուդիսալիա I-ը, իսկ սա գահը հանձնեց իր որդի Պուսարմային: Վերջինիս որդին ու հաջորդը՝ Լաբարման, աչքի է ընկնում որպես մեծ պատերազմող. նա գրավեց շատ քաղաքներ, ինչպես Wilusa, Hupisna, Tuwanawa, Nenašša, Landa, Zallara, Pusuhandu, Lusna: Այս քաղաքների տեղերը հայտնի չեն, բացի Թուվանուվայից, որը դասական հեղինակների Տիանան է: Երկրի միավորումը Լաբարմայի հովանու ներքո գրեթե ավարտվեց: Դրա համար էլ ավանդությունը նրան է շնորհում Խեթական պետության իսկական հիմնադրի պատիվը:

Լաբարմայի որդին՝ Խաթթուսիլն արդեն մտածում է իր երկիրն ընդարձակել՝ առաջանալով դեպի Սիրիայի (Ասորիքի) ծովափը: Նա շարժվում է դեպի Խալպա (Հալեպ), բայց չի կարողանում գրավել և, ըստ երևույթին, այդ արշավանքում էլ սպանվում է:

Մուրսիլ I-ը լուծում է իր հոր վրեժը՝ գրավելով Խալպան, ժողովրդին տեղահանելով և բնակեցնելով իր երկրում: Նա իրեն զգում էր բավական ուժեղ և համարձակ՝ արշավանք ձեռնարկելու Բաբելոնի դեմ. «Խաթթիի մարդը

¹ Կանեշի սալիկների վրա հիշատակվող Կուսասուրյան հավանաբար նույն Կուշարն է, մի անուն, որ պահպանված է Գարսաուրիտիս և Գուրասուրա-Արխեւալիս տեղանուններում Թատտայից (Թուլգոյու) դեպի հարավ-արևելք ընկած մի կետում:

² Նեսան Նյուսան է, Գրիզոր Նյուսացու հայրենիքը:

³ Անիտտայի տեքստը վերծանված է Բ. Հրոզնու կողմից, «Archiv Orientalni», I, (1929), էջ 273-299:

արշավեց Ակկադի դեմ», ասում է նրա մասին բաբելոնյան ժամանակագրությունը¹:

Մուրսիլը ստիպված է լինում դուրս գալ նաև ընդդեմ խուրրիների, հավանաբար, Քաբելոնի դեմ կատարած արշավանքի ընթացքում: Նշենք, որ դա խուրրիների առաջին հիշատակությունն է: Խեթական թագավորը սպանվում է իր Խարափսիլի քրոջ ամուսնու՝ Խաուտիլի կողմից, որը գահ է բարձրանում: Նա շարունակում է պատերազմը Սիրիայում և բախվում խուրրիների հետ: Հյուսիսում նա հարձակվում է Կասկա լեռնային ցեղերի (կամ գասգաների) վրա, որոնք այստեղ առաջին անգամն են երևան գալիս, բայց այնուհետև չեն դադարելու իրենց ավերիչ ասպատակություններով խռովել Խաթթուշա երկրի հանգիստը: Խաուտիլին կռվի է բռնվում նաև Շուգգա անունով մի թագուհու ետ: Նրա մահից հետո իր որդին ու հաջորդը սպանվում է բռնակալ Չիդանտայի կողմից: Սակայն վերջինս էլ իր հերթին սպանվում է իր որդու՝ Ամմունայի կողմից, որին հաջորդում է սրա որդին՝ Խուզզիյան: Թելեպինուն՝ Խուզզիյայի Իշտապարիա քրոջ ամուսինը, սպանում է Խուզզիյային և հափշտակում իշխանությունը²:

Թելեպինուն է հեղինակը այն տեքստի, որը մեզ իրագեկ է դարձնում նախորդ թագավորների գործունեության մասին³: Նա իշխեց մինչև 1650 թվականը, որից հետո խեթական թագավորների մասին գրեթե երկու դար շարունակ այլևս ոչինչ չի լսվում: Խեթական պետությունը վերանում է կամ վերածվում գավառական իշխանության: Սակայն XV դարի առաջին քառորդին այն վերականգնվում է. երևան է գալիս Թուրխալիա II-ը, որը 1475 թ. հիմնում է երկրորդ պետությունը, որը գոյատևում է մինչև 1200 թվականը (Ջ. ա.): Խեթերի քաղաքական կյանքի երկու դարաշրջանները տարբերելու համար առաջինը կոչում են Հին թագավորություն՝ հիմնված Պիտխանայի կողմից, իսկ երկրորդը՝ Նոր թագավորություն: Հին թագավորությունը տևեց մոտ 2000-ից մինչև 1650 թվականը, իսկ նորը՝ 1470-ից մինչև 1200 թվականը:

Խեթական պետության թուլացումը 1650-1475 թվականներին զուգադիպում է հիքսոսների մեայլ դարաշրջանի հետ և անշուշտ հետևանք է նրանց ավերիչ ասպատակությունների: Այս խորհրդավոր ժողովուրդների ծագումը դեռ մնում է վարկածների ոլորտում: Վերջերս հարցի քննարկումը տալիս է

¹ Ընդհանրապես այդ արշավանքը վերագրում են 1806 թ., բայց A. Goetze-ը, Hethiter, Churiter und Assyrer, էջ 53, որը կարճ ժամանակագրության կողմնակից է, առաջարկում է 1758 թվականը:

² L. W. King, Chronicles concerning early Babylonian Kings, հատ. II, 1907:

³ Boghazköi-Studien, B. Hrozny, Hethitische Keilschrift-Texte aus Boghazköi, № IV, Eine Inschrift des Königs Telibinus, der älteste Hethitische Texte, էջ 90-129:

դեպի խուրրիները, որպես սահական ազգի, որը, սակայն, դեկավարվում է հնդեվրոպական առաջնորդների կողմից: Գնալով ավելի հաստատվող այս կարծիքի համաձայն, խուրրիների կողմից Հյուսիսային Միջագետքի գրավումը, հիքսոսների արշավանքը Եգիպտոս և կասսիտների բնակվելը Քաբելոնում սերտ կերպով կապված են միմյանց հետ, որպես միևնույն երևույթի, այն է՝ արևելյան ճյուղի հնդեվրոպացիների Միջագետք ներխուժման, իսկ քիչ հետո՝ արևմտյան ճյուղի հնդեվրոպացիների խեթերի մեջ ներթափանցման արդյունքներ:

Չավթիչները խուրրիներին կազմակերպում են այնպես, ինչպես իրենց արևմտյան եղբայրներն էին արել խեթերի նկատմամբ: Նրանք կործանում են Աշշուրի թագավորությունը և տեղ դառնում Միջագետքին՝ Ամանուսից սկսած մինչև Չագրոս լեռնաշղթան: Նրանք ետ են մղում Հյուսիսային Սիրիայի խեթերին և ստիպում նրանց ներփակվել Հալիսի ոլորտում: Դարձյալ նրանք են, որ հրահրում են հիքսոսների շարժումը և մղում նրանց դեպի Եգիպտոս: Երբ փարավոնները թոթափեցին հիքսոսների լուծը, նրանք իրենց գեներալ ուղղեցին Սիրիայի դեմ և պատերազմ սկսեցին Միտաննիի թագավորների հետ: Նրանց կարծիքով, հիքսոսների պատճառած աղետը գալիս էր այդ կողմից և պետք էր այն ոչնչացնել իր բնում, որպեսզի մնան դեպքերն այլևս չկրկնվեն: Եգիպտացիները խուրրիներին համարում էին Եգիպտոսի վրա բարբարոսական ասպատակության դրդիչներ, իսկ միտանացիները խուրրիական ժողովրդի մի ճյուղն էին: Սա գալիս է հաստատելու այն տեսությունը, որի համաձայն խուրրիները Ջ. ա. երկրորդ հազարամյակի առաջին կեսին պատմական կարևոր գործոն էին Վերին (Հյուսիսային) Միջագետքում:

Համենայն դեպս, հիքսոսների խառն դարաշրջանն ավարտվելուց հետո խուրրիները համախմբում են իրենց ուժերը, ստեղծում մի հզոր պետություն Վերին Միջագետքի սրտում, կենտրոն ունենալով Խառան (Օսրոնե) մարզը: Դա Միտաննի պետությունն է (9):

Եգիպտոսում իշխում է 18-րդ հարստությունը, իսկ Քաբելոնում՝ կասսիտների հարստությունը: 1473 թվականին, Կարգամիշի դեմ Թուտմես III-ի արշավանքի ժամանակ, Խաթթիի թագավորը նրան նվերներ է ուղարկում: Խեթական նոր պետությունը, ասպարեզ գալով, պահանջում է Հյուսիսային Սիրիայի իր վաղեմի տիրապետությունները: Սա արդեն պատերազմի նշան էր ընդդեմ Միտաննիի: Վերջինս, որ միևնույն ժամանակ դիմագրավում էր փարավոնների հարձակումները, շուտով ընթանեց, որ Խաթթիի սպառնալիքն ավելի իրական և ավելի վտանգավոր է, քան Եգիպտոսինը:

Այդ ժամանակից սկսած Միտաննին անհրաժեշտ է համարում ապահովել փարավոնների բարեկամությունը, որպես նեցուկ խեթերի դեմ:

Միտաննիի թագավոր Արտաքաման (1430-1405) իր դստերը կնույթյան է տալիս Թուտմես IV-ին (1420-1411): Խեթերը Միտաննիից խլում են Սիրիայում իրենց ունեցած տիրույթները: Արտաքամայի թողը՝ Թուշրատտան, իր Թադուխեայա դստերն ամուսնացնում է Ամենոֆիս III-ի (1412-1376) հետ: Սակայն Եգիպտոսի հետ ունեցած դաշինքը չի փրկում Միտաննիին: Դժբախտաբար՝ Ասորեստանն այդ ժամանակ դուրս է գալիս միտանական գերիշխանությունից և ծառանում նրա դեմ: Խեթերի և ասորեստանցիների միջև երկու կողմից սեղմված Միտաննին հետզհետե հյուծվում է և 1300 թվականի մոտերը վերջնականապես անհետանում, իր ժառանգությունը թողնելով Ասորեստանին:

Այժմ արդեն առաջնության համար մենամարտ է սկսվում հինավուրց երկու մրցակիցների՝ Խաթթիի և Աշշուրի միջև: Սակայն ավելի լուրջ իրադարձություններ գալիս են փոխելու պատմության ընթացքը և վերջ տալու Խաթթիի և Աշշուրի մրցակցությանը: Թրակա-փոյոզիական ասպատակությունը՝ հնդեվրոպական ցեղերի մի նոր հորձանք, կուլ է տալիս Խեթական պետությունը մոտավորապես 1200 թվականին և որոշ ժամանակ կասեցնելու Ասորեստանի վերելքը, մինչև որ սա իր տեղը կգրավեր նոր կազմված պետությունների շարքում, տասներորդ դարից սկսած:

Մեր նպատակից դուրս է նույնիսկ համառոտ հետևելու խեթերի, խուրրիների և ասորեստանցիների միջև տեղի ունեցած պայքարի իրադարձություններին, առավել ևս՝ ցույց տալու Բաբելոնի և Եգիպտոսի մասնակցությունը այդ պայքարում: Մեզ հետաքրքրողը Հայաստանի դրությունն է այդ շրջանում, 2000-1200 թվականներին (Ջ. ա.):

Ո՛չ Խեթական առաջին թագավորության ժամանակ (2000-1650), և ո՛չ խուրրիական առաջին դարաշրջանում (1800-1500) մենք տեղեկություն չունենք Հայաստանի մասին: Սակայն խուրրիական դարաշրջանը, այսուհանդերձ, հատուկ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ ըստ մի քանի հեղինակավոր անձանց կարծիքի՝ Հայկական լեռնաշխարհը համարվում է խուրրիների օրրանը, կամ ավելի շուտ՝ բնակավայրը, նախքան նրանց այնտեղից Միջագետք իջնելը: Կարծում են նաև, որ Ուրարտուի պետությունը խուրրիական ժողովրդի վերջին ճիգն է իր ազգային բնօրրանը պահպանելու համար:

Գալով Խեթական երկրորդ պետությանը և Միտաննիի ժամանակաշրջանին, սեպագիր արձանագրությունները շատ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում Հայաստանի արևմտյան մասի՝ Արձանենեի, Մո-

ֆենեի (Շուփք) և Եփրատ գետի վերին հոսանքի՝ Բարձր Հայքի մասին: Այդ մարզերը, տեղավորված լինելով երկու մրցակից աշխարհների՝ խեթերի և խուրրիների միջև, որոշակի դեր են խաղացել իրենց անկախությունը հարևան պետությունների փառասիրական ձգտումներից պաշտպանելիս: Այդ մարզերից մեկը կրում է Հայասա տպավորիչ անունը, որի մեջ ցանկացել են տեսնել հայերի ազգային անունը՝ հայ: Այս տեսակետից Հայասան վիթխարի հետաքրքրություն է ներկայացնում և ստիպում է մեզ հատուկ ուշադրություն ցուցաբերել նրա պատմությանը, նախքան Հայաստանի և հայի միջև եղած հարաբերության հարցին անդրադառնալը (10): Ընթերցողների կողմնորոշումը հեշտացնելու համար օգտակար կլինեն այստեղ բերել խեթական թագավորների երկրորդ պետության (1475-1200) և Միտաննիի (1500-1300) արքայացանկերը (11).

Խեթական թագավորներ¹

1. Թուլխալիա II (1475)
2. Խաթթուսիլ II
3. Թուլխալիա III (1410-1390)
4. Սուպալիուլիումա (1380-1346)²
5. Մուրսիլ II (1345-1320)
6. Մուվատալի (1293)
7. Ուրխի-Թեշուր (1293-1286)
8. Խաթթուսիլ III, № 6-ի եղբայրը
9. Թուլխալիա IV
10. Արնուվանդա
11. Թուլխալիա V (1200)

Միտաննիի թագավորներ

1. Պարսաշատտա (1500)
2. Մաուշատար (1455-1430)
3. Արտաքամա (1430-1405)
4. Մուտարնա (1387-1367)
5. Թուշրատտա
6. Մաթթիվազա

Ասորեստանի թագավորներ

1. Աշշուրուբալիտ (1362-1337)
2. Ադադնիրարի (1336-1305)
3. Սալմանասար I (1304-1243)
4. Թուկուլթի-Նինուրտա I

¹ Խեթական ինչպես և խուրրիական անունների տառադարձությունը պայմանական է: Ունանք նախընտրում են հնչելոք բաղաձայններով արտասանել՝ Դ-ուլխալիյա, Դ-ուշրատտա և այլն. ուրիշներ կարծում են, որ այդ մարդիկ չէին զանազանել հնչելոք և խուլ հնչյունները: Ֆ. Թյուրո-Դամսենի կարծիքը («Syria», 1936 թ.) համոզիչ չէ. քի-ն կարող է նաև հանգել wi-ի (ինչպես, օրինակ, հայերենում է) և -wi- գիրը չի պահանջում -bi արտասանություն:

² Ե. Կավենյակի համաձայն (RHA, 1936), Սուպալիուլիուման թագավորել է 1280-1260 թթ., իսկ նրա հաջորդը՝ 1260-1220 թթ.:

Հայասա, Իշուվա և Ալշի

Հայասա երկիրը պատմաբան է համոզեա գալիս XIV դարի սկզբում Քրիստոսի քվականութլունից առաջ, Թուղխալիա III-ի քազավորութլան օրով (1410-1390) և պատերազմ վարում այդ քազավորի ու նրա հաջորդների դեմ՝ իր անկախութլան համար: Այդ ընդհարումների պատմութլունը արձանազրված է Մուպալիուլիումայի Տարեզրութլան մեջ, շարադրված իր որդու և հաջորդի՝ Մուրսիլ II-ի կողմից, ինչպես նաև հենց իր՝ Մուրսիլ II-ի Տարեզրութլան մեջ: Ըստ կարևոր պատմական տեղեկութլուններ կան նաև Մուպալիուլիումայի և միտանական քազավոր Մաթթիվազայի միջև կնքված պայմանազրում և նույն քազավորի ու Հայասայի քազավոր Խուկկանայի միջև կնքված դաշմազրում:

Մույն վավերագրերը թույլ են տալիս ուրվազծելու Հայասայի և նրա հարևան Ալշիի պատմութլունը:

Մուպալիուլիումայի տարեզրութլունը սկզբում պակասավոր է: Բայց այնտեղ պարզորոշ կերպով կարդացվում է Հայասա անունը: Ապա խոսվում է կասկա ժողովրդի մասին, որը նոր էր գրավել Մամուխա քաղաքը: Այնուհետև արձանազրութլունը շարունակում է. «Մամուխայից հայրս մեկնեց»: Քանի որ խոսողը Մուրսիլն է, ապա ուրեմն, նրա հայրը Մուպալիուլիուման է: Քիչ անց ասվում է «Պապս ողջ և առողջ էր». դա արդեն Թուղխալիան է: Սրանից կարելի է եզրակացնել, որ Թուղխալիան իր որդու՝ Մուպալիու-

լիումայի հետ զինվորական արշավանք էր ձեռնարկել Հայասայի և կասկաների դեմ: Դա առաջին մեզ հայտնի արշավանքն է:

Կասկաներին ետ մղելուց հետո Թուղխալիան Վերին երկրից ցած է իջնում, որպեսզի արշավի ընդդեմ Մասայի մարդկանց, որոնք նեղում էին Կամմալամ: Տարեզրութլունը շարունակում է. «Մինչդեռ պապս Կամմալալում էր, իսկ հայրս գտնվում էր նրա հրամանատարութլան ներքո, թշնամի Կասկան զենք վերցրեց» և ավերակի վերածեց Խաթթի երկիրը: Ասպատակողները կասկաների հետևյալ երկու քաղաքներից էին՝ Գադհարիայից և Գազզապասից: Թուղխալիան Մասայից վերադարձավ, հարձակվեց զավթիչների վրա և նրանց փախուստի մատնեց:

«Պապս այնտեղից մեկնելուց հետո զնաց Հայասա, իսկ հայրս նրա հետ էր: Երբ պապս հասավ Հայասա երկիրը, Կարաննիսի, Հայասայի քազավորի (դեմ) ... Կումմախա մակատամարտի համար» ... շարունակութլունը չկա:

Մա երկրորդ արշավանքն է, որ Թուղխալիան կատարում է իր որդու՝ Մուպալիուլիումայի հետ միասին ընդդեմ Հայասայի, որի քազավոր Կարաննիսը դիմադրութլուն է ցույց տալիս Կումմախա քաղաքում:

Կարաննիս քազավորի անունը հիշեցնում է Կարենիտիսը (Թեոդոսուպոլիս քաղաքի նահանգը), հայերեն՝ Կարին (Կարեն), իսկ Կումմախան ավելի ստույգ կերպով կարելի է նույնացնել Կամախս քաղաքի հետ՝ Եփրատի ափին, Դարանաղի գավառում:

Այս վերջին կետը որոշում է Հայասայի աշխարհագրական դիրքը Վերին Եփրատի հովտում: Կամախսի հյուսիսում Հայասան սահմանակից էր Կասկա երկրին, որը տարածվում էր մինչև Հալիսի գետաբերանը: Դրա համար էլ խեթական աիրակալների պատերազմական գործողութլունների ժամանակ Հայասան հիշատակվում է Կասկայի հետ միասին:

Հայասա անունը կարդացվում է նաև մեկ այլ հատվածում, հետևյալ բաների հետ հարակցված՝ «Թուղխալիան, պապս ... Գանթուզիլի»: Խոսքն այստեղ, անշուշտ, վերաբերում է Հայասայի դեմ ուղղված արշավանքին, որ ձեռնարկեց նույն Թուղխալիան, Գանթուզիլիի օգնութլամբ, որը ոչ թե իր որդին է, այլ զորավարը: Նա հիշատակված է Մուրսիլի Ժամանակազրութլան մեջ որպես նրա զորավարներից մեկը, որը գործում է Նուխասսիի դեմ, Մուրսիլի քազավորութլան 7-րդ տարում:

Մուպալիուլիումայի Ժամանակազրութլունն այլևս չի անդրադառնում Հայասային: Մակայն Խուկկանայի հետ կնքած պայմանազրում Մուպալիուլիուման հիշատակում է մի քանի շատ հետաքրքիր իրադարձութլուններ, որոնք նույնպես վերաբերում են իր հորը՝ Թուղխալիա քազավորին: Դաշ-

¹ Մուպալիուլիումայի արձանազրութլունները հրատարակվել են Է. Ֆորրերի կողմից՝ B. Forrer, Die Boghazköi-Texte in Umschrift, «Wissenschaftliche Veröffentlichungen der Deutschen Orientgesellschaft», 1926, էջ 42: Տառադարձված տեքստը վերադրված է Ե. Կավենյակի կողմից՝ ֆրանսերեն քարզմանութլամբ, տե՛ս E. Cavaignac, Les Annales de Subbiluliuma, Strasbourg, 1931: Միայն քարզմանութլունը տե՛ս «Revue des Etudes Anciennes», 1930, էջ 229 և շար.:

Մուրսիլի արձանազրութլունները հրատարակված են և քարզմանված գերմաներին U. Գյոնցի կողմից, տե՛ս A. Goetze, Die Annalen des Mursiliš, Mitteilungen der Vorderasiatisch-Aegyptischen Gesellschaft, 38. Band, 1933, տե՛ս նաև B. Hrozni, Die ersten zehn Regierungsjahre des Königs Mursiliš, II, Hethitische Keilschrifttexte aus Boghazköi, 1919, էջ 156-223:

Մուպալիուլիումայի պայմանազրը Մաթթիվազա քազավորի հետ՝ ակկադերեն լեզվով, հրատարակված է գերմաներեն քարզմանութլամբ հանդերձ, տե՛ս E. Weidner, Politische Dokumente aus Kleinasien, Boghazköi-Studien, herausgegeben von Otto Weber, 8 Hef, 1923: Նույն քազավորի պայմանազրը Խուկկանայի հետ խեթերեն՝ տառադարձված և քարզմանված, տե՛ս J. Friedrich, Staatsverträge des Hethitischen Reiches, «Mitteilungen d. Vorderasiatisch-Aegyptischen Gesellschaft», 34, Band 1930:

Ուսումնասիրութլուններ՝ B. Forrer, Hayasa-Azzi, Caucasia, 9, 1931; E. Cavaignac, Le premier royaume d'Arménie, «Revue Hittite et Asiatique», 17, 1934, նույնի՝ «Subbiluliuma et son temps», Paris, 1932:

նագիրը գրված է առաջին դեմքով, և դա Սուլայխուլիուման է, որ խոսում է, դիմելով Խուկկանային: Նրան հիշեցնում է իր ցուցաբերած լավ ընդունելությունը, այն պատիվը, որ մատուցել է նրան, համարելով պարզ, բայց բազմաթիվ, և իր քրոջը կնուսթյան տալով նրան: Ահա թե ինչու Խուկկանան Սուլայխուլիումա Արև-արքայից, նրա ժառանգորդ որդուց կամ մյուս որդիներից և եղբայրներից բացի չպետք է ճանաչի ոչ ոքի, երբ նրանք իշխանության գլուխ կանգնեն: Խուկկանան պետք է նրանց պաշտպանի բռնապետների դեմ: Սուլայխուլիուման դրա փոխարեն խոստանում է նույն ձևով վարվել Խուկկանայի, նրա որդու և ժառանգի նկատմամբ: Նրանց որդիները միմյանց հետ կապված են միևնույն փոխադարձ պարտավորությամբ: Սուլայխուլիուման վկայակոչում է հազար աստվածներ, որոնք հսկում են դաշնագրի ճշգրիտ կատարմանը, որպեսզի պատժեն նրանց, ովքեր կխախտեն իրենց երդումը և կիրառարվեն ստանձնած պարտավորություններից: Աստվածները վկա են նաև ռազմական համաձայնությանը, ըստ որի երկու կողմերը համձն են առնում ռազմական աջակցություն ցույց տալ միմյանց՝ թշնամիների դեմ. նրանք պարտավոր են նաև մեկը մյուսին նախագոծալուցնել իրենց դեմ հայտնաբերված դավադրությունների դեպքում:

Ապա Սուլայխուլիուման հետաքրքրական հրահանգ է տալիս Խուկկանային, իր քրոջ հետ նրա ամուսնության կապակցությամբ: Ասում է նրան հետևյալը. «Քույրս, որ քեզ կնության եմ տվել, նույնպես ունի քույրեր և կիսա-քույրեր, իսկ դրանք, քո ամուսնության հետևանքով, մերձեցել են քեզ: Այսպես ուրեմն, Խաթթի երկրում օրենք գոյություն ունի, ըստ որի չի կարելի իր քույրերին ու զարմուհիներին դիպչել, դա անթույլատրելի է: Խաթթիում մեծ արարք թույլ տվողը չի ապրի, նա կմեռնի:

Քանի որ ձեր երկիրը զարգացած չէ, ապա դուք սովոր եք ապրել ձեր քույրերի և զարմուհիների հետ: Խաթթիում դա արգելված է: Երբ մի օր քո կնոջ քույրը, կիսա-քույրը կամ զարմուհին քո մոտ հյուր գան, նրանց առաջարկիր խմելիք և ուտելիք: Խմեցե՛ք, կերե՛ք, լավ ժամանակ անցկացրե՛ք: Սակայն նրանցից ոչ մեկին մի դիպչիր: Անթույլատրելի է, դա մահացու մեղք է: Ինքնաբերաբար չփորձես, իսկ եթե որևէ մեկը քեզ դռնի այդ բանը կատարելու, մի լսիր նրան, դրանից խուսափիր, թո՛ղ դա երդումով քեզ համար արգելված լինի:

Զգուշացիր նաև պալատի կանանցից: Պալատի ինչ կնոջ մասին էլ լինի՝ ազատ կամ ստրուկ, մի՛ մոտենար նրան, մի՛ խոսիր նրա հետ: Լինի դա քո ծառան կամ սպասուհին, նրան մի՛ մոտենար, զգուշացիր: Երբ անցնում է

պալատական մի կին, շեղվիր նրա ճանապարհից: Պալատական կնոջ՝ հետևյալ դեպքը թող դաս լինի քեզ համար:

Ո՛վ էր Մարիան և ինչո՞ւ նա մեռավ: Արդյոք նա պալատական ստրկուհու չէ՞ր հանդիպել, չէ՞ր նայել նրան: Այսպես, հայրս՝ Արևը, պատուհանից նկատել էր և նրան բարկությամբ ասել՝ «Ինչո՞ւ նայեցիր այդ կնոջը»: Եվ այդ սխալի համար Մարիան մահվան ճարակ դարձավ:

Մահվան պատճառ դարձած այս դեպքը արժանի է, որ դու զգուշանաս:

Երբ Հայասա վերադառնաս, մի՛ դիպչիր քո եղբայրների կանանց և քո քույրերին: Խաթթիում դա անթույլատրելի է: Եթե պալատ վերադառնաս, արգելված բան մի՛ անիր: Նաև նոր կին չառնես Ազգի երկրից, եթե արդեն մեկն ունես, թող նա լինի քո հարճը, բայց նրան մի դարձնիր քո կինը:

Վերցրու քո դասերը, որ կնության էիր տվել Մարիային, և տուր նրա եղբորը: Խաթթիից Հայասա տարագրված մարդկանց ետ ուղարկիր. վերականգնի՛ր նաև Խաթթիի սահմանները: Իսկ այն մարդը, որ տարագրված էր թաքցնում է և ետ չի տալիս, բարկացած ասա նրան. "Ինչո՞ւ նրանց ետ չես տալիս":

Արձանագրության շարունակությունը փչացել է և ընթերցելի է միայն մի մասը: Այստեղ խոսքն ուղղված է Հայասայի մարդկանց և մի ոմն Մարիայի: Նրանք պարտավոր են Սուլայխուլիումայի առաջին իսկ կանչին «օգնության հասնել նրան իրենց հետևակ զորքերով ու մարտակառքերով: Եթե մերժեն և անցնեն հակառակորդի կողմը, ովքեր էլ որ լինեն, իրենց տված երդումը կկործանի նրանց բոլորին, իրենց կանանցով, երեխաներով, տներով ու մարդկանցով:

Եթե դուք, Հայասայի մարդիկ, ապագայում ինձ բարեկամաբար պաշտպանեք, ես նույնպես ձեզ կպաշտպանեմ, ո՛վ Հայասայի մարդիկ, Մարիային և նրա մերձավորներին՝ Հայասայի մարդկանց միջև: Ես կպաշտպանեմ նաև Հայասա երկիրը: Եթե դուք լավ վարվեք ու պաշտպանեք Արևին և Խաթթիի մարդկանց, ես՝ Արևս, նույնպես ձեզ կպաշտպանեմ: Բայց եթե ինձ վնաս պատճառեք, ես՝ Արևս, նույնպես կվնասեմ ձեզ և ես՝ Արևս, ազատ կլինեմ իմ երդումից աստվածների առջև:

Ուրեմն, լսեցեք այս խոսքերը, որ թելադրում են ձեզ երդման ներքո. եթե դուք, Հայասայի մարդիկ և Մարիա, չկատարեք իմ պատվերները, թո՛ղ այս երդումը ոչնչացնի ձեզ բոլորիդ՝ ձեր կանանց, ձեր զավակների, ձեր եղբայրների, ձեր քույրերի, ձեր ընտանիքների, ձեր տների, ձեր դաշտերի (ձեր քաղաքների), ձեր խաղողի այգիների, ձեր անապատների, ձեր խոշոր ու մանր անասունների, ձեր ամբողջ ունեցվածքի հետ միասին, իսկ դուք սև

հողի երեսից ջնջվեք: Ես ոչ մի վնաս չեմ պատճառելու Հայաստանի մարդկանց, Մարիային և Հայաստան երկրին»¹:

Արձանագրության բնագիրը այս վիճակում, դժբախտաբար, շատ կետերում մեզ տարակուսանքի մեջ է բողմում: Կարաննիսի, Մարիայի և Խուկկանայի՝ այս երեք անձերի միջև ի՞նչ հարաբերություններ գոյություն ունեն և ո՞վ է վերջին Մարիան: Մարիան Թուղխալիայի կողմից դատապարտվել է մահվան: Արդյոք նա Կարաննիսի հաջորդն էր: Ի՞նչ առիթով էր նա գտնվում Խաթիսի պալատում: Եթե նա զավակ չուներ, համեմայն դեպքում եղբայր, որը Սուլայիլուլիումայի հրամանով պետք է կնության առներ Խուկկանայի դստերը, Մարիայի կնոջը: Մարիան զոհ դարձավ քաղաքականության հետ կապ չունեցող մի անխոհեմության, և սպասելի էր, որ գահ կբարձրանա նրա որդին կամ զոհե եղբայրը, մինչդեռ իշխանության գլուխ կանգնեց աները՝ Խուկկանան:

Ենթադրվում է, թե Մարիայի դաժան մահը Հայաստան երկրում առաջ էր բերել խռովություններ և դրա հետևանքով խեթական թագավորը միջամտել էր, որպեսզի հեռացվի օրինավոր ժառանգը հօգուտ Խուկկանայի, որը խռովությունների ժամանակ գուցե եղել է Խաթիսի կողմնակիցը:

Սակայն ինչպե՞ս բացատրել այն զարմանալի իրողությունը, որ Խուկկանայի հետ կնքված պայմանագրում խեթական թագավորը պայմանագրի վերջում դիմում է մի ոմն Մարիայի: Նրա անունից դատելով, պետք է որ նա պատկաներ այն Մարիայի ընտանիքին, որը մահվան էր դատապարտվել խեթական պալատում: Այդ դեպքում հնարավոր չէ հասկանալ այն նախապատվությունը, որ Սուլայիլուլիուման տալիս է Խուկկանային, ընդդեմ իշխող ընտանիքի մի անդամի, որպիսին է Մարիան, և հանկարծ այն աստիճան լավ հարաբերության մեջ է լինում վերջինիս հետ, որ պայմանագիր է կնքում նրա հետ:

Սա բարդ խնդիր է: Հարց է ծագում, թե արձանագրության վերջին մասը արդյո՞ք Խուկկանայի հետ կնքած պայմանագրի ամբողջությանն է վերաբերում, թե՞ հատվածն է Մարիայի հետ կնքած մի ուրիշ դաշնագրի և այս Մարիան էլ Թուղխալիայի կողմից մահվան դատապարտված Մարիան է: Խուկկանայի դաշնագրի մեզ հասած տեքստը բնագիրը չէ, այլ բնագրից հետագայում կատարված շատ աղճատված մի ընդօրինակություն, ինչպես որ խոստովանում է ընդօրինակողը²: Հնարավոր է, որ ընդօրինակողը

չփոքմամբ նույնացրել է երկու տարբեր վավերագրերը և կցել է Մարիայի պայմանագրի հատակտորները Խուկկանայի պայմանագրին:

Ինչ վերաբերում է խնդրո առարկա վավերագրի իրավական բնույթին, ապա դա պայմանագիր է դաշնակցության և ոչ թե ավատառության մասին, ինչպես որ ոմանք իզուր կարծում են: Հակառակ Սուլայիլուլիումայի խնամակալական տոնին, իրականում նա Խուկկանայի հետ վարվում է ինչպես հավասարը հավասարի հետ: Պայմանագրում չկա ոչինչ, որ խոսեր խեթական թագավորի գերադասության օգտին: Ոչ մի կետ նրան չի վերապահում որևէ նախապատվություն կամ առավելություն, ամեն ինչ փոխադարձ է՝ բարեկամություն, ռազմական աջակցություն, թշնամանքից հրաժարում, երդման հավատարմություն, պայմանագրին հավատարմություն. սրանք են պայմանագրի էական կետերը: Խուկկանային՝ որպես ավատառուի, պարտադրված հարկի կամ այլ պարտավորությունների մասին ոչ մի խոսք չկա: Չկա ոչինչ, որ ապացուցեր, թե Հայաստան ճնշվել և Խաթիսի քմահաճույքին ենթակա է դարձել: Ընդհակառակն, Սուլայիլուլիուման չի թաքցնում, որ Հայաստան դեռ պահում է այն հողերը, որ գրավել էր Խաթիսից և որ Խուկկանայի երկրում կային նաև տարագիր խեթեր: Դաշնագրի մի կետը Խուկկանային պարտավորեցնում է տարագիրներին վերադարձնել և դուրս գալ գրավված մարզերից:

Իրականում խեթական պետությանը չհաջողվեց զինաթափ անել ո՛չ Հայաստան և ո՛չ էլ իր դրացի կասկաների երկիրը: Սուլայիլուլիումայի որդին՝ Մուրսիլը, գահ բարձրանալով իր եղբոր՝ Արմուվանդայի կարճատև թագավորությունից հետո, ստիպված եղավ նորից կռվի բռնվել վերոհիշյալ երկու երկրների հետ: Հայաստանի և կասկաների դեմ ռազմական պատրաստությունների պատմությունը մեզ հաղորդում է նույն Մուրսիլը իր Ժամանակագրության մեջ¹:

Մուրսիլի թագավորության առաջին վեց տարիները զբաղված են եղել պատերազմներով Կասկա երկրի դեմ՝ Խաթիսի հյուսիսում և Արգավայի դեմ՝ հարավում: Մեր թեմայից դուրս է մանրամասնությունների վրա կանգ

¹ Մուրսիլի Ժամանակագրությունը ծանոթ է երկու խմբագրությանը: Մեկն ընդգրկում է այս թագավորի վարած արշավանքներն իր թագավորության առաջին տասը տարիներին, ինչպես որ նշված է Ժամանակագրության վերջում: Գիտնականներն այս խմբագրությունը կոչում են Տասնամյա ժամանակագրություն: Մյուս՝ ավելի մանրամասն խմբագրությունն ընդգրկում է բոլոր այն արշավանքների պատմությունը, որ վարել են Մուրսիլը և իր զորապետները գոթեթ ամբողջ թագավորության ընթացքում: Այդ խմբագրությունը կոչվում է Լրիվ ժամանակագրություն: Առաջին խմբագրության մեջ չկան 7-րդ տարվա մի մասը, ամբողջ 8-րդ և մասամբ իններորդ տարվա սալիկները: Երկրորդ խմբագրությունը նույնպես լրիվ չէ սկզբում, և 12-րդ տարվան հաջորդող տարիների իրադարձությունները պատկանում են 19-27-րդ կամ, ինչպես ոմանք կարծում են, 16-24-րդ տարիներին:

¹ J. Friedrich, նշվ. աշխ., էջ 107-136:

² Անդ, էջ 105, նաև E. Forrer, ZDMG, NF, I, էջ 181:

առնելը: Միայն նշենք ռազմադաշտի գլխավոր կետերը: Կասկաները զավթեցին Թուրմիտտայի սահմանակից երկիրը. Հալիլա և Դուրդուկա քաղաքները, խռովություն հարուցող խառնակիչները սանձահարվեցին Մուրսիլի կողմից:

Թագավորը գնում է դեպի Իշխուայիտա երկիրը: Թիպիա մարզը՝ Կաթխաիդուրվա քաղաքի հետ միասին, Ասխարապիա լեռնային երկիրը, Թաքիկարիմա երկիրը, Կամմա և Ջիխարիյա մարզերը հերթով ապստամբել էին, բայց խեթական թագավորը նրանց հարկադրեց հպատակվել:

Կասկաները գրավել էին Ասխարապիան և կտրել էին Պալայի հետ հաղորդակցման ուղին: Մուրսիլը հաղթում է նրանց և վերադառնում Ջիուլիլա՝ հանգստանալու: Թիպիայի դեպքը ավելի լուրջ է: Ժամանակագրությունից երևում է, որ կասկաների քաղաքները մեկ մարդու իշխանության ներքո չէին գտնվում: Դա նշանակում է, որ չնայած նրանք դեռևս ընդհանուր քաղաքական կազմակերպություն չունեին, բայց առկա էին բավական շատ ցեղեր, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր առանձին առաջնորդը: Մի ոմն Պիխիու-նիայի հաջողվեց Թիպիա մարզում համախմբել տոհմերը և նրանց կազմակերպել «թագավորական ձևով», ինչպես ասում է մեր վավերագիրը: Պիխիու-նիան ավերածություններ գործեց մինչև Ջազգիսա քաղաքը և նույնիսկ գրավեց Իշխուայի երկիրը: Մուրսիլը դուրս եկավ նրա դեմ, ջախջախեց նրան և ստիպեց հպատակվել: Թիպիան կործանելուց հետո, Մուրսիլն իր գեներալն ուղղեց Ազգիի թագավոր Աննիայի դեմ: Դա իր թագավորության յոթերորդ տարին էր:

Խեթերն իրենց առաջին պետության ժամանակից ճանաչում էին կասկաների ցեղերին: Նրանք իրենց հաճախակի հարձակումներով անհանգստացնում էին Վերին երկիրը, այսինքն՝ Խաթթիի հյուսիսային և հյուսիսարևմտյան մասերը: Դրանից կարելի է եզրակացնել, որ կասկաների երկիրը զբաղեցնում էր Սև ծովի ափի երկարությամբ ձգվող լեռնային շրջանը, Փոքր Հայքում սկիզբ առնող Լյուկոս և Հալիս գետերի ակունքների և վերջինիս գետաբերանի միջև: Մեր հիշատակելիք վայրերը հնարավոր չէ տեղադրել: Նրանցից մի քանիսը հայտնի են Կապադովկիայի ասուրական գաղութների ժամանակներից ի վեր: Դրանք են՝ Թուրխումիտ, Թուխպիա, որոնք գտնվում էին Յոզգատի և Մերիֆոնի մարզի ասուրական քարավանների առևտրական մեծ ճանապարհների վրա: Այդ քաղաքները նույնանուն են խեթերի Թուրմիտա և Թիպիա քաղաքների հետ: Կապադովկիական սալիկներում հիշատակված է նաև Թավիննա քաղաքը, որի անունը հիշեցնում է բյուզանդացիների մի ամրոց, Τηβέννα, ուր Գրիգոր Տարոնացին 1103 թվականին բանտարկեց Տրապիզոնի հրաժարական տված

դուրսին: Մուրսիլը, Պալան հպատակեցնելուց հետո, վերադարձի ճանապարհին կանգ առավ Ջիուլիլայում: Դա հիշեցնում է Ջելան, այսօրվա Ջիլեն, ու նաև Պալալսե (գուցե Պալալե՞ա) կայանը Ամասիայի մոտ, ըստ Պետրոսյան քարտեզի¹:

Ինչ էլ որ լինի, կասկաների հարևանությունը Փոքր Հայքին կասկածից դուրս է: Այնտեղ կասկաների երկիրը սահմանակից էր Հայաստանին: Ահա թե ինչու Մուրսիլը, հենց որ վերջացրեց գործը կասկաների վաճառվող առաջնորդ Պիխիու-նիայի հետ, դարձավ Ազգիի կամ Հայաստանի Աննիա թագավորի դեմ: Այս երկու տերմինները (Ազգի, Հայաստ) հոմանիշ են և մեջը ընդմեջ գործածվում են Մուրսիլի Ժամանակագրության մեջ՝ նույն տարածքի իմաստով: Սուպալիուլիուման, ինչպես վերևում ասացինք, Հայաստանի իշխան Խուկկանային զգուշացնում էր Ազգիից, այսինքն՝ Հայաստանից, կին առնելուց:

Մուրսիլը գրում է Աննիային, որ իր հոր՝ Միտաննի երկրում եղած ժամանակ նա հարձակվել էր Դանկուվա քաղաքի վրա և Հայաստ էր տարել գերիներ, խոշոր ու մանր անասունները և որ արդեն ժամանակն է բոլորը վերադարձնելու: Ազգիի թագավորը նրան պատասխանում է, որ ինքը բոլորովին տրամադիր չէ նրան հանձնելու տարագիրներին:

Մուրսիլը նորից է գրում Աննիային. «Ես հասել և բանակել եմ քո երկրի մուտքի մոտ: Ես չհարձակվեցի քո երկրի վրա, չտարա բնակիչներին և ոչ էլ խոշոր ու մանր անասունները: Սակայն դու կռվել ուզեցիր ինձ հետ, Արևիս հետ, և դու եկար հարձակվեցիր Դանկուվայի վրա և այն ամայացրիր»:

Քանի որ Աննիան էլ իր կողմից սպառնում է նրան, Մուրսիլն սկսում է թշնամական գործողությունները: Նա շարժվում և կանգ է առնում Ազգիի սահմանի մոտ՝ Ուրա բերդի դիմաց, որը գտնվում էր վերասուլաց ժայռի վրա: Արձանագրության շարունակությունը չկա, և Ուրայի բախտը մնում է անհայտ:

Իր թագավորության հաջորդ ութերորդ տարում Մուրսիլը նորից արշավեց Աննիայի դեմ: Նրան նույն պատգամն ուղարկեց խեթական տարագիր բնակիչների վերաբերյալ: Աննիան խոստացավ կատարել նրա պահանջը: Խեթական թագավորը, առանց կռվի բռնվելու, վերադարձավ Կումաննիի Խեպետ աստվածուհու տունը տոնելու համար:

Աննիան իր խոստումը չկատարեց, Մուրսիլն իններորդ տարում նրան երրորդ անգամ գրեց, բայց արդյունք չստացավ: Աննիան ուզում էր գերի-

¹ E. Gavaignac, RHA, 1936, էջ 173, փնտրում է Պալան Խաթթուա մայրաքաղաքի արևմուտքում, Պափլագոնիայի ուղղությամբ:

ների փոխանակում կատարել և հրաժարվում էր վերադարձնել խեթերին, քանի դեռ չէր ստացել իր սեփական հպատակ տարագիրներին:

Մուրսիլը մեկնեց Կիզզուվատնա, իր պետության հարավը, իսկ Աննիան օգտվեց այդ առիթից՝ հարձակում սկսելու համար: Նա մուտք գործեց Վերին երկիրը, ավերեց Իշտիտինա մարզը և պաշարեց Կանաուվարա քաղաքը: Այդ ժամանակ Մուրսիլի զորքերն ու մարտակառքերը՝ մեծ տակառապետ Նուվանգայի հրամանատարության տակ, բանակել էին Վերին երկրում. քազավորը գրեց Նուվանգային. «Ահա հայասյան թշնամին Վերին երկրի վրայով ներթափանցել է մինչև Իշտիտինա, կողոպտել է այն և պաշարել Կանաուվարա քաղաքը: Օգնության տար գորքերին ու մարտակառքերը, գնա Կանաուվարա և այնտեղից վտարիր թշնամուն»: Նուվանգան շտապ օգնության հասավ պաշարված քաղաքին, բայց այն պահին, երբ ուզում էր ճակատամարտ սկսել, իշխանները նրան հարցրին, թե արդյոք թշնամների թռիչքի և անասունների աղիքների մշանով գուշակություններն ապահովո՞ւմ են հաղթանակը: Մեծ տակառապետն այդ մասին տեղեկացրեց Կիզզուվատնայում գտնվող քազավորին: Մուրսիլը պատգամներ պահանջեց և Նանա-լու-իշ իշխանի միջոցով նպաստավոր պատասխան ուղարկեց զորապետին: Թազավորը գտնվում էր Կարգամիշի ճանապարհին, երբ վերոհիշյալ իշխանը նրան բարի լուր բերեց այն մասին, թե Նուվանգան հարձակվել էր հայասյան թշնամու վրա և պարտության մատնել նրա բանակը, որը քաղկացած էր տասը հազար մարդուց և յոթ հարյուր մարտակառքերի կառավարներից:

Մեծ տակառապետն, անշուշտ, չափազանցել էր իր հաջողությունները: Հաջորդ դեպքերն ապացուցեցին, որ Ազգիի ուժերը ջախջախված չէին: Մուրսիլ քազավորը պատրաստվում էր անձամբ գնալ պայքարը շարունակելու թշնամու դեմ: Հենց որ նա կարգի բերեց Կարգամիշի զործերը, վերադարձավ Կիզզուվատնա: Այնտեղից գնաց Թեզարամնա¹: Բանակի հրամանատար Նուվանգան իր զորքերով մույնպես եկավ Թեզարամնա: Թազավորը ցանկանում էր արշավանքի դուրս գալ Հայասայի դեմ, բայց քանի որ տարին վերջանում էր, սպաները խորհուրդ չավին: Մուրսիլը մեկնեց Խարրանա, բանակը հետևեց նրան: Իյախրիսսա քաղաքը և Պիզզախնա-րիսսա մարզը ըմբոստացել էին և հրաժարվում էին զորք տրամադրել

նրան: Մուրսիլն իսկույն դեմ դուրս եկավ և զիշերով հարձակվեց Պիզզախնա-րիսսայի վրա, քարուքանդ արեց այն, իսկ հաջորդ օրը հասավ Իյախրիսսա քաղաքը և նրան նույն բախտին արժանացրեց:

Մյուս օրը Մուրսիլը հարձակվեց Թապտինա քաղաքի վրա. ճանապարհին նա բռնեցի ճարակ դարձրեց Թարկումա քաղաքը: Թապտինա, Հուրշամա և Պիկուրգի քաղաքները շտապեցին հայտնել իրենց հպատակությունը, պարտավորություն ստանձնելով զորք տրամադրել: Հաջորդ օրը քազավորը կողոպտեց Խախետլա և Կանտիսսիսա քաղաքները, ապա Խաթուշայում գտնվող Հակախսա քաղաքի վրայով ճանապարհ ընկավ դեպի Անկուվա՝ այս քաղաքում ձմեռելու համար:

Տասնամյա ժամանակագրության մեջ չեն նշված այն քաղաքների անունները, որ Մուրսիլը հպատակեցրեց Պիզզախնա-րիսսայից հետո: Այնտեղ ասված է, որ Մուրսիլը գրավեց Իյախրիսսա քաղաքը, ապա Պիզզախնա-րիսսա քաղաքը, հետո հարձակվեց կասկաների քաղաքների վրա, հաղթեց նրանց և, Պիզզախնա-րիսսա քաղաքը հրդեհելուց հետո, ավարով բռնված վերադարձավ Խաթուշայ:

Այսպիսով, կասկաների քաղաքներ ասելով, Լրիվ ժամանակագրության մեջ պետք է հասկանալ հետևյալ քաղաքները. Թապտինա, Խուրսամա, Պիկուրգի, Խախետլա և Կանտիսսիսա: Դա մեզ թույլ է տալիս գծել Մուրսիլի անցած ճանապարհը և ըստ այնմ կողմնորոշվել պատերազմի դաշտի սահմանների վերաբերյալ: Մուրսիլը մեկնել է Թեզարամնայից, որտեղից գնացել է Խարրանա: Անհնարին է ենթադրել, որ դա Միջագետքի Խառանն է, ինչպես որ կարծում են ոմանք: Իրականում Մուրսիլը Կարգամիշից ուղևորվելու էր Թեզարամնա: Կարիք կա՞ր Կարգամիշի մարզը վերադառնալու համար այդքան երկար ճանապարհ անցնել և նույնիսկ գնալ ավելի հեռու՝ Խառան: Մուրսիլը Թեզարամնա էր եկել Հայասայի դեմ արշավելու համար, իսկ այս երկիրը հեռու էր միջագետքյան Խառանից: Բոլորը համաձայն են Թեզարամնան Մելիտենեի արևմուտքում տեղադրելու և Գաուարահնայի (արդի Գոբրյունի) հետ նույնացնելու հարցում: Մեր Խարրանան պետք է փնտրել Թեզարամնայի մոտերքում, Հայասայի ուղղությամբ: Եվ մեզ ոչինչ չի խանգարում այն գտնելու ի դեմս Պաղոմենոսի և բարելոնացիների հիշատակած Արանեի՝ Մելիտենեն Սեբաստիային միացնող ճանապարհի վրա գտնվող կայաններից մեկի¹:

¹ Լրիվ ժամանակագրության համաձայն, քազավորը Կարգամիշից պետք է եկած լիներ ուղղակի Թեզարամնա, սակայն Տասնամյա ժամանակագրությունը ցույց է տալիս, որ նա Կիզզուվատնայից և ոչ թե Թեզարամնայից էր մտադրվել գնալ Հայասա կամ Ազգիի երկրի դեմ: Եթե առաջին վավերագրում Կիզզուվատնա անունը պարզապես մոռացված չէ, ապա պետք է ենթադրել, որ Թեզարամնան Կիզզուվատնայի մի կետն է:

¹ Ptol., V, 6, 18, էջ 882. Theoph. Cont., էջ 374. Н. Адопц, Армения в эпоху Юстиниана, էջ 74 և 82:

Իր երթը շարունակելով, խեթական թագավորը մտնում է Կասկայի սահմանին, այնտեղ մի քանի քաղաք ավերակի վերածում, ապա դառնում է արևմուտք, դեպի Խաթթիի մայրաքաղաքը: Բնական կլիմեր տվյալ կասկայան քաղաքները որոնել Հալիսի ակունքի մտերքը՝ Սեբաստիայից արևելք: Այդ քաղաքներից մեկը՝ Խարշանան, կարելի է նույնացնել Խարսանայի, բյուզանդական *Χαρσιανόν*-ի հետ, որը գտնվում է Հալիսի ափին, Սեբաստիայի մոտ:

Մուրսիլը վերջապես հասնում է իր մայրաքաղաքը, հետևելով, անտարակույս, Սեբաստիայից Խաթթուշա-Պտերիա (Յոզգաթի մոտ) տանող ճանապարհին, վերադառնալու համար Անկուվա, որը գտնվում է արդի Ալիշահրի մոտ՝ Յոզգաթ-Կեսարիա ճանապարհի վրա:

Այսպիսով, Մուրսիլ թագավորը, չկտրվելով Թեգարամնայի և Սեբաստիայի մարզի միջև և Սեբաստիայի ու Պտերիա-Յոզգաթի միջև եղած հաղորդակցության մեծ ճանապարհներից, ռազմական շրջագայություն կատարեց իր տերության արևելյան մասերում: Հաղորդակցման այդ ուղիները, անշուշտ, գոյություն ունեին հին դարերից ի վեր, և Մուրսիլը շրջագայության ժամանակ բոլորովին էլ չի դիպչում Հայաստանի հողին: Անհրաժեշտ էր կարգ ու կանոն հաստատել իր սահմանամերձ քաղաքներում, որոնց բնակիչներն ընթրատացել էին և գուցե դաշնակցել Ազգիի հետ վերջինիս նորերս կատարած ներխուժման ժամանակ:

Իր թագավորության հաջորդ՝ տասներորդ տարին Մուրսիլը նորից դուրս եկավ Ազգիի երկրի դեմ: Առաջին արշավանքը տեղի էր ունեցել նրա թագավորության յոթերորդ տարում, որի ընթացքում նա գրավել էր Ուրա բերդը: Մուրսիլն իր զորքերն ու մարտակառքերը միավորեց Ինգալավա քաղաքում: Ազգիի բնակիչները, հիշելով նրա անցյալ հաղթանակը, ինչպես նաև մեծ տակառապետ Նուվանդայի հաղթանակը, չհամարձակվեցին օրը-ցերեկով չափվել նրա հետ և որոշեցին նրան անակնկալի բերել գիշերով: Մուրսիլն իմանալով նրանց մպատակը՝ ձեռք առավ անհրաժեշտ միջոցներ և ուղևորվեց դեպի Արիպշա քաղաքը՝ «քաղաք ծովի մեջտեղում»: Նրա բնակիչները քաշվել էին լեռները, և քաղաքը պահպանում էր միայն կայազորը: Մուրսիլը խորտակեց նրանց դիմադրությունը, գրավեց վայրը և «լրիվ գրկեց այն իր զինվորներից»:

Մյուս օրը թագավորը մեկնեց՝ Դուկկամմա քաղաքի դեմ կռվելու: Այդ քաղաքի բնակիչները, Արիպշայի ճակատագրից սարսափահար, հանձնեցին քաղաքը և պարտավորվեցին զորքեր տրամադրել: Մուրսիլը խնայեց քաղաքը և միայն երեք հազար մարդ տարավ իր մայրաքաղաքը՝ իր բնակում ծառայելու համար:

Խեթական հաջողությունների լուրն առնելով, Ազգիի ժողովուրդը, որ ապավինած էր ամրացված տեղերին և վերասլաց ժայռերին, վհատվեց: Երկրի ավատական իշխաններն եկան հաղթողի մոտ և զուր ցուցեցին նրանից, հանձն առնելով կանոնավոր կերպով զորք տրամադրել նրան: Խոստացան նաև վերադարձնել իրենց մոտ գտնվող տարազիրներին: Մուրսիլը դրանով բավարարվեց, պահանջեց երդումով հաստատել իրենց խոստումը, ապա վերադարձավ իր մայրաքաղաքը, «առանց, սակայն, կարգ ու կանոն ստեղծելու Ազգիի երկրում»: Այս պիտի պարտավորեցներ նրան մեկ անգամ ևս արշավելու Ազգիի դեմ:

Իր թագավորության հետևյալ՝ տասնմեկերորդ տարում Մուրսիլը կրկին գնաց այնտեղ: Բնակիչները, նրա գալու լուրն առնելուն պես, որպես պատվիրակ ուղարկեցին Մուրթի(ս) անունով մեկին, որը ծագումով Խալիմանա քաղաքից էր¹. սա դիմավորեց թագավորին և ասաց. «Մեր տե՛ր, դու մեզ արդեն բնաջնջել ես, այլևս մեզ մոտ մի գա, մեզ քո հպատակներ համարիր, տե՛ր: Մենք պատրաստ ենք կանոնավոր կերպով քեզ տրամադրել զորք և մարտակառքերի մարտիկներ: Մեզ մոտ եկած տարազիրները նույնպես կվերադարձնենք»: Մուրսիլը համաձայնեց, ընդունեց տարազիրներին և վերադարձավ իր երկիրը՝ Անկուվայում ձմեռելու մպատակով:

Մուրսիլի անհաջողությունն ակներև է, նրան չի հաջողվում «կարգի բերել» Ազգիի երկիրը, որն իր օձիքն ազատում է սովորական դատարկ խոստումներով: Խեթական թագավորի ջանքերի միակ իրական արդյունքն եղավ գերիների ազատումը: Դրան նա ցանկացավ ավելացնել հետևյալ երեք քաղաքների հպատակությունը՝ Ինգալավա, Արիպշա և Դուկկամմա: Ի՞նչ կարևորություն ունեին այս քաղաքները:

Ենթադրվում է, որ Ինգալավան՝ Ինգիլան է, հայկական Անգեղատունը, արդի Իգիլը, իսկ Դուկկամման՝ Դատվանը, Վանա լճի ափին²: Սակայն Ազգի երկիրը չէր տարածվում մինչև Ինգիլա մարզը, ևս առավել՝ մինչև Դատվան:

Խեթական արձանագրությունները պարզորոշ կերպով տարբերում են Ազգի երկիրը Իշուվա և Ալշի երկրներից: Վերջինները տեղավորված էին Արսանիասի (Արածանիի) ձախ ափին՝ Խարբերդի մարզում:

¹ Այս անունը հիշեցնում է *Ἰαλιβάτων* տեղանալը Սոֆենեում (Շոփք) և Բասիլիսի հայրենիքը: Վերջինս հեղինակն է այն աշխարհագրական աշխատության, որը Հ. Գեյցերը հրատարակեց Գեորգիոս Կիպրացու անունով՝ *Georgii Cyprii, Descriptio Orbis Romani*, էջ 49:

² Այս նույնացման հեղինակը է. Ֆորբերն է՝ *Reallexikon der Assyriologie*, 1, 88, հոդված Alzi: E. Cavaignac, *Le premier royaume d'Arménie*, RHA, 1934, պրակ 17:

Ինգիլա հասնելու համար պետք էր անցնել Իշուվայի վրայով: Մուրսիլը նույնիսկ չի ասում, թե անցել է Եփրատ գետը, ինչպես որ այդ ասում էր նրա հայրը՝ Իշուվայի վրայով դեպի Միտաննի կատարած իր հաղթական արշավանքի ժամանակ: Դուկկամման Դատվանի, ինչպես նաև Ինգալավան Ինգիլի հետ նույնացնելը հավանաբար բխում է երրորդ Արիպշա կետի դիրքից («ծովի մեջտեղը»)¹: Դա թույլ է տալիս մտածել Վանա լճի մասին: Սակայն Մուպպիլուլիուման, իր հզորության գագաթնակետին հասնելով հանդերձ, առաջացավ միայն մինչև Տիգրիսի ակունքը: Քիչ հավանական է, որ նրա որդին, որ շատ ավելի նվազ նպաստավոր պայմաններում էր գտնվում, հասած լինի մինչև Վանա լիճը:

Մուրսիլի պատմածն այն տպավորությունն է թողնում, թե թշնամու առաջապահ ջոկատների դեմ նրա վարած պատերազմական գործողությունները ավելի շուտ ցուցադրական բնույթ ունեին: Նրա ձեռք բերած աննշան հաջողությունները նույնպես ապացուցում են, որ լուրջ արշավանքների մասին խոսք լինել չի կարող: Այն քաղաքները, որ խեթական թագավորը ձգտում էր նվաճել, գտնվում էին Եփրատի արևմտյան ափին: Ազգի երկիրը կոթնած է Դերսիմ լեռան, Կումմախա-Կումախի [(Կամախ)] քաղաքի հարավում, որը խեթական արշավանքների դեմ բնական ամրություն էր հանդիսանում այնպես, ինչպես այն հետագայում նույն ծառայությունն էր մատուցելու պավիկյաններին՝ Բյուզանդիայի դեմ մղված պայքարում: Հետևաբար, բնական է Ինգալավան, Արիպշան և Դուկկամման փնտրել դեպի Կումմախա տանող ուղիների վրա: Անկուվայից մեկնելով, Մուրսիլը պետք է հետևեր կա՛մ Սեբաստիա-Կամախ կա՛մ Կազանա-Արանայից Կամախ ուղղությամբ:

Այդ շրջանում, որ Փոքր Հայքն է, Պտղոմեոսը բվարկում է բազմաթիվ կայանների անունները, որոնց թվում նաև Դագոնա, որը թերևս համապատասխանում է Դուկկամմային²:

«Ծովի մեջտեղը գտնվող քաղաքը», հավանաբար, Եփրատի ջրերից գոյացած ճահիճների մեջ գտնվող մի բերդ էր: Դեռ այսօր Եփրատի և Արաք-

կիրի միացման կետում գոյություն ունի թուրքական կայան և հենց մեզ հետաքրքրող տեղանքում, որը Դեմիզլու խոստում անունն է կրում¹:

Հաջորդ դարում խեթական վավերագրերը լուռ են մնում Ազգիի և Հայասայի վերաբերյալ: Դա հավանաբար հետևանք է այն հանգամանքի, որ խեթական տիրակալների ուշադրությունը կենտրոնացած էր Միջագետքի և Ասորիքի վրա, ուր մեկ կողմից՝ Ասորեստանը և մյուս կողմից՝ Եգիպտոսը մաքառում էին համաշխարհային քաղաքականության մեջ խեթերի նախկին դերը ստանձնելու համար:

Խեթական պետության կործանման նախօրյակին Ազգի երկիրը նորից հրապարակ է գալիս Թուդիալիա IV-ի օրով (1260-1230): Նա նշվում է կասկանքի և Լուկկայի հետ, որպես թշնամի երկիր, և խեթական թագավորը գզուշական միջոցներ է ձեռք առնում նրանց հարձակման դեմ²:

Հայասա-Ազգիի պատմությունը ամփոփում է այսպես. դա մի թագավորություն էր, որը տեղավորված էր Եփրատի վերին հոսանքի ափին, Դերսիմի զանգվածի շուրջը: Նա անկախ էր, բայց գտնվում էր Խաթթիի քաղաքական ազդեցության ներքո, սակայն սրա հնազանդ վասալը չէր: Այդ պետությունը երևան է գալիս և անհետանում համարյա խեթական պետության հետ միաժամանակ: Նրա թագավորներից միայն չորսն են հայտնի՝ Կարաննիս, Մարիա, Խուկկամա և Աննիա: Նա ուներ իր սեփական պանթեոնը: Պահպանվել է մի աղճատված ցուցակ, որը մաս էր կազմում, գուցե, Մուպպիլուլիումայի հետ կնքված դաշնագրի և որը մեզ պատկերացում է տալիս պանթեոնի մասին: Այստեղ կարելի է կարդալ խեթական աստվածների հետ մեկտեղ Հայասա-Ազգիի աստվածների անունները.

- | | |
|--|------------|
| 1) *Ugur Հայասա երկրից | |
| 2) *Istar Pa-a-ad-te-u քաղաքից | Padteu |
| 3) *...a-nu-us La-hi-ir-hi-la քաղաքից | Lahirhila |
| 4) *Zag-ga... քաղաքից (անունը փչացած է) | |
| 5) *U(=Tešup) Ar-ni-ia քաղաքից | Arniia |
| 6) *Ta-a-ru-mu-us Kam(uha) քաղաքից | Kamuha |
| 7) *U(=Tešup) Pa-ah-hu-u-te-ia քաղաքից | Pa(h)uteia |
| 8) *Te-ri-id-ti-tu-u-ni-i(š) Ta-ma-ad-ta քաղաքից | Tamadta |
| 9) *U-na-ga-aš -ta-aš Ga-zu-u քաղաքից | Gazū |

¹ A. Goetze, նշվ. աշխ., էջ 132՝ A-ri-ip-ša-aš S[AG AA] B.BA:

² Դուկկամման չի կարելի նույնացնել Դատվանի հետ: Նախ՝ Դատվան նշանակում է Դատա քաղաք, Դատ-ավան: Դատը հատուկ անուն է, որը կրում էր IV դարում Աշտիանների (Հաշտյանք) հարևան գավառի մի իշխան: Այդ անունը գտնում ենք Դատաքեն անվան մեջ, որը կրում էր Բզուննի մի իշխան, Դատվանի շրջանում (Փավստոս Բուզանդ, III, 9): Դագնեվանան կամ Դոգնավանան հռոմեական ճանապարհացույցի կայաններից մեկն է, որ միացնում է Տիգրանակերտը Իսուրբոյին՝ Տիգրանակերտ 30, Ջանգեբրի 20, Կիմիզա 22, Դյուզանաս 27, Պատանսանա 26, Վաստաունա 32, Մելիսիա 26, Դագնեվանա 15, Ֆլեգեանա 15, Իսուրբո, տե՛ս Conrad Müller, Itineraria Romana, 1916:

¹ Դեմիզ - «ծով», դեմիզ-լու - «ճահիճ»:

² B. Forrer, Hayasa-Azzi, էջ 22:

- 10) ⁶U(Gagša-an-na-aš) Ar-hi-ta քաղաքից Arhita
 11) ⁴Ba-al-ta-ik Du-uk-ka-am-ma-na քաղաքից Dukkamma
 12) ⁴U-na-ag-ga-aš-tu-aš Bar-ra-ia քաղաքից Barraia
 13) ^d... hu-hu-uš Ga-aš-mi-ia-ha քաղաքից Gašmiaha
 14) ⁴Si-il-li... քաղաքից (անունը չի պահպանվել)

Նշված քաղաքներն անծանոթ են՝ բացի Կամուխայից, որը նույնանուն է Կամախի հետ: Ասենք, անունների ընթերցումը՝ թե՛ աստվածների, թե՛ քաղաքների, հուսալի չի թվում: Պետք է սպասել ավելի լրիվ և լավ պահպանված օրինակի հայտնաբերման: Նշենք, որ կա նաև մի քաղաքի անուն, որը կոչվում է Թել-Հայասա:

Ինչպես նշեցինք, Հայասա անունը հարուցում է հատուկ նշանակություն ունեցող էթնիկական հարցեր: Բայց նախքան դրանց անդրադառնալը, անհրաժեշտ է հետևել հարևան այն փոքր պետությունների պատմությանը, որոնք, կարծես, Հայասայի հետ համերաշխ և գուցե նույնիսկ համատարր էին:

Իշուվա և Աշի

Իշուվա թագավորությունը գտնվում էր Հայասայի հարավում, ստորին Արսանիասի հովտում և զբաղեցնում էր Եփրատի ու Խարբերդի միջև ընկած երկրամասը:

Երկու մեծ հարևանների՝ Խաթթիի և Միտաննիի միջև ընկած այս փոքրիկ պետության դրությունը չափազանց նուրբ էր: Իր երկու փառասեր հարևանների զավթողական ձգտումներից փրկվելու համար անհրաժեշտ էր վարել ճարպիկ քաղաքականություն, բայց և այնպես իրեն չհաջողվեց խուսափել նրանց հետ զինված բախում ունենալուց:

Խաթթիի հետ առաջին բախումը տեղի ունեցավ Թուլխալիա III-ի օրով (1410-1380), թերևս Միտաննիի թագավոր Թուշրատտայի դրոմամբ: Համեմայն դեպս այդպես է կարծում Թուլխալիայի որդին ու հաջորդը՝ Սուպալիուլիուման: Թուշրատտայի որդի Մաթթիվազայի հետ կնքած պայմանագրի առաջաբանում Սուպալիուլիուման երկու պետությունների միջև ծագած բռնամտության հիմքն է համարում Թուշրատտայի մեքենայությունները, որ նա սարքել էր Իշուվա երկրում՝ զրգռելով սրան Խաթթիի դեմ: Ահա թե ինչ է պատմում նա. «Հորս թագավորության ժամանակ Իշուվա երկիրն ապրստամբեց: Խաթթի երկրի մարդիկ անցան Իշուվա երկիրը: Դրանք էին՝

Գուրտալիսսայի մարդիկ, Արավաննայի մարդիկ, Չազզիսա երկիրը, Կալամասմա երկիրը, Թիմնինա երկիրը, Խալիվա լեռնային երկիրը, Կարնա երկիրը, Թուրմիտտայի մարդիկ, Ալխա երկիրը, Խուրմա երկիրը, Խարրանա լեռնային երկիրը, Թեգարամա երկրի կեսը, Թեպուրզայի մարդիկ, Խազգայի մարդիկ, Արմատանա երկրի մարդիկ, այս բոլոր երկրներն ապստամբեցին իմ հոր թագավորության ժամանակ»¹:

Դա նշանակում է, որ Իշուվա երկրում ծագած ըմբոստությունը տարածվել էր Եփրատի շրջաններից մյուս կողմը, այսինքն՝ արևմտյան ափը: Թվարկված երկրները գտնվում էին Եփրատի և Գյուրյունի (Թեգարամա) միջև: Թուլխալիան փորձել էր ճնշել ապստամբությունը, բայց խռովարարները լքել էին իրենց բնակավայրերը, անցել Եփրատն ու ապաստան գտել Իշուվա երկրում:

Միտաննիի թագավորը ոչ միայն Իշուվայում էր գործում Խաթթիի դեմ, այլև խռովություններ հարուցում Միրիայի հյուսիսում, հատկապես Նուխաշի կոչված թագավորության մեջ, Հալեպից հարավ:

Սուպալիուլիուման որոշեց վերջ դնել Միտաննիի մեքենայություններին: Լսենք, թե ինչ է պատմում նա այս առթիվ. «Ես, Արև Սուպալիուլիումանա, մեծ թագավորը, Խաթթի երկրի թագավորը, հերոսը, Թեշուպի սիրելին, ճանապարհ ընկա և անցա Եփրատը, որպեսզի վերջ դնեմ Թուշրատտայի փառասիրական ձգտումներին. ես հասա Իշուվա երկիրը:

Ես նորից նվաճեցի Իշուվա երկիրը: Փախստականներին վերադարձրի իրենց տները: Այն մարդիկ և այն երկրները, որ իմ հոր ժամանակ անցել էին Իշուվա երկրին, այսինքն՝ Գուրտալիսսայի մարդիկ, Արվանայի մարդիկ, Չազզիսա երկիրը, Թեգարամա² երկիրը, Թիմնինա երկիրը, Խալիվա լեռնային երկիրը, Կարնա լեռնային երկիրը, Թուրմիտտայի մարդիկ, Ալխա երկիրը, Խուրմա երկիրը, Խարրանա լեռնային երկիրը, Թեգարամա երկրի կեսը, Թեպուրզայի մարդիկ, Խազգայի մարդիկ, Արմատանայի մարդիկ, այդ մարդկանց, այդ երկրները հպատակեցրի և նրանց նորից ուղարկեցի Խաթթի երկիրը: Նվաճածս երկրներին ազատություն տվի, և նրանց բնակիչները մնացին իրենց տեղերում: Այն մարդիկ, որոնց ազատություն տվի, վերադարձան իրենց հայրենակիցների մոտ: Խաթթի երկիրը գրավեց իր տեղերը»³:

¹ E. M. Weidner, Politische Dokumente aus Kleinasien, «Boghazköi-Studien», 8.

² Վերահիշյալ թվարկության մեջ Թեգարաման հիշատակված է Կալամասմայի փոխանին: «Կալամասմա» ընթերցումը նախընտրելի է, քանի որ Թեգարաման նշված է շարունակությունում մեջ:

³ Ոմանք այս նախադասությունը հասկանում են իրր թե՛ Խաթթին գրավեց նրանց տեղը, այսինքն թե՛ խեթական բնակիչները գնացին Իշուվա՝ այնտեղից մեկնած մարդկանց տեղը

Ինչպես երևում է, «մարդիկ և երկրներ» արտահայտությունը վերաբերում է այն նույն բնակչությանը, որը հարել էր Իշուվայի ապստամբական շարժմանը՝ Խաթթիի տիրապետության դեմ: Սուպալիուլիուման հպատակեցնում է Իշուվային, բայց չի պատժում տեղահանությամբ՝ «ճրա բնակիչները մնացին իրենց տեղերում»: Նա բավարարվում է թվարկած երկրների փախստականներին իրենց հայրենիքը վերադարձնելով: «Ես ազատագրեցի» փախստականներին արտահայտությունը արդյոք չի՞ հուշում, որ այսպես կոչված փախստականները, զոհն մասամբ, Իշուվայի կողմից տարագրված բնակիչներն էին:

Խեթական թագավորը կարգ ու կանոն հաստատեց և ճանապարհը շարունակեց դեպի Նուխաշի երկիրը: Նա հասավ Ալշի երկիրը, գրավեց Կուտմար բերդը և նվիրեց Ալշիի թագավոր Անթարատիին:

Ալշին նույն այն ժողովուրդն է, որը կոչվում է Ալզի և որի երկիրն է Անգիտում, Անգիտենն, որը գտնվում էր Իշուվայի մոտ, Խարբերդից արևելք, մինչև Ջիրենն-սուի ակունքները: Կուտմար բերդը պետք է որ դրա սահմանների մոտ լիներ¹:

Սուպալիուլիուման, Ալշիի բարեկամությունը ապահովելուց հետո, շարունակեց իր ճանապարհը և Մուտա բերդի վրայով հասավ Վաշշուգաննի՝ Թուշրատտայի մայրաքաղաքը: Ապա անցավ Եփրատը, տիրեց Խալպա (Հալեպ) երկրին և մտավ Նուխաշի երկիրը:

Նուխաշիի թագավոր Մարրուպշան Սուպալիուլիումայի պաշտպանությունն էր հայցել Միտաննիի թագավոր Թուշրատտայի դեմ: Վերջինս չհամարձակվեց Սուպալիուլիումայի դեմ դուրս գալ: Առանց կովի Նուխաշին խլվեց Միտաննիի գերիշխանությունից հոգուտ Խաթթիի: Այս հարցում մեզ հետաքրքրում է Սուպալիուլիումայի կնքած պայմանագիրը Մարրուպշայի հաջորդ Թետտի թագավորի հետ, ուր նա ակնարկում է Իշուվայի իրադարձությունները: Այդ պայմանագրում Սուպալիուլիուման ասում է. «Իշուվա երկիրն ապստամբել էր Խաթթիի դեմ. ես զնացի Իշուվա երկիրը... (պակասում է) և նրան հպատակեցրի: Ապա զնացի Միտաննի՝ Մարրուպշային օգնության: Երբ հասա Կաշիարի լեռնային շրջանը... (պակասում է), Ալշի երկրի թագավոր Անթարատիին...»²:

զբաղեցնելու համար: Դա ճիշտ չէ: Եթե ցանկություն լիներ, խեթերին տեղափոխել նվաճած երկիրը, այդ դեպքում Խաթթիի հպատակ փախստականները չէին վերադարձվի իրենց երկրները:

¹ E. Forrer, Reallexikon der Assyriologie, էջ 89, Կուտմարը նույնացնում է Կուտմար գյուղի հետ՝ Հանիից 18 կմ հեռու: Provinzeinteilung-ում, էջ 20, նա իզուր է ջանում նույնացնել այն Զուտմարն կամ Զոմար, Ճառագրության հետ:

² E. Weidner, Politische Dokumente, էջ 59:

Տեքստը պակասավոր է, չի կարելի հաստատապես պնդել, թե դրանից հետևում է, որ Ալշիի թագավորին հանձնված բերդը գտնվում էր Կաշիարի լեռներում: Եթե իսկապես տեքստի իմաստը դա է, ուրեմն պետք է ընդունել, որ Ալշի թագավորությունն այդ ժամանակ տարածված էր մինչև Կաշիարիի շրջանը:

Վերադառնանք Իշուվային: Այն հիշատակված է Սուպալիուլիումայի բռնան՝ Մուվատալլիի և Կիզվատնա երկրի թագավոր Մունասուրայի միջև կնքված պայմանագրում:

Մուվատալլիի ժամանակ (1320-1305) Իշուվան նորից ուռքի ելավ Խաթթիի դեմ: Թագավորն Իշուվա մտավ և ապստամբությունը ճնշեց: «Իշուվայի մարդիկ», այսինքն՝ խռովարարները, փախան Խուրրի երկիրը: Մուվատալլին պահանջեց փախստականներին հանձնել, բայց մերժում ստացավ: Ըստ երևույթին, Կիզվատնան նույնպես անջատվել էր Խաթթիից և հարել Խուրրի երկրին: Մուվատալլին ասում է, թե ապստամբ քաղաքների բնակիչներն իր պապի՝ Սուպալիուլիումայի ժամանակ փախել էին Խուրրի երկիրը և հաստատվել այնտեղ, բայց հետագայում նրանք վերադարձան Խաթթի երկիրը: Նրանց անասուններ էին տվել: Չմայած այդ հոգատարությանը, նրանք նորից ապստամբեցին իր թագավորության ժամանակ:

Դա մի ակնարկություն է, որ Մուվատալլին անում է վերևում հիշված իրադարձությունների մասին: Կիզվատնա անվան ներքո նա ցույց է տալիս այն երկրների և քաղաքների ամբողջությունը, որ Սուպալիուլիուման թվարկում է Մաթթիվազայի հետ կնքած պայմանագրում:

Այսպիսով, Կիզվատնայի տեղի այնքան վիճելի հարցն իր լուծումը կարող է ստանալ Կիլիկյան Տիանայի (և ոչ թե Պոնտական Տիանայի) օգտին: Կիզվատնան ընդգրկում էր Թարալը (Կատաոնիա), Թեգարամնան և Մելիտեննի նահանգը:

Կիզվատնայի դավաճանությունը վարակեց նաև Իշուվային, իսկ Իշուվայում ծագած շարժումները համապատասխանաբար հաղորդվում էին Եփրատից այն կողմ գտնվող շրջանին՝ Կիզվատնային: Հնարավոր չէ որոշել, թե այս քաղաքական միասնությունն արդյոք ներշնչված էր ցեղակցությամբ, թե Խաթթիի դեմ ռիսակալությամբ: Համենայն դեպս, ապստամբների որոշ քաղաքների անունները՝ Չազգիսա և Ալխա, հանդիպում են Ուրարտուում՝ Շաշգիսա և Ալխու ձևերով:

Իշուվան և Ալշին բուՖեր պետություններ էին Խաթթիի և Միտաննիի միջև: Մակայն նրանք նախընտրում էին Միտաննին և նրան էին համակրում: Խաթթիի և Միտաննիի մրցակցությունը այս երկու փոքրիկ պետություններում՝ քաղաքական ազդեցության առումով, մեղմանում է այն պահին, երբ

վերածնվող Ասորեստանն ասպարեզ է դուրս գալիս ի վնաս Միտաննիի: Միտաննիի անկումն սկսվեց Թուշրատտայի մահից հետո: Նա սպանվեց իր որդի Մաթթիվազայի ձեռքով, բայց գահը հափշտակեց նրա հորեղբայրը Արտաթաման: Մաթթիվազան ստիպված դիմում է Խաթթիի պաշտպանությանը, մինչդեռ հափշտակողին և նրա որդի Շուրթարնային նեցուկ էր դարձել Ասորեստանը:

Նման պարագայում Ալշին խոհեմություն համարեց հայացքը դարձնել դեպի Ասորեստան, և այդ քաղաքականությամբ նրան հաջողվեց իր սահմաններն ընդարձակել ի հաշիվ Միտաննիի:

Իշուվայի բախտը նույնպես բերեց: Խաթթիի և Ասորեստանի միջև Միտաննիի հողերում բռնկված պայքարն ստեղծեց նպաստավոր պայմաններ Իշուվայի համար: Խաթթին միջամտեց Մաթթիվազայի հարցում և նրան վերականգնեց հայրական գահի վրա: Նա նպաստեց Իշուվային և ի հակակշիռ Ալշիի ու Ասորեստանի դաշնակցության, ընդարձակեց նրա տարածքը և այն դրեց Արիշարմա թագավորի իշխանության տակ: Իշուվան այդ բարյացակամությամբ պարտական էր խեթական թագավոր Մուվատալլիի եղբորը՝ Խաթթուսիլին: Խաթթուսիլի որդին՝ Թուդիսալիա IV-ը (1260-1230), «միացրեց Ուգաշտայի մեծ երկիրը և Իշուվա երկիրը և դարձրեց մի տուն»¹:

Այսպիսով, Իշուվա և Ալշի թագավորությունները Հայասա թագավորության հետ միասին ներկայանում են որպես Հայաստանում հայտնի առաջին քաղաքական կազմավորումներ: Մոտ 1400 թվականին երևան եկած այդ երեք թագավորությունները երկու հարյուրամյակ քաղաքական կյանք ունեցան և անհետացան շուրջ 1200 թվականին, Խաթթի մեծ պետության հետ միասին՝ փոյուզիացիների ներխուժման փոթորկի բովում:

Պետք է նշել նաև երկու ժողովուրդներ՝ Շուրթարի և Մուզրի, որոնք հայտնի են դառնում հիշյալ ժողովուրդների հետ նույն դարաշրջանում: Ասորեստանի թագավոր Ադադնիրարին (1336-1305) հաստատում է, որ իր հայր Աշուրուրալլիաը առաջինը եղավ, որ «Մուզրի երկիրը հպատակ դարձրեց և Շուրթարի ընդարձակ երկրի ուժերը խորտակեց»²: Նույն թագավորը գրավել է Շուրթարին, հատկապես Շուրի, Նաբուլա, Ուշշական քաղաքները ու Կաշիարիի մարզը³: Շուրին՝ բյուզանդական հեղինակների Իգաուրան է, այսօրվա Շորը, որը գտնվում է Տուր-Արդինի մերձակայքում: Աշշուկանին կամ

Վաշշուգաննին՝ Միտաննիի մայրաքաղաքը, կարծես բյուզանդական Բիբա(ս)ն է (Բեթվաշե-ի՞ց), այսօրվա Թել-Բեշը, Թել-Արմենի մոտ:

Նաբուլան իր անունը պահպանել է մինչև ներ օրերը՝ այժմ կոչվում է Նիբել: Այս տեղեկություններով որոշվում է Շուրթարիի տեղը:

Ադադնիրարիի որդին ու հաջորդը՝ Մալմանասար I-ը, պետք է որ շատ արշավանքներ կազմակերպած լինի Շուրթարիի դեմ և հպատակեցրած լինի Մուզրի երկիրը Աշշուրին¹:

Նրա հաջորդ Թուկուլթի-Նինուրտան (1243-1221) վերսկսեց թշնամանքն այդ երկու երկրների դեմ և տեղահանեց Մուզրիի բնակչությանը²: Նա ձգտում էր գրավել (կամ արդեն գրավել էր) հետևյալ երկրները, Բարխի, Կուտմուխի, Բուշշե, Մուսմե, Ալզի, Մադանի, Նիխանի, Ալայա, Թեդիմզի, Պուրուլումզի: Նշենք, որ Ալզին նույն Ալշին է³:

Շուրթարին չի կարող Շուրթարիից տարբեր լինել: Շուրթարի տերմինը սկզբում վերաբերում էր ամբողջ Միջագետքին: Ադադնիրարին այն կցում է Կաշիարիի շրջանին: Ավելի ուշ Շուրթարին, Շուրթարիա ձևով, նշանակում է միայն Արգանենեի շրջանը (12):

Մուզրին Ասորեստանի մայրաքաղաքից հյուսիս ընկած մի շրջանի անունն էր, Մասուրի քրդական տոհմը պահպանել է նրա հիշատակը: Այս տերմինը աղերսվում է Մուզուրի կամ Մ(ու)նձուրի հետ, որը մի գավառ է Դերսիմի լեռների ստորոտին և որտեղ գտնվում է Արսամիասի (Արածանիի) վտակ Մուզուր գետի ակունքը:

3. ՆԱԻՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ)

Մի աղետ տակնուվրա արեց քաղաքակիրթ աշխարհը և փոխեց պատմության ընթացքը: Մեծ Խաթթին սուկալի հարված ստացավ և մոտավորապես Ք. ա. 1200 թվականին կործանվեց: Հայասա թագավորությունը և մի քանի ուրիշներ, որոնք սերտորեն կապված էին խեթական աշխարհի հետ՝ նույնպես անհետացան: Հաջորդ դարաշրջանում Հայաստանը երևան է գալիս Նաիրի նոր անվան տակ:

Հեղաշրջումը տեղի ունեցավ փոյուզիացիների ներխուժման հետևանքով: Բախտի բերումով, Խեթական պետությունը, որը ծնունդ էր առել երկ-

¹ E. Forrer, Reallexikon der Assyriologie, I, էջ 267:

² E. Ebeling, B. Meissner, E. Weidner, Die Inschriften der Altassyrischen Könige, XX, 1, տող 31-32, էջ 63-65:

³ Նույնը, էջ 59-61:

¹ E. Ebeling, B. Meissner, E. Weidner, Die Inschriften der Altassyrischen Könige, XX, էջ 117-119:

² E. Forrer, Reallexikon der Assyriologie, I, էջ 89:

³ Նույն տեղում:

որոշ հազարամյակի սկզբին, հնդեվրոպական առաջին ներխուժման փոքորիկում, նույն հազարամյակի վերջին անհետացավ հնդեվրոպական երկրորդ ներխուժման ժամանակ: Ներխուժողները փոյուզիացիներն էին:

Նրանք եկան Թրակիայից, նեղուցների մյուս կողմից և այնտեղից դուրս էին մղվել, թերևս, դորիացիների Հելլադա ներգաղթի հետևանքով: Բալկանները և Էգեյան աշխարհը մոտավորապես 1400-1200 թվականներին ալեկոծվում էին հյուսիսից եկած երկու ժողովուրդների՝ աքեացիների և դորիացիների ներխուժման հետևանքով: Եգիպտական վավերագրերը սուկումով են խոսում այդ ժողովուրդների կատարած ավերածությունների մասին: Դրանց կոչում են «ծովի ժողովուրդներ»: 1294 թվականին, Խաթթիի և Եգիպտոսի միջև բռնկված Կադեշի ճակատամարտում, խեթական բանակի շարքերում էին մակ հետևյալ ժողովուրդների ռազմիկները. Պադասա, Մասա, Դարդանուի, Իլիունա, Կիրկիշա, Լուկկի, Դանաունա, այսինքն՝ պեղասացիներ, միսիացիներ, դարդանացիներ, Իլիոնի մարդիկ, գերգիսացիներ, լիկիացիներ և դանայացիներ:

Մեկ դար հետո, 1195 թվականին, Եգիպտոսի վրա են հարձակվում լիբիացիները և նրանց նոր դաշնակիցները՝ Պուլեշտի, Թիակարի, Ըակալա, Դանաունա, Վաշաշա, այսինքն՝ փղշտացիք, թևկրացիները, սագալասցիները (Պիսիդիա), դանայացիները, ուասսիացիները (քաղաք Կարիայում):

Էթնիկական այս շարժման ընթացքում է, որ հրապարակ են իջնում փոյուզիացիները և մտնում պատմության մեջ: Հավանական է, որ նրանք Թրակիայում հաստատվել էին աքեական դարաշրջանում: Այնտեղից նրանք անցնում են Փոքր Ասիա դորիական ներխուժման ժամանակ:

Փոյուզիացիները հարձակվում են Խեթական պետության վրա և հիմնահատակ կործանում: Խաթթուշա մայրաքաղաքը գրավվում ու քարուքանդ է արվում, իսկ նրա արխիվները 1200 թվականից առհավետ լուրջամ են մատնվում:

Մեծ պետության հանկարծակի անկումը բացատրվում է մասամբ այն իրողությամբ, որ նա զգալիորեն թուլացել էր Եփրատի հովտում իր ունեցած հարուստ տիրապետությունները Ասորեստանին զիջելու հետևանքով:

Փոյուզիական ալիքները մոլեգնում են Ասորեստանի սահմանների վրա: Չանագան ժողովուրդներ, նրանց թվում մակ մի քանիսը Խաթթիի մախկիմ հպատակներից, դուրս են մղվում իրենց բնակավայրերից, նույնպես նետվում են դեպի Ասորեստան՝ նոր հայրենիք փնտրելու համար:

Ասորեստանի ապահովությունը վտանգի տակ էր: Բարբարոս ցեղերը տարածվում են պետության հյուսիսային մասերում, լեռնային մի ընդարձակ ժապավենի վրա, որը ձգվում է Եփրատից մինչև Չար: Տեղական բնակ-

չությունը գրգռվում, զայրանում, հուզվում է: Մեկը մյուսի ետևից բռնկվում են խռովություններ, անշուշտ՝ նորեկների ազդեցությամբ:

Ասորեստանը կարող էր դրության տերը դառնալ, եթե քիկունքում չունենար մի ահավոր թշնամի: Արամեական բեդլիմները, որոնք թափառում էին Սիրիա-արարական անապատներում, նույնպես հորդում են դեպի ասորական պետությունը: Նրանք ներխուժեցին Դամասկոսից մինչև Ամիդ և Ամանոսից մինչև Խառան ընկած շրջանները:

Այդ արգավանդ հողերի կորուստով Ասորեստանը զրկվում է իր բարգավաճման աղբյուրից: Երկու ճակատներում մղած պայքարը կլանում է նրա ուժերը: Նրա փայլը հետզհետե աղոտանում է: Նա շարունակում է իր անփառունակ գոյությունը մինչև այն պահը, երբ նորից վերականգնվում է նպաստավոր պայմաններում՝ Ք. ա. IX դարի շեմին:

Այդպիսով, էթնիկական տեղաշարժերի հետևանքով քաղաքական աշխարհը կորցրեց իր հավասարակշռությունը և այնուհետև պետք եղավ երեք դար, որպեսզի նոր կարգ ստեղծվի:

Այդ խռովահույզ փոխանցման շրջանում մի պահ հատկապես ուշադրություն է գրավում Թիզլաթպալասարի թագավորությունը (1117-1080):

Նրա բերանով է, որ մենք տեղեկանում ենք այդ դարաշրջանի խառն իրադրությամբ: Նրա թողած ժամանակագրությունները մեզ ծանոթացնում են փոյուզիացիների ներխուժման հետևանքով Ասորեստանի սահմանների վրա ստեղծված վիճակին: Մի շարք ժողովուրդներ եկան ու շարվեցին լեռներում, Ասորեստանի վերևում, պատրաստ հանդուգն գործողությունների: Փոքր պետությունների մի ցանց ծածկում է Հայկական լեռնաշխարհը: Թիզլաթպալասարը գովելի խնամքով պահպանել է այդ բոլոր ժողովուրդների և պետությունների անունները: Նա մեզ հաշիվ է տալիս զինվորական իր այն միջոցառումների մասին, որոնց նա դիմել է ներխուժողների ճանապարհը փակելու և նրանց շարժումներով անհանգստացած լեռնային ժողովուրդը խաղաղեցնելու համար: Նա իր գեներլ ուղղեց նաև Հայկական լեռնաշխարհի դեմ:

Պայքարը, որ Թիզլաթպալասարը ձեռնարկում է Ասորեստանի և Հայաստանի լեռնային գոտու ամբողջ տարածությամբ, ծանր հեռանկարներով մի գործ էր: Այդ պայքարը Ասորեստանին ներգրավելու էր մաքառման մեջ մեկ ուրիշ պետության հետ, որ պիտի կազմակերպվեր Հայաստանում և որոշելու էր նրանց քաղաքական հարաբերություններն իրենց ամբողջ պատմության ընթացքում:

Հետաքրքիր է ուսումնասիրել Թիզլաթպալասարի՝ լեռնցիների դեմ վարած պայքարի իրադարձություններն այն ձևով, ինչպես որ ինքն է պատ-

մում: Այդ պատմությունն ընդգրկում է նրա թագավորության առաջին հինգ տարիները՝ 1117-1112 թթ.¹:

Հենց Թիզբապալասարի գահակալության տարին քսան հազար մուշկեր, հինգ թագավորների առաջնորդությամբ իջնում են լեռներից և գրավում Կուսմուխի երկիրը: Նրանք արդեն հիսուն տարուց ի վեր ներխուժել էին Ալզի և Պուրուլումզի երկրները, որոնք Ասորեստանին հարկատու էին:

Ասորեստանի թագավորն անցնում է Կաշիարի լեռները, հարձակվում մուշկերի վրա Կուսմուխի երկրում և վեց հազար հոգի գերի է վերցնում:

Եթե հաշվելու լինենք Թիզբապալասարի գահակալությունն սկսած 1117 թվականից և հիսուն տարի ետ գնանք, մուշկերի գալու թվականը կլինի մոտավորապես 1170 թ.: Մուշկի անվան տակ հասկացվում են փոյուզիացիները: Հետևաբար, մուշկերը փոյուզիացիների առաջապահներն են, որոնք մոտավորապես 1200 թ. կործանեցին խեթական երկիրը և նետվեցին դեպի Ասորեստան: Ալզին Անզիի մի այլ ձևն է, էթնիկական մի տերմին, որտեղից և Անզիտու, Անզիտենե աշխարհագրական տերմինը: Պուրուլումզին, անշուշտ, պատկանում է նույն ժողովրդին: Կուսմուխի վայրը ճշգրտվում է Երիշա քաղաքով, որը հին հեղինակների Սարեյսան է և Արևմտյան Տիգրիսի ու Կաշիարի լեռան, ժամանակակից Տուր-Արդինը: Մուշկերը, Խաթթի երկրից գալով, Մելիտենեի կողմից ներխուժեցին Անզիտենե և առաջացան մինչև Կաշիարի լեռների փեշերը:

Մի բուռ մուշկերի քաջարի դիմադրությունը Ասորեստանի հզոր թագավորին՝ քաջալերեց նրա լծի տակ գտնվող հարևան ցեղերին ու ժողովուրդներին: Առաջինը գլուխ բարձրացրեց Կուսմուխին, նա, որին ներխուժողների դեմ պաշտպանել էր Թիզբապալասարը, ըստ երևույթին, առանց երախտագիտության որևէ զգացում ներշնչելու: Նրան օգնության է հասնում իր դրացի Բաբխին:

Ասորեստանի թագավորը մեկը մյուսի հետևից հաղթում է բուրին, գերի է վերցնում Կուսմուխի թագավոր Կալի-Թեշուրի որդի Կիլի-Թեշուրին, որին կոչում էին նաև Եարրուպի: Բաբխի թագավոր Եատտուխի որդի Եարի Թեշուրը մույնպես ընկնում է նրա ձեռքը: Վերջինս ապրում էր Ուրբախինաշ քաղաքում²:

Այս պատմության մեջ պետք է նկատի առնել երկու հանգամանք. եթե Ալզին մույն Հայաստանի ժողովուրդ Ազզին չէ, այնուհանդերձ նա Պուրուլումզիի հետ միասին պատկանում է մույն ցեղին, ինչ որ Ազզին: Կուսմուխին Կուսմուխի ձևով հիշեցնում է Հայաստանի մայրաքաղաք Կուսմախան կամ Կամուխան և ընդհանուր ծագում է ենթադրել տալիս: Համեմայն դեպս, -ի վերջածանցով կազմված անունները, ինչպես՝ Կուսմու-խի, Բաբ-խի, Եատտու-խի, Ուրբա-խինա, բարձրանում են դեպի Հայկական լեռնաշխարհը, ուր այս վերջածանցը հիմնովին ամրագրված է Ուրարտուի լեզվում: Դա կարող է նշանակել, որ Ալզիի, Պուրուլումզիի, Կուսմուխիի և Բաբխիի մարդիկ, որոնք ապրում էին Անզիտենում և Մեծ Ծոփքում (վերջինս դեռ հայ Արշակունիների օրոք տարածվում էր Տիգրիսի մյուս կողմը, մինչև Բնարեղ), իջել էին Հայկական լեռնաշխարհից կամ գեթ ազգակցական կապեր ունեին նրա ժողովուրդների հետ:

Մուշկերի կամ փոյուզիացիների հիշատակումը մի այլ նշանակալից փաստ է՝ հայերի փոյուզիական ծագման մասին հայտնի ավանդության կապակցությամբ: Հայկական տարրի մասնակի թափանցումը ապագա Հայաստանի սահմանները սկսվում է, ուրեմն, 1170 թվականից:

Հաջորդ տարին, 1116 թ., Թիզբապալասարը գործ ունեցավ Եուբարի երկրի հետ: Այնտեղ ապստամբություն էր բռնկվել: Խռովությունն սկսվել էր Ալզի և Պուրուլումզի երկրներից, որոնք հրաժարվում էին հարկ վճարել: Չորս հազար «կասկի և ուրումի՝ Խաթթի երկրի զինվորներ» եկել տեղավորվել էին Եուբարիում: Ըստ երևույթին, նոր եկողներն էին հրահրել խռովությունը, այնպես, ինչպես Մուշկին դրդել էր Կուսմուխիին, որը դեռևս չէր խաղաղվել: Ասորեստանի թագավորը մտավ այդ երկրները և վերականգնեց կարգ ու կանոնը:

Եուբարին այն երկիրն է, որ հետագայում երևան եկավ Եուբարիա անունով, որն ընդգրկում էր Բուսնե կամ Օպայումու և Կուլլիների քաղաքների շրջանը: Դա Արզանենեն է՝ հին Հայաստանի նահանգներից մեկը, Սոֆենեի (Ծոփքի) արևելքում:

Ասպատակող կասկերը և ուրումիները կամ, ըստ զուգահեռ մի տեքստի՝ ուրումիներն ու արեշլիները, որոնք որակված են որպես Խաթթիի ռազմիկ-

¹ Այդ հինգ տարիների պատմությունն ընդգրկող Պրիզման գտնվում է Բրիտանական թանգարանում: Այն հրատարակել է H. Winckler-ը, Keilinschriftliche Bibliothek, I, ed. B. Schrader, էջ 16-47, 1889 թ.: Նոր հրատ.՝ A. E. W. Budge and L. W. King, Annals of the Kings of Assyria, 1902, էջ 27-108; D. Luckenbill, Historical records of Assyria, I, 1926:

² Պրիզմա, I, 62, II, 84:
Կուսմուխին շպետք է շփոթել Կուսմուխի հետ: B. Forrer, Die Provinzeinteilung, էջ 17, նկատել է, որ Աշտրուքասիթապալի արձանագրություններում Կուս-մուխի կամ Կուս-մուխի երկիրը

տարբեր է (Տարբզը. I, 74, և II, 87 = A. Budge and L. King, էջ 279 և 326) Կուսմուխի-ից (III, 96, էջ 375 և այլն): Վերջինս Կոսմազենեն է, որը հիշատակված է մուշկերի հետ և գտնվում է Կաշիարիի և Տիգրիսի միջև: A. Ungnad, Babylonisch-assyrisches Keilschriftlesebuch, № 64, խնդրո առարկա առաջին նշանը արտահայտված է Kad-ով (ուրեմն՝ Կադ-մուխի), մինչդեռ է. Ֆորրերը կարդում է Կուս-մու-խի: Մենք նախընտրում ենք Կուս-մուխի: Իրականում Կուսմուխի և Կուսմուխի միևնույն անվան երկու ձևերն են, որոնք, գուցե, ծառայել են միևնույն ժողովրդի երկու հատվածները զանազանելու համար:

ներ, Խաթթի երկրից եկած ցեղերից էին: Կասկերը Պոմոտոսի մեզ շատ հայտնի ժողովուրդ են, որը հաճախ ավերում էր Խաթթիի տարածքը: Կասկերը, ուրումիները և արեշիները, անշուշտ, փոյուզիական ասպատակության զոհերն էին: Իրենց բնակավայրից դուրս մղված լինելու հետևանքով նրանք ստիպված են եղել նոր հայրենիք փնտրել և առաջ են շարժվել մինչև Շուրբարի: Այդ խոռվությունները ճնշվեցին:

Ովքե՞ր են փախստականները: Նրանց ծագման մասին անստուգության մեջ գտնվելով հանդերձ, շատ հանդուգն չէր լինի նրանց համարել դասական հեղինակների Colchi, Apsili և Am(p)reutae իրերական կամ վրացական ընտանիքին պատկանող ժողովուրդների մասնիկներ: Այդ խնդրին մենք նորից կանդրադառնանք ուրիշ հարակից հարցերի կապակցությամբ:

1115 թվականին Թիզլաթպալասարը մեկնում է Խարիայի (ավելի շուտ՝ Խուրրիա) երկրի և լեռներում գտնվող Բաբխի ժողովրդի դեմ կռվելու, «որտեղ (ասուրական) ոչ մի թագավոր երբեք ուտք չէր դրել»: Նա անցնում է Իդնի և Աիա լեռների միջև գտնվող ճանապարհով, Ազու լեռան վրա հարձակվում է Բաբխի մարդկանց վրա և խուճապի է մատնում նրանց: Ավերում է լեռների ստորոտին փռված Խարիա երկրի 25 գյուղեր, որոնցից են՝ Աիա, Շուիրա, Իդնի, Շեզու, Շելզու, Արգանիբիու, Ուրուսա և Անիակու:

Խարիան կարծես Բաբխի ժողովրդի երկիրն է կամ երկրի մեկ մասը¹: Այդ դեպքում պետք է այն տեղադրել Թել-Ֆաֆանի մոտ, Բոհտանում: Այդ երկիրը չէր ապստամբել և ոչ էլ գտնվում էր Ասորեստանի տիրապետության ներքո: Այնուհանդերձ, մա չխուսափեց հարվածից այն ռազմատենչ թագավորի, որը համակված էր աշխարհակալական տենչով և հաղթանակներ էր որոնում: Նրա համար իրական կամ հնարովի անկարգությունները միայն պատրվակներ էին իր փառասիրությանը հազուրդ տալու համար:

Նա օգտվեց Իշուա և Դարիա երկրների միջև ծագած ներքին երկպառակությունից ու նրանց հարկատու դարձրեց: Իշուան՝ Իշուվան է, Եփրատի ոլորանում, Ալզիի արևելքում: Դարիան հայտնի չէ, պետք է որ լինի Իշուվայի մոտ:

Նույն տարին Թիզլաթպալասարը գնում է Սուգի երկրի վրա, «որը գտնվում էր Խաբխի երկրում» և որը չէր ճանաչում Ասորեստանի գերիշխանությունը: Նա մաքառում է Խիմնեի, Լուխիի, Արիզիի, Ալամունի և Բաբխիի ամբողջ զանգվածի դեմ: Խիրիխի լեռան վրա տեղի ունեցած ճակա-

¹ Բաբխին ճիշտ ընթերցումն է այն անվան, որ առաջ կարդացվում էր Կուրխի: Է. Ֆորթը (Realexikon, I, էջ 328) տվել է այդ ընթերցումը և ճանաչել այդ անունը Թել-Ֆաֆանի մեջ, որը գտնվում է երկու Տիզլաթների միախառնման վայրում (Hartmann, Bohtan, էջ 66):

տամարում Թիզլաթպալասարը ջախջախում է բուրին և գերի վերցնում այդ երկրների 25 աստվածներին:

Թվարկված շրջանները գտնվում էին Սուգի երկրում, իսկ վերջինս Խաբխի երկրի մի մասն էր¹: Բաբխիի հիշատակումն ապացուցում է, որ Խաբխին հեռու չէր: Ալամունին նաև Չաբի տեղական անունն էր: Այստեղից պետք է եզրակացնել, որ Խաբխին իր մարզերով գտնվում էր Բոհտանի և Չաբի միջև, Բաբխիի մոտերքում:

Թիզլաթպալասարը նույնպես ռազմական գործողություններ է ծավալում Փոքր Չաբի մարզում: Երկու անգամ անցնում է գետը և հպատակեցնում է Միլդիշ, Ադաուշ, Շարաուշ, Ամաուշ, Մուրատաուշ և Մարանդաուշ երկրները՝ Արումա լեռան վրա տարած հաղթանակից հետո: Այդ երկրները տեղավորված էին Սուլեյմանիեի մարզում, իսկ դրանց ժողովուրդները կազմում էին առանձին խմբավորում և, անուններից դատելով, տարբերվում էին ասորեստանցիներից, ինչպես նաև ուրիշ լեռնականներից:

Այսպիսով, Ասորեստանի թագավորը նախ իր բանակը վարժեցնում է լեռնային ընդարձակ գոտում, որը տարածվում է Եփրատի ոլորանից մինչև Փոքր Չաբ, ապա որոշում է արկածներ որոնել Հայկական լեռնաշխարհում:

1114 թվականին Թիզլաթպալասարը մագլցեց Հայկական Տավրոսը և տասնվեց մեծամեծ լեռների միջով, անանց ճանապարհների դժվարությունները հաղթահարելուց հետո, անցավ Եփրատ գետը², այսինքն՝ Արսանիասը, հայկական Արածանին: Նա ստիպված է լինում լեռներում կտրել տալ ուրումի կոչված ծառերը և կամուրջներ պատրաստել իր զորքերի առաջխաղացման համար:

Նա մտնում է Նաիրի: Այս անունը առաջին անգամ է երևան գալիս Հայաստանը ցույց տալու համար: Նաիրիի 23 թագավորներ հավաքում են իրենց զորքերն ու մարտակառքերը և գալիս դիմադրելու Ասորեստանի թագավորին: Այս 23 թագավորների երկրները թվարկված են այսպես.

¹ Եթե Խաբխան որևէ ամենություն ունի Խաբ-րա-նիա քաղաքի հետ, որ նշված է Սալմանասար III-ի կողմից Գիլգանի և Մանայի հետ միասին (Տարեգր., 181), ինչպես նաև Ասորեստանի աղոթքում (№ 35), Անիսիուս քաղաքի հետ՝ Խուրուշկիայի մաս (J. A. Knudtzon, Assyrische Gebete, էջ 130), ապա պետք է կարծել, որ Խաբխան գտնվում էր Բաբխիի և Խուրուշկիայի միջև: Այդ դեպքում, եթե ճիշտ ընթերցումն է Խուրրիա, ինչպես առաջարկում է Է. Ֆորթը, ապա կարելի է կարդալ նաև Խարրանիա, Խուրրանիա:

² Այդ լեռները հիշատակված են իրենց անուններով. Էլամա, Ամադանա, Էլիսիշ, Շերաբիլի, Թարրունա, Տորկախուլի, Կիսրա, Թարխանաբե, Էլուլա, Խաշտարան, Շախիշարա, Ուրբրա, Միլիադունի, Շուխանգի, Նուրեմաշե, Շեշե: Դժբախտաբար, այս լեռներից ոչ մեկը հնարավոր չէ որոշել:

- | | | |
|---------------|------------------|----------------|
| 1. Թումնե | 9. Ատուրզինի | 17. Ադաենի |
| 2. Թումուրե | 10. Կուլիբարզինի | 18. Կիրինի |
| 3. Թուալի | 11. Շինիբիրնի | 19. Ալբայա |
| 4. Քինդարի | 12. Խիմուա | 20. Ուզինա |
| 5. Ուզուլա | 13. Պախտերի | 21. Նազարիա |
| 6. Ունգամունի | 14. Ուիրամ | 22. Աբարսիունի |
| 7. Անդիարե | 15. Շուրուրիա | 23. Դայանեի |
| 8. Պիլակիննի | 16. Աբաենի | |

Շարվում են ճակատամարտ սկսելու համար: Թիզլաթալասարը հարձակվում է Նաիրիի թագավորների վրա «իր սուկալի զենքերի կատաղությամբ», ջախջախում է նրանց «լայնատարած» ուժերը: «Նրանց սպանված ռազմիկների մարմինները որպես հարդ ցրում է լեռների բարձունքների վրա, իրենց քաղաքներից հեռու»:

Հաղթական թագավորը ավար է վերցնում 120 մարտականք և հետապնդում Նաիրիի 60 թագավորներին ու նրանց օգնության եկողներին մինչև Վերին ծովը: Գրավում է նրանց քաղաքները, տանում նրանց ունեցվածքը, քանդում ու կրակի ճարակ է դարձնում երկիրը: «Չիերի մեծ երամակները, - ասում է նա, - մեծ թվով արագաշարժ ջորիներ, անասուններ քերի նրանց արոտատեղերից. իմ ձեռքն ընկան Նաիրի երկրի բոլոր թագավորները, ես նրանց ներեցի և կյանք շնորհեցի: Կալանավորված և կապված էին, ես նրանց ազատ արձակեցի իմ տեր Շամաշի դիմաց և երդվել տվի, որ մեծարեն ինձ այսուհետև և ընդմիշտ: Նրանց թագածառանգներին պահեցի որպես պատանդներ: Հարկ պարտադրեցի՝ 120 ձի, 2000 գլուխ անասուն, ապա ուղարկեցի նրանց իրենց երկրները: Գերեցի Դայանեի երկրի թագավոր Սինեիին, իր հպատակությունը հայտարարած չլինելու պատճառով, կապած քերի Աշշուր քաղաքը: Ներեցի նրան, որպեսզի ապրի և ինձ մեծարի, ապա ուղարկեցի իր երկրները: Նաիրի ընդարձակ երկրները, - եզրափակում է Ասորեստանի թագավորը, - գրավեցի լայնությամբ ու երկարությամբ և նրանց ստիպեցի իմ ոտքերն ընկնելու»:

Այս արշավանքի ընթացքում, հավանական է վերադարձի ճանապարհին, գրավել է «Խանիզալբատում գտնվող Միլիդիա» (Մելիտենե) քաղաքը և պարտադրել վճարելու տարեկան հարկ մեկ իմներ abaru-ի չափով:

Ասորեստանի թագավորի արշավանքը Հայաստան այժմյան հեղինակների կողմից մեկնաբանվել է այնպես, թե նա հասել է մինչև Սև ծովը և նույնիսկ Կասպից ծովը: Տեքստը, սակայն, այդպիսի չափազանցության տեղիք չի տալիս: Իրականությունը շատ ավելի համեստ է:

Ասորական բանակի ուղղությունը՝ Եփրատ-Արսանիասը անցնելուց հետո, ճշգրտվում է Թիզլաթալասարի մի արձանագրությամբ, որ հայտնաբերվել է Յոնջալուում, Մանազկերտից 30 կիլոմետր հեռավորության վրա: Այստեղ գրված է. «Թիզլաթալասար, աշխարհի թագավոր, Աշշուրի թագավոր, չորս երկրամասերի թագավոր, Նաիրի երկրների նվաճող՝ Թումնեից մինչև Դայանեի, Խաբիսից մինչև Մեծ ծով ընկած երկրների նվաճող»¹:

Վճռական ճակատամարտը, հավանաբար, տեղի է ունեցել արձանագրության շրջակա վայրերում: Հետևաբար, Արսանիասն անցնելուց հետո Թիզլաթալասարը դառնում է դեպի արևելք և ներկայումս Բալուից Մանազկերտ տանող ճանապարհով հասնում Յոնջալուի դաշտը:

Որ Նաիրիի 23 երկրները տեղավորված էին ցույց տրված ճանապարհի հյուսիսում, դա ակներև է, բայց ի՞նչ հեռավորության վրա, դա արդեն վիճելի է: Բարեբախտաբար, հնարավորություն կա 23 երկրներից մի քանիսն ստույգ կերպով տեղադրելու: Թումուրե՝ մեր ցուցակի երկրորդ երկիրը, նշված է Սալմանասար III-ի կողմից, որը հետևել է Թիզլաթալասար I-ի անցած ճանապարհին, ինչպես կոեսնենք հետազայում: Նա ասում է, որ «մտել է Թումիբու-նի երկրի լեռնանցքը», որպեսզի գնա ավերի Ուրարտուն: Այդ լեռնանցքը Ինզիտի, Անզիտենեի լեռնանցքն է, Բիրկալենի մոտ գտնվող Հայկական Տավրոսի պարանոցներից մեկը: Այսօր նա կոչվում է Գյոկ-դերե՝ «Կապույտ հովիտ (կամ լեռնանցք)»։ ըստ անվան, որ կրում է Բալուից արևմուտք գտնվող 40 գյուղերից բաղկացած մի փոքրիկ գավառը: Դա հենց Սալմանասարի Թումիբունին և Թիզլաթալասարի Թումուրեն է՝ Արսանիասի վրա մի փոքրիկ երկիր, ուղիղ լեռնանցքի ելքի դիմաց: Թումուրեն, կամ ավելի շուտ՝ Թումիբին, վերաբերում է Թումիբունիին, ինչպես Արգաշկուն՝ Արգաշկունին կամ Թուշխան՝ Թուշխանին. -նի-ն այստեղ ուրարտական բնորոշ վերջածանց է:

Ուզուլա, որ մեր ցուցակում հինգերորդ անունն է, դեռ այսօր էլ գործածվում է: Սա Բալուի և Պաղինի միջև գտնվող քրդական Իսուլ գյուղն է: Այս անունն է կրում նաև քրդական այն տոհմը, որ ապրում է նրա շրջակայքում²: Ուզուլան, ուրենն, Թումուրեի հարևանն էր: Մաու «երկիր» որոշիչը, որով Ասորեստանի թագավորները պատիվ են անում Թումուրեին և Ուզու-

¹ C. Lehmann-Haupt, Sitzungsberichte d. Preus. Akad. d. Wissenschaft., 1900, էջ 626. նույնպես Armenien einst und jetzt, I, էջ 433, II, 1, էջ 115:

Այս արձանագրության տվյալներով վերականգնվում է Թումնե անվան ճիշտ ընթերցումը. նախապես կարդում էին Նիմնե:

² Նաբանյան տեղեկագիր (Topographie de Palou, Xarberd. Carsanjak, Capatjur et Erzinka), հայերեն, 1787, էջ 97 և 98:

լային, չի կարող խոչընդոտ հանդիսանալ առաջարկված նույնացումներին: Ասորեստանցիները միտումնավոր կերպով իրերը խոշորացնում էին, որպեսզի իրենք էլ խոշորանան: Այն, ինչ ևս «քաղաք» են կոչում, հաճախ գյուղ է, իսկ *matu* «երկիր»-ը վերաբերում է մեկ քաղաքի տարածքին:

Հռոմեական հին ճանապարհացույցներին ի միջի այլոց հայտնի էր մի ուղի, որին վերագրված են հետևյալ կայանները. Իսումբո 17, Նասաբի 24, Անտեբա 24, Սորուա 27, Կալիսալի 39, Ռաուզոնիա¹: Առաջին կայանը՝ Իսումբոն, կամ ավելի շուտ՝ Սումբոն, ձայնավոր սկզբնատառը միայն հայերենի նախդիրը լինելով, այլ բան չէ, քան Ապահունի գավառի Շուրբ (Իսումբո) գյուղը, Մանազկերտի շրջանում: Շուրբում էր, որ 998 թ. տեղի ունեցավ քրիստոնյա իշխանների և մուսուլմանների միջև սղված ճակատամարտը²:

Վերջին կայանը, որի Ռաուզոնիա անունը Բագատոնիայի աղավաղումն է, նույն հայկական Բագավանն է, Բագրևանդ³ գավառի կենտրոնը: Բագավանն այժմ կոչվում է Սուրբ Օհան, ըստ այն սրբավայրի, որ հիմնել է Գրիգոր Լուսավորիչը Հովհաննես Նախակարապետի անունով: Թուրքերը սրբավայրը կոչում են Ուչ-քիլիսե:

Այս միջանկյալ կայանները գտնվում են Մանազկերտի և Ուչ-քիլիսեի միջև: Նրանցից երեքը՝ Նասաբին, Անտեբան, Սորուան, գտնվում են Նաիրիի 23 երկրների ցուցակում: Դրանք են՝ Նագաբիա, Անդիաբե, Շուրուրիա: Վերջինը գուցե Շորեր գյուղն է, Ալա-դաղի գառնավայրի վրա, Ջիլան գետի ակունքի մոտ: Նույնիսկ չորրորդ կայանը՝ Կատիսալին (կարդալ Օրտիսալի), կհամապատասխաներ հայերեն Օրդասալու-ին, Ուչ-քիլիսեից ոչ հեռու⁴:

Տասնմեկերորդ անունը՝ Շինիբիրնի, հիշեցնում է Շինիբրան, որը գտնվում է Բալուի հյուսիսում: Ցուցակի նախավերջին երկիրը՝ Արարսիունին, թերևս չի կարելի զանազանել Արասինից, որն ուրարտական մի բնակավայր է, դարձյալ Մանազկերտի մոտ: Այն հիշատակված է Խոտանլուի (Յոնջալուի մոտ) արձանագրության մեջ (ստորև՝ № 50) որպես այն կետերից մեկը, որոնց համար ջրմուղ էր կառուցվել⁵:

¹ *Itineraria Romana*, ed. Konrad Müller, 1916, էջ 63:

² Ասողիկ, Պատմություն տիեզերական, III, գլ. 41:

³ J. Marquart, *Die Entstellung und Wiederherstellung der armenischen Nation*, էջ 23:

⁴ Մեթուս, Պատմություն, էջ 108, ասում է, որ արարները Տարոնից գնալով անցան Բերկրի, Օրդասալու և Կոզովիտ (Բայազետի հովիտ) Այրարատ մտնելու համար: Սրբագրումն էլ ավելի թեթև կլիներ Կարտիսալի կարդալու դեպքում՝ Արճեշի հյուսիս-արևմուտքում գտնվող մի գյուղ (B. T. Maevskii, նշվ. աշխ., *Приложение*, էջ 24):

⁵ *Anonyme de Ravenne*, II, էջ 75՝ Միմրա, Ֆլեբա, Մոզուսա, Բոլրա, Արասնասա: J. Marquart, *Südarmenien*, էջ 263, իրավամբ կարդում է Մինեբրա, Բոլուա (= Բալու): *Ptol.*, V, 6, 19, էջ 883:

Այսպիսով, ցուցակի 23 երկրներից վեցը տեղադրվում են Մանազկերտի և Ուչ-քիլիսեի միջև ընկած տարածության վրա: Ավելացնենք նաև Թումսեն՝ ճակատարմատի քառերաբեմը, Յոնջալուի դաշտում, եթե մասնագետները չհամաձայնեն այն նույնացնել Իսումբո= Շուրբի հետ:

Այս նույնացումները մեզ պատկերացում են տալիս, թե ինչ էր ներկայացնում նաիրյան մի պետություն: Դա մի մանր պետություն էր, որի տարածքն ավելի պակաս էր, քան հայ մեծ ֆեոդալների տիրույթները: Համարյա ստույգ է, որ 23 պետությունները շարված էին այն ճանապարհի երկու կողմերում, որով անցել էր ասորեստանյան բանակը, Եփրատի անցումից սկսած, Բալուի մոտով, որի վերևում տարածվում էր Դայաննի երկիրը, մինչև Թումսե, որը արշավանքի ծայրագույն կետն էր: Նշանակում է, որ նրանք գրավում էին Արասնիսի ավազանը, Վանա լճի և Բագրևանդ գավառի միջև եղած տարածությունը, խմբված լինելով, մանավանդ, Բինգյուլ-դաղի և Ալա-դաղի լեռնաստանի շուրջն ընկած տարածության վրա¹:

Թիզլաթալասարը թողել է մի արձանագրություն Բիրկալեյն գետնուղիում (թունել), որտեղ ասում է, որ գրավել է ամեն ինչ, սկսած Ամուրրու երկրի մեծ ծովից մինչև Նաիրիի ծովը և երեք անգամ եկել է Նաիրի երկրները²: Դրանից եզրակացրել են, թե Ասորեստանի թագավորը երեք արշավանք է կատարել Նաիրի երկրների դեմ: Սակայն բնագիրն այդ եզրակացության հանգելու հնարավորություն չի տալիս: Թիզլաթալասարը միայն ասում է, որ երեք անգամ հասել է Տիգրիսի ակունքը, այսինքն՝ ար-

¹ Մեք չենք կարող ընդունել այն ծավալը, որ է. Ֆորբերը, *Realexikon*, I, էջ 281, տալիս է Նաիրիի արշավանքին: Նա ասորեստանցիներին գրավել է տալիս ամբողջ Հայաստանը և ամբողջ Աղվանքը, Սև ծովի և Կասպից ծովի միջև ընկած ամբողջ տարածությունը: Այդ դրույթը հաստատելու համար նա կատարում է տարօրինակ նույնացումներ: Անդիաբեն, 23 երկրներից մեկը, դասում է Անգաֆ, Պախտերին, նաիրյան մի այլ երկիր, դասում է Փայտակարան, Թումսեն՝ Թոմ, որը Վանից հեռու է 68 կիլոմետր, Կոտուրի ակունքին, Սատվանիսի մոտ գտնվող մի գյուղ է:

Սակայն Անգաֆը հայերեն անձավ բառն է, իսկ Փայտակարանը՝ իրանական Պարայտականը: Գալով Կուլիբարգինիին, եթե նույնիսկ այն նմանեցվի Կուլարգենին, վերջին տերմինը ուրարտական Կատարգանին է, և չի կարելի ասել, որ այդ անունը կրող ցեղն արդեն Թիզլաթալասարի ժամանակ ապրում էր Կուլարգեն գավառում՝ հայկական Կղարջքում:

Թոմ կամ ավելի շուտ՝ Թյուն գյուղը, ինչպես ներկայումս արտասանվում է (B. T. Maevskii, *Военно-статистическое описание Ванского и Битлисского вилайетов*, 1904, *Отдел приложений*, էջ 49), չի կարելի նմանեցնել Թումսեին հենց այն բանի համար, որ Ասորեստանի թագավորը Վանա լիճը չի շրջանցել, այլ վերադարձել է նույն ճանապարհով, որով եկել էր Թումսե և իր վերադարձին հպատակեցրել Մեխտենե քաղաքը: Չկա մի նշան, որից երևար, թե նա շրջանցել է լիճը՝ իր մայրաքաղաքը գնալու համար:

² E. Schrader, *Keilinschriftliche Bibliothek*, I, էջ 49: A. Budge and L. King, *The Annals*, էջ 127, ծան. 1:

ճանազորության վայրը, ուրիշ ոչինչ: Նա այդ երկրամասը վերագրում է Նաիրիին այնպես, ինչպես ավելի ուշ հայերն են անում, ասելով, թե Տիգրիսի ակունքները գտնվում են Հաշտյանք՝ Աստիանենե գավառում: Ասորեստանի թագավորը Եփրատ-Արսանիսան անցել է միայն մեկ անգամ, և դա եղել է 1114 թվականին:

Հաջորդ տարին, 1113 թվականին, ասորեստանյան բանակը պատերազմ է մղում արամեական ախլամիի ցեղերի դեմ: Սա մեր խնդրո առարկայից դուրս է: 1112 թվականին Թիգլաթպալասարը պատերազմական գործողություններ է կատարում Մուզրի և Կումանի երկրների դեմ: Նա անցնում է Էլամունի, Թալա և Խարուսա լեռներով, հաղթում է Մուզրիին և երկիրը կրակի ու սրի ճարակ դարձնում:

Կումանին օգնության է հասնում իր հարևան Մուզրիին, բայց պարտություն է կրում: Քսան հազարի չափ նոր ուժեր օգնության են գալիս: Ասորեստանցին հարձակվում է նրանց վրա և փախուստի մատնում: Նրանց հետապնդում է մինչև Խանուսա լեռը՝ Մուզրիի սահմանագլուխը: Խանուսայի բերդը, ինչպես նաև թագավորական քաղաք Կիրշուն գրավվում են: Կումանիի թագավորը սարսափահար եղած՝ հաղթական թագավորից գուր է հայցում և «ընկնում նրա ոտքերը»:

Կումանին և Մուզրին (կամ Մուծրին) երկու թագավորություններ են: Կիրշուն Կումանիի մայրաքաղաքն է: Չախույից տասը կիլոմետր հեռավորության վրա գտնվող ներկա Գիֆշե գյուղը, Արևելյան Խարուրի ափին, պահպանել է Կիրսունաի անունը, որը ծանոթ է նաև Կիրսու հորջորջմամբ: Դա ճշտում է Կումանիի տեղը Խարուրի հովտում, Ջերել-Արիադ լեռան փեշերին:

Մուզրին գտնվում էր Կումանիի հարավում, Դեհոկի շրջանում, ուր Մուսիրի կռված քրդական ցեղը պահպանել է նրա անունը:

Կումանեցիներն այն միևնույն ժողովուրդն են, որ երևան է գալիս Ասարխադդոնի օրով Կումա անվան տակ, ուրեմն առանց -նի վերջավորության, ինչպես Կիրշու՝ Կիրշունիի փոխարեն, կամ Թուշխա՝ Թուշխանիի փոխարեն:

Մուզրի ժողովրդին չի կարելի բաժանել այն ժողովրդից, որն իր հիշատակը թողել է Մ(ու)զուր հայկական գավառի անվան մեջ, որը գտնվում է Դերսիմի շրջակայքում: Ավելի նվազ վստահությամբ կարելի է նմանություն ենթադրել Կումանիի և պոնտական նշանավոր Կոմանայի միջև:

Համենայն դեպս, երկու ժողովուրդները՝ Կումանին և Մուզրին, սեմական աշխարհին չեն պատկանում, ավելի շուտ, ինչպես մյուս լեռնցիները, կապված են Հայաստանի բնակչության հետ:

Այդպիսին էին Թիգլաթպալասարի ռազմական գործողությունները: Հարց է ծագում, թե որո՞նք էին ստացված իրական արդյունքները:

Իր արձանագրության ներածականում, որտեղ նա իրեն վերագրում է մեծադորդ տիտղոսներ, նա հայտարարում է, որ մեծ ասավածներն են հրամայել ընդարձակել իր երկիրը, և ինքը գրավել է «երկրներ, լեռներ, քաղաքներ, գերել է իշխանների՝ Աշշուրի թշնամիների», որ 60 թագավորների դեմ է կռվել և նրանց երկրները միացրել է իր երկրին:

Մի այլ տեղ նա հաստատում է, որ միայն Նաիրիում հպատակեցրել է 60 թագավորների: Ավելի զարմանալի է, որ արձանագրության վերջում, իր սխրագործություններն ամփոփելիս, գրաված երկրների թիվը վերածում է 42-ի:

Թիգլաթպալասարի ասելով, նաիրյան թագավորներն ապրում էին «Վեբին ծովի» ափերին, և հաղթանակից հետո նրանց հետապնդում է մինչև «Վերին ծովը»: 42 երկրները տարածվում էին լեռնային մարզում՝ սկսած Փոքր Չաբի այն կողմից մինչև Եփրատի այն կողմը, մինչև Խաթթի երկիրը և «Արևմուտքի Վերին ծովը»:

Այստեղ ակնարկվում է, կարծես թե, Սև ծովը: Եթե իսկապես դա է իմաստը, ապա չափազանցություն է և հերքվում է Խոտանլուի արձանագրությամբ, որն ասորեստանցիներին հասցեագրված չլինելով, ավելի արժանահավատ է: Այստեղ նվաճումների տարածությունը սահմանված է երկու գուգահեռ գծերով՝ «Թունմեից Դայանի», այսինքն՝ Մանազկերտից Բալու և «Խաբիսից» մինչև Մեծ «ծով», այսինքն՝ Չաբի շրջանից դեպի Միջերկրական ծովը:

Միևնույն թագավորի մի ուրիշ արձանագրության պահպանված բեկորում¹ Նաիրիի թագավորներն այլևս 60 չեն, այլ միայն 30, որոնց քթերին նա օղակ անցկացրեց «ինչպես ցուլերի» և տարավ Աշշուր: Դրանք հավանաբար Նաիրիի 23, Մուշկիի 5, Կուտմուխիի և Ուրբախինայի 2 թագավորներն են:

Ասորեստանի թագավորն իր աշխարհակալության վերաբերյալ ասածների մեջ շատ է չափազանցում: Չափազանցելու նրա ճաշակն արտահայտվում է նաև այլուր: Այսպես, նա ուզում է հավատացնել, թե երբ Խառանում, իր սխրագործություններից հետո, անձնատուր է լինում որսոր-

¹ Դա իր թագավորության առաջին տասը տարիների պատմությունն է, որից միայն մի քանի հատվածներ են հայտնի, հրատարակված Ա. Բուդջի և Լ. Քինգի կողմից, ԳՂ. աշխ., էջ 109-126: Մեկում կարդում են Մուշկի, Ուրումի, Արբշլի և Ալգի անունները, մյուսում 4000 ուրումիի և արբշլիի մասին է խոսվում: Դա ոչ թե Նաիրիի դեմ երկրորդ արշավանքի հաշվետվությունն է, այլ հակիրճ պատմությունը 1114 թ. արշավանքի, հակառակ մի քանի գիտնականների կարծիքին:

դուքյան հաճույքին, իբր թե մեկը մյուսի հետևից սպանել է չորս վայրի ցուլ տասը հզոր արու փիղ և կենդանի բռնել է չորսին, ոտնատակ է արել 120 առյուծ, իսկ մարտակառքով՝ 800 առյուծ: Բացի դրանից, նա ոչնչացրել է դաշտերի բոլոր անասունները և երկմքի բոլոր թռչունները¹:

Սնապարծ առաջնորդը չարաշահում է թագավորական խոսքին ցուցաբերվող վստահությունը: Եթե նրա նվաճումների պատմությունը գնահատելու լինենք իր որսի պատմության չափանիշով, հիասթափությունը մեծ կլինի: Համենայն դեպս, նրա հաջողությունները վաղանցուկ էին՝ օրվա հաղթանակ առանց վաղվա շարունակության:

28 արշավանք կատարել, ինչպես Թիզլաթպալասարն է կատարել արամեացիների դեմ, նշանակում է հանդիպել համառ թշնամու, որի հարձակումներն ստիպված է եղել ետ մղել: Ապստամբությունները հյուսիսում, որոնք անցնում էին մի մարզից մյուսը, նույնպես ապացուցում են, որ հարձակմանը դիմազրավելու խնդիր է եղել:

Թիզլաթպալասարն իրականում գտնվում էր լեռնային ցեղերի և անպատի բեդվինների կրկնակի ճնշման դեմ պաշտպանվողի վիճակում: Նա հաջողությամբ դիմադրում է՝ «թույլ չի տվել թշնամուն, ինչպես ինքն է ասում, - ոտք դնել Ասորեստանի հողի վրա»²: Նա նույնիսկ հարձակման է անցել և ավերել ու կողոպտել է թշնամական տարածքը, Հայկական լեռնաշխարհից թագավորներ է գերեվարել՝ մայրաքաղաքի փողոցներում իր ուժը ցուցադրելու համար, բայց այդ բոլորը երկար չէր տևում: Հենց որ արշավանքից վերադառնում էր, ապստամբները նորից էին գրավում իրենց դիրքերը: Նրա հաջողությունները երկարատև չէին: Իր թագավորության առաջին հինգ կամ տասը տարիներին իրեն վերագրած փառավոր հաղթանակների մասին այլևս չի խոսելու թագավորության մնացած ժամանակում, համարյա քսանհինգ տարի, որովհետև տարածքային ամեն տեսակի եկամուտներն արդեն իսպառ վերացել էին: Ադադնիրարին (911-890) արամեացիներից խլում է Նիսիբիս (Մծբնի) մարզը, որը գտնվում էր Կաշիարիի փեշերին, և ի միջի այլոց նա նկատել է տալիս, որ այդ մարզը Թիզլաթպալասարից ի վեր կորած է եղել: Եթե Թիզլաթպալասարը չի կարողացել պահել, մանավանդ, Ասորեստանին այնքան մոտ մարզը, ինչպես՝ կարող էր իր ձեռքին պահել այնքան հեռավոր երկրներ: Բացահայտ է, որ Ասորեստանը բոլորը կորցրել էր: Արամեացիները ներխուժել էին Միջագետք մինչև Ամիդ և Նիսիբիս, ներառյալ Խառանի դաշտը, որտեղ Թիզ-

լաթպալասարը զվարճանում էր որսորդությամբ: Ասորեստանի և Հայաստանի միջև ընկած լեռնային գոտին ազատվում է ասորական ազդեցությունից և զբաղեցված է մնում հետևյալ ժողովուրդների կողմից. Իշուվա, Դարիա, Ալզի, Պուրուլումզի, Շուպրիա, Կասկի, Մուշկի, Ուրումի, Աբեշլի, Խարիա, Բաբլսի, Խաբլսի, Կումանի, Մուզրի: Ասորեստանի առաջին փորձը՝ երկիրն ընդարձակելու ուղղությամբ, ձախողման մատնվեց: Նա ստիպված է լինում ետ քաշվել և փակվել շատ նեղ սահմաններում: Դրան հետևում է անկայունության ու տագնապի շրջանը: Մեկ տասնյակ թագավորներ նստում են Թիզլաթպալասարի գահին, բայց չեն կարողանում նույնիսկ մի քանի հիշատակելի էջ ավելացնել Ասորեստանի պատմությանը: Վավերագրերի աղքատությունը այդ շրջանում դրա լավագույն ապացույցն է, որովհետև հաջող պատերազմների արձագանքներով է, որ առատանում են ասորական արձանագրությունները: Իր նախկին ուժից զրկված, Ասորեստանը լուսկյաց կյանք է վարում մինչև X դարի վերջը, որպեսզի նորից հանդես գա և բաց անի իր պատմության ամենափայլուն էջը:

Այդ ամբողջ մթին փուլի ժամանակ ոչինչ չի լսվում լեռնային ժողովուրդների մասին. Ասորեստանն ի վիճակի չէ նրանց ազատությունը փորձության ենթարկելու: Այլևս ասորեստանցիները Հայաստան չեն վերադառնում: Սակայն այդ շրջանում է, որ առաջին անգամ արտասանվում է Ուրուտարի անունը, նույն ինքը Ուրարտուն: Իսկ սա ազդարարում է եզակիորեն փայլուն մի դարաշրջանի սկիզբը Հայկական լեռնաշխարհի համար:

¹ Պրիզմա, VI, 61-84:

² Անդ, VI, 53-54:

ՈՒՐՈՒԱՏՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ աստրական աղբյուրների (13)

Հենց այն ժամանակ, երբ Ասորեստանը ոտքի է կանգնում և կրկին սկսում է վերականգնվել իր՝ մեծ պետության կարգավիճակում, մեկ ուրիշ պետություն ասպարեզ է իջնում Հայկական լեռնաշխարհում: Դա Ուրարտու պետությունն է:

Թիզրաթալասարի ժամանակից հետո տեղի ունեցած զարգացումը փոխակերպել էր Նաիրի երկրների սոցիալական ու քաղաքական դեմքը: Այդ զարգացման ընթացքը մեզ հայտնի չէ վավերագրերի իսպառ բացակայության պատճառով: Երևում է միայն տեղի ունեցած իրողության արդյունքը: Նաիրիի բազմաթիվ պետություններ անհետացել կամ ավելի շուտ՝ միաձուլվել են, կազմելով մեկ քաղաքական մարմին: Նոր պետության կենտրոնը այն ցույց դաշտն է, որտեղ Նաիրիի 23 թագավորները պարավեցին Թիզրաթալասարի կողմից 1114 թվականին: Արդյոք այս աղետը չէ՞, որ առաջին անգամ նրանց դրոշմը կենտրոնացնելու երկրի ցրված ուժերը:

Երկրի հին՝ Նաիրի անվանումն իր տեղն է զիջում Ուրարտու հորջորջման:

Ուրարտուի հիշատակումը սկսվում է Ասորեստանի Աշուրբեկալ (1077-1060) թագավորի ժամանակից «Ուրուատրի» ձևով (14): Որոշ վարանումներից հետո հանձին Ուրուատրիի ճանաչեցին «Ուրարտու»-ի ավելի հին ձևը: Աշուրբեկալան Ուրուատրին գետեղում է Արևելյան Տիգրիսի շրջանում: Նա ասում է, որ իր թագավորության առաջին տարին գրավել է Ուրուատրին և Մաշգունը, իսկ երրորդ տարին՝ Ուրուատրին, Մաշգունը և Խիրուան:

Մալմանասար II-ը (1028-1017) ցույցապես պատերազմ է մղում Ուրուատրիի դեմ և հպատակեցնում է նրա հետևյալ ութ շրջանները՝ Խիմմե, Ուառկուն, Մաշգուն, Մալուա, Խալիլա, Լուխա, Նիհիլպախրի և Ջինգուն: Նա հրկիզում է 51 գյուղ, «երեք օրում նվաճում է ամբողջ Ուրուատրի երկիրը»:

Այս հարձակվում է Բաբելոնի վրա և արյուն հոսեցնում բազմաթիվ քաղաքներում՝ «Ուրուատրի երկրից սկսած մինչև Կուտունիսի»¹:

Այդ վայրերից Խիմմեն ու Լուխան մեզ հայտնի են Թիզրաթալասարի արձանագրությունից, որտեղ նրանք տեղադրվում են Խաբսիում, մինչդեռ այստեղ կապվում են Ուրուատրիի հետ: Վերջինը պետք է որ սահմանակից եղած լինի մեկ կողմից՝ Խաբսիի, մյուս կողմից՝ Բաբելոնի հետ: Նշանակում է, որ նա գտնվում էր Բոհտանում, համարյա Արևելյան Խաբուրի ակունքների վրա:

Մալմանասար III-ի (859-824) ժամանակից սկսած Ուրարտուն երևան է գալիս որպես Հայաստանի անուն: Մակայն դրանից չի հետևում, թե այդ անունը գալիս է նույն ժամանակաշրջանից: Բոհտանից չէ նույնպես, որ այն անցել է դեպի Հայկական լեռնաշխարհը: Ըստ դժվար է բացատրել, թե ինչպես կարող էր քաղաքական անցյալ չունեցող մի շրջան իր անունը տալ մի մեծ երկրի: Ըստ ավելի հավանական է, որ Բոհտանը Ուրուատրի-Ուրարտու անվան համար պարտական է Հայաստանին, լինելով հայկական Ուրարտուի նահանգ: Անշուշտ, այդ միևնույն պատճառով է, որ Բավհանի հյուսիսում գտնվող շրջանը նույնպես կոչվում էր Ուրարտու Մեծաքերիքի օրով (705-681): Որ Ուրարտուի հավակնությունները շատ հեռու էին գնում, դա բոլորովին գաղտնիք չէ, ինչպես կատանենք հետագայում:

Նույն բախտն էր վիճակված նաև Նաիրի անվանը: Հայկական լեռնաշխարհում իր անունը զիջելով Ուրարտուին, նա այս լեռնաշխարհի երկու կողմերում իրեն է պահում երկու շրջաններ՝ Ամիրի շրջանը մինչև Անգիտեն և Խուրուշկիա երկիրը Չաբի հովտում և նույնիսկ Պաղդիթայի շրջանը Մուծածիրի հարավում: Այդ շրջանները Նաիրի անունը վերագրում են իրենց այն պատճառով, որ երբեմն կազմել են Նաիրիի մասը, երբ վերջինն ընդգրկում էր ամբողջ Հայկական լեռնաշխարհը: Համանման աստիճանական անկում է ապրում հետագայում «Ուրարտուն» պետության փլուզումից հետո նա կառչում է Արաքսի հովտում Հայաստանի Այրարատ նահանգին:

Պետք է նկատի ունենալ, և մենք դրան կանդադարանաք հետագայում, որ Նաիրի, Ուրուատրի անուններն ազգակցական կապ ունեն Խուր-րի, Նամ-րի, Կիրրու-րի և -րի ածանց ունեցող ուրիշ շատ անունների հետ և պատկանում են մի լեզվի, որը ոչ մի առնչություն չունի սեմական լեզուների հետ:

Ուրարտուն Հայաստանի բարձունքներում բացում է նոր դարագլուխ: Իր սահմանները տարածելու համար թափած ջանքերում նա կանգնում է

¹ E. Forrer, Reallexikon, I, էջ 207, 208. E. Ebeling, B. Meissner, L. Weidner, ճշվ. աշխ., էջ 113:

ասորեստանյան կայսերապաշտութեան հանդիման: Սկսվում է մի համառ պայքար, որը չի դադարում մինչև երկու մրցակիցների վերջին օրը և ընթանում է Եփրատից մինչև Փոքր Ձաք տարածվող միջանկյալ երկար պատմեշի վրա և հանում դրա հաղթահարման: Երկու հակառակորդների մրցակցությունը կազմում է երեքդարյա պատմության մի թել, որի վրա շարվում են նրանց ռազմական բախտի փոփոխականությունները:

Նախընտրելի է ուրվագծել երկու պետությունների պայքարի իրադարձությունները մախ՝ ըստ ասորեստանյան աղբյուրների և ապա՝ վերադառնալ ուրարտական վավերագրերին, որոնք հակակշիռ կծառայեն պայքարի իսկական արդյունքները գնահատելու համար:

Երկդարյա լեթարգիական բնությունից հետո Ասորեստանը Ադադնիրարիի թագավորության ժամանակ (911-890) նորից հզորանում է: Առաջին անգամ նա իր գեներալ ուղղում է Կումանի երկրի և նրա հարևանների դեմ: Ասորեստանի թագավորը գրոհում և գերի է վերցնում այդ երկրի թագավոր Իլույային և նրա աստվածներին: Մենք տեսանք, որ Կումանին զբաղեցնում էր Կիբշու կամ Կիբշունա քաղաքի շրջանը, այսօրվա Գիֆշեն, Արևելյան Խարուրի աջ ափին, Չախտյի մոտ գտնվող մի գյուղ:

Ապա թագավորը հարձակվում է Խարխիի և Մեխրիի յոթ քաղաքների վրա, որոնք գտնվում են Շուպուրու գետի ափին: Մեխրիի տեղը ճշգրտվում է Մեհրի-նար լեռով՝ Խարուրի ակունքի վրա և կարծես պահպանել է հին անունը¹:

Բազմաթիվ անգամներ նա արշավում է Խարխիի և Ուրուատրիի դեմ, պաշտպանում է Կումենն, որը սարգոնյան դարաշրջանում կոչվում էր Կումայա, բայց նրա միակ նվաճումը եղավ Կումանին:

Ադադնիրարին անցնում է Տիգրիսը, գրավում է Կուտմուխին և կցում Ասորեստանին: Բայց Կաշիարիի լեռնցիները կատաղի դիմադրություն են ցույց տալիս նրան:

Կաշիարին հին հեղինակների Մասիուսն է, այսօրվա Տուր-Արդինը, այն երկար լեռնաշղթան, որ ձգվում է Տիգրիսից դեպի Եդեսիայի մարզը և թեքվում դեպի հյուսիս, կազմելով Ամիդի դիմաց գտնվող Ախումայի զանգվածը՝ այսօրվա Կարակա-դաղը: Միջին մասը, որտեղ գտնվում է Մարդին քաղաքը, կոչվում էր նաև Իզալա: Մարդինի մոտ է գտնվում Բնաբեղը՝ *κάστρον Βαναβήλων*, հայկական Արշակունիների դոյակ-ամրոցը, և Տիգրանի նշանավոր մայրաքաղաք Տիգրանակերտը, Թել-Արմենի տեղամաս:

¹ Մեհրի-նարն ունի ժողովրդական ստուգաբանություն (արտ ուղտ), որ գալիս է հունարեն գործածվող *Ղեկու* բառից:

սում¹: Մեծ Ծովքը և Արգանենն տարածվում էին մինչև Կաշիարի շղթան: Կաշիարի անունը իր բնորոշ վերջավորությամբ պատկանում է Նախ-րի, Ուրուատ-րի, Խուր-րի և այլն խմբին ու հիմնականում կազմում էր լեռնային գոտու այն մասը, որը բաժանում էր Ասորեստանը Ուրարտուից և նրանց տեղանքի առարկան էր:

Կաշիարիի փեշերին կար Թեմաննա անունով մի իշխանություն, որի կենտրոնը Նիսիբիսն էր: Ադադնիրարին վեց արշավանք է ձեռնարկում նրա դեմ և վերջ է վերջո կտարում նրա դիմադրությունը²:

Թուկուլթի-Նինուրտա II-ը (890-884) ռազմական գործողություններ է ձեռնարկում Կաշիարիի լանջերին ընկած փոքր պետությունների, մասնավորապես Նախիի դեմ՝ Թուլխա կամ Թուլխան շրջանի Կուրխ տեղամասում, Տիգրիսի ափին, Ամիդից քիչ հեռու, ինչպես նաև արամեական մի ցեղի առաջնորդ Ամմաբաալի՝ Չամանիի որդու դեմ, որն իշխում էր Ամիդում: Այդ ժամանակից սկսած Ամիդի մարզը կոչվում է Բիթ-Չամանի³:

Ադադնիրարիի և նրա հաջորդի հարձակման ենթարկված երկրների շարքում նշվում են նաև Մուշկիի լեռները, Շուպրին և նույնիսկ Ալզին: Այստեղ խոսքը վերաբերում է լուրջ հետևանքներ չունեցած ասպատակություններին: Ապահովված է եղել կարծես միայն Կումանիի, Կուտմուխիի և Թեմաննայի նվաճումը:

Աշուրնասիրպալ II-ը (883-859) շարունակում է նվաճման քաղաքականությունը⁴: Հայտնի են նրա չորս արշավանքները՝ 883, 882, 879 և 866 թթ.: Նա սկսում է Չաքի շրջանից և գրավում Կիրրուրին, հավանաբար՝ ներկա Հերիրը, Չաքի ոլորտում կամ եռանկյունիում, Ռովանդուզի գծի վրա: Նրան հարկատու է դարձնում և այնտեղ նշանակում է *zabil-kuduri*⁵. դա մի պաշտոնյա է, որին հանձնարարվում է հսկել հարկի կանոնավոր վճարմանը: Ասորեստանի թագավորների արշավանքների ընթացքում հաճախ որոշ երկրներ, իրենց զգալով վտանգի ենթակա, հանձն էին առնում հարկ

¹ Տիգրանի մայրաքաղաքի նույնանունը Մայաֆարկինի հետ առայժմ վիճարկության առարկա է հանդիսանում, հակառակ Կ. Լեման-Հաուպտի կարծիքի:

² A. T. Olmstead, *History of Assyria*, էջ 755 և շար.:

³ Թուկուլթի-Նինուրտայի Տարեգրությունները (հատ. 2), հրատարակված Վ. Շեյլի կողմից, *Bibliothèque de l'École des Hautes Etudes*, 1911, շատ վնասված են: Բիթ-Չամանին նշանակված է *Notitia Dignitatum*-ի մեջ *Thila Zamana* և Հեշու Սյունակյացի մոտ՝ *Tel Zema*: Հմմտ. E. Honigsmann, *Die Ostgrenze des Byzantinischen Reiches*:

⁴ Ավելի լավ տեղեկություններ կան Աշուրնասիրպալ II-ի արշավանքների մասին, շնորհիվ նրա տարեգրությունների. հրատարակված է F. E. Peiser-ի կողմից, E. Schrader, *Keilinschriftliche Bibliothek*-ի մեջ, I, էջ 51-128, 1889 և A. E. Budge and L. W. King-ի կողմից՝ *The Annals of the Kings of Assyria*, I, էջ 254-387, 1902:

⁵ Տարեգրություն, սյուն. I, 56:

վճարել, առանց տրամադիր լինելու հարգել իրենց խոստումը: Նրանց վճարել ստիպելու համար դիմում էին բռնության, գեների: Բայց այն դեպքում, երբ քազավորը zabil-kuduri էր թողնում այդ երկրներում, դա նշանակում էր, որ այդ երկիրը համարյա հպատակվել է, նա պահպանում էր իր ինքնուրույնությունը, բայց տարեկան հարկ վճարելու պարտավորությունը նրան վասալական կախման մեջ էր դնում: Հետևյալ քայլը լինելու էր նրա միակցումը՝ ամենքսիան, իսկ այդ դեպքում տեղական իշխանության և zabil-kuduri-ի փոխարեն նշանակվում էր կուսակալ՝ bel pahati, saknu և կամ՝ կուսակալի տեղակալ՝ urasu:

Թագավորը Կիրորիից անցնում է Խաբխի, գրավում նրա ութ քաղաքները, ներառյալ Նաշտունը, երկրի ղեկավարին գերի է վերցնում և դատապարտում դաժան մահվան: Խաբխին նույնպես ստանում է zabil-kuduri¹: Ութ տեղամասերից և ոչ մեկը չի որոշվել, դժվար է ասել, թե արդյոք խոսքը նույն այն երկրի՞ մասին է, որը գտնվում էր Կումանիի մոտերքում, թե այն երկրի, որ հետագայում երևան է գալիս Մուծածիր անունով:

Կիրորիում եղած ժամանակ քազավորը հարկ է գանձում Խուրուշկիայից և Գիլգանից, որոնք, անշուշտ, այդ միջոցով ուզում էին խուսափել կտտորածի վտանգից: Հետևյալ ամիսներին Աշուրնասիրայալը երևան է գալիս Նիպուրի և Պասատայի լեռներում ու գրավում հետևյալ քաղաքները. Ատկուն, Ուշխու, Պիլագի և 20 գյուղ: Նիպուրը՝ դա Ջուլին է, իսկ Պասատան հիշեցնում է հայկական Պաշատը Արևելյան Տիգրիսի ակունքում², Ուշխուն ժամանակակից Շախն է Ջուլիի գառիվայրում, Ջեզիրեթ-իբն-Օմար քաղաքից փոքր-ինչ հեռու: Ուրեմն, դա Կումանիի հյուսիսում գտնվող մարզն է, որին Ասորեստանի քազավորը ստիպում է հարկ վճարել և որտեղ նշանակում է kuduru կամ zabil-kuduri³:

Թագավորն անցնում է Տիգրիսը և մտնում Կուտմուխի: Մուշկին և Կուտմուխին հարկ են տալիս՝ բրոնզ, անասուն, գինի: Արշավանքն ընդհատվում է Բիթ-Հադիսիում բռնկված ապստամբության հետևանքով:

882 թվականի արշավանքի նպատակն էր Կաշիարիի մարզի նվաճումը: Վաղուց ի վեր Կաշիարիի հյուսիսում հաստատված ասուրական մի գաղութ այժմ ապստամբել էր: Աշուրնասիրայալը գնում է ապստամբությունը ճնշելու: Տիգրիսն անցնելուց հետո նա հասնում է Սուպնատի ամրոց: Այս գետի

մասին երկար ժամանակ սխալ կարծիք է եղել, նրան իզուր շփոթում էին Ջիրենե-սուի հետ: Վերջապես ապացուցվեց, որ խոսքը վերաբերում էր Սուֆան գետին, որը թափվում է Տիգրիս՝ Արևելյան Խաբուրի գետաբերանի դիմաց¹:

Իսալա երկիրը, նույն ինքն Իզալան, զգուշություն ցուցաբերեց՝ թագավորին հարկ ուղարկելով: Աշուրնասիրայալն անցավ Կաշիարին, բռնեց ապստամբ առաջնորդին իր քաղաքում և նրան մորթել տվեց: Նա անցավ Նիրու երկրով և կանգ առավ Թուշխանում: Այստեղ նա կառուցում է պալատ և քարակոթողի վրա փորագրել տալիս Նաիրիում կատարած իր գործերը: Այդպես է անվանում նա Թուշխանի մարզը:

Հարևան երկրների թագավորները՝ Չամանիի որդի Ամմաբա'ալը, Անխիտի Շուպրիացին, Թուրուրիի որդի Լապտուրին՝ Նիրույն և Ուրումեն ša bitani երկրներից, ինչպես և Նաիրիի թագավորները Թուշխանում հարկ են բերում տիրակալին: Թագավորը Նաիրի երկրում նշանակում է zabil-kuduri²: Թագավորների անունների ներքո հիշատակված միայն այս երկրները չէ, որ պիտի վերագրվեն Նաիրիին. [նշվում է լուկ] Թուշխանի մարզը, որտեղ իշխում էին ցեղերի բազմաթիվ առաջնորդներ: Սա նրա միակ նվաճած վայրն էր, ուր նշանակվեց zabil-kuduri: Չամանին, Նիրույնը, Շուպրին, Ուրումեն և Նիրուն մնացին անվճար³:

Աշուրնասիրայալը 879 թվականին նորից գալիս է Նաիրի, Թուշխանի ճանապարհին նա նվաճում է Միդիատի քաղաքը, այսօրվա Մադիատը, և այնտեղ urasu՝ փոխ-կուսակալ է նշանակում⁴: Սուրա քաղաքը, բյուզանդական ԴՇԱՐԱՇ, ժամանակակից Սորը, Մադիատի արևմուտքում, հարկ է ուղարկում նրան: Ապա նա հարձակվում է Մադարա քաղաքի վրա, որը պատկանում էր Նիրույն երկրի առաջնորդ Լապտուրիին, նրան հարկ է պարտադրում և urasu նշանակում⁵: Ուրեմն, Կիրակիից (ներկայիս Կուվախը՝ Տիգրիսի ափին) Թուշխան ճանապարհին ասորեստանյան նվաճողն իր

¹ W. Belek, Beiträge zur ältere Geographie und Geschichte, II, էջ 66 (1901). նույնպես Verhandlung d. Berl. Anthropologischen Gesellschaft, 1900, էջ 449. Հավանաբար, այստեղ պետք է տեղադրել Σαφάβ բնակավայրը, ուր Տիգրանի կին Կլեոպատրան հուղարկավորեց, ըստ Պլուտարքոսի (Lucullus, 22), հետոք Ամփիկրատեսին: J. Marquart, Südarmanien und die Tigrisquellen, էջ 448:

² Տարեգրություն, II, 15:

³ Վերադարձի ճանապարհին թագավորը հարձակվում է Նիրու երկրի վրա Կաշիարի լեռներում, գրավում է նրա Իշալիլիքիա քաղաքը, ապա Բուլխանիի կիրճով հասնում է Խաբխի երկիրը և ուղղվում դեպի Արդուպու քաղաքը: Խաբխի երկրի բնակավայրից մեկը՝ Իշալիլիքիան, կարող է համապատասխանել բյուզանդական ամրոց Σφόριος-ին, իսկ Արդուպուն հավանաբար՝ Αρζαμόν-ն է (Արդուսպու-ից), Թեյլը, արդի Խարզնը:

⁴ Տարեգրություն, II, 90:

⁵ Նույնը, II, 100:

¹ Տարեգրություն, սյուն. I, 57:

² Պաշատը հիշատակված է Ս. Հռիփսիմեի պատմության մեջ, Մովսես Խորենացու 1865 թ. Վեներիկի Մատենագիտությունում, էջ 301: Պետք է կարդալ Պաշատ և ոչ Պաղատ: Դա այն լեռն է, որ այժմ դեռևս կոչվում է Բեշե-դաղ, հայկական Հոփոց վանքի մոտ:

³ Տարեգրություն, I, 73:

տիրապետությանն է կցում երկու մարզեր: Սուրան և Խաբխի երկիրը նրա բարկությունից խուսափում են:

Թուշխանից նա անցնում է Տիգրիսը, ամբողջ զիշերը շարժվում և հասնում է Պիտուրա՝ Դիր(ր)ա երկրի բերդը, ավերակի է վերածում այն, Մատնի լեռան նեղ անցքում գրավում է Կուկունու քաղաքը, գրավում է նաև Դիրրայի 50 քաղաքներ: Ապա մեկնում է Արբակի՝ Խաբխի ձա bitani-ի քաղաքը¹: Մարսափահար բնակիչները փախչում են Մատնի լեռը:

Դիրրա երկիրը գտնվում է Տիգրիսի ափին, Թուշխանի դիմաց: Պիտուրան և Մատնին գտնվում են Սիվանի մարզում: Արբակին, անշուշտ, բյուզանդական 'Αριβαχων ամրոցն է, որի տեղը հայտնի չէ, բայց նա հեռու չէ՝ 'Αφοσμων-ից, արդի Ֆուսից²: Նվաճողին չի հաջողվում այդ երկրները հպատակեցնել: Նա վերադառնում է Չամանի, որի թագավորն սպանվել էր իր ազնվականների կողմից, և նրա տեղը դնում է գոնիվաժի եղբորը: Գուցե, որպես փոխհատուցում նոր թագավորից վերցնում է Սինաբուն և Թիդուն, բերդաքաղաքները, որտեղ Սալմանասարը ժամանակին Նաիրի երկրի դեմ պահակազոր էր կարգել, սակայն հետագայում արամեական ցեղերը, այսինքն՝ Չամանիի ցեղերը, տիրացել էին դրանց:

866 թվականին Աշուրնասիրպալը վերջին անգամ նորից է երևում Նաիրիում: Տիգրիսն անցնելուց հետո նա կանգ է առնում Կիպանի երկրում, որ Արևմտյան Տիգրիսի վրա գտնվող Հիսն-Քեյֆա մարզն է, Խուզիքիմա քաղաքում: Սալլա երկրի Իտտի իշխանը, Աշլա երկրի Գիրադադին և Կումմուխի երկրի Կատազիուն շտապում են հարկ ուղարկելով շահել Ասորեստանի թագավորի բարյացակամությունը:

Արշավանքի նպատակը Եփրատի մարզն էր: Այնտեղից նա անցնում է Կուրբու երկրով և հասնում Աշլա և Խաբխի՝ «Խաբքի երկրի դիմաց»: Կումմուխին Կոմմագենեն է, որի թագավորն իր երկիրը վտանգից ազատեց ինքնակամ հարկի մատուցմամբ: Իրականում ասորական արքան հասնում է մինչև Եփրատ, մեկ կողմ է թողնում Կումմուխին և ուղղվում դեպի հյուսիս:

¹ Ձա bitani - Ուրունի վերաբերյալ ձա bitani, Աշուրնասիրպալ, Տարեգրություն II, 13, Խաբխի ձա bitani, նույնը II, 112, Նիրիք ձա bitani, նույնը III, 122, նաև Չամուա ձա bitani, Բարավաքի արձանագրություն, սյուն II, 2: Իրական իմաստը պարզ չէ, տառացիորեն «տներ», կարծում են, որ աշխարհագրական տեղանիշներում սա նշանակում է «մեր տուն» երկիր, այսինքն՝ թագավորապատկան տեղ: Դա Պ. Ենսենի և Մ. Ետրեկի կարծիքն է, ըստ E. G. Klauber-ի, Assyrisches Beamtentum, էջ 33: Սա չի հարմարվում:

² Արբակին բուրդովին չի կարող լինել Բոստանի Մոկսի մարզի Արվալը, ինչպես ենթադրում է Է. Ֆորբերը, Provinzeinteilung, էջ 27: Դա շատ հեռու է, մինչդեռ բնագրի համաձայն Արբակին Մատնի լեռան մոտ է, որը գտնվում է Բիտուրայի մոտ: Թագավորը Արբակից վերադառնում է Ամիդի մարզի Չամանիի դեմ, մի փաստ, որը ցույց է տալիս, որ Արբակին Ամիդի հեռու չէր:

Կուրբուն Գիբբուն է, Կլաուդիայի սահմանակից երկիրը, որի անունը ճանաչելի է Կոստ-դադ անվան մեջ (թուրքացված՝ Կոսլի-դադ)¹:

Աշլան հիշեցնում է Իշուան կամ Իշուվան և, համեմայն դեպս, գտնվում էր Եփրատի ոլորանում, Մեխտենեի դիմաց, «Խաբքի երկրում»: Խաբխի անունն է կրում ևս մի երկիր, գուցե, Կուրբուի և Աշլայի միջև: Այդ երկրները տրամադիր չէին խոնարհվելու նվաճողի առջև, որը կործանեց նրանց 150 քաղաքները և մտավ Դիրրիա կամ Դիրրա երկիրը, անցնելով Ամադանի լեռան նեղ անցքով: Նա կրակի և սրի է մատնում Ամադանի և Արկանիա լեռների միջև գտնվող քաղաքները, ինչպես նաև Մալլանու երկիրը Արկանիա լեռներում: Չամբա երկիրն արժանացավ նույն ճակատագրին: Թագավորն անցավ Շուա գետը և հասավ Տիգրիսի ափերը²:

Արկանիան, անշուշտ, Արգաման է: Մալլանուն իր հիշատակը թողել է Բիլան լեռան անվան մեջ, Տիգրիսի ափին, Արգամայի դիմաց: Ամադանին նույն Մադանին է, որ Թուկուլթի-Նինուրտա I-ը (1243-1221) հիշատակում է Ալգիի, Թեդիմզիի, Պուրուլումզիի հետ միասին, Դիրրիան մեզ ծանոթ է նախորդ արշավանքի ժամանակից. սա հիշատակված է որպես Տիգրիսի աջ ափին գտնվող մի երկիր, թեպետ հավանական է, որ նա տարածված լինի Տիգրիսի երկու ափերին: Բոլոր այս երկրները՝ Ադանի, Մալլանու, Չամբա, Դիրրիա, որ տեքստը կոչում է «ամբողջ Խաբխի», այդ ժամանակից սկսած կազմում են Ասորեստանի մի մահանգը, նվաճողի կողմից նշանակված ձախու-ի (կուսակալ) կառավարման ներքո³:

Ամադանիի կիրճից թագավորը, անցնելով Շուան, գալիս է Բարգանիշտուն⁴ և Դամդամուսա, «Չամանիի որդի Իլլանու իշխանի բերդը»: Դամդամուսան, որ «թագավորական քաղաք» էր, այսինքն՝ պատկանում էր պետությանը, ժամանակին գրավվել էր արքայի հովանավորյալ Չամանի իշխանի կողմից: Քաղաքը գրոհով գրավվում է, բայց Ամեդի (Ամիդ) մայրաքաղաքը դիմադրում է ասորեստանցիների հարձակմանը: Գագազած թագավորը կանգնեցնում է կտրած զլուխներից բաղկացած բուրգ, որի շուրջը շարում է ցից հանած կենդանի մարդկանց:

¹ Միջայել Ասորին (իրատ. J.-B. Chabot-ի, III, էջ 163) ճանաչում է Գուրբուս և Կլաուդիա, որի մեկ մասը պատկանում էր հայ իշխան Փիլարտոսին: Նա նշում է նաև Կլաուդիայի լեռներում Հազուրին գյուղը, որի անունը մեր բնագրի նույն Խուզիքիման է և հավանաբար նշանակում է «խնձորուտ»:

² Շուան գտնվում է Ամադանի-Մալլանուի, Բարգանիշտունի և Դամդամուսայի միջև, որնեն և չի կարելի նույնացնել Տիգրիսի ակունքի հետ, ինչպես որ կարծում է Է. Ֆորբերը:

³ Տարեգրություն, III, 104:

⁴ Բարգան-Նիշտուն, հմմտ. Նիշտուն, Խաբխիի քաղաք Տիգրիսի և Չաբի միջև:

Թագավորը հեռանում է դեպի Կաշիարի և գրավում է Թուրուրիի որդի Լապտուրիին պատկանող Ուդա քաղաքը: Ուդան բյուզանդական Խոսթ-ծոն-ն է: Այս իշխանի երկիրը կոչվում է Նիրդուն, գտնվում էր Մադարայի մարզում, որը, հավանաբար, բյուզանդական Մառճաբոն-ն է¹:

Ամփոփելով իր նվաճումները, Արշուրնասիրապալն ասում է, որ կործանել է հետևյալ երկրները. Նաիրի, Խաբխի, Շուբարի, Նիրբե, և իր երկրին է կցել «Սուպնատի ակունքից մինչև Նիրիբ թա bitani և Կիրրուրիի լեռնանցքից մինչև Գիլգան երկրները»²:

Նույն ամփոփումը գտնում ենք նրա չորս արձանագրությունների մեջ, այն տարբերությամբ, որ Նիրիբ թա bitani-ի փոխարեն այնտեղ Ուրա-ար-տին է դրված³: Ուրեմն, դրա սահմանը Կիրրուրիից տարածվում էր մինչև Գիլգան, այսինքն՝ Հերիից մինչև Չաբի ակունքները, իսկ արևմուտքից՝ Սուպնատից մինչև Նիրիբ, այսինքն՝ Կաշիարի լեռնաշղթայից մինչև Տիգրիսի ակունքը: Խախնի քաղաքի վերևում, Չիրենե-սուի երկայնքով տարածված լեռը դեռևս մեր օրերում կոչվում է Նիրիբ-դաղար: Այստեղ աստրական նվաճումը հանդիպեց Ուրուատրիին կամ Ուրարտուին:

Ամփոփումը ճիշտ է, եթե որպես նվաճված երկրներ նկատի առնվեն նաև այն երկրները, որոնք Ասորեստանի թագավորին հարկ մուծեցին այդ արշավանքների պատմության համաձայն, թագավորը երեք zabil-kuduri է նշանակել Կիրրուրիում, Խաբխիում (Արևելյան) և Ուշխուում. երկու urasu՝ Կաշիարի լեռների վրա ընկած Մատիատիում ու Նիրդունում և երկու šaknu՝ Արևմտյան կամ Եփրատյան Խաբխիում, որը Տիգրիսի և Եփրատի միջև Ամիդից հյուսիս գտնվող մի երկիր էր, և Նաիրիում, որի տակ այստեղ պետք է հասկանալ Թուշխանի մարզը, բայց լայն առումով գործածվում է նաև

«երկրներ» կամ «թագավորներ» իմաստով. այստեղ նույնպես նշանակվեց մեկ šaknu և մեկ urasu:

Šaknu-ի և urasu-ի նշանակումն ունի պարզորոշ բռնագավթման իմաստ: Իսկ zabil-kuduri պաշտոնի իմաստը պարզ չէ: Ընդունված է կարծել, թե նրա նպատակն է եղել հսկել kuduru կոչված հարկերի կանոնավոր հանձնմանը: Բայց թե ինչու են կայացել այդ հարկերը, պարզ չէ¹: Թագավորը հայտարարում է, որ ինքը նվաճած երկրներին հարկադրել է՝ šaknu-te, urduti, urušu, kuduru²: Չի կարելի ասել, որ դրանք սովորական արտահայտություններ են, կամ որ այստեղ գործածված են պարտավորությունների հատուկ տերմիններ, որոնցով զանազանվում են դրանցով համապատասխանաբար հարկադրված տարբեր երկրները³: Համենայն դեպս, Արշուրնասիրապալին հաջողվեց իր իշխանությունը հաստատել ամբողջ լեռնային գոտում՝ huršani kališunu-ում⁴, որով պետք է հասկանալ Կաշիարի-Նիպուր և հայկական Տավրոս գծի վրա եղած երկրները: Սակայն այստեղ խոսքը վերջնական նվաճման մասին չէ: Սա ավելի շուտ ուժերի անօգուտ մի ցուցադրում էր, ինչպես Թիգլաթպալասար I-ի ժամանակ: Հաղթող թագավորը դեռ նախքան մեռնելը ինքը տեսնելու էր անջատումը այն երկրների, որոնց նա կարծում էր, թե հարկադրել է «ընկնել Աշուրի ոտքերը»:

Նրա հաջորդը՝ Մալմանասար III-ը (859-824), դիմում է զենքի՝ կորցրած հողերը նորից նվաճելու համար:

1. ՄԱՄԱՆԱՍԱՐ ԵՎ ԱՐԱՄԵ

Մալմանասարը հենց որ ստանձնեց իշխանությունը, արշավեց Ուրարտուի դեմ: Դա նախօրոք հայտնի Ուրուատրին է, որն Ուրարտու դառնալով՝ այսուհետև ասորեստանցիների համար նշանակելու է Հայաստան:

Մալմանասարի հարձակումը շատ անակնկալ էր, որովհետև նրա հայր Արշուրնասիրապալը Ուրարտուի հետ ոչ մի ընդհարում չէր ունեցել և նրան հարգել էր նույնիսկ այն դեպքում, երբ ռազմական գործողությունների ժամանակ այդ երկրի սահմաններում գործելու հարմար առիթ էր ներկայացել:

¹ E. Forrer, Die Provinzeinteilung, էջ 6, E. Klauber-ը, Assyrisches Beamtentum, այս հարցը չի շոշափել:

² Տարեգրություն, III, 125. Մահուր (rev.), 51:

³ Օրինակ՝ šaknute «կուսակալներ» միացված երկրների համար. urdutu «սարկություն, վասալություն» հարկատու երկրների համար. kuduru պարտավորություններ zabil-kuduri-ին հպատակված երկրների համար:

⁴ Տարեգրություն, III, 117:

¹ Georgii Cyprii, Descriptio Orbis Romani, էջ 47: Theophylactus Simocatta, II, էջ 105 (éd. Bonn) նշում է Բիբլոսյանը Մառճաբոն բերդի մոտ: Հավանական է, որ Բիբլոսյանը (Բեթ-Խոտլա) իր մեջ բացթողնում է Խոսթծոն անունը և որ Մառճաբոն-ը նույն Մադարան է, այժմյան Մազարտան, Մարդինից արևելք, Բեթաբեդի մոտ:

² Տարեգրություն, III, 120-133. Մահուր Կալախի պարսպի վրայի արձանագրությունը՝ A. Budge and L. King, նշվ. աշխ., էջ 179-180:

³ Յակոբոս, II, 9-15. և «Standard inscription», 6-9: Նույն սահմանները ցույց են տրված 879 թ. արշավանքի վերջում, առանց փոփոխելու չորս երկրները, բայց հայտարարությամբ, որ «Նաիրի ընդարձակ երկիրը գրավել է ամբողջ լայնությամբ և երկարությամբ»: Նույն այս ամփոփումը կա նաև Իշխանի տաճարի հիմնադրման արձանագրությունների մեջ: A. Budge and L. King, էջ 163, Նախիրի տաճարում, նույնը, էջ 169, և Կալախի պալատում, նույնը, էջ 174-175:

Կալախի մոմուրի, որ պատմում է 879 թ. արշավանքի մասին, համառոտակի փոփոխում է ավերած երկրները՝ Նիրդուն, Լուլուբա, Դիրրա, Ազգունու, Ուլլիբա, Արբակի ու Նիրբե և ավելացնում է, որ šaknu է նշանակվել Նաիրիում, 49-51, A. Budge and L. King, էջ 240-241:

Գուցե այդ ժամանակ Ուրարտուի սպասողական քաղաքականության հետևանքով էր, որ Ասորեստանը հանգիստ էր թողնում Ուրարտուին, մանավանդ որ վերջինն զգուշանում էր խառնվել Ասորեստանի գործերին՝ նրա արշավանքների ընթացքում: Սալմանասարի ագրեսիան արդյոք չի՞ ապացուցում, որ այդ ուղղությամբ փոփոխություն էր տեղի ունեցել:

Ուրարտուն չէր կարող երկար ժամանակ մնալ անտարբեր հանդիսատեսի դերում, երբ ասուրական զենքը ավերում էր իր և Ասորեստանի միջև ընկած փոքր պետությունները, որոնք համակրում էին Ուրարտուին՝ և՛ ցեղակցության, և՛ քաղաքական շահերի պատճառով: Արդեն Աշուրնասիրպալի վերջին տարիներին, կարծես, Ուրարտուն Ասորեստանի համար տագնապալի նշաններ էր ցույց տալիս: Ասուրական վավերագրերն այդ թագավորի վերջին յոթ տարիների մասին լռություն են պահպանում: Ըստ երևույթին, բախտը նրան դավաճանել էր: Այն ժողովուրդները, որոնց նա, իր կարծիքով, զսպել էր, ոտքի էին ելել զենքով պաշտպանելու իրենց անկախությունը: Ուրարտուի սահմանակից պետությունները նույնպես վերջինները չէին, որ ապստամբելու էին Ասորեստանի դեմ: Ուրարտուն պատրաստ էր դրանց քաջալերելու և նույնիսկ օգնելու: Սալմանասարը պետք է որ շատ դժգոհ եղած լիներ Ուրարտուից, եթե առաջինը թշնամություններ սկսեց նրա դեմ:

Համենայն դեպս, Ասորեստանի նկատմամբ Ուրարտուի բռնած դիրքը կտրուկ ու պարզ էր: Դա դիրքավորումն էր մի հակառակորդի, որը մաքառում էր իր երկու կողմերում գտնվող պետությունների վրա իր քաղաքական ազդեցությունը տարածելու համար. պետություններ, որոնք գտնվում էին Եփրատի և երկու Ջաբրի վերին հոսանքի, ինչպես նաև նրանց միջև գտնվող ընդարձակ տարածքի վրա:

Սալմանասարի գահակալության ժամանակ ստեղծված դրությունը նպաստավոր չէր Ասորեստանի համար: Եփրատի երկայնքով մեկ ընկած երկրները՝ Մելիտենեից սկսած մինչև Դամասկոս, ապստամբել էին: Մելիդի (Մելիտենե) թագավոր Լալլին, Կուսմուխի (Կոսմոպոլիս) թագավորներ Կատազիլուն և նրա հաջորդ Կուշտաշպին, Կարկենմիշ-Գարգամիշի (կամ Ջերարուս) Սանգարը, Թիլ-Բարսիպի (Մաջուրի գետաբերանում) թագավոր Ադինի որդի Ախունին, Սամալի (Չինջիրու) Խանին, Գուրգունի (Մարաշ) Մուսալլուն և նրա հաջորդ Կալպարուդան, Ագուսիի որդի Արամուն՝ Արպադի (Թել-Ռֆադ) թագավոր, Գաբբարի որդի Խայանին՝ Ամանուսի փեշերից, Խաթթինայի (Հալեպից արևմուտք) Սապալուլմին և նրա հաջորդ Կալպարուդուն, Ամատի (Խամաթ) Իրիսուլինին, Դամասկոսի Ադադ-Էզերն իր տասը դաշնակիցներով, շրջակա թագավորներից, ընդհանուր հաշվով՝

ավելի քան 20 պետությունների առաջնորդներ. սրանց հնազանդեցնելու համար պահանջվում էին հսկայական ջանքեր:

Ինչպես երևում է, Աշուրնասիրպալ թագավորը, չնայած իր ձեռնարկած 28 ճակատամարտերին, չէր կարողացել ապահովել ասուրական տիրապետությունը:

Եփրատից այն կողմ Թաբալի 24 թագավորները և Կիլիկիայի թագավորները նույնպես ասուրական լուծը չէին հանդուրժում: Սալմանասարն արևելքում, Իրանական սարահարթում պետք է դիմագրավեր 27 թագավորների առաջխաղացմանը: Նա մի քանի ընդհարումներ է ունենում Բաբելոնի հետ: Վերջապես, հյուսիսում անհնազանդ լեռնցիները միշտ պատրաստ էին Ասորեստանին հանկարծակիի բերելու:

Սալմանասարը դժվարությունների առջև չընկրկեց: Նա իր ամբողջ ուժերը գործադրեց Ասորեստանի նորածնունդ կայսերապաշտությանը հաղթանակ պարգևելու համար: Երեսուն տարի շարունակ նա զենքը ցած չդրեց և կովեց մեկ այս, մեկ այն ճակատում: Եփրատյան արդյունագործական և առևտրական պետություններն իրենց հարստությամբ ավելի հետաքրքրություն էին ներկայացնում, քան մյուսները: Դրա համար էլ Ասորեստանի թագավորն ավելի շատ ուշադրություն էր դարձնում նրանց վրա: Քսանից ավելի անգամ նա անցավ Եփրատը: Սակայն քաղաքական տեսակետով, պետության ապահովության շահերից ելնելով, Սալմանասարը պակաս կարևորություն չէր տալիս նաև հյուսիսային ճակատին, որը և մեզ հետաքրքրողն է:

Բրոնզե խորաքանդակներում, որոնցով Սալմանասարը զարդարել էր իր պալատի դռները և որոնք ներկայացնում էին նրա արշավանքների դրվագները, մեծ տեղ են զբաղեցնում ուրարտական ճակատում կատարած նրա սխրագործությունները: Առաջնակարգ սկզբնաղբյուրներ հանդիսացող այդ խորաքանդակների մասին կխոսենք հետագայում:

Առաջին հերթին մենք այստեղ տեսնում ենք արշավանքների պատմությունն այնպես, ինչպես որ դա ներկայացվում է պաշտոնական վավերագրերում¹:

¹ Սալմանասարի արձանագրությունները կողմ հուշարձաններն են՝ Կուրխի (Թուշխանի) մոնոլիթը, վերծանված և թարգմանված է. Պայզերի կողմից: Սև մարմարյա կոթողը՝ Հ. Վինկլերի կողմից, երկուսն էլ Keilinschriftliche Bibliothek-ում, 1889: Ցլակոթողներ, I և II, վերծանված Ֆ. Դելիչի կողմից. Die Palasttore Salmanasar III. von Balawat, A. Billerbeck und F. Delitzsch, էջ 144-151, առանձին տպաքանակով Beiträge zur Assyriologie und semitischen Sprachwissenschaft, F. Delitzsch und P. Haupt, VII, I: Երկու բրոնզե դռեր՝ բարձրաքանդակով և արձանագրություններով, A. Billerbeck und F. Delitzsch, նշվ. աշխ., A. Amiaux et V. Scheil, Les inscriptions de Salmanasar (II) III, roi d'Assyrie, 1890:

Իր գահակալության առաջին տարին Սալմանասարը գործողություններ ձեռնարկեց Ուրարտուի Սուգունի(ա) բերդաքաղաքի դեմ: Նա գտնվում էր Դիալայի մարզում և գործում Արիդու քաղաքի դեմ, երբ որոշեց անցնել այն լեռների միջով, «որոնց գագաթները ցցվել էին դեպի երկինք ինչպես երկաթ-յա սրի ծայր»: Այս ճանապարհով նա ուզում էր հասնել Խուրուշկիա քաղաքը:

«Ես հրդեհեցի Խուրուշկիա քաղաքը շրջակա հարյուր քաղաքների հետ միասին, - պատմում է թագավորը, - Նաիրիի թագավոր Կակիան և նրա զորքերի մնացորդը իմ զենքերի դիմաց սարսափահար եղան և փախան բարձր լեռները: Ես նրանց հետապնդեցի լեռներում: Լեռների միջև ծանր մարտեր մղեցի և նրանց պարտության մատնեցի: Մարտակառքեր, զորքեր, ձիեր, լծվաքցներ՝ այս բոլորը ցած իջեցրի լեռներից: Աշուրի մեծության երկյալը նրանց վիատեցրեց. նրանք իջան լեռներից և ընկան իմ ոտքերը: Ես նրանց հարկադրեցի biltu u madattu, հարկ բնամթերքով և դրամով:

Խուրուշկիայից մեկնեցի և հասա ուրարտացի Արամեի բերդաքաղաք Սուգունիա: Գրոհեցի և գրավեցի քաղաքը: Շատ ռազմիկներ սպանեցի և ավար վերցրի: Քաղաքի դիմաց կտրած գլուխներից մի սյուն կանգնեցրի: Շրջակա տասնչորս քաղաքներ կրակի ճարակ դարձրի:

Սուգունիայից մեկնեցի և իջա Նաիրի երկրի ծովը: Ձենքերս լվացի ծովի մեջ, աստվածներին զոհեր մատուցեցի: Իմ անձի պատկերը պատրաստեցի և արձանագրեցի Աշուրի՝ մեծ տիրակալի, իմ տիրակալի և իմ իշխանության հզորության փառքը: Ես այն կանգնեցրի ծովին մոտ:

Ծովից վերադառնալիս հարկ ստացա Գիլգան երկրի Ասուից՝ ձիեր, եզներ, ոչխարներ, գինի, երկսապատավոր երկու ուղտ. դրանք բերեցի իմ քաղաք Աշուր»¹:

Խուրուշկիան այն երկրի կենտրոնն է, որը կոչվում է Նաիրի: Այդ երկիրը, ուրեմն, պահպանել է Ուրարտուի հին անունը անշուշտ այն պատճառով, որ նրա մասն էր կազմում, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ երկրներից էր և հետագայում կոչվելու էր իր մայրաքաղաքի անունով՝ Խուրուշկիա կամ Խուրուշկու:

Այս երկիրն ընկած էր Մեծ Չաքի վրա, այսօրվա Ջուլամերկի շրջանում: Հայերն այդ մարզը կոչում են Փոքր Ադրակ, ի հակադրություն Մեծ Ադրակի, որը գտնվում է Բաշկալայի հարևան մարզում: Շատ հնարավոր է, որ Խու-

րուշկիան նախկին Ջուլամերկի անունը լինի, հայ հին հեղինակների Ջ(ու)ղ-մարը¹:

Մինչև 1914 թվականի պատերազմը այդ մարզի լեռնային մասում պատասպարվում էին հինգ նեստորական ցեղեր, որոնք օգտվում էին մի տեսակ ինքնավարությունից: Դրանք են՝ Ջելուն, Բազ, Թուն, Տիար, Դեզ: Սալմանասարը կարող էր երևակայել, որ կգար մի օր, երբ նրա վերջին գավակները ապաստան պիտի գտնեին այն փոքրիկ երկրում, որ ինքն անօգուտ կերպով ավերում էր:

828 թվականին Սալմանասարը երկու անգամ վերադառնում է Խուրուշկիա՝ հարկ ստանալու համար: Այդ ժամանակ երկրի թագավորը կոչվում էր Դատա կամ Դատանա:

Սուգունիա բնակավայրի տեղը հայտնի չէ: Անշուշտ, դա Ուրարտուի սահմանների վրա գտնված պահակակետերից մեկն է, հավանաբար՝ Մեծ Ադրակի մուտքի մոտ: Երկու Ադրակները միմյանցից բաժանված են մի լեռնաշղթայով, որ բարձրանում է Ջուլամերկի վերևում, Կարա-սու գետի երկայնքով, որը թափվում է Չաքի մեջ՝ աջ կողմից: Այդ լեռնաշղթայում կա մի անցք, որի երկու կողմերում՝ մուտքի և ելքի մոտերքում, գտնվում են երկու գյուղ. մեկը կոչվում է Միկիանիս, մյուսը՝ Սուկան²: Այնտեղ Սուգունիայի հիշատակը տեսնելը գայթակղիչ է: Չաքի հովտի մուտքը փակելու համար դրությունը նպաստավոր է: Այնտեղից մինչև Վանա լիճը հազիվ հարյուր կիլոմետր է: Ասորեստանի թագավորը հասել է լճին Խոշարի գետաբերանի մոտ: Սալմանասարի քարակոթողը կանգնեցվել է, հավանաբար, այն քրի վրա, որն այժմ ողողված է լճի ջրերով:

Երկրորդ արշավանքն Ուրարտուի դեմ տեղի ունեցավ երկու տարի անց, 857 թվականին³:

¹ Թովմա Արծրունի, Պատմություն, I, գլ. 8; III, 2, 13 և 14:

² В. Т. Маевский, Военно-статистическое описание Ванского и Битлисского вилаетов; Отдел приложений, стр. 56; տե՛ս նույնպես War Office-ի հրատարակած քարտեզը, 1916 (Royal Geographical Society under the Direction of the Geographical Section General Staff, 1916):

³ Սալմանասարի թագավորության ժամանակագրությունը բավական շփոթ է, և պահանջվում է որոշ ճշգրտում:

Մոնտիքը «թագավորության սկզբում, առաջին տարին» խոսում է Սալմանասարի երկու արշավանքի մասին, մեկը՝ Արիդիի, Խուրուշկիայի և Սուգունիայի դեմ, մյուսը՝ եփրատյան պետությունների դեմ, և այդ վերջին արշավանքի ժամանակը ճշված է աիրուի 13-ին:

Հաջորդ տարին, որ թագավորի անվանակիր տարին է, մի երկրորդ արշավանք տեղի ունեցավ եփրատյան պետությունների դեմ աիրուի 13-ին:

Քարակոթողը տարբերում է «թագավորության սկիզբը», այսինքն՝ գահակալության տարին, «թագավորության առաջին տարվանից» և առաջին արշավանքը գետնդրում է «թագավորության սկզբում», իսկ երկրորդը՝ «թագավորության առաջին տարում»: Որպես թագավորի

¹ Մոնտիք, I, 14-29: Քարակոթող, 22-26:

անունը կրող այն հաստատում է թագավորության երկրորդ տարին, որը ճիշտ չէ որովհետև թագավորներն իրենք անունը միշտ վերապահում էին առաջին տարվան, գահակալության տարվանից հետո:

Ջարակոթող, ուրեմն, սխալ է գործում թագավորության սկիզբը «առաջին տարվանից» բաժանելով, իսկ դա արված է ախրուի 13-ի պատճառով: Իսկական, եթե առաջին տարվա երկու արշավանքներից երկրորդը տեղի է ունեցել ախրուի 13-ին, որ տարվա երկրորդ ամիսն է, ապա ուրեմն, առաջին արշավանքը պետք է վերագրել գոնե տարվա առաջին ամսին՝ մի-սանին: Այդ ժամանակ թագավորության սկիզբը կերկարաձգվեր մինչև նախորդ տարին, եթե չընդունենք միայն, որ Սալմանասարի հայրը մեռել է նիսան ամսին, երբ Սալմանասարը կատարեց իր առաջին արշավանքը, մի բան, որ քիչ հավանական է: **Ջարակոթող**, ուրեմն, մոլորության մեջ է ախրուի 13-ի թվականի պատճառով, որն, անշուշտ, գրչի սխալի հետևանք է: Գրիչն էլ իր հերթին ազդվել է երկրորդ արշավանքի թվականից, որը կատարվեց եփրատյան նույն երկրների դեմ:

Ասեմք, **Ջարակոթողի** այդ շփոթը լուրջ չէ, դրանով ժամանակագրությունը չի փոխվում: Սալմանասարի գահակալությունը մտնում է Ծարուրնիշի անվանակիրը՝ 859 թվականը: Հաջորդ տարին, 858 թ., Սալմանասարի անվանակիրն է:

Ջարակոթողի միակ սխալն այն է, որ Արիտի, Խուրուշկիայի և Սուգուրիայի դեմ կատարված արշավանքը տեղափոխել է 860 թվականը: Մոնոլիթը ձգտում է հաշվել գահակալության առաջին թվականն իբրև թագավորության առաջին տարին:

Ջարակոթողը հետևել է այդ կարգին ու թագավորի իշխանությունը հաշվել 859 թվականից: Բալվաթի արձանագրությունը բարեխոսական առաջին արշավանքը տեղափոխում է Ծամաշբելուսուրի, իսկ երկրորդը՝ Բելթանիայի անվանակիր տարիներին:

Ջարակոթողի համաձայն, այդ արշավանքները տեղի են ունեցել Սալմանասարի ութերորդ և իններորդ տարիներին: Ծամաշբելուսուրը յոթերորդ, իսկ Բելթանիան Սալմանասարից հաշվելով ութերորդ տարվա էպոնիմն է, առաջին էպոնիմը 858 թվականին լինելով: Այստեղից հետևում է, որ ութերորդ և իններորդ տարիները հաշվվում են 859 թվականից և ոչ թե 858 թվականից:

Ջարակոթողը գործել է մեկ այլ, շատ ավելի լուրջ սխալ, նա զանց է առել 21-րդ և 23-րդ տարիների արշավանքները և նրանց տեղը դրել է հաջորդ տարիների արշավանքները, որը երկու տարով առաջ է տանում թագավորության վերջին ինը տարիների իրադարձությունները:

Ավելի պարզություն մտցնելու համար համեմատենք խնդրո առարկա տարիները և արշավանքները ըստ երկու ցուցակների.

Էպոնիմների ցուցակ

Ջարակոթող

21-րդ, Թիլլիի դեմ	21-րդ, Դամասկոսի դեմ	22-ի համար
22-րդ, Դամասկոսի դեմ	22-րդ, Թարալի դեմ	24-ի համար
23-րդ, Դանաբիի դեմ	23-րդ, Մելիդի դեմ	25-ի համար
24-րդ, Թարալի դեմ	24-րդ, Նամրիի դեմ	26-ի համար
25-րդ, Միլիդի դեմ	25-րդ, Կուլիի դեմ	27-ի համար
26-րդ, Նամրիի դեմ	26-րդ, Կուլիի դեմ	28-ի համար
27-րդ, Կուլիի դեմ	27-րդ, Ուրարտուի դեմ	29-ի համար
28-րդ, Կուլիի դեմ	28-րդ, Խաթթինայի դեմ	30-ի համար
29-րդ, Ուրարտուի դեմ	29-րդ, Խաթթինի (Կիթիսի) դեմ	31-ի համար
30-րդ, Ունկիի դեմ	30-րդ Խուրուշկիայի և Մամայի դեմ	32-ի համար
31-րդ, Ուլլուբայի դեմ	31-րդ Խուրուշկիայի	
32-րդ, Մամայի դեմ	և Մուծածիրի դեմ	

Պարզորոշ երևում է երկու արշավանքների զանցառման հետևանքով առաջ եկած ժամանակագրական աղճատումը, մեկը՝ Թիլլիի դեմ, մյուսը՝ Դանաբիի դեմ: Առաջինի տեղը դրված է Դամասկոսի դեմ կատարված արշավանքը, որն սկսվում է հաջորդ տարվանից, 22-րդը

Դուգու ամսի 13-ին, հուլիսի սկզբին, Սալմանասարը հարձակվեց Եփրատի ափին գտնվող Թիլ-Բարսիայի թագավորի վրա: Նա գրավեց այդ քաղաքը և անունը դարձրեց Կար-Սալմանու-Աշարիդ:

Այդ հաղթանակից հետո է, որ նա ճանապարհ ընկավ դեպի Ուրարտու: Գուցե կասկածում էր, որ այդ երկիրը Թիլ-Բարսիայի հետ դաշնակից էր: Ասորեստանի թագավորը հասավ Բիթ-Չամանի՝ Դիարբեքլիի մարզը: Այնտեղից ճանապարհ բացեց այն անմատչելի լեռների միջով, «որոնց գագաթ-

առանց արշավանքի է մնում, ինչպես նաև 23-րդ տարին՝ Դանաբիի դեմ կատարված արշավանքը զանց առած լինելու պատճառով: Այս երկու պակասը լրացնելու համար առաջ են ձգել հաջորդ տարիների արշավանքները: Թարալի արշավանքը 24-րդ տարուց տեղափոխել են 22-րդ տարին, Միլիդի արշավանքը՝ 25-րդ տարուց 23-րդ տարին և այսպես շարունակ, Մանի արշավանքը՝ վերջինը՝ 32-ից 30-ը:

Այստեղից հետևում է, որ վերջին 31-րդ և 32-րդ տարիները դատարկ են մնացել **Ջարակոթողում**, այդ տարիների արշավանքները վերագրած լինելով 29-րդ և 30-րդ տարիներին: Այդ դատարկությունը լրացնելու համար **Ջարակոթողը** 31-րդ տարվան վերագրել է մեկ արշավանք՝ Խուրուշկիայի, Մուծածիրի և ճուլնիսկ Ուրարտուի դեմ, արշավանք, որն էպոնիմների ցուցակում գոյություն չունի և որը, հավանական է, տեղի է ունեցել Մանի դեմ կատարված արշավանքի տարում, այսինքն՝ 30-րդ տարում: **Ջարակոթողը** 32-րդ տարվա համար տեղ չի ճարել և այն զանց է առել, հետևաբար, կատարել է վերջին սխալը: Սալմանասարի երկրորդ անվանակիր տարին թագավորության 32-րդ տարուց տեղափոխվել է 31-րդը:

Այդ տարվա համար Սալմանասարը **Ջարակոթողում** ասում է. «Իմ թագավորության 31-րդ տարում ես ինձ երկրորդ անգամ Աշշուրի և Ադադի հովանավորության տակ դրի»: Ուզում է ասել, որ երկրորդ անգամ նա դարձել է էպոնիմ:

Ըստ էպոնիմների ցուցակի թագավորի անունով երկրորդ անգամ անվանվում է 31-րդ տարին՝ 858 թ. իր առաջին էպոնիմից հետո և, հետևաբար, իր թագավորության 32-րդ տարում և ոչ թե 31-րդ: **Ջարակոթողը** սխալ է ոչ այնքան թագավորության և էպոնիմի տարիների շփոթից, որքան այն պատճառով, որ 31-րդ տարին դրել է 32-րդի տեղը՝ վերևում հիշված ժամանակագրական խախտման հետևանքով:

Նշենք, որ Ունկիի տեղադրումը (Անթ գյուղը, որը գտնվում է Անտիոքի մոտ, պահպանել է նրա անունը) Խաթթինայում է, Անտիոքի մարզում:

Ուլլուբան, այժմյան Խուլպը, համապատասխանում է Խարխիին: Դա Խարխիի ձև bitani-ն է, զուցե, *Ἀχβάς* Ագբա-ն, պահակակետ Սասանյան Պարսկաստանի սահմանի մոտ՝ Բատմանի վրա (տե՛ս H. Adontz, *Армения в эпоху Юстиниана*, էջ 8): Մա ապացուցում է, որ Խարխիին գտնվում էր Խուլպի մոտ, Բատմանի մարզում, իսկ նրա Արբակի քաղաքը՝ *Ἀρβάχων*-ն է և ոչ թե Արվախը, Արևելյան Տիգրիսի հովտում:

Jakob Krall, *Grundriss der altorientalischen Geschichte*, էջ 131, 135, ցույց է տվել Սալմանասարի արշավանքները ըստ էպոնիմ տարիների և ըստ թագավորության տարիների, բայց չի նկատել մեր կողմից նշված տասը տարվա խտությունը՝ սկսած 21-րդ տարվանից: Է. Ֆորթերը նկատել է և իր *Zur Chronologie der neuassyrischen Zeit, Mitteilungen der Vorderasiatischen Gesellschaft*, 1915, 3 հոդվածում քննության է առել այդ հարցը: Նրա բավական բարդ և մերիմից տարրեր բացատրություններին ծանոթանալուց հետո մենք նախընտրում ենք մեր տեսակետը:

Է. Ֆորթերը թագավորի երկու էպոնիմները տեղադրում է 857 և 827 թթ. և այն կրկնում է *Die Provinzeinteilung des assyrischen Reiches*, 7-ի մեջ՝ «857 und 827 war Salmanasar III Eponym», որը իրողության հետ հակասության մեջ է, քանի որ նա մեզ պես թագավորությունը հաշվում է 859 թվականից:

ները բարձրանում էին դեպի երկինք, ինչպես երկաթյա սրի ծայր», անցկացնել տվեց մարտակառքերն ու զորքերը, իջավ Ինզիտի երկիրը՝ Իշուս երկրում:

«Ինզիտին, իր ամբողջ տարածությամբ, իմ ձեռքն ընկավ, ես թալանեցի դրա քաղաքները, քանդեցի ամեն ինչ և բոցերի ճարակ դարձրի: Նրանցից վերցրի ավար, հարստություն, անթիվ բարիքներ: Ես պատվիրեցի իմ թագավորական անձի մի շատ մեծ պատկեր և այնտեղ արձանագրեցի Աշշուրի՝ մեծ տիրակալի, իմ տիրակալի, և իմ իշխանության հզորության փառքը: Ես այն կանգնեցրի Սալուրիում՝ Կիրեկիի փեշին:

Ինզիտի երկրից մեկնեցի, անցա Արսանիաս գետը և մտնեցա Սուխմի երկրին: Գրավեցի Սուխմիի բերդաքաղաքը՝ Ուաշթալը: Սուխմին, իր ամբողջ տարածությամբ, կործանեցի, ավերակի վերածեցի և բոցերի ճարակ դարձրի: Նրանց կառավարչին՝ Սուային, բռնեցի իմ սեփական ձեռքով:

Սուխմիից մեկնեցի և բարձրացա Դաիաինի երկիրը: Գրավեցի Դաիաինին իր ամբողջ տարածությամբ, կողոպտեցի նրա քաղաքները, ավերեցի և այրեցի դրանք: Հարուստ ավար, ունեցվածք, բարիք վերցրեցի նրանցից:

Դայա-ինիից մեկնեցի և մտնեցա Արգաշկունին՝ Ուրարտացի Արրամուտի թագավորական քաղաքին: Ուրարտացի Արրամուն սարսառց իմ հզոր զենքերի սարսափից և իմ մարտաթափի ուժից, լքեց իր քաղաքը և բարձրացավ Ադրուրի լեռը: Նրա հետևից ես մազլցեցի լեռը: Լեռան վրա ահավոր ճակատամարտ տվի: Իմ զենքերով տապալեցի նրա մարտիկներից 3400 հոգի: Նրանց վրա մրրիկ բարձրացրի, ինչպես Ադադը, նրանց արյունով ներկեցի լեռը ինչպես բուրդ: Գրավեցի նրա ճամբարը՝ նրա մարտակառքերը, նրա ձիավորներին, նրա ձիերը, նրա մտրուկները, նրա արջառները, նրա ունեցվածքը: Լեռից հարուստ ավար բերի:

Արրամուն իր կյանքը փրկելու համար բարձրացել էր անմատչելի մի լեռան վրա: Իմ առնական ամբողջ եռանդով վայրի ցուլի պես ոտնակոխ արեցի նրա երկիրը և նրա քաղաքները ավերակ դարձրի:

Արգաշկուն իր շրջակա քաղաքների հետ միասին թալանեցի, քանդեցի և բոցերի մատնեցի: Նրա դրան առջև գլուխներից կազմված բուրգեր կանգնեցրի, նրա մարդկանցից ոմանց կենդանի-կենդանի այս բուրգերի մեջ փակեցի, իսկ մյուսներին բուրգերի շուրջը ցցերի վրա շարեցի:

Արգաշկունից մեկնեցի և մազլցեցի Իրիտիա լեռը: Իմ թագավորական անձի համար մի մեծ պատկեր պատվիրեցի, այնտեղ արձանագրեցի Աշշուրի, իմ տիրակալի, փառքը և իմ վեհապետության հզորությունը, որ ես գործադրել էի Ուրարտուում, և այն կանգնեցրի Իրիտիա լեռան վրա:

Իրիտիայից մեկնեցի և մտնեցա Արամալիին, թալանեցի նրա քաղաքները, բարուքանդ արի և բոցերի ճարակ դարձրի:

Արամալիից մեկնեցի և մտնեցա Չանգիունային... սարսափից նա սարսառց և ընկավ ոտքերս: Նրանից ստացա ձիեր, ձիասարքեր, եզներ, ոչխարներ և նրան զթացի...: Վերադարձիս՝ իջա Նաիրի ծովը, Աշշուրի հզոր զենքերը լվացի ծովում և զոհեր մատուցեցի: Իմ թագավորական անձի մի մեծ պատկեր պատվիրեցի և այնտեղ արձանագրեցի Աշշուրի, մեծ տիրակալի, իմ տիրակալի, փառքը, և իմ քաջության սխրագործություններն ու իմ բարձր գործերը (և կանգնեցրի ծովի մոտ):

Ծովից մեկնեցի և մտնեցա Գիլգան² երկրին: Գիլգանի թագավորը՝ Ասաուն, իր եղբայրների, որդիների հետ դիմավորեց ինձ և իմ թագավորական անձի ոտքերն ընկավ: Նրանից ստացա ձիեր, ձիասարքեր, եզներ, ոչխարներ, զինի, յոթ երկսապատանի ուղտ: Պատվիրեցի իմ թագավորական անձի մի շատ մեծ պատկեր: Այնտեղ արձանագրեցի Աշշուրի, մեծ տիրակալի, իմ տիրակալի, փառքը, և իմ վեհապետության հզորությունը, որ ես գործադրել էի Նաիրիում, և այն կանգնեցրի նրա քաղաքի մեջտեղը, տաճարի մեջ:

Ես մեկնեցի Գիլգանից և մտնեցա Շիլաիային՝ Խուրուշկիայի Կակի թագավորի բերդաքաղաքին: Հարձակվեցի քաղաքի վրա և այն զրավեցի. նրանից վերցրի 3000 գերի, եզներ, ոչխարներ, ձիեր, մտրուկներ, արջառներ անթիվ անհամար և բերեցի իմ քաղաք Աշշուր:

Ես մտել էի Անզիտի երկրի լեռնանցքով, իսկ դուրս եկա Կիրուրի (երկրի) լեռնանցքով, Արբելի քաղաքի վերևում»³:

Այս պատմությունը մյուս վավերագրում ամփոփված է հետևյալ ձևով. «Ես մտա Ալզի երկրի լեռնանցքը: Ալզի, Սուխմի, Դայանի, Թումմե երկրները, Արգաշկունը՝ Ուրարտացի Արամեի թագավորական քաղաքը, Գիլգան, Խուրուշկիա երկրները ես նվաճեցի»⁴:

Այստեղ երևան է գալիս Թումմե, որը մեզ ծանոթ է Թիզլաթայալասար I-ի արշավանքից, բայց որը բաց է թողնված մանրամասն նկարագրության մեջ:

Սալմանասարը հիմնականում հետևել է Թիզլաթայալասար I-ի ճանապարհացույցին: Նա մեկնել է Ինզիտիից, որը երկրորդ վավերագիրը Ալզի է

¹ Է. Պայզերը կարդում է՝ (ina mitiq girt) ia «Im Fortgang meines Zuges»: Վ. Շելլը լրացնում է՝ (ina tayarti) ia... «Իմ վերադարձին»:

² Կարդավ Գիլգան և ոչ թե Գուգան, որն ուրիշ երկիր է՝ Աստվածաշնչի Գուգանը, և գտնվում է Խարուրի մարզում:

³ Մանդիթ, II, 41-66:

⁴ Ջարսկոբոլ, 42-44:

կոչում, մի հանգամանք, որն ապացուցում է նրանց նույնությունը: Դա հայկական Անճիան է, դասական հեղինակների Անգիտենն: Այն տարածվում էր Խարբերդից (Խարպուտ) մինչև Հանին:

Թել-Էնգիտ գյուղը՝ Խարբերդի մոտ և Հանիի մոտ գտնվող Դաշտ-ի-Հանգին սույն նույնացման լավագույն ապացույցն են¹, Խանգի(տ)ի այդ դաշտում կա Նիրիբ անունով մի գյուղ, որն ակներևաբար կիրճ, անցք նշանակությունն ունեցող ասուրական բառն է: Ներկայումս Նիրիբից երկու կիրճ տանում են դեպի Արսանիան, Բիրկալենը և Գյոկ-դերեն: Դրանք Ինգիտիի կիրճերն են: Քանի որ պատմությունը չի հիշատակում Բիրկալենի նշանավոր գեանուդին, հավանական է, որ Սալմանասարն անցել է Գյոկ-դերենով²:

Սուլմին առաջին երկիրն է, ուր թագավորը մտավ Արսանիայի անցքից հետո, որը համապատասխանում է հայկական Բալահովտին՝ «Բալի ձոր», բյուզանդական Բալավիտենին՝ Բալուի մարզ: Վերջինը, գուցե, Վաշտալ բերդաքաղաքն է: Սուլմինի առաջնորդը կոչվում է *bel mahazi*, այսինքն՝ քաղաքագլուխ և ոչ թե թագավոր. հետևաբար, դա անկախ երկիր չէր, այլ Դաշտ-ի-Հանին մեկ մասն էր: Այս տարածքները համապատասխանում են հայկական Հաշտեանք գավառին, բյուզանդական հեղինակների Աստիանենին՝ Գյունեկ գետի ջրերի վրա: Դա է Դաշտ ժողովրդի երկիրը՝ ժողովուրդ, որ հետագայում քշվեց դեպի հյուսիս և ապաստան գտավ Օլթիի սարահարթում, որին և իր անունը տվեց հայկական ձևով՝ Տայք, Տառխի:

Թումենն Յոնջալուի դաշտն է, որտեղ գտնվել է Թիզբաթալասարի արձանագրությունը, և որը թուրքերեն կոչում են Բուլանիք:

Արգաշկու կամ Արգաշկունը, որը ուրարտական Արգաշկունիի վերարտադրությունն է, չի կարող այլ բան նշանակել, քան Մելազկերտ: Հայաստանի մեծ քաղաքներն ընդհանրապես ծագումով նախահայկական են: Մելազկերտը, որի իսկական ձևը Մանազկերտ է, հին քաղաք է, որը բարեմաաստ դիրք ունի Արսանիայի ափին, Միփան, Ալադաղ, Բինգյոլ լեռների միջև մեծ հովտի կենտրոնում, և Վանից, Մուշից, Էրզրումից, Երևանից եկող

¹ Դաշտ-ի-Հանգին հիշատակված է զագաների (քրդական ցեղի) մի հեքիաթում P. Lorch, Forschungen über die Kurden und die iranischen Nordchaldäer, I, p. 72, ըստ J. Marquet-ի Südarmenien und die Tigrisquellen, էջ 70 և շար.:

² Երկու լեռնանցքները՝ Բիրկալենը կամ Բիկալենը և Գյոկ-դերեն (կապույտ կիրճ), հիմնականում համապատասխանում են Պրոկոպիոսի 'Ιλλυριοδός-ին և Σαφχαί-ին (Aed., III, էջ 250, Bonn): Առաջինը հայկական դասական հեղինակների Օլոռն է, ասորական հեղինակների Հալուրասաք և, գուցե, մեր արձանագրության Միլուրիմ: Գյոկ-դերեն կարող է Σαφχαί-ի քարգնանությունը լինել, եթե վերջինս քաղկեդոն է *syau* կամ *sev* (սև, կապույտ) (հմմտ. *sin-sir*-կապույտ՝ սլավերեն և *sin*՝ քրդերեն) և *shay*՝ *pahak*-ից (դուռ, անցք), *sa-up-hay* = *σα-φ-χαί*:

բոլոր ճանապարհների հատման կարևոր կետն է: Այս հանգամանքը շատ մեծ նշանակություն պիտի ունենար մի մայրաքաղաքի համար, և այդ տեսակետից տվյալ շրջանում ոչ մի այլ վայր չի կարող հավասարվել նրան:

Եթե մայրաքաղաքի շրջանը նույնպես կրել է Արգաշկուն անունը, այդ դեպքում կարելի է Արամիլին¹ տեղադրել մայրաքաղաքի շրջանի արևելքում, հայկական Ապահունիք նահանգի՝ Ապահունի իշխանների կալվածքների արևելյան մասում: Չանգիունն այդ ժամանակ կհամապատասխանի Ադիտտին կամ Ադիտովտին՝ Արճեշի շրջանում:

Աղուրի լեռը, ուր տեղի ունեցավ մայրաքաղաքի համար մղվող ճակատամարտը, չէր կարող հեռու գտնվել: Պետք է այն տեղադրել Պատնոցի շրջակայքում, Ալադաղի լեռնաշղթայում:

Իրիտիա կամ Իրտիա լեռը, ինչպես Սարգոնն է կոչում, գտնվում էր Աղուրիից արևելք, հավանական է Ալադաղում, Եփրատի ակունքի մոտ²:

Թիզբաթալասարը Թումենից վերադարձավ նույն այն ճանապարհով, որով եկել էր: Սալմանասարը շարունակեց իր արշավը և հասավ Գիլգան երկիրն ու Խուրուշկիա: Թվում է, թե Գիլգանը Սարգոնի Չարանդա կոչած տարածքն է, Սալմասի շրջանը, հայ հեղինակների Չարանդա: Հաղթական թագավորը Վանա լճից մինչև իր սահմանները, մինչև Ուրմիա լիճն ընկած երկար երթուղուց իր սխրագործությունների մասին ասելիք չունի, բացի Խուրուշկիային սահմանակից Շիլայլա կայանի ավերումից: Ինչո՞ւ է նա ընտրել այդ անփառունակ ճանապարհը և առաջացել մինչև Գիլգան, երբ այդ երկիրն հպատակվել էր առաջին արշավանքի ժամանակ: Գուցե, նրան նեղել է Արամն³, որը քաշվել էր լեռները, բայց անճանատուր չէր եղել: Նման դեպքը զարմանալի չէր լինի, եթե հիշենք այն զբոսանքը, որ Սալմանասարը կատարեց Տիզբաթի ակունքում երկու անգամ, չհամարձակվելով անցնել Արսանիան: 853 թվականին նա հասնում է «Տիզբաթի ակունքը, հենց այն վայրը, որտեղից ջրերը բխում էին: Այնտեղ զոհեր է մատուցում, հպատա-

¹ Թիզբաթ, I, 35-ի մեջ Արգաշկուն անվանված է *matu* (երկիր) և ոչ թե *alu* (քաղաք), ինչպես ուրիշ վավերագրերում: Արամիլին Սարգոնի միևնույն Արմարիսի կամ Արմարիաին է. F. Thureau-Dangin, Une relation de la huitième campagne, I, 269 և 280:

Բալավաթի արձանագրությունը չի հիշատակում ոչ Արամիլին, ոչ Չանգիունը: Հաղթանակից հետո թագավորը «Ադադի նման տակնավրա արեց Quti-e ընդարձակ երկիրը և այնտեղից գնաց Գիլգան»:

Եթե այստեղ Կուտի տերմինը հասկացվի Ուրարտու, կարիք կզգացվի լրացուցիչ հավաստման:

² Իրիտիան չի կարող Միփանը լինել, ինչպես կարծում է Մ. Ետրեկը, «Zeit. f. Assyr.» XIV, էջ 112: Սարգոնը, արևելքից գալով, Արգաթիա լեռից հասնում է Իրտիա լեռը, անցնում Արմարիի վրայով և հասնում լճի ափը: Քանի որ Սարգոնը գալիս էր արևելքից արևմուտք, ուրեմն, Իրտիան կամ Իրիտիան պետք է գտնվեր լճի հյուսիսային կետում, Ալադաղի լեռնաշղթայում:

կեցնում այն քաղաքները, որ դեռ Աշշուրին չէին ենթարկվել, և ստանում Նաիրի երկրի հարկը»¹:

Մի վավերագիր ավելացնում է, որ թագավորը այնտեղ «ուրախ խնջույք կազմակերպեց, իր պատկերը կանգնեցրեց և այնտեղ արձանագրեց Աշշուրի փառքը և այն սխրագործությունները, որ ինքն էր կատարել»²:

845 թվականին Ասորեստանի թագավորը նորից է վերադառնում «Նաիրի երկիրը»: Տիգրիսի ակունքում նա իր պատկերը քանդակել է տալիս ժայռի վրա, հենց ջրերի բխման վայրում, և այնտեղ արձանագրել է տալիս իր հզորությունն ու իր քաջագործությունները: Մի լրացուցիչ ծանոթություն ասում է, «որ նա մտավ Թունիքունի երկիրը, տապալեց, քանդեց և հրդեհեց Ուրարտացի Արամեի քաղաքները մինչև Եփրատի ակունքը: Նա գնաց Եփրատի ակունքը և զոհեր մատուցեց իր աստվածներին»³: Այս բնագրի մի պատճենն ավելացնում է, «որ նա իր զենքերը մաքրագործեց և որ Դայանիի թագավոր Ասիան նրա ռաքերն ընկավ և որպես հարկ ձիեր հանձնեց: Թագավորն իր պատկերը քանդակել ավելց` Ասիայի քաղաքում կանգնեցնելու համար»⁴: Այս հավելյալ ծանոթությունները կարոտ են հավաստման, քանի որ նրանց նպատակն է ցուցադրել թագավորի կատարած այնպիսի սխրագործություններ, որոնք հնարավորություն պիտի տային նրան 845 թվականին իր պատկերի վրա արձանագրություն անել:

Բնագրի համաձայն, պատկերը կանգնեցվել է նախօրոք, դեպի Եփրատի ակունքը կատարած արշավանքից առաջ, ինչն ապացուցում է ծանոթության հավելյալ լինելը: Մինչդեռ, այն արձանագրությունները, որոնք Սալմանասարը թողել է Տիգրիսի ակունքի վրա` Բիրկալեն գետնուղում, դեռևս գոյություն ունեն in situ և թույլ են տալիս ստուգել նշված տեղեկությունները:

Երկու արձանագրություններից մեկում Սալմանասարը, իր բազմաթիվ գործերը թվարկելուց հետո, հայտարարում է. «Ես նվաճեցի Նաիրի երկրից մինչև Արևմտաքի Մեծ ծովն ընկած երկրները:

Խաթթիի երկիրն իր ամբողջ տարածությամբ, Միլիդը, Դայանին, Մուխմեն, Արգաշկուն քաղաքը` Ուրարտացի Արամեի թագավորական քաղաքը, Գիլգանը, Խուրուշկիան, Տիգրիսի ակունքից մինչև Եփրատի ակունքն ըն-

կած շրջանը, նույնպես Չամուա ճա bitani երկրի ծովից մինչև Քաղդեայի ծովը, բոլորին ոտքերիս տակ բերի:

Ես մեկնեցի Բաբելոն, զոհեր մատուցեցի. իջա Քաղդեայի երկիրը: Նվաճեցի նրա քաղաքները և հարկ վերցրի:

Դամասկոսի Ադա-Իդրին, Համատի Իրխուլինին 15 ծովեզրյա քաղաքներով եկան իմ դեմ կովելու: Ես կովեցի նրանց հետ և նրանց փախուստի մատնեցի: Ես ոչնչացրի նրանց մարտակառքերը, թամբած երիվարները և նրանցից խլեցի պատերազմի մեքենաները: Նրանք ետ քաշվեցին` իրենց կյանքը փրկելու համար»¹:

Երկրորդ արձանագրությունն ավելի հակիրճ է` «Ես իմ նվաճումները հասցրի Նաիրի երկրի ծովից սկսած մինչև Արևի մուտքի մեծ ծովը` գրավեցի Խաթթի երկիրն իր ամբողջ տարածությամբ: Մտա Ինզիտի երկրի լեռնանցքը, նվաճեցի Մուխմեն, Դայանին, Ուրարտուն իր ամբողջ տարածությամբ: Գնացի Գիլգան և այնտեղից հարկ վերցրի: Երրորդ անգամ վերադարձա Նաիրի երկիրը և անունս գրեցի Տիգրիսի ակունքի մոտ»²:

Երեք այցելությունները Նաիրի երկիր, այսինքն` Ինզիտի մարզը, կատարվել են 857, 853 և 845 թվականներին: Եթե վերջին արձանագրությունը կազմվել է երրորդ այցելության ժամանակ, ուրեմն, այդ թվագրվում է 845 թվականով:

Սակայն այստեղ Ուրարտու երկրորդ ներխուժման մասին բոլորովին հարց չի ծագում, մինիայն 857 թվականի արշավանքի մասին է խոսքը: Սա արդեն քիչ հավաստի է դարձնում 845 թվականին ուրարտական արշավանքի մասին եղած ծանուցումը:

Գետնուղում մյուս արձանագրությունը հիշատակում է «Եփրատի ակունքից», որտեղ կարելի է ակնարկություն նկատել վերոհիշյալ արշավանքի մասին: Այդ դեպքում արձանագրությունը նույնպես 845 թվականին կլինե՞ր³: Մեզ թվում է, սակայն, որ այն վերաբերում է 844 թվականից ավելի ուշ շրջանին, քանի որ այն տեղյակ է «մինչև Քաղդեայի ծովը» արված նվաճումներին: Այդ Նամրիի առումից հետո էր, 844 թվականին, որ նվաճման սահմանները երկարաձվեցին «մինչև Քաղդեայի ծովը»⁴:

¹ C. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, I, էջ 441:

² Նույն տեղում, էջ 437:

³ C. Lehmann-Haupt-ը, նշվ. աշխ., էջ 453, ասում է, որ այդ արձանագրությունը նույնպես ունի ծանոթություն այն մասին, թե թագավորը «նկել է երրորդ անգամ»: Բայց արձանագրության տեքստը, էջ 441, այդպիսի ծանուցում չունի:

⁴ Վավերագրերի համաձայն (Քարակոթող և Ցլակոթողներ), Սալմանասարը, քարեյուրյան երկրորդ արշավանքի ժամանակ, առաջացել է մինչև Քաղդեայի ծովը: Սակայն Բալավաթի արձանագրությունը, որ այս արշավանքն ավելի մանրամասնորեն է պատմում, միայն ասում է, որ թագավորը Քաղդեա է մեկնել, և չի հիշատակում մինչև ծով առաջանալը: Ցլակոթող I-ը իր

¹ Ցլակոթող, I, 76-78:

² Քարակոթող, 69-72:

³ Ցլակոթող, I, 102-105:

⁴ Ցլակոթող, II, Ծ. Դելիի մոտ, Ցլակոթողի վերջում, I, էջ 150. V. Scheil, էջ 58, ծան. 1. Քարակոթող, 92-93, չի հիշատակում Թունիքունի կիրճով կատարած արշավանքը. նա ասում է, որ «թագավորը հասավ Եփրատի ու Տիգրիսի ակունքները և այնտեղ թողեց իր պատկերը գետնուղու ժայռի վրա»:

Այս պայմաններում, Թունիքունիի և Եփրատի ակունքի հիշատակումը պետք է առնչել 857 թ. արշավանքի հետ: Իրականում Թունիքունին միևնույն Ինգիտի լեռնանցքի ուրիշ անունն է: Այսպես է կոչվել նա, ինչպես ասացինք վերևում, ըստ ուրարտական մարզ Թունուբեի, որը գտնվում է լեռնանցքի դիմաց, Արսանիայի վրա:

Եփրատի ակունքին կանգնեցրած պատկերն այն է, որ Մալմանասարը բողի էր Իրիտիա լեռան վրա 857 թվականին: Իրիտիան կազմում է Ալադադի մի մասը, որտեղից սկիզբ է առնում Եփրատի բազմաթիվ ակունքներից մեկը: Վերջապես, Ասիան՝ Դայանիի թագավորը, որը հիշատակված է երկրորդ ծանոթության մեջ, որն, անշուշտ, այլ ծագում ունի, քան առաջին ծանոթությունում նշվածը, ավելի շուտ հարստության անուն է: Թիզլաթայալասար Ի-ի ժամանակ Դայանիի թագավորը կոչվում էր Սիե-նի, իսկ այս անունը Ասիայի ուրարտական ձևն է¹: Թագավորի անունը չի հիշատակված 857 թվականի արշավանքի պատմության մեջ, գուցե՝ մոռացության հետևանքով, եթե միայն Դայանիի թագավորը իրեն ստորադաս Մուայի հետ շփոթված չէ: Համենայն դեպս, այն իրողությունը, թե Մալմանասարը 853 թվականին գետնուղում մի արձանագրություն է բողի, և որ նա 845 թվականին մտել է Ուրարտու, չի հաստատված:

Միայն 831 թվականին, 857 թվականի արշավանքից ավելի քան քառորդ դար հետո է, որ ասորեստանյան բանակը երկրորդ անգամ անցավ Ուրարտուի սահմանը: «Ես հավաքեցի իմ մարտակառքերն ու բանակները, - ասում է Մալմանասարը, - զինվորների առաջնորդ նշանակեցի և Ուրարտուի երկիրն ուղարկեցի Դայան-Աշուրին՝ թուրքանին, իմ բազմաթիվ բանակների գորավարին: Նա իջավ Ջամանիի երկիրը, մտավ Ամմաշի քաղաքի լեռնանցքը և անցավ Արսանիա գետը: Ուրարտացի Մեդուրին իմացավ իր գործերի մեծ թվին ապավինելով, իմ դեմ ելավ կռիվ ու ճակատամարտ

տալու: Ես նրա հետ կռվեցի և հաղթեցի նրան, ընդարձակ դաշտը 19րի նրա ռազմիկների դիակներով»¹:

Դայան-Աշուրն ասորական բանակի զլխավոր հրամանատարն էր համարյա Մալմանասարի ամբողջ թագավորության ժամանակ: Ամմաշը պետք է որ լինի Ինգիտի լեռնանցքի մուտքի մոտ գտնվող մի բնակավայր: Ասորեստանցի գրիչը պերճախոս չէ, անշուշտ, որովհետև թուրքանի հաշվին արձանագրելու ոչինչ չուներ, ինչպես, օրինակ՝ կողոպուտ, հրդեհ, զլուխներից բուրգ: Դա պարզապես և հստակորեն նշանակում է, որ թուրքանը ծախողություն էր կրել: Մեդուրին, անտարակույս, Արամեի հաջորդն է:

Մալմանասարը հարձակվեց նաև Ասորեստանի և Ուրարտուի միջև գտնվող չեզոք գոտու մի քանի երկրների վրա: 855 թվականին նույնպես նա մտել էր Կաշիարիի մարզը, գրավել տասնմեկ քաղաք և այնտեղից քափանցել էր Շուպրիա և Անիսիա թագավորին փակել էր իր Ուպուսն քաղաքում²: Անիսիան մեզ ծանոթ է որպես Աշուրմասիրպալի ժամանակակից: Ուպուսն կամ Պուսնն այսօրվա Ֆուսն է (ավելի շուտ՝ Օպուս): Մալմանասարին չէր հաջողվել քաղաքը գրավել: Այնուհանդերձ, ինչպես կտեսնենք, այդ արշավանքը Բալավաթի բրոնզե փթեղների վրա փորագրված է իր սխրագործությունների շարքում:

829 թվականին նա հարձակվեց Ուլուրայի վրա, որը գտնվում էր Խուլայի մարզում, Շուպրիայի մոտ: Դա նույն մարզն է, որը կոչվում է նաև Խաթիսի: Ասորեստանի թագավորն ասում է, որ ինքն այդ երկիրն ավերել է, հրդեհել և ամպրոպի մման ավել: Նրա վրա տարածել է իր գերիշխանության սարսափը³: Մալմանասարը յուրացնում է նաև իր գորավար Դայան-Աշուրի կատարածը:

Հաջորդ տարին՝ 828 թվականին, «երկրորդ անգամ ինքն իրեն դնում է Աշուրի և Ադադի պաշտպանության տակ», այսինքն՝ աղոթում է անվանակրության համար: Դայան-Աշուրն անցնում է Ջարը, մտնում Խուրուշկիա և Դատանա թագավորից հարկ է ստանում:

Նա առաջանում է դեպի Մալիսիսի, Մակուրիի իշխանի քաղաքը և հարկ ստանում: Ապա մտնում է Մանա երկիրը, որի «Ուպլի թագավորը սարսափահար հեռանում է Իզիրտա մայրաքաղաքից և բարձրանում լեռները: Թուրքանն ավերում է երկիրը և այնտեղից քերում անթիվ եզներ ու ոչխարներ»:

առաջաբանում հստակեցնում է թագավորի նվաճումները և նրանց միջև նշում է՝ «Նամրի երկիրը մինչև Զադրեայի ծովը»: Մալմանասարը մտավ Նամրի, ըստ Զարակոթողի, 16-րդ տարում, 844 թ., վտարեց երկրի թագավորին և նրա տեղը նշանակեց Յանգուին: Երկրորդ անգամ նա եկավ Նամրի, իր հովանավոր Յանգուի դեմ, 26-րդ տարում, 834 թ.: «Նամրիի նվաճումը մինչև Զադրեայի ծովը» 844 թվականից ավելի ուշ է տեղի ունեցել: Մեզ թվում է, որ «Ջամուայից մինչև Զադրեայի ծովը» արտահայտությունը չի կարող 844 թվականից առաջ գործածված լինել:

Հիշենք, որ 839 թ. Մալմանասարը Թիլլիի դեմ մեկնեց, 837 թ. Դամարիի դեմ, 836 թ. Թարալի դեմ, 835 թ. Միլիդի դեմ: Դամարի երկիրը ծանոթ չէ: Կարելի է մտածել Թունիքունիի կամ Թունուրիի մասին (եմֆատիկ t=d): Ասորեստանի թագավորը այդ տիրույթի վրա հարձակված կլինի նախքան Միլիդի և Թարալի դեմ գնալը, որոնք, հավանաբար, Ուրարտուի հետ համաձայնության էին եկել:

¹ Sie-ri, դա Sie-ի կամ Ասիեի ուրարտական ձևն է (ինչպես Գուսի և Ագուսի, Սաու և Ասաու):

¹ Զարակոթող, 141-146:

² Զարակոթող, 52-54:

³ Զարակոթող, 156-159: Այստեղ գործածվում է Խաթիսի (Կիրիսի) անունը, քայքայ էպոնիմների ցուցակում արշավանքն ուղղված է Ուլուրա երկրի դեմ: Խոսքը նույն երկրի մասին է:

Խուրուշկինան Ջուլյաներկի մարզն է: Մանան Ուրմիայի հարավում՝ Չագրոսի շրջայի և Ջադաթու գետի միջև ընկած շրջանն է: Մուծածիրը գտնվում է այդ երկու երկրների միջև: Խուրուշկիայից Մանա գնալու համար պետք է անցնել Մուծածիրի վրայով: Թուրքանը այդպես չարեց, այլ անցավ Մալխիսի վրայով. սա անծանոթ բնակավայր է, հավանաբար՝ Մուծածիրի հարավային սահմանի վրա: Նույն տարին թուրքանը երկրորդ անգամ մեկնեց Խուրուշկիայի դեմ, հարկ ստացավ Դատայից, որը նույն Դատանան է, երկրի թագավորը: Այս անգամ թուրքանը մտավ Մուծածիր և գրավեց Ծապարիա քաղաքն ու 46 այլ կետեր: Նա գնաց մինչև Ուրարտուի բերդերը և քանդեց ու հրկիզեց դրա 50 քաղաքները: Նա իջավ Գիլգան երկիրը, որի թագավոր Ուպուն նրան որպես հարկ հանձնեց եզներ, ոչխարներ և ձիեր: Նույն կերպով վարվեցին Մանան, Պուրիսան, Խարրանան, Անդիան: Ասորեստանյան բանակը խորացավ Պարսուայի երկիրը, նվաճեց բազմաթիվ բերդաքաղաքներ, ներառյալ Բուշտուն, որ ուրարտական վավերագրերում հաճախ է հիշատակվում: Թուրքանը իջնում է Նամրի երկիրը և Սիմեսի լեռնանցքով, Խալմանի սահմանի վրայով, վերադառնում մայրաքաղաք:

Պետք է վարժվել ասուրական պաշտոնական լեզվին, որ արձանագրական է դարձել, որպեսզի հնարավոր լինի բոլոր չափազանցությունները վերածել իրենց իսկական չափին: Ասպատակությունները կատարվում էին ոչ թե նվաճումների, այլ կողոպտելու, հարձակման ենթարկված երկրների հարստությունը կորզելու համար:

Թվարկված բազմաթիվ երկրներից ոչ մեկը չի նվաճվել: Ուլտրան, Խուրուշկիան, Մուծածիրը, Մանան միշտ պահպանել են իրենց անկախությունը: Նույն դրությունն էր մյուս սահմաններում: Մալմանասարը՝ հարստության ծարավի և այս հարցում ավելի անողոր, քան որպես պատերազմիկ, իր ամբողջ երկար թագավորությունն անցկացրեց անընդհատ ընդհարումների մեջ: Սակայն արդյունքները միշտ եղել են չնչին, բացի հարուստ ավարից: Հակառակ բազում անգամ կրկնած իր պնդումներին այն մասին, թե ինքը նվաճել է այսքան երկրներ, իրողությունն այն է, որ նրան չի հաջողվել պետության սահմանները տարածել ոչ Եփրատից, ոչ էլ Չագրոսից այն կողմ: Նրա որդին ու հաջորդը չի թաքցնում ճշմարտությունը, երբ հայտարարում է, թե պետության սահմանները տարածվում էին Պադիրիից մինչև Կարկամիշ: Հետևաբար, ճիշտ չեն որոշ պատմաբաններ, որոնք նրան Դամասկոսի երկրից մինչև Արաքս և Բաբելոնից մինչև Կիլիկիա ընկած երկրները նվաճողի պատիվն են ընծայում: Ավերումները նվաճումներ չեն:

Մեծ ապստամբությունը, որ բռնկվեց Մալմանասարի թագավորության վերջում և ընդգրկեց 27 քաղաքներ, ներառյալ Աշշուրը, ապացուցում է, որ, համեմայն դեպք, երկիրը գոհ չէր նրա կործանիչ արշավանքներից:

Մալմանասարը մտադրվեց իր պալատը զարդարել առաջին արշավանքների տեսարաններով և նրանց շարքում նաև այն արշավանքներով, որ հետաքրքրում են մեզ: Դրանք Բալավաթի դռների բրոնզյա նշանավոր պատասաններն են, որոնց մասին կխոսենք ավելի ուշ:

Հարկավոր է հիշել, որ Մալմանասարի օրով Ուրարտուում իշխում էին Արամեն և նրա հաջորդը՝ Սեդուրին կամ Սարդուրին:

2. ԹԻԳԼԱԹՊԱԼԱՍՍԱՐ III ԵՎ ՍԱՐԴՈՒՐԻ II

Մալմանասար III-ի թագավորությունից մինչև Թիգլաթպալասար III-ի թագավորությունը՝ համարյա մեկ դարի ժամանակաշրջանը մեզ աղքատ փաստեր է տրամադրում: Ռազմական վավերագրեր չեն պահպանվել, և դա սույլ բախտի բերումով չէ, այլ զինվորական գործողությունների պակասության հետևանքով: Այդ միևնույն շրջանում ուրարտական վավերագրերը, ընդհակառակն, բավական առատ են, ինչպես կտեսնենք հետագայում: Դա արդեն ստույգ նշան է, որ երկու պետությունների ուժերի հարաբերությունը փոխվել էր ի նպաստ Ուրարտուի: Իսկապես, Մալմանասար III-ի օրով Ասորեստանի հզորությունը զգալիորեն նվազում է, մինչդեռ Ուրարտուին՝ աճում: Դա մեզ թույլ է տալիս զգույշ վերաբերվել Մալմանասար III-ի կողմից Ուրարտուի կարծեցյալ ջախջախմանը:

Բարեբախտաբար, պահպանվել են էպոնիմների ցուցակները, որոնք մեզ տեղյակ են պահում զլխավոր իրադարձություններին և Ուրարտուի հետ զինված ընդհարումներին: Մալմանասար III-ը մեռնում է 824 թվականին, խռովությունների թեժ պահին, որոնք մոլեգնում էին սկսած 827 թվականից: Նրան է հաջորդում իր որդին՝ Շամշի-Ադադը (824-811): Հաջորդ տարին նա էպոնիմ է¹:

Ապստամբությունը ճնշվում է միայն 822 թվականին: Առաջին արշավանքը Նաիրի երկրի դեմ նշված է 821 թվականին: Նաիրի ասելով՝ այստեղ

¹ Նոր հետազոտություններում թագավորների իշխանությունը հաշվում են նրանց էպոնիմ տարվանից սկսած, որը ճիշտ չէ: Պետք է հաշվել նաև նրանց գահակալության տարին, որ միևնույն ժամանակ նախորդ իշխանության վերջին տարին է. Մալմանասար՝ 859-824, Շամշի-Ադադ՝ 824-811, և այսպես շարունակ:

հասկացվում են պետության արևելքում գտնվող երկրները՝ Խուրուշկիայից մինչև Իրանական սարահարթը:

Երկրորդ արշավանքը, 820 թվականին, ղեկավարվում է զորագլուխ Մուքարրիս-Աշուրի կողմից, նույնպես Նաիրիի դեմ: Նա առաջ է խաղում մինչև «Արևմտի ծովը», հայատակեցնում Միկախարայի որդի Խիրսինայի 300 քաղաքները, Ուշաինայի 11 բերդերը և 200 քաղաքները: Մեծ ավար է ձեռք բերում և գերության է վարում «մրանց որդիներին, աղջիկներին, աստվածներին», իսկ վերադարձի ճանապարհին Մունքի երկրից¹ հարկ է գանձում:

Խուրուշկիան մեզ ծանոթ է: Դա Ջուլամերկի մարզն է: Խիրսինան, թվում է, առնչվում է վերոհիշյալ Մադախիի Մագդուբիին:

«Արևմտի ծովը» Ուրմիա լիճն է: Դա այդպես է կոչվում Կասպից ծովի համեմատությամբ, որը հիշատակված է Ադադնիրարիի արշավանքի ժամանակ որպես «Արևածագի մեծ ծով»:

Մունքին առնչվում է Փոքր Չաբին, այն մարզին, որտեղ թագավորը կարեց Չագրոսի լեռնաշղթան, ինչպես կտեսնենք Մարգոնի ութերորդ արշավանքի կապակցությամբ: Այս պատմության մեջ մեզ հետաքրքրում է Ուշաինայի հիշատակումը: Երկրի հիշատակման բացակայությունն արգելք չի հանդիսանում նրանում Ուրարտուի թագավոր Իշպուլիմիին ճանաչելու համար²: Ուրեմն, դա Սեդուրիի կամ Մարդուրիի հաջորդն է և 820 թվականից արդեն գահի վրա է: Սա կարևոր կետ է ուրարտական թագավորների ժամանակագրության համար:

Խուրուշկիայի դեմ պատերազմը շարունակվում էր Մալմանասարի թագավորության վերջերից սկսած: 819 թվականին, Շամշի-Ադադը նորից արշավում է Խուրուշկիայի դեմ և հարկ գանձում Դադի թագավորից. սա նույն Դատան կամ Դատանան է: Հարկ է գանձում նաև Խիրսինայից, Մունքի, Մանա, Պարսուա, Միսի երկրներից և Գիզիլունդիից, որի թագավորն էր Պիրիշաթին, իսկ քաղաքը՝ Սիրարան:

Այս վերջին անունը նույնանուն է Մուծածիրի քաղաք Սիպարայի հետ: Ասորեստանի թագավորը թափանցում է Մադա երկիրը, այսինքն՝ Մեդիա, և հնազանդեցնում 27 թագավորների, որոնց անունները թվարկված են: Դրանք իրանական ցեղերի առաջնորդներն են: Սա շատ մեծ հետաքրքրություն ներկայացնող իրողություն է, բայց մեր նյութին չի վերաբերում: Նշենք միայն, որ Խունդուր աշխարհագրական անունը ծանոթ է նաև Ուրարտուում

Խունդուր և Խունդուրնա ձևով¹: Շամշի-Ադադը խուսափում է Մուծածիրի անունը տալ: Թվում է, թե այդ երկիրը նվաճված է եղել Ուրարտուի կողմից, և Ուշաինայի 11 բերդերն ու 200 գյուղերը իրականում գտնվում են Մուծածիրի և ոչ թե Ուրարտուի տարածքում: Ուշաինայի հարևանությունը, եթե ոչ օգնությունը, կարող էր Խուրուշկիային քաջալերել դիմադրելու Ասորեստանին, որը չդադարեց հարձակվել նրա վրա նաև Շամշի-Ադադի հաջորդի օրով:

Շամշի-Ադադն ամուսնացել էր Շամնուրամաթ անունով մի բաբելոնյան իշխանուհու հետ: Դա հռչակավոր Շամիրամը կամ Սեմիրամիսն է, որ հին աշխարհում անգերազանցելի հռչակ էր վայելում: Այս լեգենդար հերոսուհու իսկական պատմական ուրվագիծը նրան մեզ ներկայացնում է նույնքան համեստ, որքան նրա թագավոր ամուսնուն: Թագածառանգ Ադադնիրարին (811-782) դեռևս անչափահաս էր, երբ 811 թվականին մեռավ նրա հայրը, և Շամնուրամաթ թագուհին դարձավ նրա խնամակալը: Ավանդությունը ուզում է, որ Սեմիրամիսը լինի մեծ աշխարհակալ, որ նա պատերազմ մղած լինի Բակտրիանում: Այդտեղ կարելի է տեսնել այն երկար պատերազմի արտացոլումը, որ նրա որդին իսկապես մոեց մարական ցեղերի դեմ: Ադադնիրարին հաստատում է, որ մարտնչել է հետևյալ երկրների դեմ՝ Իլլիպի, Խարխար, Արազիաշ, Միսու, Մադաի, Գիզիլունդա, Մունա, Պարսուա, Ալլարիա, Արդադանա-Նաիրին իր ամբողջ տարածությամբ մինչև Անդիու և Արևելքի մեծ ծովը, այսինքն՝ Կասպից ծովը:

Այդ բոլոր երկրները գտնվում էին Իրանական սարահարթում և ներկայացնում էին Նաիրի երկիրը: Այս տերմինի օգտագործումը Իրանական սարահարթի վերաբերյալ՝ արժանի է ուշադրության: Էպոնիմների ցուցակը Ադադնիրարիին վերագրում է Մադայի կամ Մեդիայի դեմ մղած ութ արշավանք:

Շամիրամին վերագրվող մեծ սիրահարի համբավն, անշուշտ, առաջ է գալիս Շամնուրամաթի այրիության հետևանքով: Բացահայտ է, որ Շամիրամն իր հոյակապ փառքի համար պարտական է ոչ թե Շամնուրամաթի դժգույն ուրվականին, այլ, հատկապես ժողովուրդի կողմից այնքան ճանաչված աստվածուհի Իշթարին: Շունմաթը (ադավնի), որն Իշթարի թոշունն է, շփոթել են Շամնուրամաթի հետ: Ուրիշ դիցաբանական տարրեր ևս եկան քողարկելու և մթազնելու ասորեստանյան թագուհու իրական պատկերը: Շամիրամի առասպելը ուրվագծվել է վաղ շրջանում, նախքան ասորական

¹ Շամշի-Ադադի արձանագրությունը հրատարակված է Լյուդվիգ Աբելի կողմից, տե՛ս, Keilschriftliche Bibliothek, hrsg. E. Schrader, I, էջ 175-187:

² W. Belck, Verhandlung. d. Anthropologischer Gesellschaft, 1894, էջ 485:

¹ Համաձայն էպոնիմների ցանկի, հաջորդ տարին, 818 թվականին, թագավորը մեկնում է Ալկադի դեմ և 817 թվականին՝ Թիլիի դեմ: Մրանից հետևում է, որ 820 թվականի ճշումը Ուշաինայի դեմ կատարած արշավանքի կապակցությամբ ճիշտ է:

պետության անկումը: Հերոդոտոսը, Կտեսիասը նրան արդեն ճանաչում էին առասպելական պատկերմամբ: Ըստ Հերոդոտոսի՝ Սեմիրամիսը կառուցել է այն նշանավոր ամբարտակները, որոնք Եփրատը պահում էին հունի մեջ և չէին թողնում, որ նա հեղեղի գյուղերը¹: Հետաքրքիր է, որ ուրարտական Մեմուա թագավորի ջրանցքի հայտնի ամբարտակները Հայաստանում հետագայում նույնպես վերագրվել են Ծամիրամին: Ծամիրամի հիշատակը, նրա առասպելները դեռևս ապրում են Վանի և Մուշի ժողովրդի մեջ: Մովսես Խորենացու կողմից գրի առնված հայկական առասպելը Արա Գեղեցիկի մասին աղերսվում է պապիրուսի վրա գրված այն վեպի հետ, որի հերոսն իր զարմուխի՝ Դարկեյայի դստերն սիրահարված Նինոսն է: Դա Սեմիրամիսի մի այլ տարբերակն է²:

Պատմական Ծամնուրամաթը թողել է միայն մի քարակոթող, որի վրա ինքն իրեն ներկայացնում է որպես Ծամշի-Ադադի թագավորական կինը, Ադադհիրարիի մայրը և Մալմանասարի հարսը³:

Թագուհին Ասորեստան էր ներմուծել բաբելոնյան աստված Նաբոյի պաշտամունքը, որին նվիրված է մի քարակոթող, որ Կալխու քաղաքի նահանգապետ Բելտարսի-Իլուման կանգնեցրել էր «Ասորեստանի թագավոր Ադադհիրարիի կյանքի և թագավորական տիկնոջ՝ Ծամնուրամաթի համար»⁴:

Կալխուի կուսակալն էպոնիմների ցուցակում նշված է որպես 798 թ. անվանակիր: Հավանական է, որ քարակոթողը կանգնեցված է հենց այդ թվականին, մինչդեռ Ծամնուրամաթինը՝ իր խնամակալության ժամանակ:

Ծամնուրամաթը չի նշված որպես էպոնիմ, բայց նրա անչափահաս որդին 810 թվականին նշված է: Պատերազմը տեղի էր ունեցել Ծամնուրամաթի և իր որդու օրով, թուրքան Ներգալ-Մալիկի գլխավորությամբ: Այդ իշխանության ժամանակ կատարված արշավանքներից թվենք Մանայի դեմ 808 և 807 թվականներին, Խուրուշկիայի դեմ 802, 792, 785 և 784 թվականներին կատարվածները: Այդ երկրների դեմ հաճախակի հարձակումների նպատակն էր ետ մղել Ուրարտուն: Իրականում պայքարը ծավալվում էր Ասորեստանի և Ուրարտուի միջև, թեպետ վերջինը չի հիշատակված:

¹ Herod., I, 184.

² Wilcken, Ein neuer griechischer Roman, «Hermes», 28, էջ 161-193: N. Adonx, Les vestiges d'un ancien culte en Arménie, «Annuaire de l'Institut de philologie et d'histoire orientales et slaves», t. IV, 1936 (Mélanges Franz Cumont):

³ C. F. Lehmann-Haupt, «Mitteilungen d. Deutschen Orientgesellschaft», № 40, 1909, մայիս, էջ 24, № 42, 1909, դեկտեմբեր, էջ 34 և 39: Սեմիրամիսի մասին՝ Die historische Semiramis, նույն հեղինակի, 1910 թ.:

⁴ E. Schrader, Keilinschriftliche Bibliothek, I, էջ 193:

Մեմամարաթը բորբոքվում է Մալմանասար IV-ի (782-772) ժամանակ: Յոթ տարում տեղի է ունենում յոթ արշավանք Ուրարտուի դեմ, որոնք նշված են էպոնիմների ցուցակում: Հիշենք նրանց թվականները, որոնց կարիքը կզգանք ուրարտական ժամանակագրության կապակցությամբ՝ 781-780-779-778-776 և 774 թվականները:

Մենք կտեսնենք, որ այդ նույն տարիներին Ուրարտուի թագավոր Արգիշտի I-ը նույնքան արշավանքներ ձեռնարկեց ընդդեմ Մանայի՝ այն երկրի, ուր երևան եկավ ասուրա-ուրարտական մրցակցությունը: Այստեղ Մանան Ասորեստանի փոխարեն է, իսկ Մալմանասարի մոտ՝ Ուրարտուն Մանայի փոխարեն: Մալմանասարին հաջորդեցին նրա երկու եղբայրները՝ Աշուրդանը (772-754) և Աշուրհիրարին (754-745), որոնց ժամանակ Ուրարտուի մասին ոչինչ չի լսվում: Այդ լուրջությունը միայն Ասորեստանի պարտության հետևանքն է: Ուրարտուն հաղթանակել էր, այսուհետև Մանան կախում ուներ Ուրարտուից: Այդ տեսակետն անվիճելիորեն հաստատվեց անսպասելի մի հայտնագործությամբ: Ասորեստանի մայրաքաղաքի հյուսիսում գտնվող Դեհուկ գյուղում հայտնաբերվել է արձանագրության մի քեկոր, որի վրա հիշատակված են Արգիշտիի, Ծամաշիլուի և Մուշալիմ-Նինուրտայի անունները¹: Խոսքը, անշուշտ, Ուրարտուի և Ասորեստանի միջև զինված բախման մասին է: Ծամաշիլուն թուրքան էր, ասորեստանյան «գլխավոր հրամանատարը» և որպես այդպիսին՝ 780, 770 և 752 թվականներին էպոնիմ: Նա, այսպիսով, կոչվում է Ուրարտուի թագավորի դեմ ոչ թե Հայաստանի լեռներում, այլ Ասորեստանի մայրաքաղաքից 100 կիլոմետր հեռու գտնվող Դեհուկում: Պետությունը լուրջ սպառնալիքի ներքո էր: Ուրարտուն հասել էր իր ծաղկման գագաթնակետին: Նա նույնիսկ առաջնորդում էր եփրատյան պետություններին, որոնց միավորելով, ուրարտական թագավորը ուժեղ կռակիցիա էր կազմել Ասորեստանի դեմ:

Թիզլաթպալասար III-ը (744-724), որը մի եռանդուն իշխող էր, ամեն ջանք թափեց Ուրարտուի առաջխաղացումը կասեցնելու և նրան դեպի իր սահմանները ետ մղելու համար²:

¹ C. F. Lehmann-Haupt-ը, Armenien einst und jetzt, II, 1, էջ 374, պատմում է այդ հայտնաբերման պատմությունը և գնահատում նրա կարևորությունը՝ Das Urartisch-Chaldäische Herrscherhaus, «Zeitschrift f. Assyriologie», XXXIII, 1920: Նաև Materialien zur ältesten Geschichte Armeniens und Mesopotamiens, «Abhandl. d. Gesellschaft d. Wiss., Göttingen», IX, 3, 1907, էջ 45 և 177:

² Paul Rost, Die Keilschrifttexte Tiglat-Pileasers III, 1893: Այս թագավորի արձանագրությունները շատ աղճատված են և քիչ օգտակար կլինեն առանց նրա թագավորության շրջանի էպոնիմների ցուցակի արժեքավոր ծանոթությունների: A. S. Anspacher, Tiglat-Palasar III. Contribution to Oriental History and Philology, № V, New-York, 1912.

Ըստ էպոնիմների ցանկի մի ծանոթության՝ 743 թվականին Թիզլաբ-պալատարը արշավեց Արպաղի դեմ և ջախջախեց Ուրարտուի ուժերը: Դա նշանակում է, որ Արպաղ երկիրը հարել էր ուրարտական կռալիցիային: Եթե Արպաղը, այսօրվա Ռֆաղը՝ Հալեպից հյուսիս, անցնելը թշնամուն, Ասորեստանը Սիրիայից կտրված կլիներ: Դրա համար էլ Ասորեստանի թագավորի առաջին հարվածն ուղղվեց Արպաղի դեմ: Ուրարտուի թագավոր Սարդուրին, իր դաշնակիցների հետ միասին, փութաց օգնել Արպաղին: Թիզլաբպալատարն ասում է, որ Ուրարտուի թագավորը, Մելիտենեի թագավոր Սալունալը, Կունուխիի թագավոր Կուշտաշպին, Գուրգունի (Մարաշ) թագավոր Թարխուպարը, Ագուսիի թագավոր Մատիլուն իջան Արպաղ «ավերելու և կողոպտելու համար»: Ասորեստանի թագավորը հանդիպեց նրանց, Կիշտանի և Խալպիի մոտ, որոնք այսօր դեռևս հայտնի են (Կիշտան և Հալֆաա՝ Եփրատի ափին, Ռում-կալեի մոտ), որտեղ և տեղի ունեցավ վճռական ճակատամարտը: Թիզլաբպալատարի ասելով, ինքը շահեց ճակատամարտը և այնպիսի մի ջարդ տվեց, որ «ձորերն ու լեռները ծածկվեցին Սարդուրի թագավորի մարտիկների դիակներով», իսկ վերջինն իր կյանքը փրկելու համար ստիպված եղավ «մատակ ձի հեծած» փախչել Սարակ լեռը:

Արպաղն այնուհանդերձ շարունակեց քաջությամբ դիմադրել երեք տարի անընդհատ, անշուշտ, ոչ առանց իր դաշնակիցների օգնության:

Իրականում Թիզլաբպալատարի ջանքերը պսակվեցին հաջողությամբ միայն 740 թվականին, երբ նա հպատակեցրեց Արպաղը, Կունուխիին և Գուրգունը հարկատու դարձրեց և բռնազավթման ենթարկեց Ունկին կամ Խաթթինան՝ Անտիոքի շրջանում: Կռալիցիան քայքայվեց, և Սարդուրին մեկուսացվեց: Նպաստավոր պայմաններ էին ստեղծվել Ուրարտուի դեմ պատերազմը շարունակելու համար: Առանց վարանելու Թիզլաբպալատարը 739 թվականին հարձակվեց Ուլլուրա և Խաթթի երկրների վրա, որոնք պատկանում էին Ուրարտուին: Ուլլուրան այսօրվա Խուլպը (կամ Կուլպն) է, որ անվանվում է Խաթթի, իսկ Խաթթի ձա bitani-ն, ի տարբերություն Արևելյան Տիգրիսի ափին գտնվող Խաթթիի, հավանական է Ակբան է, բյուզանդական *Ἀχβαζ*-ը:

Մենք, ուրեմն, Բատմանի ավագանուն ենք: Այդ առթիվ թվարկվում են մեկ տասնյակ բնակավայրեր, որոնցից մի քանիսը հնարավոր է նույնացնել, և այդպիսով երևում է, որ Ուլլուրան ու Խաթթին ընդգրկում են ապագա Արգանենեի համարյա ամբողջ տարածքը: Թիզլաբպալատարը Սարդուրիից խլեց այդ ամբողջը, նահանգ դարձրեց և մի *bel pihati*-ի հրամանատարու-

թյան ներքո դրեց՝ նահանգի մայրաքաղաք դարձնելով Աշուրիկիշա քաղաքը, որը, հավանաբար, Կիշ քաղաքն է¹:

Բատմանի արևմտյան տարածքը, նրա գետաբերանից սկսած մինչև Ինգի, ուրեմն՝ Մեծ Ծովքի սահմաններում, միացվեց Նաիրի նահանգին, այսինքն՝ Ամիդին:

Ամիդի արևմտյան շրջանը մինչև Եփրատ նույնպես պատկանում էր Ուրարտուին, Թիզլաբպալատարը խլեց և միացրեց Խառանի նահանգին:

Բռնատանի ավագանուն, Ջուդիից և Մերնախից հյուսիս՝ Տիգրիսի և Բռնատանի միջև կազմված անկյունը նույնպես պատկանում էր Ուրարտուին: Այդ տարածքը միացվեց Թուշխան, այսօրվա Կուրխ, նահանգին²:

Ասորեստանը կորցրել էր ամեն տեսակ տիրապետություն կամ ազդեցություն Եփրատի ընդարձակ տարածքի և Ջուդիի մարզի շրջանի վրա, գուցե 827-824 թվականների ապստամբության ժամանակ: Ասորական վավերագրերն այդ կորստի մասին և ոչ մի բան չեն հիշատակում:

Երեք տարի հետո, 736 թվականին, Ասորեստանի թագավորը վերադարձավ Ուլլուրա երկիրը կամ, ինչպես ասում է վավերագիրը, երևաց «Նալ լեռան ստորոտում»: Դա Ուլլուրայի լեռն է, ուրեմն՝ հայկական Տավրոսը կամ Մասնա լեռները: Այդ շրջագայության նպատակը հայտնի չէ: Արդյոք այն կատարվեց Ուրարտուի կողմից Ուլլուրան վերագրավելու նպատակով ձեռնարկված փորձը ետ մղելու՞, թե ավելի շուտ՝ Ուրարտուի դեմ նոր ար-

¹ Արգանենեի քաղաքներից մեկն է, ըստ Մովսես Խորենացու Աշխարհացոյցի, էջ 37 (հայերեն):

² Օգտակար ենք համարում հիշատակել խնդրո առարկա երկրների քաղաքիվ անունները՝ Ուլլուրա և Խաթթի. Բիտուրու, Պարխու, Թաշուխա, Մանուուպա, Սաուրդաուրի, Դիուլա, Բաբուլա, Լուխա, Բիսիա, Սիկիպա, Աշուրդաի:

Նաիրիին կցված. Կիսիսա, Իզգիդա, Դիուարի, Արքիսա, Խարքիսիսնան, Թասա, Ինգի, Անգանու, Բենգու, Կալլատա գետը:

Թուշխանին կցված. Ինու, Մասու, Լուրբա, Լուկիա, Շիմիրա, Ուշուրնա, Ուզուրբա, Աուիրի, Գիդուլա և Բիրդաշու լեռը:

Խառանին կցված. Կուտա, Ուրբա, Արանա, Թարա, Ուալլիա, Արբանիա:

E. Foster-ը, Die Provinzenteilung, էջ 85, քննել է այս տարածքները և որոշ նույնացումներ կատարել, որոնցից հետևյալները արժանի են ուշադրության. Դիուարին նույնացված է Հանիի մոտ գտնվող Դիիրի գյուղի հետ. Արքիսան՝ Ֆիս գյուղի հետ (Հանիից 16 կմ հեռու). Անգանան՝ Ենգիենեի (Արգանայից 10 կմ հեռու). Արբանիան՝ բյուզանդական Արարենի (այսօրվա Ջերմուկը՝ Եփրատի ափին). Ուշուրնան՝ Մերնախ-դադի (Ջուդիի հյուսիսային մասը). Սաուրդաուրին՝ Պատիզգերյան քարտեզի Սարդեբարի և Պաղոմեոսի Սարդերայի հետ:

Մենք ավելի վստահությամբ կարող ենք ավելացնել, որ Կելլիսան հայկական Ջիսի գյուղն է, Իզգիդա, Ագոն, երկուսն էլ Սիվանի (= Մալաթիային) գավառակում են: **B. T. Maerckx-ը**, էջ 624. աշխ., էջ 148-149: Բիսիան՝ Բիշին է, Սդերդի կամ Սիրիտի մասերից մեկը, իսկ Բաբուլան կարող է Բեբլը լինել՝ նույնպես Սիրիտում: Սաուրդաուրին կարող է լինել Սարդարեն, որը Սիվանում մի գյուղ է, տե՛ս **B. T. Maerckx-ը**, էջ 624. աշխ., էջ 148:

շավանք կազմակերպելու մտադրությամբ համապատասխան հող նախապատրաստելու համար:

Ինչևհետև, հաջորդ տարին, 735 թվականին, նա մտավ Ուրարտու, առաջ խաղաց մինչև նրա մայրաքաղաք Տուրուշպա, կամ Տուշպա, և այն պաշարեց: Քաղաքը հաջողությամբ ինքն իրեն պաշտպանեց և ասպատակողին ստիպեց պաշարումը վերացնել: Թիզլաթպալասարը «ջարդ կատարեց և վնասներ պատճառեց, քաղաքի դիմաց իր արձանը թողեց և ետ քաշվեց, անցնելով երկրով մեկ՝ վերից վար, 60 քերու տարածություն, առանց որևէ դիմադրության հանդիպելու»:

Հնարավոր չէ ասել, թե Ասորեստանի թագավորը որ կողմից մուտք գործեց Ուրարտու: Հավանական է, որ նա հետևել է Սալմանասարի և Թիզլաթպալասար I-ի ճանապարհին: 60 քերու հեռավորությունը 300-350 կիլոմետր է՝ «Ուրարտուի միջով մեկ ծայրից մյուսը անցում»¹: Դա կկազմեր մի ճանապարհի Տիզլաթի ակունքի մոտ գտնվող Արսանիայի անցքից մինչև Վանա լճի ծայրը և այնտեղից, մայրաքաղաքի վրայով, մինչև ուրարտու-խուրուշկիական սահմանը՝ Ջուլամերկի շրջանում:

Այդպիսով, Թիզլաթպալասարը Սարդուրիին դուրս բերեց Եփրատի հովտից և Տիզլաթի ակունքների շրջանից, բայց Ուրարտուի ազդեցությունն անադարտ մնաց Ջարի ավազանում, Խուրուշկիայում, Մուծածիրում և Մանայում: Այդ ազդեցությունը վերացնելու ջանքը բաժին է ընկնում Սարգոնին:

3. ՄԱՐԳՈՆ Ի ԵՎ ՈՒՐԱՐՏԱ I

Թիզլաթպալասարից հետո թագավորում է Սալմանասար V-ը (724-720): Ոչ մի ընդհարում Ուրարտուի հետ: Նրա թագավորության միակ ռազմական իրադարձությունը Սամարիայի երեք տարվա պաշարումն է, որի հիշողությունը պահպանել է Հին Կտակարանը²: Նրա հաջորդ Սարգոնը (720-705) շատ գործունյա նոյն ժամանակաշրջանում³: Նա նվաճեց Բաբելոնը և ինքն

¹ Berru-ն մի չափ է, որ առաջներում կարողացվում էր kasbu և որը համապատասխանում է սումերական danna-ին՝ «կրկնակի ժամ» հեռավորություն: Տ. Թյուրո-Կանմենը, Journal Asiatique, 1909, էջ 98-99, տարբերում է թագավորական քերու՝ 12.028 մետր, տվորական քերուից՝ 10.692 մետր և Սարգոնյան դարաշրջանի քերուից՝ 5-6 կիլոմետր: Berru-ն պարսկական երասախի նախատիպարն է՝ 5 1/2 կիլոմետր կամ 30 ստադիոն (ասպարեզ): Թիզլաթպալասար III-ի մոտ քերուն, անշուշտ, վերջին արժեքն ունի:

² Դ. Թագաուրաց, ԺԵ, 6, ԺԸ, 11:

³ Տարեգրությունը, Հիշատակարանները և Սարգոնի այլ արձանագրությունները կարողացված և բարգձմանված են Հուգո Վինկլերի կողմից՝ H. Winckler, Die Keilschrifttexte Sargons, 1889: Նիմրուդի արձանագրությունները՝ Գլանը, և Ցանկերը՝ E. E. Feiser, Keilinschriftliche Bib-122

իրեն նրա թագավոր հայտարարեց: Այդպես խոնարհեցնել մի երկիր, որին պարտական էր Ասորեստանը ամբողջ իր մշակույթը՝ քաղաքական սխալ էր: Բաբելոնը նրան այդ բանը չի ների, և երբ Ասորեստանի համար ճակատագրական ժամը հնչի, ռիսկալի Բաբելոնն առաջինը կելնի նրան վերջին հարվածը հասցնելու¹:

liotheek, E. Schrader, II, էջ 35-81: Տարեգրություն՝ A. Lie, Inscriptions of Sargon, II, part I, Paris, 1929.

¹ Ժամանակագրական դիտողություն - Հ. Վինկլերը Սարգոնի թագավորության տարին համարում է 721 թվականը, 719 թ. նրա անվանակրթությունից երկու տարի առաջ: Այդ թվականը, որ ընդհանրապես ընդունված է, մեր կարծիքով ճիշտ չէ: Այն հանգամանքը, որ Սարգոնը 719 թվականին էլանին էր, ենթադրել է տալիս, որ նրա թագավորությունը տեղի է ունեցել նախորդ 720 թվականին: Նրա նախորդ Սալմանասար V-ը Թիզլաթպալասարին հաջորդել էր քերտի 25-ին, և որովհետև նա էլանին էր 723 թ., քերտի 25-ը ընկնում է 724-ին: Բաբելոնական ժամանակագրության համաձայն, նա մտավ իր թագավորության հիմնադրող տարում, նույն քերտ ամսում, այսինքն՝ թագավորեց 724-ից մինչև 720 թվականը: Նույն տարում և նույն ամսի 22-ին նրան հաջորդեց Սարգոնը և, ըստ այնմ, հաջորդ 719 թ. նա հանձն առավ անվանակրթությունը:

Այդպիսով դեմ կատարված արշավանքի պատմությունը Սարգոնի թագավորությունը հաշվում է էլանին տարվանից սկսած և այդ արշավանքը տեղավորում նրա թագավորության իններորդ տարում, այսինքն՝ 711 թվականին, մինչդեռ Տարեգրությունը, որ գահակալության սկիզբը համարում է 720 թվականը, նույն արշավանքը դնում է տասներկերորդ տարում, որը համընկնում է 710 թվականին:

Բաբելոնական ժամանակագրությունը Սարգոնի թագավորությունը հաշվում է նրա գահակալության օրից, այսինքն՝ 720 թվականից: Սարգոնը մտավ 705 թվականին, որն իր էլանինի 15-րդ տարին է՝ 719-ից հաշված, մինչդեռ ժամանակագրությունը նրա մահը տեղավորում է 16-րդ տարում, որտեղից կարելի է եզրակացնել, որ նա հաշվում է 720 թվականից:

Մարգոնի թագավոր Սարգոնի-ավալու-իդինը, Մուք Գրքի Մերոդախ-Բալադանը՝ հաջորդ հիսան ամսին (տարվա առաջին ամիսը), որտեղից հետևում է, որ Մերոդախ-Բալադանի առաջին տարին համապատասխանում է Սարգոնի երկրորդ տարվան: Բաբելոնական ժամանակագրության համաձայն, Մերոդախ-Բալադանը իր թագավորության 12-րդ տարում պարտվեց Սարգոնին, իսկ Սարգոնի թագավորության 13-րդ տարում վերջինը Բելի ձեռքը բռնեց: Տարեգրությունը Մերոդախի պատմությունը տալիս է Սարգոնի 12-րդ տարում, բայց վերջում ավելացնում է, որ նա Բելի ձեռքը բռնեց հիսան ամսին՝ ուրեմն՝ հաջորդ տարում, իր թագավորության 13-րդ տարում, համաձայն ժամանակագրության, այսինքն՝ 708 թվականին: Ժամանակագրությունը, ուրեմն, նույն մեկնակետն է նկատի առնում և համաձայն է Տարեգրության հետ, այսինքն՝ 720 թ.: Կա միայն մի անհամաձայնություն կամ շփոթ, այն է ժամանակագրությունը Մերոդախի պարտությունը դնում է նրա թագավորության 12-րդ տարում, մինչդեռ Տարեգրությունը այն պատմում է Սարգոնի թագավորության 12-րդ տարում:

14-րդ տարում, ուրեմն՝ 707 թ., ըստ ժամանակագրության, Սարգոնը մնաց երկրում. 15-րդ տարում՝ 706 թ., նա տեղափոխեց ստավանքներին, իսկ 16-րդ տարում՝ 705 թ., նա արշավեց Թաբալի դեմ, որտեղ և սպանվեց: Արտ ամսի 12-րդ օրը նրան հաջորդում է Սեննաքերիբը: Արձանագրության մի բեկոր Կունուխի դեմ կատարված արշավանքը տեղադրում է Աշուրուպպուի էլանինի տարում՝ 707 թ. (և ոչ թե 708, ինչպես ցույց է տալիս Հ. Վինկլերը՝ Einleitung, XLIII). Տարեգրությունն այն տեղադրում է 14-րդ տարում: Հետևաբար, եթե 14-րդ տարին համաձայնում է 707 թ. հետ, առաջին տարին կլինի 720 թ.: Ահա մեր տեսակետի մի դրական ապացույց: Արշավանքը, անշուշտ, ղեկավարվել է թուրքաճի կողմից, որովհետև այդ տարին Սարգոնը «մնաց երկրում»:

Տարեգրությունը թագավորության սկզբին՝ ris saruti, որ նա հաշվում է առաջին քեսու՝ «թագավորության առաջին տարին», հաղորդում է երկու իրադարձությունների մասին՝ Սամարիայի

Մարզոնը ծառացավ նաև Միրիայի պետությունների դեմ: Համատը, Արպաղը, Դամասկոսը, Մամարիան դաշինք կազմեցին ասորական տիրապետությունը թոթափելու համար, բայց Կարկարի ճակատամարտում հաղթվեցին և տանուլ տվեցին խաղը:

Մարզոնի առաջխաղացումը դեպի Միրիա և Պաղեստին մինչև Գազա, անհանգստացնում էր Եգիպտոսին: Նա Գազային օգնեց, բայց անհաջող: Միջագետյան քաղաքականության ասպարեզում Եգիպտոսի երևան գալը ուշադրության արժանի երևույթ է:

Մարզոնը առանձնապես զայրացած էր Ուրարտուի դեմ, որին համարում էր եփրատյան և անդրեփրատյան պետություններում Ասորեստանի դեմ ուղղված ապստամբական շարժման պատասխանատու, իսկ այդ պետություններն էին՝ Կունուխին, Գուրգույնը (Մարկաշին), Խիլակկուն, Թարալը, Մելիդը, մեկ կողմից, և հակադիր կողմի երկրները՝ Խուրուշկիան, Մուծաժիրը, Մանան և մյուս կողմի հարևան փոքր պետությունները: Այս ճակատում նդված պատերազմը շատ ջանքեր սպառեց:

Ուրարտուի թագավորը, որը դիմադրում էր Մարզոնին, Ուրսան կամ Ռուսան էր: Այն հաճախակի կրկնված կարծիքը, որ, իբր թե, Թիզլաթպալասարը ջախջախել էր Ուրարտուի հզորությունը, հերքվում է Մարդուրիի հաջորդ Ռուսայի եռանդուն գործունեությամբ: Մարզոնն իրավունք ուներ ասելու, որ Ռուսան էր ըմբոստություն ներշնչում ու կազմակերպում Ասորեստանի դեմ՝ նրա տիրապետության և կամ քաղաքական ազդեցության տակ գտնվող երկրներում:

առանձն և Մարդուկ-ապու-իդդի (Մերոդախ-Բալադանի) դեմ տարած հաղթանակի: Հիշատակարաններն առաջին հերթին նշում են Մարզոնի տարած հաղթանակը Էլամի թագավոր Խունբանիգաշի դեմ, Դուրիուի մոտ, և Մամարիայի առումը:

Սակայն, ըստ Բաբելոնական ժամանակագրության, Մերոդախ-Բալադանի երկրորդ տարում Էլամի թագավոր Ումմանիգաշը (նույն Խունբանիգաշը) ճակատամարտ տվեց Մարզոնին և Դուրիուի շրջանում նրան պարտության մատնեց, իսկ Մերոդախ-Բալադանը, որ օգնության էր կանչված, չկարողացավ ժամանակին հասնել: Հետևաբար, ասորական վավերագրերն իրողությունն աղավաղել են՝ Մարզոնի կրած պարտությունը որպես հաղթանակ են ներկայացրել՝ մեկնում Մերոդախ-Բալադանի դեմ, մյուսում՝ Էլամի թագավորի դեմ: Կարևոր է հատկապես ճակատամարտի թվականը, Մերոդախ-Բալադանի երկրորդ տարին, որը համապատասխանում է 718 թվականին, որովհետև նա Բաբելոնի գահը բարձրացավ Մարզոնի անվանակիր տարվա նիսան ամսին, 719 թ., ինչպես ասված է վերևում: Դա պարզորոշ կերպով հերքում է Տաբեզոնի ասածը, որը ճակատամարտը տեղավորում է Մարզոնի թագավորության սկզբում: Նրա գահակալության սկիզբը կամ սկզբնատարին տևել է թեբեոի 22-ից մինչև ադարի վերջը (10-րդ ամսի 22-ից մինչև 12-րդ ամսի վերջը), ընդամենը երկու ամիս: Դա բավական ժամանակ չէ երկու հեռավոր արշավանքների համար Մամարիայի և Բաբելոնի դեմ: Գահակալության տարին՝ 720 թ., նա գրավեց միայն Մամարիան, որի պաշարումը սկսվել էր Սալմանասարի ժամանակ և ավարտվել Մարզոնի գահակալության սկզբին: Բաբելոնի արշավանքը պետք է տարվի 718 թ.:

Մանայի գործերը բավականին դժվարություններ պատճառեցին Մարզոնին: Այդ դարաշրջանում Մանայի թագավորը Իրանգուն էր, որը Ասորեստանի հետ լավ հարաբերության մեջ էր: Նրա հարևանները՝ Ուիշդիշ երկրի առաջնորդ Բագդատտին, Չիկիրտուի թագավոր Մետատտին և Անդիայի թագավոր Թիլուսիման, ընդհակառակն, հակված էին դեպի Ուրարտուն: Երկու կողմերի բախումն անխուսափելի էր:

Չիկիրտուի Մետատտին դրդում էր Շուանդուխուլ և Դուրդուկկա կամ Չուրդուկկա քաղաքներին՝ մեջտեղից վերացնել Իրանգուին: 728 թվականին Մարզոնը գալիս հարձակվում է այս ապստամբած քաղաքների վրա, դաժանորեն պատժում նրանց և բնակիչներին տեղահանում: Նույնը կատարում է նա հետևյալ քաղաքների նկատմամբ՝ Սուկկա, Բալա, Աբիտիկնա, Պապա և Լալուկնի, Ռուսայի կողմն անցնելու համար¹:

Սակայն Մարզոնը չի համարձակվում իսկական մեղավորների՝ Ռուսայի և Մետատտիի վրա հարձակվելու:

Իրանգուից հետո իր որդին ու հաջորդը՝ Ազան, Ասորեստանի նկատմամբ վարում է բարյացակամ քաղաքականություն: Ուիշդիշի Բագդատտին և Չիկիրտուի Մետատտին չեն վարանում սպանել Ազային և գահ բարձրացնել նրա Ուլլուսունու եղբորը: Ոճիրը կատարելու դրդողը Ռուսան էր, բայց Ուլլուսունուն մույմպես խառնվել էր իր եղբոր սպանության դավադրությանը: Որպես իր զբաղեցրած գահի հատուցում՝ նա 22 քաղաք զիջեց Ռուսային և, հասկանալի է, Ուրարտուի կողմնակից դարձավ²: Նա բանակցություններ սկսեց երկու երկրների՝ Կարալուի և Ալլաբրայի հետ, որոնք գտնվում էին Մանայի հարավում, Ասորեստանի սահմանագլխին, և նրանց առաջնորդներին՝ համապատասխանաբար Աշշուրիին և Իտտիին, դարձրեց Ռուսայի կողմնակից: Իսկապես, Մարզոնին կամ նրա թագաժառանգին ուղղված մի նամակում գրում են, «որ Աշշուրիին լավ է զգում իրեն, որ նա գնացել է Ուլլուսունուի մոտ և որպես նվեր ստացել հինգ ձի»³:

¹ Տաբեզոնի, I, 1, 40 և 50, Գլան, I, 28, ասում են, որ այդ քաղաքները միատեղ էին գործում Կակմիի հետ, որի ներքո հասկանում են Չիկիրտուն և Անդիան: 8-րդ ուղեքնի մեջ, I, 56, Մարզոնը հայտարարում է, որ ինքը ուզում էր «Կակմեների, այդ չար բշտամիների առջև փակել Մանայի մուտքը», ավելի ուշ, I, 154-155, նա կրկնում է նույն սպանալիքը Չիկիրտուի և Անդիայի մարդկանց նկատմամբ, որոնց առջև, «այդ չար բշտամիների առջև Մանայի երկրի մուտքը» փակեց:

² Տաբեզոնի, I, 75՝ «Ռուսան Ուլլուսունուից խլեց 22 քեթը». բայց ըստ Ցանկեթի, I, 39՝ «Ուլլուսունուն Ռուսայի հետ մեծ հույսեր էր կապում և նրան որպես նվեր տվեց 22 քեթը»:

³ R. U. Pfeiffer, State letters of Assyria, № 209 - R. J. Harper, Assyrian and Babylonian letters, № 1058: Նամակի վերջը, ուր խոսվում է Աշշուր-ի անունով մի սպայի մասին (R. Pfeiffer-ը կարդում է Ašur-uda) և մի տարածքի, որը նախանգ է դառնալու, հետակ չէ:

715 քվականին, իր թագավորության վեցերորդ տարում, Սարգոնը գնում է հավատարիմ Ագայի սպանության վրեժը լուծելու: Նա մորթել է տալիս Բագդատտիին, բայց ներում է Ուլլուսունուին և նրան հաստատում իր գահին: Աշշուրին, որպես դավաճան, նույնպես մորթվում է, իսկ Իտաին արտոբվում է Համաա¹:

Ուլլուսունուն երկրի մի քաղաքականություն էր վարում: Հիմնականում նա ծառայում էր Ռուսային, նրա շահերն էր պաշտպանում, բայց գիտեր փոշի փչել Սարգոնի աչքերին և նրան վտահեցնել իր հավատարմության մասին, որպեսզի իր երկիրը փրկի կործանումից:

Հենց որ Սարգոնը մեկնեց, Ուլլուսունուն սկսեց մեքենայությունները, այս անգամ իշխան Դայուկուի հետ, որի անունով իր երկիրը կոչվում էր Բիթ-Դայուկի և գտնվում էր Կարալլուի մոտ: Դայուկուն նույնպես Ուրարտուի կողմն անցավ: 714 քվականին, թագավորության յոթերորդ տարում, Սարգոնը մի անգամ ևս վերադառնում է Մանա, բռնում անհավատարիմ իշխանին և իր ամբողջ ընտանիքով արքայություն Համաա, ուր արքայվել էր Ալլարայի Իտաին: Նա Ռուսայից խլում է Ուլլուսունուից ստացած 22 քաղաքները: Նա նույնիսկ հայտնում է, թե հասել է Թիլուսինայի երկիրը՝ Անդիան, որից, իբր, խլել է Թուսյադիի շրջանը՝ ութ բերդաքաղաքով:

Այդ արշավանքի ընթացքում Սարգոնը հարկ է գանձում Խուրուշկիայի թագավոր Յանգուից: Ուլլուսունուի մայրաքաղաք Իզիրտունում կանգնեցնում է իր արձանը: Այնուհանդերձ, խռովության դրողը Չիկիրտուի Մետատտին խույս տվեց Սարգոնի դատաստանից: Իրականում Ասորեստանի թագավորն իր նպատակին չհասավ: Երեք արշավանքում ոչնչացրեց միայն երկու հակառակորդի՝ մեդական ցեղերի առաջնորդներ Բագդատտիին և Դայուկուին: Հիշատակված հաղթանակները երևակայական են: Նույնիսկ Կարալլու երկիրը, որ Սարգոնը հավատացնում է, թե ասուրական նահանգ է դարձրել, չմնաց որպես լուրջ նվաճում: Թագավորի մեկնելուց հետո ասորեստանյան կառավարչին վտարեցին և իշխանության գլուխ կանգնեցրին մորթված Աշշուրի իշխանի եղբայր Ամիտաշշիին²: Կարալլուն և Ալլարան գտնվում էին բարձր սարահարթի շրջանում, որը բաժանում է Փոքր Չար, Չաղաթու, Դիալա և Կիզիլ-ուզուն գետերի ջրերը:

Ուրարտուի թագավորը, բացի Մանայից, իր քաղաքական ազդեցությունը տարածել էր մինչև վերոհիշյալ երկրները: Դա անարգանք էր Սարգոնի համար, որին չէր հաջողվել երեք արշավանքներում Ռուսայի ազդեցություն

նից դուրս կորզել ոչ միայն Մանան, այլ նույնիսկ Ասորեստանի սահմաններին կից այն երկու երկրները:

Ռուսան կարողացել էր իր ազդեցության ոլորտն առնել Չիկիրտու երկիրը և Անդիա երկիրը, որոնք գտնվում էին Մանայից արևելք, լեռներում, Չաղաթու գետի և Կիզիլ-ուզունի վտակների մյուս կողմում: Չիկիրտուն Հերոդոտոսի *Σαγάρτοι*, Բեհիստունի (Բագաստանի) արձանագրության Ասագարտան է, իրանական մի հզոր ցեղ է¹: Անդիան այն երկրներից մեկն է, որին Ադադնիրարին ձգտում էր տիրել, և որը տարածվում էր մինչև Կասպից ծովը: Մանայում հաստատուն տեղ ունենալու համար Սարգոնը պետք է ջախջախեր Ռուսայի երկու դաշնակիցների՝ Չիկիրտուի Մետատտի և Անդիայի Թիլուսինայի ուժերը: Այդ նպատակով նա ձեռնարկեց չորրորդ արշավանքը: Անտարակույս այն նույնպես կարժանանար նախորդ արշավանքների վախճանին, եթե ասուրական բանակների բախտը չբերեր՝ այդ դժվարին պահին Ռուսան կռվի էր բռնվել կիսմերական հրոսակների հետ, որոնք հարձակվել էին Ուրարտուի վրա: Սարգոնը օգտվեց Ռուսայի շփոթությունից Ուրարտու ներխուժելու համար:

Այդ արշավանքի պատմությունը գրական առումով շարադրված է շատ խնամքով, Աշշուր աստծուն ուղղված նամակի ձևով: Դա հատուկ կարևորություն է ներկայացնում Ուրարտուի աշխարհագրական և տնտեսական վիճակի համար²:

713 քվականին, ութերորդ տարում, դուզի կամ թամնուզ անսին, Սարգոնը բողնում է իր մայրաքաղաք Կալլուն, անցնում Վերին ու Սառին (Մեծ ու Փոքր) Չար գետերը, Կուլլար լեռան վրայով իջնում Սումբի դաշտը:

Կուլլարը պահպանել է իր անունը. մինչև հիմա Փոքր Չարի կազմած ոլորանում գտնվող լեռը, որ Չագրոս լեռնաշղթային է պատկանում, կոչվում է Կուլլարա-դադ: Սումբի դաշտը Ալուտի շրջանում էր, Չագրոսի ստորոտում: Կուլլարը ճշգրտում է Լուլունու կամ Չամուա երկրի տեղը:

Այնուհետից Սարգոնն առաջ է շարժվում դեպի Սուրիկաշ՝ Մանային սահմաններձ և Կարալլուին ու Ալլարիային հարող գավառը: Մանայի թագա-

¹ Herod., I, 125, III, 95. Ptol., VI, 2, Սագարտացիներին ճշտորեն տեղավորում է Չագրոսից արևելք «Τὰ μὲν ἀνατολικώτερα τοῦ Ζάγρου ὄρους Σαγάρτοι (κατέχουσιν)». Ըստ Գլանի, I, 12, Սարգոնը գրավում է Կարալլուն և Պաղդիին: Վերջինս ասուրական սահմանային կայան էր, որ հաճախ գտնվում էր Մանայի տիրապետության ներքո:

² F. Thureau-Dangin, Une relation de la huitième campagne de Sargon, 1912: Մեկ ուրիշ պակասավոր պատճեն հրատարակված է Վ. Շրադերի կողմից. V. Schrader, Keilinschrifttexte aus Assur (37, «Wissenschaftliche Veröffentlichungen der Deutschen Orient-Gesellschaft», 1922, Heft. 2, № 141, էջ 91): Ֆ. Թյուրա-Դամսենի կողմից՝ իր հոյակապ հատորում ներկայացված արշավանքի ճանապարհացույցը շատ կետերում ճշգրիտ չէ: Համեմայնելիս, մենք այլ կարծիք ունենք:

¹ Այս կետը Տարբերությունում աղճատված է (I, 64-65), լրացվում է Ցանկերով, I, 55-56:

² Տարբերություն, I, 140-141:

վոր Ուլլուսուունն Իզիրաու մայրաքաղաքից գալիս է մինչև Մինիխինի՝ իր երկրի սահմանային բերդը, որպեսզի ներկայանա Ասորեստանի թագավորին: Ալլաբրիայի թագավոր Բել-ապալ-իդդինան նույնպես դիմավորում է թագավորին: Սարգոնը ընդունում է նրանց հարկը և իջնում դեպի Պարսուաշ:

Մտրիկաշը գտնվում է Բանեի (Բերոզե) շրջանում, Մինիխինին գուցե Միմախն է, Բանեից դեպի հյուսիս փոքր հեռավորության վրա: Ալլաբրիան և Կարալլուն գտնվում են այն լեռներում, որոնք բաժանում են Ջաղաթուի և Փոքր Ջաբի վտակներից մեկի ջրերը¹:

Պարսուաշում Սարգոնը Նամրիի, Մանգիրուտուի, Բիթ-Աբդադանիի և մարերի առաջնորդներից հարկ ստացավ: Մենք Պարսուաշը տեղադրում ենք Շիրվան գետի շրջանում, Ջաղաթու վտակ Խորխուրայի ակունքների մոտ և Արդեվանի արդի նահանգի հյուսիսում թվարկված երկրներում:

Սարգոնը Պարսուաշից գնում է Մանայի նահանգ Միսի և մտնում Սիրդակկա կամ Ջիրդիակկա բերդը, որտեղ նրան էր սպասում Ուլլուսուունն: Նշենք, որ Ասորեստանի թագավորը մախ առաջ է խաղում դեպի արևելք՝ մեղական հզոր ցեղերի վրա, վատահ լինելու համար, և ապա վերադառնում դեպի Մանա, Ջիրդիակկա: Նա աշխատում է այստեղ ևս իր դիրքը հաստատուն դարձնել, նախքան ուղղվել դեպի Ջիկիրաու, որը արշավանքի նպատակն էր: Ուլլուսուունն, Սարգոնին հաճելի լինելու նպատակով, Ջիրդիակկայում արդեն պատրաստել էր ասորական բանակի համար ուտեստ՝ ալյուրի պաշարներ և գինի: Նրա անդրանիկ որդին Ասորեստանի թագավորին դիմավորեց հարուստ նվերներով: Նա խնդրեց թագավորից՝ «փակել չար թշնամի կակմենների առջև իր երկրի մուտքը, Ուրսային պարտության մատնել»²:

¹ Ֆ. Թյուրո-Դանժենի կողմից վկայակոչված մի բեկորի համաձայն, 624. աշխ. էջ 4, ծան. 1, Ուլլուսուունն «իր մայրաքաղաք Իզիրաուից վեց քեքու հեռավորության վրա շատապ դուրս է գալիս և ներկայանում Սարգոնի առջև Ալլաբրիայի Լարունտուն»:
² Վեց քեքու հեռավորություն ունեցող այդ վայրն, անշուշտ, Մինիխինին է, ուր Ուլլուսուունն սպասում էր Ասորեստանի թագավորին, և ոչ թե Լարունտեն, ինչպես կարծում է Ֆ. Թյուրո-Դանժենը: Մինիխինից Ուլլուսուունն թագավորը գնաց Լարունտեն՝ Ասորեստանի թագավորին ներկայանալու: Վեց քեքու հեռավորությունը համարյա 30-35 կիլոմետր է: Եթե Մինիխինին Միմախն է, Մանայի մայրաքաղաք Իզիրաուն կդառնա Բերդիզորը: Է. Ֆորրերն Իզիրաուն նույնացնում է Սակիզի հետ:

Ալլաբրիան Թատարայի վերին հովտում չէ, այլ ավելի հարավ՝ Փոքր Ջաբի արևելյան վտակ Շիրվան գետի վրա:

² Կակմենները Ջիկիրաուի և Անդիայի բնակիչներն են: Սարգոնը այստեղ ևս շոշափում է Ռուսային, թպառակ արշավանքի նպատակը սահմանափակվում էր այս երկու երկրներով: Բախտի բերումով էր, որ Սարգոնն իր զենքերը դարձրեց Ռուսայի դեմ: Ինչ որ մա ասում է Ռուսայի մասին՝ հետագա նկատատումներ են:

Սարգոնը խոստացավ կործանել Ուրարաու երկիրը և «խաղաղություն տալ Մանայի դժբախտ ժողովրդին»:
Սարգոնը խնջույք սարքեց ի պատիվ Ուլլուսուունի՝ նա հրաշալի սեղան բացեց և Ուլլուսուունին ու նրա մեծամեծներին նստեցրեց ասորեստանցիների հետ: Մանա երկրի և Մեդիա երկրի միջև ցցված լեռների Գիզիլունդի երկրի առաջնորդները նույնպես եկան Ջիրդիակկա և իրենց հարկը մատուցեցին՝ իրենց կյանքը փրկելու և երկիրը կործանումից ազատելու համար:

Սարգոնը նրանց վրա կուսակալ նշանակեց, որն ենթարկվում էր Պարսուաշի իր կառավարչին: Սահմանային նահանգ Միսին հավանաբար զբաղեցնում էր Ջաղաթու գետի հովիտը, Ջունիան-Սահաբի մոտ, Սակիզի ճանապարհի վրա: Եթե Ջիրդիակկան Սակիզ բնակավայրի վրա չէր, համեմայն դեպս գտնվում էր Սահաբի շրջակայքում:

Այս միջոցներով իր քիկունքն ապահովելուց հետո Սարգոնը անցնում է 30 քեքու երկար ճանապարհ և հասնում Մանայի մեծ բերդ Պանգիշ, որը հսկող կայանի դեր էր կատարում Ջիկիրաուի և Անդիայի երկրների նկատմամբ: Սարգոնը, ուրեմն, այս երկու երկրների մուտքի մոտ էր գտնվում: Նախքան այնտեղ մտնելը, նա ամրացնում է Պանգիշի պատվարները, այնտեղ կուտակում հացահատիկի, գինու, ձեթի պաշար և տեղավորում ռազմական մեքենաներ՝ անտարակույս, գործողության հեռակետ ստեղծելու համար: Թվում է, թե Ջաղաթուի հոսանքը Մանայի արևելյան սահմանն էր կազմում:

Ջիրդիակկան նրա ակունքների մոտ էր, իսկ Պանգիշը՝ նրա գետաբերանի մոտ, համարյա արդի Միանդարի շրջանում¹:

Վերջապես, Սարգոնը անցնում է Իշտարաուրա գետը, որ կարող էր միայն Ջաղաթուն լինել, և մտնում է Ջիկիրաուի նահանգ Աուկանեն: Երկրի թագավոր Մետատտին, Սարգոնի մտենալը լսելով, ամբողջ ժողովրդին տեղափոխում է լեռները, ապահով տեղ, իսկ ինքն իր Պարդա նստավայրը բողոքելով՝ իր զորքերը տանում է Ռուսային օգնության: Ասորեստանի թագավորը ավերում է երկիրը, թալանում և այրում 12 բերդաքաղաք՝ շրջակա 84 գյուղերով:

¹ Ջիրդիակկայից մինչև Պանգիշ հեռավորությունը ենթադրում է 30 քեքու, մոտ 165 կիլոմետր, որը չի արդարացնում մեր նույնացումը՝ Սակիզից մինչև Միանդար հազիվ հարյուր կիլոմետր է, ոչ ավելի: Ֆ. Թյուրո-Դանժենը շատ իրավամբ նկատում է, որ կասկածելի է, թե Մանայի երկու քաղաքներ իրարից այդքան հեռու լինեին: Սարգոնն արդեն երկար շրջանց արած պիտի լիներ Պանգիշ հասնելու համար, այն դեպքում, եթե թիվը համապատասխաներ իրականությանը (Նեբրածույքում, էջ 6, ծան. 7): Սարգոնն ասում է, I, 128, «որ ինքն անցել էր անհամար բարձր լեռներ, որոնց վրա բարձրանալ և իջնելը շատ դժվար էր»: Հաշվի առնելով այդ մագլցումների ու վայրէջքների բանակությունը, կարելի է ենթադրել, որ անցած ճանապարհը հասնում է 30 քեքուի:

Աուկանեն, հեռակարար, Չիկիբատուի սահմանամերձ ցահանգն է, Միանդարի դիմաց, Ջադաթուի աջ ափին: Այն լեռները, ուր պատասպարվել էր բնակչությունը, կարող են Ջադաթուի և Կարանկուի ջրերը միմյանցից բաժանող լեռները լինել: Պարդա մայրաքաղաքը պետք է փնտրել Մարադայի մարզում, գուցե Կլաջիբում: Մետատախն համարվում էր Ուլլուսուունուի ստորական, և նրա երկիրը այդ իսկ պատճառով չէր կարող Մամայից շատ հեռու լինել¹:

Աուկանեից Մարգոնը մեկնեց Մամայի Ուիշդիշ ցահանգը, որը գրավված էր Ուրսայի կողմից: Ասորեստանի թագավորը բուռն լուտամքներ է տեղում Ուրարտուի թագավորի հասցեին: Նրան կոչում է «ոճրագործների ցեղին պատկանող լեռնցի, որը կարգ ու կանոն չի ճանաչում, որի շրթներն ատամների արանքից թշնամական և անարդար բառեր են բարբաջում, որ Ըամաշին տված պատվո խոսքը չի պահում, որ ամեն տարի, առանց հոգնելու, խախտում է իր սահմանները»: Այդ ոճրագործը մեծ բանակ էր ուռքի հանել և Ուաուշ բարձր լեռան կիրճերից մեկում դիրք էր գրավել, շուրջն ունենալով իր օգնականներին, անշուշտ, ներառյալ Չիկիբատուի և Անդիայի զորքերն ու «լեռների բոլոր թագավորներին»։ Ուա տեղում էր ասուրական բանակին հանդիպել և անխնայ պարտության մատնել:

Մարգոնը Ռուսայի հակապատկերն է: Նա «այն իսկական թագավորն է, որ բարությանը է խոսում, ատում է սուտը, նրա բերանից չար կամ վնասակար գործեր երբեք դուրս չեն գա, նա աշխարհի իշխանների մեջ ամենահմաստունն է»: Նա ուրարտացի Ուրսայի սահմանները չէր անցել, և ոչ էլ իր երկրի սահմանները, ճակատամարտի դաշտում իր ռազմիկների արյունը չէր թափել:

Մեկ խոսքով, նա ունի բոլոր առաքինությունները, բացի, մենք կարող ենք ավելացնել, համեստությունից: Նա իր ձեռքը բարձրացնում է դեպի Աշշուրը և նրանից խնդրում Ռուսային պարտության մատնել կովի դաշտում: Աշշուրն ընդունում է նրա խնդրանքը: Ասուրական զորքերը լեռների միջով կատարած երկար անցման հետևանքով հոգնել ու հյուծվել էին: Մարգոնը նրանց ճակատամարտի չի մղում: Քանի որ նա չէր վախենում Ռուսայի զորքերի բազմությունից, արհամարհում էր նրա ձիերը, բանի տեղ չէր դնում

նրա սպառազինված ռազմիկներին, Մարգոնը մատում է իր անճանական մարտակառքը, գլուխն է անցնում միայն իր հեծելագործի, որը թշնամի երկրում երբեք իրենից չէր հեռանում, և նիզակի սրընթացությամբ նետվում է Ռուսայի վրա, պարտության մատնում նրան, ահավոր ջարդ կատարում, լեռների գագեթը լցնում է դիակներով, արյունը գետի պես հոսեցնում դեպի անդունդները: Նա գառների մամն սորթում է Ռուսայի այն մարտիկներին, որոնք նեղ ու աղեղ էին կրում, կտրում է նրանց գլուխները: Թագավորական ընտանիքի 260 անդամների գերի է վերցնում, ինչպես նաև կուսակալների, պաշտոնյաների, հեծելագորայինների:

Մարգոնը Ռուսային սեղմում է իր ճամբարին և նետերով ու նիզակներով կոտորում նրա լծկան ձիերին: Ռուսան լքում է իր մարտակառքը, հեծնում մատակ ձին և փախչում է իր զորքերի առջևից: Ասորեստանի թագավորը ջարդուփշուր է անում Չիկիբատուի Մետատախի և հարևան թագավորների զորքերը: Ուրարտուի պարտության մատնված զորքերին հետապնդում է Ուաուշից մինչև Չիմուր՝ Հասպիսի լեռը, 6 քերու հետավորության վրա:

Ռուսան փախչում է «ինչպես գիշերային թռչունը արծվի դիմաց», նա սրտատրոսի լքում է իր թագավորական մատավայրը՝ Տուրուշպան և հասնում լեռների լանջերին, «ինչպես անասունը, որ փախչում է որսորդի հետապնդումից»: Որպես երկնող մի կին, նա նետվում է անկողնու մեջ, հրաժարվում սնունդ և ընպելիք տանել բերանը, անբուժելի հիվանդություն է սրկում ինքն իրեն: Մարգոնը պնդում է, «որ ինքը Աշշուրի հաղթանակն ընդմիշտ հաստատեց Ուրարտուի վրա»: Նա ճգնում է Չիկիբատուի և Անդիայի մարդկանց ու նրանց առջև փակում Մամա երկրի մուտքը: Նա բավարարում է նրանց տիրոջ՝ Ուլլուսուունուի սիրտը՝ «նա լույս սփռեց դժբախտ ժողովուրդների վրա»: Մարգոնն իր պատմությունը վերջացնում է ասելով, որ ինքը ընդհատում է իր արշավանքը դեպի Անդիա ու Չիկիբատու, որպեսզի իր երեսը դարձնի դեպի Ուրարտու:

Այս պատմությունը մի լավ մտուշ է ասուրական զինվորական նկարագրությունների, որտեղ միշտ ավելի շատ գրականություն կա, քան թե ճշգրիտ փաստեր, որոնք կարող են պատմության համար օգտակար լինել:

Մարգոնի զայրույթը Ուրարտուի թագավորի դեմ ցույց է տալիս, որ վերջինը Ասորեստանին շատ անհամապատասխաններ էր պատճառել իր հաճախակի հարձակումներով, որոնք այստեղ միայն ի միջի այլոց են հիշատակվում: Ասորեստանի թագավորը պարծենում է, որ ինքը սիրում է ճշմարտությունը, բայց այնուհանդերձ հեռանում է դրանից ասելով, որ իր դեմքը դարձրեց դեպի Ուրարտու, Ուաուշի ճակատամարտից հետո, այնինչ բացահայտ է, որ նա այդ արել էր հիշյալ ճակատամարտից առաջ: Հիրավի,

¹ Ինքնին հասկանալի է, որ այն մույնացումները, որ մենք մեզ թույլ ենք տալիս կատարել բոլոր վերապահությամբ են արված, բացառությամբ այն դեպքերի, երբ հին անունները պատկանում են մինչև մեր օրերը: Եթե դրանք առաջարկում ենք, ապա միայն պարզաբանելու համար մեր սիրտը Մարգոնի արշավանքների ուղղության և ծավալի մասին, որ հաճախ խիստ չափազանցված է բազմաթիվ գիտնականների կողմից: Օրինակ, Պարդան Մարադայի շրջակայքում տեղավորելով՝ մենք ուզում ենք ասել, որ Չիկիբատուն ամենևին այնպիսի մի երկիր չէ որը տարածված լիներ մինչև Կասպից ծովը, և մույնիսկ մինչև Կիզիլ-ուզունը:

թագավորն ինքը խոստովանում է, որ Ուիշդիշում գտնվող Ուաուշ է հասել «արևելքից արևմուտք» գնալով: Մինչ այդ նա գտնվում էր Աուկանեում՝ Մանայի մոտ, և ավելի խորը չէր թափանցել, նույնիսկ չէր հասել երկրի մայրաքաղաքը: Հետևաբար, Աուկանեից դեպի արևմուտք գնալ Ուաուշ հասնելու համար՝ նշանակում էր քաշվել, այսինքն՝ նահանջել դեպի Մանա: Ուիշդիշը, ուր հասնում է նա, Ուրարտուի մի նահանգն էր, որ գրավվել էր Մանայից: Մենք կտեսնենք, որ Ուրարտուի թագավոր Մենուան գրավել էր Մեյշտա քաղաքը (Տաշթեփեի վայրում՝ Ջաղաթուի գետաբերանում), իսկ նրա հաջորդ Արգիշտին՝ Ուշինի քաղաքը, որը, անշուշտ, այսօրվա Ուշնում է: Ուիշդիշը կարող է լինել միայն Ուրմիա լճի առափնյա գոտին, Տաշթեփեից համարյա մինչև Ուշնում:

Ուաուշի անցքը, որտեղ Ռուսան ճամբար էր դրել, մեր կարծիքով Դերբենդի լեռնանցքն է, Ուշնուից տասնհինգ կիլոմետր հեռու, 2000 մետր բարձրություն ունեցող մի լեռան կողմին: Դա, երևի, Ուաուշ լեռն է: Վեց բերու տարածությունը Ուաուշից մինչև Ջիմուր, որը 30-35 կիլոմետր է անում, ճիշտ և ճիշտ Դերբենդի ու Ջազրոսի լեռնաշղթայի Կելիշին լեռնանցքի միջև եղած հեռավորությունն է: Այս լեռնանցքով է, որ Ռուսան իր պարտությունից հետո փախած կլինի, որպեսզի մտնի Մուծածիր, որը Ուրարտուին բարեկամ և ստորակա երկիր էր:

Ըստ ավելի հավանական է, որ Ռուսան իր ուժերը կենտրոնացրել էր Մուծածիրի մոտերքում, Բաշկալայի մոտ՝ Ուրարտուի սահմանամերձ կայան Ուեխում: Նա երկու զորամաս էր ուղարկել Մուծածիր, ինչպես մենք կտեսնենք ներքևում: Եթե նա չի ընտրել Ջազրոսի և Ուրմիա լճի միջև եղած ճանապարհը՝ Դերբենդ իջնելու համար, ուրեմն Կելիշինի¹ վրայով է մտել Մուծածիր:

Ուիշդիշը տարածվում էր դեպի հյուսիս քավական հեռու, եթե հաշվի առնվի այն, որ «նրա քաղաքները երկնքի աստղերի նման անհամար էին»: Ասորեստանի թագավորը հողին է հավասարեցնում նրա քաղաքների հաստատուն պարիսպները, փշոելով «ինչպես հողամաններ», գրավում հացահատիկի պահեստները բանակի համար:

¹ Ֆ. Թյուրո-Դանթենը Սարգոնի արշավանքի իր գեղեցիկ հրատարակության ներածականում առաջարկում է բոլորովին տարբեր երթուղի, որի համաձայն Սարգոնը անցել էր Պանգիշից դեպի Սոհենդ, շրջանցել էր Ուրմիա լիճը և Թավրիզի ու Խոյի վրայով առաջ խաղացել դեպի Վանա լիճը: Այս երթուղին հնարավոր չէ հիմնավորել: Դժվար է ապացուցել, որ Մանան և Ուրարտուն Ուրմիա լճի արևելքում տիրույթներ ունեին:

Սարգոնը Ուիշդիշից մեկնում է Ուշկայա՝ Ուրարտուի սահմանամերձ կայանը, «Ջարանդա նահանգի մուտքի մոտ և Մուրի նահանգի վերևում, որ Ուրարտուի բնակիչները կոչում են Մանա երկիր»:

Հետևաբար, կարելի է ասել, որ Մուրին նախապես պատկանում էր Մանային, որից խլվել էր, ինչպես և Ուիշդիշը, Ուրարտուի կողմից:

Սարգոնը Ուշնուից ուղղվում է դեպի Վանա լճի հյուսիսարևելյան ծայրամասը, ուրեմն, այդ գծի վրա էին գտնվում նրա անցած նահանգները: Գալով նրանց սահմաններին, օգտակար կլինեք դիմել այդ նույն գծի երկայնքին գտնվող այն բաժանումներին, որոնք հայտնի էին հին Հայաստանին:

Ուշկայա քաղաքը կործանվեց, և շրջակա 115 գյուղեր հրո ճարակ դարձան, այնպես որ «ծուխը ամպի նման ծածկեց երկնքի երեսը»: Մուրի նահանգի՝ Սանգիբուտու երկրի սահմանի վրա գտնվող Անիաշտանիա քաղաքն իր 17 գյուղերով արժանացավ միևնույն բախտին: Ուրեմն, Մուրին արևելքից մոտ էր Ջարանդային, իսկ հյուսիսից՝ Սանգիբուտուին: Ուշկայա քաղաքը Ջարանդայի մուտքի մոտ էր, իսկ Անիաշտանիան՝ Սանգիբուտուի սահմանի վրա:

Մանայի երկու հին նահանգները, որ հանձնվել էին Ուրարտուին, գտնվում էին Ուրմիա լճի և Ջազրոսի լեռնաշղթայի միջև: Առաջինը ընդգրկում էր, լճի հարավային ափից բացի, նաև Մարի գավառի շրջանը, երկրորդը՝ Թրաքի գավառը և հին Հայաստանի Էյլի կամ Կուրիճան շրջանը, որը համապատասխանում է Մեր գավառին, Տեր գավառին և այսօրվա Բարադոսին¹: Ուշկայան գտնվում էր Ջուլա գետի ակունքին, որը ողողում է Ջարանդան, հին Հայաստանի Ջարևանդը, և որը Ջարանդայի մուտքը պատնեշող բնույթ ունեւր:

Անիաշտանիա քաղաքը, Ուշկայայի հյուսիսում, նույն գետի վերին հովտի ելքի մոտ, Մուրին բաժանում էր Սանգիբուտու երկրից: Սանգիբուտուն կոչվում էր նաև Բարի²: Պետք է նշել, որ Սարգոնը չի մտել Ջարանդա, այ-

¹ Կեղծ-Մովսեսը, Աշխարհացույց, էջ 32, Մարի, Թրաքի, Այլի կամ Կուրիճան գավառները բնակում էր Պարսկահայք նահանգի մեջ:

² Թրաքին (Tur-abi) Թուր գետի շրջանն է. Կուրիճանը հիշեցնում է Կիլգանը կամ Գիլգանը: Սանգիբուտուն և Մուրին նույն անուններն են, ինչ որ Մուրին: Վերոհիշյալ Սանգիբուտուն, ինչպես նաև Բարին, ուրիշ անուններ չեն, եթե ոչ Բիթ-Բարու, որը Մենասերիքի Պրիզմայում, II, 21, նշված է որպես Էլամի սահմանի վրա գտնվող երկիր: Եթե Մուրին նույն Մուրի անունն է, կարելի է ենթադրել, որ դա Տյաթաքի շրջանն է, որը հռոմեական եռապետ, հռչակավոր զորավար Մարկոս Անտոնիոսը 33 թվականին զիջեց Ատրպատականի թագավորին (Strabo, XI, II, էջ 523): Ֆ. Անդրեսսեն առաջարկել է այդ անունը սրբագրել 'Αλουάκη, որպեսզի այնտեղ ճանաչվի Աղբակ անունը: Ըստ Ստրաբոնի, հայերը Միսրակեն խլել էին մարերից, իսկ Անտոնիոսը այն վերադարձրեց նրանց:

լապես նա կնշեր, որ Չարանդան նույնպես կործանել է. նրա մասին չի խոսում: Չարանդան մնաց արևելք, նրա երթուղուց դուրս:

Թագավորն ասում է, որ Ուշկայայից (ավելի ճիշտ՝ Անիաշտանիայից) հասել է Բարի կամ Սանգիբուտու երկիրը: Սակայն, նախքան այս երկիրը հասնելը, նա մտնում է Դալա երկիրը և քանդում նրա երկու բերդաքաղաքը՝ Թարուին և Թարմակիսան, շրջակա 30 գյուղերով:

Թարմակիսայից գնում է Կիշպալ լեռան ստորոտում գտնվող Ուլխու բերդաքաղաքը Սանգիբուտու նահանգում, և 57 շրջակա գյուղերի հետ միասին հողին է հավասարեցնում:

Ուլխուից Սարգոնը անցնում է մեկ ուրիշ քաղաք, որի անունը ջնջվել է և որը «բերդաքաղաքների գլխավորն էր Սանգիբուտուի նահանգում»: Հետևաբար, սա շրջանն է միևնույն նահանգի, որը 21 բերդաքաղաք ուներ, որոնք «չառ վաղ ժամանակից գրավված էին ուրարտական թագավորների կողմից»: 21 քաղաքները «շողշողում էին Արգաբիա լեռների գագաթներին, ինչպես լեռների վրա բուսած խաղողի որթեր»:

Սանգիբուտուի մարդիկ, «նահանգում ապրողները, այդ քաղաքների բուռն բնակիչները», հենց որ լեռների գագաթներին կառուցած իրենց դիտակայաններից տեսան թշնամիներին, մեռյալի գույն ստացան, լքեցին իրենց ամրությունները և փախան լեռները: Սարգոնը նահանգը ծածկում է ինչպես «մորեխների չու, ինչպես երեկոյան մռայլ ամպ»:

Ասորեստանի թագավորը 12 քերու ճանապարհ է անցնում Արգաբիայից Իրտիա քարձր լեռը հասնելու համար և ճամբար է դնում այնտեղ:

Իրտիա կամ Իրիտիա լեռը մեզ ծանոթ է Մալմանասար III-ի արշավանքից: Այն մենք նույնացրել ենք Ալադադի քաղաքի վրա գտնվող մեծ քարե ստորոտների հետ:

Դալան և Բարին՝ կամ Սանգիբուտուն իր երկու մասերով, կոթնած էին Չագրուս լեռնաշղթային, ինչպես Ուիշդիշը և Սուրին. վերջինները տարածվում էին արևելյան գառնիքափի վրա, մյուսները՝ արևմտյան: Դալան կարող է լինել հին հայկական Կոտոր և Նկան ամրոցների շրջանը, ներկա Կոտուրի և Նագանի շրջանը, որը Թոռնավան գավառն էր, Վասպուրականի նահանգում: Այն ժամանակ Բարին կամ Սանգիբուտուն կհամապատասխաներ Մարայի շրջանում Մարդաստան հայկական մեծ գավառին:

Եթե հարցը մարական մի շրջանի մասին է, ավելի հավանական է այն փնտրել Չագրուս լեռնաշղթայից արևելք, որը Հայաստանի և Մարաստանի (այսինքն՝ Ասորպատականի) միջև բնական սահման էր, և այն նույնացնել Սուրբիի հետ:

Մտնալը, Բարդուստի հարևան շրջանը, գուցե կապ ունի Սուրբիի հետ:

Այստեղ Սարգոնը ընդհատում է իր առաջխաղացումը դեպի հյուսիս, դառնում է հյուսիս-արևմուտք, դեպի Ալադադ և կանգ առնում Իրտիայի մոտ: Արգաբիայից մինչև Իրտիա հեռավորությունը 12 քերու կամ 65-70 կիլոմետր է և համապատասխանում է Մարայի շրջանից մինչև Ալադադի մոտերքի հեռավորությանը: Իր ճանապարհին Ասորեստանի թագավորը խարույկի մնան այրում է 146 գյուղ, դրանք կողոպտելուց և «Աշշուրի երկիրը վերադառնալու համար ահագին պաշար» պատրաստելուց հետո:

«Սանգիբուտուի բերդաքաղաքներից Սարգոնը գալիս է Արմարիլի նահանգը»: Դրանից բխում է, որ Արմարիլին Իրտիայի շրջանում էր գտնվում: Արմարիլին Մալմանասար III-ի Արամալին է: Վերջինը Իրտիայից Արամալիի և Չանգիունայի վրայով իջավ լճի ափը, մինչդեռ Սարգոնը Արմարիլիից առաջ է խաղում դեպի Այադի, որը նույնպես լճի ափին էր տեղավորված: Արմարիլիում, Ուրիանդա լեռների ստորոտում, կար 7 բերդաքաղաք և 30 գյուղ: Դրանք անցնելիս թագավորն այցելում է Ուրասյի Ռիար ծննդավայրը և Արբուն՝ Սարդուրիի քաղաքը. նրա եղբայրները բնակվում էին 7 ուժեղ ամրացված քաղաքներում: Այդ քաղաքները քարոքանդ արվեցին, և Խալդիայի տաճարը հրդեհվեց:

Սարգոնը Արմարիլիից գնում է Այադի, որը երեսուն բերդաքաղաք ուներ «ալեծածան ծովի ափին, մեծ լեռների լանջին», քաղաքներ, որոնք քանդվեցին և շրջակա 87 գյուղերի հետ միասին երկիզվեցին:

Այադիից նա անցնում է Ալուրիա, Կալլանիա, Իննաս գետերը և հասնում է Ուայախ նահանգը, «Ուրարտուի սահմանի ստորոտում», Նաիրի երկրին սահմանամերձ: Նրա բերդաքաղաք Ուայախն ավելի ամուր էր, քան Ռուսայի մնացած բոլոր բերդերը: Նրա կայազորը բաղկացած էր քաջարի ռազմիկներից, այնտեղ էին նաև ռազմական առաջնորդները՝ իրենց զորքերով: Այնտեղ կային և նոր լուրեր հաղորդող լրտեսներ: Նրա 5 բերդաքաղաքները հրո ճարակ դարձան 40 գյուղերով հանդերձ:

Ուայախից Սարգոնը մտնում է Նաիրի երկիրը: Ցանգու թագավորն ընդառաջ է գալիս 4 քերու հեռավորության վրա գտնվող իր մայրաքաղաք Խուրուշկիայից և հարկ մատուցում:

Սարգոնը մտնում է Մուծածիր՝ այս երկրի թագավոր Ուրգանային պատժելու համար: Ասորեստանի թագավորը գայրացած էր Ուրգանայի վարմունքից, որը խուսափել էր դիմավորել և հարգանքներ մատուցել իրեն, ինչպես արել էր նրա դրացի Ցանգուն: Ուրգանան, որպես Ռուսայի դաշնակից, այլ կերպ չէր կարող վարվել: Սարգոնը, խիստ բարկացած, իր բանակի մի ստվար մասն ուղարկում է Ասորեստան և «իր միակ անձնական մարտակառքով ու մեկ հազար հեծելազորով» նետվում է Մուծածիրի քարձր

լեռները: Ուրգանային հաջողվեց փրկվել, բայց Սարգոնի ձեռքն է ընկնում նրա ընտանիքը: Նրա կինը, որդիները, դուստրերը և նրա մարդիկ, նրա ընտանիքի անդամները գերի տարվեցին: Տարվեց նաև 6110 մարդ, 12 ջորի, 380 ավանակ, 525 եզ, 1235 ոչխար¹: Սարգոնը կողոպտում է Ուրգանայի պալատը և Խալդիայի տաճարը և ահագին ավար վերցնում: Պալատից վերցնում է 34 տաղանդ 18 մինա ոսկի, 167 տաղանդ 2 և կես մինա արծաթ: Ինչ-որ աստծո տաճարից՝ 4 տաղանդ 3 մինա ոսկի, 162 տաղանդ 20 մինա արծաթ, 3600 տաղանդ մաքուր պղինձ: Բացի դրանից, հավաքվում են նաև մեծ քանակությամբ սպասք, տարբեր մետաղներից արվեստի առարկաներ, որոնք հաճախ պատված են քանկագին քարերով: Առատ ավարով բեռնավորված, հաղթական թագավորը վերադառնում է իր մայրաքաղաքը:

Սարգոնը լճի ափին գտնվող Այադի հասնելուց հետո հանկարծ ետ է դառնում և փոխանակ դեպի արևմուտք գնալու, շրջվում է դեպի հարավ՝ Խուրուշկիա և Մուծածիր հասնելու համար: Սա Մեծ Չարի ավազանն է, որը տեղացիները կոչում են Էլամունի, ինչպես Սարգոնն է վկայում²: Այադին նույնացվում է հայկական Առեբանի գավառի հետ՝ լճի ծայրի երկու կողմերում: 30 քաղաքները կիսաբոլոր շարված էին Արճեշից մինչև Ջանիկ՝ Էսրակ և Արտավազ լեռների լանջերին, որոնք կարող են մեր բնագրի Ար-սիդուն և Մախուննիան լինել: Այս քաղաքներից Արգիշտիունան և Կալլանիան ամուր էին կառուցված: Եթե Արգիշտիունան Արճեշն է, Կալլանիան պետք է որ Բերկրին լինի: Այդպես էլ Կալլանիա գետը կարող է լինել Բերկրի գետը, որը թուրքերը կոչում են Բենդիմահի: Այլուրիա գետը զուգադիպում է Մարմետին, և հարց է ծագում, թե Այուր գյուղը արդյո՞ք չի պահպանել գետի հին անունը³:

¹ Ուղեքն, I, 349, կրկնված I, 424-ում, որտեղ ոչխարների թիվը 1285 է, բայց Տաբաթու-բյունում, I, 128-129, այս թվերին ավելացված են՝ 6170 բնակիչ, 692 ջորի և ավանակ, 920 եզ, 100. 225 ոչխար:

² Մեկ այլ անհամաձայնություն է. Թյուրո-Դամեթեի և մեր միջև: Այս գիտնականը կարծում է, որ Սարգոնը ճանապարհը շարունակում է լճի երկարությամբ և առաջ ընթանալով Ար-լատի, Բիթլիսի վրայով հասնում է Սաիրո (Սդերո): Ըստ նրա՝ Ուայաիսը զուգադիպում է Բիթլիսի հետ, իսկ Խուրուշկիան՝ Սաիրոյի հետ: Այդտեղից Սարգոնը Բռետանի վրայով պիտի առաջխաղացած լիներ մինչև Մուծածիր: Այս ճանապարհացույցի հեղինակին, ըստ երևույթի, թյուրիմացության մեջ է գցել Նաիրիի հիշատակումը, որը նա շփոթել է Ամեդիի շրջանի Նաիրիի հետ: Ուայաիսը կամ Ուեիսն չէր կարող հետո լինել ռազմադաշտից, որը Մանան էր, և ոչ էլ Մուծածիրից, որտեղից Ուրգանա թագավորը հետևում էր Ուեիսում կատարվող իրադարձություններին: Անշուշտ, նա չէր կարող հետևել, եթե Ուեիսն այնքան հեռավոր շրջանում լիներ և Մուծածիրից բաժանված լիներ ասուրական երկրներով: Չիկիրտուից և Անդիայից հասնել Բիթլիս՝ օգնություն փնտրելու համար, գործնական բան չէր կարող լինել:

³ Այուր հին անունը գուցե պահպանվել է այլուր հայերեն բառի հետ մասնության շնորհիվ:

Երրորդ գետը՝ Իննաան, պետք է լինի Արճակ գետը, թուրքերի Մեհմեդիկը: Ուայաիս նահանգը, որը սահմանաձեռն է Խուրուշկիա-Ջուլամերկին, նույնանուն է Մեծ Ադրակի հետ: Խուրուշկիան կամ Նաիրին, ինչպես Սարգոնն է կոչում այն, Խուրուշկիա անունը վերապահելով դրա մայրաքաղաքին, Փոքր Ադրակն է: Ուայաիս բերդը կարող է լինել միայն Բաշկալան, որը լավ դիրք ուներ ճուղ կիրճը պաշտպանելու համար: Այդպիսով ճշգրտվում է Սարգոնի ճանապարհացույցը. նա Այադից անցնում է Վանի տարածք և հասնում Բաշկալա ու Ջուլամերկ, որտեղից Դիզայի, Ներիի վրայով անցնում է Սիդիկա, որը Մուծածիրի քաղաք է:

Մյուրագործություններն ամփոփելով, Սարգոնն իր ավերած քաղաքների թիվը Ուրարտուի 7 նահանգներում հասցնում է 430-ի: Մեկ ուրիշ վավերագրում այդ թիվը վերածվում է 55 քաղաքի, 11 բերդի՝ 8 նահանգում¹: 7 նահանգները հետևյալներն են՝ Մուրի, Չարանդա, Դալա, Բարի կամ Սանգի-բուտու, Արմարիլի, Այադի և Ուայաիս: Ութերորդը Ուիշդիշն է, որը խլվել է Մանայից: Նախքան Սարգոնի արշավանքի քննարկմանն անցնելը և լուսաբանելն այն ամենը, ինչ որ Սարգոնը պատմում է Ուրարտուի վերաբերյալ (նրա պաշտպանողական աշխատանքների, նրա տնտեսական աղբյուրների մասին), անհրաժեշտ է ծանոթանալ այն տեղեկությունների հետ, որ գոյություն ունեն ասուրական մամականի գրականության մեջ և նոր լույս են սփռում Ասորեստանի՝ Ուրարտուի նկատմամբ ունեցած դիրքի վրա:

Ասորեստանին քաջ հայտնի էր այսպես կոչված service d'information-ը (տեղեկատու ծառայությունը), կազմակերպություն, որին հանձնարարված էր բոլոր հնարավոր միջոցներով (դիտարկումներ, լուսնություն, քանակցություններ, կաշառք) ձեռք բերել տեղեկություններ թշնամի երկրների վերաբերյալ:

Սարգոնի ժամանակ այդ գործակալները հատկապես ակտիվ էին ուրարտական ճակատում: Նրանք ամեն ճիգ թափում էին իմանալու համար այն բոլորը, ինչ տեղի էր ունենում Ուրարտուում: Նրանք տեղյակ էին Ուրարտուի թագավորի ամեն մի քայլին, նրա գորքերի ամեն մի տեղաշարժին: Այդ գործակալների գաղտնի տեղեկությունները, որ թագավորին էին ուղարկվում մամակների ձեռքով, շատ ուսանելի են: Դրանք գրված են պարզ ոճով, ազատ պայմանական ճարտասանությունից, որը հատուկ է պաշտոնական վավերագրերի լեզվին, և կարևոր էջեր են ներկայացնում ճշմարտացի պատմության համար:

¹ Հիշատակարան, I, 42-43: Գումարը չի համապատասխանում պատմության տվյալներին: Այդ հարցին մենք կանդորադառնանք:

Ուրարտական ճակատի վերաբերյալ նամակները մեզ հասել են շնորհիվ Աշուրբանիպալ թագավորի, որը բազմաթիվ նամակներ է հավաքել Նինվեի իր գրադարանի համար: Դրանք հրատարակված են Ռ. Հարպերի մեծ ժողովածուում և մասամբ անգլերեն են թարգմանված Ռ. Պֆայֆերի կողմից¹:

Այստեղ մենք վերաբառադրում ենք մի քանի նամակներ, որտեղ խոսվում է կիմմերների մասին: Դժբախտաբար, այդ նամակները թվագրված չեն: Այստեղ խոսքն Ուրարտուի մի թագավորի մասին է, որը նոր է հաղթվել կիմմերական հրոսակների կողմից: Մեր նպատակն է պարզաբանել այն բավական վիճելի հարցը, թե ո՞վ է Ուրարտուի այդ թագավորը: Մենք կապացուցենք, որ դա Ռուսան էր, և կիմմերական պատերազմում նրա պարտությունն էր, որ հեշտացրեց Սարգոնի թափանցումն Ուրարտու: Աշուր-նիսուան, որ այդ նամակներն ուղղում է ժառանգորդ իշխանին կամ թագավորին, մտավորապես Մծրինի և Տիգրիսի միջև ընկած Թիլլե նահանգի կառավարիչն է: Ինքն էլ դրանք ստացել է ժառանգության գործակալներից:

Ռ. Պֆայֆեր, 8 = Ռ. Հարպեր, 444:

«Իմ տեր թագավորին, քո ծառա Աշուր-նիսուա: Ողջո՛յն իմ տեր թագավորին:

Ուրարտուի հինգ կուսակալներ մտան Ռեխս:

Մեթինու՝ կուսակալ [.....]տեմիի,

Կակկադանու, որ Ուկկայի դիմացն է մնում,

Մակուատա՝ «կուսակալ» Կանիումի,

Միպլիա՝ «կուսակալ» Ալզիի,

Տուտու՝ «կուսակալ» Արմիրալիուի:

Մրանք են նրանց անունները: Ուղտերի քարավանի երեք հրամանատարների հետ միասին նրանք մտան Ռեխս: Այժմ, երբ նրանք իրենց գորքերը բերել են, նրանց բանակն ուժեղացել է: Թագավորը Տուրուշպայից գնաց Կանիում:

¹ R. F. Harper, Assyrian and Babylonian Letters, I-XI vol., 1892-1911. R. Pfoiffer, State Letters of Assyria. A Transliteration and Translation of 355 Official Assyrian Letters dating from the Sargonid Period, 1935. Քսան նամակ ներառյալ մի քանիսը Ուրարտուի վերաբերյալ, թարգմանված Cornelis van Gelderen-ի կողմից, Ausgewählte babylonisch-assyrische Briefe. Beiträge zur Assyriologie und semitischen Sprachwissenschaft, herausg. v. F. Delitzsch und P. Haupt, 1902, էջ 501-545:

Գալով իմ տեր թագավորի «լրտեսների ուղարկում» հրահանգին, ես նրանց ուղարկեցի երկու անգամ. ոմանք վերադարձել և տեղեկություններ են բերել, մյուսները դեռևս չեն վերադարձել»:

Ռ. Պֆայֆեր, 9 = Ռ. Հարպեր, 492:

«Իմ տեր թագավորին, քո ծառա Աշուր-նիսուա: Ողջո՛յն իմ տեր թագավորին: Նիսան ամսի մեկին Ուրարտացին գնում է Տուրուշպայից Էլիսասարու: Կակկադանու թուրթամը գնացել է Ռեխս, նա տարել է Ուրարտուի բոլոր գորքերը: Թագավորը գնացել է Էլիսասարու...» (պակասում է):

Ռ. Պֆայֆեր, 10 = Ռ. Հարպեր, 380

«Իմ տեր թագավորին, քո ծառա Աշուր-նիսուա: Ողջո՛յն իմ տեր թագավորին: Երեք հազար հետևակագոր, կառավարիչներ, սպաներ, որոնք պատկանում են իմ նահանգի դիմաց գտնվող նահանգի կուսակալ Մեթինիին, իմ աչքի առջև գնացին Մուծածիր: Նրանք անցան Սալմու (Սև) գետը: Նրանց լծկան անասունները, Մեթինիի երամակը գնում են առջևից: Ինչ վերաբերում է Սունաին, այն նահանգի կուսակալին, որը գտնվում է Ուկկայի դիմաց, նրա զինվորները ճանապարհ ընկան դեպի Մուծածիր: Ես լսել եմ, որ թագավորը Ռեխս է գնալու: Նա դեռ չի մեկնել»:

Ռ. Պֆայֆեր, 11 = Ռ. Հարպեր, 197:

«Իմ տեր թագավորին, քո ծառա Մեննաքերիք: Ողջո՛յն իմ տեր թագավորին:

Ամեն ինչ լավ է Ասորեստանի համար, ամեն ինչ լավ է տաճարների համար, ամեն ինչ լավ է թագավորի բերդերի համար: Թող թագավորը լավ տրամադրություն ունենա:

Ուկկա երկրից ինձ հաղորդել են հետևյալը. «Երբ Ուրարտուի թագավորը գնաց Կիմմերների երկիրը՝ նրա բանակը լրիվ ջարդվեց: Իսկ թագավորին և նրա կուսակալներին մենք բերինք իրենց մնացյալ ուժերի մտա...»:

Այսպիսին է Ուկկայի տեղեկագիրը:

Աշուր-նիսուան ուղարկել է հետևյալը. այն տեղեկությունը, որ ես նախապես ստացել էի՝ ճշգրիտ է: Ահավոր ջարդ է կատարվել նրանց միջև: Ներկայումս երկիրը խաղաղ է: Նրա մեծամեծներն իրենց տներն են վերադար-

ծել: Նրա թուրքան Կակկադանուն կալանավորված է: Ուրարտուի թագավորն Ուագաունի մարզումն է: Այսպիսին է Աշուր-ճիսուայի տեղեկագիրը: Խալսուի կուսակալ Նաբուլիուն ինձ գրում է հետևյալը. «Երբ սահմանների երկայնքով մեկ գտնվող բերդերի պահակազորքերին ես նամակ գրեցի Ուրարտուի թագավորի մասին տեղեկություններ խնդրելու համար, նրանք ինձ պատասխանեցին հետևյալը. երբ մա հասավ Կիմներների երկիրը, նրա բանակը լրիվ ջարդվեց: Նրա մեծամեծներից երեքն սպանվեցին, բայց ինքը փրկվեց և վերադարձավ իր երկիրը. այնուհանդերձ մա իր ճամբարը դեռ չի հասել: Այդպիսին է Նաբուլիուի տեղեկագիրը:

Մուծածիքի թագավոր Ուրգանան, նրա եղբայրն ու որդին գնացին ողջունելու Ուրարտուի թագավորին: Խուբուշկիա երկրի բանբերը նույնպես գնաց ողջունելու թագավորին:

Սահմանների երկայնքով մեկ գտնվող բոլոր բերդերի պահակազորքերը նույնն են հաղորդում:

Ես ուղարկում եմ տեր թագավորին տիկին Ախատաբիշայի սեղանապետ Նաբուլիուի նամակը, որ բերել են Թաբալից»:

Գործակալները Ուրարտուի թագավորի անունը չեն նշում: Ո՞վ է մա, որ պայքարել է կիմներների դեմ, և ե՞րբ են տեղի ունեցել նամակում հիշատակված իրադարձությունները:

Ամենաարժանահավատ հեղինակությունները, որոնք քննարկել են ասուրական նամակագրական գրականությունը, գտնում են, որ խոսքը Ռուսայի որդու և հաջորդի՝ Արգիշտիի մասին է, և կիմներական ճակատամարտը վերաբերում է 707 թվականին, իսկ ասուրական ճակատում զինվորական տեղաշարժերը՝ 708 թվականին¹: Սակայն Ախատաբիշայի սեղանապետի նամակը, որի մասին Սարգոնի նուղած իր տեղեկագրում նշում է Մեննաքերիքը, բավական է այդ ժամանակագրությունը խախտելու համար:

Ախատաբիշան Սարգոնի դուստրն է, որին մա կնության էր տվել Թաբալի թագավոր Ամբարիդին՝ 717 թվականին, և որի տիրապետությունները մա միևնույն ժամանակ ավելացրել էր: Հակառակ այս շնորհներին, Ամբարիդին անցել էր Սարգոնի թշնամիների՝ Ուրարտուի Ռուսայի և Մուշկիի Միտայի կողմը: Դրա համար մա պատժեց ապերախտ փեսային՝ հարձակվելով նրա վրա և գերի վերցնելով նրան ու կնոջը 712 թվականին, ուրեմն, Ռուսայի դեմ տարած հաղթանակից հետո: Թաբալը մա դարձրեց

պարզապես ասուրական մի նահանգ: Դրանից հետևում է, որ Թաբալից ստացված սեղանապետի նամակն անպայման ավելի առաջ է եղել, քան 712 թվականը, որ Թաբալի կործանման և Մեննաքերիքի հիշատակած իրադարձությունների տարին է, այսինքն՝ Ուրարտուի թագավորի պատերազմը կիմներների դեմ պետք է ավելի առաջ եղած լինի, քան 712 թվականը¹:

Իր հորն ուղղած մեկ ուրիշ նամակում Մեննաքերիքը ասում է, թե՛ պալատի պետի տեղակալը եկել է ինձ մոտ և ասել ինձ. «Ուրգանան գրել է հետևյալը՝ երբ Ուրարտուի թագավորը Կիմներների երկիրը գնաց, նրա զորքերը ջարդվեցին, մա պարտվեց, և Ուասիի կուսակալը սպանվեց»²:

Ուրգանան իր երկրից վտարվել էր Սարգոնի կողմից 713 թվականին, Ուրարտուից նահանջելու ժամանակ: Նրա նամակը գրվել է այս թվականի թամուզ ամսից, երբ Սարգոնը արշավանքի դուրս եկավ, ավելի առաջ:

Վերևում մեջբերված նամակի համաձայն, Ուրգանան իր որդու և եղբոր հետ գնացել էր ողջունելու Ուրարտուի թագավորին: Որդու հիշատակումը այս այցելությունը տանում է ավելի առաջ, քան Սարգոնի կողմից Մուծածիքի կողոպուտը 713 թվականին, որովհետև հենց այդ պահից մա Ասորեստանի թագավորի գերին էր և նրա հետագա ճակատագրի մասին ոչինչ հայտնի չէ:

Ուրգանան, ուրեմն, Ռուսային այցելել էր կիմներական ճակատում նրա պարտությունից հետո: Թուրքան Կակկադանուն, որը գերի է ընկնում ճակատամարտում, նիսան ամսի մեկին գտնվում էր Ուեիսում: Եթե կիմներական պատերազմը տեղի է ունեցել 713 թվականին, որը համարյա ստույգ է, ուրեմն, այն ծավալվել է նիսանի մեկից հետո և թամուզ ամսից առաջ, երբ սկսվեց Սարգոնի արշավանքը, կամ ավելի շուտ՝ Սարգոնի Մամա գալուց առաջ:

Իրադարձությունները իրար են հաջորդել հետևյալ կարգով: Սարգոնը պատրաստություններ է տեսնում Ջիկիրտուի և Անդիայի երկրների դեմ արշավելու համար: Այդ երկրների թագավորները սարսափահար դիմում են Ռուսային: Սարգոնի գործակալը նամակով մախագոուշացնում է նրան՝ «Բանբերները Անդիայի և Ջիկիրտուի թագավորներից եկան Ուեիս: Նրանք նրան (ուրարտական թագավորին) ասացին՝ „Աշուրի թագավորը մեզ վրա է հարձակվելու“ : Երբ Ուրարտուի թագավորը տեսավ բանբերներին, մեկ-

¹ F. Thureau-Dangin, նշվ. աշխ., Նեբաժական, XIV-XV, հենվել է այս փաստի վրա, որպեսզի եզրակացնի, թե կիմներների հաղթանակը հավանաբար նախորդել է 714 թ., այսինքն՝ 713 թ. արշավանքին:

² R. F. Harper, 1079: Նշված է Ֆ. Թյուրն-Դանսենի կողմից (նշվ. աշխ., 15) ըստ R. C. Thompson-ի «American Journal of Semitic Languages», XVII, էջ 165:

¹ A. T. Olmstead, History of Assyria, 1923, զլ. 22, Letters from the Armenian Front, էջ 258-267: R. Pfeiffer, նշվ. աշխ., ուր մա անմուրեք և իզուր մտքով է Արգիշտիի անունը: C. H. W. Johns, Laws, էջ 338:

նեց...»¹: Ուրարտուի թագավորն օգնություն է խոստանում վտանգի ենթարկված երկրներին: Նրա հրամանով իր կուսակալներից հինգը իրենց զորքերով մեկնում են Ռեիս, Ուրարտուի սահմանամերձ կայանը (Քաշկայան կամ նրա մոտ): Սեփինի նահանգի պետը և Ուկկայի դիմաց գտնվող նահանգի պետն ուղևորվում են դեպի Մուծածիր՝ Ուրարտուի ստորակա այդ երկրում դիրք գրավելու համար:

Ասորական արքունիքը մտահոգված միջամտում է և Ուրգանայից ստանում է պատշաճ պատասխան, որը մենք բերում ենք այստեղ.

«Ուրգանայի նամակը պալատի արքունապետին. ողջոյն քեզ:

Այն մասին, որ դու ինձ գրել ես, ահա թե ինչ՝ «Ուրարտուի թագավորը և իր զորքերն եկել են քո կողմերը: Գալի՞ս է նա: Ո՞ր է նա» (ահա իմ պատասխանը)՝ «Ուասիի և Ուկկայի (այսինքն՝ Ուկկայի դիմացի նահանգի) նահանգապետները հասել են, նրանք իրենց աղոթքները կատարեցին տաճարում և ասացին՝ թագավորը գալիս է, նա Ուասիումն է: Մյուս նահանգապետները Մուծածիր կզան ավելի ուշ՝ իրենց աղոթքը կատարելու»: Գալով քո գրածին՝ «Առանց (Ասորեստանի) թագավորի հրամանի ոչ ոքի թույլ մի տուր մասնակցելու պաշտամունքին», (պատասխանում են)՝ «Երբ Աշուրի թագավորը գալիս էր, ես դրի ինձ նրա տրամադրության ներքո. ես պարտական եմ անել այն ամենը, ինչ որ միշտ արել եմ, և դա նրա (Ուրարտուի թագավորի) նկատմամբ պատշաճ պարտականություն է»²:

Մուծածիր եկող Ուասիի և Ուկկայի նահանգապետները հաստատապես Սեփինին ու Մուծածիր են, որոնց Մուծածիր մեկնելը մեզ հայտնի է վերոհիշյալ նամակից: Ուկկայի նահանգապետ ասելով՝ հասկացվում է Ուկկայի դիմացի նահանգի նահանգապետ, որն էր Մուծածիր: Ուկկային քիչ թե շատ անկախ իշխանություն էր: Սեփինի նահանգի անունը բնագրից դուրս է ընկել, բայց հավանական է, որ վերջինը գտնվում էր Բոհատանում, Ջուդիի մոտ:

Ուրարտական զորքերի ներկայությունը Մուծածիրում մտահոգիչ էր Ասորեստանի համար, մանավանդ այն պահին, երբ նա պատրաստվում էր արշավելու Չիկիրտուի և Անդիայի դեմ: Սարգոնի պալատի արքունապետը չի թաքցնում իր մտահոգությունը, այն աստիճան, որ հավակնում է կարծել, թե առանց ասորական իշխանությունների թույլտվության ոչ ոք չպետք է

համարձակվի, նույնիսկ բարի նպատակով, Մուծածիր գալ: Սարգոնի հավակնությունն անհեթեթ է, իսկ Ուրգանայի պատասխանը, որով նա պաշտպանում է պաշտամունքի ազատությունը, պետք է գնահատել ըստ արժանվույն: Ուրարտական ուժերի ներկայությունը Մուծածիրում՝ Սարգոնին արգելակում է Ռովանդուի կարճ ճանապարհով գնալու դեպի Մանա և Չիկիրտու ու նրան ստիպում շրջանցում կատարել Փոքր Զաբի ավազանով: Նիսանի մեկին Ուրարտուի բանակի գլխավոր հրամանատար Կակկադանուն իր ուժերն արդեն կենտրոնացրել էր Ռեիսում, սպասելով իրադարձություններին:

Կինմերական հրոսակների անակնկալ ասպատակությունն ամեն ինչ փոխեց: Ուրարտական բանակն շտապում է ասպատակողների դեմ: Պարտությունը կատարյալ է. ինը գլխավոր առաջնորդներ մնում են ճակատամարտի դաշտում¹, գլխավոր հրամանատարը գերի է ընկնում: Թագավորը փախչում և վերադառնում է Ուազան, որը, գուցե, նույն Ռեիսն է:

Ուրգանա թագավորը, որպես հավատարիմ ստորակա, գալիս իր հարգանքներն է մատուցում և մխիթարում է նրան: Խուրուշկիայի թագավորը նույնն է անում իր պատվիրակի միջոցով:

Այդ ընթացքում Սարգոնն արշավանքի է դուրս գալիս: Հասնելով Չիկիրտուի սահմանին, այսինքն՝ իր նպատակին, հանկարծ նա ետ է դառնում դեպի Ուրարտու: Կարելի է շատ իրավամբ կարծել, որ Ռուսայի պարտության լուրը նրան հաղորդել էր այդ պահին իր որդին՝ Սեննաքերիբը, որն իր հերթին լուրն ստացել էր բազմաթիվ զործակալներից և նույնիսկ Ուրգանայից:

Սարգոնն Ուաուշի ճակատամարտում հաղթանակ է տանում Ուրարտուի թագավորի և նրա դաշնակից Չիկիրտուի և Անդիայի իշխանների դեմ: Ռուսան իր երկիրն է փախչում: Սարգոնը մտնում է Ուրարտու, ավերիչ ասպատակություն է կատարում առաջ խաղալով մինչև Վանա լիճը: Սակայն հանկարծ նահանջում է, որպեսզի շտապ կերպով գնա պատժի Ուրգանա թագավորին՝ «այդ չար լեռնցուն, որն ասպատակել էր, - ասում է նա, - և որն ընդհատել է իմ առաջխաղացումը»²: Այս պատճառաբանությունը համոզիչ չէ: Այնքան հզոր մի թագավոր միշտ բավական ժամանակ կունենար պատժելու Ուրգանայի նման հակառակորդին: Որպեսզի այդ հաղթական առաջխաղացումից հրաժարվեր՝ ավելի լուրջ պատճառներ էին պետք: Թվում է, թե Սարգոնը շարունակում էր երկյուղ կրել Ռուսայից: Նա Ուրգանային

¹ R. F. Harper, 515: Այս նամակը չի մտել Ռ. Պիայֆերի ժողովածուի մեջ: Այն նշված է Ֆ. Թյուրո-Ղանժեհի կողմից, նշվ. աշխ., էջ 6, ըստ Zeidler-ի՝ Le style administratif, էջ 26:

² R. Harper, 409 - R. Pfeiffer, 3: Ուրգանայի պատասխանը ավելի հստակ է, քան երևում է Վ. Շյիի թարգմանության մեջ՝ Recueil de travaux, XIX, 63, կատարված վատ վերծանված տեքստից և վերաբարդված Ֆ. Թյուրո-Ղանժեհի կողմից, նշվ. աշխ., էջ XII:

¹ R. Harper, 646, նույնպես E. Klauber, Assyrisches Beamtentum, էջ 70:
² Ուղեքձ, VIII, 310-311 տողեր:

մեղադրում էր «Ռուսային նենգավոր տեղեկություններ հաղորդելու մեջ»¹։ Ռուսան և Ուրգանան արդյո՞ք չէին մտածում մի գործողության՝ միացյալ հարձակում կատարելու մասին։ Այս հարցը բոլորովին ավելորդ չէ, եթե հիշենք, ինչպես հետագայում կտեսնենք, Ռուսայի որդու՝ Արգիշտիի սպառնալից դիրքը Սարգոնի նկատմամբ, իր հոր մեռնելուց քիչ հետո։

Սարգոնը անցավ Մուծածիր և կողոպտեց թագավորական պալատի ու հալդի աստծու սրբավայրի ամբողջ հարստությունը։ Ռուսան, որ Ուուուշի պարտությունից հետո «երկնող կնոջ նման անկողին էր նետվել, հրաժարվել էր սնունդ ու խմելիք ընդունել, անբուժելի հիվանդություն էր սրակել ինքն իրեն», հենց որ լսեց Մուծածիրի կործանումը, «փռվեց հողի վրա, պատանոտեց իր հագուստները, ազատեց իր բազուկները, [զլխից] պոկեց իր վարսակալը, պռոկեց իր մազերը, երկու բռունցքով սեղմեց իր սիրտը և փորի վրա գետին տապալվեց։ Նրա սիրտը լի էր զայրույթով, աղիքները գալարվում էին բարկությունից, նրա բերանից ցավատանջ ձայներ էին լսվում»²։

Աստրական դպիրի շատախոսության մերքո պետք է հասկանալ, որ Ռուսան հիվանդացել է. հետագա վավերագրերը խոսում են Ռուսայի ինքնասպանության մասին. «Աշշուրի փառքը կործանեց Ռուսային, իր սեփական երկաթյա սրով խոզի նման ծակեց սիրտը և վերջ տվեց իր կյանքին»³։

Սարգոնի ութերորդ արշավանքն ավելի արդյունավետ չեղավ, քան իր նախորդներ Մալմանասար III-ի կամ Թիզլաթպալասար I-ի արշավանքները։ Մի քանի գիտնականներ սովորություն ունեն Սարգոնի հաջողությունները չափազանցել, մինչև իսկ նրան վերագրել ամբողջ Ուրարտուի գրավումը։ Իրականությունը, սակայն, շատ ավելի դժգույն է, և արշավանքի քաղաքական նշանակությունը՝ համարյա ոչինչ։

Մենք կարող ենք կրկնել ժամանակակից պատմաբաններից մեկի լուրջ կարծիքը Սարգոնի մասին՝ «Այնքան խնամքով պատմված ութերորդ արշավանքը միայն սովորական ասպատակություն էր, ցուցադրական ու կործանիչ, բայց տևական հետևանքներից զուրկ։ Արշավանքի պատմությունը արժանի է ուշադրության իր գրական ոճի, Սարգոնի բնավորության լուսարանման և այն զարմանալի հայտնագործության համար, թե ինչպիսի բարձր քաղաքակրթության էին հասել ուրարտական երկրները»⁴։

¹ Տարեգրություն, 11, 123-124 տողեր։

² Ուղերձ. 150-151 և 411-413 տողեր։

³ Տարեգրություն, 137-139 տողեր և Վինկլերի երատարակությանը։ Այս տեղը Տ. Թյուր-Դանթենի կողմից վերանայված է, Ութերորդ արշավանքի ուղերձ, էջ 75, նույնպես Ցանկեր, I, 77։

⁴ A. Olmstead, History of Assyria, էջ 242։

Հետևյալ տարիներին Սարգոնը զինվում է Եփրատից այն կողմ գտնվող փոքր պետությունների դեմ՝ Ուրարտուի հանդեպ նրանց ունեցած քաղաքական ակներև հակման պատճառով, հակառակ վերջինի 713 թվականի պարտությանը։ Այդ պետությունների թագավորները հետզհետե կորցրին իրենց թագերը, և երկրները դարձան ասորեստանյան նահանգներ՝ Թարբալի թագավոր և Սարգոնի փեսա Ամբարիդին՝ 712 թվականին, 711 թվականին՝ Մելիտենեի թագավոր Թարխունագին, 710 թվականին՝ Գուրգուսի (Մարաշի) թագավոր Մուտալլուն. սրանք մինչև իրենց կյանքի վերջը մնացին գերության մեջ։ Ուրարտուի դեմ իր տիրապետություններն ապահովելու համար Սարգոնը կառուցեց հինգ բերդ ուրարտական սահմանի մոտ՝ Լուխսու, Բուրդի, Ամմուրու, Կի(ակա) և Անդուարսալիա։ Այս բերդերի տեղը հայտնի չէ, բացի Կիակայից և, զուգե, Անմուրուից¹։ Սարգոնը խնայեց միայն Կուսմուխի (Կուսմագենե) թագավոր Մուտալլունի և նույնիսկ սիրալի վերաբերմունք ցուցաբերեց։ շնորհեց նրան Մելիդ (Մելիտենե) քաղաքը։ Սակայն դա երկար չտևեց։ 707 թվականին Մուտալլունի հերթն էլ եկավ։ Սարգոնի թուրքանը հարձակվեց Կուսմուխի վրա, կործանեց նրա 62 բնակավայրերը և տեղահանեց ժողովրդին ու թագավորական ընտանիքը։ Մուտալլուն չարաչար պատժվեց տարեկան հարկը վճարած չլինելու համար։ Նա միացել էր Ուրարտուի թագավորին, և դա էր նրա դժբախտության իսկական պատճառը։ Մուտալլուն «անմիա և նենգավոր մարդ էր, - ասում է բնագիրը, - այլև չվախենալով աստվածների անուններից՝ չարություններ էր դավում, մտադրվում էր թշնամանալ, հույս դնելով Ուրարտուի թագավոր Արգիշտիի վրա՝ մի նեցուկ, որը չէր կարող նրան փրկել»։

Արգիշտին Ռուսայի հաջորդն է։ Հետևաբար, Ուրարտուն Եփրատի ավազանում, զոնե իր դաշնակիցների նկատմամբ, դեռևս պահպանում էր իր հեղինակությունն ու ազդեցությունը։ Արգիշտին ավանդական պայքարը շարունակեց Ասորեստանի դեմ Սարգոնի թագավորության վերջին տարիներին և նրա հաջորդ Սեննաքերիբի ժամանակ։

4. ԱՐԳԻՇՏԻ Ի ԵՎ ՄԵՆԱԶԵՐԻԲ

713 թվականի աղետը, հակառակ մի քանի գիտնականների կարծիքի, Ուրարտուի ուժը չէր ջախջախել։ Արգիշտին ավելի ուժգնությամբ վերսկսում

¹ E. Forrer-ը, Die Provinzeinteilung, էջ 75, կարծում է, որ Անմուրուն Կերան-Մարեհի դիմաց գտնվող Նեմերի գյուղն է. Բուրդիքը կամ Պուրալիքը նա Ջիմարայի մոտ գտնվող Պուրտեյլուի մեջ է տեսնում, որը, սակայն, Մելիտենեից շատ հեռու է, ուրեմն և չի կարելի այդ կարծիքն ընդունել։ Անմուրուն, զուգե, բյուզանդական Ամարան է։

է պայքարը և նոր գլուխ է բացում ասուրա-ուրարտական հարաբերությունների պատմության մեջ:

Պաշտոնական գրություններն այս գլխի վերաբերյալ կատարյալ լռություն են պահպանում: Բայց գործակալների գաղտնի զեկույցները մի անգամ ևս անզնահատելի ծառայություն են մատուցում երկու հակառակորդների դիրքը թաքցնող բողոքարձաններով: Պայքարում Ուրարտուն նախաձեռնությունն իր ձեռքն է վերցնում: Ասորեստանը, ընդհակառակն, ստիպված է պաշտպանողական դիրք գրավել: Ահա թե ինչ են ասում այս առթիվ Ամիդի նահանգի կուսակալ Ուպախիսիր-Բելի նամակները:

Ռ. Պֆայֆեր, 6 = Ռ. Հարպեր, 424:

«Իմ տեր թագավորին, քո ծառա Ուպախիսիր-Բել: Ողջո՛ւյն իմ տեր թագավորին:

Երկրի համար ամեն ինչ լավ է: Բերդերի համար ամեն ինչ լավ է: Թո՛ղ իմ տեր թագավորի սիրտն ուրախ լինի:

Ես լրտեսներ ուղարկեցի՝ Ուրարտուից նոր տեղեկություններ ստանալու համար, նրանք լրտեսել և ներկայացրել են հետևյալ զեկույցը. «Մեր դիմացի նահանգապետը ուրարտական Խարդայում է, իր փոխնահանգապետի հետ: Նա պահպանում է sukallu-ի դիմացի շրջանը: Մեկ քաղաքից մյուսը՝ մինչև Տուրուշպա, կայազորները կարգով շարված են»:

Արգիշտին սուրհանդակ է ուղարկել նահանգապետին՝ հետևյալ հրամանով. «Այն գործի մասին, որ ես քեզ հրամայել էի, դու չես կատարի, կերակրիր քո ձին, մինչև որ քեզ նոր սուրհանդակ ուղարկեն»¹: Ինչ վերաբերում է գերյալներին, նրանք պահվել են Էզիատ քաղաքում: Ես ուղարկեցի *խուուայցիներին* քաղաքազլխի հետ միասին: Ես նրանց փութացրի մարտի դաշտով: Նրանց քաղաքապետների փոխանորդը և ինը զինվորներ աղեղով վիրավորվել են, նրանցից երկուսը մահացել են: Նրանց զինվորներից երեքը վիրավորվել են: Մրանք են նրանց տված նոր տեղեկությունները: Պալատի խուուայցիները Եփրատից վերադարձել են ինձ մոտ: Նրանք մեկնեցին իմ sukallu-ի (ներկայացուցիչ) հետ: Ես արագացրի նրանց մեկնումը: Նրանք քաղաքից հեռացան մեկ կամ երկու ընտանիքով:

Թո՛ղ իմ տեր թագավորը գրել տա ցեղապետների մասին: Նրանց հետ կարելի է ուղարկել թագավորական զորքերը: Թո՛ղ նրանք ինձ հետ միասին Շուրուբայի պաշտպանության պարտականությունը կատարեն. մենք պետք է (երկիրը) վերցնենք հունձքից առաջ»:

Ռ. Պֆայֆեր, 5 = Ռ. Հարպեր, 548:

«Իմ տեր թագավորին, քո ծառա Ուպախիսիր-Բել: Ողջո՛ւյն իմ տեր թագավորին: Ողջո՛ւյն թագաժառանգին: Ամեն ինչ լավ է բերդերի համար: Թո՛ղ իմ տեր թագավորի սիրտը ուրախ լինի:

Իմ սուրհանդակը գնաց Ուրարտուի մասին նոր տեղեկություններ բերելու: Նահանգապետը իմ հրամանով, ես նրան ուղարկեցի, նա եկել է: Թագավորի հրահանգների համաձայն, նա նրան (Արգիշտիին) կասի. «Էլ ի՞նչ քարեկամներ ենք մենք, երբ դուք գրավում եք մեր բերդերը: Իսկ ես ի՞նչ պետք է ամեն: Եթե որևէ վնաս եմ պատճառել ձեր սահմաններին և ձեր բերդերին՝ սուրը ձեռքումս է»:

Նրա ուժերը հավաքվել են իր հրամանի ներքո. նա Խարդայի պաշտպանությունն է կատարում: Այդ է նրանից ստացված նոր տեղեկությունը»:

Պետք է նշել, որ առաջին նամակում Ուրարտուի թագավորը հիշատակված է իր անունով: Դա միակ դեպքն է: Այդ նամակների հեղինակը՝ Ուպախիսիրը (կամ Նաշխուրը, ինչպես ասում է Է. Ֆորրերը), կուսակալն էր Ամիդ (Դիարբեքի) նահանգի, որն այլ կերպ կոչվում էր Նաիրի նահանգ: Այդ նահանգը սահմանակից էր Ուրարտուի այն նահանգին, որի կենտրոնատեղին Խարդան էր: Մենք այն նույնացնում ենք հայկական Հարաբերդի (Խարբերդ), այսօրվա Հար-բերդի կամ Խարպուտի հետ¹: Նաիրին, ուրեմն, տարածվում էր մինչև Ալզի ուրարտական նահանգը (հետագայի Անգիտենեն): Այն ցեղապետները, որոնցից Ուպախիսիրն օգնություն էր հայցում, Ուլուբայի և Շուպրիայի (հետագայի Արգանենեն) իշխաններն էին: Նրանք ազատվել էին երկու մեծ հարևանների ազդեցությունից և բուֆերային պետությունների դեր էին կատարում երկու մրցակիցների միջև: Քանի որ նրանք Ամիդ նահանգի հարևաններն էին, պետք է ենթադրել, որ այդ նահանգը Մեծ Շոփքի որոշ մասն էր կազմում:

Նվաստ խոսքերը, որ Սարգոնի հրամանով ասորեստանցի պատվիրակը պետք է արտասաներ Արգիշտիի դիմաց, անսպասելի են երևում և չեն համապատասխանում նույն թագավորի տարեգրության և հիշատակարանների վերամբարձ ոճին:

Նա, որ պարծենում էր, թե Ուրարտուի հարյուրավոր բերդաքաղաքներ է քարուքանդ արել, այժմ հնարավոր է համարում խոսել քարեկամության մասին և հաստատել, որ ինքը ոչ մի վնաս չի պատճառել Ուրարտուի բերդերին:

¹ Մայաֆարկիհի հյուսիսում մի գյուղ կա, որ Հարդա է կոչվում Չաքարիա Հոնտորի Բեք-Հալանն, էջ 172:

Այնուհանդերձ, Ռուսայի հաջորդը բոլորովին տրամադրված չէր գեներալը ցած դնելու, «նա կերակրում էր իր ձիուն», որպեսզի հաշիվները մաքրի մոռացվում, եթե ոչ սնապարծ, մի զավթիչի հետ, որը չափազանցել էր իր կատարած ավերումներն Ուրարտուում: Արգիշտին ճնշում էր Ասորեստանին մույնպես արևելյան Տիգրիսի ավազանում: Մեննաքերիբն իր հորը գեկուցում է, որ նամակ է ստացել, որտեղ Արիանե կրկնում է Ուրարտուի թագավորի հրամանն իր կուսակալներին՝ «Չեր ունեցած գորքերով բռնեցեք Ասորեստանի թագավորի նահանգապետներին Կումայայում և քարշ տվեք նրանց ինձ մոտ»: Մեննաքերիբն ավելացնում է, որ նրանք դեռևս չեն գործադրել հրամանը, բայց Արիանեն շատ մտահոգված է և աղերսում է, որ անհապաղ գորքեր ուղարկվեն:

Երկու այլ սուրհանդակներ մասնակից են այս իրադարձությանը: Ըստ մեկի՝ Ուկկաիի բնակիչները մի սուրհանդակ են ուղարկել Ուրարտու և գրավել են Կումայա և Էլիսիի քաղաքները. ըստ մյուսի՝ Ուկկաին հարձակվել է Արգապիայի վրա, և նրա բնակիչները Մեննաքերիբից պահանջում են ետ մղել ուկկաեցիներին¹:

Տվյալ երեք երկրները՝ Կումայան, Ուկկաին (կամ Ուկկուն) և Արգապիան փոքր իշխանություններ էին ուրարտա-ասորական սահմանների վրա, Արևելյան Տիգրիսի ջրերում կամ ավելի հարավ, մույն դերում, ինչ որ Ուլլուբան ու Շուպրիան՝ Արևմտյան Տիգրիսի ավազանում: Ուկկաին մույնիսկ ներկայացնում էր իրեն որպես թագավորություն, և նրա թագավորը կոչվում էր Մանիաի: Արիանեն, որը Մեննաքերիբից օգնություն էր խնդրում, Արիգանի հետ կառավարում էր Կումայայի երկիրը որպես անկախ կառավարիչ և ոչ թե Ասորեստանի պաշտոնյա: Արիանեն ներկայացնում է իրեն որպես Ասորեստանի կառավարիչ, անշուշտ, իր առաքելությունը ավելի հաջողությամբ պսակելու համար: Ուկկաեցիները հարձակվել էին Կումայայի վրա, անտարակույս, քաջալերվելով Արգիշտիի կողմից, որին սուրհանդակ էին ուղարկել: Նրանք իրենց պատրաստակամությունն էին հայտնել՝ կատարել Արգիշտիի հրամանը, այն է՝ «բռնել Կումայայի կառավարիչներին, այսինքն՝ Արիանեին և Արիգանեին»: Հիշենք, որ ուկկաեցիները վերոհիշյալ նամակում Ռուսայի պարտության մասին հայտնելով, ավելացնում էին՝ «թագավորին վերադարձրինք իր ճամբարը»: Նրանք, ուրեմն, չէին թաքցնում իրենց համակրանքն Ուրարտուի նկատմամբ և, ակներևաբար, կիմներների ասպատակության ժամանակ Ռուսային օգնական գորքեր էին ուղարկել: Այս դրվագն ասպացուցում է, որ Արգիշտի

թագավորն իրեն համարում էր դրոթյան տեր և որ նրա պետության սահմանները տարածվում էին մինչև Արևելյան Խաբուրի ակունքները, ուր գտնվում էին Ուկկաին, Կումայան ու Արգապիան: Վերջին երկիրը մույնպես դժգոհում էր Ուկկաիի ասպատակությունից:

Հետևաբար, ճիշտ չէ պնդել, ինչպես ամուսն են շատ գիտնականներ, թե Սարգոնը հպատակեցրել էր Ուրարտուի արևելյան մասը և այն ավերել:

Սարգոնը տեղի չտվեց Արգիշտիի գրգռումներին: 705 թվականին նա դուրս եկավ Թարալի դեմ, որ կարծես թոթափել էր ասորական տիրապետությունը¹, և անհայտ պայմաններում մահացավ:

Նրան հաջորդեց Մեննաքերիբը (705-681): Նա որոշեց պատժել Ուկկաիին և արշավանքի դուրս եկավ մախ՝ Նիպուրի լեռնցիների դեմ, որոնք չէին հպատակվել Ասորեստանի իշխանությանը: Նիպուրը Ջեզիրեթ իրն Ումարի դիմաց գտնվող Ջուդի լեռն է: Մեննաքերիբը՝ արքայական պատգարակի վրա նստած, իրեն տանել տվեց լեռան զագաթը, ուր «լեռների սառն աղբյուրներից ջուր խմեց» և վերադարձավ իր ճամբարը, որ թողել էր լեռան ստորոտում:

Նա գրավեց յոթ քաղաք, որոնցից Տումուրրին, Կիբշուն, Ջանան ավերեց և երկիզեց²:

Տումուրրին հայ պատմագիրների Տմորիբն է: Կիբշուն այժմյան Գեֆշե գյուղն է՝ Ջախոյից փոքր հեռու, Արևելյան Խաբուրի ափին:

Ապա Մեննաքերիբը «ետ դարձավ և մեկնեց Դայե երկրի Ուկկի քաղաքի անհնազանդ թագավոր Մանիաիի դեմ»: Անանց ճանապարհով, սեպածև լեռների միջով, «որոնցով իր նախնիներից ոչ մեկը չէր թափանցել», թագավորն անցավ Ամարա և Ուպպա լեռների ստորոտը: Նա այնտեղ թողեց իր ճամբարը, իսկ ինքը, պատգարակի վրա բազմած, իր պահակախմբի ընկերակցությամբ առաջ խաղաց դեպի մեծ լեռների անցքը: Այդ տեսնելուն պես Մանիաին լքեց իր գահանիստ ապարանը և անհետացավ: Մեննաքերիբը հարձակվեց Ուկկուի վրա, կողոպտեց պալատը, թալանեց Մանիաիի ամբողջ հարստությունը, ավերեց նրա 33 բնակավայրերը, գերեզմանները մարդկանց, քչեց-տարավ մանր ու խոշոր անասունները և մնացածը բոցերի ճարակ դարձրեց³:

¹ Թարքեղանյան ժամանակագրություն, C. Bezold, KB, II, էջ 279:

² Carl Bezold, Inschriften Sargon's, Prisme, col. III, 66-82, E. Schrader-ի KB, II-ում: Luckenbill, The Annals of Sennacherib, 1924. E. Forrer-ը, Provinzeinteilung, էջ 87, մույնացրել է Kibšu-ն Gifse-ի հետ:

³ Գրիգոր, IV, 1-19:

¹ A. Olmstead, էջ 263-264:

Ուկկին կամ Ուկկուն Մանիաի մայրաքաղաքն է, նրա երկիրը կոչվում էր Դայե: Ջուդի լեռան ստորոտից Ասորեստանի թագավորը մեկնում է դեպի արևելք, հասնելու համար վերոհիշյալ երկու լեռների՝ հավանաբար Խարուրի ակունքների շրջանում: Կումայան, Արգապիան, Ուկկուն կամ Դայեն գտնվում էին մտավորապես Խազիլի և Խարուրի հովիտներում:

Այն լեռնաշղթայում, որը Ջուդիից ուղիղ գծով տարածվում է դեպի Չար, Մարգոնի նոր մայրաքաղաքից մտա հարյուր կիլոմետր հեռու, ապրում էին ազատ ցեղեր՝ Տումնուրին, Կումայան, Արգապիան, Դայեն, որոնք կազմում էին փոքր իշխանություններ և սահմանազատում էին երկու մեծ պետությունները՝ Ուրարտուն և Ասորեստանը:

Ավելի հեռու, արևելքում, երկու մեծ պետություններին իրարից բաժանում էին Խուրուշկիան ու Մուծածիրը, իսկ արևմուտքում՝ Շուպրիան և Ուլլուբան: Չպետք է չափազանցել այն, ինչ որ Մեննաքերիքն ասում է Տումնուրիի և Ուկկուի դեմ վարած իր արշավանքների մասին: Այստեղ խոսքն ավելի շուտ սաստման, քան թե զավթման մասին է: Թիզլաթալասարն արդեն զավթել էր Կիրշուն, որը Կիրշունան է, բայց հետագայում այդ քաղաքը Ասորեստանի համար այլևս կորել էր: Դա միակն է յոթ քաղաքներից, որի վերագրվումը Մեննաքերիքի կողմից ստույգ է թվում:

Տվյալ արշավանքը տեղի ունեցավ 699 կամ 697 թվականին: Նույն ժամանակաշրջանում Կուրբան նահանգի կուսակալ Մեննաքերիքին հաղորդում է, որ Ուրարտուի թագավոր Արգիշտիի սահմանապահ կուսակալը հարձակվել է Կուրբանի վրա և ինքը օգնություն է խնդրել մյուս երեք կուսակալներից՝ Խալսուի կուսակալ Նարուլիուից, Աշուր-բելու-դանից և Աշուր-նիսուայից¹: Վերջինը Թիլլեի կուսակալ՝ rab-sake-ն է: Հայտնի չէ, թե Աշուր-բելու-դանի իշխանությունը որ երկրի վրա էր տարածվում:

Կուրբանը Արգիշտիի կողմից հարձակման ենթարկվելու համար պետք է որ գտնվեր Ուրարտուի սահմանի վրա և սահմանամերձ լիներ Խալսուին, որից օգնություն էր խնդրում: Այս հանգամանքը մեզ թելադրում է Կուրբանն ու Խալսուն որոնել Խարուրի ակունքների սահմանային գծի վրա, ուր գտնվում էր Ուկկուն, դեպի Կար-սիպարրին, ներկա Ջիրարը: Հավանաբար, Կուրբանը գտնվում էր Ամադիայի հյուսիսում, իսկ Խալսուն՝ հարավում, կամ ավելի շուտ՝ նույն քաղաքի արևմուտքում: Խալսուի կողքին էր տեղավորված Աշուր-բելու-դանի նահանգը: Սա արդեն մտածել է տալիս Կիրշուի մասին, որը, Մեննաքերիքի կողմից գրավված լինելով, դարձել էր նահանգի

կենտրոն: Իրոք, այս նույն Աշուր-բելու-դանը մի նամակում¹ ասում է, որ ինքն արդեն հպատակեցրել է Ուշխուն ու Կուրան, երկու քաղաքներ, որոնք երկար ժամանակից ի վեր (հավանական է Սալմանասար III-ի որդու ընթուտացումից ի վեր) չէին ճանաչում Ասորեստանի թագավորի իշխանությունը:

Ուշխուն Ջուդի լեռան ստորոտին գտնվող այսօրվա Շախն է, որը կարող էր Կիրշու նահանգին կցվել: Վերջինի հարևանն էր Տիզրիսի աջ ափին գտնվող Թիլլե նահանգը, որի առաջնորդն էր Աշուր-նիսուան: Կիրշուն, Խալսուն, Կուրբանը լեռնային իշխանություններին ամենամոտիկ, միաժամանակ և Ուրարտուին սահմանամերձ ասորեստանյան նահանգներ են:

Դա չի կարող մեզ հանկարծակիի բերել: Մեննաքերիքը ջրանցք է փորում Կիսրի քաղաքից մինչև Նինվե: Այդ առթիվ նա ասում է. «Ես արդեն նախապես ջրերի հոսանքն ուղղել էի Ուրարտուի սահմանի վրա գտնվող Թաս հսկա լեռան մոտից դեպի իմ երկիրը»: Արդ, Թաս լեռը Բավիանի հյուսիսում էր: Թագավորը այսպիսով խոստովանում է, որ Ուրարտուի տարածքը ձգվում էր մինչև Թաս²:

Արևելքում Ասորեստանի ծայրագույն նահանգը Կար-սիպարրին էր, որը գտնվում էր Մուծածիրի անմիջական հարևան Չարի հովտում: Մարգոնի ժամանակից Մուծածիրը դարձել էր Ասորեստանի նահանգ: Մարգոնը ուրարտական ազդեցության ոլորտից դուրս էր բերել նաև Մանա երկիրը: Սակայն թվում է, թե առափնյա շրջանը, Ուրմիա լճի ափին գտնվող Մեիշտա քաղաքի հետ միասին, որն Ուրարտուին էր պատկանում Իշաուինի ժամանակից ի վեր, մնացել էր Ուրարտուի իշխանության ներքո: Աշուր-նիսուան թագավորին ուղղված մի նամակում հաղորդում է, որ «(Ուրմիա) լճի ափին գտնվող շրջանում Ուրարտուի քաղաքների մանեացիներն ընդվզել են, կատարել կողոպուտներ և փախել: Մուծածիրի կուսակալ Անալուկունը և Կար-սիպարրիի կուսակալ Թունմաուն գնացել են Մանայի սահմանները՝ հսկողություն կատարելու համար: Ուրարտուի թագավորը Տուրուշայայում է իր կուսակալների հետ միասին»³:

Այս իրադարձությունը 713 թվականից ավելի ուշ է եղել, քանի որ Մուծածիրում ճշված է ասորեստանյան կուսակալի առկայությունը⁴: Մենք տեսանք, որ Մուծածիրն իր անկախությունը կորցրեց 713 թվականին, Մարգոնի ութերորդ արշավանքի ժամանակ: Ուրարտուի թագավորը, ուրեմն,

¹ R. Harper, 246, ըստ է. Ֆորրերի, Prov., էջ 36:

² C. Bezold, Բավիանի արձանագրություն, էջ 117, I, 11-13:

³ R. Harper, 381 = R. Pfeiffer, 7:

⁴ Տ. Թյարո-Դանժենը, Ուղեքն, էջ 16, ծան. 1, օգտագործելով Կոննեիս վան Գելդերենի բարձրագույնը, իզուր է կարծում, որ խոսքը Մուծածիրի ուրարտական կուսակալի մասին է, և ուզում է այն ուղղել Մուծածիրի դիմացի կուսակալով:

¹ R. Harper, 123, է. Ֆորրերի նշան համաձայն, Prov., էջ 36, նաև A. Ohmstead, էջ 381:

Արգիշտին է: Նրա անվան նշումը Մանայում կատարված խառնակութունների առթիվ, խառնակություններ, որ, գուցե, հետևանք էին ասորեստանցի գործակալների գրգռման, ասորական գործերի գալը, ընդհնարել է տալիս, որ Ուրարտուի թագավորը պատրաստվում է Մանայի վրա հարձակվելու՝ իր գերիշխանության իրավունքներն այնտեղ վերահաստատելու համար: Սակայն այս հողի վրա տեղի ունեցած դարավոր մրցակցությունը, եթե անգամ վերսկսվեր, միևնույն է այլևս չէր երկարելու: Մի երրորդ ուժ՝ սկյութները, շուտով վերջ էր տալու վեճին:

Նշենք Սեննաքերիբի գործողությունները Կիլիկիայում, գործողություններ, որոնք մեզ համար հետաքրքիր են, քանի որ խոսքը վերաբերում է մի ոմն Կիրուայի՝ Իլլուրբիի կառավարչի, ապստամբության՝ Թարգու և Ինգի-րա քաղաքների մասնակցությամբ: Իլլուրբին՝ Լամբրոնն է, այսօրվա Նեմ-րունը, Ռուրիմյանների ժամանակաշրջանի Օշին հայկական ընտանիքի հռչակավոր ամրոցը: Ապստամբությունը ճնշվեց, և Կիրուան գլխատվեց¹:

Առավել հետաքրքիր է այն իրողությունը, որ ասորական բանակը 695 թվականին երևում է Թիլ-Գարիմնում, ուր Գուրդին նոր պետություն էր կազմել: Թիլ-Գարիմնում խեթական ժամանակաշրջանի Թեգարամա անվան ասորական ձևն է, այսօրվա Գորունը: Պաղոմենոսի Գաուրաենան պահպանում է նրա հիշատակը: Գուրդին փոյուզիական Գորդիոս անունն է, այսպես էր կոչվում Միդասի հայրը: Մեր Գուրդին, գուցե Գորդիոսի թոռը՝ Միդասի որդին էր: Որոշ տվյալների հիման վրա կարելի է ընդունել, որ Սարգոնի արշավանքը Թարալի դեմ 705 թվականին՝ նպատակ ուներ կանգնեցնել Գուրդիի առաջընթացը, իսկ Գուրդին Խիլակկուի միջով շարժվում էր դեպի Թիլ-Գարիմնու: Սեննաքերիբի բանակը մեծ հաջողություն չունեցավ: Գուրդին ճակատամարտից խուսափեց: Ասորեստանցիները կողոպտեցին նրա երկիրը և ետ քաշվեցին: Մի լուրջ կարիծքի համաձայն, Գուրդին այն առաջնորդն է, որ հայ-փոյուզիացիներին առաջնորդեց դեպի իրենց նոր հայրենիքը՝ Փոքր Հայք²:

¹ E. Forrer, Provinzeinteilung, էջ 79, ըստ Բրիտանական բանգարանում պահպանվող՝ Սեննաքերիբի Գլանի, 103000, IV, 61, 90: K. Tallquist, Das Datum des Feldzuges Sancherib's gegen Hilaku, «Orientalische Litteraturzeitung», 1911, էջ 344:

² E. Forrer, նշվ. աշխ., էջ 80-81, ըստ նույն Գլանի, V, 1-22. A. Olmstead-ը, History of Assyria, էջ 31, Թիլ-Գարիմնուի առաջնորդին կոչում է Խիդի, մինչդեռ Ֆորրերը վերականգնել է իսկական անունը՝ Գուր-դի, որը, նրա կարծիքով, հայ-փոյուզիացիների առաջնորդն է եղել: Նաքի-Յուդանի արձանագրության մեջ՝ C. Bezold, KB, II, էջ 119, Սեննաքերիբը հիշատակում է Խիլակկուում, ինչպես նաև «Թարալի շրջան Թիլ-Գարիմնում» կատարած արշավանքը և պնդում, թե Թիլ-Գարիմնում գրավել ու մշակույթի կենտրոն է դարձրել:

Սեննաքերիբի ողբերգական մահը հայտնի է Աստվածաշնչի միջոցով: Դա աղերսվում է հայկական մի ավանդության հետ, որը մեզ շահագրգռում է դրա վրա կանգ առնել: Հին Կտակարանի համաձայն, Ասորեստանի թագավորն սպանվեց իր երկու որդիների՝ Ադրամելեքի և Սարասարի կողմից, երբ տաճարում աղոթում էր: Հայրասպանները փախան Ուրարտու, իսկ նրանց եղբայրը՝ Ասարխադոնը, ժառանգեց գահը¹:

Բազմավեպը (Պոլիհիստոր) առաջ է քաշում Սեննաքերիբի մի այլ որդի, որը կոչվում է Արդունուզան(ոս), մինչդեռ Աբիդենուր Սեննաքերիբին հաջորդել է տալիս նրա Ներգիլ(ոս) որդուն:

Վերջինը տապալվեց Ադրամել(ոս)ի ձեռքով, որն սպանվեց Ակ'սերդիսի (Ասարխադոն) կողմից²:

Մեպագիր արձանագրությունների տեղեկությունները լույս են սփռում այս աղոտ պատմության վրա:

Սեննաքերիբը հինգ կամ վեց որդի ուներ: Գահի ժառանգորդ անդրանիկ որդին՝ Աշուրնադիմշունը, Բաբելոնի փոխարքա էր նշանակվել, որը վեց տարի կառավարեց և տապալվեց 694 թվականին:

Երկրորդ որդին կոչվում էր Արդի կամ Արադ-Նիմլի, երրորդը՝ Ասարխադոնն էր, չորրորդը՝ Աշուր-շում-ուշաբշին, հինգերորդը՝ Աշուր-իլու-մուրալլիծուն³: Ենթադրում են նաև վեցերորդի՝ Արադ-Մելեքի գոյությունը, բայց դա վիճելի է:

Ասարխադոնը այլ մորից էր, քան նրա եղբայրները: Այդ կնոջ անունն էր Նակիա-Չակուտու: Գուցե շնորհիվ իր մոր ազդեցության Ասարխադոնը Սեննաքերիբի կողմից հռչակվեց թագաժառանգ և ուղարկվեց Բաբելոն որպես փոխարքա:

Սակայն արքունիքում կար Ասարխադոնի նկատմամբ թշմանական տրամադրությամբ տոգորված մի կուսակցություն, որն աշխատում էր Արադ-Նիմլիի օգտին: Այդ կուսակցությունն անեն ինչ արել էր Ասարխադոնի նշանակումն արգելելու համար, մինչև իսկ թագավորին ասել էին, որ այդ իշխանը թագավորի՝ իր հոր, նկատմամբ չար նպատակներ ունի:

¹ Դ. Թագավորաց, ԺԹ, 37, և 'Αδραμέλεχ και Σαρασάρ οι υιοί αυτού ἐπέταξαν αὐτόν ἐν μαχαίρα καὶ αὐτοὶ ἐσώθησαν εἰς τὴν Ἀραράδ. Նաև Բ Մեաց. ԼԲ, 21 և Նաալի, ԼԷ, 38:

² Համաձայն Եվսեբիոսի նշումների, որոնք հայտնի են հայերեն թարգմանությամբ J. Karst, Die Chronik des Eusebius. Այս բոլոր տեղեկությունները Բերտոսից են գալիս:

³ Անդրանիկ որդին որպես այդպիսին է նշված Սեննաքերիբի կողմից, Պրիզմա, col. III, 63. C. Bezold, KB, II, էջ 99: Արադ-Նիմլիլը ծանոթ է C. H. W. Johns, Assyrian Deeds and Documents, № 20-ից: Աշուր-շում-ուշաբշին հիշատակված է Վ. Շեյլի հրապարակած սալիկի վրա՝ «Zeit. f. Assyr.», XII, 425 և շար., Աշուր-իլու-մուրալլիծուն՝ Վ. Շեյլի հրապարակած մի այլ սալիկի վրա՝ «Recueil de travaux relatifs à la Philologie et à l' Archéologie égyptiennes et assyriennes», 26, 27:

Արադ-Նինիլը, այդ մեքենայություններով հաջողության չհասնելով, դիմում է բռնության՝ իր փառասիրությունն իրականացնելու համար և մրցակցի բացակայությունից օգտվելով՝ սպանում հորն ու տիրանում գահին:

Ասարիսադդոնը գալիս է Բաբելոնի դաշտ, իր կողմնակիցների օգնությամբ մտնում է մայրաքաղաք և վտարում բռնատիրոջին, որը փախչում է Խանիգալքատ, այսինքն՝ Միտաննի: Ասարիսադդոնը հետապնդում է ու Կարկենիչի մոտ պարտության մատնում նրան: Արադ-Նինիլը փախչում է Ուրարտու: Ասարիսադդոնը շատ երկար է խոսում այդ գործի մասին, ամբաստանում է եղբայրներին, բայց խուսափում է սպանողների անունը տալ: «Իմ եղբայրները մի ամբարիշտ միաք հղացան,- ասում է նա,- նրանք մոռացան աստվածներին, դավադրություն սարքեցին և իմ թիկունքի ետև այնպիսի գործ նյութեցին, որը աստվածների սրտովը չէր: Հակառակ աստվածների կամքին նրանք ուզեցին հորս համակրանքն իմ՝ նրա խոնարհ ծառայի նկատմամբ փոխել, բայց նրա սիրտն ինձ գուրգուրում էր, և նրա աչքերը հառած էին իմ իրավունքի վրա: Նրանք ապստամբեցին և թագավորությանը տիրանալու համար սպանեցին Սեննաքերիբին»¹:

Բայց ո՞վ էր ոճրագործը: Ամեն ինչ ցույց է տալիս, որ դա եղել է միայն Արադ-Նինիլը: Աստվածաշնչի Ադրամեելքը և Աբիդենոսի Ադրամեելոսը (փոխանակ Ադրամեել<ք>ոս) ներկայացնում են Արադ-Նինիլին, որի անվան առաջին մասն են պահպանել՝ Արադը ձևափոխվելով Ադրայի: Արադմեելք անունով վեցերորդ եղբոր գոյությունն ընդունելու համար բավարար հիմքեր չկան: Մարասար, Մար'եսարը Ներու-սար'եսերի կրճատ ձևն է, դա մի անձնավորության՝ Նարուշարուծուրի անունն է, որը ոճրագործության տարին է պնդում էր և Մարկաշի (Մարաշի) կուսակալ²:

Ալենրևարար, այդ մարդը ոճրագործ Արադ-Նինիլի եռանդուն կողմնակիցն էր, ահա թե ինչու սա աշխատում էր նրա մոտ ապաստան գտնել, երբ իր հակառակորդը նրան հասավ Կարկենիշում: Տեղի ունեցած ճակատամարտին հավանական է, որ մասնակցեց նաև Նարուշարուծուրը: Պարտությունից հետո երկուսն էլ փախան Ուրարտու:

Այսպիսով, Մուրբ Գրքի ավանդությունը ոճրագործի կողմնակցին դարձնում է նրա եղբայր: Նույն կարգի շփոթ գոյություն ունի Աբիդենոսի ասածի մեջ, ըստ որի՝ Ներգիլ(ոս)ը Բաբելոնի թագավոր Ներգալ-ուշեգիրն էր³:

¹ R. C. Tompson, The Prisms of Assarhaddon and of Assurbanipal, 1931. V. Scheil, Le Prisme d'Assaraddon, 1914. A. Olmstead, History of Assyrian, էջ 338:

² Նույնացունը կատարել է Պ. Ռոստը, էջ 84, Ե. Շրադերի Die Keilinschrift und das alte Testament. 3. Aufl. von Winckler und Zimmer, 1913-ում: Այդ դեպքում պետք է, որ այն Նարուշարուծուրը, որն ապրում էր Աշուրբանիպալի ժամանակ, ուրիշ անձնավորություն լինի:

³ Ա. Վինկլերի կոառնունը «Zeit. f. Assyriol.», II, էջ 392:

Էլամի թագավոր Խուլլուշուն բանտարկեց Սեննաքերիբի որդի, Բաբելոնի փոխարքա Աշուրմադինշունին և 694 թվականին նրա տեղը նշանակեց Ներգալ-ուշեգիրին: Հաջորդ տարին ասորեստանցիներն իրենց հերթին բռնեցին Ներգալ-ուշեգիրին, իսկ Ասարիսադդոնն ստանձնեց Բաբելոնի փոխարքայի պաշտոնը: Աբիդենոսը Ներգալ-ուշեգիրին դարձրել է Սեննաքերիբի որդի, նրա մյուս երկու որդիների, ինչպես և Սեննաքերիբի ժառանգի օրինակով Բաբելոնում նույն պաշտոնը ստանձնած լինելու և Ասորեստանն ու Բաբելոնն իրար հետ շփոթելու հետևանքով: Վերջին այս շփոթմունքի պատճառով է նույնպես, որ Ասարիսադդոնը, որը Բաբելոնում հաջորդել էր Ներգալ-ուշեգիրին, երևան է գալիս որպես նրա հաջորդ՝ Ասորեստանի գահի վրա և որպես նրան սպանող:

Միայն Արդունուզանի անունն է մնում առանց հավանական բացատրության: Անվան առաջին մասը կարծես պահպանել է Արադ-Նինիլի հիշատակը¹:

Մովսես Խորենացին պահպանել է մի հայկական ավանդություն, ըստ որի Հայաստանում ապաստանած ոճրագործ եղբայրները Արծրունի և Գնունի իշխանական տների հիմնադիրներն էին: Սա, հավանաբար, Աստվածաշնչի համապատասխան հատվածի տեղայնացված մեկնաբանության արգասիքն է²:

5. ԱՍԱՐԽԱԴԴՈՆ ԵՎ ՈՌՈՍՍ II

Ասարիսադդոնն իշխանության գլուխ է անցնում (680-669)³: Պաշտոնական վավերագրերն Ուրարտուի մասին ոչինչ չեն ասում: Սակայն

¹ M. Niebuhr-ը, Geschichte Assurs und Babels, 1857, էջ 37-38, կարծում էր, որ Արդունուզանը միացնում է երկու անունները Ադրամեելքը և Մարասարը: Սեննաքերիբի սպանության հարցը բճնվել է շատ արևելագետների կողմից՝ Մ. Նիրուր, Է. Շրադեր, Թիլե, Ֆ. Հոսմեյ, Հ. Վինկլեր և Մարս Շարեկ, որը Աշուրբանիպալին նվիրված իր մեմուարային մեջ տվել է հարցի համարյա լրիվ մատենագիտությունը: Ավելացնենք, որ վերջերս Հ. Հիրշբերգը, Studien zur Geschichte Assarhaddon, 1932, վիճելի է դարձնում նույնիսկ Ասարիսադդոնին: B. Meissner-ը, Neue Nachricht über die Ermordung Sanherib, «Sitzungsberichte d. Preuss. Akademie»-ում, 1932, 250-262, Հ. Հիրշբերգի կասկածները չի ընդունում:

² Հետաքրքրական է, որ բյուզանդացի եղիմակ Գևորգ Վանականը Լևոն V կայսրին սերված է համարում *ἐκ τῶν Σεναχηρείμ παίδων* [Սեննաքերիբի զավակներից], էջ 769, որտեղից՝ Const. Theoph., էջ 6, γένος δὲ τὸ μὲν ἐξ Ἀσσυρίων τὸ δὲ καὶ αὐτῶν Ἀρμενίων [ծագումով և ասուրներից է, և իրենց՝ հայերից], ինչպես և Գենեսիոսը, էջ 28. *ἐξ Ἀσσυρίων καὶ Ἀρμενίων ἀναφύσεως* [ծագումով ասորիներից և հայերից]: Տե՛ս այս կապակցությամբ իմ հոդվածը «Armeniacs»-ում, պրակ II, Sur l'origine de Léon V, որը, թեպետ, պետք է փոփոխվի շատ կետերում:

³ Սեննաքերիբը սպանվեց 681 թ. ֆեբրուարի 20-ին (հունվար): Խոնվությունները տևեցին մինչև ադար (մարտ): Ասարիսադդոնը գահ բարձրացավ ադարի 18-ին և ոչ սիվանի:

գաղտնի մի նամակում Ուրարտուի թագավոր Ուրսայի կապակցությամբ ասվում է, որ նա կհամերձերի հետ դաշինք է կնքել Ասորեստանի դեմ: Ուրսան (Ռուսայի ասուրական ձևն է), ուրեմն, Արգիշտիի հաջորդն է: Ասարխադդոնի թագավորության վրա մի հայացք նետելով, գուցե մենք հասկանալիքը Ուրարտուի տարօրինակ համաձայնությունը երեկվա թշնամի բարբարոսների հետ:

Իհարկե, մեզ հետաքրքրում են այն իրադարձությունները միայն, որոնք այսպես, թե այնպես կապված են ասուրա-ուրարտական հարաբերությունների հետ: Այս նյութի շուրջ եղած պաշտոնական հաղորդումները շատ հակիրճ են: Իր թագավորության չորրորդ տարում՝ 677 թվականին, Ասարխադդոնը Խուրուշմայի հողի վրա պայքարեց ընդդեմ կիսմերացի Թիուշպայի, որը Մանդա հրոսակներից էր¹:

Հաջորդ տարին Կունդուի և Միսուի թագավորը ենթարկվեց հարձակման, գլխատվեց և գլուխն ուղարկվեց Ասորեստան: Նրա ամուսն էր Մանդարրի²:

Մտավորապես միևնույն ժամանակաշրջանում Ասորեստանի թագավորը կործանեց Խիլակկու և Դու'ուա երկրների 21 քաղաքները, քայքայեց նրան չհաջողվեց իր լծին ենթարկել նրանց, թեպետև նա պնդում է այդ քանի որ նրա հաջորդ Աշուրբանիպալը խոստովանում է, որ Խիլակկուի թագավոր Մանդուսարմեն իր հորը չէր հնազանդվել³:

Թագավորության 8-րդ տարում՝ 673 թվականին, թերեա ամսին, ասորեստանցիները նվաճեցին Շուպրիա երկիրը: Գրավված ավարը հասավ Ուրակ, որտեղ գտնվում էր թագավորը, կիսիմու ամսին⁴:

Խուրուշման Միսի հյուսիսում Կոմանայի մոտ գտնվող Կաբիսսոսն է: Միսուն կամ Միզուն ներկայիս Միսն է: Կունդուն Ստրաբոնի Կյուինդան է, Պոտանդա կամ Կիլիկյան դուռ մարզը: Կյուլոնու գետը պահպանել է նրա անունը: Դու'ուան չի կարելի անջատել Քսենոփոնի Դանայից (Թյուանայի

մի այլ ձև, նույնական Թուխանայի հետ)¹: Խիլակկուն Կեսարիայի մարզն է: Միսից մինչև Թյուանա և Կոմանայից մինչև Կեսարիա, այդ ամբողջ տարածքը ճանաչեց Ասորեստանի գերիշխանությունը, ինչպես նաև Շուպրիան՝ Տիգրիսի ավազանում: Ինչ վերաբերում է արևելք առաջխաղացմանը, ապա Ասարխադդոնը մի հաղթանակ է հիշատակում Մանայի մարդկանց և նրանց դաշնակից Աշուրայի թագավոր Իշպակայի վարձկան զորքերի դեմ²: Նա պնդում է նաև, որ հպատակեցրել է Պատուշարա շրջանի մի քանի մարական ցեղերի առաջնորդների, ինչպես բերդաքաղաքների առաջնորդներ Միսիրպարնային և Իպարնային, Պարտակկայի առաջնորդ Ուպպիսին, Պարտուկկայի առաջնորդ Մանասանային, Ուրակազարբանայի առաջնորդ Ռամատիային³: Սակայն գաղտնի աղբյուրներն այլ պատկեր են ցույց տալիս, որը Ասորեստանի համար շատ ավելի աննպաստ է:

Շամաշին ուղղված իր աղոթքների ժամանակ Ասորեստանի թագավորը մի շարք հարցեր է առաջադրում, որոնք ցույց են տալիս այն դժվարությունները, որոնք ինքը կանխատեսում է հարձակվող թշնամիների կապակցությամբ: Նա խնդրում է հայտնել թե այս ամսի 3-ից մինչև ար ամսի 11-ը, ուրեմն՝ 100 օրվա ընթացքում, արդյոք Կարկաշիի առաջնորդ Կաշտարիտին իր ռազմիկներով, կամ Գիմիրիի ռազմիկներով, կամ Մադայի ռազմիկներով, կամ Մաննայի ռազմիկներով, կամ մի քանի այլ թշնամիներով հաջողություն կունենա՞ իր դիտավորությունների մեջ:

Արդյոք Կաշտարիտին կգրավի՞ Կիշասսու քաղաքը որևէ միջոցով՝ հարձակմամբ, ուժով, կովով, պաշարումով, սովահարությամբ, խորամանկությամբ և ուրիշ հնարքներով:

Կաշտարիտին մարերի առաջնորդ Մամիտարշուին ուղարկել էր հետևյալ պատգամը. «Միասին գնանք Ասորեստանի դեմ»: Արդյոք նրան կհաջողվի՞ իր կողմը գրավել Մամիտարշուին՝ Ասորեստանի թագավորի դեմ զործելու համար:

Այս 2-ից մինչև այս 11-ը, յոթ օրվա ընթացքում, Կաշտարիտին Գիմիրիի, Մադայի, Մաննայի ռազմիկներով գրավելու՞ է արդյոք Ուշիշի քաղաքը: Մի նոր թշնամի՝ Սապարդայի Դուսանին, միպնում է Կաշտարիտին, Գիմիրիին, Մադային և Մաննային: Եթե Ասարխադդոնը սուր-

¹ Ասարխադդոնի Տարեգրությունը, Պրիզմաներ A և C, B չեն հետևում ժամանակագրական կարգին: Իրադարձությունների թվականները տրված են Բաբելոնյան ժամանակագրության մեջ, Keilschriftliche Bibliothek, II-ի վերջում: Ժամանակագրությունը չի հիշատակում Խուրուշման, քայքայ ասում է, որ կիսմերները հարձակվեցին Ասորեստանի վրա և Ասորեստանում քախջախվեցին:

² Բաբելոնյան ժամանակագրություն, IV, 6-8, Պրիզմաներ A և C, I, 36-54: B, 11-30-ում պակասում է: Սակայն Բաբելոնյան ժամանակագրությունը չի հիշատակում այդ արշավանքը, որի ճշգրիտ թվականը մնում է անորոշ:

³ Պրիզմաներ A և C, II, 20-21. B, III, 3-12:

⁴ Բաբելոնյան ժամանակագրություն, IV, 19-21: Պրիզմաները, զրված լինելով 673 թվականին, չեն հիշատակում Շուպրիայի գրավման մասին:

¹ E. Fothergill, Die Provinzeinteilung, էջ 81, հակված է Դու'ուան տարբերելու Թյուանայից: Դու'ուա = Թուխա-նա, Դանա (Դուանայի փոխարեն) = Թյուանա՝ նույն անվան երկու ձևեր են, առանց -նա վերջածանցի կամ ինչպես Թուշսա և Թուշսա-նա:

² Պրիզմաներ A և C, II, 27-31. B, III, 16-18:

³ Պրիզմաներ A և C, IV, 8-22. B, IV, 3-9:

հանդակ ուղարկի Կաշտարիտիին, նա կապանվի¹, թե ոչ: Այդ ընթացքում Մապարդայի Դուսաննին Կաշտարիտիի և իր դաշնակիցների հետ գրավել էր Մանդու և Կիլման քաղաքները: Դաշնակիցները գրավում են նաև Սուբա, Շարրուիկքի, Անուլ քաղաքները: Ասարխադդոնն ուղարկում է rab šake Շա-Նարու-Շունմային Անուլ քաղաքի դեմ. նրան կհաջողվի² թշնամիներից ազատել այն: Մամացիները գրավել են Դուր-Բեյ քաղաքը. rab šake-ն կվերադարձվի³ այդ քաղաքը¹:

Այս հարցերից հետևում է, որ Ասորեստանի դեմ կազմած կռիվից համար տիրացել էր հետևյալ քաղաքներին՝ Կիշասու, Ուշիշի, Մամդու, Կիլման, Սուբա, Շարրուիկքի, Անուլ և Դուր-Բեյ:

Դա դեռ բոլորը չէ: Թատերաբեմում շուտով հանդես է գալիս մի նոր թշնամի, որն ուժեղացնելու է Գիմիրրիի, Մադայի, Մամնայի և Մապարդայի կռիվից համար, դա Իշկուգա ժողովուրդն է, այսինքն՝ սկյութները²:

Մի անսպասելի առաջարկ մտահոգում է Ասարխադդոնին: Իշկուգայի թագավոր Բարտատուան նրա դստերը կնության է ուզում: Ասորեստանի թագավորը հարցում է անում Շամաշ աստծուն. «Եթե Բարտատուան իմ դստերը կնության առնի, զոհե՞ն հավատարիմ կնամ³ ինձ և կպաշտպանի⁴ իմ շահերն ու իրավունքները: Եթե Բիտկարիի և (Մապարդայի) առաջնորդները հարձակվեն Մադայի մի շրջանի վրա, Իշկուգայի թագավորը կամ նրա որդին կամ նրա զորապետը կզնա⁵ն ասպատակողների դեմ»: Թվում է, թե Ասարխադդոնը ստորացուցիչ առաջարկ էր ստացել բարբարոսից³: Իշկուգայի ռազմիկները, որոնք տեղավորվել էին Մամնայի շրջանում. «Միմանու ամսի 22-ից մինչև դուրս ամսի 21-ը, ուրեմն՝ 30 օրվա ընթացքում, նրանք կանցնեն⁶ արդյոք Խուրուշկիայի անցքը, կգրավեն⁷ Խարրանիա և Անիսու քաղաքները և կավերեն⁸ Ասորեստանի տարածքը»⁴:

Դա Իշկուգայի մի այլ հատվածն է, Բարտատուայի հատվածից տարբեր: Նրա առաջնորդն էր Իշպական, որին, ինչպես տեսանք վերևում, Ասարխադդոնը հավակնում է հաղթած լինել:

Ասարխադդոնն իր զորքերին հանձնարարել էր զնալ գրավել Սիրիշ քաղաքը: Նա հարցում է անում Շամաշին՝ իմանալու համար, թե սիմանուի 10-ից մինչև սիմանուի 29-ը, ուրեմն՝ 20 օրվա ընթացքում, Մամնայի,

Ռի(մայի) և Սիրիշի մարդիկ արդյոք դիմադրելու են իր զորքերին և ձախողելու են նրանց առաջադրանքը¹:

Դժբախտաբար, այստեղ հիշատակված քաղաքների տեղերը ծանոթ չեն: Ուշիշին Ուրարտուի սահմանային կայան Ուեիսն կամ Ուայախը չէ, այլ Ուսի-իշն է, այն քաղաքը, որը Մարգոնը հիշատակում է Մապարդայի հետ միասին՝ Իրանական սարահարթի բնակավայրերի շարքում²: Կիշասուն կարելի է նույնացնել Կիսեշիմի հետ, որը Ֆորրերը տեղավորում է Խորասբադի շրջանում, Կիզիլ-ուզունի ակունքների վրա:

Մադա (մարեր), Գիմիրրի (կիմմերներ), Մապարդա կոչվող թագավորի ցեղեր իրենց տրամադրության ներքո ունեին Մամայի և Էլամի միջև ընկած ընդարձակ տարածությունները, ներկա Արդեբանի, Համադանի և Քիրմանշահի մահանգները: Այստեղ մենք ամբողջապես Մարաստանում ենք: Կաշտարիտին (Խշաբրիտան), Մամիտարշուն, Դուսաննին ցեղերի կամ bil ali կոչվող մարգերի առաջնորդներն են: Վերջինը իրաներեն dabyu-ka եզրի թարգմանությունն է, որի հետագա ձևը եղել է dehkan («մարգի առաջնորդ»): Վաղուց ի վեր մարական առաջնորդներն սպառնում էին Ասորեստանին: Նրանք ավելի վտանգավոր դարձան՝ դաշնակցելով իրենց համատեղ կիմմերա-սկյութական հրոսակների հետ և եզրափակիչ հարվածը կհասցնեն, երբ հարմար առիթը ներկայանա, ասուրական պետությանն ընդմիջտ վերջ դնելու համար:

Մամա երկիրը դարավոր դիս ուներ Ասորեստանի դեմ: Ախշերի թագավորը, վերոհիշյալ բարբարոսների օժանդակությամբ, հարձակման է անցնում և Ասորեստանից գրավում թագավորի քաղաքներ, ներառյալ Սիրիշը: Ասարխադդոնը իր զորապետին հանձնարարում է զնալ վերադարձվել այդ քաղաքը, բայց երկյուղ է կրում, որ Մաման ու Ռիման դիմադրեն իր զորքերին: Ռիման Ուրմիան է, իսկ Սիրիշը այն Սուրիշիլի քաղաքն է, որի մասին Մենուան № 19 արձանագրության մեջ ասում է, թե ինքը գրավել է այդ քաղաքը:

Ախշերին (Ախշիրին) Գիմիրրի հետ միասին հիշատակված է Շամաշին ուղղված աղոթքում³: Տեքստն աղճատված է, բայց ստույգ է, որ խոսքը Ասորեստանի դեմ դաշնակցության մասին է:

Մի ուրիշ վավերագիր Գիմիրրիին ներկայացնում է Մամայի դեմ ուղղված զործողության մեջ: Մասնավորապես, Ասարխադդոնն ուղղված՝ մի ոմն Բեյ-ուշեգիբի նամակում ասվում է. «Երբ թագավորն իր զորքերին

¹ J. A. Knudtzon, Assyrische Gebete an den Sonnengott, Band II, №№ 1-22, էջ 73-112:

² J. A. Knudtzon, № 24-25:

³ Նույնը, № 29-30:

⁴ Նույնը, № 35:

¹ J. A. Knudtzon, № 43.

² F. Thureau-Dangin, Une relation de la 8^e campagne, I, 48.

³ J. A. Knudtzon, նշվ. աշխ., № 24:

հրաման տվեց՝ «Մտեք Մանայի հողերը», բոլոր գորքերն այնտեղ չմտան: Հեծելագործի մի զորաբաժին և մարտակառքերը պետք է հարձակվեին կիմներների վրա, որոնք ասում էին՝ «Մանայի երկիրը ձեզ է պատկանում և մենք ձեռնպահ մնացինք այնտեղ մտնելուց»: Անշուշտ, դա սուտ է: Դրանք քափառաշրջիկների և երդում ու պայմանագիր չճանաչող մարդկանց վիժվածքներ են: Նրանք մարտակառքեր և կառքեր շարեցին անցքի երկու կողմերը: Հեծելագործով և մարտակառքերով ասպատակություն կատարեցին՝ Մանայի հունձքը հափշտակելու համար»¹:

Այս նամակը, անշուշտ, վերաբերում է Ասարխադոնի թագավորության սկզբին, երբ կիմներներն աշխատում էին տեղավորվել Մանա երկրում: Հետապնդված իրենց թշնամիների՝ Իշկուգա-սկյութների կողմից, գուցե, նույն Ախշերիի հրավերով, կիմներները հեռացան երկրից: Մի մասը գնաց միանալու Կաշտարիտիին, մյուս մասն ուղղվեց դեպի արևմուտք՝ Ուրարտու և ավելի հեռու:

Եվ իսկապես, կիմներները Շուպրիայի սահմանում հանդես են գալիս Ռուսա թագավորի հետ դաշնակցած: Ասարխադոնը Աշշուր աստծուց խնդրում է. «Նիսան ամսի...-ից մինչև դուգու ամսի 1-ը Ուրարտուի թագավոր Ուրսան... կռված է... իր նպատակին հասնելու՞ է: Իր կամքով թե իր պաշտոնյայի խորհրդով, անձամբ իր գորքերի թե Գիմիրիի կամ իր դաշնակիցներից որևէ մեկի հետ, իրենց ապրած տեղից մեկնելու՞ են պատերազմ սկսելու, ճակատամարտ տալու, սպանելու, կողոպտելու, գողանալու, Շուպրիայի երկիրը մտնելու և հարձակվելու, լինի՞ Բուժու և Կուլ-լիմների քաղաքների վրա, լինի՞ Շուպրիա երկրի բերդերի վրա և սպանելու՞ ինչ որ կարելի է սպանել, կողոպտելու՞ ինչ որ կարելի է կողոպտել, գողանալու՞ ինչ որ կարելի է գողանալ, խլելու և տանելու՞ ինչ որ կա Շուպրիա երկրի բերդերում, լինի փոքր թե մեծ բան: Զո մեծ աստվածությունն այս ամենը գիտե: Արդյոք դա կարգադրված է, վճռված է քո հրամանով, քո մեծ աստվածության բերանով, օ՞ մեծ տիրակալ Շամաշ: Արդյոք այդ բոլորը տեսնվելու՞, լսվելու՞ է»²:

Մրանից հետևում է, որ Ռուսան կիմներների օգնությամբ Ասորեստանի գերիշխանությունից խլում է Շուպրիա երկիրը: Ռուսայի գիմիրիները Թեուշայի խմբից էին, որն իր հրոսակներին Շուպրիայից առաջնորդել էր դեպի անդրեփրատյան երկրները: 677 թվականին նա Խուրուշնայում (Կարխաստ) է, 675 թվականին՝ Փոշուգիայում, ուր ավերեց Միդասի պե-

¹ R. F. Harper, 1237 - R. Pfeiffer, 329.

² J. A. Knudtzon, նշվ. աշխ., № 48:

տությունը: 677 թվականին կիմներների դեմ տարած հաղթանակից հետո Ասարխադոնը 676 թվականին խստություն է ցուցաբերում այն փոքր պետությունների նկատմամբ, որոնք կիմներների ներկայությունից օգտվել էին Ասորեստանի լուծը թոթափելու համար:

Իր տարեգրության մեջ նա հիշատակում է այն վրիժառությունը, որ գործադրել է Դու'ուի, Միսուի և Խիլակուի դեմ, բայց լուծություն է պահում Թարալի և Միլիդի վերաբերյալ: Նրանց մասին խոսում է Շամաշին ուղղված հարցումներում: Թեզարանայի թագավոր Մուգալլուն խլել էր Միլիդ (Մելիտենե) քաղաքը, իսկ Իշկալլուն վերականգնել էր Թարալի թագավորությունը: Ապա նրանք դաշնակցել էին՝ Իշտիարու քաղաքին տիրանալու համար: Ասարխադոնն իր զորապետ Շամաբուշուին ուղարկում է քաղաքին օգնելու և Շամաշին հարցնում է, թե հաղթանակ տանելու՞ է, թե ոչ¹:

Դա նրան չի հաջողվում: Սակայն նա կարողանում է Շուպրիայի իրեն պատճառած անարգանքը հատուցել: Այդ ընթացքում Շուպրիան կարողացել էր Ռուսայի խնամակալությունից ազատվել:

Կարելի էր, հետևաբար, նրա վրա հարձակվել առանց վախենալու Ուրարտուի հետ բարդություններ ունենալուց: 673 թվականի վերջերին Ասարխադոնը մտնում է Շուպրիա այն պատրվակով, թե Շուպրիայի թագավորը մերժել էր վերադարձնել ասորեստանցի այն պաշտոնյաներին, որոնք իրենց գործը լքել և Շուպրիա էին ապաստանել: Այդ երկրի թագավորը նույնիսկ համարձակվել էր արշավել Ասորեստանի սահմանային քաղաքների վրա, կրկնելով, «թե ինքը չի վախենում Ասորեստանի թագավոր Ասարխադոնից»:

Ասորական բանակը պաշարում է այդ երկրի գլխավոր քաղաք Ուպուունը. «որը տեղավորված էր, ամպի նման, բարձր լեռան վրա»: Շուպրիայի թագավորը սուկումից սարսափ. նա հասկացավ իր կատարած անխոհեմությունը, զղջաց և Ասարխադոնին գրեց. «Շուպրիան, այն երկիրը, որ մեղանչեց քո դեմ, պետք է քեզ ծայրից ծայր հնազանդի, նշանակիր քո կառավարիչներին, և ես նրանց կհնազանդեմ, հարկ նշանակիր երկրին՝ տարեկան տուրք և այլ միջոցներ: Ես մի ավազակ եմ և պատրաստ եմ ամեն մի մեղքիս համար վճարելու 50 անգամ ավելի. մեկ կորած ասորեստանցի փախստականի համար կվճարեմ հարյուրապատիկը: Շնորհիք ինձ կյանքս, ես կփառաբանեմ Աշշուրի անունը, քո հզորությունը»²:

¹ J. A. Knudtzon, նշվ. աշխ., № 54-56:

² A. Olmstead, նշվ. աշխ., էջ 364 և շար., H. Winckler, Forschungen II, 27:

Ասորեստանի թագավորը մնում է անողոր: Քաղաքը դառնում է հրո ճարակ: Շուպրիայի թագավորը վերջին փորձն է անում անողորն թագավորի գուրը շարժելու: Նա պատրաստել է տալիս իր խրտվիլակը, նրան հազցնում է աղերսարկուի շորեր, որոնց փաթաթում է երկաթյա շղթա և իր երկու որդիների՝ Շերիսի ու Կենգի-Թեշուրի հետ, ոսկյա և արծաթյա հարուստ նվերներով, ինչպես նաև տեղական քարակերտվածքներով, ուղարկում է Ասարխադդոնին:

Ասարխադդոնը նույնիսկ այսպիսի ստորացման գնով հրաժարվում է ներել նրան: Քաղաքը գրավվում է, թագավորական պալատը կողոպտվում և ամբողջ արքունիքը գերի է տարվում: Փախստականները սարսափելի պատիժ են կրում. խեղում են նրանց քիթը, աչքերը և ականջները:

Շուպրիան կորցրեց իր անկախությունը: 672 թվականին այդ երկիրը վերածվեց ասորական երկու նահանգի՝ Ուպպուրն և Կուլլիմերի¹:

Պետք է նշել, որ փախստականների մեջ կային նաև ուրարտացիներ, որոնք ապաստանել էին Շուպրիա: Ասարխադդոնը նրանց ուղարկում է Ուրարտուի թագավորին, որպեսզի նա իր հպատակներին պատժի՝ ինչպես որ կամենա: Ասորեստանի թագավորի այս քայլը ցույց է տալիս, որ այդ ժամանակ նա լավ հարաբերության մեջ էր իր մեծ հարևանի հետ, մինչդեռ Շամաշին ուղղած իր աղոթքում Ուրարտուի թագավոր Ռուսան ներկայացնում է որպես թշնամի: Այդ երկու տարբեր պահերը չպետք է շփոթել, ինչպես հաճախ անում են. մեկը վերաբերում է 673-672 թվականներին, մյուսը՝ 679 կամ 678 թվականին: Վերջին թվականը մեզ հայտնի է դառնում հետևյալ փաստերով. կիմմերների խմբավորումը, Թիուշպա թագավորի երամատարությանը, 675 թվականին՝ Միդասի ինքնասպանության տարին, գտնվում էր Փոյուզիայում, իսկ 677 թվականին նա դեռևս Խուրուշմայում էր և եկել էր այստեղ Մանայից: Մանայից նա հեռացել էր Ասարխադդոնի օրով, ուրեմն՝ 680 թվականին, և սա թույլ է տալիս նրա Ուրարտուում լինելը և Ռուսայի հետ գործակցությունը որոշելու 679-678 թվականներին: Շամաշին ուղղված այն խնդրանքում, որ հաջորդում է Ռուսայի վերաբերյալ

¹ J. Markwart-ը, *Eransahr*, էջ 159, այս երկու քաղաքներում ճանաչում է բյուզանդական դարաշրջանի՝ Ἀροῦραῖον և Χλωμόρων բերդերը: Բայավաթի՝ բրոնզի վրա եղած մի արձանագրություն ասում է՝ «U-bu ša'An- hi-ti ^{mi}Sub-ri-a-a ak-šu-ud - «Ուրուն, Անխիթի Շուպրիացու քաղաքը, գրավեցի»: Հնարավոր է, որ Ուրու-մեի կամ Ուպու-մեի մասին է խոսքը: Ֆուն գյուղը պահպանել է Շուպրիայի հին մայրաքաղաքի անունը, այն տեղավորված է Իլիջայի մոտ, նույն անունը կրող կազայի կենտրոնում: Թվում է, թե դա նույն գյուղն է, որը կոչվում է Օպուն կամ Օփուն, հայկական մի գյուղ, Իլիջայից հետո ամենամեծը Կազայում, տն՝ B. Мавевский, Военно-статистическое описание Ванского и Битлянского владетов. Приложение, էջ 150: Օպունը, գուցե, հայկական ձևն է, իսկ Ֆունը՝ բորբակա՛ն:

հարցմանը, խոսքը Միտայի մասին է, այսինքն՝ Միդասի¹: Դ-ա, ուրեմն, Փոյուզիայի թագավորն է, որը կիմմերներից հաղթվելով, անձնասպան եղավ 675 թվականին: Այսպիսով հաստատվում է Ռուսայի վերաբերյալ հարցման այն թվականը, որ մենք որոշեցինք²:

Ինչո՞ւմն էր կայանում Միտայի թշնամությունը, որն անհանգստացնում էր Ասարխադդոնին: Այդ հնարավոր չէ ասել, որովհետև դրան վերաբերող՝ Շամաշին ուղղված խնդրանքի տեսքատը շատ է վնասված:

Հնարավոր է, որ Փոյուզիայի և Ուրարտուի միջև գոյություն է ունեցել համաձայնություն Ասորեստանի դեմ, ինչպես Սարգոնի թագավորության ժամանակ, և նրանք ունեին պատասխանատվության իրենց բաժինը Թաբալի, Խիլակկուի և այլ երկրների ջլատման գործում՝ ի վնաս Ասորեստանի:

Ասարխադդոնը մահացավ՝ չհասցնելով ճնշել այդ ընթացությանը երկրներին և առանց կարողանալու վերջ տալ Մանայում ստեղծված ազգնապալի դրությանը: Ուրարտուի թագավոր Ռուսան նրանից հետո ապրեց և վերահաստատեց դիվանագիտական կապերը նրա հաջորդի հետ: Ասարխադդոնը մեռավ իր թագավորության 12-րդ տարում, մարշևանի 10-ին = 669 թվականի նոյեմբերին:

6. ԱՇՈՒԿՐԱՆԻՊԱԼ ԵՎ ՍԱՐԴՈՒՐԻ III

Աշուրբանիպալը (669-626) իր թագավորության առաջին տասը տարիների ընթացքում կլանված լինելով Եգիպտոսի և Էլամի դեմ պատերազմներով, կարողացավ վերադառնալ և զբաղվել մեզ հետաքրքրող հարցերով միայն մոտավորապես 660 թվականին: Բացի դրանից, իրադարձություններն ընթանում էին հոգուտ Ասորեստանի, նույնիսկ առանց նրա միջամտության:

¹ J. A. Knudtzon, *ՅՂվ. աշխ., № 51:*

² Միտա անունը շփոթեցրել է Յո. Կնուդզոնին (*ՅՂվ. աշխ., էջ 151*) և նրան մտածել է տվել Սարգոնի ժամանակակից Միտայի մասին, մինչդեռ հարցումը կատարվել է Ասարխադդոնի թագավորության ժամանակ: Սակայն նա մոռացել է, որ Ասարխադդոնի օրով ևս կար մի Միտա, որն անձնասպան եղավ 675 թվականին, համաձայն Հուլիոս Ափրիկանոսի և Եվսեբիոսի, որոնք Միդասի մահը դնում են Արրահամի երայի 1341 թ., այսինքն (2016-1341=) 675 թ., տն՝ H. Gelzer, *Sextus Julius Africanus*, I, էջ 179: Եվսեբիոսի հայկական քարոզմանության մեջ նշված՝ Արրահամի 1321 (2016 - 1321=) 695 թ. գրչական սխալ է, ընդօրինակող գրչին Ի տառը (=20) շփոթել է Խ (=40) տառի հետ: Այդ Միտայի և Սարգոնի ժամանակակից Միտայի աղերսն՝ այլ հարց է: Դրանց նույնացման համար ոչ մի խաչընդոտ չկա, թեպետև բացառված չէ երկրորդ Միտայի գոյությունն ընդունելու հնարավորությունը որպես Սարգոնի ժամանակակից Միդաս I-ի թոռան, ինչպես նրա ժամանակակից ուրարտացի Ռուսան թոռն էր Ռուսա I-ի, Միդաս I-ի ժամանակակից ու դաշնակցի:

Լուրդի հեռավոր երկրի թագավոր Գուգուի մի դեսպանություն գալիս է Աշուրբանիպալի պալատը՝ նրա բարեկամությունը հայցելու: Մա Լիդիայի թագավոր Գիզեսն էր, որն այդ գործողությանը դիմեց կիմմերական վտանգի սպառնալիքի ներքո: Առանց իրական օգնության, Ասորեստանի անունը միայն բավական էր, որպեսզի Գիզեսը քաջությամբ գոտեպնդվեր և կիմմերներին պարտության մատներ:

Միլիդի Մուգալլուն, Խիլակկուի Մնդաշարմեն ու հավանական է նաև Թարալի Իշկալլուն, տեսնելով, որ կիմմերների պարտության հետևանքով իրենց հենարանը բեկվեց, շտապեցին խաղաղություն կնքել Ասորեստանի հետ և ճանաչել նրա գերիշխանությունը¹:

Աշուրբանիպալը որոշեց հաշվեհարդար տեսնել Մանայի թագավոր Ախշերիի հետ: Վերջինս, սկյութական հորդաների օժանդակությամբ, խլել էր Ասորեստանից բազմաթիվ քաղաքներ: Աշուրբանիպալը մտավ Մանա երկիրը և գրավեց Իզիրաու մայրաքաղաքը: Հաղթված Ախշերին ապաստանեց Իշտատտի քաղաքում և շուտով կործանվեց՝ զոհ դառնալով ժողովրդական ապստամբության: Հաջորդեց նրա որդի Ուալլին, որը հպատակվեց հաղթողին: Իր որդի Էրիսիննիին տվեց նրան որպես պատանդ, իսկ աղջկան՝ թագավորական հարեմին: Մանան կորցրեց Ասորեստանից գրաված քաղաքները²:

Շուպրիայում տեղի ունեցած մի միջադեպ քիչ մնաց խանգարեց Ասորեստանի և Ուրարտուի միջև գոյություն ունեցող խաղաղությունը: Ոմն Անդարիա՝ Լուրդի մարզի կուսակալ և ուրարտական զորապետ³, փորձեց հարձակվել Շուպրիայի վրա, բայց ձախողվեց:

Ասորեստանին հավատարիմ Կուլլիմերիի բնակիչները բռնեցին նրան, գլուխը կտրեցին և ուղարկեցին Աշուրբանիպալին:

¹ Աշուրբանիպալի Տարեգրություն, II, 68 և 59, հրատ. M. Streck, *Ašurbanipal und die letzten assyrischen Könige*, 1916: Մուգալլուն այստեղ կոչված է Թարալի թագավոր, անշուշտ, ըստ այս աշխարհագրական տեղանիսի (այն իմաստի: Թարալի (Կատառնիա) իշխանը այդ ժամանակաշրջանում Իշկալլուն էր: Հավանական չէ, որ Մուգալլուն Իշկալլուի իշխանությունն իր երկրին միացրած լինի:

² Տարեգրություն, II, 126 և շար., և Գլան B, III, 16-36: Վերջինը Տարեգրության մի այլ տարբերակ է, քվարկուն է Աշուրբանիպալի կողմից գրաված Մանայի քաղաքները՝ Ախուիաշ, Խալլու, Պաշա-սու, Բուսուտու, Աշդիաշ, Ուրկիանուն, Ուպպիշ, Սիխուա, Նագիհիրի: Ասորեստանի թագավորի կողմից պաշարված քաղաքներն են՝ Իզիրաու, Ուրմեսոն և Ուզբիա (հմտ. Արմաիդը և Չիբիան, 716 թ. հիշատակված Մարգոնի կողմից): Աշուրբանիպալը խոստովանում է նաև, որ մանացիները ասորեստանցիներից խլել էին Պադդուրի, Շարրուկքի, Գուսուն, [...] բուտե քաղաքները: Պադդուրին սահմանային կայան էր Շամշի-Ադադի ժամանակ (823-810), որը ասում էր, թե Ասորեստանը տարածվում էր Պադդուրիից մինչև Կար-Մամանասար (Կարկենձի ղիմաց): Col. II, 7, Keilinschriftliche Bibliothek, I, էջ 179:

³ Անդարիան Լուրդիի hazanu-ն է՝ ըստ Տարեգրության, IV, 6, մինչդեռ Ասարխադդոնի Պրիզման, հրատ. Վ. Շելլի, էջ 46, նրան ուրարտական կուսակալ է անվանում:

Այսպիսով, երեք այն իշխանությունները, որոնցում իրար էին հանդիպում և հակադրվում Ուրարտուի և Ասորեստանի շահերը՝ Շուպրիան, Մանան և անդրեփրատյան պետությունները, վերջնականապես անցան Ասորեստանին:

Այլևս տարածայնության առիթ չկար: Այսուհետև երկու երկրները կապրեն որպես լավ հարևաններ: Իրոք, հակառակ իր ռազմատենչ եռանդին, Աշուրբանիպալը ոչ մի ընդհարում չունեցավ Ուրարտուի հետ: Ուրարտուի գահի վրա նրա ժամանակակիցներն էին՝ Ռուսան, այն, որ իշխում էր Ասարխադդոնի ժամանակից ի վեր, և Մարդուրին: Երկուսն էլ ասորեստանցիներին ծանոթ են Աշուրբանիպալի պալատ ուղարկած իրենց դեսպանություններով: Այդ դեսպանությունների քվականները և նպատակը ենթակա են քննության:

Առաջին դեսպանությունը Արբելայում ներկա եղավ այն հանդեսին, որով Ասորեստանի թագավորը տոնում էր Էլամի թագավոր Թեումմանի դեմ տարած հաղթանակը: Թեումմանը Էլամական Թեպ-Խումբանի ասուրական ձևն է: Մա Էլամի թագավորի նետածիզների պետ Ուրտակն էր, որ սպանեց թագավորին և հափշտակեց նրա գահը: Իր իշխանությունն (675-655) ապահովելու համար նա արքայեց թագավորական ամբողջ ընտանիքը, ներառյալ թագածառանգ Խումբանիգաշին: Աքսորյալներն ապաստանեցին Ասորեստանի թագավորի մոտ: Հափշտակիչն անխոհեմություն ունեցավ նրանց ետ պահանջելու: Այս լուրջ պարտականությունը հանձնարարվեց պատվիրակներ Նարուդամիկին և Խումբադարային, որոնք ներկայացան Աշուրբանիպալի պալատը: Բնականաբար, պահանջը մերժվեց: Աշուրբանիպալը պատվիրակներին պահեց և զորք ուղարկեց Թեումմանի դեմ:

Խորաքանդակներից մեկը, որոնցով Աշուրբանիպալը զարդարեց Նինվեի իր պալատի դահլիճների պատերը և որը հայտնաբերվեց 1858 թվականին, հետաքրքրական տեսարան է ներկայացնում:

Ասորեստանի թագավորը շքեղորեն զարդարված մի մարտակառքում կանգնած է մի ներքինիի բռնած հովանոցի տակ: Կառքի դիմաց երկու ասուրական զինվորներ պահում են երկու Էլամական պատվիրակներին, իսկ նրանց դիմաց տեղ են գրավել Ռուսայի պատվիրակները: Էլամական պատվիրակներից մեկը հաղթանդամ է, աչքի ընկնող դիմազոծերով, մյուսը ձեռքում բռնած ունի մի սալիկ՝ պատգամը: Երկուսն էլ հագած են երկար պատմուճան, իսկ գոտիներին կրում են խարազաններ՝ որպես իրենց արժանապատվության նշան: Բացատրական արձանագրությունն ասում է.

«Ես, Ասորեստանի թագավոր Աշուրբանիպալս, իմ տիրակալներ Աշուրի և Իշտարի օգնությամբ հաղթեցի թշնամիներին, ի կատարյալ հազուրդ իմ

սրտի ցանկության: Ուրարտուի թագավոր Ռուսան լսեց Աշուրի հզորության մասին խոսքը, և սարսափը նրան զգետնեց:

Նա իր մեծամեծներին ուղարկեց Արբելա՝ իր հարգանքներն ինձ մատուցելու: Ես նրանց դիմաց կանգնեցրի Էլամի մեծամեծներ Նաբուդամի-կին և Խունբադարային՝ լպիրշ պատգամի սակիկը ձեռներին»¹:

Այդ տեսարանը տեղի է ունենում 655 թվականին, Թեուսմանի ողբերգական վախճանից առաջ: Ար ամսին (15 հուլիս - 15 օգոստոս) Աշուրքանի-պալը գտնվում էր Արբելայում, որտեղ Իշտարից օգնություն էր խնդրում դուրս գալու արշավանքի Թեուսմանի դեմ: Հետևյալ ուլուլ ամսին (15 օգոստոս - 15 սեպտեմբեր), նա մեկնեց²:

Այս թագավորի Տարեգրության մեջ կա շատ վնասված մի տեղ, ուր մնացել են միայն հետևյալ բառերը՝ «Ուրարտուի թագավորը» և «Արբելա»³: Եթե դա Ռուսա թագավորի ուղարկած դեսպանության մասին է, պետք է ընդունել, որ նա Ասորեստան էր հասել ճիշտ այն պահին, երբ թագավորն Արբելայում էր, ար ամսին, ուր և իր ցույցը կատարեց՝ դեսպանների վրա տպավորիչ ազդեցություն բողոնելու համար⁴: Այսպիսով, ճշգրիտ մի թվական գալիս է ապացուցելու, որ Ռուսան 655 թվականին դեռ գահի վրա էր: Եթե ճիշտ է, որ Թեուսմանի պարտությունն ու զլխատումը տեղի է ունեցել այդ տարին, ուրեմն, դեսպանությունը ժամանել է նախքան այն հաղթահանդեսը, որը եղավ թագավորի՝ Թեուսմանի դեմ տարած հաղթությունից հետո: Հետևաբար, դեսպանության նպատակը պետք է լիներ Ռուսայի շնորհավորանքները հաղորդել Աշուրքանիպալին՝ էլամական պատերազմի հաջող ավարտի կապակցությամբ:

Տարեգրության վերջում մի ծանոթություն հաստատում է մի երկրորդ դեսպանության գալը, ուղարկված այս անգամ Սարդուրի թագավորի կողմից: Տեքստն ասում է. «Ուրարտուի թագավոր Սարդուրին, որի թագավոր-հայրերն ուղարկել են իմ հայրերին „եղբայրություն“ (այսինքն՝ եղբայրական ողջույն), այդ ժամանակ լսելով այն հուժկու գործերի մասին, որ մեծ աստվածները սահմանել էին ինձ համար, ուղարկեց ինձ հանձնելու, ինչ-

պես որդին իր հորը, տիրակալին պատշաճ ողջույն, և այդ առթիվ նա ինձ հղեց հետևյալ պատգամը՝ „Ողջույն իմ տեր թագավորին“ և հարգանքով ու խոնարհաբար իմ դիմաց բերել տվեց իր ծանրակշիռ նվերը»¹:

«Եղբայրական ողջույն»-ը հակադրվում է «տիրակալին պատշաճ ողջույն»-ին այն իմաստով, որ Ուրարտուի հին թագավորները Ասորեստանի թագավորների հետ վարվում էին որպես եղբայրներ, այսինքն՝ հավասարը հավասարի հետ, մինչդեռ Սարդուրին նրա նկատմամբ հանդես է գալիս որպես որդի իր հոր նկատմամբ, ուրեմն, որոշակիորեն Ասորեստանի թագավորից իրեն ցած է համարում: Սակայն արդյո՞ք դա վասալական կախման մասին է վկայում, ինչպես ընդունում են ոմանք: Տեքստն ամենևին այդպիսի եզրակացության հիմք չի տալիս: Հոր և որդու միջև եղած հարաբերությունը վասալական հարաբերություն չէ: Ստորական վճարում էր որոշ հարկ, մինչդեռ Սարդուրին միայն նվերներ էր ուղարկել: «Ողջույն իմ տեր թագավորին» բառերը վասալական նշանակություն չունեն: Դա շատ սովորական մամակագրական ձև է, որ գործածվում է թագավորին ուղղված բոլոր նամակներում՝ մահանգների կուսակալների, զանազան գործակալների և պաշտոնյաների, և նույնիսկ գահաժառանգների կողմից: Նույն ինքն Աշուրքանիպալը դիմում էր իր հորը նույն բառերով²:

Նույնիսկ եթե Աշուրքանիպալը կամենար ասել, թե Սարդուրին ինքն իրեն նկատում էր որպես ստորակա, պատմական տեսակետով դա անարդարացի հավակնություն կլիներ: Ասորեստանը՝ Բաբելոնի, Էլամի և Արարիայի դեմ պատերազմների մեջ մխրճված, ոչ մի վտանգ չէր ներկայացնում Ուրարտուի համար, նույնիսկ իր հաղթանակներով հանդերձ: Ի՞նչը կնդեր Սարդուրիին ինքնական խոնարհվելու Ասորեստանի թագավորի առջև³:

Սարդուրին, շատ ավելի երիտասարդ լինելով Աշուրքանիպալից, որը նրա հոր տարիքին էր, կարող էր Ասորեստանի թագավորին «իմ տեր» կոչել, ինչպես թագավորների որդիներն էին ասում առանց իրենց հոր ստորականները լինելու⁴:

Դեսպանության ճշգրիտ թվականը հայտնի չէ: Նա եղել է առաջ, քան 636 թվականի այն վավերագիրը, որը հիշատակում է վերոհիշյալ դեսպանու-

¹ A. H. Layard, *Niniveh and Babylon*, էջ 344-346. M. Streck, II, էջ 317 և 421. G. Maspero, *Histoire ancienne de l'Orient*, III, էջ 404:

² Տարեգրություն, Գլան B, V, 16-21, հիշատակում են ար ամիսը, V, 77 ուլուլ ամիսը: Խոսելով Թեուսմանի ուղարկած պատվիրակների ժամանելու մասին, IV, 95, գործածում են arhi-šam բառը, որ U. Եարեկը թարգմանում է «ամսական», «ամենամայա»(?): Թվում է, թե ուզում են ասել, որ ուղարկվածները հասել էին նախորդ, այսինքն՝ դուրս ամսին (= 15 հունիս - 15 հուլիս) 655 թվականին:

³ Գլան B - M. Streck, II, էջ 137:

⁴ M. Streck-ը, I, էջ CDLXVI, եթև կարծում է, որ Թեուսմանի վախճանը եղել է 655 թվականին, ապա իզոր է Ասորեստան ժամանելու թվականը համարում 654 թվականը:

¹ Տարեգրություն, Գլան A, X, 40-50 - M. Streck, II, էջ 85:

² Օրինակ՝ Ռ. Հարպիերի նամակում՝ 1026 = Ռ. Պֆայֆեր, 93՝ «Իմ տեր թագավորին, քո ծառա Աշուրքանիպալ»:

³ Մանվանդ չ. Վիկելերը, որ հղացել է վասալության գաղափարը՝ *Altorient. Forschungen*, I, էջ 394: M. Streck-ը, նշվ. աշխ., էջ 85, կարծես այդ ստիճան համամիտ է, բայց I, CCLXXXVI-ում այն մերժում է և իրավացիորեն:

⁴ Մեր օրերին դեռևս Պարսկաստանում երիտասարդ իրենց հորը «աղա» տեր են կոչում:

թյունը: Առաջին՝ Ռուսայի հղած դեսպանությունը 648 թվականին գրված վավերագրում հիշատակված վերջին եղելությունն է: Երկրորդ դեսպանությունը պետք է որ այդ թվականից ավելի ուշ լինի: Այսպես, ուրեմն, այդ դեսպանությունը 648-636 թվականների միջև է ընկնում:

Ինչպիսի՞ համձմարարություն ուներ այդ դեսպանությունը: Դա անհայտ է մնում: Կ. Ֆ. Լեման-Հաուպտի այն կարծիքը, թե դեսպանությանը համձմարարված էր Սարդուրիի թագադրությունն ազդարարել ասորական պալատին, անշուշտ, ավելի համոզիչ կլիներ, եթե կարելի լիներ այն համաձայնեցնել բնագրի հետ, որն ասում է, թե Սարդուրիի ուղարկած պատվիրակները եկել էին Աշուրբանիպալին շնորհավորելու իր կատարած փայլուն սխրագործությունների համար: Ասորեստանի թագավորը նոր էր ճնշել Բաբելոնի թագավոր՝ իր եղբայր Շամաշշուումուկինի ապստամբությունը և ճգնել նրա դաշնակիցներին՝ Էլամի թագավոր Ումմանալդաշին ու Արաքիայի թագավորներին: Խոսքը հենց այդ սխրագործությունների մասին է, որոնք տեղի էին ունեցել 648-636 թվականներին: Շամաշշուումուկինի վրատարած հաղթանակը 648 թվականին էր: Երկու արշավանքները Էլամի դեմ և մյուս երկուսը՝ Արաքիայի դեմ տեղի են ունեցել 648 թվականից ավելի ուշ և 636 թվականից ավելի վաղ: Վերջին թվականը վերոհիշյալ իրադարձությունները հիշատակող վավերագրի թվականն է: Ումանք կարծում են, թե այդ արշավանքները կատարվել են 648 թվականին մոտ ժամանակներում, ուրիշներ ենթադրում են՝ մոտավորապես 642-639 թվականներին: Դրանք զուտ ենթադրություններ են: Աշուրբանիպալը, որն անգուր և վրեժխնդիր բնավորություն ուներ, համենայն դեպս տարիներ չէր սպասի պատժելու համար Էլամին, որն օգնել էր իր ապստամբ եղբորը: Հավանական է, որ Էլամական արշավանքները հաջորդել էին Շամաշշուումուկինի դեմ տարած հաղթանակին, և Էլամի թագավորության կործանումը 646 թվականի վերջերին արդեն կատարված իրողություն էր: Այս նույն պատճառով պետք չէ շատ հեռու տանել և արաբ առաջնորդների դեմ ուղղված արշավանքը:

Էլամի հազարամյա տերության մայրաքաղաք Սուզի գրավումն ու կողոպտումը Աշուրբանիպալի սխրագործություններից ամենատպալմորիչն էր: Եթե Սարդուրիի դեսպանությունը իսկապես որևէ կապ ուներ ասորական զենքի հաջողության հետ, առաջին հերթին հարկավոր էր մտածել

Էլամի անկման մասին, որը կարող էր Ուրարտուի թագավորին դրդել «իր ողջույնն» ուղարկել հաղթողին, և այդ գործողությունը տեղադրել հենց 645 թվականին¹:

Ասորական վավերագրերը Ուրարտուի մասին այլևս չեն խոսելու: Աշուրբանիպալի «սխրագործությունները» Ասորեստանի համար աղետաբեր եղան: Ասորեստանի թագավորի կողմից քաղաքական սխալ էր Էլամի կործանումը: Այդ երկիրը պատնեշ էր կազմում մարական ցեղերի առաջխաղացման դեմ և չափավորում Բաբելոնի փառասիրությունը: Նրա կործանումը բացեց Ասորեստանի այդ թշնամիների ախորժակը: Աշուրբանիպալի հաջորդները՝ Աշուրետիլիամին (626-621), Սինշարիշկունը (620-612) և Աշուրուբալիտ II-ը (611-609) անկարող եղան կասեցնել իրենց երկրին սպառնացող ճակատագրական հարվածը:

Աշուրբանիպալի մահից անմիջապես հետո Բաբելոնը թոթափեց ասորական լուծը, և Նաբոպալասարը, որը եռանդուն տիրակալ էր, նոր պետության հիմքը դրեց ու մեղացիների առաջնորդ Կիաքսարի հետ դաշինք կնքեց:

612 թվականի հունիս ամսին Կիաքսարի և Նաբոպալասարի դաշնակից ուժերը պաշարեցին Նինվե քաղաքը: Օգոստոսին արդեն այն գրավված և բոցերի էր մատնված: Աշուրուբալիտն իր ուժերը կենտրոնացրեց Խառանում և դիմադրեց մինչև 609 թվականը, այն տարին, երբ Նաբոպալասարը վերջին հարվածը հասցրեց այդ մեծ պետությանը և ընդմիշտ կործանեց այն:

Ասորեստանի պատմության մեջ ներկա էքսկուրսի արդյունքները մի քանի խոսքով ամփոփելու համար մախ նշենք Ուրարտուի թագավորներին,

¹ G. Smith-ը, The Assyrian Eponym Canon, էջ 162, Մուսի կործանումը 646 թ. է համարում, Վ. Շելլը և Ե. Դորնը՝ 640 թ., Կ. Լեման-Հաուպտը՝ 645 թ., Մ. Շտրեկը՝ 642-639 թթ. միջև: Այս վերջին գիտնականը «unwahrscheinlich» (անհավանական) է գտնում, որ միայն մեկ տարվա անջրպետ գոյություն ունենա Էլամի Ումմանալդաշի դեմ ձեռնարկած առաջին և երկրորդ պատերազմների միջև, դրա համար էլ դեմ է արտահայտվում Մ. Սմիթի առաջարկած թվականին (M. Streck, նշվ. աշխ., CCCXXXVI, ծան. 2):

Սակայն ավելի անհավանական է, որ Աշուրբանիպալը իր ապստամբ եղբոր տապալումից հետո տասը տարի հետաձգած լինի Էլամից լուծելիք վրեժը՝ ժամանակին ապստամբին օգնած լինելու համար: Սուտում հսկայական ավար գրավելու հենակարը նույնպես շարժանիք էր արշավանքն շտապեցնելու: Շամաշշուումուկինն սպանվեց 648 թ., Գլամ A (կամ Ռամասսի)-ն, որը գրված է 648 թ. աք մասին, դեռևս չգիտե նրա մահը, որտեղից հետևում է, որ այդ մահը տեղի է ունեցել նույն տարվա երկրորդ կեսին: Առաջին արշավանքն Էլամի դեմ սկսվել է սիմանու ամսի սկզբին (Գլամ A, IV, 110) մայիսի 15-ին. երկրորդը վերջացավ կիսիմու ամսում (նոյեմբերի 15 - դեկտ. 15), տե՛ս նույնը, VI, 122: Հավանական է, որ դա 647 թ. սիմանն է, իսկ կիսիմը՝ նույն տարվանը կամ 646 թվականինը: Սարդուրիի դեսպանությունը եկած կլիներ հաջորդ տարի՝ 645 թվականին:

որոնցից Արամեն, Սարդուրի I-ը, Ուշայինան իշխեցին IX դարում, Արգիշտի I-ը, Սարդուրի II-ը, Ռուսա I-ը՝ VIII դարում, Արգիշտի II-ը, Ռուսա II-ը և Սարդուրի III-ը՝ VII դարում:

Այա հիշենք Ասորեստանի և Ուրարտուի միջև գոյություն ունեցած բացառապես ռազմական հարաբերությունները, նկատի առնելով միաժամանակ, որ եղած աղբյուրները միայն ռազմական հաղորդումներ են: Վերջապես, հիշենք նաև մի չեզոք գոտի, մի տեսակ terra nullius [ոչ ոքի հողը], այդ երկու պետությունների միջև: Դա լեռնային տարածքների գոտին է, որը տարածվում է Եփրատից մինչև Չագրոսի լեռնաշղթայից այն կողմ և ընդգրկում է երկու Տիգրիսների և երկու Չաբերի վերին հոսանքները:

Այդ միջանկյալ գոտում և հանում նրա երեք դար տևած մի համառ մրցակցություն ծավալվեց՝ երկու կողմերի փոփոխական հաջողությամբ: Եթե Ասորեստանին հաջողվեց երեք անգամ թափանցել Ուրարտու, վերջինս էլ իր հերթին խորացավ մինչև Մուծածիր՝ Ռովանդուզի հյուսիսում և չդադարեց իր քաղաքական ազդեցությունը զգացնել Եփրատի ավազանում՝ Մելիտենեից մինչև Արպաղ:

Մխալ կլինեք Ասորեստանը միշտ տեսնել հաղթողի դերում, վստահելով ասուրական ռազմական հաղորդումներին: Ասորեստանը նույնպես դժվարին ժամեր է ապրել Ուրարտուի ճնշման ներքո: Ռազմական հաղորդումների՝ դարից դար կրկնվող, պարզապես պատճենավորվող, ծեծված ու միանգամայն պայմանական պատմելաձև, միատեսակ արտահայտություններ, միատեսակ ձևակերպումներ, միատեսակ նախադասություններ՝ ռազմական հաջողությունը նկարագրելու համար, ներբողական մտայնություն, որը հասցնում է մինչև ծիծաղելի չափազանցությունների, այս բոլորը հեռու է ծառայելուց այն ճշմարտության բացահայտմանը, որին հետամուտ է պատմագիտությունը¹:

Արշավանքների երթուղիների քննությունը, քաղաքների, նվաճված հայտարարվող երկրների տեղադրումը, որոնցով մեր շարադրանքը թերևս շատ է ծանրաբեռնված, թույլ են տալիս որոշ չափով ստուգելու այդ հաղորդումները: Երբ ասուրական զենքերին այնքան զովասանքներ շոայելուց հետո հայտնի է դառնում, օրինակ, որ ուրարտական զորքերը բանակել են Ասորեստանի մայրաքաղաքից հարյուր կիլոմետր հեռավորության վրա, Կար-

¹ Սարգոնը հավաստիացնում է, որ ութերորդ արշավանքի ժամանակ Ուրարտուում (որտեղ նա այնքան բերդոր կործանեց՝ «լի քաջարի մարտիկներով») ինքը կորցրել է միայն 6 մարդ՝ մեկ կառավար, 2 հեծյալ և 3 սակրավոր:

Ասորիսաղոմը Շուպրիայի դեմ կատարած արշավանքի ժամանակ իր կորուստը գնահատում է ճիշտ նույն ձևով՝ «մեկ կառավար, 2 հեծյալ, 3 սակրավոր»:

սիպպարի դիմաց, ապա այս միակ փաստն իսկ անժխտելիորեն ավելի մեծ արժեք է ստանում իրերի ճշմարիտ դրությունը մեզ ներկայացնելու համար, քան թագավորական գրագիրների ճոռոմ լեզուն:

Այժմ անցնենք ուրարտական վավերագրերի քննությանը:

ՈՒՐԱՐՏՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
(ԸՍՏ ԻՐ ՎԱՎԵՐԱԳԵՐԻ)

1. ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՈՍ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ուրարտուի առաջնորդները, վաղ ժամանակներից սկսած, ասորեստան-ցիներից փոխ էին առել սեպածև գրության համակարգը, որպեսզի իրենց լեզվով շարադրեին այն, ինչ որ իրենք արժանի էին համարում հիշատակության: Նրանց արձանագրությունների մի մասը հասել է մեզ, և այն լրիվ հաստատում է ուրարտական թագավորների ցանկը, որը մեզ ներկայացրել են ասորեստանյան վավերագրերը: Այդ արձանագրությունները, անշուշտ, նոր լույս են սփռում ասորա-ուրարտական հարաբերությունների վրա: Նախքան դրանց քննությանն անցնելը, անհրաժեշտ է մի հայացք նետել Ուրարտուի գրական ժառանգության վրա, համառոտակի ներկայացնելով ձեռքի տակ գտնվող և պատմաբանի օգտագործման ենթակա նյութերի ամբողջությունը:

Ուրարտական հնությունների առաջին «որոնող» Ֆ. Է. Շուլցից հետո նորանոր հայտնաբերումները բազմաթիվ երկրի վիճակագրական տեքստերի թիվը: Դեռևս գոյություն չունի բոլոր հայտնի արձանագրությունների լրիվ ժողովածու: Ա. Հ. Մեյսը 1882 թվականին JRAS-ի հատորներից մեկում հավաքեց, վերծանեց և անգլերեն թարգմանեց հիշյալ թվականից առաջ հրապարակված արձանագրությունները: Հետագայում ևս նա շարունակեց նոր արձանագրությունների հրապարակման գործը նույն հանդեսի հատորներում:

Կ. Ֆ. Լեման-Հաուպտը և Վ. Բելքը, 1893-1899 թվականներին ճամփորդելով Հայաստանում, տեղում ստուգեցին վավերագրերը, լուսանկարեցին, պատճենավորեցին, ապա և նոր արձանագրություններ հայտնաբերեցին: 1900 թվականին նրանց աշխատանքի արդյունքների մասին մի նախնական զեկուցագիր հրապարակ եկավ հետևյալ վերնագրով. Bericht über die Ergebnisse der von W. Belck und C. Lehmann, 1898-1899 ausgefuerten Forschungsreise nach Armenien.

Ավելի ուշ՝ 1928 թ. Կ. Ֆ. Լեման-Հաուպտը հրապարակեց առաջին, իսկ 1935 թ.՝ երկրորդ պրակը ուրարտական արձանագրությունների ժողովա-

ծուի, հետևյալ խորագրով՝ Corpus inscriptionum Chaldicarum: Այստեղ գետեղված են սեպագիր արձանագրությունների լուսանկարչական վերարտադրությունները և դրանց վերծանությունը: Դժբախտաբար, հեղինակի մահն արգելք հանդիսացավ արժեքավոր այդ հրատարակության ավարտին: Արձանագրությունների ցուցակը պետք է ընդգրկեր 193 կտոր: Հրապարակված երկու պրակները պարունակում են 1-100 կտորները (15):

Արձանագրությունների մասին ստորև բերվող հակիրճ շարադրանքում մենք կհետևենք Corpus-ի նախապատրաստական մասում ընդունված կարգին: Այդպես կվարվենք և՛ արդեն ավարտված, և՛ ծրագրային վիճակում մնացած մասերի նկատմամբ: Մենք կնշենք ամեն մի արձանագրության համապատասխան լուսանկարչական տախտակի համարը, ինչպես նաև հետևյալ ժողովածուներում տրված համարը՝ B = Bericht über die Ergebnisse, Sayce = The Cuneiform Inscriptions of Van, Planche (PL.) = Tafelband des Corpus: Այդ ժողովածուներից հետո հրապարակված արձանագրությունները ցույց կտրվեն ըստ իրենց հրատարակությունների:

Այս արձանագրությունները բողել են Ուրարտուի թագավորները, ուստի և դրանք կգրանցվեն ըստ այդ թագավորների անունների հաջորդականության: Ուրարտագիտության ներկա դրությամբ, որին կանդրադառնանք հետագայում, անհնար է տալ տեքստերի լրիվ թարգմանությունը: Եթե անգամ հնարավոր լիներ, դարձյալ մեր նպատակը դա չէ: Մենք ուզում ենք ամենից առաջ հստակ գաղափար կազմել ուրարտական վիճակագրական գրականության բովանդակության մասին: Այդ իսկ պատճառով մենք բավարարվում ենք ընդգրկելով միայն էականն ու ստույգը տեքստերում:

Երբ խոսքը ռազմական գործողությունների մասին է, մենք կհիշատակենք այն երկրները, քաղաքները, թագավորներին, որոնց դեմ էին ուղղված արշավանքները: Երբ հարցը կառուցումների մասին է, մենք կպահպանենք բնագրային տերմինները, որոնք ցույց են տալիս կառուցումների զանազան տեսակները:

Մենք որոշիչները նշել ենք հետևյալ կերպ՝ ILU = d(ieu), «աստված», ALU = v(ille), «քաղաք», MATU = p(ays), «երկիր», I = հատուկ անուն: Հոլովական վերջավորությունները բաժանված են գծիկով: Մենք նախընտրեցինք անունները վերարտադրել այնպես, ինչպես գտնվում են տեքստերում, այսպես՝ Meišta-ni, որտեղ Meišta-ն քաղաքի անուն է, իսկ ni-ն հոլովական վերջավորություն:

ՄԱՐԴՈՒՐԻ ԼՈՒՏԻՊՐԻՒ ՈՐԴԻ

1-3. Վամ, Նավահանգստի դարպասին (Իսրելեկափուսի): Ամենահին արձանագրությունը՝ գրված ասուրերեն լեզվով, ավերակ դարձած հին պարսպի վրա.

Tuppu ša ^{1d}Sar-duri apil ¹Lu-ti-ip-ri šarri rabi šarru dan-nu šar kiš-ša-ti šar ²Na-i-ri šarru ša-nin-šu lâ išû ^{3m}rêû tab-ra-te la-di-ru tu-qu-un-te šarru mu-šak-niš lâ kan-su-te-šu.

^{1d}Sar-duri apil ¹Lu-ti-ip-ri šar šarrâni ¹ša kâli-šu-nu šarrani ma-da-tu- am-ḥur ^{1d}Sar-duri apil ¹Lu-ti-ip-ri izakkar ma-a ana-ku pu-la-ni an-nu-te ištu libbi ¹Al-ni-u-nu, na-sa-ka ana-ku dûru an-ni-u ar-ti-ši-ip.

«Լուտիպրիի որդի Սարդուրիի արձանագրությունը՝ մեծն թագավորը, հզոր թագավորը, բոլորի թագավորը, Նահիրիի թագավորը, թագավոր, որ իր հավասարը չունի: Այն հիանալի հովիվը, որ չի վախենում ոչ մի դիմադրությունից, թագավոր, որ ընթոսաներին հնազանդեցնում է: Լուտիպրիի որդի Սարդուրին, թագավորների թագավորը, որ բոլոր թագավորներից հարկ է ստանում: Լուտիպրիի որդի Սարդուրին ասում է՝ այս քարերը բերեցի ¹Alniun-ից, բարձրացրի այս պարիսպը»¹:

PL. XL, XLI; B. 2-3; Sayce III.

IŠPUNI SARDURİHINI

ԻՇՊՈՒՐԻՆԻ ՄԱՐԴՈՒՐԻՒ ՈՐԴԻ

4. Չովաստամ², Վամի մուտ: Սյուների բեկորների վրա՝ Ispuiniše Sardurihiniše ini BITU zaduni, «կառուցեց այս տունը».

PL. XLII; B. 4-9.

5-6. Չովաստամ: Զարի վրա ընթեռնելի է ⁴Quera, «Կուերա աստված».

BITU-āsei Ištu(uini).

PL. XL, XLI; B. 10; Sayce VI.

¹ Կ. Լեման-Հաուպտը մնացնում է Mauet, Kastell (պարիսպ, դղյակ): Մ. Շորեկը, Assurbanipal III, էջ 458, վիճարկում է մնացնում է հինգ-ի Festung (ամրոց) իմաստը: Սակայն Դուր-շարակինը այն նշում է որպես Սարգոնի հիմնադրում: Անկախ Մ. Շորեկի դիտողությունից, մենք նախընտրում ենք «պարիսպ» բարձրանությունը: Հայ պատմիչ Փավստոսն այն կոչում է «աշտարակ»: Այդ աշտարակից պարսիկները կախեցին Համագասպուտի հայ իշխանուհուն, Պարսկաստանի թագավորի դեմ ապստամբած մի իշխանի կնոջը, տես՝ Փավստոս Բուզանդ, IV, 59 և V, 37:

² Չովաստամ «գով-աստամ - քարն օղի վայր»: Արտասանում են նաև Սևաստամ:

6ա. Ոսկեքակ, Վամի մուտ: Փորված մի քարի վրա, որը, հավանաբար, սյունի հիմք է, երեք անգամ կրկնված է.

Ispuiniše Sardurihiniše ini BITU-e zaduni

PL. I; Belck, Zeit. f. Ethnologie XXIV, 1892.

7-9. Պատմոց, Մանգվերտից հյուսիս-արևելք: Սյունի բեկոր, որտեղ կարդացվում է Իշպուրիների անունը¹:

B. 13; Sayce LIX, LXX.

10. Լեզք, Վամի մուտ: Մի քարի վրա, գուցե սյուն է՝

Ispuiniše Sardurihiniše burganani šidištuni... BITU-ini-šidištuni inuki badusini sui giei šidaguri.

PL. XLII; B. 12; Sayce III.

ԻՇՊՈՒՐԻՆԻ ԵՎ ՄԵՆՈՒՄ

11. Վամ: Թավրիզի դարպասի մուտ, ժայռի վրա՝

Ispuiniše Sardurihiniše Menuaše Ispuinihiniše

Inušpuaše Menuahiniše ⁴Haldiei susie šidištuše(?)².

⁴Haldinili BABU-li... susie šidištuše(?)

20 pahani(եզ), šuše (ոշխար) ⁴Haldini biedini³.

PL. II; B. 18.

12. Կելիշին՝ «կանաչ քարակոթող», Ռավանդուզի հյուսիսում: Երկլեզվյան արձանագրություն՝ ուրարտերեն և ասուրերեն: Իշպուրիների թագավոր ²Šur-ae-ի (=Šurili), թագավոր ²Biaim-ae(= Biainili), իշխան ²Tuš-pa-ի, և նրա որդի Սենուան, հասնելով Արդինի քաղաքը (ասուրերեն՝ Mušasir)՝ iarani šidištu-u... teru-u TUPPU. Իշպուրիներ պարզևներ տվեց՝ պղնձյա և արծաթյա ամաններ, 1112 եզ, 9120 ձի և ոշխար, 12. 480 խոշոր ուլ:

PL. III; B. 17; Sayce LVI; Götze, Zeit. f. Assyriologie XXIX, 1929; Tseret-heli, Revue d'Assyriologie, XXX, 1933.

¹ Ներկայումս Բրիտանական թանգարանում է, անշուշտ, Ոսկեքակից բերված, ուր 1917 թ. մենք տեսանք նման մի քար, որը «stowa vessel» («քարն անոթ») չէ, ինչպես կարծում է Ա. Սեյլը, այլ սյունի հիմք:

² Ավելի շուտ պետք է կարդալ šidištu-u:

³ Ոչ թե bili edini, ինչպես կարդում է Կ. Լեման-Հաուպտը:

13. Վան, քարակոթող Սուրբ Պողոս եկեղեցու խորանի պատի մեջ: Տեսքը խիստ աղճատված է: Կարելի է վերակազմել երկու այլ արձանագրությունների օգնությամբ, որոնք խոսում են նույն նյութի մասին: Խոսքը վերաբերում է մի զինվորական արշավանքի, ընդդեմ Քեիսիոնի երկրի թագավորներ ¹Luša, ¹Katarza, ¹U(i)teruhi-ի: Ավարը՝ 1720 կին, 660 տղամարդ, 26 ձի, 13.540 եզ, 20.785 ոչխար:

PL. IV-V; B. 14; Sayce XXXI.

13ա. Վան, Սուրբ Պետրոս եկեղեցի, № 13-ի պատճենը՝ հայտնաբերված 1917 թվականին Ն. Աղոնցի և Ա. Զալանթարի կողմից:

И. И. Мещанинов, Доклады Академии наук, 1930.

14. Քիուսենց (թուրքերենացված՝ Քազին-օղլի), Արձակ (Արճիշակ) լճի արևմուտքում:

Իշպուիինի և Մենուան՝ ini pulusie kuitu-u «տաշեցին այս քարակոթողը», ⁴Haldi-ն մեկնեց, նրա բանակը (?) հաղթեց ¹Uiteruhi, ¹Luša, ¹Katarza: Իշպուիինի և Մենուան հետևեցին ⁴Haldi-ին և նույն անձանց հպատակեցրին: Իշպուիինի և Մենուայի ուժերն էին՝ 66 մարտականք, 1430 հեծելազոր, 15.760 հետևակազոր ¹:

Լուսանկար՝ Textband I, p. 35; B. 15; J. Friedrich, Einführung ins Urar-täische, p. 52.

15. Խառակոնիս (թուրք.՝ Կարազյունդյուզ): Իշպուիինի և Մենուան ini pulusi kuitu-u «կանգնեցրին այս քարակոթողը»: ⁴Haldi-ն մեկնեց, նրա բանակը հաղթեց ⁴Meišta-ni²-ն և ⁴Baršuai-ի ebani-ն «երկիրը»: Իշպուիինի և Մենուան գնացին ⁴Meišta-edi, նրանց բանակը, huradin-a, կազմված էր 106 մարտականքից, 9174 հեծելազորից, 2704 մետածիզից: Նրանք հպատակեցրին Baršua-i-ի երկրներ՝ ⁴Meišta-ni, ⁴Quuna-ni, ⁴Šaritu-ni, ⁴Nigibi-ni MATU-ni և ավար վերցրին ձիեր ու անասուններ: (Այս միևնույն տեսքը կրկնված է քարակոթողի հակառակ երեսին):

B. 16 (տե՛ս ստորև № 20):

¹ Քիուսենցի եկեղեցում մենք տեսանք մի սյան կես, մեկ կողմում քսան տող արձանագրություն, մյուս կողմում՝ տասնվեց: Լուսանկարչական վերարտադրությունը գտնվում է Ա. Զալանթարի մոտ՝ Երևանում:

² Վերջավորությունը այստեղ՝ ավելի հեռու, բաժանված գծիկով, հույվային վերջավորություն է:

16. Աշրուտ-դարգյա¹, Պազանի մոտ, Կոտուրի ակունքում: Արձանագրությունը փորագրված է դրան ձև ունեցող մի որմնախորշում.

Իշպուիինի և Մենուան susi šidištu-ni, «կառուցեցին մեկ susi», teruni ar-diše «կանոնադրություն սահմանեցին» աստվածներին զոհաբերություն անելու վերաբերյալ՝ մեկ ուլ ⁴Haldi nipsiduli-ni-ին, մեկ եզ ⁴Haldi urpuli-ni-ին, մեկ ցուլ ⁴Uarubani-e-ին, մեկ ոչխար ⁴Haldi-naue BABI «խաղաղական դռներին», մեկ ոչխար ⁴Haldi-naue BELI «խաղաղական զենքին»: Տեսքը կրկնված է.

PL. VI; B. 19; Wüncb-Müller, Denkschriften d. Kais. Akademie d. Wissenschaft, Phil.-hist. KL., Wien, 1888.

17. Մոխրաբերդ, Վանա լճի հարավային ափին: Զարը տեղափոխված է Արթամարի վանքը. գրված է Իշպուիինի և Մենուան ini-li BABU šidištu-li «կառուցեցին այս դուռը»:

B. 20; W. Belck, Zeit. f. Ethnologie, 1892; H. Марр, Записки Вост. отд. Русск. Арх. общ., XXIV, 1917.

18. Վան: Մեերի դուռ (թուրքերեն թարգմանված է Մեեր կապուսի): Այսպես է կոչվում այն դարպասանման խորշը, որը եռակի շրջանակով փորված է Ջիմզիմ ժայռի վրա: Նա ծածկված է երկու պատճեն ունեցող մի արձանագրությամբ, որը աստվածներին զոհաբերություն կատարելու մի կանոնադրություն է, աստվածները թվարկվում են իրենց անուններով: Իշպուիինի և Մենուան ini-li BABU zaduali teirtu ardiše, «տաշեցին այս դուռը և կանոնադրություն սահմանեցին» զոհեր մատուցելու ⁴Haldi-ին², ⁴Tešeba-ին, ⁴Ardini-ին և ուրիշ լեզուների աստվածներին.

⁴ Haldi-e nipsidua-li	6 ուլ
⁴ Haldi-e urpu-e	17 եզ, 34 ոչխար
⁴ Tešeba-a	6 եզ, 12 ոչխար
⁴ Ardini-e	4 եզ, 8 ոչխար
⁴ Huṭuini-e	2 եզ, 4 ոչխար
⁴ Turani-e	1 եզ, 2 ոչխար

¹ Կ. Լեման-Հաուպտի կարծիքով, սա Աշտուակերտն է: Հնարավոր է: Մակայն այդպիսի անուն հայտնի չէ հին հեղինակներին: Նրանք հիշատակում են մի ամրոց, որը կոչվում է Աշի-նուտ, Կոտուրի (այսօրվա Կոտուրը) շրջանում, Ašrutdarga-ի ճշանակում է Աշրուտի (Աշտու կամ Աշինուտ) արքունիք (պալատ):

² Գրված է Haldiei, իսկ պատճենում՝ Haldie:

^d U-a (Tešeba-a?)	2 էգ, 4 ոչխար
^d Nalaini-e	2 էգ, 4 ոչխար
^d Šebitu-e	2 էգ, 4 ոչխար
^d Arsimela-a	2 էգ, 4 ոչխար
^d Anapša-a	1 էգ, 2 ոչխար
^d Diduaini-e	1 էգ, 2 ոչխար
^d Šielardi-e	1 էգ, 2 ոչխար
^d Ĥaldi-naue BELI	1 էգ, 2 ոչխար
^d Atbini-e	1 էգ, 2 ոչխար
^d Quera-a	1 էգ, 2 ոչխար
^d Elipri-e	1 էգ, 2 ոչխար
^d Taraini-e	1 էգ, 2 ոչխար
^d Adaruta-a	1 էգ, 2 ոչխար
^d Irmušini-e	1 էգ, 2 ոչխար
^d abuše urulili-ue šiu-a-li-ի ¹ սաստծոն	1 էգ, 2 ոչխար
^d Alaptušini-e	1 էգ, 2 ոչխար
^d Erina-a	1 էգ, 2 ոչխար
^d Šiniri-e	1 էգ, 2 ոչխար
^d Unina-a	1 էգ, 2 ոչխար
^d Airaini-e	1 էգ, 2 ոչխար
^d Zuzumaru-e	1 էգ, 2 ոչխար
^d Ĥara-a	1 էգ, 2 ոչխար
^d Araza-a	1 էգ, 4 ոչխար
^d Ziuquni-e	2 էգ, 2 ոչխար
^d Ura-a	1 էգ, 2 ոչխար
^d Arši-bedini-e	1 էգ, 2 ոչխար
^d Arni-e	1 էգ, 2 ոչխար
^d Ĥaldini iniriaši-e	1 էգ, 2 ոչխար
^d Ĥaldini alsuiši-e	1 էգ, 2 ոչխար
^d Ĥaldini diruši-e	1 էգ, 2 ոչխար
^d Ĥaldina-ue ^{am} ASI ^{pl}	2 էգ, 4 ոչխար
^d Tešeba ^{am} ASI ^{pl}	2 էգ, 4 ոչխար
^d Arṭu'arasau-e ²	2 էգ, 34(?) ոչխար
^v Ardininaue-ի սաստված	1 էգ, 2 ոչխար

^v Qumenunaue-ի սաստված	1 էգ, 2 ոչխար
^v Tušpaninaue-ի սաստված ¹	1 էգ, 2 ոչխար
^d Ĥaldinini-ի քաղաքների սաստվածներից	1 էգ, 2 ոչխար
^d Aršuniuni-ni-ի սաստվածներից ²	1 էգ, 2 ոչխար
^d Ĥaldini daši-e	1 էգ, 2 ոչխար
^d Šuba-a	1 էգ, 2 ոչխար
^d Ĥaldinaue BABI	1 էգ, 2 ոչխար
^d Tešeba BAB ^v Eridiani ³	1 էգ, 2 ոչխար
^d Ardini BAB ^v Uišini-ni ⁴	1 էգ, 2 ոչխար
^d Elia'a-a	1 էգ, 2 ոչխար
^d Ĥaldini arni-e	1 էգ, 2 ոչխար
^d Ĥaldini ušmaši-e	1 էգ, 2 ոչխար
^d Ĥaldinini susini-ի սաստվածներից	1 էգ, 2 ոչխար
^d Talapur-a	1 էգ, 2 ոչխար
^d Qilibani-e երկրների սաստծոն	1 էգ, 2 ոչխար
^p Alganinaue-ի սաստծոն	1 էգ, 2 ոչխար
^v Suininaue-ի սաստծոն	1 էգ, 2 ոչխար
^v Atqaninaue-ի սաստվածներից	2 էգ, 14 ոչխար
^d (Di)raue	2 էգ, 14 ոչխար
որիչ լեզուների սաստվածներից	4 էգ, 18 ոչխար
^d Ĥaldini niribi-e	- 4 ոչխար
^d Uainaue BAB ^v Nisi...ni	- 2 ոչխար
^p Babanaue-ի (սաստծոն)	- 10 ոչխար
^d Arubani-e	1 ցուլ, 1 կով, 1 ոչխար
^d Baba-a	1 ցուլ, 1 կով, 1 ոչխար
^d Tušpuea	1 ցուլ, 1 կով, 1 ոչխար
^d Auie	1 ցուլ
^d Aia	1 ցուլ
^d Sardi-e	1 ցուլ
^d Sinuiardi-e	2 ոչխար
^d Iphari	2 ոչխար
^d Baršia	1 ոչխար
^d Silia	1 ոչխար

¹ Ըստ պատճենի՝ Tušpanaue:

² Ըստ պատճենի՝ Aršuni(mi):

³ Ըստ պատճենի՝ 'Irdie:

⁴ Ըստ պատճենի՝ Uišini:

¹ Չուրի Սեփուալի:

² Ըստ պատճենի՝ Arṭu'arsaue:

^d Ar'a-a	1 ոչխար
^d Adiia	1 ոչխար
^d Uia	1 ոչխար
^d Ainsu-e	4 ոչխար
^d Ardi-e	2 ոչխար
^d Inuanau-e	17 ոչխար

Խաղդիի և ուրիշ լեզուների աստվածներից

Իշաուիմիի և Մենուայի կյանքի համար՝ 3 եգ, 30 ոչխար

Իշաուիմիի և Մենուան տնկեցին uldi խաղդիի (այգի), zari (պարտեզ). նրանք կառուցեցին burgana-ni (դրյակ) և սահմանեցին ardiše (կանոն)՝ երեք անգամ երեքական ոչխար մատուցել Խաղդիիի և նույնքան՝ մյուս աստվածներին:

MENUA IŠPUIINIḪINI
ՄԵՆՈՒԱ ԻՇՊՈՒԻՆԻԻ ՈՐԴԻ

19. Վան: Սուրբ Պողոս եկեղեցի: Ռազմական հարաբերությունների մասին մի քարակոթող, որը մամրամասնությունների մեջ պակասավոր է և անհասկանալի: Խոսքը ^PNi... և ^PBabana-a-ի դեմ մղված մի արշավանքի մասին է: Այս միևնույն տարին Մենուան գրավեց ^YQalibila-ni, ^YArpaia-ni, ^PUsusuani-ni, ^YHulmeru-ni, ^ITušuriehi մինչև ^PMarmani-ի սահմանը(?), արշավեց ^YEru-ni, ^YQirpunu-ni ^PUliba-ni, հրկիզեց ^PDirgu-ni, ^YIšala-ni, գրավեց երկրները և հրո ճարակ դարձրեց. ընթացավ մինչև ^PAšuri-ni-ի մոտ ^YQumenu-ni-ի սահմանը (?), [2] 155 մարտիկներից ոմանք սպանվեցին, մյուսները կենդանի բռնվեցին:

Մեկ ուրիշ արշավանք ընդդեմ ^PMana-ի, որը Մենուան քանդեց և հրկիզեց: Նույն տարին զորքերը մեկնեցին և ավերեցին Šurišili-ni, ^YTarhigama-ni, ^ISadalieḫini..., ^IHattina, ^PAlzini-ni երկրները. 2113 մարտիկներից ոմանք սպանվեցին, մյուսները կենդանի բռնվեցին:

PL. XI; B. 22; Sayce XXXII.

20. Տաշթեիս, Ուրմիա լճի հարավ-արևելյան ծայրին: Մենուան գրավեց Մանա երկիրը, այնտեղ կառուցեց EKALLU «բերդ» (այդպես ավելի ճիշտ է, քան «պալատ») ^YMeišta-ում, այնտեղ բողեց զինվորներ, նետածիզներ: Անեծք նրանց, ովքեր կքանդեն pulusi-ն (քարակոթողը):

PL. XII; B. 23.

21. Ցողակերտ, Կարակոյունլուի և Տաշրուտունի միջև եղած ավերակներ: Ժայռի վրա փորագրված արձանագրությունը նկարագրում է Erikuahi երկրի դեմ կատարված արշավանքը: Ինչպես ռազմական բոլոր նկարագրությունների մեջ, այնպես էլ այստեղ նախ ^dHaldi-ն մեկնում է համապատասխան երկրի դեմ կռվելու, այն նվիրում է թագավորին, ապա վերջինս գնում է գրավելու:

Մենուան հասավ Erikuahi թագավորի երկիրը, նրա Luḫiuni-ni թագավորական քաղաքը, գրավեց Erikuahi-ի ամբողջ ունեցվածքը և երկրին պարտադրեց հարկատվություն: Հետևում է անեծք այն անձանց հասցեին, որոնք կքանդեն կամ կյուրացնեն TUPPU-ն (արձանագրությունը):

PL. XIII; B. 24; Sayce XXXIV. Հայտնաբերված և հրատարակված է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Մեսրոպ եպս. Սմբատյանցի կողմից, տե՛ս «Արարատ», 1870; Nik. I.

22. Ցողակերտ: Մենուան ^IEriku-(hi)-ի ^YLuḫiuni-ni-ում կառուցեց ^dHaldi-ni-li BABU (Խաղդյան դռներ) և EKALLU (պալատ կամ բերդ) badusie (?):

PL. XIV; B. 25; Sayce LXVI; Nik. II.

23. Գյուզակ, Վանա լճի հարավարևելյան ծայրին¹: Արձանագրությունը շատ է աղճատված: Մենուան ^YLuḫiuni-i-ում կառուցեց ini-li BABANI (այս դռները) և այնտեղ տեղադրեց (?) anelu-erie-li:

PL. XXII; B. 25.

24. Գյուզակ: Ընթեռների ^mhuradi ^YLuḫiuni; anelu erie-li.

PL. XXII; B. 26.

25. Բերկրի: Ըստ վնասված՝ կարդացվում են Menua, ^Y(Lu)ḫiuni-ni, ^IIreku-a անունները: Կարծես Մենուան ուզում է ասել, որ Տուշպա քաղաքն է բերել 173 զեբի, eri, agubi:

PL. XV; B. 28.

26. Զորավանք, Բերկրիի մոտ: Մենուան գրավեց edi (տարածք) ^IIrekuahi-ի (ոչ՝ Irekuase), ոմանք սպանված, ուրիշներ «զեբի վերցված». uedanie-i: Զորս արձանագրությունները վերաբերում են Erikuahi կամ Irekuahi իշխանի

¹ Գուցե «Ընթեռակ» (ընկույզ):

երկրի գրավմանը, ^{am}huradi «քանակը» ^{am}uedinani «կանայք», բայց eri և ^{am}erie-li-ն համապատասխանում են արդյոք huradi-ին:
Լուսանկար՝ Textband I, p. 50; B. 29.

27. **Յազի-տաշ, Դահարի և Դելիբարայի մատ:** Ժայռի վրա փորված մի որմնախորշ կամ գաղտնի մուտք, ծածկված արձանագրությամբ ¹Diauehini հզոր պետության դեմ կատարած արշավանքի մասին: Մենուան գրավեց ¹Diauehi երկիրը և թագավորական քաղաք ²Sašilu-ni-ն, կռվով գրավեց երկիրը և բոցերի ճարակ դարձրեց EKALLU^{pl}-a-ši-li (պալատները կամ բերդերը): Նա ուղղվեց դեպի ³Šešetina-a, ⁴Zuaina-a, ⁵Utuba-a¹: Միսրիսինու-նի ¹Diauehi-ի թագավորը եկավ թագավորին հանդիման, խոնարհվեց, Մենուան հարկ պարտադրեց նրան: Նա ոսկի և արծաթ հանձնեց որպես հարկ: Մենուան երկու թագավոր տարագրեց և հողին հավասարեցրեց ¹Baltu-ulhi-e երկիրը, ²Haldiri ulhi-e-ի սահմանները, երկրի EKALLU^{pl}-a-ši-li բերդերը: Անեծք նրան, ով կբանդի այս ՄUPPU-ն (արձանագրությունը):
B. 30; Schulz XLII; Sayce XXX.

28. **Քոփրակ-կալա (Ալաշկերտ):** Կտարած քարի վրա չորս տող ¹Anašiei դեմ Մենուայի արշավանքի մասին: Anaši-ն կարծես Ալաշկերտի հին ձևն է:
Լուսանկար՝ Textband I, p. 54; B. 31; H. Mapp, Известия Акад. материальной культуры, I, 1921.

29. **Բերկրի:** Մի վիմագիր քարակոթողի ստորին մասում: Մենուան դրեց ⁴Haldinie badusie² ՄUPPU «արձանագրություն». նաև ³Aršuniuini: Անեծք որևէ քանդողին:
PL. XVI; B. 32; Sayce LXXXIX.

30. **Քար, Բերկրիի մտ:** Ընկած քար, շատ վնասված արձանագրություն: Խոսքը ¹Etui-ni-ի դեմ Մենուայի արշավանքի մասին է, որտեղից նա բերեց ավար՝ ձիեր և 7616 թափ (եզ):
PL. XXIII; B. 33.

31. **Քալու: Ժայռի վրա:** Արձանագրությունը խոսում է արշավանքի մասին. ⁴Haldi-ն մեկնեց և կռվեց ¹Šebeteria-ni, ²Huzanani և ³Šupa-ni երկրների հետ¹: Ապա Մենուան գնաց և գրավեց նույն երկրները: Նա վերցրեց parie (ավար) (?) ¹Hattina-ում: Նա տաշեկ տվեց pulusi «քարակոթող» ¹Haldi-ի համար ²Šeteria-ում, ⁴Haldi-ի համար կառուցեց iara-ni «սրբավայր» ³Šeteria asuni(?)-ում:

Մենուան հարկ պարտադրեց ¹Sulie-ին, ²Melišaišalhe-ի թագավորին: Հետևում է անեծքի սովորական բանաձևը:
PL. XLV-XLVI; B. 34; Sayce XXXIII.

32. **Քրմերդ, գյուղ Մուշից արևելք:** Կտորների վերածված քարակոթող՝ արձանագրությամբ: Մի բեկորի վրա կարդացվում է. Մենուան ավերեց 400 քաղաք և բոցերի մատնեց EKALLU^{pl}-ները «բերդերը» ¹Qulme... ²Eqaršu ku-(tubi) կողոպտեց (?) բոցերի մատնեց EKALLU-ni-ն, երկրին (հարկ) պարտադրեց:

Մենուան «մեկնեց» ¹Alau-(ni)(?), ²Urmeniuhi-di: Նա ավերեց ¹Alau-(ni)-ն ջարդեց ³Ursai-ni-ի (քնակիչներին), գրավեց երկիրը, ⁴Urmeniuhini-ni²-ն հողին հավասարեցրեց: Մյուս կողմում՝ սովորական անեծքը:
PL. LI և XXIV; B. 35; Sayce XXXV A.

33. **Պաղին:** Երկու քարակոթող՝ մեկը եկեղեցու պատի մեջ, մյուսը ավերակների վերածված ուրարտական բերդի պատի մեջ: Այս վերջինի վրա գրված է. Մենուան տաշեց այս pulusi (քարակոթողը) ¹Haldi-ի համար: Առաջինը մի կողմի վրա նույնպես կրում է միևնույն արձանագրությունը, մյուս կողմի վրա սրան ավելացված է, որ Մենուան այնտեղ նշանակեց ²EN (իշխան) ¹Titia-ni-ին³:

Լուսանկար՝ Textband I, pp. 65-66.

34-46. Ըամիրամի ջրանցքի բնի վրա կամ նրա մոտերքում՝ ժայռերի վրա փորագրված տասնչորս արձանագրություն, որոնք խոսում են Մենուայի կողմից այս ջրանցքի կառուցման մասին:

¹ Šebeteria-ni, Huzanani քաղաքի մեջ -ni ածանցը այլ է, քան Šupani-ի մեջ: Վերջինը հայցական է, մինչդեռ առաջին երկուսում -ni-ն ածականի ածանց է՝ -ini, որը ցույց է տալիս, թե Šebeteria-ini երկիրը պատկանում է Šebeteria-ին, Huzanani-ն Huzanani-ն:

² Urmeniuhini-ni edi, բայց ոչ՝ Urmeniuhininiedi:

³ Ա տեքստը չի համապատասխանում լուսանկարված քարի արձանագրությանը, հակառակ Կ. Լեման-Հաուպտի նկարագրությանը: Այնտեղ կարդացվում են Ա տեքստի առաջին տասը տողերը:

¹ Պատմ. I. 10-11. Kušubi pa-a-ri-e ²Šešetina-a, ³Zuaina-a, ⁴Utuba-a-i asuni, № 31, I, 10-14.

Ku-ru-ni pa-a-ri-e ¹Hattina-a... ²Šebeteri-a asuni.

² Այս տեղը, ուր badusie կիրառված է ՄUPPU-ի նկատմամբ, չի արդարացնում «քնակալար» իմաստը, որ Մ. Շերիբեյին տալիս է այս բառին: Քեպեա, «ավերակ» իմաստը, որ տալիս են ուրիշները, նույնպես չի հաստատվում:

34. Կատեպանց (Կատեպանների բերդը), Արտամետի մոտ ավերակների վերածված հին բերդ:

¹Haldi-ի հզորությանը՝ Մենուան ini pili aguni կառուցեց այս ջրանցքը, որի անունն է Մենուայի ջրանցք: Հաջորդում են Մենուայի տիտղոսները, և արձանագրությունը վերջանում է սովորական անեծքով:

PL. XVII; B. 37; Sayce XXII.

35. Արտամետ, մասնավոր ամձի պարտեզում: № 34-ի կրկնությունն է:
B. 37; Belck, Zeit. f. Ethnologie, 1892.

36. Մծնկերտ, ջրանցքից քիչ հեռու գտնվող գյուղ: Նույնն է՝ ինչ որ նախորդները:

B. 39; Belck, Zeit. f. Ethnologie, 1892.

37. Իշխամիզոն¹: Նախորդ տեսքի առաջին չորս տողերը, վերջին տողը ջնջված է:

B. 40.

38. Արտամետ²: Երկար տարրերակ, առանց թագավորի տիտղոսների, 9 տող:

PL. XVIII; B. 41; Sayce LXXIV.

39. Արտամետ, մասնավոր ամձի պարտեզում: Կարճ տարրերակ, ինչպես № 37:

B. 42; Sayce LXXII.

40. Իշխամիզոն: Չորստողանոց կարճ տարրերակ:

PL. LII; B. 43.

41. Իշխամիզոն: Կարճ տարրերակ:

PL. LII; B. 44.

42. Կատեպանց: Կարճ տարրերակ:

PL. LIII; B. 45.

43. Արտամետ: Կարճ տարրերակ, սեղմված երեք տողի մեջ:

PL. LIV; B. 46; Sayce LXXI.

44. Կատեպանց: Նախորդի նման տարրերակ, երեք տողով:

PL. LII; B. 47.

45. Կատեպանց: Երեքտողանոց նույն տարրերակը = 46 Ա:

PL. LV.

46. Մաշտակ (Մաշկակտակ): Նույն տարրերակը:

Zeit. f. Ethnologie, 1904.

47. Բերկրի: Բերկրի գետի ջրանցքը՝ Բերկրիի դաշտի ոռոգման համար: Դա նույնպես Մենուայի գործն է, որի մասին է վկայում քաղաքի գերեզմանոցում գտնված արձանագրությունը, որը խմբագրված է 34-36 երկար տարրերակների ձևով:

48. Արծվաբերդ: Մենուան տաշում է pulusi (քարակոթող), ^dHaldi-ի հզորության համար, կառուցում pili (ջրանցք), ^vAlia-ի տարածքի համար¹, ^dQuera-ina-ի taramana-ի (տաճարի) (?) համար:

PL. XXV; B. 50; Belck, Zeit. f. Ethnologie, 1892.

49. Աղա, Կոփի և Մամազկերտի միջև: Մենուան փորեց իր անվամբ pili (ջրանցք) դեպի Մենուայի (Menuaini) «քաղաքը», ^vUlišai-ni (երրորդ քաղաքի անունը ջնջված է):

PL. LIV; B. 51; Belck, Zeit. f. Ethnologie, 1899.

50. Խոտանլու, գյուղ՝ Աղայի մոտ: Մենուան ջրանցք քացեց ^vSqu'ani, ^vZugube-e, ^vIrnuni-ni, ^vAbasi-ni քաղաքների համար:

Լուսանկար՝ Textband II, p. 77; B. 51.

51. Մարնու: Մամազկերտի և Պատնոցի միջև: Արձանագրություն կրող քարակոթողի մի կտոր: Սկիզբը քացակայում է, մյուս կողմի վրա գրված է

¹ Գողաձոր կոչված ձորակում, Իշխամիզոնի մոտ:

² Թագմազու կոչված քարանձավի մոտ, ավելի մոտիկ Կատեպանցին, քան Արտամետին:

¹ Արձնշի շրջանը հին ժամանակ կոչվում էր Աղիովիտ՝ Աղի հովիտ: Հարց է ծագում, Աղի՞ն ի՞նչ բխում արդյոք ուրարտական Ali-ս-ից:

անեծքի քանաձևը, որտեղից հայտնի է դառնում, որ խոսքը *pili*-ի (չրանցքի) մասին է:

PL. LIV; B. 53; Belck, Zeit. f. Ethnologie, 1900.

52. Աղթամար: Կլոր քար, որը հավանաբար բերված է Մոխրաբերդից: Մի կողմի վրա՝ Մեմուան տաշեց *ini pulusi*, մյուսի վրա կարդացվում են հետևյալ բնակավայրերի անունները՝ *Ahiuni-ka-ni...* *Erinui-di...* *Menuahinaadi*, *Aiduni MATU-ni* (= *ebani*) *šuni esini pilie aguni*, *šuišini šuni esini*¹ *pili aguni*.

PL. LVI; B. 54; H. Марр, Записки Вост. отд. Русск. арх. общ., XXIV.

53-82. Մեմուայի զանազան կառուցումների մասին արձանագրություններ:

53. Վամ, Միջնաբերդի հյուսիսային կողմի վրա: Մեմուան *zaduni siršini-e* (կառուցեց շիրշինի) (?): Կարծես տեքստը նախազգուշացնում է, թե ով որ այնտեղ կմտնի *pahani* (ամասուն) (կամ կրերի, կամ կվերցնի) *niribi* (զոն), կանիծվի աստվածների կողմից (սովորական անեծքի ձևի համաձայն):

PL. XLVII; B. 55; Sayce XXI.

54. Վամ: Միջնաբերդի ներքին պատի վրա գրված են նախորդ տեքստի առաջին հինգ տողերը:

PL. LI; B. 56.

55. Մոզա, գյուղ՝ Վամի մոտ: Ավերակ դարձած եկեղեցու պատի մեջ մի քար, որը կրում է *inukani esini-ni SISE aršibini tini* *Menua pi-i-ai-šti-bi 22 kapi*²: Մյուս կողմի վրա՝ անեծք նրան, ով կհամարակվի քանդել *ini pulusi*-ն:

¹ *Eruini Menua*- ական (?) ինչպես *Menuai-nie* № 49-ում:

Մանկերա հրվանդանը գուցե պահել է Մեմուայից(ի) հիշատակը, եթե դա նրա հիմնադրածն է: *Ahiuni-ka-ni*-ն հիշեցնում է Հախավանց գյուղի անունը՝ հրվանդանի շրջանում:

² CICH-ի մեջ այս տեքստն իր տեղում չէ, կառուցման հետ կապ չունի: Բավական առեղծվածային է: Կ. Լեման-Հաուպտը սա քարգմանում է՝ «Die Baulichkeiten für die aršibini genannten Pferde des Menuas hade ich 22 Flecheneinheiten zugewissen»: [Մեմուայի *aršibini* անվանվող ձիերի համար կառուցումներին նս տրամադրեցի 22 «Flechen»? միավորներ]: Յ. Ֆրիդրիխն այլ կերպ է հասկանում՝ «Von dieser Stelle an ist das Pferd Namens Aršibini unter Menua 22 Masseinheiten weit galoppiert» [Այստեղից *Aršibuni* անունով ձին Մեմուայի [հեծանի] տակ վազեց 22 չափ]: Ըստ Մ. Մերթերի՝ «Մկսած այս տեղից, որի անունը *aršibini* է, ձի Մեմուայի 186

PL. LVII; Sayce XXVIII (վերջին մասը):

56. Գյուղակ: Մեմուան տաշեց *pulusi* (քարակոթող), (կառուցեց) *Haldi-ni-li BABU* (Խալդիի դռներ), կառուցեց *EKALLU* (պալատ), հիմնադրեց *Haldi-i pat ari* (Խալդիի քաղաք), անկեց *uldi* (այգի)՝ Մեմուայի անունով և *zari* (պարտեզ): Մեմուան հրամայում է. երբ այգին պտղաբերի, Խալդիին մատուցել մեկ եզ և երեք ոչխար, կամ Խալդիի դռների առջև, կամ քարակոթողի դիմաց, իսկ երբ զինին (*tešuli*) կարտադրվի, պետք է մատուցել դրանցից *šuhie* (մի չափ) *Huli-e*-ին, *qarmehi* (չափ) *Haldi-e*-ին, *ašhuli-ni* (չափ) Խալդիի դռներին, *qarmehi* *Arubani*-ին, *qarmehi* *Haldi-e*-ին *pulusi*-ի առջև: Քերականական կառուցվածքի համաձայն, *šuhie*, *qarmehi*, *ašhuli(-ni)* տաղբեր չափեր են:

PL. XIX; B. 58.

57. Կատեպանց: Մի դարատափի դիմաց քարի վրա արձանագրված է: Այս *uldi*-ն (այգի) *Tariria*-ինն է, որը Մեմուայի (*sila*) դուստրը (կամ կինն) է, և կոչվում է *Taririahinili*¹:

PL. XXII; B. 59; Sayce XXIII.

58. Գործոտ: Բերկրիի մոտ: Մեմուան *ini EKALLU šidištuni badusie*; ապա՝ Մեմուայի տիտղոսները:

PL. LVI; B. 60.

59. Դեկիրաթա՝ Ալաշկերտում: Նախորդ տեքստի կրկնությունը:

PL. LVIII; B. 61.

60-61. Հասան-կալա: Նախորդ տեքստի կրկնությունը:

PL. XXIII; B. 62; Sayce XXXV.

62. Բաշրուլաղ՝ հին Փառախտտի տեղում: Մեմուան Խալդիի համար կառուցեց *ini BITU badusie*, կառուցեց *EKALLU badusie* և այն կոչեց *Menuahini*(li):

անձի համար, չափվեցին 22 (չափեր)»: Ի. Մեշյանիցովի համար խոսքը Մեմուայի ձիու գերեզմանի մասին է: Պետք է ասել, որ այս քարգմանություններից և ոչ մեկը գոհացուցիչ չէ:

Յ. Ֆրիդրիխի կասկածը *sila*-ի և միտանական *šala*-ի նույնության վերաբերյալ չափազանցված է: Պետք է նշել, որ *Šielardi*-ն, *SIN*-ի հնչյունական ընթերցումը №18-ում, կարող է նշանակել *siela* (քույր կամ աղջիկ) *ardi* (արև)՝ արևի քույր, լուսինը, ըստ արևելյան մտայնության, արևի քույրն է:

B. 63; Sayce LXXXI; Nik. III.

63. Ամձավ՝ Վանի մոտ: Խաղիի համար Մենուան կառուցեց ini susie šidištuni EKALLU šidištuni badusie (երկու անգամ):

PL. XLVIII.

64-65. Մանագլեբա: Արձանագրված քարակոթող: Նախորդ տեքստի վրա ավելացված են տիտղոսներ՝ «թագավոր taraie (հզոր) al(a)suinie (մեծ) PŠuraue-ի թագավոր, PBiainaue-ի թագավոր, թագավոր erilaue (թագավորաց) alusi (տերը) Կ՛ušpaa paš ari-ի»:

PL. LIX; B. 67.

66. Կոխալանց: Մենուան կառուցեց՝ ini susi, ԿHaldini-li BABU-li, ini EKALLU badusie (երկրորդ անգամ կրկնված):

PL. LX; B. 65; Sayce XVII.

67. Կոխալանց: Մենուան կառուցեց ԿHaldini-li BABU-(li) šidištu-a(li) badusi:

B. 66; Sayce XVIII.

68. Նոր-գյուղ, Աղթամար կղզու դիմաց: Նախկին տեքստի կրկնությունը: Belck, Zeit. f. Ethnologie, 1892.

68ա. Նոր-գյուղ: Նույն տեքստի վրա ավելացված է Կ՛Mušuni:

PL. LXI; H. Mapp, Записки Вост. отд. Русск. арх. общ., 1917.

69. Շուշանց, Վանի մոտ: Մենուան BITU tuburi-(ni) EKALLU badusie šidištuni. ALU šidištuni ui giei ištini šidau(ri): Մենուան կառուցեց և՛ EKALLU, և՛ ALU¹:

B. 70; Sayce XIII.

70. Գյուղակ: Տեր ԿHaldi-ին ini BITU šidištuni badusie e՛s EKALLU šidištuni (e՛s ALU), teruni ԿHaldi-i ALU ti(ni)².

¹ Ջերականականորեն ավելի ճիշտ կլիներ քարգմանել՝ Մենուան BITU-ից արեց մի EKALLU (և ոչ թե՛ նա արեց BITU և EKALLU) և կառուցեց մի թաղաք: Դրա պատճառով տեքստը կրկնված է՝ նա կառուցեց EKALLU և ALU:

² ti-ni և ոչ թե՛ i(LU), ինչպես Կ. Լեման-Հաուպան է կարծում: Սեզ թվում է, թե դպիրը զանց է առել «e՛s ALU»-ն:

PL. LXII; B. 68.

71. Բոստան-կայա, Մանագլեբաի հյուսիսում: Մենուան ini gie zaduni 900 aquarqi, ištini EKALLU šidištuni badusie.

PL. LXI; B. 69.

72. Վան: Մենուան՝ ini BITU (za-du)-u-ni:

PL. LV; B. 72.

73. Վան: (Այժմ՝ Բրիտանական թանգարանում): Մենուան՝ ini BITU zaduni:

PL. LXI; Sayce XXIV.

74. Ոսկեբրակ: Meinua-še... ini BITU zaduni (երեք անգամ կրկնված):

PL. LXII.

75. Վարազ, վանք՝ Վանի մոտ: Մենուան ini BITU ašihusie zaduni (երեք անգամ կրկնված):

PL. LXIII; Sayce XIV.

76. Վան: Մասնավոր անձի մոտ՝ ini BITU ašihusie, ինչպես № 75-ում (երեք անգամ կրկնված):

PL. LXIII; B. 73; Sayce XV.

77. Վան, նույն մասնավոր անձի մոտ՝ ini BITU zaduni (երեք անգամ կրկնված):

PL. LIX.

78. Խորզոմ: Մենուա՝ ini BITU ašihusie zaduni (ինչպես 75, 76-ում) (երկու անգամ):

PL. LXI; B. 78.

79. Ամձավ: (Այժմ՝ Բեռլինում): Մենուա՝ BITU barzudibiduni...

PL. LVIII; B. 74.

80. **Կոխսպանց:** Մենուան՝ ini BITU barzudibidu-ni zadu-ni - կրում է Մե-
նուայի անունը. ardiše-ի մասին գրված տողերը անընթեռնելի են, ապա՝
անենք:

PL. XX; B. 75.

81. **Վարագ:** Միևնույն կառուցվածքը՝ ini BITU barzudibidu-ni - Մենուայի
անունով (առանց ardiše-ի և անենքի):

B. 76; Sayce XXV.

82. **Վարագ:** Մենուա՝ ini ALU šidištu-ni, ini pulusi kugu-ni:

Sayce LXXV.

83. **Վան:** Կուրչուն մզկիթի մոտ քարակոթող: Տեր Հալդի-ին ini pulusi
kuguni manini ⁴Haldini biedini կյանքի, բարգավաճման և մեծության հա-
մար՝ ulguše, pišuše alsuiše, Մենուայի և Ինուշպուայի:

PL. LX; B. 82; Sayce LXXX.

84. **Վան, մույն մզկիթի դիմաց:** Կուտու-ե-ին Մենուան տաշեց pulusi Մե-
նուայի և Ինուշպուայի համար (ինչպես № 82-ում)¹:

B. 83. Լուսանկար՝ Textband II, p. 110.

85. **Կարախան, Քերկրիի գետաբերանում (Քենդի-մահի-չայ):** ⁴Siunie
pulusi, ինչպես մախորդ տեքստը:

PL. LXIV; B. 84.

86. **Կարմիր(ա)վոր վանք:** ⁴Haldi-e urpuasi zadu-še (շատ աղճատված):

PL. LXVIII; B. 85; Sayce VII.

87. **Վան, միջնաբերդի կողին, Սարդուրիի որմնախորշի արևելքում:** Մե-
նուան՝ ini-li tarmani-li atšunali šidištu-ali: Հաջորդում են տխուրացներն ու
անենքը (մույն տեքստը երեք տեղում):

PL. L; B. 86; Sayce XX.

¹ Այս կոթողը կրում է հայերեն մակագրություն՝ «ՅՂ բուականութեան» հայոց, այսինքն՝
«390 թվականին», որը համապատասխանում է Քրիստ. թվականության 941 թվականին:
Կ. Լեման-Հաուպը շփոթվել է սխալ ընթերցման հետևանքով:

№ 13 կոթողի մակագրությունը մույնպես ճիշտ չի կարդացվել: Ասված է՝ «ՆՁ բուականու-
թեան գուր Գրիգոր յիշեսչիք» («409 թ., այսինքն՝ 960 թ., իշխեցեք տեր Գրիգորին»):

88. **Էրերին, Ամուկի մոտ:** Մենուան՝ TUPPU...terubi...

PL. LVIII; B. 87.

89. **Վան, Սուրբ Վարդան եկեղեցին:** Մենուան՝ ⁴Haldi-ին pulusi տաշեց
(երկու անգամ):

PL. LXV; B. 88.

90. **Վարագ, վանք:** Մենուան՝ Խալդիին տաշեց pulusi:

PL. XL; B. 89; Sayce XXVI; Записки Вост. отд., 1917.

91. **Վարագ, 90 համարի մույն տեքստը:**

PL. LIX; B. 90.

92. **Արծվաբերդ, Արճեշի ափին:** ⁴Elipuri-e-ին ini pulusi (երկու անգամ):

PL. XXV; B. II.

93. **Կիզիկ-կայա, Պատմոցի մոտ:** ⁴Haldi-ին ini pulusi (երկու անգամ):

PL. XXI; B. 92.

94. **Մեծոփա վանք:** ⁴Haldi-ին ini pulusi (երկու անգամ):

PL. LXV; Belck, Zeit. f. Ethnologie, 1892.

95. **Կարախան:** ⁴Haldi-ին ini pulusi (ինչպես № 91-ում, 2 անգամ):

Sayce XXVII; Belck, Verh. der Berl. Anthr. Ges., 1901.

96. **Վան:** Տեքստը աղճատված է, մնան է մախորդին (երկու անգամ):

Schulz XXXVII.

97. **Վարագ՝ Խալդի Մենուա (?) (բեկոր):**

Sayce LXXVI.

98-110. Արճանագրությունների բեկորներ, որոնք միայն Մենուայի ա-
նունն են կրում, բացի 101-102 համարներից, ուր ⁴Aršuniuni քաղաքի Հալ-
dina BABU-ն է հիշատակված:

PL. LVII.

108. Կարախան: Մի բեկոր, որի վրա կարդացվում է Titiani անունը: Սա, հավանաբար, այն նույն անձն է, որին Մենուան հիշատակում է Պաղիմուն, № 33-ում:

PL. LXIV; B. 36.

ARGIŠTI MENUAĪINI
ԱՐԳԻՇՏԻ ՄԵՆՈՒԱՆԻ ՈՐՈՒԻ

111. Վան, միջնաբերդ: Արգիշտիի ժամանակագրությունը փորագրված է ապառաժյա սենյակների ճակատին, որոնք փորվել են ժայռի մեջ՝ թագավորի հրամանով: Ժամանակագրությունն ընդգրկում է 13-14 տարիների ընթացքում տեղի ունեցած պատերազմական գործողությունների պատմությունը՝ ըստ տարիների: Ըարադությունը միօրինակ է, այնպես որ մի արշավանքի պատմությունը նման է մյուսին, շատ քիչ տարբերությամբ: Ամեն ինչ պարփակված է միևնույն բանաձևերի սահմանում, որը ներկայանում է հետևյալ տեսքով. Խալդին մեկնում է, նրա մարտիկը ուժեղ է: Նա կռվում է այսինչ երկրի (կամ մի շարք երկրների) հետ և այն մատուցում թագավորին: Դրանից հետո է, որ թագավորը մեկնում է: Այսինչ թագավորը մեկնեց Խալդիի գոռությամբ: Խալդին գնում էր առջևից: Թագավորն ասում է՝ ես գրավեցի այսինչ երկրները (միևնույն երկրները, որ Խալդին հպատակեցրել էր): Թագավորն ասում է. ես դիմեցի Խալդիին, Թեշեբային, Արդինիին, և նրանք օգնության եկան: Խալդիի գոռությամբ ես մեկնեցի և գրավեցի այսինչ երկրները: Ես ընթացա դեպի մեկ ուրիշ քաղաք կամ երկիր: Ես գրավեցի բոլորը, ավերեցի կամ երկիզեցի և այլն: Ապա հաջորդում է ավարի թվարկումը եզրափակիչ խոսքով՝ սրանք են այն գործերը, որ նա կատարեց մեկ տարվա ընթացքում:

Ներկա ամփոփագրի մեջ մենք զանց ենք առնում զուտ գրական նշանակություն ունեցող արտահայտությունները, որոնք պատմական արժեք չունեն: Համատեղ կնշենք՝ Խալդին հպատակեցրեց այսինչ երկիրը: Թագավորը մեկնեց և գրավեց այսինչ երկիրը: Դա անհրաժեշտ է նվաճումները ստուգելու համար: Տեղանունները և անձնանունները կվերաբառվեն այնպես, ինչպես տեսնում ենք, բայց մենք կշարունակենք հովվային վերջավորությունները բաժանել զծիկով:

Եղել են այնպիսի տարիներ, երբ Արգիշտին կատարել է մեկ արշավանքից ավելի:

1-ին տարի:

Այսպես, իր թագավորության առաջին տարում նա երկու արշավանք կատարեց, բայց առաջին արշավանքի պատմությունը ջնջվել է, դրանից միայն մի քանի բառեր են մնացել, որոնց իմաստը պարզ չէ:

Երկրորդ արշավանքի պատմությունն սկսում է երեք աստվածներից՝ Խալդի, Թեշեբա և Արդինի, օգնություն խնդրելուց: Աստվածները նրան օգնության են գալիս:

Նա հավաքեց իր զորքերը և մեկնեց ¹Diauehinedi «երկիրը», բռնեց Diauehi-ի թագավորին, գրավեց ²Seriazi-ն, երկիզեց քաղաքները, կործանեց բերդերը:

Նա ընթացավ դեպի ³Putie, ⁴Bia-ni-ն և ⁵Husa-ni-ն միացրեց ⁶Tariu-ni-ին¹:

Նա զնաց ⁷Zabaha-uedia, գրավեց ⁸Zabaha-e-ի բնակավայրերը, ընթացավ դեպի ⁹Uzinabitarna-a, ¹⁰Serimutara, միացրեց ¹¹Maqalt'u-ni-ն և ¹²Igana-ni-ն ¹³Baba-ni-ին:

Նա իջավ ¹⁴Eriahini-nie երկիրը, զնաց ¹⁵Abuni-edi, գրավեց ¹⁶Urieu-ni-ն, ¹⁷Uitaruhini-ի թագավորական քաղաքը:

19.255 երիտասարդներ, 10.140 առույզ մարտիկներ, 2328 կամայք, 52.675 մարդ տարվա ընթացքում, ոմանք սպանված, մյուսները կենդանի բռնված: Նա քչեց տարավ 1104 ձի, 35.016 եզ, 11.829 ոչխար:

Մրանք են այն սխրագործությունները, որ նա կատարեց մեկ տարում Խալդիի օգնությամբ:

2-րդ տարի:

Խալդին նվաճեց ¹Abilianiehi-ի երկիրը ²Quturzani-ni-ի ³Aništirue (?) երկիրը, ⁴Utuza-ini-ի երկիրը և սրանք մատուցեց Արգիշտիին:

Արգիշտին մեկնեց, գրավեց ⁵Etiuni-ni երկիրը, ընթացավ դեպի..., դեպի ⁶Uduri-ի ⁷Etiuhini և գաղթեցրեց տղամարդկանց ու կանանց:

Նույն տարին նա զնաց ⁸Umeki... գրավեց ⁹Uria-ni-ն, ¹⁰Tairšu-ni-ն, հպատակեցրեց ¹¹Muruba-ին (կամ Muruza), կռվում տապալեց նրան և գաղթեցրեց տղամարդկանց ու կանանց:

¹ Salmathi ²Biani ³Husani aaldubi andani ⁴Tariuni մայրապատկանը, որը հաճախ է կրկնվում, պարզ չէ:

Նա գրավեց Վbarugildu-ni-ն, թագավորական քաղաքը... ընթացավ դեպի ՔLurupira (կամ Kurupira), դեպի ՔTarra... գաղթեցրեց տղամարդկանց ու կանանց:

Նա գրավեց ՔIrki...-ն, ընթացավ դեպի..., գնաց ՔArtarmu..., կռվում տապալեց... (հրկիզեց) քաղաքները... ընթացավ դեպի ... 3(...) երիտասարդներ, 10.000 կանայք, 40.279 մարդ տարվա ընթացքում, ոմանք սպանվեցին, մյուսները կենդանի տարվեցին. մա քչեց տարավ 1280 ձի, ...եզ, 126(00) ոչխար:

Սրանք են այն գործերը և այլն...

Sayce XXXVII; Schulz II.

3-րդ տարի:

Խաղդին նվաճեց ՔHaate-ն, ՔHilaruada-ni-ի երկիրը և մատուցեց Արգիշտին: Արգիշտին մեկնեց ՔHatina-idi, գրավեց ՔNiriba-ni-ն, Ք...urmani-ն (?), կռվում նրանց հաղթեց, գրավեց թագավորական քաղաքը: Արգիշտին գնաց ՔHatina-šie երկիրը, ՔTuatehimi-ի երկիրը միացրեց ՎMelita-ni-ի շրջանին: Նա ընթացավ դեպի ՎPila-i (?)... պարտադրեց հարկ վճարել... Mela-ini գետ, ՔMarua-ni, գաղթեցրեց տղամարդկանց ու կանանց, ավերեց պալատները, հրկիզեց քաղաքները:

2559 երիտասարդ, 8298 կենդանի բռնված մարդ, 10.846 կին, 28.548 մարդ տարվա (արշավանքներում), մասամբ սպանված, մասամբ կենդանի բռնված, (...) ձի, 17.942 եզ, (...) ոչխար տարվեցին: Սրանք են սխրագործությունները և այլն...

4-րդ տարի:

Խաղդին նվաճեց ՔEtiuni-ni (ՎUduri-ի?) երկիրը և մատուցեց Արգիշտին: Արգիշտին մեկնեց (զնջված է):

Նույն տարին Արգիշտին գնաց ՔUburda-u-edia, գրավեց ՔUburda-alhi-ի ՎIš(pi)-lubura-ni երկիրը, մա գրավեց ՎIrdua-ni թագավորական քաղաքը, ավերակ դարձրեց ՔUišuš-ni երկիրը, գաղթեցրեց տղամարդկանց ու կանանց:

Նա գնաց Հahia-u-edia, տակնուվրա արեց պալատները, հրկիզեց քաղաքները...

700 երիտասարդ, 2555 առույզ մարդ, 8497 կին 1(?) 9790 մարդ տարվա ընթացքում, մասամբ սպանված, մասամբ կենդանի բռնված, 232 ձի, 803 եզ, 1(?) 1626 ոչխար տարվեցին:

Սրանք են և այլն...

Sayce XXXVIII; Schulz III.

5-րդ տարի:

Խաղդին նվաճեց ՎArsita-ni-ի երկիրը, հաղթեց Ասորեստանի զորքերին և մատուցեց Արգիշտին:

Արգիշտին Aššur-ի քաղաքները միացրեց իր երկրին, մա կրկին հավաքեց զորքերը, կործանեց ՎDadika-i-ի arie-ni (քերդերը), ՔKulaši-ni-ն, ՔBaba-ni-ն, գաղթեցրեց 31.439 երիտասարդ իր երկիրը:

Նույն տարին մա գնաց ՎMenabšunie-edi, ՎDuqamai-(di), գրավեց ... թագավորական քաղաքը... ՔBuštue-e երկրի ՎŠatirara-u քաղաքը: Նա գնաց ՔBaršuai-di, ավերեց երկիրը, հրկիզեց քաղաքները. 540 մարդ տարվա ընթացքում, ոմանք սպանված, մյուսները կենդանի: (...) ձի, 977 եզ, 5... ոչխար տարվեցին:

Սրանք են այն սխրագործությունները և այլն...

6-րդ տարի:

Խաղդին նվաճեց ՔAššur-ը, ՔBuštu-ni-ն, ՔTariu-ni-ն և մատուցեց ՎԱրգիշտին:

Արգիշտին շինեց sidu-u-u-li պալատները, ծաղկեցրեց (?) išruiu-bi, ՔŠurīšili-ni և քերեց Աշշուրի բանակը իր երկիրը:

Արգիշտին ուղարկեց «ikidanubi» auerašili, բանակը (?), նվաճեց Ասորեստանը և գերի վերցրեց ՎDada-ni-ին:

Նույն տարին մա մեկնեց Ք..., Ք..., ՔArhaue-di, գրավեց նրա թագավորական քաղաքը և 60 քաղաքներից տարավ տղամարդկանց ու կանանց:

Նա գնաց ՔBuštue-di երկիրը, գրավեց ՎŠatirara(-ni)-ն, ՎAburzani-ni-ն, Վ...-ն, ՎQaduqaniu-ni-ն, Վ...-ն:

Արգիշտին ընթացավ դեպի ՔMana-a Ք..., ՔBaba-a:

18.827 մարդ տարվա ընթացքում, ոմանք սպանված, մյուսները ողջ բռնված, 606 ձի, 184 ուղտ, 6257 եզ, 33.203 ոչխար տարվեցին:

Սրանք են այն սխրագործությունները և այլն...

7-րդ տարի:

Խաղդին նվաճեց ՔIiani-ni-ն, ՔMana-ni-ն, ՔBuštu-ni-ն և մատուցեց Արգիշտին:

¹ Laqsa-ի փոխանակ եզգու հոգնակի կազմավորման համաձայն: Կարծում ենք, որ դա թխում է նույն eleku բառից, որը տալիս է lequ կամ laqu և tequ:

Արգիշտին հավաքեց զորքերը և մեկնեց ու գրավեց ^PTiani-ni-ն, քա-
րութանդ արեց պալատները, հրկիզեց քաղաքները. նա գրավեց ^YErahiliu-
ni-ն, ^YErahiliu-li-ն (^YEratadau-ni, ^Eratadaeuda) և տարավ տղամարդկանց ու
կանանց:

Նույն տարին նա գնաց ^PManai-di, (գրավեց) ^PBuštuni-ն, Tura գետը...
կռվով գրավեց, գաղթեցրեց տղամարդկանց ու կանանց... (6 առդ):

18.243 մարդ տարվա ընթացքում սպանված և ողջ բռնված, 790 ձի, 100
ուղա, 22.529 եգ, 36.830 ոչխար տարվեցին:

Սրանք են այն սխրագործությունները և այլն...

Sayce XXXIX; Schulz IV.

8-րդ տարի:

Խալդին նվաճեց ^PManai-ni-ն, ^PIrkiuni-ni-ն և մատուցեց Արգիշտիին: Ար-
գիշտին մեկնեց ^PManai-di, գրավեց ^PIrkiuni-ni-ն: Նա ընթացավ դեպի
^PAlqani, ասուրական երկիրը:

6471 մարդ տարվա ընթացքում, ոմանք սպանված, մյուսները ողջ
բռնված, 286 ձի, 2215 եգ, 9205 ոչխար տարվեցին:

9-րդ տարի:

Խալդին նվաճեց ^PMana-ni-ն, ^PBuštu-ni-ն և մատուցեց Արգիշտիին:

Արգիշտին մեկնեց ^PBuštu-e-di, գրավեց ^PAšqai-a-i-ն, ^PŠatirarau-ni-ն, ^PUgi-
šti-ni-ն, միացրեց ^PUši-ni-ին¹:

Նա ընթացավ դեպի ^PAlaša-i, ^PBaba-ni, հրկիզեց երկիրը, ավերեց
քաղաքները, տարավ տղամարդկանց ու կանանց:

1(.)873 մարդ տարվա ընթացքում, ոմանք սպանված, մյուսները ողջ
բռնված, 80 ձի, (...) ուղա, (...) եգ, (...) ոչխար տարվեցին:

Սրանք են այն սխրագործությունները և այլն...

10-րդ տարի:

Խալդին նվաճեց ^PMana-ni-ն, ^P...-ն և մատուցեց Արգիշտիին: Արգիշտին
հիմնեց ^YArgištišini-li-ն. նա գրավեց ^PMana-ni-ն, ¹Aza-ի թշնամի երկիրը: Նա
պատրաստեց (?) զորքերը և հասավ ^PMana: Նա կործանեց badini-ni(?), գրա-
վեց պալատներ, (հրկիզեց) քաղաքներ:

3270 մարդիկ սպանված կամ ողջ բռնված, տարավ 170 ձի, 62 ուղա, 2411
եգ, 6140 ոչխար:

Սրանք են այն սխրագործությունները և այլն...

Sayce XL; Schulz V¹.

11-րդ տարի:

Խալդին նվաճեց ^PTuarasi-ni-ն, hu-tusiri(?), ^PGurqu-e-ն, հնազանդեցրեց
Մանայի զորքերին և մատուցեց Արգիշտիին:

Հետևյալ նախադասությունը պարզ չէ: Կարծես ուզում է ասել, որ Խալ-
դին (կամ Խալդիի մարդը) ուժեղ է որքան իշխելու hu-tutahi, մույնքան և
կռվելու մեջ: Արգիշտին երկու անգամ անցավ Dainalati-ni-ն գետը և կո-
ղոպտեց ^PŠur-aue-ն:

Արգիշտին գնաց ^PMana-idi, ավերեց երկիրը², հրկիզեց քաղաքները և
ընթացավ դեպի ^PBuštu-e-ի ^YUihika-a քաղաքը, տարավ տղամարդկանց ու
կանանց:

13.979 մարդ տարվա ընթացքում, ոմանք սպանվեցին, մյուսները ողջ
տարվեցին, 308 ձի, 8000 եգ, 32.538 ոչխար թշվեցին:

Սրանք են այն սխրագործությունները և այլն...

12-րդ տարի:

Խալդին նվաճեց ^PMana-ni, ^PEtiuni երկրները և մատուցեց Արգիշտիին:

Արգիշտին գնաց ^PMana-idi, կողոպտեց երկիրը, հրկիզեց քաղաքները,
կռվով գրավեց ^YSiširihadiri-ni բազավորական բերդաքաղաքը: Արգիշտին
ավերակ դարձրեց ^PEtiuni-ni երկիրը և ^YArdi-ni-e-i քաղաքի aštiu-zirbila-
ni(?)-ն: Նույն տարում Արգիշտին հավաքեց բանակը և գնաց ^PEtiunie-di և
գրավեց ¹Eriahi և ¹Katarza-e երկրները:

Նա ընթացավ դեպի ^PIšqigulu-e և տղամարդկանց ու կանանց գաղթեցրեց
^PBiaia-ni-a:

Խալդին առջևից էր գնում³: Արգիշտին գնաց ¹Uitērubieni-e երկիրը,
ավերեց երկիրը, հրկիզեց քաղաքները:

¹ Հաջորդում է սյուն VI Schulz (= Sayce XLIII) և ոչ թե VII (= Sayce XLI):

² Կարողալ ամենուրեք ebani atubi և ոչ թե ebania tubi, ինչպես Sayce-ի մտն է:

³ Այս երկիրը չի հիշատակված սկզբում Խալդիի հաղթանակների մեջ, դրա համար էլ
այստեղ Խալդին գնում է առջևից:

¹ Andani ^PUgištini aaldubi salmathi Uši-ni. Տե՛ս առաջին արշավանքի կապակցությամբ
արված ծանոթությունը:

Նա գրավեց 'Amegu-ն... 'Uitaru-ն... Նա բողեց արձանագրություն... (քաղաքի վրա տողեր ջնջված): (-) ոմանք սպանված, մյուսները տարվեցին ողջ. 1200 ձի, 29.504 եգ, 60.000 ոչխար թշվեց:
Սրանք են այն սխրագործությունները և այլն...

13-րդ տարի:

Խալդին նվաճեց 'Tariu-ն-ն, 'Baba-nie-ն և մատուցեց Արգիշտին: Արգիշտին գնաց 'Tariu-idi, կովով վերցրեց 11 ամրացված տուն-շենք: Խալդին ուժեղ է ետստ-ի որքան իշխելու, նույնքան կովելու մեջ:

Նա հրկիզեց բերդերը, տակնուվրա արեց քաղաքները, տարավ տղամարդկանց ու կանանց. «Խալդին գնում էր առջևից... 'Urme-di... երկիրը...»:

Արգիշտին գնաց 'Urme-edi, գրավեց 'Urme-ini-ն, կողոպտեց երկիրը, ընթացավ դեպի 'P..., հրկիզեց քաղաքները, տղամարդկանց ու կանանց տարավ 'Biaina:

14.813 մարդ տարվա ընթացքում, ոմանք սպանված, մյուսները ողջ թողնված, 25 ձի, (...), 1744 եգ, 48.825 ոչխար թշվեց:

Սրանք են այն սխրագործությունները և այլն...

Sayce XLIII; Schulz VI.

14-րդ տարի:

Երբ Խալդին թագավորությունը տվեց Արգիշտին... 7066 եգ, 50.868 ոչխար... նա ավելացրեց ամեն տարի (?):

Նա գնաց ընդդեմ 'Bihura-նի քաղաքի, 'Bamni երկրի, տակնուվրա արեց 'Bamni-ն և գրավեց Bihurani-ն:

Անեծք նրան, ով կհամարձակվի քանդել այս արձանագրությունը:

Schulz VII et VIII; Sayce XLI et XLIV.

112. Վամ: A. Ջարակոթող Սուրբ Սահակ եկեղեցում: Խալդին նվաճեց 'Uṭpursi-ի, 'Diauehi-ի երկիրը, նվաճեց 'Panulua-ի երկիրը:

A¹ Արգիշտին ասաց, որ 'Diauehi Šišuhani durbabi, ապստամբեց:

Արգիշտին բանակ հավաքեց և հնազանդեցրեց Diauehini-ին: Նա դիմեց աստվածներին՝ անշուշտ Panulua-ի դեմ գնալու համար (պակաս):

PL. XXVI; B. 100; Sayce XLVI.

A² Խալդին նվաճեց 'Etiuni-ն-ն և Qihu-ն-ն: Արգիշտին գնաց գրավեց 'Qihu-ն-ն և 'Silu-ն երկիրը:

Մի ուրիշ արշավանք 'Hate-di և 'Šupa-նի երկրների դեմ:

PL. XXVII.

A³ Արգիշտին կանգնեցրեց pulusi: Անեծք:

PL. XXIX.

A⁴ Պակասավոր տեքստ: Հիշել 'Iniriaše uštuni... 'Šurieli zašua-li:

PL. XXVII.

112. B. Ջարակոթող, որն սկսվում է kutai-di (ես ընթացա)-ով, ուրեմն մի նկարագրության շարունակությունն է, որի սկիզբը պակասում է, կամ, գուցե, 112 A-ն է:

Արգիշտին ընթացավ դեպի 'Bia երկիրը, գրավեց '(Hu) šani-նի քաղաքը: Նա գնաց 'Didini (ebani-di), 'Zua-idi քաղաքը: Նա բոցերի ճարակ դարձրեց 'Diauehini-ի 'Zua-նի քաղաքը, 'Zu-a-նում արձանագրություն բողեց:

Նա մեկնեց 'Ašqalašie-di, քանդեց 105 պալատ (բերդ), հրկիզեց 453 քաղաք, կործանեց երեք երկիր, իսկ մարդկանց ու անասուններին տարավ իր երկիրը. դրանք էին 'Qala-i, 'Ašqalaši-e երկրները և 'Šašilu-i քաղաքը. 15.181 երիասարդ, 2784 տղամարդ, 10.604 կին, 4426 ձի, 10.478 եգ, 73.500 ոչխար:

Նա երկրից վտարեց 2 (կամ 3) թագավորներ՝ 'Šaškīe 'Ardarakibi, 'Baltulhi 'Qabiluhi, նրանց տեղ կառավարիչ նշանակեց (bel-paḥati)¹:

Նա ենթարկեց 'Diauehi-ի թագավորին և հարկ պարտադրեց նրան: Նա Արգիշտին հանձնեց որպես հարկ 41 մինա մաքուր ոսկի, 37 մինա արծաթ, (...) 10 հազար մինա բրոնզ, 1000 հեծնելու ձի, 300 եգ, (...) 10.000 ոչխար:

Արգիշտին 'Diauehi-ի երկրին պարտադրեց տարեկան հարկ (...) մինա ոսկի, 10.000 մինա բրոնզ, (...) եգ, 100 կով, 500 ոչխար, 300 հեծնելու ձի:

Նա ոչնչացրեց նրա հեծելազորը:

Խալդին նվաճեց 'Etiuni-ն-ն և մատուցեց Արգիշտին:

Արգիշտին (քանդեց) Diauehi-ի թագավորական ամրացված տեղերը, ar-niu-li: Նա գրավեց 'Luša-e, 'Katarza-e, 'Eriahi, 'Gulutaḥiḥa, 'Uṭaeruhini-ei երկրները: Նա ընթացավ դեպի 'Abuni-e, վտարեց 'Luša-e երկրի թագավորին, գերի վերցրեց 'Iga-e երկրի (թագավորին), նա վտարեց..., նա Արգիշտին հարկ վճարեց...

PL. XXVI; Sayce XLV.

B² Խալդին նվաճեց 'Mana-ն, 'Irkiuni-ն-ն և այլն = Ժամանակագրության 8-րդ արշավանքի պատճենն է:

¹ Նրանց փոխարեն նշանակվում են կառավարիչներ Šaškīe Ardarakibi, Baltulhi Qabiluhi:

Խաղիմ նվաճեց ՊՄան-ն, ՊՅսն-ն և այլն = Ժամանակագրության 9-րդ արշավանքի պատճենն է:

Խաղիմ նվաճեց ՊՄան և այլն = Ժամանակագրության 10-րդ արշավանքի սկիզբը:

PL. XXVIII.

113. Վան: Քարաքեկոր Թերզիբաշյանի մոտ:
B. 101.

114. Վան: Հանկույսներ քաղամաս, արձանագրություն կրող քար՝ Argistiše... ini ari šuni 10.000 kapi išti-ni; հմմտ. № 137 և № 156:
PL. XLII; B. 102.

115. Էլար. Երևանի մոտ: Խաղիմ նվաճեց ՊԵտուն-ն-ն: Արգիշտին գրավեց ՊՍուան-ի-ի տարածքը, ՎԴարան-ն-ն քաղաքի տարածքը:
Sayce XXXVI; Nik. VI.

116. Պորտակ (Օրդակլու), Սևանա լճի ափին: Արգիշտին ասում է, որ գրավել է ՎՊիսուն քաղաքի տարածքը և ընթացել մինչև լճի ափին գտնվող ՎԻստուն քաղաքի տարածքը¹ (հմմտ. № 112A²):
Sayce LX (JRAS, 1888); Nik. VIII.

117. Ղուպիջան (Անիի շրջան): Խաղիմ² նվաճեց ՎՊուլի-ն-ի երկիրը: Արգիշտին գրավեց ՎՊուլիան-ն-ի ՎԱրուբան-ն-ն քաղաքը:
PL. LX; Sayce LXI; Nik. VII.

118. Մարմաշեն (= Ղանկիջա): Արգիշտին գրավեց Երիսի-ն-ի քաղաքը, գրավեց ՎԻրդան-ն-ն ՎԻսգիլու երկրի pari (մոտ) (հմմտ. Ժամանակագրության 12-րդ արշավանքը):
Sayce XLVII; Nik. V.

119. Մարիդամիշ: Արգիշտին գրավեց ՎԱխրի-ն-ն քաղաքը, ՎԱստահին-ի երկիրը³, նվաճեց ՎԵտուն-ն-ն երկիրը, մա հնազանդեցրեց ՎԵտուն-ի քաղաքը Սուրի-ին և ավերեց ՎՊառահի-ն-ն և ՎԵտուն-ն-ն:
B. 113; Sayce LXXXIV (JRAS 1894); Nik. XXI.

¹ Տե՛ս աբ-տի-նի թու-նի-ե.

² Կարդում են՝ masini šurie (giš-šurie-ի փոխարեն), հավանաբար ց-ի արտասանության հետևանքով iiš-suri = šuri:

³ Հարդում է՝ BITU 'ari šu-u-i-ni. հմմտ. №№ 114, 137, 128, 156:

120. Արմավիր: Երկու շատ աղճատված քեկորներ, մեկում խոսքը վերաբերում է Տելունի, Սրբիկ-նի, Սրբունրադի և ՎԻսիսի-ի ցեղերի նվաճմանը, իսկ մյուսում կարդացվում է՝ Argistišina 'Aza-ni MATU-ni 'Urbika-še, 'Šelunieu-ni, 'Nunuli.

Sayce LIV; Nik. X-XI.

121. Արմավիր: Շատ վնասված: Խոսվում է Խաղիմի մի զոհաբերություն անելու մասին: Կարդացվում է՝ ini BITU sirihani (կարծես նախորդ № 120 արձանագրությանն է վերաբերում):
Sayce LIX; Nik. XVII.

122. Ղազանչի (Իգդիրի մոտ): Արգիշտին՝ BITU raduni:
Sayce LXVII; Nik. IV.

123. Շահրիար: VBAG 1900, 572:

124. Գուկանիս (Գյուկանց): Սյունակի մի քեկոր, բովանդակում է երեք տող:

125. Կարակալա՝ ini pili agu-nu-ni qirani širaba-e manu ui aini ištini aiuri. Argistiše aguni.
Nik. XXIV.

126. Մարդարաբադ: Արգիշտին կառուցեց EKALLU (քեր) badusie և այլ կոչեց Argistišinili; gi-i šidauri; Munaa-ni գետից 4 KUR-E (= pili) agu-bi; uldi, zari teru-bi; radu-bi arnišini-li istini.
Sayce LXXVII; Nik. IX.

127. Արմավիր = 126 (?):
Nik. XXIII.

128. Ղանի-քեկի: Արգիշտին՝ ini a-ri šuu-ni² 10.000 kapi išti-ni šidiš-tu-bi terubi Argistišinili.
Nik. XXII.

¹ Հմմտ. Argistišinili Aza-ի երկրում: Արգիշտի Ժամանակագրություն № 111, տասներորդ տարի:

Իսիսի և Սիսի անունը № 130-131:

² Տես-նի համեմատած šuu-ni -ի հետ № 199-ում, կարծես ավելի շուտ անվան է, քան քայ:

SARDURI ARGİSTİHINI
ՄԱՐԴՈՒՐԻ ԱՐԳԻՇՏԻՆԻ ՈՐԴԻ

129. Վան: Սուրբ Պողոս եկեղեցի: Քարակոթողը, հավանաբար, ծագում է Սարդուրիի արևելյան որմնախորշից, որը ներկայումս դատարկ է: Ջարդվել վերածվել է մի քանի կտորների: Շատ է տուժել հատկապես արձագրությունը:

ա) Քարակոթողի երեսի վրա գրված է Սարդուրիի հաղորդումն այն մասին, որ նա կերտել է ini pulusi «այս կոթողը». հաջորդում է անեծքի լռիվ բանաձևը, ուղղված նրանց, ովքեր կհամարձակվեն քանդել կոթողը:

բ) Քարակոթողի աջ կողմի վրա գրված արձանագրությունը արշավանքների մասին է: Խալդին հաղթեց ¹Uelikubi երկրի թագավոր ¹Murinu-ni-ին, նա հպատակեցրեց ²Tuliu երկրի թագավոր ¹Sinalibi-ni ¹Luehu-hie-ին: Նա հպատակեցրեց ¹Aššur-Nirari-ni ¹Adad-Nirariehi-ին ²Aššur-nie-ի թագավորին: Նվաճեց ²Arme-e երկիրը, ²Nihiria-ni քաղաքը և այդ երկրի թագավորներին մատուցեց Արգիշտիի որդի Սարդուրիին:

Սարդուրին գնաց ²Uelikubini-nie երկիրը, մեկ օրվա ընթացքում նվաճեց բազմաթիվ երկրներ, ջարդ կատարեց, կործանեց պալատները (ավելի շուտ բերդաքաղաքները), հրկիզեց քաղաքները...

գ) Սարդուրին մեկնեց... գրավեց ²Rihiša-a երկրի տարածքը, ²Hura-a-ն, ²Nušini-ni-ն, գրավեց նաև ²Bie-i քաղաքի տարածքը. ¹Bašane-ni-ի (ոչ ¹Bašata-ni) մարդկանց զաղթեցրեց՝ 12.600 երիտասարդ, 1800 մարտիկ, 7700 կին, ընդամենը 22.100, մասամբ սպանված, մասամբ ողջ. 352 ձի, 4547 եզ, 13.060 ոչխար: Նա գրավեց ²Irsini (կամ Sasini), ²Melita (ավելի շուտ Meline) քաղաքները, որոնց թագավորն եկավ իր հարգանքը մատուցելու:

PL. XXX-XXXI.

130-131. Կարատաշ, Արճեշի մոտ, ժայռի վրա, երեք սյունակներով, որոնցից մեկը ջնջվել է: Տեքստը պարզ չէ: Խոսքը վերաբերում է մի անկարանի՝ ini Giš-du-u teru-ni, ինչպես նաև մի Giš-uduli-e-ի, որը կրում է Սարդուրիի անունը և երկու այլ անձանց անուններ՝ ¹Sehauili-e-ի որդու և ¹Uidu-še-ի: Հաջորդում է անեծքը:

Մյուս սյան վրա Սարդուրին հայտարարում է, որ Խալդին իրեն թագավորություն տվեց, և հենց որ նա հայրենական թագավորությունն ստացավ... (ջնջված է):

Sayce LI.

132, 132A, 132B = A (ըստ Մանի): Վան: Սարդուրիի մեծ ժամանակագրությունը մի որմնախորշում, որ հայերը «զանձատուն» են կոչում, իսկ բյուրերը խազնա կապուսի (զանձարանի դուռ):

132. Որմնախորշի արևելյան կողմն՝ ⁴Haldi-ն նվաճեց ²Manani-ն և մատուցեց երկիրը Սարդուրիին:

Սարդուրին գնաց բաբելոնյան ebani (տարածքը), գրավեց Babilu ebani-ն (տարածքը): Նա ընթացավ դեպի ²Baruta-ini-a, գրավեց այն: Գրավեց (մարտով) երեք անբացված պալատ (բերդ), մեկ օրվա մեջ 23 քաղաք ավերակ դարձրեց, քարուքանդ արեց պալատները (բերդերը), հրկիզեց քաղաքները, կողոպտեց երկիրը, զաղթեցրեց բնակիչներին (տղամարդկանց ու կանանց)՝ 8135 երիտասարդ, 25.000 կին, 6000 մարտիկ: Նա տարավ 2500 ձի, 12.300 եզ, 32.100 ոչխար¹:

Նույն տարին նա երկրորդ անգամ գնաց (այսինքն՝ երկրորդ արշավանքը կատարեց) ²Etiumie-di, ²Likiue-edi և կռվով գրավեց ²Edia-ni-ն², ¹Abiana-ini-ի թագավորական քաղաքը, կռվով գրավեց ¹Irkua-ini-ի ¹Iruia-ni թագավորական քաղաքը, կռվով գրավեց ²Irma-ni-ն, ¹Ueirda-ini-ի թագավորական քաղաքը, հնազանդեցրեց ¹Puini-ալի ցեղի թագավորին և նրան պարտադրեց հարկ վճարելու: Նա գրավեց չորս բերդ, զաղթեցրեց բնակչությանը՝ տղամարդկանց և կանանց՝ 3500 երիտասարդ, 33.000 կին, 4000 մարտիկ, քչեց 8525 եզ և 18.000 ոչխար:

Նույն տարին, երրորդ արշավանքում, նա գնաց ²Urmeue-edi, գրավեց 11 բերդ, քանդեց և բնակչությունը տարավ՝ 1100 երիտասարդ, 6500 կին, 2000 մարտիկ, 2538 եզ, 8000 ոչխար: Երեք երկրից տարածի ընդհանուր զումարը մեկ տարում կազմում է՝ 12.735 երիտասարդ, 33.000 կին, 12.000 մարտիկ, 2500 ձի, 23.365 եզ, 58.100 ոչխար:

Սրանք են այն սխրագործությունները, որ Սարդուրին մեկ տարում կատարեց:

PL. XXXII.

132. A: Որմնախորշում գտնվող քարակոթողը ամեն կողմից ծածկված է արձանագրություններով. գոյություն ունի, ուրեմն, տեքստերի չորս սյունակ:

¹ Հաջորդում է մի մութ նախադասություն՝ inani SARRU nunabi mei ali ²ASIP²-še partu «šeri» partu in ebani ašulabi - թագավորը հասավ, ինչ որ գործերը տարան, բաժանեցին, երբ երկիրը գրավվեց: Իմաստը պարզ չէ:

² Թվում է, որ Ediani-ն Abiani-ի թագավորական քաղաքն է. «երկիր» որոշիչը գուցե սխալմամբ դրվել է «քաղաք»-ի տեղ:

Հինքի արտաքին մասում նույնպես արձանագրություն կա, հետևաբար, եղավ հինգ սյունակ:

Իրար հաջորդող տեքստերի կարգը հետևյալն է. I - քարակոթողի արտաքին երեսը = C՝ ըստ Մառի: II - աջ կողմը (նայելով դեպի կոթողը) = D՝ ըստ Մառի: III- ներքին երեսը = E՝ ըստ Մառի: IV- ձախ կողմը = B: V - հինքը = F:

Քարակոթողի ծայրն անկասկած կտարվել է, որի հետևանքով չորս սյունակների սկիզբն էլ պակասում է: Առաջինի վրա չկա մախաբանը, որ գրեթե ծիսական բնույթ ունի և յուրաքանչյուր արշավանքի նկարագրության ներածությունն է կազմում՝ ⁴Haldi uštabi mašinie giššurie karuni ⁵Quulha-ni ebanie karuni ⁶Abilianihini ebanie tequali ⁷Sardurikai ⁸Argišti-ḫinie. Sarduri alie uštadi ⁹Quulha-idi» և այլն...

Մարդուրին գնաց ¹⁰Quulha-idi երկիրը, ճգնեց ¹¹Huša-alhi ժողովրդի ¹²Huḫa-ni քաղաքին և նրան բերեց իր երկիրը:

Նույն տարին նա մեկնեց ¹³Abilianihini-edi երկիրը, մեկ օրվա մեջ նվաճեց երկիրը, քարուքանդ արեց բերդերը, հրկիզեց քաղաքները, կողոպտեց երկիրը, գաղթեցրեց բնակչությանը՝ 1890 երիտասարդ, 3496 մարտիկ, 3304 անձ սպանված կամ ողջ բռնված, նաև 65 ձի, 6090 եգ, 10.897 ոչխար:

Մրանք են մեկ տարում կատարված սխրագործությունները:

2-րդ տարի:

Խաղին նվաճեց ¹⁴Eriahi երկրի քաղաքների երկիրը, նվաճեց ¹⁵Abilianihini երկիրը և նրանք մատուցեց Մարդուրիին: Մարդուրին գնաց ¹⁶Eriahini-di-ի դեմ, գրավեց ամբողջ երկիրը մեկ օրվա մեջ: Նա ջարդեց (բռնեց) և հողին հավասարեցրեց հայրերի ու պապերի muri-li, տները, բռնեց քաղաքներին: 150 տուն որպես muri (հա՞րկ) վերցրեց և վտարեց... նա հրկիզեց քաղաքները և տարավ տղամարդկանց ու կանանց Biana-di: Վերադարձի ճանապարհին Մարդուրին արշավեց ¹⁷Abilianihini-edi, հրկիզեց քաղաքները, կողոպտեց երկիրը: ¹⁸Abilianihini երկրի ¹⁹Murini-ini-ն դիմավորեց, ընկավ Մարդուրիի ոտքերը, խոնարհվեց: Մարդուրին նրան հարկ պարտադրեց:

Նրա ավարն էր՝ 7150 մարդ, մասամբ սպանված և մասամբ ողջ բռնված, 500 ձի, 8560 եգ, 25.170 ոչխար:

Մրանք են այն սխրագործությունները, որ նա մեկ տարվա ընթացքում կատարեց:

3-րդ տարի:

Խաղին հպատակեցրեց ²⁰Ruisiani-ե երկրի քաղաքը ²¹Rašu-ni-ին. նա հպատակեցրեց ²²Diušini-ն, ²³Iganie-ի-ն (²⁴...uḫi, երկրի, քաղաքին) և նրանց մատուցեց Մարդուրին:

D = քարակոթողի աջ կողմը. «և նա գրավեց Rašu և Diušini երկու քաղաքների երկրները: Նույն տարում երկրորդ անգամ, այսինքն՝ երկրորդ արշավանքում...»¹:

Մարդուրին գնաց Qulḫahalie-ի (այսինքն՝ Qulḫahie) երկիրը և այն գրավեց: Նա մտավ ²⁵Ildamuša քաղաքը և այնտեղ արձանագրություն փորագրել տվեց: Նա հրկիզեց բերդերը, կողոպտեց երկիրը և տարավ բնակչությանը:

Նույն տարին, երրորդ անգամ, ṣi-iš-ti-ni, Մարդուրին գնաց ²⁶Uīter-uḫi-edi, այն ավերակի վերածեց, հարյուրավոր մարդկանց կոտորեց, կողոպտեց երկիրը, գաղթեցրեց բնակչությանը: ²⁷Uraia-ni քաղաքը բերդի (պալատի) վերածեց:

Նա վտարեց վեց կառավարիչների, bel-pahati, և երեք առաջնորդներ նշանակեց. նա վեց ցեղ տեղահան արեց:

Նա գաղթեցրեց 8200 երիտասարդ, 9000 կին, ուրեմն, 17.200 սպանված կամ ողջ բռնված. նա տարավ 1500 ձի, 17.300 եգ, 31.600 ոչխար:

Մրանք են այն սխրանքները, որ Մարդուրին կատարեց մեկ տարվա ընթացքում:

4-րդ տարի:

Խաղին հպատակեցրեց երկրի չորս քաղաքների՝ ²⁸Ueduri Etiuni (ebaniasie), ²⁹Arguqiu-ni-ի քաղաքներին, ³⁰Kamani քաղաքներին, ³¹Lueruni քաղաքներին:

E = քարակոթողի ներքին երեսը, Մարդուրին մեկնեց և նվաճեց չորս քաղաքների...

Երկրորդ արշավանքը ³²Puluadi-edi երկրի դեմ է:

Մարդուրին հաղթեց նրա ռազմիկներին, ընթացավ դեպի ³³Lupliunie: Նա գրավեց ³⁴Lupliuni-ni քաղաքական քաղաքը և այնտեղ արձանագրություն փորագրել տվեց: Նա հրկիզեց քաղաքները, կողոպտեց երկիրը, գերեզմանեց բնակչությանը: Նա կառուցեց բերդեր և երկիրը միացրեց իր երկրին:

¹ Հաջորդում է նույն մթին մախադասությունը՝ inani ŠARRU nunaḫi և այլն..., տե՛ս վերևում առաջին արշավանքի ծանոթությունը:

Նույն տարին, երրորդ անգամ, նա գնաց ^PEriahini-edi, գրավեց երկիրը, հրկիզեց քաղաքները, կողոպտեց երկիրը և բնակչությանը տարավ Biaina-idi: Այնտեղ բերդեր կառուցեց և միացրեց երկիրն իր երկրին:

Գաղթեցվածների ընդհանուր գումարը կազմում է 6436 երիտասարդ, 15.553 կին, ուրեմն, ընդամենը 21.989 անձ՝ սպանված և ողջ բռնված. նա տարավ մակ 1613 ձի, 115 ուղտ, 16.529 եզ ու 37.685 ոչխար:

Մրանք են այն սխրագործությունները և այլն...

5-րդ տարի:

Խաղին նվաճեց ^PQumahaali-i-ն և այն մատուցեց Սարդուրիին: ^PQumahaali-i-ե երկրի թագավոր Kuštašpili-ն դավաճանել էր՝ իր համակրանքն ուրիշ թագավորի տալով: Սարդուրին գնաց ^PQumahaalinie երկիրը և կռվով գրավեց թագավորական քաղաք ^YUitani-ն. նա գրավեց թագավորական քաղաք ^YHalpa-ni-ն. նա գրավեց թագավորական քաղաք ^YParala-ni-ն: Վերջինիս թագավորը դիմավորեց Սարդուրիին և խոնարհվեց նրա առջև: Սարդուրին նրան պարտադրեց հանձնել որպես հարկ 40 մինա ոսկի, 800 մինա արծաթ, 3000 զգեստ, 2000 պղնձե առարկաներ, 1535 պղնձե գավաթ:

B = քարակոթողի ձախ կողմը: «Խաղին նվաճեց ^PMana-ն, նվաճեց ^PEriahi-ն...» և դրանք մատուցեց Սարդուրիին:

Սարդուրին մեկնեց ^PMana-idi, գրավեց երկիրը, հրկիզեց քաղաքները, կողոպտեց երկիրը և բնակչությունը տարավ ^PBiaina-idi: Նա գրավեց ^YDaarba-ni բերդը և երկիրը միացրեց իր երկրին:

Նույն տարին, երրորդ անգամ, Սարդուրին գնաց ^PErahinie-di, գրավեց երկիրը, հրկիզեց քաղաքները, կողոպտեց երկիրը, բնակչությանը գաղթեցրեց ^PBiainia-di:

Գաղթեցվածների ընդհանուր գումարը՝ 3225 երիտասարդ, 4928 կին, ընդամենը՝ 8153 անձ՝ սպանված կամ ողջ բռնված. 412 ձի, 6665 եզ, 25.735 ոչխար:

Մրանք են մեկ տարում կատարված սխրագործությունները:

F = Զարակոթողի հիմքը:

6-րդ տարի:

Սարդուրին հավաքեց իր զորքերը, աղոթեց ^dHaldi-ին, ^dTešeba-ին, ^dArdi-ni-ին և Բիահնայի այլ աստվածներին, ու սրանք առաջնորդեցին նրան դեպի ^PLuluinasi: Սարդուրին գնաց ^PEtiuni-edi¹:

Այնտեղից նա գնաց ^PIganie-di: Խաղին հպատակեցրեց ^PIgani-i երկրի թագավոր ^YQapuri-ni-ին: Սարդուրին ավերեց 35 բերդ և 120 քաղաք մեկ օրվա ընթացքում: Նա քարուքանդ արեց բերդերը, հրկիզեց քաղաքները, կողոպտեց երկիրը և կանանց ու տղամարդկանց տարավ ^PBiaina-di:

Նույն տարին Սարդուրին գնաց ^PPuzunia-inie երկիրը ^YAlkania-idi և ^Šdala-di քաղաքները, կործանեց բերդերը, հրկիզեց քաղաքները, կողոպտեց երկիրը:

Վերադարձի ճանապարհին(?) նա գնաց ^PIsteluani-gidi, ^PApuni-nie երկիրը, ^PQadiani-edi ^PAbilianihini-edi: Նա ջախջախեց բանակը և այդ երկրների կառավարիչներին: Նա գնաց ^PUelikuni-gidi, գրավեց ^PUelikuni-ni երկիրը, կռվով գրավեց 22 բերդ, քարուքանդ արեց բերդերը, հրկիզեց քաղաքները, կողոպտեց երկիրը, տղամարդկանց ու կանանց տարավ ^PBiaina-idi: ^PUelikuni-ի թագավոր ^YNiduni-ն ներկայացավ Սարդուրիին և խոնարհվեց նրա առջև: Սարդուրին ստրկացրեց նրա ժողովրդին ու նրան ենթարկեց հարկատվության:

Նույն տարին Սարդուրին երրորդ անգամ գնաց ^YArguqi-ni-e երկիրը, գրավեց ^YArguqi-ini երկիրը, ^YAdahuni երկիրը, ^YLuipruni երկիրը, ^YEšumua երկիրը, ^YKaamni-u-i երկիրը, ^PQuaalba-ni-ի տարածքը, ^PŠihuni-ni-ի տարածքը, ^PTeria-ni-ի տարածքը: Կռվով գրավեց 20 բերդ, 120 քաղաք գավթեց մեկ օրում: Քանդեց բերդերը, հրկիզեց քաղաքները, կողոպտեց երկիրը, տարավ տղամարդկանց ու կանանց: Նա մակ ջարդ կատարեց Bamni և Uškiani երկրներում:

Գաղթեցվածներ՝ 10.000 երիտասարդ, 4600 տղամարդ, 23.200 կին, ընդամենը 37.800 անձ՝ սպանված կամ ողջ բռնված, 3500 ձի, 40.353 եզ, 214.700 ոչխար:

Մրանք են մեկ տարվա ընթացքում կատարված սխրագործությունները:
G = 132B: Որմնախորշի խորքում:

Գահակալության ժամանակ Սարդուրին իր տրամադրության տակ ուներ՝ 92 մարտակառք, 3604 հեծելազոր, 352.011 հետևակազոր: Բանակի հանդերձանը՝ 121 ^{mm}UN «հոզի» («առաջնօրդ»), 10.408 ձի, 132 ջորի, 12.321

¹ Հաջորդում է andani ^PEriani auldubi salmathi ^PQurianini նախադասությունը. հմմտ. Արզիշտիի Ժամանակագրությունը, ծան.:

ցույ, 9036 եզ, ընդամենը 21.357 խոշոր եղջերավոր անասուն և 35.467 մանր եղջերավոր անասուն, 2114 պատերազմի զենքեր, 1342 աղեղ, 47.970 բրիչ, 1.022.133 kapi ցորեն, 111 aqarki զինի, 86 aqarki և 7 hirusi յուղ, 7079 մինա պղինձ, 336 սարուկ և ururdani(?):

PL. XXXVI-XXXVII; H. Mapp и И. Орбели, Археологическая экспедиция в Ван, 1922, վերանայված Մ. Ծերեթելու կողմից, Die Neuen Haldischen Inschriften, «Sitzungsberichte d. Heidelberger Akademie d. Wiss.», 1927-1928.

133. Իզդի, Ջյունուրխանի մոտ: Խալդին նվաճեց ¹Melitalhi-e-ի քաղաքը Hilaruada-ն (որդի) Šahubi-ի երկիրը և մատուցեց Սարդուրիին:

Սարդուրին ասաց. alhi buranadi tu i išhi manu ui aini (արքա) ištini ²Kauri: Այս կարևոր նախադասությունը վատ է վերծանված: Թվում է թե սա միևնույն նախադասությունն է, որը հաճախ կրկնվում է այլ տեղերում և վերաբերում է անհավատարմության՝ որպես արշավանքի պատրվակի¹:

Սարդուրին աղոթեց աստվածներին, նրանք եկան օգնության: 4-րդ (?) օրը իր բանակով նա հասավ Tumešk-inikai քաղաքը:

Նույն օրը նա գնաց andani kala-a-նի aaldubi երկիրը²: Նա հասավ ³Karnišie... ⁴Baba-նի salmathi Melitani³: Նա հասավ ⁵Mušanie երկիրը ⁶Zaapša քաղաքը⁴: Մեկ օրվա մեջ նա գրավեց ու տակնուվրա արեց 14 բերդ և 100 քաղաք, հրկիզեց քաղաքները, զերի վերցրեց 50 մարտիկ ու նրանց սպանեց իր վերադարձի ընթացքում: Նա կովով գրավեց ⁷Hilaruada-i-ի քաղաքական քաղաք ⁸Nisi-նի և վերցրեց niribi (զոհեր) և՛ տղամարդիկ, և՛ կանայք: Այնտեղից նա եկավ ⁹Melita-նի քաղաքը: Hilaruada-ն ընդառաջ եկավ ու խոճարհվեց և ոտքերն ընկավ:

Սարդուրին որպես նվեր ստացավ ոսկի, արծաթ, բրոնզե ամաններ և բերեց Biaina-idi: Նա նրան պարտադրեց հարկ վճարելու: Նա զավթեց ինը բերդ և միացրեց իր երկրին՝ ¹⁰Haza-նի, ¹¹Urahi, ¹²Tumeiški, ¹³Ara(t)-նի, ¹⁴Manu-i, ¹⁵Aruši, ¹⁶Qulbitari-նի, ¹⁷Taše-¹⁸Kuerai-Taše, ¹⁹Meluaia-նի:

Հաջորդում է անեծքի բանավածը:

B. 121; Sayce L.

¹ 132 A = pl. XXXV, 42, ania-arduni manu ui aini (արքա) ištini ušturi.

² Հաջորդում է andani kalani aaldu-bi (?):

³ ¹Babani, salmathi ²Melita-նի կարծես andani kalani aaldu-bi նախադասության մասն են կազմում:

⁴ Za-ap-ša a-su-ni՝ այս բառը կրկնվում է № 31-ում՝ ⁵Šebetaria asuni և այլուր: Գուցե նշանակում է «սահման», ինչպես Ա. Մեյսն է ենթադրել:

134. Չաղալու, Սևանա լճի ափին: Խալդին¹ նվաճեց Arquqi-ni-nie-ի երկիրը: Սարդուրին գրավեց ²Arquqini երկիրը և առաջացավ դեպի ³Urtehiini²:
Sayce LXXXII; Nik. XV.

135. Աթամյան, Սևանա լճի մոտ: Սարդուրին հայտարարում է, որ գրավել է ⁴Šinalibi ⁵Uerihinie-ի քաղաքական քաղաք ⁶Tulihuni-ն և գաղթեցրել է տղամարդկանց ու կանանց:

Նա ընթացավ դեպի Uduri-Etiuni (հմմտ. № 129):

Sayce LIII; Nik. XVI.

136. Պատմոց: B. 113:

137. Աստվածաշեն, Բոլ-դաղի ստորոտում մի գյուղ: Սարդուրի՝ ini ari šu-նի 15.300 kapi ištini (հմմտ. № 114 և 156):

Sayce LXII.

138. Բինգյու-դաղ:

139. Երևան: Изв. Имп. археогр. ком., 37, 1910;

Nik. 37.

140. Արմավիր (այժմ՝ Էջմիածնում): Արձանագրությունը շատ է աղճատված, հիշատակում է pili si-ip-ru-gi-ni, zari (պարտեզ): Խալդին քաղաքորությունը Սարդուրիին տվեց... uldi, zari, arnušini-li:

Sayce LXIII, LXIV; Nik. XIII-XIV.

141. Արմավիր: Խալդիին՝ kiššati-ի (ամբողջի, աշխարհի)³ տիրոջը: Սարդուրին kušu-նի (կառուցեց) ini BITU (տուն) և ⁴Haldini-li BAB-li (Խալդյան դռներ) և at-qa-na-du-նի նվիրեց Խալդիին:

Sayce LXV; Nik. XII.

142. Արմավիր, Չանֆիդա գյուղում: Արձանագրությունը շատ է վնասված: EKALLU-ի (պալատ, դղյակ) կառուցման մասին է խոսքը և Haldini-նի BABU (Խալդյան դռների) մասին:

¹ Կարդացվում է masini šu-ri-e (giš-šurie-ի փոխարեն), ինչպես № 117-ում:

² Ha-tu-bi pa-ri ³Ur-ta-bi-i-նի փոխարեն kutu-bi-ի, ինչպես №135-ում՝ kutu-bi pari:

³ Պետք է նշել, որ Խալդին, ինչպես Աշուրը, կոչված է kiššati-ի տեր նաև № 151-ում և 129-ում:

143. Արմավիր: Սարդուրին կառուցեց ini BITU և ^dHaldini-li BAB-li...
Sayce LXXXIII; Nik. XX.

143ա. Գաշքյուփրի (Չուրդր): Սարդուրին գրավեց ^PUhiema-mi-ni (?) (հավանական է՝ Uhiema-ni) և վերադարձի ճանապարհին գրավեց ^MMaqaltu-ni-ni ու գաղթեցրեց տղամարդկանց ու կանանց ^PBian-a-idi:
Записки Кавк. музея, 1919; Sayce (JRAS, 1929).

RUSA SARDURIHINI
ՌՈՒՄՍՍ ՍԱՐԴՈՒՐԻՆԻ ՈՐԴԻ

144. Վան: (Բրիտանական քանդարան): ^dTešeba eurigi-e ini pulusi ¹Rusa-še ^{1d}Sardurihini-še, ¹Uedipri tini kuguni ulgušianie-di-ni ¹Rusa-ni ^{1d}Sardurihi. ^dTešeba Տիրոջը Ռուսա Սարդուրիիսինին (որի) անունն է ¹Uedipri, տաշել տվեց այս քարակոթողը Ռուսայի ողջության համար:
Այս տեքստը առանձնապես ուշագրավ է Ռեդիպրի մականվամբ:
PL. XLI; B. 126.

145. Ջեշիշ-գյուլ: Կոթողի տեքստը շատ է վնասված: Ռուսան šue (ավագան) կառուցեց, որտեղից ջուր տարավ Ռուսախինիլի քաղաքը՝ հողերը, այգիները և պարտեզները ոռոգելու համար:
PL. XXXVIII; B. 127; Sayce LXXIX; Zeit. f. Ethnologie, 1892.

146. Միդիկա-Թոփուզավա: Երկլեզվյան քարակոթող. երկու տեքստերն էլ շատ են ջնջված: Ռուսան հայտարարում է, որ Ուրգանան մտավ Խալդիի տաճարն ու հավատարմության երդում տվեց և որ ինքը պատերազմում էր Ասորեստանի լեռներում և Ուրգանայի ձեռքից բռնած նրան Ardini-ի (= Մուծածիր) քաղաքը հռչակեց. 15 օր Ռուսան կանգ առավ. ապա մեկնեց Lulu երկրի դեմ, կամ Akkadu, ինչպես ասուրական տեքստում է:
R. 128; ZDMG LVIII, 1904.

147. Օձարբերդ (Ջուլադոռան) Սևանա ափերին: Ռուսան գրավեց և մեկ օրում հպատակեցրեց հետևյալ երկրները. Adahu-ni, Uelikuhi, Lueruhi, Arququ-ini - լճի այս կողմի չորս քաղաքը, Gurgumeli (կամ Ebimeli), Šanatu-ini, Teruišaini, Rišua-ini, Zua-ini, Ahu(?)-a-ini, Za(?)-ma-a-ni, Irgima-ini,

E(?)la-ini, Eri-el(?)-tua-ini, Aidamaniu-ni, Guria-ini, Alzira-ni, Pirua-ini, Si(?)la-ini, Uše(?)dua(?)-ini, Ateza-ini, Eria-ini, Azamerun-ini - 19 քաղաքով՝ լճի մյուս կողմի հսկա լեռներում: Ընդամենը 23 քաղաքով մեկ օրվա մեջ նվաճեցի և տղամարդկանց ու կանանց տարա ^PBaina-di որպես տարեկան հարկ:

Նա եկավ և այդ երկրում կառուցեց EKALLU (քերթ) և այն կոչեց ^dTešeba-ի քաղաք ^PBiaian-ane-ի մեծության համար: Ով որ այս արձանագրությունը քանդի ^dArdini...
J. Friedrich, Mélanges offerts à H. Pedersen, 1937.

148ա. Նոր Բայազետ: Ռուսան գրավեց և ստրկացրեց ^PUelikuhi երկիրը, երկիրը փոխեց (?), կառավարիչ նշանակեց այնտեղ: Նա կառուցեց ^dHaldini-li BABU¹, EKALLU և անվանակոչեց Խալդիի քաղաք:
Textband II, p. 130; Ջալանթար, Օրագիր, № 3, 1927;

Գր. Ղափանցյան, Նոր Բայազետի սեպագիր արձանագրություն:

ARGIŠTI RUSAHINI
ԱՐԳԻՇՏԻ ՌՈՒՄՍՍԻ ՈՐԴԻ

149. Չելեքիրադի (Չելեքիի պարտեզ), Արճեշի մոտ: Կոթողը երկու կողմից ծածկված է արձանագրություններով Արգիշտիխինիլի հիմնադրման, խաղողի այգու և պարտեզի անվան մասին: Հետաքրքիր է շրջանի անունը, բայց ընթերցվածքն ստույգ չէ. ^PAr-du-ša-ka-a-i-ni, անուն, որը հիշեցնում է Արգաշկուն:

150. Վան: Հայկականք եկեղեցին: Արգիշտին ¹Gilurani-ի անտառի դիմաց ցցեր տնկեց մինչև ¹Išpilini ¹Batuhini-ի պարտեզը 950 kapi տարածության վրա¹:
Sayce 87; JRAS 1906; ZDMG 58, 1904.

RUSA ARGIŠTIHINI
ՌՈՒՄՍՍ ԱՐԳԻՇՏԻ ՈՐԴԻ

151. Չվարթնոց, Էջմիածնի մոտ: Ռուսան գրավեց ^PQuarli-ni երկիրը, արտը նշակվեց... Ռուսան սևի (խաղողի այգի), zari (պարտեզ) տնկեց և pili

¹ Մ. Մերեբլու քարգանություն համաձայն:

(ջրանցք) փորեց Ildaruni-ani գետից: Այդ ձեռնարկությունները գոհեր են պահանջում՝ ձի ու ոչխար Խալդին, թռչնախիճ, Արդիճիճիճ և Անիկուիճ: Հաջորդում է անեծքի բանաձևը:
ZDMG 56, 1902; Sayce LXXXVII (JRAS 1906).

152. Մեծկերտ (Մազկերտ): Ժայռակերտ մի սենյակում կարդացվում է՝ Lubarhi-edi Alzina-i:
B. 134.

153. Արծկե (Աղիլջևազ): Պատի վրա կարդացվում է՝ (Rusa)-še ali parubi aše lutu- ni ^PLuluina-ni ^P...-ni ^P...-ni ...-kai naru-u ^PMuški-ni, ^PḪate-e, ^PḪalitu ... Lului-ni ... երկրից Ռուսան տարավ տղամարդկանց ու կանանց... և հարկեր հավաքեց Մուշկի, Խաթե և Խալիտու երկրներից:
B. 133. Verh. Berl. Anth. Gesel. 1900, S. 436.

153ա. Մակու: Վիճագիր կորոչ: Ռուսան կառուցեց BIT parakku (տաճար) Խալդիի համար և այն կոչեց Ռուսայի փոքրիկ քաղաք: Անեծք և բազավորի տիտղոսները:
Sayce XCII (JRAS 1912); Март, Записки Вост. отд. Русск. арх. об., 1922.

154. Վամ: Բրոնզե ուխտայալ վահանի բեկոր, որի եզրի վրա գրված է՝ ^Ḫaldini-ni alsuiši-ni ¹Rusa-ni ¹Argištihi, հզոր թագավոր, Տուշպա քաղաքի իշխան:
Sayce LII; Belck & Lehmann, «Zeit. f. Assyr.», IX, 1894.

155. Վամ: Թուփրակ-կալա: Կավե տախտակ՝ akuki MU ¹Rusa-a ¹Argištehi ¹Sagaštar ¹Išququlhie ulabi ^PManai-di ¹Ata-a esi-a ^PSakki-ni ^Ḫaldini asu-me ^ḪRusahina ^PQielbani-ta BIT parani.
B. 135; Materialien, 105.

RUSA ERIMENAḪINI
ՌՈՒՍԱ ԵՐԻՄԵՆԱՅԻ ՈՐԴԻ

156. Արմավիր (այժմ՝ Էջմիածնում): Ռուսան՝ ini BIT ari (šuu-ni) 1432 ka(pi ištini). Շաև №№ 114, 137, 128:
Sayce LXXXV; Nik, XIX.

157-162. Վամ, Թուփրակ-կալա: Վեց տարբեր վահանների բեկորներ, որոնց վրա գրված է Ռուսայի անունը՝ ini aše Rusaše Erimenahiniše uštu-ni:
Sayce LII; Zeit. f. Assyr., VII, 1892 & IX, 1894.

163ա-բ. Վամ, Թուփրակ-կալա: Չարդաքանդակի բեկոր: Ծնկաչոք ցույ և վարդաձև զարդեր բրոնզից, որոնք Rusa Erimenahini անունն են կրում իրենց վրա:
Sayce LII; Zeit. f. Assyr., IX, 1894.

164-193. Այլևայլ, անորոշ արձանագրություններով բեկորներ:

2. ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ

Վերոհիշյալ արձանագրությունները ներկայացնում են ուրարտացիների ամբողջ գրական հարստությունը, համեմայնդեպս՝ մինչև այժմ մեզ հայտնի եղածը (16): Որքան էլ այդ պաշարը աղքատիկ լինի, այնուհանդերձ, դրանք կապակցելով ասուրական տեղեկությունների հետ՝ կարելի է ուսումնասիրել Ուրարտուի պետության կազմավորումը, զարգացումն ու անկումը:

Առաջին խնդիրը վերաբերում է Ուրարտուի առաջնորդների ցուցակը և նրանց ժամանակագրությունը ուրարտական արձանագրությունների օժանդակությամբ հնարավորին չափ ճշգրտելուն: Ասուրական տվյալների հիման վրա մեր կազմած ցուցակը հաստատվում ու լրացվում է ուրարտական վավերագրերով, բացառությամբ մի քանի վիճելի կետերի: Պարզության համար համեմատենք ուրարտական և ասուրական երկու ցուցակները.

Լուտիարի	Արամն՝ 858 և 844 թթ., Մալմանասար III-ի (859-824) ժամանակ:
1. Սարդուրի	Սարդուրի I 832 թ., նույն թագավորի ժամանակ:
2. Իշպուիճի	Ուշալիմա՝ 820 թ., Շամշի-Ադադ V-ի (823-810) ժամանակ:
3. Մենուա	
4. Արգիշտի I	Արգիշտի I 766 թ.:
5. Սարդուրի II	Սարդուրի II 743 և 735 թթ., Աշուրնիրարի V-ի (753-746) ժամանակ:
6. Ռուսա I	Ուրսա I 713 թ., Սարգոն II-ի (721-705) ժամանակ:
7. Արգիշտի II	Արգիշտի II 707 թ., նույն թագավորի ժամանակ:

8. Ռուսա II Ուրսա II 678 թ., Ասարխադդոնի (680-669) ժամանակ:
Մարդուրի III 646 թ., Աշուրբանիպալի (668-626) ժամանակ:

9. Էրիմենա

10. Ռուսա III

Լուտիպրին հիշատակված է որպես Մարդուրիի հայրը, բայց հայտնի չէ, թե նա թագավոր եղե՞լ է:

Նույնպես ստույգ չգիտենք, թե Ռուսա III-ի հայր Էրիմենան թագավոր եղե՞լ է, թե ոչ: Ասորեստանցիները Մենուային և վերջին Ռուսային չեն ճանաչում այն պարզ պատճառով, որ Մենուան շատ հաջողակ հակառակորդ էր, և Ասորեստանի այնքան գոռոզ վեհապետներին ձեռնադրելու չէր հիշատակել նրա անունը, իսկ Ռուսա III-ը իշխում էր այն դարաշրջանում, երբ Աշուրի պետությունն արդեն ավերակի էր վերածված: Մնացածի վերաբերյալ՝ երկու ցուցակները փոխադարձաբար միմյանց հաստատում են:

Նրանք տարբերվում են միայն մի կետում՝ Արամեի անվան շուրջ: Ուրարտական վավերագրերը չեն հիշատակում նրան, անշուշտ, այն պատճառով, որ Արամեի ժամանակ ուրարտացիները դեռևս գիր չունեին կամ սովորություն չունեին գիր գործածելու: Մարդուրիի ժամանակ է, որ երևան է գալիս ասորերեն առաջին արձանագրությունը և նրա հաջորդ Իշպուինիի ժամանակ՝ ուրարտերեն լեզվով արձանագրությունները:

Սակայն Կ. Լեման-Հաուպտը ցանկացել է Լուտիպրիի որդի Մարդուրիին տարբերել Արամեի հաջորդ Մարդուրից կամ Մեդուրից, որպեսզի նրան դարձնի Արամեի նախորդ և Աշուրնասիրպալ II-ի (883-859) ժամանակակից: Նա նկատել է, որ Լուտիպրիի որդի Մարդուրին նույն տիտղոսներն ունի, ինչ որ Աշուրնասիրպալ II թագավորը և դրանից եզրակացրել, որ նա պետք է սրա ժամանակակիցը լիներ¹: Դա բոլորովին հավանական չէ: Արամեն, որ, անշուշտ, Ուրարտուի պետության առաջին կազմակերպիչն է, արքայանիստ քաղաք ընտրել էր Արգաշկունը, որն արդեն պետության մայրաքաղաքն էր:

Սալմանասար III-ի կրկնակի ավերիչ ասպատակությունից հետո Արամեի հաջորդ Մարդուրին ստիպված է լինում մայրաքաղաքը տեղափոխել

ավելի ապահով վայր՝ ասուրական հարձակումներից պատասպարվելու համար: Նա որպես այդպիսին ընտրում է Տուշպան, այսինքն՝ Վանը: Նա այն ամրացնում է նշանավոր ժուռ-ի (պարսպի) կառուցմամբ, որը կրում է Լուտիպրիի որդի Մարդուրիի անունը: Հետևաբար, նա նույն Արամեի հաջորդ Մարդուրին է և ոչ մի դեպքում չի կարող Արամեի նախորդը լինել որպես արձանագրության հեղինակ, քանի որ ասորերեն գիրն Արամեի դարաշրջանում դեռևս փոխ չէր առնված: Այնուհանդերձ, Կ. Լեման-Հաուպտի դիտողությունը միանգամայն արժանի է լուրջ ուշադրության, բայց դա պետք է բացատրել այլ կերպ: Այն հանգամանքից, որ Մարդուրին փոխ է առել Ասորեստանի թագավորի տիտղոսները, չի կարելի անպայման հետևցնել, թե նա նրա ժամանակակիցն է, այլ միայն, որ նա նրանից ավելի ուշ էր:

Նախ որոշենք Մարդուրի թագավորի թվականը:

Սալմանասար III-ի գահակալության ժամանակ Արամեն արդեն թագավոր էր: Նա դեռևս կենդանի էր Ասորեստանի նույն թագավորի իշխանության տասնհինգերորդ տարում, այսինքն՝ 844 թվականին, նկատի առնելով, որ այդ տարվա արշավանքի ժամանակ Սալմանասարը, «կործանեց և քանդեց ուրարտացի Արամեի քաղաքները»: Բայց Սալմանասարի քսանյոթերորդ տարում, ուրեմն՝ 831 թվականին, Ուրարտուի գահի վրա արդեն Մարդուրին էր: Նույն թագավորի երեսուներկուերորդ տարում՝ 828 թվականին, նրա թուրթառը բանակն առաջնորդեց Խուրուշկիա երկրի դեմ, ընթացավ դեպի Սապ(ս)արիա՝ Մուծածիրի բերդաքաղաքը, և այն գրավեց 56 բնակավայրերի հետ միասին, ապա առաջ շարժվեց մինչև Ուրարտուի սահմանը, ավերակի վերածեց և բոցերի ճարակ դարձրեց 50 ուրարտական քաղաք:

Մենք կարծում ենք, որ այդ արշավանքը սերտ հարաբերություն ունի Ուրարտուի Իշպուինի թագավորի կողմից Մուծածիրի գրավման հետ, որին մասնակցում էր նաև թագավորի որդին ու գահակիցը՝ Մենուան, մի իրադարձություն, որի ստույգ վկան է Կելիշինի երկլեզվյան արձանագրությունը:

Հետագայում հայտնի չէ որևէ դեպք, որ ասուրական և ուրարտական զենքերն իրար հանդիպած լինեն Մուծածիրի հողի վրա: Այդ երկիրը Ուրարտուի հետ կապված մնաց որպես նրա ստորական մինչև Մարգոնի ժամանակաշրջանը:

Որովհետև այդ ժամանակ թագավորները փափագում էին իրենց գահակալությունը հռչակել մի փառավոր սխրանքով, շատ հավանական է, որ 828 թվականին Իշպուինիի ներխուժումը Մուծածիր կատարված լինի այդ իսկ

¹ Կ. Լեման-Հաուպտը այդ հարցին նվիրել է բազմաթիվ հոդվածներ, հատկապես *Das urartäisch-chaldäische Herrscherhaus*, «Zeit. f. Assyriologie», XXXIII, 1920, դեկտեմբեր, պրակ 1-2, էջ 27-51: Ուրարտական թագավորների ցուցակի վիճելի կետերի համար նա առաջարկել է մեկից ավելի լուծում, իսկ այն, որ ընդունվել է *Corpus Inscriptionum Chaldaicarum*-ի մեջ, ամենահաջողը չէ:

նպատակով: Այսինքն՝ 828 թ. ցույց է տալիս Սարղուրիի վերջը և նրա որդի Իշպուհինիի թագավորության սկիզբը:

832-ից 828 թթ. չափազանց կարճ ժամանակամիջոց է նոր մայրաքաղաքի հիմնադիր հանդիսացած Սարղուրիի թագավորության համար: Հինք կա նրա թագավորության սկիզբը 845 թվականից քիչ ուշ դնելու համար¹: Նրա նախորդ Արամեն, որը գահակալում էր 859 թվականին, թագավորել էր սկսել այդ թվականից շատ առաջ: Ռազմատենչ թագավոր Աշուրնասիրպալը, հակառակ հաղթանակ տանելու իր բուն ցանկության, երբեք չանցավ Արսամիան: 879 և 866 թթ. նա պատերազմական գործողություններ էր կատարում Շուպրե, Ուլլիբա, Նիբրե, Արբակի երկրներում, որոնք բոլորը գտնվում են Հայկական Տավրոսի լանջերին, բայց զգուշացավ Ուրարտուի վրա հարձակվել, ինչպես երբեմն Թիզլաթպալասարը: Հարցը պարզ է, որովհետև այդ ժամանակ տեղի էր ունենում կամ արդեն տեղի էր ունեցել մեծ հեղափոխություն այն երկրներում, որոնք Թիզլաթպալասարը Նաիրի էր կոչում. բազմաթիվ փոքր պետություններ միավորվել էին և կազմել մեկ պետություն՝ Արամեի հովանու ներքո:

Այդ մեծ գործով Արամեն անմահացրեց իր անունը, այնպես որ նրա հիշատակը հասել է նույնիսկ մինչև հայերը, և ավանդությունը նրան դարձրել է ազգային էպոսին (անվանադիր):

Այս փաստը վկայում է այն ժողովրդականության մասին, որ առհասարակ վայելում են մեծ պետությունների ստեղծողներն ու վերականգնողները: Ահա թե ինչու մենք կարծում ենք, որ Արամե թագավորն արդեն գործի վրա էր հենց Աշուրնասիրպալի առաջին տարիներից, այսինքն՝ նա թագավորել է 880 թվականից համարյա մինչև 843-840 թթ.: Գուցե նա մեռել է իր պետությանը Սալմանասարի կողմից հասցված հարվածից անմիջապես հետո, 845 թվականին:

Այդ դեպքում Սարղուրին թագավորած կլինի 845-828 թթ.: Մայրաքաղաքի փոխադրումը և Սարղուրիի արձանագրությունը կրող պարսպի կառուցումը այսպիսով վերաբերում է նրա թագավորության առաջին տարիներին: Հետաքրքիր է իմանալ, թե այն դպիրը, հավանաբար, մի ասորեստանցի, որը փորագրել է Սարղուրիի պարսպի վրայի արձանագրությունը, ինչու է ուրարտացի թագավորին Աշուրնասիրպալի տիտղոսներն ընծայել և ոչ ժամանակակից թագավոր Սալմանասարի տիտղոսները²:

¹ Յարձանի արձանագրությունը հիշատակում է Արամեի անունը Սալմանասարի տասնհինգերորդ տարում, 845 թվականին:

² Հարցը մի քանի արտահայտությունների մասին է:

Ա. թագավոր, «որ իր նմանը չունի» šanišu lá išú:

Պատասխանը շատ պարզ է:

Սալմանասարի արձանագրությունները, զոնն դրանցից կարևորները, ինչպես Կոթողը և Յարձանները, ավելի վաղ չեն, քան Սարղուրիի արձանագրության ենթադրյալ թվականը: Կոթողը գրվել է Սալմանասարի երեսուցներորդ տարում, 828 թվականից հետո, իսկ Յարձանները՝ տասնհինգերորդ տարվանից հետո:

Միայն Կուրխի Մոմոլիթն է, որ իր բովանդակության համաձայն հասնում է մինչև Սալմանասարի վեցերորդ տարին: Սարղուրիի դպիրը, ինչպիսին էլ լինեի նրա գրագիտության աստիճանը, անկասկած, ավելի լավ կիմանար Աշուրնասիրպալի արձանագրությունները, որի թագավորության ժամանակ էր ծնվել և կրթություն ստացել, քան Սալմանասարինը, որոնք դեռ հայտնի չէին, բացառությամբ Կուրխի կոթողի տեքստի, կոթող, որը գտնվում էր մայրաքաղաքից հեռու և քիչ մարդկանց էր մատչելի: Ուրեմն, շատ բնական է, որ այն դպիրը, որին հանձնարարված էր Սարղուրիի համար արձանագրություն կազմել, որպես օրինակ էր առնում Աշուրնասիրպալի նույնանման արձանագրությունը և արտագրում տիտղոսները, որոնք, կրկնում ենք, նրան կատարելապես ծանոթ էին՝ որպես մի թագավորի տիտղոսներ, որի ժամանակակիցն էր ինքը:

Այս տեսակետից Լուտիպրիի որդի Սարղուրիի դարաշրջանի վերաբերյալ Կ. Լեման-Հաուպտի դրույթը բոլորովին խախտու է դառնում: Այդ իշխանը նույն Սարղուրին է, որը հաջորդել է Արամեին և թագավորել մոտավորապես 845-828 թվականներին:

Նրա որդի ու հաջորդ Իշպուհինն գահակալել է իր որդի Մենուայի հետ համատեղ 828 թվականից սկսած. նրա թագավորության վերջն անհայտ է: Մենուան շարունակել է թագավորել մինչև 785 թվականը: Այդ թվականը հիմնավորվում է ասորական և ուրարտական տեղեկությունների համեմատությամբ: Մենուայի որդին ու հաջորդը՝ Արգիշտին, իր ընդարձակ Տարե - գրությունում պատմում է, որ իր թագավորության վեցերորդ տարուց մինչև

Բ. «Ջարմանայի առաջնորդ, որը չի վախենում դիմադրությունից», ré'ú tabrate ladiru tuqante:

Գ. Թագավոր, «որը հպատակեցնում է անհնազանդներին», mušakniš lá kunšutešu: Մրանք հանդիպում են Աշուրնասիրպալի ճոռոմ և շքեղ հորջորջումներում (Annals of the kings of Assyria, էջ 178 և այլուր), որտեղից էլ փոխ են առնված: Թպետ, նույն արտահայտությունները մասամբ գործածվում են նաև Սալմանասար III-ի մոտ՝ šanišu lá išú (Յարձան I, տող 7), ana šepašu ušaknišu, «որ երկրներն իր ուրբերի տակ է խոնարհեցնում» (ibid, տող 11-12). lá gâmil tuqante, «որ երկյուղ չունի կովից» (Կալա-Շերգաթի արձան., տող 7). ré'ú šarig տաճարների (Կալա-Շերգաթի աղյուս, տող 6, Amisud et V. Scheil, Les inscriptions de Salmanassar II(III), roi d'Assyrie, էջ 6, 74 և 78): Այդ արտահայտությունների հետքերը գտնվում են մինչև իսկ Թոփուզավայի կոթողում, օրինակ՝ tuqante, ré'ú kiénu «իսկական հովիվ»: Այս վերջին տիտղոսը հասնում է մինչև Թիզլաթպալասար I-ը (L. W. King, The Annals, էջ 32, տող 34):

տասներկուերորդ տարին, ուրեմն՝ յոթ տարվա ընթացքում, տարեկան մեկ արշավանք է կատարել դեպի Մանա երկիրը:

Պայքարն սկսվել էր, անշուշտ, Ասորեստանի դեմ, որից Ուրարտուն ուզում էր խլել այդ երկիրը: Վերևում մենք տեսանք, որ ճիշտ այդ ժամանակ Ասորեստանի թագավոր Սալմանասար IV-ը (781-772) կռվել է Ուրարտուի դեմ. նա արշավանք է կատարում այդ երկրի դեմ 781, 780, 779, 778, 776, 774 թվականներին: Նա, ուրեմն, ձեռնարկել է համարյա նույնքան արշավանք, որքան Արգիշտի թագավորը: Այս գուգադիպությունը պատահական չէ. դա վկայում է, որ երկու պետությունների միջև կատաղի պայքար է ծավալվել Մանա երկրին տիրանալու համար:

Երկուսի կողմից հիշատակված արշավանքների հավասար թիվն ապացուցում է, որ որոշ կապ կա նրանց միջև: Եթե Արգիշտիի առաջին արշավանքը իր գահակալության վեցերորդ տարում համապատասխանում է Սալմանասար IV-ի 781 թվականի առաջին պատասխան արշավանքին, Արգիշտիի գահակալության առաջին տարին, ուրեմն, 785 թվականն է: Մաուրարական թագավորների ժամանակագրության հաստատում կետ է հանդիսանում:

Հետևաբար, Մենուան թագավորել է իր հոր հետ, ապա միայնակ՝ 828-785 թվականներին, այսինքն՝ 43 տարի: Այդ երկար թագավորությամբ շատ լավ բացատրվում է Մենուայի թողած արձանագրությունների առատությունը:

Գալով Արգիշտիին, նրա ընդարձակ Տարեգրությունը պատմում է միայն տասնչորս տարվա սխրանքների մասին, այնինչ նա իշխել է տասնչորս տարուց ավելի: Մի շարք արշավանքներ ժամանակագրության մեջ չեն հիշատակված, անշուշտ, որովհետև դրանք տեղի են ունեցել նրա թագավորության տասնչորսերորդ տարվանից հետո: № 112 վավերագիրը մեզ ներկայացնում է երեք արշավանք Դիաուեխի երկրի դեմ, մեկ՝ Խաթեի և Շուպանիի դեմ. № 115-ը՝ մեկ արշավանք Էթուսիի դեմ. № 116-ը՝ մեկ արշավանք Կիեխունիի դեմ. № 117-ը՝ Ալուրա քաղաքի դեմ. № 118-ը՝ Իրդանիու քաղաքի դեմ. № 119-ը՝ Ախուրիանի քաղաքի դեմ. № 120-ը՝ Շելուիների երկրի դեմ:

Դժվար է ասել, թե այդ տասը արշավանքները տե՞լ են արդյոք տարիների շարունակ, թե մեկ տարում են կատարվել: Այնուհանդերձ, քանի որ դրանք ծավալվել են մի ընդարձակ տարածքի վրա, Մելիտենեի շրջանի և Սևանա լճի միջև, ուրեմն, պետք է որ կատարված լինեն տարիների ընթացքում, զոնե՝ հինգ կամ վեց տարվա: Դրանք այնպիսի գործողություններ են, որոնց նպատակները բավական հեռու էին մեկը մյուսից: Հետևաբար,

Արգիշտին իշխած կլինի զոնե քսան տարի: Հիշենք նաև այն արշավանքը, որի մասին Դեհուկում հայտնաբերվեց մի նոր վկայություն: Դեհուկը գտնվում է Ասորեստանի մայրաքաղաքի հյուսիսում, մի քանի հարյուր կիլոմետր հեռավորության վրա: Դեհուկի արձանագրության մեջ, որը կրում է Արգիշտիի անունը, հիշատակվում են Շամաշիլուն և Մուշալիմ-Նինուրտան: Վերջինը կառավարիչն էր Տիգրիս գետի ափին, Դեհուկից ոչ հեռու գտնվող Թիլլե քաղաքի: Անշուշտ, այդ պատճառով է, որ նա հիշատակվում է Շամաշիլուի կողքին: Շամաշիլուն ասորական բանակի գլխավոր հրամանատարն էր, որ պատերազմական գործողություններ էր վարում ուրարտացի նվաճող Արգիշտիի դեմ: Քանի որ Մուշալիմ-Նինուրտան հիշատակված է որպես 766 թվականի էպոնիմ (անվանադիր), ուրեմն, տրամաբանական է, որ ներխուժումը կատարվել է այդ ժամանակ:

Դա զայիս է հաստատելու վերև հիշված մեր այն ենթադրությունը, որ Արգիշտին թագավորել է քսան տարուց ոչ պակաս, ուրեմն՝ 785-ից մինչև 764 թվականը: Մի քանի տարի էլ հանգստի տարիներ հաշվելով, Կ. Լեման-Հաուպտի հետմիասին կարելի է նրա իշխանության շրջանը համարել քսանհինգ տարի՝ 785-760 թթ., կամ նույնիսկ երեսուն տարի՝ մինչև 755 թվականը:

Արգիշտիի որդին՝ Սարդուրի II-ը, Թիգլաթպալասար III-ի (745-727) ժամանակակից էր: 743 թվականին նա կռվի բռնվեց Ասորեստանի այդ թագավորի հետ Խալպայում (ներկայիս Խալֆառը), Եփրատի ափին Ռումկալեի մոտ: Նա կռվեց նաև Աշուրնիրարի III-ի դեմ, ինչպես ինքն է հաստատում: Աշուրնիրարին մեռել է 746 թվականին, ուրեմն, Սարդուրիի գահակալությունը այդ թվականից առաջ է:

Երկու կոթողների վրա փորագրված՝ Սարդուրիի ժամանակագրական արձանագրությունը որոշ օգտակար ցուցումներ է մատուցում այս խնդրի վերաբերյալ: Կոթողներից մեկը, որն անադարա է մնացել, պարունակում է յոթ տարվա ռազմական իրադարձությունների պատմություն: Այդ իրադարձությունները կատարվել են 743 թվականից առաջ, որովհետև այնտեղ ասվում է, որ Սարդուրին իր թագավորության հինգերորդ տարում հարձակվեց Կումախալիսիի թագավոր Կուշտաշալիլիի վրա և նրան հնազանդեցրեց, մինչդեռ այդ նույն Կուշտաշալիլին 743 թվականին գտնվում էր Սարդուրիի դաշնակից պետությունների կռակից հայտնի: Հետևաբար, Սարդուրին արդեն գահակալել է 743 թվականից յոթ տարի առաջ, այսինքն՝ զուցե 750 թվականից ի վեր:

Մյուս կոթողը, որ կազմել է տարեգրության առաջին մասը, իր տեղից հանվել է, և Սուրբ Պողոս եկեղեցում գտնված նրա բեկորները լրիվ տեքստը

չեն ներկայացնում: Այդ կոթողը նույնպես ընդգրկում է մի քանի տարիների ընթացքում կատարված ռազմական գործողությունների պատմություն: Ներկա վիճակում տեքստը պարունակում է հազիվ երեք տարվա արշավանքների պատմություն: Մեկը՝ Վելիքուխի թագավոր Նուրիհնուի, Լուխուխի թագավոր Ծինալիբի, Ասորեստանի թագավոր Աշուրնիրարիի և Արմե երկրի դեմ: Մյուսը՝ Միլխե (կամ Մելինե) քաղաքի և Սասինի (կամ Իրսինի) քաղաքի դեմ. իսկ երրորդը՝ Ռիխիշա, Խուրրա, Նուշինի երկրների և այլն...

Այս երեք արշավանքները նախորդել են յոթ արշավանքներին, այսինքն՝ 743 թվականին: Իրոք, այստեղ Վելիքուխի երկիրը պատերազմում է Ուրարտուի դեմ: Նրա Նուրիհնու թագավորը դիմադրում է Սարգուրիին, մինչդեռ յոթ արշավանքների պատմության մեջ այդ երկիրն արդեն անձնատուր է եղած, և Նուրիհնուի հաջորդ Նիդունի թագավորը հարկատու է Ուրարտուին:

Մեկ ուրիշ արշավանք, որ նշված է Իգուլիի № 133 արձանագրության մեջ, նույնպես նախորդում է 743 թվականին, որովհետև այդ թվականին Սարգուրիի դաշնակից Միլիդի թագավորը Սուլումալն էր, այն դեպքում, երբ № 133-ում հիշված թագավորը կոչվում է Խիլարուադա և նույն իշխանն է, որը թագավորում էր դեռևս Արգիշտիի օրով:

Հետևաբար, այդ արշավանքներին պետք է հատկացնել երեք-չորս տարի:

Դա Սարգուրիի թագավորության սկիզբն էա է տանում նույնքան տարով, մոտավորապես մինչև 753-754 թվականը:

Առաջին արշավանքն ուղղված էր, ի միջի այլոց, Աշուրնիրարիի դեմ, որը թագավորությունն ստանձնել էր բավական տազմապալից պայմաններում: Նրա նախորդ Աշուրդանի (771-754) վերջին տարիները մթազմվել էին այն ընդլվումներով, որոնք բռնկվել էին նրա պետության մեծ մասում և նույնիսկ մայրաքաղաքում: Խլրտումների հետևանքով նրա պետության հիմքը սասանվել էր և նրա հեղինակությունը մեծապես վնասվել: Այդ խռովությունները մոլեզմեցին, մանավանդ, 762-757 թվականներին: Թվում է, թե այդ շրջանում էր, որ ուրարտական թագավոր Արգիշտին, պատեհ առիթից օգտվելով, իր զենքն ուղղել էր նրա դեմ և հասել մինչև Դեհուլ:

Իր թագավորության յոթ տարվա ընթացքում Աշուրնիրարին միայն մեկ անգամ զենք վերցրեց՝ 753 թվականին՝ Արպաղ քաղաքի դեմ, որն այժմ կոչվում է Ռ-Ֆադ և գտնվում է Հալեպից հյուսիս:

Սարգուրին ասում է, որ ինքն ընդհարվել է Աշուրնիրարիի հետ, բայց ո՞րտեղ և ի՞նչ առիթով: Կոթողի ջնջված տեքստը հնարավորություն չի տալիս որոշելու այդ: Այս պարագայում հարց է ծագում, թե արդյո՞ք Սարգուրիի

ընդհարումը կապ ունի Աշուրնիրարիի կատարած միակ արշավանքի հետ, որն ուղղված էր Արպաղի դեմ: Այդ քաղաքը որոշ դեր է կատարել այն իրադարձությունների մեջ, որոնց հետևանքով տեղի ունեցավ 743 թվականի հայտնի ճակատամարտը: Թիզլաթպալասարը պաշարել էր Արպաղը, երբ Սարգուրին իր դաշնակիցների հետ միասին երևան եկավ Խալպայում: Ստեղծվում է այն տպավորությունը, թե Արպաղը կապ ուներ ուրարտական կռալիցիայի հետ: 743 թվականի ճակատամարտից հետո Թիզլաթպալասարը մեծ ճիգերով կարողացավ ճնշել Արպաղի դիմադրությունը միայն երեք տարի հետո: Եթե թույլ տրվեր կարծել, որ Սարգուրիի և Աշուրնիրարիի ընդհարումը տեղի է ունեցել Եփրատի հովտում, Արպաղի դեմ ասուրական արշավանքի կապակցությամբ և Արպաղի պատճառով, այդ դեպքում Սարգուրիի գահակալության ժամանակը որոշելու համար որպես ստույգ թվական կունենայինք 753 թվականը, իհարկե, ենթադրելով, որ Ջարդված կոթողի ժամանակագրությունը, որի առաջին տողերը պատմում են Աշուրնիրարիի դեմ արշավանքի մասին, սկսվում է, ըստ սովորության, թագավորի իշխանության առաջին տարով: Եթե այդ ձևով ընկալենք, Արգիշտին թագավորած կլինի 785-ից 754 թվականը, իսկ Սարգուրին՝ 753-ից 735 թվականը՝ Սարգուրիի դեմ Թիզլաթպալասարի վերջին արշավանքի տարին:

Կ. Լեւան-Հաուպտը կարծում է, թե Թիզլաթպալասարի՝ Սարգուրիի հեղինակությանը հասցրած հարվածը մեծ վնաս պատճառեց սրան, և այդ պատճառով Սարգուրին զրկվեց գահից: 735 թվականի միջադեպը այնքան ողբերգական չէր, բայց բավական լուրջ էր երկրի առաջնորդին ընկճելու և նրա վախճանը փութացնելու համար:

Սարգուրիի հաջորդ և Սարգոնի (727-705) հակառակորդ Ռուսան անձնասպան չի եղել, ինչպես կարելի է կարծել Սարգոնի մի երկիմաստ արտահայտությունից, այլ նա մեռել է կիմներների դեմ պատերազմելու ժամանակ:

Ռուսայի թագավորությունը ժամանակագրական վեճի առարկա չէ, բայց ուրիշ հարց է առաջ քաշում: Ըստ որոշ գիտնականների՝ Ռուսան ոչ թե իր նախորդի որդին է, այլ մի գավթիչ, որը 735 թվականի աղետից հետո թագավորին գահընկեց էր արել և՛ իշխանությունն իր ձեռքը վերցրել: Այդ ենթադրությունը հաստատելու համար որպես փաստ է ծառայում Սարգոնի ութերորդ արշավանքի հաղորդագրություններում արձանագրված մի դեպք: Դեպի ուրարտական Արմարիլիի շրջանը կատարած իր առաջխաղացման ընթացքում Սարգոնը նախ՝ հասնում է Արբու քաղաքը «որը կոչվում է» Ռուսայի հայրենական տան քաղաք՝ al bit abi-šu ša Ursâ», ապա՝ Ռիար

քաղաքը, «Մարդուրիի քաղաքը»։ շրջակայքում «յոթ քաղաքներ կային, ուր ապրում էին նրա եղբայրները»։

Պարզ չէ՝ խոսքը Ռուսայի եղբայրների մասին է, թե Մարդուրիի։ Համեմայն դեպս, Ռուսայի հայրենի տունը կարծես հակադիր է Մարդուրիի տանը և, եթե խոսքն այստեղ Մարդուրիի թագավորի մասին է, Ռուսայի օրինականությունը լուրջ կասկածի կենթարկվի։ Ուրարտական արձանագրությունը, որի մեջ Ռուսան, կամ նրա հայր Մարդուրին, կոչվում է Ռեդիպրի, *Rusaše Sardurihimiše Uedipri tini*, ավելի ևս բարդացնում է խնդիրը։

Կ. Լենան-Հաուպտը կարծել է, թե կարող է հարցը լուծել՝ ենթադրելով, թե Ռուսան Մարդուրիի թագավորի որդին չէր, այլ մի ուրիշ Մարդուրիի որդի՝ նույն թագավորական տան կողմնակի գծի ներկայացուցիչ։ Մարզոնը վկայակոչում է, որ Մուծածիրում կար, ի միջի այլոց, Իշպուինիի որդի Մարդուրիի մի բրոնզե արձան։ Ըստ Կ. Լենան-Հաուպտի՝ Ռուսան հենց այդ Մարդուրիի շառավիղն է, գուցե թոռը։

Այնուհանդերձ, սույն վարկածը Ռուսային օրինավոր ժառանգ չի դարձնում, այլ զավթիչ։ Դա վարկածի թույլ կողմն է։

Մարզոնը Ռուսայի համբավի վրա ստվեր գցելու համար բառեր չի խնայում. նրան համարում է անխիղճ մարդ, նույնիսկ աստվածների նկատմամբ, որոնց կամքը նա չէր հարգում, մի խոսքով՝ բարոյազուրկ մի մարդ։ Հետևաբար, եթե Ռուսան զավթիչ եղած լիներ՝ այդքան անօրինական ճանապարհով իշխանության հասած՝ անշուշտ Մարզոնը չէր զլանա նրան խայտառակել այդ ուղղությամբ ևս։ Սակայն նա ոչ մի ակնարկ չի անում այդ մասին։

Մարզոնը ասում է, որ Մուծածիրում տեսել է Ռուսայի մի արձան՝ իր երկու ձեռքի ու կառապանի հետ, և նրա վրա մի վերամբարձ արձանագրություն. «Իմ երկու ձեռքով և կառապանով ձեռքերս գրավեցին Ուրարտու թագավորությունը»։ Ասորեստանի թագավորը նշակվում է Ռուսային իր գոռոզության համար և անշուշտ առիթ չէր փախցնի նրան խարազանելու նրա իշխանության առումով, եթե նա իրոք լիներ այնպիսին, ինչ որ կարծում են։ Բայց այդ մասին ոչինչ չի ասված։ Թագավորի լռությունը ասպացույց է այն բանի, որ Ռուսայի օրինականության հարցը կասկածից միանգամայն դուրս է։

Ռուսայի հայտարարությունը Ուրարտուի նվաճման վերաբերյալ սխալ է մեկնաբանված, բայց Մարզոնը իրավունք ուներ գոռոզատության արտահայտություն նշմարելու նրա մեջ, քանի որ վերջինս պարծենում էր Ուրարտուն գրաված լինելու առթիվ, մինչդեռ հարցը Մուծածիրի մասին էր, Ուրարտուի մի մասի, որտեղ նա Ուրզանա թագավորին գահ էր բարձրացրել։ Այդ

իրադարձության մասին է խոսում Թոփուզավայի երկլեզվյան արձանագրությունը։ Դժբախտաբար, արձանագրությունը շատ է աղճատված։ Ընթեռնելի տեղը կարդացվում է՝ «Բազմաց թագավոր Ուրզանան, տաճարում, իմ ներկայությամբ գահ բարձրացավ... Ես, Ռուսաս, մինչև Աշշուրի լեռները... առաջ խաղացի... Ուրզանայի ձեռքից բռնեցի... իր տեղում թագավոր կարգեցի։ Տասնհինգ օր Մուծածիրում գոհեր մատուցեցի...»։

Ուրարտական տարբերակում նշմարվում է. «Ապա Ռուսան մեկնեց Լուլու երկրի դեմ»։ Ասուրական տարբերակում այս անվանը համապատասխանում է Ակկադուն։

Ընդհանուր կարծիքով՝ կոթողը կանգնեցվել է Ռուսայի կողմից Ուրզանայի վերականգնման առթիվ, այն բանից հետո, երբ 713 թվականին, Մարզոնի կողմից Մուծածիրի գրավման ժամանակ, Ուրզանան վտարվել էր իր երկրից։

Այդ կարծիքը հնարավոր չէ հիմնավորել։ Կրկնակի աղետից հետո՝ կիմմերների ներխուժումը և Մարզոնի ասպատակությունը, Ռուսան ուժ և ժամանակ չէր ունենա գրավելու Մուծածիրը, մանավանդ՝ հարձակվելու Լուլուի վրա։ Կիմմերների դեմ պատերազմում կրած պարտության լուրը լսելուն պես Ուրզանան իր ընտանիքով գնաց ողջունելու Ռուսային։ Մարզոնը, Ռուսայի հետ իր բարեկամությունը շարունակող Ուրզանայի վրա բարկացած, հարձակվեց նրա պետության վրա, կողոպտեց երկիրը և վտարեց նրան։ Այդ դեպքը տեղի ունեցավ 713 թվականի աշմանը։ Այդ ժամանակ Ռուսան արդեն վախճանվել էր կիմմերական ճակատում ստացած վերքի հետևանքով։

Իրականում տեքստը Ուրզանայի վերահաստատման մասին չի խոսում։ Հայտնի չէ, թե ո՞վ էր Ուրզանան՝ օրինական ժառանգո՞րդ, թե մի նոր հավակնորդ և Ռուսայի հովանավորյալ, ինչպես Թաբալի Խուլլին էր Թիզլաթպալասար III-ի համար։ Ռուսան նշում է, որ ինքը Ուրզանային հաստատել է «իր տեղում», առանց արտասանելու «հայրական» բառը։ Հնարավոր է, որ Ուրզանան իր երջանկությամբ բացառապես Ռուսային էր պարտական, որից էլ բխում է նրա հարատև հավատարմությունը։

Ուրզանայի գահակալությունը չէր կարող տեղի ունենալ Մարզոնի ժամանակ։ Վերջինը հայտարարում է, որ ինքը ընդհարում չի ունեցել Ռուսայի հետ 713 թվականից առաջ, «որ ռազմադաշտում նրա մարտիկների արյունը չի թափել»¹։ Ռուսայի միջամտությունը Ուրզանայի ճակատագրում Մարզոնին անտարբեր չէր կարող թողնել, այլ, անշուշտ, կորդեր ընդհարման՝

¹ Ուրբորդ արշավանքի նկարագր., տող 123։

ուրարտական թագավորի հետ: Ուրգանայի գործը կարելի է տեղադրել Սարգոնի թագավորության ժամանակից ավելի առաջ, հավանական է՝ նրա նախորդ թուլամորթ Սալմանասար V-ի օրով (727-722): Ռուսայի արձանի առկայությունը Մուծածիրի պալատում ապացուցում է, որ նա կարևոր ծառայություն է մատուցել երկրին, և այդ ծառայությունը կարող էր միայն Ուրգանայի հաստատումը լինել, մի բան, որ հնարավոր կլիներ 713 թվականից առաջ¹:

Վերադառնալով Սարգոնի գրության վերոհիշյալ հատվածին, որտեղ խոսվում է Արբու և Ռիար քաղաքների մասին, մենք չենք կարծում, որ դա կարելի է դիտել որպես անժխտելի փաստ Ռուսայի դեմ: Իրականում այս երկու քաղաքները, մյուս յոթ բնակավայրերի հետ միասին թագավորական կալվածքներ էին: Ռուսայի հայրենի տան քաղաք՝ չի նշանակում Ռուսայի հոր տան քաղաք, այլ հայրենական, արքայատոհմի քաղաք. մյուս քաղաքն էլ կոչվում էր Սարգուրիի քաղաք², որովհետև կամ հիմնադրվել էր նրա կողմից, կամ էլ ծառայում էր նրան որպես ամառային մատավայր: Գոյություն չունի, և ոչ էլ պետք է փնտրել որևէ հակադրություն այդ քաղաքների տերերի միջև և ոչ էլ նրանց ու յոթ քաղաքների միջև: Սարգոնը հասել էր այնպիսի մի վայր, ուր տեղավորված էր թագավորական ընտանիքի կալվածքներից մեկը: Արևելքում, բոլոր դարաշրջաններում, թագավորներն անձնական տիրույթներ ունեին. Բյուզանդիայում մույնպես կայսրերը ընդարձակ տիրույթներ ունեին: Հետաքրքրական է նշել, որ հայ Արշակունիների ժամանակ ևս այն շրջանը, ուր գտնվում էին Արբուն և Ռիարը՝ Բերկրիի և Աղիավտի մարզը Արճեշում, հատկացված էր թագավորական տան իշխանների բնակության համար³:

Ռուսայի կամ նրա հոր մականունը՝ Ուեդիպրի, հիշեցնում է Լուտիպրի, առաջին Սարգուրիի հոր անունը: Uedi և lutu բառերը նշանակում են «կլին», իսկ ipri-ն թվում է, թե euri-ի (տեր) հին ձևն է: Լուտիպրի և Ուեդիպրի մականունները նշանակում են՝ նա որի տերը տիկինն (աստվածուհին) է, այլ կերպ ասած՝ «աստվածուհու հովանավորյալ»: Եթե Ուեդիպրին Ռուսայի մականունը կամ երկրորդ անունն է, կարելի է ընդունել, որ Լուտիպրին էլ

¹ E. Fournier, Provinz., 118, Թուփուզավայի արձանագրությունը վերագրում է Ռուսա II-ին, անշուշտ, այն պատճառով, որ նա անհնար է գտել, որ Ռուսա I-ը 713 թ. զբաղվեր Ուրգանայի հարցով: Սակայն նա սխալվում է ենթադրելով Ռուսա II-ին, որովհետև, եթե Ուրգանայի բարերարը վերջինս լիներ, Մուծածիրում նրա արձանը կլիներ:

² Այս Սարգուրին իսկական Սարգուրի թագավորն է՝ Ռուսայի նախորդը: Կ. Լեման-Հաուպտի հակառակ կարծիքը հիմնված է այն փաստի վրա, որ նա թագավոր չի կոչված: Բայց Ռուսան մույնպես այդ արձանագրության մեջ չի հարգված թագավորի տիտղոսով:

³ Մովսես Խորենացի, II, 61:

Արամեի մականունն է և, հետևաբար, Սարգուրի I-ը Արամեի որդին է¹: Համեմայն դեպս, Ուեդիպրին կապ չունի այն հարցի հետ, որը մեր վեճի առարկան է:

Ռուսային Իշպուիմիի որդի Սարգուրիի շառավիղը համարելը հետաքրքիր ենթադրություն կլիներ, եթե այդ անձնավորության գոյությունը կասկածելի չլիներ: Ինշպուիմին իր արձանագրությունների մեջ հիշատակում է իր որդի Մեմուային և այս վերջինի որդի Ինուշպուային: Եթե նա Սարգուրի անունով որդի ունենար և եթե նրան Մուծածիրի կառավարիչ նշանակած լիներ, ինչպես ընդունում է Կ. Լեման-Հաուպտը, նրա անունն անշուշտ հիշատակած կլիներ՝ եթե ոչ իր արձանագրություններում, գոնե Կելիշինի կոթողում: Հարց է ծագում, արդյոք Սարգուրիի որդի Իշպուիմիի մասին չէ՞ խոսքը, որը գրչի սխալով Իշպուիմիի որդի Սարգուրի է դարձել: Նույն գիտնականն այդ ենթադրությունն էլ է արել, բայց իզուր է այն քել: Իշպուիմին, որ գրավել էր Մուծածիրը, արժանի էր այդ քաղաքի պալատում արձան ունենալու Արգիշտիի և Ռուսայի կողքին:

Ռուսան մահացավ 713 թ., կիսմերձերի դեմ մղած պատերազմում: Նրան հաջորդեց Արգիշտին: Սա նրա որդին է, ուրարտացիների Արգիշտի Ռուսայինին: Ասորեստանցիները նրա անունը հիշատակում են 707 թվականին: Ռուսան, մտավորապես 678 թվականին դաշնակցելով իր նախկին թշնամի կիսմերձերի հետ, հարձակվում է Ասորեստանի վրա: Այսպիսով կարելի է ընդունել, որ նրա նախորդ Արգիշտին թագավորել էր շուրջ 714-680 թվականներին:

Ռուսա Արգիշտիիսինին դեռևս գահակալում էր 655 թ., քանի որ նա այդ ժամանակ դեսպան է ուղարկել Ասորեստանի թագավոր Աշուրբանիպալի (668-626) մոտ: Մեկ ուրիշ ուրարտական դեսպան մույն թագավորին ներկայացավ 646 թ.: Նա ուղարկված էր Սարգուրի թագավորի կողմից, հավանաբար, որպեսզի ասուրական արքունիքին հայտներ Սարգուրիի գահակալության մասին և փստահեցներ նոր առաջնորդի՝ Ասորեստանի հանդեպ ունեցած բարեկամության մեջ: Հետևաբար, Ռուսա Արգիշտիիսինին գահի վրա եղել է 680-646 թվականներին:

Ասորեստանցիները դրանից հետո այլևս չեն հիշատակում Ուրարտուն, բացի 609 թվականից, երբ Ուրարտուի անունը նշված է այն պահին, երբ Ասորեստանն իր վերջին շունչն էր փչում՝ Բաբելոնի թագավորի հարված-

¹ Ռուսա II-ը կոչվում է այլ կերպ՝ Iasia և երբորդ անուն էլ ունեւ, որը տեքստում ջնջվել է, տե՛ս I. A. Knudtzon, Gebete an den Sonnengott, B. II, № 48, էջ 149:

Յերի տակ: Ուրարտուի հիշատակությունն այս պահին ցույց է տալիս, որ Ուրարտուն այդ թվականին դեռևս կանգուն էր:

Ուրարտական մինչ այժմ հայտնի վավերագրերում Սարդուրին չի հիշատակված: Վերջին թագավորը Ռուսա Էրիմենախիմին է: Ռուսայի հայրը Էրիմենան, որպես թագավոր հայտնի չէ, եթե, իհարկե, դա միևնույն Սարդուրին չէ: Որքա՞ն ժամանակ է իշխել Սարդուրին: Այդ մասին ստույգ տվյալներ չկան: Եթե ընդունենք, որ նա հավատարիմ է մնացել Ասորեստանի հետ բարեկամությանը, իսկ դա հավանական է, ապա նա չի կարող լինել այն թագավորը, որը լքել է ճակատը, անցել Ասորեստանի թշնամիների կողմը և այդպիսով 609 թվականին փրկել իր թագավորությունը: Եթե մենք Էրիմենային առայժմ մի կողմ թողնենք, մինչև որ ապացույց ստացվի այն մասին, թե նա իշխել է կամ, գուցե, նույնամուտ է Սարդուրիի հետ, ապա պետք է Ռուսա Էրիմենախիմին ընդունենք որպես Սարդուրիի հաջորդը: Այստեղից հետևում է, որ Սարդուրին իշխել է 646-610 թթ., իսկ Ռուսան՝ 609 թվականից մինչև Ուրարտուի կայսրության վերջը՝ 585 թվականի դեպքերի հորձանքում նրա անհետանալը:

Այսպիսով, մենք կունենանք ուրարտական իշխողների վերանայված հետևյալ ցանկը.

1. Արամն	880-844
Լուտիպրի	
2. Սարդուրի I	844-828
3. Իշպուիմի	} 828-785
4. Մենուա	
5. Արգիշտի I	785-753 (755)
6. Սարդուրի II	753-735
7. Ռուսա I	735-713
8. Արգիշտի II	713-680
9. Ռուսա II	680-646
10. Սարդուրի III	646-610
Էրիմենա	
11. Ռուսա III	610-585 ¹ (17)

¹ Կ. Լեման-Հաուպտի կողմից CICH-ի մեջ բերված ցուցակը մի քանի կետերում տարբերվում է մեր ցուցակից: Այստեղ մեջ ենք բերում այն.

3. ՌՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ

Ուրարտական թագավորների թողած գրավոր հուշարձանները հարուստ չեն ո՛չ իրենց նյութով և ո՛չ էլ գրական առումով: Բավական է մի հայացք նետել արձանագրությունների վերաբերյալ մեր տված ամփոփման վրա՝ համոզվելու համար, որ դրանք վերաբերում են բացառապես երկու բնագավառների՝ ռազմական գործողություններին և հանրօգուտ կառուցումներին:

Գրական ձևերը շատ միօրինակ են: Իշպուիմիի և Մենուայի օրոք՝ գրականության սկզբնավորման պահին ընդունված ոճը օրինակ է ծառայում հետագայի համար և շարունակում է գոյություն ունենալ մինչև պետության վախճանը: Դրանից էլ բխում է շարադրանքի միապաղատությունը, կրկնվում են նույն մախադասությունները, նույն արտահայտությունները համարյա լուսանկարչական մանրությամբ: Եթե կան տարբերություններ՝ դրանք մեծ մասամբ վերաբերում են շարադրանքի որոշ տարրերի կարգի փոփոխմանը կամ նրանց վերացմանը՝ շարադրանքը ավելի հակիրճ դարձնելու նպատակով:

Այսուհանդերձ, ուրարտական գրականությունը հմարավորություն է ընձեռում հետևելու երկրի զարգացմանը, դրա տարածքի ամրամը և մշակույթի բնագավառում կատարած առաջադիմությանը:

Ռազմական նկարագրություններն ընդհանրապես ներկայացված են մի բնորոշ եղանակով. դրանք շատ հաճախ սկսվում են մի տեսակ մախաբանով, ուր արձանագրության տերը, որը միշտ թագավորն է, հայտարարում է իր անունը և անեծք կարդում նրանց, ովքեր կհամարձակվեն փչացնել արձանագրությունը: Պատահում է նաև, որ այդ բառերը պատմությանը չեն մախորդում, այլ ծառայում են որպես վերջաբան: Ապա ասպարեզ է գալիս Խալդի աստվածը որպես ծրագրված արշավանքի ոգևորող. «Խալդին ուժեղ է, նրա բանակն ուժեղ է, Խալդին նվաճում է թշնամի երկրները, նա ճանապարհ է հարթում՝ ռազմատենչ թագավորին այնտեղ առաջնորդելու

Լուտիպրիս		Ռուսա I	733-714
Սարդուրի I		Արգիշտիս II	714-680
Սարդուրի II		Ռուսա II	680-645 (640)
Իշպուիմիս	817	Սարդուրի IV	645-625
Մենուաս	810-785	Էրիմենաս	625-605
Արգիշտիս I	785-760 (765)	Ռուսա III	605-585
Սարդուրի III	760-733		

համար: Վերջինս Խաղի կողմից առաջնորդվելով՝ առաջ է ընթանում, գրավում կամ ավերակների է վերածում հարձակման ենթարկված տարածքները»:

Շարադրությունը վերջանում է թշնամուն պատճառած կորուստների ամփոփումով՝ սպանված կամ կենդանի բռնված մարդկանցով, ինչպես նաև ավարով, որը բաղկանում է տարագրված ժողովրդից, բռնագրավված անատուններից և, պատեհության դեպքում, թանկագին մետաղներից:

Դա ռազմական նկարագրությունների սովորական ամփոփոխ ձևն է: Չինվորական գործողությունները շատ տեսակետով հետաքրքրական են՝ առաջին հերթին որպես երկրի արտաքին քաղաքականության, դրա ընդարձակման և երկրի սահմաններից դուրս դրա տարածքային ձգտումների, հավակնությունների մասին տեղեկությունների աղբյուր:

Ճիշտ է, քանի որ թագավորական մեծ տարեգրությունները փորագրված էին մայրաքաղաքում՝ Տուշպայում, դժվար է կողմնորոշվել արշավանքների նպատակների ու դրդապատճառների վերաբերյալ և համարյա անհնար՝ այնտեղ նշված բազմաթիվ աշխարհագրական անունները տեղադրել: Սակայն գոյություն ունեն և տեղական արձանագրություններ, որոնք ցույց են տալիս ուրարտացիների առաջխաղացման փուլերը՝ տարբեր ուղղություններով: Եվ, վերջապես, Ուրարտուի շրջակայքում գտնված մի շարք արձանագրություններ հնարավորություն են տալիս ճշգրտելու այն սահմանները, ուր հասել են ուրարտացի վեհապետների բանակները:

Արդեն Իշպուհինի և նրա որդի Մենուան սկիզբ դրին մի քաղաքականության, որին հետևելու էին նրանց հաջորդները: Դա առաջին հերթին պետության ապահովության ամրապնդումն էր միշտ սպառնացող հարևան Ասորեստանի դեմ: Այդ ուղղությամբ անհրաժեշտ էր անվտանգ դարձնել երկու թևերը և տեր դառնալ այն երկու անցքերին, որոնք թշնամուն առաջնորդում էին դեպի Ուրարտու՝ մեկը Չաբի հովտով, մյուսը՝ Տիգրիսի ակունքներով:

Թիգրիսի ակունքների անցքով է, որ ներխուժեց Ուրարտու, որն այդ ժամանակ կոչվում էր Նաիրի: Սալմանասար III-ը նույն ճանապարհն ընտրեց, որպեսզի մահ ու ավեր սփռի մինչև Արամեի մայրաքաղաք Արգաշկուն: Նույն թագավորն Ուրարտու մտավ Չաբի հովտով:

Չաբի ճանապարհը կտրելու համար Մենուան իր հոր պատվերով գրավեց Մուծածիր երկիրը: Այդ երկիրը տարածվում էր մինչև Չագրոսի արևմտյան լանջերը, համարյա մինչև Ռովանդու: Ուրարտացիներն այն կոչում էին Արդիհի՝ այն աստվածության անունով, որի՝ Ուրարտուի թագավորների կողմից շատ հարգված սրբավայրը գտնվում էր այդ երկրում: Մու-

ծածիրի գրավումը հաստատվում է Կելիշինի (№ 12) երկլեզվյան կոթողով: Ուրարտուն կարողացավ Մուծածիրն իր գերիշխանության տակ պահել մինչև Սարգոնի ժամանակ, ինչպես վկայում է Թոփուզավայի երկլեզվյան արձանագրությունը (№ 146):

Իհարկե, Մուծածիրը չէր վերածվել ուրարտական մահանգի: Առաջվա նման մնացել էր թագավորություն, բայց դարձել Ուրարտուի ստորակա կամ, ըստ արդի տերմինաբանության՝ մտել Ուրարտուի թագավորների հովանավորության ներքո: 713 թվականին նրա թագավորն Ուրգանան էր, որը Ռուսայի հովանավորյալն էր:

Մենուան անցավ Չագրոսի լեռնաշղթան և գրավեց Մանա երկիրը: Այդպես էր կոչվում Ուրմիա լճի հարավում, Չագրոսի և Չաղաթու գետի միջև գտնվող տարածքը, որը Ուշնու, Միանդաբ և Սակիզ քաղաքների շրջանն է: Այս իրողությունը հաստատում է Մենուայի այն արձանագրությունը (№ 20, գտնված Տաշթեփեում, լճի ափից քիչ հեռու), ուր նա հայտնում է Մեիշտա քաղաքի առժամանակ մասին:

Մանան, որպես մրցակցության երկրամաս, շատ կարևոր դեր խաղաց ասորա-ուրարտական հարաբերությունների մեջ: Շամշի-Ադադ V-ը, Ադադնիրարի III-ը և, մանավանդ, Սալմանասար IV-ը փորձեցին այն անջատել Ուրարտուից, բայց չկարողացան: Արգիշտին ետ մղեց վերջինի փորձերը և Մանայի թագավոր Ազային բանտարկեց, անշուշտ, Ասորեստանի կողմնակից և համակիր լինելու պատճառով: Պայքարը վերանորոգվեց Սարգուրի II-ի օրով և միայն Ռուսայի թագավորության վերջում Սարգոնին հաջողվեց Մանան դուրս բերել Ուրարտուի գերիշխանությունից:

713 թվականին Սարգոնը Մանա երկրի կողմից, այսինքն՝ Փոքր Չաբի հովտով, թափանցեց Ուրարտու, այդպիսով շրջանցեց Մուծածիրի ճանապարհը, որն ամրացված էր ուրարտացիների կողմից: Այսպիսով բացահայտվում է Մանայի ռազմագիտական կարևորությունը և այն կատաղի պայքարի իմաստը, որի առարկա էր այս շրջանը: Նշենք, որ երկրի համակրանքը ավելի շատ Ուրարտուի կողմն էր, քան Ասորեստանի: Սա կարելի է եզրակացնել նրա Իրանզու, Ազա, Ուլլուսունու և Ախշերի թագավորների պատմությունից:

Մենուան նույն նպատակն էր հետապնդում իր պետության մյուս թևում՝ Տիգրիսի ակունքների շրջանում: Նա անցավ հայկական Տավրոսը և գրավեց այդ տարածքը, որ այդ ժամանակաշրջանում կոչվում էր Ուլիբա: Այդ երկրի գրավումը հիշատակված է նույն վավերագրում (№ 19), ուր խոսվում է Մանայի մասին: Գրավված երկրների թվում նշվում են՝ *Qa-li-bi-li-a(-ni),

Ar-pu-i-a(-ni), P^U-su-su-a-ni(-ni), H^U-ul-me-e-ru-u(-ni), Mar-ma-a(-ni), E-ru-u(-ni), U-li-ba-a(-ni), I-ša-la-a(-ni), (Qu-me-nu-u(-ni), Ašu-ri-i(-ni):

Վերջավորությունը (-ni), որը հորովական է, մենք վերցրել ենք փակագծերի մեջ: Ուլիբան, անտարակոյս, Ուլիբա կամ Ուլուբու երկիրն է, որը հիշատակում են ասորեստանյան արձանագրությունները և որը սրամտորեն մույնացրել են արդի խուլպի հետ: Այդպես էր կոչվում, նախ, այն գյուղը, որը գտնվում է Նիմֆիս = Բատմանի վտակներից մեկի ակունքի վրա: Այդ վտակը կրում է մույն խուլպ անունը: Այդպես է կոչվում նաև նրա հովիտը, որը կազմում է Բիթլիսի վիլայեթի գավառներից (կազաններից) մեկում:

Խուլիմերուն ճանաչելի է բյուզանդական Χλομάρων-ի և հայկական Խաղամերի մեջ: Դրա ասորական ձևն է՝ Կուլիմերի, նրա համապատասխան հայերենը՝ Ք(ու)ղիմար, որը Նփրեսի կամ Նփրկերտի դիմացի շրջանն է, այսինքն՝ Մայաֆարկինը կամ Մարտիրոսպոլիսը, Բատմանի մյուս փոխաբերումը շրջանում: Ք(ու)ղիմարն այլ կերպ կոչվում էր, հավանաբար իրաներեն, Kutemran, որը հիշեցնում է Kalamtran անունով գյուղը Խարգամում:

Կարելի է փորձել Qali-bilia-ն մոտեցնել Բիլ-Կալեմին՝ Չիբենե-սուի ակունքներին գտնվող նշանավոր Κλεισοῦρα-ի մոտ, և սա կլինի տառերի սովորական տեղափոխություն: Ուսուսուանի անունը մույն կարգի փոփոխությամբ և ձայնավոր սկզբնատառի անկումից հետո (հմմտ. Ուպպումն՝ դարձած Պումն, Ֆում), կարող էր մույնպես հանգել Մանասունի, որի միաձուլված ձևը՝ Մասուն, կրում է խուլպի հարակից մարզը:

Isala-ն շատ նման է ասորական Իզալային կամ Իծալային և հնարավոր չէ դրանից բաժանել: Qumenu-ն ուրիշ տեղ հայտնի չէ, բայց Մեների դրան ուրարտական պանթեոնում կա նրա աստվածը, և դա գալիս է հաստատելու, որ այդ վայրը Մենուայի կողմից գրավված է եղել: Գուցե դա Ջուդիի մարզում գտնվող Քումանին է: Մենուան, ուրեմն, իր բանակը հասցրել էր մինչև Կաշխարիի և Ջուդիի լեռնաշղթան:

Աշուրնասիրալան արդեն նվաճել էր Իզալան և գրավել, ի միջի այլոց, Ուլուբան, Արբակին և Նիրբեն: Վերջինը Հինի քաղաքի շրջանն էր գրադեցնում. այդ քաղաքի վերևում, Չիբենե-սուի երկայնքին գտնվող լեռները մինչև այսօր էլ Նիրբե են կոչվում, թուրքերեն՝ Նիրբե-դաղլար: Արբակին մույնացվում է բյուզանդական Ἀριβάχων-ի հետ, որը բերդաքաղաք էր Արգանենում: Ուլուբայի և Իզալայի միջև գտնվող բոլոր երկրները հենց այդ ժամանակից Ասորեստանի մի նահանգն էին կազմում: Մենուային հաջողվեց Ասորեստանից խլել այդ նահանգը: Էպոնիմների ցուցակը Մալմանասար III-ի երեսունմեկերորդ տարում, Իլու-մակին-ախի անվանակիր տարեթվին, արշավանք է մշում Ուլուբայի դեմ: Դա 828 թվականին Մենուայի տարած հաղթանակի տարին է: Այդ մույն տարի ուրարտական թագավորը

հաղթանակ է տանում Մուծածիրում, իսկ հետևյալ տարին՝ Մանայում: Ուրարտուն, որ Մալմանասարի կողմից արշավանքի էր ենթարկվել, իր վրեժն է լուծում և հաղթական կերպով հարձակվում Ասորեստանի երկու քեների վրա: Անշուշտ, Ուրարտուի հաջողությունն էր պատճառը, որ քսանյոթ քաղաքներ ապստամբեցին Մալմանասարի դեմ:

Ասորեստանը ի վիճակի չէր այդ կորուստը դարձանելու, քանի դեռ իշխանության գլուխ չէր անցել Թիզբաթալասար III-ը: 739 թվականին այս թագավորը վերագրավում է «Նալ լեռան ստորոտում Ուլուբան և Խարխին» և նոր մայրաքաղաքով մի նահանգ ստեղծում: Իր հիմնած այդ մայրաքաղաքը նա անվանում է Aššuriqiša (Աշուրը նվեր է տվել): Դա այն քաղաքն է, որ ավելի ուշ համառոտված կոչվելու է Qiša¹:

Մի շատ արժեքավոր ցուցումի համաձայն, Ուրարտուն սահմանակից էր Ասորեստանին Թուշխան նահանգի կողմից: Ուրեմն, Ասորեստանը նորից կորցրել էր այն տարածքները, որոնք մեզ հետաքրքրում են: Դրանք Շուպրիա անունով անկախ պետություն էին կազմել: Ասարխադդոնը նորից զենք վերցրեց Շուպրիայի դեմ, գրավեց այն և ասորական երկու նահանգների վերածեց՝ Ուպպումն և Կուլիմերի: Իրոք, Ասորեստանի տիրապետությունների մի ցուցակում Մարդուկ-երիլա կառավարչի ղեկավարության ներքո նշված է Պումն = Ուպպումն նահանգը և Բելիդդին² կառավարչի ղեկավարության ներքո՝ Կուլմերա (= Կուլիմերի) նահանգը: Սակայն մեկ ուրիշ ցուցակում դրանք չկան, որն այլ կերպ չի կարելի բացատրել, եթե ոչ այն իրողությամբ, որ Ասորեստանը նորից կորցրել էր դրանք: Աշուրբանիպալի օրով, մոտավորապես 658 թվականին, ուրարտական Լուրդու նահանգի կուսակալ Անդարիան փորձեց Ուպպումնի և Կուլիմերիի տեր դառնալ, բայց Կուլիմերիի դիմադրության պատճառով գործը ձախողվեց:

Ուպպումն, այժմյան Ֆումը, Իլիջայի՝ թրքական Իլիջայի կազայի կենտրոնի մոտ է գտնվում: Կուլիմերին Խարգանի կազայում էր: Շուպրիա պետությունը բաղկացած էր երեք գավառներից՝ Ուպպումն = Իլիջայի կազա, Կուլիմերի = Խարգանի կազա և միջանկյալ գավառը՝ Մելիվանի կազա կամ Մարտիրոսպոլիս, հին Հայաստանի Նփրկերտ գավառը:

Ուլուբան կամ Խուլպի կազան Շուպրիայի մասը չէր կազմում. նա մնում էր Ուսուսուանի (=Մանասուն, կամ Մասունի կազա) հետ միասին Ուրարտուի իշխանության ներքո, ինչպես մեր օրերում այս երկու կազաները՝ Խուլպն ու Մասունը, Մշո (Մուշի) սանջակի մեջ են մտնում, մինչդեռ Իլիջան

¹ Կեղծ Մուլսես Խորենացի, Աշխարհացույց, էջ 37, հիշատակում է Արգանենում Kis - Քիշ և Շուկասար, որոնք գտնվում են մույն շրջանում, ուր և Կուլիմերին:

² C. Johns, Assyrian Deeds and Documents, 1901, էջ 853. E. Forrer, Die Provinzenteilung, էջ 87:

ու Մելիվանը՝ Դիարքեքիի սանջակի: Մա սկիզբն է այդ ամբողջ տարածքի այսպես ասած ապագա բաժանման երկու նահանգների՝ Սոֆեննե և Արգանեննե, որոնց սահմանն անցնում է Նիմֆիոս = Բատման գետով:

Ըստ № 19 արձանագրության՝ Մենուան գրավել էր նաև Alzini(-ni)-ն: Դա հայկական Աղձնիքի ամենահին հիշատակումն է: Այդ շրջանում Ալզինին ընդգրկում էր Բիթլիսի նահանգը, որտեղից էլ այդ անունը տարածվեց Բատմանից արևելք ընկած ամբողջ տարածքի վրա:

Արևմուտքում Ուրարտուի սահմանը ձգվում էր մինչև Եփրատ: Մենուան հպատակեցնում է միջանկյալ պետությունները: Ուլիբայի նվաճումը ենթադրել է տալիս նաև Մշո դաշտի գրավումը: Թրմերդի № 32 արձանագրությունը վկայում է, որ գրավվել են նաև Քուլմե և Ուրշա քաղաքները, ինչպես և Մրե-նի-ս-ի-նի երկիրը, որի անվան մեջ ցանկանում են տեսնել հայերի ցեղանունը: Համաձայն Բալուի № 31 արձանագրության, Մենուան, առաջ խաղաղով դեպի Եփրատ, նվաճում է Շերետերիա, Խուզանա քաղաքները և Շուփա(նի) երկրի տարածքը: Շերետերիան, հավանական է, Բալուի հին անունն է, Խուզանան Խուզանն է, իսկ Շուփան Սոֆենենն է՝ հայկական Շոփքը: Մենուան այնտեղ խոսում է նաև Խաթթինի երկրի և Մելիտալիսիի թագավորի մասին՝ Սուլի անունով, որն իր հպատակությունն է հայտնում: Այստեղ Խաթթինին նշանակում է Մելիտենեի մարզը և առհասարակ Եփրատից այն կողմ գտնվող երկրները:

Խոսքն այստեղ ավելի շուտ ավերումների մասին է, քան թե գրավման, որովհետև Մենուայի հաջորդը՝ Արգիշտին, նորից է արշավում Շուփա և Խաթեն երկրների դեմ: Այդ ժամանակ Խաթենի թագավորը Խիլարուադան էր: Մելիտալիսի բնակչությունը տարագրվում է: Պարզվում է, որ Խաթեն Մելիտենեի մարզն է: Արգիշտին հիշատակում է Մելա(հնի) գետը, որը Մելանն է, ինչպես նաև Նիրիբա երկիրը, որի իշխանն է Թուատեխիսին: Արդյոք սա վերահիշյալ Նիրիբ-դադարի Նիրբե՞ն է, թե Մելիտենեի մարզում գտնվող համանուն ուրիշ բնակավայր, դա մնում է անորոշ (№ 111-112):

Սարդուրի II-ը շարունակում է պայքարը Խիլարուադայի դեմ: Իզուլիի № 133 իր արձանագրության մեջ նա նրան կոչում է Շախուխի՝ «Շախուի որդի» և Մելիտե-ալիսիի թագավոր: Արգիշտին նրան Խաթենի թագավոր էր ընդունում, իսկ այստեղ նա հանդես է գալիս որպես Մելիտենեի շրջանի թագավոր. ևս մի ապացույց այն իրողության, որ Խաթեն այս դեպքում նույնացվում է Մելիտենեի հետ: Սարդուրին հպատակեցնում է նաև Kauri երկրի թագավորին, Tumeiški քաղաքը, Կարնիշի երկիրը և բազմաթիվ այլ տեղեր, ներառյալ Խիլարուադայի թագավորական քաղաք Նիսին: Պարտվելուց հետո Խիլարուադան հանձն է առնում հարկ վճարել:

Մենք կարծում ենք, որ Թումեիշկին՝ Եփրատի վրա գտնվող Թումիսան է, որը Շոփքի թագավորության պատմության մեջ լավ հայտնի է: Կաուրի երկիրը այլ բան չէ, եթե ոչ Κλίμα Γαρινής-ը՝ հայկական Գավրեքը, Չորրորդ Հայքի զավառներից մեկը, որը գտնվում էր Արսամիասի գետաբերանի վրա: Կարնիշին հիշեցնում է Պետիզդերյան քարտեզի Corne-ն, որը Claudia-ի շրջանում գտնվող հռոմեական մի կայան էր:

Սարդուրի II-ը շարունակում է իր հաղթական արշավը և թափանցում Կումմուխի՝ Կոմմագենե, խլում է նրա երկու քաղաքները՝ Ուիտանին (Կիշտա՞ն) և Խալպան, հարկատու է դարձնում Գուրգում (Մարաշ) երկիրը և Մամալլու երկիրը՝ Ամանուսի Չինջիլլու մարզը: Սարդուրին այդ բոլոր երկրների հետ կոալիցիա է կազմում ու 743 թվականին մարտի հրավիրում Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասարին: Կռիվը տեղի է ունենում Եփրատի ափին, Խալպայի և Կիշտանի մոտ, Ռու-կալեից քիչ հեռու, բայց Սարդուրին պարտվում է և կորցնում Եփրատի աջ ափին ձեռք բերած բոլոր քաղաքական ու տարածքային առավելությունները:

Հյուսիսային ճակատում այնպիսի պետություն չկար, որ համարձակվեր չափվել Ուրարտուի հետ, բայց կար ռազմատենչ ցեղերի մի բազմություն, որոնք քաղաքական խմբավորումներ էին կազմում: Նրանք պատրաստ էին գեները ձեռքին պաշտպանելու իրենց ազատությունը:

Մակայն Ուրարտուն որոշել էր իր ձգտումներն իրագործել լայնացնել սահմանները, նվաճելով այն պետությունները, որոնք կուզենային հյուսիսի ուղղությամբ նրա ընդարձակման ճանապարհը փակել:

Այդ նպատակի իրագործման համար սկսված պատերազմը երկար տևեց: Այդ համառ պայքարի իրադարձությունները մեծ տեղ են բռնում ուրարտական վավերագրերում, որտեղ հիշատակված են արշավանքների նպատակակետ հանդիսացած բազմաթիվ երկրներ, որոնք, դժբախտաբար, հնարավոր չէ ստույգ կերպով տեղորոշել: Անբավարար վերծանվող ռազմական նկարագրությունների քննությունը, այսուհանդերձ, որոշ ընթացման է հանգեցնում, և դա թույլ է տալիս, մի շարք հենակետերի օգնությամբ, որվագծել Ուրարտուի բանակների առաջխաղացման սահմանները, եթե ոչ այն տարածքները, որոնք վերջնական կերպով միացվել էին Ուրարտուին:

Իշպուինիից առաջ Ուրարտուն տարածվում էր դեպի հյուսիս՝ մինչև Արսամիասի ակունքների շրջանը և այսպիսով ընդգրկում էին Հայաստանի Բագրևանդ գավառը, այսօրվա Ալաշկերտը: Այդ մարզը Արաքսի հովտից բաժանող լեռնաշղթան Ուրարտուի բնական սահմանն էր կազմում Իշպուինիի ժամանակ իսկ:

Ճիշտ է, այդ թագավորը ասպատակություններ է կատարել Արաքսից այն կողմ, ինչպես մենք կտեսնենք հետագայում, բայց ոչնչից չի երևում, որ նա որոշ տարածք ձեռք բերած լինի ավարառության ենթարկված այդ երկրներում: Նույնիսկ թվում է, որ Բագրևանդում Իշպուհինի դրությունը դեռևս այնքան էլ կայուն չէր, եթե դատենք Թոփրակ-կալայի № 28 արձանագրության ավյակներով, ուր խոսքը Մենուայի՝ Անաշի քաղաքը գալու մասին է:

Անաշիում ճանաչելի է Ալաշկերտի անունը, նույն գավառի կենտրոնը, որը հայերը կոչում են Վաղարշակերտ, իսկ թուրքերը՝ Թոփրակ-կալա: Արձանագրությունը հատվածային լինելու պատճառով հնարավոր չէ ճշգրտել, թե խոսքը Անաշի նվաճման, թե որևէ կառույցի մասին է:

Ինչևիցե, Մենուան է, որ անցնում է Բագրևանդի լեռները և Արաքսի հովտում լեռների երկու ծայրերում գրավում երկու կենտրոններում (№ 21) Տաշբուտունի շրջանը և արևմուտքում (№ 27) Դելիբաբայի շրջանը: Առաջին շրջանը կոչվում էր Լսիսուս և պատկանում Իրիկուսիսի(նի) հարստությանը: Իրիկուսիսի նշանակում է «Իրիկուսի որդի»: Այս անձնանունը հիշեցնում է Orkovi՝ նույն շրջանում մի գյուղ, որը ծանոթ է առնվազն V դարուց ի վեր¹: Օրկովին (Օրկով գյուղ) գուցե իշխան Իրիկուսի նստավայրն էր:

Դելիբաբայի շրջանում Յազի-տաշի արձանագրությունը խոսում է Մենուայի արշավանքի մասին Diauehi երկրի դեմ, որի մայրաքաղաքը Šašilu-ն էր, ինչպես նաև Šešetini երկրի մի քանի այլ քաղաքների դեմ: Դիաուսիսի թագավորը, որը երկու ուրիշ թագավորների՝ Baltulhi-ի և Haldirulhi քաղաքի թագավորի հետ իր հպատակությունը հայտնեց, կոչվում էր Մտսուրսի(ն):

Դիաուսիսին (կամ Դիաու-սին) հայրանվանական կամ հարստության անուն է և նշանակում է «Դիաուսի որդի», որի շառավիղներից մեկն էր Ուտուպուրշինին: Դիաուսիսի, Բալտուսիսի և Խալդիրուսիսի աշխարհագրական դիրքը պետք է դեռևս հաստատել ուրիշ ավյակներով: Յազիտաշի արձանագրությունն այս նյութի կապակցությամբ ոչ մի նշան ցույց չի տալիս: Այնուհանդերձ, նրա տեղը մեզ կողմնորոշում է դեպի Արաքս գետի մյուս ափը: Յազիտաշի շրջանը արդյո՞ք այդ երկրների մասն էր կազմում: Հնարավոր է: Մակայն պնդել այդ դեռևս չենք կարող: Յազիտաշը կարող էր ուրարտական սահմանային կայան լինել, ուր հաղթական թագավորը, արշավանքից վերադառնալիս, ուզեցել է իր անունը անմահացնել իր կատարած սխրագործություններով: Իրոք, կամ տեղական արձանագրություններ,

որտեղ պատմվում են Ուրարտուի սահմաններից դուրս պատահած իրարարձություններ:

Դեռ իր հոր թագավորության ժամանակ Մենուան հպատակեցրել էր հետևյալ երեք թագավորներին՝ Ուիտերուսի (կամ Ուտերուսի), Լուշա և Կաթարգա, ինչպես նաև «Էթիուսիսի երկրի թագավորական բերդերը» (№ 13): Քյուսնենցի (№ 14) արձանագրության մեջ Ուիտերուսի, Լուշա և Կաթարգա թագավորների մասին է խոսվում, առանց Էթիուսիսի մասին հիշատակելու: Վերոհիշյալ երեք անձնավորություններն արդյոք Էթիուսիսի երկրում էին իշխում, թե այս վերջին երկիրը տարբեր էր երեք թագավորություններից: Հարցը պարզ չէ: Էթիուսիսին նույնպես հարստության անուն է, Էթիուսիսին՝ «Էթիուսի որդի»: Էթիուսիսի աշխարհագրական տեղնինը կարելի է նաև վերլուծել որպես Էթիուսի-ինի՝ «Էթիուսի ընտանիքի երկիր»: Այս երկիրը կոչվում է նաև Էթիուսի՝ Էթիու-ինի-ից՝ «Էթիուսի երկիր»:

Այսպիսով, գոյություն ունեւ Դիաուսիսի անունով մի հարստություն և մեկ ուրիշ՝ Էթիուսի անունով: Ու(ի)տերուսի, Լուշա և Կաթարգա թագավորներն իրենց տիրապետություններն ունեին կարծես Դիաուսիսի և Էթիուսի պետությունների սահմաններում: Երեք հարստությունները հիշատակված են երբեմն Դիաուսիսի և երբեմն Էթիուսի կամ Էթիուսի հետ: Նրանց տիրապետությունները կարծես Դիաուսիսին ավելի մոտ են, քան Էթիուսիին:

Այդ երկրները մնալու էին Արգիշտիի ռազմական արշավանքների գլխավոր նպատակակետերը և մասամբ՝ նաև Սարդուրիի:

Արգիշտին անցնում է Արաքսը և նվաճում Լուսիսունիի Տաշբուտունի դիմաց գտնվող ձախ ափի շրջանը: Այնտեղ հիմնադրում է մի քաղաք և կոչում Արգիշտիսիսի(ն), ապագա Արմավիրի նախատիպարը (№ 127):

Դելիբաբայի կողմից նույնպես նա անցնում է Արաքսը և տիրանում Սարիդամիշի մարզին: Նա հայտարարում է, որ գրավել է Ախուրիանի քաղաքը, որը պատկանում էր ինչ-որ իշխան Աշտուաիսիսին, ինչպես նաև գրավում է Էթիուսի երկիրը, որի թագավորն էր Ուդուրին (№ 19): Արմա գետը, որի մի վտակի ակունքներ գտնվում են Սարիդամիշի լեռներում, հին ժամանակներից կոչվում է Ախուրյան – այս գուգադիպությունը չի կարող և չպետք է ուշադրությունից վրիպի:

Էլարի (№ 15) արձանագրությունը խոսում է Էթիուսի և Էլուանի երկրի մասին, որը հավանական է դրա գավառներից մեկն է: Էթիուսին տարածվում էր, ուրեմն, Ախուրյան գետից մինչև Երևանի շրջանը, ուր գտնվում է Էլարը:

Արդինին Էթիուսի քաղաքն է, նա հիշատակված է Էրիաիսի երկրի, Կաթարգա երկրի, Իշկուգուլու երկրի և Ուիտերուսիսի երկրի հետ (№ 111, 12):

¹ Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1904, էջ 94:

Էրիախին և Իշկուզույուն գտնվում էին Մարմաշենի շրջանում (№ 118): Կաթարգան և Ուխտերուխին, այսինքն՝ այս իշխանների տիրապետությունները, նույնպես նույն կողմերում էին, ավելի դեպի արևմուտք, Գիաուելխի սահմանագրություններում, որովհետև Լուշա, Կաթարգա, Ուխտերուխի, Էրիախինի, Գուլուլխիխա, Աբու(նի), Իգա(նի) հետևում են Գիաուելխի անվանը (№ 112 ք): Մեկ ուրիշ արձանագրության համաձայն (№ 111,1) Աբու(նի), Իգա(նի) և Մակալտու Գիաուելխի դեմ արշավանքի ժամանակ նվաճված երկրներն են, և որովհետև Մաքալտուն գտնվում էր Չըլդըր լճի մոտ՝ ըստ № 143 արձանագրության, ապա պետք է ընդունել, որ Գիաուելխին այդ շրջանից հեռու չէր և որ հաշվի առնելով Յազլիտաշի արձանագրության մեջ Գիաուելխի հիշատակումը՝ նա, ուրեմն, տարածվում էր Արաքսից մինչև Չըլդըր, այսինքն՝ գրադեցնում էր Կարս գետի ջրերը կամ հին Հայաստանի Վանանդ գավառը:

Արգիշտիի օրով Գիաուելխի թագավորը նույն Ութուպուրշին էր, որ Մենուայի հակառակորդն եղավ (№ 112Ա), իսկ նրա քաղաքը կամ մայրաքաղաքը Շաշիուն էր (№ 112Բ), որը ծանոթ է Մենուայի ժամանակից ի վեր (№ 27):

Արգիշտիի պայքարը Գիաուելխի դեմ ավելի հաջող ընթացավ, քան թե իր հոր: Նա գահընկեց արեց Ութուպուրշի թագավորին, նրա պետությունը միացրեց Ուրարտու պետությանը և այնտեղ կառավարիչներ նշանակեց Շաշի Արդարակիխինին և Բալաուխի Քաբիլու(խինի) (112Բ): Գիաուելխի տարածքից երկու մահանգ ստեղծեց, որն ապացուցում է, թե այն բավական ընդարձակ տարածություն ուներ և, ինչպես Մենուան է որակում, «մի հզոր երկիր» էր, ebanı taraie (№ 27): Չմոռանա՞ք, որ Արգիշտի թագավորը Օրդակլուի շրջանում (№ 116) Կիելսունի և Իշփիկունիու քաղաքները գրավելուց հետո հասավ Սևանա լճի ափը:

Մարդուրին Արգիշտիի ման իր բանակն առաջնորդեց միևնույն ուղղությամբ: Հյուսիսում նա հասավ Չըլդըր լիճը և գրավեց Սիմեանի երկիրը (№ 143): Արևելքում նա առաջ խաղաց մինչև Չաղալու՝ Սևանի հարավային ափը, հպատակեցնելով Արգուին երկիրը (№ 134): Արևմուտքում Մարդուրին ստիպված է լինում դիմագրավելու Կուլխի ժողովրդին, որն առաջին անգամ երևան է գալիս պետության հորիզոնում: Կուլխիները կուլխերն են՝ քաջ հայանի պոնտական մի ժողովուրդ, Գիաուելխի պետության հետևում ծվարած: Կուլխի ժողովուրդը շփում չէր ունեցել Ուրարտուի հետ, քանի դեռ Գիաուելխի անկախ պետությունը դիմադրում էր Ուրարտուի ճնշմանը: Պատվարները խորտակվելուց հետո կուլխիները անմիջական հարևան դարձան Ուրարտու պետությանը և գտնվեցին նույն վիճակում, ինչպես

անցյալում Գիաուելխին, այսինքն՝ ենթարկվեցին Ուրարտուի վեհապետների հարձակումներին:

Կուլխիների դեմ արշավելու ժամանակ Մարդուրին ձեռքակալում է Խուշալխի թագավոր Խախային: Մեկ ուրիշ արշավանքում ուղղված Կուլխալխի երկրի դեմ, նա գրավում է Իլդանուշա քաղաքը, նվաճում Ուխտերուխի երկիրը և նրանց առաջնորդների փոխարեն նշանակում ուրարատական կառավարիչներ:

Խուշալխին նույնամուտ է Խուշանիի հետ, ինչպես Կուլխալխին՝ Կուլխիի հետ կամ Մելիտալխին՝ Մելիտայի հետ: Այս գույգերը և նրանց նմանները նույն երկիրն են ցույց տալիս՝ որոշ երանգով, որը դժվար է գնահատել: Խուշանին ուրիշ տեղ ևս հիշատակված է (№ 111) Գիաուելխի հարևան երկրների միջև, իսկ Ուխտերուխին, ինչպես մենք արդեն նշեցինք, Լուշայի և Կաթարգայի հետ գտնվում էր Գիաուելխի և Էթիունիի միջև: Այն հանգամանքը, որ Մարդուրին Ուխտերուխին գրավեց կուլխդական արշավանքի ժամանակ, ապացուցում է, որ այն Գիաուելխին ավելի մոտիկ էր, քան Էթիունիին:

Լուշայի երկիրը և Կաթարգայի երկիրը, անշուշտ, Գիաուելխիի հետ միևնույն ժամանակ են միացվել Ուրարտուին: Մարդուրին այդ երկու անունները չի հիշատակում: Արշավանքն ընդդեմ կուլխերի, որոնք այդ դարաշրջանում և ավելի ուշ ապրում էին Մարդուրի ստորին հոսանքում, հաստատում է, որ Գիաուելխի պետությունը դուրս էր գալիս Վանանդի հայկական շրջանի սահմաններից Կուր գետի ակունքների ուղղությամբ:

Կուլխիի դեմ կատարված երկրորդ արշավանքին նախորդել է երեք թագավորների՝ Ռաշունիի, Գիուծիսիի և Իգանիելիի (№ 132, 3, 1) երկրների վրա հարձակումը: Վերջինը Իգանի երկրի թագավորն է, որն Արգիշտին հիշատակում է Մաքալտու քաղաքի հետ միասին: Տեքստը թույլ է տալիս նույնիսկ գտնել Իգանիի մի քաղաք: Մաքալտուի տեղը, Չըլդըր լճի մոտ, ցույց է տալիս այն շրջանը, ուր պետք է փնտրել մյուս թագավորների՝ Ռաշունիի և Գիուծիսիի տիրապետությունները:

Այդ ձևով կարելի է հանգել քիչ թե շատ ընդունելի այն եզրակացության, որ Խուշանին, Ուխտերուխին, Լուշան, Կաթարգան, Ռաշունին, Գիուծիսին, Իգանիսին կազմում էին փոքր իշխանություններ, որոնք շարված էին Գիաուելխի արևելյան սահմանների վրա:

Արևելքում, Սևանի շրջանում, Մարդուրիի կողմից նվաճված երկրների տեղերը ավելի ճշգրտված են:

Օրդակլու = Պորտակ շրջանում, Սևանա լճի հյուսիսարևելյան ծայրում, Արգիշտին ձեռք է բերել Չիեսու երկիրը: Մարդուրին նվաճեց հարավ-

արևմտյան անկյունը՝ Ծիմալիբիի թագավորությունը, որի մայրաքաղաքը Tulihu(ու)-ն էր (№ 135), ինչպես նաև Չաղալուի շրջանում, հարավ-արևելյան անկյունում՝ Արկուկիների թագավորի տիրապետությունը (№ 134): Կիեխունիի և Թուլիխունի միջև կար մի թագավորություն, որը կոչվում էր Ուելիքունի (կամ Ուելիքուխի), որի կենտրոնական քաղաքը ներկայի Նոր Բայազետն էր: Մարդուրին առաջին անգամ հարձակվում է Ուելիքունիի վրա, երբ նրա թագավորը Մուրիսին էր: Թուլիխունի թագավորությունը նույն քախտին արժանացավ: Երկրորդ հարձակման ժամանակ Ուելիքուխիի թագավորը Նիդունին էր (№ 132, 6): Նոր Բայազետում հայտնաբերված արձանագրության համաձայն (№ 147Ա), նույն թագավորը դեռևս գահի վրա էր, Մարդուրիի հաջորդ Ռուսայի օրով: Այդ հայտնաբերման շնորհիվ է, որ Ուելիքունին նույնացվում է Նոր Բայազետ քաղաքի շրջանի հետ:

Արկուկիներն երկու անգամ հարձակման ենթարկվեց: Առաջին հարձակումը կապված էր չորս թագավորների հետ՝ Ու(ե)դուրի - Էթիունի, Արկուկիունի (sic), Կամանի(ուի), Լուերունի(ուե). երկրորդ հարձակումը՝ Արկուկիների (sic), Ադախունի, Լուիպուունի, Կամնիու և մի քանի ուրիշների (№ 132, 4, 6):

Մարդուրիի որդի Ռուսան ասում է, որ նորից նվաճել է Սևանա լճի ափին տեղավորված չորս երկրներ՝ Ադախունին, Ուելիքուխին, Լուերունին, Արկուկիներին (№ 147):

Լուերունին նույնն է, ինչ Լուերունին (հմմտ. Ուելիքուխի և Ուելիքունի) և Լուիպուունին: Թվում է թե վերջինն ավելի հին ձև է և հիշեցնում է Լուիպարին: Թուլիու կամ Թուլիխու քաղաքի թագավորը Ծիմալիբի Լուեխունիին էր: Հիմքեր կան ենթադրելու, որ Լուեխունիին նույն Լուերունին է, և եթե այս կարծիքը ճիշտ է, ուրեմն, սխալն արդյունք է գրչական վրիպման: Այդ բոլոր փոքր պետությունները դասավորված են Սևանի ափի շրջանում, Պորաակից կամ Օրդակլուից մինչև Չաղալու՝ հետևյալ կարգով. Կիեխունի (Օրդակլու), Ադախունի, Ուելիքունի (Բայազետ), Լուերունի (Աթամխան), Կամանի կամ Կամնի, Արկուկիների (Չաղալու):

Սևանի ափին շարված երկրների մեջ առաջին տեղը գրավում է Ու(ե)դուրի-Էթիունին, և այնտեղից է, որ Մարդուրին մտավ Արկուկիների: Դրանով այդ քաղաքը մտնում է Երևանի շրջանը: Իրոք, մենք դա գիտենք արդեն ըստ Երևանի մոտ գտնվող Էլարում հայտնաբերված արձանագրության: Արգիշտիի թագավորության օրով Ուդուրին Էթիունիի թագավորն էր: Էթիունին կոչվում էր նաև Ուդուրի-Էթիունի: Սրանով, գուցե, ցույց է տրվում, որ Էթիունիի մի մասն իր վրայից բռնափել էր Ուդուրիի իշխանությունը: Մարդուրիի արշավանքի ուղեգիծն անցնում է Լիկուն երկրով, որը պատկանում

էր Էդիանի քաղաքում գահակալող իշխան Աբիանի(նի)-ին, ինչպես նաև Իրկուաիների իշխանի Իրուիա(-ինի) քաղաքով և Ուեդա(-ինի) իշխանի Իրմա(նի) քաղաքով (№ 132, 7): Գուցե դրանք Էթիունիի տիրապետությունից ազատված քաղաքներն են, որոնք գտնվում էին նույն երկրի արևմտյան սահմանների վրա:

Մեկ ուրիշ արշավանքում Մարդուրին, անցնելով Էրիախի (№ 132, 6) երկրով, Էթիունի երկրով, հասնում է Իգանի, որի իշխանը Կապուրին էր: Քանի որ Իգանին գտնվում էր Չըլդրի մոտ, իսկ Էթիունին հին Հայաստանի բուն Այրարատն էր, ուրեմն, Էրիախի երկիրը պետք է որ գտնվեր Արագած լեռան հյուսիսային լեռնաճյուղում, Շիրակի մարզում: Մարմաշենի արձանագրությունն այդ է վկայում:

Մարդուրին Էրիախիից արշավեց Իշթելուանի, Կադիաիների, Ապունիների երկրների դեմ և Աբիլիանիխի իշխանի երկրի դեմ (№ 132, 6): Մարդուրին ավերակի վերածեց Էրիախին և վերադարձին (biduaise) հարձակվեց Աբիլիանիխի վրա, որի թագավորը Մուրիսին էր (№ 132, 2): Արգիշտին արդեն կոչել էր Աբիլիանիխի, Կուտուրգանի(-նի)-ի և Ուլտուգա(-ինի)-ի հետ (№ 111, 2): Աբիլիանիխին ինքը մեռակ, և կամ նշված երկու իշխանների հետ միասին, բավական ուժ ուներ ինքն իրեն հարգել տալու և թվում է, թե արևմուտքից հարևան էր Էրիախիին:

Մարդուրիի հաջորդ Ռուսան անրապնդեց Սևանա լճի ափին տեղադրված չորս երկրների նվաճումը և իր իշխանությանն ենթարկեց տասնինը թագավորների, որոնք իշխում էին լճից այն կողմն ընկած լեռներում: Ջոլադոանի (№ 147) արձանագրությունը խնամքով պահպանել է այդ թագավորների ցուցակը: Փաստերի պակասության պատճառով նույնիսկ մոտավորապես չի կարելի ցույց տալ, թե նրանք որտեղ և որ շրջանում էին իշխում:

Նոր Բայազետի արձանագրության մեջ (№ 147Ա) Ռուսան հայտնում է, որ գրավել է Ուելիքուխի երկիրը, որի Նիեդունի թագավորի փոխարեն նշանակել է մի ուրարտացի կառավարիչ: Նի(ե)դունին հարկատու էր Մարդուրիին (№ 132, 6), մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում նա գրկվեց իր գահից, հավանական է, Սևանի շրջանի քսաներեք թագավորների դեմ Ռուսայի կատարած արշավանքի ժամանակ:

Հյուսիսում Արգիշտին ռազմական գործողություն չծավալեց: Համենայն դեպս, նա այդ մասին ռազմական բնույթի արձանագրություն չի բողբ: Մակայն նրա որդին Ռուսա II-ը, Ուրարտուին միացրեց Մակուի շրջանը, որտեղ նույնիսկ մի քաղաք հիմնադրեց (№ 153Ա): Նրա թագավորության ժամանակ Եփրատի կողմից մի նոր թշնամի երևան եկավ: Միտայի հոր-

դաները, այսինքն՝ մուշկերը, Խաթեի, Խալիտուի և այլ անժամոք ցեղերի հետ դաշնակցած, քափանցեցին Ուրարտու: Ռուսան ասպատակողների դեմ դուրս եկավ: Եթե, ինչպես կարծում է Կ. Լեման-Հաուպտը, իշխան Մեննակի կողմից կառուցված Պաղին բերդը վերակառուցել է, ապա գուցե այդ իրողությունը կապ ունի մուշկերի ասպատակության հետ: Ռուսայի այդ իրողությունը կապ ունի մուշկերի ասպատակության հետ: Ռուսայի ներկայությունը Մեծկերտում (Մազկերտում) մույնպես հաստատ է (№ 152): Ռուսան ե՛տ մղեց ասպատակողների հոսանքը, թե այն Ասորեստանի կողմը դարձրեց: Այդ դրվագի մասին ոչ մի ստույգ բան չգիտենք: Սակայն Ասոր-խաղոթնի մտահոգությունը Շուպրիայի մասին ցույց է տալիս, որ դրությունը համարվում էր բավական վտանգավոր, և որ Ռուսան «կիսմանների և ուրիշ դաշնակիցների հետ» պատրաստվում էր հարված հասցնելու Աշուրի պետությանը:

Պետության հյուսիսում ուրարտական քաղաքների տարածքային իրացումները գտնվում էին, ուրեմն, Արաքս գետի և Չըլդըր լճի միջև ու տարածվում էին Սողանլու լեռներից մինչև Սևանա լճի շրջանը: Այդ տարածքը ծածկված էր ցեղերի և տարբեր կշիռ ունեցող իշխանությունների ցանցով: Դժվար է սահմանագծել այդ երկրները և ճիշտ տեղադրել: Նկատելի է, սակայն, որ այդ իշխանություններից մի քանիսը գերակշիռ դիրք էին գրավում որոշակի գոտիներում. արևմուտքում՝ Դիաուեխին, արևելքում՝ Էթիունին, իսկ Էրիախին և Արիլիանիսին համարյա կենտրոնն էին զբաղեցնում:

Դիաու(ե)խի կամ Դիաու(ե)-խինի, Էթիունի կամ Էթու-խինի, Էրիախի(նի), Արիլիանի-խի՝ նշանակում են Դիաուի, Էթիունի, Էրիաի և Արիլիանիի շառավիղ կամ հարստություն: Դիաու(ե)խինները իշխում էին լայն կերպով գծված Վանանդի սահմաններում, Էրիախինները և Արիլիանիսինները՝ Շիրակում, իսկ Էթիունիները՝ բուն Այրարատում: Սկզբնաշրջանում Էթիունին թվում է, թե ավելի լայն իմաստ ուներ և գործածվում էր որպես տոհմական տերմին Արաքս գետից այն կողմ ընկած տարածքի վրա:

Ա. Մեսի կարծիքը, թե դիաուեխինները դասական հեղինակների տառիչներն էին (taochoi), հայկական Տայքը, ընդունվեց Կ. Լեման-Հաուպտի և ուրիշների կողմից: Տայ-ք, սեռական՝ Տայոց - Τάο-χοι, ավելի շուտ Dayaeni-ի հայկական ձևն է, երկիր, որը ուրարտական վավերագրերը չեն հիշատակում: Այդ ժողովուրդը Ուրարտուից դուրս էր:

Բայց մենք կարծում ենք, որ շատ ավելի հարմար կլիներ պատմական դրվածքին, ինչպես նաև հնչյունաբանական կանոններին՝ «Դիաուեխի»-ում տեսնել հայկական Ջավախ-քը, վրացական Ջավախ-եթին՝ Գոգարենն (Գուգարք) նահանգի մի գավառի անուն, որ դեռևս մնում է և վերաբերում է Չըլդըրի հյուսիսում գտնվող Ախալքալաքի շրջանին:

Այս նույնացումը առավել ևս ապացուցելի է, քանի որ Ջավախքը սահմանակից է նույն Գոգարենի մի շրջանի, որը հայերեն կոչվում է Կղարք-ք, իսկ վրացերեն՝ Կլարք-եթի: Դա Պտղոմեոսի Καταρχήνη-ն է և հավանական է՝ Ստրաբոնի Χο(λα)ρχήνη-ն¹, որն աներկբայորեն սերվում է ուրարտական Katarza-ից: Ուզեցել են Καταρχήνη-ն սրբազրել Καλαρχήνη-ի, որպեսզի նույնացնեն Կղարքի հետ: Բայց դրա կարիքը բոլորովին չկար երկու ձևերն էլ ճիշտ են և վերարտադրում են ուրարտական անունը, ուր է-ն ունեն էլ հնչյունը, որը չերթեզ լեզվում սովորական է և որը կարող է ճյուղավորվել որպես -ի՝ Katarza-ի և որպես -ի՝ Kalarza-ի: Այստեղ նույն հնչյունական երևույթն է հանդես գալիս, որը մենք ցույց տվեցինք Կուլիմների և Կուտենր-անի մեջ, որ առաջ են գալիս Կուլիմներից: Katarza-ն՝ դա նույն Quřurza անունն է, որ ճշված է Ուլտուգայի հետ: Սա բացահայտում է հայերեն արմատի ձայնավորումը՝ Կուղարք-ք-ից՝ Կղարք: Katarza-Kataρχήνη ձևը պահպանվել է նույնպես հայկական Գողերձականի մեջ որպես էթնիկական տերմին²:

Ռուս ասորագետ Մ. Վ. Նիկոլսկին առնչություն է տեսնում Eria-ի-ի և Erevan-ի միջև, որը շատ վիճելի է: Ավելի շատ մասնություն կա Etiuni-ի և հայկական Ուտիքի միջև, դասական հեղինակների՝ Պտղոմեոսի և Օսիտե-ի: Սա անունն է մի ժողովրդի, որից մնացել է միայն մի քանի գյուղ Նուխի քաղաքի մոտ: Ուտի-ի և Օսիտե-ի ձայնավորումը հիշեցնում է Uduri և Uituri ուրարտական անձնանունները:

4. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԵ

Ուրարտուն չունեն միօրինակ կառուցվածք: Այն բազմաթիվ երկրները, որոնք նա ընդգրկում էր, տարբերվում էին կենտրոնական իշխանության նկատմամբ ունեցած իրենց կախման բնույթով և պահանջում իրենց քաղաքական դիրքին համապատասխան կարգ:

Պետք է զանազանել երեք կարգի տարածքներ: Առաջին հերթին բուն Ուրարտուն, որը բաղկացած էր երկու մայրաքաղաքների տարածքներից՝ Տուշպա և Արգաշկուն կամ Վան և Մանազկերտ: Նա բաժանված էր վարչա-

¹ J. Markwart, Eranšahr, էջ 168:

² Դիոնիսիոս Թրակացու քերականության հայերեն հին բարձրագույն մեջ էթու-քոն ծե էσσι τδ էθνοϋς δηλωτικόν, ώς Φορξ Γαλάτης նախադասությունը բարձրագույն է. «ազգական է որ ազգի է յայտական, որպես Գողերձական, Տոն, վրացի. տե՛ս Н. Адоши, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 20:

կան միավորների՝ նահանգների, որոնք ենթարկվում էին կուսակալների իշխանությանը: Երկրորդ տեղը պատկանում էր նվաճված երկրներին, որոնցից մի քանիսը նահանգների էին վերածված, բայց շատերը պահպանել էին իրենց անկախությունը՝ տարեկան հարկ մուծելու պարտավորությամբ:

Երրորդ կարգը բաղկացած էր անկախ թագավորություններից, որոնք, սակայն, գտնվում էին Ուրարտուի քաղաքական ազդեցության ներքո:

Բուն Ուրարտուի նահանգները քաջ ծանոթ են Սարգոնի նկարագրությունից: 713 թվականի ներխուժման ընթացքում Ասորեստանի թագավորն անցավ Ուրարտուի յոթ նահանգներով՝ Չարանդա, Սուրի, Դալա, Բարի կամ Սանգիբուտու, Արմարիլի, Այադի և Ուայախ: Նրանք դասավորված էին նրա ճանապարհի վրա՝ Ուրմիո և Վանա լճերի միջև:

Պետք է ավելացնել Տուսպան (Տուշպա)՝ մայրաքաղաքի նահանգը, որը հայերը կոչում էին Տոսպ, դասական հեղինակների Tospitis-ը:

Արմարիլին նույն Արամալի նահանգն է, որը ծանոթ է 857 թվականի Սալմանասար III-ի արշավանքից և իր անունը պարտական էր Արամեին, մի փաստ, որ արդեն շատ լավ նկատելի է Ֆ. Հոմմելը: Սալմանասարը նույն շրջանում հիշատակում է նաև Թունմեն և Չանգիունան: Այսպիսով, նահանգների թիվը տասի է հասնում:

Սարգոնի գործակալներից մեկը հաղորդում էր, որ Ուրարտուի եինգ կուսակալներ գնացել էին Ուեիսի և նրանց մեջ՝ Արմարիլի կուսակալը, որը Տուտու էր կոչվում¹: Հետևաբար, Արմարիլին իսկապես նահանգ էր, մի վարչական միավոր, և գտնվում էր կուսակալի իշխանության ներքո: Հավանական է, որ մյուս նահանգները նույն տիպի էին, այսինքն՝ վարչական բաժանումներ՝ կուսակալների իշխանության ներքո:

Նույն տարում, 713 թվականին, կիմներների դեմ ձեռնարկած պատերազմում Ռուսան ճակատամարտը տանուլ տվեց: Ասորեստանյան գործակալների տեղեկությունների համաձայն, ինն ուրարտական կուսակալներ մնացին ռազմի դաշտում: Դրանք էին՝ Rab-bi-lub = Rabsak դիմացի նահանգի կուսակալը, Ամիդի դիմացի նահանգի կուսակալը, Թուշխանի դիմացի նահանգի կուսակալը, Մուծածիրի դիմացի նահանգի կուսակալը, Ուազանի կուսակալը, Շիր.ուրի կուսակալը, Կար-սիպարրիի դիմացի երկու կուսակալները և Շաթթերայի կուսակալը²:

Այդ ինը կուսակալություններից վեցը Ասորեստանին սահմանակից էին, որոնցից երեքը՝ Ամիդի, Թուշխանի (Կուրխ) և Ռաբշակի, այսինքն՝ Կունուխի նահանգի դիմաց, Սարիշայի և Հիսն-Քեյֆայի շրջանում, իսկ երեքը՝ Չարից արևելք, Կար-սիպարրիի և Մուծածիրի դիմաց: Ինչպե՞ս էին կոչվում ուրարտական այդ նահանգները: Հայտնի չէ: Միայն երեք նահանգներ են նշված իրենց անուններով՝ Ուազան, Շիր.ուր և Շաթթերա: Ուազան վերոհիշյալ նույն Ուայախ անունն է, որը համապատասխանում է Արբակի շրջանին, Չարի ակունքների վրա: Շիր.ուրի և Շաթթերայի տեղերը հայտնի չեն: Պետք է դրանք փնտրել Արևելյան Տիգրիսի (Բոհտան) ջրերի ուղղությամբ:

Ասորեստանցիներին ծանոթ էին նաև երեք ուրիշ ուրարտական կուսակալներ, որոնք գործում էին Ասորեստանի սահմանների վրա. Կանիուն նահանգի առաջնորդ Սակուատան, Աշուր-ռիսուայի՝ ասուրական կառավարչի, դիմացի նահանգի առաջնորդ Մեթինին և Ուկկու ասուրական քաղաքի դիմացի նահանգի առաջնորդ Սունան:

Կանիունը հիշեցնում է Քանան՝ Չուդիի շրջանի բնակավայրերից մեկը, որը Սեննաքերիբը հայտարարում է, թե նվաճել է Տիմուրիի (հայկական Տմորիք) և Աշուր-ռիսուայի Կիրշու (Գեֆշե) նահանգի հետ միասին: Այդ պահին նա գտնվում էր Խալծուում, ուրեմն, Մեթինիի նահանգը Խալծուի դիմացն էր գտնվում: Այս վայրը և Ուկկուն հավանաբար զբաղեցնում էին Խազիլի և Խաբուրի ափերը: Համենայն դեպս, դրանք գտնվում էին Չուդի լեռան և Չաբ գետի միջև: Խալծուի և Ուկկուի դիմաց գտնված Մեթինիի և Սունայի կուսակալությունները, ուրեմն, Արևելյան Տիգրիսի ջրերի ուղղությամբ էին ընկնում և, գուցե, նույնանում են Շիր.ուր և Շաթթերա նահանգներին: Ասորեստանի սահմանագլխին այս նահանգների միջև կարող էին բուն Ուրարտուին պատկանել միայն Շիր.ուրը, Շաթթերան և Մուծածիրի դիմացի նահանգը, ներառյալ Մեթինիի և Սունայի նահանգները, եթե դրանք տարբեր են Շիր.ուրից և Շաթթերայից: Հավանական է, որ Վանա լճի հարավային ափին գտնվող Էրհնու և Աիդու երկրները (№ 52), ինչպես նաև Անաշին (№ 28), նույնպես բուն Ուրարտուի մասն էին կազմում: Այդպիսով, բուն Ուրարտուն տասնհինգ նահանգներից բաղկացած կլիներ: Դրանցից և ոչ մեկը չի նշված, թե ու՞՞՞՞ ու՞՞՞՞ թեք բերված լինի: Բացի այդ, դա հենց այն երկրամասն է, ուր հատկապես զարգացավ ուրարտական մշակույթը:

Նվաճված տարածքների գոտին բավական լայն է: Հստակ գաղափար կազմելու համար օգտակար ենք համարում այստեղ ներկայացնել նվաճված երկրների գրեթե լրիվ մի ցուցակ, հաշվի առնելով միմիայն «երկիր» որոշիչով նշված անունները, առանց նկատի առնելու քաղաքները, ի բաց

¹ R. Pfeiffer 8 - R. F. Harper 444.

² R. F. Harper, 646.

առյալ այն դեպքերը, երբ քաղաքներն անպայման որոշ շրջաններ են ներկայացնում:

- | | |
|---|----------------------------|
| 1. Ալաու | 31. Դիաուեխիմի |
| 2. Ուրմենիուխիմի (Տարոնում) | 32. Շեշեքիմի |
| 3. Շեքեթերիա (Բալու) | 33. Լուշահիմի |
| 4. Թիտիա իշխանի տիրապետությունը (Պաղիմ) | 34. Կաթարգալիմի |
| 5. Խուզանա (Հոզաա) | 35. Ուխտերուխիմի |
| 6. Շուպանի (Շուփք, Մոֆենե) | 36. Բիանի |
| 7. Ալզի (Անզիտենե) | 37. Խուշանի |
| 8. Ռուսայի քաղաքի շրջան (Մակու) | 38. Դիդիմի |
| 9. Իրիկուախի (Յուլկերո) | 39. Աշկալուշի |
| 10. Սելուիմի | 40. Կալի |
| 11. Ուրբիկա | 41. Շերիազի |
| 12. Պուրունուրդադի (Արմավիր) | 42. Գուլուլուխիմի |
| 13. Կուարլիմի (Զվարթնոց-Էջմիածին) | 43. Աբունի |
| 14. Ուլուանի (Էլար) | 44. Իզանի |
| 15. Ախուրիանի (Մարիդամիշ) | 45. Չաբախա |
| 16. Ուխիմեավե (Չըլդըր) | 46. Սիրիմուքարա |
| 17. Ալուրա (Կուլիջան) | 47. Անիշքուրու |
| 18. Էրիախիմի (Մարմաշեն) | 48. Ուլտուզա |
| 19. Իշկիզուլու | 49. Էթումի |
| 20. Կիեխումի (Օրդակլու) | 50. Կուրիանի |
| 21. Վեիքուխի (Նոր Բայազետ) | 51. Պուսունի |
| 22. Լուերունի (Աթամխան) | 52. Արիխանիխիմի |
| 23. Արկուկիմի (Չաղալու) | 53. Իշթելուանի |
| 24. Ադախունի | 54. Կադիանի |
| 25. Լուիպրունի | 55. Լուկիտե |
| 26. Էշամուա | 56. Արիանիմի |
| 27. Կամ(ա)նիու | 57. Իրկուաիմի |
| 28. Կուալրանի | 58. Ուեիրդանի |
| 29. Ուխունունի | 59. Պուիմալխի |
| 30. Թերիանի | 60. Ռուիշիանի |
| | 61. Դիուծիմի |
| | 62. Ուրարդա |
| | 63. Ուիշուշի |
| | 64. Կուլխի |
| | 65-83. Սևանի մյուս կողմում |

գտնվող 19 երկրները:

Այս բոլոր երկրամասերը, բացի Կուլխից և Սևանի շրջակայքի 19 երկրներից, տեղավորված էին Այրարատի սահմաններում: Այրարատը հին Հայաստանի տասնհինգ մեծ նահանգներից մեկն էր: Հետևաբար, հակառակ այդ երկրների այնքան մեծ թվին, իրականում դրանք զբաղեցնում էին բավական սեղմ տարածք: Բավականաչափ փաստեր չկան այդ երկրների դեմ Ուրարտուի ձեռնարկած դարավոր պայքարի վերջնական արդյունքն իմանալու համար: Մենք հաստատ գիտենք, որ այդ պետությունների մեջ ամենահզորը Դիաուեխիմին, վերջ ի վերջո զենքերը ցած դրեց և դարձավ կուսակալների իշխանության ներքո գտնվող ուրարտական մի նահանգ: Մեկ ուրիշ կարևոր պետություն՝ Էթունիմ, հավանական է նույն բախտին արժանացավ իր Ուրուրի թագավորի մահից հետո: Ուխտերուխիմին նույնպես կորցրեց իր անկախությունը նահանգային կարգերին հպատակվելով: Գիտենք նաև, որ ուրիշ երկրներ, ինչպես Արիխանիխիմին, Վեիքուլիմին, պահպանելով հանդերձ իրենց առաջնորդները, հանձն առան հարկ վճարել: Բազմաթիվ փոքր տիրակալություններն, անշուշտ, չէին կարող ավելի լավ վերաբերմունքի արժանանալ, և, անտարակույս, մրանք այսպես թե այնպես ընդգրկվեցին Ուրարտու պետության մեջ:

Հարավում, Ատրեստանին սահմանամերձ վայրերում, Ուրարտուն իշխում էր հետևյալ երկրների վրա.

- | | |
|--------------------|------------------|
| 84. Նիրիբա | 90. Էրունի |
| 85. Կուալիբիլանի | 91. Կիրպունու-նի |
| 86. Արպուիա-նի | 92. Ուլիբա-նի |
| 87. Ուսուսուանի-նի | 93. Դիրզու-նի |
| 88. Խուլմերու-նի | 94. Իշալա-նի |
| 89. Մարմա-նի | 95. Կումենու-նի |

Այս երկրները գտնվում էին Արզանենում և Մեծ Շուփքում՝ հին Հայաստանի երկու նահանգներ, որոնք տարածվում էին մինչև Արևելյան Տիգրիսի աջ ափը:

Այս երկրների սահմաններում էին գտնվում ուրարտական երեք՝ Ամիդի, Թուշխանի և Ռաբշակի դիմաց գտնվող նահանգները:

Արևելյան Տիգրիսի (Բոհոտան) ավազանում ուրարտական տիրույթները ճշգրտված չեն: Ստույգ է, որ Ուրարտուն տիրապետություններ ուներ Տնորիք-Ալկիի և Ջղմարի (Ջուլամերկ) շրջաններում:

96. Սեննաքերիի արշավանքը Թիմուրուի դեմ հիմնականում Ուրարտուի դեմ էր ուղղված:

97. Ալգանին, հավանաբար Ալկի, իր աստվածն ունի ուրարտական պանթեոնում՝ ապացույց, որ նա նվաճվել է:

98-99. Մենք հիշատակեցինք, որ երկու մահանգ՝ Կար-սիպարիի դիմաց՝ պատկանում էին Ուրարտուին:

100. Ուշինին՝ ներկայիս Ուշնուն, որի աստվածը Ուրարտուի դիցարանումն էր, ուրեմն նվաճված էր:

101. Տարիունի, գուցե Տեր, գավառ՝ Ուշնուից, Թրաքիից հյուսիս («Աշխարհացույց»-ի Թուրաքը):

102. Արգիշտիի Աշկախան, որը Սարգուրիի նույն Ուշկիանին է, անկասկած, նաև Մարգոնի Ուշկայան, Մանայի սահմանագլխին, Ուշնուի մոտ:

Ուրարտացիները հավակնում են և այլ երկրների տիրացած լինել, որոնց տեղերը հայտնի չեն՝ Արխաու, Իանի, Կուլաշի, Իրկուաինի, Շաքիրարանի, Ալալի, Բարանի, Տուարածի, Գուրգու, Բամնի, Ումեկու, Ուրիանի, Թաիրծունի, Արթարնու, Արմե, Պուլուադի և ուրիշներ, որոնց անունները կիսով չափ ջնջված են:

Այդ երկրների մի մասը, անշուշտ, գտնվում էր Ուրարտուի քաղաքական ազդեցության գոտում՝ Մանայի շրջանում, ինչպես որ Կաուրի, Մուշանի, Ռախիսա և Նուշինի կոչվող երկրները՝ Մելիտենեի շրջանում:

Մանա թագավորությունը, ինչպես և Խաթթինայի և Մելիտենեի միջև գտնվող մերձեփրատայան փոքր պետությունները մտնում էին Ուրարտուի քաղաքական ազդեցության ոլորտը: Ասորեստանի սպառնալիքին միշտ ենթակա այս երկրները կարիք ունեին Ուրարտուի օգնության, իսկ վերջինը շահագրգռված էր օգտվելու դրանց համագործակցությունից ընդհանուր թշնամու՝ Ասորեստանի դեմ: Դրանք Ուրարտուի պատմության մեջ կարևոր դեր խաղացին որպես դաշնակիցներ և կամ՝ որովհետև դրանց տարածքը Ասորեստանի հետ մրցակցության վայր էր: Միայն Մուծածիրը Ուրարտուի համարյա ստորականն էր (մինչև Մարգոնի թագավորությունը): Այնուհանդերձ, դրանք անկախ պետություններ էին և Ուրարտուի սահմաններից դուրս էին գտնվում: Կազմի մասին խոսելով՝ մենք նկատի ունենք միայն բուն Ուրարտուն և դրա տիրույթները Հայկական լեռնաշխարհում (18):

Ուրարտու՝ երկրի ասուրական հորջորջումն է: Առաջներում ասորեստանցիներն այն կոչում էին Նաիրի: Ուրարտուն նախ երևան է գալիս Ուրարտի ձևով: Աշուրբեկական (1077-1066) այս անունով է նշում Բռնտանի մի շրջանը: Նրա անմիջական հաջորդներից մեկը՝ Սալմանասար II-ը ասում

է, որ երեք օրում կամ երեք քառորդ օրում նվաճել է Ուրարտին. հետևաբար, այդ տարածքը բավական սահմանափակ էր և մինչև Հայկական լեռնաշխարհ չէր տարածվում: Ավելի ուշ այդ անունը տարածվեց Հայաստանի վրա: Չի կարելի ասել, թե դա թյուրիմացություն չէ և թե, գուցե, Բռնտանի շրջանը Ուրարտի է կոչվել հենց այն պատճառով, որ նա արդեն այդ ժամանակ Ուրարտի-Հայաստանի մաս էր կազմում:

Աշուրնասիրալայն արդեն այդ երկիրը տեղադրում էր Նիրբե Տա bitani-ի, այսինքն՝ Հայկական Տավրոսի այն կողմը: Ուրարտու անունը երևան է գալիս Սալմանասար III-ի օրով (859-824) և նշանակում է միմիայն Հայաստանը:

Ուրարտական թագավորները Ուրարտու անունը չեն գործածում նույնիսկ ասուրերեն գրված իրենց արձանագրություններում: Սարգուրի I-ը ասուրերեն արձանագրության մեջ իր երկիրը Նաիրի է կոչում: Նրա որդին՝ Իշաուինին, գործածում է նույն անունը Կելիշինի արձանագրության ասուրերեն տարբերակում: Այստեղ նա իրեն վերագրում է այսպիսի տիտղոսներ. թագավոր մեծ՝ RABU, հզոր՝ DANNU, ամբողջության՝ KISSATI-ի թագավոր, Նաիրիի թագավոր, Տուշպա քաղաքի կառավարիչ կամ իշխան՝ šaknu:

Ուրարտական տարբերակն այդ տիտղոսները անդրադարձնում է հետևյալ կերպ. թագավոր հզոր՝ DANNU, թագավոր Šuraue երկրի, Biainaue երկրի, Տուշպա քաղաքի կառավարիչ կամ իշխան՝ alusi:

Այստեղ մեծ՝ RABU-ն զանց է առնված, որ այնքան էլ կարևոր չէ: Ավելի մտահոգիչ է, որ KISSATI-ի և Նաիրիի փոխարեն միայն Շուրաուե և Բիաինաուե են գործածված: Վերջինը Նաիրիին համապատասխանող երկրի ազգային անունն է: Սակայն ի՞նչ է նշանակում Շուրաուե: Ասուրական տեքստի KISSATI-ի թարգմանությունն է արդյոք, թե KISSATI-ն նույնպես զանց է առնված, իսկ Շուրաուեն հատուկ անո՞ւն է, ինչպես Բիաինաուեն, և վերջինիս հետ համապատասխանո՞ւմ է արդյոք Նաիրի տերմինին¹:

Շուրաուեն Բիաինաուեի տեսքն ունի և, գուցե, Շուրիի հոգնակի սեռական հոլովն է, ինչպես Բիաինաուեն Բիաինիի հոգնակի սեռական հոլովն է: Բավական գրավիչ է Շուրին մոտեցնել Սիրիային, բայց Իշաուինին, որ իրեն Շուրաուեի թագավոր է կոչում, Սիրիայում չի եղել: Բացի այդ, եթե համեմատենք ուրարտական երկու տեքստերը՝ № 64-65 և № 142, ստիպված կլինենք ընդունել այն կարծիքը, թե Շուրաուեն ավելի շուտ դիմելու է: Առաջին տեքստում Մենուան պարծենում է հետևյալ տիտղոսներով. հզոր

¹ A. Götze-ն, Zeitschrift f. Assy. Neue Folge, V, էջ 103, և J. Friedrich-ը, Einführung, էջ 31, առաջին կարծիքի կողմնակից են. M. Tsereteli-ն՝ Revue d'Assyr., 33, 1933, № 1, էջ 13, երկրորդի:

թագավոր՝ taraiē, մեծ թագավոր՝ al(a)suinie, Šuraue երկրի թագավոր, Biainaue երկրի թագավոր, թագավորների թագավոր՝ erilaue, Տուշպա քաղաքի կառավարիչ՝ alusi Tušpa-patari:

Մյուս տեքստը գալիս է Սարգուրի II-ից և նույն տիտղոսներն է տալիս նրան՝ ասուրական գաղափարանիշերով՝ հզոր թագավոր՝ DANNU, մեծ թագավոր՝ RAB-ni, շատ երկրների թագավոր՝ MATU MATU¹, Biainaue երկրի թագավոր, թագավոր թագավորաց՝ SARRU¹, Տուշպա քաղաքի կառավարիչ՝ alusi Tušpa-ali: Երկու տիտղոսների տարբերությունը մի կետի վրա է ծանրանում, ուր առաջին տեքստի Շուրաուեն հակադրվում է երկրորդի MATU MATU¹-ին: MATU (երկիր) բառը կրկնված և հոգնակիի նշանով օժտված կամ առանց նրան, ինչպես № 134 արձանագրության մեջ, Sayce LXXXII, նշանակում է «բազմաթիվ կամ տարբեր երկրներ», ուրեմն, KIŠŠATI-ի իմաստն է տալիս: Բայց արդյո՞ք նրա նույնացումն է. matu Šuraue գրությունը ավելի շուտ ցույց է տալիս աշխարհագրական տերմին և թույլ չի տալիս հավատալ, որ այն հավասարագոր է KIŠŠATI-ին, մասնավաճ որ այս վերջին բառը, որը ծանոթ էր ուրարտացիներին, գործածված է № 142 արձանագրության մեջ Խալդիի նկատմամբ, որը կոչված է BELU ŠU(=KIŠŠATI), անշուշտ՝ Աշուրի նմանությամբ¹:

Ուրարտական թագավորների կրած տիտղոսները պարծենկոտ գարդարանքներ չեն, այլ կոնկրետ վիճակ են ցույց տալիս: Տուշպայի alusi լինել՝ նշանակում է կուսակալի տիտղոսով մայրաքաղաքի նահանգին տեր լինել: Բիահինի-լին, անշուշտ, ցույց է տալիս երկրների այն ամբողջությունը, որից կազմված էր բուն Ուրարտուն: Բիա-ինի (Բիայի երկիր) հավանական է Վանի շրջանի դիմաստիական անունն է Սարգուրի I-ից առաջ: Շուրի-լին ցույց է տալիս բուն Ուրարտուից դուրս գտնվող երկրները, որոնք միացվել են Ուրարտուին կամ նրա հարկատուն են դարձել: Երկու տերմինները միասին համապատասխանում են ասուրական Նաիրիին, որը շատ լայն իմաստ ուներ և ընդգրկում էր ամբողջ Ուրարտուն և նույնիսկ որոշ ժամանակաշրջանում կիրառվում էր բոլոր լեռնային այն երկրների նկատմամբ, որոնք շրջապատում էին Ասորեստանը և բնակեցված էին ոչ-սեմական ցեղերով: Շուրի-լին նույն կազմությունն ունի, ինչ որ Նաիրին: Հետևապես, պետք է ընդունել այն կարծիքը, որ Շուրի-լին և Բիահինի-լին համապատասխանում են Նաիրիին, և որ Կիշշատին ավյալ տեքստում զանց է առնված:

¹ Թիզլաբազարասարի Պրիզմայում, L. W. King, *Annals*, էջ 27, Aššyr-ը ներկայանում է որպես bešu rabū muš-te-sir KIŠŠAT ilāni:

Այս վիճելի հարցը, ինչպես և բազմաթիվ այլ հարցեր իրենց վերջնական լուծումը կատանան միայն այն օրը, երբ հողի տակ թաղված ուրարտական վավերագրերը մատչելի կդառնան գիտական աշխարհին:

Ուրարտուի պետությունը հիմնված էր Աշուրի և Խաթթիի պետություններում տիրող միևնույն ընդունման վրա: Դա ավատական միապետություն էր, որից և առաջացել էր Ուրարտուի վեհապետների «թագավոր թագավորաց» տիտղոսը: Թագավորը կոչվում էր erili, թագավոր թագավորաց՝ erili erilaue: Արքունիքի կազմակերպությունը հայտնի չէ, բայց այն չէր կարող տարբեր լինել ասուրական արքունիքի կազմակերպությունից: Հավանական է, որ ուրարտական արքունիքը նույնպես ուներ իր abaraku-ն՝ արքունիքի առաջին աստիճանավորը, սկզբում թագավորի օժանդակարարը, իր rab šaqe-ն՝ «մեծ տակառապետը», իր nagir ekalli-ն՝ «սեղանապետը», ինչպես և իր ախտապետը, քարտուղարներ, գրագիրներ և բազմաթիվ մեծ ու փոքր պաշտոնյաներ, որոնք կազմում էին թագավորական ծառայության անձնակազմը:

Թագավորն ստանձնում էր բանակի հրամանատարությունը և անձամբ առաջնորդում այն դեպի պատերազմ: Նա ուներ նաև բանակի գլխավոր հրամանատար՝ turtan. ըստ ասուրական աղբյուրների՝ նաև սրա տեղակալ: Ռուսա I-ի ժամանակ թուրքանը Կակկադանան էր¹, իսկ նրա տեղակալը՝ Ուրծինեն: Նրանք գլխավոր հրամանատարությունն ստանձնում էին այն դեպքում, երբ թագավորը արշավանքին չէր մասնակցում: Բանակը բաղկացած էր հեծելազորից և հետևակազորից: Սարգունի վկայությամբ, Դալա շրջանի մի քաղաքում էին գտնվում այն ախտները, ուր թագավորական բանակի ձիերն էին խնամում: Մուրի նահանգի բնակիչները հայտնի էին քամրի ձիեր վարժեցնելու արվեստով. մտրուկները թագավորական բանակին էին հատկացված: Ուրեմն, այդ ժամանակվա Ուրարտուն, ինչպես ավելի ուշ՝ Հայաստանը, հայտնի էր երկվարներով:

Մի քանի արշավանքների մասնակցած անձնակազմերի մասին եղած տվյալները թույլ են տալիս գաղափար կազմել զինված ուժերի վերաբերյալ: Մեծուամբ Լուշա, Կաթարգա և Ուխտերուխի թագավորների դեմ տարավ 67 մարտակառք, (...) 430 հեծելազոր և 15.760 հետևակազոր (№ 14): Նույն թագավորը Մամայի Մեիշտա քաղաքի դեմ արշավելու ժամանակ իր տրամադրության տակ ուներ 1600 մարտակառք, 9174 հեծելազոր և 2704 նետածիգ (№ 15): Սարգուրի II-ը միայն 92 մարտակառք ուներ, բայց 3600 հեծե-

¹ Ասուրական արքունիքի մի երաժիշտ կոչվում էր Կակկադանիտ: Արդյո՞ք նա ուրարտացի էր: B. Meissner, *Babylonien und Assyrien*, II, էջ 320, ըստ The Babylonian expedition of the University of Pennsylvania, հրատարակված Hilprecht-ի կողմից, XVII, I 27:

լագոր և 352.011 հետևակագոր (№ 132Ա): Հետևակագորի թիվը չափազանցված է: Հավանաբար, դա գրչական սխալի հետևանք է, եթե միայն *stibi* - «տասը հազար» բառը չունի «հազարի» նշանակություն, որը կտար 37.011: Եթե ոչ՝ կստացվեր, որ Մարդուրի II-ի բանակը, համեմատած ասորականի հետ, ավելի բազմամարդ էր, որը քիչ հավանական է: 845 թվականին Մալմանասար III-ը ոտքի հանեց հարյուր հազար մարդուց բաղկացած մի բանակ խաթթիի տասներկու թագավորների դեմ¹:

Թագավորն այն «անսահման, անթիվ» է կոչում: Մարդուրին չէր կարող երեք անգամ ավելի զինված ուժ ունենալ, քան Աշշուրի հզոր վեհապետը: 853 թվականին նույն Մալմանասարին սպառնում էր սիրիական թագավորների կոալիցիան: Նրանցից ամենագորեղները՝ Դամասկոսի և Համայի թագավորները, ունեին, առաջինը՝ 1200 մարտականք, 1200 հեծելագոր, 20 հազար հետևակագոր, իսկ երկրորդը՝ 700 մարտականք, 700 հեծելագոր և 10 հազար հետևակագոր²: Այս թվերը շատ կլորացված և համաչափ են, հազիվ թե կարելի է վստահել դրանց: Այնուհանդերձ կարելի է հետևություն անել, թե ռազմական տեսակետից ինչ էին ներկայացնում այդ ժամանակաշրջանի փոքր պետությունները: Սարգոնի օրով Կումմուխին կարող էր ռազմի հանել 1500 մարտականք, 1500 հեծելագոր, 20 հազար նետածիգ և հազար զինվոր՝ զինված վահաններով ու միզակներով³:

Մարդուրի II-ը իր տարեգրությունը եզրափակում է հետաքրքիր ծանոթությամբ՝ բանակի հանդերձանքի մասին: 121 անձ (?), 10.408 ձի, 132 ջորի, 12.321 կով և 9036 եզ = 21.357 խոշոր անասուն, 35.467 ոչխար, 2114 մետ, 1342 աղեղ, 47.970 քրիչ, 1.022.133 *kapi-še* (չափ) հացահատիկ, 111 *aqarki* (չափ) զինի, 86 *aqarki* և 7 *hirusi* (չափ) կարագ, 7070 մնաս պղինձ, 336 սարուկ և *ururda-ni* «վերակացու» (?): Չինվորական տերմինաբանության մեջ ծանոթ են միայն՝ *huradini* - «բանակ», *gutuše* - «մարտ», *giššuri* - «զինվոր», *badli* - «մետ»: Մյուս տերմինները՝ կառք, հեծելագոր, նետածիգ և այլն, արտահայտված են գաղափարաանիշերով կամ ասորերեն:

Գալով երկրի վարչությանը, պետք է զանազանել բուն Ուրարտուն և զենքի ուժով նվաճված տարածքները, այսինքն՝ Բիսինիլին և Շուրիլին:

Ինչպես տեսանք, առաջինը բաժանված էր նահանգների և կառավարվում էր կուսակալների կողմից: Նահանգ նշանակող ուրարտական բառը ծանոթ չէ: Սարգոնն ասորական տերմին *nagū-ni* է գործածում: Նահանգներ

րի առաջնորդներին ևս կոչում էին՝ ասորական ձևով՝ *bel pahati* կամ *pihati*: Կուսակալների հրամանատարության ներքո էին գտնվում փոխ-կուսակալները՝ *bel-pahati šanū*: Ամիդի ասորական կառավարիչը թագավորին ներկայացրած իր զեկուցման մեջ հայտարարում է, որ հարևան Ուրարտուի կուսակալն ու փոխ-կուսակալը Խարդա քաղաքում են¹: Մի քանի կուսակալներ ծանոթ են իրենց անուններով՝ թուրթան Կակկադանուն և իր փոխանորդը՝ Ուրծինեն, որոնք միաժամանակ կուսակալներ էին. ապա՝ Սեթինին ու Սունան: Այս երկու կուսակալները հրաման էին ստացել գնալ տեղավորվել Մուծածիրում, և Սեթինին այնտեղ գնաց «3000 հետևակագորով՝ *sabē^{pl} šēpā^{pl}*, կառավարիչներով՝ *šaknūte*, սպաներով՝ *rab qallūte*»: Սունան իր զինվորներով հետևեց նրան²:

Կուսակալները ոչ միայն օգնականներ կամ փոխ-կուսակալներ ունեին, այլ նաև ստորադաս զործակալներ՝ *šaknūte*, զուցե, գավառների առաջնորդներ և սպաներ: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ նրանք անմիջապես իրենց հրամանի ներքո բանակ ունեին: Այնպես որ նրանք միավորում էին իրենց ձեռքում քաղաքական ու զինվորական իշխանությունը: Թագավորը, անշուշտ, ուներ իր դրանիկ զունդը և զորքեր իր տրամադրության ներքո: Անհաջողության դեպքում նա զորահավաքի էր ենթարկում նահանգների ուժերը, ինչպես Սեթինիի և Սունայի պարագային, որոնց նա հանձնարարեց պաշտպանել Մուծածիրը, կամ կիմներական պատերազմի ժամանակ, ուր ինը կուսակալներ զոհվեցին:

Կային նաև աստիճանավորներ, որոնք կոչվում էին *rabūte* և իրենց տրամադրության ներքո նույնպես ունեին զինված ուժեր: Ասորական աղբյուրների համաձայն, կիմներներից կրած պարտությունից հետո թագավորին հաջողվեց խաղաղություն հաստատել, և նրա «*rabūte*-ները տուն վերադարձան»: Մեկ ուրիշ ասորեստանցի զործակալ զեկուցում էր, որ Ուրարտուի թագավորի բանակը ոչնչացավ, նրա *rabūte*-ներից երեքը զոհվեցին իրենց զորքերով՝ *emuqi*³:

Rabūte բառը *rabū*-ի հոգնակին է և նշանակում է «մեծեր» կամ, ինչպես Ռ. Պֆայֆերն է ենթադրում, «ազնվականներ»: Մակայն տերմինի սոցիալական արմատը անհայտ է մնում: Ի՞նչ էին ներկայացնում այդ «մեծերը»: Առյուծի ազնվականության մասի՞ն է խոսքը՝ արքունիքի ներկայացուցիչներ, որոնք միաժամանակ վարչության մեջ կարևոր պաշտոններ էին զբաղվում, ինչպես սովորություն էր Ասորեստանում: Այդ դեպքում ազնվական-

¹ *Զարթոն*, I, 44-45, A. Amisud et V. Scheil, *Les Inscriptions de Salmanassar II (III)*, էջ 57:

² *Տարբերություն*, II սյունակ, տող 90-95: Հուգո Վիլհելմը E. Schrader, *Keilinschriftliche Bibliothek*-ում, I, էջ 173:

³ *Fastes*, I, 116-117. Ֆ. Ե. Պայզերը E. Schrader, *Նշվ. աշխ.*, II-ում, էջ 69:

¹ R. Pfeiffer 6 - R. Harper 424.

² R. Pfeiffer 10 - R. Harper 380.

³ R. Pfeiffer 11 - R. Harper 197.

ները նույնանուն են նահանգների կուսակալներին: Սակայն Սարգոնը ճանաչում է ուրարտական թագավոր Ուրսայի «մեծերին» և նրանց պարզ կերպով տարբերում է կուսակալներին: Ուսուշ լեռան ճակատամարտից հետո Սարգոնն ասում է, որ գերի է վերցրել Ռուսայի «մեծերին»¹ ašaridūti, նրա «խորհրդակալներին» maliki, թագավորական ընտանիքի 260 անդամներին, «կուսակալներին» bel-paḫati, «ձիավորներին» pit-halli¹:

Ašaridūti-ն, որ ašaridu-ի «մեծ» հոգնակին է (ašar-ի «տեղ» և edu-ի «առաջին» բաղադրյալը, ուրեմն՝ «առաջին տեղի մարդ»), անշուշտ, rabûte-ի հոմանիշն է: Ašaridu-ն չի կարող «ծերեր» նշանակել, որովհետև Սարգոնը «ծերեր» ասելու համար šiibi բառն է գործածում, որ šebu-ի հոգնակին է: Մանայի թագավոր Ուլլուսունուն իր «մեծերի» rabāni, իր «ծերերի» šiibi, իր «խորհրդակալներին» maliki, իր «կուսակալներին» šakkanaki և իր «սպաներին» ridie հետ եկավ Սարգոնին ղեկավորեց: Վերոհիշյալները երկրի վարչական մարմիններն էին²:

Rabûti-ն գուցե նշանակում է հողատեր մեծ իշխաններ, որոնցից ոմանք գահագրկված հին հարստություններից սերած՝ պահպանել էին իրենց հայրենական ունեցվածքի մի մասը, մյուսները թագավորներից հողեր էին ստացել՝ իրրև ավատ: Ըստ վաղուց Արևելքում կար երկրին կամ թագավորին մատուցած ծառայության համար այդ ձևով վարձատրելու սովորություն: Այդ տեսակի rabûti-ները, հավանաբար, համըսանում էին ավատական ազնվականությունը և պարտավորվում էին պատերազմական վիճակում պահել որոշ թվով կովոդներ, որոնք, թագավորի առաջին խկ կանչին, պետք է մասնակցեին ռազմական գործողություններին: Վերոհիշյալ երեք rabûti-ները սույն «ազնվական», կալվածատիրական հողատերերի թվին էին պատկանում³:

Ուրարտական արձանագրությունները բուն Ուրարտուի կազմակերպության մասին ոչինչ չեն ասում: Նրանք գլխավորապես նվիրված են ռազմական գործողությունների պատմությանը և որովհետև այդպիսի գործողություններ տեղի չեն ունեցել [Բիախնայի - խմբ.] տարածքում...

(19):

¹ F. Thureau-Dangin, Une relation de la huitième campagne, 137-138 տողեր:

² Նույնը, 32-33 տողեր:

³ M. Tsereteli-ն, Revue d'Assyriologie, XXXII, 2, 1935, էջ 74, ծան. 1, կարծում է, թե № 112 A 4-PL. XXVII, 7-8 արձանագրության անհասկանալի արտահայտությունները AMELU ip-ri-u-na-ni-e-di-ni, MATU Bi-a-i-na-ni-e-di-ni, նշանակում են «Բիախնա երկրի ազնվականության (= իշխանների ամբողջության) համար»:

Իրոք, Լուշան, Կաթարզան և Ուխտերուխին, որոնք սեփական տիրույթներ ունեին, որակված են իրրև Էթուխինի (№ 13) թագավորներ, այսինքն՝ նրանք պատկանում էին Էթուխ ընտանիքին, որի գլխավոր տիրույթ Էթուխի վրա որպես թագավոր իշխում էր ոմն Ուդուրի: Նրա տիրույթն իր անունով կոչվում էր Ուդուրի-Էթուխին:

Ըստ № 112A արձանագրության՝ Խալդին հպատակեցրեց Էթուխին: Արգիշտի թագավորը հետևեց աստծուն ու գրավեց ոչ թե Էթուխին, ինչպես պետք էր սպասել, այլ Դիաուեխինին, Լուշան, Կաթարզան (իմա՝ այդ անձնավորությունների երկրները), Էրիախինին, Գուլութախիսայի և Ուխտերուխիի «երկրները»: Եթե տեքստը ճիշտ է, պետք է եզրակացնել, որ հպատակեցված այդ բոլոր երկրները կազմում էին Էթուխիի մասերը, ուրեմն՝ ոչ միայն Լուշան, Կաթարզան և Ուխտերուխին, այլ նաև Դիաուեխին, Էրիախին և Գուլութախիսան:

№ 111, 2 համարում՝ Խալդին ելնում է Աբիլիանիսի, Կութուզանի և Ուլտուզայի դեմ: Արգիշտին մեկնում, գրավում է Էթուխին և բռնում է նրա թագավոր Ուդուրի Էթուխինին: Հետևաբար, այդ երեք առաջնորդները սերում էին նույնպես Էթուխից, և Էթուխին ու Էթուխինին նույն երկիրն է:

Էթուխին մեզ ներկայանում է որպես մի հզոր և բազմաճյուղ ցեղ, որի ճյուղերից ամենագլխավորը Դիաուեխին էր: Մենուայի ժամանակ միայն Դիաուեխինում երեք թագավորներ կային՝ Ութուպուրշին, Բալթուլիսին և Խալդիուլիսին (№ 27): Մեծ թվով ուրիշ հայրանվանական ծագումով շատ անուններ կան, ինչպես՝ Իրիկուախի, Վելիքուխի, Սելուիսին, Կուարլիսին և այլն, որոնք թվարկված են վերը հաղորդված ցուցակում: XII դարում Թիզլաթալասար II-ի կողմից նվաճված երկրների մեծ մասը հայրանվանական անուններ ունեին՝ Ունգամուսին, Պիլակինին, Ատուրգինի, Կուլիբարգինի, Արաենի, Դայաենի և այլն: Ընդհակառակն, մնան անվանումը հատուկ չէր կամ օտար էր բուն Ուրարտուին. նրա նահանգները կոչվում էին՝ Չարանդա, Բարի, Սանգիբուտու, Դալա և այլն: Թվում է, թե միայն Բիախնի-ին է ըստ էության հայրանվանական անուն. Բիա-ն կամ Բիախ-ն, հավանական է, այն հարստության հիմնադիրներից մեկն էր, ինչպես, Էթու-ն, որն իշխում էր Վանի շրջանում՝ թագավորության հիմնադրումից առաջ:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի մեծագույն մասը կտոր-կտոր բաժանված էր թագմաթիվ առաջնորդների միջև, որոնցից ամենահզորներն իրենց թագավորի տիրույթն էին վերագրում:

Դա զայիս է ասելու, որ Արամեից առաջ այնտեղ իշխող կարգը շարունակում էր տիրող հանդիսանալ: Այն հանգամանքը, որ այդ արքայիկներին

միավորելու գործը վիճակվեց Վանա թագավորներին, պետք է դիտվի որպես բնական հետևանք մի զարգացման, որը բուն Ուրարտուում հանգեցրել էր միապետության առաջացմանը: Այդ արքայիկներն ավելի շուտ ցեղերի առաջնորդներ էին, ինչպես երևում է նրանց անհատապաշտ գործելակերպից, և այն պարագայից, որ նրանք չկարողացան համաձայնության գալ՝ նվաճողների դեմ ընդհանուր ճակատ կազմելու համար: Համերաշխության բացակայությունը բնութագրական է ներքին պայքարով ալեկոծվող այդ միջավայրի համար: Ուրարտական թագավորները, օգտվելով այդ ցեղերի անկազմակերպությունից և հարձակվելով նրանցից յուրաքանչյուրի վրա առանձին, հաղթանակ տարան: Նրանց գործածած միջոցները ծանր և խիստ էին: Ուրարտուի թագավորները ավերեցին, հրկիզեցին գյուղերը, բնակչությանը գերի վարեցին, քչեցին-տարան ամասունները և այսպիսով քայքայեցին այդ ցեղերի տնտեսությունն ու ջախջախեցին նրանց դիմադրական ուժը: Արգիշտին ու Սարգուրին իրենց թագավորության ընթացքում տարագրել են կես միլիոնից ավելի մարդ և քչել այդ երկրների ամասունների մեծ մասը:

Հաղթված թագավորին նախ պարտադրում էին մեթե «հարկ», ապա նրան դարձնում էին «ստրուկ», անշուշտ ստորակայի իմաստով (δοῦλος կամ հայերեն՝ «ծառայ»), ի վերջո նրան վտարում էին և երկիրը գրավում:

Մեծուան հարկատու դարձրեց Լուխունի (Յուլկերտ) քաղաքը և Դիաուեխիի թագավոր Ուրուպուրշիին, քայց գահընկեց արեց Դիաուեխիի երկու ուրիշ թագավորների՝ Բաթուլխիին և Խալդիրիուլխիին (№ 27): Ակներևարար, Ուրուպուրշին չէր հարգում իր հանձնառությունները, որովհետև Արգիշտին հարկադրված եղավ նրան հպատակեցնել և ստիպել հարկ վճարելու (№ 112Բ):

Նույն ձևով վարվեցին Իզանի երկրի նկատմամբ (№ 112Բ): Սարգուրին նրա թագավոր Կապուրիից խլեց 35 բերդ և 200 գյուղ, անշուշտ, իր պարտավորությունների կատարման մեջ նրա թույլ տված անփութության համար (№ 132Ա): Արիլիանիի թագավոր Մուրունին, ինչպես նաև Վելիքուխիի թագավոր Նիդունին Սարգուրիի կողմից պարտադրվեցին հարկ վճարելու: Սարգուրիի որդի Ռուսան գեների դիմեց Վելիքուխիի դեմ՝ նրան հիշեցնելու համար իր պարտավորությունը, վտարեց նրան և երկիրն ստրկացրեց (№ 147Ա): Նույն թագավորը Սևանի շրջանում 23 երկիր նվաճեց, նրանց «սուր դարձրեց, հարկ վճարել պարտադրելու հետ միասին» (№ 147):

Մեծուան նվաճեց Ուրմենիուխիի երկիրը (Տարուն)՝ 400 գյուղերով և ստրկացրեց այն, *buraštuli* (№ 32):

Սարգուրին հարկատու և «սուր դարձրեց Պունիալխի ցեղը (№ 132): Անքսիայի զաղափարն արտահայտված էր հետևյալ բառերով՝ *ebani ebaniukiadi abilidu-bi* «ավելացրի երկիրն իմ երկրին»: Արգիշտին գրավեց երեք երկիր՝ Կալին (կամ Կադան), Աշկալաշին և Շաշիլու քաղաքի տարածքը (№ 112Բ): Այս քաղաքը Մեծուան հայտարարել էր Դիաուեխիի թագավորական քաղաք: Արգիշտին այնտեղ երեք կառավարիչ է նշանակում՝ Շաշկին Արդարակիխի, Բաթուլխի և Կաբիլուխի: Էրիախին միացվեց Սարգուրի II-ի կողմից, ինչպես նաև Պուլուադին և Լուխարունին (№ 132Ա):

Երկրին հարկ պարտադրելը նույն բանը չէր, ինչ որ *buraštu* - «սուր դարձնելը» ստրկացնելը, այլ կերպ ասած՝ ստորակա դարձնելը: Ստորակա երկրները հարկ էին վճարում, քայց հարկ վճարելը դեռ չէր նշանակում ստորակա դառնալ: Կունմուխիի (Կունմագենեի) թագավոր Կուշտաշպիլիին, Ուրարտուի առջև վարկաբեկված լինելու հետևանքով, Սարգուրին հարկատու է դարձնում, այսինքն՝ ռազմատուգանք է նշանակում, առանց գերության կամ ստրկացման մասին խոսելու: Կունմուխիի անկախությունը չէր վերացվել (№ 132Ա): Մելիտենեի թագավոր Խիլարուադուն պատժվեց Սարգուրիի կողմից, որը նրանից խլեց ինն ամբոց և ստիպեց հարկ վճարելու: Այստեղ նույնպես բոլորովին *buraštu*-ի հարց չի ծագում (№ 133):

Մեթե հարկը, որ Ուրարտու պետությունն ստանում էր հպատակ կամ իրեն միացրած շրջաններից, բնական բերքից վճարվող տուրք էր: Արշավանքների ընթացքում ստացված ավարը գալիս է այդ հաստատելու: Այդ երկրների միակ հարստությունը խոշոր ու մանր եղջերավոր անասուններն էին, դա ապացուցում է, որ անասնապահությունը գերակշռող էր, մի հանգամանք, որը բնորոշում է այդ ցեղերի միջավայրը: Այդքան երկրների մեջ միայն Դիաուեխին՝ «հզոր պետությունն» էր, որ ազնիվ մետաղներ՝ ոսկի, արծաթ և պղինձ մատուցելու միջոցներ ուներ (№ 113Բ): Պատահում էր, որ չվճարված հարկի փոխարեն գաղթեցվում էր ժողովուրդը, ինչպես վարվեց Ռուսան Սևանի երկրների նկատմամբ:

Երկար պայքարից հետո ուրարտական թագավորներին հաջողվեց տեղ դառնալ Հայկական լեռնաշխարհին և այնտեղ հաստատել իրենց վարչական համակարգը: Ռուսա I-ի օրով գրավումն արդեն կատարված փաստ էր, թեպետ միացված շրջանների վարչական բաժանումների մասին տվյալներ գոյություն չունեն:

Ուրարտուն բեռկրատիկ (դիցապետական) միապետություն էր: Ամենօրյա կյանքը սերտորեն կապված էր երկմային էակների հետ, որոնց երկրպագում էին: Ավելի լավ հասկանալու համար բազավորների գործունեությունը և Ուրարտուի մշակույթի բնույթը պետք է նախապես ծանոթանալ երկրի դիցարանին (20):

Այդ հեռավոր դարաշրջանում կրոնական հավատալիքներն իշխում էին ամենուրեք՝ և՛ Միջագետքում, և՛ Փոքր Ասիայում, մարդկային մտքի բոլոր շարժումները կարգավորում էին նրանք: Խեթական դիցարանում հազար աստված կար: Ուրարտական դիցարանը այդ աստիճան լեցուն չէր, բայց, այնուհանդերձ, բավական հոծ էր բնակեցված: Իշպուհինին և Մեմուան մեզ թողել են մի արժեքավոր վավերագիր, որը ներկայացնում է յուրաքանչյուր աստծուն մատուցվող զոհաբերությունների կանոնը, որից օգտվում էին ութսուն աստվածներ, իսկ դա բոլորը չէ, ոմանց անունը ցուցակում չկա:

Դիցարանի անդամները միևնույն կարևորությունն ու միևնույն ծագումը չունեն: Առաջին տեղը բռնում էին երեք աստվածներ, որոնք կազմում էին մի տեսակ երրորդություն՝ Խալդի, Թեշեբա և Արդինի: Խալդի աստվածն ուրարտացիների համար նույնքան կարևորություն ուներ, որքան Աշշուր աստվածը ասորեստանցիների համար. նա գերագույն աստվածն էր, բոլոր աստվածների առաջնորդը: Հետաքրքրական է, որ Կելիշինի երկրեզվյան արձանագրության մեջ այս աստծու անունը Արդի է գրված:

Թեշեբան համապատասխանում է ասուրական Ադադին, իսկ Արդինին՝ Շամաշին. առաջինը, ուրեմն, փոթորկի աստվածն է, իսկ երկրորդը՝ արևի (21): Սա բխում է այն փաստից, որ ուրարտացիները գործածում էին Ադադի և Շամաշի գաղափարանիչները՝ համապատասխանաբար Թեշեբային ու Արդինին նույն տալու համար: Թեշեբայի անվան հայտնաբերմամբ պարտական ենք Մեմուայի մի արձանագրությանը՝ երեք օրինակից, № 87 Ա, Բ, Գ: Դրանցից երկուսում՝ Ա և Գ-ում, անունը քարքնված է, ինչպես ուրիշ տեղերում, Ադադի գաղափարանիչի տակ, բայց երրորդում՝ Բ-ում, գրիչը, բարեբախտաբար, գաղափարանիչը տալիս է իր հնչյունական արժեքով՝ Te-e-še-ba-še: Նախընտրելի է կարդալ Teišeba կամ Tešeba և ոչ թե՛ Teišba, ձև, որն ընդունվել է Արչիբալդ Սեյսի կողմից: Tešeba-ն ավելի մոտ է խուրրիական Թեշուպին, որի ուրարտական ձևն է:

Արդինիի անունը միշտ նշված է Շամաշի գաղափարանիչով, միայն մի տեղ գրված է հնչյունականորեն: № 27 և № 133 տեքստերում անեծքի բանաձևը գրված է միևնույն տերմիններով, միակ բացառությամբ՝ № 27,

34-րդ տողի. ^{im}Šamaš-ni-ի փոխարեն № 133, 39-րդ տողում կարդացվում է Ardini-ni: Հետևությունը պարզ է ու առավել ևս հաստատվում է այն իրողությամբ, որ Մուծածիրը ուրարտերեն կոչվում էր Արդինի, անշուշտ, այս աստծուն նվիրված սրբավայրի պատճառով:

Խալդին, Թեշեբան և Արդինին իշխում էին պանթեոնում: Նրանք իրենց գործությամբ և ստացած պատիվներով գերազանցում էին մյուս բոլոր աստվածներին: Նրանց անունները շատ հաճախ են հիշվում տեքստերում. անեծքները միշտ նրանց անուններով են կատարվում: Մեների դռան մատակների կանոնադրությունը նրանց բացառիկ արտոնյալ դիրք է վերապահում: Մենք վերը ներկայացրել ենք այդ կանոնադրությունը (№ 18), ուր քվարկված են բոլոր աստվածները, և ցույց է տրված զոհաբերությունների այն բաժինը, որ հասնում էր յուրաքանչյուրին: Այնտեղ կարելի է տեսնել, որ Խալդին ստանում էր 6 ձի, 17 եզ և 34 ոչխար, Թեշեբան՝ 6 եզ ու 12 ոչխար, Արդինին՝ 4 եզ և 8 ոչխար, մինչդեռ մյուս աստվածները սակավ են հարգված, նրանցից շատերը միայն մեկ եզ և երկու ոչխար են ստանում:

Խալդին երրորդության մեջ առաջին տեղն իրեն է վերապահում: Նրա պաշտամունքն այնքան ժողովրդական էր, որ կարելի է նրան կոչել իսկական, բուն ուրարտական աստված: Նշված Կանոնադրության մեջ Խալդիի անունը տասնինն անգամ հիշատակվում է զամազան առումներով: Բացի Haldie nipsidi՝ aali-ից, 6 ուլ և Haldie urpue, 17 եզ, 34 ոչխար, մատաղ են մատուցում հետևյալներին.

^dHaldina-ue BE-LI^{PL}

^dHaldini iniriāšie

^dHaldini alsuišie

^dHaldini dirušie

^dHaldina-ue BABI

^dHaldini(ni) arnie

^dHaldini niribie

^dHaldini susini

^dHaldini dašie

ILANI ^dHaldini ALI-ni

^dHaldina-ue ^{ameš}A-SI^{PL}

^dHaldini ušmašie

Մրանցից յուրաքանչյուրին հասնում է մեկ եզ և երկու ոչխար, բացի ^dHaldina-ue ^{ameš}A-SI^{PL}-ից, որն ստանում էր երկու եզ և չորս ոչխար: Ուրեմն, վերջինը համեմատաբար ավելի կարևոր և արտոնյալ է: Ենթադրվում է, որ «խալդյան բանակի» մասին է խոսքը, բայց քանի որ ^dHaldina-ue BE-LI նշանակում է «խալդյան զենքեր», հնարավոր է, որ A-SI-ն Խալդիի քուրմերը լինեն:

^dHaldini bedišani-ն, ուրիշ լեզուների աստվածների հետ միասին, երեք եզ և 30 ոչխար մատաղ է ստանում Իշպուհինիի և Մեմուայի կյանքի համար:

Իշպուիմին և Մեմուան պարտեզ և խաղողի այգի են տնկել, իսկ Խալդին երեքական ոչխար է պահանջում երեք դեպքերում՝ երբ պարտեզը *guduli* լինի, խաղողի այգին *tanuli* լինի և *mešuli* ժամանակ¹: Ուլերի գոհաբերումը անվանվում է *nipsidi'aali* կամ *nipsiduli*, իսկ եզներինը և ոչխարներինը՝ *urpue* կամ *urpuali*: Ի՞նչ նրբերանգ կա այս երկու տեսակ գոհաբերությունների միջև: Անմիջական գոհաբերության կամ նվիրաբերման մասի՞ն է խոսքը: Հնարավոր չէ գուշակել²: Խալդին մատաղ է ստանում իր զանազան հատկությունների համար՝ *iniriaše*, *alsuiše*, *diruše*, *daše*, *ušmaše*, որոնց ճշմարիտ իմաստը հայտնի չէ, բացի *alsuiše* «մեծություն», *ušmaše* «շնորհ», *iniriaše* «թագավորություն» (?)³: Չոհաբերությունը սահմանված է նաև Խալդիի *susi*-ին «դռնախորշին» և Խալդիի *arni*-ին (?)⁴, ինչպես և Խալդիի *niribi*-ին⁵: *Arni*-ի հարաբերությունը *Arni* աստծու հետ (Կանոնադրության 12-րդ տող) վիճելի է մնում. նույն վիճակն է նաև *Ardi* աստծու (23-րդ տող) և *Ardi-ni*-ի վերաբերյալ:

Խալդին, որպես աստվածների առաջնորդ, իր սրբավայրերն ուներ պետության բազմաթիվ կետերում: Արժանագրություններում շեշտվում է, որ այսինչ քաղաքը կամ այնինչ դուռը հիմնադրվեցին Խալդիի անունով⁶: Այդ կարգի հիմնադրումների մեջ նրա պաշտամունքը, անշուշտ, ավելի ջերմեռանդորեն էր կատարվում: Դրա պատճառով Կանոնադրությունը հատուկ տեղ էր վերապահում նրանց՝ *Haldinini ALI-ni*, *Haldinaue BABI* - նկատի ունեն, անտարակույս, մնան հիմնադրություններ:

¹ Ենթադրում են բերքատվության երեք պահերը. *mešuli meše*-ից («նվիրատվություն», «տուրք») հավանաբար նշանակում է այն պահը, երբ այգին միրգ է տալիս:

² Եթե *aali*-ն անջատ բայ է, հավանաբար, նա համարժեք է *urpue*-ին, փոխանակ *urpue aali*: TAK գաղափարահիշող (տող 30) ունի ուրարտական իր համագորը՝ *urpuali* - Կանոնադրության երկրորդ պատճենում (տող 91-92), որ կարող է թելադրել *nipsidiali* ընթերցումը: № 16-ում Մեմուան, որ կառուցել էր *susi* (= BAB մեր Կանոնադրության մեջ), մեկ ուլ է նշանակում Խալդիի *nipsidulini* և մեկ եզ՝ Խալդիի *urpuali*: Երկու այս ձևերը գերունդիվներ են՝ հայցական հոլովով, համաձայնեցված խնդիրների՝ ուլի և եզան հետ:

³ Դրանք գոյականներ են՝ *še*-ով, տրական հոլովով՝ *iniriaše*, *iniriaše* և այլն, որոնք Խալդիի հատկություններն են ցույց տալիս: *Daše*-ի և *diruše*-ի իմաստը հայտնի չէ: *Iniriaše* հանդիպում է № 112U 4-ում:

ա) *Haldise masi(ni)*.

բ) ILU *iniriaše ušwai*, ոչ ILU *iniriaše*, որովհետև նույն բառը քիչ հետո երևան է գալիս առանց ILU-ի, տող 11 - *esidini iniriaše...* և քվում է, թե ուրարտական «աստված» բառն է՝ ըստ Մ. Շերեթի:

⁴ Ըստ Մ. Շերեթի *arni* նշանակում է «շնորհ», *bedi-ni*՝ «արքայ» և *niribi*՝ «զանձ»:

⁵ № 56, 66, 70. *Haldii ALU timi* (ոչ թե ILU, ինչպես Կ. Լեման-Հաուպտն է ենթադրում):

⁶ *Haldini ALI-ni* քերականորեն վատ է բացատրվում. սպասելի էր *Haldinaue*, ինչպես *Haldinaue BABI*:

Թեյշեբան նույնպես իր դուռն ուներ Էրիդիանի կամ Իրդիա քաղաքում՝ *Tešeba BAB Eridiani*: Արդիանի աստվածը նույնպես իր դուռն ուներ Ուլ-շինի քաղաքում՝ *Ardini BAB Uišni-ni* կամ *Uišini*:

Կային նաև տեղական աստվածություններ: Թվում է, թե ամեն քաղաք, ամեն շրջան ուներ իր տեղական կամ նախընտրյալ աստվածը: *Quera*-ն ավելի շուտ Արծվաբերդի աստվածն էր, *Huli*-ն՝ Գուրգակի աստվածը, *Elipri*-ն՝ Արճեշի աստվածը, Արծունիունի կամ Արծուն քաղաքը (= Բերկրի) ուներ իր աստվածը՝ *Aršuniunini ILU*, Մուիանի քաղաքը իր աստվածը՝ *Šuininaue ILU*¹:

Դիցարանի մի քանի անդամներ անջատ խումբ են կազմում: Դրանք նվաճված շրջանների աստվածներն են, որոնց Մեերի դստեր Կանոնադրությունը կոչում է *ILANI LIŠANI* «օտար լեզուների աստվածներ»: Ավելի ճիշտ կլիներ ասել օտար, բայց նվաճված և պետությանը միացված երկրների աստվածներ: Օտար աստվածներին ընդունելով ազգային դիցարանը՝ հաստատվում և կնքվում էին կատարված բռնանվաճումները: Այդ խմբին են պատկանում՝ *Ardininaue ILU*, *Qumenuaue ILU*, *Tešeba BAB Eridiani*, *Ardini BAB Uišni-ni*, *Uainaue BAB Niši...ni*, *Babanaue (ILU)*, *Alganinaue (ILU)*²: Առաջինը՝ Արդիանի քաղաքի աստվածը՝ Մուծածիրի աստվածն է, նրա մեծ սրբավայրն արժանանում էր Ուրարտուի առաջնորդների հատուկ շնորհներին: Կունենու քաղաքը, Բաբանի երկիրը մտնում են Մեմուայի նվաճումների մեջ: Ալգանի երկիրը և Ուլշինի քաղաքը մեզ ծանոթ են Արգիշտիի արշավանքների պատմությունից³: Հեռուաբար, Ալգանին և Ուլշինին նվաճվել են Մեմուայի կողմից:

Էրիդիայում արդեն ճանաչել են ասուրական վավերագրերի Իրիդի քաղաքը՝ Արևմտյան Տիգրիսի վրա գտնվող այսօրվա Ռեդվանը⁴: *Nalaini*-ն պիտի նույնպես օտար աստված լիներ, եթե իր անունն ստացել է

¹ *Šuini*, որտեղից և *Šuini*-(i)ni՝ «Մուիանական»: *Šue* (իճ), *Su(e)ni* (լճի քաղաք): Պե՞տք է այն տարբերել *Šiuini*-ից՝ № 85, Կարախանում, լճի ափին: *Aršuni* կամ *Aršuni* (և Բագրևանդում Արեմի գյուղ) քվում է, թե մտահնում է *Aršibedini*-ին և *Aršibini*-ին, № 55:

² № 19: *Babani* գուրի (լեռնային) երկիր է նշանակում: *Baba*-ից (լեռ) և խուրդիական *papa*-ից (հյուսիս)՝ լեռների ծովեզրի կողմ: Իսկապես, այդ անունով մի շարք երկրներ կային Մանայում, Դիաուեիսիում և Արգանենի շրջանում:

³ № 111, 8 և 9: *Algani*-ն գտնվում էր Ասորեստանի սահմանի վրա, որը թույլ է տալիս նույնացնել այն հայ հեղինակների Ալկիի հետ (ժամանակակից Էլկին): *Ušini*-ն Ուրմիա լճի մոտի Ուշունն է:

⁴ *E. Forrer, Provinz.*, էջ 30: Ըստ այս գիտնականի՝ Կանոնադրության Դիրաունեն նույնանուն է ասորիների Դիրրայի հետ՝ Ռեդվանի շրջանում, իսկ *ILANI atqananaue*-ն *Uatqan* կամ *Atqan* քաղաքի հետ (հիշատակված Աշտրուսիսիա III-ի կողմից)՝ Պասատե լեռներում (էջ 37): Հավանական չէ:

աստրական վավերագրերում հիշատակված՝ Արգանենում գտնվող Նալ լեռից՝ «Նալական աստված»։ Ո՞վ էր նա և ո՞վ էր ¹ Tušpaninaue ILU կամ - ըստ երկրորդ պատճենի ավելի որոշակի գրության՝ ² Tušpanaue ILU - տուշ-պացիների (քաղաքի) աստված։ Հայտնի չէ։ Մայրաքաղաքն իր սեփական աստվածն ունե՞ր։ Կա և մեկ ուրիշ աստված, որը կոչվում է Tušpuae, որի հարաբերությունը Տուշպայի հետ անորոշ է մնում։

Ինչպես Կանոնադրության երկրորդ պատճենն է ցույց տալիս, Լուսին աստծու՝ SIN-ի անունը Šielardi էր։ Գայթակղիչ է ածանցել այդ բառը šieia («կին կամ քույր») և ardi («արև») բառերից։ Արևելքում հին ժամանակներից մինչև մեր օրերը լուսինը նկատվում է որպես արևի քույրը։

³Sardi-ն հիշեցնում է Սարդուրի, Սարդաուրի անունը։ Այս մտացույժ տարօրինակ չի թվա, եթե նկատի առնենք Խալդի, Խալդիրի (Խալդիրի-ուլիսի մեջ, № 27)։ Սարդաուրի քաղաքն իր անունը պարտական է եթե ոչ Սարդուրիին, զո՞նք Սարդի աստծուն։

⁴Šebetu և Շերեթերի(ա) քաղաքը, № 31, նույն հարաբերության մեջ են, ինչ-որ Սարդին ու Սարդաուրին (այսօրվա Սարդևանը)։ Մենք առիթ կունենանք անդրադառնալու այս -ri վերջածանցին։ ⁵Šinuiardi-ն, որի անունը կազմված է ինչպես Շիելարդին, զուցե թաքցնում է Ծիմա-լիբի անձնանվան ծագումը (№ 129Դ և № 135), եթե այս վերջին տեքստում այն չպետք է կարդալ ավելի շուտ Ծիմալիբի։

Կանոնադրությունից դուրս հայտնի են ևս երկու աստվածներ՝ Huli (№ 56) և Aniqu (№ 151)։ Չարմանալի է, որ ուրարտական պանթեոնը մնացել է այնպիսին, ինչպիսին որ կար Իշպուինիի և Մենուայի օրով, չի հարստացել նորամուտ աստվածների ընդունմամբ։ Արգիշտին, Սարդուրի II-ը և Ռուսան իրենց պետության հյուսիսում մեծ նվաճումներ կատարեցին, և սպասվում էր գրավված երկրների աստվածներ տեսնել ուրարտական միջավայրում։ Մակայն այդ չկա։ Գուցե այն պատճառով, որ այդ երկրները բավական հետամնաց էին, ինչպես մենք վերևում հիշեցինք, և ուրարտացիները նրանց բարբարոս աստվածներին արժանի չեն համարել այն պատվին, որին արժանի էին քաղաքակիրթ պետությունների աստվածները։ Ուրարտական թագավորները, ընդհակառակը, աշխատում էին այդ բարբարոսներին պարտադրել իրենց պետության աստվածները։ Այսպես, Ռուսան Սևանա լճի 23 իշխանությունները գրավելուց հետո մի տաճար կառուցեց՝ այնտեղ հաստատելու համար Թեշեբա աստծուն։

Պետք է նկատի ունենալ, որ ուրարտական վավերագրերը չեն հիշատակում ոչ մի իգական աստվածություն։ Դա առավել զարմանալի է այնու, որ Խալդի աստվածը, որը Մուծածիր երկրում նույնպես հարգված էր,

այնտեղ ամուսին ուներ, որը Բագրարաու էր կոչվում։ Այդ աստվածուհին նույնիսկ մի մատանի ուներ, որը ծառայում էր իր հրամանները կնքելու կամ վավերացնելու համար, ինչպես Սարգոնն է նշում¹։ Խալդին Ուրարտում ամուսին ունե՞ր արդյոք և ինչպե՞ս էր կոչվում նա։ Գուցե Բագրարաուն իրանական ցեղերի ազդեցությամբ արված նորամուծություն էր, եթե, ինչպես ենթադրվում է, նրա անունը ծագում է իրանական bag «աստված»-ից։ Այսուհանդերձ, Վանում գտնված մի ոսկյա մեդալիոն կա, որը երկու կամացի կերպարանք է ներկայացնում, ավելի շուտ աստվածուհի և թագուհի, քան թագուհի և սպասուհի։

Գոյություն չունեն ավյալներ կրոնական զգացումների և այն ձևերի մասին, որոնցով դրանք արտահայտվում էին։ Թվում է, թե կրոնական միաբը հիմնված էր երկյուղի վրա՝ աստծու բարկության առջև։ Սարգոնը պարծեցնում է, որ «աստվածությունից վախենում է», որ «երկյուղած վերաբերմունք» է ցուցաբերում աստվածների խոսքի նկատմամբ, մինչդեռ իր հակառակորդ ուրարտացի Ուրասային կամ Ռուսային Ասորեստանի թագավորն անբաստանում է, որ նա «լեռնցի է, մարդասպանների ցեղից է», իր կրոնական պարտականությունների նկատմամբ անգիտակից է²։

Աստվածների բարկությունից խուսափելու և նրանց բարեհաճ տրամադրությունը շահելու համար պետք է աղոթել, նվիրատվություններ անել և զոհաբերություններ կատարել։ Գինով զոհաբերությունը անժանոթ չէր։ Սարգոնն ասում է, որ Մուծածիրի տաճարում բրոնզե մի մեծ անոթ կար, որն ուրարտական թագավորները զոհաբերության զինով էին լցնում զենույնների ժամանակ³։

Ասորերենը բազմաթիվ տերմիններ է պարունակում տարբեր տեսակի աղոթքների ու զոհաբերությունների համար։ Ուրարտում մեզ ծանոթ են հեռակալ բառերը՝ hutia «աղոթել», urpu «զոհաբերել», nipsidu «այծեր զոհաբերել», ևա և hahu, ashu «մատաղ անել» և, զուցե, niqa (աստրական niqa բառի փոխառություն) «զոհ կամ մատաղ անել»։ Այս բառերի ճիշտ իմաստը դեռևս վերջնականապես չի ճշտված։ Չոհվելիք անասուններն էին՝ pahini (կամ pahani) «եզ», šuše «ուխար» և ուլ, որի ուրարտական անունը հայտնի չէ, որովհետև միշտ արտահայտվել է URISU ŠIHURU գաղափարանիշերով, որ նշանակում է «փոքր այծ»։ Ասորեստանցիները սովորություն ունեին զոհելու ոչ միայն խոշոր ու մանր անասուններ, այլև ամեն տեսակ

¹ F. Thureau-Dangin, Une relation de la huitième campagne de Sargon, էջ 61 (տոմ 385)։

² Նույնը, էջ 17-21, տողեր 92-93, 113, 121։

³ F. Thureau-Dangin, Une relation de la huitième campagne de Sargon, էջ 63 (տոմ 357-398)։

քոչումներ: Նվիրում էին նաև հաց, գինի և զանազան սննդեղեն, աստվածները մարդկանց պես կարիք ունեին կազդուրվելու:

Ուրարտացիներն աստվածների նկատմամբ, անշուշտ, կիսում էին այդ տեսակետը, բայց նրանց վավերագրերում այդ մասին ուղղակի ակնարկ չենք գտնում: Թեպետ, № 161 պակասավոր արձանագրության մեջ կարդացվում է ⁴Haldi AKALU-ն, ⁴Haldina BABU AKALU-ն: Արդ, akalu նշանակում է «ուտել»: Մի ուրիշ արձանագրություն (№ 56) պատվիրում է qarmehi-ով (հավանական է՝ մի չափ) գինի մատուցել Խուլի և Արուրանի աստվածներին: Եթե այդ տեղերի իմաստը դա է, ուրեմն պետք է ընդունել, որ ուրարտական աստվածները կերուխում էին անում, ինչպես նրանց ընկերները՝ Ասորեստանում:

Մեծ զոհաբերությունները կատարվում էին ամիսը մեկ անգամ՝ նորալուսին, ինչպես պատվիրում է Մեերի դամ Կանոնադրությունը: Ասորեստանցիները մատաղներ և զոհաբերություններ էին կատարում ոչ միայն նորալուսին, այլև լուսնի երկու այլ փուլերին: Ուրարտացիները սույն կետում ասորեստանցիների հետևորդները չէին: Նորալուսնի օրը միայն զենելու սովորությունը ավելի հին է ու հատուկ շումերական աշխարհին:

Քրմության մասին տեղեկություն չկա, ոչ էլ կարելի է իմանալ, թե թագավորն ինքն իրեն նկատում էր որպես Խալդիի առաջին քուրմը, Ասորեստանի թագավորների նման, որոնք պարծենում էին Աշշուրի մեծ šangu «քուրմ» լինելու համար: Ծանոթ վավերագրերում ուրարտացի թագավորները քրմի տիտղոս չեն կրում:

Այս «լեռնցիները», գուցե, այնքան ջերմեռանդ չէին, որքան հավակնում էին լինել Ասորեստանի թագավորները, այնուհանդերձ, նրանք բավականաչափ տոգորված էին կրոնական ոգով, որ հատուկ էր իրենց ժամանակաշրջանին: Ինչ որ ձեռնարկում են, նրանք անում են Խալդիի անունով և դնում Խալդիի պաշտպանության ներքո: Նույնիսկ պատերազմը թագավորը չէ, որ սկսում էր, այլ Խալդի աստվածը, որ ամօքն էր գնում, հարկադրում թշնամուն անձնատուր լինել և ապա թագավորին առաջնորդում էր այնտեղ հաղթանակի պտուղները բաղելու: Այս առումով շատ հետաքրքիր է, որ բոլոր ռազմական նկարագրությունների մեջ հանդիպում ենք նույնատիպ մասնադասությունների՝ ⁴Haldini uštabi «Խալդին մեկնեց», masini-(e) giššuri-(e) karuni «նրա ուժերը հաղթեցին». հետևում է՝ թշնամի երկիրը կամ թագավորը. Haldi kuruni «Խալդին հզոր է». ⁴Haldini giššuri(i) kuruni «Խալդյան զինվորն ուժեղ է». ⁴Haldinini ušmašini uštabi (Menuani) «խալդյան հզորությամբ մեկնեց» Մենուան կամ այնինչ թագավորը. ⁴Haldini uluštabi «Խալդին գնաց առջևից»:

Ռազմական հաջողությունները, ուրեմն, Խալդին էին վերագրվում, նրան նկատում էին պատերազմի իսկական ներշնչող և անսխալական առաջնորդ, որ տանում էր դեպի հաղթանակ:

Խաղաղության ժամանակվա գործունեությունը նույնպես կախում ուներ Խալդիից: Ինչ որ անում էին, ամբողջ աշխատանքները, որ կատարում էին՝ քաղաքների հիմնադրում, պալատների, տաճարների, բերդերի կառուցում, ջրանցքների բացում՝ այդ ամենը ձեռնարկվում ու ավարտվում էր Խալդիի օգնությամբ, և նրանց մեծ մասը նրա համար էին կամ նրան էին նվիրված: Այդ կարգի արձանագրություններն սկսվում են համարյա միշտ հետևյալ բառերով՝ ⁴Haldi eurie «Խալդի աստծուն, տիրոջը»:

Մշտապես աստծուն դիմելը եթե գրական անշունչ բանաձև չէր, անշուշտ արտահայտում էր դիցապետական (թեոկրատիկ) զգացում: Ուրարտուի թագավորների բարեպաշտությունը հաստատվում է սրբավայրերի հանդեպ ունեցած նրանց առատաձեռնությամբ: Խալդիի և նրա կնոջ՝ Բագբարտուի տաճարը լցված էր զանձեռով, Ուրարտուի թագավորների նվերներով. մի քանի տասնյակ տաղանդ ոսկի, 162 տաղանդ արծաթ, 3600 տաղանդ անգուտ պղինձ, 6 ոսկյա վահան, որ կշռում էր 5 տաղանդ ոսկի. տաճարի դուռը շրջանակված էր երկու տաղանդ ոսկով, և նրա փականքը, սողնակը, բանալիները, միզերը ոսկուց էին. կար 67 արծաթե լազան, 96 արծաթե միզակ, 12 արծաթե վահան, 33 արծաթե կառք, 393 արծաթե բաժակ, 139 փղոսկրյա գավազան, 25.212 բրոնզե վահան, 1514 բրոնզե միզակ, 305.412 բրոնզե սուր, 607 բրոնզե լազան և ուրիշ մեծ անարկաներ:

Կարելի է պատկերացնել այն հարստությունը, որ կուտակված է եղել Ուրարտուի սրբավայրերում և հատկապես Տուշպա մայրաքաղաքի սրբավայրերում:

Ուրարտուի վեհապետներն առատաձեռն էին, բարգավաճ երկիրը նրանց հնարավորություն էր ընձեռում այդպիսին լինել: Այդ ժամանակաշրջանում Ուրարտուն հասել էր մշակույթի ամենաբարձր աստիճանին: 713 թվականին Ուրարտուի ծաղկած պետությունը հիացրեց Սարգոնին: Ասորեստանի թագավորը գրավիչ կերպով նկարագրել է ինչ որ տեսել է «լեռնցիների» երկրում, ինչին բոլորովին չէր սպասում՝ նրանց հետամնաց պատկերացնելով:

Անցած բնակավայրերի մանրամասն նկարագրությունը շատ մեծ նշանակություն ունի:

Սարգոնը Ուրարտու մտավ Մանա երկրի կողմից: Առաջին նահանգը՝ Ուիշդիշը, մանացիներից էր խլված և բուն Ուրարտուի մաս չէր կազմում: Վերջինի սահմանն սկսվում էր մեծ բերդաքաղաք Ուշկախայից՝ Մալլաու

լեռան վրա, Subi և Zaranda նահանգների միջև: Նրա շրջակայքում 115 գյուղ կար:

Մուրի և Բարի կամ Սանգիբուտու նահանգի սահմանի վրա գտնվող Անիաշտանիա քաղաքը շրջապատված էր 17 գյուղերով:

Դալայի շրջանում, Թարուի և Թարմակիսա պարիսպներով շրջապատված բերդաքաղաքներն իրենց շրջակայքում ունեին 30 գյուղ:

Քիշպալ լեռան ստորոտում, Ուլխու բերդաքաղաքի շրջակայքում, 57 գյուղ կար: Մեկ ուրիշ քաղաք, որի կիսաջնջված անունը վերջանում է ...ստտե-ով, գտնվում էր նույն Սանգիբուտու նահանգում: Արծաթիա լեռների գագաթներում կար հզոր պարիսպներով շրջապատված 21 բերդաքաղաք: Այդ 21 քաղաքների անունները մասամբ ջնջվել են, մնում են միայն հետևյալները. 1. ...նիա, 2. Գիրուարգա, 3. Շաշգիսա, 4. Վերին Խունդուրնա, 5. ...ունգա, 6. Արագու, 7. Շադիշծիմիա, 8. Ստորին Խունդուրնա, 9. Էլ..., 10. ...նակ, 11. Ջիտուարգու, 12. Ջիրմա, 13. Մուրգի, 14. Էլիադիմիա, 15. Դագ..., 16. Շուրգիալդիու, 17. Արմունա, 18. Կինաշքանիա:

Սանգիբուտու կամ Բարի նահանգում, Արսաբիա և Իրտիա լեռների արանքում, 146 գյուղ կար:

Ուրիանդա լեռների ստորոտում Արմարիլի նահանգը 7 բերդաքաղաք և 30 գյուղ ուներ: Բերդաքաղաքներն են՝ 1. Բուրուգի, 2. Խունդուր, 3. Աալե, 4. Շինիշպալա, 5. Շինիունակ, 6. Արնա, 7. Շարնի:

Արմարիլիում էին գտնվում նաև Արբու և Ռիար քաղաքները՝ 7 գյուղով:

Ուիգուկու լեռան մյուս կողմը, Այադի նահանգում կային 30 բերդաքաղաք և 87 գյուղ:

Բերդաքաղաքները հետևյալներն են.

1. Անգալիա
2. Կուաիաին
3. Կալլանիա
4. Բիտաա
5. Ալուարգա
6. Կիունա
7. Ալի
8. Արգուգու
9. Շիկկանու
10. Արդիունակ
11. Դաիագունա
12. Գեթա
13. Բանիու
14. Բիրիսիուգա
15. Դեզիգու

16. Դիլիզիա
17. Արաիմդի
18. Դուաին
19. Խասրանա
20. Պարբա
21. Այաժուն
22. Անիաշտանիա
23. Բալլուարգա
24. Շարուարդի
25. Շունատար
26. Շալզի
27. Ալբուրի
28. Շիկարբա
29. Հին Ուայաիս
30. Արգիշտիունա

Արգիշտիունան և Կալլանիան հզոր բերդեր են, որոնք ամուր կառուցված էին Արծիդու և Մախուննիա լեռներում, վերոհիշյալ բերդաքաղաքների մեջտեղում:

«Ուրարտուի սահմանի ստորոտում»՝ Սալաիս նահանգում կար Ուայաիս մեծ բերդը, 5 պարսպապատ բերդաքաղաքներ և 40 գյուղ: Բերդաքաղաքները հետևյալներն են.

- | | |
|-----------------|----------|
| 1. Բարգուրիանի | 4. Կիսպա |
| 2. Ուալտուկուիա | 5. Ասապա |
| 3. Կուտտա | |

Մուրի, Բարի կամ Սանգիբուտու, Դալա, Արմարիլի, Այադի և Ուայաիս նահանգներում կար 601 բնակավայր: Տեքստը տարբերում է birtu «բերդ», bit-durani ճոռոտի «պարսպապատ բերդաքաղաքներ», alani ճոռոտի «անրացված քաղաքներ» և alani «գյուղեր»:

Ուրարտուի սահմանի վրա երկու բերդ կար՝ Ուշկաիա և Ուայաիս: Ուշկաիան պաշտպանում էր Ուրմիայի կամ Մամայի մատույցները, իսկ Ուայաիսը՝ «Նաիրի երկրին սահմանակից», այսինքն՝ Խուրուշկիային, փակում էր Չարի հովտով անցնող ճանապարհը: Դա Ուրարտուի ամենամեծ բերդն էր՝ «արվեստով լի գործ», պաշտպանված «զինված քաջարի մարդկանցով»: Նահանգների կուսակալները պատերազմի ժամանակ այնտեղ էին կենտրոնացնում իրենց զորքերը: Այնտեղից էր գործում նաև զինվորական հետախուզական ծառայությունը:

Ուշկաիան շրջապատված էր հզոր պարիսպներով, որոնց հիմքը հաստատված էր ժայռի վրա, իսկ հաստությունը հասնում էր մինչև 8 արմնկաշափի կամ 4 մետրի:

Պարսպապատ քաղաքների թիվը 7 էր՝ Թարուի, Թարմակիսա և Ուայաիսի 5 քաղաքները: Առաջին երկուսը կրկնակի պարիսպ ունեին և շրջապատված էին խորունկ խրամներով:

63 բերդաքաղաքները չէին տարբերվում պարսպապատ քաղաքներից:

Արմարիլիում Խունդուր ամրացված քաղաքը նույնպես երկու պարսպով և կողքերից աշտարակներով էր շրջապատված ու կոչվում էր birtu «բերդ»: Սանգիբուտու նահանգի 21 բերդաքաղաքները նույնպես պաշտպանված էին երկու šuši (= 120 արմունկներ) tipki «աղյուսաշար», համարյա 16 մետր քարձրությամբ հզոր պարիսպներով: Խոր խրամները ապահովում էին պարիսպները, իսկ աշտարակները քարձրանում էին մեծ դարպասի մոտ:

Այադիում 30 ամրացված քաղաքներն զբաղեցնում էին «ալեծածան ծովի ափը», այսինքն՝ Վանա լճի ափը, մեծ լեռների գառիթափին, որոնցից

Արգիշտիունան և Կալլանիան՝ «birati dannate»՝ «հզոր բերդեր», ամուր կանոցված էին Արսիդու և Մախուննիա լեռների վրա, չորս šuši (= 240) արմնկաչափ բարձրության վրա՝ մոտավորապես 120 մետր, «երևում էին նրանց հիմքերը»: Այդ բերդերի պահակագործը բաղկացած էր ընտիր զորքերից, «վահան ու նիզակ կրողներից»:

Ամրացված քաղաքների շրջակայքում 529 գյուղ կար: Պետք է դրանց վրա ավելացնել նրա Sardurihurda կոչված բերդը՝ birtu, որը Ռուսան էր հիմնել Ուլխու քաղաքի մոտ, ինչպես հիշատակված է Ուլխուի նվաճման նկարագրության մեջ¹:

Այդպիսով, Սարգոնի կողմից ավերակի վերածված բնակավայրերի թիվը հասնում է 602-ի: Սակայն իր նկարագրության վերջում նա հայտարարում է, որ գրավել է ընդամենը Ուրարտուի 430 alani «գյուղեր», 7 nagi «նահանգներ», իսկ ըստ մեկ ուրիշ տարբերակի, որը գտնվում է նրա Հիշատակարաններում, նա գրավել է հրո ճարակ է դարձրել 55 mahazi dannuti bit-durani «պարսպապատ բերդաքաղաքներ», 8 nagi «նահանգներ» և 11 birati «բերդեր»:

Սույն թվերից ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, որ հակասական են, չեն համապատասխանում այն իսկական քանակությանը, որ արտացոլված է արշավանքի պատմության մեջ:

Թվում է, որ Սարգոնի անցած շրջաններում իրոք 602 բնակեցված կետեր կային, բայց նրանց միայն մի մասն է, որ կործանվել էր: Իսկապես, հեշտ չէր հողին հավասարեցնել 72 քաղաք, «այնքան արվեստով» ամրացված և պաշտպանված «ահավոր տեսքով մարտիկների կողմից»: Սարգոնն իր սխրագործությունները չափազանցել է: Բայց նրա պարծենկոտությունը հերքվում է հաջորդող իրադարձություններով: Անշուշտ, Ուրարտուն ամբողջապես ավերակի չէր վերածված, քանի որ Ռուսայի հաջորդ Արգիշտին իրեն բավական հզոր էր զգում Ասորեստանին զսպելու համար: Սարգոնի որդի Սեննաքերիբը դողում էր Արգիշտիի սպառնալիքների դիմաց և ամեն միջոցներով աշխատում էր շեղել ահավոր հակառակորդի պատրաստած հարվածը: Ութերորդ արշավանքի նկարագրությունը ճարտասանության ոգով է տոգորված և մեղանշում է ճշմարտության դեմ, ուստի և հետո է վավերական լինելուց: Սարգոնը ներխուժել էր Ուրարտու Չագրոսի արևելյան փեշերով և մինչև Վանա լճի հյուսիսային կետն առաջ խաղալուց հետո ստիպված եղավ ետ դառնալ նույն լեռան արևմտյան փեշերի վրայով, գուցե

Ուրարտուի ստորակա՝ Մուծածիրի քաղաքի Ուրգանայի ապստամբության պատճառով:

Այդքան բնակավայրերի նկարագրությունը նույնպես ապացույց չէ այն բանի, թե նրանք ավերվել են նվաճողի կողմից: Հնարավոր է, որ քաղաքական գրագիրները պաշտոնական ցուցակներ են ունեցել իրենց տրամադրության տակ, որոնք ձեռք են բերվել երկրում արշավանքի ժամանակ կամ Աշուրի այնքան լավ կազմակերպված լրտեսության միջոցով: Ցուցակը հաշվում է այնքան անուններ, որքան կային մինչև [Առաջին] համաշխարհային պատերազմը Վանա լճի արևելյան տարածքում՝ մինչև Չագրոսի լեռները, այսինքն՝ Վանի, Թիմարի, Արճակի, Հայոց ձորի չորս մահիճներում և Մախունդիեի, Բերկրիի ու Խոշաքի երեք կազաներում, ներառյալ լճի հյուսիսում Արճեշի կազան և Չաքի հովտում՝ Ադրակի շրջանը: Ռոպիետև այդ ամբողջ տարածքում՝ ըստ Salname-ի՝ 1898 թվականի թրքական պաշտոնական տարեցույցի, կար ընդամենը 622 բնակեցված վայր¹: Սարգոնի ավերումները տեղի են ունեցել սույն տարածքի սահմանների ներսում: Այն մասերը, որոնք գերծ էին մնացել ավերումներից, կարելի է որոշակի ցույց տալ: Դրանք են՝ մայրաքաղաքի շրջանից մահիճ մերքեզին կամ Վանը՝ 26 գյուղերով, Թիմարի մահիճն՝ 61 գյուղերով, Հայոց ձորի մահիճի 37 գյուղերի կեսը, որոնք լճի կողմն էին ընկած, Արճեշի 17 գյուղերի հյուսիսային մասը, Ադրակի 144 գյուղերի հարավային մասը, ուրեմն, 150 գյուղ Սարգոնի երթուղուց դուրս էր մնում:

Հետևապես, այն տարածքը, ուր Սարգոնը 602 գյուղ է հաշվում, 1898 թվականին միայն (622-150) = 472 գյուղ կար: Թագավորի մեծ դպիր Նարու-Շալիմ-շունուն, Սարգոնի «մեծ գիտունը, արվեստի վարպետը», որին հանձնարարված էր արշավանքի պատմությունը գրել, շատ եռանդ է ցուցաբերել և ասորեստանյան զորքերին ավելի ավերումներ է վերագրել, քան նրանք ի վիճակի էին կատարելու:

Այդ կապակցությամբ շատ ուսանելի է նրա պատմածը Ուլխու քաղաքի մասին: Դա մի ամրացված քաղաք էր Կիշպալ լեռան ստորոտում: Ռուսան իր հպատակներին ցույց էր տվել «ջրերի ցայտումը», նա ջրանցք էր փորել և Եփրատ գետի չափ առատ ջուր էր հոսեցրել: Նա անհամար վտակներով ոռոգել էր դաշտերը, ամապատ տարածքը ծաղկուն պարտեզների վերածել և անձրևի մնան՝ մրգեր ու խաղող թափել այնտեղ: Մոսիները, šurathu-ները, ամառառի մնան զովաշունչ շուք էին տարածում այդ մարզի վրա: Նա մշակել էր տվել 300 իմեր վարելահող, ուր հացահատիկ էր ցանվում, և իր ամապատ

¹ B. Meissner, Die Eroberung der Stadt Ulhu auf Sargons 8. Feldzug, «Zeit. f. Assyrl.», XXXIV, 1922, էջ 113-122: 266

¹ B. T. Маевский, 624. աշխ., էջ 199:

տարածքի հեռաստանները դարձրել էր մարգագետիններ, ուր ամառ-ձմեռ խոտ կար և արածուս էին անասունները: Երկիրը ջրառատ լինելով՝ նա սովորեցրել էր ամբարտակ բարձրացնել: Իր թագավորական բնակության համար ջրանցքի վրա պալատ էր կառուցել: Նրա կողմից Կիշթեիր լեռան վրա հիմնադրվել էր մի բերդ՝ birtu, և անվանվել Sardurihurda: Ուլխուն մի այլ ամրացված տեղ էր: Այդտեղ տեղաբաշխված զորքերը հենց որ իմացան հարևան քաղաքներում Ասորեստանի թագավորի արածը, գիշերով փախան դեպի լեռների լանջերը: Սարգոնը մտավ քաղաք և «նրա ամրացված պատերը փշրանքի վերածեց, ինչպես խեցաման, դրանք հողին հավասարեցրեց»:

Պատկերը գեղեցիկ է: Սակայն շատ դժվար է այդ փոքրիկ դրախտը գտնել արշավանքի այն երթուղու վրա, որը մենք գծեցինք, եթե նույնիսկ հենվենք Ֆ. Թյուրո-Դանժենի նախընտրած երթուղու վրա: Ամենանշանավոր ջրաբաշխական գործը՝ Մենուայի հռչակավոր pili «ջրանցքը», այժմ ծանոթ է Շամիրամի անունով: Ռուսան, անշուշտ, նույնպես ջրանցք է բացել Քեշիշ կոչված լճից դեպի իր նոր մայրաքաղաքը՝ Թոփրակ-կալաի ստորոտում, բայց առանց դիմելու ամբարտակների: Համենայն դեպս, Սարգոնը չի մտել Վանի շրջանը: Սարգոնի ներխուժած շրջաններում, ապարդյուն որոնումներից հետո, կարելի չէ գտնել այնպիսի մի վայր, որն առավել կամ նվազ չափով նման լիներ այն երկրին, որի բերրությունը վերագրում էին Ռուսային: Ստիպված ենք լինում կանգ առնել Մենուայի ջրանցքի վրա: Այս ընտրությունը արդարանում է հետևյալ նկատառումներով:

Ըստ մեր վավերագրի՝ Ռուսան սովորեցրել է ամբարտակներ կառուցել: Սա ճիշտ չէ: Այդ պատիվը պատկանում է Մենուային. նրա անունով կառուցված ամբարտակները դիմացել են դարերի ավերիչ ուժին և դեռ մեր օրերին հիացմունքի առարկա են դառնում: Ռուսան, ըստ նույն վավերագրի մեկ ուրիշ տարբերակի, երկրում առաջին անգամ ուղտեր է բերել, որպեսզի օգտագործի ամբարտակների կառուցման համար: Դա նույնպես ճիշտ չէ: Առնվազն Արգիշտիից ի վեր այդ անասունը հայտնի էր երկրում: Վեցերորդ արշավանքում Արգիշտիի բերած ավարի մեջ կար նաև 184 ուղտ, յոթերորդ արշավանքում՝ 100 ուղտ, նույնպես իններորդում: Ռուսայի նախորդը՝ Սարդուրին, Էրիախիին երկրում ձեռք բերած ավարի մեջ 115 ուղտ էր հաշվում:

Սարդուրիխուրդա քաղաքը, անտարակույս, Ռուսայի կողմից չի հիմնվել: Նրա անունն արդեն ցույց է տալիս իսկական հիմնադրին՝ համձին երկու Սարդուրիներից մեկի՝ առաջինի կամ ավելի շուտ՝ երկրորդի:

Գալով «ջրերի ցայտումին» և ջրանցքին, որը Եփրատի նման հոսում էր և «անհամար վտակներ» ուներ, ուրիշ բանի մասին չէ խոսքը, եթե ոչ Մե-

նուայի pili-ի և արտակարգ առատ այն ակունքի մասին, որը նրան սնունդ էր տալիս:

Մենուայի հրաշալի գործը և իր տեսակի մեջ միակ այդ ակունքը, որը մեկ վայրկյանում 1500-3000 լիտր ջուր է մատակարարում՝ նայած տարվա եղանակին, անշուշտ, ասորեստանցիների վրա տպավորություն է գործել: Հայկական լեռնաշխարհի և ոչ մի վայր առավել կամ պակաս չափով չէր համընկնի մեր վավերագրի նկարագրության հետ: Մենուայի pili-ն՝ Շամիրամի ջրանցքը, բոլոր հայտնի ջրանցքների համեմատությամբ որպես մի Եփրատ է ներկայանում: Ուրիշ խոսքով ասած՝ Մենուայի ջրանցքը ջրանցքների մեջ այնպիսին է, ինչպիսին Եփրատը՝ գետերի մեջ:

Հացահատիկի մշակման համար հատկացված հողի մասին հիշատակումը նույնպես ցուցադրական է: Ջրանցքի շրջակայքը՝ Հայոց ձորը, մեծ քանակությամբ և լավագույն որակի ցորեն է արտադրում: Սակայն 300 իմեր հողը, որը նույնքան հեկտարից պակաս է, միմիայն մի մեծ դաշտի մակերևույթ է, ուրեմն, անբավարար է հացահատիկի առատությունը փառաբանելու համար, ինչպես անում է մեր դպիրը: Հավանական է, պալատի մոտ գտնվող մի հատուկ դաշտի մասին է խոսքը:

Ինչ վերաբերում է «մարգագետիններին, ուր խոտն ու արոտը չէին դադարում ամառ-ձմեռ», դա մաքուր հնարանք է: Զմռանը հայկական հողը ծածկվում է ձյունի այնքան թանձր շերտով, որ անհնար է մտածել որևէ բուսականության մասին: Սա թագավորական դպիրի հռետորական անփութության արդյունք է:

Եթե մեր նույնացումն ընդունելի է, ապա Ուլխու քաղաքը և Սարդուրիխուրդա բերդը պետք է փնտրել Մենուայի ջրանցքի շրջանում: Կիշթեիր լեռան վրա գտնվող Սարդուրիխուրդան, գուցե, Բու-դադ լեռան կատարի հոյակապ բերդն է, որը շրջապատված է զուգահեռ երեք պարիսպներով: Լեռան ստորոտում տեղավորված է Աստվածաշեն գյուղը, ուր հայտնաբերվել է Սարդուրիի մի արձանագրությունը (№ 137): Դա ցույց է տալիս, որ Բու-դադի բերդ Սարդուրիխուրդան կարող էր լինել Սարդուրիի գործը:

Ջրանցքի ակունքը լեռնաշղթայի ստորոտին է, որը տարածվում է Հայոց ձորի երկայնքով և փակում այն հարավային կողմից: Այնտեղից մեկուկես կիլոմետր հեռավորության վրա գտնվում է Մծնկերտ գյուղը, որտեղ մեր այցելության ժամանակ տեսանք մի հին քաղաքի մնացորդներ: Դրա դիրքը թույլ է տալիս այնտեղ փնտրելու «Ուլխու բերդաքաղաքը՝ Կիշպալ լեռան ստորոտում»:

Ուլխու քաղաքի նկարագրության վերջում, մի աղճատված հատվածում, կարծես ասվում է, որ Սարգոնը մտել է Ռուսայի պալատը և այն փշրանքի

մերձակա շրջանը կրում է Օդոմանտիս նշանակալից անունը, և Փոքր Հայքի երկու գավառներ կոչվում են Օրբիսենե և Օրբալիսենե¹:

Վերջապես, Փոքր Ասիայում և Հայաստանում կան համանուն բնակավայրեր, ինչպես Սատալա, Էրիզա Փոյուզիայի սահմանների վրա, Կաբալա՝ Լիդիայում, Կիլիկիայում և Հայաստանում, Հարպասոս՝ գետ Կարիայում և Հայաստանում²:

Տեղանվանական մանությունները, հավանաբար, խոսում են էթնիկական տեղափոխման մասին՝ արևմուտքից արևելք, և դրանով մպաստում Հերոդոտոսի վկայությանը՝ հայ-փոյուզիական ցեղային հարաբերության վերաբերյալ:

Թեսալական տեսությունը Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակից է գալիս: Նրա հեղինակները Ալեքսանդրի բանակի երկու զորահրամանատարներն են՝ Կիրսիլոս Փարսալացին և Մեդիոս Լարիսացին:

Այս հեղինակների գործը մեզ չի հասել: Մենք նրան ծանոթ ենք միայն հետագա գրողների մեջբերումներից: Հայերի թեսալական ծագման մասին եղած կարծիքը փոխանցվել է երկու իրար ժամանակակից հեղինակների՝ նշանավոր աշխարհագետ Ստրաբոնին և պատմիչ Հուստինոս-Տրոգոս Պոմպեոսին: Նույնիսկ հնարավոր չէ իմանալ, թե նրանք զորահրամանատարների զրքի բնագրից են օգտվել, թե նրան երկրորդ ձեռքից են ծանոթ: Նախ տեսությունը ամփոփենք, ըստ Ստրաբոնի:

Արմենիա անունը, ըստ այս հեղինակի, գալիս է Արմենիոն քաղաքի բնիկ բնակիչ Արմենոսի անունից: Արմենիոն քաղաքը Թեսալիայում է գտնվում, Բոյբեյիս լճի մոտ, Փերեսի և Լարիսայի միջև: Արմենոսը մասնակցել է Յասոնի արշավախմբին, որը դեպի Կողքիս կատարած իր ճանապարհորդության ժամանակ հասել է մինչև Կասսից ծով, անցնելով Իբերիան, Ալբանիան, Մեծ Հայքի և Մեդիայի մեծագույն մասը, ինչպես այդ վկայում են Յասոնին նվիրված սրբավայրերը (Jasonia) և այլ բազմաթիվ հուշարձան-

¹ Հերոդոտոս, V, 16, VII, 112, 'Օδοմάνտոս: Թուկիդիդես, II, 101՝ Միմոպոս: Ստրաբոն, XII, 3՝ էպոնիմ 'Օδοուս-ը Արևսի կամ Պայոնի որդին է (33): Հերոդոտոս, V, 16՝ 'Օրբիլոս: Գիորգոս, XX, 19: Ստրաբոն և Պտղոմեոս, III, 9՝ Օրբիլա: (34): Պտղոմեոս, V, 6՝ Օրբի-սոյո, 'Օծբալիսոյո Փոքր Հայքում:

² Ramsay, Asia Minor, էջ 45 և շար., Էրիզա Ինդոսի (Դալաման) ակունքի վրա, նրա ելիսկոպոսը Քաղկեդոնի ժողովում 451 թ.: Հիերոկլես՝ Եբեզոս: Ագաթանգեղոս, էջ 30, Երեզ-ատան, էջ 409՝ Գիլ Երիզայ, Ալիլիսենեի կենտրոն, այժմյան Էրզինջան (Երզնկա): Սատալա (այժմյան Սանդալ), Սարդիսից արևելք: Պտղոմեոս, V, 2, 17: Ramsay, Asia Minor, էջ 30: Սատալ՝ Ալիլիսենեի սահմանի վրա: Փավստոս, III, 7 և 21: Cumont, Studia Pontica, III, № 34: Καβέλεο՝ Լիդիայի ժողովուրդ: Հերոդոտոս, III, 90: Cedrenus, II, էջ 266, հրատ. Bonn: Ramsay, նշվ. աշխ., էջ 359: Κάβαλις Պիսիդիայում: Ramsay, նշվ. աշխ., էջ 252: Κάβαλλα Հայաստանի Հիսպրիսիում: Ստրաբոն, XI, 14, 9 - Հայ հեղինակների Սպիքը, այժմյան Իսպիրը:

ներ: Արմենոսի ուղեկիցները մասամբ գրավել են Ալիլիսենեն, որը մախապես գրավված էր ծովացիներից, մասամբ էլ՝ Սու(ս)ալիրիտիսը մինչև Կալաբենե և Ադիաբենե, Հայաստանի սահմաններից դուրս:

Յասոնի պատվին կառուցած Jasonia-ները մասամբ ավերվել են հետագա իշխանների կողմից, ինչպես, օրինակ, Պարմենիոնը ոչնչացրել է Յասոնի տաճարը Արդերայում¹:

Հայկական Արաքսն այդպես է կոչվել ի մանություն Թեսալիայի Պեմեոս գետի, որը հնում կոչվում էր Արաքս, որովհետև նա անցք էր բացել Օսսա և Օլիմպոս լեռների միջև Թեսալական դաշտի միջով՝ ծով թափվելու համար: Հայաստանում Արաքսը, լեռներից գահավիժելով, հիմ ժամանակ ողողում էր դաշտը և, ելք չգտնելով, ընդարձակ ծով էր կազմել: Յասոնը, Թեսալի օրինակով, իբր թե մեղքվածք է բաց արել և ջուրը հոսեցրել դեպի Կասսից ծովը: Այդ կերպով Արաքսյան դաշտը ազատվել է ջրից, և Արաքսն իր ընթացքը շարունակել է դեպի ծով²:

Արմենիոնները, որոնք ապրում էին Թեսալիայի հարավում և այնտեղից ետ մղվեցին դեպի Օրոտա լեռը՝ Արմենիայի շրջանում, գաղթել են Ուիտիա և այնտեղ հիմնել Արմենիա քաղաքը: Այդ ժողովրդի մի մասը տեղավորվել էր Հայաստանի վերևում, Տավրոսի ճյուղ Արոսից և Հիբարոսից այն կողմը: Արոսն իշխում է այն ճանապարհի վրա, որը տանում է դեպի Էկրատան՝ Բարիսի տաճարը³:

Տրոգոս Պոմպեոսը Ստրաբոնի ժամանակակիցն է, և նրա պատմական գործը մեզ հասել է Հուստինոսի համառոտագրությամբ, որը երկրորդ դարի հեղինակ է: Հուստինոսը Կիրսիլոսին և Մեդիոսին չի հիշատակում, բայց այն, ինչ պատմում է հայերի ծագման մասին, գալիս է այդ պատմիչներից:

Նրա համար նույնպես թեսալացի Յասոնի ուղեկից Արմենիոսը Հայաստանի թագավորության հիմնադիրն է: Թեսալիայի թագավոր Պելիասը, ցամկանալով ազատվել Յասոնի մեծ վտանգավոր մրցակցից, նրան ուղարկում է Կողքիս, հրամայելով փնտրել հռչակավոր Ռսկեզեղը: Նա հույս ուներ, որ Յասոնը կկործանվի այդ վտանգավոր ճանապարհորդության ընթացքում: Յասոնը՝ քաջարի ընտրյալ երիտասարդների գլուխն անցած, հաջողությամբ կատարում է հանձնարարված առաջադրանքը: Երբ վերադառնում է, Պելիասի որդին նրան արգելում է երկիր մտնել: Յասոնը բռնում է վերադարձի ճանապարհը և գնում Կողքիս՝ իր Մեդես կնոջ ուղեկցությամբ, որը Կողքիսի թագավորի դուստրն էր: Մեդեսի՝ Աթենքի թագա-

¹ Ստրաբոն, XI, 18, XI, 14, 2:
² Նույնը, XI, 14, 13:
³ Նույնը, II, 3, 21; IX, 5, 22; XI, 7, 1; XI, 14, 14:

վորի հետ առաջին անուանությունից ունեցած որդին՝ Մեդուրը, նույնպես իր հետ էր: Յասոնը հաշտվում է իր աներոջ հետ: Այս պատերազմ է վարում ու նվաճում բոլոր հարևան ժողովուրդներին:

Հերակլեսից և Լիբերից (Քարոս) հետո, որ երբեմն իշխում էին, ինչպես ասում են, Արևելքում, Յասոնն առաջինը եղավ, որ հպատակեցրեց Արևելքը: Նրա պատվին տաճարներ կառուցեցին՝ ինչպես մի ասածո: Սակայն Ալեքսանդրի գորավար Պարմենիոնը քանդել տվեց այդ տաճարները, որպեսզի ոչ ոք չկարողանա ուրանալ Ալեքսանդրի փառքն Արևելքում: Յասոնի մահից հետո Մեդուրը ի պատիվ իր մոր կառուցեց Մեդեա քաղաքը և ստեղծեց մեդացիների թագավորությունը՝ Արևելքի հզոր պետությունը:

Արմենուրը, որը նույնպես Թեսալիայից էր և Յասոնի գորավարներից մեկը, հավաքեց այն զորքերը, որոնք Յասոնի մահից հետո թափառում էին ամենուրեք, և հիմնեց Հայաստանի թագավորությունը¹:

Կիրսիլոսն ու Մեդիոսը, ինչպես երևում է, շոշափել են նույնպես մեդացիների ծագումը և նրանց բխեցրել են Մեդեայի որդի Մեդուսից: Ստրաբոնը նույնպես չի անգիտանում այս կետը²:

Մի ոմն հեղինակ Անտիպատրոս, որն այլպես անծանոթ է, համաձայն է թեսալացի պատմիչների հետ, թե հայերը սերում են Արմենուսից, բայց նրան Հոտոսի բնիկ է համարում և ոչ Թեսալիայի³:

¹ Հուստինոս, XLII, 2, 3:

² Մաքարոս, XI, 14՝ *τοῦ Μήδου καὶ Ἀρμενίου συγγενεὶς πᾶς τοῖς Θετταλοῖς εἶναι καὶ τοῖς ἀπὸ Ἰάσονος καὶ Μεδεΐας*: [Մարոն ու հայերը թեսալացիների ինչ-որ ազգակիցներ են, ինչպես նաև (նրանց, ովքեր սերել են) Յասոնից և Մեդեայից]:

³ Անտիպատրոսը հիշատակված է Ստեփանոս Բյուզանդոսի կողմից՝ *Ἀρμενία* բառի տակ: Frag. Hist. Gr. IV, 306: Նա նշում է նաև Եփորոսոսին, բայց չի հիշատակում Հերոդոտոսին, ոչ էլ թեսալացի պատմիչներին:

Եվստասիոսը, Թեսալոնիկեի եպիսկոպոսը (մահ. 1193 թ.), երկրորդ դարի հեղինակ, Դիոնիսիոս Պերիեզետեսի «Աշխարհի նկարագրության» մեկնության մեջ վկայակոչում է կատարում հայերի ծագման մասին եղած կարծիքներից՝ 1. *ἀπὸ τινος Ἀρμένου Ροδίου ἀνδρός*, [ինչ-որ հոտոսի Արմենուսից]՝ առանց նրա հեղինակ Անտիպատրոսի անունը տալու:

2. *κατὰ δὲ ἄλλους Ἀρμενία ἡ χώρα λέγεται ἐπονύμως Ἀρμένου ἡρώος ἐξ Ἀρμενίου πόλεως Θετταλικῆς, συστρατεῦσαντος ἐκεῖ τῷ Ἰάσονι*, [ըստ ուրիշների, «Արմենիա» երկիրն այդպես է կոչվել համոն Արմենոս քաջամեծի՝ Թեսալիայի Արմենոս քաղաքից, որն այնտեղ[ից] մասնակցեց Յասոնի արշավանքին]: 3. *ἰστέον δτι Ἡρόδοτος τοῦ Ἀρμενίου Φρυγῶν ἀποίκους φησὶ*, [պետք է իմանալ, որ Հերոդոտոսը հայերին համարում է փոյուզացիների գաղթականներ]: Նա ավելացնում է Եփորոսիոսի վկայությունը, հավանաբար ըստ Ստեփանոս Բյուզանդոսի, որտեղից նա փոխ է առել Անտիպատրոսի կարծիքը:

2. *κατὰ δὲ ἄλλους Ἀρμενία ἡ χώρα λέγεται ἐπονύμως Ἀρμένου ἡρώος ἐξ Ἀρμενίου πόλεως Θετταλικῆς, συστρατεῦσαντος ἐκεῖ τῷ Ἰάσονι*, [ըստ ուրիշների, «Արմենիա» երկիրն այդպես է կոչվել համոն Արմենոս քաջամեծի՝ Թեսալիայի Արմենոս քաղաքից, որն այնտեղ[ից] մասնակցեց Յասոնի արշավանքին]: 3. *ἰστέον δτι Ἡρόδοτος τοῦ Ἀρμενίου Φρυγῶν ἀποίκους φησὶ*, [պետք է իմանալ, որ Հերոդոտոսը հայերին համարում է փոյուզացիների գաղթականներ]: Նա ավելացնում է Եփորոսիոսի վկայությունը, հավանաբար ըստ Ստեփանոս Բյուզանդոսի, որտեղից նա փոխ է առել Անտիպատրոսի կարծիքը:

Ի՞նչ արժեք ունեն այս տեղեկությունները պատմական առումով: Ստրաբոնի նման քննադատական մի միտք արժևորել է թեսալական տեսությունը, ի նպաստ դրան իր կողմից ավելացնելով մի քանի գծեր, որոնք ընդհանուր են թեսալացիների և հայերի համար: Օրինակ, երկու ժողովուրդների գործածած հագուստները՝ լայնաձիգ պատմուճանը, որ ողբերգությունների մեջ կոչվում են թեսալական և կապում են կրծքներին, ու այն վերարկուն, որ դերասանները հագնում են թեսալական ձևով. ձիավարության կիրքը, որ նույնպես ընդհանուր է թեսալացիների և հայերի համար, ինչպես նաև մեդացիների:

Հակառակ նշանավոր աշխարհագետի հեղինակությանը, Կիրսիլոսի և Մեդիոսի տեսությունը քննադատության դիմանալ չի կարող: Նա հիմնված է մի քանի թեսալական անունների մերձեցման վրա՝ Արմենիոն, Յասոնիա, Արաքս, Աինիանե, Օիտա, որոնք ենթադրաբար գործածվում են նաև Հայաստանում: Այդ դրույթի համար հրապուրիչ կետ է, անշուշտ, *Ἀρμενία*-ի համեմատությունը *Ἀρμένιον*-ի հետ, որը կարող էր վարկ ունենալ, եթե քմահաճ զուգահեռի մեջ դրված չլիներ *Μηδία*-ի և *Μήδεια*-ի համեմատության հետ: Դրան մենք կամդրադառնանք: *Ἰασόνιον* - Յասոնի սրբավայր, պակաս ազդեցություն չի գործել թեսալացի հեղինակների վրա: Նրանք, անշուշտ, տեղական մի բառ են գտել, որ նշանակում էր «սրբավայր», և ընդունել այն որպես Յասոնիոն: Որոշ խարխափումից հետո կարելի է եղել տվյալ բառի իմաստը ճշտել: Դա *jazana* բառն է, որի պարսկական ձևն է՝ *à-yadana, yaz* «զոհել» բառից: *Jazana* - զոհաբերության վայր, «տաճար»՝ համապատասխանում է սանսկրիտ *yajana*-ին¹: Թեսալացի գորականները *yazana*-ում տեսել են հունարեն (*τά*) *Ἰασόνια* «Յասոնի տաճար»-ը և Յասոնին դարձրել երկրի հերոս:

Արաքս անվան վրա հիմնված փաստը կորցնում է իր արժեքը, քանի որ այդ բառը գործածվում է ոչ բացառապես Թեսալիայում և Հայաստանում, այլ շատ ուրիշ երկրներում: Սկյութները, կիմերները գործածել են Արաքսը այժմյան Վոլգայի համար: Դա Պոնտոսում Թերմոդոնի հին անունն է: Միջազգային Խարտր գետը այլ ձևով Արաքս է կոչվել: Պարսկաստանի

¹ H. Kiepert-ը, *Lehrbuch der alten Geographie*, § 70, առաջինն է հսկայացի Յասոնիայի ծագումը, բայց սխալմամբ վերագրել է *Yasna*-ին: A. J. Reinach-ի, *Noe Sangariou*, 1913, էջ 61-62, կարծում է, թե «յասոնիաները պետք է որ հայկական մեծ *yazatas*-ներից մեկի տաճարներից եղած լինեն, զուցի՝ Վահագնի»: Յո. Մարկվարտն էր, *Südarmenien und Tigrisquellen*, 1930, էջ 535, որ առաջարկեց *yazana*: Դարեհը, Բահիստանի (Բիստուն) արձանագրության մեջ, տող 14, խոսում է *ayadana* «տաճարներ»-ի մասին: Սպասված ավիստական ձևը պետք է որ *yazana* լինի, որ երաշխավորված է սանսկրիտ *yajana*-ով: Այնուհանդերձ, մի էական կետ լուսաբանվելու կարիք ունի. ո՞րտեղից է հայերին հասել *yazana*-ն: Արդյո՞ք մարական փոխառություն է, որնմն՝ Արմենյան տիրապետությունից առաջ:

Մարդուրի II-ը առաջինը եղավ այգիներ ու պարտեզներ անկելու և ջրանցքներ բանալու Արաքս գետի շրջանում, հատկապես Արմավիրում, № 141:

Ուրարտացիները մեզալիթիկ կառուցումների խոշոր վարպետներ էին: Մեզ հետաքրքրող վավերագրերում այս նյութի վերաբերյալ առկա տվյալները, հակառակ ճոռոմ ոճին, արժեքավոր են և իրականության համապատասխան: Ըստ այդ տվյալների՝ ուրարտական քաղաքները «կառուցված էին լեռների վրա»: Տարօրինակ է թվում քաղաքները տեսնել լեռների վրա: Որոշ քաղաքներ «փայլում էին աստղերի մման, և 240 արմնկաչափ բարձրության վրա երևում էին դրանց հիմքերը»:

Արմնկաչափերի նշված քանակությունը անում է 120 մետր: Դա այնպիսի բարձրություն չէ, որ արժանի լինի «լեռ» կոչվելու: Մի երկրում, ուր լեռները հազարավոր մետրերով են դեպի երկինք խոյանում, 120 մետր բարձրությունը միայն բլուր է կազմում: Բացարձակապես ճիշտ է, որ Ուրարտուի բերդաքաղաքները բլուրների, բայց հատուկ տեսակի բլուրների, կատարներին էին կառուցվում: Լեռնաշղթաները, ձգվելով տարբեր ուղղություններով, իրար խաչաձևում են և կազմում ընդարձակ բարձրավանդակներ: Հատված լեռնաշղթաները հաճախ այդ բարձրավանդակների վրա կազմում են հսկայական միակուռ զանգվածներ, անհարթ և համարյա անմատչելի լանջերով:

Դրանք շրջակա լեռներից մեկուսացված մի տեսակ հողակոշտ զանգվածներ են, որոնք սովորաբար ուրարտացիներն ընտրում էին իրենց հիմնադրումների կենտրոնը կամ միջնաբերդը դարձնելու համար: Այդպիսիք են հետևյալ ծանոթ քաղաքների տեղերը՝ Տուշպա (Վան), Լեզք, Ամյուկ, Սևանկալա (Քեշիշ-գյուլի մոտ), Բուլ-դաղ, Հայանց-բերդ (լճի ափին՝ Էրերինի մոտ), Մարմետ, Անձավ, Արմավիր:

Այդ ամրացված վայրերը շրջապատված էին մաև կիկլոսյան պարիսպներով, որոնք դրանց անառիկ էին դարձնում: Այնտեղ, որտեղ Վանի ժայռը քիչ թե շատ հասանելի է, Մարդուրի I-ը կառուցեց մի վիթխարի պարիսպ, որն ավելի հարմար է կոչել Մարդուրիի աշտարակ, ինչպես հայ պատմիչ Փավստոս Բուզանդն է կոչում: Իրոք, Մարգոնը հաստատում է, «որ քաղաքների մեծ դարպասների մոտ աշտարակներ էին կառուցված», «որոնք լեռների մման հաստատում հիմքեր ունեին»: Արմարիլիում գտնվող Խունդուր քաղաքը շրջապատված էր պարիսպներով և աշտարակներով: Ուշկախա քաղաքի պարիսպը կառուցված էր ժայռի վրա, իսկ դրա հաստությունը ութ արմնկաչափ էր (համարյա չորս մետր): Որոշ քաղաքների

պարիսպներ ունեին 120 շար աղյուսների բարձրություն, որը համարյա 16 մետրի է հավասար:

Մարգոնն ասում է, որ տներն արվեստով էին կառուցված: Հետագա պեղումները մի օր հնագիտական նյութով կհաստատեն այդ: Այն, ինչ ներկայումս գոյություն ունի գետնի երեսին, արդեն ցույց է տալիս քարի մշակման նշանավոր տեխնիկայի առկայությունը: Ժայռափոր կառուցումները, ինչպիսիք են Վանի՝ ժայռի մեջ փորված Մենուայի և Արգիշտիի սենյակները, այդ տեխնիկայի վառ ապացույցն են:

Շենքերի համար գործածում էին ոչ թե սովորական քարեր, այլ հսկայական սալաքարեր: Մարդուրիի աշտարակն այդ տեսակ կառուցման մի մնուշ է: Այն կառուցվել է 5-6 մետր երկարություն և մեկ մետր լայնություն ունեցող սալերով: Դրանք կողք-կողքի շարված են առանց շաղախի և մետաղյա կետերի: Ուրարտացիները գործածում էին և՛ հուս, և՛ թրծված աղյուսներ: Թոփրակ-կալայում հայտնաբերվել են դրանցով կառուցված տներ ու պարիսպներ: Սակայն նախընտրվող շինանյութը միշտ քարն էր: Ուրարտացիները կամար կապել չգիտեին. այդ պատճառով էլ ձորակների վրայով ջրանցք տանելու համար Մենուան ստիպված էր ձորի խորքից մինչև ջրի հարթակը հսկայական պատեր բարձրացնել:

Մրբավայրերը նույնպես արտակարգ չափի քարերով են կառուցված. որպես օրինակ կարելի է ներկայացնել Թոփրակ-կալայում պեղված տաճարը: Այդ տաճարի երևան գալով կարելի է լավ գաղափար կազմել ուրարտացիների գեղարվեստական ճաշակի մասին: Մեզալիթյան բնույթը այնտեղ մնում է իշխող, բայց տեսքը, որ կարող է անպաճույճ երևալ, բազմերանգ քարերի գործածությամբ զվարթ ու պայծառ է դառնում: Սև, բացմոխրագույն, կարմրավուն, դեղին երանգներն այնտեղ իրար են հաջորդում ներդաշնակ ու բավականին նկարչագեղ կերպով:

Բազմերանգությունն ուրարտական առանձնահատկություններից մեկն է թվում: Գույների ճաշակը բնականաբար առաջ է բերել խճանկարի գաղափարը: Իրոք, Թոփրակ-կալայի պեղումներում գտնվել են տարբեր ձևերի ու գույների քարեր, որոնք ենթադրել են տալիս, թե տաճարը սալարկված է եղել խճանկարով¹: Գալով ճարտարապետությանը, ուրարտական թագավորների հիմնադրած Մուծածիրի տաճարը թույլ է տալիս դրա մասին գաղափար կազմել: Այս տաճարը ներկայացված է Մարգոնի Խորսաբաղյան պալատի ցածրաքանդակների վրա:

¹ K. Lehmann-Haupt, Armenien, II, 2, էջ 552: Տաճարը լրիվ կողոպուտի է ենթարկվել, այնպես որ, երբ 1917 թ. մեծք այնտեղ էինք, մնացել էր միայն մի քանի քար:

Ուրարտացիները գիտեին քանդակել քարը: Մուծածիրում Սարգոնի անսած Սարդուրիի արձանը քարից էր: Թուփրակ-կալայում հայտնաբերված քարե երկու էլունները, անշուշտ, արձանի բեկորներ են: Տաշված մի քարի վրա պատկերված է կայծակը երկու խուրձ լույսի ցուլերով¹:

Մետաղի տեխնիկան նույնպես զարգացած էր: Մշակում էին ոսկի, արծաթ, բրոնզ, երկաթ: Մուծածիրի պալատի և տաճարի զույթի մի որոշակի մասը բաղկացած էր սեղանասպասքից և անոթներից՝ ամաններ, բաժակներ, սկահակներ, կաթսաներ, կոնքեր, աթոռներ, մրգերի զամբյուղներ, բանալիներ, փականքներ, թավաներ, հնոցներ, ամեն տեսակի ամանեղեն արծաթե կամ արծաթապատ, ավելի հաճախ բրոնզից և երբեմն ոսկուց. երկրում պատրաստված 120 բրոնզե առարկաներ, որոնցից ամեն մեկն իր անունն ուներ: Ասորեստանցի դպիրը խոստովանում է, որ դժվար էր վերարտադրել բոլորի անունները: Կային սեղաններ, զամբյուղներ և այլ՝ փղոսկրից, էրենուսից, սամշիտից, ոսկով ու արծաթով պատած առարկաներ: Ալեքսատրես առարկաները թանկագին քարերով էին զարդարված:

Քիչ չէին մակ գեղարվեստական բարձր արժեք ներկայացնող գործերը, օրինակ՝ ոսկյա և արծաթյա վահաններ, որոնց սկավառակները զարդարված էին վիշապներով, առյուծներով, վայրի ցուլերով, շների ծոկատող զլուխներով: Մարդու ձեռքի նման մի ոսկյա փականք իր փեղկիկի շրջանակի վրա թևավոր վիշապի դեմքն էր կրում: Երկու բանալիներ ներկայացնում էին խույրով աստվածուհիներ՝ ձեռներին բռնած ատամնավոր տավիղ: Փղոսկրյա մի անկողնու զլխիկներն արծաթից էին՝ ծայրերում զարդարված թանկագին քարերով: 14 տարբեր թանկարժեք քարերից պատրաստված մի զարդ կար՝ ինչ-որ աստվածուհու անունով համար:

Արգիշտիի և Ռուսայի արձանները ձուլածո բրոնզից էին, Սարդուրիի արձանի պատվանդանը՝ ձուլածո երկաթից: Կան ցուլի, կովի և իր հորթուկի արձանները բրոնզից: Խորասրաղի բարձրաքանդակի վրա Մուծածիրի տաճարի մուտքի դիմաց ներկայացված է մի կով՝ հորթը կերակրելիս: Այստեղ կան մակ վեց վահաններից երեքը՝ ոսկուց, որոնք ըստ Սարգոնի նկարագրածի՝ «կախված էին տաճարի աջ ու ձախ կողմերում և որոնց մեջտեղում ծոկատող շների զլուխներ էին երևում, հինգ տաղանդ տասներկու մինա ոսկու ծանրությամբ», որը հավասար է 162 կիլոգրամի:

Վանում, Թուփրակ-կալայի ավերակներում, հայտնաբերվել են բրոնզի մի քանի կտորներ, որոնցից երեքը Ռուսա Էրիմնախիի անունն են կրում, իսկ մեկը՝ Ռուսա Արգիշտիխի: Դրանք նույն տիպի մի քանի վահանների

բեկորներ են՝ սկավառակը կենտրոնում ունի մի վարդակ և բաժանված է երեք համակենտրոն զուտիների. առաջինը և երրորդը զարդարված են քայլող առյուծների կերպարանքներով, երկրորդը՝ ցուլերի: Դրանք ուխտամկեր վահաններ են: Հ. Լինչը վերարտադրել է առյուծների կերպարանքներից մեկը և մեկ ուրիշը՝ ցուլի, իսկ Կ. Լեման-Հաուպտը վերարտադրել է վահանի մի մասը¹:

Թագավորական գահի բրոնզե մի քանի բեկորներ, երկու ոտքեր՝ յուրաքանչյուրը դրված քառակուսի մի սալի վրա, մեկի վրա պառկած թևավոր առյուծ: Ոտքերը փաթաթված են տերևների պսակներով²:

Բեկորներից մեկը ներկայացնում է թևավոր մի գառնանգո, որը հունական սիրենան է հիշեցնում, իսկ մեկ ուրիշը՝ մարդու զլխով մի ցուլի³:

Բրոնզի երկու կտոր, որոնք աթոռի մասեր են. դրանցից մեկն ուշադրություն է գրավում իր զարդարանքներով՝ ոտքերը ներկայացնում են առյուծի թաթեր: Վերին ձողի ծայրերն օժտված են ոչխարի զլուխներով, իսկ ցածի ձողի ծայրերը՝ երկու զույգ խոյնոջյուրներով. այդ ձողի և ոտքերի միջև ուղղաձիգ ձողերը շրջապատված են տերևների պսակներով⁴:

Տերևների պսակը հիշեցնում է հունական ճարտարապետության օվիկուլները: Այն գտնում են Վանում հայտնաբերված գեղարվեստական ձևավորմամբ շատ ինքնատիպ բրոնզե մի աշտանակի վրա ևս: Աշտանակի կոթը զարդարված է հավասար հեռավորության վրա տեղաբաշխված տերևների հինգ պսակներով: Բրոնզե մի զարդածող անցնում է ցածի պսակի ներքևով և կամարածև կորանալով կազմում ոտքերը: Զողը որպես զարդ կրում է մարդկային զլխով երկու թևավոր էակների կերպարանքներ և առյուծի երկու զլուխներ, որտեղից դուրս է գալիս եզան երկու կճղակ, որոնք աշտանակի հիմքն են կազմում⁵:

Նույն տեղում գտնված բրոնզի մի կտոր ներկայացնում է կանացի դեմք, հավանական է՝ աստվածուհու, որը թևավոր արևի շրջանակ է հագել⁶: Դա, զուցե, ծիսական մի ամանի կանթ է, նման Մուծածիրի տաճարի զինու անոթին: Կարելի է նշել մակ մի ճրագ և բրոնզե կոթով մի կուծ⁷:

¹ K. Lehmann-Haupt, Armenien, II, 2, էջ 258: H. Lynch, Armenia, II, էջ 62:

² Մի բեկորը պատկանում է Մ. Վոզնիս. Perrot-Chipiez, II, էջ 725: Մեկ ուրիշը հայտնաբերվել է Կ. Լեման-Հաուպտի կողմից, Armenien, II, 2, էջ 485:

³ K. Lehmann-Haupt, Armenien, II, 2, էջ 509 և 748: H. Lynch, Armenia, II, էջ 63:

⁴ Նույնը, էջ 534. նման աթոռի պատկերը վերականգնված է Պերո-Շալիեի կողմից, II, էջ 728:

⁵ K. Lehmann-Haupt, Materialien, էջ 93 և Armenien, II, 2, էջ 483: Ներկայումս գտնվում է Համբուրգի թանգարանում:

⁶ K. Lehmann-Haupt, Armenien, II, 2, էջ 262-263:

⁷ Նույնը, էջ 563:

¹ K. Lehmann-Haupt, Materialien, էջ 80:

Թոփրակ-կալայի պեղումներից երևան են հանվել արծաթի կտորներ: Մի մեծ կարասում գտնվել են երկու արծաթե անոթներ: Դրանց զլանածն լինելը հատկանշական ոչինչ չի ներկայացնում¹: Մակայն նույն կարասի խորքից հանված փոքրիկ արծաթե մի տուփ հետաքրքրություն է շարժում²: Դա ունի երկու ոսկյա կոճակով կրկնակի կափարիչ և դեռ պարունակում էր մի տեսակ փռոց: Զինվածական տարրալուծման շնորհիվ նկատվեց, որ դա մի բաղադրություն է, որով ոսկեբյուրեղյան մեջ սև գծեր են ստանում ոսկու և արծաթի վրա: Թանկագին մետաղներ մզացնելու արվեստը Եվրոպայում ռուսական Տուլա քաղաքի անունն է կրում: Վերջինս դրանով պարտական է Կովկասին, իսկ Կովկասը՝ Վանին, ուր հին արվեստը շարունակում է բարգավաճել:

Երկաթը ծանոթ էր, բայց դեռ շատ չէր գործածվում: Սարգոնը Մուծածիրում միայն երկաթե մի քանի հնոցներ, ճրագներ և անհայտ առարկաներ է գտել, հավանական է ամաններ՝ nisbi, nasri, aruthi: Տնտեսական ամանները մեծ մասամբ բրոնզից էին: Երկաթը ծառայում էր կացիների, մուրճների, խոփների, արոթների, կեռերի պատրաստման համար³: Կա երկաթե շինվածքի մի օրինակ՝ քարի հետ զուգորդված, որը պատկերում է սալի վրա փորագրված նվիրական մի ծառ. ծառի դիմաց մորուքով և գլխարկով ասուրական տիպի մի մարդ ձեռքերը տարածել է դեպի ծառը: Ծառը և մարդը տաշված են քարից և լցված երկաթով: Հավանաբար, պաշտամունքի վերաբերյալ մի տեսարան է⁴:

Նույն կարգի մեկ ուրիշ տեսարան է վերարտադրված մի կշռաքարի վրա. աղերսարկուի դիրքով մի մարդ է կանգնած ծառի դիմաց, նրա մտադրված է կուժ, անշուշտ՝ գինու զոհաբերության համար, իսկ հետևում, սեղանի վրա՝ երեք հենարան և կողքին՝ մեկ ուրիշ ծառ⁵:

Երկրի արդյունագործության մեջ մեծ տեղ էր զբաղում խեցեգործությունը: Կիրառական նշանակությունը տիրող է այդ գործում, բայց գեղարվեստական ճաշակը ևս համեստ կերպով երևան է գալիս: Նրանք սիրում էին հատկապես մեծ կարասներ պատրաստել: Թոփրակ-կալայում հայտնաբերված ներքնատանը քսան կարաս կար, բայց, դժբախտաբար, միայն երկուսն էր անվթար մնացել: Դրանք նույն տեսակի կարասներ են, ինչ Մալմանասար III-ը, որպես ավար, կառքով տեղափոխել է Ասորեստան և

որը պատկերել է տվել Բալավաթի դռների բրոնզյա նշանավոր պատանների վրա¹: Կարասների արդյունաբերությունը Հայաստանում դեռևս շարունակվում է և ծառայում գինի պահելու, ինչպես Սարգոնի ժամանակ, որի զինվորները «ուրարտական կարասներից հիանալի գինի էին հանում գետի ջրերի մման և անհագ խմում էին»:

Բրուտագործությունը ձևով և ծավալով բավական հարուստ ու բազմազան էր: Թոփրակ-կալայի պեղումներից հայտնաբերվել են ամեն տեսակի մնուշներ՝ սկսած ամենափոքր կուժից մինչև կարասը և Մուծածիրի տաճարի առջև գտնված անոթները: Այս տաճարում լիքն էին զանազան տեսակի ամանեղեններ: Սարգոնը շատ մնուշների անուններ է տալիս, որոնց նշանակությունը հայտնի չէ, ինչպես՝ gangani, pursiti, qatanate, luṭti, susani, mukarisi, nabli, hurupati, nasri և այլն: Դպիրը չի կարողացել 120 առարկաների անունները տալ, որոնք նույնպիսի անոթներ էին:

Ուրարտական խեցեղենը հիմնականում, որքան որ այն մեզ ծանոթ է Թոփրակ-կալայի պեղումներից, չի տարբերվում ներկայումս Հայաստանում արտադրվող խեցեղենից²:

Մի քանի խեցիներ ծածկված են մի տեսակ կարմրագույն փայլուն լաքով: Մանրադիտական վերլուծումը ցույց է տվել, որ իսկական լաքի մասին չէ խոսքը: Ուրարտացի բրուտագործներին հաջողվում էր իրենց արտադրությանը արտաքին փայլ տալ՝ խեցու երեսին նույն կավից բարակ շերտ քսելով, բայց լավ թրծված և լավ փռոցացված, որից հետո նորից մի քնթև թրծում էին:

Գալով խեցեղենի նկարագրումանը, դա չէր առաջադիմել: Մի քանի անոթներ իրենց փորի վրա թռչունի պատկերներ են կրում՝ ծովառների երկու շարքի միջև շարված: Մի անոթ ուշադրություն է գրավում իր երկրաչափական նկարներով³:

Կարասների եզրերին երբեմն փորագրված են պատկերներ, օրինակ՝ մտած հորթ, կամ մի տեսարան՝ առյուծը հորթ պատառոտելիս⁴: Մի կարասի վրա սեպագիր տեքստ կա⁵:

¹ K. Lehmann-Haupt, Armenien, II, 2, էջ 548:

² Նույնը, էջ 482:

³ Նույնը, էջ 544-547:

⁴ Նույնը, էջ 559:

⁵ Նույնը, էջ 549:

¹ K. Lehmann-Haupt, Armenien, II, 2, էջ 548:

² Նույնը, էջեր 560, 564-570, 573:

³ Նույնը, էջ 576:

⁴ Նույնը, էջ 470-473:

⁵ Նույնը, էջ 560: Արձանագրությունը՝ aqarki 5 hi-ru-si, հմմտ. № 132: Մի ուրիշ քեկոթի վրա կարդացվում է՝ 4 hi-ru-si, տե՛ս նույնը, էջ 473:

6. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԵՁՈՒՆ

Ուրարտական գրականությունը հարուստ չէ ո՛չ ծավալով և ո՛չ էլ տեսակներով: Ինչպես մենք տեսանք, գրավոր նյութը բաժանվում է երկու խմբի՝ հուշարձանների տեքստեր և պատմական կամ ժամանակագրական տեքստեր: Առաջինները զանազան կառուցումների մասին են պատմում, երկրորդները ազգական արշավանքներն են նկարագրում:

Տեքստերի շարադրանքը շատ պարզ և բավական միօրինակ է ոճի և նույնիսկ պարունակության տեսակետից: Մեծուայի ժամանակ շարադրված առաջին վավերագրերը ծառայել են որպես օրինակ հետագա տարիների համար: Մակայն որոշ առաջադիմություն նկատվում է պատմական ճյուղում: Մենք մի քանի նմուշներ կտանք առաջին և վերջին դարաշրջանից՝ երկու տեքստ հուշագրական և երկուսը՝ պատմագրական: Դրանք հնարավորություն կտան գաղափար կազմելու երկու խմբի մասին, ինչպես և լեզվի կառուցվածքի մասին (դա կհեշտացնի ուրարտերեն լեզվի հետագա քննությունը):

Արձանագրություններ, որոնք հիշատակում են շենքի, տաճարի հիմնադրումը, ջրանցքի կառուցումը կամ այգու, պարտեզի տնկումը, մի քանի տիպի են՝ կարճ տարբերակ և առավել կամ պակաս երկար տարբերակ:

Կարճ տարբերակը շարադրվում է այսպես. «Խալդիի գործությամբ այսինչ բազավորն իրականացրեց այսինչ կառուցումը»: Շատ հաճախ ավելացվում են բազավորի անունն ու տիտղոսները: Երկար տարբերակը մակ կառուցման առթիվ փորագրված արձանագրության հիշատակումն է անում և անեծք է ավելացնում՝ միշտ նույն բառերով, նրա հասցեին, ով վնաս կհասցնի արձանագրությանը կամ նրա հեղինակի հիշատակին: Երբեմն, մանավանդ եթե ծառատնկման մասին է խոսքը, պատվիրվում է որոշ զոհաբերումներ կատարել Խալդիին կամ մյուս աստվածներին:

Այստեղ բերված տիպարային արձանագրությունը վերաբառնալից է CICH-ի № 34-ից:

1. ^{ILU}Hal-di-ni-ni uš-ma-ši-ni ^IMe-nu-a-še
^Iš-pu-u-i-ni- hi-ni-še i-ni pi-li
a-gu-ni ^IMe-nu-a-i pi-li ti-i-ni
^{ILU}Hal-di-ni-ni al-su-ši-ni ^IMe-nu-a-ni
5. ŠARRU DANNU ŠARRU al-su-i-ni ŠARRU ^{MATU}Bi-a-i-na-e
a-lu-u-si ^{ALU}Tu-uš-pa-e ALU

^IMe-nu-a-še a-li a-lu-še i-ni TUPPU tu-li-e
a-lu-še pi-tu-li-e a-lu-še a-i-ni-e-i
i-ni-li du-li a-lu-še u-li-še ti-u-li

10. i-e-še i-ni pi-li-e a-gu-bi tu-ri-ni-ni
^{ILU}Hal-di-še ^{ILU}ADAD-še ^{ILU}ŠAMAS-še ^{ILU}ma-ni
^{ILU}ŠAMAS- ni pi-i-ni me-i ar-ḫi-u-ru-li-a-ni
me-i i-na-i-ni me-i na-a-ra-a
14. a-u-i-e u-lu-u-li

Ահա տեքստի բառացի ու տողացի թարգմանությունը.

¹Խալդիի գործությամբ, Մեծուայն ² Իշպուլիմիի որդին, այս ջրանցքը ³ անցկացրեց, անունը Մեծուայի ջրանցք (t): ⁴ Խալդյան մեծությամբ Մեծուայն ⁵ հզոր բազավոր (t), մեծ բազավոր, Բիաիմայի բազավոր, ⁶ իշխան Տուշպա քաղաքի: ⁷ Մեծուայն ասում է՝ ով այս արձանագրությունը վնասի, ⁸ ով (այն) կործանի, ով ուրիշի համար ⁹ սույն (բաները) կատարի, ով, ուրիշը... ասի՝ ¹⁰ «ես բացեցի այս ջրանցքը», ¹¹ քո՞ղ աստված Խալդին, փոթորկի աստվածը (= Թեշեբա), Արևի աստվածը (= Արդիմի), անհետացնել տան Արևի երեսից քանդողին, և arḫiurulia և inaini: Վերջին տողերը պարզ չեն, այնպես որ անեծքի էությունը դեռ մթին է մնում:

Միայն երեք առաջին տողերը, կամ դրանք՝ հաջորդ երկու տողերի հետ միասին, կազմում են կարճ տարբերակը, որ գտնում ենք Շամիրամի ջրանցքի անբարտակի վրա և այլուր, ինչպես և գտնում ենք երկար տարբերակը, այսինքն՝ անեծքի բանաձևի հետ միասին:

Վերցնենք մեկ ուրիշ արձանագրություն, ավելի ուշ ժամանակվա, որի լուսանկարը մեր տրամադրության տակ է, № 153U¹:

1. ^{ILU}Hal-di-e BELU i-ni ^{BIT}PAPAKKU ^IRu-sa-še
^IAr-giš-te-ḫi-ni-še ši-di-iš-tu-ni ^{ILU}Hal-di-ni-ni
uš-ma-ši-ni ^IRu-sa-še ^IAr-giš-te-ḫi-ni-še
a-li qar-bi sal-zi ma-nu u-i gi-e-i
5. iš-t-ni ši-da-u-ri šu-ki ^{ILU}Hal-di-še

¹ Լուսանկարը մեզ ուղարկել է Առաջատակահի Հայոց քեմի առաջնորդ գերապատիվ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը, որին հայտնում ենք մեր երախտագիտությունը: Քարակոթողը գտնվում է Մակուի խանի տան քակում, ուր բերվել է Մակուի մոտ գտնվող մի քաղաքի ավերակներից: Կոնս Կանցը, Թեհրանի գերմանական դեսպանատան կցորդը, մի լուսանկար է առաքել Ա. Մեյսին, որը նա հրատարակեց JRS-ում, 1912 թ., էջ 107: Ն. Մառը նույնպես հրատարակել է այդ արձանագրությունը ըստ նույն լուսանկարի, որը նույն տեղից է տալիս: Записки Восточного отделения Русск. арх. общ., XXV:

u-bar-du-du-ni i-e-še ši-di-iš-tu-bi
te-ru-bi ti-ni¹ Ru-sa-i ALU TUR
¹Ru-sa-še¹ Ar-giš-te-ḫi-ni-še a-li
a-lu-še i-ni TUPPU tu-li-e a-lu-še

10. pi-tu-li-e a-lu-še ip-ḫu-li-e tu-ri-ni-ni
^{ILU}Hal-di-še^{ILU}ADAD-še^{ILU}ŠAMAS-ni-še^{ILU}ILU^{pl}-še
me-ku-u-i ti-ni ma-nu-ni^{ILU}ŠAMAS-ni-ka-i
¹Ru-sa-a-ni¹ Ar-giš-te-ḫi
ŠARRU DANNU ŠARRU MATU.MATU^{pl}-a-u-e

15. ŠARRU^{MATU} Bi-a-i-na-u-e ŠAR ŠARRU-u-e
a-lu-si^{ALU} Tu-uš-pa-a-e ALU

Բառացի քարգանությունը.

¹ Տեր Խալդիին այս սրբավայրը Ռուսան, ² Արգիշտիի որդին կառուցեց: Խալդյան ³ հզորությամբ Ռուսան, Արգիշտիի որդին, ասում է. (4 - 5-րդ տողերը մթին են): ⁶ ես (այն) կառուցեցի ⁷ (և դրան) Ռուսայի փոքր քաղաք անունը դրեցի: ⁸ Ռուսան, Արգիշտիի որդին, ասում է. ⁹ ով այս արձանագրությանը վնասի, ով (այն) ¹⁰ կործանի, ով (այն) տապալի, ¹¹ բո՛ղ Խալդի աստվածը, փոքորկի աստվածը (= Թեշեբա), Արևի աստվածը (= Արդիհի) ¹² քանդողի անունը զնջեն Արևի առաջ: ¹³ Ռուսան, Արգիշտիի որդին, ¹⁴ հզոր թագավոր (t), բազմաթիվ երկրների թագավոր, ¹⁵ Բիսահի(ի)-ի թագավոր, թագավորաց թագավոր, ¹⁶ իշխան Տուշպա քաղաքի:

Նշենք, որ անեծքին վերաբերող նախադասությունը նույնպես պարզ չէ, որ թագավորի անունն ու տիտղոսները տեքստի վերջում են գտնվում, ոչ մեջտեղում, ինչպես նախորդ տեքստում:

Մենուայի օրով հաստատված պատմագրական ժամըրը զարգացավ իր որդի և հաջորդ Արգիշտիի ժամանակ և ընդունեց այնպիսի ձևեր, որոնք առանց զգալի փոփոխությունների մնացին, մինչև պետության վերջը:

Պատմական նկարագրությունները բնորոշ են այն հանգամանքով, որ արշավանքների նախաձեռնությունը միշտ երկրի մեծ աստված Խալդիին է վերագրվում: Խալդին անձամբ գնում է ու կռվում հակառակորդ երկրի դեմ և ապա բանակի զուխն անցած թագավորին առաջնորդում կռվի դաշտ՝ նախապատրաստված նվաճումներն իրագործելու համար: Այդ գաղափարը պատկերացվել է հետևյալ ձևով.

Խալդին ուժեղ է, նրա մարտիկը ուժեղ է. նա նվաճեց այս ու այն երկիրը: Նրա զորությամբ թագավորը գնաց այդ երկրների դեմ և գրավեց դրանք: Երբեմն թագավորն ավելին է անում, քան աստվածը ցույց էր տվել - ku-ru-bi

կամ ku-ru-bi ni ku-ru-bi pari(e), որին հաջորդում են երկրների անունները: Դեռևս չի հաջողվել ճշգրտել այդ արտահայտության իմաստը. թվում է թե դեպի հարևան երկրների սահմանները կամ շրջակայքը թագավորի առաջխաղացման մասին է խոսքը: Հաղթողը կոթող է կանգնեցնում և կամ նվաճված երկրում ժայռի վրա արձանագրություն փորագրում: Իր հաջողությունը հիշատակելուց հետո նա անիծում է նրան, ով կքանդի այդ հուշարձանը, ըստ անեծքի սովորական դարձած ձևի:

Արգիշտին այդ տարբերակի վրա մի քանի լրացումներ է անում: Նախ՝ Խալդին, թշնամի երկրները հպատակեցնելուց հետո, «դրանք մատուցում է թագավորին»՝ tequ-ni¹: Ապա՝ թագավորը, նախքան պատերազմի մեկնելը, դիմում է hutia-di, աստվածներին, ոչ միայն Խալդի աստծուն, այլ նաև Թեշեբային ու Արդիհիին և ստանում նրանց քաջալերանքը: Թագավորը նվաճում է նշված երկրները և նրանց թագավորներին ստիպում հարկ վճարել: Վերջապես, թվարկվում է ավարը, որը վերցված է ավերված կամ հպատակեցված երկրներում: Այն դեպքում, երբ մեկ տարվա ընթացքում շատ արշավանքներ են տեղի ունեցել, պատմությունը վերջանում է հետևյալ բաներով՝ «Այս սխրագործությունները կատարեցի մեկ տարվա ընթացքում»: Այնպես որ Մենուայի օրով մշակված պատմական նկարագրությունների շրջանակները լայնանում են Արգիշտիի ժամանակ և հետագայում ուժի մեջ մնում որպես ամսխալ կանոն:

Տալիս ենք դրանցից երկու մնուշ (կարճ տարբերակ և երկար տարբերակ):

Սհա առաջին տարբերակի օրինակը, Բալուի № 31 արձանագրությունը.

- ^{ILU}Hal-di-ni uš-ta-a-de ma-si-ni-i-e
giš-šu-ri-e ka-ru-ni^{ALU}Še-be-te-ri-a-ni
MATU-ni-e ka-ru-ni^{ALU}Ḫu-za-na-a-ni MATU-ni-e
ka-ru-ni^{MATU}Šu-pa-a-ni^{ILU}Hal-di-i ku-ru-ni
- ^{ILU}Hal-di-i-ni giš-šu-ri-i ku-ru-ni
^{ILU}Hal-di-ni-ni uš-ma-ši-ni uš-ta-a-be
¹Me-nu-a-ni¹Iš-pu-u-i-ni-e-ḫe
ḫa-u-ni^{ALU}Še-be-te-ri-a-ni MATU e-ba-ni-e
ḫa-u-ni^{ALU}Ḫu-za-a-na-ni MATU e-ba-ni-e
- ḫa-u-ni^{MATU}Su-u-pa-a-ni ku-ru-ni
pa-a-ri-e^{MATU}Ḫa-a-ti-i-na-a(...)
^{ILU}Hal-di-e-i ini^{ABNU}pu-lu-si ku-gu-u-ni

¹ Թեպետ, այդ արտահայտությունն արդեն գործածում է Մենուան № 21-ում:

- ^{ALU}Še-be-te-ri-a ^{ILU}Hal-di-i-i-a-ra-ni
 ši-di-iš-tu-ni ^{ALU}Še-be-te-ri-a a-su-ni
15. ¹Su-li-e ha-a-u-a-li
 ŠARRU ^{ALU}Me-li-te-i-a-al-je 'a-al-du-u-ni
 me-ši-ni pi-i ^{ILU}Hal-di-ni-ni al-su-i-ši-i-ni
¹Me-nu-a-ni ¹Iš-pu-u-i-ni-e-je
 ŠARRU DANNU ŠARRU al-su-u-i-ni-e
20. ŠAR ^{MATU}Bi-i-a-i-na-a-u-e
 a-lu-si-e ^{ALU}Tu-uš-pa-a-e ALU
¹Me-nu-a-še a-li a-lu-še i-ni TUPPU
 pi-tu-li-i-e a-lu-še tu-u-li-i-e
 a-lu-še u-li-e i-ni-li du-li
25. tu-ri-ni-ni ^{ILU}Hal-di-še ^{ILU}ADAD-še ^{ILU}ŠAMAS-še
 ILU^{pl}-še ma-a-ni ^{ILU}ŠAMAS-ni pi-e-i-ni-e
 me-i ar-ḫi-u-ru-li-a-ni me-i i-na-i-ni
 me-i na-ra-a-a-u-i-e u-lu-u-li-e

Բառացի և տողացի թարգմանությունը.

1. Խաղին մեկնեց, նրա
 մարտիկը հպատակեցրեց (քաղաք) Շերեբերիա-նին
 (և նրա) երկիրը. հպատակեցրեց (քաղաք) Խուզանանին (և նրա)
 երկիրը.
 հպատակեցրեց (երկիր) Մուպա-նին: Խաղին ուժեղ է:
5. Խաղյան մարտիկն ուժեղ (է):
 Խաղյան զորքայանք մեկնեց
 Մեմուան Իշպուինի որդին,
 նա գրավեց Շերեբերիա-նին (և նրա) երկիրը,
 նա գրավեց Խուզանա-նին (և նրա) երկիրը,
10. նա գրավեց Մուպանին: Նա հասավ (?)
 շրջակայքը (?) Խաթթինա (երկրի):
 Խաղին նա տաշեց այս կոթողը
 Շերեբերիայում: Խաղին մի սրբավայր
 նա կառուցեց Շերեբերիայում:
15. Սուլիեին բռնեց
 (քաղաք) Մելխտեիայի թագավորին, (նրան) ենթարկեց
 հարկ վճարելու:
 Խաղյան մեծությամբ
 Մեմուա Իշպուինի որդի,

- հզոր թագավոր, մեծ թագավոր,
 20. Բիաինայի թագավոր,
 Տուշպա քաղաքի իշխան:
 Մեմուան ասաց. ով այս արձանագրությունը
 փչացնի, ով (այն) տապալի, ով այն քանդի,
 ով ուրիշի համար սույն (քաները) անի,
 25. քո՞ղ աստվածներ Խաղին, Թեշերան, Արդինին
 (նրան) անհետացնեն Արևի առջևից
 քանդողին...

Հավելյալ տարրերը, որ Արդիշտիի թագավորության ժամանակից սկսած
 հարստացնելու են այս տարրերակը, կտեսնենք հետևյալ տեքստում, որ
 Արդիշտիի 9-րդ արշավանքի պատմությունն է, № 111:

Sayce XL; Schulz V.

42. ^{ILU}Hal-di-ni uš-ta-bi ma-si-ni-e giš-šu-ri-e
 ka-ru-u-ni ^{MATU}Ma-na-a-ni ^{MATU}e-ba-ni-i-e
 ka-ru-u-ni ^{MATU}Bu-uš-tu-ni te-qu-u-a-li
45. ¹Ar-gi-iš-ti-i-ka-i ¹Me-nu-a-ḫi-ni-i-e
^{ILU}Hal-di-ni-ni al-su-i-ši-ni ¹Ar-giš-ti-še
 a-li-e ḫu-ti-a-di ^{ILU}Hal-di-i-e-di BELU-di
^{ILU}ADAD-di ^{ILU}ŠAMAS-di ILU^{pl}-aš-te ^{MATU}Bi-a-na-aš-te
 a-lu-si-ni-ni al-su-i-ši-ni a-li-a-ba-di
50. ḫa-a-ši-al-me ILU^{pl} ¹Ar-gi-iš-ti-i-še
¹Me-nu-a-ḫi-ni-še a-li-e ^{ILU}Hal-di-i ku-ru-ni
^{ILU}Hal-di-ni giš-šu-ri-i ku-ru-ni ^{ILU}Hal-di-ni-ni
 al-su-i-ši-ni uš-ta-di ^{MATU}Bu-uš-tu-e-di
 ḫa-u-bi ^{MATU}As-qa-ia-i ḫu-bi ^{MATU}Ša-ti-ra-ra-u-ni
55. an-da-ni ^{MATU}U-gi-iš-ti-ni 'a-al-du-bi
 sal-ma-at-ḫi ^{MATU}U-u-ši-ni ku-ṭe-a-di
 pa-ri-e ^{MATU}A-la-ṭe-i-e ^{MATU}Ba-ba-a-ni
^{MATU}e-ba-a-ni a-ma-aš-tu-bi ALU^{pl} ḫar-ḫar-šu-bi
 'a-a-še ^{SAL}lu-tu iš-ti-ni-ni pa-ru-u-bi
60. (...) 873 ^{AMELU}ta-ar-šu-a-ni-e MU
 a-li-ki za-aš-gu-bi a-li-ki še-ḫi-ri a-gu-bi
 (...) 80 ANŠU.KUR.RA^{pl} pa-ru-bi
 (...) ANŠU.A.AB.BA^{pl} (...) ^{ALPU}pa-ḫi-ni
 (...) 500 ^{IMMERU}šu-še

65. ¹Ar-giš-ti-še a-li-e ^{LU}Hal-di-a iš-ti-ni-e
i-na-ni-li ar-ni-u-ši-ni-li I MU za-du-bi

Բառացի թարգմանություն (հնարավորին չափ ճշգրիտ)։

42. Խալդին մեկնեց։ Նրա մարտիկը

հպատակեցրեց Մանան-նի երկիրը,

հպատակեցրեց Բուշթու-նին. դրանք մատուցեց

45. Արգիշտին՝ Մենուայի որդուն։

Խալդյան մեծությամբ Արգիշտին

ասում է. ես դիմեցի տեր Խալդին,

Թեշեբային, Արդինին (և մյուսներին), Բիանայի աստվածներին։

Մեծ (աստվածների) մեծությամբ, օգնություն

50. ինձ հասցրին աստվածները։ Արգիշտին,

Մենուայի որդին, ասում է. Խալդին ուժեղ է,

խալդյան ռազմիկը ուժեղ է։ Խալդյան

մեծությամբ գնացի Բուշթու-եղի (երկիրը),

գրավեցի Աշկահա երկիրը, գրավեցի Շաթիրարաու-նի (երկիրը)

55. (55-56 տողերի իմաստը պարզ չէ)

ընթացա Ալատե-ն երկրի շրջակայքը. Բարա-նի

երկիրն այրեցի, քաղաքները կողոպտեցի,

այնտեղից տղամարդ ու կին տարա.

60. (...) հազար 873 մարդ՝ տարվա ընթացքում,

ոմանց կոտորեցի, մյուսներին կենդանի վերցրի։

(...) 80 ձի տարա (նաև)

(...) ուղտ, (...) եզ,

(...) 500 ոչխար։

65. Արգիշտին ասաց. այնտեղ Խալդիի օգնությամբ այս սխրագործու-

թյունները մեկ տարվա ընթացքում կատարեցի։

Այս կտորների թարգմանությունը, ինչպես որ կա, անշուշտ, շատ կետե-
րում վիճելի է։ Այնուհանդերձ, իր ամբողջության մեջ այն ճիշտ է այնքա-
նով, որքանով որ տալիս է ընդհանուր իմաստը, որի շնորհիվ կարելի է որոշ
գաղափար կազմել ուրարտացիների գրական արտադրանքի բնույթի մա-
սին, ինչպես նաև նրանց մտածելակերպի և արտահայտչական ձևերի վե-
րաբերյալ։

Գալով լեզվի կառուցվածքին, մենք համառոտակի այն կքննենք ուրար-
տերենի բնագավառում գոյություն ունեցող հետազոտությունների հիման

վրա։ Ուրարտացիները գործ էին ածում վանկային համակարգի սեպագրու-
թյուն, որը փոխ էր առնված ասորեստանցիներից, իսկ վերջինները իրենց
հերթին այն ստացել էին ակկադցիներից կամ բաբելոնյան սեմիտներից։
Մրանք էլ մշակել էին այն սուներների գործածած գաղափարագրերի հա-
մակարգը պարզեցնելու միջոցով։

Այս վերջին համակարգում սեպածև նշանները ցույց էին տալիս գաղա-
փարներ, բառեր։ Ակկադացիներին հաջողվեց դրանք վերածել վանկային
արժեքների։ Սակայն նրանք հին համակարգից պահեցին որոշ թվով գա-
ղափարանիշեր, որ փոխանցեցին ասորեստանցիներին, ապա և ուրար-
տացիներին։

Այս գաղափարանիշերից ամենակարևորները հետևյալներն են, որոնք
հաճախ են կրկնվում ուրարտական արձանագրությունների մեջ։

Սուներական AN «աստված», որ ասորեստանցիները կարդում էին *ILU*
«աստված»¹

EN «տեր», աս. *BELU*

KA «դուռ», աս. *BABU*

URU «քաղաք», աս. *ALU*

KUR «երկիր», աս. *MATU*

E «տուն», աս. *BITU*

E. GAL «մեծ տուն», «պալատ», աս. *EKALLU*

LUGAL «թագավոր», աս. *ŠARRU*

UD «օր», աս. *UMU*

MU «տարի», աս. *ŠATTU*

GUD «եզ», աս. *ALPU*

UDU «ոչխար», աս. *IMMERU*

IM «փոթորկի աստված», աս. *ADAD*

UTU «արևի աստված», աս. *ŠAMAS*

GIŠ «փայտ», աս. *ISU*

GEŠTIN «զինի», աս. *KARANU*

ANŠU «ավանակ», աս. *IMERU*

DUB. TE «արձանագրություն», աս. *TUPPU* և մի քանի ուրիշներ²։

¹ Մենք գրում ենք, ինչպես սովորաբար գրում են սեպագրագետները. սուներական բառերը
ուղիղ մեծատառերով, ասորական բառերը նոտրգիր մեծատառերով, իսկ տեքստերը՝ միշտ
փոքրատառերով։

² Կ. Լեման-Հաուպտը CICH-ում ընդունել է սուներական գաղափարանիշերն ասորերեն
թարգմանելու սխառնել, ելնելով այն մտքից, որ ուրարտացիները գոյությունը փոխ են առել
ասորեստանցիներից և գաղափարանիշերը կարդում էին ասորերեն։ Յո. Ֆրիդրիխը

Ուրարտացիները գործածում էին գաղափարանիշերը նախ և առաջ որպես որոշիչներ, այսինքն՝ ցույց տալու համար, որ այդ գաղափարանիշին հաջորդող բառերը համապատասխանորեն աստծու, երկրի, քաղաքի և այլնի անուններ են: Վերծանման իսկապես զարմանալի առաջադիմության շնորհիվ բոլորովին դժվար չէր վերծանել ուրարտական արձանագրությունները, բայց խնդիրը՝ հասկանալն էր: Հռչակավոր արևելագետ անգլիացի Արչիբալդ Սեյսն առաջինը կարդաց ու թարգմանեց ուրարտական տեքստերը: Նա նույնիսկ փորձեց ուրվագծել լեզվի քերականությունը և հաստատեց բառապաշարի մի մասը: Բոլոր դժվարությունները հաղթահարելու ցանկությամբ տարված՝ նա ստիպված է եղել բավական լայն տեղ տալ կամայական կամ չհիմնավորված ենթադրությունների:

Այնուհետև լեզվի ուսումնասիրությունը մեծ առաջընթաց է ապրել: Շատ ավելի լավ են սկսել հասկանալ քերականական ձևերն ու նախադասությունների կառուցվածքը: Մտաչելի բառապաշարը մեծապես աճել է: Կելի-շինի և Թոփուզավաի երկլեզվյա կոթողները, անշուշտ, Ռոզեթի քարի դերը կխաղային, եթե ափսոսալի վիճակում չլիներին: Այնուհանդերձ, նրանք մպաստել են մի շարք տերմինների և ձևերի ըմբռնմանը:

Բանասիրական հետազոտությունները, հիմնված, մասնավոր, զուգահեռ հատվածների համեմատության վրա, հիմնականում ավելի արդյունավետ եղանակներով, քան թե իմաստաբանության համար:

Ենթադրություններ անելը ևս միջոց է անհայտ մի բանի վրա գրոհելու, բայց դրա համար պետք է ունենալ բանասիրական հոտառություն և բավական խոհեմություն՝ կամայականությունից խուսափելու համար: Այս տեսակի ենթադրությունների շարքում հատուկ ուշադրության են արժանի նրանք, որոնք թելադրված են ասուրական ռճաբանությամբ: Դրանք ավելի ստույգ են երևում, հաստատվելու ավելի հավանականություն ունեն: Ուրարտական դպիրները, որոնք ասորեստանցիների աշակերտներն էին, անշուշտ, իրենց պատմությունները շարադրելու ձևում նրանց ազդեցության ներքո էին գտնվում: Շատ բնական է, ուրեմն, ուրարտական տեքստերում ասուրական դարձվածքների ներգործությունը որոնել:

Որոշ դեպքերում, երբ գաղափարանիշերը զուգահեռ տեքստերում փոխարինված են հնչյուններով գրված բառերով, եզրակացվում է, որ այդ բա-

նախընտրում է, և իրավացիորեն, պահպանել դրանց սուներական արժեքը: Դա ոչ շատ կարևոր՝ պայմանադրական հարց է: Ն. Մառը որոշիչները լատիներեն էր դարձնում: Վարժված լինելով CICH-ի տառադարձությանը, մենք թողնեցինք այնպես, ինչպես կա, առանց, սակայն, համաձայնելու նրա հրատարակչի հետ: Ուրարտացիները, անշուշտ, գաղափարանիշերն ասուրերեն կամ սուներերեն չէին կարդում, այլ, ինքսկե, իրենց լեզվով:

ները ուրարտական համարժեքներ են: Այդպիսի պարագաներում բառերի իմաստը քացարձակ ճշտությամբ որոշվում է:

Այդ միջոցներով շատ գնահատելի արդյունքների են հնձել: Կատարված նվաճումներն ակներև են: Սակայն չպետք է պատրանքներով տարվել և կարծել, թե բոլոր դժվարությունները հաղթահարված են: Քերականական համակարգը, նույնիսկ արված հմուտ մեկնաբանությունների լույսի տակ, դեռևս պարուրված է գաղտնիքներով:

Այս խնդրում մի հեղինակավոր անձ, զգույշ քննադատությամբ, վերջերս ամփոփեց ուրարտերեն լեզվի ուսումնասիրության բնագավառում ստացված արդյունքները¹: Դա ուրարտերենի քերականության մի ուրվագիծ է: Այն մեզ ազատում է այստեղ լեզվի նկարագրությունը կատարելուց: Մենք սահմանափակվում ենք այդ յուրօրինակ լեզվի ընդհանուր բնույթի մասին որոշ խորհրդածություններով:

Հնչյունային համակարգը պարզ է. ուրարտերենը չորս ձայնավոր ունի՝ *a, e, i, u*, և տասնյոթ բաղաձայն՝ *b, d, g, h, k, l, m, n, p, q, r, s, š, š, t, t, z*: Միայն ձայնավորներն են, որոնք հատուկ նշաններ ունեն, բաղաձայնները նշան չունեն, այլ վանկերով են նշանակվում և, ուրեմն, այնքան նշաններ ունեն, որքան վանկ են կազմում՝ *ba, be, bi, bu, ab, eb, ib, ub, da, de, di, du, ad, ed, id, ud* և այսպես՝ 17 հնչյունների համար: Կան նաև ուրույն նշաններ երեք-տասանոց վանկերի համար՝ *bab, beb, bib, bub* և այլն... թեպետ կարելի է գրել և *ba-ab, bi-ib* և այլն, որոնք ավելի հաճախ են գործածվում:

Որոշ հաճախակի գործածվող նշաններ ներկայացնում են բառեր: Սրանք գաղափարանիշեր են, որոնք առաջին հերթին ծառայում են որպես որոշիչներ: Որոշիչներից և գաղափարանիշերից ամենից ավելի գործածվողները նշված են վերը: Ուրարտացիների հնչյունային համակարգը շատ ավելի աղքատ է, քան հայերենի և վրացերենի համակարգը: Ուրարտացիներին հայտնի չեն այս երկու լեզուներին այնքան բնորոշ *e, ç, j* և *č, ç', dj* պայթաշփականները: Այս հնչյուններով և այլ հնչյունային առանձնահատկություններով հայերենն ու վրացերենը պարտական չեն ուրարտերեն լեզվի ազդեցությանը, որքան էլ բնական լինեք այդպես ենթադրել:

Ուրարտական բառերն ընդհանրապես վերջացնում են *-i*-ով, ինչպես՝ *pili* «ջրանցք», *ebani* «երկիր», *sur* «տեր», *erili* «թագավոր», *timi* «ամուսն», *esi* «տեղ», *giššuri* «ռազմիկ», *Isarluhi*, *Uraqihzahi*, *Uarqurahi*, *Luitihayri* և այլն:

¹ *Joh. Friedrich, Einführung ins Urartäische, 1933: Šb'u* և *M. Tsereteli, Etudes ourartiennes, «Revue d'Assyriologie», vol. 32-33, 1935-1936* և *Remarques sur les travaux ourartéologiques, 1934: Յո. Ֆրիդրիխը սպառնիչ պատասխան է տվել այն առարկություններին, որոնք կարող էին այս առթիվ առաջ քաշվել, և լայնորեն ճշել է լուծման պայտող խնդիրները:*

Մի քանի բառեր վերջանում են **-a-ով**՝ burgana «դրյակ», qiura «գետին», անուններ, ինչպես Ռուսա, Թեշերա և այլն, ինչպես և **-še-ով**՝ aše «մարդ», meše «հարկ, նվեր», gunuše «կոիվ», usmaše «հզորություն», alsuise «մեծություն», բայց հավանական է, որ այս բառերը ավելի շուտ **-ši** վերջավորությունն ունենան, ըստ հետևյալ ձևերի՝ meši-ni, gunuši-ni, usmaši-ni և այլն:

Այս բառերն օժտված են լինում մի քանի ածանցներով, որոնց բնույթը դժվար է ճշգրտել: Այնուհանդերձ, դրանք միշտ բաժանելի են հիմքից, ուրեմն, այստեղ խոսքն ավելի շուտ բառերի ածանցման մասին է, քան քերձան: Այդտեղից էլ բխում է մեր երկմտանքը սեռականի ու տրականի վերաբերյալ, որոնց համապատասխանորեն վերագրում էին **-i** և **-e** վերջավորությունները: Մի ածանց գոյություն ունի ներգործական սեռի բայերի ենթական կազմելու համար, իսկ մեկ ուրիշը՝ չեզոք սեռի բայերի համար: Առաջինը **-še-ն** է: Այսպես, Haldi-še karuni նշանակում է «Խալդին նվաճեց»: Երկրորդը **-ni-ն** է՝ Haldi-ni uštabi «Խալդին մեկնեց»: Մեկ ուրիշ ածանց՝ **-ni**, գուցե նույն **-ni-ն**, կազմում է բացառական ու գործիական ձևերը՝ esi-ni «վայրից», esi-ից «վայր», usmaši-ni «հզորությամբ», usmaši-ից «հզորություն»: Մի երրորդ **-ni** ծառայում է որոշ անստույգ դեպքերում հայցականը կամ ուղի խնդիրը կազմելու համար. օրինակ՝ Մեմուան նվաճեց Etiuni-ni, Buštu-ni: Ընդհանրապես, ուղի խնդիրը ոչ մի վերջավորություն չունի: **-di** կամ ավելի շուտ՝ **-edi** ածանցը կազմում է ուղևորական հոլով, ցույց է տալիս բայի գործողության ուղղությունը՝ eba-ni-edi «դեպի երկիրը», Eriahini-di «դեպի Էրիախինի երկիրը»:

Լոկատիվի վերջավորությունը **-a-ն** է՝ esi-a «տեղում», *Barua taini-a «Բարուատաինի երկրում», նաև ebana (ebani-a-ից) «երկրում», gunuša (gunuši-a-ից) «կովում»:

Սեռականի վերջավորությունը **-i** է. Haldi-i (բայց գրվում է Haldi-ei), Menua-i (գրվում է նաև Menua-e):

Տրականը կազմվում է **-e-ով**՝ Haldi-e, euri-e, և **a-ով**՝ Menua-a:

Հոգնակիում այն ճանաչվում է **-li** ածանց ունեցող բառերում, ինչպես՝ huradini-li «ռազմիկներ[ին]» կամ «քանակներ[ին]», սեռական-տրական հոլովը **-aue-ով**, լոկատիվը huradin-aue (huradini-aue?), լոկատիվը huradin-a, բացառականը՝ Haldi-nani (Haldini-ani?), ուղևորականը՝ Biainaidi «դեպի Բիաինի»:

Տրականի և սեռականի հոլովական ածանցը հավաստի չէ՝ **i** և **e** ձայնավորների գոյությունն այնքան շատ է տատանվում, որ չի կարելի հաստատ պնդել, թե դրանք տրականին ու սեռականին հատուկ վերջա-

վորություններ են: Հավանաբար, այս հոլովները, ինչպես և հայցականը, չունեն որևէ հատուկ վերջավորություն:

Քազմաքիվ տեսքեր սկսվում են հետևյալ ձևով՝ Haldie euri-e, որ քարզմանվում է «Տեր Խալդիին», ուրեմն, որպես տրական է նկատվում: Դրանից ելնելով սպասելի էր, որ Մեերի դասն արձանագրության մեջ, որը աստվածներին մատուցվելիք զոհաբերությունների կանոնադրությունն է, հասցեագրվածների անունները նույն հոլովով գրված լինեին: Սակայն այդպես չէ: Կարդացվում է Haldie և Haldi-ei (որը երկրորդ պատճենում ուղղված է Haldie-ի): **-i** վերջավորություն ունեցող անունների վրա **-e** է ավելանում, ինչպես՝ Huṭuini-e, Turani-e, Nalaini-e և այլն, բայց ոչ միշտ, ինչպես, օրինակ, Diduaini, Qilibani, Iphari: **-a-ով** վերջացող բառերի վրա ավելանում է մի երկրորդ **-a**, այսպես՝ Anapša-a, Erina-a, Šuba-a, սակայն մի քանիսը վերջավորության մեջ այդ երկրորդ **-a-ն** չունեն, ինչպես՝ Aia, Adia, Siliia, Uia: Չոհաբերությունների մյուս հասցեատերերը՝ Haldini iniriaši-e, Haldini: Եթե **-e** և **-a** ձայնավորները պարտադիր չեն, ուրեմն և չեն կարող հոլովական վերջավորություններ համարվել:

Չոհաբերություններ պահանջող աստվածների մի շարք անուններ ներկայանում են հետևյալ ձևով. Haldini iniriaši-e, Haldini alsuši-e, Haldini diruši-e, Haldini daši-e, Haldini usmaši-e, Haldini arni-e, Haldini niribi-e կամ niribi-i (երկրորդ պատճենում): Խալդիի այս տարբեր որակումները նույնպես տրական հոլովով չեն, ինչպես կարելի էր ենթադրել: Haldini-ն ածական է, որ ուրարտերենում համաձայնում է այն գոյականի հետ, որին որոշում է: Ուրեմն, պետք էր սպասել՝ Haldini-e iniriaše-e, Haldini-e alsuši-e, եթե այդպես լինեք տրականի ձևը: Haldini ածականը ցույց է տալիս, որ որոշյալ գոյականը՝ iniriaše, նույն բացարձակ հոլովումն է, ինչ և Խալդիինին: Վերջին **-e-ն** iniriaši-e-ի, alsuši-e-ի և այլնի վերջում ոչ մի ձևաբանական արժեք չի ներկայացնում, դա այսպես ասած մակարոյժ մի տարր է: **-ši-ով** վերջացող բառերը նույնպես երևան են գալիս **-še** ձևով: Սակայն դա նույն բնույթի փոփոխում է, ինչ որ uštabi և uštabe, agubi և agube ու նույնիսկ agubi-e:

Ուրարտական գիրը տարբերություն չի դնում ebani և ebani-e-ի, pili և pili-e-ի, alusi և alusi-e-ի միջև: **-i-ով** վերջացող համարյա բոլոր բառերը՝ pi, gi, niribi, parati, uldi, zari, širšini, giššuri, masini, uštini, inani, badusi, pari և այլն, երկու գրությամբ են ներկայանում: Եթե **-e-ն** տրականի քերձան արժեքն ունենար, այն չէր շարաշափի բառերի վերջում ավելացնելու համար:

Տվյալ տեսքում **-a-ով** վերջացող բառերը չունեն **-e** ձայնավորը, այլ մի ավելորդ **-a**: Մի փաստ ևս, որ **-e-ն** տրական հոլով չի կազմում:

Մենք կասկածում ենք տրականի քերականական ձևի և ոչ թե հասկացության վրա: Դա պարզապես արտահայտվում էր բացարձակ հոլովով, ինչպես ուղիղ խնդրի հասկացությունը: Դրանց կարելի էր զանազանել ըստ նախադասության իմաստի և ըստ բայից ունեցած կախման ձևի:

Նույնը կարելի է ասել սեռականի վերաբերյալ: Դրան վերագրված հոլովական -i վերջավորությունը ստույգ չէ: -i ձայնավորն այնքան ազատությամբ է գործածվում, որ, ինչպես -e-ի համար, ոչ մի կանոն հաշվի չի առնում և դժվարին գործ է դարձնում տարբերելը՝ այստեղ ձևաբանական արժեք է, թե նախորդ վանկի ծնունդ: Օրինակ՝ Haldi-i, pili-i, Diaue-hinie-i-ի վերջին -i-ն հոլովական թեքում է, թե նախորդ -i-ի կրկնությունը, որը հաճախ գրվում է -ie:

Հայտնի է, որ սեռականը գլխավորապես անվան կամ բայի լրացում է: Թարիթիայի արձանագրության մեջ հայտնաբերվել է համարյա միակ դեպքը, ուր սեռականը բայի լրացման պաշտոն է կատարում, եթե, իհարկե, օժանդակ բայը լռելյայն հասկացվում է՝ Tariria-i ini uldi «Թարիթիայինն (t) այս պարտեզը»:

Այն դեպքում, երբ սեռականը հանդես է գալիս որպես անվան լրացում, հետաքրքրական է մշել, որ այն զիջում է իր տեղը մի ածականի կամ բացահայտի: Այդպիսի դեպքերում սեռականի տեղ ածական գործածելը հատուկ է նաև լուվիերենին՝ խեթական լեզուներից մեկին: Ուրարտերեն չեն ասում՝ Խալդիի հզորությունը, Մեմուայի կինը, Խալդիի դուռը, այլ Խալդյան հզորությունը, Մեմուայան կինը, Խալդյան դուռը: Չեն ասում Մեմուա Արգիշտիի որդի, այլ Արգիշտյան Մեմուա¹: Նույնպես չեն ասում՝ այսինչ քաղաքի աստված, ասենք՝ Տուշպայի, Էրիդիա քաղաքի, Կումենուի. ասում են՝ Տուշպայական աստված, Էրիդիական աստված, Կումենուական աստված և այլն... Որևէ երկրի անունը արտահայտվում է ածականով կամ բացահայտչով: Արգիշտին գնաց Բաբելոնյան երկիր՝ Babilunie ebanigi-di, կամ Puzania-inie ebanie-di, Apuinie ebaniedi, Arquqinie ebaniedi, Eriahininie ebaniedi, Uelikunini ebaniedi և այլն: Ինչպես նաև Մեմուան մվաճեց Šebeteriani ebanie, Huzani ebanie, ^PSupa-ni ebanie: Շեբեթերիա, Հուզանա անուններում ni = ini վերջավորությունը ածականի ածանց է, մինչդեռ Մուպայի մեջ՝ -ni-ն հայցականի թեքում է: Մարդուրին ասում է. «ես գնացի» uštadi Babilunie ebaniedi, բայց երբ ասում է՝ «ես գրավեցի» haubi Babilu ebanie, ապա այստեղ Babilu-ն բացահայտիչ է:

¹ Արդի լեզուներից ուսերենն է, որ հանրով ընդունվել է այդ ձևի արտահայտությունները. Московская губерния, Петербургский университет, жена сестра, мамин брат. 292

Որպես լրացում գործածված հատուկ անունները սեռականի ձև են ստանում կամ որպես բացահայտիչ են գործածվում: Օրինակ, -ի-ով անունները՝ Էրիա-իսի, Դիաուե-իսի, Աբիլիանի-իսի, որոնք գործածվում են նաև որպես աշխարհագրական տերմիններ: Ասում են՝ Eriahi-ni ebanie «Էրիաիսյան երկիր», ¹Abiliahi-ni ebanie, կամ, ավելի հաճախ, իբրև սովորական բացահայտիչ՝ ¹Eriahi ebanie, ¹Baltulhie ebanie, Abilianihie ebanie և այլն...

Կուրորդանի, Ուլտուզա հատուկ անուններ են, ենթարկված իշխանների անուններ: Արգիշտին ասում է, որ հպատակեցրեց ¹Abilianiehi ebanie, ^VAniš-tirue(?) Quturzani-ini, Ustuzani-ini ebanie, ուրեմն՝ «Աբիլիանիսի երկիրը, Կուրորդանական Անիշփրուե (քաղաքը), Ուլթուզական երկիրը»:

Նույն թագավորը ասում է. որ հպատակեցրել է՝ ¹Luša-e ebanie, Katarza-e ebanie, Eriahi ebanie, ^PGulutahihā ebanie, Ušteruhinie ebanie: Ենթադրվում է, որ Luša-e-ն, Katarza-e-ն սեռականի ձևեր են՝ -i-ն փոխարինելով -e-ով որպես թեքման թուլացում: Սակայն Eriahi-ն, Gulutahihā-ն, որոնք նույն շարահյուսական դրության մեջ են գտնվում, ոչ մի հոլովական վերջավորություն չունեն. դրանք սեռական չեն, ուրեմն և լրացուցիչ չեն կարող լինել, այլ միայն ebanie-ի բացահայտիչ: Lu-ša-e-ի, Katarza-e-ի վերջավորության -e-ն ձևաբանական արժեք չունի, այլ պարզապես գրության ձև է, այնպես, ինչպես ebanie-ի մեջ վերջին -e-ն:

Բոլոր պատճառները կան ենթադրելու, որ Ušteruhinie-ն նույնպես սեռականով լրացում չէ, այլ ածական, -ei վերջավորությունը կամայական գրություն է, ինչպես, օրինակ, pieini կամ pieinie փոխանակ pi-ni-ի, կամ giei փոխանակ gi-h¹:

Իշպուինին և Մեմուան saidutu ¹Ušteruhi, ¹Luša-a, ¹Katarza-a burgala-li (կամ burgana-li) ŠARRU^{pl} ^PEtiuhini-li, այսինքն՝ «Իշպուինին և Մեմուան ավերակի վերածեցին Էրիուսիների երկրի թագավորական դոյակները, որ պատկանում էին Ուիթերուսիին, Լուշային և Կաթարգային»:

Այդ անձների երեք անունները սեռական չեն. Luša-a-ի, Katarza-a-ի վերջին -a-ն ավելի արժեք չունի, քան Luša-e- և Katarza-e անունների -e-ն՝ Արգիշտիի վերոնիշյալ նախադասություններում: Չևաբանական տեսակետից դրանք բացարձակ հոլովով են դրված, բայց շարահյուսական տեսակետից դրանք «դոյակի» burgala-li լրացումներն են, որոնց համար ŠARRU^{pl} -ն «թագավորական» և Etiuhi-ականը որոշիչներ են:

Նման դեպքերում լրացումը, շնորհիվ իր դրության, համաձայնեցվում է առանց ձևաբանական միջոցների օգնության: Ուրարտական դարձվածք-

¹ Արգիշտիի Տարեգրության վերջում անեծքի մեջ:

ներն այնքան տարրական են, որ մի գոյական մեկ ուրիշի հետ միավորվելով միմիայն լրացման պաշտոն կարող է ունենալ: Ասում են՝ Sarduriše karuni ŠARRU¹ Eriahi ebanie, ŠARRU¹ Abilianihī ebanie կամ karuni¹ Rašuni ŠARRU¹ Ruišianie, «Սարդուրին հայաստանցիները թագավորին էրիաի երկրի, թագավորին Աբիլիանիի երկրի. նա հայաստանցիները Ռաշու-նիին՝ թագավորին Աուիշիական երկրի»: Պնդելով, որ Eriahi-ն, Abilianihī-ն սեռականի -i վերջավորությունը կուլ են տվել կամ ebanie-ի մեջ նույն -i-ն փոխվել է -e-ի, ճշմարտության դեմ մեղանշած կլինենք:

Իրականում այս տերմիններից ոչ մեկը սեռական չէ, դրանք լրացումների դեր են կատարում իրենց դրությամբ, որովհետև դրանք հետևում են «թագավոր» գոյականին:

Համեմայն դեպս, սեռականի փոխարեն արտահայտության այլ եղանակներ գործածելը և սեռականի հոլովական վերջավորությունը թվացող մասնիկի տատանվող գրությունը կասկածելի են դարձնում ձևաբանորեն որոշակի սեռականի գոյությունը:

Ուրարտերենն ավելի շուտ մտահոգված է -še, -ni ածանցների միջոցով պահպանել այն, ինչ անմիջապես վերաբերում է բայ-ստորոգյալին, այն է՝ ակտիվ ենթական -še -ով, միջին (չեզոք) ենթական -ni-ով, ուղղակի խնդիրը՝ -ni-ով, գործիականը՝ -ni-ով: Ինչ վերաբերում է գոյականների միջև եղած հարաբերություններին, ապա դրանք հասկացվում են ըստ իրենց դրության, եթե միայն ածականով կամ բացահայտչով չեն արտահայտված¹:

Բայական համակարգը խիստ յուրահատուկ բնույթ է կրում: Ամենաուշագրավը բայերի տեսքն է: Մի շարք միավանկ բառեր երկու-երկու, երբեմն երեք-երեք հարադրվելով՝ կազմում են բայական հիմքը. šu, a-šu-, ha-šu-, hu-šu-, ku-šu-, za-šu-, har-har-šu-; du-, a-du-, ši-du-, za-du-, qu-du-, aš-du-, teir-du- (teru-du-ից), šeir-du- (šeri-du-ից), sui-du-, ueli-du-, abili-du-; ru-, a-ru-, ka-ru-, te-ru-, pa-ru-, pu-ru-, hu-ru-; tu-, a-tu-, pi-tu-, ni-tu-, ša-tu-, aš-tu-, uš-tu-, šidiš-tu- և այլն:

Բայական տարրերի մեծ միացումների իմաստները ենթակա չեն որևէ ճշգրտման՝ տարրերն իրենք իսկ բավական ծանոթ չլինելու հետևանքով: Նույնաման տեղերը իրար հետ համեմատելով՝ հաջողվում է միայն գուշակել և ոչ թե որոշել բայերի նշանակությունը: Կառուցումների վերա-

բերյալ տեքստերում գործածված բայերը նշանակում են՝ «կառուցել, բարձրացնել, շինել». ռազմական նկարագրություններում՝ բնական է՝ «հաղթել, կռվել, գրավել այնինչ երկրները, ավերել, կործանել»: Մակայն անհնար է, բացառությամբ հատուկ դեպքերի, հասկանալ նրբերանգները՝ գործածված տերմինների միջև եղած տարբերությունները:

Նույնիսկ հնարավոր չէ իմանալ, թե բազմաթիվ բայերում գտնվող վանկերը արդյո՞ք միևնույն իմաստն ունեն: Ավելի քիչ կարելի է վարանել du-ի կապակցությամբ, որը անեծքի բանաձևում նշանակում է «անել, գործել» և կարծես նույնն է նաև ուրիշ բայերում, ուր նա ծառայում է հարկադրականը կազմելու՝ te-ru «դնել, տեղավորել», teri-du կամ teir-du «տեղավորել տալ», šeri-du կամ šeir-du «բաժանել տալ»: Teri-šeri ձայնավորումը պարզ չէ: Teru, šeru-ի u-ի թեքումն է արդյոք այստեղ, թե ուրիշ երևույթ, մի տեսակ nomen actionis, ինչպես Մ. Ծերեթելին է ենթադրում: Նույնը կարելի է ասել u-eli-du-ի «ժողովել տալ», abili-du-ի «ավելացնել տալ» մասին:

-lu տարրը, թվում է թե, բայի գործողությունն է ուժեղացնում՝ teru-, teru-lu, qabqaru-, qabqaru-lu, sui-du, suidu-lu և այլն:

Šidištu-, šidagu- անշուշտ պարունակում են šidu «կառուցել» (šiduli¹ Argištiḫinili «ես կառուցեցի կամ հիմնեցի Argištiḫinili քաղաքը»). amaštu-, bur-aštu-, ašhaštu - նույնպես երկու տարրերից են բաղկացած՝ ama-aštu «հրդեհ անել». bura-aštu «ստորև անել կամ դարձնել». ašhu-aštu, իմաստը հայտնի չէ:

Բայական ձևերը, որքան որ դրանք ի հայտ են գալիս առկա տեքստերի մեջ, հարուստ չեն և չեն բավարարում խոնարհման բնույթը երևան հանելու համար: Ուրարտերենին հայտնի է բայերի սեռը. նա տարբերում է ներգործական սեռի բայերը և չեզոք սեռի բայերը: Առաջինը որպես ենթակա պահանջում է ներգործական հոլով՝ -še-ով, երկրորդը՝ կրավորական հոլով՝ ni-ով: Menuaše karuni «Մեմուան գրավեց» այնինչ երկիրը, բայց Menua-ni ušta-bi «Մեմուան մեկնեց» դեպի այնինչ երկիրը:

Այդ տարբերության բացահայտումն ուրարտերեն լեզվի ուսումնասիրության կարևորագույն արդյունքն է: Մա լրջորեն հեշտացնում է տեքստերի վերլուծումը: Պատահում է հաճախ, որ իր կանոնավոր ենթական ունեցող ներգործական բային հետևում է մի չեզոք սեռի բայ կամ հակառակը: Նման դեպքերում զեղչվում է հաջորդող բայի ենթական: Ասվում է՝ Menuani ušta-di karuni «Մեմուան մեկնեց և գրավեց», փոխանակ ասելու՝ Menua-ni uštadi, Menuaše karuni: Նման պարագաներում միայն բայի սեռի տարբերությունն է թույլ տալիս կողմնորոշվելու:

¹ Այդ տեսակետից շատ ուսանելի են հետևյալ արտահայտությունները. pulusinika(i) կամ giššurginika-ini. «կոթողի (pulusi) դիմաց» ասելու համար գործ է անվում pulusini ածականը՝ «pulusi-ական-առջևում». giššurgini-ն նույնպես giššuri-ից (ռազմիկ) ածանցված ածական է. giššur-ini-ի փոխարեն giššurini-ka-(i)-ն «բանակի առջև» մի հասկացություն, մի բառ է կազմում, որ հայցականի ածանցն է ստանում՝ giššuriniakaini:

Սահմանական ներկան կազմվում է -li ածանցի հավելումով, որը հաճախ -lie է գրվում: Միակ տեղը, ուր գտնում ենք այդ ձևը, անեծքի բանաձևն է: Այնինչ թագավորն «ասում է» a-li(e). բոլոր այն բայերը, որոնք հետևում են և ցույց են տալիս տվյալ հուշարձանին պատճառվելիք վնասները, ինչպես՝ խորտակել, շրջել, տանել և այլն..., բոլորը նույն վերջավորությունն ունեն՝ -lie, tu-li(e), pitu-li(e), suidu-li(e), puli(e), hušu-li(e), dulus-li(e) և այլն, և դրանք երրորդ դեմքի ձևն են. Թո՛ղ աստվածները կործանել տան մահն կործանիչին: Այս նախադասության մեջ բայը նույնպես միևնույն ածանցն ունի՝ ulu-lie: Դա ենթադրել է տալիս, որ այդ ձևը հավասարապես նշանակում է մահ ներկայի ստորադասական եղանակ կամ սահմանականի ապառնի¹:

Տեքստերում տիրապետող բայական ձևերը՝ սահմանական եղանակի անցյալը, առաջին դեմքի եզակին և երրորդ դեմքի եզակին ու հոգնակին են:

Անցյալի քերականական ըմբռնումը որոշ դժվարություն է հարուցում: Թվում է, թե բայը համաձայնում է թվով ոչ միայն ենթակայի, այլև ուղիղ խնդրի հետ: Ծանոթ ձևերը կազմում են հետևյալ հարացույցը.

Առաջին դեմք՝

Ես նրան՝ -bi:

Ես նրանց՝ -bi, մահ՝ ես նրանց՝ -li:

Օրինակ՝ iēše ini pili agu-bi; ini-li arniušini-li zadu-bi; ini-li ebani-li tequ-li, buraštu-li²:

Երրորդ դեմք՝

Նա նրան՝ -ni:

Նա նրանց՝ -ni ու ավելի հաճախ՝ մահ նրանց՝ -ali:

Օրինակ՝ Menuaše ini pili agu-ni; ini-li arniušini-li Sarduriše zadu-ni³; Menuaše ini-li tarmani-li athu-ali, šidištu-ali⁴:

Հոգնակի՝

Նրանք նրան՝ -tu:

Նրանք նրանց՝ -tu, մահ՝ նրանք նրանց՝ -tu-li:

¹ Ամենուրեք utulie է գործածվում, բացի № 13 և 151-ը, ուր կարդում են kulitu-ni, և Կեկիշիի արձանագրությունը, ուր kuludie է գործածվում եզակի և հոգնակի ենթակայով: Դժվար է այս ձևերը բացատրել համոզիչ կերպով:

² Առաջին օրինակը Շամիրամի ջրանցքի արձանագրություններից մեկն է, երկրորդը կրկնվում է Արզիշտիի և Սարգուրիի ամեն մի արշավանքից հետո, իսկ երրորդը՝ № 147:

³ Սարգուրիի Տարեգրությունը, № 132U:

⁴ № 87:

Օրինակ՝ inani par-tu Išpuniše Menuaše; Išpuniše Menuaše suidu-tu... burgala-li; kucidanu-li huradinie-li ^PEriahinie ebanie hai-tu ALU^P GIBIL harharši-tuli¹:

Չեզոք սեռի բայերի անցյալը.

Ես՝ -di, մահ՝ -bi, նրանք՝ -li: Օրինակ՝ ušta-di, ušta-bi, ušta-li, ես մեկնեցի, մահ մեկնեց, նրանք մեկնեցին:

Դժվարին ու վիճելի հարց է որոշել, թե այդ ածանցները անձնակա՞ն են, թե այլ արժեք ներկայացնող մասնիկներ:

-li ածանցն, անկասկած, հոգնակիի նշան է: Դժվարությունն առաջ է գալիս -bi, -ni, -li և -ali ձևերի միջև եղած հակադրությունից, քանի որ ասում են՝ ես նրան կամ նրանց -bi, և ես նրան կամ նրանց -ni, ապա կարելի է եզրակացնել, որ -bi և -ni-ն ենթակայի հետ կապակցված վերջավորություններ են, ուրեմն, բայ-ստորոգյալի անձնական ածանցներն են:

Հետևյալ ձևերը՝ ես նրանց -li և մահ նրանց -ali, ընդհակառակն, հաստատում են խնդրի հետ կապակցված լինելը և, հետևաբար, ցույց են տալիս, որ ստորոգյալը բայ չէ, այլ անուն կամ բայական ածական:

-tu, -tuli-ի պարագան ավելի բարդ է: «Նրանք», «նրան» կամ «նրանց» -tu ձևը ենթադրել է տալիս, որ -tu-ն նույն կարգի ածանց է, ինչ որ -bi և -ni-ն: Սակայն «նրանք», «նրանց» -tuli թվում է, թե -tuli-ն է -li-ի և -ali-ի հետ: Այս երկվությունը չափազանց մտահոգիչ է:

Հարցն այն է, թե ինչպես համաձայնեցնել այս անհետևողական ձևերը: Հազվադեպ, սակայն ուշադրության արժանի տեղերում առաջին դեմքի -bi ածանցը զեղջված է: Օրինակ՝ Արզիշտին ասաց. ^PAššur (կամ Aššurini) (am) huradie ebaniuki ašdu (աստուրական զինվորներին տարա իմ երկիրը), ašdu-bi-ի փոխարեն ašdu: Եթե ասում են ebani-li buraštu-li, ոչ մի պատճառ չկա, որ հնարավոր չլինի ստել ebani buraštu, այսինքն՝ առանց -bi-ի:

-ni ածանցը նույնպես անհրաժեշտ չի թվում երրորդ դեմքի համար: Այնպիսի նախադասություններում, ինչպես՝ այսինչ թագավորը aru-me meše «ինձ հարկ տվեց», aru-ն փոխարինում է aru-ni-ին -ni-ն զեղջված է hoquum -me-ի՝ «ինձ», որն այլ գործառույթ ունի, քան -ni-ն: Աստվածները zatu-me harie «ինձ առջև ճանապարհ բացին», zatu հոգնակի երրորդ դեմքը -tu ածան-

¹ № 15 և № 13. haitu harharšitu, № 132U, սյունակ Բ: -i-ն բացատրելու համար է, որ Յո. Ֆրիդրիխսն ընդունում է ածանցը -itu ձևով և ոչ -tu: Սակայն hau-tu, harharšu-tu-ի -u-ն կարող է մեղմամալ, ինչպես teru-ն՝ teridu-ի մեջ: Այս նույն թեքումը գտնում ենք suluššabi-ի մեջ. sulušta-bi, sulu-uššabi-ից, որը բացատրվում է երրորդ վանկին նախավերջինից անցնող շեշտի ներգործությամբ. այսպես՝ teru, բայց teridu, որտեղից՝ teir-du:

ըն պահպանել է հակառակ -me-ի ավելացման, ի տարբերություն aru-me-ի, որով ապացուցվում է, որ -ni-ի ներկայությունը բոլորովին անհրաժեշտ չէ:

Կարելի էր ուրեմն ասել՝

Ես նրան buraštu, aru, karu, այսինքն՝ առանց -bi վերջավորության:

Ես նրանց buraštu-li:

Ես նրան buraštu, առանց -ni-ի:

Նա նրանց buraštu-ali:

Չերթեգրեն լեզուն այսօրինակ հարացույցի համար ուշագրավ մի լուսաբանում է տալիս.

Ես նրան տեսնում եմ՝ se tleghu:

Ես նրանց տեսնում եմ՝ se tleghu-x:

Նա նրան տեսնում է՝ y tleghu:

Նա նրանց տեսնում է՝ y tleghu-x:

se, y մասնիկները ենթակա դերանուններն են: Վերջին x-ը հոգնակիի նշան է և համաձայնեցված է հոգնակի դրված ուղիղ խնդրի հետ: Tleghu ստորոգյալը ոչ մի անձնական վերջավորություն չունի, ենթական է որոշում դեմքերը: Ստորոգյալի համաձայնեցումը խնդրի հետ ցույց է տալիս, որ ստորոգյալն անուն կամ բայական ածական է՝ գործվող մի բան (actum), և ոչ ներգործող խնդիր (agens), համեմայն դեպս, չեզոք բայ է: Հակառակ առերևույթ ներգործական կառուցվածքին, իրականում նախադասությունը կրավորական է՝ «ինձ նա տեսանելի է, ինձ նրանք տեսանելի են» կամ «ինձ-նից նա տեսնվում է, նրանք տեսնվում են»¹:

Չերթեգրեն հոգնակի երրորդ դեմքի ձևը նույնն է, ինչ և եզակի՝ նրանք նրան տեսնում են՝ a tleghu, նրանք նրանց տեսնում են՝ a tleghu-x:

Կրավորական կառուցվածքի տեսակետից դա միանգամայն միշտ է: Ենթական կամ առերևույթ ենթական փոփոխվում է առանց որևէ ազդեցություն բողմելու ստորոգյալի վրա, որը դեկավարվում է ուղիղ խնդրի կողմից: Դա մեզ պարտավորեցնում է չանտեսել ուրարտերեն տեքստերում առկա այն հազվագյուտ դեպքերը, երբ նկատվում է նույն երևույթը:

Միերի դառն արձանագրության մեջ ասված է՝ Išpuniše Menušaē ini-li BABU zadu-ali teruni ardiše; այնուհետև՝ uldi teru-ni, zari teru-ni, burgana-ni teru-ni:

Պատճենում, որն, անշուշտ, հետագայում է կատարված, zadu-ali-ն ուղղված է za-tu-li-ի, իսկ teruni-ն՝ teir-tu-ի: Ընդամենն առաջին ձևերը կրավորական կառուցվածքին հարմարվում են, մինչդեռ ուղղված ձևերը՝ բոլորովին

ոչ: -tu տարրը հոգնակի ենթակային է արձագանքում, ուրեմն, նա հոգնակիի նշան է, բայց նրա վրա ավելանում է ոչ միայն -li, -tali, որպեսզի նա հոգնակի ուղիղ խնդրի հետ համաձայնվի, այլ նաև -ni, -tu-ni (ինչպես kaituni՝ kugtu-tuni-ից), եզակի ուղիղ խնդրի համաձայն: Կրկնակի համաձայնությունը ենթակայի և խնդրի հետ հակառակ է կրավորական ձևին, որը հաշվի է առնում միայն խնդրի հետ համաձայնությունը: Գուցե, երկու համակարգերի զուգակցության մասին է խոսքը:

Համեմայն դեպս, խոնարհումը դեռևս չի պարզվել: Ներկա ժամանակը ավելի չէ լուսաբանված, քան անցյալը. սևսի(e) գործածվում է եզակի և հոգնակի ենթակայի համար, որը ցույց է տալիս, թե դա ավելի շուտ դերբայական ձև է, քան դիմավոր բայ:

Տեքստերը բայական և անվանական ուրիշ շատ մթին ձևեր էլ են հայթայթում, որոնք դուրս են մնում ներկայացված հարացույցից:

Ուրարտերենի քերականական համակարգը մի շարք խնդիրներ է առաջադրում, բայց մեր տրամադրության ներքո եղած նյութը բավական չէ դրանց համոզիչ լուծում տալու համար: Պետք է սպասել մոր նյութերի, որոնք հանգչում են Ուրարտուի բազմաթիվ քաղաքների ընդերքում:

Ուրարտերենին ժամանակակից՝ Միջագետքի լեզուները և ավելի հինըր բացարձակ ճշգրտությամբ ուսումնասիրվել են շնորհիվ ազգակից լեզուների, որոնք կենդանի են մնացել գրավոր հուշարձաններում կամ ժողովուրդների բերանում: Ուրարտերենը ներկայացնում է իր տեսակի մեջ միակ լեզուն, որը ոչ մի ազգակցություն չունի, որպեսզի հնարավոր լիներ համեմատական մեթոդի առավելություններից օգտվել:

Քիչ ժամանակ առաջ մի անսպասելի լույս ցույց Ուրարտուի լեզվաբանական հորիզոնում: Հյուսիսային Միջագետքում հայտնաբերվեց մի լեզու, որի նմանությունն ուրարտերենի հետ աներկրա է:

Այդ լեզվի՝ Միտաննի անվամբ վաղուց ծանոթ մի բարբառով է գրվել Եգիպտոսի փարավոն Ամենոֆիս III-ին¹ ուղղված Միտաննիի Թուշրաթթա բազավորի նամակը: Խաթթուշա (Բողազքոյ) խեթական մայրաքաղաքի դիվանները նույն լեզվով գրավոր սալիկներ են պարունակում: Հայտնաբերվել է սումերա-ակկադերեն մի բառգիրք, որը կոչվում է harra-hubullu՝ ըստ բառգրքի առաջին բառի: Սումերական բառերի բացատրությունը բառգրքի մի մասում տրվել է անձանոթ լեզվով: Հետազոտությունը ցույց է տվել, որ խոսքը նույն Միտաննիի լեզվի մասին է²: Նուզիի (Յորդան-թեփե՝ Կերկուկի

¹ F. Bork, Die Mitanni-Sprache, «Mitt. d. Vorderasiatischen Gesellschaft», 14, 1909.

² B. Hrozny, «Mitt. d. Deutschen Orient-Gesellschaft», № 5, 1915, էջ 40: Է. Յորդանը ZDMG-ում քննել է մի քանի տեքստ, 76, էջ 244:

¹ G. Dumézil et A. Namitok, Fables de Tsey Ibrahim, en tcherkesse occidental, Paris, 1938:

մտ) պեղումները հին Առափսիսիտում երևան հանեցին ակկադական սալիկներ, որոնք նույնպես պարունակում են նույն լեզվի բառամբերքը և մեծ քանակությամբ հատուկ անուններ¹:

Ուգարիտում (Ռ-աս-Շամրա) կատարված հայտնաբերումները Օրոնտեսի գետաբերանում նոր նյութեր մատակարարեցին²: Վերջապես, միջին Եփրատի վրա մի հին պետության՝ Մարիի, քաղաքների թողած դիվանների հայտնաբերումը և ուսումնասիրությունը շատ խոստումնալից են³:

Բոլոր այդ վավերագրերը գրված են նույն լեզվով, որի ցուցաբերած տարբերությունները չեն անցնում ամեն լեզվի հատուկ բարբառային երանգներից:

Նախընտրում են այդ լեզուն անվանել խուրրիերեն և ոչ միտաներեն: Այդ լեզվով խոսող ժողովուրդը իրեն անվանում էր խուրրի: Նա զբաղեցնում էր ամբողջ Վերին Միջագետքը, որտեղ և հիմնել էր Միտաննի պետությունը: Աստվածաշնչին հայտնի է այդ ժողովուրդը՝ Խորիմ, Խորեացիք⁴:

Սեպաձև նշանը երկու արժեք ունենալով՝ har և hur, սկզբում կարդում էին Hārri, այստեղ արիացիներին ճանաչելու համար. բայց շուտով Աստվածաշնչի տվյալների և Օսրիտեն անվան վրա հիմնվելով, որը, քվում է, Օրոնտե ձևի ներքո պահպանել է Hūrri-ի հիշատակը⁵, եզրակացվեց, որ ճիշտ ընթերցումը Hūrri-ն է:

Այդ ժողովրդի լեզուն, արդարև, ուշագրավ մանություն ունի ուրարտերենի հետ քե՛ բառամբերքով, քե՛ քերականական որոշ ձևերով:

Երկու լեզուների համար ընդհանուր բառեր են.

Խուրրիական

pala
ibri «քաղավոր»

Ուրարտական

pili «ջրանցք»
euri «տեր»

¹ G. Conteneau, *Les tablettes de Kerkuk*, 1926. M. C. H. Gordon, *Evidence for the hurrite language from Nuzi*, «Bulletin of the American Schools of Orient. research», № 64, 1936, դեկտ., էջ 23:

² B. Hrozný, *Une inscription de Ras-Shamra en langue hurrite*, «Archiv Orientalni», IV, 1932, էջ 118: F. Thureau-Dangin, *Vocabulaire de Ras-Shamra*, «Syria», 12, 1931, էջ 225-226: E. Dhorme, «Revue Biblique», 1931, էջ 32:

³ Գ. Դոսսենը պատրաստում է Մարիի վավերագրերի հրատարակումը:

⁴ Գլխը ծննդոց, ԺՂ, 6, ԼԶ; 20-29 (Χορραίοι):

⁵ B. Hrozný-ն, «Arch. Orientalni», I, էջ 98, 1929, Hūrri ընթերցումն է առաջարկում Hārri-ի փոխարեն, որն առաջ էր քաշել Հուգո Վինկլերը: Բ. Հրոզնին ենթադրում է, որ այդ անունը ծագում է hurru (ծակ, անձավ) բառից, և կարծում է, քե այդ անվանումը գալիս է այն անձավներից, որոնք գտնվում էին Օսրիտենում: Այդ ստուգաբանությունը շատ կասկածելի է:

hurati
šauila
taršu(u)anni
uli
tiui «խոսք»
papa
hari
išaš
umini
aru
pis «ուրախանալ»
Tešup
urpumma epešu
urparinnu «զոհարար»²

huradi «ռազմիկ»
šali «տարի»
taršuanu «մարդ»¹
uli «ուրիշ»
tiu «խոսել»
baba «լեռ»
hari «ճանապարհ»
ieše «ես»
ebani «երկիր»
aru «տալ»
pišu-še «ուրախություն»
Tešeba «փոթորկի աստված»
urpu «զոհել»

Ուրարտերենին բնորոշ -hi, -ni, -ši ածանցները նույն իմաստով կան խուրրիերեն լեզվում:

Հոգնակի սեռականի ուրարտերեն վերջավորություն -ni-ն երևան է գալիս խուրրիերենի եզակի սեռականում: n-ի հերթագայումը l-ի հետ երկու լեզուներին էլ հատուկ է. ուրարտերեն burgana-li և burgala-li-ն համապատասխանում է խուրրիերեն Hānigalbat և Hāligalbat-ին:

Նախադասության կառուցվածքը նույնն է, և ամենակարևորն այն է, որ ուրարտերենում ներգործական բայերի ենթական -še է ստանում, իսկ խուրրիերենում՝ -š. չեզոք բայերի վրա ավելանում է -ni և -n խուրրիերենում³:

Այս բոլորը ցույց են տալիս երկու լեզուների ազգակցության առկայությունը: Խուրրիերեն լեզվի դեռ նոր սկսած ուսումնասիրության առաջադիմության շնորհիվ մի նոր լույս իր ճառագայթները կսփռի ուրարտերենի վրա և կնպաստի այն խնդիրների լուծմանը, որ արդի վիճակում անլուծելի են քվում (22):

Երբ կհստակեցվի ուրարտերենի կերպարանքը գուցե ավելի հիմնավորված կդառնա կովկասյան լեզուների հետ ուրարտերենի առնչության հարցի առաջադրումը:

¹ Սա նույն taš-šu-ib բառն է, taš-šu-ի հոգնակին, որն էլամերենում իրանական kara «զինված ժողովուրդ» բառի իմաստն ունի: Բիսետունի արձանագրություն, § 8:

² J. Friedrich, *Kleine Beiträge zur Churritischen Grammatik*, «Mitt. d. Vorderasiatisch-Aegyptischen Gesellschaft», 42, Heft 2, 1939.

³ Նույնը, էջ 59-61:

7. ՈՍՄՍՅԻ ԵՎ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՁԸ

Այս հարցում միակ հնարավոր մեթոդը՝ անվանագիտության (օնոմաստիկայի) վրա հիմնվելն է. միայն սա է, որ թույլ է տալիս ընդհանուր առումով ուրվագծել ուրարտական ցեղի տարածման ոլորտը և դնել նրա ծագման խնդիրը:

Ուրարտու, հնում Ուրուտարի, երկրի ազգային անունը չէ: Ասորեստանցիներն այդ անունով էին հորջորջում Հայկական լեռնաշխարհը: Վաղ շրջանում նրանք Նաիրի տերմինն էին գործածում նույն իմաստով, որը նույնպես տեղական անուն չէր: Ուրարտացիներն իրենց երկիրը Բիաինի կամ ավելի շուտ՝ հոգնակի ձևով՝ Բիաինիլի էին կոչում: Բիա-ինի նշանակում է «Բիայնական երկիր», Բիաինիլի՝ «Բիայնական երկրներ»՝ «Բիայի երկրի» ածականական ձևը:

Հանգուցյալ Կ. Ֆ. Լեման-Հաուպտը շատ պնդեց ուրարտացիների նույնության վրա պոնտական Xáλδοι-ի հետ, որոնք այդպես էին կոչվել Խալդի աստծու անունով, ինչպես ասուրները՝ Աշշուրի անունով: Նա նույնիսկ կարծում էր, որ ուրարտացիները Խալդիների անունով էին իրենք իրենց հորջորջում, որ նրանց մայրաքաղաքը Խալդինա և ամբողջ երկիրը Խալդիա էր կոչվում: Այդ կարծիքի պատճառով նա իր արժեքավոր հրատարակությունն անվանեց Corpus inscriptionum Chaldicarum:

Ուրարտացիների և խալդերի միջև եղած հարաբերությունների հարցը ուշադրության արժանի է, և մենք քիչ հետո կանդրադառնանք դրան: Ինչ վերաբերում է Խալդիների անվանը որպես ուրարտացիների ազգային անուն, Կ. Լեման-Հաուպտը սխալվում է: Ուրարտական տեքստերը չեն հաստատում նրա պնդումը: Յ. Ֆրիդրիխն իրավամբ մերժում է այդ կարծիքը, որովհետև Խալդիների չի նշանակում «խալդյան ժողովուրդ», ոչ էլ «Խալդիի որդիք», ինչպես Ա. Մեյսն էր ենթադրում, նույնպես և Խալդինան Տուշպա քաղաքը չէ, և ոչ մի տեղ Խալդիան Ուրարտուի իմաստով չի գործածվում:

Անվիճելի է, որ ուրարտացիներն իրենց երկիրը ցույց տալու համար իրենց արձանագրությունների մեջ ուրիշ անուն չեն գործածում՝ բացի Բիաինի անունից: Ասորեստանցիները գործածել են Ուրարտու և Նաիրի տերմինները, բայց դրանից դեռևս չի բխում, որ սրանք ասուրական, այսինքն՝ սեմական ծագում ունեն: Իրականում սրանք պատկանում են այն աշխարհի՝ հաճախ վկայակոչված և այնքան բնորոշ օնոմաստիկային, որը մենք ժամանակավորապես կոչում ենք ուրարտական:

Մենք տեսանք, որ Ուրարտուի տարածքային հավակնությունները, եթե ոչ նրա ազդեցության սահմանները, տարածվում էին Եփրատից մինչև Մանա երկիրը և Չարիշատ (Չրլղրը) լճից մինչև Կաշիարի (Տուր-Արդին) լեռնաշղթան: Էթնիկական տեսակետից ի՞նչ էր ներկայացնում այդ տարածությունը: Քիչ թե շատ միատա՞րր էր, թե՞ խալտարդետ:

Միերի դռան արձանագրության մեջ (№ 18) քազավորները պատվիրում են զոհաբերություններ կատարել, ի միջի այլոց, օտար լեզուների աստվածներին: Սակայն այդ աստվածներին հատկացված զոհաբերությունը՝ 4 եգ (արջառ) և 18 ոչխար, այնքան համեստ է, որ համեմատելով մյուս աստվածներին հատկացված զոհաբերությունների հետ, հնարավոր չէ եզրակացնել, որ դրանք որևէ նշանակություն ունեն:

Օնոմաստիկայի տվյալներն ի վիճակի են վեր հանելու ցեղային որոշ ընդհանրություն այն գլխավոր ցեղերի միջև, որոնք ապրում էին Հայկական լեռնաշխարհում, Ուրարտուի և Ասորեստանի միջև ընկած լեռնային գոտում և նույնիսկ ավելի հեռու՝ Վերին Միջագետքում:

Այդ շրջաններին վերաբերող մի շարք անուններ բնորոշվում են հետևյալ վերջավորություններով՝ -ի, -(i)ու կամ -ի-ու, -zi, -ri: Ուրարտուի հյուսիսում գտնվող ամենակարևոր ցեղերը, որոնք դեռ էին Տուշպայի տերերի տիրապետությանը, կոչվում էին. Դիաու-խի, Էրիա-խի, Աբիլիանի-խի, Ուիտե-րու-խի, կամ Էթիու-նի, Վեիլքու-նի, Մաքալուու-նի, ինչպես նաև Սևանա լճի շուրջը տեղավորված բոլոր 23 երկրները՝ Ադախու-նի, Արկուկի-նի, Ռիշու-նի, Չուաի-նի, Ալգիրա-նի, Էրիա-ինի և այլն...

Հնարավոր է, որ այս անուններից մի քանիսի վերջավորությունը ուրարտացի դարի գրության հետևանք է, բայց ամբողջությամբ վերցրած դրանք միանգամայն վավերական են: Արդեն XII դարում, ուրեմն, Ուրարտուի պետության կազմավորվելուց շատ առաջ, ու-ով վերջացող բազմաթիվ անուններ կային ապագա Ուրարտուի տարածքում: Թիզլաթալասարն իր 1113 թ. արշավանքի ընթացքում նվաճած երկրների շարքում հիշատակում է՝ Ունգամու-նի, Պիլակի-նի, Աթուրգի-նի, Կուլիբարգի-նի, Շինիբիր-նի, Աբա-նի, Ադա-նի, Կիրի-նի, Աբարսիու-նի, Դայա-նի:

Ուրարտուի հյուսիսարևելյան սահմանում նույնպես երևան է գալիս էթնիկական ածանց հի-ն՝ Կուլ-խի ժողովրդի անվան մեջ, և հարավում Ուրարտուի և Ասորեստանի միջև գտնվող չեզոք գոտում բազմաթիվ անուններ վերջանում են ի-ով, ինչպես՝ Կուտմու-խի, Բար-խի, Խար-խի, Լու-խի, Խի-րի-խի, նաև Ուրրա-խի-նա, որը պատկանում էր Բար-խիին և որի քազավորը կոչվում էր Շաթի-Թեշերա, որդի Շաթուխիի և, հավանաբար, Թուշխա-ն(ա):

-ni ածանցը առկա է նաև Միտաննի, հնում՝ Մախտենի¹ անվան մեջ, որը բավական է ցույց տալու այդ երկրի էթնիկական կապը Հայկական լեռնաշխարհի հետ:

ri-ով վերջացող անունները պակաս տարածված չեն. հիշենք Նաի-րի, որը ոչ մի կապ չունի Նահարաիհի հետ՝ Ուրուտա-րի, Բա-րի, Ադդու-րի (լեռ), Պախտե-րի, Կինդա-րի, (վերջին երկուսը հիշատակված են Թիզբա-պալասարի կողմից), Ըուպ-րի, Ըուրա-րի, Կաշիա-րի, Մեխ-րի, Մուգ-րի, Կիրրու-րի, Նամ-րի, Չամ-րի, Մուծածի-րի (Մուծածիմայի դիմաց), վերջապես, Խուր-րի: Դա մի էթնիկական շրջա է, որը տարածվում էր Ուրարտուից մինչ Ներքին Չարի շրջանը, այն բարձրավանդակի վրա, որ շրջապատում է Ասորեստանի դաշտը:

Ժողովուրդների մեկ ուրիշ խումբ երևան է գալիս -zi վերջավորություն ունեցող անուններով, ինչպես՝ Ագ-զի, Հայասա ժողովուրդը Հայաստանում: Ալ-զի կամ Ալշե, որտեղից և Անզի-տու և Ալզի-նի, Պուրուլու-զի, Թեդիմ-զի, Պիլա-զի (Ուշխու = Շախի մոտ), Նու-զի, Կակ-զի, Պիրի-զի՝ Ասավածաշնչի Փեթեճաօու, ինչպես և Կենա-զի, հայտնի նույնպես Աստվածաշնչից՝ Keve-ճաօու²:

Սեկ ուրիշ էթնիկական գիծ Արևմտյան Եփրատի ակունքից ուղղվում էր դեպի Ասորիք և ավելի հեռուն: Միայն Նուզին և Կակզին են այդ գծից դուրս՝ Տիգրիսի ավազանում, Առափխայի (Կերկուկ) շրջանում և Չամուայի շրջանում՝ Կերկուկից հարավ-արևելք:

Անշուշտ, հնարավոր է, որ որոշ դեպքերում տվյալ ածանցներն ուրիշ ծագում ունենան, բայց ամբողջությամբ վերցրած դրանք համապատասխանորեն նույնն են: Այս -ri կազմիչը թվում է, թե նման է նրան, որը գտնում ենք Նիմուա-րի («Նինվեցի»), «Նինվեցի ծագող» բառի մեջ, որը կա Նուզիի³ լեզվում: Այն համարյա նույն արժեքն ունի, ինչ ուրարտերեն -ni, -hi (կամ hi-ni):

Այս ածանցներով կազմված էթնիկական անունները ներկայացնում են ամբողջ տարբեր ծագումով ժողովուրդներ, թե միևնույն ժողովրդի տարբեր ճյուղեր են: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել Միտան-նիի, Նուզիի և ուրարտերեն լեզուների միջև եղած որոշ ազգակցություն: Դա

¹ E. A. Speiser, *Etnic Movements in the Near East in the Second Millenium B. C.*, *The Hurrians and their connections with the Habiru and the Hyksos*, «Annual of the American School of Oriental Research», vol. XIII, 1931-1932, p. 23.

² Փիլոսոֆի, ԺԳ, 7; ԼԳ, 30; ԺԵ, 19; ԼԶ, 11, ըստ E. Dhorme-ի, տե՛ս նրա «L'Evolution religieuse d'Israel», I, էջ 119:

³ A. Ungnad, *Kulturfragen*, I, 12.

շատ ուժեղ փաստարկ է ի նպաստ էթնիկական ընդհանրության, ինչպիսի տարբերություններ էլ որ լինեն այն կազմող խմբերի միջև:

Խնդիրը մի ժողովրդի մասին չէ, այլ մի ռասայի մասին, որն իր ճյուղավորումներն ուներ և շումերներից, ասորեստանցիներից ու խեթերից տարբեր էր: Նա հեռավոր անցյալում ունեցել է իր պահը և իր որոշակի տեղը արևելյան քաղաքակրթության պատմության մեջ: Այս մտացված ռասայի երևան համելը վերջերս կատարված արևելագիտական ուսումնասիրությունների ամենազնահատելի արդյունքներից մեկն է, որ գալիս է լրացնելու Արևելքի հին ժողովուրդների պատմության մեջ եղած որոշ բացեր¹:

Այն ընդհանրապես Խուրրի է կոչվում, բայց ոմանք նախընտրում են Ըուրարի անունը: Խեթերն առհասարակ այդ անուններից առաջինն են գործածում, իսկ Միջագետքի ժողովուրդները՝ երկրորդը²:

Այդ ռասային պատկանող մի ժողովուրդ, փայլուն կերպով հայտնվելով պատմության մեջ, հիմնեց Միտաննի անվան ներքո հայտնի պետությունը: Միտաննիի պատմությունը վերևում շարադրվեց մեր նյութի զարգացման ամերածեշտության չափով: Հիշենք, որ թագավորական դինաստիան և ղեկավարող դասակարգը ծագումով հնդիրանական էին:

Միտաննական ցեղերը, ուրեմն, խեթերի ճակատագրին էին արժանացել՝ երկուսն էլ հնդեվրոպական տարրերի տիրապետության տակ էին գտնվում, այն տարբերությամբ, որ խեթերի մոտ դրանք centum տիպի լեզուների ճյուղին էին պատկանում, իսկ միտանցիների մոտ՝ satem տիպի լեզուների:

Միտաննական ցեղերի կամ խուրրիների բնակության գոտու հարցը հատուկ նշանակություն ունի: Քանի որ Միտաննիի կենտրոնը Օսրոենեն էր, հնարավոր ենք համարում նույն Օսրոենեն դիտել որպես միտաննական ցեղի օրրան: Ոչ շատ վաղուց, երբ խեթերը ծանոթ էին միայն ըստ այն հետքերի, որ թողել էին Ասորիքի հյուսիսում, գիտնականները չէին վարանում

¹ Միտաննիի լեզուն ծանոթ է Թուրքաքայի նամակից, որի նոր հրատարակությունը տե՛ս J. Friedrich, *Kleinasiatische Sprachdenkmäler*, 1932, տեքստ 163:

Ռաս-Շամրայի լեզվի մասին՝ Fr. Thureau-Dangin, *Vocabulaire de Ras-Shamra*, «Syria», 12, 1931, էջ 220-266:

B. Hrozny, «Archiv Orientalnyi», 4, 1932:

Նուզիի լեզվի մասին E. A. Speiser, «Journal of the American Oriental Society», 49, 1929, էջ 269-280. M. C. H. Gordon, *Evidence for the Hurrite language from Nuzi*, «Bulletin of the American Schools of Oriental Research», Decembre, 1936.

E. Chiera and E. A. Speiser, *A new Faktor in the Ancient East*. «Annual of the Am. Schools of Oriental Research», VI, 1926, էջ 75.

² A. Götze, E. A. Speiser, F. S. Zommer, *Die Ahhiyava-Urkunden*, 1932, էջ 42, նախընտրում են Խուրրի անվանումը Սուրարիի փոխարեն, որը պաշտպանվում է Տեմսեհի կողմից, «Zeit. f. Assyriologie», 6. A. Ungnad, *Subartu. Beiträge zur Kulturgeschichte und Völkerkunde Vorderasiens*, 1936:

խեթական մախնական օրրանը փնտրել Ասորիքի սահմաններում: Սակայն Պտերիայի (Բողագ-քոյ) արխիվների հայտնաբերումը հերքեց այդ տեսակետը և այդ օրրանը Ասորիքից տեղափոխեց Փոքր Ասիա: Հյուսիսում դեռևս չի գտնվել խորրիական մի Բողագ-քոյ՝ ցեղի առաջին բնակության պատիվը Միտաննից խելու համար, բայց ամեն ինչ ենթադրել է տալիս, որ խորրիները խեթերի ճակատագիրն են ունեցել, այսինքն՝ որևէ տեղից եկել են դեպի Սև ծովի հյուսիսը, որպեսզի հետագայում Կովկասյան լեռնաշղթայի վրայով իջնեն Հայաստան և ցրվեն Վերին Միջագետքում:

Խորրիական ցեղի պատմական դերի եռանդուն հետազոտողներից մեկը նրա ներխուժումը տեղավորում է երկրորդ հազարամյակի (Ջ. ա.) առաջին դարերում և կարծում, որ Հայաստանը, հատկապես Վանի շրջանը, այդ ասպատակողների ուժերի առաջին հանգրվանն ու հավաքման վայրն է հանդիսացել, մախքան Միջագետքի կենտրոնում Միտաննի պետությունը հիմնելը¹:

Գրավոր աղբյուրները հիմք չեն տալիս այս վարկածին, բայց դրա հեղինակը ելնում է այն իրողությունից, որ Ասորեստանի կողմից Միտաննի պետության ավերումից հետո Վանի շրջանն էր, որ երևան եկավ որպես խորրիական ժողովուրդների վերջին ապաստան, ուր նրանք ստեղծեցին Ուրարտու պետությունը և դարեր շարունակ չդադարեցին պայքարել Ասորեստանի դեմ մինչև այն ժամը, երբ վկա դարձան նրա կործանմանը, մախքան իրենց իսկ հեռանալը պատմության թատերաբեմից:

Գուցե, Հայաստանում կատարվելիք հնագիտական որոնումները մի օր իրական ապացույցներ բերեն ի նպաստ սույն վարկածի: Այնուամենայնիվ, ամփոփելի է, որ էթնիկական մեծ շարժումները, սեմականներից բացի, ուղղված են եղել հյուսիսից դեպի հարավ:

Ուրեմն, բնական է, որ ուրարտական և ասորական սահմանների վրա որոշ ժամանակաշրջանից հաստատված փոքր ժողովուրդները եկած լինեն այնտեղ նույնպես հյուսիսից: Այս հարցի շուրջ ծագում են որոշ նկատառումներ, որոնց վրա, մեր կարծիքով, անօգուտ չէր լինի կանգ առնել:

Արդեն հայտնի է, որ Հայաստանի խեթական տերմին է և հիշեցնում է Խոյ անունը, որ կրում էր Պարխար, հին Պարիադրես լեռներում ապաստանած պոնտական ժողովուրդներից մեկը²: Հայաստան պետության ժողո-

վորող ծանոթ էր Ազգի անվան տակ: Գուցե, դա Հայաստանի ամենակարևոր ցեղերից մեկն էր: Հռոմեական ճանապարհացույցների Ազա կամ Հասիս և Ջիզի-Օլա կայանները հավանաբար պահել են այս ժողովրդի հիշատակը:

Թվում է, թե Տիգրիսի ակունքում մի գեղեցիկ օր հայտնված Ալ-գի, Ան-գի, Ալ-շե անունով ժողովուրդը այդ ազգիների մի հատվածն էր, որն այստեղ էր գտնվում կամ այն պատճառով, որ Հայաստան որոշ ժամանակ տարածվեց մինչև Արածանի կամ Արսանիս գետից այն կողմը, կամ կամավոր գաղթի, գուցե բռնի տարագրության պատճառով: Ան-գի-տու-ն, հայկական Անձիտ գավառը, դասական հեղինակների Անգիտենեն, ինչպես նաև Արզան-ենեն, որը հայկական Աղձնիքի իրանական ձևն է (ուրարտական Ալգի-նի), իրենց անունն ստացել են այս ժողովրդից:

Պուրուլում-գին, որը ալգիներին միացած մեկ ուրիշ ցեղ էր, անշուշտ, նույն ծագումն ուներ:

Կաշկի և Ուրումի երկու ժողովուրդները, որոնք ներխուժել էին Ալգիի և Պուրուլումգիի տարածքը, նույն տեքստի մի այլ պատճենում կոչվում են Արեշլի և Ուրումի: Այստեղից հետևում է, որ Կաշկի և Արեշլի ժողովուրդները, եթե նույնը չեն, գոնե ընդհանուր ծագում ունեն:

Հարաբերություն են ուզեցել գտնել Կաշկիի և Կիսկեսուսի՝ այսօրվա Կիսկենի միջև, որը գտնվում է Արգեսու լեռից հարավ¹: Սակայն կաշկիները պոնտական ժողովուրդ էին, և ավելի հիմնավորված կլինեք այն Կիսկեն քաղաքի մասին մտածել, որը Շորխի հովտում է գտնվում: Իրականում ո՛չ մեկը, ո՛չ մյուսը Կաշկիի հետ կապ չունեն:

Պատմական տեսակետից կաշկերը հնուց ճանաչված Կոլիս ժողովուրդը կարող է լինել: Կոլ-խի-ներն արդեն ծանոթ էին ուրարտացիներին: Խեթական վավերագրերը կաշկերին ներկայացնում են որպես ռազմատենչ ժողովուրդ, որն ընդունակ է ավազակության և պատրաստ պատեհ առիթով մաշեցնելու խեթերին կործանիչ ասպատակություններով:

Կոլիսերը ևս այլ կերպ չէին վարվում: Դա միակ ժողովուրդն է, որը չընկավ Արեմենյանների տիրապետության տակ այն ժամանակ, երբ ամբողջ Առաջավոր Ասիան հպատակ էր դառնալու արքայից արքային: Այդ շրջանում Կողքիսը Արեմենյան պետության վարչական բաժանմունքների մաս չէր կազմում, սովորական հարկ չէր վճարում, այլ իր պարտավորությունները սահմանափակել էր միայն կամավոր մվիրատվությանը, որոշ թվով աղաներ և երիտասարդ աղջիկներ տալով²:

¹ A. Götz, Kleinasien in Kulturgeschichte des Alten Orients, էջ 69, «Handbuch der Altertumswissenschaft», III, I, 3, 1933, գրքում: Տե՛ս նույն հեղինակի Hethiter, Churriter und Assyrer, 1936, էջ 31-32:

² P. Kretschmer, «Anzeiger der Wiener Akademie», 1932.

Նկատենք (520 Ջ. ա.) հիշատակում է Խոյ-երին պոնտական ցեղերի շարքում (Ստեփանոս Բյուզանդացու մոտ):

¹ A. T. Olmstead, History of Assyria, էջ 189:

² Հեթոտոտու, III, 97:

Իսկապես բնորոշ է, որ զուգահեռ տեքստերում Կաշկիի փոխարեն Արեշ-լի է դրված: Այդ հանգամանքը մեզ հուշում է Արեշլիում տեսնել Ապշի ժողովրդին՝ Կողքիս ցեղերից մեկը, որը հայտնի է հին հեղինակներին: Այդ դեպքում հանդգնություն չէր լինի ուրումիներին նույնացնել իմերիների հետ, որոնց երկիրը կոչվում է Իմերեթի՝ Պլինիոսի *Am(p)reutae*-ն, և նույնիսկ, որոշ վերապահությամբ, հարաբերություն նկատել Խուրուշկիի և Արասկիի միջև¹:

Աստրական մի տեքստ կաշկերին, արեշլիներին, ուրումիներին կոչում է «*Halti*-ի ռազմիկներ»>: Դա նշանակում է, որ ասորեստանցիներն այդ ժողովուրդներին կապում էին Խալախի (Խաղախ-քի) քաղաքական աշխարհի հետ, անշուշտ, այն պատճառով, որ նրանք Խալախի հյուսիսարևելյան սահմանին էին հարում: Այնտեղից նրանք ետ մղվեցին դեպի Սև ծովի արևելյան ափը, իսկ մի մասը, խեթական պետության կործանման շրջանում, քշվեց դեպի ուրարտա-աստրական սահմանը:

Կոլխերը ներկայացնում էին լազա-միգրելական բնակչությունը՝ իբերական կամ վրացական ընտանիքի ծովափնյա ճյուղը:

Արեշ-լի-ները կամ ապսի-լի-ներն ավելի շուտ կապված էին արխագական խմբի հետ: Հնարավոր է, որ Կաշկին դարձած կլինի Կաշ-խի, ինչպես, օրինակ, հույն հեղինակների Արասկոյ կամ Արասոյ, որոնք համապատասխանում են ուրիշ հույների արաս-խոյ-ներին, որտեղից և դրափոխությամբ առաջ է եկել՝ արխա-ս կամ արխագ:

Գուցե, Կաշ-կի կամ Կաշ-խի-ն Կոլխի կամ Կոր-խի-ն է, եթե ճորտի գետի անունը ծագում է Կորոխից: Դրանք կարելի է նկատել որպես զուգահեռ ձևեր, որոնք կախում ունեն նույն ժողովրդի տարբեր շրջաններից և տարբեր

խմբերից: Այդ ձևերի հնչյունաբանական հարաբերության բացատրությունը մեծ դժվարություն չի ներկայացնում¹:

Կաշկի-կոլխերն իրենց ներխուժման հիշատակը բողել են Ալզի երկրում: Կոլխիս հռոմեական կայանը, որը գտնվում էր Կովքի (Գյուլջուկ) մոտ՝ Անգիտենում, դրա վկան է: Գուցե, Տիգրիսի վրա գտնվող Կուրխը միևնույն ծագումն ունի:

Ասորեստանի դեմ կաշկերի զինակիցները մուշկերն էին: Նրանք երևան են գալիս նույնպես Հայաստանի հյուսիսում՝ Կոլխիդայի սահմանի վրա, այն լեռների ստորոտում, որ նրանց անունն է կրում՝ *Μοσχικῆ δρος*: Դեռևս այսօր այդ շրջանի բնակիչները ծանոթ են Մես-խի հին անվան ներքո²:

Ասորեստանցիներն այդ անունը տալիս են Միտայի կամ Միդասի ժողովրդին, այսինքն՝ փոյուզիացիներին: Դրանից եզրակացրել են, որ մուշկերը ներկայացնում են փոյուզիական ասպատակողների առաջապահը, որ առաջ խաղաց մինչև Ասորեստանի սահմանը: Սակայն Մուշկի և Կաշկի պետությունների ճակատագրի ընդհանրությունը թույլ չի տալիս մյուսնույն կատարելու: Ըստ հավանական է, որ Մուշկին երկրի կամ երկրի մի մասի մախափոյուզիական անունն է, որը փոյուզիացիները նոր էին գրավել, իսկ ասորեստանցիները շարունակում էին հին անունով կոչել, հակառակ տեղի ունեցած էթնիկական փոփոխությանը: Ինչպես Հայաստանը՝ Դարեհի արձանագրության պարսկական տեքստում *Armina*, նույն տեքստի բաբելոնյան տարբերակում դարձել է Ուրաշտու, այսինքն՝ Ուրարտու, որը երկրի մախահայկական անունն է:

Անհրաժեշտ է տարբերել Միդասի ղեկավարած Մուշկին այն Մուշկիից, որ Կաշկիի հետ միասին էր գործում: Առաջինում փոյուզիացիներն էին ապրում, երկրորդը մախափոյուզիական մի ցեղ էր, որը, հավանական է, որոշ ազգակցություն ուներ կաշկերի հետ: Փոյուզիացիների ասպատակությունների հետևանքով մուշկերը ծովափով մղված կլինեն մինչև Կողքիս, իսկ նրանց մի մասը՝ կաշկերի հետ գործակցելով՝ արշավել է Ասորեստանի դեմ:

Մուշկի-ի փոխարեն Մուս-խի-ն, ինչպես ապացուցում է *Μόσχοι* = Մես-խի փաստը, արդեն հաստատում է այս ժողովրդի և Կաշկի-Կոլխի-ի միջև

¹ -s և -r հերթազայունը շատ լեզուներում է հայտնի: Հին sje «կաթ»-ը նոր-վրացերեն դարձել է tje և sjali tjali: H. Март, *Грамматика древнеелтратурного грузинского языка*, Ленинград, 1925, էջ 19:

² Ըստ Ստրաբոնի, XI, 2, 18, *Μοσχικῆ*-ն բաժանված էր կոլխերի, իբերների և հայերի միջև: Պրոկոպիոսը, *De Bello Goth.*, IV, 2, արդեն գիտե ներկա ձևը՝ *Μέσχοι*:

¹ Պլինիոսը, IV, 14, գիտե *Ampreutae*, *Lazi* և *gens Apsilae*: Առաջին անվան մեջ արդեն Պաղատնոսի հրատարակիչ Մ. Մյուլլերը (*Ptol.*, V, 9, էջ 954) ճանաչել է Իմերեթին՝ «Իմերների երկիրը»: Հեկատոսը (Մտեփանոս Բյուզանդացու մոտ) և Հերոդոտոսը (III, 94 և VII, 79) նշում են կոլխերի հետ *Mare ժողովուրդը*, որ նույն Իմերն է: Հռոդոսի Ապոլլոնիոսը (մոտ 240 թ. Ջ. ա.), *Ἀργοναυτικά*, II, 399, հրատ. Teubner-ի, ասում է, որ Փասիսի ակունքը գտնվում է *Ἀμαραντών* [ամարանտացիների] լեռներում: Ըստ Մտեփանոս Բյուզանդացու՝ *Ἀμαραντοί Κολχικὸν ἔθνος ἔφ' ὧν ὁ Φᾶσις ρεῖ ὄθεν καὶ Ἀμαράντιον τὸν Φᾶσιν φασιν*: [Ամարանտացիները՝ Կողքացի ցեղեն, «սրանց կողմից» հոսում է Փասիսը, ինչի պատճառով Փասիսը անվանվում է Ամարանտիոս]:

Ապոլլոնիոսի պոեմին նվիրված լուծմունքներում կարծիք է հայտնված, թե Փասիս գետը հոսում է մի սարգազետնով *εὐθαλείς καὶ ἀμαράντους*, [ծաղկուն և անթառամ] որտեղից է դրա անունը: Դա ժողովրդական ստուգաբանություն է: Ամարանտը Իմերեթին է՝ հակառակ Մտրաբոնի կարծիքին, որ, Էրատոսթենեսի հետ համաձայնելով, Հայաստանի մասն է կարծում:

Ստրաբոնը, *Periplus Ponti* (K. Müller, *Geogr. Graeci*, Min. 1, 370), հիշատակում է *Λαζοί*՝ *Ἀφίλας*՝ *Ἀβασκοί*՝ Պրոկոպիոսի մոտ, *De Bello Goth.* IV, 2, էջ 471 (հրատ. Բոնն)՝ *Ἀβασγοί*, *Ἀφίλιοι*:

եղած կայր: Իրոք, ըստ Դարեհի ժամանակակից Հեկատեոսի՝ մոսխերը Կողքիսի ցեղերից մեկն էին¹:

Անունից ելնելով, կուսմուսիները մույնպես միևնույն էքնիկական խմբին պիտի որ պատկանեին: Նրանք զիմակցում էին մուշկիների հետ Ասորեստանի դեմ, որքան ներշնչված ընդհանուր թշնամու դեմ ունեցած ռխակալությամբ, մույնքան էլ արյունակցական կապերի պատճառով: Նրանք երևան են գալիս Կաշիարի շրջայում՝ Տիգրիսի հովտում: Ոչ մի պատճառ չկա բաժանելու նրանց մույն անունը կրող ժողովրդից, որը վերջ ի վերջո հաստատվեց Եփրատի վրա, այն շրջանում, որը նրանց անունն է կրում՝ Կուսմուսի, հին հեղինակների Կոսմագենեն: Ո՞րտեղից են եկել նրանք: Նրանց անունը շատ է հիշեցնում Հայաստան քաղաքաբնակչության մայրաքաղաք Կուսախան, հայկական Կամախը, որ իր անունը պահել է մինչև մեր օրերը: Հավանական է, որ նրանք այս քաղաքությունը կազմող ցեղերից մեկն էին²:

Նրանց քաղաքների անունները՝ Կալի-Թեշուր, Կիլի-Թեշուր, Շաթուխի և Ուրախի-նա քաղաքը ոչ մի կասկած չեն թողնում նրանց ծագման վերաբերյալ: Ասորեստանցիներն ասում են, որ Կուսմուսի քաղաքները կոչվում էին նաև ir-ru-pi: Առաջին սեպածև նշանը երկու արժեք ունի՝ ir և sa: Է. Ֆորբերը նախընտրում է կարդալ sa-ru-pi, որպեսզի այնտեղ գտնի ասորական šar-rabu «մեծ քաղաք»-ի բարբարոսական արտասանությունը: Դա սրամիտ է, բայց քիչ հավանական: Հնարավոր է, որ պետք է կարդալ ir-ru-pi և այն համեմատել ip-ri «քաղաք»-ի հետ, որի ուրարտական ձևն է euri («տեր»):

Բար-խի ժողովուրդը, որ կուսմուսիների հետ հարևան և համերաշխ էր, մույնպես թվում է, թե հյուսիսից է եկել, բայց այդ մասին վստահ չենք³:

Այսպիսով հաստատվում է, որ մեծ թվով ցեղեր Ուրարտուի մեկ ծայրից մղվել են մյուսը՝ հյուսիսից դեպի Ասորեստանի սահմանը: Նրանց անվան

ընդունված վերջավորությունը՝ -ի, թույլ է տալիս Դիանու-խիի, Էրիա-խիի, Արի-լիանի-խիի և ուրարտական այլ ցեղերի հետ ազգակից համարել նրանց: Կողքիսի և Ուրարտուի միջև եղած էքնիկական կապերն առավել ևս կամրապնդվեին, եթե վստահ լինեինք, որ Բիաի-նի-ն մույն կազմությունն ունի, ինչ որ Սանի-ն կամ Շանի-ն, որոնք գործածված են տեղական ճանի կամ Ցանի և Սուա-նիի փոխարեն, և որ Էգերի-ն կոլխերի մի այլ անունը, Իրերի-Իմերի-ն, Բիգերի-ն, Էկեխերի-ն մույն կարգի են, ինչ որ Նաի-րին, Ուրուաա-րին, Նամ-րին և այլն...

Պոնտական ամենակարևոր ժողովուրդներից մեկը՝ խալիբները, ներկայացուցիչներ չունեն Ասորեստանի սահմանների շրջաններում, ինչպես կոլխերը և ուրիշները: Ըստ Ստրաբոնի՝ խալիբները մույն խալդերն են, իսկ Կ. Ֆ. Լեման-Հաուպտը կարծում է, որ խալդերը Խալդի աստծո ժողովուրդն են և Ուրարտուի ազգային անունը: Հնչակավոր աշխարհագրագետի կարծիքը կարծես ուրիշ հիմք չունի, բացի Խալիբ և Խալդ անունների մերձեցյունաբանությունից, սակայն այդ կարծիքը ուրարտական տեքստերում հիմք չի գտնում:

Ինչևիցե, գոյություն է ունեցել մի ժողովուրդ, որը կոչվում էր Խալդ, անկասկած, աստծու անունով: Ստիպված ենք ընդունել, որ այս անունը հատկացվել է այդ ժողովուրդին Ուրարտուի կործանումից հետո: Հայերը, Ուրարտուի ժառանգությունն ստանալուց հետո, հաղթած բնակիչներին անվանել են նրանց աստծու անունով: Հեկատեոսը չի ճանաչում Խալդ ժողովուրդը, ինչպես նաև Հերոդոտոսը:

Քսենոփոնն առաջինն է, որ հիշատակում է այն՝ Հայաստանի սատրապ Օրոնտասի վարձկան զորքերի միջև: Նա պատմում է նաև, որ խալդերը, լեռներում ապաստանած, շարունակում էին պաշտպանվել հայերից: Մի հատվածը ստիպված է լինում փախչել դեպի հյուսիս՝ Դերքսենեի, Կարեմիտիսի շրջանները և ավելի հեռու: Այստեղ նրա բնակված լինելը հաստատվում է Խալդ-Առիճ գյուղով (արդի Կալդարիճը), վերոհիշյալ երկու՝ Դերքսան և Կարին շրջանների սահմանագլխում, Եփրատի վրա և Խալդիա, հայերեն՝ Խաղտիք, երկրով, Պարխար լեռնաշղթայի ճյուղավորումների վրա:

Այս խալդերն անձանք են Հերոդոտոսին: Քսենոփոնը մույնպես նրանց չի ճանաչում, այնտեղ նա տեղադրում է խալիբներին: Ըստ Ստրաբոնի՝ հայերը խալիբներից և մոսիոնյուսներից խլել են Դերքսենը և Կարեմիտիքը: Նա չի հիշատակում խալդերին: Դա չի թելադրում խալդերի նախնական բնակավայրը փնտրել պոնտական շրջաններում, որտեղից նրանք իրենց

¹ Ստեփանոս Բյուզանդացու մոտ՝ *Μόσχοι Κόλχων ἔθνος προσεχὲς τοῖς Ματιηνοῖς*:
² Կուսմուսի, որը կովկասյան ժողովրդի անուն է, չպետք է շփոթել Կուսիկի հետ, շատ հատկանշական է: Սակայն հին հեղինակներին այն ծանոթ չէ, և դա պրոգն է հանդիսանում եզրակացության համոզելու:

³ Ստրաբոնը ճանաչում է մի ժողովուրդ՝ *Ἀππῆται*, որը նա մույնացնում է հին *Κέρκεται* հետ և որն ապրում էր սաների մոտ, ուրեն՝ Տրապիզոնի շրջանում: Թվում է, թե *Ἀππῆται*-ն (կարդալ՝ *Ἀππαγῆται*) մույն ժողովուրդն է, որ Կոստանդին Միրանածինը, *De Adm. Imp.*, 42, նշում է *Παπαγῆται* անվան տակ, որպես *Κασαγῆται*-ի հարևան: Վերջինը Կաշակն է, այսինքն՝ ժամանակակից չերքեզը, հին *Κερατέες*-ը: Այս ժողովուրդն ապրում էր արասգների հյուսիսում, Կուրանի շրջանում: Ստրաբոնի՝ *Ἀππῆται*-ն, անշուշտ, կերկեսների մի գաղութ էր կամ ավելի շուտ՝ նրանց ցեղերից մեկը, որը Կոստանդին Միրանածինը Պապագիա է անվանում: Այս անունն ունի՝ արդյոք առնչություն Բարխի կամ Պապ-խին, սա է հարցը:

Խալդի աստծու հետ ներխուժած լինեին Ուրարտու և ստեղծած հզոր պետություն:

Անշուշա, Կ. Ֆ. Լեման-Հաուպտին է պատկանում խալդերի և Ուրարտուի հետ նրանց հարաբերության հարցը առաջ քաշելու պատիվը: Մակայն նա այդ հարցը շոշափել է կամայական կերպով և առանց ուրարտական տեքստերի օժանդակության: Միայն էր Corpus-ը հրապարակել խալդերի անունով: Գիտնականը, ամառարակույս, ազդվել է այն իրողությունից, որ գոյություն ունեն խալդեր անվամբ մի ժողովուրդ, բայց նա մոռացել է մեկ ուրիշ ժողովրդի, որն ուրարտացիների անունն է կրում և որի գոյությունը նույնպես հաստատված է: Դրանք Հերոդոտոսի ալարոդներն են Արաքսի հովտում, որոնց հիշատակը դեռևս պահպանում է հայկական մահանգ Այրարատը և ասորիների օրաայաները՝ Անգիտենեի շրջանում¹: Հեռակարար, ոչ մի պատճառ չկա խալդերի անունը նախընտրել ուրարտացիների անունից:

Ալարոդները սապեյրների և մատիանների հետ միասին կազմում էին Արևելյան Հայաստանի՝ Դարեհի կողմից ստեղծված սատրապություններից մեկի բնակչությունը: Ավելի ուշ սապեյրները երևան են գալիս այն շրջանում, որ այսօր նրանց անունն է կրում՝ հայկական Սպերը, այժմյան Իսպիրը Ճորոխ գետի վրա: Այս ժողովուրդն իր անվամբ պարտական է Սուպրիին՝ շատ հայտնի թագավորություն Բատման գետի ջրերի վրա, որը հետագայում հիշատակվել է Սուպիրիաիս անվամբ²:

Սուպրին իր բնակչության մի մասը գաղթեցրել էր դեպի Հայաստանի հյուսիսը:

¹ Հերոդոտոս, III, 94: 'Αλαρόδιοι: Ուրծայա ժողովրդի մասին: Th. Nöldeke, Die zwei Völker Vorderasiens, «Zeit. d. Morgenländ. Gesell.», 13, 1879; J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 73, 187:

² J. Markwart-ը, Eransahr, էջ 159, նկատել էր, որ «Փարսալացի Կիրսիլոս և Լարիսացի Մեդիոս պատմիչների Տոսպիրուց-ը տարրեր է Տեօսպերուց-ից (Հերոդոտոս, III, 94) կամ Դոսպիրուց-ից (Մարտան, XI, 14, 9) և կամ Եօսպերուց-ից (Քսենոփոնի Անարասիսի վերջաբանը): Առաջինը Շուպրիան է, երկրորդը՝ Սպերը: Ըստ այդմ նա իրավամբ ուղղում է Տոսպիրուց-ը Տոսպիրուց-ի, բայց սխալվում է, երբ ուզում է Տեօսպերուց-ում տեսնել վրացական նախածանց -sa-ն, երկու անունները զանազանելու համար: Իրականում խոսքը միևնույն ժողովրդի մասին է, որն իր անունը տվել է երկու վայրերի՝ տարրեր ժամանակաշրջաններում: Ապոլլոնիոս Հոդոսցին իր «Argonautica» քերթվածում, 3, 395, կոչում է Տեօսպերուց նույն երկիրը, ինչ որ Հերոդոտոսի մոտ Տեօսպերուց-ն է: Դա թույլ է տալիս վերջինն ուղղել Տեօսպերուց-ի, հայկական Սպերի համաձայն, ինչպես և ըստ Մարտանի Դոսպիրուց-ի և Քսենոփոնի Եօսպերուց-ի:

Մապեյրների հարևան մատիանները Միտաննից էին, որի հին ձևը՝ Մաիտե-նի, ավելի հարակցություն ունի Մատիա-նիի հետ: Համանման պատճառներ Միտաննիի բնակիչներին մղել են Հայաստանի արևելյան շրջակայքը, որտեղ նրանք իրենց անունը տալիս են Ուրմիա լճին, որը առաջներում Մատիան էր կոչվում:

Մեկ ուրիշ ժողովուրդ՝ մուզրիները, նույն բախտին արժանացան. նախապես նրանք ապրում էին Մակուր լեռան վրա, Ասորեստանի մայրաքաղաքի հյուսիսում, բայց հետագայում նրանց հաստատված ենք գտնում Արևմտյան Հայաստանի Դերսիմի շրջանում, Արսանիաս գետի մի վտակի վրա, որը մեր օրերում դեռևս Մուզուր է կոչվում՝ ըստ հին Հայաստանի Մծուր կամ Մզուր համանուն գավառի:

Հարավի մի քանի ժողովուրդների տեղափոխումը դեպի հյուսիս, անշուշա, չի որոշում նրանց նախնական բնակության հարցը: Չի բացառված, որ նրանք երբևէ իջած լինեն հյուսիսից, ինչպես մի շարք ուրիշ ժողովուրդներ: Ինչ էլ որ լինեն առաջարկված նույնացումներից մի մասի նկատմամբ արվելիք վերապահումները, կարծում ենք, որ ամբողջությամբ վերցրած նրանք արժանի են ուշադրության: Համեմատված համարյա բոլոր անունները վերցված են միևնույն աշխարհագրական ու պատմական միջավայրից: Նրանց նմանությունը չի կարող պատահական լինել: Խնդրո առարկա ժողովուրդները գլխավորապես պատկանում են կոլխա-իբերական կամ վրացական ընտանիքին, որ կովկասյան լեզուների խմբերից մեկն է:

Եթե հատուկ անունների բնորոշ կազմիչները թույլ տային վերահիշյալ ժողովուրդների և ուրարտացիների ու, նրանց միջոցով, խուրրիական ցեղի հետ ազգակցության մասին խոսելու, ապա կպարզաբանվեր այդ ցեղի բնույթը: Ոչ թե այն պատճառով, որ խուրրիները կոլխա-իբերական ծագում ունեն, այլ այն, որ այդ ընտանիքի ժողովուրդները խուրրիների մաս կկազմեին, ինչպես ուրարտացիները:

Իհարկե, վճռական խոսքը կաավի դեռևս որոշվելիք լեզվական հարաբերությունների պարզաբանումից հետո: Այն փաստը, որ վրացերենի հնչյունաբանական համակարգը տարրերվում է ուրարտերենի համակարգից, ճիշտ է, քաջալերական չի թվում, սակայն հնչյունաբանությունն ավելի կարևոր է քառապաշարի համար, քան թե քերականական կառուցվածքի: Շատ գիտնականներ տեսականորեն ընդունել են վրացերենի հնարավոր ազգակցությունը ուրարտերենի հետ: Մակայն այդ տեսակետը մեկնաբանելու ուղղությամբ թափված ջանքերը ծանրակշիռ չեն և զուրկ են լեզվաբանական հետաքրքրությունից: Իրոք, կովկասյան լեզուները դեռևս մեթոդիկ կերպով չեն ուսումնասիրվել, ոչ միայն չեն հետազոտված տարրեր

խմբավորումները, այլ նույնիսկ մեկ խմբի լեզուները չեն պարզաբանված իրենց փոխադարձ հարաբերությունների մեջ:

Միայն վրացական խումբը մեկ տասնյակ լեզվից ավելի է ընդգրկում: Քանի դեռ մշակված չէ այդ լեզուների համեմատական քերականությունը՝ օտար ծագում ունեցող բառական բոլոր տարրերից (որոնք բավական շատ են) զերծ մի բառարանի օգնությամբ, քիչ արդյունավետ կլինի կշռադաստել այս լեզուների նմանության և կապերի մասին ուրարտերենի կամ խուրդերենի հետ:

8. ՈՒՐԱՐՏՈՒՒ ՎԱՆՃԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԸ

Ուրարտուի վերջին օրերի մասին մեր տրամադրության տակ փաստեր չունենք, և հայտնի չէ, թե ինչ պայմաններում նա դադարեց գոյություն ունենալուց: Բացահայտ է թվում, որ նա զոհ դարձավ այն նույն հեղաշրջմանը, որ սրբեց-տարավ Ասորեստանի պետությունը:

Ուրարտուն վերջին անգամ հիշատակված է Բաբելոնյան շատ վնասված մի տարեգրության մեջ, որի գիտական հրատարակությունը լույս է ընծայել Բրիտանական քանդարանի քանդարանապահ Կ. Գադդը¹: Ուրարտուին վերաբերող տեղերը, դժբախտաբար, այնքան աղճատված են, որ դժվար է դրանց իմաստը հասկանալ:

Հրատարակիչը կարծում է, թե խոսքը մի արշավանքի մասին է, որը Ակկադի թագավոր Նաբոպալասարը, Ասորեստանը կործանողներից մեկը, կատարել է Ուրարտուի դեմ: Սակայն տեքստը մեզ վրա այդ տպավորությունը չի թողնում:

Այդ վավերագիրը պատմում է այն պարագաները, որոնք հանգեցրին Ասորեստանի անկմանը: Մենք դրան կանդորադառնանք, երբ խոսելու լինենք Մարական պետության հետ կապված իրադարձությունների մասին: Այստեղ սահմանափակվենք Ուրարտուին վերաբերող հարցերով (23):

Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն գրավվեց 612 թվականին (Ջ. ա.): Սինշարիչկուն թագավորն իր մահը գտավ քաղաքի ավերակներում: Նրա հաջորդ Աշուրուբալիտը բանակի մնացորդների հետ փախչում է Խառան քաղաքը: 610 թվականին Նաբոպալասարը և Ումման-մանդայի թագավորը հարձակվում են Խառանի վրա: Աշուրուբալիտը դատարկում է քաղաքը և անցնում Եփրատի մյուս ափը: Ասպատակողները գրավում են քաղաքը:

¹ C. J. Gadd, The fall of Nineveh. The newly discovered babylonian chronicle, № 21, 901, in the British Museum, 1923.

Նաբոպալասարն այնտեղ պահակազոր է թողնում և իր երկիրն է վերադառնում: Հայտնի չէ, թե Ումման-մանդայի թագավորը մնում է՞ քաղաքի տեր, թե նույնպես ետ է քաշվում:

Հաջորդ տարին, ուրեմն՝ 609 թվականին, եգիպտական բանակը օգնության է գալիս Աշուրուբալիտին: Վերջինս անցնում է Եփրատը և գալիս ճամբարում է իր դաշնակցի հետ Խառանի դիմաց: Բաբելոնյան կայսրը թշնամուն ետ մղելու համար գրոհ է կատարում դեպի դուրս, բայց ճախողվում ու ջարդվում է: Սակայն պաշարողներին չի հաջողվում քաղաքը գրավել: Նրանք պաշարված վիճակում են պահում քաղաքը թամնուզ ամսից սկսած մինչև էլուլ ամիսը, ուրեմն՝ երեք ամիս: Նաբոպալասարն օգնության է գալիս իր զորքերին... Ապա խոսվում է Իզալա լեռան վրա տեղի ունեցած ճակատամարտի, բազմաթիվ երկրներում քաղաքների հրկիզման մասին: «Այդ ժամանակ բանակը (առաջ է խաղում) մինչև Ուրաշտուի շրջանը» վերցնում ռազմագերիներ: Ապա Ակկադի թագավորը վերադառնում է իր երկիրը:

Տարօրինակ է, որ Նաբոպալասարը, որ օգնության էր գնում իր զորքերին, այսինքն՝ Խառանում պաշարված կայսրը, որի մի մասը ոչնչացվել էր պաշարողների կողմից, ստիպված է լինում ճակատամարտի բռնվել Իզալայի շրջանում: Դա գալիս է ասելու, որ Խառան գնալու համար նա ընտրել էր Բաբելոնից Նինվեն և Մծբին տանող ճանապարհը, բայց Իզալա լեռան վրա, որը տարածվում է Մծբինից վերև, նա հանդիպում է թշնամի ուժերին: Հավանական է, որ դա ասորական մահաճգների բանակն էր, որ գտնվում էր Իզալա լեռնաշղթայի և Տիգրիսի միջև ու հավատարիմ մնալով Աշուրուբալիտին՝ աշխատում էր կասեցնել Նաբոպալասարի առաջխաղացումը դեպի Խառան:

Ակկադի թագավորը վստահեցնում է, որ Իզալայի շուրջը կատարված ռազմական գործողություններում ինքը հաղթանակ է տարել և նույնիսկ ընթացել է մինչև Ուրաշտուի շրջանը՝ ^{ALU}adi pihat ^{ALU}Uraštu: Այսինքն՝ նա թշնամուն հետապնդել է մինչև Ուրարտուի սահմանը: Ասորեստանի այն մահաճգները, որտեղ նա ռազմական գործողություններ էր կատարում, տեղավորված էին Ուրարտուի տարածքի դիմաց, Տիգրիսից այն կողմ:

Կ. Գադդը կարծում է, որ ^{ALU}Uraštu-ն Ուրարտուի մայրաքաղաք Տուշպան է, ուրեմն, pihat ^{ALU}Uraštu Տուշպայի շրջանը կլինեք, ուստի նա հնարավոր է համարում, որ Նաբոպալասարը ներխուժած լինի Ուրարտու և առաջ խաղացած մինչև մայրաքաղաքը: Տեքստը, ինչպես և ժամանակի իրավիճակը նման կարծիքը չեն արդարացնում: Նա, ով չէր կարողացել օգնության հասնել և ազատել Խառանում պաշարված իր զորքերին, մի

քան, որ նրա արշավանքի նպատակն էր, կարիք չուներ, եթե նույնիսկ ի վիճակի լիներ, արկածախնդրաբար նետվել դեպի Ուրարտու, թողնելով հետևում իր իսկական թշնամուն: Դա ևս առավել անհավանական է թվում, քանի որ Ուրարտուն Ասորեստանի կողմը չէր բռնել երկիրը ներխուժողների դեմ: Ուրարտուի դիրքը Նինվեի ողբերգության մեջ հայտնի չէ: Եթե կարելի է հավատալ Աստվածաշնչի մի տեղին, Ուրարտուն Ասորեստանին հակառակ ճամբարում էր գտնվում: Երեմիա Մարգարեն կոչ է անում Արարատի, Միննիի և Ասքենազի թագավորություններին, բայց Բաբելոնի դեմ, և ոչ թե Ասորեստանի, որը բացահայտ կերպով անհարիր է.

«Տէրն արթնացրեց մարերի

թագաւորի հոգին.

քանի որ նրա բարկութիւնը Բաբելոնի

վրայ է, պիտի ջնջի նրան...

Դրո՞շ քարձրացրէք երկրի վրայ,

փռող փչեցէք ազգերի մէջ,

ազգեր պատրաստեցէք նրա դէմ:

Կանչեցէք նրա դեմ

Այրարատեան թագաւորութիւններին

և Միննին

և Ասքանազեան գնդին

Նրա դեմ գորավար կարգեցէք

և երկվարներ քշէք իմչպէս մորեխի թագմութիւն:

Նրա վրայ՝ հրաւիրեցէք ազգերին

և մարերի թագաւորին,

նրանց զօրավարներին ու նրանց

բռնող զօրագլուխներին,

երկրի բռնող իշխանութիւններին...

Բաբելոնը բլուրների պիտի վերածուի,

շնագայլերի բնակավայրի»¹ (24):

¹ Երեմիա ՄԱ, տողեր 11, 27-28 և 37: «... զի զարթոյց Տէր զօգի թագաւորին Մարաց. զի բարկութիւն նորա ի վերայ Բաբելոնի. և ջնջեսցէ զնա...

... փռող հարէք ընդ ազգս ամենայն, հրաւիրեցէք ի վերայ դորա զունդս: Պատուէր տուք յինն Այրարատեան թագաւորութեանցն և Ասքանազեան գնդին. կանգնեցէք զնովա նետակալս... Երևարք իբրև զթագմութիւն մարախոյ: Հրաւիրեցէք ի վերայ նորա զազգս և զթագաւորն Մարաց, զօրավարս նորա, և զամենայն զօրագլուխս նոցա անդր, և զամենայն երկրի իշխանութիւնս:

... Եվ եղիցի Բաբելոն ի բլուրս՝ բնակութիւն վիշապաց...»:

Երեմիան Նաբոպալասարի ու Նաբուգոդոնոսորի ժամանակակիցն էր և Նինվեի կործանման վկան դարձավ, ինչպես և Երուսաղեմի գրավման՝ Նաբուգոդոնոսորի կողմից և Իսրայելի տարագրության՝ 587/6 թվականին: Տեքստը Կյուրոսի կողմից Բաբելոնի գրավման մասին է խոսում 539 թվականին և, ուրեմն, ոչ մի կերպ չի կարող պատկանել Երեմիային: Սակայն այդ ժամանակաշրջանում Արարատ-Ուրարտու, Միննի-Մանա և Ասքենազ-Սկյութական պետություններ գոյություն չունեին, և դրանց հիշատակումը 539 թվականի մի հեղինակի գրչի տակ՝ ժամանակավրեպ է:

Այս բոլորը անհարիր է: Աստվածաշնչի քննադատները գոհացուցիչ լուծում են տվել: Ինչ որ մեզ հասել է Երեմիայի ամունով, իրականում պատկանում է երկու հեղինակների՝ Երեմիա I և II: Մեկն ապրել է Նինվեի կործանման ժամանակ, մյուսը՝ ավելի ուշ, Կյուրոսի օրով: Մեզ հետաքրքրող տեքստի ժամանակավրեպ գծերը բացատրվում են նրանով, որ Երեմիա II-ը, կամ կարծեցյալ Երեմիան, փոփոխել է Երեմիա I-ի գրածը Նինվեի կործանման վերաբերյալ, այն հարմարեցնելով Բաբելոնի դեպքին: Արարատ, Միննի և Ասքենազ պետությունների հիշատակումը, ուրեմն, նա փոխ է առել Երեմիա I-ից: Դրանից կհետևեր, որ այս երեք պետությունները Ասորեստանի դեմ են դուրս եկել մարերի և բաբելոնացիների հարձակումների ժամանակ: Սակայն մենք տեսանք, որ Նաբոպալասարի առաջին ներխուժման ժամանակ Միննին Ասորեստանի հետ էր: Պետք է արդյո՞ք ընդունել, որ նա հետագայում հարել էր սկյութներին:

Որքան էլ տարտամ և անորոշ լինի Մարգարեի բերած վկայությունը, համենայն դեպս այն ապացուցում է, որ Ուրարտուն չի պաշտպանել Ասորեստանին: Հետևաբար, Նաբոպալասարը պատճառ չուներ նրա վրա հարձակվելու:

Ուրարտուն չէր, որ պետք է կարեկցեր Ասորեստանի ողբերգական ճակատագրին կամ նրան օգնություն հասցնել: Իր ժառանգական թշնամուց հետո նա կշարունակի ապրել, բայց ոչ երկար ժամանակ:

Իր հերթին Ուրարտուն ևս կանհետանա քաղաքական աշխարհի վերածմիչ խմորումի բովում: Ըստ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի կարծիքի՝ 585 թվականին քարտեզները փոփոխման են ենթարկվում: Դա մի մեծ ճակատամարտի թվականն է, որում նոր տերության առաջնորդ Կիաքսարը չափվեց Լիդիայի թագավոր Ալիատտեսի հետ: Ճակատամարտը տեղի ունեցավ Հալիս գետի ափին: Այդտեղ հասնելու համար Կիաքսարը պետք է անցներ Ուրարտուի դիակի վրայով:

Այսպես մարեց քաղաքակրթության մի օրրան, որը երեք դար շարունակ՝ 900-600 թթ., փայլել էր Հայաստանի բարձունքներում: Նա առաջինը միա-

վորեց երկիրը՝ բազմաթիվ ցիրուցան ցեղեր համախմբեց մի քաղաքական ու մշակութային կյանքի շրջանակներում: Նա ուրիշ արժանիք էլ ունեցավ՝ նրա անընդհատ պայքարը Ասորեստանի դեմ խափանեց սեմական տարրի խուժուճը Հայկական լեռնաշխարհը և նրա ներթափանցումը Փոքր Ասիա: Դա գնահատելի ծառայություն է: Անտարակույս, Ասորեստանը քաղաքակրթության մեծ կենտրոն էր: Նա կարող է հպարտանալ որքան իր քաղաքական հզորությամբ, այնքան էլ իր հոգևոր, գրական, գեղարվեստական և գիտական արգասիքներով, բայց մա գուրկ էր քաղաքակրթության ամենաթանկարժեք, ամենից էական արտահայտությունից՝ մարդկայնության գաղափարից և մարդկային ոգուց:

Մարդն ինքնին՝ նրա արժեքը, նրա մարդկային արժանապատվությունը, ոչ մի զին չունեի ասորեստանցիների համար: Դրանով է բացատրվում նրանց անսահման անգթությունը, դաժանությունը: Մարդ սարսափում է այն հայտարարությունների հրեշտությունից, որ Ասորեստանի վեհապետներն առանց նեղվելու և հպարտությամբ անում էին: Նրանք իրենք իրենց մասին ասում էին, թե թշնամի երկրների վրա նետվում էին «կատաղած շան» պես, նրանց հողը ոտնահարում էին «վայրենի ցուլի» պես և նրանց պարտադրում էին «ծանր, անտանելի լուծ»: Հիվանդագին կրքոտությամբ են նկարագրում նրանք այն սարսափելի արարքները, որ կատարում էին հարձակման ենթարկված երկրներում: Նրանք չէին բավարարվում կողոպտելով, կործանելով, այրելով քաղաքները, դաշտերը, կոտորելով ժողովուրդը՝ բոլոր ժամանակների աշխարհակալների տխուր սխրագործություններով, փառաբանված ծառայամիտ պատմաբանների կողմից: Այլև նրանք կենդանի այրում էին երիտասարդ տղաներին ու աղջիկներին, կտրում էին ձեռները, մատները, մորթում և պարիսպների վրա էին փռում նրանց մորթիները, գլուխներից բուրգեր էին բարձրացնում, մարդկանց կենդանի թաղում էին բուրգերի մեջ և շուրջը դասավորում դժբախտ ցրահանվածներին: Մի խոսքով՝ երկրները դարձնում էին անապատ, «գյուղերում լռեցնել էին տալիս աշխատավորների ուրախ (ձայները) և թողնում էին, որ այնտեղ բնակվեն վայրի էշերն ու վայրենի անասունները»:

Հետևաբար, շատ լավ հասկանալի է թեթևացման այն ճիշդ, որ Աստվածաշնչի Մարգարեն արձակում է Ասորեստանի կործանման առթիվ, թե Նիմվեն՝ արյան քաղաքը, նենգ ու բռնակալ, հիմնահատակ կործանվել է՝

«Ո՛վ արեան քաղաք,

բուրբուլիճ սուտ, անիրաւութեամբ լի...

Խեղճ Նիմուէ, ո՛վ կը լինի, որ

հեծեծի քեզ համար...

բուրբ նրանք, ովքեր լսեցին քո գոյժը,

ծափ կը զարնեն քեզ համար,

քանի որ ո՛ւմ վրայ չեկաւ քո չարութիւնը մշտապէս...»¹:

Անկասկած, հակադրություն գոյություն ունեի ասորական և ուրարտական մտայնության միջև, հակադրություն, որը լուսաբանվում է այն իրողությամբ, որ մարգարեն կոչ է անում Ուրարտուին՝ օգնության գալ՝ Նինվենի վերջ տալու համար:

Ռուս գիտնական Մ. Նիկոլսկին՝ Ուրարտուի հնություններն առաջինը հետազոտողներից մեկը, լավ նկատել ու ընդգծել է երկու պետությունների բարքերի հակադրությունը:

Պայքարել Ասորեստանի կատաղության ու մոլեգին կրքերի դեմ, փակել նրա ճանապարհը դեպի Նախյան երկրները, դա մի ազնիվ առաքելություն էր, որ Ուրարտուն պատվով կատարեց, այսպիսով նշանակալի ծառայություն մատուցելով քաղաքակրթությանն ու մարդկությանը:

¹ Նախում Գ, 1, 7, 19:

ՀԱՅԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

(Անավարտ)

1. ԿԻՄՆԵՐՆԵՐԸ ԵՎ ՄԿՑՈՒԹՆԵՐԸ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՄԻԱՅՈՒՄ

Այն հեղափոխությունը, որ կատարվեց մեր թվականությունից առաջ VII դարի վերջում և կործանեց Ասորեստանը, Ուրարտուն և բազմաթիվ այլ մանր պետություններ, էական նշանակություն ունեցող մի նոր դարազույս բացեց մարդկության պատմության մեջ: Այն հեղաշրջեց հին աշխարհի քաղաքական պատկերը: Մեծականությունը, որ դարեր ի վեր ապահովել էր իր համար առաջին տեղը պատմության թատերաբեմին, վերացավ, առաջնությունը զիջելով հնդեվրոպական տարրին: Այսուհետև վերջինս էր տնօրինելու Առաջավոր Ասիայի ճակատագիրը:

Ասորեստանի ավերակների վրա բարձրացավ առաջին արիական պետությունը՝ Մարական պետությունը (25): Հնդեվրոպացիների ներթափանցումը այդ երկրամաս վաղուց էր սկսվել, բայց առաջին անգամն էր կազմվում հնդեվրոպական մի մեծ պետություն:

Միևնույն ժամանակ անցյալի խավարի միջից երևան են գալիս հայերը՝ հնդեվրոպական մի ժողովուրդ, և տիրանում Ուրարտուի ժառանգությանը:

Այս հեղափոխությունը, որ ցնցեց աշխարհը, սկսվեց կիմներական ու սկյութական հորդանների հարձակումներով: Սրանք հնդեվրոպական ցեղեր էին, որոնք (զոնե սկյութները) պատկանում էին իրանական ընտանիքին: Նրանք սասանեցին գոյություն ունեցող կարգը և շարժման մեջ դրին բազմաթիվ մարական տոհմերի, որոնք վաղուց ի վեր դարանակալ սպասում էին նախանձելի որս հանդիսացող Ասորեստանը կլանելու:

Կիմներների (ասորեստանցիների Gamirrai կամ Gimirrai) ներխուժումը սկսվում է Ուրարտուի թագավոր Ռուսա I-ի և Ասորեստանի թագավոր Սարգոնի թագավորության ժամանակից, իսկ սկյութներինը՝ մեկ դար ավելի ուշ՝ Ասարխադդոնի թագավորության սկզբներում (680-669)¹:

¹ Առաջինը Հոմերոսն է հիշատակում կիմներներին. «ճրանց երկիրը կորչում է ամպերի ու մշուշի մեջ, և արևի վառ ճառագայթները նրանց երբեք չեն հասնում՝ ոչ դեպի աստղազարդ երկինք խոյանալիս, ոչ էլ երկնքից երկիր իջնելիս, մի դժնդակ գիշեր շրջապատում է այս դժբախտ մահկանացուներին» (Ողեսական, XI, 12-19):

Կիմներները, Սև ծովի հյուսիսից գալով, 713 թվականին մտնում են Ուրարտու: Ռուսա I թագավորը նետվում է ասպատակողների դեմ, բայց պարավում է: Այնուհանդերձ, բարբարոսները չեն մնում Ուրարտուում. Ռուսան կարծես շարունակում է դիմադրությունը և նրան հաջողվում է հորդանների հեղեղն ուղղել դեպի Իրանական սարահարթը: Թվում է, թե նրանց մի մասը շեղվում է դեպի արևմուտք:

Կիմներների մասին այլևս ոչինչ չի լսվում մինչև Ասարխադդոնի թագավորության ժամանակ: Նորեկների կողմից ստեղծված վտանգն սպառնում էր Ասորեստանին, Ասարխադդոնը շատ էր մտահոգված: Մանայի թագավոր Ախշերին դաշնակցել էր այդ բարբարոսների, ինչպես նաև բազմաթիվ մարական առաջնորդների հետ, որոնցից ամենահայտնիները Կաշտարիտին ու Մամիտարշուն էին, և նրանց օգնությամբ հարձակումներ էր գործում Ասորեստանի սահմանների վրա: Ասորեստանի թագավոր Շամաշին աղոթքներ է ուղղում, որոնց գլխավոր առարկան այդ անավոր դաշինքն է, և նա չի թաքցնում իր մտահոգությունները: Իր թագավորության չորրորդ տարում՝ 677 թվականին, Ասարխադդոնին հաջողվում է ջախջախել կիմներներին և սպանել նրանց առաջնորդ Թիուշային: Ճակատամարտը տեղի է ունեցել ոչ թե պետության արևելյան սահմանների մոտ, ինչպես կսպասվեր, այլ արևմուտքում՝ Խուրուշնայում՝ Կիլիկիայի շրջանում¹:

Նախորդ տարին կիմներները Ռուսա II -ի բանակի կազմում ռազմական գործողություններ էին կատարել Ասորեստանի դեմ, հավանական է, Շուպրիայի սահմանի վրա (այժմյան Սասունի շրջանը): Իր իշխանության ութերորդ տարում՝ 673 թվականի վերջում, Ասարխադդոնը Շուպրիայի դեմ արշավանք ձեռնարկեց, որի նպատակն էր, անշուշտ, Ուրարտուի թագավորի պատճառած տարածքային վնասները դարմանել:

Դժվար է ասել, թե Մանայի, Ուրարտուի և Խուրուշնայի կիմներների երեք խմբավորումների միջև ինչպիսի հարաբերություն գոյություն ուներ, քանի որ սկյութները՝ ասորեստանցիների Iškuza կամ Aškuza-ները, Մանայի

Այս նկարագրությունը, ինչպես երևում է, առաջ է եկել Կլյմերուի-ի ժողովրդական ստուգաբանությունից, որպես - չելմերուի «անձրևային, փոթորկալից»: Հերոդոտոսը, I, 104 և IV, 12, կիմներների և սկյութների ներխուժումը կապում է մի լայն շարժման հետ, որն սկսվել էր հեռավոր Արևելքում և հաջորդաբար առաջ էր քաշել հիպերբորեացիներին, գրիպոններին, արիմասպեներին, իստոններին, մասագետներին, սկյութներին և կիմներներին: Այդ առթիվ նա նշում է Արիստոնաս Պրոկոնեսցու էպիկական քերթվածը, որտեղից վերցրել է այս տեղեկությունը: Սակայն նա ասում է, որ այդ հեղինակն ապրել է իր ժամանակաշրջանից 340 տարի առաջ, ուրեմն՝ IX-VIII դարերում: Սկյութա-կիմներական ներխուժումը հետևանք էր դարերով շարունակվող ժողովուրդների շարժումների:

¹ Ասարխադդոնի Պրիզմաները, հրատ. Ռ. Թոմսոնի, III, 43-46: Խուրուշնայի տեղը հայտնի չէ է. Ֆորդն այն նույնացնում է Կիլիստրայի հետ, Ա. Օլմշտեդը՝ Կարիստսի հետ:

շրջանում երևան են գալիս Ասարխադոնի թագավորության առաջին տարիներին: Կարելի է մտածել, որ դրանք Մանայի նույն կիմներներն են, որոնք իրենց թշնամի սկյութների ճնշման ներքո լքել էին այդ երկիրը և Ուրարտուի միջով անցել Խուրուշնայի շրջանը: Ըստ Հերոդոտոսի՝ կիմներները վատրվել էին իրենց երկրից սկյութների կողմից և հետապնդվել մինչև Մանա երկիրը ու Մարաստան: Հնարավոր է, որնեմ, որ նույն թշնամությունը կիմներներին ստիպած լինի լքելու Մանան:

Մակայն Ասարխադոնը Խուրուշնայի կիմներներին կոչում է *smtan manda ša ašaršu ruqu* «հետավոր բնակության հորդաներ», որը մտածել է տալիս, թե այդ հորդաները հաստատվել էին Խուրուշնայում կամ, համեմայն դեպք, նորեկներ չէին: Այդ դեպքում պետք է ընդունել, որ խոսքը նույն ժողովրդի մի հատվածի մասին է, որը պետք է որ ներխուժման ժամանակ բաժանված և Ուրարտուի վրայով Խուրուշնա հասած լինի:

Թիուշային հաջորդում է Թուկթամեն կամ Դուգդամին, Հերոդոտոսի Լիգդամիսը: Նա իր գորքերն առաջնորդում է Փռյուզիայի դեմ: Միդաս թագավորը հաղթվում և անձնասպան է լինում 676 (ոչ 696) թվականին¹: Հարևան Լիդիան բարբարոսների սպառնալիքի տակ էր: Գիզես թագավորը առաջին հարձակումը ետ է մղում ստավորապես 660 թվականին, գերիներ է վերցնում, որոնց թվում և երկու կիմներական առաջնորդներ, և ուղարկում Ասորեստանի թագավոր Աշուրբանիպալին:

Դուգդամին 652 թվականին նորից է հարձակվում, մահացու հարված է հասցնում Գիզեսին և գրավում նրա մայրաքաղաք Մարդեսը: Ապա հաղթող դառնում է դեպի Ասորեստանի սահմանները, գուցե Թիուշայի վրեժը լուծելու համար: Ըստ Հերոդոտոսի՝ նա վտարվում է Լիդիայից Գիզեսի որդի և հաջորդ Ալիաթթեսի կողմից: Դուգդամին բավական մութ պայմաններում մահանում է Կիլիկիայում: Նրա որդի Մանտախաթրան խաղաղություն է կնքում Աշուրբանիպալի հետ², իր հորդաներով հեռանում է դեպի հյուսիս և հաստատվում Կապադովկիայում: Այս եղելության միակ վկան Գամիթթ անունն է, որ հայերը տալիս են Կապադովկիային: Ըստ մեկ ուրիշ տեղեկության՝ կիմներները հաստատվում են Սինուպի շրջանում³:

Այս ձևով կիմներները, որ 713 թվականից երևան եկան քաղաքակիրթ աշխարհի եզերքին, կորչում են պատմության խավարի մեջ ստավորապես 650 թվականին, կարճ, բայց փոթորկալից կյանքից հետո¹:

Կիմներների հայրենակից, նաև թշնամի սկյութները, հետապնդելով փախչող կիմներներին, հասել էին Մանա երկիրը, ուր իրենց ճանաչել տվին 780-773 թվականների ընթացքում: Մանայի թագավոր Ախշերին նրանց ընդունեց ծառայության՝ Ասորեստանի դեմ պայքարելու համար:

Ասարխադոնն ընկճվեց այդ անակնկալ դաշինքից: Ըամաշին ուղղված իր աղոթքներում Իշկուզայի հորդաները հաճախ են հիշատակված: Իշկուզայի թագավոր Բարատտուան Ասարխադոնից կնության է պահանջում արքայադստերը: Ասորեստանի թագավորը վստահ չէ, որ գործը բարի կլինի, և կասկածում է բարբարոսի խաղաղասիրական ու բարեկամական մպատակների վրա: 673 թվականին շարադրված տարեգրություններում նա ասում է, որ հաղթանակ է տարել Ախշերիի ու նրա սկյութ վարձկանների դեմ և այս վերջինների թագավոր Իշպակային սպանել: Պարզ չէ, թե ով էր այդ Իշպական, արդյո՞ք մեկ ուրիշ ցեղի առաջնորդ, թե՞ Բարատտուայի մախորդը, որի մահից հետո սա ցանկանում էր խաղաղություն կնքել՝ թագավորի դատեր ձեռքը խնդրելով:

Բարատտուան Հերոդոտոսի Պրոտոթիասն է (26), որը ծանոթ է իր որդի Մադիասի միջոցով: Ըստ պատմաբանի՝ սկյութները, անցնելով Կովկասի լեռնաշղթան Ալանաց (Դարիալի և ոչ Դերբենդի) դռնով, լեռների ստորոտում հանդիպեցին մարերի բանակին: Նրանք ետ մղեցին այդ բանակը և գրավեցին Ասիայի տերությունը: Ապա բարբարոսները նետվեցին դեպի Եգիպտոս, բայց Պսամմետիքոսն եկավ նրանց ընդառաջ և իր մվերներով ու խնդրանքներով կանգնեցրեց նրանց առաջխաղացումը: Նույն պատմաբանը հավաստում է, որ սկյութները 28 տարի տիրեցին Ասիային, մինչդեռ Կիաքսարն իշխում էր մարերի վրա: Լիդիայի վրա տարած հաղթանակից հետո Կիաքսարը շարժվեց Նինվեի դեմ, բայց Մադիասն իր գորքերով օգնության հասավ և ազատեց այն: Կիաքսարը պաշարումը վերացրեց և ետ

¹ Եվսեբիոս, հրատ. Ա. Շոնի, II, էջ 81:

² Եվսեբիոսի արձանագրություն, Seock, Assurbanipal, էջ 281:

³ Հերոդոտոս, II, 12:

¹ Թիուշա, Դուգդամի, Մանտախաթրա իրանական ծագում ունեցող անունները, թեև, ապացուցում են, որ կիմներները իրանական ծագում ունեին: Թիուշան, թվում է, նույն անունն է, որ կրում էր Սատասպեսի հայրը՝ ըստ Հերոդոտոսի, IV, 43; VII, 79; IX, 79՝ Թեիսպիս *Τεῖσπις*, *tav-aspa* «որ ուժեղ ձի ունի» և *sataspa* «որ ունի հարյուր ձի»: Արեմենյանների նախնի *Τεῖσπις-ի* (*Her.*, IV, 2) Դարեհի արձանագրության *Č(a)špiš* անունը, հավանական է, ուրիշ ծագում ունի: Դուգդամի՝ *duxta-ami*-ից «արտադրելու մեջ ուժեղ»: Մանտախաթրան՝ ըստ Յո. Մարկվարտի՝ *Spanta xšatra*-ն է, *Philologus, Supplementband X*, էջ 105, ծան. 5: Ֆասանբը, *M. Ebert, Reallexikon der Vorgeschichte*-ում, առարկում է, թե *sp-hg* անցումը չի կարող այդքան հին լինել, և առաջարկում *čandra-xšatra*: Ավելի ընդունելի կլինի *andaxšatra*-ից «որ ստեղծում է իշխանությունը»:

քաշվեց, բայց 28 տարվա ավարտին նա Մադիասին խնջույքի հրավիրեց, հարբեցրեց նրան ու սպանեց սկյութների մի մեծ խմբի հետ միասին: Ապա նա գրավեց Նինվե: Իսկ մնացած սկյութները վերադարձան իրենց երկիրը (27)¹:

Այս շփոթ հաղորդումը անհարիր է ուրիշ ստույգ աղբյուրներից մեզ հայտնի փաստերի հետ: Ասորեստանի մայրաքաղաքն ընկավ 612 թվականին. ճակատամարտը Լիդիայի դեմ վերաբերում է 585 թվականին, սկյութների երևան գալը՝ մոտ 680 թվականին և մարերի պետության անկումը՝ 552 թվականին: Այս թվականները վիճարկման ենթակա չեն և նսեմացնում են Հեռոդոտոսի պատմածից բխող թվականները: Սկյութների տիրապետությունը 28 տարի՝ կասկածելի է մնում:

Կ. Գադդի կողմից՝ հատակոտոր Բաբելոնյան Ժամանակագրությունը հրապարակվելուց հետո փորձել են նույն պատմիչին արդարացնել մի քանի կետերում: Այսպես, ընդունում են, որ սկյութները վտարել են մարերին 612 թվականին Նինվեի գրավումից հետո և տիրել Ասորեստանին 612-585 թվականներին, ուրեմն՝ 28 տարի, ինչպես ասում է Հեռոդոտոսը: Մեր կարծիքով, բաբելոնյան վավերագիրը հիմք չի տալիս մնան պնդման: Տեքստի ստառ-մոստա արտահայտությունը՝ հիմնական խոչընդոտը, բոլորովին չի վերաբերում սկյութներին, այլ՝ մարերին, եթե էլ մենք իրադարձությունների վերաբերում սկյութներին, այլ՝ մարերին, եթե էլ մենք իրադարձությունների ընթացքից, որը պատմվում է հետևյալ կերպ. Նինվեն ընկնում է 612 թվականին, բայց պետության հոգեվարքը շարունակվում է մինչև 607 թվականը և ոչ թե 609: Գադդն ուզեցել է 607 թվականը, որը հաստատված է, փոխել 609 թվականի, հիմնվելով վերոհիշյալ Ժամանակագրության վրա, մինչդեռ վերջինը, ընդհակառակն, նախկին թվականն է հաստատում:

Հազիվ Ասորեստանի տիրապետությունը թոթափած, Նաբոպալասարը (625-605) ծառանում է նրա դեմ: Իր թագավորության տասներորդ տարում, 616 թվականին, նա հարձակվում է ասորական տիրույթների վրա միջին Եփրատում: Ասորական բանակը Մանա երկրի բանակի հետ դիմադրություն է ցույց տալիս, բայց անհաջող: Սակայն եզիպտացիները նրանց օգնության են հասնում և վտարում ներխուժողին:

Այս տեղի փորձանքից հետո Նաբոպալասարը 615 թվականին իր զենքերն ուղղում է Տիգրիսի փեղերին գանվող երկրների դեմ, մտնում է Առապխա՝ Կերկուկի շրջանում, և առաջանում դեպի Աշշուր մայրաքաղաքը: Ասորեստանցիները ետ են մղում նրան և պաշարում Թակրիտաինը՝ այժմյան Թակրիտ քաղաքը: Մարական զորքերը ներխուժում են Առապխա, ասու-

րական բանակին ստիպում են ետ քաշվել և ազատում են Բաբելոնի թագավորին:

Հետևյալ տարին, 614 թվականին, մարերը գրոհում են Աշշուր քաղաքի վրա: Նաբոպալասարը հասնում է, երբ քաղաքն արդեն գրավված է լինում: Նա մարերի թագավոր Կիաքսարի հետ դաշինք է կնքում:

613 թվականին Նաբոպալասարը նորից փորձում է բախտը Եփրատի վրա. «612 թվականին նա հավաքում է իր բանակները... Ստառ-մոստա-ի թագավորի զորքերը գալիս հանդիպում են... Ակկադի թագավորը, այսինքն՝ Նաբոպալասարը... և Կիաքսարը Տիգրիսի փոփոխ արշավում են դեպի Ասորեստանի մայրաքաղաք Նինվե»: Երեք ճակատամարտից հետո գրոհով գրավում են քաղաքը և կողոպտում են թարկում: Ասորեստանի թագավոր Սինշարիշկունը, հույն հեղինակների Մարակոսը, ինքնասպան է լինում: Կիաքսարը վերադառնում է իր երկիրը: Նաբոպալասարը սպասում է իր այն զորքերի վերադարձին, որոնց ուղարկել էր Մծրիհի և Ռուսապուլի շրջանն ավերելու, և նրանց ձեռք բերած ավարով ծանրաբեռնված վերադառնում է իր երկիրը:

Մայրաքաղաքը կորցնելուց հետո ասորական բանակի մնացորդները ետ են քաշվում և տեղավորվում Խառանում, ու այնտեղ Աշուրուբալիտն իրեն Ասորեստանի թագավոր է հռչակում: 611 թվականին Նաբոպալասարը հաջող արշավանք է կատարում դեպի Ասորեստան: 610 թվականին, իր իշխանության տասնվեցերորդ տարում, նա վերսկսում է ռազմական գործողությունները Ասորեստանի դեմ: Ումման-մանդաները գալիս են նրան օգնության: Միացյալ բանակները հարձակվում են Խառանի վրա՝ Աշուրուբալիտի դեմ: Վերջինը լքում է քաղաքը և ապաստանում Եփրատի մյուս կողմը: Խառան քաղաքը գրավվում և թալանվում է: Նաբոպալասարը կայզոր է թողնում այնտեղ և վերադառնում իր երկիրը: Ումման-մանդաների բանակը մեռնում է, թե ոչ. այս հարցին պատասխանել անհնարին է, որովհետև արձանագրությունն այդ տեղում պակասներ ունի: Սակայն հավանական է, որ նա նույնպես վերադարձել է, քանի որ հետագայում նրա մասին այլևս չի խոսվում:

609 թվականին Աշուրուբալիտը Եզիպտոսից իրեն օգնության եկած զորքերի հետ միասին անցնում է Եփրատը, ջախջախում կայազորի իր դեմ հարձակման ելած մասը և պաշարում Խառանը: Թամնուզ ամսից մինչև էլուլ ամիսը պաշարված քաղաքը դեռևս չէր գրավվել, երբ Նաբոպալասարն օգնության է գալիս: Նա Իզալա լեռան վրա պատերազմ է մղում, այդ շրջանի թագմաթիվ քաղաքներ կողոպտում և հրկիզում է, ընթանում է մինչև

¹ Հեռոդոտոս, I, 103-106:

Ուրաշտուի սահմանը, կայազոր է թողնում և գերիների հետ մեկտեղ տուն վերադառնում:

608 թվականին նա հավաքում է իր բանակը... Այստեղ տեքստը դադարում է¹:

Այս պատմության մեջ հետաքրքիր է իմանալ Խառան քաղաքի ճակատագրի վերջը և թե ով էր Ումման-մանդա կոչեցյալ ժողովուրդը: Բաբելոնյան բանակի վերջին հավաքի նպատակն էր, անշուշտ, փրկել Խառանը, ինչպես նախորդ տարին էր փորձել, առանց հաջողության հասնելու: Տեքստը հաստատում է, որ քաղաքը պաշտպանվել է մինչև էլուլ ամիսը, բայց լուծություն է պահում էլուլ ամսից հետո պատահածի մասին: Սակայն բացահայտ է, որ պաշարված քաղաքը գրավվել է Աշուրուբալիտի կողմից՝ իր դաշնակից եգիպտացիների հետ միասին: Այդ իրողությունից եզրակացվում է, որ պաշարման տարին Նաբոպալասարը մեկնեց պաշարված քաղաքին օգնության և վերադարձավ առանց արդյունքի: Նա նույնիսկ չհամարձակվեց մոտենալ քաղաքին, անշուշտ, այն պատճառով, որ քաղաքն արդեն կորսված էր: Նա բավարարվեց պատերազմ վարելով Իզալայի լեռներում, մի նահանգում, որ, գուցե, հավատարիմ էր մնացել Ասորեստանին և դիմադրություն էր ցույց տալիս ներխուժողին: Ինչ էլ որ լինի, բաբելոնյան թագավորը վերադարձավ իր մայրաքաղաքը՝ Խառանը թողնելով բախտի քմահաճույքին:

Նաբոպալասարի՝ հաջորդ տարին ձեռնարկած արշավանքը, ըստ երևույթին, ավելի հաջող չընթացավ, որովհետև Խառանը գրավվեց միայն 607 թվականին՝ Բաբելոնի թագավորի դաշնակից ումման-մանդանների կողմից, ինչպես հաստատում է Նաբոպալասարի մերձավոր հաջորդներից Նաբոնահիդը: Այս թագավորը, որ գահ բարձրացավ 555 թվականին, հայտարարում է, որ Խառանում Սինի տաճարը ավերակի էր վերածվել ումման-մանդանների կողմից, իսկ ինքն այն վերականգնեց իր գահակալության երրորդ տարում, ուրեմն՝ 553 թվականին և դրա ավերումից 54 տարի հետո²: Ուրեմն, Խառանի վերագրավման թվականը կլինի 607-606 թվականը: Հետևաբար, Կ. Գադդը սխալվում է այդ թվականը մերժելով ի նպաստ 609 թվականի: Ճիշտ է, այդ քաղաքը գրավվել է 609 թվականին, բայց այն ետ է վերցվել և վերջնականապես վերագրավվել է 607 թվականին:

¹ G. J. Gadd, The Fall of Nineveh. The newly discovered Babylonian chronicle.

² Stephen Langdon, Die neubabylonischen Königsinschriften, № 1, սյուն. I, տող 28, էջ 221, ina saluti šatti ina kašadu, «եթր երրորդ տարին եկավ», ուրեմն, 553 թ. հաշվելով 555 թվականից: Խառանն ավերակ մնաց 54 տարի, № 8, սյուն. X, էջ 285:

Ումման-մանդանների հարցին գալով՝ այն վիճելի է: Մեր վավերագրին չի հակասում նաև այն դրույթը, որի համաձայն խոսքը սկյութների մասին է: 615 թվականին մանդանները գրավում են Առասյխան, իսկ 614 թվականին Աշուր մայրաքաղաքը: Նաբոպալասարը հասնում է և դաշինք կնքում Մադայի թագավոր Կիաքսարի հետ: 612 թվականին ումման-մանդանների թագավորը գալիս հանդիպում է Նաբոպալասարին: Վերջինս և Կիաքսարը հարձակվում են Նինվեի վրա և գրավում այն: Ըստ այնմ ումման-մանդանների թագավոր Կիաքսարն է Նաբոպալասարի դաշնակիցը և ոչ ուրիշը, ուրեմն, ումման-մանդանները նույնանում են մարերի հետ:

Հերոդոտոսը պատմում է, որ այն ժամանակ, երբ Կիաքսարը պաշարել է Նինվեն, սկյութների առաջնորդ Մադիասը վրա է հասնում և ստիպում նրան վերացնել պաշարումը: Այս քիչ հավատարի տեղեկությունը ազդեցություն է գործել նրանց վրա, ովքեր ումման-մանդանների մեջ սկյութներ են տեսնում: Հերոդոտոսի հիշատակած դեպքը, նույնիսկ եթե այն արտացոլում է որևէ պատմական իրողություն¹, ոչ մի կապ չունի 612 թվականի իրադարձությունների հետ, որովհետև Կիաքսարը, Նաբոպալասարի օգնությամբ, իսկապես այդ տարի գրավեց քաղաքը և ոչ ոք նրան չանհանգստացրեց: Ապա հաղթողները վերադարձան իրենց երկիրը:

609 թվականին Ումման-մանդան եկավ օգնելու Նաբոպալասարին՝ Խառան քաղաքը գրավելու համար: Քաղաքը գրավվում և հանձնվում է բաբելոնյան կայազորին: Դա նշանակում է, որ Կիաքսարը Նինվեն պահում է իրեն, իսկ Խառանը զիջում է իր դաշնակցին: Ճիշտ չէ, ուրեմն, որ սկյութներն են գրավել Խառանը և հաստատվել այնտեղ: Այդ դեպքում բաբելոնյան կայազոր չէին թողնի Խառանում: Աշուրուբալիտի հարձակման ժամանակ քաղաքը պաշտպանում է բաբելոնյան կայազորը: Երրորդ ուժի մասին չի խոսվում: Նաբոպալասարին չհաջողվեց փրկել քաղաքը: Հավանական է, որ Կիաքսարը վտարած լինի Աշուրուբալիտին 607 թվականին և քաղաքն իր տիրապետության ներքո առած:

Նման եզրակացության կարելի է հանգել Նաբոնահիդի վերը նշված վկայությունից, որտեղ գրված է, թե Խառանում Սինի տաճարը ավերակի էր վերածվել Ումման-մանդայի կողմից և որ քաղաքը դեռևս շրջապատված է այդ ժողովրդի կողմից:

Որ Նաբոնահիդը Ումման-մանդա ասելով հասկանում է մարերին, դա հետևում է նրա հետագա ասածից. «Իմ գահակալության երրորդ տարում Անշանի թագավոր Կյուրոսը, որ Ումման-մանդայի անձնան ստորական էր,

¹ Տե՛ս հաջորդ՝ 328-րդ էջի 3-րդ ծանոթագրությունը:

իր փոքրաթիվ գորքերով ցրեց Ումման-մանդան ընդարձակ տարածքում, հաղթեց նրա թագավոր Աստիագեսին և սրան գերի տարավ իր երկիրը»¹:

Մարերի նշանավոր թագավոր Աստիագեսը այստեղ Ումման-մանդայի թագավոր է կոչված, ինչպես նրա հայրը՝ Կիաքսարը՝ մեր վավերագրում: Ուրեմն, ասորեստանցիները այդ արտահայտությունը չէին վերագրում սկյութներին: Ասարխադդոնն իր աղոթքներում նրանց Իշկուզի, իսկ տարեգրություններում Աշկուզի է կոչում, առանց Ումման-մանդա անվանելու, ինչպես այդ անում է կիմերների նկատմամբ²:

Անշուշտ, նույն ժողովուրդը ցույց տալու համար մեր վավերագրի գործածած երկու տերմինները՝ Մադա և Ումման-մանդա, շփոթություն են ստեղծում: Դա բացատրվում է վավերագրի բնույթով, որ բանաբաղական գործ է: Հեղինակը քաղել է երկու տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը գործածում էր Մադա բառը, իսկ մյուսը, ինչպես, օրինակ, ասված է Նաբոնախի ժամանակագրության մեջ՝ Ումման-մանդա:

Ավելացնենք, որ սկյութները 612 թվականին Նինվեի գրավումից շատ առաջ կորցրել էին իրենց ուժը և հեղինակությունը և ի վիճակի չէին կարևոր դեր խաղալու այդ թվականին: Մանայի երկրի բնակավայրերում և շրջակայքում կուտակված՝ նրանք այդ երկիրը քաջալերում են դուրս գալու Ասորեստանի դեմ :

Մանայի թագավոր Ախշերիի նվաճողական քաղաքականությունն Ասորեստանի նկատմամբ հետևանք էր սկյութների հետ դաշնակցած լինելուն: Մոտավորապես 660 թվականին Աշուրբանիպալը խելքի բերեց համդուգն Ախշերիին: Նա վտարեց նրան և տեղը նշանակեց նրա որդի Ուալիին, որը հպատակվեց Ասորեստանին: Նրա հայրը ամբոխի կատաղության զոհ դարձավ: Աշուրբանիպալը Մանայից ետ վերցրեց Ախշերիի կողմից զավթված ասորական տիրույթները: Մանան, դառնալով ստորակա, հավատարիմ մնաց Ասորեստանին, և նրա ջոկատները Ասորեստանի բանակում կռվում էին Նաբոպալասարի դեմ³: Մանայի անկումը միևնույն ժամանակ նշանակում էր նրա դաշնակից սկյութների անկում: Այնուհետև նրանք

կդադարեն քաղաքական գործոն լինելուց, եթե մինչև այդ էին: Վերջ ի վերջո նրանք լուծվում են մարերի ու մանացիների զանգվածներում: Մոտավորապես նույն ժամանակաշրջանում էր, որ այդ բարբարոսների մի հատվածը նետվեց զանազան արկածների մեջ և ընթացավ մինչև Ասորիքի ծովափը: Եզիպտոսի փարավոն Պսամմետիքոսը (665-611) խաղաղ կերպով կանգնեցրեց նրանց առաջխաղացումը:

Սկյութները պատմության ոլորտում պահպանվեցին մոտավորապես 680-650 թվականներին: Նրանց կյանքը, ուրեմն, ավելի կարճ եղավ, քան կիմերներինը: Այդտեղ, սույն կարճ ժամանակի մեջ, զուցե, պետք է գետնից նրանց տիրապետության 28 տարին, եթե ընդունելու լինենք, որ այդ թիվը որևէ արժեք ունի: Սկյութների «փոթորիկը» այնքան բուռն չի թվում, որքան որ նկարագրում են: Նրանց անունն ավելի սարսափելի է եղել, քան իրենք:

Սկյութների ներխուժումը, ինչպես նաև կիմերներինը, նպաստավոր պայմաններ ստեղծեց նրանց համատեղ մարերի համար: Հանդուգն բարբարոսներն ակտիվացրին իրանական ցեղերի անհանգիստ միջավայրը, քաջալերեցին պայքարը Ասորեստանի դեմ և այդ ձևով մասնակցեցին մարական պետության ստեղծմանը:

Մարերը Ամադա անվան տակ առաջին անգամ հիշատակված են Մալմանասար III-ի ժամանակաշրջանում: 843 թվականին այս թագավորը Նամրուից մեկնում է Պարսուա, 27 թագավորներից հարկ է ստանում և քափանցում Ամադա երկիրը: Պարսուան պարսիկների անունն է, բայց այդ ժամանակ նրանք ապրում էին Մանա երկրի հարավում, համարյա այժմյան Արդեկում: Շամշի-Ադադը մոտավորապես 818 թվականին արշավանք է ձեռնարկում Մատայի, այսինքն՝ Մադայի, Մեդիայի դեմ: Այս երկրի առաջնորդ Խանաշիրուկան բնակվում էր Սագբիտում: Ասորեստանի թագավորը 2300 զինվոր է սպանում և 1200 բնակավայր հրկիզում: Վերադարձին Նախրիի 27 թագավորներից հարկ է վերցնում: Նրանք, անշուշտ, նույն այն թագավորներն են, որոնց նրա հայրը՝ Մալմանասարը, Պարսուայի թագավորներ է կոչում: Նախրի անունը այստեղ վերագրվում է ոչ-սեմական ցեղերին¹: Նրանցից շատերն իրանական տիպի անուններ են կրում:

¹ S. Langdon, նշվ. աշխ., № 1, սյուն. I, էջ 219: Նաև E. Schrader, Keilinschriftliche Bibliothek, III, 2, էջ 99:

² Հ. Վիմկլեբը, Untersuchungen zur altorientalischen Geschichte, էջ 127, այստեղից հետևյալն է, որ Աստիագեսը մար չէր, այլ սկյութ բռնատիրոջ:

³ Կիաքսարը 614 թ. ելավ Նինվեի դեմ, բայց գրավեց միայն քաղաքից քիչ հեռու ընկած մի բնակավայր: Նա ընթացավ դեպի Աշուր քաղաքը և գրավեց այն: Հնարավոր է, որ նա Նինվեից ետ մղված լինի ասորական բանակի կողմից, որի կազմում կռվում էր նաև սկյութամանական մի ջոկատ, և սա հինք է ծառայել այն առասպելին, ըստ որի սկյութ Մադիասը իբր թե վտարել է Կիաքսարին Նինվե քաղաքից:

¹ Իշխանները և երկրները հիշատակված են իրենց անուններով: Դժվար է պնդել, որ բոլորն իրանական են, կան այնպիսիք, որոնք հանդիպում են Ուրարտուում, օրինակ՝ Խունդուր (և Խուն-դուրնա): Ուրախն հիշեցնում է Ուրասայի կամ Ռուսայի, Գիզգիբիրը՝ Թաթա իշխանի երկիրը, կարծես Համադանի մոտ գտնվող Կանգլարը լինի: Սույն անունը գտնում ենք Հաստատանու՝ Կանգուար՝ Հոգվոց վանքի մոտ, Արևելյան Տիգրիսի ակունքների վրա:

Աղադհիրարին (810-782) ավերում է մի շարք երկրներ, որոնք տարածված էին Ասորեստանի սահմանների վրա մինչև Արևելքի Մեծ ծովը, այսինքն՝ Կասսից ծովը՝ Իլլիպի, Խարխար, Արազիա, Միսու, Մադաի, Գիզիլ-բունդա, Պարսուա և այլն... Դժվար է ասել, թե այդ երկրներն ինչ չափով են դարձել իրանական: Էպոնիմների ցանկում Աղադհիրարիի կապակցությամբ հիշատակվում է Մադայի դեմ կատարված ութ արշավանք՝ 810 և 788 թվականների միջև: Դրան հետևում է խաղաղության շրջան մինչև Թիզլաբ-պալասար III-ի թագավորությունը (745-727), որի ընթացքում Մադա երկրի դեմ չի հիշատակվում ոչ մի ռազմական ձեռնարկ, բացի Աշուրդանի արշավանքից (766 թ.): Թիզլաբպալասարը թվարկում է բազմաթիվ երկրներ, ներառյալ Իլլիպի, Նամրի, Սանգիբուտի, Խամբան, Պարսուա, Բուշաու, Նիշշա, Չակրուտ, «թուխ մեղացիների» (մարերի) քաղաք¹, «հզոր մեղացիների» բազմաթիվ քաղաքներ, որոնց մի մասը 744 թվականին ենթարկում է հարկատվության, մյուսները կցում է Ասորեստանին:

Խամբանը, հավանական է, Գամբադենն է՝ Բագիստանի շրջանում, Դարեհի արձանագրությունների վայրը: Նիշշա, *Νησαίοι*, Թեհրանի մոտ Ռագայի դաշտավայրը, որը հայտնի է ազնվացեղ ձիերով: Ուրեմն, Մարաստանի կենտրոնում ենք: Ասորեստանի թագավորն իսկապես առաջացել է մինչև Բիկնի՝ Դեմավենդ լեռը:

Սարգոնի ժամանակ հայտնի է Չիկիրտու երկիրը, որի առաջնորդն էր Միքատտին և մայրաքաղաքը՝ Պարդուն, իսկ նրա դաշնակիցը՝ Ումիլդիշի առաջնորդ Բագդատտին էր: Սարգոնը պատժեց Մանայի կառավարիչներից Դայուկուին: Նա հիշատակում է Իլլիպեցի Դալտային և նրա որդիներ Նիբեին և Իշպաբարային, որոնք ձգտում էին հոր մահից հետո տիրանալ գահին: Նրանցից մեկի նեցուկն էր Էլանը, մյուսի՝ Ասորեստանը:

Չիկիրտուն Բահիստանի արձանագրությունների Ասագարտան է և Հեռոդոտոսի *Σαγάρτιοι*-ն, որը նա պարսկական ցեղ է համարում: Բագդատտին կարծես իրանական *baga-data* բառն է, Դալտա, Նիբե, Իշպաբարա և Դայուկու իրանական անուններ են²: Սարգոնը հիշատակում է 45 *bel mahazani* հզոր Մադայի «քաղաքապետերին»: Մի ցուցակ հիշատակում է նրանցից 23-ին, ցույց տալով նաև այն շրջաններն ու քաղաքները, որտեղ նրանք իշխում էին: Մենք այստեղ մեջ ենք բերում այն, նկատի առնելով

այնտեղ հիշատակված մի քանի անուններ, որոնք կարևոր են մեր նյութի համար.

1. E-pa-ar-nu-a	Si-ig-ri-na-ai	«քաղաքից»
Su-tir-na	Mu-sa-na-a	«քաղաքից»
Up-pa-am-ma	Ha-ta- <i>li</i> -na-a	«քաղաքից»
Ma-aš-da-ku	A-ma-ak-ki	«քաղաքից»
5. Iš-te-su-ku	Iš-te-up-pu	«քաղաքից»
U-ar-za-a	U-qu-ut-ti	երկրից
Aš-pa-an-da	Ka-ak-kam	երկրից
Sa-tar-e-šu		
Ru-du-su	Ta-ba-a-ri և	
	Bit-Bar-ba-ri	զավառներից (<i>nagi</i>)
10. Sa-tar-pa-nu	Up-pu-ri-a	երկրից
Pa-ar-ku-ur	An-tir-pat-ti-a-nu	երկրից
A-ri-a	Bu-uš-tu	երկրից
Uš-da-a	Tur-ab-nu	երկրից
Ma-aš-ta-ku	A-me-is-ta	երկրից
15. Har-ar-tuk-ka	Ha-ar-zi-a-nu	երկրից
Iš-te-le-ku		
A-u-ar-pa-ar-nu	<i>Ki-i</i> -ta-nu	երկրից
Ar-ba-ku	Ar-na-si-a	երկրից
Ka-ru-ti	Kar-zi-nu-u	երկրից
20. ... ar-nu	Ba-ri-ka-a-nu	երկրից
...	Za-za-ak-nu	երկրից
...	Kar-ka-si-a	
...	Pa-ar-ta-ka-nu ¹	

¹ Այս վավերագրերը, որ հրատարակվել են Գ. Սմիթի կողմից՝ *Assyrian Discoveries*, և Հ. Վինկլերի կողմից՝ *Die Keilschrifttexte Sargons II*, վերահրատարակվել ու ծանոթագրվել են Պ. Ռոստի կողմից՝ *Das sogenannte Mederreich und das Emporkommen des Perser*, *Mitteilungen der Vorderasiatischen Gesellschaft*, 1897, էջ 72-119:

Պ. Ռոստոն այքի է անցկացրել համարյա բոլոր իրանական անունները, որ հանդիպում ենք սեպագիր տեքստերում: Նրա և ուրիշ գիտնականների կողմից առաջարկված ստուգաբանական բացատրությունները մեծ մասամբ ենթադրական են: Մեզ ազդեցություն էր ցուցում այնքան տարտամ ու կամայական կերպով է հաղորդում, որ մեկնաբանողների երկակայության առջև ազատ ասպարեզ է բացվում: Այսպես, օրինակ, հնարավոր չէ ասել, թե *E-pa-na-nu*, ուր *pa-na-nu*, անշուշտ, *φάρμας farena*-ն է («փառավոր»), առաջին հնչյունը արդյոք վերադիր հնչյուն է, թե այն կարելի է դիտել որպես *vi* կամ *hu*: *Satar-pa-nu*-ն կարծես *Kšat'ra-pa-nu*-ն է («սատրապ»), բայց եթե կարդացվի *satar-pa-nu*, ինչպես Յուստին է կարդում իր

¹ *Madai samuti* նշանակում է, ըստ է. Երադերի, «ամձանք»՝ *Keilinschriftliche Bibl.*, II, էջ 17 և 19:

² F. Justi-ն, *Iranisches Namensbuch*, կարծում է, որ *Dalta*-ն *daretar*-ն է, *Nibe*-ն *naiba* «զեղեցիկ», *nevak* «հերոս» և *Ispabara*-ն *aspabara* «ձիավոր»:

Ասարիսաղոթնի ժամանակ երեք իրանական իշխաններ ակտիվ գործություններ են կատարում Ասորեստանի դեմ: Դրանք են՝ Կարկաշտի Կաշտարիտին, Մադայի Մամիտարշուն և Սապարդայի Դուսաննին, ինչպես նաև Անտարպատի, Ռամադանի քաղաքների և Կուկունա երկրի առաջնորդները: Ասարիսաղոթնին հարկատու առաջնորդներ կան նաև Պատուրդները: Ասարիսաղոթնին հետևոր ծովի, այսինքն՝ Կասպիականի մտա: Դրանք շարքայի շրջանում՝ հետևոր ծովի, Իպարնան, Պարթակայի Ուպպիսը, Պարթուկայի են՝ Եհիրպարնան, Իպարնան, Պարթակայի Ռամատիան: Աշուրբանիպալը նշում Սանասանան և Ուրուկասարբանայի Ռամատիան: Աշուրբանիպալը նշում է մար իշխան Բիրիզխատրիին և Սախիի որդիներ Սարատիին ու Պատիսիային, որոնք, կարծես, նույնպես իրանական ծագում ունեն: Ավելացնենք Ումակիշտարին և Իշտուվեգուին, Կիաքսարին ու Աստիագեսին, և մարական շատ քե քիչ կարևոր իշխանների ցուցակը, որ հայտնի են սեպագիր գրականության մեջ, լրիվ կլինի:

Վերոհիշյալ բոլոր իշխաններն ունեն հառոտս («քաղաքի առաջնորդ») տիտղոսը, Կաշտարիտին, Մամիտ(ի)արշուն bil ali («քաղաքի տեր») են: Միայն Կիաքսարն ու Աստիագեսն էին իշխում ամբողջ Մարաստանի վրա: Նրանց նախորդները սուս տեղական առաջնորդներ էին:

Ասորական տեղեկությունները թույլ են տալիս ստուգելու այս նյութի վերաբերյալ հույն հեղինակների հաղորդած պատմությունը: Հերոդոտոսի համաձայն, մարերն սկզբում ապրում էին ցրված բնակավայրերում՝ *κατὰ κάμας*: Բնակավայրերի առաջնորդներից մեկը՝ Դեիոկեսը, որին նա կոչում է *δικαστής* (դատավոր), միացրեց ավանները և իր իշխանության ներքո պետություն ստեղծեց: Բնակավայրերը վեց մարական տոհմեր էին՝

Namensbuch-ում, ապա կոտացվի *αἶθρα farena*: Երկու իշխաններ նույն անուն են կրում՝ Masdaku կամ Mastaku: Ուզեցել են տեսնել այստեղ Mazdaka և դեմ մագդեականության լուրջ հարցը: Սակայն Mastaku-ն շատ լավ կարող է Masiata-ku-ի միաձուլված ձևը լինել, Հերոդոտոսի *Μάσιωτος*-ի, որ նշանակում է համարյա նույն բանը, ինչ Ուպպատմա-ի անունը *urama* (քարձրագույն):

Երկրների անուններն ավելի հետաքրքրական են, նրանք թույլ են տալիս ճշտելու իրանական ցեղերի զբաղեցրած տարածքը: Սիգրիանան Պողոմեոսի *Σιγριανικῶν*-ն (VI, 2, 6) է, Կազայի մտա Խորոմիթրենուն: Կակկանը Ասարիսաղոթնի Կուկունան է, անշուշտ՝ Ուրմիա լճից ոչ հեռու գտնվող շար Կակկենների երկիրը, որի մասին խոսում է Մարգոնը ութերորդ արշավանքի նկարագրության մեջ: Թաքարին, որը ծանոթ է որպես Թապուրի, Թաքարիստանն արշավանքի նկարագրության մեջ: Թաքարին, որը ծանոթ է որպես Թապուրի, Թաքարիստանն է: Անտիրպատիանու, որն Ասարիսաղոթնի Անտարպատին է՝ Ատրպատական է: Բուշտուն է: Մանայի սանձանակից երկիրը, որը ծանոթ է որպես Թապուրի, Թաքարիստանն է: Անտիրպատիանու, որ նույնանուն է Մեիշտայի հետ, որը գտնվում է Ուրմիա լճի ափին և գրավել նաև Ամեիստան, որ նույնանուն է Մեիշտայի հետ, որը գտնվում է Ուրմիա լճի ափին և գրավել էր Ուրարտուի քաղաքը Մեմուայի կողմից: Բարիկանուն՝ Հերոդոտոսի *Παρικανοί*-ն է (III, 92), Պարտականուն կամ Պարտականուն՝ Հերոդոտոսի (I, 101) *Παριτακῶνο*-ն: Կարկասիան, Մամայի մտա՝ Բիտ-Դայուկկու քաղաքն է:

Հետևաբար իրանական ցեղերը գլխավորապես զբաղեցնում էին Ուրմիայի և Կասպից ծովի միջև եղած տարածությունները՝ հետագա Մարաստանի հյուսիսային մասը:

Բուսեր, Պարթակեններ, Սարուխաթներ, Արիզաններ, Բուդիաններ և Մագեր: Դեիոկեսը 53 տարի իշխեց: Իշխանությունը հաջորդաբար անցավ Փրասորեսին՝ 22 տարի, Կիաքսարին՝ 40 տարի, Աստիագեսին՝ 35 տարի: Ընդամենը 150 տարի, որ ներկայացնում է մարական թագավորության տևողությունը: Մի ուրիշ տեղ պատմիչը 128 տարի է հաշվում, 22 տարով պակաս¹: Մեր կարծիքով, հակասությունը հեշտությամբ կլուծվի, եթե 22 տարին ընդունենք որպես Դեիոկեսի՝ նախքան թագավորական իշխանության հասնելու շրջանը:

Իրոք, պատմիչն ասում է, որ Դեիոկեսը վաղուց հայտնի էր իր բնակավայրում խելքով և մեծ հեղինակություն էր վայելում, երբ մյուս բնակավայրերի բնակիչները հավաքվեցին և նկատի առնելով նրա ունակություններն ու հեղինակությունը՝ նրան դատավոր ընտրեցին: Նա որոշ ժամանակ վարեց այդ նոր պաշտոնը նախքան գահ բարձրանալը: Այդ պահին նա, անշուշտ, բավական տարեց պետք է լիներ, 40 տարեկանից ոչ պակաս, որպեսզի կարողանար այդպիսի բարձր վարկանիշի արժանանալ: Եթե 53 տարիների մեջ ներառենք նրա դատավորության տարիները, ապա, ուրեմն, նա մահացել է 93 տարեկան հասակում:

Այսպիսով, մարական պետությունը, ըստ Հերոդոտոսի, սկսվում է 680 թվականին: Այն տևեց 128 տարի, ուրեմն, անկումը՝ 552 թվականին և Դեիոկեսի վերելքի սկիզբը՝ 702 թվականին:

Հերոդոտոսը սխալ է գործել Դեիոկեսի ժամանակաշրջանի վերաբերյալ և, որպես հետևանք, ուրիշ ժամանակագրական շեղումներ թույլ տվել: Դեիոկեսը, անշուշտ, Դայուկկուն է, որին Մարգոնը տարագրեց 715 թվականին: Նրան *šaknu* «կառավարիչ» են որակում, որը կախում ունի Մանա երկրից: *Δικαστής* տիտղոսը համարյա շակնուի իմաստն ունի, քանի որ ցույց է տալիս, որ այդ տիտղոսը կրողը քաղաքական դեմք չէր հանդիսանում: Հույն պատմագիրը, այնուհանդերձ, իրավունք ունի նրան համարելու թագավորական հարստության հիմնադիր, որովհետև նրա սերունդն էր, որ ուղիղ գծով իշխեց և ստեղծեց պետությունը: Սակայն նա սխալվում է այդ իշխանի մահվան թվականը տեղափոխելով 715 թվականից 680 թվականը: Դա սկյութների Մարաստան ներխուժելու կամ ավելի շուտ՝ ժամանելու ճիշտ թվականն է: Այդ ժամանակաշրջանում Մարաստանում բազմաթիվ իշխանների մեջ հայտնի էին Կաշտարիտին, Մամիտ(ի)արշուն և Դուսաննին: Դատելով ամունից՝ Կաշտարիտին պատկանում էր Դեիոկեսի ընտանիքին: Դարեհի օրով ըմբոստ մար Ֆրավարաիշը իրեն կոչում է *Քաթրիտա Ուպաշըթ*-

¹ Հերոդոտոս, I, 101-103 և 130:

բայի ցեղից: Բարեւազիները առաջին անունը հաղորդում են որպես Կաշ-տարիտի, իսկ երկրորդը՝ Ումակիշտար = Կիաքսար:

Հերոդոտոսը մեզ պատմում է, որ սկյութները, Կովկասի լեռնաշղթան անցնելով, լեռների ստորոտում հանդիպեցին մարերի դիմադրությանը: Սկյութները ջախջախեցին մարերին և նրանց տիրապետությունից ազատեցին Ասիան, իշխելով այնտեղ 28 տարի: Դա գալիս է ասելու, որ սկյութներին տիրապետությունն սկսվել է հենց իրենց ներխուժման պահից՝ 680 թվականից, և տևել մինչև 652 թվականը: Այդ տեղեկությունը միանգամայն ճիշտ է սկյութների տիրապետության վերաբերյալ: Միայն թե նրանց հաջողությունը այդ պատմության մեջ շատ է չափազանցված: Ասիայի գրավման մասին խոսք չի կարող լինել, այլ միայն Մարաստանի: Ասարիադոսը Մանա երկրում սպանեց սկյութների առաջնորդ Իշպակային, բայց նրան չհաջողվեց երկիրը նրանց ազդեցության տակից դուրս բերել: Մյուս կողմից, մարերի առաջնորդներ Կաշտարիտի, Մամիա(հ)արշուի և Դուսաննիի ակնկալություններին դեռևս ամենևին վերջ չէր տրված: Դրությունը փոխակնկալություններին դեռևս ամենևին վերջ չէր տրված: Դրությունը փոխակնկալություններին դեռևս ամենևին վերջ չէր տրված: 678 թվականին նա վեց, երբ ասպարեզ եկավ սկյութ Բարտատուան: 678 թվականին նա խնդրեց Ասորեստանի արքայադստեր՝ հավանաբար հենց Ասարիադոսի դստեր, ձեռքը և հանձն առավ կռվել Մարաստանի ու Մանայի գերիշխանությունը դրժող իշխանների դեմ և առաջին հերթին Կաշտարիտի դեմ: Նրա ջանքերը հաջողությամբ պսակվեցին: Նա նույնիսկ Մանայի շրջաններից դուրս վտարեց կիմներներին: Հիմնականում Բարտատուան է սկյութական իշխանության ստեղծողը «Ասիայում», այսինքն՝ մարերի երկրում: Գուցե, 28 տարվա տիրապետության իսկական թվականները 678-648 թվականներն են: Մակայն այդ չի նշանակում, որ սկյութական տիրապետությունն անպայման անաղարտ է մնացել մինչև 648 թվականը: Ավելի շուտ դա այն թվականն է, երբ Կաշտարիտիի հաջորդ Ֆրատրտեսը ազատվեց սկյութական տիրապետությունից: Իրոք, 648 թվականից հետո Աշուր-բանիպալը մարերի դեմ ուղղված է ոչ մի արշավանքի մասին չի խոսում:

Ինչպես ասացինք, Կաշտարիտին Դայուկկուի սերնդից էր: Նա կռվում է Կարկաշիի իշխան, մինչդեռ Դայուկկուն իշխում էր Մանայի մոտ գանվող մի շրջանում, որն իր անունն էր կրում Բիթ-Դայուկկու: Պետք է կարծել, որ Կարկաշիին Բիթ-Դայուկկուի բնակավայրերից մեկն էր: Մարգոնի ցուցակի նախավերջին իշխանը Կարկասիայի իշխանն է, որն, անշուշտ, նույնն է Կարկաշիի հետ: Դժբախտաբար, նրա անունը ջնջվել է: Մույն իշխանը պետք է որ Դայուկկուի հաջորդը լինի, համենայն դեպս՝ Կաշտարիտիի նախորդը: Հերոդոտոսը չի ճանաչում այս երկու իշխաններին: Նա նրանց փոխարինում է Դայուկկու-Դեյուկեսով, տեղափոխելով

նրան 715 թվականից 680 թվականը: Բայց քանի որ նա գիտեր, թե սկյութների ներխուժումը Դեյուկեսից հետո է տեղի ունեցել, ապա նա պարտք է համարել այն 680 թվականից տեղափոխել մեկ ուրիշ ժամանակ և ընտրել է Կիաքսարի ժամանակաշրջանը, գուցե, Քշաթրիտային Ուվաքշթրայի հետ շփոթելու հետևանքով, այնպես որ նա սկյութական տիրապետության ժամանակը զուգակցում է Կիաքսարի առաջին 28 տարվա՝ 625-585 թվականների հետ¹:

Այս ժամանակագրական շեղումը հաստատվում է պատմագրի այլ վկայություններով: Վրանաբնակ սկյութների մի խումբ ապաստան էր փնտրում մարական տարածքում: Կիաքսարը նրանց ընդունում է և իր զավակների դաստիարակությունը նրանց է վստահում: Նորեկների հանդեպ թույլ տրված մի խստություն գայրացնում է այս բարբարոսներին, որոնք Կիաքսարի երեխաներից մեկին մորթում, ճաշ են պատրաստում և մատուցում թագավորական սեղանին, ապա փախչում Լիդիայի թագավոր Ալիաթեսի մոտ: Կիաքսարը ետ է պահանջում ոճրագործ փախստականներին, և երբ նրանք հրաժարվում են հանձնվել, պատերազմ է հայտարարում, որը տևում է հինգ տարի և վերջանում արևի խավարման օրը կնքված խաղաղությամբ: Ներկա հաշվումներով այդ խավարումը տեղի է ունեցել 585 թվականի մայիսի 28-ին:

Ուրեմն, պատերազմն սկսվել էր 590 թվականին: Մարաստանը չէր կարող պատսպարել խոռվարար սկյութներին, եթե սկյութները դեռևս տիրապետեին Մարաստանին, որը, ըստ Հերոդոտոսի, ազատագրվեց միայն 585 թվականին: Այնուհանդերձ, պատմագիրը ընդունում է, որ սկյութական տիրապետության անկումը, որը տեղի է ունեցել երևակայական կամ իրական եղեռնական խնջույքի ժամանակ, նախորդել էր Նինվեի առումին: Իսկ դա տեղի է ունեցել 612 թվականին:

Համենայն դեպս, Կիաքսարը չի կարող սկյութների տիրապետության ժամանակակիցը լինել, և ոչ էլ այն կործանելու պատիվն ունենալ: Նա իր հայր Ֆրատրտից էր ժառանգել երկիրը, որն արդեն ազատվել էր սկյութների տիրապետությունից: Մենք թագավորական հարստության, եթե ոչ պե-

¹ Հերոդոտոսը Աստիագեսի հատկացնում է 35 տարվա թագավորություն, որի վերջը համարում է 550 թվականը, ուրեմն՝ 585-550 թթ.: Մարական պետության անկման իսկական թվականը 553 թ. է, Նաբոնահիդի երրորդ տարին: Նաբոնահիդ-Կյուրոսի ժամանակագրությունը, Keilinschrift. Bibl., III, 2, էջ 129, պատմում է, որ Կյուրոսը կռվեց Իշտուվեզուի հետ և նրան գերի վերցրեց: Այս հատվածը վնասված լինելու պատճառով թվականը մնում է անորոշ: Մակայն որովհետև յոթերորդ տարում հաջորդում է մեկ ուրիշ պատմություն, եզրակացվում է, որ ջնջված թվականը վեցերորդ տարին կլինի, այսինքն՝ 550 թ.: Մա հակասում է Նաբոնահիդի ուղիղ վկայությանը, ըստ որի՝ Աստիագեսի անկումը տեղի է ունեցել իր թագավորության երրորդ տարում, ուրեմն՝ 553 թվականին:

տության, հիմնադիր ենք համարում Դայուկուին, կամ Դեիուկեսին, որը տարագրվեց 715 թվականին. նրա հաջորդներն են՝ մի անանուն անձ, Կարկաշիի իշխանը, Մարգոնի օրով,

Կաշտարիտի-Ջշաքրիտա,
Ֆրաորտ-Ֆրավարտիշ,
Կիաքսար-Ուվաքշթրա,
Աստիագես-Իշտուվեզու,

Ասարխադոնի օրով:
Աշուրբանիպալի օրով:
Սինշարիշկունի օրով:
585-553 թթ.:

Կտեսիաս-Դիոդորոսի՝ մարական թագավորների ցուցակը պատմական որևէ արժեք չունի, որովհետև բավական անհաջող թխված է Հերոդոտոսի պատմության հիման վրա: Եվսեբիոսի ցուցակը, որ սկիզբ է առնում Աբյուտենոսից և Բազմավեպից (Պոլիսիստոր), ավելի ևս անփութ է և ներկայացնում է մի փոխգիշուր Հերոդոտոսի ու Կտեսիասի միջև¹:

¹ Ահա Կտեսիաս-Դիոդորոսի ցուցակը ի համադրություն Հերոդոտոսի ցուցակի.

1. Արբակես 28	4. Արթիկաս 50	7. Արթունաս 22
2. Մանդակես 50	5. Արթիանոս 22	8. Ասթիբարես 40
3. Սոսարմոս 30	6. Արթայոս 40	9. Ասպանդա

Ցուցակի արհեստական բնույթն ակնհայտ է: Ասպանդան, ինչպես նկատում է Դիոդորոսը, նույնանուն է հույների Աստիագեսի հետ: Երկու վերջին զույգերը իրենց թվերով համապատասխանում են Հերոդոտոսի Ֆրաորտ՝ 22-ին և Կիաքսար՝ 40-ին: Իսկ առաջին զույգերը՝ Ֆրաորտին և Դեիուկեսին՝ 53: Հերոդոտոսը ցույց չի տալիս Ֆրաորտի՝ Դեիուկեսի հոր թագավորության տևողությունը: Կտեսիաս-Դիոդորոսը նրան համազոր Արբակեսի տարիները 28 են համարում: Սպասելի էր 30, ինչպես նրա կրկնակ Սոսարմոսի պարագայում: Պ. Ռոստը կարծում է, որ խոստորունը կատարվել է փոխառությունը թաքցնելու նպատակով: Հավանական է, որ Արբակեսի 28 տարին սկյութների տիրապետության 28 տարին է, որոնք, ըստ Դիոդորոսի, վտարվեցին Արբակեսի կողմից: Կտեսիասը, ուրեմն, կրկնապատկել է Հերոդոտոսի տվյալները և ժամանակագրական տեսակետից երևակայական ու անհեթեթ ցուցակ կազմել, որովհետև ըստ այնմ Նինվեին կործանող Արբակեսից (612) մինչև Ասպանդա-Աստիագեսը (552) անցած կլիներ երեք հարյուր տարուց ավելի (282 տարի, առանց հաշվելու Ասպանդայի թագավորությունը): Հմտ. Th. Nöldcke, Etudes historiques sur la Perse ancienne, էջ 10:

Շատ մեծ նշանակություն են վերագրել այն հանգամանքին, որ երկու անուններ՝ Արբակես և Արթիկաս, կամ Մարգոնի մարական 23 իշխանների ցուցակում Արբակու և Խարթուկկա ձեռքով: Դա բույրավոր պատահական զուգահեռություն է: Մարգոնի մոտ նրանք ժամանակակիցներ են, Կտեսիասի մոտ՝ մեկ դարով միմյանցից բաժանված: Սեմիրամիսի (Շամիրամի) պատմության մեջ Դիոդորոսը հիշատակում է Մարաստանի թագավոր Փառնոսին: Մարական թագավորների ցուցակում (28) նրա անունը չկա: Եթե Փառնոսը ծագում է ուրիշ աղբյուրից, կարելի է մտածել Է-պարնուայի կամ Ի-պարնուայի մասին՝ Մարգոնի ցուցակում: Եվսեբիոսն ընդունել է Կտեսիասի ցուցակի առաջին չորս անունները՝ պակասեցնելով նրանց թագավորության տևողությունը. Արբակես՝ 28, Մանդակես՝ 20, Սոսարմոս՝ 30, Արթիկաս՝ 30 և դրա վրա 336

Բազմաթիվ ցրված ցեղերից բաղկացած մարերը IX դարից սկսած իջնում են պատմության ասպարեզ: Նրանց ազգային գիտակցությունը միանգամայն արթնանում է կիսմերա-սկյութական հորձանուտում: Ֆրաորտին հաջողվում է նրանց ազատել սկյութների ազդեցությունից մոտավորապես 650 թ. և հավաքել իր հովանու ներքո: Կիաքսարը զարգացնում է նոր պետությունը և 612 թվականին Նինվեի առումից ու 585 թվականին Լիդիայի նկատմամբ տարած հաղթանակից հետո բարձրացնում մեծ տերությունների շարքը: Սակայն այդ տերության կյանքը երկար չտևեց (29): 553 թվականին իշխանությունը մարերից անցավ իրենց համատեմ պարսիկներին: Բայց և այնպես, մարական պետությանը վերագրված փառքը իրականությունից հեռու է անցնում: Չափազանցությունը, թվում է, նրան հաջորդող պարսկական պետության ծաղկման հետադարձ ազդեցության հետևանք է:

Կիսմերները, սկյութները և մարերը, որոնց պատմությունը մենք ուրվագծեցինք, զլխավոր գործոններն են այն դարաշրջանի, երբ Ուրարտուն փոխարկվեց Հայաստանի: Արդյո՞ք նրանք դեր խաղացել են այդ փոխարկման մեջ:

Ելնելով այն իրողությունից, որ Կիաքսարը չափվել է Լիդիայի թագավորի հետ Հալիս գետի ափին, իրավամբ եզրակացրել են, որ Ուրարտուի թագավորությունը, կիսմերների և սկյութների ավերումներից սասանված, ուժասպառ էր եղել Մարաստանի թագավորի հարվածների տակ: Սակայն այդ բարբարոս հորդաները հետքեր թողնել էին Հայաստանում: Այդ մյուսի շուրջ ոչ մի ուղղակի տվյալ գոյություն չունի: Այնուհանդերձ, որոշ գիտնականներ կարծում են, թե սկյութները հաստատվել են Հայաստանում և նրանք են, որ կլանելով երկրի ոչ-արիական տարրերը, վճռել են Հայաստանի ազգագրական նկարագիրը¹:

Հավանական է, այս միտքը ներշնչվել է այն հանգամանքից, որ Հայաստանի շրջաններից մեկը կրում է սկյութների անունը՝ Sakasene, Saka-Sayana «սակաների բնակություն». saka սկյութների իրանական անունն է: Դա հայերի Շակաշենն է, Ուտիք - Otene նահանգի գավառներից մեկը: Դրա կենտրոնն էր Գանձակը (ռուսների Ելիզավետպոլ):

ավելացրել է Հերոդոտոսի ցուցակի մեջ պարունակված հետևյալ անունները՝ Դեիուկես՝ 54, Ֆրաորտ՝ 24, Կիաքսար՝ 32, Աստիագես՝ 38:

¹ Jakob Krall-ը, Grundriss der altorientalischen Geschichte, էջ 164, ասում է. «Ինչպես կարելի է կռահել թագավորի հանգամանքներից, հնարավոր է, որ նրանք (իսկ սկյութները) հաստատվելով Ուրարտուում, լրիվ արմատախիլ են արել ոչ-հնդգերմանական ազգաբնակչությանը և, այդպիսով, ամբողջապես փոխել Հայաստանի ազգագրական տեսքը»:

Պետք է կարծել, որ Հերոդոտոսն՝ ասելով «լեռների ստորոտում», ուր սկյութները հաղթական ճակատամարտ էին մղել մարերի դեմ, հասկանում է Սակասենն¹: Մարերի հիշատակումը անախրոնիզմ է: Սկյութների ներխուժման ժամանակ, մոտ 680 թվականին, մարերն անելիք չունեին Կովկասի «լեռների ստորոտում» կամ Սակասենում: Այդ շրջանում տվյալ երկրների վրա իշխում էր Ուրարտուն: Ռուսա II-ը հայտարարում է, որ ինքը նվաճել է Սևանա լճի մյուս կողմում գտնվող 23 թագավորությունները. դա տեղի էր ունեցել մոտավորապես 680 թվականին: Թվում է, թե նա թույլ չէր տվել բարբարոսներին՝ ողողել Ուրարտուն, մի բան, որ արել էին կիմմերները, և ետ էր մղել նրանց դեպի Մարաստան, ուր նրանք հաղթել էին մարական ցեղերին ու իրենց 28-ամյա տիրապետությունն էին հաստատել: Սկյութների մի մասը մնացել էր Սակասենում, եթե միայն այս տերմինը իսկապես կապ ունի բարբարոսների անվան հետ:

Ասել, որ սկյութները կարողացան փոխել այդ շրջանի ազգագրական բնույթը, չափազանցություն կլիներ և, համեմայն դեպս, իրողության հակառակ, քանի որ Սակասենի կամ Օտենեի բնակչությունը միշտ տարբեր է եղել հայերից, և նրանց վերջին հետքերը մեր օրերում հայտնի են Նուխիի մոտ գտնվող մի քանի գյուղերում: Խոսք չի կարող լինել սկյութների որևէ ազդեցության մասին հայերի վրա:

Հայաստանի հյուսիսարևմտյան մի անկյունում գոյություն ունեի մի ժողովուրդ, որը կոչվում էր սկյութներ: Քսենոփոնը նրանց տեղադրում է Chalybes-ի և Taochi-ի մոտ, համարյա ճորոխ գետի ուղղամի շրջանում, Բարբերի (Բայբուրթ) մոտ (30): Դա այն շրջանն է, որը հետագայում կոչվեց Խալդիա անունով: Արդյոք խոսքը սկյութների մեկ ուրիշ բնակչության մասին է: Կարելի կլիներ արդեո տեսնել Սկյութներն լեռների հետ, որոնք տարածված են ճորոխ գետի երկայնքով, Բարբերից հյուսիս, եթե գոյություն չունենար հայերեն Աստվածաշնչի հետաքրքիր մի ցուցումը. հունական տեքստի *Σκῦθαι*-ն այնտեղ քարգմանված է Խաղախի՝ *Χάλδοι*²: Հնարավոր չէ որոշել, թե խալդերի անունը այստեղ գործածվում է «բարբարոսներ» իմաստով, թե՞ առնչվում է սկյութներին: Նույնիսկ ընդունելով վերջին պարագան, շատ արկածային կլիներ ենթադրել մի բուռ սկյութների ազգագրական ազդեցությունը հայերի վրա³:

¹ Մտքարձ, XI, II, 4: Σακασσηνί-ն իր անվանը պարտական է սկյութներին:

² Մակար, Դ, 47, *ei καί ἐπὶ Σκυθῶν, ἔλεγον, ἀπελῦθησαν ἂν ἀκετάγνωστοι* - «Թե՛ պետ առաջի խաղախաց դատ վարէին, իրա գտանէին»:

³ Եսթրաթը, «Յոթն ընդհան Թերևի», V, 227, խալիբների կոչում է «Սկյութիայից գաղթածներ»՝ *Χάλδοι Σκυθῶν ἀποικοι*: Գուցե, սկյութների հետ խալիբների հարևանությունն էր անաստեղծին ներշնչել այդ միտքը: Վերջերս ամերիկացի մի գիտնական, Հ. Կ. Ռիչարդսոնը 338

Կիմմերա-սկյութական և մարական ժամանակաշրջանը, որքան որ դա հայտնի է մեզ պատմությունից, ինչպես տեսնում ենք, լրիվ զուրկ է Հայաստանի վերաբերյալ տեղեկություններից: Պետք է սահմանափակվել մի քանի ենթադրություններով, որոնցից ամենակարևորը 585 թվականի ճակատամարտից բխող եզրակացությունն է. այդ թվականին Ուրարտուն այլևս գոյություն չունեի, և դրանից հետո է, որ հայերը տեղ դարձան երկրին:

Բացի այդ, գոյություն ունեն այն ժամանակներում և նույնիսկ դրանից առաջ իշխած մի քանի հայ թագավորների մասին հիշատակություններ: Անշուշտ, դրանք առասպելական են, և, այնուհանդերձ, մենք այդ մասին կխոսենք (31): Անցնենք այժմ հայերի ծագման մասին դասական հեղինակների տված տեղեկությունների քննարկմանը:

2. ՀԻՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Ժողովուրդների ծագումը բաղված է դարերի մթության մեջ: Բուլոբ ժողովուրդները երկար կյանք են վարել, թափառել անձանոթ ճանապարհներով, եթնիկական և աշխարհագրական այնպիսի պայմաններում, որոնք չեն ենթարկվում որևէ վերահսկողության մինչև այն պահը, երբ նրանք երևան են գալիս պատմության լուսավոր շրջաններում:

Հայերը բացառություն չեն կազմում այս ընդհանուր երևույթից: Նրանք նույնպես ունեցել են իրենց կյանքի խավար ժամանակաշրջանը նախքան քաղաքակիրթ աշխարհին ներկայանալը: Հույները չէին հետաքրքրվում ոչ-հույն ժողովուրդների ծագումով, որոնց անվանում էին բարբարոսներ: Այն տեղեկությունները, որ նրանք ավանդել են մեզ հայերի ծագման մասին, հիմնականում վերաբերում են այն վերջին փուլերին, որոնցով հայերն անցել են նախքան Հայաստանում հաստատվելը: Հայերի ծագման հարցին ձեռնամուխ լինելուց և այն ժամանակակից գիտության լույսի ներքո մեկնաբանելուց առաջ անհրաժեշտ է քննարկել հների ունեցած տեղեկությունները այս նյութի շուրջ, որովհետև, ինչ կերպ էլ որ այդ տեղե-

իր Iron prehistoric and ancient հողվածում տպված «American Journal of Archeology»-ի մեջ, հատ. 38, 1934, էջ 566, այն կարծիքն է հայտնում, որ խալիբները երկաթ մշակելու արհեստը սովորել են կիմմերներից, իսկ վերջինները՝ կենտրոնական Եվրոպայից: Եսթրաթի նշված վկայության հիման վրա նա կարծում է, որ խալիբների ժողովուրդը «appears to have been a Cimmerian-Scyth» (ինչպես պարզվում է, պետք է որ կիմմերա-սկյութներ լինեին) և նրանց Փոքր Ասիա գալը կարելի է տեղադրել բարբարոսների ներխուժման ժամանակաշրջանում, երբ նրանք սասանեցին Ասորեստանը և ավերեցին Փոյուգիայի թագավորությունը:

կայությունները ներկայացված լինեն, համենայն դեպս դրանք արտացոլում են, ինչպես կոտեսները, որոշ պատմական ճշմարտություն:

Մեզ է հասել երկու ավանդություն. ըստ առաջինի՝ հայերը փոյուզիական ծագում ունեն, ըստ մյուսի՝ քեսալական: Առաջինը Հերոդոտոսն է արժարծում, երկրորդը՝ Ալեքսանդր Մակեդոնացու երկու զորահրամանատարներ: Նախ քմենք Հերոդոտոսի տեսությունը:

Քսերքսեսի բանակի նկարագրության մեջ Հերոդոտոսն ասում է. «Փոյուզիացիների սպառազինությունը շատ մնան էր պափլագոնիացիների սպառազինությանը. տարբերությունը շատ աննշան էր: Ըստ մակեդոնացիների՝ փոյուզիացիները կոչվում էին բռիզներ, քանի դեռ բնակվում էին Եվրոպայում մակեդոնացիների հետ միասին: Սակայն անցնելով Ասիա, փոխելով երկիրը՝ փոխեցին մակ իրենց անունը և անվանվեցին փոյուզիացիներ: Հայերը զինված էին փոյուզիացիների մնան, որոնց գաղթականներն են: Ե՛վ առաջինները, և՛ երկրորդները առաջնորդվում էին Դարեհի դստեր ամուսնու՝ Արտոքսեսի կողմից»¹ (32):

Պատմագրի անգնահատելի ցուցումը անկասկած շատ ավելի արժեք կունենար, եթե այն այլ տեղում ներկայացված լիներ և ոչ Քսերքսեսի արշավանքի այնքան զուսուրդված պատմության մեջ²: Այսուհանդերձ, ժողովուրդների ցանկը պաշտոնական վավերաթղթի հետաքրքրություն է ներկայացնում, անկախ այն միտումնավոր կիրարկումից, որ պատմագիրը ուզեցել է կատարել: Պետք է կարծել, որ հայերի ազգակցությունը փոյուզիացիների հետ պատմագրի անձնական կարծիքը չէ՝ հիմնված այն իրողության վրա, որի համաձայն երկու ժողովուրդները ենթարկվում էին մեկ ընդհանուր հրամանատարի: Ընդհակառակն, դա ավելի շուտ խոսում է այն ազգակցության մասին, որ նրանց հավաքել էր մեկ առաջնորդի ներքո, նա այդպես է խմբավորել մակ մյուս ազգերը, նույն սկզբունքի հիման վրա:

Մեկ ուրիշ հեղինակ՝ Եվդոքսոսը, որն աչրել է մոտ Զ. ա. 370 թ., ուրեմն՝ Հերոդոտոսից համարյա մեկ դար հետո, նույնպես հաստատում է, որ «հայերը ծագումով Փոյուզիայից են և լեզվով շատ են մնան փոյուզիացիներից»³:

Չի կարելի ասել, որ այդ հեղինակը ներշնչված է իր նախորդի կողմից: Լեզուների մանություն վերաբերյալ դիտողությունը ապացուցում է, որ նա անկախ է և Հերոդոտոսի հետ կապ չունի:

Այսպես ուրեմն, ենթադրենք, թե հայերը փոյուզիացիների մեկ ճյուղն էին: Իսկ ովքե՞ր էին իրենք՝ փոյուզիացիները:

Նրանք Թրակիայի բնիկներ էին Բերեկինտոս և Ասկանիա երկրներից, որտեղից Հեկտորի որդի Սկամանդրոսը նրանց Փոքր Ասիա էր բերել Տրոյայի պատերազմի ժամանակ¹: Հոմերոսը փոյուզիացիներին ճանաչում է որպես Պրիամոսի դաշնակիցներ՝ տեղաբաշխված Մանգարիոսի ափերին, «հեռավոր Ասկանիայից» եկած՝ Փորկոսի և Ասկանիոսի հրամանատարության ներքո²: Տրոյական կոչված պատերազմի պատմական բնույթի մասին կան բազմազան կարծիքներ: Այսուհանդերձ, բոլորն էլ համաձայն են այն տեղադրելու Զ. ա. XII դարում: Դա թրակա-փոյուզիական ժողովուրդների ներխուժման և նրանց հարվածների ներքո Խաթթի պետության կործանման քվականն է:

Ամփոփենք այն, ինչ մենք այդ նյութի մասին պատմել ենք ըստ սեպագիր հուշարձանների:

Խաթթուշայի (Բողազ-քոյի) դիվանները միանգամից ընդհատվում են շուրջ 1200 թվականին, մի չարագուշակ նշան այն բանի, որ խեթական պետությունն աղետի էր ենթարկվել: Քիչ հետո «Խաթթի» անունով որոշ «ազամատենչ» ժողովուրդներ են երևան գալիս Ասորեստանի սահմանի վրա: Նրանց մեջ է գտնվում մուշկերի 20-հազարանոց մի խումբ, որոնց անվան տակ ասորեստանցիները հասկանում են փոյուզիացիներին: Մուշկերը թափանցում են Անգիտենեի շրջանը և առաջ խաղում մինչև երկու Տիգրիսների միախառնման տեղը, ուր 882 թվականին պատերազմ են մղում Ասորեստանի թագավոր Աշուրնասիրպալ II-ի դեմ: Դրանից հետո համարյա ոչինչ չի լսվում այդ ժողովրդի մասին մինչև Սարգոն II-ի թագավորությունը (721-705): Այդ դարաշրջանում նա նորից է երևում Կիլիկիայի ծովափին: Խեթական պետությունը նվաճելուց հետո մուշկերը շարունակել էին իրենց հաղթարշավը մինչև Միջերկրական ծովը և Ասորեստանից խլել Արևմտյան Կիլիկիան՝ Կուե երկիրը: Մուշկերի թագավորը կրում էր Միտա նշանակալից

¹ Հերոդոտոս, VII, 73, 'Αρμένιοι δὲ κατὰ περ Φρύγες ἐσσεάχατο ἐόντες Φρυγῶν ἄποικοι.

² Պետք է մանկական միանություն ունենալ պնդելու համար, թե Քսերքսեսը հավաքել էր 2.641.610 ռազմիկներ, սպասարկող կազմի հետ՝ 5.283.220 մարդ:

³ Եվդոքսոս, Ճանապարհացույց, մեջ բերված Ստեփանոս Բյուզանդացու կողմից, որը Զ. ա. V դարի հեղինակ է: Վերջինիս «Երեմիկա»-ում, որը հատուկ անունների բառարան է, 340

«Armenia» անվան տակ գրված է. Ἐδδοξος πρῶτῃ γῆς περιόδου. 'Αρμένιοι δὲ τὸ μὲν γένος ἐκ Φρυγίας καὶ τῆ φωνῆ πολλὰ φρυγίζουσι.

¹ Xenophos, Արտաքսեսի պատմություն I-ի օրոք (484-425), Բ. 5: Strabo, XIV, 5, 29:

² Իլիական, II, 862, III, 184:

անունը, որը նույնանուն է Փռյուզիայի Միդասի հետ: Մա մուշկերի և փռյուզիացիների նույնությունն ապացուցող մի փաստ է¹:

Միտան, ձգտելով տեր դառնալ Ասորեստանի տիրույթներին, ապստամբության է հրահրում նրա շրջակա փոքր իշխանությունները: Ընդունված իշխան Կիակկին դադարում է հարկ վճարել Ասորեստանին: Մարգոնը նրան գահագուրկ է անում և նրա երկիրը տալիս Մաթթիին, Աբունայի իշխանին, Պտղոմեոսի Թինան, որ Արաբիսու շրջանի Կատանիայի մի քաղաք էր, այսօրվա Յարփուզը: Ընդունված կարծես տեղավորված էր միջին Մարոսի վրա, Միսի և Յարփուզի միջև:

Միտային հաջողվել էր իր ձեռքը վերցնել Կարգանիշը (Կերասպրուս): Մարգոնը նրան ետ է մղում այդ շրջանից, առաջ խաղում մինչև Կուն և Միտայից խլում է, ի միջի այլոց, Կալիկադոնի (Գյոք-սու) ավիին՝ Մելիկիայի տեղում գտնված Խարրուա քաղաքը²:

Կիլիկիայի կողմից դեպի Ասորեստան ընթանալու անհաջողությունից հետո Միտան իր գործունեությունը փոխադրեց Կիլիկիայի լեռները՝ Ասորեստանին հարկատու փոքր իշխանությունների շրջանը: Բիթ-Բուրուտաշ, Կամմանու, Մելիդու, Կունմախու երկրները մեկը մյուսի ետևից անջատվում են Ասորեստանից:

Բիթ-Բուրուտաշի թագավորն էր Ուսասարմեի որդի Խուլլին: Վերջինիս Թիզբաթալասար III-ը հորջորջում է որպես «Թաբալի թագավոր», որից հետևում է, որ Բիթ-Բուրուտաշը նույն Թաբալն է, լինի դա քաղաք կամ շրջան, ուր ապրում էր Խուլլին: Մարգոնն իր աղջկան՝ Ախատաթիշաին, ամուսնության էր տվել Խուլլիի որդի Ամբրիսին և որպես օժիտ՝ Խիլակկուն (Կիլիկիան): Այդ ժամանակաշրջանում այդպես էր կոչվում Կեսարիայից արևելք ընկած Չամանթիսի հովիտը: Հակառակ այդքան շնորհների, Ամբրիսը՝ Միտայի և Ուրարտուի Ռուսայի կողմից գրգռված, ծառայեց էր իր բարերարի դեմ: Մարգոնը նրան պատժել և պետությունը Ասորեստանի նահանգ էր դարձրել:

Կամմանուն դասական հեղինակների Խամանենեն է, բայց այդ ժամանակաշրջանում նա գտնվում էր Հալիսի և Մելիտենեի միջև: Նրա թագավոր Գունգինանուն գահընկեց արվեց իր հարևան Ամբրիսի պես ու միևնույն պատճառով, և նրա երկիրը կցվեց Մելիդուին (Մելիտենեն):

Մակայն Մելիդուի թագավոր Թարխունազին նույնպես դավաճանեց Մարգոնին: Վերջինը նրան բանտարկեց և պետությունը հանձնեց Կունմախուի իշխան Մուտալլուին: Մուտալլուն էլ հավատարիմ չմնաց Մարգոնին ու միացավ Ուրարտուի Ռուսային: Մարգոնը նրան վտարեց, և Կունմախուն ասուրական նահանգ դարձավ:

Այսպես, Միտայի փորձերը Ասորեստանի դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու՝ անհաջող անցան: Կունեի ասորեստանյան կառավարիչը վերջին հարվածը հասցրեց՝ մարմվեց նրա երկրի խորքը և ստիպեց նրան ճանաչելու Մարգոնի գերիշխանությունը 708 թվականին:

Մարգոնը Մուշկիի սահմանում կառուցեց Ուսի, Ուսիանի և Ուարգին ամրոցները: Ուսին հռոմեական ճանապարհացույցների Խուսան է, որը գտնվում է Թիանայի ճանապարհի վրա, Նազիանզոսից արևմուտք տասներկու մղոն հեռավորության վրա: Ուսիանին հռոմեական Օսիանան է Նիսսայից արևմուտք: Ուարգինի տեղը հայտնի չէ¹:

Այս բերդերը սահմանագծում էին Մուշկիի արևելյան սահմանը, որը հաստատում է Մուշկիի նույնությունը Փռյուզիայի հետ: Պտերիայի (Բոդազ-քոյ) խեթական մայրաքաղաքից քիչ հեռավորության վրա էլուկում և Թիանայում (Կիզի-հիսար) հայտնաբերված փռյուզիական արձանագրությունները ապացուցում են, որ Տարսոնից Միմոս պանոզ գլխավոր ճանապարհը փռյուզիացիների ձեռքին էր:

Մարգոնի կողմից կառուցված բերդերի գծից արևմուտք, Պրոպոնտիսի (որի մի մասն էր կազմում Փոքր Փռյուզիան), Կարիայի և Պիսիդիայի միջև ընկած ամբողջ ընդարձակ տարածքը կազմում էր Փռյուզիան:

Հակառակ Փռյուզիայի համբավին, ինչպես որ այն արտացոլվել է հունական դիցաբանության մեջ, ոչինչ հայտնի չէ այդ երկրի պատմության երկար դարաշրջանի վերաբերյալ, սկսած փռյուզիացիների ներգաղթից մինչև VII դարի վերջը: Հերոդոտոսը ճանաչում է միայն Միդաս թագավորին, նրա հայր Գորդիոսին և նրա որդուն, որ նույնպես Գորդիոս անունն էր կրում²: Գորդիոն քաղաքը, Միդայոն քաղաքը, Միդասի հռչակավոր հուշարձանը, բոլորն էլ տեղավորված Մանգարիոսի ավազանում, ինչպես նաև

¹ E. Forrer, Die Provinzeinteilung, էջ 76, Ramsay, Asia Minor, էջ 286 և 269: Է. Ֆորերն Ուարգինը տեղադրում է Հալիսից հյուսիս, որ հավանական չէ. ավելի շուտ պետք է փնտրել այն Թիանայի մոտ:

² Հերոդոտոս, I, 14, VIII, 138՝ Միդաս որդի Գորդիոսի, I, 35, Ադրաստոս որդի Գորդիոսի և Միդասի թոռ: Ադրաստոսը պատմական անձնավորություն չէ: Եվ նույնիսկ եթե է, ապա նա չի կարող լինել Կրեսոսի ժամանակակիցը, ինչպես պատմագիրն է ներկայացնում: Երբորն սպանելուց հետո Ադրաստոսը ապաստան է փնտրում Կրեսոսի պալատում և այստեղ ուրիշ ոճիր է գործում՝ որսի ժամանակ փոխանակ վարազին խփելու, սպանում է Կրեսոսի որդի Ատիսին: Այս պատմությունը Ատիսի առասպելի ազդեցությունն է կրում:

¹ G. Rawlinson-ը, The Seven Great Monarchies of the Ancient Eastern World, II, 151, ծան. 7, առաջինն է ընդունել Միտայի նույնությունը Միդասի հետ, ապա՝ Հ. Վիլկինգը, Phrygien im Lichte der Altorientalischen Inschriften, «Altorientalische Forschungen», II, էջ 103, 1898:

² E. Forrer, Die Provinzeinteilung des Assyrischen Reiches, էջ 71:

Միդուկրենն՝ Պիսիդիայի սահմանի վրա, Անտիոքի մոտ և Գորդիուտեյքոսը, հավանաբար՝ Մեանդրի վտակ Հարպասոսի վրա, հավերժացրել են վերոհիշյալ թագավորների հիշատակը:

Միդաս թագավորը, առասպելական պատմմաներում՝ ոսկե Միդաս, էջի ականջներով Միդաս դարձած, շարունակելու էր իրեն թաքցնել դիցաբանական շպարի տակ, եթե աստրական արձանագրությունները բացած չլինեին նրա պատմական դեմքը: Հույն հեղինակների՝ Միդասի և Միտայի նույնության մասին տարակուսանքը չափազանցված է: Ըստ Հերոդոտոսի՝ Միդասը ավելի վաղ է եղել, քան Լիդիայի թագավոր Գիզեսը: Մենք գիտենք, որ Միտան ապրում էր Սարգոնի և նրա հաջորդների ժամանակ, մինչդեռ Գիզեսը Աշուրբանիպալի (669-632) ժամանակակիցն է: Գրանով Հերոդոտոսի Միդասը նույնանուն է Սարգոնի Միտայի հետ¹:

Փոյուզիայի պատմությունը, մեր ժամանակների սահմաններում, այնուհանդերձ, ոչ մի առիթ չի ընձեռում փոյուզիացիների և հայերի միջև բացահայտելու որևէ այնպիսի կապ, որը նրանց ազգակցության մասին վճռական վկայություն հանդիսանար: Կա միայն մի իրողություն, որը կարող է օգտակար լինել այդ հարցում: 705 թվականին Սարգոնը դուրս եկավ Թարալի դեմ: Այդ արշավանքի մասին ոչինչ հայտնի չէ, բացի այն, որ Ասորեստանի թագավորն այնտեղ մահացավ: Թվում է, թե արշավանքն ուղղված էր Թիլ-Գարիմնու երկրի դեմ, խեթական հուշարձանների Թեգարաման, տեղավորված Մելիդուի և Կամմանուի միջև, Գաուրաինայի շրջանում, այժմյան Գորումը, որը, զուցե, պահպանել է Թեգարամա կամ Գարիմնու հին անունը: Թարալը տեղական անուն է, որը վերաբերում է կիլիկյան Տավրոսում տեղավորված մի քանի պետությունների: Քիչ ավելի ուշ տեղի ունեցած իրադարձություններն իրավունք են տալիս այն վարկածին, թե 705 թվականին արշավանքի նպատակն էր Թիլ-Գարիմնուի գրավումը: 695 թվականին Մենմաքերիքն իր զորավարներից մեկին ուղարկեց ուն Գուրդիի դեմ, որն այդ երկրում նոր թագավորություն էր հիմնել: Գուրդին խոհեմաբար ետ քաշվեց Ասորեստանի գերագանց ուժերի առջև: Մենմաքերիքի զորավարը գրավեց Թիլ-Գարիմնուն, բայց նկատելով այն պահպանելու դժվարությունը՝ քավարարվեց կողոպտելով և հեռացավ: Այսպիսով, Թիլ-

Գարիմնուն օձիքն ազատեց Ասորեստանի ամբարտապան նկրտունից և պահպանեց իր անկախությունը:

Հայտնի չէ, թե ինչպիսի պարագաներում էր Գուրդին հիմնել այդ նոր քաղաքական օրրանը: Գուրդին բացառապես փոյուզիական անուն է և ավելին՝ թագավորական հարստության որդեգրած անուն է: Եթե Թիլ-Գարիմնուի Գուրդին Միդասի որդին էլ չէր, ապա, անկասկած, թագավորական ընտանիքից էր: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ նա փոյուզիացիների հրամանատարն էր և այսպես թե այնպես նրանց բերել ու հաստատել էր Թիլ-Գարիմնուի շրջանում: Եթե մենք հիշենք, որ Թիլ-Գարիմնուն կազմում էր Փոքր Հայքի տարածքը՝ հայերի առաջին օրրանը, նախքան Եփրատն անցնելը, ուրեմն իրավունք ունենք նույնպես, որ Գուրդիի փոյուզիացիները ոչ այլ ոք էին, եթե ոչ հայեր:

Թեգարամա թագավորությունն այնքան էլ վաղանցուկ չէր, ինչպես կարելի էր կարծել: Աստվածաշնչյան ավանդությունը պատիվ է արել նրան՝ մտցնելով Ծննդոց գրքի նշանավոր Ժ գլխում թվարկված ժողովուրդների էպոնիմների մեջ՝ Հաբեթ, Գամեր, Մագոզ, Մադաի, Իովան, Թորել, Մոսոթ, Թիրաս, Ասքանազ, Ռիֆաթ կամ Էրիրաթ, Թերգամա կամ Թորգամա:

Դժվար չէ ճանաչել այն երկրներն ու ժողովուրդները, որ ներկայացված են այս էպոնիմներով՝ Գամերը դա Գիմիրրին է՝ կիմներները Կապադովկիայում, հայերի Գամիրքը. Մագոզը՝ Գոգի երկիրը, Գիզեսի Լիդիան. Մադաին՝ Մեդիան. Իովանը՝ Հոնիան. Թորելը՝ Թարալը, Կատանիան. Մոսոթը՝ Մուշկին, Փոյուզիան. Թիրասը հայտնի չէ, զուցե Թրաքս, Թրակիա¹:

Գամերի որդիները՝ Ասքանազ և Իշկուզի (կամ Իշկունզի)՝ սկյութները, Թերգամա կամ ավելի շուտ Թեգարամա, որտեղից Թոգարամա կամ Թորգամա, Թեգարամա կամ Թիլ-Գարիմնու՝ Փոքր Հայք, Ռիֆաթ՝ զուցե Արպադ (այժմյան Ռֆադը Հալեպից հյուսիս)՝ սիրիական փոքր պետություն, «Էրիրաթ» ընթերցվածքը նույնպես է տալիս Արարատի մասին (Ուրարտու):

Այսպիսով, Ծննդոց գրքի Ժ գլուխը նկատի ունի միջագետյան աշխարհի հյուսիսում՝ Էգեական և Կասպից ծովերի միջև տեղավորված ոչ-սեմական ժողովուրդները:

Տարօրինակ է, որ Ուրարտուի նման մի մեծ պետություն Ծննդոց գրքի մեջ չի հիշատակված: Երեք եղբայրներից Թերգաման ներկայացնում է Գուրդիի թագավորությունը՝ Փոքր Հայքը, Ասքանազը անվանադիրն է սկյութների, որոնք տեղավորված են կամ Սակասենեում՝ Արևելյան Հայաստանում, կամ Ատրպատականում՝ Մանա երկրում կամ դրան մոտ: Մար-

¹ Այն հանգամանքից, որ Հերոդոտոսը հռչակավոր պարտեզը տեղավորում է Մակեդոնիայում, Բերսիոն լեռան ստորոտում, ամենևին չի հետևում, թե Միդասը պատկանում է այն ժամանակաշրջանին, երբ փոյուզիացիները դեռևս ապրում էին Թրակիայում: Դա պատմական արժեք չունեցող առասպել է: Բացի այդ, ըստ Քսենոփոնի՝ Անաբասիս, I, 2, 13, առասպելական պարտեզը գտնվում էր Փոյուզիայում՝ Միդուկրենն քաղաքում:

¹ Հովսեփոս Փլավիոսի կարծիքն է, 'Αρχαιολογία, [Հրեական հնախաբանություն], I, § 125:

գարեն Մրննիի և Արարատի հետ միասին հիշատակում է ասքանազյան-ներին¹: Շատ բնական է, որ երրորդ եղբայրը լինել իր մյուս երկու եղբայրների մոտ: Դա ստիպում է նախընտրել «Էրիրաթ» ընթերցվածքը՝ այն նույնացնելու համար Արարատ-Ուրարտուի հետ²: Արպաղը բավական աննշան մի կետ էր և հազիվ կարող էր հավակնել տեղ գրավելու իրական քաղաքական կարևորություն ունեցող երկրների շրջանում, ինչպես և բավական հեռու էր նա Գամերի որդի համարվելուց:

Հիշատակումը կիսմերների և սկյութների, որոնք երկար ժամանակ չմնացին քաղաքական ասպարեզում, ապացուցում է, որ Ծննդոց գրքի տվյալ գլուխը վերաբառադրում է ոչ-սեմական Առաջավոր Ասիայի ազգագրական քարտեզը, ինչպես որ կար կիսմերա-սկյութական ներխուժման հաջորդ օրը, ոչ ավելի ուշ, քան յոթերորդ դարի առաջին կեսին³:

Այնուհանդերձ, հայերը բիրիական ծննդաբանության մեջ իրենց անվանադիրը չունեն, որը ցույց է տալիս, որ նրանց հաստատումը Հայաստանում տեղի է ունեցել հիշատակված թվականից ավելի ուշ, գուցե յոթերորդ դարի կեսին:

Հետագայում Աստվածաշնչի մեկնաբանները նպատակահարմար են համարել հայերին կապել Թեգարմայի հետ: Նույնը կատարվել է փոյուզացիների նկատմամբ: Այս մոտեցումները հեցած են արդյոք Թեգարմայի ծագման մասին որևէ հուշի և երկու ժողովուրդների ազգակցության մասին տեղեկության վրա՝ նրանցից մերթ մեկին, մերթ մյուսին ներկայացնելու համար որպես նախահայր: Պատասխանը ավելի շուտ պետք է ժխտական լինի: Ժ գլխում հիշատակված բազմաթիվ ժողովուրդներ վաղուց աներևութացել կամ ժամանակին իրենց ունեցած նշանակությունը կորցրել են: Մեկնաբանները, չիմանալով այս իրողությունը, ջանացել են ուրիշներով լրացնել, հաճախ ելնելով իրենց ժամանակվա իրերի դրությունից: Հովսեփոս Փլավիոսը չգիտեր, որ Մոսոքը (Մոսոխը) մուշկերի անվանադիրն է, այսինքն՝ փոյուզացիներին: Նա նրան կապադովկիացիների նախահայր է դարձրել, առաջնորդվելով միայն մերձհնչյունությամբ, որը, իր կարծիքով, նա գտել է Մոսոքի և Կապադովկիայի մայրաքաղաք Մազաքայի միջև: Փոյուզացիների համար նա պահանջում է Թերգամային, իսկ Թերգամայի հայր Գամերին վերապահում գալթների համար: Նա ոչ մի տեղեկություն չի ունեցել, թե Ասքանազը ներխուժող սկյութներին էր

ներկայացնում: Նրա համար Ասքանազը դառնում է հոեզիմների (?), իսկ նրա եղբայրը՝ Ռիֆաթը, պափլագոնիացիների նախահայր: Ամենուրեք զուտ սեփական ենթադրության մասին է խոսքը, որը զուրկ է պատմական որևէ արժեքից¹:

Նույն պատճառաբանությամբ, հռոմեական եկեղեցու նշանավոր հայր Հիպպոլիտոսը, որը վախճանվել է մոտ 235 թվականին, Ասքանազի ծագումը փնտրում է հեռավոր սարմատների մեջ: Դա արդարացված է, եթե նա լսել է այդ շրջանի սկյութների մասին, բայց նա սխալվում է՝ վերագրելով այն Մարմատիայի սկյութներին, քանի որ Աստվածաշնչում խոսքը Արևելյան Հայաստանում կամ Ատրպատականում տեղավորված սկյութների մասին է²:

Հիպպոլիտոսը լավ է գուշակել, որ Գամերը ներկայացնում է կապադովկիացիներին, իսկ Թորգաման՝ հայերին: *Θωργαμά ἀφ' οὗ Ἀρμένιοι*. Անշուշտ, պատմական տեղեկության հիման վրա չէ, որ նա հանգել է այդ եզրակացության, այլ իր հաջողակ ներշնչման: Թեպետ, Կապադովկիայի հայկական անունը բավական էր, եթե, իհարկե, դա ծանոթ էր հեղինակին, որպեսզի նա իր Գամիրը կապեր Գամերի հետ, իսկ մերձակից երկիր Հայաստանը՝ Գամերի որդի Թոգարմայի հետ: Այնուհանդերձ, Հիպպոլիտոսի հղացումը հաջողություն ունեցավ հայերի մեջ: Արդեն հայ առաջին պատմիչները՝ Ագաթանգեղոսը, Փավստոսը, ընդունում են, որ հայերը Թորգամի ցեղին են պատկանում:

Միևնույն ժամանակ հայերն ասքանազյան ծագում են յուրացնում, իրենց Թոգարմայի անդրանիկ եղբայր Ասքանազի սերունդն են համարում: Դա չի բխում, ինչպես կարելի էր կարծել, Արևելյան Հայաստանում սկյութների հեռավոր բնակության մասին որևէ հիշողությունից: Այդ միտքը ծագել է միմիայն Երեմիայի այն հատվածից, ուր «Արարատի թագավորությունները» հիշատակված են «ասքանազյան զնդերի» հետ³: Պատմիչ Կորյունն

¹ Հովսեփոս Փլավիոս (88-96 թ. չ.), Հրեական հնություններ, I, § 123-126:

² Hippolytus Werke, IV. Band. Die Chronik hergestellt von Adolf Bauer, herausgegeben von Dr. Rudolf Holm, nebst einem Beiträge von J. Markwart, 1929: Նաև «Ամանուն ժամանակագրություն հայոց», հրատարակված Բ. Սարգիսյանի կողմից, Վենետիկ, 1904, որը պարունակում է Հիպպոլիտոսի գործից մի քաղվածք՝ կատարված ուն Անդրեսի կողմից: Մովսես Կաղանկատվացին, Հովհաննես Կարողկոսը և ուրիշ պատմիչներ օգտվել են Անդրեսի քաղվածքից:

³ Երեմիա ՄԱ, 27: «պատուիր տուք յինէն Այրարատեան թագաւորութեանցն և Ասքանազեան զնդին» *παρὰ γὰρ ἐλάττω ἐπ' αὐτὴν βασιλεὺς ἄρατε παρ' ἔμου καὶ τοῖς Ἀσκαναζέοις* (32ա): *Ἀρατε*-ն սխալ մեկնաբանությունն է Ալիքսանդրյան ծեռագրի *Ἀραթ*-ի և Մարշալյան ծեռագրի *Ἀραթ*-ի: *Παρ' ἔμου*-ն նույնպես հին սխալ է, ինչպես պարզել է քննությունը: Յոթանասինց թարգմանությունը երբայական տեքստի MNI-ն ընդունել է որպես դերանվան ձև՝ մի նախդիրով, մինչդեռ խոսքը Մրննի երկրի՝ ուրարտացիների Մամայի մասին է (հմմտ. Dr. Vahan Inglizian, Armenien in der Bibel, էջ 4 և 77):

¹ Երեմիա ՄԱ, 27:

² *Ἐπιραθ* ընթերցվածքը բավական հաստատ է, տես The Old Testament in Greek, ed. H. B. Swete, Genesis, X, 2-3:

³ A. H. Sayce, The «Higher Criticism» and the verdict of the Monuments, էջ 153:

իր երկն սկսում է հայտարարելով, թե ինքը գրում է «Ասքանազյան ազգի և Հայոց աշխարհի» գրերի պատմությունը:

Մի երրորդ ծագում՝ Արամի մի որդուց, որ վերագրում են հայերին, փաստերին անհարիր կարծիք է և չարժե ուշադրություն դարձնել դրա վրա¹:

Միայն բորգոմյան դրույթը կարող է մեր ուշադրությունը գրավել, որովհետև, առանց նրա հեղինակին հայտնի լինելու, այն իր մեջ որոշ պատմական հիմք է պարունակում, քանի որ մեզ մտածել է տալիս փոյուզացի Գուրդիի բազավորության՝ Թեգարամայի կամ Թիլ-Գարիմնուի մասին: Այստեղ մենք ապագա Փոքր Հայքի տարածքում ենք: Թեպետև Գուրդիի հիմնադրության պատմությունը դեռ կորած է մթության մեջ, բայց և այնպես, դա չի խանգարում ենթադրելու, որ Գուրդիի իշխանության ներքո գտնվող փոյուզացիները, եթե նրանք չեն նույնանում հայերի հետ, համեմայն դեպս, իրենց մեջ ունենին հայկական տարրեր, որոնք Թեգարաման փոխեցին Փոքր Հայքի և այնտեղից, որպես հաստատուն հենակետից, անցան Եփրատը, որպեսզի Ուրարտուն փոխեն Մեծ Հայքի:

Սա ինչ-որ անհիմն ենթադրություն է: Բարեբախտաբար, ուրարտական գրականությունը ցույց է տվել մուշկ-փոյուզացիների ներթափանցման որովագներից մեկը Ուրարտու: Ուրարտուի բազավոր Ռուսա II-ը, որն իշխում էր մոտավորապես 680-648 թվականներին, ուրեմն՝ Գուրդիից քիչ հետո, Արծկե (Ադեյզկազ) № 153 արձանագրության մեջ հայտնում է, որ կռվել է հեռակալ ժողովուրդների դեմ. Lulain-ani, Muški-ni, Hâte, Haliçu: Տեքստը շատ աղճատված է և հնարավոր չէ հանդիպման վայրն իմանալ: Համեմայն դեպս, այն գտնվում էր Մալաթիայից Արք տանող ճանապարհի վրա՝ Վանա լճի ափերին: Նշանակում է, ներխուժումը կատարվել էր Թեգարամայից:

¹ Հովսեփոս Փլավիոս, Հրեական հնախոսություն, I, § 93-Թուրքեր, I, էջ 20, հայերին Արամի որդի Ուրուի սերունդն է համարում: Ըստ Հիպպոլիտոսի՝ Ուրուը լիդիացիների նախահայրն էր, իսկ նրա եղբայրը՝ Ուերը, 'Երբաօու-ների նախահայրը: Հնարավոր է, որ 'Երբաօու-ներին շփոթել են 'Արմեոու-ների հետ: Ուրեմն, այս հարցին կարելի է մասնակից դարձնել Նիկողայոս Գամսակացուն, եթե նա է Հովսեփոսի այս տեղիի հիմքը: Նիկողայոսը, մի մոտավորապես 30 թ. Ք. ա.: Նա լավ գիտեր, որ հայերը Տիգրանի դասերի սիրիական-արամեական Միջագետքի վրա: Դա կարող է նրան դրոշմ լինել հայերին դասերի դաստիարակն էր ժողովուրդների շարքը: Հռոմեական կայսրության սասնամը, ինչպես երևում է, մեկ-մեկուսիքների կողմից նկատվում էր որպես սասնամագիծ հարեթական ու սեմական ցեղերի միջև: Հիպպոլիտոսի օրոք Հայաստանը Կարակալայի ժամանակից ի վեր Հռոմի գերիշխանության ներքո էր գտնվում: Դրա համար էլ սեմական ժողովուրդներին նա տեղավորում է Մարասանից արևելք, մինչդեռ Հովսեփոսի համար Հարբիի և Մեմի որդիները բաժանված էին Տավրոս-Ամանոս-Եփրատ գծով: Դեռ շատ հեռու էին ռասայի ընթանումից կամ չգիտեին ժողովուրդներին խմբավորել ըստ ռասայի հատկանիշների:

Լուրիհնի ժողովուրդ ուրիշ տեղ հայտնի չէ: Գուցե կապ ունի Կիլիկիայի դրան՝ բյուզանդական դրյակ Լուրնի հետ: Խաթեն ներկայացնում է խեթերին, Մուշկին՝ փոյուզացիներին, անշուշտ, Թեգարամայի փոյուզացիներին, իսկ Խալիտուն՝ ալիզոններին (?):

Ալիզոնները կամ ալազոնները, սկյութական մի ցեղ, երբեմն բնակվում էին Հիպանիսի (Բուզ) հովտում, որտեղից իջել էին Թրակիա, հետագայում անցել Փոքր Ասիա: Նրանք ամենուր հետքեր են թողել՝ Թրակիայում, Հերոսի ավազանում, Մակեդոնական Խալկիդիկայում, Փոքր Փոյուզիայում և, վերջապես, Փոքր Հայքի մոտ, Ալիք երկրում¹:

Միևնույն ճակատագրին արժանացան կիմմերական ցեղին պատկանող տրերները: Նրանք նույնպես Հիպանիսի շրջանից հեռացել էին Թրակիա, ուր տեղավորվել էին օդրիսների հարևանությանը՝ միջին Հերոսի վրա: Անցնելով Փոքր Ասիա՝ նրանք գրավում են Մարդես քաղաքը. գուցե, Տրալլես (Ալդին) և Տրալլա քաղաքները պահում են նրանց հիշատակը: Եթե Թռեղք գավառի անունը որևէ կապ ունի նրանց անվան հետ, ապա նրանք նույնիսկ հասել են Հայաստան²:

Ալիզոնները և տրերները, թվում է թե, ապրել են փոյուզացիների՝ Թրակիայից Փոքր Ասիա ներխուժման հետ կապված իրադարձությունների ժամանակ: Թրակիայի մի ուրիշ ժողովուրդ՝ օդումանները, որոնք զբաղեցրել էին Օրբելուս լեռան ստորոտում Ստրիմոնի գետաբերանը, նույնպես երևան են գալիս Փոքր Ասիայում Միմոսի մոտ և Հայաստանում, ուր Ալիլիսեն էին

¹ Հռոմեոսը, Իլիական, II, 857, ճանաչում է 'Ալիզոն... էջ 'Ալսֆոց, ծծեւ 'արցւրոս էօտի չեւեճղ. [Ալիզոններին... Ալլուրից, ուր ծնվում է արծաթը]: Մրանք Հերոդոտոսի 'Ալազոնեց-ներն են (IV, 17 և 52), սկյութական մի ցեղ, Տիրասի և Հիպանիսի միջև: Ստրաբոնը (XII, 3, 20-27), բազմաթիվ հեղինակներից օգտվելով, ինչպես՝ Հելլատեսից, Դեմոստրիոս Սիկապիացուց, Պալլադիոսից, հաղորդում է, որ ալազոնները բնակվում էին Փոքր Փոյուզիայում, Կիզիկոսի մոտ, Ալոն քաղաքում: Սիկապիոս քաղաքի մոտ կա մի գյուղ, որը կոչվում է Ալազոնիա: Ալազոններ կային Քաղկիդիկեի Պալլենեում: Մի գյուղ՝ Ալազիա, Միզոնիայում (Մուղանիա)՝ Փոյուզիայում էր: Th. Reinach-ը, «Revue celtique», XV, 1894, էջ 209, տարօրինակ կերպով Հռոմեոսի Ալիքը տեղադրում է Իսպանիայում: Ուրիշներ մտաբերել են Բուզար-մաղանը Կիլիկիայում, ուր կան արծաթի հանքեր: Ալիլի հավանական է, որ Ալիքը և Խալիքը նույնն են (հմտ. Խալդի և Ալդի՝ Ուրարտուի աստծու անունը): Գույումուշյանեն (արծաթի հանք) կարող է լրիվ համապատասխանել բանաստեղծի 'արցւրոս չեւեճղ-ին: Ժողովուրդի անունը ոչ մի կապ չունի ոչ 'Ալազոն-ի (պարծենկոտ), ոչ էլ 'Ալիզոն-ի (ծովի կեղևաված) հետ: Վ. Տոմաշևիկը (Pauly-Wissowa) Alizones անվան երկրորդ տարրի մեջ տեսնում է իրանական zana-ն:

² Ստրաբոն, XIII, 1, 8, XIV, 1, 40, տրերների մասին, նյութեր օդրիսների մասին և նրանց ներխուժման Փոքր Ասիա: Պաղոմենոս, IV, 36, 5, Ստրիմոնի տրերները Թրակիայում: Թռեղք, գավառ Գեպարների՝ Աշխարհացույց, էջ 38, այժմյան Թրիպլեթը՝ վրացիներն, Վ. Տոմաշևիկը Թռեղքը նույնացնում է Թրիթեթ-ի հետ՝ Die alten Thraker, «Sitzb. der Kais. Akad. d. Wiss. in Wien, Bd. CXKXVIII» և Pauly-Wissowa, «տրերներ» բառաբանումով:

մերձակա շրջանը կրում է Օդոմանտիս նշանակալից անունը, և Փոքր Հայքի երկու գավառներ կոչվում են Օրբիսենե և Օրբալիսենե¹:

Վերջապես, Փոքր Ասիայում և Հայաստանում կան համանուն բնակավայրեր, ինչպես Սատալա, Էրիզա Փոյուզիայի սահմանների վրա, Կաբալա՝ Լիդիայում, Կիլիկիայում և Հայաստանում, Հարպասոս՝ գետ Կարիայում և Հայաստանում²:

Տեղանվանական մանությունները, հավանաբար, խոսում են էթնիկական տեղափոխման մասին՝ արևմուտքից արևելք, և դրանով նպաստում Հեռոդոտոսի վկայությանը՝ հայ-փոյուզիական ցեղային հարաբերության վերաբերյալ:

Թեսալական տեսությունը Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակից է գալիս: Նրա հեղինակները Ալեքսանդրի բանակի երկու զորահրամանատարներն են՝ Կիրսիլոս Փարալագին և Մեդիոս Լարիսացին:

Այս հեղինակների գործը մեզ չի հասել: Մենք նրան ծանոթ ենք միայն հետագա գրողների մեջբերումներից: Հայերի թեսալական ծագման մասին եղած կարծիքը փոխանցվել է երկու իրար ժամանակակից հեղինակների՝ նշանավոր աշխարհագետ Ստրաբոնին և պատմիչ Հուստինոս-Տրոգոս Պոմպեոսին: Նույնիսկ հնարավոր չէ իմանալ, թե նրանք զորահրամանատարների գրքի բնագրից են օգտվել, թե նրանք երկրորդ ձեռքից են ծանոթ: Նախ տեսությունը ամփոփենք, ըստ Ստրաբոնի:

Արմենիա անունը, ըստ այս հեղինակի, գալիս է Արմենիոն քաղաքի բնիկ բնակիչ Արմենոսի անունից: Արմենիոն քաղաքը Թեսալիայում է գտնվում, Բոյրենյիս լճի մոտ, Փերեսի և Լարիսայի միջև: Արմենոսը մասնակցել է Յասոնի արշավախմբին, որը դեպի Կողքիս կատարած իր ճանապարհորդության ժամանակ հասել է մինչև Կասպից ծով, անցնելով Իբերիան, Ալբանիան, Մեծ Հայքի և Մեդիայի սեծագույն մասը, ինչպես այդ վկայում են Յասոնին նվիրված սրբավայրերը (Jasonia) և այլ բազմաթիվ հուշարձան-

ներ: Արմենոսի ուղեկիցները մասամբ գրավել են Ալիլիսենեն, որը մալսապես գրավված էր ծովացիներից, մասամբ էլ՝ Սու(ս)պիրիտիսը մինչև Կալքենե և Ադիաբենե, Հայաստանի սահմաններից դուրս:

Յասոնի պատվին կառուցած Jasonia-ները մասամբ ավերվել են հետագա իշխանների կողմից, ինչպես, օրինակ, Պարմենիոնը ոչնչացրել է Յասոնի տաճարը Արդերայում¹:

Հայկական Արաքսն այդպես է կոչվել ի մանություն Թեսալիայի Պենետոս գետի, որը հնում կոչվում էր Արաքս, որովհետև նա անցք էր բացել Օսսա և Օլիմպոս լեռների միջև Թեմպեական դաշտի միջով՝ ծով քափվելու համար: Հայաստանում Արաքսը, լեռներից զահավիժելով, հին ժամանակ ողողում էր դաշտը և, ելք չգտնելով, ընդարձակ ծով էր կազմել: Յասոնը, Թեմպեի օրինակով, իբր թե ճեղքվածք է բաց արել և ջուրը հոսեցրել դեպի Կասպից ծովը: Այդ կերպով Արաքսյան դաշտը ազատվել է ջրից, և Արաքսն իր ընթացքը շարունակել է դեպի ծով²:

Աինիանները, որոնք ապրում էին Թեսալիայի հարավում և այնտեղից ետ մղվեցին դեպի Օիտա լեռը՝ Աինիանայի շրջանում, գաղթել են Ուիտիա և այնտեղ հիմնել Աինիանա քաղաքը: Այդ ժողովրդի մի մասը տեղավորվել էր Հայաստանի վերևում, Տավրոսի ճյուղ Արոսից և Հիբարոսից այն կողմը: Արոսն իշխում է այն ճանապարհի վրա, որը տանում է դեպի Էկրատան՝ Բարիսի տաճարը³:

Տրոգոս Պոմպեոսը Ստրաբոնի ժամանակակիցն է, և նրա պատմական գործը մեզ հասել է Հուստինոսի համառոտագրությամբ, որը երկրորդ դարի հեղինակ է: Հուստինոսը Կիրսիլոսին և Մեդիոսին չի հիշատակում, բայց այն, ինչ պատմում է հայերի ծագման մասին, գալիս է այդ պատմիչներից:

Նրա համար նույնպես թեսալացի Յասոնի ուղեկից Արմենիոսը Հայաստանի թագավորության հիմնադիրն է: Թեսալիայի թագավոր Պելիասը, ցանկանալով ազատվել Յասոնի մեծ վտանգավոր մրցակցից, նրան ուղարկում է Կողքիս, հրամայելով փնտրել հռչակավոր Ոսկեգեղմը: Նա հույս ուներ, որ Յասոնը կկործանվի այդ վտանգավոր ճանապարհորդության ընթացքում: Յասոնը քաջարի ընտրյալ երիտասարդների զլուխն անցած, հաջողությամբ կատարում է հանձնարարված առաջադրանքը: Երբ վերադառնում է, Պելիասի որդին նրան արգելում է երկիր մտնել: Յասոնը բռնում է վերադարձի ճանապարհը և գնում Կողքիս՝ իր Մեդեա կնոջ ուղեկցությամբ, որը Կողքիսի թագավորի դուստրն էր: Մեդեայի՝ Աթենքի թագա-

¹ Հեբրոդոտոս, V, 16, VII, 112. 'Οδομάντο: Թուկիդիդես, II, 101՝ Սինուպում: Ստրաբոն, XII, 3՝ էպոնիմ "Οδομος-ը Արեսի կամ Պայոնի որդին է (33): Հեբրոդոտոս, V, 16՝ "Ορβηλος: Դիոդորոս, XX, 19: Ստրաբոն և Պտղոմեոս, III, 9՝ "Ορβηλια: (34): Պտղոմեոս, V, 6՝ "Ορβιστήνη, "Οδβαλισηγή Փոքր Հայքում:

² Ramsay, Asia Minor, էջ 45 և շար., Էրիզա Ինդոսի (Դալաման) ակունքի վրա, նրա եպիսկոպոսը Քաղկեդոնի ժողովում՝ 451 թ.: Հիբրոկլես "Ερεζος: Ազաբանգեղոս, էջ 30, Երեզնաան, էջ 409՝ Գիլ Երիզայ, Ալիլիսենեի կենտրոն, այժմյան Էրզինզան (Երզնկա): Սատալա (այժմյան Սանդալ), Սարդիսից արևելք: Պտղոմեոս, V, 2, 17: Ramsay, Asia Minor, էջ 30: Սատալ՝ Ալիլիսենեի սահմանի վրա: Փավստոս, III, 7 և 21: Cumont, Studia Pontica, III, № 34: Καβάλεοι՝ Լիդիայի ժողովուրդ: Հեբրոդոտոս, III, 90: Cedrenus, II, էջ 266, հրատ. Bonn: Ramsay, ճշվ. աշխ., էջ 359: Κάβαλις Պիսիդիայում: Ramsay, ճշվ. աշխ., էջ 252: Κάβαλλα Հայաստանի Հիսալիտիսում: Ստրաբոն, XI, 14, 9 - Հայ հեղինակների Սպիեր, այժմյան Իսպիրը:

¹ Ստրաբոն, XI, 18, XI, 14, 2:

² Նույնը, XI, 14, 13:

³ Նույնը, II, 3, 21; IX, 5, 22; XI, 7, 1; XI, 14, 14:

վորի հետ առաջին անուսնությունից ունեցած որդին՝ Մեդոսը, նույնպես իր հետ էր: Յասոնը հաշտվում է իր աներոջ հետ: Այս պատերազմ է վարում ու նվաճում բոլոր հարևան ժողովուրդներին:

Հերակլեսից և Լիբերից (Բարոս) հետո, որ երբեմն իշխում էին, ինչպես ասում են, Արևելքում, Յասոնն առաջինը եղավ, որ հպատակեցրեց Արևելքը: Նրա պատվին տաճարներ կառուցեցին՝ ինչպես մի ասածո: Սակայն Ալեքսանդրի գորավար Պարմենիոնը քանդել ավեց այդ տաճարները, որպեսզի ոչ ոք չկարողանա ուրանալ Ալեքսանդրի փառքն Արևելքում: Յասոնի մահից հետո Մեդոսը ի պատիվ իր մոր կառուցեց Մեդեա քաղաքը և ստեղծեց մեդացիների թագավորությունը՝ Արևելքի հզոր պետությունը:

Արմենոսը, որը նույնպես Թեսալիայից էր և Յասոնի գորավարներից մեկը, հավաքեց այն զորքերը, որոնք Յասոնի մահից հետո թափառում էին ամենուրեք, և հիմնեց Հայաստանի թագավորությունը¹:

Կիրսիոսն ու Մեդոսը, ինչպես երևում է, շոշափել են նույնպես մեդացիների ծագումը և նրանց բխեցրել են Մեդեայի որդի Մեդոսից: Ստրաբոնը նույնպես չի անգիտանում այս կետը²:

Մի ոմն հեղինակ Անտիպատրոս, որն այլպես անձանոթ է, համաձայն է թեսալիացի պատմիչների հետ, թե հայերը սերում են Արմենոսից, բայց նրան Հոռոսի քնիկ է համարում և ոչ Թեսալիայի³:

¹ Հատիկոս, XLII, 2, 3:

² Մտաքոմ, XI, 14՝ τοῦ Μήδου καὶ Ἀρμενίου συγγενεὶς πᾶς τοῖς Θετταλοῖς εἶναι καὶ τοῖς ἀπὸ Ἰάσονος καὶ Μεδείας: [Մարբն ու հայերը թեսալացիների ինչ-որ ազգակիցներ են, ինչպես նաև (նրանց, ովքեր սերել են) Յասոնից և Մեդեայից]:

³ Անտիպատրոսը հիշատակված է Մտեփանոս Բյուզանդացու կողմից՝ Ἀρμενία քառի տակ: Frag. Hist. Gr. IV, 306: Նա նշում է նաև Եվդոքոսին, բայց չի հիշատակում Հերոդոտոսին, ոչ էլ թեսալիացի պատմիչներին:

Եվստաթիոսը, Թեսալոնիկեի եպիսկոպոսը (մահ. 1193 թ.), երկրորդ դարի հեղինակ, Դիոնիսիոս Պերիեզետեսի «Աշխարհի նկարագրության» մեկնության մեջ վկայակոչում է կատարում հայերի ծագման մասին եղած կարծիքներից՝ 1. ἀπὸ τινος Ἀρμένου Ροδίου ἀνδρός, [ինչ-որ հռոդոսի Արմենոսից] առանց նրա հեղինակ Անտիպատրոսի անունը տալու:

2. κατὰ δὲ ἄλλους Ἀρμενία ἡ χώρα λέγεται ἐπονύμως Ἀρμένου ἥρωος ἐξ Ἀρμενίου πόλεως Θετταλικῆς, συστρατεύσαντος ἐκεῖ τῷ Ἰάσονι, [ըստ ուրիշների, «Արմենիա» երկիրն այդպես է կոչվել համոն Արմենոս քաջամեծի՝ Թեսալիայի Արմենոս քաղաքից, որն այնտեղ[ից] մասնակցեց Յասոնի արշավանքին]: 3. ἰστέον δὲ Ἡρόδοτος τοῦ Ἀρμενίου Φρυγῶν ἀποίκους φησὶ, [պետք է իմանալ, որ Հերոդոտոսը հայերին համարում է փոյուզացիների գաղթականներ]: Նա ավելացնում է Եվդոքոսի վկայությունը, հավանաբար ըստ Մտեփանոս Բյուզանդացու, որտեղից նա փոխ է առել Անտիպատրոսի կարծիքը:

352

Ի՞նչ արժեք ունեն այս տեղեկությունները պատմական առումով: Ստրաբոնի նման քննադատական մի միտք արժևորել է թեսալական տեսությունը, ի նպաստ դրան իր կողմից ավելացնելով մի քանի գծեր, որոնք ընդհանուր են թեսալացիների և հայերի համար: Օրինակ, երկու ժողովուրդների գործածած հագուստները՝ լայնաձիգ պատմուճանը, որ որդերգությունների մեջ կոչվում են թեսալական և կապում են կրծքներին, ու այն վերարկուն, որ դերասանները հագնում են թեսալական ձևով. ձիավարության կիրքը, որ նույնպես ընդհանուր է թեսալացիների և հայերի համար, ինչպես նաև մեդացիների:

Հակառակ նշանավոր աշխարհագետի հեղինակությանը, Կիրսիոսի և Մեդիոսի տեսությունը քննադատության դիմանալ չի կարող: Նա հիմնված է մի քանի թեսալական անունների մերձեցման վրա՝ Արմենիոն, Յասոնիա, Արաքս, Աինիանե, Օիտա, որոնք ենթադրաբար գործածվում են նաև Հայաստանում: Այդ դրույթի համար հրապուրիչ կետ է, անշուշտ, Ἀρμενία-ի համեմատությունը Ἀρμένιον-ի հետ, որը կարող էր վարկ ունենալ, եթե քմահաճ զուգահեռի մեջ դրված չլիներ Μηδία-ի և Μηδεια-ի համեմատության հետ: Դրան մենք կամդրադառնանք: Ἰασόνιον - Յասոնի սրբավայր, պակաս ազդեցություն չի գործել թեսալացի հեղինակների վրա: Նրանք, անշուշտ, տեղական մի բառ են գտել, որ նշանակում էր «սրբավայր», և ընդունել այն որպես Յասոնիոն: Որոշ խարխափումից հետո կարելի է եղել տվյալ բառի իմաստը մշտել: Դա jazana բառն է, որի պարսկական ձևն է՝ à-yadana, yaz «զոհել» բառից: Jazana - զոհաբերության վայր, «տաճար»՝ համապատասխանում է սանսկրիտ yazana-ին¹: Թեսալացի գորականները yazana-ում տեսել են հունարեն (τά) Ἰασόνια «Յասոնի տաճար»-ը և Յասոնին դարձրել երկրի հերոս:

Արաքս անվան վրա հիմնված փաստը կորցնում է իր արժեքը, քանի որ այդ բառը գործածվում է ոչ բացառապես Թեսալիայում և Հայաստանում, այլ շատ ուրիշ երկրներում: Սկյութները, կիմերները գործածել են Արաքսը այժմյան Վուզայի համար: Դա Պոնտոսում Թերմոդոնի հին անունն է: Միջազգային խարտր գետը այլ ձևով Արաքս է կոչվել: Պարսկաստանի

¹ H. Kiepert-ը, Lehrbuch der alten Geographie, § 70, առաջինն է հսկայացի Յասոնիայի ծագումը, բայց սխալմամբ վերագրել է Yasna-ին: A. J. Reinach-ի, Noe Sangariou, 1913, էջ 61-62, կարծում է, թե «յասոնիաները պետք է որ հայկական մեծ yazatas-ներից մեկի տաճարները եղած լինեն, զուցե՝ Վահագնի»: Յո. Մարկվարտն էր, Südarmenien und Tigrisquellen, 1930, էջ 535, որ առաջարկեց yazana: Դարեհը, Բահիստանի (Բիստուն) արձանագրության մեջ, տող 14, խոսում է ayadana «տաճարներ»-ի մասին: Սպասված ավիստական ձևը պետք է որ yazana լինի, որ երաշխավորված է սանսկրիտ yazana-ով: Այնուհանդերձ, մի էական կետ լուսաբանվելու կարիք ունի. ո՞րտեղից է հայերից հասել yazana-ն: Արդյո՞ք մարական փոխառություն է, որնեմ Արմենիայի տիրապետությունից առաջ:

մայրաքաղաք Պերսեպոլիսը նույնպես ուներ իր Արաքսը: Նույնիսկ Իլլիրիայի մի ժողովուրդ Araxi անունն էր կրում¹:

Գալով այն ավանդության, թե իբր Արաքսի հովիտը հեռավոր ժամանակներում լիճ կամ ճահիճ էր կազմում, և թե այն չորացել է ջրերի դեպի Կասպից ծովը ճանապարհի բանալու հետևանքով, դա երկրաբանական տեսակետից ինչ-որ հիմք ունի, բայց Յասոնն այստեղ վճռականապես դեր չունի²:

Թեսալիայի Աինիանեի և Օիտայի բաղդատունը Հայաստանի Աինիանայի և Ուիտիայի հետ՝ գուտ ենթադրական է: Ուիտիան՝ Օտենեն է, Ուտին՝ հայկական հայտնի մահանգներից մեկը: Աինիանան, հավանական է, Հանին է՝ Փայտակարանի գավառներից մեկը: Փայտակարանը հայկական մահանգ է Արաքսի ստորին հոսանքի վրա³: Ուտին հայկական ժամանակաշրջանում չէր տարածվում մինչև Արաքսը, բայց հայտնի չեն նրա սահմանները թեսալացի գորականների ժամանակ: Համենայն դեպս, Հերոդոտոսի *Օծտիօս* ժողովրդի մասին չէ խոսքը՝ Գարեեի արձանագրությունների Yantiya-ի, որը վրամաբնակ մի ցեղ էր: Թեսալիայի աինիանները պետք է որ տեղավորված լինեին Արոսի և Նիրարոսի վերևում: Անշուշտ, մարդ հակ-

¹ Սկյութների Արաքսը, Հերոդոտոս, IV, 16, կամ Մասագետների մոտ, Ստրաբոն, XI, 11, 6: Հերոդոտոսը, ակներևաբար, Մանայի սկյութներին շփոթել է տափաստանի սկյութների հետ, ասելով, թե Արաքսի (Վուլգայի) ակունքը գտնվում է Մասիենն երկրում (Ուրմիա լճի մոտ): Թերմոդոնի հին անվան մասին տե՛ս Տիգրանի պատմագիր Մտրոդոտոս Սկեպսացու մոտ: K. Müller, Fragm. Hist. Graec., III, էջ 204: Արաքս՝ Պարսկաստանում, Ստրաբոն, XV, 3, 6: Արաքս՝ Լիկիայում, Polyhistor: K. Müller, նույն տեղում, III, էջ 235: Պելոպոնեսում՝ Ստրաբոն, VIII, 2, 3: Պլինիոս, VI, 13: "Αραξοι կամ "Αραξοι Իլլիրիայում, Polyhistor, քաղված Ստեփանոս Բյուզանդացու կողմից:

² Արտաքսերքսեսի ժամանակակից Զանգրոն արդեն այն կարծիքն է հայտնել, որ Հայաստանի դաշտերը ծածկված են եղել ծովով: Ստրաբոն, I, 3, 4: Հ. Լինչը նույնպես նույն կարծիքին էր՝ Armenia, II, էջ 404: Թեսալացի պատմիչներն ուզեցել են ասել, թե Արաքսն իր անունն ստացել է հունարեն *ἀράσσω* կամ *ράσσω* («ժարվածել, բախել») բայից, ինչպես *Καταστροφή*, Փոյուդիայի գետը: Հերոդոտոս, VII, 26: *Τάσσω*-ից ստացվում է *τάξις*, *ἀράσσω*-ից էլ կարելի է սպասել *ἀράξης*, *ἀραξός*, aragh-ից s-ի հավելմամբ: Իրաներեն aragh-s կամ ragh-s կտար araxša, raxša, ինչպես baxša՝ bag-s-ից, taxša՝ tag-s-ից: Հայերեն Երասխ-ը անեղծվածային է, գուցե, հունական և իրանական ձևերի միացումն է: Հայերենի սպասված ձևը Արած կամ Էրած կլինեին: Ժողովրդական Արազ-ը հայտնի է արդեն Թեոփիլակտես Սիմոկատային (III, 6, 16): Արդյոք այն Արածի՞ց է, թե պարսկական արդի Արազ ձևից: Մենք կարծում ենք, որ այն վայրի անունը, որ Ագաքանգեղոսի մոտ (էջ 315) անվանված է Երազ-ամոյն, պարունակում է Արազ-Արաքս-ը և կազմված է ծովամոյն-ի նման (հմտ. արդի Արագդայանը): Պատմիչը տեսել է այստեղ երազ (eraz) բառը և Տիրին դարձրել է երազահան աստված: Յո. Մարկվարտը (Südarmenien, էջ 15-16) օժանդակ է Իրան-ի ark «փայլել» և rigo «տոռգել» ձևերից:

³ Աինիանի նույնացումը Հանիի, Անիի հետ պատկանում է Ֆ. Անդրեսսին, Pauly-Wissowa:

վում է մտածելու Կամսարականների ամրոց Անիի մասին, որը հետագայում դարձավ Բագրատունիների մայրաքաղաքը¹:

Ստրաբոնի դիտողությունները, որպես բանահյուսական նյութ, հետաքրքրական են, բայց դրանց նշանակությունը շատ է նվազում, երբ վկայակոչվում են երկար հագուստները, որոնք ցուրտ երկրներում ընդհանուր գործածության առարկա են:

Հարցի առանցքը, իհարկե, ենթադրյալ հարաբերությունն է Արմենիոն անվան և Հայաստանի (Արմենիա) միջև: Հոմերոսը Թեսալիայի քաղաքը կոչում էր Օրմենիոն: Արդյոք դա նույն Արմենիոնն է, թե դրանից տարբեր է: Հարցը վիճելի է: Անուններն, այնուհանդերձ, նույնն են: Դա մեզ համար բավական է: Հոմերոսը երկու անձնավորություններ է ճանաչում, որոնք Օրմենոս անունն են կրում²: Բացի այդ, Արմենոսը թեսալական անուն է՝ վկայված մի արձանագրության մեջ³: Հետաքրքիր է նկատել, որ Եփեսոս քաղաքն, ըստ Հեսիքիոսի, կոչվում էր *'Αρμένη*: Մինոսի ծովածոցը նույնպես ծանոթ է *'Αρμένη* կամ *'Αρμήνη* անվան ներքո: Պափլագոնիայի մի գյուղ կոչվում էր *'Αρμένη*, և այն լեռնաշղթան, որը բարձրանում է Թուրքիայի մայրաքաղաք Անկարայի հյուսիսում, նույնպես կոչվել է *'Ορμένιον δροσ*⁴:

Ընդունենք, որ օ-ով ձևը նախնական է և հետագայում օ-ն փոխվել է ա-ի: Համենատվող անունների ստուգաբանությունը հայտնի չէ, և ոչինչ չի կարելի ասել դրանց հարաբերության մասին լեզվաբանական տեսակետից: Սակայն պատմաբանները լուրջ առարկություն են հակադրել: Նրանք ասում են, թե հայերի անունը առաջին անգամ երևան է գալիս Գարեեի արձանագրության մեջ Armina «Հայաստան» և Arminiya «հայ և Հայաստան» ձևով, և թե այդ անունը պարսիկներից է անցել հույներին⁵: Այդ

¹ Արսո լեռը Սրմանցի զանգվածն է, թրքական Բին-գյուլը և մինչև Արարատ երկարող լեռնաշղթան: Արսոն իր անունը ստացել է, գուցե, ջրերի աստված Ալամից (Նապատ), ինչպես Նապոտը՝ Νιφάτης (Ալամ) = նապտ:

² Հոմերոս, Իլիական, II, 734՝ *'Ορμένιος*, VIII, 274. *'Ορμενος*՝ սպանված Թևկրոսի կողմից, XII, 187՝ մեկ ուրիշ Օրմենոս. X. 266 և Ոդիսական, XV, 414՝ *'Ορμενίδης*: Դեմետրիոս Սկեպսացուց ի վեր, ինչպես գրում է Ստրաբոնը, IX, 5, 18, Օրմենիոնը և Արմենիոնը նույնացվել են (35): Նույնիսկ մի անվանադիր է հնարվել՝ Թեսալիայի թագավոր Օրմենիոսը, որի աղջկա հետ ամուսնացել էր Հերակլեսը, Դիոդորոս, IV, 37, 4:

³ Revue Epigraphique, I, 1913, էջ 73 և 205:

⁴ Պաղոսեոս, V, 1, 3: Այդ լեռն այժմ կոչվում է, ըստ Կ. Մյուլլերի, Օրմենոս, թուրքական քարտեզում՝ Իշիկ-դաղ: Արմենն գյուղ՝ Ստեփանոս Բյուզանդացու մոտ:

⁵ Բանիստանի (Բիստուն) արձանագրության մեջ՝ Armina «Հայաստան», Arminiya «հայ»: Arminiya-ի օգտագործված է այնպիսի դեպքում, երբ խոսքը մի ամրոցի մասին է՝ dida Arminiya-ի «ամրոց Հայաստանում» կամ ավելի ճիշտ՝ «հայկական երկրում»: Ch. Bartholomae-ն, Altiranisches Wörterbuch, էջ 197, նման դեպքերում կարդում է Armaniya-ի հակառակ F. H. Weisbach-ի, Die Keilinschriften der Achämeniden, որը կարդում է Arminiya-ի: Նոր-էլամերին

դեպքում այլևս չի կարող առաջանալ այդ անվան թեսալական և ընդհանրապես արևմտյան ծագման խնդիրը: Այդ տեսակետը միահամուռ ընդունվում է, բայց մեր կարծիքով՝ իզուր:

Հեկատոնսը իր գործը գրել է Դարեհի արձանագրությունից առաջ, և նա հիշատակում է 'Αρμένιοι': Հույները հայերին ճանաչելու համար պարսկական միջնորդության կարիքը չունեին: Նրանք Սև ծովի ափին, հայերին մոտիկ, ծաղկուն, բարգավաճ գաղութներ ունեին: Բավական է միայն նշել Տրապիզոնը, որ հույներն էին հիմնել և որը ծառայում էր որպես ապրանքափոխանակության գլխավոր կենտրոն ներքին երկրների հետ, ներառյալ Փոքր և Մեծ Հայքը: Ըստ Եվսեբիոսի մոտ պահպանված ավանդության, Տրապիզոնի հիմնադրումը տեղի է ունեցել VIII դարում (Ք. ա.), ուրեմն՝ ուրարտական դարաշրջանում: Այդ հունական ծովային գաղութները կապված էին իրենց մայր-երկրի հետ: Բնականաբար, այդ գաղութների միջոցով է, որ հայերի անունը հասել է հույներին, գուցե, ավելի առաջ, քան մարերի և պարսիկների հետ ծանոթանալը:

Ի վերջո 'Αρμένιος հունական ձևը ավելի հին է, քան պարսիկների Armina-ն, որտեղ -en-ը փոխվել է -in-ի: Այսպիսով կվերանա մի անճիշտ առարկություն: Անշուշտ դա ոչնչով չի նպաստում Կիրսիլոսի և Մեղիոսի դրույթին: Եթե նրանք ոչ միայն ապացուցող հեղինակներ են, այլ նաև դրույթը առաջադրող, ապա նրանց գործը տանուլ է տված, որովհետև ապացույթը բավարար լուրջ չէ: Սակայն հնարավոր է, որ դրույթը նրանց հնարածը չէ, այլ մի ավանդություն է, որը նրանք աշխատել են հիմնավորել: Այդ դեպքում փաստարկի թուլությունը իրավունք չի տալիս մերժել ավանդությունը: Գուցե, Հերոդոտոսի առաջ քաշած ավանդությունն է նրանց ոգևորել: Անհավանական չէ, որ նրանք տեղյակ լինեին իրենց հետաքրքրող հարցի վերաբերյալ Պատմահոր ասածներին: Նրանց տեսությունը չի հակասում Հերոդոտոսի տեսությանը: Նրանց հետաքրքրել է հայերի անվան մնանությունը Օրմենիոն-ին կամ Արմենիոն-ին և այն միտքն է ներշնչել, որ հայերի բաժանումն իրենց տոհմակիցներից տեղի էր ունեցել ոչ թե Փոքր Ասիայում, այլ հենց Թրակիայում, որից հետո հայերը մախ հաստատվել են Թեսալիայում, իսկ հետագայում անցել Փոքր Ասիա և Հայաստան:

Դժբախտաբար, Կիրսիլոսն ու Մեղիոսը մեզ ծանոթ են միայն ըստ Ստրաբոնի մեջբերումների: Նույնիսկ վստահ չենք, թե նա իր տեղեկություն-

ները չի՞ քաղել միջնորդ աղբյուրից՝ Տիգրանի պատմագիր Մետրոդորոս Սկեպսիացուց կամ Թեոփանես Միտիլենացուց, որն ուղեկցում էր Պոմպեոսին՝ Հայաստանով նրա կատարած արշավանքում: Թե ինչ է մեզ հասել և թե որքան հարազատ է վերարտադրված բնագիրը՝ հայտնի չէ:

Չպետք է մոռանալ, որ մակեդոնացի աշխարհակալը Հայաստան չի մտել, և ոչինչ, ոչ մի փաստ մեզ թույլ չի տալիս ընդունելու այն տարածված կարծիքը, թե նա հպատակեցրել է Հայաստանը: Ուրեմն, այդ ե՞րբ և ի՞նչ առիթով են թեսալացի գորականները կարողացել այցելել Հայաստան և այդքան արժեքավոր տեղեկություններ ստանալ: Նրանք ճանաչում են երկրի սրբավայրերը, շրջանները՝ Ուիտիան, Ալիլիսենեն, Սոֆենեն, Արաքս գետը, Արաքսենեն հովիտը և դրա երկրաբանական անցյալը: Նրանք տեղյակ են Ուիտիայի քաղաք Աինիանայում կատարված հնագիտական հայտնաբերումներին, հելլենական զենքերի մնույններին, պղնձյա առարկաներին և դամբարաններին: Նրանց հայտնի է նաև Անարիակայի պատգամախոսը¹:

Որ Կիրսիլոսն ու Մեղիոսը Հայաստանում անձամբ են հավաքել այս տեղեկությունները, պետք է դրան հավատալ:

Կիրսիլոսը անձամբ դեմք է, որը ոչ մի տեղ այլևս երևան չի գալիս²: Բայց Մեղիոսը Ալեքսանդրի մտերիմ բարեկամներից մեկը լինելու պատիվն է իրեն վերագրել: «Թեսալացի Մեղիոս»-ի մոտ է, որ խնջույքի ժամանակ, կերուխումի չափազանցության հետևանքով, Ալեքսանդրը հիվանդացավ և ողբերգական վախճան ունեցավ³:

Մենք վստահ չենք, որ դա միևնույն Մեղիոսն է, որին էր վստահված մավատորմիդը մախ Պերդիկասի, ապա Անտիգոնոսի ճամբարում: Այդ ծովակալը, հավանական է, իր ասպարեզին վերջ տվեց Անտիգոնոսի անկման հետ միասին, որը 301 թվականի Իպսոսի ճակատամարտի անհաջող ելքից հետո ինքնասպան եղավ⁴: Նա չի հիշատակվում Անտիգոնոսի որդի Դեմետրիոս Պոլիորկեսեսի օրով:

Այդ ժամանակաշրջանում Հայաստանում իշխում էր Արտանդը (Արտանդ, Երուանդ): Նա թագավորական տիտղոս էր ընդունել ոչ ուշ, քան

¹ Ստրաբոն, XI, 7, 1:

² Կիրսիլոս անունը մախօրոք հայտնի է: Այդ անունով մի անձնավորություն քարկածվեց Թեմիստոկլեսիսի հակառակվելու համար: Դեմոսթենես, Oratio de Corona, ed. Voemelius, § 199, էջ 156:

³ Դիոդորոս, XVII, 117, 1:

⁴ Դիոդորոս, XIX, 69, 3. XX, 50, 3, նրա մասին այնպես է խոսում, որ հասկանալ է տալիս, թե նա արդեն հիշատակված անձնավորություն է: Այդ պատճառով հավանական է, որ նա հենց Թեսալացին է:

տեքստը ամենուրեք ունի Har-mi-nu (Harminiu-ya, Harminu-ya-ir, Harminu-ya-ip), մի բան, որ չի հաստատում Armaniyaի ընթերցումը. Arminiyaի ավելի ճիշտ է:

¹ K. Müller, Fragm. Hist. Graec., I, էջ 13: Χαλσιβοιοι κροδς νότον Ἀρμένιοι ὀμοῦρέουσι. [Խալսյուրների հյուսիսային սահմանակիցները «Արմեններն» են]:

306 թվականին՝ Անտիզոնոսի և մյուս դիադոխների հետ միաժամանակ: Անտիզոնոսի հակառակորդ Եվմենեսը նեցուկ էր փնտրում Հայաստանում և թվում է, թե շահել էր Արտանդի բարեկամությունը: Սակայն Եվմենեսի մահից հետո և Անտիզոնոսի գահակալության ընթացքում Հայաստանի թագավորի կողմնորոշումը հայտնի չէ. գուցե, Եվմենեսի օրինակով Անտիզոնոսն ուզեցել է իր կողմը գրավել Արտանդին, նախատեսելով 301 թվականի մեծ ճակատամարտը: Այդ նպատակով էլ, գուցե, Հայաստան էր ուղարկել Կիրսիլոսին և Մեղիոսին: Չուտ ենթադրություն, որը բխում է քաղաքական դրությունից:

3. ՆՈՐԱՐՏԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Ուրարտու պետության կործանումը այն ելակետն է, որից սկսվում է նրա տարածքի փոխարկումը Հայաստանի: Ուրարտուի անհետացման թվականը համարվում է 585 թվականը, և ընդունվում է, որ Կիաքսարի հաղթական բանակի վերադարձից հետո Փոքր Ասիայում վաղուց հաստատված հայերն անցան Եփրատը՝ հանգուցյալի ժառանգության տերը դառնալու համար:

Մենք այդ թվականն ընդունեցինք ոչ առանց վարանման: 521 թվականին հայերն արդեն երկրի տերերն են և զենքի ուժով այն պաշտպանում են Պարսկաստանի թագավոր Դարեհից: 585 և 521 թվականների միջև ընկած ժամանակը բավական չէ այդքան արմատական հեղաշրջման համար: Տեղին է Ուրարտուի անկման թվականը ետ տանել կամ, համեմայն դեպս, հոգեվարքի ժամանակը հաստատել 616 թվականի, երբ սկսվում է պայքարն Ասորեստանի դեմ (որը նրա վերջնական կործանումով էր ավարտվելու 607 թ.) և 585 թվականի միջև, որը Լիդիայի դեմ հնգամյա պատերազմից հետո Մարաստանի տարած հաղթության թվականն է: Ուրարտուն չի երևում այն տերությունների շարքում, որոնք այդ ժամանակաշրջանում առաջին դերերն էին խաղում քաղաքական թատերաբեմում, ինչպես Մարաստանն ու Բաբելոնը՝ մեկ կողմից, Ասորեստանը, Եգիպտոսը և Լիդիան՝ մյուս կողմից: Եթե Ուրարտուն, որը մեծ պետություն էր, դեռևս ուժի վրա լիներ, անշուշտ, իր դիրքը կդռստեր հակառակորդ այն ճամբարների միջև, որոնք մրցում էին մեռնող Ասորեստանին տիրանալու համար: Այդ ճակատագրական պահին, թվում է, Ուրարտուն արդեն փուլ էր եկել:

Միշտ է, որ Նաբոպալասարը 609 թվականին հիշատակում է Ուրարտուն Իզալայի շրջանում իր վարած պատերազմի ժամանակ: Սակայն հայտնի չէ, թե նա այդ անունով հին Ուրարտուն է հասկանում, թե՞ Հայաստանը, նկատի առնելով, որ բաբելոնացիները շարունակեցին երկիրը կոչել հին՝

Ուրարտու անունով, նույնիսկ նրա հայացումից հետո, ինչպես երևում է Բա-հիստանի արձանագրության բաբելոնյան տարբերակից: Այդ նույն Իզալայի շրջանում է, որ 521 թվականին հայերը կոչվում էին Դարեհի դեմ:

Հերոդոտոսը Նինվեի առումը գետեղում է 585 թվականի լիդիական պատերազմից հետո: Այս լուրջ սխալը, հավանաբար, առաջ է գալիս Ուրարտուի դեմ պատերազմը Լիդիայի դեմ պատերազմի հետ շփոթելուց: Նվաճել Ուրարտուն և այդ կողմից ինքն իրեն ապահովելուց հետո հարձակվել 614-612 թվականներին Ասորեստանի վրա, դա, իհարկե, Կիաքսարի համար ձեռնառու էր: Եթե այդպես լիներ, ոչինչ չէր կարող արգելք հանդիսանալ, որ հայերը հենց այդ վայրկյանից Հալիս գետի ակունքից նետվեին դեպի Ուրարտու և տիրեին նրան: Չանգվածային ներխուժման այդ պահն ընդունելով, հեշտ կլինի հասկանալ այն իրողությունը, որի մասին խոսում են թեսալացի պատմիչները, և առաջին հայացքից բավական տարօրինակ է թվում այն, որ հայերը մխրճվեցին մինչև Ասորեստանի սիրտը, մինչև Կալաքենե և Ադիաբենե: Ասորական տերության խորտակման խռովառնյոց ժամանակաշրջանը միայն կարող էր նման հանդուգն քայլերի հնարավորություն ընձեռել:

Կիրսիլոսն և Մեղիոսը պատմում են, որ Արմենոսի ուղեկիցները, այսինքն՝ առաջին հայերը, որոնք անցան Եփրատը, գրավեցին Ալիլիսենեն, Սի(ս)պիրիտիսը մինչև Կալաքենե և Ադիաբենե:

Ալիլիսենեն հայկական Եկեղյացն է՝ Փոքր Հայքի հարակից մարզը, և նրա գրավումը շատ բնական է:

Սիսպիրիտիսը ճորոխ գետի վրայի հայկական Սպերը չէ. քանի որ այն հիշատակված է Կալաքենեի և Ադիաբենեի հետ, պետք է ենթադրել, որ դա Բատման գետի լեռնային շրջանի Շուպրիան է: Կալաքենեն ասորական մայրաքաղաք Կալխուի (այժմյան Նիմրոդ բնակավայրը) տարածքն է, իսկ Ադիաբենեն երկու Չաբերի միջև, Արբելայի շուրջն ընկած երկիրն է: Նկատվել է թրակիական կառուցվածք ունեցող գերեզմանների գոյությունը Մալաքիա - Խարբերդ - Դիարբեքիր գծի վրա¹: Գտնվել է նաև մի քանդակված պատկեր փոյուզիական գլխարկով՝ Դեիր և Հարիր գյուղերի միջև մի ժայռի վրա, Արբելայից հյուսիս²: Այդ անսպասելի հայտնագործությունները ցույց են տալիս հայ-փոյուզիական «արշավողների» շարժման ուղղությունը և ապացուցում են, որ նրանց արկածային առաջխաղացումը մինչև Արբելա բոլորովին էլ երևակայական չէ:

¹ Zeitschrift für Ethnologie, 1901, էջ 181 և 209:

² W. Bolk, Verhandlungen der Berliner Gesellschaft für Anthropologie, 1899, էջ 447:

Հիշենք ևս մի քանի ցեղերի, ներառյալ մուշկերի, ախինքն՝ փոյուզացիների, արշավանքները, ձեռնարկված Ռուսա II-ի ժամանակ, մոտավորապես 650 թվականին: Դա աստիճանական ներթափանցման փուլ է, զանգվածային ներխուժումից առաջ, որը տեղի ունեցավ Ուրարտուի կործանումից հետո, մոտավորապես 615 թվականին:

Ոչինչ հայտնի չէ հայացած Ուրարտուի քաղաքական պայմանների կամ Արեւմեյան ժամանակաշրջանից առաջ եղած փոփոխությունների մասին: Անտարակույս, այն մարական պետության մասն էր կազմում, բայց թե ի՞նչ հիմքերով՝ անհայտ է: Հին պատմագիրների տեղեկությունները մարական պետության և նրա ազդեցության ոլորտում գտնված ժողովուրդների անցյալի վերաբերյալ այնքան թերի են, որ անհնար է այնտեղից որևէ ստույգ բան քաղել պետության կազմակերպության, նրա վարչական համակարգի մասին: Սատրապական կարգը, անշուշտ, մարերի ստեղծագործությունն է: Հայաստանը արդյոք պարզապես սատրապոյթո՞ւն էր կազմում, թե՞ սատրապի կողքին, որը կենտրոնական իշխանությունն էր ներկայացնում, գոյություն ուներ ազգային առաջնորդ կամ թագավոր: Այս ամենը խավարով է պատած: Ավելի շուտ հնարավոր է պատասխան տալ՝ հիմնվելով մի քանի ավանդազրույցների մեջ եղած տվյալների վրա: Որքան էլ դրանք առասպելական լինեն, այնուհանդերձ որոշ հիմք կարող են ունենալ: Ահա դրանցից մեկը, որը ծագում է Կտեսիասից:

Նիմուսը, Ասորեստանի ավանդական հիմնադիրը, իր իշխանությունն սկսում է երկու հաջող արշավանքով: Առաջինն ուղղված է Արաբիայի թագավոր Արիախուսի դեմ, որն ստիպված է լինում դաշինք կնքել ներխուժողի հետ: Երկրորդ արշավանքն ուղղված է Բարելոնի դեմ, որի թագավորը բռնվում է իր որդիների հետ և մահվան դատապարտվում: Դրանից հետո, շարունակում է պատմիչը, Նիմուսը, մեծ բանակի գլուխն անցած, խոյացավ Հայաստանի դեմ, նրա քաղաքներից մի քանիսն այնպես քարուքարեղ արեց, որ ահ ու սարսափ տարածեց երկրի բնակչության վրա: Բարզանես թագավորը, հասկանալով, որ ի վիճակի չէ դիմադրելու, ընդառաջ գնաց Նիմուսին բազում նվերներով և հայտնեց նրա հրամաններին հնազանդելու իր պատրաստակամությունը: Նիմուսը նրա հետ մեծահոգի վարվեց, թույլ տվեց նրան իշխել, պայմանով, որ իբրև դաշնակից զորքեր ու ներք ուղարկի իր ճամբարը:

Այսպիսով, ավելի ևս ուժեղանալով, Նիմուսը մեկնեց Մարաստանի դեմ: Վերջինիս թագավոր Փառնուսը մեծ ուժեր կենտրոնացրեց Նիմուսի դեմ,

բայց հաղթվեց. նա կորցրեց իր զորքերի մեծ մասը և ինքն էլ իր որդիների ու կնոջ հետ գերի ընկավ ու խաչվեց¹:

Նիմուսն իր բարեկամներից մեկին Մարաստանի սատրապ նշանակեց և շարունակեց իր նվաճումները: Տասնյոթ տարում նա հպատակեցրեց անսահման տարածք՝ Նեղոս գետից մինչև Տանախ և Էգեյան ծովից մինչև Հնդկաստան: Պատմիչը տալիս է նվաճված երկրների լրիվ ցուցակը. Եգիպտոս, Ասորիք, Կիլիկիա, Պամփիլիա, Լիկիա, Կարիա, Փոյուզիա, Մրսիա, Լիդիա, Տրովադա, Հելլեսպոնտական Փոյուզիա, Պրոպոնտիս, Բյութանիա, Կապադովկիա, Պոնտոսի բարբարոս ցեղերը մինչև Տանախ: Ապա կադիշցիներ, թալիբներ, վրկանցիներ, դրանգներ, դարբիկներ, կարմանյաններ, խորեզմացիներ, բորկանյաններ, պարթևներ, պարսիկներ, սուսացիներ, կասպիացիներ և, վերջապես, բակտրիացիներ, որոնց թագավորն էր Օքսիարտեսը:

Այս պատմության մեջ պարզապես ոչ մի բան չկա, որ կարելի լիներ վերագրել Նիմուսին կամ Ասորեստանի որևէ թագավորի ժամանակներին: Նվաճումների ցուցակն արտացոլում է հեղինակի երևակայությունը:

Ցուցակն ուրվագծում է Արեւմեյանների, և ոչ մի դեպքում Ասորեստանի, պետության ընդարձակումը: Ասորական զորքերը երբեք չեն հասել Փոքր Ասիայի ծովափը, ոչ էլ Տանախի ափերը և ոչ էլ Հնդկաստանի սահմանները: Թվում է, թե ցուցակը թխված է այն երկրների ցանկի վրա, որոնք մասնակցել են Քսերքսեսի արշավանքին: Արաբիայի, Հայաստանի, Մարաստանի հպատակեցումը չի կարող լինել այն ժամանակաշրջանում, երբ Մարաստանը դեռևս կազմավորված չէր, ինչպես հեղինակը հավակնում է հաստատել. նրանց թագավորների համապատասխան անունները՝ *Արիաիոս, Բարձանից, Փարոս*, անհնաշատը ցույց են տալիս մարական ժամանակաշրջանը: Իհարկե, կարելի էր մտածել վերևում հիշատակված՝ Մարզանի ժամանակակից երեք անձնավորությունների մասին, հատկապես Ուրարտու - Հայաստանի ստորակա երկրներ Միզրիանայի տեր Էպար-

¹ Դիոդորոս, II, 1. 8. Μετὰ δὲ ταῦτα πολλοῖς κλήθεσιν εἰς τὴν Ἀρμενίαν ἐμβαλὼν καὶ τινὰς τῶν πόλεων ἀναστάτους ποιήσας κατεπλήξματο τοὺς ἐγχωρούς. διόπερ ὁ βασιλεὺς αὐτῶν Βαρζάνης, ὁρῶν ἑαυτὸν οὐκ ἀξιομαχόν ὄντα, μετὰ πολλῶν δῶρων ἀπήντησε καὶ πᾶν ἐφησε ποιήσῃ τὸ προσαττόμενον. Ὁ δὲ Νίνος μεγαλοφύχως αὐτῷ χρησάμενος τῆς τε Ἀρμενίας συνεχώρησεν ἄρχειν καὶ φιλον ὄντα πέμπειν στρατιάν καὶ τὴν χορηγίαν τῷ σφετέρῳ στρατοπέδῳ: ἀεὶ δὲ μᾶλλον ἀυξόμενος, ἐστράτευσεν εἰς τὴν Μηδίαν. Ὁ δὲ ταύτης βασιλεὺς Φάρνος... ἀνεσταυρώθη.

նուայի, Բուշտուի՝ Արիայի և Մուծածիրի՝ Ուրգանայի մասին: Մակայն Կտեսիասի հեղինակությունն այնքան խղճուկ է, որ մնան համեմատությունը դարձնում է ցնորական: Ըստ ավելի հավանական է, որ խոսքը հնարավոր դեմքերի մասին է:

Կտեսիասի հորինածը հիմնված չէ՞ր արդյոք V դարի վերջում պարսկական պալատի ոլորտում նրա լսածների վրա: Հետևաբար, պարսկական ոլորտը դեռևս տեղյակ չէ՞ր, որ Հայաստանը ժամանակին թագավորություն էր կազմել, ինչպես Մարաստանը և Արաքիան:

Քսենոփոնի Կյուրոպեդիան նույնպես քատերաբեմ է բերում Աստիագեսի և Կյուրոսի ժամանակակից Հայաստանի մի թագավորի: Դժբախտաբար, այդ գործը պատմական առումով ավելի արժեք չունի, քան Կտեսիասի պատմությունները: Դա ուսուցողական գործ է, որը ձգտում է օրինակելի մի վեհապետի նկարագիրը կերտել այնպես, ինչպես որ պատկերացնում է հեղինակը: Քսենոփոնի այդ փորձի արժանիքը շատ են չափազանցել: Կյուրոսի նկարագիրը դժգույն է և շատ ավելի անգույն, քան Հերոդոտոսի սքանչելի էջերում շարադրված՝ այդ նշանավոր թագավորի պատկերը: Քսենոփոնը պատմական բավական աղճատված մի կտավի վրա նկարել է շինծու պատկերներ, երևակայական արկածներ, արհեստական իրադրություններ, միմիայն մի նպատակով, որպեսզի իր հերոսին զանազան հարցերի շուրջ ճառել տա և դրանով զարգացնել տա հեղինակի գաղափարները: Հերոսի իմաստակային ճանարտակությունը կարող էր որոշ հետաքրքրություն ներկայացնել, եթե այնքան տաղակալի շլիներ: Այնտեղ չկա ոչինչ, որն արժանի լիներ մի մեծ աշխարհակալ առաջնորդի: Կյուրոսին վերագրված առաքինությունները միջակ, ոչինչ չներկայացնող բաներ են. նրա լավ բարքերը չեն բացառում ոչ խորամանկությունը, ոչ էլ խաբեությունը: Նրա զինվորական արվեստը կայանում է հակառակորդի ճանրարում քայքայումն ու մատնությունը քաջալերելու կամ թշնամու դեմ թակարդ լարելու մեջ: Կյուրոսը արդարասեր է, որովհետև գիտե արդարությամբ ավարը բաժանել իր դաշնակիցների միջև և ուտեստներ տալ ռազմիկներին: Հեղինակն ի դեմս Կյուրոսի երկինք է հանում միապետական կարգը, հիանում է դրանով՝ հակառակ իր դասընկեր Պլատոնի հանրապետական հայացքներին: Մակայն նա քաջություն չունի բացեիքաց այդ հանձն առնելու իր գրույցներում կամ ճառերում գոնե մեկ անգամ:

Բայց հարցն այդ չէ: Իր ջանքերն իրագործելու համար նա աղավաղել է պատմությունը. նա պատմական իրադարձությունների հետ այնպիսի ազատությամբ է վարվել, որ հատուկ է վիպասանին, առանց ակնածանք ունենալու ժամանակագրության և նույնիսկ աշխարհագրության նկատմամբ:

Կիաքսարն Աստիագեսի հայրն էր: Նա նրան դարձնում է որդի և Կյուրոսի ընկեր, անշուշտ, որպեսզի կարողանա նրան վերագրել Ասորեստանի նվաճումը, որը Կիաքսարի գործն էր: Կյուրոսն ամուսնանում է Կիաքսարի և ոչ թե Աստիագեսի դստեր հետ և որպես օժիտ ստանում Մարաստանը և ոչ թե ուժ բանեցնելով Աստիագեսի վրա: Ձենք բարձրացնել իր աներոջ վրա, անշուշտ, չէր պատշաճի իդեալական մի իշխանի: Ասորեստանի անկումը 612 թվականին՝ ներկայացված է որպես մի իրադարձություն, որը ժամանակակից է Մարդեսի 546 թվականի առումին և Բաբելոնի 538 թվականի գրավման: Բաբելոնի թագավորը կոչվել է Ասորեստանի թագավոր, հավանաբար, Հերոդոտոսի ազդեցության ներքո, որը Բաբելոնը ներփակում է Ասորեստանի մեջ: Ըստ Կտեսիասի՝ Ասորեստանի վերջին թագավորն իր որդիներին ու զանձերը Պափլագոնիա է ուղարկում՝ նրանց ապահովելու համար: Քսենոփոնը դրանից եզրակացրել է, որ Պափլագոնիան Կապադովկիայի և Լիդիայի հետ Ասորեստանի՝ այն է՝ Բաբելոնի դաշնակիցն էր, և, հետևաբար, Կրեսոսին դարձրել է Ասորեստանի՝ այն է՝ Բաբելոնի թագավորի կողմնակից:

Կյուրոսի միջավայրը աղավաղված է. նա շրջապատված է հնարավոր անձնավորություններով: Նրանցից ոմանք պատմական դեմքեր են, բայց խեղաթյուրված՝ ինչպես Գաբրիասը: Նա, անշուշտ, Հերոդոտոսի Գոբրիասն է՝ Սմերդիսի դեմ յոթ դավադրողներից մեկը: Քսենոփոնը նրան դարձնում է ասորեստանցի աստիճանավոր, որն ապաստանում է Կյուրոսի մոտ և Հերոդոտոսի Հարպագոսի դերն է խաղում: Նրա որդին սպանվել է Ասորեստանի թագավորի կողմից և ոչ Աժդահակի (Աստիագեսի), ինչպես Հերոդոտոսն է կարծում, և նա սպանվել է որսի ժամանակ՝ ինչպես Կրեսոսի որդին: Քսենոփոնը նյութը վերցնում է դեսից-դեսից և իր ձևով մշակում: Քրիստոսապետը, Գադատասը, Արասպասը, Փերավլասը և այլն նրա երևակայության բնագավառին են պատկանում:

Հայոց թագավորը նույնպես Կյուրոսի շրջապատին է պատկանում: Հարց է ծագում՝ Քսենոփոնի ստեղծագործության մի պարզ արտացոլումն է նա, թե՞, եթե նույնիսկ այդպիսին է, այսուհանդերձ ներկայացնում է Հայաստանի մի թագավորություն, որը գոյություն է ունեցել Աստիագեսի կամ Կիաքսարի, եթե ոչ Կյուրոսի, օրով:

Հիշենք, թե ինչ է ասվում այդ նյութի շուրջ: Դա շատ տեսակետով բնորոշիչ մի դրվագ է Կյուրոսի նկարագրի կապակցությամբ:

Աստիագեսի մահից հետո գահ է բարձրանում նրա որդի Կիաքսարը: Ասորեստանը սպառնում է Մարաստանին: Նա հպատակեցրել է սիրիական ժողովուրդներին, Արաքիայի թագավորին, վրկանցիներին, պաշարում է

բակտրիացիների քաղաքը, նա ընկնել է նաև Լիդիայի թագավորին, Կապադովկիայի թագավորին, երկու Փոյուզիաների բնակիչներին, պափլագոնացիներին, հնդիկներին, կարիացիներին, կիլիկեցիներին:

Այստեղ երևում է Կոնստանտինոպոլիսի ազդեցությունը: Դրանք այն երկրներն են, որոնց նվաճումը Կոնստանտինոպոլիսի վերագրել էր Նիմոսին: Վերջինս ձախողվել է Բակտրիանում. բակտրիացիների պաշարումը այդ իրողության ակնարկումն է: Ասորեստանի թագավորը, հավաքելով մի մեծ բանակ՝ 60.000 ձիավոր և 200.000 ասպարակիր կամ նետաձիգ, պատրաստվում է Մարաստանի վրա նետվելու: Կիաքսարն իր տրամադրության ներքո ունի 10.000 ձիավորից և 60.000 նետաձիգներից կամ ասպարակիրներից բաղկացած մի բանակ և հայկական ուժեր՝ 4000 ձիավոր ու 20.000 հետևակագոր: Նա օգնություն է խնդրում Կյուրոսի հայր Կամբիսեսից և Կյուրոսի հրամանատարության ներքո ստանում է 30.000 զինվոր:

Մի օր Կյուրոսն ասում է Կիաքսարին, որ ծախսել է Պարսկաստանից բերած ամբողջ դրամը՝ պարզևատրելով իր լավագույն զինվորներին: Իր բանակը Կիաքսարի ծախսով ապրելու պատճառով նա նպատակահարմար չի համարում նրանից փող խնդրել իր անձնական ծախսերի համար և մտածում է, որ պետք է այլ աղբյուրներ փնտրել: Նա հիշում է, որ Կիաքսարը վերջերս ասել էր, թե ժամանակին Հայաստանի թագավորը պատերազմ է վարել Աստիագեսի դեմ և, հաղթելով, հանձն էր առել հարկ վճարել, գործ տրամադրել և բերդեր չկառուցել: Կյուրոսը նույնպես լսել էր, որ Հայոց թագավորը դադարել է իր պարտավորությունները կատարել, երբ իմացել է, որ Ասորեստանը պատրաստվում է հարձակում գործել Մարաստանի վրա: Եթե նրան հարկադրեք իր պարտքը կատարելու, անհրաժեշտ փողը կլինի: Ուժի դիմելն անխոհեմություն կլինի. Հայաստանի թագավորը կարող է թշնամու կողմն անցնել: Նախընտրելի է գաղտնի գործել և նրան ծուղակի մեջ զցել: Եթե ճակատ առ ճակատ հարձակում գործվի, նա կարող է ազատվել՝ փախչելով լեռները: Նախատեսվում է, որ Կյուրոսը արշավանք ձեռնարկի, իբր թե, ըստ սովորության, որսի է դուրս եկել հայ-մարական սահմանի վրա:

Կյուրոսը, կասկած չարթնացնելու համար, սակավաթիվ ուղեկիցներ է վերցնում հետը: Որս անելով՝ նա հասնում է Հայաստանի սահմանը: Կիաքսարը, որն առաջնորդում է բանակը, ցույց է տալիս իբր գնում է այցելելու Ասորիքի սահմանի վրայի իր բերդերը, բայց շրջադարձ է կատարում, մտանում Հայաստանին և Կյուրոսից փոքր հեռավորության վրա դարան մտնում, որպեսզի նրա կանչին անմիջապես օգնության հասնի:

Կյուրոսն իր նպատակները հայտնում է գորքին: Մի ջոկատի հանձնարարում է գրավել այն լեռները, ուր կարող էր քաշվել Հայոց թագավորը: Նա այդ ջոկատին հրամայում է հետախույզներ ուղարկել առաջ և եթե հայերի հանդիպեն՝ բռնեն նրանց, որպեսզի ահազանգ չտան: Եթե հետախույզներին չհաջողվի նրանց բռնել, պետք է այնպես պահեն իրենց, որ հայերը կարծեն, թե ավազակների են հանդիպել: Այսպիսով նրանց ուշադրությունը շեղած կլինեն իրենց երկրի դեմ ձեռնարկված արշավանքից: Այդպիսի կամխամիջոցներ ձեռք առնելուց հետո Կյուրոսը՝ բանակի գլուխն անցած, ընթացում է դեպի Հայաստանի թագավորի մայրաքաղաքը: Նա նրան բանքեր է ուղարկում և պահանջում ներկայանալ՝ հետը բերելով իր պարտքին համապատասխան հարկը և գորքերը: Կյուրոսը մտածում է, որ ավելի ազնիվ ու վեհանձն կլինի անդրեկացնել թագավորին, քան թե հարձակվել նրա երկրի վրա առանց նախազուշացման¹:

Լուրը Հայաստանի թագավորին հանկարծակիի է բերում և վրդովում նրան: Նա անմիջապես հավաքում է գորքը և ընտանիքը՝ կնոջն ու աղջիկներին, կրտսեր որդուն՝ Մաբարիսին, և անդրանիկ որդու կնոջը, բուրդին ապահով տեղ՝ լեռներն ուղարկելով, ինքը ճամբար է դնում մի բարձունքի վրա: Սակայն, շրջապատված Կյուրոսի ուժերի կողմից, նա ստիպված ցած է իջնում ու ներկայանում ներխուժողին:

Կյուրոսը նրանից բացատրություն է պահանջում, թե ինչու՞ զանց է առել իր պարտավորությունները և ի՞նչ կարող է ասել իրեն արդարացնելու համար: Հայոց թագավորն ընդունում է իր սխալը և փորձում դա արդարացնել իր ազատասիրությամբ: Նա ուզում էր ազատություն ձեռք բերել և այն թողնել իր որդիներին: Կյուրոսը պատասխանում է, որ, իհարկե, լավ բան է պայքարել ազատության համար, բայց երբ մեկը հաղթվում և աշխատում է խուսափել իր պարտավորությունները հաղթողների նկատմամբ կատարելուց, ոչ թե գովասանքի է արժանի, այլ պատժի: Ուրեմն հանցավորության վճիռն անխուսափելի է: Մեղադրյալը կարող է երկու լուծումներից միայն մեկն ընդունել՝ կամ հանձն չառնել իր գործած հանցանքը, այսինքն՝ ստել կամ ընդունել մահվան վճիռը:

Դատավարության տեսարանը տեղի է ունենում պարսկական ու մարական առաջնորդների և Հայաստանի մեծամեծների ներկայությամբ: Հայոց թագավորի կալանավորված ընտանիքը նույնպես ներկա է, ինչպես նաև նրա անդրանիկ որդին՝ Տիգրանը, որն անձամբ ճանաչում էր Կյուրոսին՝ որպես ժամանակին նրա որսակիցներից մեկը: Տիգրանը, տեսնելով իր հորն

¹ Զոհնուվոն, Կյուրոսպեդիա, II, 4:

սպառնացող ճակատագիրը, միջամտում է՝ նրան պաշտպանելու համար: Ջրույց է սկսվում նրա և դատավոր Կյուրոսի միջև՝ սովետական զրույց, որը տհաճություն չէր պատճառի Սոկրատեսի զրույցների սիրահարներին, բայց որը սազական չէ հայոց արքայազնին: Քսենոփոնը հասկանում է անտեղիությունը և շտապում Տիգրանին ներկայացնել որպես մի սովետաի հին աշակերտի: Անկասկած, Տիգրանը իր զրույցում ներկայացնում է իրեն՝ Քսենոփոնին: Կյուրոսին մի շարք մակածական (ինդուկտիվ) հարցեր առաջադրելով՝ Տիգրանին հաջողվում է ազատել հորը: Բովանդակությունը երկար է, բավական է նրա էական մասն ամփոփել:

Տիգրանը գտնում է, որ իր հորը պատժելը օգուտ չէր բերի Կյուրոսի շահերին, որովհետև ամենևին խոհեմություն չէ ոչնչացնել մի մարդու, փոխանակ իր ծառայության մեջ ընդունելով նրան օգտագործելու: Եվ դա ավելի ևս ակնհայտ է դառնում, քանի որ մեղադրյալն ավելի խելոք է դարձել, երբ հասկացել է, որ ազատություն ձեռք բերելու ճգնումը վատացնում է իր վիճակը: Նա համոզվել է, որ Կյուրոսն ամեն տեսակետից ավելի բարձր է կանգնած, քան ինքը: Նա ցանկացավ խաբել Կյուրոսին, բայց վերջինս կանխեց նրան և խաբեց իբրև կույրին: Ուստի փորձեց թաքցնել գործել, բայց Կյուրոսն ավելի հաջողությամբ գործեց՝ նրան անսպասելիորեն պատին սեղմելով: Կատարյալ պարտությունը մեղադրյալին շատ խելոք է դարձրել: Բնականաբար, խելոք դառնալու համար բավական չէ միայն այն գիտակցությունը, թե իրենից ավելի լավի հետ գործ ունի, պետք է նաև պատժի ենթարկել: Մակայն մեղավորն արդեն պատժվել է, և պատժվել է հենց այն սարսափով, որ Կյուրոսը ազդել է նրան: Երկյուղը մարդկանց ավելի է պատժում, քան իրական պատիժը:

Եթե Կյուրոսը վստահ չէ, թե Տիգրանի հայրը դարձյալ չի գոռոզանա և նոր անհանգստություններ չի պատճառի, կարող է գրավականներ պահանջել՝ անրոցներ կառուցել, բերդեր գրավել, ավելի զորք, ավելի դրամ պահանջել: Մի խոսքով՝ Հայաստանի թագավորությունը կործանելով Կյուրոսն ինքն իրեն ավելի վնաս կպատճառեր, քան թե դա կկարողանար անել Տիգրանի հայրը:

Պաշտպանական ճառը հաջողությամբ է պսակվում: Կյուրոսը դիմում է Հայաստանի թագավորին և հարցնում նրան, թե որքա՞ն զորք ու դրամ կտար, եթե ներվեր նրա հանցանքը: Մեղավոր թագավորը պատասխանում է, որ ինքն ունի 8000 ձիավոր և 40.000 հետևակագոր, իսկ իր հարստությունը 300 տաղանդից ավելի է, և Կյուրոսը կարող է այն գործածել ինչպես կկամենա: Կյուրոսը գիտե, որ հայերը պատերազմում են խալդեի (ուչ բաղդեսցիների) հետ և ավելի արդար կլինեք վերցնել հայկական ուժերի կեսը՝

4000 ձիավոր և 20.000 հետևակագոր: Գալով դրամին, թագավորը կվճարի 50 տաղանդ հարկի կրկնակին և նույնքան էլ կընծայի Կյուրոսին այն ծառայությունների դիմաց, որ նա խոստանում է մատուցել Հայոց թագավորին:

Այն ժամանակ Կյուրոսը հարցնում է, թե նա ո՞րքան կվճարի իր կնոջն ու կալանավորված որդիներին փրկելու համար: Թագավորը պատասխանում է, որ կվճարի ինչքան որ կարողանա: Նույն հարցը Կյուրոսը տալիս է Տիգրանին՝ նրա կնոջ վերաբերյալ: Տիգրանը պատասխանում է, որ ինքն իր կյանքը կվճարեմ նրան ազատելու համար: Կյուրոսը կանանց ազատում է կալանքից: Կյուրոսի և Հայոց թագավորի միջև հաշտություն է կնքվում: Հայոց թագավորը Կյուրոսին ու նրա բանակին նվերներ է ուղարկում և երկու անգամ ավելի դրամ, քան Կյուրոսի պահանջածը: Կյուրոսն ընդունում է այն, ինչ պահանջել էր, իսկ մնացածն էտ է ուղարկում: Շուտով Տիգրանի հրամանատարությամբ գալիս են հայկական զորամասերը՝ Կյուրոսի արշավանքին մասնակցելու համար¹:

Ապա Կյուրոսը ջանքեր է թափում հայերի ու խալդեի միջև խաղաղություն հաստատելու համար: Դա Հայոց թագավորին խոստացած ծառայությունն է՝ ընծայված դրամի փոխարեն: Նա հետախուզում է երկիրը և որոշում մի բերդ կառուցել այն բարձունքի վրա, ուր խալդեերը լուռեսներ էին պահում, և այնտեղ պարսկական զորքեր դնել: Կյուրոսն իր մարդկանց կարգադրում է զնալ գրավել այդ բարձունքը: Խալդեական պահակագործ ահազանգ է տալիս: Խալդեերը հայտնի էին որպես այդ շրջանի ամենառազմաշունչ բնակիչներ՝ շրջան, որը նրանք ասպատակում էին ամեն ուղղությամբ, բայց հաղթվելով էտ են քաշվում: Կյուրոսը գերի վերցրած խալդեի բացատրում է, որ ինքը նպատակ չունի խալդեի կործանելու, այլ ձգտում է նրանց հաշտեցնել հայերի հետ: Խալդեերը խաղաղության կողմնակից չէին: Նրանք իրենք իրենց ապահով էին զգում լեռներում և այնտեղից ցած էին իջնում՝ դաշտավայրերում ապրող հայերի ունեցվածքը հափշտակելու համար: Խալդեի գերիներն ազատ են արձակվում և ուղարկվում իրենց մարդկանց մոտ, որպեսզի համոզեն նրանց հաշտություն կնքելու: Առաքելությունը հաջողվում է: Հաշտություն է կնքվում՝ պայմանով, որ Հայոց թագավորը խալդեիին թույլ տա դաշտավայրի անմշակ հողերը մշակելու՝ սահմանված հողային հարկը վճարելով: Խալդեերն իրենց հերթին հանձն են առնում հայերին չարգելել լեռնային արտավայրերից օգտվելու՝ որոշ տուրք վճարելու պայմանով:

¹ Քսենոփոն, Կյուրոսպեդիա, III, 1:

Հայոց թագավորն ատաղձագործներ ու որմնադիրներ է ուղարկում, որոնք սկսում են նախատեսված բերդի կառուցումը: Այն կապահավանվի պարսկական կայազորի կողմից՝ երկու կողմերի խաղաղությունն ու բարիդրացիությունն ապահովելու համար¹:

Կյուրոսը հետանում է Հայաստանից՝ Ասորեստանի և Բաբելոնի դեմ արշավելու համար, և իր հետ տանում է հայկական զորքերը, հեծելազորը Տիգրանի հրամանատարությամբ, իսկ հետևազորը՝ Էմբասի առաջնորդությամբ²: Նվաճումներն ավարտելուց հետո Կյուրոսը զբաղվում է նվաճված երկրների կազմակերպությամբ: Նա սատրապներ է նշանակում Արաբիայում, Կապադովկիայում, Փոյուզիայում, Լիդիայում և Հոնիայում, Կարիայում, Հելլեսպոնտյան Փոյուզիայում: Կիլիկիան, Պափլագոնիան և Կիպրոսը սատրապներ չեն ստանում, բայց հարկ են վճարում³:

Կյուրոսը մահվան անկողնում իր վերջին կարգադրություններն է անում՝ նա պետությունը կտակում է իր անդրանիկ որդի Կամբիսեսին, իսկ կրտսեր որդուն՝ Թանառքսարեսին, նշանակում է սատրապ կամ փոխարքա մարերի, հայերի և կադիշցիների վրա:

Ինչպես կարելի է նկատել, Հայաստանը կարևոր տեղ է զբաղում Քսենոփոնի Կյուրոսպեդիայում: Ի՞նչ պատմական արժեք է ներկայացնում նրա պատմածը Հայաստանի մասին:

Կյուրոսպեդիայի վիպական բնույթն արդեն բավական է կասկածանք հարուցելու համար: Ահա թե ինչու Հայաստանին մվիրված էջերը սովորաբար չեն ընդունվում և համարվում են պարզապես զուտ հորինվածք: Իհարկե, երևակայական տարրերի առկայությունն ակներև է, այսպես, օրինակ, թատերական տեսարանները սոփեստական երկար ատենախոսությամբ և երկրորդական ու նկարագրական մանրամասնությունները: Սակայն կան որոշ կետեր, որոնք ուշադրություն են հրավիրում և քննություն պահանջում նախքան նրանց վավերականությունը մերժելը: Նշենք Հայաստանի թագավորի գոյությունը, որի անունը հեղինակը չի տալիս (36), բայց ասում է, որ նա ուներ երկու որդի՝ Տիգրան և Մարաթիս, և մի գորավար՝ Էմբաս: Խոսվում է նաև հայերի ու խալդեերի միջև եղած թշնամության և հաշտություն կնքելու մասին:

Վերջին տեղեկությունը, այնուհանդերձ, հերյուրանք չէ, այլ պատմական եղելություն: Խալդեերը Ուրարտուի հին բնակիչներն էին: Նրանց դիմադրությունը երկրի նոր տերերին՝ հայերին, բնական է և պատմությանը համա-

¹ Քսենոփոն, Կյուրոսպեդիա, III, 2, 3:

² Նույնը, V, 3:

³ Նույնը, VIII, 6:

պատասխան: Կասկածելու պատճառ չկա: 401 թվականին, երբ Քսենոփոնն անցնում է Հայաստանի միջով, նա ոչ մի ակնարկություն չի անում երկու ժողովուրդների թշնամության մասին: Նրանց պայքարը, ուրեմն, այդ թվականից առաջ էր, և Քսենոփոնն իրավացի է այն գետեղելով Կյուրոսի ժամանակաշրջանում: Մինչև 401 թվականը խալդեերն արդեն տեղի էին տվել հայերի ճնշմանը:

Ահա մի հատուկ կետ, որը մեզ որոշ վստահություն է ներշնչում, մեզ զգուշացնում Հայոց թագավորի և նրա որդիների մասին ասվածը սկզբից ևեթ մերժելու փորձի դեմ:

Հայոց թագավորի անձնավորությունը հասկանալու համար օգտակար կլինեն այն համեմատել ուրիշ նման դեմքերի հետ: Այդպիսիներն են Ասորեստանի, Բաբելոնի, Արաբիայի, Կապադովկիայի, Սուզիանի թագավորները: Վերջին երեքը համապատասխանաբար կրում են Արագոս, Արիբախոս, Աբրադատաս անունները, բայց դրանով նրանք ավելի պատմական չեն, քան Հայաստանի, Ասորեստանի և Բաբելոնի անունն թագավորները: Դրանք բոլորը մտացածին անձնավորություններ են, բայց իրականում մարմնավորում են գոյություն ունեցող կամ վերացած թագավորություններ: Այս իմաստով միայն կարելի է ասել, որ նրանք պատմական դեմքեր են:

Պետության կազմակերպման միջոցին Կյուրոսը սատրապներ է նշանակում Արաբիայում, Կապադովկիայում, Մեծ և Հելլեսպոնտյան Փոյուզիաներում, Լիդիայում և Հոնիայում, Կարիայում: Երեք երկրներ՝ Կիլիկիան, Պափլագոնիան և Կիպրոսը սատրապներ չեն ստանում, այլ մնում են ազգային առաջնորդների ղեկավարության ներքո, որովհետև կամավոր կերպով անձնատուր էին եղել Կյուրոսին¹: Սակայն նրանք նույնպես պարտավոր են հարկ վճարել:

Հայաստանն ու Սուզիանն այստեղ հանդես չեն գալիս: Արաբիան և Կապադովկիան վերածվում են սատրապությունների, որովհետև Ասորեստանի դաշնակիցներն էին: Սուզիանի թագավորը կամավոր կերպով անցել էր Կյուրոսի կողմը: Նա զոհվեց ճակատամարտի դաշտում: Այդ պատճառով նա պետք է օգտվեր Կիլիկիային, Պափլագոնիային և Կիպրոսին վերապահված առավելությունից: Հայոց թագավորը, ավելի շուտ նրա որդին ու հաջորդը՝ Տիգրանը, որը Կյուրոսի ընկերն էր, մնում է նրա մոտ մինչև նրա մահը: Դրա շնորհիվ Հայաստանի պետությունը պահպանվում էր այնպես, ինչպես առաջներում, այսինքն՝ թագավորություն, որը կապված էր Կյուրոսի

¹ Նույն նկատառումներով Կամբիսեսը ներդաժատորն է վերաբերվում փյունիկեցիներին, երբ նրանք մերժում են զնալ կովի Կարթեդոնի դեմ, տե՛ս Հերոդոտոս, IX, 19:

պետության հետ վասալական պարտավորություններով և ստիպված էր որոշ հարկ վճարել ու զինվորական օգնություն բերել անհրաժեշտության դեպքում:

Իր կյանքի վերջին օրերին Կյուրոսն իր որդի Տանյուրսարեսին է հանձնում մարերի, հայերի և կաղուսացիների կառավարությունը: Բնագիրն ասում է, որ նա նշանակվում է սատրապ, որն այստեղ «կառավարիչի» սովորական իմաստը չունի, այլ «թագավորի» կամ «փոխարքայի», և համապատասխանում է Կտեսիասի *δεσπότης*-ին, որտեղից և վերցվել է այդ հատվածը: Բացի այդ, ըստ Կտեսիասի՝ Կյուրոսը իր որդի Տանյուրսարեսին է շնորհում պետության արևելյան մասը՝ բակտրիացիների, խորեզմացիների, պարթևների, կարմանյանների երկիրը: Ջենեփունը քննադատում է խեղաթուրել է իր աղբյուրը¹:

Տիգրան անունը, որ հայ իշխանը կրում է, ինքնին հատկանշական է մեզ գրադեցնող հարցի համար: Դա սովորական անուն չէ, ինչպես ուրիշ շատ անուններ, որոնց հանդիպում ենք ամենուրեք իրանական քաղաքակրթության աշխարհում: Ավելի ուշ Տիգրան անունը երևան է գալիս որպես բացառապես հայկական անուն, ընդունված Արտաշեսի թագավորական հարստության կողմից:

Տիգրան անունը, սակայն, ծագումով իրանական է (37): Առաջին անգամ այդ անունը կրում է Ջենթեսի բանակի մարական զորքերի առաջնորդը՝ Արեմենյանների տոհմին պատկանող Տիգրանը:

Մի երկրորդ Տիգրան ծանոթ է մոտավորապես 391 թվականին: Նա Ստրուբասի կամ Ստրուսեսի աղջիկներից մեկի ամուսինն է, մի զորավարի, որին պարսիկ թագավորն ուղարկեց Սարդես Տիրիբազուսի փոխարեն: Թագավորի քաղաքականությունն այդ ժամանակաշրջանում կայանում էր հերթով Արեմքն ու Սպարտան մրցակցության մղելու մեջ, հույս ունենալով նրանց ուժերը ջլատել: Ստրուբասը Արեմքի կողմն անցավ, և սպարտացիների հետ կռվի ժամանակ նրա փեսան՝ Տիգրանն ու իր կինը գերի ընկան, բայց խոշոր փրկվածք վճարելուց հետո ազատ արձակվեցին²: Դրանից հետո այլևս այդ անունով պարսիկներ հայտնի չեն³ (38):

¹ Կտեսիասն ասում է՝ *Κύρος... Τανσοξάρκην δε τὸν νεώτερον ἐπέστησε δεσπότην Βακτρῶν καὶ τῆς χώρας καὶ Χωραμνίων καὶ Παρθίων καὶ Καρμανίων*. [Կյուրոսը ...Տանյուրսարես կրտսեր [որդուն] տիրակալ նշանակեց բակտրիացիների և Վերանց՝ երկրի, և բորանմիացիների և պարթևների, և կարմանյանների վրա]:

² Ջենեփուն, Հելլենականք, IV, 8, 21:

³ Ստեփանոս Բյուզանդացին մեջ է բերում Արիանոսից մի հատված. 'Αρριανός, ἔκτω Παρθικόν. Τυράνης (ἀρχόμενος) ἀρχεται σατραπείας. ἡ δὲ χώρα ἴς ἐπίρχε Χολοθη-

Հետագայում Տիգրան անունը հայերի մեջ մեծ տարածում է ստանում և ամենագեղեցիկ ու փառավոր անունն է համարվում, այն աստիճան, որ դառնում է ազգային անուն: Ինչո՞վ բացատրել այդ համբավը, այդ նախասիրությունը մի հին անվան նկատմամբ, մանավանդ այնպիսի ժամանակ, երբ հռչակ էին վայելում պարթևական անունները: Բոլորովին հավանական չէ ենթադրել, թե նրանք Կյուրոսպեղիայի ազդեցությունն էին կրել: Ոչ մի փաստ չկա, որ հաստատի, թե Արտաշեսի ժամանակ հայերը ծանոթ էին հունարեն տառերին: Տեղին կլինի ընդունել, որպես ավելի հավաստի, որ հայերը պահպանել էին հին թագավոր Տիգրանի հիշատակը, որը ժամանակին թագավորել էր Հայաստանում, գուցե նույն Տիգրանի, որը հիշատակված է Կյուրոսպեղիայում: Հայերը, որ զենքով պայքարում էին Դարեհի դեմ և հարատև պատերազմի մեջ էին խաղերի հետ, պետք է որ կազմակերպված լինեին և ազգային առաջնորդ ունենային: Տիգրան, Սարաբիս, Էմբաս անձնավորությունները չեն կարող հետագայում հնարված լինել ամբողջապես: Եթե այս կետի վրա պնդելը այնքան էլ տեղին չէ, առավել ևս անօրինակ կլինեք այն թեքություն մերժելը:

Չմոռանաք, որ Մովսես Խորենացու պահպանած հայկական ավանդությունը լավ է ճանաչում Կյուրոսի ժամանակակից Տիգրան թագավորին և նույնիսկ հավակնում այն բանին, որ Ադահակը, այսինքն՝ Աստիագեսը, սպանվել է ոչ թե Կյուրոսի, այլ Տիգրանի կողմից:

Վերջապես, մեծ կարևորություն ունեցող մի վկայության համաձայն, Բրիտանական թանգարանում սելևկյան ժամանակաշրջանի սեպագիր մի սալիկ է պահպանվում, որի վրա կարդացվում է «(Տ)իգրան Հայաստան երկրի թագավոր»¹ (39):

Ցավում ենք, որ չկարողացանք ստուգել այդ վավերագրի գոյությունը, որը վիճելի հարցի համար առաջնակարգ նշանակություն ունի: Եթե այդ իրողությունը հաստատվի, ուրեմն, վճռական ապացույց կունենանք, որ Արտաշեսից առաջ թագավորական հարստություն է գոյություն ունեցել և Տիգրան անունը այստեղ արդեն սովորական է եղել (40): Դա աներկբայորեն կհաստատի այն դրույթը, որ մենք փորձեցինք պաշտպանել:

դով) *ὀνομάζεται*. [Արիանոս, «Պարթևականք», ութերորդ գիրք. Տիգրանը իշխում էր <իրև> սատրապ, իսկ երկիրը, որի վրա իշխում էր, կոչվում էր Խորենտենն]: Այս Տիգրանը սատրապ չէ, այլ Հայոց թագավորներից մեկը՝ Արտաշեսի տնից: Խորենտենն *Βαλοθητηνός*-ի վատ ընթերցումն է. սա հայկական Բալանովիտն է, այժմյան Բալուի շրջանը, որ Արածանի վրա է գտնվում:

¹ W. Belek, Aus den Berichten über die armenische Expedition, «Zeitschrift für Ethnologie», 1899, էջ 269-270:

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՔԵՄԵՆՆԵԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

Կյուրոսը տեր դարձավ մարերի պետության և այն վերափոխեց պարսիկների պետության:

Ինչքան էլ մեծ լինի այս փոփոխման կարևորությունը, միևնույն է, դա բոլորովին նման չէ այն արյունահեղ ապստամբություններին, որոնք կործանում են մի քաղաքական շենք և դրա ավերակների վրա կառուցում մեկ ուրիշը: Մարերն ու պարսիկները երկու եղբայրակից ժողովուրդներ էին: Գերագույն իշխանության փոխանցումը մեկից մյուսին ավելի շուտ այնպիսի պետական մի հեղաշրջում էր, որի շնորհիվ կառավարության գլուխ էր անցնում մի նոր հարստություն: Պետությունը մնաց այնպես, ինչպես կար, առանց սատրապական կարգերի վրա հիմնված իր կազմակերպության մեջ էական փոփոխություններ կրելու:

Կյուրոսը նոր նվաճումներով ընդարձակեց պետությունը և դրա սահմանները հասցրեց մինչև Էգեյան ծովի արևելյան ափը, իսկ արևելքում՝ Հնդկաստանի մոտերքը: Նրա որդին՝ Կամբյուսեսը, հպատակեցրեց Եգիպտոսը, Լիբիան և Նուբիան (Եթովպիան), այնպես որ հսկայական պարսկական պետությունը համարյա ընդգրկեց հին քաղաքակրթության երկրների ամբողջությունը:

Կամբյուսեսից հետո, մի նոր պետական հեղաշրջումով, Կյուրոսի ընտանիքից գահն անցավ Դարեհի ընտանիքին: Այդ հեղաշրջումը լուրջ հետևանքներ ունեցավ: Դարեհի հանդգնությանը երկիրը պատասխանեց համարյա ընդհանուր ապստամբությամբ: Հենց այդ խառնակության ժամանակ է, որ հայերն արդեն առաջին անգամ ներկայանում են պատմության մեջ՝ հափշտակչի դեմ ապստամբած ժողովուրդների շարքում:

Անհրաժեշտ է, ուրեմն, կանգ առնել խռովությունների ծագման և ընթացքի վրա. թեպետ այդ խնդիրը մեր անմիջական նյութին չի վերաբերում, այնուհանդերձ դա շատ կարևոր է՝ Դարեհի դեմ հայերի պայքարի բնույթը և Հայաստանի պատմության մեջ դրա նշանակությունը ուսումնասիրելու համար:

Կյուրոսը Անշանի թագավորն էր, երբ ձեռնարկեց իր նվաճումները: Նրա հայրը՝ Կամբյուսեսը, պապը՝ Կյուրոսը, և պապի հայրը՝ Չիշպիշը կամ Թեխպիսը, նույնպես թագավորում էին Անշանում¹: Դրանից ավելի ոչինչ հայտնի չէ Կյուրոսի նախնիների և ոչ էլ այն երկրի մասին, որը գտնվում էր

¹ Կյուրոսի գլանը՝ E. Schrader, Keilinschriftliche Bibliothek, III, 2, էջ 121: Նույնպես F. H. Weissbach, Die Keilinschriften der Achämeniden, էջ 5:

նրանց տիրապետության ներքո՝ մինչև վերջերս հայտնաբերված Աշուրբանիպալի արձանագրությունը: Այս ասորական թագավորը Էլամի դեմ արշավելու ընթացքում, իր թագավորության երեսուներորդ տարում, այսինքն՝ 639 թվականին, Կուրաշ անունով իշխանից մեծարանք է ստանում: «Պարսունաշի թագավոր Կուրաշը, - ասում է նա, - լսել էր իմ տերեր, մեծ աստվածներ Աշուրի, Բելի և Նեբոյի օգնությամբ Էլամի դեմ իմ տարած փառավոր հաղթանակը, որով ես մրրկաբեր արիքի նման կործանել էի ամբողջ Էլամը, և նա իր անդրամիկ որդուն՝ A-ru-uk-ku-ին հղեց ինձ մոտ, Նինվեի իմ ապարանքը, նրա հետ ուղարկելով հարկ, որպեսզի հայտնի իր „ստորակալությունը“ ardušu և խնդրի իմ գերիշխանությունը»¹:

Կուրաշը, անտարակույս, Կյուրոսի պապն էր, իսկ Պարսունաշը, որտեղ նա իշխում էր, պետք է որ նույնացվի Անշանի հետ: Այդպես էին կոչվում Էլամից հյուսիս՝ Կարունի ակունքների վրա գտնվող լեռնային շրջանները²:

Կուրաշը, կոչե՞նք նրան Կյուրոս I, խոհեմությունից ելնելով, Ասորեստանի ռազմակալումից խուսափելու համար, դառնում է նրա ստորակալ: Ասորեստանի անկումից հետո Պարսունաշը, Ասորեստանի ամբողջ ժառանգության հետ մեկտեղ, անցնում է պետության նոր տիրոջ՝ Կիաքսարի, գերիշխանության տակ և, հավանաբար, մնում Մարաստանի ստորակալ երկիր մինչև այն օրը, երբ Կյուրոս II-ը 553 թվականին մարերից խլում է գերիշխանությունը:

Կյուրոս II-ի որդի ու հաջորդ Կամբյուսեսից հետո, շատ շփոթ պայմաններում, գահն անցնում է Դարեհին: Դարեհը պնդում է, որ ինքը նույն թագավորական ընտանիքից է, քայց կողմնակի ճյուղից: Նրա պապի հայր Արիյարամնան Չիշպիշի որդին էր, և քանի որ մենք գիտենք, թե Կյուրոս I-ը

¹ Աշուրբանիպալի պրիզման, հայտնաբերված գերմանական հնագետների միջոցով Բաբելոնում և հրապարակված Ե. Վայդների կողմից՝ E. M. Weidner, Die älteste Nachricht über das persische Königshaus, Kyros I ein Zeitgenosse Assurbanipals, «Archiv für Orientforschung», VII, 1931:

² Ժ. Օպպերտից ու Ա. Սեյսից սկսած Անշանի տեղը բազմաթիվ վիճարկությունների առարկա է դարձել: Բ. Մայսների շումերա-ակկադերեն բառարանի համաձայն (Babylonien und Assyrien, II, 376), Անշանը կամ Աշշանը Էլամի շումերական անունն է: Սակայն ասորեստանցիները Անշանը տարբերում էին Էլամից: Սեննապերիթը իր ութերորդ արշավանքում նշում է Էլամը, Անշանը և Պարսունաշը: Պետք է կարծել, որ Անշանը ցույց է տալիս գլխավորապես Էլամի լեռնային մասը: Գալով Պարսունաշին (որը, թվում է, Պարսունաշի ասորերեն արտասանությունն է), այն կարող է միայն Պարսունաշը լինել, որը գործածվում էր Անշանի որոշ շրջանը ցույց տալու համար: Պարսունաշ, Պարսունա նույն տերմինն է, մի հզոր ցեղի անուն՝ Մանայից հարավ-արևելք, որը Սալմանասար III-ի օրով 27 թագավորներ (ցեղերի անուններ) ուներ: Սարգոնը Բիթ-Խամբանի (Կամբարդին) հետ նշում է և Պարսունան, իսկ Սեննապերիթն այն տեղադրում է Էլամի մոտ: Այն տպավորությունն է ստացվում, թե պարսուացիների ցեղը հավանաբար ետ է մղվել Մադա ցեղի կողմից՝ հյուսիսից դեպի հարավ, ուր վերջնականապես տեղավորվել է բուն Պարսկաստանում:

նույնպես Չիշպիշի որդին էր, հետևաբար, Կյուրոս I-ը և Արիյարամնան միամայր եղբայրներ էին: Կյուրոս II-ը կամ Մեծն իր նախնիները հաշվում է մինչև Չիշպիշը: Դարեհը դրա վրա ավելացնում է Չիշպիշի հայր Հախամանան: Ծննդաբանական ծառը հետևյալ տեսքով է ներկայանում.

Հախամանիշ
Չիշպիշ

Կուրաշ I
Կամբուժիյա I
Կուրաշ II
Կամբուժիյա II

Արիյարամնա
Արշամա
Վիշտասպա
Դարայավահուշ (41)

Առաջին ճյուղն իշխում էր Անշանում կամ Պարսումաշում, երկրորդը՝ Պարսկաստանում: Կյուրոս II-ը չի հիշատակում Հախամանիշին: Ըստ Հե-րոդոտոսի՝ *Ἀχαμέννης* Աքայմենես կամ Աքեմենես՝ Պարսկաստանում Պասարգադես տոհմի ցեղերից մեկի անունն է: Ուրեմն, Դարեհի ընտանիքը կրում էր այն ցեղի անունը, որին պատկանում էր: Բոլորովին հավանական չէ, որ Անշանում թագավորող Կյուրոսի ընտանիքը Պասարգադեսի ցեղերից մեկի սերունդը եղած լինի: Այս ամենը կասկած է ներշնչում երկու ճյուղերի ազգակցության մասին և տեղիք է տալիս մտածելու, որ Դարեհը ցանկացել է արհեստականորեն միացնել իր ծագումը թագավորական ընտանիքի ծագման հետ՝ իր բռնատիրությունը օրինականացնելու համար¹:

Սակայն պատահաբար վերջերս հայտնաբերվեց մի արժեքավոր արձաթի կտոր՝ սեպագիր պարսկական արձանագրությանը, ուր Արիյարամնան իրեն վերագրում է «մեծ թագավոր, թագավորների թագավոր, Պարսկաստանի թագավոր» տիտղոսը և ասում, որ ինքը «Չիշպիշի որդին և Հախամանիշի թոռն» է²:

Թվում էր, թե դա բավական է՝ կարճ կտրելու ամեն մի վիճաբանություն և արդարացնելու Դարեհի ծննդաբանությունը: Սակայն որոշ լուրջ գիտնա-

կաններ կասկածանքի տակ են դնում փաստաթղթի վավերականությունը: Արձանագրության լեզուն իր մեջ պարունակում է ավելի ուշ ժամանակի որոշ անկանոն ձևեր, որոնք հանդես են գալիս Արտաքսերքսես Մեծնոն թագավորի ժամանակ, և այդտեղից էլ կասկած է առաջանում, թե վավերագիրը ծագում է այդ թագավորի իշխանության ժամանակից¹:

Նույնպես անհասկանալի է, ինչպես Կյուրոս I-ը ներկայանում է որպես սուկ թագավոր Պարսումաշի կամ Անշանի, մինչդեռ նրա կրտսեր եղբայր Արիյարամնան կրում է Պարսկաստանի «թագավոր թագավորաց» մեծաշուք տիտղոսը: Պարսումաշը անշուշտ նույնանուն է այն Պարսումաշի հետ, որը Սեմնաքերիքը հիշատակում է Անշանի հետ: Ոչինչ ցույց չի տալիս, որ Պարսումաշը ավելի սերտորեն կապված լինի Պարսկաստանի հետ, քան Անշանի: Պետք է նույնպես նշել երկու տոհմերի անունների միջև եղած տարբերությունը՝ Կյուրոս-ը և Կամբուժիսես-ը ծագումով մթին անուններ են, իսկ Արիյարամնա-ն, Արշամա-ն, Վիշտասպա-ն զուտ իրանական անուններ են²:

Որն էլ լինի հարցի վերջնական լուծումը, նույնիսկ ընդունելով, որ ամեն ինչ կարգին է Դարեհի ծննդաբանության մեջ, այսուհանդերձ փաստը մնում է փաստ, որ նա բռնատիրող էր, քանի որ խլել էր թագը թագավորական տոհմից:

Դարեհի՝ զահին տիրանալու պարագաները և այն հակազդեցությունը, որ այդ բռնության հետևանքով առաջացավ երկրում, շատ նշանակալից են: Չէ՞ որ Դարեհը պետք է պատասխանատու լիներ թագածառանգ Բարդիյա արքայազնի սպանության համար, և նա էր առաջ քաշել Կեղծ-Բարդիյայի պատմությունը՝ իրեն արդարացնելու համար: Դա մի վարկած է, որը գիտական հարուստ գրականության առիթ է հանդիսացել, բայց, այնուհանդերձ, միշտ մնում է վիճաբանության առարկա: Այդ հարցում Հերոդոտոսի մեզ փոխանցած տեղեկությունները շատ կետերով անհարիիր են: Բահիստան ժայռի վրա Դարեհի փորագրել տված տարեգրությունը հեռու է անկեղծ լինելուց. հեղինակը սույն գործում շատ է շահագրգռված, որպեսզի նրանից կարելի լինի սպասել անկեղծ և անաչառ շարադրանք անցածի մասին: Իր հաղթանակի հենց հաջորդ օրը նա պաշտոնական մեկնակերպ

¹ F. Andreas, «Verhandlungen des XIII Internationalen Orientalisten-Kongresses», Hamburg, 1902.

² E. Herzfeld, Archäologische Mitteilungen aus Iran, II, 1930, էջ 113 և հաջ.:

Դարեհն ու Ջսերքսեսը ասում են Haxamanišiya «Հախամանյան» կամ «Աքեմենյան», որից եզրակացվում է, որ նրանք այդ անվան ներքո հասկանում են մի ցեղ: Արիյարամնան իրեն կոչում է Չիշպիշի որդի և Haxamaniš-ahya napa, Հախամանիշի թոռ: Հախամանիշն այստեղ նկատի է առնված որպես մի անձնավորություն: Սեռականի հոլովածը միշտ չէ, պետք էր ասել Haxamaniš, ինչպես Čišpiš-ից ստացվում է Čišpaiš: Արտաքսերքսես Մեծնոնը խոնարհում է Darayavahuš անունը ստ. Darayavahušahya փոխանակ Darayavahuš-ի:

¹ Հ. Հ. Շրադեի կարծիքն է՝ «Sitzungsberichte der Preussischen Akademie d. Wissenschaft», Phil.-hist. Klasse, 1931, էջ 635, որը պաշտպանվել է Վ. Բրանդենշտայնի կողմից՝ «Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes», XXXIX, Heft 1 u. 2, 1932, էջ 13:

² U. Սեյսի համաձայն, Κόρος էլամերեն նշանակում է հովիվ (The Ancient Empires of the East, էջ 62): Եթե վստահ լինեիր, որ դա իրանական ծագում ունեցող բառ է, կարելի էր այնտեղ տեսնել kuru (երկիսա) բառը, իսկ դա կբացատրեր այն ավանդությունը, որ նա ներկայանում է որպես երկիսա, երկիսաների առաջնորդ: Հունարեն κόρος, κώρος-ն է երևում այստեղ (տղա, մանուկ), և ոչ պարսկական անուն:

մշակեց և այն միտումնավոր կերպով տարածեց երկրում՝ ժողովրդի խախտված վստահությունը վերականգնելու համար: Անկասկած, նման վավերագիրը միշտ կարող է զգույշ վերաքերմունքի:

Հերոդոտոսը սուկ վերարտադրում է պաշտոնական մեկնակերպը: Նա զարդարում է այն ոճիորին մասնակցած զանազան անձնավորությունների մասին զրույցներով: Չրույցներ, որոնք, անտարակույս, շրջում էին ժողովրդի մեջ, և որոնց միտումն այնքան քափանցիկ է, որ գենք է մատուցում քննադատությանը:

Ըստ Դարեհի՝ Կամբյուսեսը մի եղբայր ուներ, որի անունն էր Բարդիյա, և նա նրան քաքուն կերպով ոչնչացնել էր տվել, ու ոչ ոք այդ բանը չէր իմացել: Ապա Կամբյուսեսը արշավում է Եգիպտոսի դեմ: Այդ ժամանակ ժողովուրդը քազավորի նկատմամբ թշնամական ընդհանուր շարժումով ոտքի է ելնում, և «սուտը» drauga տարածվում է ամբողջ պետության մեջ: Գառնատա անունով մի մոզ օգտվում է խլրատմից և հայտարարում, թե ինքը Կյուրոսի որդին ու Կամբյուսեսի եղբայրն է: Ժողովուրդը երես է դարձնում Կամբյուսեսից և անցնում Գառնատայի կողմը, որն այդպիսով տիրանում է իշխանությանը: Ոչ ոք չհամարձակվեց դուրս գալ նրա դեմ: Վախենում էին, որ նա կարող էր ոչնչացնել նրանց բոլորին, ովքեր ճանաչում էին Բարդիյային, որպեսզի ինքը չմատնվի: Գործն այդ դրության էր, երբ Դարեհը մի խումբ հավատարիմների հետ վրա հասավ և սպանեց Գառնատային ու նրա ամենաեռանդուն կողմնակիցներին: Նա իր ձեռքը վերցրեց իշխանությունը և իր գահակալությանը վերականգնեց Աքեմենյան հարստությունը, որին նա պատկանում էր: Այդ շրջանում բազմաթիվ երկրներ մեկը մյուսի ետևից ապստամբեցին նրա դեմ, իսկ նա ճնշեց և պատժեց նրանց խռովարար առաջնորդներին: Ի վերջո նա դիմում է պատժեց նրանց խռովարար առաջնորդներին: Ի վերջո նա դիմում է ընթերցողներին և բազում անգամ հորդորում հավատալ իր գրածին, որովհետև ինքը ճշմարտությունն է ասում, իսկ իր խռովարար բուրբ հակառակորդները «ստախոսներ» են:

Այնուհանդերձ, զարմանալի է, որ Գառնատայի արկածախնդրությունը ոչ մի թշնամական ցույցի չէր հանդիպել, մինչդեռ Դարեհն իր գահակալությանը հեղափոխական փոթորիկ բարձրացրեց ամբողջ պետության մեջ: Ենթադրված վախը բոլորովին էլ հիմնավոր պատճառ չէ. նույն զգացումը կարող էր ծնվել նաև Դարեհի նկատմամբ, որն ավելի մարդկային չէր, քան Գառնատան. հենց այդ նույն Դարեհը խաչել տվեց¹ Բաբելոնի ամենահայտնի մարդկանցից 3000 հոգուց ավելի:

Պաշտոնական վավերագրում իր ասածի ճշմարտության մասին կրկնակի հավաստիացումը նույնպես վստահություն չի կարող ներշնչել: Ճշմարտությունը զովագրի կարիք չունի:

Հերոդոտոսի պատմությունը պարունակում է կետեր, որոնք խորհելու տեղիք են տալիս: Այստեղ քատերաքեն են ելնում բազմաթիվ դերասաններ: Նախ՝ Կամբյուսեսի մախարար Պրեքսասպեսը (ավելի ճիշտ՝ Պրաքսասպես), որին հանձնարարված էր վերջ տալ Բարդիյային: Նա գնում է Մուգա (Շոշ) և կատարում եղբայրասպան հրամանը, ըստ ոմանց՝ որսի ժամանակ, ըստ ուրիշների՝ զոհին գցելով Էրիթրեական ծովը, որին այստեղ պետք է հասկանալ իբրև Պարսից ծոցը: Ապա՝ մոզի եղբայր Պատեյզիտեսը, որը հղացել էր իր եղբորը սպանված իշխանի տեղ անցկացնելու միտքը: Մոզը նույն անունն է կրում, ինչ որ Բարդիյան (հունացված ձևով՝ Մմերդիս), և զարմանալիորեն նման էր Բարդիյային: Մոզը գրավում է պալատը և ամուսնանում Բարդիյայի քույր և կին Ատոսսայի ու Բարդիյայի մորեղբայր, պալատի աստիճանավոր Օտանեսի դուստր Փայդիմեի հետ: Մոզի խաբեության հայտնաբերման պատիվը Օտանեսին է պատկանում և ոչ թե Դարեհին: Իսկապես զարմանալի է, որ մոզի երկու կանայք՝ Ատոսսան և Փայդիմեն, մեկը՝ Բարդիյայի քույրը, մյուսը՝ նրա հարազատ զարմուխին, չէին նկատել, որ իրենց ամուսին մոզը Բարդիյան չէ: Օտանեսը Փայդիմեին բացատրում է, որ Կյուրոսը ժամանակին կտրել է մոզի ականջները: Փայդիմեն ստուգում և հաստատում է իրողությունը: Օտանեսն այլևս չի կասկածում, որ մոզը խաբեքա է: Նա հինգ ուրիշ գործակիցների հետ դավադրություն է սարքում: Այդ միջոցին Պարսկաստանից Մուգա (Շոշ) է գալիս Դարեհը և միանում դավադիրներին: Նրանք գրավում են պալատը, սպանում քուրմին ու նրա եղբորը: Դա տեղի է ունենում Շոշում, որը չի համընկնում Բահիստանի արձանագրության հետ, ըստ որի՝ սպանությունը կատարվել է Մարաստանում՝ Միկայախուվատի ամրոցում:

Ապա դավադիրներն սկսում են խորհրդակցել կառավարության երեք ձևերից մեկն ընտրելու մասին՝ դեմոկրատիա, օլիգարխիա և միապետություն, ու կանգ առնում միապետության վրա: Հայտնի է այն ուղին, որը Դարեհին գահին հասցրեց: Դա ժառանգական իրավունքը չէր, որին հավակնում է Դարեհը, այլ նրա ձին, որը, շնորհիվ ախռոսպետի խորամանկության, վճռեց իր տիրոջ ճակատագիրը:

Անտարակույս, այս պատմության մեջ երևակայությունն իր բաժինն ունի: Սակայն այնտեղ հիշատակված անձնավորությունները չեն կարող մտացածին լինել: Կեղծված է միայն այն դերը, որ նրանք խաղացել են իրարարձություններում, Բարդիյայի պատմությանը քմահաճ մեկնաբանություն

¹ Հերոդոտոս, III, 159՝ «ցցի հանեց»:

տալու միտումով: Մեզ թվում է, որ Կամբոյուսեսի մահից հետո եղած ամբողջ անցուդարձը խեղաթյուրված է:

Ինչո՞ւ է Կամբոյուսեսը ստիպված լինում ազատվել իր եղբորից: Հերոդոտոսը պատրաստ է պատասխանելու: Բարդիյան մասնակցել էր Եգիպտոսի դեմ կատարած Կամբոյուսեսի արշավանքին, որի ընթացքում Եթովպիայի թագավորը մի հասա ու հզոր աղեղ էր ուղարկել, անշուշտ, իր սեփական ուժը ցուցադրելու համար: Պարսիկներից ոչ ոք բավական ուժեղ դուրս չեկավ այն գործածելու համար: Միայն Բարդիյային հաջողվեց երկու մատով լարել այն և դրանով, բնականաբար, մեծ անուն շահեց: Կամբոյուսեսը նախանձեց և անմիջապես եղբորը Պարսկաստան ուղարկեց ու միևնույն ժամանակ գաղտնի հրաման տվեց Պրեքսասպեսին՝ նրան սպանել: Կտեսիասին հայտնի է այս պատմությունը, և նա այն մեջ է բերում Կյուրոսի ժամանակ: Դերբիկների դեմ կատարած արշավանքի ժամանակ է, որ Կյուրոսը ստացել էր թշնամու թագուհու կողմից ուղարկված աղեղը: Մասագետների և նրանց թագուհի Թոմիրիսի դեմ կատարած ճակատագրական պատերազմի մասին է խոսքը: Գալով աղեղին, Կտեսիասը Բարդիյային հիշատակում է Տանյուքսարես անվան տակ, որ նշանակում է «հզոր մարմին», կատարելապես դյուցազներգական ածական և Բարդիյայի ժողովրդական բարձր համբավի անվիճելի ապացույց:

Ոճիրի պաշտոնական մեկնակերպը չի անտեսում Բարդիյայի համբավը: Նա Բարդիյայի սխրամբքը տեղափոխում է Եգիպտոսի արշավանքի պահը միայն այն նպատակով, որ պատճառ լինի նրա սպանության: Եթե Կամբոյուսեսը վախենում էր իր եղբոր հռչակից, կամ եթե այն աստիճան նախանձում էր, որ ուզում էր նրան սպանել, նա յոթ տարի չէր սպասի այդպիսի ոճիր կատարելու համար: Ջանի որ պատճառը վիճելի է, ոճիրը դառնում է խախտա: Իրականում ստուգապես հայտնի չէ, թե ում կողմից և ինչպիսի պայմաններում էր սպանվել Բարդիյան: Պրեքսասպես նախարարը, քանի դեռ ապրում էր, ուրանում էր իր հանցագործությունը և ինքնասպանության ժամանակ միայն ընդունեց իր հանցանքը: Մահվան դատապարտված մեկի խոստովանությունը արժեք չունի լուրջ դատաբանության համար: Նմանապես հայտնի չէ, թե զոհին ոչնչացրել են պալատո՞ւմ, որսի ժամանակ, թե՞ Էրիթրեական ծովում:

Ամեն ինչ գալիս է ասելու, որ Բարդիյան սպանվել է ոչ թե Կամբոյուսեսի հրամանով, այլ, իհարկե, յոթ դավադիրների կողմից: Ինչ որ պաշտոնական մեկնակերպում ասված է մոզ Բարդիյայի վերաբերյալ, իրականում վերաբերում է իսկական Բարդիյային: Հետևաբար, մոզ Բարդիյա գոյություն չի ունեցել: Դա Դարեհի կողմից ստեղծված ուրվական է:

Համաձայն իր հոր վերջին կարգադրությունների, Բարդիյան իշխում էր պետության ամբողջ արևելյան մասի վրա, որոնք էին՝ Պարթևստանը, Կարմահան և այս վերջիններից արևելք գտնվող նահանգները՝ Ջորամնիան կամ Խորեզմիան, Բակտրիան՝ ներառյալ Մարգիանեն և նույնիսկ Արաքոսիան: Դրանով է բացատրվում այն կատաղի դիմադրությունը, որ այդ նահանգները ցուցաբերեցին Դարեհի դեմ: Կամբոյուսեսի բացակայության, կամ զուցե, Եգիպտոսից վերադառնալու ճանապարհին նրա մահվան լուրը լսելուց հետո, թագի օրինավոր ժառանգ Բարդիյան գալիս է Սուգա մայրաքաղաքը և գլխին դնում խույրը: Չմոռանա՞նք, որ պարսիկները մի սովորություն ունեին, որի համաձայն թագավորները արշավանքի պատրաստվելիս ապահովում էին հաջորդականությունը իրենց ժառանգորդ նշանակելով¹: Կամբոյուսեսը ուրիշ ժառանգ չունե՞ր, բացի իր միակ եղբայր Բարդիյայից:

Կամբոյուսեսն իր բռնակալական բնավորության համար երկրում սիրված չէր: Նրա երկու նախարարները ոչ մի պատճառ չունեին նրան խնայելու: Նա դաժանորեն սպանել էր Պրեքսասպեսի որդուն և կտրել էր տվել ականջները Պատեյզիտեսի, որը ոչ թե մոզի եղբայրն էր, այլ հենց ինքը՝ մոզը²: Իհարկե, վերոհիշյալ պաշտոնյաները առաջինը կլինեին Բարդիյայի թագադրությունը շնորհավորողներից:

Կյուրոսպեղիայի վերջին գլխում Ջսենոփոնը նկարագրում է պարսկական պետության անկումը, որն սկսվել էր Կյուրոսի մահից հետո, երբ գժտություն ծագեց նրա որդիների միջև և նահանգներն ապստամբեցին: Նա գիտե, որ Կյուրոսը պետությունը բաժանել էր իր երկու որդիների՝ Կամբոյուսեսի և Թանանոքսարես-Բարդիյայի միջև: Խռովությունների հեղինակը՝ կեղծ Բարդիյան, Ջսենոփոնի կողմից նկատվել է որպես Կյուրոսի որդի, այսինքն՝ որպես իսկական Բարդիյա:

Եսթիոսը նույնպես հիշատակում է Բարդիյային, որին անվանում է Մարդիս: Նրա «Պարսիկներ» ողբերգության մեջ Դարեհի ուրվականը երևում է և ասում, որ Մեդոսից ու նրա որդուց, Կյուրոսից ու նրա որդուց հետո հինգերորդ թագավորը եղավ Մարդիսը, *αίσχυνή πάτρα θρόνοισι τ'άρχαλοισι* «հայրենիքի և հին գահի ամոթը», որին քաջ Արտափրենեսն իր գործակիցների հետ խորամանկությամբ սպանեց: Որից հետո «ճակատագիրն ինձ տվեց, - ասում է Դարեհը, - ինչ որ ես ցանկանում էի»³:

¹ Հերոդոտոս, VII, 2:

² Հերոդոտոսն ասում է, որ ականջները կտրել էր Կյուրոսը: Հավանական է, որ այս չափազորության հեղինակը Կամբոյուսեսը լինի, ինչպես ասում է Հուստինոսը:

³ Եսթիոս, Պարսիկներ, 765-779:

Մարդիսը, որ քվարկված է իդեալական թագավոր Կյուրոսի կողքին, չի կարող խաբերա լինել: Մարդիսի հասցեին ասված նախատական խոսքերը ակնարկություն չեն նրա կեղծ լինելուն: Եթե նա կեղծ Մարդիս լիներ, նրան այդպես էլ կորակեին: Այդ խոսքերը Դարեհի բերանում ուրիշ իմաստ ունեն. Դարեհը, բնականաբար, պետք է վարկաբեկեր մի մարդու, որից խլել էր թագը: Դա իր հափշտակությունն արդարացնելու ձև է:

Արտափրենեսը պարսկական Արտափրենես անունն է, իսկ Արտափրենեսը վերարտադրում է Ինտափրենես անունը, հին պարսկերեն՝ Վինդաֆառնա: Դարեհն այդ անունով մի եղբայր ուներ, բայց խոսքը նրա մասին չէ: Յոթ դավադիրներից մեկը այդ անունն էր կրում: Գուցե, նա դավադրության իսկական կազմակերպիչն էր, հակառակ Հերոդոտոսին, որն այդ դերը Օտանեսին է վերագրում: Դարեհը, քվելով իր գործակիցներին, առաջին հերթին նշում է Ինտափրենեսին, անտարակույս, որովհետև նա էր սպանել Բարդիսյային: Ավելի ուշ Դարեհը նրան մահվան դատապարտեց իր ամբողջ ընտանիքի հետ միասին, պալատի պահակին նախատելու պատրվակով: Իրական պատճառը նրա հավակնոտությունն էր. պատմագիրը խոստովանում է, որ նա աշխատում էր խռովություն սերմանել¹: Նշանակում է՝ նա հավակնություն ուներ գահ բարձրանալու:

Եսփիտը նկատում է, որ թագավորությունը Դարեհին հասավ որպես բախտի պարգև, հետևաբար, ուրեմն, ոչ որպես ժառանգություն:

Դարեհի ժամանակ ամբողջ երկիրը բռնկվեց խռովահույզ ապստամբությանը: Դա արդեն լավագույն ապացույցն է, որ Բարդիսյայի գործում մթին ու խարդախ չարագործություն էր կատարվել: Դարեհը Բահիստանի ժայռի վրա խնամքով փորագրել տվեց ապստամբությունների պատմությունը: Հակառակ կրկին ու կրկին արված հավաստիացումներին, թե ինքը սիրում է ճշմարտությունը, ատում է սուտը, իսկ իր հակառակորդները ստախտներ են, այնուհանդերձ, փորագրված տարեգրությունը չի դիմանա քննադատության: Որպեսզի նման հավաստիացումների ազդեցության տակ չընկնենք, անօգուտ չէր լինի իմանալ թագավորի անձնական կարծիքը ճշմարտության ու ստի մասին: Պատմահայրն իր հոտառության սքանչելի ապացույցն է տվել՝ մեջբերելով Դարեհի մի ճառը, որը վերին աստիճանի բնորոշ է: Դավադիրների խորհրդում Դարեհը զարգացնում է այն միտքը, թե «այն դեպքում, երբ անհրաժեշտ է ստել, չպետք է խղճի խայթ գգալ: Ստողը նույն բանն է հետապնդում, ինչ որ ճշմարիտ խոսողը: Ստում են որևէ օգուտ քաղելու համար, նախընտրում են ճշմարտությունն ասել կամ որոշ առավելություն ձեռք բերելու, կամ մեծ վատաբերություն շահելու համար: Կարճ ասած, սուտը և ճշմարտությունը միմիայն երկու միջոցներ են նույն նպատակին հասնելու համար»²:

Իհարկե, չի կարելի կուրորեն հավատալ նման մտայնություն ունեցող մարդու պատմածին: Այդպիսին է Բահիստանի պատմությունը: Հեղինակն այնտեղ մեկից ավելի անգամ հայտարարում է, որ իր ընտանիքը թագավորում էր շատ վաղուցվանից երկու ճյուղերով: Նա խնամքով շարադրում է այն ճյուղի ծննդաբանությունը, որին ինքն էր պատկանում, բայց զգուշանում է մյուս ճյուղի ծննդաբանությունը ներկայացնելուց: Նա բավարարվում է ասելով, որ ինքն իններորդ թագավորն է, բայց լռություն է պահպանում այն կարևոր կետի վերաբերյալ, թե ինչպես է նա ժառանգել գահը, երբ իր հայրը և նույնիսկ պապը, երկուսն էլ դեռ կենդանի, սոսկ մասնավոր անձինք էին: Նա հաճախ կրկնում է՝ Ahuramazdah xšathram mana frabara - Ահուրամազդան ինձ փոխանցեց թագավորությունը, որով, գուցե, ակնարկվում է, թե հաջորդականության կարգում ցատկ կատարվեց, որպեսզի հերթն իրեն հասնի:

Դարեհն իր գահակալության մասին խոսում է որպես սովորական գահակալության, որպես հաջորդության իրավունքի բնական արդյունքի, և հավաստիացնում, որ ամբողջ պետությունը հպատակվեց իր իշխանությանը՝ հարկ տալու և իր հրամանները կատարելու առումով: Պետությունը բաղկացած էր քսաներեք երկրներից՝ Պարսա (Պարսկաստան), Ուվադյա (Էլամ), Բաբիլոն (Բաբելոն), Աքորա (Ասորեստան), Արաբայա (Արաբիա), Մուդրայա (Եգիպտոս), tyaiy drayahya (Ժովի երկիր), Սպարդա (Մարդես), Յաունա (Հոնիա), Մադա (Մեդիա, Մարաստան), Արմինա (Հայաստան), Կատպատուկա (Կապադովկիա), Պարթավա (Պարթևստան), Չարանկա (Դրանգիան), Հարաիվա (Արիես), Հուվարազնի (Խորեզմիա), Բակտրիշ (Բակտրիան), Սուգուդա (Սոգդիան), Գանդարա (Գանդարիա), Մակա (Սկյութիա), Թատագուշ (Մաքթագիդիա), Հարախուվատիշ (Արախոզիա), Մակա (Մեկրան), ընդամենը քսաներեք:

Ամեն ինչ կարգին էր, երբ Գաունատա քուրմը խաղաղությունը խախտեց: Կամբյուսեսը սպանել էր իր եղբայր Բարդիսյային նախքան Եգիպտոսի դեմ արշավանքի գնալը: Նրա բացակայության ժամանակ «ժողովուրդը թշնամացավ Կամբյուսեսին», իսկ սուտը drauga տարածվեց Պարսկաստանում (42), Մարաստանում և ամենուրեք պետության մեջ...

(Անավարտ)

¹ Հերոդոտոս, III, 119:

² Նույնը, III, 72:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Ա

Աշշուրի թագավորների հրամանով շարադրված տարեգրությունները (43), բնականաբար, սովորություն ունեն չափազանցելու Ասորեստանի զենքի հաջողությունները: Ասորագետ գիտնականները պակաս չափով տրամադրված չեն Ասորեստանի առաջնորդների ռազմական արշավանքներին ևս առավել չափազանցված նշանակություն տալու: Նրանք ծայրահեղության են հասցնում, մանավանդ, ասորեստանցիների ռազմական գործողություններն Ուրարտուի տարածքում: Նրանց ասելով՝ ասորեստանյան բանակները հասել են մինչև Կասպից ծովը:

Ասորեստանցիները ձեռնարկել են երեք մեծ արշավանք դեպի Ուրարտու՝ Թիզլաթպալասար I-ի ժամանակ (1117-1080), Մալմանասար III-ի օրով (859-824) և Սարգոնի ժամանակ (721-705): Այս արշավանքների ճանապարհացույցի քննությունը, որ մենք առաջադրում ենք կատարել ստորև, ցույց կտա, որ ասորեստանցի ներխուժողները երբեք չեն անցել այժմյան Մանազկերտի շրջանից այն կողմ:

Թիզլաթպալասարի արշավանքը Ուրարտու՝ տեղի է ունեցել 1114 թվականին, նրա թագավորության երրորդ տարում: Այդ ժամանակաշրջանում Ուրարտուն ծանոթ էր ասորեստանցիներին Նաիրի բավական անորոշ տերմինի ներքո: Այսպես էին կոչում Ասորեստանին կից, նրանից հյուսիս ընկած և զանազան ժողովուրդներով բնակեցված երկրները, որոնք տարածվում էին Եփրատից մինչև Ջազրոս լեռը և նույնիսկ ավելի հեռու: Թիզլաթպալասարը Նաիրի (Ուրարտու) մտավ Ջիբենե-սուի կիրճով՝ հին Սուպնատի, ինչպես ցույց է տալիս այն արձանագրությունը, որ նա թողել է Սուպնատի ակունքի մոտ գտնվող ժայռի վրա: Այստեղ նա հայտարարում է, որ նվաճել է «Ամուրրու երկիրը Մեծ ծովից մինչև Նաիրի երկրի ծովը», այսինքն՝ Միջերկրական ծովից մինչև Վանա լիճն ընկած տարածությունը¹:

¹ E. Schrader, Keilinschriftliche Bibliothek, I, t. 49: Budge and King, Annals of the Kings of Assyria, t. 2 127:

Ասորեստանի թագավորը կամուրջ է գցել տալիս և անցնում Եփրատը, այսինքն՝ Արսանիասը, հայկական Արածանին: Նաիրիի քաաներեք թագավորներ դուրս են գալիս ներխուժողի դեմ: Դրանք հետևյալ երկրների թագավորներն էին՝ Թումմե, Թումուբե, Թուալի, Կինդարի, Ուզուլա, Ուն-զամունի, Անդիարե, Պիլակիննի, Ատուրգինի, Կուլիբարգինի, Շինիբիրնի, Խիմուա, Պախտերի, Ուիրամ, Շուրուրիա, Աբաննի, Ադաննի, Կիրինի, Աբայա, Ուզինա, Նազարիա, Աբարսիունի և Դայաննի:

Ասորեստանցիները հարձակվում են քաաներեք թագավորների վրա, ջախջախում նրանց գործերը և 120 մարտակառք վերցնում: «Նաիրի երկրների վաթսուն թագավորներին, - շարունակում է մեր վավերագիրը, - և նրանց, ովքեր օգնության էին հասել, հետապնդեցի մինչև Վերին ծովը»¹:

Չարմանալի է տեսնել թշնամիների ավերանալը 23-ից 60-ի, ուրեմն՝ 37-ի հավելումով, առանց որևէ անուն մեզ հաղորդելու: Ավելի ևս ուշագրավ է, որ ամփոփելով իր թագավորության առաջին հինգ տարիների արշավանքների ամփոփելով իր թագավորության առաջին հինգ տարիների արշավանքը, արդյունքները, ուրեմն, ներառյալ Նաիրիի (Ուրարտու) դեմ արշավանքը, Ասորեստանի թագավորը պնդում է, թե հպատակեցրել է 42 թագավորների և երկրների՝ Չարից մինչև Եփրատից այն կողմ, խեթերի երկիրը և «արևմուտքի Վերին ծովը»²: Այսքան ակներև հակասությունը կասկածի տակ է դնում 60 թիվը՝ մեկ šuši, որը, գուցե, պետք է կարդալ 1/2 šuši = 30: Իր երրորդ արշավանքի նկարագրության մեջ Թիզլաթպալասարն ասում է, որ նվաճել է Նաիրի երկիրը Թումմեից մինչև Դայաննի երկիրը և Վերին ծովը: Նաիրիի երեսուն թագավորները բերվել են Աշշուր քաղաքը³:

Համենայն դեպս 60 թիվը չի արդարանում: Ե. Ֆորերը դրան մեծ կարևորություն է տվել, որպեսզի կարողանա հաստատել, թե Թիզլաթպալասարն իր նվաճումներն առաջ է մղել, մի կողմից՝ մինչև Շորոխի հովիտը, իսկ մյուս կողմից՝ մինչև Կասալից ծովը, այսպիսով հպատակեցնելով ամբողջ Հայաստանը և Ատրպատականը: Այդ առթիվ մույն գիտնականը բույլ է տվել տանը և Ատրպատականը: Այդ առթիվ մույն գիտնականը բույլ է տվել բոլորովին քմահաճ աշխարհագրական մույնացումներ: Քսաներեք երկրներից վեցը մույնացվում են հետևյալ կերպ՝ Պախտերի - Փայտակարան, Ատուրգինի - Դերքսեն, Անդիարե - Անգաֆ (Անձավ), Կուլիբարգինի - Կոլարգեն, Ադաննի - Օտենն և Աբարսիունի - Օբորդենն(°): Դրանք ամբողջովին անհիմն ենթադրություններ են: Թիզլաթպալասարի՝ Մանազկերտում թողած արձանագրությունը ստույգ ելակետ է հանդիսանում նրա ճանա-

¹ Budge and King, 624. աշխ., սյուն, IV, 96, էջ 68:

² Նույնը, VI, 39, էջ 82:

³ Նույնը, № 2, 1՝ 8-9, էջ 117-118:

պարհացույցը կազմելու համար: Կ. Ֆ. Լեման-Հաուպտն այն հայտնաբերել է Յոնջալուում («առվույտի մարգագետին»), Մանազկերտից 30 կիլոմետր հեռավորության վրա: Նրա բովանդակությունն է. «Հոռ թագավոր Թիզլաթպալասարը, աշխարհի թագավոր, Աշշուրի թագավոր, չորս երկրանասերի թագավոր, Նաիրի երկրի նվաճողը՝ Թումմեից սկսած մինչև Դայաննի, Կիրիսի (Խարիսի) երկրների նվաճողը մինչև Մեծ ծովը»¹:

Արսանիասն անցնելուց հետո, ուրեմն, Թիզլաթպալասարը շարժվել է Մանազկերտի ուղղությամբ: Քանի որ Յոնջալուում գտնվում է Արսանիասի ձախ կամ հարավային ափին, Ասորեստանի թագավորը Յոնջալու հասնելու համար պետք է անցած լինի գետը: Նա շարժվել է գրեթե այն ճանապարհով, որն այժմ տանում է Բալուից Մանազկերտ: Առաջին անգամ մապետք է, որ գետն անցած լինելը Տանձուտ հայկական գյուղի դիմացով, իսկ երկրորդ՝ Մուշի մոտով:

Երկու անգամ իր հաղորդման սկզբում և վերջում, Թիզլաթպալասարն ասում է, որ ինքը հասել է Նաիրի հեռավոր երկրները Վերին ծովի ափին²: Դրանով մա նշում է Վանա լիճը: Նրա մեծ նախորդը՝ Թուկուլթի-Նիկուրտա I-ը (1243-1221), այդպես է կոչել մույն լիճը, հայտարարելով, որ ինքը փանցել է մի լեռնային շրջան, ուր ոչ ոք իրենից առաջ չի անցել: Այնտեղ մա կռիվ է մղել Նաիրիի քառասուն թագավորների դեմ ու նվաճել Նաիրի երկրները և Վերին ծովի ափին գտնվող երկրները³:

Շատ հավանական է թվում, որ Թիզլաթպալասարի առաջխաղացման ծայրագույն կետը դեպի Մանազկերտ վերջանում է Յոնջալուում: Այստեղ՝ Յոնջալուի դաշտում էր, որ Ասորեստանի թագավորը վճռական ճակատամարտ տվեց քաաներեք կամ վաթսուն (կամ երեսուն) թագավորների համադաշնությանը և նրանց դաշնակիցներին: Այն թագավորների տիրույթները, որոնք միավորվեցին թշնամու բանակի առաջխաղացումը կասեցնելու համար, ամտարակույս, մեծ մասամբ խմբված էին ասորեստանցիների առաջխաղացման ճանապարհի երկու կողմերը՝ Արսանիասից մինչև ճակատամարտի վայրը, Մանազկերտի մոտ: Ներքոնիշյալ մույնացումները, որ մենք առաջարկում ենք, թվում է, թե հաստատում են մեր տեսակետը:

¹ K. Lehmann-Haupt, «Sitzungsberichte des Königl. Preussischen Akad. d. Wiss.», 1900, էջ 626: Նաև Armenien einst u. jetzt, I, էջ 433. II, I, էջ 115: Աշխարհագրական անունը, որ առաջ կարող էին Նիմնե, այստեղ՝ Յոնջալուի արձանագրության մեջ, կարողացվում է Թումմե: Կիրիսի միշտ ընթացումը Խարիսի է՝ ըստ Է. Ֆորերի. Reallexikon d. Assyriologie, I, էջ 281:

² Budge and King, 624. աշխ., սյուն, IV, 50, էջ 64 և IV, 100, էջ 68 - tamdi elimiti:

³ E. Forrer, Reallexikon, էջ 269:

Հոսմեական հին ճանապարհացույցները պահպանել են մի քանի նաիր-յան ծագումով անուններ՝ Իսումբո 17, Նազարի 24, Անտերա 24, Սորուա 27, Կատիսպի 39, Ռաուգոնիա¹:

Raugonia-ն, ըստ Յո. Մարկվարտի հավանական ենթադրության, Բա-գաուոնա-ի աղավաղումն է, հայկական Բագավանի, քաղաք Բագրևանդի (Ալաշկերտ) շրջանում: Բագավանում էր, որ Գրիգոր Լուսավորիչը հիմնեց Ս. Հովհաննես Կարապետի եկեղեցին, որ այժմ բուրբերի կողմից անվան-վում է Ուշ-Քիլիսե, Դիադիմի մոտ:

Isumbo-ն հավանաբար համապատասխանում է Ծումբին (Ծումբ - Ծում-բո)², որը հիշատակված է Ասողիկի մոտ: Ատրպատականի մուսուլմանա-կան ամիրան ջախջախվեց Ծումբո գյուղի մոտ հայ և վրաց իշխանների կողմից, 998 թվականին: Գյուղը գտնվում էր Ապահունիք գավառում, Մա-նազկերտի շրջանում:

Միջանկյալ կայանները գետեղվում են Բագավանի և Մանազկերտի միջև: Նաիրիի քաներեք երկրների միջև գտնվում են Անդիաբեն, Շուրու-րիան, Նազարիան, որոնք համընկնում են հռոմեական Անտերա, Սորուա, Նազարի կայաններին: Համապատասխանությունը, անշուշտ, պատահա-կան չէ: Իսումբոն կամ Ծումբոն չի՞ համընկնում արդյոք Թումմեի հետ: Catispi-ն հիշեցնում է հայկական Օրդսպուն, եթե Catispi-ի փոխարեն կար-դացվի Oatispi կամ Ortispi³:

Նաիրիի քաներեք երկրների թվարկության մեջ Թումմեն և Դայանեին կազմում են երկու հակադիր կետեր: Եթե Թումմեն գետեղված էր Մա-նազկերտի մոտ, ապա Դայանեին կրնկնի Արսանիասի գետանցի շրջա-նում, որտեղից մեկնել էր Թիզբապալասարը:

Ընդհանրապես ենթադրվում է, որ Դայանեին հայկական Տայքի հին ձևն է, դասական հեղինակների *Τάοχοι*-ն: Նույնիսկ եթե ընդունվի այս նույ-նացումը, որը, մեր կարծիքով, բավական թեական է, դրանից բուրբովին չի հետևում, որ Դայանեին համապատասխանում է հետագայի Տայքին մակ աշխարհագրական առումով, այսինքն՝ որ ընկած լինի Շորոխի վտակ Օլքիի ավազանում: Իրականում Դայանեին գտնվում էր Բալուի հյուսի-սային շրջանում, նշանակում է՝ Արսանիասի գետանցից հյուսիս: Թիզբա-

պալասարն այդքան առաջ չի գնացել: Նրա հակառակորդները՝ Նաիրիի քաղաքները ևս այդչափ հեռու չէին ընթացել: Սրանք ապավինում էին Սրմանց և Ծաղկունյաց (բուրբերի Բինգյոլ և Ալադադ) լեռների անմատչելի շղթային:

Նաիրիի քաներեք երկրներից մեկը՝ Պաիտերին (Է. Ֆորերն այն նույ-նացնում է Փայտակարանի հետ, որը Արաքսի և Կուրի՝ միախառնման վայրում կազմած եռանկյունին է), տեղավորված է նույն Բալուի շրջանում, Դայանեիի մոտերքում: Թիզբապալասարը հայտարարում է, թե իր երկ-րորդ արշավանքի ընթացքում նվաճել է Թումմեից սկսած մինչև Դայանեի երկրները՝ Խիմուան և Պաիտերին¹: Բալուում հայտնաբերված մի ուրար-տական արձանագրության մեջ Մենուա քաղաքում այլ քաղաքների շար-քում նշում է Պուտերի-անի քաղաքը²: Շատ հավանական է, դա հենց Պաիտերին է: Այս բուրբը գալիս է ապացուցելու, որ այդ երկիրը տե-ղադրված էր Դայանեիի մոտ և Բալուի մերձակայքում:

Եթե Թիզբապալասարն ասում է, որ նվաճել է «Թումմեից մինչև Դա-յանեի և Կիլիսիից (Խարխի) մինչև Մեծ ծովը» ընկած հողերը, ապա նա ուրիշ բան չի ուզում ասել, քան այն, որ հետագայում կասի Մալմանասար III-ը (859-824), թե ինքը նվաճել է «Նաիրի ծովից սկսած մինչև Արևմուտքի Մեծ ծովը»³, այսինքն՝ Միջերկրական ծովը և ոչ թե Սև ծովը կամ Կասպից ծովը ընկած հողերը: «Արևմուտքի Վերին ծովը» նորից Միջերկրականն է⁴:

Նաիրիի քաներեք երկրները պարփակված էին Արածանիի ավազա-նում: Ասորեստանի քաղաքորդ պնդում է, որ ջախջախել է քաներեք կամ վաթսուս քաղաքների համադաշնությունը և նրանց պարտադրել է վճա-րելու 1200 ձի և 2000 գլուխ անասուն հարկ: Իսկապես որ դա աննշան բան է վաթսուս քաղաքների համար և համարյա ոչինչ՝ հաղթական մի արշա-վանքի համար, մանավանդ, եթե նա առաջ էր խաղացել մինչև Կասպից ծո-վը, ինչպես կարծում են ոմանք:

Թագավորական տարեգրությունը լռություն է պահպանում հաղթական քաղաքորդի վերադարձի ճանապարհի մասին: Սակայն մի տեղ կա, որը հատուկ ուշադրության է արժանի. Թիզբապալասարը հայտարարում է, որ արշավանքի ընթացքում հարձակվել է Միլիդիա քաղաքի վրա, որը գտնվում է Խանիգալքատ երկրում, որի կառավարիչն ապստամբել էր: Հենց որ քա-

¹ K. Miller, Itiner. Roman., էջ 63 (իր. 1916 թ.):

² Իսումբոյի սկզբնառաջ հայերենի ի նախորդն է, ինչպես "Ιβαν-ի մեջ (Կեղերեն, II, էջ 580), հայերեն վան. հմմտ. հունարեն՝ εἰς τὴν πόλιν: Հայերեն «Ծումբ» ծանոթ է սեռական հոլովածով՝ Ծմբոյ, հին ուղղականը պետք է լիներ Ծումբո, շեշտի տեղափոխման հետևանքով վերջին ձայնավորն ընկնում է:

³ Ըստ VII դարի պատմիչ Մեթեոսի, էջ 100, Օրդսպուն գտնվում էր Բերկրի գետի հովտի և Կոզովիտի (Բայազետի շրջան) գավառի միջև, ուրեմն՝ Մանազկերտից արևելք:

¹ Budge and King, նշվ. աշխ., № I, 15-16, էջ 111-112: E. Forrer, Reallexikon, I, էջ 283:

² A. Sayce, The Cuneiform Inscriptions of Van, JRAS, հուն. XIV (1882), № XXXIII: Կ. Լեման-Հաուպտն առաջարկում է կարդալ *še-be-teriani*, քանի որ *še-be* նշանները նմանվում են *pu-hé*:

³ K. Lehmann-Haupt, Materialien zur ältesten Geschichte Armeniens, էջ 33-40:

⁴ Budge and King, նշվ. աշխ., սյուն. VI, 43-44, էջ 83:

գավորը երևում է, ընթացող իշխանը ուրեքն է ընկնում և թողություն ստանում¹: Արածանիի գետանցից մինչև Մելիտենն ընկած տարածությունը նույնքան երկար է, որքան այնտեղից մինչև Մանազկերտ: Ե՞րբ կարող էր թագավորն այդպիսի երթ կատարել: Թվում է, թե թագավորը վերադարձի ճանապարհին էր հպատակեցրել ընթացող կառավարչին: Դա գալիս է ասելու, որ Թունմեի ճակատարմարտից հետո Թիզլաթպալասարը մահանջել է և վերադարձել իր ելման կետը, կամ, գուցե, թաքցնելու համար իր արշավանքի անմաստ արդյունքը, նա իր զենքի ուժը ցույց է տվել Մելիտենում և, վերջապես, վերադարձել իր աթոռանիստը: Համենայն դեպս, Թիզլաթպալասարը Վանա լճի շուրջը շրջան չէր կատարել՝ իր նստավայրը դառնալու համար: Մալմանասարի արշավանքի քննությունը նոր ապացույցներ կընձեռի ի նպաստ Թիզլաթպալասարի ճանապարհացույցի, ինչպես որ մենք այն ներկայացրինք:

Բ

Մալմանասար III-ի ժամանակ (859-824) Հայկական լեռնաշխարհը, որը մինչ այդ Նաիրի անվանումը բաժանում է իր հարևան երկրների հետ, առաջին անգամ հանդես է գալիս Ուրարտու անվան ներքո²: Նոր անունն, անշուշտ, նոր իրադրության հետևանք էր՝ միավորման, որը տեղի էր ունեցել երկրի քաղաքական կազմակերպության մեջ: Մալմանասար III-ը մեկից ավելի անգամ զենք է վերցրել Ուրարտուի դեմ: Իր թագավորության երրորդ տարում՝ 855 թվականին կատարած արշավանքն ամենից կարևորն է: Հետևենք նրա ճանապարհացույցին Բիթ-Չամանիից՝ Ամիդի (Դիարբեքի) շրջանից սկսելով:

Թագավորն անցնում է մի քանի բարձր լեռներ և մտնում Ինգիտի՝ Խուսայի շրջանը: Նա ավերում է երկիրը, հարուստ ավար հավաքում, մնացածը հրկիզում է: Մալուրի կոչված վայրում նա կանգնեցնում է մի մեծ կոթող, որի վրա արձանագրում է իր գործերը և սխրանքները: Ապա անցնում է Արածանին, մտնում Սուխմիին և նրա հետ վարվում այնպես, ինչպես Ինգիտիի հետ: Սուխմիից մեկնելով, թագավորը հասնում է Դայանեի: Այն օղակելուց և կրակով բնաջնջելուց հետո նա ուղևորվում է Արամու ուրարտական թագավորի աթոռանիստը՝ Արգաշկու թագավորական քաղաքը: Արամուն սարսափահար լքում է քաղաքը և թաքնվում Ադդուրի լեռան վրա:

Մալմանասարը նրան հետապնդում և կատաղի կռիվ է սկսում, ուր Արամուի 3400 մարտիկները հնձվում են ասուրական զենքերով: Արամուն կորցնում է իր ճամբարը, մարտակառքերը, հեծելազորը, ձիերը, հորթերը և փախչում-ապաստանում մի անմատչելի լեռան վրա: Մալմանասարը գրավում է Արգաշկուն և կողոպուտի ու կրակի մատնում շրջակա քաղաքների հետ միասին: Ապա ուղևորվում է դեպի Իրիտիա լեռը և իր թագավորական մեծափառությամբ մի մեծ կոթող կանգնեցնել տալիս: Այնտեղ արձանագրել է տալիս ինչ որ կատարել է Ուրարտուում և այն դնում Իրիտիա լեռան վրա: Այնտեղից մեկնելով, Ասորեստանի թագավորը հասնում է Արամալի, նրա բոլոր քաղաքներն ավերում և գնում Չանգիունա: Չանգիունայի կառավարիչն ընկնում է թագավորի ոտքերը և թողություն ստանում: Հետո թագավորը իջնում է Նաիրի ծովը և Աշշուրի հզոր զենքերը թաթախում ջրերի մեջ, պատրաստել է տալիս իր թագավորական անձի մի արձան և արձանագրում իր սխրանքները:

Ծովի մոտից հեռանալով, Ասորեստանի թագավորը մտնում է Գիլգանի: Այդ երկրի թագավորը դիմավորում է նրան և հարկ վճարում: Գիլգանից Մալմանասարը գնում է Խուրուշկիայի Կակի թագավորի Սիլախա բերդը: Այսպես, «վերադառնալով Ինգիտի լեռնանցքով, թագավորը դուրս է գալիս Կիրրուրի լեռնանցքով Արբելայից վերև»³:

Այդ երկու ճանապարհների միջև տեղավորված երկրները, որոնցով անցել է Մալմանասարը, հետևյալներն են՝ Ինգիտի, Սուխմի, Դայանեի, Արգաշկու մայրաքաղաքը, Արամալի, Չանգիունա, Վանի ակի, Գիլգան և Խուրուշկիա: Մեկ ուրիշ արձանագրության (Քարակոթողի) մեջ Մալմանասարը, նույն արշավանքի պատմությունը համառոտելով, ասում է, որ անցել է Ալգի, Սուխմի, Դայանեի, Թունմե, Արգաշկուն, Գիլգան և Խուրուշկիա երկրներով²: Ալգին համապատասխանում է Ինգիտիին, Թունմեն շատ կարևոր երկիր է, Արամալին և Չանգիունան զանց են առնված:

Ինգիտին հայկական Անձիտն է, հենրի՝ Անգիտենեն, որն զբաղեցնում էր Ծովք կոչված փոքր լճի շրջանը, թուրքերեն՝ Գյուլջիկ: 832 թվականին Մալմանասարը Ուրարտուի դեմ է ուղարկում իր Դայան-Աշուր թուրառանին, որը հասնելով Բիթ-Չամանի, Ամաշուրի լեռնանցքով անցնում է Արսանիսար³: Այս լեռնանցքը տարբերվում է մեկ ուրիշ լեռնանցքից, որը Թունիբունի էր

¹ Budge and King, 624. աշխ., սյուն. IV, 33-41, էջ 71-72:

² Աշուրնասիրալը (884-859) ասում է, որ նվաճել է «Մուլմանտի ակունքից սկսած մինչև Ուրարտուի երկիրը», տե՛ս Budge and King, 624. աշխ., էջ 193-194 և 216:

¹ E. Schrader, Keilinschriftliche Bibliothek, I, էջ 165-169:

² Նույնը, էջ 133:

³ Նույնը, էջ 145:

կոչվում¹ և Սուպնատի ակունքների վրա էր գտնվում: Երկուսն էլ տանում էին դեպի Արածանի, մեկը՝ Բալուից արևելք, մյուսը՝ արևմուտք: Ուրեմն, Սուխմի երկիրը գտնվում էր երկու լեռնանցքի դիմաց, Արածանիի աջ ափին, և համարյա համապատասխանում էր հին Հայաստանի Բալահովտին կամ Բալավիտենեին: Սուխմիից արևելք սկսվում էր Դայանեին, որը տարածվում էր մինչև Թումմե, Մանազկերտի շրջանը: Թիզլաբալասարի ժամանակաշրջանի փոքր պետություններն աներևութացել էին՝ կլանվելով Դայանեիի կամ նույն ինքն Ուրարտուի կողմից: Արամալին ու Չանգիունան տեղադրելու համար պետք է նկատի առնել, որ Մալմանասարը Վանա լճին մոտեցել է Արմիսի մոտ, լճի արևելյան ծայրում, քանի որ այնտեղից նա մեկնում է Գիլգան, որն ընդհանրապես տեղադրում են Ուրմիա լճի ափին, Մալմաստի շրջանում: Հետևաբար, Արամալին և Չանգիունան գտնվում էին Թումմեի կամ ավելի շուտ՝ Արգաշկուի և Վանա լճի ծայրի միջև: Թումմեից հետո գալիս է Արգաշկուն. եթե Թումմեն Յոնգալուի դաշտավայրն է, ապա Արգաշկուն կնույնանա Մանազկերտի (կամ Պատնոնցի, ինչպես արդեն ընդունված է) հետ: Աղդուրի լեռը չի կարող շատ հեռու լինել Արգաշկու մայրաքաղաքից: Այնտեղ ծավալված ճակատամարտի նպատակն էր մայրաքաղաքի գրավումը: Հաղթանակից հետո հաղթողը տիրանում է քաղաքին: Այնտեղից նա շարունակում է իր առաջխաղացումը դեպի Իրիտիա լեռը: Անշուշտ, նրա միակ նպատակը այնտեղ իր արձանը կանգնեցնելը չէր, այլ Արրամու թագավորին հետապնդելը: Իրիտիա հասնելով, նա հրաժարվում է այդ մտքից և դառնում դեպի Նաիրիի ծովը: Աղդուրին Ալադադն է, իսկ Իրիտիան՝ այդ շրջանի ճյուղերից մեկը: Արամալի հավանաբար նշանակում է Արրամուի կամ Արամուի տիրույթ և որպես կենտրոն ունեցել է նույն Արգաշկուն: Չանգիունան լճին ավելի մոտիկ է: Այնտեղից Մալմանասարն անցնում է Գիլգան և Խուրուշկիայի վրայով վերադառնում իր մայրաքաղաքը:

Ըստ ամենայնի՝ Թումմեն գտնվելիս է եղել Վանա լճի արևելյան կամ ավելի շուտ՝ հյուսիսային ծայրից դեպի արևմուտք, իսկ միջանկյալ տարածությունը կազմում էր Արամալիի և Չանգիունայի շրջանը: Հետևաբար, Է. Ֆորերը և ուրիշներ սխալվում են, երբ Թումմեն փնտրում են Վանա լճից արևելք և կարծում են, թե դա Թոմ գյուղն է՝ Վանից 68 կիլոմետր հեռավորության վրա²: Վ. Բելլը նույնպես սխալվում է՝ նույնացնելով այն Տում-

մուկ-դերեսիի հետ, որը գտնվում է Տիգրիսի վտակ Բատման գետից 25 կմ արևելք¹:

Պետք է զգուշանալ Թումմեն մեկ ուրիշ շրջանի հետ շփոթելուց, շրջան, որի անունը առաջ կարդում էին Նումմե և որն այժմ սովորաբար կարդում են, զուցեև իզուր, Թումմե: Դա մի ընդարձակ շրջան էր, որն ընդգրկում էր Սուրիա, Արուկու, Արուրա և Արուրե քաղաքները Ուրիմի, Արումի և Եթիմի լեռներում²: Աշուրնասիրալան ասում է, որ ինքը «վերադարձել է Նումմեից (հնարավոր է՝ Թումմե) Կիրրուրի երկիրը»³: Մենք տեսանք, որ Կիրրուրիի ճանապարհը գտնվում էր Արբելայից վերև:

Գ

Սարգոնը (722-705) Ուրարտու մտավ Ման կամ Մանա երկրին հարևան Չիկիրտու և Անդիա երկրների դեմ պատժիչ արշավանք կատարելու ընթացքում: Չագրուսից արևելք և Ուրմիա լճից հարավ, Ներքին Չաքի ընթացքի և Չաղաթու գետի միջև ընկած ընդարձակ սարահարթը կազմում էր Մանա պետությունը: Վաղուց ի վեր Մանան երկու հզոր հարևանների՝ Ուրարտուի և Աշուրի, հետաքրքրասիրության առարկան էր դարձել: Մանայի թագավորները խուսանվում էին երկու ուժերի միջև՝ առանց կարողանալու հաստատուն քաղաքականություն վարել ի նպաստ մեկի կամ մյուսի: Այն պահին, երբ թվում էր, թե երկրի ձեռքբերումը Աշուրի համար արդեն ապահովված է, Ուրիշի, Չիկիրտու և Անդիա հարևան երկրները դաշինք են կազմում Մանայի թագավորի դեմ, որը հարձակման է ենթարկվում և սպանվում: Սարգոնն իրավացիորեն Ուրարտուի թագավոր Ռուսայի մատը խառն է տեսնում այդ գործում: Ուրիշ հարևաններ՝ Կարալու և Ալարիա երկրները, քաջալերված դաշնակիցների հաղթանակով, Ուրսայի կամ Ռուսայի կողմն էին անցնելու: Աշուրը Մանայի վրա ունեցած գերիշխանությունը կորցնելու վտանգի տակ էր, և Սարգոնը որոշեց պատժել դավաճաններին ու վերջ դնել Ուրարտուի թագավորի մեքենայություններին:

714 թվականին, իր թագավորության ութերորդ տարում, Սարգոնը դուրս է գալիս արշավանքի և հազիվ թափանցում է Չիկիրտու երկիրը, երբ համկարծ շուտ է գալիս ու մտնում Ուրարտու: Նա, անշուշտ, լսել էր կիսմեքենների՝ Ուրարտու ներխուժման լուրը և Ռուսա թագավորին պատճառած տագ-

¹ F. Delitzsch und P. Haupt, Beiträge zur Assyriologie, VI, I, էջ 148:
² E. Forrer, Reallexikon der Assyriologie, I, էջ 283:

¹ Zeitschrift für Ethnologie, 1899, էջ 263:
² Budge and King, Ճշվ. աշխ., էջ 269-270:
³ Նույնը, էջ 272:

նապը: Հետևաբար, նպաստավոր իրադրություն էր ստեղծվում՝ վտանգավոր մի հակառակորդի հետ վերջնական հաշիվ տեսնելու համար:

Մեր նյութի քննության համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում Սարգոնի երթուղին, մանավանդ, Ուրարտուում նրա կտրած ճանապարհը: Ֆ. Թյուրո-Դանժենը, որը մի լավ հրատարակություն է նվիրել Սարգոնի արշավանքին, իր բոլոր ջանքերն է թափել նաև այդ արշավանքի ճանապարհացույցը ճշգրտելու համար¹:

Ըստ այդ ճանապարհացույցի՝ Սարգոնը, մեկնելով մայրաքաղաքից, հասնում է Ուրմիա լճի շրջանը, Սարադայի վրայով առաջ խաղում մինչև Թավրիզ, շրջանցում է լիճը և Խոյ քաղաքի վրայով ուղղվում է դեպի Վանա լիճը. անցնում է Արճեշ, Ախլաթ, Բիթլիս և Սաիրդ (Սդերդ) քաղաքներով. այնտեղից դառնում է դեպի արևելք և Բոհտանի (Արևելյան Տիգրիս) հովտով անցնում է Խուրուշկիա. ապա՝ Չաբն անցնելուց հետո կանգ է առնում նույն գետի վտակ Նահիլի վազանում գտնվող Մուծածիրում:

Հեղինակը մեծ ջանքեր է թափել այդ ճանապարհացույցը պաշտպանելու համար: Այնուհանդերձ, կարելի է նրան քննադատել համարյա բոլոր կետերում: Կ. Լեման-Հաուպտն արդեն ցույց է տվել, որ Սարգոնը Վանա լճի շրջանը մուտք չի գործել, այլ հասնելով լճի ափին՝ ետ է դարձել Բաշկալայի ուղղությամբ²: Դա համընկնում է մեր կարծիքի հետ: Մենք ծանոթացանք Կ. Լեման-Հաուպտի դիտողությանը, երբ արդեն մեր տեսակետը հաստատված էր, և որը մի տեսակ մեզ երաշխավորում էր, թե չենք սխալվում:

714 թվականին Սարգոնը, իր Կալախ մայրաքաղաքից մեկնելով, անցնում է երկու Չաբերը, մտնում Կուլլար լեռան կիրճերը և կանգ է առնում Մուծիրում:

Դա այն ճանապարհը չէ, որ Ալթուն-քյոպիրուի վրայով տանում է Մուլեյմանին: Արշավանքի նպատակն էր Չիկիրտու և Անդիա երկրների գրավումը, որոնք գտնվում էին Ուրմիա լճի մոտ, ուրեմն, կարիք չկար իջնել մինչև Շեհրիժորի դաշտը և ապա միայն դառնալ հյուսիս: Ամենակարճ ճանապարհն անցնում էր Ռովանդուզի վրայով, բայց Ասորեստանի թագավորը շատ պատճառներ ուներ խուսափելու այդ ուղղությունից, քանի որ Մուծածիրի իշխանությունը, որի տերն էր Ուրգանան, Ուրարտուի թագավոր Ռուսայի հավատարիմ դաշնակիցը, իշխում էր վերոհիշյալ ճանապարհի վրա: Ուրեմն, Ասորեստանի թագավորն ստիպված էր ընտրել Ջեոյ-սանջակի ուղղությունը: Իրոք, այդ քաղաքից արևելք գտնվում է Կուլլարա կոչվող

լեռը, որը տարածվում է Չաբի ոլորանում և ինքն էլ խանգարում է վերջինիս հոսանքը: Կուլլարան հին Կուլլարն է: Մուծիրն կիրճերի ելքում գտնվող դաշտն է, ուր թագավորն իր բանակի գորահանդես է անցկացնում և ապա մտնում Մուրիկաշ՝ մանացիների նահանգը: Այնտեղից նա իջնում է դեպի Պարսուաշ և վերադառնում Մանա՝ Միսսի նահանգը, ու կանգ առնում թագավորական բերդ Սիրդակկայում: Հետո 30 օր ճանապարհ կտրելով՝ հասնում է Չիկիրտուի և Անդիայի սահմանի վրա գտնվող Պանգիշ մանայական բերդը: Թագավորը հասնում է իր արշավանքի նպատակին: Նա անցնում է Իշտարաուրա գետը, հարձակվում Չիկիրտուի շրջան Աուկանեի վրա: Նա ուզում էր պատժել այդ երկրի թագավորին, որը դավաճանել էր իր վեհապետին՝ Մանայի թագավորին, ի նպաստ Ռուսայի, բայց նա իր տեղում չէր՝ Ռուսային օգնության էր մեկնել: Սարգոնը լքում է Աուկանեն և մեկնում Ուիշդիշ մանայական շրջանը, որը գրավված էր Ռուսայի կողմից: Ռուսան այնտեղ՝ Ուաուշ լեռան վրա էր: Կռիվն սկսվում է: Ռուսան ջախջախվում և «փախչում է իր գործերից առաջ». նա լքում է իր Տուրուշպա նստավայրը և քաշվում լեռները:

Beru-ն կամ ասուրական մոդոնը համարյա 6 կիլոմետր էր, ուրեմն, 30 օր-ն 180 կիլոմետր է անում: Դա Մանայի երկու քաղաքի՝ Սիրդակկայի և Պանգիշի միջև եղած տարածությունն է: Ֆ. Թյուրո-Դանժենը Սիրդակկայի շրջան Միսսին և Պարսուաշը տեղադրում է Ուրմիա լճին մոտ: Այնտեղից 180 կիլոմետր հաշվելով, մարդ կհասնի Արաքս գետի ափը՝ իբր այնտեղ գտնվող Պանգիշը հայտնաբերելու համար: Դա բացարձակապես անհեթեթություն է: Մանա երկիրն այդքան հեռու չէր տարածվում, և նույնիսկ շատ կասկածելի է, որ ամբողջ Մանան այդքան մեծ տարածք ունենար: Եթե չեն ուզում beru-ի¹ արժեքը վերանայել ըստ այս ճանապարհի, ոչ էլ թագավորին չափազանցության մեջ մեղադրել, ապա պետք է ընդունել, որ խոսքն այստեղ ասուրական բանակի՝ Մուծիրից մինչև Պանգիշ կատարած ճամփորդության մասին է: Համենայն դեպս, ոչ Միսսին, ոչ էլ Պարսուաշը Ուրմիա լճին մոտիկ չէին գտնվում: Այնտեղ՝ լճի ափերին պետք է տեղադրել Մանայի սահմանամերձ բերդ Պանգիշը:

Սարգոնը հարավից ընթանում է դեպի հյուսիս միշտ մանայական տարածքի «եզերքով»: Պարսուաշը, Մանգիրուտուն, Գիզիլբունդին և այլն չէին գտնվում նրա ճանապարհի վրա, այլ արևելքում էին: Նշենք, օրինակ, որ մանայական առաջին շրջան Մուրիկաշից Սարգոնը այժմյան Բանեից

¹ F. Thureau-Dangin, Une relation de la huitième campagne de Sargon, Paris, 1912:

² K. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, II, 1, էջ 317: Մենք համաձայն չենք հեղինակի հետ ճանապարհացույցի մյուս կետերի վերաբերյալ:

¹ Ըստ Ֆ. Թյուրո-Դանժենի, Huitième campagne, էջ IV, ծան. 2, J. A., 1909, էջ 99 beru-ն հավասար է 10.692 մետրի, ըստ Howardy-ի, Clavis Cuneorum 186,17 և 8563 մետրի՝ ըստ D. Luckenbill-ի, Anc. Rec., II, էջ 500:

նում է Բարիի կամ Սանգիբուտուի, Դալայի, Արմարիլիի, Այադիի շրջանները և հասնում Վանի մոտերքը: Տեքստը տարբերում է Բարին, որը կոչվում է Սանգիբուտու, և բուն Սանգիբուտուն կամ «Սանգիբուտուի բերդաքաղաքների շրջանը»: Բուն Սանգիբուտուն էր գտնվում Արգաբիա լեռը. այնտեղից մինչև Իրտիա լեռը տասներկու օրով կամ 72 կիլոմետր հեռավորություն կար: Սարգոնն անցնում է այդ տարածությունը և հասնում Արմարիլի: Սակայն նա չի հասնում այդ լեռան, որովհետև Արմարիլին տարածվում էր Ուրիանդա լեռների ստորոտում: Արմարիլիից հետո նա մտնում է Այադի լճի ափին:

Այս բոլոր տեղեկությունները շատ արժեքավոր են: Իրտիա լեռը, անտարակույս, Սալմանասար III-ի ճանապարհացույցի Իրիտիա լեռն է: Դժվար կլինե՞ր չնույնացնել նույն ճանապարհացույցի Արմարիլին Արամիլիի հետ: Մենք Իրիտիան տեղադրեցինք Ալադադի շրջանում: Սալմանասարը Իրիտիայից մեկնելով՝ անցնում է Արամիլին և Չանգիուման ու հասնում Վանա լիճ: Սարգոնը, հակառակ կողմից գնալով, ուղղվում է դեպի Իրտիա, անցնում Արմարիլիի վրայով և հասնում Այադի լճի ափին: Այադիի 30 քաղաքները «նայում էին գեղածուփ ծովին»¹. նրանք շարված էին Վանա լճի հյուսիսային ծայրի շուրջը:

Այադիից Սարգոնը գնում է նույն անունը կրող մահանգի բերդաքաղաք Ուայախ՝ Նաիրի երկրին սահմանակից: Ուայախից նա անցնում է Նաիրի և այնտեղից՝ Մուծածիր: Ֆ. Թյուրո-Դանժենը կարծում է, թե Սարգոնը հյուսիսից դարձել է լճի շուրջը և Ախլաթի ու Բիթլիսի վրայով հասել Մաիրո. ըստ նրա՝ Ուայախը համապատասխանում է Բիթլիսին, իսկ Մաիրոն՝ Նաիրիի կենտրոն Խուրուշկիային: Մաիրոյից Սարգոնը անցած պետք է լինե՞ր 250 կիլոմետր, Բոհտանի հովտով մանացիների սահմանի վրա գտնվող Մուծածիր հասնելու համար:

Այն փաստերը, որոնցով Ֆ. Թյուրո-Դանժենը ձգտում է պաշտպանել իր դրույթը, հենց նրա դեմ են խոսում: Ուայախը կամ Ուեսին ներկայանում է որպես ռազմական խոշոր նշանակություն ունեցող կայան: Ասուրական լրտեսները հետևում և մեծ կարևորություն էին տալիս այն ամենին, ինչ անցնում-դառնում էր այնտեղ, թագավորին տեղյակ էին պահում ամենայն մանրամասնությամբ: Հայտնում էին Չիկիրտուի և Անդիայի թագավորների ժամանելը Ռուսայի մոտ՝ Ուեսի (Ուայախ), Ուեսիի կուսակալի մեկնումը Մուծածիր: Հաստատում էին, որ հինգ կուսակալներ եկել-հասել էին Ուեսի և, մեկ ուրիշ հաղորդագրությամբ, որ Ուեսիի կուսակալը սպանվել էր կիմներների դեմ կռվելու ժամանակ: Նույնիսկ Մուծածիրի թագավորը տեղե-

կացնում էր ասուրական իշխանություններին, թե Ռուսան գտնվում էր Ուեսիում:

Այս բոլորը մեզ թելադրում է Ուայախը փնտրել Ասորեստանի արևելյան կողմում, Մուծածիրի մոտ, ոչ հեռու Չիկիրտուից ու Անդիայից, և ոչ թե, ընդհակառակն, հեռավոր Բիթլիսի շրջանում: Եթե Ուայախը և Բիթլիսը նույնը լինեին, Ասորեստանի թագավորը կարիք չէր ունենա Մուծածիրի թագավորի միջնորդությամբ՝ Ուայախում անցած-դարձածն իմանալու համար. այս վերջին բնակավայրն ավելի մոտ էր Ասորեստանի մայրաքաղաքին, քան Մուծածիրին: Չիկիրտուի և Անդիայի թագավորների քայլը գործնական նշանակություն չէր ունենա, եթե Ուեսիան այդքան հեռու լինե՞ր նրանց երկրներից: Նախքան օգնության հասնելը նրանք կջախջախվեին բռնամուկ կողմից:

Վերջապես, մենք գիտենք, որ Խուրուշկիան Գիլգամի մոտ էր. Սալմանասար III-ը Գիլգամից Խուրուշկիա գնաց իր մայրաքաղաքը վերադառնալիս: Գիլգամը գտնվում էր Ուրմիա լճի ափին, հեռավոր և Խուրուշկիան չի կարող նույնանալ Բիթլիսի հետ:

Ասորեստանի թագավորը, հասնելով Վանա լճի ափին, վերադարձի ճանփա է ընկնում Արճակ-Սևան-Խոշաբ գծով դեպի Մուծածիր երկիրը: Այադիի քաղաքներից մեկը, որտեղից Սարգոնը գնում է Ուայախ, կոչվում է Հին Ուայախ, անշուշտ, ի հակադրություն մեկ ուրիշ Ուայախի, որը համեմատաբար նոր էր հիմնադրված և մեր Ուայախն է: Դա վճռական ապացույց է, ինչպես նկատել է Կ. Լեման-Հաուպտը, որ Ուայախ բերդն ու հանգը գտնվում էին Վանից արևելք, Այադիի մոտ¹: Նույն կարգի մեկ այլ ապացույց. Այադիից Ուայախ ճանապարհի վրա Սարգոնը անցավ երեք գետով, որոնցից մեկը Ալլուրիա անունն էր կրում: Աիշտ այդպես է կոչվում այն լեռներից մեկը, որոնք բարձրանում էին Չաբի ափին, այն լեռնանցքի մոտ, որը Սարգոնին առաջնորդում էր դեպի Մուծածիր: Հավանաբար, գետն իր անվամբ պարտական է այդ լեռանը, որտեղից էլ սկսվում էր նրա ակունքը: Մենք մտածում ենք Չուխի (Չուք-դադ) մասին, որը տարածվում է դեպի Խոշաբի ակունքները և որտեղ գտնվում է հայտնի կիրճը, որը միացնում է Չաբի հովիտը Խոշաբի հովտին: Այսպիսով, հաջողվում է Ուայախ բերդը տեղադրել Չուխի սարահարթի վրա²: Խոշաբի հովիտը

¹ Սարգոնը նշում է երկու քաղաք, որոնք Անիաշտանի միևնույն անունն են կրում, մեկը՝ Սանգիբուտուի (Բարի) սահմանի վրա, մյուսը՝ Այադի մահանգում, որի 30 քաղաքները գտնվում էին ծովի ափին: Հայ պատմիչ Թովմա Արծրունին մի գյուղ է ճանաչում Բոգունի գավառում, որի անունը Անտան էր, դա հիշեցնում է Անիաշտանի: Անտանի տեղը հայտնի չէ, բայց այն, համեմայն դեպք, գտնվում էր Վանի շրջանում (44):

² Կ. Ֆ. Լեման-Հաուպտը փորձում է Ուայախը գտնել այժմյան Բաշկալայում:

կազմում էր Ուրարտուի սահմանը, որից այն կողմ տարածվում էր Խուրուշ-կիա երկիրը, այլ կերպ ասած՝ Նաիրին: Մի բերդ, որը տեղավորված էր այն-պիսի մի բարձրության վրա, ինչպիսին Չուխը՝ 3000 մետր, ուներ հսկողու-թյան և հարձակման առաջավոր կայանի բոլոր առավելությունները:

Սարգոնը պնդում է, որ Մուծածիրի թագավոր Ուրգանան՝ «մի չար լեռնցի», ապստամբեց իր դեմ, երբ նա վերադառնում էր արշավանքից: Իրերի դրությամբ ավելի համապատասխան է թվում ընդունել, որ ապստամ-բությունը բռնկել էր այն պահին, երբ Սարգոնը Ուրարտու մտավ: Ուր-գանան Ռուսայի հավատարիմ դաշնակիցն էր և իր ապստամբությանը ստիպում էր Սարգոնին ընդհատել իր հաղթական առաջխաղացումը Ուրարտուի միջով: Ասենք, ինքը՝ Սարգոնն էլ հաստատում է, որ այդ չար լեռնցին ապստամբել էր իր դեմ և ընդհատել իր առաջխաղացումը, այնպես որ ինքն ստիպված է եղել վերադառնալ արշավանքից:

Շատ ավելի անխոհեմություն կլիներ Ուրգանայի կողմից՝ Սարգոնի հետ թշնամանալը, եթե վերջինս այդ պահին հասած լիներ Ուսայիս կամ Խու-րուշկիա, իր տիրույթների մոտերքը:

Սարգոնն ասում է, որ գրավել է 430 քաղաք և 7 նահանգ: Նահանգներն են՝ Չարանդա, Սուրի, Դալա, Բարի-Սանգիրուտու, Արմարիլի, Այադի և Ուսայիս:

2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՅԵՂԵՐԻ ՊԱՅՁԱՐԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Ա

Ասորեստանի պետության ժամանակաշրջանում Հայաստանում ծաղ-կում էր մի մեծ պետություն, որը կոչվում էր Ուրարտու կամ Արարատ, բառ, որը նույն անվան բիրլիական ձևն է: Ասորեստանի պատմությունը բոլորին ծանոթ է՝ ամեն մի աշակերտ նրա մասին որոշ տեղեկություն ունի: Բայց քչերը կան, նույնիսկ ուսյալ մարդկանց մեջ, որ Ուրարտուի անունը լսած լինեն: Մակայն Ասորեստանի պատմությունը սերտ կապով կապված է Ուրարտուի պատմության հետ, որպես շատ վտանգավոր հակառակորդի, որը չի դադարել երեք դար շարունակ, ընդհուպ մինչև Ասորեստանի վախ-ճանը, մրցել նրա հետ և խանգարել նրա հավակնություններին Միջա-գետքից դուրս գտնվող երկրների նկատմամբ:

Երբ Թիզլաթպալասար II-ը Զ. ա. XII դարի վերջում բարձրացավ Հայ-կական Տավրոսը և Հայաստան մտավ դեպի Տիգրիսի ակունքները ձգվող կիրճերով, նա հանդիպեց մի քանի տասնյակ արքայիկների դիմադրու-թյանը: Այդ ժամանակաշրջանում երկիրը Նաիրի էր կոչվում և ծածկված էր փոքր պետությունների ցանցով: Երեք դար հետո՝ 857 թվականին, Սալ-մանասար III-ը նույն ճանապարհով թափանցեց Հայաստան և ընթացավ մինչև երկրի մայրաքաղաք Արգաշկուն, որը գտնվում էր այժմյան Մա-նազկերտ քաղաքի տեղում: Նա կովի բռնվեց Արամե թագավորի հետ: Ասու-րական առաջին ներխուժումից հետո երկիրը փոխել էր իր տեսքը՝ այժմ նա կոչվում էր Ուրարտու և նոր էր անցել քաղաքական հեղաշրջման բովից ու մեկ քաղաքական կազմակերպության մեջ էր միավորել բազմաթիվ փոքր պետություններ: Մայմանասարը գրավեց այդ թագավորության մայրա-քաղաքը և կործանեց: Անշուշտ, այդ պարտության հետևանքով էր, որ Արամեի հաջորդ Սարդուրի թագավորը իր աթոռանիստը տեղափոխեց Տուշպա քաղաք, այժմյան Վանը, որն Ասորեստանի հարձակումներից ավե-լի լավ էր պատսպարված:

Հայկական Տավրոսն այդ կողմից համարյա անանցանելի է. միակ մուտ-քը կարող էր լինել Չաբ գետի հովտի միջով: Ուրարտուի թագավորը փակեց այդ մատույցը հզոր ամրոցներով, որ նա կառուցեց Չաբի վերին հոսանքի

վրա, այնատեղ, որտեղ գետը ճեղքում էր Տավրոս լեռը: Բացի այդ, Ուրարտուն ձեռք բերեց Չարի և Չագրոս լեռնաշղթայի միջև ընկած լեռնային տարածքը մինչև Ռոփանդուզի շրջանը: Այդ տարածքը երկու թագավորություն էր կազմում՝ Խուրուշկիա և Մուծածիր, որոնք Ուրարտուի ստորակամերն էին:

Մանա թագավորությունը տարածվում էր Չագրոսից արևելք և Ուրմիա լճի հարավում: Որպեսզի ասորեստանցիներին արգելի այդ կողմից Ուրարտու մտնել, Ուրարտուի թագավոր Մենուան գրավեց այդ երկրի հյուսիսային մասը, իսկ նրա հաջորդները մինչև վերջ ձգտում էին պահպանել այդ թագավորությունն իրենց քաղաքական ազդեցության ներքո և Ասորեստանին չթողնել մոտենալ նրան:

Ասորեստանից արևմուտք, Եփրատի հովտում, մի շարք փոքր պետություններ հերթով դասավորված էին Մելիտենեից մինչև Հալեպ՝ Մրլիդ, Կունմուխի (Կունմագենե), Գուրգում (Մարաշ), Կարկեմիշ (Ջերապուս), Մուլումալ (Ջինջիրու), Խաթթինա և ուրիշներ: Այդ պետությունները, գտնվելով Ասորեստանի սպառնալիքի ներքո, նեցուկ էին որոնում Ուրարտուում, իսկ վերջինը չէր զլանում օգտագործել նրանց համակրանքը, և ահա բազմիցս այս պետությունները դաշնակցում են Ուրարտուի հետ՝ ընդհանուր թշնամու դեմ:

Եփրատից մինչև Մուծածիր ձգված լեռնային գոտին Ասորեստանի և Ուրարտուի սահմանն էր գծում: Այդ գոտիում ապրող բազմաթիվ ցեղեր թշնամաբար էին տրամադրված Ասորեստանի նկատմամբ և մույմպես հակված էին դեպի Ուրարտուն:

Այսպիսով, Ասորեստանի պետությունը շրջապատված էր հյուսիսից և իր երկու թևերից, որը խոչընդոտ էր հանդիսանում նրա ծավալմանը: Ուստի և կատաղի պայքար սկսվեց Ասորեստանի և Ուրարտուի միջև, մի պայքար, որն ընդգրկեց երկու երկրների ռազմական կյանքի մեծագույն մասը:

Միմիայն քաղաքական մրցակցության մասին չէ խոսքը. պայքարը միևնույն ժամանակ ցեղային բնույթ էր կրում: Ուրարտացիները և դաշնակից ու հովանավորյալ ժողովուրդները՝ Խուրուշկիայի, Մուծածիրի, Մանայի ժողովուրդները, ինչպես նաև միջանկյալ գոտու ցեղերը և եփրատյան պետությունների բնակչությունը չէին պատկանում սեմական ցեղին: Ասորեստանցիները նրանց կոչում էին Նաիրի տոհմական անվամբ: Այդ իրողությունը հայտնի է վաղուց ի վեր, բայց միայն վերջերս գիտությունը լույս սփռեց նաիրյան ժողովուրդների ծագման վրա:

Նախքան սեմական ցեղերի երևան գալը, որոնք Բաբելոն էին եկել իրենց օրրան Արաքիայից, Միջագետքը, Հայաստանը և Փոքր Ասիան զբաղեցված

էին մի ասիական ցեղով, որից շումերները՝ Բաբելոնում, խուրրիները՝ Վերին Միջագետքում և Հայաստանում, խեթերը՝ Փոքր Ասիայում կազմում էին երեք գլխավոր օղակները:

Երկրորդ հազարամյակի սկզբին հնդեվրոպական ալիքները մոլեզմում են այս երկրների վրա երեք հաջորդական շարքերով. մեկը տիրանում է խեթերի երկրին և այնտեղ հիմնում Մեծ Խաթթին, մյուսը հարձակվում է խուրրիների երկրների վրա, Հայաստանի միջով ցած է իջնում և Միջագետքի սրտում կազմակերպում է Միտաննի պետությունը, կասսիտների երրորդ ալիքը առաջ է խաղում մինչև Բաբելոն: Այսպես, հնդեվրոպացիները բորբոքում են այդ ժողովուրդների լճացած կյանքը:

Միտաննիի հիմնադրման ժամանակ Ասորեստանը, որը մի ժամանակ գաղութացվել էր ակկադացիների կամ Բաբելոնի սեմական ցեղերի կողմից, ստիպված է լինում Միտաննիի մաս կազմել՝ որպես նրա նահանգներից մեկը: Սակայն կամաց-կամաց նրան հաջողվում է ազատվել Միտաննիի տիրապետությունից և մույմիսկ իր հին տիրոջ վրա իշխանություն ձեռք բերել: Միտաննին Ասորեստանի հարվածների տակ անհետանում է XII դարում, և նրա հետ խուրրիական ցեղը կորցնում է իր դիրքը Վերին Միջագետքում:

Այդ ժամանակ խուրրիական երկիր Ուրարտուն ստանձնում է Միտաննիի գործի պաշտպանությունը, որպեսզի շարունակի ցեղային պայքարը Ասորեստանի դեմ: Նա մարմնացնում է խուրրիական ցեղի վերջին ճիգերը՝ պաշտպանվելու սեմականության դեմ: Այդ նկատառումով շատ հատկանշական է, որ Միտաննիի կործանումից հետո Ասորեստանը XII դարի սկզբում իր գեները դարձնում է Նաիրիի, այսինքն՝ Ուրարտուի դեմ:

Կարիք չկա երկար կանգ առնել երկու պետությունների պայքարի իրադարձությունների վրա: Միայն նկատենք, որ ասուրագետ գիտնականները սովորություն ունեն չափազանցելու Ասորեստանի հաջողությունները, վստահելով նրա գոռոզամիտ վեհապետների պոռոտախոսությանը, որոնք սիրում են իրենց տեղեկագրերում ուռճացնել այն սխրանքները, որոնք հաճախ սոսկ ցուցադրական բնույթ են կրում: Նույնիսկ շատերը կարծում են, թե կարող են հաստատել, որ Սարգոնը 713 թվականին, Ռուսա թագավորի դեմ ձեռնարկած արշավանքի ընթացքում, վերջնականապես ճզմել է Ուրարտուի ուժը: Սակայն սահմանամերձ կայաններից ասորեստանցի գործակալների ուղարկած գաղտնի տեղեկագրերը Ասորեստանի թագավորին՝ բացահայտ ցույց են տալիս, որ Ռուսայի հաջորդ Արգիշտին տակավին իրեն զգում էր դրության տեր և իր ձեռքն էր պահում Ասորեստանի դեմ գործողությունների նախաձեռնությունը: Ռ. Հարպերի ժողովածուում

հրատարակված նամակները ոչ մի կասկած չեն թողնում այն մասին, որ Ասորեստանը վախենում էր Ուրարտուի հարձակումից:

Իրականում, Ուրարտու թագավորությունը երեք հարյուր տարվա ընթացքում վարած պայքարը հասցրել է մինչև վախճանը՝ մինչև Ասորեստանի վերջնական կործանումը, և նույնիսկ վկա է եղել նրա հոգեվարքին՝ իրական հերոս Կիաքսարի հարվածների ներքո, 612 թվականին:

Ուրարտուն կատարել է այնպիսի առաքելություն, որը պետք է գնահատել ըստ արժանվույն. նա փակել է սեմականության ծավալման ճանապարհը դեպի Հայաստանի լեռնաշխարհը և Փոքր Ասիա: Ինչպիսիք էլ որ լինեն Ասորեստանյան քաղաքակրթության արժանիքները, չպետք է քաջցնել, որ Ասորեստանը զուրկ էր մարդու ունեցած արժեքի գիտակցությունից, որ այնքան էական է քաղաքակրթության համար: Աշշուրի տիրակալների անգթությունը առասպելական էր:

Նրանք նույնիսկ իրենք իրենց հաշիվ չէին տալիս այն հրեշավոր հայտարարությունների մասին, որ անում էին առանց նեղվելու և հպարտությամբ, ասելով, թե «կատաղած շան և վայրի ցուլի մման» իրենք նետվում են թշնամի երկրների վրա: Հիվանդագին կրքոտությամբ նրանք նկարագրում են, թե ինչ սարսափելի գործեր են կատարել հարձակման ենթարկված երկրներում՝ ավերել, հրկիզել քաղաքներն ու դաշտերը, կոտորել բնակչությանը, կենդանի այրել երիտասարդ տղաներին ու աղջիկներին, կտրել ձեռքերը, մատները, ականջները, մորթել և կաշիները փռել պարիսպների վրա, կտրված գլուխներով բուրգեր քարձրացրել և նրանց շուրջը շարել ցցահանված դժբախտներին, գյուղերում դադարեցրել աշխատավորների ուրախ ձայնը և թողնել, որ այնտեղ հաստատվեն վայրի էշերն ու վայրի գազանները և այլն... Կատարելապես հասկանալի է բիրլիական մարգարեի արձակած թեթևացման ճիշդ Ասորեստանի անկման առթիվ. «Նիմվեն՝ արյան, նենգության ու բռնության քաղաքը, կործանվել է: Ո՞վ կափսոսա նրան: Բոլոր իմացողները երկու ձեռքով ծափ կտան, որովհետև ո՞վ չի տանջվել նրա չարությունից»: Ուսանելի է, որ մեկ ուրիշ մարգարե կոչ է անում «Արարատի թագավորներին», այսինքն՝ Ուրարտուին, Ասորեստանի վրա հարձակվելու:

Ռուս ասուրագետ Մ. Վ. Նիկոլսկին, որն Ուրարտուի անցյալի առաջին հետազոտողներից մեկն է, շատ լավ նկատել ու ընդգծել է ասուրական վայրենի ոգու և Ուրարտուի շատ ավելի սեղմ ու մարդկային ոգու միջև եղած հակադրությունը: Սանձահարել Ասորեստանի մոլեգնությունը և արգելել նրան ներխուժելու նախրյան երկրները, ահա մի էապես ազնիվ առաքելություն, որը բաժին էր ընկել Ուրարտուին: Նա շատ արժեքավոր

ծառայություն մատուցեց՝ իր ավանդը ներմուծելով մարդասիրական գաղափարների մեջ:

Բ

Ասորեստանի անկումից քիչ հետո Ուրարտուն նույնպես իր հերթին անհետացավ: Հին աշխարհը փուլ եկավ: Ասորեստանի ժառանգության տեր դարձան իրանցիները, իսկ հայերը ժառանգեցին Ուրարտուն: Երկրի մոր տերեր հայերն իրենց ծագումով առնչություն չունեին ուրարտացիների հետ, բայց հետագայի նրանց պատմական ճակատագիրը որոշ առումով հար և մման էր ուրարտացիների ճակատագրին:

Հայերը, ինչպես ուրիշ շատ ժողովուրդներ, թափառել են դարերի խավարում՝ նախքան պատմության աղջամուղջը հասնելը: Նրանք մի ցեղախումբը կամ հատվածն էին փոյուզացիների, որոնք սկզբում ապրում էին Թրակիայում, որտեղից մոտ XII դարում Ջ. ա. անցան Բոսֆորը և գրոհեցին խեթական պետության վրա: Նրանք տիրացան խեթական ժառանգությանը, ապա նրանց մի մասը՝ հայերը, մղվեցին դեպի Եփրատ: Նրանք գրավեցին Հալիս գետի ակունքների շրջանը, որն այն ժամանակից ի վեր կոչվելու էր Փոքր Հայք: Ապա, հետագայում, նրանք թափանցեցին Ուրարտու և այդ թագավորության ժառանգությունն իրենց ձեռքը վերցրին Ասորեստանի կործանման ժամանակաշրջանում:

Թիզլաթպալասար II-ը, որ գրավել էր Հայկական լեռնաշխարհը, նկատում է մուշկերի, այսինքն՝ փոյուզացիների, երևալը Ասորեստանի սահմանների վրա մոտավորապես 1170 թվականին: Հետևաբար, խեթական պետության կործանումից հետո, մոտավորապես 1200 թվականին, նրանք առաջ էին խաղացել մինչև Ասորեստան: Ուրարտուի թագավոր Մենուան նշում է մի ժողովրդի անուն, որը կոչվում էր Ուրմենուխինի, տեղավորված Տարոնի շրջանում: Կ. Լեման-Հաուպերը կարծում է, որ դրանք հայերն են: Եթե դա ճիշտ է, հայերի թափանցումը Ուրարտու կատարվել է արդեն VIII դարում Ջ. ա.: Որ հայերն իսկապես եկել են Արևմուտքից, դրա լավագույն ապացույցն է նրանց լեզուն, որը պատկանում է հնդեվրոպական լեզուների մեծ ընտանիքին և հատկապես նրա արևմտյան կամ եվրոպական ճյուղին: Համեմատական լեզվաբանությունը երիտասարդ գիտություն է, որը ծագել է մոտավորապես XIX դարի կեսերին և այդ դարի պանծալի գործերից մեկն է: Ընդհանրապես այդ գիտության ամենայն ճշտությամբ հաստատվել է միևնույն ընտանիքին պատկանող մի շարք լեզուների ազգակցությունը: Դրանք են՝ կելտական, գերմանական, իտալական, բալթա-սլավոնական լեզուները,

հումարենը, հայերենը, արբաներենը, հնդիրանական լեզուները և, ինչպես վերջերս են հայտնաբերել, խեթերենն ու քոխարերենը: Գերմանացիներն այս լեզուները կոչում են հնդգերմանական, ֆրանսիացիները և ուրիշ ազգեր՝ հնդեվրոպական: Ավելի ճիշտ կլիներ դրանք արիա-եվրոպական անվանել՝ ըստ մի քանի ռուս գիտնականների:

1833 թվականին, Ֆ. Բոպպի՝ դարակազմիկ գործի երևան գալուց հետո, սկսվեց հայերենի ուսումնասիրությունը: Առաջին և գլխավոր աշխատությունները պատկանում են գերմանացի գիտնականների գրչին. Հ. Պետերման՝ 1837 թվականին, Հ. Վինդիշման՝ 1836 թվականին (հրատարակված 1850 թվականին), Դիֆենբախ՝ 1843 թվականին, Ռ. Գոշե՝ 1847 թվականին, Բյոտտիխեր (Պ. դը Լագարդ)՝ 1850 թվականին: Այս բոլոր ներհուն գիտնականները հանգել են միևնույն եզրակացության, ըստ որի՝ հայերենը մաս է կազմում հնդեվրոպական լեզուների արևելյան ճյուղին և իրաներենի հետ մասնություն ունի:

Այս տեսակետը հայերենի բնույթի մասին ընդունվեց Ֆ. Բոպպի կողմից և 1857 թվականին ստեղծվեց նրա մեծ աշխատության երկրորդ հրատարակության մեջ (45): Իրանական ճյուղին պատկանելու դրույթը տիրող մնաց մինչև 1877 թվականը, երբ Ստրասբուրգի համալսարանի պրոֆեսոր Հ. Հյուբշմանը հրապարակեց իր նշանավոր հոդվածը՝ «Über die Stellung des Armenischen im Kreise der Indogermanischen Sprachen»: Ըստ Հ. Հյուբշմանի՝ նրա նախորդները լուրջ սխալ էին կատարել հիմնվելով այն բառապաշարի վրա, որ հայերենը իրաներենից փոխ էր առել Արշակունյաց դիմաստիայի ժամանակաշրջանում: Հայերենի իսկական բնույթի մասին դատելու համար պետք է քննել նրա սեփական բառերը: Դրանք ուսումնասիրելով, Հ. Հյուբշմանը հաստատեց, որ հայերենը բոլորովին իրանական լեզու չէ, այլ ներկայացնում է հնդեվրոպական արմատի անկախ մի ճյուղը և տեղավորվում է հումարենի ու բալթա-սլավոնական լեզուների միջև:

Հ. Հյուբշմանի տեսակետը հաղթանակեց և դարձավ հայկական լեզվաբանության հիմքը: Այսպիսով, հայերենի ուսումնասիրությունը հաստատեց, որ հայերը Արևմուտքից են եկել Հայաստան և պատկանում են հնդեվրոպական մեծ ընտանիքի եվրոպական խմբավորմանը:

Արդարև, զարմանալի է, որ Հ. Հյուբշմանի երկրում դեռևս կան մարդիկ, որոնք այսօր էլ հայերի ծագման հարց են բարձրացնում (46): Եվ այդ արվում է այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ ամենուրեք խոսվում է աշխարհը նոր կարգերով վերանորոգելու և ճնշված ազգերի նկատմամբ կատարված անարդարությունները փոխհատուցելու մասին: Այսպիսի տարիներին ոչ թե ծագման հարցը պետք է բարձրացվի, այդ հարցը վաղուց

է լուծվել, այլ հայերի ճակատագրի հարցը, այն հրեշավոր անարդարությունների հարցը, որի անմեղ զոհերն են նրանք և որոնք հատուցման ժամին են սպասում:

Հայերի արևմտյան ծագումը ճակատագրական եղավ նրանց համար: Նրանց բաժին ընկած դժբախտությունները, զուցե, մասամբ այդ իրողության հետևանքն են: Եվրոպական ցեղի մի փոքր հատված, Բալկանների և Փոքր Ասիայի միջով մղված մինչև Առաջավոր Ասիայի կենտրոնը՝ մի օտար աշխարհում, սկզբից ևեք դատապարտված էր մեկուսացման, որի պայմաններում պետք է պայքար մղեր իրեն շրջապատող հզոր պետությունների դեմ՝ իր ինքնուրույնությունը պաշտպանելու համար: Նկատի առնենք, որ տարօրինակ կերպով նրանց կացությունը մնան էր հին ուրարտացիների կացությանը: Թվում է, թե գոյություն ունի ցեղային ինչ-որ մտայնություն: Լինի դա մտայնության ազդեցությամբ թե այլ պատճառներով՝ հայերն իրենց հայացքը դարձրին դեպի Արևմուտք վառ հույսերով, չնայած այն դառը հուսախաբություններին, որ նրանք ունեցան դարերի ընթացքում: Հռոմը, Բյուզանդիոնը, խաչակիրները, պապականությունը, Եվրոպայի մեծ տերությունները, յուրաքանչյուրն իր հերթին, իրենց օգտին շահագործեցին հայերի պատրանքները, առանց երբեք մտահոգվելու, որ իրենց հետապնդած չարաղետ քաղաքականությունը առավել ևս բարդացնելու էր հայերի դրությունը:

Ցավալի իրողություն է, որ Հռոմը, հանրապետությունը, թե կայսրությունը, ավելի թշնամական էր հայերի նկատմամբ, քան իրանական պետությունները: Բյուզանդիոնի նենգավոր պաշտպանությունն ավելի աղետալի եղավ, քան արաբների տիրապետությունը: Իրանական տիրապետության ներքո Հայաստանը պահպանեց իր ազգային կերպարանքը՝ օգտվելով լայն ինքնավարությունից, չխոսելով արդեն այն ժամանակաշրջանների մասին, երբ նա գտնվում էր իր սեփական թագավորների իշխանության ներքո: Երբ Հռոմը և Մասանյան Պարսկաստանը բաժանեցին Հայաստանը, պարսկական մասում էր, որ հայկական մշակույթը ծաղկեց և հարուստ գրականություն ստեղծվեց. մինչդեռ հռոմեական կամ բյուզանդական մասում Հայաստանի արևմտյան հատվածը համարյա ապազգայնացվեց:

Հայերը հաջորդական ապստամբություններով դիմադրեցին արաբական ճնշմանը, որը դրդեց խռհեմ խալիֆաներին՝ վերջ տալ արյան անօգուտ զեղմանը և ընթոստներին թագավորական խույրեր ուղարկել: Մի շարք քաղաքական կենտրոններ աշխուժացրին ազգային կյանքը: Ծանր է խոստովանել, որ քրիստոնյա Բյուզանդիոնն էր, որ ոչնչացրեց այդ կենտրոնները, բռնի ուժով հայոց թագավորներին իրենց զորքերի հետ միասին

գաղթեցնելով իր պետության տարածքը՝ Եփրատի երկայնքով մեկ՝ արարների դեմ պատճեն կանգնեցնելու համար: Նա մատնեց Հայաստանը սելջուկյան հորդանների ձեռքը: Տարագրված հայ ժողովուրդը, բյուզանդական մեքենայություններից հոգնած, հավաքեց իր ուժերը և Կիլիկիայի բարձունքներում ստեղծեց անկախության մի նոր կենտրոն: Այս անգամ խաչակիրները եկան Արևելքի քրիստոնեությունը փրկելու համար: Սակայն հայկական Կիլիկիան ոչ մի օգուտ չբաղեց նրանցից, ոչ մի զգալի օգնություն չստացավ: Ընդհակառակն, հայերի համագործակցությունը խաչակիրների հետ վտանգի ենթարկեց այդ «Նոր Հայաստանի» իշխանների, ապա թագավորների քիչ թե շատ կանոնավորված հարաբերությունները մուսուլմանական աշխարհի հետ և նախապատրաստեց Կիլիկիայի թագավորության ճակատագրական վախճանը:

Սելջուկներին հաջորդեցին Չինգիզ խանի մոնղոլների հորձանքները, Թամերլանի թաթարները, թուրքմենների հրոսակախմբերը, որոնք հեղեղեցին Մեծ Հայքը, մինչև որ XVI դարի կեսերին Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի և Թուրքիայի միջև:

Երկիրն աներևակայելի անիշխանության ճարակ էր դարձել: Այլևս Եվրոպայի օգնության մասին չէին մտածում: Սակայն, ահա գալիս են եվրոպական միսիոներները՝ դոմինիկյանները, ֆրանցիսկյանները, քարոզիչ եղբայրները, գալիս են քարոզելու մի երկրում, որի յուրաքանչյուր քարը նահատակների արյունով է ներկված: Միևնույն ժամանակ նրանք հույս են ներշնչում, որ Արևելքի քրիստոնյաների համար ազատության լույսը նորից կարող է փայլել պայտության և քրիստոնյա պետությունների օգնությամբ: Այսպիսով, միսիոներները ներկայանում են որպես «Հայկական հարցի» առաքյալներ: Ժողովուրդը, «որ գտնվում էր խավարում, մահվան ստվերում, կարծեց, թե լույս է ծագում»: Եվ դրանում նրան ոչ ոք չի կարող մեղադրել:

Դժբախտաբար, խոստացված լույսը նույնքան ցնորական եղավ, որքան անցյալում կատարված նման խոստումները: Դա ավելի արդյունավետ չեղավ նաև այն ժամանակ, երբ դրվեց միջազգային դիվանագիտության սեղանի վրա և այնտեղ փայլեց կես դարուց ավելի... Պե՞տք է արդյոք հիշեցնել, որ վեց մեծ պետություններ 1878 թվականին հանձնառություն ստորագրեցին ազատելու Հայաստանը և ուրացան իրենց կոլեկտիվ ստորագրությունը: Երբ պայթեց վերջին մեծ պատերազմը, դաշնակիցները հռչակեցին Հայաստանի, Միջագետքի և Սիրիայի անկախությունը, իսկ պատերազմից հետո նրանք դժեցին իրենց հանդիսավոր հայտարարությունը Հայաստանի նկատմամբ: Այդ ժամանակից ի վեր նրանք անտարբերությամբ են նայում թրքական Հայաստանին, որը դարձել է մի

ընդարձակ անապատ, և ճակատագրին այն հայերի, որոնք իրենց երկրից վտարված՝ սփռված են ամբողջ աշխարհով մեկ:

Հայկական հարցի կապակցությամբ թերացումը Եվրոպայի խղճին ծանրացած մի արատ է: Եվ քսան տարուց ի վեր հայկական վերքերի նկատմամբ նրա պահած մռայլ լուռությամբ չէ, որ կարելի է ջնջել այդ արատը, այն էլ մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ հռչակում են աշխարհի վերականգնումը արդարության հիմքերի վրա (47):

3. ՄԻ ՀԻՆ ՊԱՇՏԱՍՏԻՒՆԸ ԿԵՏՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Իրանական քաղաքակրթությունը շատ վաղ է ներթափանցել Հայաստան և պատել այնպիսի քանձր ստվերով, որ դժվար է տարբերել այն, ինչ հատուկ է երկրին պաշտամունքի բնագավառում (48):

Պարթևական ժամանակաշրջանում Հայաստանը, ինչպես Իրանը, գտնվում էր Արշակունյաց դինաստիայի տիրապետության ներքո, և երկու երկրներում իշխում էր նույն պանթեոնը: Արամազդ, Անահիտ, Միհր (Միթրա), Վահագն, Տիր աստվածներն այդ ժամանակից ժողովրդական դարձան Հայաստանում: Պարթևների հանդուրժանությունը կրոնական հարցերում նպաստեց ազգային աստվածությունների ձուլմանը Օլիմպոսի Չևս, Արտեմիս, Հեփեստոս, Հերակլես, Ապոլլոն աստվածություններին: Ուշ ժամանակի մի ավանդության համաձայն, իբր թե հունական աստվածները Հայաստան են բերվել Տիգրան II Մեծի թագավորության ժամանակ, այսինքն՝ այն ժամանակաշրջանում, երբ պարթևները տերն էին Իրանի, բայց ոչ դեռևս Հայաստանի: Որո՞նք էին, ուրեմն, այն աստվածները, որ հարգված էին Հայաստանում նախքան իրանական ու հունական պաշտամունքի մուտքը: Եթե երկիրն ուներ իր սեփական աստվածները, նրանք ձուլվել են իրանական աստվածների հետ կամ փոխարինվել նրանցով՝ առանց որևէ հետք թողնելու գրականության մեջ կամ բանավոր ավանդություններում:

Հայտնի իրողություն է, որ անունները փոխվում են, բայց պաշտամունքները մնում: Ժամանակակից գիտնականների մի շարք նշանավոր աշխատություններ ցույց են տվել, որ որոշ պաշտամունքներ, որոնք գոյություն են ունեցել խոր հնության շրջանում, չեն դադարել ապրելուց դարերի ընթացքում՝ փոխելով իրենց անունները դարաշրջանի և էթնիկական միջավայրի համաձայն: Իրանական պանթեոնը կարծես ավելի հեշտությամբ կլանել է այն, ինչ հայկական պաշտամունքներում որևէ նմանություն կամ կապ ուներ Իրանի պաշտամունքների հետ: Սակայն հավատալիքները, որոնք այլ բնույթ էին կրում և ուրիշ ծագում ունեին, կարողացել են դիմադրել և այս կամ այն կերպ պահպանել իրենց գոյությունը: Այսպես, Մեծ Աստվածուհու և նրա ուղեկցի պաշտամունքը, անշուշտ, ծանոթ էր հայերին: Մի պաշտամունք, որը տարածված էր ամենուրեք՝ Միջագետքից Հունաստան, չէր կարող անհայտ լինել Հայաստանում, որը գտնվում էր մեծ

քաղաքակրթությունների քառուղիում: Իրոք, նա խոր հետքեր է թողել հայերի մոտ, և հայկական բանահյուսության մեջ կարելի է գտնել այդ հին պաշտամունքի մնացորդները:

Ահա վկայություններ և մի քանի դիտողություններ, որոնք կնպաստեն մեր տեսակետի լուսաբանմանը:

Կեղծ-Պլուտարքոսը, խոսելով Հայաստանի Դիորփոս կոչված և Արաքսի մոտերքում գտնվող ինչ-որ լեռան մասին, բերում է հետևյալ պատմությունը.

Παράκειται δ' αὐτῷ (= Ἀράξῃ) ὄρος Δίορφον καλούμενον ἀπὸ Διόρφου τοῦ γηγενοῦς, περὶ οὗ φέρεται ἱστορία τοιαύτη. Μίσθρας υἱὸν ἔχειν βουλόμενος καὶ τὸ τῶν γυναικῶν γένος μισῶν, πέτρα τινὶ προσεξέθερον. ἔγκυος δὲ ὁ λίθος γενόμενος, μετὰ τοὺς ὠρισμένους χρόνους ἀνέδωκε νέον, τοῦνομα Δίορφον. ὃς ἀκμάσας καὶ εἰς ἄμιλλαν ἀρετῆς τὸν Ἄρη προκαλεσάμενος, ἀνηρέθη. οὗτος κατὰ πρόνοιαν θεῶν εἰς ὀμώνυμον ὄρος μετεμορφώθη.

Դիորփոս լեռը, այսպիսով, կոչվել է մի ոմն Դիորփոսի անունով, որը ծնվել էր Միհրից բեղմնավորված քարից և որովհետև ուզեցել էր չափվել Արեսի հետ, Դիորփոսը սպանվեց վերջինի կողմից, ապա աստվածների կողմից փոխակերպվեց լեռան:

Ինչ էլ որ լինի Պլուտարքոսին վերագրված երկի բնույթը, կարելի է վստահ լինել, որ Դիորփոսի պատմությունը հեղինակի կողմից չի հորինված, դա մի առասպելի բեկորն է, որը իր լրիվ ձևով Մեծ Մոր և նրա ուղեկցի դիցաբանական հռչակավոր առասպելի տեղական տարբերակն է: Ավանդությունն ունենում է բազմաթիվ և զանազան տարբերակներ, որոնց մեջ փոխվում են ոչ միայն անունները, այլև անձնավորությունների դերը: Հազիվ թե հարկ կա դրա վրա կանգ առնելու: Այս մասին ընդհանուր գաղափար կազմելու համար բավական է հիշեցնել Արնոբիոսի և Պավսանիասի պատմածները: Քրիստոնյա հեղինակ Արնոբիոսը, որն ապրում էր Դիոկղետիանոսի ժամանակ, հեթանոսությունը ծաղրելու նպատակով բերում է հետևյալ առասպելը: Չևսը, երբ քնած էր Ագրոս ժայռի գագաթին, կրքոտ կերպով սիրահարվեց Մեծ Մորը, բայց մերժվեց: Այդ ժամանակ Չևսը «voluptatem in lapidem fundit» [քարի մեջ թափեց իր հեշտասիրությունը]: Քարը աշխարհին ընծայեց երկսեռ մի հրեշ, որն Ակղետոսի անունն ստացավ: Սարսափահար աստվածները Դիոնիսոսին հանձնարարեցին ոչնչացնել նրան, բայց վերջինը խեղեց սրան, և այդ գործողության

¹ De fluviis, XXIII, 4.

ժամանակ հոսած արյունից մի ծառ բուսնեց, որի պտուղը հավաքվեց Մամ-
գարիոսի աղջիկ Նամայի կողմից: Աղջիկը պտուղը դրեց իր ծոցը և
հղիացավ: Ծնված տղան կոչվեց Ատիս: Պեսսիմոսի թագավոր Միդասն
ուզում էր իր աղջկան ամուսնացնել գեղեցիկ Ատիսի հետ, բայց Մեծ Մայրը
(Magna Mater) ինքը սիրահարված լինելով Ատիսին, միջամտեց՝ ամուսնու-
թյունն արգելելու համար: Ատիսը հուսահատվեց, խեղեց ինքն իրեն և
վերքից մահացավ. երիտասարդ աղջիկն ինքնասպանություն գործեց: Ակ-
դեստիսը Ջևսից պահանջեց հարություն տալ նրան. Ջևսը մերժեց, բայց
խոստացավ նրա մարմինը գերծ պահել նեխումից¹:

Ակդեստիսը, կամ ավելի շուտ՝ Ագդիստիսը, երեշավոր էակը, որը ծնվել է
Ագդոսից, նույն Կիբելե-Մեծ Մայրն է, ինչպես երևում է նույն առասպելի
այն տարբերակից, որը պահպանել է Պավսիանասը²: Ըստ Մտրաբոնի՝
Ագդիստիսը Մեծ Մոր անունն էր Պեսսիմոսում³: Արնոբիոսի կամ Պավ-
սանիասի պահպանած առասպելը նախնական պատումը չի ներկա-
յացնում, սա մի այնպիսի տարբերակ է, որին միացել են օտարամուտ
տարրեր՝ բարելացի Նաման, թրակիացի Դիոնիսոսը, փոյուզիացի Միդասն
իր աղջկա հետ, որոնք փոխ են առնվել ուրիշ առասպելներից⁴: Մեր
ավանդության իսկական կորիզի էական իմաստը հետևյալն է. Մեծ Մայր՝
երկրային աստվածությունն ապրում էր լեռներում և դիավում որպես
«ագոոս» (հմնա. *ὄχθος, ὄχθη* «ժայռ»)՝ ժայռից ծնված, դրա համար էլ
կոչվում էր Ագդիստիս: Նա սովորական էակ չէ՝ երկսեռ է: Գլխավորն
արականն է, որն իրենից պոկվելով ծնունդ է տվել Ատիսին: Մակայն դա
առասպելի նախնական վիճակը չէ: Սկզբում Ատիսը ոչ մի կապ չունեց Մեծ
Մոր հետ: Նա մի երիտասարդ փոյուզիացի էր, որի գեղեցկությունը Կիբելեի
ուշադրությունն իր վրա էր հրավիրել: Մեծ Մայրը ցանկանում էր նրան իր
սրբավայրը սրանել և մեծարել տալ նրա կուսության համար: Մակայն
Ատիսը մեղանչեց հավերժահարս Մագարիտիսի (Մա<ն>գարիոս գետից)
հետ: Կիբելեն հավերժահարսին սպանեց: Ատիսը խելագարվեց, քաշվեց
լեռները, ուր և խեղեց ինքն իրեն: Այս առասպելը մեզ փոխանցել է Օվի-
դիոսը⁵:

Ուրեմն, վերադառնալով Կեղծ-Պլուտարքոսի պատմությանը, դժվար չէ
տեսնել, որ Դիորփոսը ներկայանում է, զոնն իր ծնունդով, որպես քարածին
էակ, Ագդիստիսի մի տեսակը: Կարևոր չէ, թե մեկն իր անունը ժայռին է

¹ Արնոբիոս, Adversus nationes, V, 5:

² Պավսանիաս, VII, 17, 9 և հաջորդ [գլուխները]:

³ Մտրաբոն, XII, 5, 3:

⁴ Հմնա. H. Graillet, Le culte de Cybèle, t. 20:

⁵ Faeti, IV, 223.

տվել, իսկ մյուսը ժայռից է ստացել, դրանք նույն կարգի «մոտիվներ» են:
Եթե Ջևսի դերում Միթրան է երևան գալիս, դա նույնպես ոչնչով չի փոխում
առասպելը: Դիորփոսին Ագդիստիսից տարբերողն այն է, որ վերջինը ex
utroque sexu [երկու սեռի է], ուրեմն, որձևեզ է, մինչդեռ մյուսը սովորական
էակ է: Մակայն Դիորփոսի պայքարը Արեսի դեմ շատ նշանակալից է. նա
մի տեսակ հիշեցնում է Ատիսի հետապնդումը Ագդիստիսի կողմից, հե-
տևաբար և ենթադրել է տալիս, որ, հավանաբար, Դիորփոսը նույնպես
առասպելի լրիվ պատումն է ներկայացել է երկու տեսքով: Եվ նա իր
իզական և ոչ թե արական տեսքով է, որ պայքարել է Արեսի հետ: Պայքարի
արդյունքը, որ Արեսի օգտին է, հասկանալի կդառնա, եթե ընդունենք, որ
հայկական պատումի Ատիսը կրել է Արեսի անվան նման անուն, ուստի և
շփոթվել է օլիմպիական Արեսի հետ և, բնականաբար, պայքարում հաղ-
թանակել են տվել աստծուն: Մյուս կողմից քանի որ Ագդիստիս և Ատիս
հակառակորդների միջև ազգակցություն չկա, կարող է պատահել, որ մեր
պատումն արտացոլում է առասպելի սկզբնական վիճակը, երբ Ատիսը
դեռևս երիտասարդ փոյուզիացի էր՝ մի աստված կամ հերոս:

Համենայն դեպս, ստույգ է, որ Կեղծ-Պլուտարքոսի հաստատածն ապա-
ցուցում է Հայաստանում այն առասպելի առկայությունը, որն ամենուրեք
պատմվում է Կիբելե-Ատիս աստվածային գույզի վերաբերյալ:

Արեսի անվան քննությունը տառնում է մեզ Պլատոնի հռչակավոր Էրի
ուղղությանը և դեպի հայկական դիցաբանության Արա Գեղեցիկը:

Հայկական Էրի ավանդությունը քաջ հայտնի է: Նա պատերազմում
սպանվում է, բայց տասներկուերորդ օրը հարություն է առնում և պատմում,
թե ինչ է տեսել մյուս աշխարհում¹: Դժբախտաբար, մանրամասնություն-
ները մեզ չեն փոխանցվել: Պլատոնը հետաքրքրվել է այդ ավանդությանը
այնքանով, որքանով դա կարող էր ծառայել մարդկային հոգու անմա-
հության իր սիրած դրույթի ապացուցմանը: Կղեմես Ալեքսանդրիացին (II
դար) կարծում է, որ Էրը՝ Չրադաշտն է, և սրա պատճառը, անշուշտ, նրանց
միջև մի քանի մանություններ գտնելն էր²: Իրականում հայոց Էրը Ատիսի՝
երիտասարդ փոյուզիացու, կրկնորդն է միայն: Նա հիշեցնում է նաև թրա-
կիացի Չամուքսիսին, որը երեք տարի թաքնվեց ստորերկրյա մի կա-
ցարանում և չորրորդ տարին երևան եկավ³: Այս խորհրդավոր պատ-
կերներով ցույց է տրվում, որ մահից հետո կարելի է նորից վերադառնալ

¹ Պլատոն, Հանրապետություն, X (614 b և հաջ.):

² C. Clemon, Fontes historiae religionis persicae, t. 67: Մենք գիտենք, որ Չրադաշտը նետվել է փոսի մեջ (Fr. Rosenber, Le livre de Zoroastre, Zaratuštama, t. 49):

³ Հեյդուդաս, IV, 95:

կյանք¹: Մա մարմնավորումն է բնության, որն անընդհատ մեռնում և շարունակ վերածնվում է, ինչպես հողն իր մարմնավորումը գտնում է Մեծ Մոր մեջ: Նմանությունը շատ սերտ է, որով և Մեծ Աստվածունին անվերջ ընկերակցում է Ատիսին և նրա նմաններին, որպեսզի նրանց հետ ներկայացնի բազմացման մեծ խորհուրդը և բնության փոփոխությունները:

Այս ձևով Մեծ Մայրը մտնում է Իշտար կամ Աստարտե կամ Աբարգատիս (սրանք միևնույն անվան զանազան ձևերն են) աստվածուհու բնագավառը և նույնանում է նրա հետ: Ապա գալիս է Ասորեստանի թագուհին՝ հռչակավոր Սեմիրամիսը, որը հավակնում է հավասար տեղ գրավել նրանց կողքին: Ավելի ուշ նույն հավակնությունը կունենա մի ուրիշ տիրուհի ևս՝ Ստրատոնիկեն:

Հին հայկական գրականության մեջ աստվածային գույզի մասին կա մի առասպելական ավանդություն, ուր Ատիսի և Կիբելեի փոխարեն երևան են գալիս Արա-Շամիրամը կամ Սեմիրամիսը: Ինչ էլ որ լինի էրի և Արայի միջև եղած լեզվաբանական հարաբերությունը, նրանց դիցաբանական ազգակցությունը կասկածից դուրս է:

Արա-Շամիրամի վերաբերյալ ավանդությունը հաղորդել է Անանունը, իսկ ավելի ուշ վերամշակել է Մովսես Խորենացին իր պատմական երկում: Ահա մի քանի բառով դրա բովանդակությունը.

Ասորական դարաշրջանում Հայաստանում իշխում էր մի թագավոր, որը կոչվում էր Արա Գեղեցիկ՝ իր արտակարգ գեղեցկության համար: Նինոս թագավորից հետո Ասորեստանի գահը բարձրացավ նրա կին Շամիրամը՝ հռչակավոր Սեմիրամիսը: Վերջինս հեշտասեր և անառակ կին լինելով՝ սիրահարվեց Արային և, նրան գրավելու նպատակով, առաջարկեց իր գահը, բայց Արան մերժեց: Այդ ժամանակ թագուհին իր քանակով մտավ Հայաստան, և Արան կովի դաշտում զոհվեց: Շամիրամը ջանաց հարություն տալ նրան՝ Հարալեզ աստվածների օգնությամբ: Որովհետև այդ նրան չէր հաջողվում, պալատականներից մեկը, որ Արային էր նման, հարություն առած Արայի փոխարեն ներկայացվեց: Թագուհին հայտնեց, որ Հարալեզ աստվածները լիզել են Արայի վերքերը և վերադարձրել նրա

¹ S. Augustini, De civitate Dei, VII, 25. Propter vernalem quippe faciem terrae quae ceteris est temporibus pulchrior, Porphyrius philosophus nobilis Attin flores significare perhibuit et ideo abscisum quae flos decidit ante fructum [Երկրի այս գարնանային արտաքին համար, որը բոլոր {տարվա} եղանակներից գեղեցկագույն է, ինչպես հաղորդում է Պորփյուրը՝ ազնվական փիլիսոփան, Ատիսը նշանավորում է ծաղիկները, և խնդրված է, որովհետև ծաղիկը ընկնում է, նախքան պտղի [բունի], (տե՛ս H. Hepding, Attis, seine Mythen und sein Kult; F. Cumont, Notice sur un Attis funéraire, Extrait du «Bulletin de l'Institut Archéol. liégeois», XXIX. 1901).

կյանքը: Արան Անուշավան անունով մի որդի ունեց, որը նվիրված էր սոսիների պաշտամունքին Արմավիրում:

Ըստ ամենայնի ակներև է, որ մեր առջև վաղնջական մի առասպել է, որտեղ պարզ նկատելի են Կիբելեի և Ատիսի ուրվագծերը: Բացահայտ է, որ առասպելի էական կետերը ձևափոխվել են քրիստոնեական միջավայրի ազդեցության ներքո: Իրական պատումի մեջ խոսքը, անշուշտ, Արայի իսկական հարության մասին է եղել, ինչպես Ատիսի առասպելում: Արայի որդու անունը՝ Անուշավան, անմահության գաղափար է ենթադրում, ստուգաբանորեն դա նշանակում է՝ «նա, ով անմահ է պահպանվել»¹: Նրա կապը սոսիների հետ մեծ հետաքրքրություն է ներկայացնում և թույլ է տալիս Արայի մեջ տեսնել վերապրուկը Ատիսի, որը ծնվել էր մի ծառից:

Անօգուտ է շարունակել այն ջանքերը, որոնք թափել են մի քանի գիտնականներ՝ ապացուցելու համար, թե Արա-Շամիրամ դրվագը հայ հեղինակների հորինվածքն է, դեսուդեն ցրված տեղեկությունների վրա հիմնված, և, հետևաբար, չունի ոչ մի պատմական նշանակություն: Ուրիշներ գտնում են, որ դա ազգային հին ղյուցագներգության թանկագին մի քեկոր է. մեր կարծիքով, դա տեղական հին դիցաբանության մի էջ է:

Բավական ժամանակ է, ինչ հրապարակվել է մի շատ կարևոր վավերագիր, որը վրիպել է գիտնականների ուշադրությունից, բայց անժխտելի կերպով հաստատում է մեր տեսակետը: Բեռլինի պապիրուսների հավաքածույում Վիլկենը հայտնաբերել և 1893 թվականին Ein neuer griechischer Roman² վերնագրով հրատարակել է մի թերթ, դժբախտաբար վնասված, որի վրա հետաքրքրական մի պատմություն է կարդացվում: Ինչ-որ Վիլկենը կարողացել է վերծանել, այսպես է համառոտվում.

Նինոսը, դեռևս 17 տարեկան երիտասարդ, սիրահարվում է հազիվ 13 տարեկան իր զարմուռին: Նրանց մայրերն, ուրեմն, քույրեր են: Նինոսի մայրը կոչվում է Թամբե *Θάμβη*, իսկ երիտասարդ աղջկա մայրը՝ Դարկեյա *Δαρκεία*: Նինոսը տեսակցում է իր մորաքրոջ հետ և դժգոհություն հայտնում, որ իրեն թույլ չեն տալիս ամուսնանալու իր սիրեցյալի հետ, որովհետև նրան գտնում են շատ երիտասարդ, և ինքը պետք է դեռ երկու տարի սպասի: Երիտասարդ աղջիկն իր կողմից կարծես ասելիք ունի իր մորաքրոջը, ուրեմն՝ Նինոսի մորը, բայց անոթխածաբար կարմրում և

¹ Միայն եթե սա չլինի պարզապես աղավաղումը anušarvan բառի, որը նշանակում է «նա, ում հոգին անմահ է»՝ Սասանյան Խորով Անուշիրվան թագավորի մականունը: Anušavan=anusa ավիլացած van, qoig կարելի է բացատրել որպես բաղկացած anuš (-ak)-ից և van<ban<pan-ից: Հմմտ. Artapanos=Artavan:

² «Hermes», XXVIII (1893), էջ 161-193:

շփոթված ետ է քաշվում: Երկու մայրերը ընտանեկան խորհուրդ են կազմում, որի հետևանքը հայտնի չէ՝ այդ հատվածը վնասված լինելու պատճառով: Այս Եփեսոսը պատրաստվում է արշավել Հայաստան: Նրա բանակը, բաղկացած հելլեններից, կարիացիներից և միջագետքցիներից, հաշվում է 70.000 հետևակ, 30.000 հեծյալ և 150 փիղ: Նիմոսը հաղթահարում է ճամապարհի դժվարությունները, անցնում գետերը և գալիս ճամբարում դաշտում: Տասն օր հետո ճակատամարտն սկսվում է: Պատմության շարունակությունը պահպանված չէ:

Այս վավերաթուղթը հրատարակող գիտնականը ենթադրում է, որ Նիմոսը, ստիպված լինելով երկու տարի սպասել, որոշել էր այդ ժամանակն անցկացնել պատերազմի մեջ, և իրավացիորեն գտնում, որ դա բավական սովորական վիպական դրվագ է:

Ինձ թվում է, որ Նիմոսի արշավանքը բոլորովին տարբեր իմաստ ունի: Ինչո՞ւ երիտասարդ աղջիկը չէր կարող սիրտը բաց անել իր մորաքրոջը: Ամոթի՞ց: Բոլորովին ոչ: Մորաքույրը, նրան շփոթված տեսնելով, սաստիկ մտահոգվում է և հարցնում՝ *μή τι μεμψη>τόν έμδον υίόν* [չկա՞ հանկարծ մի բան որդուս հանդիմանելու]: Նա, ուրեմն, հասկացել է, որ երիտասարդ աղջիկը չի բաժանում իր որդու՝ Նիմոսի, զգացումը, և, անշուշտ, նեղվում է ասել Նիմոսի մորը՝ վախենալով նրան վշտացնել: Բայց ինչո՞ւ նա չի սիրում Նիմոսին: Որովհետև նա սիրում է մեկ ուրիշի, իսկ այդ ուրիշը Հայաստանի թագավորն է: Նիմոսը, կատաղած, արշավանքի է դուրս գալիս իր երջանիկ մրցակցին կործանելու համար: Մենք այսպիսով վերականգնում ենք սիրո մի դրվագ, որը շատ ավելի նվագ սովորական է, շատ ավելի վիպական:

Չնչված տեղերում որոշակի կարդացվում է *ὁ Ἐρω*, իսկ մի քիչ հետո՝ *Ἀρμένι*: Իսկապե՞ս էրոսի մասին է խոսքը, կամ արդյո՞ք հայոց Արա թագավորի անունն է թարգմանված այդ հունական ձևի տակ: Ըստ Դիոդորոսի՝ Նիմոսը մախ արարների դեմ է արշավել, ապա իր զենքերը դարձրել է հայերի դեմ: Արաբ թագավորը կոչվում էր *Ἀραίος*, իսկ հայ թագավորը *Βαρζάνης*¹: Կարելի է անունների շփոթություն ենթադրել, մանավանդ որ ո՛չ մեկը և ո՛չ մյուսը պատմական չեն:

Մեր վեպը գտնվում է ասորական աստվածուհու մասին այն առասպելի ազդեցության ներքո, որը հաղորդում է Դիոդորոսը՝ ըստ Կտեսիասի, և որը մեզ ծանոթացնում է, թե ովքեր էին Դարկեյան և Թամբեն:

Ավանդությունն ասում է, որ Ասկալոնի մոտ գոյություն ունեւր ձկներով լեցուն մի լիճ՝ նվիրված կիսակին-կիսաձուկ մի աստվածուհու, որին ասորիները կոչում են Դերկետո՝ *ήν όνομάζουσιν οί Σύροι Δερκετούν*: Աֆրոդիտեն, ոյս ունենալով Դերկետոյի դեմ, նրան սիրահարեցնում է մի պատանու, որից նա ունենում է մի աղջիկ: Մայրը, անոթահար, լքում է երեխային անապատում և ինքը նետվելով լիճը՝ փոխվում ձկան: Աղավնիները, խղճալով լքված երեխային, շրջապատում և կերակրում են նրան: Բախտի բերումով մի հովիվ գտնում է երեխային և տանում-հանձնում թագավորական զորապետին, որի անունն էր Սիմմա, *δονομα Σίμμα* (49): Երեխան մեծանում է Սիմմայի տանը և անվանվում, ըստ նրա անվան, Սեմիրամիս: Նիմոս թագավորի պալատականներից մեկը, Օննես *Ὀννης* անունով, ամուսնանում է Սեմիրամիսի հետ, բայց Նիմոսը նրանից խլում է աղջկան¹:

Ըստ այս պատմության՝ Սեմիրամիսը Նիմոսի կինն է և Դերկետոյի աղջիկը: Մեր վեպի երիտասարդ աղջիկը, որին սիրում է Նիմոսը, անկասկած Սեմիրամիսն է, քանի որ նա աղջիկն է Դարկեյայի, որը հենց նույն ինքը Դերկետոն է:

Դարկեյա և Դերկետո՝ Աքարգատիսի միաձուլված ձևերն են: Աքարգատիս անվան առաջին մասում հայտնվում է Աքարան, *Ἀθάρα*, որը ասուրական Իշտարի արամեական ձևն է: Ստրաբոնը հավաստիացնում է, որ Աքարգատիսը (փխ. Աքարգատիս), Աքարան և Դերկետոն նույնն են²: Սեմիրամիսը, ուրեմն, Իշտարի կամ Աստարտեի աղջիկն է: Դարկեյայի քույրը՝ Թամբեն, որը Նիմոսի մայրն է, ոչ այլ ոք է, քան սխալմամբ իզականացված Թամմուզը: Նա նրա հայրն է և ոչ թե մայրը: Ասուրական Թամմուզը համազոր է ասիանիկ Ատիսին կամ ասորական Ադոնիսին: Դրա համար է, որ Ասորիքում Մեծ Աստվածուհու սրբավայրը Ատիսի կերտվածքն էին համարում³:

Նիմոսը ներկայանում է որպես Թամմուզի որդի, ինչպես որ Սեմիրամիսը Իշտարի դուստրն է: Այդ հանգամանքը գալիս է ասելու, որ Նիմոս-Սեմիրամիս գույզը ժառանգել է Թամմուզ-Իշտարի աստվածային հատկանիշները:

Արդ, պապիրուսի վրա գրված վեպը Նիմոսի կողքին որպես այստյան ներկայացնում է Հայոց թագավորին, որը Սեմիրամիս-Իշտարի ընկերակից

¹ Դիոդորոս, II, 1:

¹ Դիոդորոս, III, 4:

² Ստրաբոն, XVI, IV, 27 'Αταργάτιν δέ την Ἀθάραν (ἐκάλεσαν). Δερκετώ δ' αὐτήν Κτησίος καλεῖ.

³ De Syria Dea, 15.

լինելու պատիվն է վիճարկում: Հայկական ավանդությունը նույնպես ձգտում է համձին Արայի ստեղծել նոր Ատիս կամ Նինոս, որպես Մեծ Մայր Մեմփրամիսի ուղեկից, և եթե վավերական տարբերակում Արայի հարության մասին հարց էր ծագում, պետք է ընդունել, որ Արան իսկապես ճանաչվել է որպես Աստվածուհու ուղեկից:

Պատմիչ Թովմա Արծրունուն ծանոթ մի հին ավանդության համաձայն, Արայի հարության տեսարանը տեղի է ունեցել Լեզք գյուղում, Վանի մոտ¹: Գյուղից ոչ հեռու գտնվում է մի ջրհոր, որի մասին երկրի բնակիչները՝ հայերը, մեր նյութի վերաբերյալ շատ հետաքրքիր պատմություն են պատմում:

Հիշյալ ջրհորը հռչակված է որպես սրբավայր: Բարեպաշտությանը ուխտի են գնում ու աղոթում այնտեղ: Այն կոչում են «սուրբ բոնիր»: Այդ տարօրինակ ջրհորում կար միայն մեկ ձուկ: Չուկը չի բարեհաճում բուրբին երևալ: Եթե նա երևում է մի որևէ ուխտավորի, ուրեմն, նրա ուխտն ընդունել է: Դա սովորական ձուկ չէր: Առաջներում նա կնոջ դեմք ուներ, և դեռևս արծաթե զարդարանք է տեսնվում նրա քթից կախված: Նա մի քահանայի կին էր և շատ զեղեցիկ: Մի օր, երբ նա բոնիրի դիմաց նստած հաց էր թխում, մի մուրացկան երևաց և հաց խնդրեց: Նա բավարարեց նրա խնդրանքը: Մուրացկանը ուրիշ սնունդ ուզեց: Կինն այդ ևս բավարարեց: Մուրացկանը գինի ուզեց: Դա նույնպես չմերժվեց: Վերջապես թշվառականը համարձակվեց մի համբույր խնդրել: Կինը տատանվեց, բայց ինքն իրեն ասաց՝ «Խեղճ մարդ է, պետք է խղճալ նրան և ողորմություն անել», ու նրան համբույր տվեց: Հենց այդ պահին քահանան ներս մտավ: Կինը, սարսափահար, ամոթահար, նետվեց բոնիրի մեջ, քահանան հետևեց նրան և այրվեց կրակում, բայց կինը ձուկ դարձավ: Թոնիրը լցվեց ջրով, և աստծու հրամանով կինն այնտեղ մնաց որպես հավիտենական հիշողություն²:

Չարմանալի է, թե ինչքան հավատարմությամբ է այդ լեգենդը վերաբառում Դերկետոյի հին առասպելը: Ասկալոն լիճը դարձել է ջրհոր: Մեծ Աստվածուհի Դերկետոն այնտեղ է՝ ձկան տեսքով՝ որը հիանալի կերպով մարմնացնում է երբեմնի աստվածուհուն՝ կիսակին-կիսաձուկ, *πρόσωπον έχει γυναικός, τὸ δ' ἄλλο σώμα πάν ιχθύος* [դեմքն ուներ կնոջ,

¹ Թովմա Արծրունի. III, 18, այդ գլուխը կոչում է «Լեզոյ գիտ», հավանաբար, հետագայի սխալ ստուգաբանության պատճառով: Լեզ-քը («լիզելու վայր») կարծես անվան ավելի ճշգրիտ ձևն է:

² Այս լեգենդը գրի է առել Գ. Մրվանձտյանը («Գրոց ու բրոց», էջ 53-54)՝ կես դար առաջ: 1918 թ., Վանի շրջանում հնագիտական ճանապարհորդության ժամանակ (50), առիթ ունեցա այցելելու այդ հռչակավոր ջրհորը, բայց երկիրը զրկվել էր իր բնակիչներից, այնտեղ միայն մի քանի երեխաների հանդիպեցի. նրանք ջրհորը կոչում էին «Յոնիր»:

իսկ մնացած մարմինն ամբողջովին ձկանն էր]: Իսկ քահանան և իր կինը հին աստվածային գույգի պատկերը չե՞ն հանդիսանում: Դերկետոյի աղջիկը և ժառանգը՝ Մեմփրամիսը, ամուսնացել էր Օննեսի հետ, բայց Նինոսը ամուսնուց խլեց նրան: Անծանոթին տված համբույրը շատ լավ արտացոլում է Մեմփրամիսի վերամուսնությունը Նինոսի հետ: Լքված ամուսինը՝ Օննեսը, ինքնասպանություն է գործում ճշտված քահանայի նման, որը իր կնոջ դավաճանությունը տեսնելուն պես նույնը կատարեց: Վերջապես, ի՞նչ ասել այս հրաշալի ձկան քթից կախված արծաթե զարդի մասին: De Syria Dea երկի հեղինակը Հիերապոլսում Մեծ Աստվածուհու տաճարի մոտ մի լիճ գիտե, ուր մեծ քանակությամբ ձկներ կան, բայց նրանցից մեկի լողաթևին ոսկե զարդարանք է կախված: Այդ զարդարանքը հայկական լեգենդում հիշեցնում է կնոջ փոխակերպումը ձկան:

Նման մի առասպել պահպանվել է Էրզրումի շրջանում, ուր նույնպես խոսվում է լճի և ձկան մասին: Կրոնական հարատևության այս ուշագրավ օրինակը բացատրվում է Մեմփրամիսի ժողովրդականությամբ Հայաստանում: Նախքան որպես աստվածուհի դիցաբանության մեջ մտնելը, նա իշխել էր Ասորեստանի հզոր թագավորների գահի վրա: Նրա Շամմուրամաթ անունը գտնվել է սեպագիր արձանագրություններում. այսպես էր կոչվում Շամշի-Ադաթ թագավորի կինը (826-811)¹: Այնուհանդերձ, անժխտելի է, որ հին դարերում ունեցած իր անսահման ժողովրդականությամբ նա պարտական է ոչ թե թագուհի լինելուն, այլ, ապահովաբար, աստվածուհի լինելուն, քանի որ նա ձուլվել էր Մեծ Մոր հետ:

De Syria Dea -ի հեղինակը հայերին դասում է այն ազգերի շարքը, որոնք Մեծ Աստվածուհու ջերմեռանդ երկրպագողներն էին և, որպես իրենց ջերմեռանդության նշան, ուխտի էին գնում Ասորիք՝ Հիերապոլիսի սրբավայրը: Մտրաբունը հաստատում է, որ Չելայում գտնվող Մեծ Մոր տաճարը, հին Մայի, որ Անահիտի (Անահիտ) անունն էր ստացել, դեպի իրեն էր ձգում նաև Հայաստանի ուխտավորներին:

Այս արժեքավոր վկայությունները հաստատում են մեր քիչ առաջ ասածը երբեմնի հավատալիքների մնացորդների մասին և բացահայտ դարձնում, որ Մեծ Մոր պաշտամունքը Հայաստանում ընդունված է եղել:

Մտրաբունի ժամանակ Ալիլիստենի Երեզում մեծարված աստվածուհին ավելի շուտ նմանություն ուներ Կոմանայի և Չելայի Մեծ Մոր՝ Մայի հետ, քան Անահիտի, որի անունը յուրացրել էր: Նրա սրբավայրի բազմաթիվ սպասարկողները և նվիրական պառնկության սովորությունը ցույց են տա-

¹ «Mitteilungen der Deutschen Orient. Gesellschaft», № 40 (1909), էջ 24; № 42 (1919), էջ 34:

լիս, որ Երեզի աստվածուհին միմիայն անունով էր իրանական և իրանական երևույթի ներքո պահպանում էր Մեծ Մոր հին հատկանիշները, որը հիմնականում նույնանուն է Մայի և Կիրելի հետ:

Ազաթանգեղոսը Տրդատի բերանով փառաբանում է Անահիտին և նրան համարում կանացի բոլոր առաքինությունների մայր: Դա, սակայն, Անահիտի, ո՛չ իրանական և ո՛չ ասիանիկական տեսքին չի պատշաճում: Հայ պատմիչը Անահիտին ընդունում է հունական Արտեմիսի փոխարեն: Իրանական մյուս աստվածները նույնպես երևան են գալիս հունական դիցարանի իրենց համագործնորդ հատկանիշներով: Ըստ հայ գրականության անդրանիկ նմուշների՝ հայերը այլևս ոչ մի գաղափար չունեին այն մասին, թե ինչ ձևով էին մեծարում Հայաստանում իրանական աստվածներին. թե ինչ ձևով էին նրանք անուններն էին միայն իմանում: Նույն Ալի-ներին. թվում է, թե նրանք անուններն էին միայն իմանում: Նույն Ալի-լիսենեի գավառում կար Նանե աստվածուհուն նվիրված մեկ ուրիշ սրբավայր, որը գտնվում էր Թիլ գյուղում: Նրա շրջակայքում, հատկապես Դարանաղի գավառում, Արամազդն իր տաճարն ուներ Անի-Կամախում, իսկ Բարշամիման՝ Թորդանում: Արևելքում, Բագայառիճ գյուղը Դերջանում՝ Միհր-Միթրայի աթոռանիստն էր: Ավելի հեռու՝ Բագրևանդում, Բագավան քաղաքը հռչակված էր Արամազդի իր սրբավայրով, որն անվանվում էր Վանատուր = *Zēdōs Eēvīoc* [Ձևս Հյուրընկալ]: Նույն Բագրևանդում գտնվող մի գյուղ կոչվում էր Տիրառիճ=Տիրի գյուղ, անտարակույս, ի պատիվ մի ժամանակ այստեղ գոյություն ունեցած Տիրի տաճարի:

Հետաքրքրական է, որ այդ բոլոր սրբավայրերը տեղավորված էին այն գլխավոր գծի վրա, որ Իրանական սարահարթը միացնում էր Փոքր Ասիային: Այն տպավորությունն է ստացվում, թե այս պաշտամունքների գոյությունը և նրանց հույն-իրանական տեսքը բացատրվում է այն զարկերակի միջազգային բնույթով, որը ծառայում էր որպես հաղորդակցման և առևտրի ուղի Իրանի և Արևմուտքի միջև:

Եթե այս պաշտամունքի հիմքում որևէ զուտ հայկական բան կա, ապա պետք է մտածել զույգ աստվածության՝ Մեծ Մոր և իր ընկերակցի հին ավանդության մասին, որը բնապաշտական և բուն ժողովրդական հավատալիք է: Իգական դեմքերը, որոնք հերթով կրում էին իրանական և հունական անուններ՝ գրավեցին տեղական աստվածուհու խորանը, իսկ նրանական անունները, որոնք տարբերվում էին ըստ տեղանքների, աստիճանաբար մտնացվեցին: Նույնը պատահեց նաև արական դեմքերի հետ, որոնք, հավանաբար, թաքցնում են, գեթ մասամբ, Մեծ Մոր հին ուղեկիցներին: Հայերեն «աստուած»-ի կապը *Σαβάζιος*-ի հետ նույնքան հրապուրիչ է, որքան և

վիճելի: Օրինը հայկական Աստվածաշնչում փոխարինված է Հայկով, իսկ հայտնի է, որ Օրինը դիցաբանության մեջ համապատասխանում է Թամնուզին: IX դարի մի հեղինակ (51) գրում է, որ «Լուսինը նվազ լուսավոր է, քան արևը, աստղը նվազ՝ քան լուսինը, իսկ Արան նվազ՝ քան Արուսյակը»¹: Մեմփրամիսի հակառակորդ Արան, ուրեմն, դիտված է որպես աստղ: Հայկական դիցաբանության մեջ Արայի ու Հայկի նախնական իմաստը մնում է անորոշ:

Համենայն դեպս, խնդրո առարկա պաշտամունքը խորապես արմատացած էր հայկական միջավայրում: Նախքան ընդմիշտ աներևութանալը, նա թողել է որոշ աղոտ, բայց ճանաչելի լույս, նույնիսկ հայ վարքագրական գրականության մեջ: Մենք ուզում ենք խոսել Ս. Գրիգոր Լուսավորչի և Տրդատի, Սուրբ կույսեր Հռիփսիմեի և Գայանեի չարչարանքների մասին: Պատմում են, որ Հայ եկեղեցու հիմնադիրը նետվել է սողուններով լի մի խոր վիրապ և որ այնտեղ ապրել է տասներեք տարի, իսկ հետո ողջ-առողջ դուրս գալով այնտեղից՝ քարոզել է նոր կրոնը: Ի՞նչ է նշանակում այս զարմանալի հրաշքը: Հին այն պաշտամունքի վերջին հիշատակումը չէ՞ արդյոք սա, ըստ որի, օրինակ՝ Չամուքսիսը, երեք տարի շարունակ թաքնվելով գետնափորում, նորից երևան է գալիս իր առաքելությունը կատարելու: Նույնպես, Արեսը տասներեք ամիս փակված է եղել երկաթե հնոցում: Ազաթանգեղոսը մի անգամ ասում է տասնհինգ տարի, մեկ ուրիշ անգամ՝ տասներեք տարի. ըստ մի քանի ձեռագրերի՝ այդ եղել է տասներեք ամիս: Մենք ընդունում ենք այս վերջին ընթերցումը որպես վավերական և կարծում, որ դա ցույց է տալիս հայկական հին տոմարի տասներեք ամիսները²: Ժողովրդական երևակայությունը Հայաստանի առաքյալին դրել է նույն պայմանների մեջ, որոնցում գտնվել է մեռնող և հարություն առնող հին աստվածը: Գրիգորի գործակից Տրդատ թագավորը նույնպես պահպանել է կարծես դիցաբանական որոշ գծեր: Նրան դարձնում են վարազ՝ սուրբ կույսերին անարգելու պատճառով: Որքան էլ տարօրինակ թվա այս պատկերը, այն բացատրելի կդառնա, եթե հիշենք Արեսին՝ վարազ դարձած այն ժամանակ, երբ ուզում էր սպանել իր ախոյան Ադոնիսին, և կամ Ատիսին, որն սպանվեց ռխակալ Չևսի նրա դեմ ուղարկած վարազի

¹ Н. Адоиц, Дионисий Фракийский и армянские толкователи, СПб., 1915, т. 2: 278:

² Մյուս ընթերցման պատճառով - 13 տարի՝ փոխանակ 13 ամիս, - 13 տարով հետաձգել են Հայաստանի դարձը, այն համարելով 301 թվականին: Իսկական թվականն է՝ 301-13=288 թ., Դիոկղետիանոսի օգնությամբ Տրդատի՝ Արշակունյաց գահին վերահաստատվելուց անմիջապես հետո:

կողմից: Միգուցե, Արեսը հայ Գիորփոսին սպանելու պահին նույնպես վարագի կերպարանք էր ստացել:

Տրդատ թագավորի կիրքը Ս. Կույս Հռիփսիմնի նկատմամբ նվազ նշանակալից չէ: Քայանե կույսը, թեպետ Հռիփսիմնի մայրը չէր, այնուհանդերձ, մոր դեր է խաղում նրա նկատմամբ: Նրա կենսագիր Ագաթանգեղոսն ասում է, որ Հռիփսիմն անունը նշանակում է նետված, որովհետև նա ինքն իրեն տեսավ «մահից դեպի կյանք նետված», այսինքն՝ հեթանոսությունից քրիստոնեություն: Անշուշտ, այդ առեղծվածային անունը նա ածանցում է հունական *ρίπτα*, *ρίψαμέντη* բառից: Մի պարզ բառախաղ: Հռիփսիմնն զիտեր ապակուց ուլունքներ պատրաստել: Կենսագիրն ուզեցել է այս արհեստը վերագրել նրա ընկերուհիներից մեկին, բայց լուրջ պատճառներ կան կարծելու, որ ըստ նախնական պատումի՝ Հռիփսիմնն ինքն էր ապակուց ուլունքներ պատրաստելու արհեստը գործադրում՝ իր ընկերների կարիքները հոգալու համար: Արդ, այն միտքը, որ Ս. Կույս Հռիփսիմնն լքված երեխա էր, ինչ-որ չափով հիշեցնում է Մեմֆրամիսի ճակատագիրը, որն իր մոր կողմից լքվել էր ամապատում: Ապակյա ուլունքներն արդյոք չե՞ն հիշեցնում այն հռչակավոր մարգարիտները (հուլունք), որ Մեմֆրամիսը նետել է Վանա լիճը, կամ այն զարդարանքները, որ կախված էին Ասկալոնի լճի ձկան քթից:

Գալով Հռիփսիմն անվանը, նրա վերջին մասը հիշեցնում է Միմն՝ Ադադի աղջկա անունը: Ահա թե ինչ է ասում Մարկոս Ավրելիոսի ժամանակակից՝ Սարդեսի եպիսկոպոս Մելիտոնը. «Syri colebant deam Atti ex Adiabene quae misit filiam Balat medicam quae sanavit Sime filiam Adad regis Syriae»¹ [Ասորիները պաշտում էին Ատաի դիցուհուն Ադիաբենեից, որը ուղարկել է [իր] դստեր՝ Բալատ բժշկուհուն. [վերջինը] բժշկել է Միմնին՝ Ասորիքի թագավոր Ադադի դստեր]:

Այսպիսով, Ատիսը դարձել է իգական աստվածություն: Նրա բժշկուհի դստերը հանձնարարվում է բուժել Ադադ թագավորի աղջկան՝ Միմնին: Այսպես էլ Նինո կույսը կամ գերուհին բուժեց Միհրան թագավորին և դարձի քերեց վրաց ժողովրդին: Մեր կարծիքով, Նինոն և Միհրանը Հռիփսիմնի ու Տրդատի կրկնակն են: Այս նյութի վերաբերյալ Պակոբ իշխանի՝ Ռուփինոսին պատմածը վերջին հաշվով ուրիշ բան չէ, եթե ոչ Հռիփսիմնի կյանքի վրացական տարբերակը: Ավելի ճիշտ կլիներ Հռիփսիմնին և Նինոյին դիտել որպես երկու տարբերակներ միևնույն կույս-առաքյալի, որի պատ-

մական տեսքն արդեն մթագնել էր այն շրջանում, երբ ապրում էր Պակոբը, այսինքն՝ նրա առաքելությունից համարյա մեկ դար հետո:

Մեր դիտողությունները չեն վերաբերում հաղորդված ավանդությունների պատմականության հարցին. ինչ էլ որ լինի դիտողություններից յուրաքանչյուրի արժեքը, դրանք իրենց ամբողջությամբ բացահայտում են հին պաշտամունքի վերնուշը և ապացուցում, որ պաշտամունքն իսկապես խարսխված է եղել ժողովրդական զանգվածների գիտակցության մեջ (52):

¹ J. P. Migne, P. G., V, c. 1228.

ՎԵՐՉԱՐԱՆԻ ՓՈՆԱՐԵՆ

Շուրջ երեք տասնամյակ է անցել Նիկողայոս Ադոնցի՝ «Հայաստանի պատմություն: Ակունքները. X-VI դարեր Բ. ա.» աշխատության ստեղծման ու հրատարակման ժամանակից (53): Այն գրվել է 1930-ական թվականների վերջերին և լույս է տեսել Փարիզում, Ադոնցի մահվանից 4 տարի հետո՝ 1946 թվականին:

Ուրարտուի պատմությունն ամփոփող իր սույն աշխատությունը Ն. Ադոնցն անվանել է «Հայաստանի պատմություն», նրա «Ակունքները»: Սա նշանակում է, որ Ն. Ադոնցը Ուրարտուի պատմությունը դիտում է որպես Հայաստանի պատմության մի մաս, նրա նախնական շրջան: Եվ այս բոլորը այնպիսի պարագաներում, երբ Ն. Ադոնցն ամենևին հավասարության նշան չի դնում հայերի և ուրարտացիների միջև ու առավել ևս՝ հայերենի և ուրարտերենի միջև, դիտելով դրանք որպես էթնիկական ու լեզվական տարբեր երևույթներ: Այս հանգամանքը, ըստ Ն. Ադոնցի, ամենևին չի խանգարում ուրարտա-հայկական պատմամշակութային հաջորդակցությունը պատմական փաստ համարելուն:

Պետք է շեշտել, որ մի շարք կարևոր դեպքում Ն. Ադոնցը անբռնազրու կերպով դուրս է գալիս ուրարտագիտության սահմաններից և, վերլուծելով սկզբնաղբյուրների տվյալները, նոր մեկնաբանություն ու պարզաբանում տալիս գուտ աստուրագիտական կամ իրանագիտական խնդիրների, ճշգրտում, օրինակ, աստուրական իշխողների ժամանակագրությունը կամ «Հայերի ծագումը» աշխատության մեջ համոզիչ փորձ կատարում վերանայել Դարեն Վշտասայանի գահակալման հանգամանքները և այլն:

Դժվար է, սակայն, գեթ թվարկել Ն. Ադոնցի այս գործի նույնիսկ կարևորագույն առանձնահատկություններն ու առավելությունները, և դա դուրս է մեր նպատակից: Ընթերցողն ինքը կընկալի և կգնահատի դրանք:

Անցած երեք տասնամյակներում Հին Արևելքի պատմության, սեսպարական քաղաքակրթությունների և հատկապես դրանցից մեկի՝ Ուրարտուի պատմության ու մշակույթի հետազոտության առաջընթացը հիրավի հսկայական է եղել: Հիշյալ գիտական պրոբլեմները եղել են համաշխարհային արևելագիտության ուշադրության կենտրոնում, իսկ Ուրարտուն, մասնավորապես՝ խորհրդային և խորհրդահայ արևելագիտության հատուկ զբաղմունքի առարկա: Ուրարտուի հետազոտմանը կարևոր խթան են հանդիսա-

ցել համաշխարհային հռչակ վաստակած այնպիսի հուշարձանների պեղումներն, ինչպիսիք են Խորհրդային Հայաստանում Կարմիր-բլուրը (Թեյ-շեբահին) Արին-բերդը (Էրեբունի), Արմավիր և Դավթի բլուրները (Արգիշտի-խինիլի), Արևմտյան Հայաստանում (այժմ՝ Թուրքիա)՝ Ալքընթեփեն: Այնինչ, Ն. Ադոնցի տրամադրության տակ են եղել միայն նախկինում իրականացված՝ Վանի պեղումների նյութերը: Էսպես աճել է նաև հայտնի ուրարտական սեսպարար արձանագրությունների քանակը, ինչպես և նրանց մշակման և ուրարտերեն լեզվի հետազոտման մակարդակը: Այս բոլորը, ամփոփվելով խորհրդային գիտնականներ Գր. Ղափանցյանի, Բ. Պիտտովսկու, Գ. Մելիքիշվիլու, Ի. Դյակոնովի և ուրիշների, ինչպես և մի շարք արտասահմանյան գիտնականների հրատարակած մենագրություններում, սեսպարական արձանագրությունների լիակատար դիվաններում և բազմաթիվ հոդվածներում, մի նոր աստիճանի են բարձրացրել Վանի թագավորության ուսումնասիրությունը:

Ն. Ադոնցի ներկա աշխատությունը առաջին անգամ հայերեն հրատարակվելիս, բնականաբար, հարց է ծագում, թե արդյոք պետք չէ՞ր այն ենթարկել որոշ դեպքերում կիրառվող խմբագրական-ծանոթագրական մշակման, այն է՝ դեռ նետել կամ նորոգել հնացածը, լրացնել թերին, մի խոսքով, հարմարեցնել աշխատությունը գիտության այսօրվա մակարդակին: Ն. Ադոնցի նկատմամբ այսպիսի մոտեցումը, իհարկե, մերժելի է, քանի որ նրա յուրաքանչյուր աշխատություն պետք է դիտել որպես գիտական այնպիսի ժառանգություն, որը հետաքրքրական, կարևոր և ուսանելի է մեզ համար հենց իր բնական տեսքով, իր բոլոր կողմերով, ներառյալ նաև սխալները: Ուստի սույն հրատարակության իրականացումը հետևողականորեն ընթացել է բնագրի անաղարտ պահպանման նշանաբանի ներքո: Նույնը վերաբերում է և հատորում ամփոփված հոդվածներին: Դառնալով հատորի մանրակրկիտ ծանոթագրման խնդիրն, ապա այն, իրականացվելու դեպքում, շատ հեռուն կտաներ, ստեղծելով սույն հատորի կողքին մի երկրորդը, քանի որ բազմաթիվ են Ն. Ադոնցի արժարժած մասնավոր խնդիրները և շատ՝ նրա հաջորդների ջանքերով կատարված հավելումները¹: Ուստի ստորև կբավարարվենք միայն մի քանի բացատրական դիտողություններով, որոնք վերաբերում են այսօրվա ընթերցողին հուզող հարցերին:

¹ Հատկապես պետք է այդ նկատի ունենալ ուրարտական և աստուրական տեքստերի ու բառերի Ն. Ադոնցի առաջարկած ընթերցմանը (տառադարձմանը), մասամբ և բարձրանունությանը դիմելիս: Դրանք արված են 1930-ական թվականների գիտության մակարդակով, ուստի և օգտագործման դեպքում ենթակա են ստուգման նորագույն հրատարակությունների միջոցով:

1. Ն. Ադոնցի աշխատության մեջ, բնականաբար, տեղ չեն գտել Հայկական լեռնաշխարհի տարածքի վրա հայտնաբերված՝ մարդու գործունեության հնագույն շրջանի հետքերը՝ պալեոլիթի (հին քարի դարի) նյութերը, քանի որ դրանց առաջին գյուղը տեղի է ունեցել 1943-1945 թթ., իսկ հրատարակվել սկսել են միայն 1950-ական թվականներին: Այդ նյութերը, ինչ-տարակվել սկսել են միայն 1950-ական թվականներին: Այդ նյութերը, ինչ-պես և պալեոլիթին հաջորդած մեզոլիթի (միջին քարի դար) և նեոլիթի (նոր քարի դար) նյութերը, որպիսիները ևս հայտնագործվել են Հայաստանում, քարի դար) նյութերը, որպիսիները ևս հայտնագործվել են Հայաստանում, ապացուցում են, նախ, որ մարդն ապրել ու գործել է այստեղ սկսած իր ծագման ժամանակից, և երկրորդ, որ մարդու գոյությունն ու գործունեությունն այստեղ անընդմեջ է եղել սկսած հնագույն ժամանակներից (կես բյուրեղյա քարի մեզոլիթից մինչև մեկ միլիոն տարի մեզոլիթից առաջ), մինչև պատմական միլիոնից մինչև մեկ միլիոն տարի մեզոլիթից առաջ), երբ մարդկային հասարակության մասին արդեն սկսում ենք ստանալ գրավոր տեղեկություններ (մանրամասն տես՝ «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 1, ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1971, գլուխներ 1-10):

2. Ուրարտացիների և խուրրիների ծագման և Հայկական լեռնաշխարհի էթնիկական խմբերի պարզաբանման խնդրին մվիրված «Ռասայի և ծագման հարցը» ենթաբաժինը ընթերցելիս պետք է հաշվի առնել հետևյալը: Ն. Ադոնցի ներկա աշխատության շարադրման ժամանակաշրջանում քիչ բան էր հայտնի Ուրարտուի տարածքում ու նրան հարող երկրամասերում բնակվող ցեղերի որպիսության մասին: Ն. Ադոնցը փորձում է լուսաբանել այդ խնդիրը, հենվելով սեպագրական աղբյուրների մեջ հիշատակված տեղանուններն ու ցեղանունները հետազայի մեզ հայտնի տեղանունների և ցեղանունների հետ համամանեցնելու վրա: Այսպես, նա ընդհանրություն է գտնում «կաշկա» և «կոլխ», «ուրումե» և «իմեր», «արեշլա» և «ապշիլ», «խուրուշկի» և «արասկի», «մուշկ» և «մեսխ», «սուպրի» և «սասպեյր» և ուրիշ ցեղանունների միջև: Քանի որ այս գույգների երկրորդ անդամները մեծ մասամբ իբերական (վրացական) միջավայրից են ընտրված, ապա Ն. Ադոնցը կարծիք է հայտնում նաև առաջին անդամների՝ նույն միջավայրին պատկանելու մասին: Այստեղ պետք է նշել, որ Ն. Ադոնցի առաջարկված գույգերից միայն մեկն է՝ «արեշլա»-«ապշիլ» (ապշիլները արխագական ցեղեր են), որ դիմացել է ժամանակի քննությանը: Մյուսների նմանությունը արտաքին-պատահական է և չի վկայում հարազատության մասին: Այսպես, «կաշկա»-ն շատ ավելի համոզիչ կերպով այժմ համադրում են «գաշգ» չերքեզա-ադրդական ցեղերի հետ, «ուրումե»-ն՝ «արմեն» («հայ») ցեղերի հետ, «խուրուշկին» կամ «խուրուշկիան» հաստատապես խուրրիական բնակչությանը երկիր էր՝ Վանա լճից հարավ, «մուշկ» ցեղերը հնդեվրոպա-

կան (մասամբ՝ փռյուգիական, մասամբ, հավանաբար, հայալեզու) ցեղեր են («Հայերի ծագումը» գործի մեջ այդ թեզն ընդունում և զարգացնում է նաև ինքը՝ Ն. Ադոնցը), «Սուպրի»-ն կամ «Շուպրիան» կապ չունի «Սասպեյր»-ի հետ, նրա անունը ծագած լինելով «Սուրարտու» կամ «Շուրարտու»-ից (խուրրիների այլ անվանումը), իսկ երկիրը գտնվելիս լինելով Վանա լճից արևմուտք տարածվող Սասնա շրջանում և այլն: Առկա սուղ նյութերից առավել հավանական եզրակացությունն այն է, որ Ուրարտու պետության տարածքի մեծ մասը հնուց բնակեցված է եղել խուրրի-ուրարտական լեզուներով խոսող ցեղերով (մանրամասն տես՝ «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 1, գլուխներ 4, 9, 11):

3. Վերջին դիտողությունը վերաբերում է Ն. Ադոնցի՝ հայ ժողովրդի ծագման խնդրի հետ կապված մի կարծիքի, որն արտահայտված է, թե՛ «Հայաստանի պատմության» և թե՛ «Հայերի ծագումը» անավարտ գործի մեջ: Ըստ Ն. Ադոնցի, հայկական ցեղերի մուտքը արևմուտքից Հայկական լեռնաշխարհի տարածքը տեղի է ունեցել միայն Ուրարտուի թուլացման և անկման ժամանակաշրջանում՝ Ջ. ա. VII դարի վերջերին և VI դարի սկզբներին: Ըստ ավելի հավանական է այժմ արծարծվող այն տեսակետը, ըստ որի Ն. Ադոնցի ակնարկված հայալեզու ցեղերը անդրեփրատյան շրջանից Հայկական լեռնաշխարհ են թափանցել դեռևս Ջ. ա. XII դարում: Այստեղ նրանք բնակեցվել են հատկապես Վանա լճից դեպի արևմուտք մինչև Եփրատը տարածվող գոտին, իսկ Ջ. ա. VII դարի վերջերին և VI դարի սկզբներին լայնորեն տարածվել Հայկական լեռնաշխարհով մեկ (տես՝ «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 1, գլուխ 9 և 17):

Գ. Խ. ՄԱՐԳՍԵԱՆ

**ՔՆՆԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ**

(Հասկանձներ, մյուսեր երկրորդ և երրորդ հատորներից)

I. ՀԱՅԱՍՏԱՆԸ Զ. Ա. IV-I ԴԱՐԵՐՈՒՄ

1. Արևելքը [և Հայաստանը] մակեդոնական կայսրության օրոք

Մակեդոնական բանակն ափ է իջել Փոքր Ասիայում 334 թ. գարնանը: Միսիայով հոսող և Պրոպոնտիս [Մարմարի ծով] թափվող Գրանիկոս գետի ափին շարված [պարսից] արքայից-արքայի զորքերը պատրաստ էին կասեցնելու դրա ափհանումը: «Հելլեսպոնտոսը պատվազուրկ կլինի, եթե մենք չհանդգնենք հատել Գրանիկոսը», – ասել է Ալեքսանդրը և գրոհել պարսից բանակի վրա: Նա շահել է առաջին և կարևոր հաղթանակը: Դասկիլեայի մեծ սատրապությունն անցել է Ալեքսանդրի կողմը: Սարդեսի բերդակալ Միթրենեսն առանց դիմադրության բերդամրոցը հանձնել է Ալեքսանդրին: Նա այլևս կազմակերպված ուժեր չունեի, որոնք ի վիճակի լինեին պաշտպանելու [պարսից] արքայի տիրույթները Փոքր Ասիայում: Հաղթողը շարժվել է դեպի Կիլիկիա: 333 թ. աշնանը Իսսոսում տեղի է ունեցել երկրորդ մեծ ճակատամարտը: [Պարսից բանակն] անձամբ ղեկավարող Դարեհ [III Կողոմանոսը] մատնվել է խուճապի և դիմել փախուստի: [Հին պատմիչները] հավաստիացնում են, թե պարսից բանակի թիվը հասնում էր մինչև երեք հարյուր հազար հեռակայինի և հեծյալի: Այն ընդգրկում էր տարբեր ազգերի և ի շարս այլոց՝ հայերի (քառասուն հազար հեռակային և յոթ հազար հեծյալ) զորքեր:

Իսսոսի հաղթանակը նվաճողների առջև բաց է արել Ասորիքի դարպասը և դեպի Եգիպտոս տանող ճանապարհը: Ալեքսանդրը վարվել է զգուշորեն՝ ուղղություն վերցնելով դեպի Ասորիք ու Եգիպտոս. այս երկրների նվաճումից հետո ձեռք բերել հուսալի հենարան՝ այրուհետև վստահորեն խորամուխ լինելու դեպի պարսից տերության կենտրոնը: Դարեհի համար ամենաճակատագրական՝ երրորդ ճակատամարտը տեղի է ունեցել [331 թ. հոկտեմբերի 1-ին] Արբելայի հովտում՝ Գավգամելայում, որը հեռու չէր նախկին մայրաքաղաք Նինվեից: Բախտն արդեն շրջվել էր մեծ արքայից. նա գլխովին ջախջախվել է և դիմել փախուստի՝ դեպի Արևելքի նահանգները: Պարսից բանակի թիվը հասնում էր քառասուն հազար հեծյալի և

հարյուր բյուր կամ մեկ միլիոն հետևակայինի, ինչն անհավանական է¹: Ըստ մեկ այլ տեղեկության՝ հեծելազորի թիվը հասնում էր քառասուն հինգ հազարի, իսկ հետևակինը՝ երկու հարյուր հազարի. սա ավելի մոտ է իրականությանը: Բոլոր սատրապությունները՝ սկսած Կապադովկիայից մինչև հեռավոր Բակտրիանեն, ուղարկել էին իրենց զորքերը՝ համապատասխան սատրապների հրամանատարությամբ: Հայաստանը ներկայացված էր իր երկու սատրապով՝ Օրոնտես [Երվանդ] և Միթրատեսես [Միհրվահիշտ]: Ատրոպատեսը մարերի զորավարն էր: Մարերի կողքին շարված էին կադիշցիները, աղվանները և սակասեմները: Կապադովկացիներին ղեկավարում էր Արիակեսը, իսկ դեռևս արքայի տիրապետության ներքո գտնվող Ասորիքի մի մասը՝ Մազեոսը²:

¹ Q. Curtii Rufi, De rebus gestis Alexandri Magni libri superstites, liber III, cap. 2. Armenii quadraginta millia miserant peditum, additis septem millibus equitum [Հայերն ուղարկեցին քառասուն հազար հետևակային, ավելացնելով յոթ հազար հեծյալ]: Պարսից ուժերը՝ ըստ սովորության խիստ չափազանցված են, թեպետ մեզ տրամադրվում է դրանց զինված ուժերի մանրագին ցուցակը.

- Պարսիկներ՝ հարյուր հազար, որոնցից՝ երեսուն հազար հեծյալ:
- Մարեր՝ հիսուն հազար հետևակային, տասը հազար հեծյալ:
- Բարկանդիներ՝ տասը հազար հետևակային և երկու հազար հեծյալ:
- Հայեր՝ քառասուն հազար հետևակային և յոթ հազար հեծյալ:
- Վրկանցիներ՝ վեց հազար հեծյալ:
- Դերրիկացիներ՝ քառասուն հազար հետևակային, երկու հազար հեծյալ:
- Կասպեր՝ ութ հազար հետևակային, երկու հազար հեծյալ:
- Կասպիական ցեղեր՝ երկու հազար հետևակային, չորս հազար հեծյալ:
- Հույներ՝ երեսուն հազար, տե՛ս նույն տեղում, [էջ 108-109]:

² Arriani Anabasis, liber III, cap. 7: 'Αρμενίων δὲ Ὀρόντης καὶ Μιθρασύτης ἴσχυε [Իսկ հայերի վրա իշխում էին Օրոնտեսն ու Միթրատեսեսը].

Մյուս մասնակիցներն էին՝

1. Բակտրիանացիներ, սոգդիանացիներ և հարևան հնդիկներ, որոնց հրամանատարն էր Բակտրիանացի սատրապ Բեսսոսը:
2. Մակեր, ասիական սկյութներ, որոնց ղեկավարն էր Մոակեսը:
3. Արաքոսներ (արաքոսիացիներ), հարևան հնդիկների հետ մեկտեղ՝ Բարսանեքոսեսի հրամանատարությամբ:
4. Արիացիներ՝ սատրապ Մատիբարզանեսի հրամանատարությամբ:
5. Պարթևներ, վրկանցիներ և տապուրներ՝ Փրատափերնեսի հրամանատարությամբ:
6. Կարմիր ծովի առափնյա գոտու բնակիչներ՝ Օրոնտոբատեսի, Արիոբարզանեսի և Օրքսինեսի [հրամանատարությամբ]:
7. Ուրսիններ, սուսցիներ՝ Աբուլտեսի որդի Օքսարբեսի [հրամանատարությամբ]:

Մեկ այլ սկզբնաղբյուր (1) մեզ տեղեկացնում է, որ երկու թևի բաժանված պարսից բանակի ձախ կողմում, ի շարս այոց, կային հայեր, որոնց անվանում էին «փոքրեր», իսկ աջ կողմում՝ հայեր՝ Մեծ Հայքից (2): Հարկ է նշել, որ հայերի երկրի բաժանումը Փոքր և Մեծ Հայքերի պետք է նախորդած լինի IV դարին, եթե միայն պատմիչը չի օգտագործել այն արտահայտությունները, որոնք գործածական են եղել իր ժամանակաշրջանում:

Գավգամելայի հաղթանակից հետո Ալեքսանդրը սրընթաց արշավել է դեպի տերության մայրաքաղաք՝ Բաբելոն և գրավել արքայից-արքայի գահը: Հաղթողն անարգել ուղղություն է վերցրել դեպի Սուգա [Շոշ], այնուհետև՝ Պերսեպոլիս և Պասարգադ: Այդտեղից նա շարժվել է դեպի Էկբատան՝ այնտեղ գտնվող գանձերին տիրանալու և միաժամանակ Դարեհին հետապնդելու համար: Էկբատանից Ալեքսանդրն ուղղվել է [արդի] Թեհրանի մոտ գտնվող Ռագա [Raga], ուր նրան լուր է հասել Դարեհի՝ սատրապներից մեկի կողմից նենգաբար սպանվելու մասին: Այդ պահից Պարսկական կայսրության նվաճումն ավարտված էր:

Երկու տարի շարունակ Ալեքսանդրը ջանքեր է գործադրել արևելյան մահաճգների ապստամբ սատրապների դիմադրությունը հաղթահարելու և նրանց հպատակեցնելու համար: 326 թ. նա արշավանք է ձեռնարկել դեպի Հնդկաստան, որը տևել է գրեթե մեկ տարի: Ինդոսի ափով իջնելուց հետո,

8. Բաբելացիներ՝ Բուպարեսի [հրամանատարությամբ], ներառյալ՝ 9. հայերի, 10. կապադովկիացիների, 11. մարերի և 12. սիրիացիների [զնդերը]. բոլորը միասին՝ ներկայացնում են տասներկու սատրապություն:

Q. Curtii Rufi, Op. cit., liber IV, cap. 12. Քվինտոս Կուրտիոսը բանակը ներկայացնում է երկու՝ ձախ և աջ թևերի բաժանված ձևով: Չախ թևում գտնվում էին բակտրիանացիները, դահերը, արաքոսիացիները, շոշցիները, մասագետները, պարսիկները՝ մարդերի և սոգդիանացիների հետ մեկտեղ, որոնց բոլորին առաջնորդում էին Արիոբարզանեսը և Օրոբատը (Օրոնտոբատես). նրանց զվարճող զորավարն Օրսինեսն էր. կասպիացիները՝ Փրատափեսի հրամանատարությամբ, հնդիկները և Կարմիր ծովի ազգությունները, Armenii, quos minores vocant [այն հայերը, որ «փոքր» են անվանվում], ապա հետևում էին բաբելացիները, բիկտները, քոսեսացիները, զորտուացիները, որոնց աջակցում էին փոյուզացիները և կատոնները. վերջապես՝ պարթևներն ու սկյութները:

Այդ թևում էին նախ և առաջ՝ հայերը. natio majoris Armenise [Մեծ Հայքի բնակչությունը], հետո կապադովկիացիներն ու սիրիացիները, այնուհետև մարերը: Այս բոլորը կազմում էին քառասունհինգ հազար հեծյալ և երկու հարյուր հազար հետևակային:

Այս պատմիչի տվյալները միայն ընդհանուր առմամբ են համապատասխանում Արիանեսի տվյալներին:

նա բռնել է ետդարձի ճանապարհը և Գեղոսիայի անապատներով հասել Պասարգադ, իսկ այնուհետև Բաբելոն՝ 323 թվականին: Այժմ հարկ էր գրադվել նվաճված երկրների կազմակերպման հարցով: Նույն 323 թ. [ամռանը] վրա հասած մահը նրա ծրագրերն անավարտ է թողել: Հասակություն չկա այն հարցում, թե ինչ հիմունքներով էր նա հաստատելու իր իշխանությունը և ինչ ձևով էր պատրաստվում կարգավորել նահանգային վարչությունը:

Ալեքսանդրի համարձակությունը նրա առեղծի [առավելություններից] էր. այն չի ունեցել, հավանաբար, որևէ այլ հենք, քան վիթխարի հաջողությունը: Թվում է, թե նրա ռազմարշավն ավելի շուտ այդ խելահեղությանը էր պայմանավորված, որն անվանում են երջանիկ անշրջահայեցություն՝ *felix temeritas*, այլ ոչ թե մտածված ու կշռադատված ծրագրի արդյունքում իրականացված գործողություն: Բարեբախտությունը ցանկացել է նրան մղել մինչև աշխարհի՝ այն ժամանակ հայտնի ծայրամասերը: Նա նվաճել է անձայրածիր մի կայսրություն, առանց իրեն հաշիվ տալու այն պահպանելու միջոցների մասին: Ժամանակին վրա հասած վախճանը փրկել է նրա փառքը: Եթե նա ապրեր ավելի երկար, կարող էր տեսնել իր ձեռնարկումի կործանումը: Գլխապառույտ հաջողությունից նա կորցրել է գլուխը, տակնուվրա է եղել նրա սիրտը՝ «Սկսելով Տրայանոսի ոգիով, նա ավարտել է Ներոնի սրտով և Հելիոգաբալոսի բարքերով»¹: Ուստի, եթե նա ժամանակին չվախճանվեր՝ պատմության մեջ կմնար ոչ իբրև հերոս, այլ իբրև մի հնարամիտ արկածախնդիր (3):

Ճիշտն ասած, Ալեքսանդրը չի նվաճել պարսից կայսրությունը կամ դրան ափրացել է միայն այն չափով, որքան հարկ է եղել դեպի արքայից-արքայի մայրաքաղաքը ճանապարհ հարթելու համար՝ իր զինակիցներին թողնելով ավարտին հասցնելու նվաճումը: Հանձնարարությունը բավական դժվարին էր կատարելու համար: Հնարավոր չէ պնդել, թե երբ է այն ի կատար ածվել՝ նրա կենդանության օրոք, թե հետո, հնարավոր չէ խոսել մակ պարսից կայսրության՝ մակեդոնացիների կատարյալ հպատակության ներքո անցնելու մասին:

Գրանիկոսի ճակատամարտից հետո երկու սատրապություն՝ Հելլեսպոնտական Փոյոզիան և Լիդիան անցել են նվաճողի տիրապետության ներքո: Սակայն հարևան սատրապությունները՝ Մեծ Փոյոզիան, Կապադովկիան՝ մինչև Հալիս և Հալիսի մյուս կողմում գտնվող Կապադովկիան չէին նվաճվել: Ալեքսանդրը հանձնարարել էր Անտիգոնոսին՝ հպատա-

կեցնել Փոյոզիան և Սարքստաս [կոչվող] Կապադովկիան¹: Հալիսի մյուս կողմում գտնվող Կապադովկիան Արիարաթեսի տիրապետության ներքո էր: Առափնյա երկրները՝ Բութանիան, Պափլագոնիան ևս պահպանել էին իրենց անկախությունը:

Հայաստանը գտնվում էր նույն կացության մեջ: Սկզբնաղբյուրները հավաստիացնում են, որ Գավգամելայի ճակատամարտից հետո, Բաբելոն ժամանումից ի վեր, Ալեքսանդրը Հայաստան է ուղարկել Միթրենեսին, նրան՝ ով հանձնել էր Մարդեոն²: Սակայն, չկա որևէ փաստ, թե Միթրենեսն իր առաքելությունն ավարտին է հասցրել: Մենք գիտենք, որ Հայաստան էր ուղարկվել մեկ այլ անձնավորություն՝ Մեմոնը, որպեսզի ոսկի փնտրեր Միսպիրիտիսի [Մպեր] տարածաշրջանի հանքերում: Բայց տեղաբնիկները հարձակվել էին նրա վրա և դուրս վռնել³: Միթրենեսը կարող էր արժանանալ միևնույն ճակատագրին: Մակեդոնական նվաճումների ցուցակներում, իրոք որ, մենք որևէ տեղ Հայաստանի մասին հիշատակության չենք հանդիպում:

Ալեքսանդրը վախճանվել է: Ծավալված պայքարին հաջորդել է կայսրության առաջին բաժանումը՝ հանգուցյալ նվաճողի արքունիքի և բանակի բարձրաստիճան հրամանատարության միջև: Սատրապությունների (դրանց կառավարիչների հետ մեկտեղ) բաշխումը ներկայանում է հետևյալ կերպ.

1. Եգիպտոսը տրվել է Պտղոմեոսին՝ Լագոսի որդուն:
2. Ասորիքը՝ Լաոմեդոնին:
3. Կիլիկիան՝ Փիլոտասին:
4. Մարաստան՝ Պիթոնին:
5. Կապադովկիան և Պափլագոնիան՝ առափնյա տարածաշրջանների հետ մեկտեղ, ուր Ալեքսանդրը չէր գնացել՝ Եվմենեսին:
6. Պամփիլիան, Լիկիան և Մեծ Փոյոզիան՝ Անտիգոնոսին:
7. Կարիան՝ Կասսանդրոսին:
8. Լիդիան՝ Մեմանդրոսին [Մելեագրոսին]:
9. Հելլեսպոնտական Փոյոզիան՝ Լեոննատոսին:
10. Թրակիան՝ Լյուսիմաքոսին:

¹ *Arriani Anabasis*, liber I, cap. 17; liber II, cap. 4.

² Անդ, liber III, cap. 16. *κατέπεψε δὲ καὶ ἐς Ἀρμενίαν Μισθρήτην σατράτην* [Իսկ Հայաստան է ուղարկվել Միթրենես սատրապը]:

³ *Strabonis Geographica*, liber XI, cap. 14.

¹ Նշել է Նապոլեոնն իր «Հուշերում»:

11. Մակեդոնիան՝ Անտիպատրոսին:
12. Պարթապամիսադեսը՝ Օքսիարտեսին:
13. Արաքոսիան և Գեղրոսիան՝ Սիրյուրտիոսին:
14. Արիան և Դրանգիանան՝ Մտասանդրոսին:
15. Բակտրիանեն և Սոգդիանեն՝ Փիլիպպոսին:
16. Պարթևստանը և Վրկանը՝ Փրատափերնեսին:
17. Պարսքը [Պերսիս]՝ Պևկեստասին:
18. Կարմանիան՝ Տլեպոլեմոսին:
19. Մարաստանը՝ Ատրոպատեսին:
20. Բարբելոնը՝ Արքոնին:
21. Միջագետքը՝ Արկեսիլատոսին:
22. [Անընթեռնելի]¹:

Այս ցուցակում Հայաստանի կամ Միթրենեսի անունները որոնելը զուր է: Կարծեցյալ սատրապի մասին այլևս չի հիշատակվում: Խիստ հավանական է, որ նա զոհվել է Հայաստանում:

«Պափլագոնիան, Կապադովկիան և Պոնտոսի ամբողջ փիլը մինչև Տրապիզոն» բաժին են հասել Ալեքսանդրի առաջին քարտուղարին՝ Եվմենեսին: Մակայն, այս երկրները դեռևս նվաճված չէին և դրանց թագավորն Արիարթես I-ն էր: Ըստ մեկ այլ սկզբնաղբյուրի՝ Եվմենեսին կարգադրված էր հսկել ամբողջ տարածաշրջանը մինչև Տրապիզոն և պատերազմել Արաքոսի դեմ, որը միակն էր, ով չէր ցանկացել ենթարկվել մակեդոնական տիրապետությանը²: Երկու հարևան սատրապներ՝ Հելլեսպոնտական Փոյուզիայի սատրապ Լեոննատոսը և Մեծ Փոյուզիայի սատրապ Անտիզոնոսը, Պերդիկկասից ստացել էին՝ իր տիրություն հաստատվելու գոր-

¹ Diodori Bibliotheca Historica, liber XVIII, cap. 3. Այս ցուցակը պատկանում է Հիերոնիմոս Կարդիացուն: Այս նույն ցուցակը Պոմպեոս Տրոգոսը վերստին ներկայացրել է մի քանի շեղումներով (Justinii historiae philippicarum ex Trogo Pompeio liber XIII, cap. 4): Այսպիսով նա Բակտրիանեն և Սոգդիանեն Փիլիպպոսի փոխարեն հանձնում է երկու այլ անձանց, առաջինը՝ Ամյունտասին, իսկ երկրորդը՝ Սկյութեսին: Նույնը վերաբերում է Պարթևստանին և Վրկանին, որոնցից յուրաքանչյուրը, Փրատափերնեսի փոխարեն, ուներ առանձին ղեկավար՝ Նիկանորը և Փիլիպպոսը: Նա հավելում է Հայաստանը, որը տրվել է Տլեպոլեմոսին: Վերջինս Կարմանիայի սատրապն էր: Կարմանիան շփոթվել է Հայաստանի հետ:

² Q. Curtii Rufi, op. cit., liber X, cap. 10: bellum cum Arbate gereret. Solus hic detrectabat imperium [Պատերազմ էր վարում Արաքոսի դեմ. վերջինս միակն էր, որ չի ընդունել <մակեդոնական> տիրապետությունը]. թվում է, թե Արաքոսը կարող էր լինել Արիարթես անվան աղավաղված ձևը, հմմտ. Արաքոս, Plutarchus՝ Artax (4):

ծում Եվմենեսին օժանդակելու հրաման: Անտիզոնոսը չէր ցանկացել հնազանդվել, իսկ Լեոննատոսը, որին կանչել էին Թեսսալիա, այնտեղ կնքել էր իր մահկանացուն:

Պերդիկկասը հարկադրված է եղել անձամբ գնալ Արիարթեսին ընդառաջ, որի դեմ մարտնչել է և 322 թ. խաչել նրան՝ ամբողջ ընտանիքի հետ միասին: Եվմենեսը հաստատվել է իր սատրապությունում:

Չցանկանալով բաժանվել Պերդիկկասից, Եվմենեսը վստահել է քաղաքներն իր բարեկամներին, նշանակել կայազորների պետեր, ընտրել դատավորներ ու մատակարարներ և ուղեկցել Պերդիկկասին մինչև Կիլիկիա: Այստեղ Պերդիկկասը որոշել է, որ ավելի շահավետ է նրան ետ ուղարկել՝ «արտաքուստ իր սատրապությունը ղեկավարելու, սակայն, իրականում՝ սահմանակից Հայաստանի վրա իշխելու համար, որտեղ Նեոպտոլեմոսը խռովություններ էր հրահրել»¹:

Պարզ չէ, թե Հայաստանում խռովություններ հրահրող այս անձնավորությունն ինչ կարգավիճակ ուներ: Այստեղ խոսքը վերաբերում է Փոքր Հայքին, որը սահմանակից էր Կապադովկիային, սակայն, հայտնի չէ նմանապես, թե արդյո՞ք այն ընդգրկվում էր Կապադովկիայի սատրապության մեջ: Թվում է, թե Նեոպտոլեմոսը սատրապի ենթականերից մեկն էր, զինվորական աստիճանավոր:

Միևնույն ժամանակ Կրատերոսն ու Անտիպատրոսը Հունաստանից գնացել են Փոքր Ասիա՝ Պերդիկկասի իշխանության դեմ մարտնչելու համար: Վերջինս պատրաստվելով մեկնել Եգիպտոս՝ Պտղոմեոսի դեմ պայքարելու, «Եվմենեսին նշանակել է Հայաստանի և Կապադովկիայի զորքերի զլխավոր զորավար»² և կարգադրել իր եղբորը՝ Ալկեստասին ու Նեոպտոլեմոսին, ենթարկվել Եվմենեսին: Փոքր Հայքը միշտ ընդգրկվել է, սակայն, ստուգություն չկա, թե ինչպիսիք են եղել դրա առնչությունները Կապադովկիայի սատրապի հետ:

Նեոպտոլեմոսը դավաճանել է Եվմենեսին և անցել Կրատերոսի և Անտիպատրոսի կողմը: Նա Կրատերոսին տարել է Եվմենեսի դեմ, մինչդեռ Անտիզոնոսն ուղղություն է վերցրել դեպի Կիլիկիա, որպեսզի թիկունքից հարձակվի Պերդիկկասի վրա: Եվմենեսը մարտի է բռնվել Կրատերոսի և Նեոպտոլեմոսի հետ և նրանց սպանել ճակատամարտում: Մակայն նրա

¹ Plutarchi Bomanes. 4. λόγῳ μὲν ἐπὶ τὴν ἑαυτοῦ σατραπείαν, ἐργῶ δὲ τὴν ἄλλοθεν Ἀρμενίαν τεταραγμένην ὑπὸ Νεοπτολέμου διὰ χειρὸς ἔξοντα.

² Plutarchi, op. cit., 5.

դաշնակից Պերդիկկասի մահվան բոթը չեղյալ է դարձրել այդ հաղթանակի նշանակությունը:

Ազատագրվելով ահեղ հակառակորդից՝ Անտիպատրոսը և Անտիգոնոսը ձեռնամուխ են եղել սատրապությունների վերաբաժանմանը, որը տեղի է ունեցել Տրիպարադիստուն 321 թ., հետևյալ կերպ.

1. Եգիպտոս – Պտղոմեոս
2. Ասորիք – Լաոմեդոն
3. Կիլիկիա – Փիլոքսենոս
4. Միջագետք և Արբելիտիս – Ամփիմաքոս
5. Բաբելոն – Սելևկոս
6. Շոշան – Անտիգենես
7. Պարսկաստան – Պևկեստաս
8. Կարմանիա – Տլեպոլեմոս
9. Մարաստան – Պիթոն
10. Պարթևստան – Փիլիպպոս
11. Արիա և Դրանգիանա – Ստասանդրոս
12. Բակտրիանե և Սոգդիանե – Ստասանդր
13. Արաքոսիա
14. Պարոպամիսադես
15. Հյուսիսային Հնդկաստան
16. Պատալայի Հնդկաստան
17. Հիդասպեսի Հնդկաստան, բոլորը պահպանել են իրենց նախկին սատրապներին
18. Կապադովկիա – Նիկանոր
19. Մեծ Փոյուզիա, Պամփիլիա, Լիկաոնիա, Լիկիա - Անտիգոնոս
20. Կարիա – Կասսանդրոս
21. Լիդիա – Կլեիտոս
22. Հելլեսպոնտական Փոյուզիա, Արրիդայոս¹:

Ակնհայտ է, որ Հայաստանը բացակայում է այս ցուցակում: Դրա միակ պատճառն այն է, որ Հայաստանը չէր գտնվում մակեդոնական ենթակայության ներքո:

¹ Diodori, liber XVIII, cap. 39; Arriani Historiae successorum Alexandri fragmenta, 34.

Ընդգծված համարները վերաբերում են նախկին սատրապներին:

Անտիպատրոսը տվել է իր համաձայնությունն իբրև խնամակալ: Նա վախճանվել է երկու տարի անց: Անտիգոնոսի և Եվմենեսի միջև ծայր է առել կատաղի պայքար: Վերջինս պարտվել է և ապաստանել Նորայում՝ Լիկաոնիայի և Կապադովկիայի սահմաններձ տարածաշրջանում գտնվող բերդամրցում¹:

Մեզ հայտնի է, որ «Եվմենեսը մտադիր էր փախչել Հայաստան, որպեսզի այնտեղ բնակիչներից որոշ դաշնակիցներ ձեռք բերեր»²: Մակայն, Անտիգոնոսը նրան խանգարել է, և այդ ժամանակ նա ճողոպրել է Նորա [բերդամրցոց]:

Եվմենեսը ձգտում էր աջակցություն գտնել Պարսկաստանում և իր հակառակորդների դեմ մարտնչել տեղի սատրապ Պևկեստասի զինված ուժերի միջոցով: Վերջինս մրցակցում էր Մարաստանի սատրապ Պիթոնի հետ՝ Պարսկաստանում գերիշխանության համելու համար: Բաբելոնի սատրապ Սելևկոսը Պիթոնի կողմն է անցել: Քիչ անց հայտնվել է Անտիգոնոսը և Բաբելոնից հարձակվել Եվմենեսի վրա: Տաղարնարգայում (Սպահանի մոտակայքում) Եվմենեսը տանուլ է տվել ճակատամարտը և սպանվել Անտիգոնոսի կողմից 317 թ.³:

Այդ պահին Հայաստանի սատրապությունն Օրոնտեսի ձեռքին էր: Պատմում են, որ Եվմենեսը հորինել էր «ասորերեն գրված մի նամակ», որտեղ ասված էր, որ մանուկ ժառանգորդ Ալեքսանդրը և [Ալեքսանդր Մեծի մայր] Ողոմպիադն արտահայտվել էին Եվմենեսի օգտին և Անտիգոնոսի դեմ: Եվմենեսն այս կեղծ նամակը ներկայացրել է իբրև «Հայաստանի սատրապ և Պևկեստասի բարեկամ Օրոնտեսից ստացված»⁴:

Մենք վստահ չենք, թե արդյո՞ք Եվմենեսն Օրոնտեսի Հայաստանում էր հետամուտ այն օգնությանը, ինչի մասին նշեցինք վերը, թե խոսքը զուցե և վերաբերում էր Փոքր Հայքին:

Եվմենեսի սպանությունից հետո Անտիգոնոսը 317-301 թթ. ընկած ժամանակաշրջանում դարձել է պետությունը տնօրինող առաջին դեմքը: Նա, որին հաջորդել է իր որդի Դեմետրիոս Պոլիորկեսեսը, երազում էր վե-

¹ Plutarchi, Eumenes. 10.

² Diodori, liber XVIII, cap. 41. ὁ μὲν Εὐμένης ἐπεβέλετο φεύγειν εἰς τὴν Ἀρμενίαν, καὶ τῶν ἐν ταύτῃ κατοικοῦντων τινὰς πρὸς τὴν συμμαχίαν συλλαβέσθαι.

³ Diodori, liber XIX, cap. 14.

⁴ Diodori, liber XIX, cap. 23: Ἡ δὲ ἐπιστολὴ Συροῖς γεγραμμένη γράμμασιν ἀπέσταλτο παρ' Ὀρόντου τοῦ σατραπείαν μὲν ἔχοντος Ἀρμενίας, φέλου δὲ ὄντος Πευκέστη. Plutarchi, Eumenes. 13. Պրոտարքոսին այս նամակը հայտնի է, սակայն, նա այն համարում է արժանահավատ և չի հիշատակում հայ սատրապ Օրոնտեսին:

րականգնել կայսրության միասնությունը: Սելևկոսը զգալով վերահաս սպառնալիքը, նահանջել է Պտղոմնոսի մոտ, որը նմանապես սուկում էր Անտիոգոնոսի իշխանատենչությունից: Նրանք հարաբերություններ են հաստատել Մակեդոնիայի և Թրակիայի տիրակալների հետ և համատեղ առաջարկությամբ դիմել Անտիոգոնոսին՝ Բաբելոնը՝ Սելևկոսին, Կապադովկիան՝ Կասսանդրոսին և Սիրիան՝ Պտղոմնոսին զիջելու հարցով: Անտիոգոնոսը գերադասել է հարցը լուծել ուժի միջոցով և նրանց պատերազմ է հայտարարել, որին առնչվող երկու հանգամանք արժանի են հիշատակության: [Առաջինն է] Գազայի ճակատամարտն Ասորիքում, որի արդյունքում՝ 312 թ. Սելևկոսը գրավել է Բաբելոնը:

Անտիոգոնոսը և Դեմետրիոսը 306 թ. շահել են ծովային մեծ ճակատամարտը և այդ առիթով ընդունել թագավորական տիտղոս: Մյուս ժառանգորդները չեն հապաղել վարվել նույն ձևով: Այդ պահից կայսրության բաժանումն ինքնուրույն միավորումների՝ իրականացված փաստ էր: Կապադովկիայում գտնվող Իպսոսում՝ Անտիոգոնոսի և նրա հակառակորդների միջև տեղի ունեցած մեծ ճակատամարտն Անտիոգոնոսի համար աղետալի հետևանքներ է ունեցել: Պարտություն կրելով՝ նա 301 թ. ինքնասպան է եղել: Փոքր Ասիան անցել է Լյուսիմաքոսին՝ Թրակիայի տիրակալին, իսկ Ասորիքը՝ Սելևկոսին:

Անտիոգոնոսի որդին՝ Դեմետրիոսը, հաջորդ քսան տարվա ընթացքում շարունակելու է պայքարը Փոքր Ասիայի համար: Նախ Սելևկոսը զորավիզ է եղել Լյուսիմաքոսին՝ Դեմետրիոսի դեմ պայքարում, որն ի վերջո պարտություն է կրել 285 թ. և մահկանացուն կնքել՝ իբրև Սելևկոսի գերի: Այնուհետև, 281 թ. Կուրուպեդիոնի ճակատամարտում նա հարցերը լուծել է Լյուսիմաքոսի հետ: Սելևկյանների կայսրությունը հիմնադրված էր: Այն ընդգրկում էր Փոյուզիայից մինչև Հնդկաստան ձգվող երկրները՝ «Միջագետքը, Հայաստանը, Սելևկյան Կապադովկիան, Պարսկաստանը»¹, Պարթևաստանը և այլն: Պատմիչն ընդգրկելով Հայաստանը Սելևկյանների երկրների թվում՝ սխալվել է:

¹ Appiani, De rebus Syriacis, 55. դրջε Μεσοποταμίας και 'Αρμενίας και Καππαδοκίας τής Σελευκίδος λεγομένης και Περσών, և այլն: Նույն պատմիչը մեկ այլ տեղ հղում է Հիերոնիմոսին՝ ըստ որի, Ալեքսանդրը երբեք չի ստեղծել Կապադովկիային, այլ «Դարեհի դեմ է զմացել այլ անասպարհով, որը ձգվում էր Պամփիլիայի և Կիլիկիայի ծովափով», *ἀνὰ τὴν παράλιον τῆς Παμφυλίας καὶ Κιλικίας ἐτέραν ὁδὸν ἐπὶ τὸν Δαρειὸν τραπέθει* (Mithridatica, 8):

322 թ. Պերդիկասի կողմից խաչված Արիարաթես թագավորի որդի Արիարաթես II-ը ապաստանել էր Հայաստանում: Քիչ անց, երբ Եվմենեսը և Պերդիկասն արդեն մահացել էին, իսկ Անտիոգոնոսը մարտնչում էր Սելևկոսի դեմ, Արիարաթեսն օգտագործելով հայոց թագավոր *Արդոատեսի* տրամադրած օժանդակ ուժերը, սպանել է մակեդոնական զորավարին և վերականգնել իր իրավունքները հայրական իշխանության նկատմամբ¹: Անտիոգոնոսի և Սելևկոսի միջև թշնամանքը սկիզբ է առել Գազայի 312 թ. ճակատամարտից հետո և ավարտին հասել 301 թ. Անտիոգոնոսի ջախջախմամբ և ինքնասպանությամբ: Այսպիսով, 312-301 թթ. ընկած ժամանակաշրջանում Հայաստանում իշխել է Արդոատես անունով մի թագավոր: Դա քաջածանոթ Արուանդես (Arouandes) կամ Արյուանդես (Aruandes), այլ կերպ՝ Օրոնտես անվան աղավաղումն է, նույն սատրապի, որը գլխավորում էր հայկական զինված ուժերն Արբելայի ճակատամարտում 331 թ., նույն սատրապ Օրոնտեսի, որը հիշատակվում է Եվմենեսի († 317) կեղծ նամակի պատմության առնչությամբ:

Կամ նա, կամ էլ հավանաբար նրա որդին, պետք է, որ ընդունած լինեին թագավորական տիտղոսը 306 թ., երբ Անտիոգոնոսն իրեն հռչակել է թագավոր, իսկ այլք հետևել են նրա օրինակին: Հայաստանն ի սկզբանե կարողացել է խուսափել մակեդոնացիների տիրապետությունից և երբ վրա է հասել պահը՝ Անտիոգոնոսի և այլ ժառանգորդների օրինակով [նրա տիրակալը] ընդունել է թագավորական խույրը:

¹ Diodori, liber XXXI, cap. 19 (ըստ՝ Փոտո [պատրիարք]ի). 'Αριάρθης δὲ ὁ τοῦ προβασιλευκότος υἱὸς ἀπελπίσας κατὰ τὸ παρὸν ἀποχωρεῖ μετ' ὀλίγων πρὸς τὴν 'Αρμενίαν. Μετ' οὐ πολὺν δὲ χρόνον τῶν περὶ τὸν Εὐμένην καὶ Περδίκκαν τελευταίωντων, 'Αντιγόνου δὲ καὶ Σελεύκου περισπωμένων, λαβὼν δύναμιν παρὰ τοῦ βασιλέως τῶν 'Αρμενίων 'Αρδοάτου, τὸν μὲν τῶν Μακεδόνων στρατηγὸν 'Αμύνταν ἀπέκτεινεν, ἐξέβαλε δὲ καὶ Μακεδόνας ταχέως τῆς χώρας, καὶ τὴν οἰκείαν ἀρχὴν ἀνεκτίσαστο [Արիարաթեսը, նախորդ արքայի որդին, հուսահատվելով տիրող իրավիճակից, <զինակիցների> մի փոքր <խմբի> հետ հեռացավ Հայաստան: Եվմենեսի և Պերդիկասի մահվանից, ինչպես նաև Անտիոգոնոսի և Սելևկոսի ընդհարվելուց շատ ժամանակ շանցած, նա, վերցնելով Հայաստանի արքա Արդոատեսից ռազմական ուժեր, սպանեց մակեդոնացիների զորահրամանատար Ամյունտասին, կարճ ժամանակամիջոցում վտարեց մակեդոնացիներին երկրից և վերահաստատեց իրեն պատկանող իշխանությունը]: Վաղուց ի վեր ենթադրել են, որ Արդոատես (Ardoates) անունը պետք է դարձնել Արուանդես (Arouandes) (J. G. Droysen, Geschichte d. Hellenismus, II 2, 225): Այն բանից հետո, երբ Նեմրուդ լեռան արձանագրությունը քայքայվել է Արուանդեսի և Օրոնտեսի նույնությունը, այդ ենթադրությունը որևէ տարակույս չի հարուցում (5):

Ընդհանուր առմամբ, Մելիկյան կայսրության հյուսիսային սահմանների երկայնքով ձգվող երկրները Բյուրանիան, Պոնտոսը, Կապադովկիան, Հայաստանը, Պարթևստանը և նույնիսկ Հնդկաստանի ժողովուրդները կարողացել են խուսափել ժառանգորդների տիրապետությունից և իրենց [իշխանավորներին] են վերագրել թագավորի տիտղոս:

Արոանդես (Արդոատես) թագավորն ունեցել է մի հաջորդ, որի անունը չի պահպանվել (6): Բյուրանիայի թագավոր Նիկոմեդես [I]-ը (275-250) իր առաջին կնոջից ունեցել է մի որդի՝ Չեիլաս անունով: Նրա երկրորդ կինը՝ իբրև խորթ մայր, Չեիլասին այն աստիճանի է հալածել, որ դժբախտ արքայազնը հարկադրված է եղել փրկվել՝ ապաստանելով Հայաստանի թագավորի մոտ¹: Խորթ մայրը ջանացել է ոչնչացնել Չեիլասին՝ գահն իր որդիների համար ապահովելու նպատակով: Չեիլասի փախուստը տեղի է ունեցել նրա հոր կենդանության օրոք, այսպիսով, նախքան 250 թ., հավանաբար, 265 թ. շրջանում: Այս տարեթիվն Հայաստանում եղել է մի թագավոր, որը Չեիլասին ապաստան է հատկացրել: Նա, ամենայն հավանականությամբ, Արոանդեսի որդին է, ամեն դեպքում՝ նրա հաջորդը:

Մելիկոս II-ի (246-226) օրոք գոյություն է ունեցել արդեն մեկ այլ հայոց թագավոր՝ Արսամեսը [Արշամ]: Մելիկյան այս թագավորի եղբայր Անտիոքոս Հիերաքսն ապաստանել է թագավորի դեմ և փախել դեպի Միջագետք և, հատելով Հայաստանի սահմանը՝ ընդունվել է Արսամեսի կողմից, որը նրա բարեկամն էր²: Փախստական արքայազնը վախճանվել է 227 թվականին: Արսամեսը, որն այդ ժամանակ զբաղեցնում էր Հայաստանի գահը, հավանաբար, սերում է նշված թագավորից՝ Չեիլասի բարեկամից և ժամանակակիցից: Որ այս երկու թագավորներն իրոք պատկանում էին Օրոնտեսի և Արոանդեսի հարստությանը, ապա մենք դրա ապացույցն ունենք Կոմմագենեի թագավորի արձանագրության մեջ, որի մասին խոսք եղավ վերը:

¹ Memnonis, Historia Heracleiae Ponti, fr. 22; (C. Müller, Fragmenta historicorum graecorum, Paris, 1883, t. III, p. 537. Οὐ κολλοῦ δὲ πᾶν ρυέντος χρόνου ὁ τῶν Βιθύνων βασιλεὺς Νικομήθης ἐπεὶ ὁ μὲν ἐκ προτέρων αὐτῷ γάμων γεγөнῶς παῖς Ζητίας φυγὰς ἦν πρὸς τὸν Ἀρμενίων βασιλέα ταῖς τῆς μητροῦς Ἐταζέτας μηχαναῖς ἐλαθεῖς... [Շատ ժամանակ շանցած Բյուրանիայի թագավոր Նիկոմեդեսը, քանի որ նրա առաջին անուստությունից ծնված երեխան՝ Չեիլասը, իր խորթ մոր դավերից քարճվելու համար փախել էր հայրի թագավորի մոտ...]:

² Polyaei Rhetori IV, 17. Ἀντιόχος Σελεύκου τοῦ ἀδελφοῦ ἀποστὰς εἰς τὴν Μέσην τῶν ποταμῶν, ὄθεν καὶ μὲν Ἀρμενίων δρους διελθόντα φίλος ὦν Ἀρσάμης ὑπεδέξατο.

Կոմմագենեի թագավոր Անտիոքոսը իրեն համարում էր ծագումով Արոանդեսի [Երվանդի] ընտանիքից: Նրա տված ծագումնաբանությունն ընդգրկում է.

թագավոր Արսամես, որը Սամոս թագավորի որդին է և թագավոր Միհրդատ՝ Սամոս թագավորի որդին¹:

Այս Արսամեսը մեր [Արշամ]-Արսամեսն է, Մելիկյան փախստական արքայազնի բարեկամը: Անտիոքոս Հիերաքսն Արսամեսի մոտ է փախել 230 թ. շրջանում:

Անտիոքոսը Մելիկոս II Կալլիսիկոսի եղբայրն էր: Վերջինս սպանել էր իր խորթ մորը՝ Բերենիկեին, Եգիպտոսի թագավոր Պտղոմեոս III Եվերգետես I-ի [246-221] քրոջը: Այս հանցանքը Պտղոմեոսին տրամադրել է նրա դեմ: Պարտված Մելիկոսը փախել է Անտիոքոսի մոտ և օգնություն հայցել իր եղբորից: Իբրև փոխհատուցում՝ նա նրան առաջարկում էր Ասիայի՝ իրեն պատկանող ամբողջ մասը՝ մինչև Տավրոս լեռը:

Իշխանատենչությամբ համակված, ուրիշի ունեցվածքի հանդեպ ընչաքաղցությամբ լի Անտիոքոսը ինչպես գիշատիչ թռչունը, ցանկանում էր իր եղբորը զրկել ամեն ինչից, որից և ծագել է նրա Հիերաքս «ճուռակ» մականունը:

241 թ. Պտղոմեոս թագավորը տասը տարով հաշտություն է կնքել Մելիկոսի հետ: Եղբայրների միջև բռնկվել է պատերազմ: Հիերաքսը երեք մեծ պարտություններ է կրել, կորցրել իր ամբողջ թագավորությունը և ճողոպրել դեպի Միջագետք: Ապա նա ապաստանել է Կապադովկիայի թագավոր Արիարաքեսի (280-230) մոտ, որը նրան նախ լավ ընդունելության է արժանացրել, սակայն, քիչ անց Անտիոքոսը նկատել է, որ իր դեմ դավեր են լարվում և փախել է: Այդ ժամանակ է, որ նա պատասխարվել է *Արսամեսի* մոտ: Մակայն, Մելիկոսի զորավարները նրան վտարել են Արսամեսի մոտից, և Հիերաքսը փախել է Եգիպտոս: Պտղոմեոս թագավորը նրան արգելափակել է, նա փախել է՝ Թրակիա գնալու համար, ուր և սպանվել է 227 թվականին²:

Անտիոքոս Հիերաքսն անուսնացել էր Բյուրանիայի թագավոր Չեիլասի քրոջ հետ, որը զավթել էր իր եղբոր՝ Չիպոնտեսի (250-229) գահը: Մենք

¹ K. Humann und O. Puchstein, Reisen in Kleinasien und Nord-Syrien, p. 285,

a) βασιλέα < Ἀ>ρσάμην τὸν ἐκ βασιλέως Σάμου,

b) βασιλέα Μιθράτην Καλλίνικον τὸν ἐκ βασιλέως Σάμου.

² Polyaei IV, 17; Justin, liber XIII, cap. 27.

տեսանք, որ անձամբ Ձեփլասը 260 թ. սահմանում ապաստան էր որոնում Հայաստանի մեկ այլ թագավորի մոտ, որի անունը հիշատակված չէ և որը թվում է, թե Արսամեսի հայրն է: Նրա հայրը եղել է Սամոսը, որը կարող էր, հավանաբար, լինել անանուն թագավորը, Ձեփլասի բարեկամը և ծագել Արտանդեսից՝ ըստ խնդրո առարկա ծագումնաբանության տրամաբանության:

Ինչ վերաբերում է Միհրդատի հայր Սամոսին, ապա նա կարող էր նույնացվել միևնույն Սամոսի հետ, իսկ այս պարագային Միհրդատը և Արսամեսը կարող են, հավանաբար, լինել երկու եղբայր, կամ հարկ է ընդունել, որ Արսամեսն ունեցել է մեկ այլ որդի, որը կրել է իր հոր՝ Սամոսի անունը:

Արձանագրության համաձայն՝ Արտանդեսն ունեցել է մեկ որդի, որի անունն ավարտվում էր «դանես»-ով: Այսպիսով, Սամոսը չէր կարող լինել Արտանդեսի որդին, սակայն, կարող էր լինել այս X-«դանեսի» որդին: Այսպիսով, մենք կունենանք՝ Արտանդեսին (331-330), X-«դանեսին» (280), Սամոսին (260), Արսամեսին (230):

Անտարակույս, այս Արսամեսն է Խարբերդի տարածաշրջանում, Եփրատի ափին, Արսամոսատա [Արշամաշատ] հայկական քաղաքի հիմնադիրը:

Տեղավայրի նախկին անվանումը, որտեղ հայտնաբերվել են արձանագրությունները, ինչպես հավաստում է հենց արձանագրությունը, *Արսամես* էր, այն է՝ ոմն Արսամեսի հիմնադրած քաղաք: Սամոսատը՝ Կոմմագենեի [մայրա]քաղաքը, կրում է ոմն Սամոսի անունը: Ոչինչ հնարավոր չէ ասել Սամոս և Արսամես անուններով հիշատակված այս անձանց հնարավոր նույնության մասին: Հնարավոր չէ նաև սահմանել Օրոնտեսների ճյուղի Կոմմագենե տեղափոխվելու տարեթիվը: Ստույգ է միայն, որ այն տեղափոխվել է Հայաստանից: Բացի Արսամոսատա քաղաքից՝ միջնադարյան Աշմուշատից, Հայաստանում հայտնի էր Արշամունիք անունով մի տարածաշրջան, ինչը նշանակում է Արշամի, Արսամեսի տիրույթ: Տարածաշրջանը գտնվում է Արածանիից այն կողմ՝ Տարոնի, Տարոնիտիսի սահմաններում:

Այս երկու անունները հստակորեն վկայում են Հայաստանում Արսամես իշխանի [իմա՝ արքայի] գոյության մասին: Միևնույն եղանակով Օրոնտեսների մասին հուշը պահպանվել է նաև մեկ այլ տարածաշրջանի անվան մեջ, որն է՝ Երվանդունիքը, այն է՝ Երվանդունիների տիրույթ: Ի դեպ, Չարեհավան քաղաքը կրում է Չարիադրեսի անունը, որը չի կարող ամենևին վերագրվել Ծոփքի թագավորին: Եթե այս անունը պայմանավորված է մեզ

անհայտ մի իշխանի անվամբ, ապա նույնպիսին կարող էր լինել Երվանդունիքի պարագան:

Արտանդեսի ընտանիքը կարող էր, այսպիսով, վերածվել ազգային հարստության, որը կառավարել է Հայաստանը նվազագույնը Ք. ա. IV դ. վերջերից մինչև II դ. սկիզբը (190 թ.): Հարկ է խորհել, թե արդյո՞ք հարստությունը (7) մարել է այս տարեթվին՝ թատերաբեմը զիջելու համար Արտաքսիասին [Արտաշես] և Չարիադրեսին [Չարեհ]:

[2. Արտաշես I-ը և հայկական հողերի միավորումը]

Պատմում են, որ Անտիոքոս [III] Մեծի (223-187) երկու զորահրամանատարները՝ Արտաքսիասն ու Չարիադրեսը Հայաստանը բաժանել են միմյանց միջև և յուրաքանչյուրն Անտիոքոսի համաձայնությամբ կառավարել է երկրի մի մասը: Ք. ա. 190 թ. Մագնեսիայի ճակատամարտում Սելևկյանների պարտությունից հետո, նրանք անցել են հռոմեացիների կողմը և իրենց հռչակել միանգամայն անկախ, դառնալով թագավորներ՝ ամեն մեկն իր մասում:

Արտաքսիասին և Չարիադրեսին վերաբերող այս վարկածը մեզ առաջարկել է Ստրաբոնը՝ հիշատակելուց հետո, որ Հայաստանը ենթարկվել է նախ պարսիկներին, ապա՝ մակեդոնացիներին, և այստեղ վերջին սատրապն է եղել Օրոնտեսը՝ Հյուդարնեսի ժառանգորդներից մեկը (8):

Ժամանակակիցները հաճույքով որդեգրել են նշանավոր աշխարհագրագետի պատմությունը, ընդ որում վերջին սատրապ Օրոնտեսին նրանք ընդունել են իբրև Արտաքսիասի և Չարիադրեսի անմիջական նախորդի: Այսպիսով, կարծել են, թե սատրապական վարչակարգը հարատևել է նաև Սելևկյանների տիրապետության օրոք, մինչև Մագնեսիայի ճակատամարտը, որին հաջորդել է Հայաստանի անջատումը Սելևկյան կայսրությունից:

Ի դեմս վերջին սատրապի, այդուհանդերձ, պետք է նկատի ունենալ այն Օրոնտեսին, որն Արբելայի ճակատամարտում հայկական զինակազմի ուժերի հրամանատարն էր: Հետագայում նա կամ նրա որդին ընդունել են թագավորական տիտղոս: Նրա հաջորդները կրել են միևնույն տիտղոսը մինչև Անտիոքոս [III] Մեծի ժամանակները: Եթե մի հույն պատմիչի՝ քմահաճությամբ Հայաստանն ընդգրկվել է Սելևկյանների ենթակայության ներքո գտնվող երկրների թվում, ապա դրան որևէ նշանակություն տալով՝

կարող էին սխալվել: Կարծել են, թե Հայաստանը ենթարկվել է Սելևկոսին, որովհետև Ալեքսանդրի ժառանգության բաժանման ժամանակ այն, հավանաբար, բաժին է հասել Սելևկոսին: Բայց մենք գիտենք, որ ժառանգորդները հավակնում էին իրենց տիրապետության ներքո ունենալ ոչ միայն արդեն նվաճված երկրները, այլև այն երկրները, որոնք հարկ էր դեռևս նվաճել: Նրանք բաժանում էին, այսպես ասած՝ արջի մորթին, նախքան դրան տիրանալը:

Իրականում ո՛չ Սելևկոսը և ո՛չ նրա հաջորդներից որևէ մեկը ոտք չի դրել Հայաստան: Ոչինչ թույլ չի տալիս պնդել հակառակը: Ոչ մի պատմիչ չի հաղորդում այն մասին, որ Սելևկյանները կարողացել են երբևիցե մուտք գործել Հայաստան: Միակ տեղեկությունը, որը մենք ունենք Հայաստանի թագավոր Քսերքսեսի դեմ Անտիոքոս [III] Մեծի կարծեցյալ արշավանքի մասին, բնավ չի ապացուցում, որ Հայաստանը ենթարկվում էր Սելևկյաններին. բացի դրանից, այն վերաբերում է ոչ թե Անտիոքոս [III] Մեծին այլ, ինչպես կտեսնենք ստորև, Անտիոքոս IV Եպիփանեսին (175-164):

Ճիշտ չէ նաև Արտաշեսին և Չարենհին վերագրել Հայաստանի բաժանումը, երբ մենք գիտենք, որ այդ բաժանումը գոյություն ուներ այն ժամանակներից ի վեր, երբ Հայաստանը բաղկացած էր երկու սատրապություններից:

Մեզ թվում է, որ Անտիոքոսի հիշյալ երկու գորավարները հայկական երկու սատրապությունների օրինական ժառանգորդներն էին, որոնք 331 թ. գտնվում էին Օրոնտեսի և Միհրդատի տիրապետության ներքո, իսկ 401 թ.՝ Օրոնտեսի և Տիրիբազոսի: Եթե մենք նույնիսկ ընդունենք, որ Օրոնտեսները թագավորական տիտղոս ընդունելուց հետո իրենց տիրապետության տակ միավորած լինեին ամբողջ Հայաստանը, ապա, այնուամենայնիվ, հնարավոր է, որ վերացած հարստությունը կարողանար վերամրագրել իր իրավունքներն Արտաքսիասի և Չարիադրեսի օրոք: Այդ դեպքում, բաժանումը, որի մասին հիշատակում է Ստրաբոնը, հնարավոր կլինի ընկալել այն առումով, որ միացված մասն անջատված է եղել և վերականգնվել է իր նախկին վիճակով:

Արտաքսիասը և Չարիադրեսը Հայաստանում նախապես իշխած հարստության երկու ներկայացուցիչներն են: Նրանք կոչվում են Անտիոքոսի ստրատեգոսներ ոչ թե այն պատճառով, որ նրա սատրապներն էին, այլ՝ որ իրենց զորքերով մասնակցել են հռոմեացիների դեմ պատերազմին: Նրանք դասվում էին Անտիոքոսի գորավարների, նրա դաշնակիցների, և ոչ թե հպատակների շարքը (9):

III դարում Սելևկյանների քաղաքական շահերը կենտրոնանում են Փոքր Ասիայում, որտեղ նրանք հարկն ունեին ի չիք դարձնել Եգիպտոսի Լազյան (Պտղոմեոսյան) ինքնակալների իշխանատենչ հավակնությունները: Հայաստանը գտնվում էր մրցակցության թատերաբեմից դուրս և կարող էր իր զինված ուժերի առաջընթացն ապահովել խաղաղ պայմաններում և իր սեփական հարստությունների տիրապետության ներքո: Եթե Կապադովկիան, Պոնտոսը, Բյուրանիան, գտնվելով այդպիսի անբարենպաստ պայմաններում, պահպանել են իրենց թագավորական հարստությունները, ինչն՝ Հայաստանը չէր կարող վարվել նույն կերպ, առավել ևս, որ ոչ մի կողմից որևէ սպառնալիք չկար (10):

Մենք ունենք հավաստի մի վկայություն, ըստ որի Կապադովկիան, Պափլագոնիան, Պոնտոսը, Բյուրանիան, Մեծ և Փոքր Հայքերը երբեք չեն ընդունել ո՛չ Ալեքսանդրի, ո՛չ նրա հաջորդների և ո՛չ նրանից սերողներից որևէ մեկի օրենսդրությունը: Այս երկրներն օտարի լուծ չեն կրել¹, երբեք չեն ենթարկվել որևէ այլ թագավորի, բացի իրենց երկրների թագավորներից: Այսպիսով, սույն վկայությունից ակներև է, որ թվարկված երկրներից և ոչ մեկը չի ընդունել ո՛չ Ալեքսանդրի, ո՛չ նրա հաջորդների և ո՛չ նրանից սերողներից որևէ մեկի օրենսդրությունը: Այս անխռով ժամանակամիջոցում է Հայաստանը նախապատրաստել իր վերելքն Արտաքսիասի և Չարիադրեսի օրոք:

Այս երկու փառապանծ տիրակալներն ավելի են ընդարձակել իրենց երկրների սահմանները: Նրանք տիրացել են հարևաններին պատկանող բազմաթիվ տարածաշրջանների՝

Կասպիանեն [Կասպից երկիր], Փավնիտիսը և Բասորոպեդան գրավվել են մարերից:

Պարիադրեսի լեռնալանջերը, Խորգանենեն, Գոգարենեն՝ իբերներից, Կարենիտիսը, Դերքսենեն՝ խալիբներից և մոսիմոլկոսներից, Անտիտավրոսում գտնվող Ալիլիսենեն՝ կատաոններից, Տամոնիտիսը՝ սիրիացիներից:

¹ Justin, 38, 7. [Nullam subjectarum sibi gentium expertam peregrina imperia: nullis usquam, nisi domestici regibus paruisse - ջնջված է հեղինակի ձեռքով]; Cappadociam velint, an Paphlagoniam, recensere, rursus Pontum, an Bithyniam, itemque Armeniam majorem minoremque: quarum gentium nullam neque Alexander ille, qui totam pacaverit Asiam, nec quispiam successorum ejus aut posterorum attigisset.

Արտաշեսի թագավորության կենտրոնն Արաքսի հովիտն էր, որտեղ նա հիմնադրել էր իր անունը կրող նոր մայրաքաղաք՝ Արտաշատը: Չարեհի մայրաքաղաքը գտնվում էր Ծոփքում և կոչվում էր Կարկափոկներտ [Արկափակներտ]:

Նշանավոր աշխարհագրագետն ակնհայտորեն չափազանցել է Արտաշեսի և Չարեհի գործունեության նշանակությունը՝ նրանց անվանը հավելելով այն, ինչը պատկանում էր նրանց վերելքին մայրաքաղաք և հաջորդաձև բազմաթիվ սերունդների:

Ըստ նույն հեղինակի՝ Ալիլիսենները ռազմակալվել էր հայերի կողմից հինավուրց ժամանակներից ի վեր, քանի որ նա գտնում է, որ այն նվաճվել է Արմենոս [Թեսալացու] ուղեկիցների՝ հայերի հնարավոր մայրաքաղաքների կողմից: Այն, այսպիսով, ներկայանում է իբրև հայերի օրրան: Այդ դեպքում ինչպե՞ս կարելի է առանց հակասության տուրք տալու դրա նվաճումը վերագրել Չարեհին կամ Արտաշեսին:

Տարոնի տարածաշրջանը ևս այս նույն թագավորների օրոք չի նվաճվել: Արդեն Քսենոփոնի ժամանակներում այն պատկանում էր հայերին: 401 թ. Եփրատի վերին հովիտը, որից կազմավորվելու են Կարինի և Դերջանի (Դերքսենե) տարածաշրջանները, մենք տեսնում ենք դեռևս խալիբներով և մոսիոնյուսներով բնակեցված: Դրանց հայացումը (arménisation) կարելի է մտածել Չարեհի կամ Արտաշեսի ժամանակներից: Սակայն, Կասպիական ծովափով Չարեհի կամ Արտաշեսի ժամանակներից: Սակայն, Կասպիականի և Փավնիտիսի (Սավնիտիսի) նվաճումը հաջորդում է դրանց և հարկ է վերագրել Տիգրան [II Մեծ]-ին:

Հայկական երկրների ընդարձակումը նոր նվաճումների միջոցով և դրանց հայացումը տեղի են ունեցել աստիճանաբար և երկարատև ժամանակամիջոցում: Արտաշեսը և Չարեհն իրենց նվաճումներով, անտարակույս, ղյուրին են դարձրել տարատեսակ էթնիկ տարրերի ձուլումը՝ հետագայում հանգելու համար լեզվական միասնության՝ հոգուտ հայերենի, ինչպես այդ մասին հիշատակում է Ստրաբոնը:

Արտաշեսի և Չարեհի թագավորություններից զատ կար նաև երրորդը՝ Փոքր Հայքի սահմաններում: Դրա սատրապ-թագավորը ունի Միհրդատն էր՝ Արտաշեսի և Չարեհի ժամանակակիցը:

Միհրդատը, ինչպես նաև Արտանեսը, ընդգրկվել են Պոնտոսի թագավոր Փառնակ [I]-ի (190-169) և նրա հարևանների միջև բռնկված պատերազմում: Նրանք էին՝ Պերգամոնի թագավոր Եվմենես II-ը (197-159), Բյուրանիայի թագավոր Պրուսիաս II-ը (182-149) և Կասպիականի թագավոր Արիարատ IV-ը (220-163): Փառնակի ավելի քան իշխանատենչ հավակնություններն այնպիսիք էին, որ հարուցում էին նրա հարևանների տագ-

նալը: Երբ Փառնակն ուղղություն է վերցրել դեպի Միտոս՝ Բյուրանիայի, Պերգամոնի և Կասպիականի թագավորները դաշինք են կնքել և հարձակվել նրա վրա¹: Դաշինքի քիչուցում թաքնվում էր Հռոմը, իսկ Փառնակն ապահովել էր Սելևկյանների թագավոր Սելևկոս IV-ի (187-175) օգնությունը, սակայն հռոմեացիները ձեռքակալել են վերջինին՝ ըստ նրա մայրաքաղաքի հետ կնքված պայմանագրի: Փառնակն ուներ միայն մեկ դաշնակից, որն էր Փոքր Հայքի թագավոր Միհրդատը: Փառնակն անհաջողության է մատնվել և հարկադրված է եղել հաշտություն կնքել: Նա վերադարձրել է այն, ինչը նվաճել էր, Արիարատեսին վճարել է փոխհատուցում՝ 90 տաղանդի, իսկ Եվմենես II-ին՝ 300 տաղանդի սահմանում: Միհրդատին ևս պարտադրվել է 300 տաղանդի հասնող ռազմատուգանք՝ որպես պատիժ Փառնակի կողմում նեղզաբար հանդես գալու համար, չնայած Պերգամոնի թագավոր և Փառնակի թշնամի Եվմենեսի հետ մայրաքաղաք կնքված դաշինքին²:

Մենք տեղեկացված ենք, որ 179 թ. պատերազմող կողմերի միջև կնքված պայմանագրում ընդգրկվել են նաև Հայաստանի մեծ մասի թագավոր Արտաշեսը, ինչպես նաև ոմն Ակուսիոքոս³: Ինչպիսի՞ կարգավիճակով էր այդտեղ հանդես եկել Արտաշեսը, արդյո՞ք նա մասնակցել է փոքրասիական գործերին և ո՞ր կողմին է նա հարել՝ ոչինչ հայտնի չէ:

Բնական է թվում, որ Արտաշես թագավորը դաշնակցել է իր անմիջական հարևանների՝ Փոքր Հայքի և Պոնտոսի հետ՝ փոքրասիական պետությունների դեմ, որոնք հռոմեացիների պաշտպանյալներն էին:

Ի վերջո, նրա հարևանների ծավալումը չէր համապատասխանում Արտաշեսի իշխանատենչ նկրտումներին: Առավել ևս նա չէր ցանկանա, որ դաշինք կնքվեր Սելևկյան [թագավորի] հետ, որը շարունակում էր հիշաչարություն տաժել իր ազդեցության ոլորտից սպրդած երկրների հանդեպ:

Ավելի ուշ, Անտիոքոս IV Եպիփանեսն (175-164) առճակատման մեջ է մտել Արտաշեսի հետ: Ո՞րն էր դրա շարժառիթը: Նվաճման սովորական կի՞րքը: Միանգամայն հնարավոր է, որ այդ կրքին կարող էր հավելվել

¹ Polybii Historiae XXIV, 10; XXV, 2-6; XXVI, 6 (պայմանագիրը); Titus Livius, Ab urbe condita, XX, 2.

² Polybii Reliquiae, XXVI, 11. ἐπεγράφη δὲ καὶ Μιθριδάτη τῷ τῆς Ἀρμενίας σατραπῆ τριακόσα τέλαντα, διότι παραβὰς τὰς πρὸς Εὐμένη συνθήκας ἐπολέμησεν Ἀριαράθην.

³ Նույն տեղում, 12. Περιελήφθησαν δὲ ταῖς συνθήκαις τῶν μὲν κατὰ τὴν Ἀσίαν δυναστῶν Ἀρταξίας ὁ τῆς Πλευστῆς Ἀρμενίας ἀρχῶν καὶ Ἀκουσίλοχος.

թշնամանքը մի մարդու հանդեպ, որը կարող էր սատարած լինել Սելևկյանների շահերի դեմ ուղղված նշված դաշինքը:

Նույն Անտիոքոս IV թագավորն արշավել էր նաև Ծոփքի թագավոր Քսերքսեսի դեմ: Անտիոքոս IV-ն ուներ մի քույր՝ Անտիոքիսը, որն իր կենակիցն էր: Այս անբնական միությունից նա ուներ մի որդի՝ Միհրդատը: Կիլիկիայում երկու քաղաք՝ Տարսոնը և Մալլոսն իբրև սեփականություն տրվել էին Անտիոքիսին: Այս քաղաքներն ապստամբել էին իրենց տիրուհու դեմ: Անտիոքոս IV-ը մեկնել էր ճնշելու խռովությունը¹: Այս իրադարձությունը նախորդել է դեպի Եգիպտոս նրա արշավանքին, որը ձեռնարկվել է Սելևկյանների թվարկության 143 թվականին, այն է՝ Ք. ա. 170-169 թվականներին²:

Անտիոքոսին, հավանաբար, չի հաջողվել վերականգնել իր կենակցի իրավունքները: Քիչ անց մենք նրան տեսնում ենք մեկ այլ գործարքի հետամուտ՝ հանուն նրա և իր ապօրինի որդի Միհրդատի: Նրա մտքով անցել է հարձակվել [Ծոփքի] Քսերքսես թագավորի վրա՝ նրա մայրաքաղաք Արսամոսատայում, քաղաք, որը գտնվում էր Ծոփքում, հայկական տարածաշրջանում: Այն գտնվում էր այսպես կոչված Հրաշալի հովտում՝ *Καλὸν πεδῖον* [Գեղեցիկ դաշտ], Եփրատի և Տիգրիսի միջև: Քսերքսեսը ետ է մղել հարձակումը, սակայն, քիչ անց սուսկալով, որ նա կարող է կրկին նոր հարվածներ ստանալ, հաշտություն կնքելու նպատակով բանազնաց է ուղարկել՝ Անտիոքոսից տեսակցություն հայցելու: Անտիոքոսի մերձավորները կարծում էին, որ պահեք բարենպաստ է եղել Քսերքսեսին գերելու համար և նրան խորհուրդ էին տալիս ձեռքից բաց չթողնել զոհին, իսկ նրա թագավորությունը տալ Միհրդատին՝ Կիլիկիայից վտարված նրա քրոջ, այն է՝ Անտիոքիսի ապօրինի որդուն³:

¹ «Դեպ եղև տարսացոց և մաղովտացոց ժամանակս ի գրգիս վայրի դիպել վասն զի տուեալ էր զնոսա յուսեստ Անտիոքիդիայ հարճի թագաւորին»: Մակաթ. երկրորդ գիրք, Դ, 30-31:

² Մակաթ. գիրք I, Ա. 21. հմմտ. Մակաթ. գիրք II, Ե. 1-2:

³ *Polybi Histories*, VIII, fr. 3 (ed. Teubner, II, p. 360). Ըստ Դիոդորոսի (*Diodori*, XXXI, 19)՝ Արիարաթես IV-ը (220-163) անուսմացել էր Անտիոքոս [III] Մեծի դստեր Անտիոքիսի հետ: Վերջինս ունեցել է, առանց իր ամուսնու իմացության, երկու որդի՝ Արիարաթեսը և Օլտիբրենտը և քիչ անց *τῆς φύσεως ἐπιδεξάμεντος* [բնության թույլտվությամբ], չնայած որևէ հույսի բացակայության՝ երկու դուստր և մեկ որդի՝ Միհրդատը, որը հաջորդել է իր հորը՝ Արիարաթես անվան ներքո, և որին տրվել է Փիլոպատոս անվանումը: Հետաքրքիր է, որ պատմիչը կամ նրա սկզբնաղբյուրը կեղծել են իրականությունը. օրինական որդիները ներկայացվել են իբրև ապօրինի և հակառակ ձևով՝ ապօրինի Միհրդատը՝ իբրև օրինական որդի: Դերերի այս

Ըստ մեկ այլ տեղեկության՝ Անտիոքոսը կարող է նախընտրած լինել բարեկամությունը հայոց թագավոր Քսերքսեսի հետ և նրան կնության է տվել իր կենակցին՝ Անտիոքիսին: Այսպես է նա տնօրինել այդ կնոջ ճակատագիրը: Սակայն, հետագայում վերջինս հանցավոր գործիք է դարձել իր եղբոր՝ Անտիոքոս IV-ի ձեռքին՝ երբ նրա դրոմամբ սպանել է իր ամուսնուն՝ [Ծոփքի] դժբախտ թագավորին¹:

Այս նեղ սպանությունը պետք է, որ տեղի ունեցած լինի Անտիոքոսի պարթևական արշավանքի ժամանակ: Այս արշավանքի նպատակը կարող էր լինել պարթևական նահանգների ցեղերին ոտքի հանելն ու մեծ զուամարներ ձեռք բերելը՝ ի վիճակի լինելու համար մարելու ծախսերն այն պատերազմի, որը հարկ էր մղել իրենցիկ դեմ: Սելևկյանների թվարկության 147 թվականին, այն է՝ 166/[16]5 թ. ն[ախքան] Հ[իսուս] Ք[րիստոսը], Անտիոքոսը դուրս է եկել իր մայրաքաղաք Անտիոքից, անցել Եփրատ գետը և շարժվել վերին գավառների կողմերը²:

«Անցնելով վերին գավառներով», թվում է, թե Անտիոքոսը, գնացել է Էկրատան՝ կողոպտելու Նանեայի նշանավոր տաճարը³: Մարաստանի մայրաքաղաք Էկրատան գնալու համար նա պետք է անցներ Հայաստանով:

Հենց այս պահին է, երբ Անտիոքոս թագավորը կարող էր վճռած լինել ձերբազատվել Քսերքսեսից: Նա նմանապես հարձակվել է Արտաշես թագավորի վրա և ըստ սկզբնաղբյուրներից մեկի՝ նրան գերելարել է, կամ ըստ մեկ այլ սկզբնաղբյուրի՝ հպատակեցրել⁴:

Փոփոխությունը բացատրվում է այն բանով, որ Միհրդատը գաղթել է Արիարաթեսի օրինական հաջորդներից: *Sb'u E. Babelon, Les rois de Syrie, d'Arménie et de Commagène, Paris, 1890, p. CXCVI; J. Markwart, Untersuchungen zur Geschichte von Eran, Heft I, Göttingen, 1896, S. 504 [20].*

¹ *Joannis Antiochenensis, frag. 53* (C. Müller, *Fragmenta historicorum graecorum, Paris, 1883, t. IV, p. 557*).

² Մակաթ. առաջին գիրք, Գ. 31-37:

³ Մակաթ. բնագրում տիրում է խառնաշփոթ: Ըստ դրա (Մակաթ. առաջին գիրք, Զ. 1-5)՝ Անտիոքոսը մեկնել է Լիմնեսոս և ետ մղվելով՝ նահանջել է դեպի Բաբելոն: Այն դեպքում, երբ ըստ նույն բնագրի (Մակաթ. երկրորդ գիրք, Թ. 1)՝ խոսքն առնչվում է Պերսեպոլիսին, որտեղից թագավորը, անհաջողությունից հետո, ուղղություն է վերցրել դեպի Էկրատան: Լիմնեսոսի, Պերսեպոլիսի փոխարեն նախընտրելի է Էկրատանը:

⁴ *Appiani, Syriaca, 45-46. ἐστράτευσε δὲ καὶ ἐπὶ Ἀρταξίαν τὸν Ἀρμενίων βασιλέα, καὶ αὐτὸν ἐλῶν ἐτελεύτησεν ἔνναετὲς παῖδ' ἄπολιπὼν.* [արշավեց Հայոց թագավոր Արտաշեսի դեմ, գերելարեց նրան և վախճանվեց, քոչնելով ինը տարեկան զավակի]։ *Ibidem*,

Անտիոքոսի պարթևական արշավանքին վերաբերող Աստվածաշնչյան պատմությունն արժանահավատ չէ: Այս արշավանքին այդուհի վերագրված դրամական շարժանքն ամենևին լուրջ չէ: Ինչ վերաբերում է այն ճանապարհին, որին հետևել է Անտիոքոսը, ապա դրա հայտանիշները խառնաշփոթ են և հակասական: Դյուրին ձևով կարելի է ընդունել, որ պարթևական արշավանքի պատմական հիմքն Անտիոքոսի ներխուժումն է Հայաստան՝ «Բարձր Հայք»¹: Նախքան դեպի Իսրայել շարժվելը, սելևկյան թագավորը կարող էր ցանկանալ ապահովագրել իրեն Հայաստանի կողմից: Նա ասպատակել է Ծոփքը և իրականացրել այն, ինչ ծրագրել էր վաղուց ի վեր: Այն է՝ իր ապօրինի որդուն՝ Միհրդատին, հաստատել Քսերքսեսի գահին՝ վերջինիս կնոջ և իր նախկին կենակցի միջոցով նրան սպանելուց հետո: Գահակալությանը կարող էր հակադրվել Արտաշեսը՝ Մեծ Հայքի թագավորը: Դա Արտաշեսի և Անտիոքոսի միջև պատերազմը դարձրել է անխուսափելի:

Այս պատերազմի մանրամասները մեզ համար մնում են անհայտ (11): Պատերազմից հետո Անտիոքոսը եղել է հիվանդ, հավանաբար, վիրավոր և քիչ անց վախճանվել է: Անտարակույս, Նանեա աստվածուհու գայրույթը կամ նրա քրմերի խորամանկությունը որևէ նշանակություն չեն ունեցել թագավորի կործանման հարցում²:

Հարկ է նշել, որ հենց Անտիոքոսի հանկարծամահ լինելը կամ Արտաշեսի ընդդիմությունն են խանգարել նրան ձեռք բերելու Ծոփքի գահն իր որդու՝ Միհրդատի համար: Անհաջողությունը փոխհատուցվել է այլ վայ-

66: 'Αντιόχου δὲ δώδεκα οὐ κλήρεσιν, ἐν οἷς 'Αρταξίαν τὸν 'Αρμένιον εἶλε, καὶ ἐς Ἀλεξάνδρον ἐστράτευσεν ἐπὶ ἕκτον Πτολεμαῖον. [Անտիոքոսի «թագավորության» ոչ լրիվ տասներկու տարիների ընթացքում նա զենվարից հայ Արտաշեսին և արշավեց Եգիպտոս՝ վեցերորդ Պտղոմնոսի դեմ]։ C. Müller, *Fragmenta historicorum graecorum*, Paris, 1883, t. II, p. X, 9. Ըստ Դիոդորոսի (*Bibliotheca* 31, 17a) զ δὲ 'Αντίοχος ἰσχύων κατ' ἐκείνους τοὺς χρόνους ὡς οὐδεὶς τῶν ἄλλων βασιλέων ἐστράτευσεν ἐπ' αὐτὸν καὶ νικησας ἠνάγκασε ποιεῖν τὸ προσαττόμενον. [իսկ Անտիոքոսն, այն ժամանակ լինելով այնքան ուժեղ, որ այլ թագավորներից չկար նրան հավասար, արշավեց նրա դեմ և հաղթելով՝ պարտադրեց կատարել իր կարգադրածը]:

¹ Հովհաննես Անտիոքացի (Joannes Antiochensis) հաղորդում է, որ Քսերքսեսին սպանելուց հետո Անտիոքոսը շին ձեռք բերեց *Περσῶν βασιλείαν αὐθις ανεκτίσαστο* [իսկույն տիրեց Պարսկական թագավորությանը] (*Const. Porphyrogeniti, De insidiis* 64, 12), սակայն, համոզված չենք, որ այս բառերը չեն կրում մակարայեցիների պատմության ազդեցությունը:

² Մակար. երկրորդ գիրք, Ա. 13-17:

րում: Մենք տեսնում ենք Միհրդատին Կապադովկիայի գահին՝ Արիարաքես V (162-130) անվան ներքո:

Երբ Դեմետրիոս I Մոսերը (162-150)՝ Անտիոքոսի եղբայրը, 162 թ. հափշտակել է գահը, նա պատերազմ է հայտարարել Կապադովկիայի թագավոր Արիարաքես IV-ին (220-163): Դրա պատճառը կամ առիթն այն էր, որ Արիարաքեսը հրաժարվել էր ամուսնանալ նրա քրոջ հետ: Արիարաքեսի՝ անարդարացիորեն գահընկեց արված եղբայր Օլոփերնեսն ապաստանել էր Դեմետրիոսի մոտ և վերջինս, իր հերթին, նրան գրգռում էր իրեն վիրավորած եղբոր դեմ¹:

Քույրը, որին վերաբերում է խոսքը, միևնույն Անտիոքիսն է: Առաջարկել էին նրան կնության տալ Արիարաքեսին: Արիարաքեսը հրաժարվել է այս ամուսնությունից: Սա կարևոր փաստ է և քեպտո չի կարող հաստատվել նույն առարկային վերաբերող այլ [աղբյուրներից քաղված] տեղեկություններով, այն իր իսկությունից ոչինչ չի կորցնում: Իր մերժման համար Արիարաքեսը թանկ է վճարել: Կապադովկիայի թագավորի դեմ գրգռված Դեմետրիոսը հափշտակել է գահը նրա ժառանգորդ որդուց, այն հանձնելու համար Միհրդատին՝ Արիարաքես V-ին (162-130), Անտիոքիսի որդուն:

Օլոփերնեսը, որը նկատել էր, որ Դեմետրիոսը շատ ավելի հետաքրքրված էր այս զարմիկ Միհրդատի, քան իր ճակատագրի տնօրինմամբ, լքել է նրան և միացել Դեմետրիոսի դեմ այդ ժամանակ ապստամբած Անտիոքի բնակիչներին:

Վարկածը, ըստ որի՝ Արիարաքեսի երկու որդիները ներկայացված են իբրև ապօրինի, իսկ փոխարենը՝ Միհրդատն իբրև օրինական, անկասկած, միտումնավոր է և նպատակաուղղված փրկելու Կապադովկիայի թագավորական հարստության վարկը: Այս աղավաղմանը մեծապես նպաստել են այն արժանիքները, որոնցով Միհրդատը կարողացել է նշանավորել իր անունը²:

Դեմետրիոսն առիթն ունեցել էր զինվելու Արտաշեսի դեմ³, բայց թե ինչ պատճառով, մեզ հայտնի չէ: Այդուհանդերձ, Ծոփքի հարցը դեռևս վճռված չէր: Ինչ-որ մի պահի այն նույնիսկ գժտության պատճառ կղաճառ Արտաշեսի և Միհրդատի միջև:

¹ *Justin* XXXV: propter fastiditas sororis nuptias infestus.

² Տե՛ս Դիոդորոսի զովերգումը *Diodori XXXI, cap. 19, 21*. Տե՛ս նույնը՝ *Polybi Reliquiae*, XXXI, 15a:

³ *Diodori, Excerpta*; C. Müller, *Fragmenta historicorum graecorum*, t. II, p. XII, 13.

Քսերքսեսի վախճանից հետո Ծոփքի գահը բաժին չի հասել Միթրո-
րուզանեսին, որը, ինչպես մենք կարծում ենք, նրա եղբայրն էր: Արտաշեսը
թվում է, թե վտարել է Միթրոբուզանեսին, նրա պետությունը բռնագրավելու
նպատակով: Միևնույն ժամանակ Միթրոբուզանեսին էր դրսևորում Ծոփքի՝ իբրև իր
մոր՝ Անտիոքիսի ժառանգության ճակատագրի հարցում: Նա գերադասել է
վերահաստատել փախստական իշխանին՝ Միթրոբուզանեսին նրա գահի
վրա: Այդ ժամանակ է, որ իր տիրույթներն ընդարձակելու հարցում ան-
հազուրդ Արտաշեսը բանակցությունների մեջ է ներգրավել Միևնույն
Արիարաթեսի հետ և հայցել նրա համաձայնությունը՝ սպանելու նաև «երկու
պատանիներից երկրորդին» և բաժանելու Ծոփքը միմյանց միջև:

Արիարաթեսը, որը խորշում էր նման նենգ գործերից, պախարակել է
բանագնացներին և Արտաշեսին հղած նամակում կոչ արել նրան ձեռնպահ
մնալ նման հանցանքներից: Այս վարքագծով Արիարաթեսի փառքն ավելի է
աճել և շնորհիվ նրա պարկեշտության՝ Միթրոբուզանեսին է վերադարձվել,
այսպիսով, հայրական իշխանությունը¹:

Արտաշեսն ազդվել է Միևնույն-Արիարաթեսի ազնվաբարո հորդո-
րումից, ինչպես մեզ թվում է, հրաժարվել է իր ծրագրից և բացի դրանից, նրա
նկատմամբ դրսևորել է ավելի մեծ հարգանք, քան նախկինում:

Τὸν νεανίσκον ἐκάτερον [«մյուս երիտասարդին»] արտահայտու-
թյունից հետևում է, որ Միթրոբուզանեսը Քսերքսեսի եղբայրն էր և նրանք
եղել են դեռևս երիտասարդ, իսկ նրանց հայրը եղել է Չարիադրեսը
[Չարեհը]: Ծոփքը պատկանել է Չարեհին: Նրա հետնորդներից մեկը եղել է
Արտանեսը, Տիգրանի՝ արքայից-արքայի ժամանակակիցը: Ծոփքը, որը
եղել է իր հարևանների՝ Ասորիքի, Մեծ Հայքի և Կապադովկիայի հավակ-
նությունների առարկան, պահպանվել է, խուսանավելով՝ փոխադարձաբար
միմյանց չեզոքացնող երեք ախոյանների միջև:

Հայաստանի տարածքի երեք մասերը՝ Մեծ Հայքը, Ծոփքը և Փոքր
Հայքն ունեին թագավորական իրենց հարստությունները:

Մեծ Հայքը համապատասխանում էր, ըստ էության, Օրոնտեսի Արևել-
յան Հայաստանին, Ծոփքը՝ Տիրիբազոսի Արևմտյան Հայաստանին (Ար-
տանեսին էին պատկանում Հայաստանի հարավային և արևմտյան մա-
սերը), իսկ Փոքր Հայքն ընդգրկում էր մասամբ 19-րդ սատրապությունը,
որովհետև դրա թագավորները տիրում էին մինչև Տրապիզոն ձգվող հո-
ղերին:

Դարեհի [վարչական] բաժանումները հաջորդ դարում փոփոխություն-
ներ են կրել: Քսենոփոնին¹ արդեն հայտնի է եղել Կապադովկիայի մեծ
սատրապության բաժանումը երեք մասի՝ Հելլեսպոնտական Փոյուզիայի,
Մեծ Փոյուզիայի, Կապադովկիայի: Պոնտոսի ժողովուրդները՝ խալիբները,
քաղղեսցիները, մակրոնները, կոլխերը, մոսիոնյուսները, տիբարեները
դարձել էին ինքնուրույն²: Նրանք էին, որ ձևավորել են 19-րդ սատրա-
պությունը: 401 թ. Հայաստանն ուներ, հավանաբար, նույնիսկ երկու սատ-
րապ՝ մի սատրապ և մի հյուպարքոս: Սատրապը կառավարում էր
Արևելյան Հայաստանը, իսկ հյուպարքոսը՝ Արևմտյան Հայաստանը: Մեզ
թվում է, որ այս բաժանումները համապատասխանում էին, ըստ էության,
13-րդ և 18-րդ սատրապություններին, սակայն, որոշ փոփոխություններով:
13-րդ սատրապության մի մասը՝ միավորված 18-րդ սատրապությանը,
ձևավորում էր Արևելյան, իսկ նախկին 13-րդ սատրապության մյուս մասը,
ներառյալ Փոքր Հայքը՝ ինչպես մինչ այդ, ձևավորում էր Արևմտյան
Հայաստանը: Ի դեմս դրանցից մեկի առաջնորդի՝ իբրև սատրապի, մենք
տեսնում ենք Օրոնտեսին, իսկ Տիրիբազոսը կոչվում էր Արևմտյան Հա-
յաստանի հյուպարքոս: Այս պարագային, «հյուպարքոս» բառը համապա-
տասխանում էր սատրապին, քանի որ Տիրիբազոսը շատ կարևոր անձ-
նավորություն էր՝ ենթարկվելու համար Օրոնտեսի իշխանությանը:

Ինչ վերաբերում է նրանց հարստություններին, մենք դրանց մասին
ունենք որոշ տեղեկություններ: Արտաշեսի և Չարեհի ծագումը հայտնի է:
Ավելի դժվարին է ճշգրտել Փոքր Հայքի սատրապ-թագավոր Միևնույնի
ինքնությունը: Ցանկություն է առաջանում նրան շփոթելու Միևնույն-
Արիարաթեսի հետ՝ կամ նրան վերագրելու Պոնտոսի Միևնույնի ըն-
տանիքին: Մենք առիթն ունեցանք մատնանշելու Ուդիաստեսի որդի
Միևնույնին: Երբ Դարեհ թագավորի փեսա Տերիաուշը ձգտում էր ձեռ-
բազատվել իր կնոջից՝ կնության առնելու համար իր հարազատ քրոջը՝
Ռոքսանային, Ուդիաստես անունով ոմն իշխան նրան մատնել է Փարի-
սատիսին՝ նրա խորթ մորը: Այս Ուդիաստեսի որդին՝ Միևնույնը, ռազ-
մակալել է Չարիս քաղաքը՝ այնուհետև այն Տերիաուշի որդուն հանձնելու
համար: Մենք այն կարծիքն ենք հայտնել, որ Տերիաուշը կարող էր պատ-
կանել Տիրիբազոսի հարստությանը: Թվում է՝ Չարիս քաղաքը Փոքր Հայ-
քում հայտնի Չարա քաղաքն է: Ուդիաստեսը և Միևնույնը պետք է

¹ Cyropaedia, VIII, 6,7.

² Anabasis, VII, 8, 25.

³ Polybii Reliquiae, XXXI, 15a.

¹ Diodori XXXI, cap. 22.

առնչվեին Փոքր Հայքին: Արտաքսերքսեսը պատժել է Ուդիաստեսին և նրա սատրապությունը հանձնել Միհրդատին: Ինձ թվում է, որ խոսքը շարունակ վերաբերել է Փոքր Հայքի սատրապությանը: Այստեղ, հավանաբար, իմաստ ունի ընդունել, որ Ուդիաստես-Միհրդատի ընտանիքը շարունակել է իշխել Փոքր Հայքում, և որ Միհրդատը՝ 179 թ. Փառնակի դաշնակիցը, ծագում էր նույն ընտանիքից (12):

3. [Հայաստանը Տիգրան II Մեծի գահակալության ժամանակաշրջանում]

Արտաշեսն իշխել է մոտավորապես մինչև 160 թվականը: 162-[16]1 թվականներին նա պատերազմում էր Դեմետրիոսի (13) դեմ: Պարթևների թագավոր Միհրդատ Մեծը (123-88) փառահեղ ավարտի է հասցրել իր հարևանների դեմ մղված բազմաթիվ պատերազմներ, մի քանի անգամ պարտության է մատնել սկյութներին, ի վերջո *հարձակվել է Հայաստանի թագավոր Օրոտա[դիս]տիսի վրա* (Օրոտադիտիսի փոխարեն)¹: Այս առիթով պատմիչը ներկայացնում է հայերի ծագման պատմությունը, կարծելով, որ անարդարացի կլիներ ոչինչ չասելը մի թագավորության մասին, որը պարթևների թագավորությունից հետո, ամենաընդարձակն է Ասիայի բոլոր թագավորությունների շարքում, քանի որ Կասպադականից մինչև Կասպից ծովն ընկնող տարածքը հասնում է մեկ միլիոն հարյուր հազար² (1.100.000) ոտնաչափ երկարության և յոթ հարյուր հազար ոտնաչափ լայնության: Հայաստանի հիմնադիրն է եղել Յասոնի հայ զորավարներից մեկը:

Այնուհետև կարդում ենք. Հայաստանի դեմ պատերազմից հետո Պարթևստանի թագավոր [դարձած] Միհրդատը գահընկեց է արվել՝ իր դաժանության պատճառով: Գահ է բարձրացել նրա եղբայր Օրոդեսը: Պատմիչն ակամայից շփոթել է միևնույն անունն ունեցող երկու թագավորի՝ Միհրդատ II-ին կամ Մեծին և Միհրդատ III-ին (57)՝ Օրոդես I-ի (57-37) եղբորը³:

¹ *Ac postremum Ortoasdisti Armeniorum regi bellum intulit* [և հետագայում պատերազմ սկսեց հայերի արքա Արտավազդի դեմ]. *Justini, XXII, 2; Trogi Pompeii Prologus, 42.*

² 1000 մղոնը հավասար է մեկուկես հազար կիլոմետրի, 1100-ը՝ 1650 կիլոմետրի, 700-ը՝ 1050 կիլոմետրի: Հմմտ. Պոսիդոնիոսն ըստ Ստրաբոնի՝ 720×1440 մղոնը դարձնում է 720×360 մղոն (4000×8000; 4000×2000):

³ [Trogius prol. 42. utque Phrati. successit rex Mithridates cognomine Magnus qui Armeniis bellum intulit. Inde repetitae origines Armeniorum et situs... Idem, 41. Successores deinde eius Artabanus et Tigranes cognomine deus a quo subacta est Media et Mesopotamia. Հրահատին հաջորդեց Միհրդատ արքան, մականվամբ Մեծ, որը պատերազմ

Այս պատերազմի ընթացքում է, որ Տիգրանը կարող էր իբրև պատանդ հանձնվել պարթևներին¹: Նա ազատվել է 70 հայկական հովիտների հանձնման գնով²:

Այս Տիգրանը Տիգրանի որդին էր³: Ինչպիսի՞ն է այս Տիգրանների հարաբերությունն Արտավազդի հետ: Տիգրանի որդի Տիգրանը գահ է բարձրացել 95 թ.: Այս տարեթիվը կարելի է ճշգրտել այն հիշատակման օգնությամբ, ըստ որի՝ 70 թ., երբ Ապպիոս Կլավդիոսը ներկայանում է Տիգրանին, վերջինս թագավորում էր քսանհինգ տարուց ի վեր⁴: Տիգրանի մահվան տարին հայտնի է միայն մոտավորապես. 54 թ., Կրասսոսի արշավանքի ժամանակ, Տիգրանի գահը զբաղեցնում էր Արտավազդը, այսպիսով, Տիգրանն արդեն վախճանված էր: Նա ողջ էր 56 թ. փետրվարին՝ Կիկերոնի ճառի ժամանակ⁵: Նա մահկանացուն կնքել է 56-54 թթ. միջև, ասենք՝ 55 թ., վախճանի պահին նա ութսունհինգ տարեկան էր⁶: Հետևաբար, նրա ծննդյան թվականը կարող է համապատասխանել 140 թվականին: Նրա հայր Տիգրանն այդ ժամանակ նվազագույնը 20-25 տարեկան էր և պետք է ծնված լիներ Արիարաթես [V]-ի ժամանակներում, այսպիսով, նա կարող էր լինել Արտաշեսի որդին: Արտավազդը, որը գահի վրա էր մինչև 95 թվականը, պետք է լինի նույն Տիգրանի ավագ որդին:

Արտաշեսը, թվում է, գահը թողել է իր որդի Տիգրանին, որն ուներ երկու որդի՝ Արտավազդ և Տիգրան: Գահը նախ զբաղեցրել է Արտավազդը, իսկ այնուհետև Տիգրանը: Վերջինս գահ է բարձրացել 95 թ.: Հարկ է ընդունել, որ Արտավազդի վրա հարձակվել է պարթևների թագավորը՝ նրա թա-

սկսեց Հայաստանի դեմ: Այստեղից հայերի երկակի ծագումն ու տեղակայությունը: Նրան հաջորդեցին Արտաբանոսն ու Տիգրանը՝ Աստված մականվամբ, որոնք հնազանդեցրին Մարաստանն ու Միջագետքը: Յո. Մարկվարտն առաջարկում է Արտաբանոսը դարձնել Արտաբազես՝ Արտավազդ: *Beiträge zur Geschichte und Sage von Iran, Zeitschrift der Deutsche Morgenländischen Gesellschaft, 49, p. 645.* Հմմտ. *Orosius VI. 19. 3.* Օրոգիոսը Տիգրանի որդուն անվանում է Արտաբանոս՝ Արտավազդի փոխարենը:

¹ *Justini, XXXVIII, 3. Tigranes obses Parthis ante multum temporis datus, sed olim ab iisdem in regnum paternum remissus.* [Տիգրանը պարթևներին վաղուց էր հանձնվել իբրև պատանդ, բայց հետո նրանց կողմից ազատվել էր՝ հայրենի թագավորությունը <գնալու համար>]:

² *Strabonis XI, 14, 15.*


³ *Appiani Syriaca. 48.*

⁴ *Plutarchi Lucullus, 21.*

⁵ *Pro Sestio, 59 (14).*

⁶ Հայաստանի թագավոր Տիգրանը, նա, ում դեմ Լուկուլլոսը պատերազմել է, 85 տարեկան էր, երբ մահացել է, և դա տեղի է ունեցել իվանդոսյան հետևանքով (*Macrobius 15*):

գավորության սկզբում, 120 թ. շրջանում, սկյութների դեմ պարթևների թագավորի պատերազմից հետո: Այսպիսով, մենք կատանանք հետևյալ պատկերը՝



Եթե ընդունենք, որ այն պահին, երբ Տիգրան [II]-ը հանձնվել է պատանդ՝ նոտավորապես 17-ից 20 տարեկան էր (սկզբնադրյուններում նշված է, որ) այդ ժամանակ նա երիտասարդ էր), ապա դա կհամընկնի 123-120 թվականներին, այն է՝ պարթևների թագավոր Միհրդատ [II Մեծ]-ի հարձակման տարեթվին:

Տիգրանը պատանդությունից ազատագրվել է իր գահ բարձրանալուց շատ առաջ, տարածքային զիջման դիմաց: Նա մասնակցել է իր եղբայր Արտավազդի կառավարմանը և փորձ ձեռք բերել պետական գործերի ասպարեզում (15): Նրա նվաճումների մի մասը հարկ է, հավանաբար, վերագրել Արտավազդի թագավորության ժամանակաշրջանին:

Տիգրանի տարածքային ձեռքբերումների ժամանակագրությունը հնարավոր չէ ճշգրտել: Առաջին հարվածը, հավանաբար, հասցրել է Շոփքին: Մենք տեսանք, որ Կապադովկիայի թագավորը հավանության չի արժանացրել Արտաշեսի՝ Շոփքի բաժանմանն առնչվող ծրագիրը: Իբրև այս «անշահախնդիր» ծառայության փոխհատուցում՝ Կապադովկիան գրավել է Եփրատի վրա գտնվող Տոմիսա ամրոցը, որը հսկում էր Եփրատի կամուրջը և միաժամանակ կարող էր պիտանի լինել իբրև խիստ կարևոր

հանգրվան՝ Փոքր Ասիայից դեպի Միջագետք և ավելի հեռու ձգվող գլխավոր ճանապարհներից մեկի վրա: Ավելի ուշ, Կապադովկիան, իր հերթին ունենալով Շոփքի օգնության կարիքը, հարկադրված է եղել 100 տաղանդի դիմաց վերադարձնել Տոմիսա ամրոցը¹:

Հայկական հողերի քաղաքական միավորումը պետք է լիներ թագավորի առաջին հոգսը, որը մտածում էր իր երկրի հզորության մասին: Շոփքի թագավոր Արտանեսը, հավանաբար, Միթրդատի օրոհն էր: Տիգրանը մրան դուրս է վանել և այս կերպ իրականացրել Հայաստանի [անջատված] մասերի միավորումը:

Երկրորդ հարվածը, որի հետևանքով Հայաստանը ստացել է Կորդուքը, որի թագավոր Չարրիենոսը [պարթևաց] Միհրդատ II-ի դեմ պայքարում [Կապադովկիայի թագավոր] Արիարաթես Փիլոպատոսին (16) օգնելու նպատակով [ընագրում բացակայում է մի հատված], նախատեսված էր Ատրպատականի համար: Պարթևներն առաջ ընթանալով՝ նվաճել էին Մարաստանն ու Պարսկաստանը և դարձել Հայաստանի սահմանակիցը: Միհրդատ II թագավորը պետք է Տիգրանին վերադարձներ 70 հովիտները, որոնք զավթել էր Արտավազդից՝ իբրև Տիգրանի ազատագրման դիմաց փոխհատուցում: Հաղթված պարթևները Տիգրանի հետ կնքել են դաշնագիր²: Նրանք պարտավորվել են հրաժարվել նույնիսկ Ատրպատականից՝ հօգուտ Տիգրանի: Այս ձեռքբերումն ամրապնդվել է Ատրպատականի թագավոր Միհրդատի հետ Տիգրանի դստեր ամուսնությամբ³:

Իրերիայի և Աղվանքի թագավորները ճանաչել են Տիգրանի գերիշխանությունը: Հայկական սահմաններն այս կողմից հասել են [Մեծ] Կովկասի լեռնաշղթային:

[Տիգրանը] ճնշում է գործադրել հատկապես հարավային սահմանների վրա: Մայրամուտ ապրող Մելեկյաններն ի վիճակի չէին դիմակայելու նրա

¹ Strabonis, XII, 21; XIV, 2, 29.

² Justinus, XI, 1. Tigranem, regem Armeniae instructum et Parthicae societate et Mithridati attinitate. [Տիգրանին, որը կրթված էր և՛ պարթևական ընդհանուր կյանքով և՛ Միհրդատի մերձակայությամբ] (17):

³ Cassius Dio, XXXVI, 16. Ըստ Իսիդոր Խարաքսացու՝ [Isidori Characeni Mansiones Parthicae, Geographi graeci minores, I, 250-251] հայերը թափանցել են մինչև Էկրատան և ամբողջությամբ այրել սատրապ-արքայի ապարանքը: Հավանաբար, սատրապը եղել է Դարեհը, որի անունը [իշխատակվում է] Պոմպեոսի հաղթահանդեսի [նկարագրությունում] (Diodori, XI, 4 ed. Didot., II, 581; Appiani Mithridatica, 106): [Ժամանակին] պարթևների Միհրդատ I թագավորը [170-139] հպատակեցրել է Մարաստանը, որտեղ կառավարիչ է նշանակել Բակասիսին (Justinus, XLI, 6): Դարեհը պետք է, որ ծագեր Բակասիսից:

առաջխաղացմանը: Պարթևներն իրենց այնքան ուժեղ չէին զգում, որպեսզի կարողանային նրան խոչընդոտել: Կոմմագենեի, Օսրոենեի և Ադիաբենեի արքայիկները¹ դասվում էին Հայոց թագավորի ստորականների շարքը:

Տիգրանն անցել է Եփրատը և իր կամքը պարտադրել Ասորիքին ու Փյունիկիային 84/87 թվականին: Գահից վճռոված, սակայն, զանձերով ծանրաբեռնված վերջին Մելկյանները գնացել էին Հռոմ, որպեսզի օգնություն հայցեին: Պաղեստինը և Եգիպտոսը հաշվում էին Տիգրանի ներխուժման օրերը: Հրեաները շտապել են դեսպանություն ուղարկել Տիգրանի մոտ²:

Մելկյան վերջին թագավոր Փիլիպպոս [I]-ը (92-83) պատերազմի ընթացքում, հավանաբար, զոհվել է: Նրա որդին՝ Փիլիպպոս II-ը, ճողոպրել է Կիլիկիա³, իսկ Անտիոքոսը՝ Հռոմեական Ասիա: Անտիոքը դարձել է Տիգրանի նստավայրերից մեկը: Երկիրը դրվել է Մագադատեսի (Բագարատ [Բագադատես]) կառավարության ներքո⁴: Տիգրանն «անխռով վայելել է [սիրիական] գահը տասնութ տարի շարունակ՝ չունենալով որևէ մեկի վրա հարձակվելու կամ որևէ մեկի դիմակայելու անհրաժեշտությունը» (84-66 թվականները)⁵:

Արևմուտքում Տիգրանն իրեն է ենթարկել Կապադովկիան և Կիլիկիան: Մոլի քաղաքի բնակչությանը Տիգրանը տարհանել է⁶ և տեղափոխվել Հայաստան⁷: Նա բազմիցս ասպատակել է Կապադովկիան, Մածակի (Maraca) և տասնմեկ այլ քաղաքների բնակիչները, ընդհանուր առմամբ, 300.000 մարդ, տեղափոխվել են նոր մայրաքաղաք⁸:

74 թ. ն[ախքան] Հ[իսուս] Զ[րիստոսը] վախճանվել է Բյուրանիայի վերջին թագավոր Նիկոմեդեսը՝ թողնելով մի կտակ, ըստ որի՝ իր թագավորությունը կտակում էր հռոմեական ժողովրդին: Հռոմն, այսպիսով, դառնում էր Պոնտոսի վտանգավոր հարևանը: Այդ իսկ պահից առճակատումը

¹ Strabon, XI, 14, 15.

² Antiquitatum Judaicarum 16, 4. De bello Judaico, I, 5, 3.

³ Justini, XL, 1.

⁴ Appiani, Syriaca, 48.

⁵ Justini, XL, 1. Ապպիանոսը հաշվում է տասնչորս տարի՝ 84-70 թթ. Appiani, 17:

⁶ Plutarchi, Pompeius, 28.

⁷ Cassius Dio, XXXVI, 37.

⁸ Appiani Mithridatica, 67; Strabo, XI, 14, 15; XII, 2, 9. Փավստոսը *** (18): Տիգրանի կողմից Կապադովկիայի և Կիլիկիայի ամայացումը Թ. Ռեյնարը վերագրում է 77 թ., հղելով Ստրաբոնին և Պլուտարքոսին (Strabo, XI, 14, 15; Plutarchi Lucullus, 21): Տիգրանակերտի հիմնադրումը պետք է նախորդած լինի Ասորիքի նվաճմանը, այն է՝ մինչև 84 թվականը:

Միհրդատ [Եվպատոր]-ի հետ դառնում էր անխուսափելի, այնպես որ Հռոմում մտահոգվում էին նշանակելու մի զորավարի, որն ի վիճակի կլիներ վարել մոտալուտ պատերազմը: Քաջ գիտակցում էին, որ Միհրդատի հետ պայքարը «մեռած չէ, այլ միայն քնած է»: Ամենաաչքի ընկնող մարդն այդ պահին Պոմպեոսն էր, որն այնքան էր գերազանցում մյուս բոլորին, որ կարող էր նշանակվել իբրև Միհրդատի դեմ պատերազմող զորավար, եթե ավարտին հասցներ պատերազմն Իսպանիայում:

176-րդ օլիմպիադայի տարեթվին՝ 73 թ. ն[ախքան] Հ[իսուս] Զ[րիստոսը], [Հռոմի] հյուպատոս Լուկուլլոսը, որը նախանձում էր Պոմպեոսի փառքին, ձգտում էր նշանակվել Միհրդատի դեմ [պատերազմը վարող զորաբանակի հրամանատար]՝ մեծ սխրանքներով նշանավոր դառնալու համար: Այդ ժամանակ Հռոմում դրության տերը [Պուբլիոս] Կետեգոսն էր, ժողովրդական տրիբունը, «որն առանձնահատուկ թշնամանք էր տածում Լուկուլլոսի հանդեպ, ատում էր նրա կենսակերպը, որին բնորոշ էին խայտառակ սիրային արկածները, անամոթությունը և անառակությունը»:

Լուկուլլոսն իր նպատակին հասնելու համար գործի է դրել բոլոր միջոցները: Կիլիկիայի կառավարչի պաշտոնն այդ ժամանակ թափուր էր: Նա ջանացել է ձեռք բերել այդ պաշտոնն այն ակնկալությամբ, որ Ասիայում՝ Կիլիկիայում գտնվելու պարագայում, իր կառավարչապետության հարևանությանը գտնվող երկրներում պատերազմ վարելը կհանձնարարվի իրեն: Նպատակին հասնելու համար ընտրած նրա ուղին, «ո՛չ ազնիվ էր և ո՛չ արժանի գովեստի»: Լուկուլլոսը դիմել է [Պրետիա անունով] մի ազդեցիկ կուրտիզանուհու, որը եղել է Կետեգոսի հոմանուհին, նրան հրապուրել նվերների և շողոքորթությունների միջոցով, որի միջնորդությամբ նրան հաջողվել է նշանակվել Կիլիկիայի կառավարիչ ու ղեկավարել Միհրդատի դեմ պատերազմը:

Լուկուլլոսն Ասիայում է՝ իբրև բանակի զորավար: «Միհրդատն, ի սկզբանե, հանդես է եկել հանդիսավոր և հպարտ ձևով՝ հռոմեացիների դեմ իր հարձակումների ժամանակ. սակայն, նա իրական ուժ չունեց, դա ընդամենն արտաքին փայլ էր՝ տպավորություն ստեղծելու համար»: Այնուհետև պարտությունները ստիպել են Միհրդատին փոխել վերաբերմունքը: Պատերազմը վերսկսելու համար նա իր բանակը վերակառուցել է հռոմեական մարտակարգով: Չենքերի, ոսկու և թանկարժեք քարերի յուրօրինակ ցուցահանդես ներկայացնող խառնիճադանջ զանգվածը մի կողմ է թողնվել: Նա ձուլել է տվել սրեր՝ հռոմեական ձևով և պատրաստել է տվել ամուր վահաններ, հավաքել է ավելի լավ վարժեցված, քան զգեստավորված ձիեր: Այսպիսով, նա ոտքի է հանել տասներկու բյուր (120.000) հետևա-

կայինների, որոնք դասակարգված էին ինչպես հռոմեական գումարտակները և գրեթե տասնվեց հազար հեծյալ ու մանգաղակիր հարյուր մարտակառք:

Նրա նավերը ևս՝ ոսկեգօծ դրոշների, կուրտիզանուհիների համար բաղնիքների, հաճույքներ վայելելու համար նախատեսված ու կահավորված զարդասենյակների փոխարեն լցվել են և հագեցվել զենքերով, միզակներով և ռոճիկ վճարելու համար դրամով:

Այս նախապատրաստություններից հետո Միհրդատը ներխուժել է Բյուրանիա: Նրան ամենուր դիմավորել են բարեհաճորեն, քանզի «ամբողջ Ասիան տառապում էր Հռոմի վաշխառուների և կապալառուների կողմից դրսևորվող անհանդուրժելի վերաբերմունքից»:

Միևնույն ժամանակ, ինչ Լուկուլլոսին, նրա գործընկերոջը, մեկ այլ հյուպատոսի՝ Մարկոս Կոտտային հանձնարարվել է ստանձնել մավատորմի հրամանատարությունը՝ պաշտպանելու համար Բյուրանիան: Հաղթանակի ծարավի ընչաքաղց Կոտտան՝ չցանկանալով Լուկուլլոսի հետ կիսել դրա բերկրանքը, շտապել է ձեռնամուխ լինել [ռազմական] գործողությանների: Սակայն, պարտվելով միաժամանակ թե՛ ցամաքում և թե՛ ծովում, շրջափակվել է և պաշարվել Քաղկեդոնում ու հայացքը շրջել դեպի Լուկուլլոսը:

Եղել են այնպիսիք, որոնք խորհուրդ են տվել Լուկուլլոսին՝ Կոտտային այդտեղ թողնել և առաջ ընթանալ ու մտաք գործել Միհրդատի թագավորություն, որն անպաշտպան կգտնեին: Սակայն զորավարն ասում էր, որ «ինքը կգերադասի փրկել թեկուզ մեկ հռոմեացու, քան տիրանալ այն ամենին, ինչը պատկանում է թշնամուն»:

Երբ Արքելատը, Միհրդատին լքած նրա զորավարը, հավաստիացնում էր Լուկուլլոսին, որ միայն Պոնտոսում հայտնվելը բավական կլիներ, որպեսզի նա դառնար դրա տիրակալը, Լուկուլլոսը պատասխանել է, որ «ինքն ավելի վախկոտ չէ, քան [սովորական] որսորդները և չի շրջանցի գազանին, որպեսզի կռվով գնա նրա դատարկ ապաստարանը գրավելու»:

Այս ասելուց հետո, նա ընթանում է Միհրդատին ընդառաջ՝ իր տրամադրության ներքո ունենալով 30.000 հետևակային և 2500 հեծյալ: Խուսափելով մարտից, նա ցանկանում էր ժամանակ շահել: Հարկ է խոստովանել, որ Լուկուլլոսի արշավանքի պատմությունն առասպելական բնույթ ունի: Անտարակույս, սնապարծ զորավարն արել է ամեն ինչ՝ թաքցնելու համար ճշմարտությունը նրանցից, ովքեր նրան ուղարկել էին: Նա չի համարձակվել հանդիպել իր հակառակորդին բաց դաշտում, սակայն համբերությամբ սպասել է, մինչև թշնամու մոտ սով տարածվի: Մննդի

պաշարների բացակայությունը հարկադրել է Միհրդատին նահանջել դեպի իր սահմանները: Լուկուլլոսի ժամանումը որևէ օգտակարություն չի ունեցել պաշարված քաղաքների համար:

Պոնտական բանակի նահանջի ընթացքում, Լուկուլլոսը խիզախել է Միհրդատին գրոհել Հռինդակոս գետի մոտ և «հափշտակել է 6000 ձի, անհամար թվով բեռնակիր անասուններ և գերեվարել 15.000 մարդու»:

Երկրորդ անգամ Լուկուլլոսը հարձակվել է նրա վրա Գրանիկոս գետի մոտ, «գերեվարել մեծ թվով մարդկանց և սպանել 20.000 մարդու»:

Հռոմեացի զորավարին աջակցել են հրաշագործ երևույթներ: Մի անգամ, երբ նա նախապատրաստվում էր ճակատամարտի, հանկարծ երկինքը ճայթել է, և տեսել են, թե ինչպես է մի մեծ հրե մարմին ընկնում երկու ճամբարների միջև: Ահաբեկված բանակները բաժանվել են: Մի անգամ էլ, աստվածուհու համար բուժված սուրբ երկնջր լքել է հոտը, միայնակ լողալով անցել նեղուցը և ներկայացել զոհաբերության՝ [Միհրդատի կողմից] պաշարված Կիզիկոս: Միաժամանակ, աստվածուհին երազում խոստացել է «պոնտացի փողիարի դեմ բերել լիբիացի սրնգահարին», այն է՝ հարավային կատաղի քամի բարձրացնել Միհրդատի մեքենաների դեմ, այն կարծես թե տեղի է ունեցել հաջորդ օրը: Մի անգամ էլ փոթորիկն է օգնության հասել Լուկուլլոսին. «Երբ Միհրդատը հապճեպ փախուստի է դիմել դեպի Պոնտոս, վրա է հասել կատաղի փոթորիկը, որը նրա նավերը քշել-տարել է կամ ջրասույզ արել»:

Այսպես են ջանադիր պատմիչները ներկայացրել «երեսուն բյուրի՝ նվազագույնը 300.000 մարդկանց, թե՛ մարտիկների և թե՛ բանակին հետևողների» կործանումը, որից հետո հաղթանակած Լուկուլլոսի կողմից հետապնդվող Միհրդատը ճողոպրել է Պոնտոս:

Խիստ կասկածելի է, որ Միհրդատի բանակի թվաքանակը կարող էր հասնել 300.000-ի: Չափազանցությունները և անհավանական գունագարությունները, որոնք նպատակաուղղված էին հավատ ներշնչելու Լուկուլլոսի հաղթանակի հանդեպ, վկայում են միայն հակառակը: Ոչ թե հռոմեացի զորավարի սուրբ, այլ սովն է հարկադրել Միհրդատին դիմել նահանջի:

«Շատերը Լուկուլլոսին խորհուրդ են տվել հետաձգել պատերազմը»: Դա նշանակում է, որ զորավարը կամ նրա մերձավորները տատանվում էին ձեռնամուխ լինելու Միհրդատի հետապնդմանը, ինչը նրա հաղթանակը կասկածելի է դարձնում:

Չմայած այս խորհուրդներին, Լուկուլլոսը վճռել է շարժվել Միհրդատին ընդառաջ: Նա անցել է Բյուրանիան և Գալատիան ու մտել Պոնտոսի թագավորություն: Սկզբնական շրջանում սովն այնքան լայն չափերի է հասել,

որ «նա պարտադրել է իրեն հեռել 30.000՝ իրենց ուսերի վրա ցորենի մեկական մեղիմն տանող գալատացիներին»:

Սակայն, առաջ ընթանալով, նրանք հայտնվել են այնպիսի առատության մեջ, որի պայմաններում մեկ եզր դաշտում վաճառվում էր մեկ դրաքմեով, իսկ մեկ ստրուկը՝ չորս:

Արշավանքի ընթացքում հռոմեացիները սկսում են հարձակումներով կողոպտել և ասպատակել տարածաշրջանը՝ մինչև Թեմիսկիրա և Թերմոդոնի հարթավայրերը:

[Զինվորները] սկսում են տրտնջալ: Լուկուլլոսին մեղադրելով այն բանի համար, որ նա ոչ մի քաղաք չէր գրավում [ռազմական] ուժով, որպեսզի դրանք հանձնելու եկամտարեր կողոպուտի (ինչպես Ամիսոս քաղաքը): Նրան հանդիմանում են դանդաղաշարժության և երկրորդական ամրոցների ու քաղաքների առջև երկարատև կանգառների համար, ինչը Միհրդատին հնարավորություն էր ընձեռում ամրամալ: «Ինձ էլ հենց այդ է պետք, — ասում էր նա իրեն արդարացնելու համար, — ես դիտավորյալ եմ դանդաղում: Թող Պոնտոսի արքան նորից հզորանա և կռվի համար բավականաչափ զորք հավաքի, որպեսզի մնա տեղում և մեր մտտեմալուց չփախչի: Կամ դուք չե՞ք տեսնում, որ նրա թիկունքում անապատային անսահման տարածություններ են, իսկ կողքին Կովկասն է, լեռնային հսկայական մի երկրամաս խոր ձորերով, որտեղ կարող են ապաստան գտնել ու պաշտպանվել թշնամու հետ հանդիպելուց խուսափող նույնիսկ հազար արքաներ: Բացի այդ, Կաբիրայից մինչև Հայաստան ընդամենը մի քանի օրվա ճանապարհ է, իսկ Հայաստանում քաղաքներում է Տիգրանը, արքայից-արքան, որն իր զորքով փակում է պարթևների ճանապարհը դեպի Փոքր Ասիա, իսկ հունական քաղաքային համայնքները վերաբնակեցնում է Մարաստանում, այդ արքան նվաճել է Ասորիքն ու Պաղեստինը, իսկ Սելևկյան տոհմի քաղաքներին մահվան է մատնել ու գերության տարել նրանց կանանց ու դուստրերին: Եվ այդ մարդը Միհրդատի բարեկամն է, նրա փեսան: Եվ եթե Միհրդատը դիմի նրա պաշտպանությանը, ապա նա Միհրդատին չի թողնի փորձանքի մեջ և պատերազմ կսկսի մեր դեմ: Չլինի այնպես, որ շտապելով Միհրդատին դուրս բշել իր տիրույթներից, հանդիպենք Տիգրանին ու փորձանքի գանք: Զանգի նա արդեն վաղուց առիթ է փնտրում մեր դեմ պատերազմելու. իսկ նա առավել հարմար ի՞նչ առիթ կարող է գտնել, քան արքայական ազգակցին փորձանքի մեջ օգնելը: Ինչո՞ւ դրան ձգտենք. ինչո՞ւ սովորեցնենք Միհրդատին, թե ում օգնությանը դիմի մեր դեմ պայքարելիս: Ինչո՞ւ նրան մղել Տիգրանի գիրկը, երբ ինքն այդ չի ուզում և այն համարում է անպատվություն: Ավելի լավ չի՞ լինի, եթե

նրան ժամանակ տանք հավաքելու իր սեփական ուժերը և նորից ոգևորվելու. այնժամ մեզ մնում է կռվել ոչ թե մարերի և հայերի, այլ կոլլսերի, տիրաբեռների և կապաղովկիացիների դեմ, որոնց մենք բազմիցս հաղթել ենք»¹:

Լուկուլլոսն Ամիսոսի առջև մնացել է երկար: Չմտան ավարտից հետո նա պաշարման դեկավարումը հանձնարարել է Մուրեմային, իսկ ինքը գնացել Կաբիրայում ճամբարած Միհրդատին ընդառաջ: Միհրդատն ուներ 40.000 հեռակային և 4000 հեծյալ բանակ: Միհրդատը պարտվել է և փախել Հայաստան՝ Տիգրանի մոտ: Կաբիրան և այլ բերդամրոցներ հանձնվել են Լուկուլլոսին, այն գանձերով, որոնք գտնվում էին այնտեղ: Միհրդատի բույր *Նիսսան* գերեզմարվել է: Մյուս բույրերը և [արքայի] կանայք, որոնք թվում է, թե գտնվում էին անվտանգության մեջ, սպանվել են Միհրդատի հրամանով, որը փախուստի ընթացքում, շտապ նրանց մոտ է ուղարկել ներքինի Բակքիսին՝ նրանց թունավորելու համար: Նրանց թվում էին արքայի երկու՝ շուրջ քառասունամյա չամուսնացած բույրերը՝ Ռոքսանան և Ստատիրան և նրա հույն տիկնամցից երկուսը՝ Բերենիկեն և Մոնիմեն:

Լուկուլլոսն առաջ է ընթացել մինչև *Տալավրա* և այդտեղ տեղեկացել, որ Միհրդատը դրանից չորս օր առաջ փախել է Հայաստան՝ Տիգրանի մոտ: Նա վերադարձել է, հպատակեցրել քաղղեացիներին և տիրաբեռներին, նվաճել Փոքր Հայքը և աներոդուն՝ Ապպիոս Կլավդիոսին ուղարկել Տիգրանի մոտ՝ պահանջելու Միհրդատին:

Այնուհետև, Լ[ուկուլլոսը] գնացել է Ամիսոս, որի պաշարումը շարունակվում էր: Քաղաքը գրավվել է: Լ[ուկուլլոսն] ուղղություն է վերցրել դեպի Ասիայի քաղաքները՝ պայքարելու համար կապալառուների և վաշխառուների դեմ, որոնք կախման մեջ էին պահում բնակչությանը: Մուլլան Ասիա պրովինցիային պարտադրել էր 20.000 տաղանդի հասնող հարկ: Ասիան վարձակալներին սակայն վճարում էր կրկնակին՝ 40.000 տաղանդ: Բարձրացնելով վաշխառուական տոկոսը, վարձակալները պարտքը հասցրել էին մինչև տասներկու բյուր տաղանդի (120.000 ?!): [Լուկուլլոսի միջամտության շնորհիվ] չորս տարվա ընթացքում բոլոր պարտքերը վճարվել են:

«Վաշխառուները բողոքել են Հռոմ՝ Լուկուլլոսի դեմ:»

¹ Plutarchi, Lucullus, 11(5).

Իրադարձությունների ժամանակագրությունը

Բյուբանիայի վերջին՝ Նիկոմեդես [III] թագավորը վախճանվել է 74 թվականին: Գոյություն ունի Նիկոմեդեսի չորեքդարամյան՝ թվագրված բյուբանական թվարկության 224 թվականով (74 թ. հոկտեմբեր]-73 թ. [հոկտեմբեր]: Ըստ Սալլուստիոսի՝ Պլուտարքոսը հաղորդում է², որ Լուկուլլոսն իր դեմ է տրամադրել զինվորներին, նրանց պարտադրելով երկու ձմեռ անընդմեջ անցկացնել ճամբարում, առաջինը՝ Կիզիկոսի առջև (այն է՝ 73-[7]2 թթ.), հաջորդը՝ Ամիսոսի (այն է՝ 72-71 թթ.):

Ըստ Փլեգոն Տրալլացու՝ 177-րդ օլիմպիադայի առաջին տարին Լուկուլլոսն անց է կացրել Կարիթայի առջև³: 177-րդ օլիմպիադան] համապատասխանում է 72-68 թվականներին: Առաջին տարին սկսվում է 72 թ. օգոստոսից-71 թ. օգոստոսը:

Միհրդատը փախել է Հայաստան 71 թ. օգոստոսին՝ Կարիթայի պարտությունից հետո, նույն 71 թ. աշնանը:

Կարիթայի գրավումից և Միհրդատի փախուստից հետո է Լուկուլլոսի աներորդի՝ Ապպիոս Կլավդիոսին հանձնարարվել գնալ Տիգրանի մոտ և նրանից պահանջել՝ հանձնել Միհրդատին:

Նախ Ապպիոսին ուղեկցել են թագավորական պահակախմբի անդամները, որոնք նրան պարտադրել են բազում օրեր տևած և անօգուտ շրջապատույտ կատարել: Այնուհետև, ազատարձակ մի ասորի նրան տեղեկացրել է ուղիղ ձգվող ճանապարհի մասին: Ապպիոսն այդ ժամանակ ազատ է արձակել իր բարբարոս ուղեկիցներին, անցել է Եփրատը և մի քանի օրից ժամանել Անտիոք, որը կոչվում էր Եպիդափնե: Այստեղ նա Տիգրանին սպասելու կարգադրություն է ստանում: Թագավորը *բացակայում էր և զբաղված էր Փյունիկիայում*: Ապպիոսը հռոմեացիների կողմն է գրավում երկրի բազմաթիվ իշխանների և դրանց թվում՝ Գորդիենեի [Կորդոք] թագավոր *Չարրիենոսին*, որոնք ենթարկվում էին հային՝ զոչումի զգացումով:

Ապպիոսի դեսպանության պատմությունը պատկանում է հենց իրեն՝ դեսպանին: Այս դեսպանության զավեշտական և ավելի քան տարօրինակ

բնույթը գրեթե չի համապատասխանում ամենավաղնջական ժամանակներից ի վեր Արևելքում ընդունված ծիսակատարությանը:

Ըստ միջազգային համաձայնության կամ սովորույթի՝ արքայի մոտ գնացող դեսպանությանը սահմանում դիմավորում էին արքայի գործակալները և առաջնորդում մայրաքաղաք: Ովքե՞ր են արքայի այդ ուղեկիցները: Անտարակույս, պաշտոնյաները, որոնց արքան կարգադրել է ընդունել և առաջնորդել դեսպանին իր մոտ: Ազատագրված ասորու պատմությունը զարմանալի է: Նա կարող է լինել միայն դեսպանության ծառայության մեջ գտնվող գաղտնի լրտես:

Դեսպանին, հավանաբար, ընդունել են Տոմիս կանգառում և Ծոփքով, Միգրոնիայի ուղղությամբ, ուղեկցել դեպի Տիգրանակերտ կամ ավելի հեռու՝ Անտիոք: Ապպիոսին հաջողվել է մոլորության մեջ ձգել իրեն հսկող ուղեկիցներին, թագավորական բանազնացներին և մի ազատարձակ ասորու միջոցով «իր կողմը հակել երկրի բազմաթիվ իշխանավորների, որոնց թվում էր նախ և առաջ՝ Կորդոքի թագավոր *Չարրիենոսը*»:

Դժվար է ըմբռնել, թե ինչու՞ պետք է ուղեկիցները նրան պարտադրեին անօգուտ շրջապատույտ կատարել: Ինքն Ապպիոսն է առաջ ընթացել մինչև Կորդոք՝ այնտեղ բանասարկելու մպատակով:

Ոչ հեռավոր անցյալում հպատակեցված բազմաթիվ քաղաքներ կարող էին գաղտնաբար Ապպիոսի մոտ պատգամավորներ ուղարկել: Նման պարագան ավելի է համապատասխանում դեսպանության առաքելությանը: Նա նրանց խոստացել է Լուկուլլոսի օժանդակությունը և խորհուրդ տվել այդ պահին հուզումների տուրք չտալ: Հայերի տիրապետությունն «անհանդուրժելի էր և մոլկալի»: Սա բացառապես անձնական գնահատական է, որը պատկանում է կամ Պլուտ[արքոսին], կամ Ապպիոսին: Ինչ մենք գիտենք անձամբ Պլուտարքոսից, այն է, որ ընդհակառակը՝ հենց հունական քաղաքները և ամբողջ Փոքր Ասիան էին ատում հռոմեացիների տիրապետությունը: Պլուտարքոսը հավաստում է, որ Հռոմի վաշխառուների և կապալառուների կողմից դրսևորվող անհանդուրժելի վերաբերմունքին էին արժանանում ոչ միայն Բյուբանիայի, այլ համայն Ասիայի քաղաքները: Այս պատճառով են Միհրդատին ամենուր ընդունել պատրաստակամությամբ¹: Նույն Պլուտարքոսն ասում է, որ «վաշխառուներն ու կապալառուները հարկադրում էին մասնավոր անձանց վաճառել իրենց բարե-

¹ Catalogue du Musée Britannique, p. 215, № 8. Eutropius, VI, 6.

² Photarchi, Lucullus, 23.

³ C. Müller, Fragmenta historicorum graecorum, t. III, p. 606.

¹ Photarchi, Lucullus, 7.

կազմ որդիներին կամ կույս դուստրերին, իսկ քաղաքացիներին՝ հանձնել ընծաները, նկարներն ու սուրբ պատկերները» և այլն¹:

«Փոխհյուպատոսների գիշատչությունը, վարձակալների կողպատները, դատավորների օրինազանցությունն այստեղ այնպիսի ատելություն են առաջ բերել հռոմեացիների անվան հանդեպ, որ Ասիան տարածում է ձեռքերը, — ձայնում է մեկ այլ պատմիչ, — և աղբասարկու բացականություններով կանչում Միհրդատին»²:

Ասիայում հռոմեացիների մասին ունեին աննպաստ ու պարսավելի պատկերացում. «Հոռոմի հիմնադիրները, իրենց սեփական կարծիքով, կերակրվել են էգ գայլի կողմից և իրենք գայլերի ժողովուրդ էին, անհագորեն ծարավի արյան և իշխանության, իսկ ինչ վերաբերում է հարստություններին՝ ազահ և ընչաքաղց»³:

Այս պայմաններում, չի կարելի զարմանալ այն մոլեգնությունից, որով այնպիսի քաղաքներ, ինչպես Մինոպը, Ամիսոսը, Ամասիսը, դիմադրում էին Լուկուլլոսի բանակին: Այդ դեպքում ինչո՞ւ պետք է Միհրդատի տիրապետությունը լիներ ցանկալի, իսկ Տիգրանինը՝ «անհանդուրժելի կամ նույնիսկ նողկալի»: Պատճառաբանում են, թե Տիգրանը դարձել էր «աննկարագրելի հանդուգն ու սնապարծ և ինքնագոհ՝ իր աներկակայելի հաջողությունների հետևանքով: Նա հպատակեցրել է բազմաթիվ ազգությունների, կոտրել պարթևների հզորությունը և Միջագետքը լցրել հույներով, որոնց, մեծ քանակով, տեղափոխել էր Կիլիկիայից և Կասպադովկիայից: Նա վրանարձակ արաբական ցեղերին տարագրել էր իրենց երկրից և բնակեցրել իր հարևանությամբ՝ առևտրում օգտագործելու նպատակով: Նրան շողոքորթում էր թագավորների մի ամբողջ բազմություն. դրանցից չորսին նա մշտապես պահում էր իր կողքին՝ որպես սպասավորների, որոնք կարճ քիտոնը հագին ոտքով վազում էին նրա առջևից՝ երբ նա ձիով դուրս էր գալիս, իսկ երբ ընդունելության ժամանակ նստած էր՝ նրանք նրա կողքին մնում էին կանգնած»:

Ահա, հիրավի, զարմանք հարուցող պատճառները: Արդյո՞ք նվաճումը պատճառ է ատելության համար: Եթե դա այդպիսին լիներ, հռոմեացիների անունը պետք է, որ աշխարհում լիներ ամենազագրելին: Այն, որ Տիգրանը Միջագետքը լցրել է հույներով՝ ավելի քան չափազանցություն է: Մենք գիտենք, որ հայոց թագավորը Կասպադովկիայում և Կիլիկիայում գրավել է

¹ Plutarchi, Lucullus, 20.

² Justini historiarum philippicarum ex Trogo Pompeio, XXXVIII. 7.

³ Op. cit., XXXVIII. 6.

տասներկու քաղաք, որոնց բնակչության մի մասը տեղահանվել է՝ տեղավորվելու համար նոր մայրաքաղաք Տիգրանակերտում: Ոչինչ հայտնի չէ այն մասին, թե արդյո՞ք այս տեղահանումը տեղի է ունեցել ուժով, թե տարերայնորեն: Տիգրանակերտն առաջին կամ վերջին քաղաքը չէր, որն Ասիայում հիմնադրվել է այս ձևով:

Կույր գայլությունով ի վնաս Տիգրանի՝ կներկայացնեն նույնիսկ այն, ինչն արժանի է գովեստի և արժանավոր գնահատականի. քոչվոր արաբները հարկադրված էին փոխել իրենց կենսակերպը, դառնալ նստակյաց՝ «առևտրում օգտագործելու նպատակով»:

Ինչ վերաբերում է Տիգրանի առջև վազող չորս թագավորին, ապա դիտարկումը ճշգրիտ է, սակայն, վերջին կետում աղավաղված: Խոսքն առնչվում է բղեշխներ՝ պիտիաշխներ կոչվող չորս փոխարքաներին, որոնք շրջապատում էին հայոց թագավորին և որոնց մենք ավելի ուշ տեսնում ենք Արշակունյաց արքունիքում առաջին շարքերը զբաղեցնելիս: Միանգամայն անհեթեթ է ասելը, թե վերջիններս ոտքով վազում էին թագավորի ձիու առջևից: Նրանց կանխամտածված շփոթել են թագավորին ուղեկցող սուրհանդակների հետ, որոնք վազում էին նրա առջևից, երբ նա ձիով դուրս էր գալիս: Արևելքին բնորոշ համառությամբ, այս սովորույթը Պարսկաստանում պահպանվել է մինչև մեր օրերը, նվազագույնը խաների՝ շահի տիտղոսակիր ստորականների մոտ¹: Մեր սկզբնաղբյուրի ընդգծված կիրքը, որը հանգում է ամենուր ծիծաղելի փնտրելուն, հաճախ եզրափակվում է միայն իրեն ծիծաղելի դարձնելով՝ իր դատարկաբանության հետևանքով:

Ապախոսը վերջապես ներկայացել է թագավորին և հայտարարել, որ իր առաքելությունը նպատակ ունի կամ տանել Միհրդատին և կամ Տիգրանին պատերազմ հայտարարել: Լուկուլլոսի բանագնացին թվացել է, թե թագավորի ժպտացող դեմքին նկատել է հուզմունք, որի պատճառը եղել է իր անկաշկանդ ելույթը, «ինչը, հավանաբար, քսանհինգ տարուց ի վեր, այն է՝ իր թագավորության կամ ավելի ստույգ՝ բազում ժողովուրդների ծանակելու ընթացքում նա լսում էր առաջին անգամ»: Տիգրանն Ապախոսին պատասխանում է, որ ինքը Միհրդատին չի հանձնի, իսկ եթե հռոմեացիները պատերազմ սկսեն, նրանց ետ կմղի:

Նա Ապախոսին ուղարկում է թանկագին նվերներ և քանի որ վերջինս մերժել էր դրանք ընդունել, ուղարկում է առավել թանկարժեք նվերներ: Այդ ժամանակ, Ապախոսը վերցնում է միայն մեկ գավաթ, ետ է ուղարկում մյուս բոլորը և շտապում վերադառնալ Լուկուլլոսի մոտ:

¹ 1917 թ. [անընթեռնելի անուն] համար ճանապարհի հարթող:

Այս պատմության հեղինակն, անտարակույս, անձամբ Ապպիոսն է: Նրանից բացի ոչ մեկը չէր կարող իրագեկ լինել Տիգրանի կողմից նրա ընդունելության տեսարանի այս մանրամասներին: Ապպիոսը, ըստ իր խոսքերի՝ ցուցաբերել է համարձակություն, և Տիգրանը, չնայած նրա անկաշկանդ ելույթին, բավականին մեծահոգի է գտնվել՝ նրան նվերներով պարուրելու համար: Այդ դեպքում որտեղի՞ց է սկիզբ առնում այս վերամբարձ երանգը, թագավորի նկատմամբ այս ծաղրը: Ապպիոսն անկեղծ չէ: Թվում է, թե նա խոցված է, սակայն, այդպես է վարվում: Նախ նա սոսկ Լուկուլլոսի ուղերձը տանողն էր: Ամենևին տեղին չէր [Հայոց արքայի առջև] ելույթով հանդես գալը: Այնուհետև, քաջ հայտնի է արքունիքի սովորույթը, վաղնջական ժամանակներից ի վեր արքայից-արքայի արքունիքում որդեգրված արարողակարգը: Նա, ով ցանկանում էր ներկայանալ արքայից-արքային, պետք է ծնկի գար: Երբ Արտաքսերքսես [II]-ի արքունիք ժամանած Կոնոն Աթենացին ցանկություն է հայտնել անձամբ խոսել թագավորի հետ, խիլիարքոսը [հազարապետը]՝ պաշտոնատար անձը, որն արքունիքում զբաղեցնում էր երկրորդ պաշտոնը և որից կախված էր ընդունելության հնարավորության ընձեռումը¹, զգուշացնում է քեմացուն, որ նա պետք է խոնարհվի թագավորի առջև, եթե նա անձամբ ներկայանա, իսկ ավելի լավ կլինի, թերևս, գրուցելու փոխարեն արքային գրավոր դիմել:

Եթե Ապպիոսը ցանկացել է, որ իրեն ներկայացնեն թագավորին, ապա նա պետք է թագավորին արժանացներ այն պատիվներին, որոնք պահանջում էին արարողակարգն ու սովորույթը, այն է՝ ծնկի գալ Տիգրանի առջև: Եթե նա այնքան հպարտ էր, որ չի ցանկացել հետևել արքունիքի արարողակարգին, ապա նա չէր համարձակվի տեսակցել թագավորին, առավել ևս անկաշկանդ ելույթ ունենալ և նկատել նրա շիտթված դեմքը: Երկուսից մեկը՝ կամ Ապպիոսը չի տեսել Տիգրան թագավորին՝ անձամբ նրան չհանձնելով Լուկուլլոսի ուղերձը, կամ եթե նրան տեսել է՝ ապա ծնկի է եկել նրա առջև: Պարագաներից մեկում՝ նրա պատմությունը սոսկ աննպատակ սնապարծություն է, իր համար համբավ ձեռք բերելու ցանկությանը տոգորված երիտասարդի պարզունակ պարծենկոտություն, մյուսում՝ նրա մաղձը պայմանավորված է ստորացման այն դառնությամբ, որը ճաշակել է Տիգրանի արքունիքում:

Ըստ մեր պատմիչի՝ Տիգրանը մինչ այդ չի ցանկացել տեսնել իր դժբախտ ազգականին՝ Միհրդատին և կամ գրուցել նրա հետ, այլ նրան

պահել էր իրենից հեռու՝ ճահճոտ և առողջության համար վնասակար վայրերում՝ Պոնտացուն վերաբերվելով քամահրանքով ու արհամարհանքով, ինչպես բանտարկված մեկին: Ապպիոսի դեսպանությունից հետո, Տիգրանը Միհրդատին հրավիրել է իր արքունիք և նրան արժանացրել պատիվների ու վերաբերվել բարեկամաբար: Թագավորական ապարանքում նրանք ունեցել են իրենց փոխադարձ կասկածները փարատող զաղտնի խոսակցություններ՝ ի դժբախտություն, սակայն, իրենց բարեկամների, որոնց վրա էին բարդում մեղքը: Այդ բարեկամների թվում էր և Մետրոդորոս Սկեասիացին, հաճելի մի մարդ, բանիմաց, որին անվանում էին Միհրդատ թագավորի հայրը: Միհրդատը նրան ուղարկել էր իր փեսայի մոտ՝ հռոմեացիների դեմ պայքարում օգնություն հայցելու համար: «Սակայն, դու ով Մետրոդորոս, – հարցրել էր Տիգրանը, – դու ինձ ի՞նչ խորհուրդ ես տալիս այդ առնչությամբ»: Նա պատասխանել էր, որ իբրև բանագնաց՝ ինքը Տիգրանին խորհուրդ է տալիս օգնել, բայց իբրև խորհրդատու՝ մերժել:

Տիգրանը հավանաբար Միհրդատին է փոխանցել այս պատասխանը և վերջինս Մետրոդորոսին սպանել էր: Այդուհանդերձ, պատմիչն անձամբ խոստովանում է, որ Մետրոդորոսի վախճանը վճռված էր վաղուց ի վեր: Այսպիսով, Տիգրանը նրա մահվան հետ որևէ առնչություն չունի: Այդուհանդերձ, պատմիչը պատրաստ է այդ բանի համար ևս մեղադրել Հայոց թագավորին:

Մեկ այլ հույն՝ իր երկրից արտաքսված հռետոր *Ամփիկրատեսը*, գնացել էր Արևելք. նրան ընդունել էին Տիգրանի արքունիքում: Բայց անշնորհակալ փախստականը շուտով դարձել է կասկածյալ, նրան արգելվել է հույների հետ առևտուր անելը և նա ինքնասպան է եղել սովամահության մատնվելով:

Հնարավոր է, որ Տիգրանն ու Միհրդատը վճռել էին ասպատակել Լիկոնիան և Կիլիկիան: Լուկուլլոսը, հավանաբար, զարմացել է, որ հռոմեացիների դեմ պատերազմի մեջ ընդգրկվելու մտադրություն ունեցող Տիգրանը չի համագործակցել Միհրդատի հետ նրա հզորության բուռն վերելքի ժամանակաշրջանում:

Հեղինակը ոչ մի առիթ բաց չի թողնում թագավոր Տիգրանին պատեն անպատեն զրպարտելու համար: Այն բանից, որ Տիգրանը ժամանակին չի սատարել Միհրդատին՝ հռոմեացիների դեմ պայքարում, հետևում է, որ հռոմեացիների հետ առճակատման մեջ ընդգրկվելը նա իր շահերին համապատասխանող չի համարել: Նա կարող էր հյուրընկալել մի պարավաժի, եթե նա մույնիսկ իր ազգականը չլիներ, առանց նրա կողմից հանդես գալու, առանց կարծելու, որ իր մարդկային դիրքորոշումը կարող է հռո-

¹ Cornelius Nepos, Conon, 3: necesse est enim, si in conspectum veneris, venerari te regem (quod προσκυνεῖν illi vocant). Հմմտ. հայերեն «երկիր պագանել» բառերը:

մեացիների հետ զօտության առիթ ծառայել: Տիգրանը չէ, որ պատերազմ է սկսել, այլ բախտախնդիր Լուկուլոսը: Չկա, այսպիսով, ոչ մի պատճառ հանդիմանելու Տիգրանին պատերազմը սկսելու համար, որի մեղավորը Լուկուլոսն էր: Եթե նա ձգտում էր պատերազմի, Միհրդատին այդքան մեկուսացված չէր պահի «ճահճոտ և առողջության համար վնասակար վայրերում», այլ նրան կհրավիրեր իր մոտ՝ համատեղ մշակելու պատերազմի ծրագիրը, որը հարկ էր սկսել: Ճիշտ է նաև այն, որ Տիգրանն այդ ժամանակ զբաղված լինելով Փյունիկիայի հպատակեցմամբ, գործնականորեն չէր կարող հետաքրքրվել իր աներոջ ճակատագրով:

Փիլիսոփա Մետրոդորոսին վերաբերող գրույցն առասպելական է: Նա վաղուց ի վեր թողել էր Միհրդատի պալատը՝ Տիգրանի պալատ հասնելու համար: Անտարակույս, նրան հրավիրել էր Տիգրանը՝ հանձնարարելու գրել իր նվաճումների պատմությունը: Մետրոդորոսն այդ մասին գրել է մի քանի գիրք¹ (19): 70 թ. Մետրոդորոսը ծառայության մեջ էր գտնվում Տիգրանի մոտ և ոչ մի դեպքում չէր կարող Միհրդատի կողմից նրա մոտ առաքելություն իրականացնելու հանձնարարություն ստացած լինել: Տիգրանի մոտ ապաստանած Միհրդատն ինչպե՞ս կարող էր համարձակվել հայկական արքունիքում սպանել թագավորական պատմիչին, առանց վտանգվելու հրահրել իր տիրակալի՝ Տիգրանի դժգոհությունը, որի օգնությունն այդ ժամանակ աղերսում էր: Մետրոդորոսի մահվանն առնչվող գրույցից՝ իբրև միտումնավոր մտացածին կեղծիքից, հարկ է հրաժարվել²:

Լուկուլոսն իր ժամանակն անցկացնում էր «հաճույքների և զվարճությունների մեջ», երբ ժամանել է նրա բանազմաց Ապպիոսը և բերել իր հյուրին հանձնելուց հրաժարվող Տիգրանի պատասխանը: Այս մերժումը լինելով բարոյական տուրք հյուրընկալության և բարեկամության իրավունքին, բացարձակապես չի կարող դիմել իբրև *casus belli* (20): Հռոմեացի զորավարը, այդուհանդերձ, համակված ռազմատենչ կրքով, հակված էր պատերազմի մեղքը բարդել հայոց թագավորի վրա: Իզուր չէր, որ Հռոմում [արդեն] բարձրաձայն մեղադրում էին Լուկուլոսին, որ «նա մի պատերազմից մյուսին էր ձգտում ոչ թե պետության շահերից ելնելով, այլ իր հրամանատարությունն երկարաժամկետ դարձնելու և հասարակական վտանգներն իր օգտին ծառայեցնելու համար»:

¹ Scholia in Apollonium Rhodium, IV. 133.

² Թ. Ռեյնաքի ենթադրությունը, ըստ որի՝ Մետրոդորոսի աշխատությունը չէր կարող հաջորդել 70 թ., չի կարող ընդունել լինել, քանի որ հիմնվում է 70 թ. նրա կարծեցյալ վախճանի վրա: [Th. Reinach,] *Mithridate Eupat[or roi de Pont, Paris, 1890,] p. 428-429.*

Մինչ Տիգրանի դեմ ռազմարշավի ձեռնամուխ լինելը, Լուկուլոսը լավ է հաշվի առել իր համար բարեհաճորեն դասավորված հանգամանքները: Միհրդատի որդի Մաքարեսը՝ Բոսպորի տիրակալը, հենց նոր՝ Լուկուլոսի կողմն անցնելու համար դավաճանել էր իր հորը և Լուկուլոսին ուղարկել հազար ոսկի արժողությամբ մի պսակ: Միհրդատի զորավար (21) Դորիլոսը, չնայած Պլուտարքոսի հաղորդած տեղեկությանը, ըստ որի՝ նա իբր սպանվել է Կաբիրայի ճակատամարտից հետո, իրականում հռոմեացիների հետ ընդդրվել էր գաղանի բանակցությունների մեջ¹: Միհրդատին դավաճանել էր նրա ազգական Փենիքսը: Միհրդատն իր թագավորությունում այլևս չունեցրեց ոչ մի հենարան, քանի որ հունական քաղաքները կործանվել էին, բերդամրոցները հանձնվել Լուկուլոսին: Դանդաղորդների՝ [բարբարոս ցեղերից մեկի] իշխան Օլթակոսը², սկյութ իշխան Սաբադոնն լքել էին Միհրդատին: Կապադովկիայի թագավոր Արիոբարզանեսը Լուկուլոսի դաշնակիցն էր:

Հռոմեացի զորավարը նախապես ծանոթացել էր իրավիճակին, և նրան հաջողվել էր դաշնակիցներ ձեռք բերել Տիգրանի կայսրությունում: Ապպիոսի առաքելությունն իրականում հետապնդում էր Տիգրանի ստորակառուցի նրանից վանելու նպատակ: Լուկուլոսի ջատագովը հարկադրված է խոստովանել, որ Լուկուլոսն Ապպիոսի միջնորդությամբ Կորդվաց թագավորի հետ գաղանի դաշնագիր էր կնքել³: Լայնորեն շռայլված խոստումների շնորհիվ հռոմեացի զորավարն իր կողմն էր գրավել արարական արքայիկներին, որոնք Լուկուլոսին էին հանձնելու այն ամենն, ինչ իրենց էր պատկանում, ինչպես նաև ծովացիներին, որոնք բուրբ պատրաստվում էին զորավիզ լինել նրան:

Լուկուլոսն իր ձեռքերը տարածել էր նույնիսկ դեպի պարթևների թագավորը՝ նրանից պահանջելու՝ վերհիշել [և հավատարիմ մնալ] 92 թվականին ընդդեմ Տիգրանի կնքված նախկին դաշնիցին:

Հենց որ Լուկուլոսի դիվանագիտությունը՝ որքան գաղտնաբար, նույնքան և նենգաբար հող է նախապատրաստել, նա իրեն պատրաստ է համարել ռազմարշավ ձեռնարկելու և «զմալ նետվելու անհամար հեծելագորունեցող ռազմատենչ ցեղերի տարածք, անծայրածիր մի երկիր, որն ամեն կողմից շրջապատված է խորունկ գետերով և ձյունապատ լեռներով»: Նրա քայլը խիստ համարձակ, զգուշության և բանականության շրջանակներից

¹ Strabo, XII. 3. 33. Plutarchi, Lucullus, 17.

² Plutarchi, Lucullus, 16; Appiani Mithridatica, 79.

³ Նույնը, 29:

դուրս կթվար միայն նրանց, ովքեր նախապես և խիստ գաղտնիության պայմաններում արված նրա նախապատրաստությունների մասին տեղեկություններ չունենային: Ներխուժողը հույսը դնում էր նաև Տիգրանի այն ստորակաների վրա, ովքեր պարտավորվել էին իրեն աջակցել:

Հայաստան ներխուժելու համար Լուկուլլոսի ընտրած ճանապարհն ամենապերճախոս փաստարկն է առ այն, որ նա հիրավի հույսը կապում էր Տիգրանի կողմից հայատակեցված գահակալների ապստամբության հետ: Իրոք որ, եթե նա ցանկանում էր հարձակվել Տիգրանի վրա նրա մայրաքաղաքներում՝ Արտաշատում կամ Տիգրանակերտում, ինչպես հավաստիացնում է նրա [հռոմեացի] պատմիչը, հարկ էր, որ Արտաշատ գնալու համար նա հետևեր այն ճանապարհին, որը ձգվում էր Լյուկոս գետի և Եփրատի հովիտներով և մինչև Կարենիտիս (այսօր)՝ Էրզրում, իսկ այնտեղից՝ Արաքսենե [Արաքսի հովիտ], որտեղ գտնվում էր Արտաշատը: Եթե նրա նշանակետը Տիգրանակերտը լիներ, հարկ էր միայն, որ նա իջներ Կապադովկիայով՝ իր դաշնակից Արիոբարզանեսի երկրով, առանց որևէ բարդության, հետևելով մեծ ճանապարհին մինչև Եփրատի վրա գտնվող Ջևգմայի գետանցը, որտեղից նա Օսրոենեով, իսկ այնուհետև Միզոնիայով կգնար դեպի Տիգրանակերտ: Այս երկու պարագայում նա որևէ անջություն չէր ունենա « ձյունապատ լեռներից »:

Այնուամենայնիվ, նա նախընտրել է Մելիտենեի ճանապարհը և Տոմիսայի կամրջով ասպատակել է Ծոփքն ու շարունակել ճանապարհը մինչև Կորդոք՝ անշուշտ, ապստամբ թագավոր Ջարբինոսի հետ միավորվելու համար:

Լուկուլլոսը և նրա հետքերով նրա[ն գովերգող] պատմիչները, որոնք ավելի քիչ էին մտահոգված ճշմարտությամբ, բավականին ճարպիկ էին տխմար հրաշքներ հորինելու և զորավարի ճանապարհը դրանցով առլեցուն դարձնելու համար: Պատմությունը վերածվում է դիցաբանության կամ բանաստեղծական մտացածին կեղծիքների:

Երբ Լուկուլլոսը մտանում է Եփրատին, այն գտնում է ձմեռային անձրևներից վարարած: Սակայն, ինչպիսի՝ հրաշք: Եփրատը ցուցաբերել է հնազանդություն, հանկարծ վերադարձել իր հունը և զորավարի համար արագ և անսպասելի անցում է հարթել:

Հաջորդել է մեկ այլ հրաշք: Եփրատից այն կողմ արածում էին երինջներ, որոնք նվիրաբերված էին Արտեմիս դիցուհուն, այն է՝ Ամահիտին: Նրանք ազատորեն թափառում էին մարգագետիններում, իրենց ճակատին կրելով աստվածուհու նշանը՝ խարանադրոշմ ջահը: Երբ բանակն անցել է Եփրատը, դրանցից մեկը բարձրացել է աստվածուհուն նվիրաբերված մի

[սրբազան] ժայռի վրա, այդտեղ կանգ է առել և խոնարհելով գլուխը ներկայացել Լուկուլլոսին՝ զոհաբերվելու համար: Լուկուլլոսը նաև մի ցուլ է զոհաբերում Եփրատին՝ այս երջանիկ անցումի համար:

Այս հրաշքը կյանքի կոչած երևակայությունն այնքան էլ բեղմնավոր չի եղել: Նույն բանը պատմել են Կիզիկոս քաղաքի առնչությամբ, բայց քանի որ զոհաբերության համար այն չի ունեցել սուրբ երինջ՝ սև երինջն է միայնակ լողալով անցել ծովը և ներկայացել զոհաբերվելու:

Հետևենք Լուկուլլոսի առաջխաղացմանը՝ ըստ համանման մտացածին բնույթի պատմության:

Անցման երկրորդ օրը և դրան հաջորդած օրերին Լուկուլլոսը Ծոփքի տարածքով առաջ է ընթացել, անցել Տիգրիսը և ներխուժել Հայաստան:

Նա, ով առաջինն է Տիգրանին հայտնել Լուկուլլոսի ժամանման մասին՝ գլխատվել է: Ոչ ոք այլևս չի համարձակվել Տիգրանին ասելու ճշմարտությունը: Տիգրանը՝ Ասիայի մեծ մասի միահեծան տիրակալը, նա, ով այդ ժամանակ յոթամասուն տարեկան էր և, այսպիսով, առնվազն տարիքի բերումով փորձառու, դյուրահավատ պատմիչի կողմից մեզ է ներկայացվել իբրև մանկամիտ հիմար, որը, անգիտակից իրեն շրջափակող պատերազմի բոցին, թույլ էր տալիս, որ քաղցր խոսքերով օրորելով իրեն քնեցնեն շողոքորթները, որոնք ասում էին, թե Լուկուլլոսը կարող էր լինել մեծ զորավար՝ եթե համարձակվեր սպասել Տիգրանին Եփեսոսի առջև և կամ Ասիայից հապճեպ փախած չլիներ՝ տեսնելով նրա բազմաթյուր զորքերը: Պատմիչը պնդում է, որ Տիգրանը «հասարակ, սովորական անձ էր, իսկ ամեն մարդ չէ, որ կարողանում է պահպանել իր ողջախոհությունը և չի մթազնում մեծ հաջողությունից, այնպես, ինչպես ամեն անձ չէ, որ կարողանում է քաջ դիմանալ մաքուր գինուն»: Վերջապես, Միթրոբարզանեսը [Մերուժան] քաջություն է ունեցել Տիգրանին ասելու ճշմարտությունը: Նա անմիջապես ուղարկվել է Լուկուլլոսի դեմ՝ 3000 հեծյալի և բազմաթիվ հետևակայինների գլուխն անցած՝ հռոմեացի զորավարին կենդանի բերելու և այլոց կոտորելու հրամանով: Լուկուլլոսն ուղարկել է լեգատ Մեթուսիլիոսին՝ 1600 ձիավորով և փոքր-ինչ ավելի հետևակայինով: Միթրոբարզանեսը զոհվել է կատաղի մարտում, իսկ նրա զորքը փախել է. դրա մի մասը սպանվել է, իսկ փոքր մասը փրկվել:

Տիգրանն այդ ժամանակ լքել է Տիգրանակերտը և մահանջել դեպի Տավրոս ու այստեղ կենտրոնացրել իր բոլոր ուժերը: Ցանկանալով նրան խանգարել՝ Լուկուլլոսն ուղարկել է Մուրենային՝ Տիգրանի համակենտրոնացրած զորքերին հետապնդելու և կորուստներ պատճառելու, իսկ Մեթուսիլիոսին՝ արքային օգնության շտապող արաբական խոշոր զորամասը

կանգնեցնելու համար: Մեքստիլոսը հարձակվել է արաբների, իսկ Մուրեման՝ մեծ բանակի համար անհարթ, երկար ու նեղ մի կիրճում՝ Տիգրանի վրա: Տիգրանը փախել է՝ թողնելով իր աղյուրը: Այս հաջողություններից հետո, Լուկուլլոսն առաջ է ընթացել դեպի Տիգրանակերտ և պաշարել այն:

Հարկ է միանգամայն անվստահությանը վերաբերվել այս ամբողջ անփնաստ շատախոսությանը: Հազիվ թե հնարավոր լինի դրանից որոշ փաստեր քաղել՝ լուրջ պատմության մեջ ընդգրկելու համար: Լուկուլլոսն, ամենայն հավանականությամբ, ասպատակել է Հայաստանի սահմանները՝ առանց հավուր պատշաճի պատերազմ հայտարարելու: Ծովքն առաջին երկրամասն էր, որտեղ նա մուտք է գործել: Միթրոբարզանեսը հարկ է փոխել Միթրոբուզանեսի: Նա ոչ այլ ոք է, եթե ոչ Ծովքի տիրակալը, հավանաբար, Արտանեսի որդին, որը կրում էր իր պապ Միթրոբուզանեսի՝ Արիարաթեսի հովանավորյալի անունը: Ծովքը հպատակեցրած Տիգրանը չէր վերացրել դրա թագավորական հարստությունը: Արտանեսի պարտությունից հետո նրան հաջորդել է որդին՝ իբրև երկրի տիրակալ և Տիգրանի ստորակա: Նա դիմավորել է հռոմեացի զավթիչներին, սակայն, գահընկեց է եղել և սպանվել: Լուկուլլոսը կամ նրա պատմիչն անիրազեկ են եղել տեղի աշխարհագրությանը: Տիգրիսի, ինչպես և Եփրատի անցումից հետո Լուկուլլոսը շարունակում էր գտնվել Ծովքում՝ Միթրոբուզանեսի տիրություն: Այսպես էր կոչվում Արևմտյան Տիգրիսի և Արածանի միջև պարփակված ամբողջ երկիրը: Տիգրիսից այն կողմ ձգվող տարածաշրջանը, որը գտնվում էր դրա և Միգրոնիայի միջև, նախկինում մտնում էր Ծովքի մեջ: Ճակատամարտի վայրը մատնանշված չէ: Պատմական սկզբնաղբյուրները, ընդհանուր առմամբ, վատ են տեղեկացված Լուկուլլոսի կարծեցյալ սխրանքների մրցասպարեզի տեղագրությանը, ինչը դրանց պատմությունը դարձնում է խիստ կասկածելի: Դրանցում անգամ պահպանվել է Մասիի վայրի անունը, ուր գտնվում էր Տիգրանի արքունիքում վախճանված հռետոր Ամփիկրատեսի գերեզմանը, սակայն, դրանց հեղինակները ձեռնապահ են մնացել մեզ մատնացույց անելու Լուկուլլոսի հաղթանակների շնորհիվ նշանավոր դարձած վայրերը: Ո՞րտեղ է արդյոք գորավարն անցել Տիգրիսը՝ Միթրոբարզանեսի դեմ մարտնչելու համար, ինչպիսի՞ն է եղել նրա ռազմերթն այդ հաղթանակից հետո, նա գնում էր դեպի Տիգրանակերտ, թե՞ դեպի Կորդոք՝ ձեռք մեկնելու համար իր դաշնակցին, այս բոլոր հարցերի առնչությամբ [պատմագիրները] մեզ մատնում են կատարյալ անորոշության: Մեր տեղեկությունները, որոնք սկիզբ են առնում, ի վերջո, անձամբ Լուկուլլոսի ռազմական հաղորդագրություններից, տարօրինակ ձևով աղոտ են նույնիսկ մայրաքաղաք Տիգրանակերտի տեղանքի կապակցությամբ:

Հարկ է հաշվի առնել այս բոլոր առանձնահատկությունները, որոնք բացահայտում են Լուկուլլոսի արշավանքի պատմությունը՝ նախքան նրան ծափահարելու շուրջ վճիռ կայացնելը կամ Հռոմի փողոցներում նրա հաղթահանդեսին մասնակցելը: Լուկուլլոսյան փառաբանումների դեմ ընդոստ ծառանալու համար կարող է բավարար լինել միայն տեղանքի քարտեզի ուսումնասիրությունը:

Տիգրանակերտի տեղադրությունը բանավեճի տեղիք է տալիս: Մի բան է որոշակի, որ այն գտնվում էր Միգրոնիայում¹: Հայ պատմիչը ճանաչում է Բնաբեղ կոչվող բերդամրոցը Ծովքում և այն անվանում է թագավորական բերդամրոց, որտեղ գտնվել են Արշակունի թագավորների գանձերը²: Այն պահպանվում է մինչև մեր օրերը Մարդինից մի քանի կիլոմետր հեռավորության վրա և կրում նախկին՝ Բնաբեղ անունը: Բնաբեղը Տիգրանակերտ մայրաքաղաքի առաջապահ պահակետերից մեկն էր: Ծիշտ կլինե՞ր, այսպիսով, դրա տեղը սահմանել Տել-Արմեն գյուղում³, Մարդինի և Բնաբեղի մոտ (22):

Տոմիսայից Տիգրանակերտ ճանապարհն անտիկ դարաշրջանում անցնում էր, ինչպես այսօր, Ծովք լճի մոտակայքով, որը թուրքերեն թարգմանությամբ կոչվում է Գյուղջուք, այնտեղից, որտեղից սկիզբ էր առնում Տիգրիսը և այս գետի երկայնքով իջնում էր մինչև Միգրոնիայի հարթավայրը, մինչև Տիգրանակերտ: Այսպիսով, այս ճանապարհով Տիգրանակերտ գնալու համար Տիգրիսն անցնելու կարիքը չկա: Այս պարագային, Միթրոբարզանեսի հետ ճակատամարտը կարող էր տեղի ունենալ Խարբերդի արվարձաններում, որտեղ կարելի կլինի փնտրել Ծովքի թագավորների՝ Կարկատիոկերտ, ինչպես նաև Արշամաշատ մտավայրերը:

Ըստ լուկուլլոսյան այս ռազմերթի՝ հասկանալի կդառնա, որ Մեքստիլոսը կարող էր հանդիպած լինել «արաբների զորամասին» և կասեցնել դրա առաջխաղացումը, ընդունելով, որ այս արաբները միայն Միգրոնիայի բնակիչներն էին: Այս տարածաշրջանի տեղական անվանումն Արշակունիների ժամանակաշրջանում և ավելի ուշ Արվաստան էր, ինչը նշանակում

¹ Strabonis, XVI, 1, 23.

² [Φωκιστὸν Παιδιῶν, V, 7, հմմտ. Н. Адопц.] Армения в эпоху Юстиниана. [Политическое состояние на основе нахарарского строя, СПб., 1908], с. 31 и др.:

³ E. Sachau, Ueber die Lage von Tigranocerta, Abhandl. der kgl. Akademie der Wissensch. zu Berlin, 1880. Հարկ է հրաժարվել Ամիդի, Մայաֆարկիսի, Միդիայի հետ Տիգրանակերտի նույնացումից: Th. Mommsen, H. Kiepert, Hermes IX, 1874, S. 164; C. F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, I, Berlin und Leipzig, 1910; II, Berlin und Leipzig, 1926.

է՝ արաբների երկիր: Արաբների զորամասի անվան ներքո հարկ է, այսպիսով, ընկալել բնիկներին, որոնց վրա հարձակվել են ներխուժողները:

Քարդոսը կծառանա Մուրեմայի պարագան բացատրելու հարցում: Եթե Տիգրանը նահանջել էր դեպի Տավրոս, այն է՝ անցել էր Տիգրիսը և ճանապարհ ընկել դեպի Բիթլիս, ի՞նչպես կարող էր Մուրեման ի կատար ածել իր առաքելությունը, որը հանգում էր ճողոպրող թագավորին հետապնդելուն, զառիվայր հովտում, առանց մերձեցալու Տավրոսին, որը և կարող էր նրան հարկադրած լինել անցնելու Տիգրիսը, ինչի մասին, սակայն, հիշատակություն չկա:

Հակառակ պարագան ավելի նվազ համոզիչ է: Եթե Լուկուլոսը, ըստ պատմական վկայության՝ անցել էր Տիգրիսը և այդտեղ պարտության մատնել Միթրոբարզանեսին, նա հարկն ունեցած կլիներ, այդուհանդերձ, վերստին անցնելու աջ ափը՝ կարողանալու համար հասնել Տիգրանակերտ: Սակայն, մեր պատմիչը, որքան էլ մանրակրկիտ է այն ամենի հարցում, ինչ վերաբերում է իր հերոսին, չի խոսում երկրորդ անցումի մասին:

Այս բարդությունները չեն կարող ամենևին խորացնել մեր վստահությունը Լուկուլոսի արշավանքի պատմության նկատմամբ:

Մեզ պատմում են, որ Տիգրանն իր նահանջի ընթացքում կոչով դիմել է իր ստորականներին, հավաքագրել բոլոր զորքերը, որոնց միանալու են եկել «կորովացիների, մարաստանցիների, ադիաբենցիների զորքերն իրենց թագավորների հետ մեկտեղ, նույնիսկ նրա մոտ են ժամանել՝ Բաբելոնի ծովից արաբների բազմությունը, Կասպից ծովից՝ մեծ թվով աղվաններ ու իբերներ և Արաքսի ափերից՝ բարբարոսների ամբոխը (23)՝ առանց թագավորի»:

Մեզ պատրաստվում էին հանդել, որ Տիգրանի տիրապետությունն անհանդուրժելի էր և բոլոր հպատակեցված ժողովուրդները ցանկանում էին այն բռնափել, այժմ հերթը հասել է պնդելուն, որ Տիգրանի կոչին պատասխանել են ոչ միայն նրա ստորականները, այլ նույնիսկ Բաբելոնի ծովեզերքում բնակվող արաբները:

Տիգրանը հավաքագրել է, այսպիսով, մի ահռելի բանակ, որն ընդգրկում էր 20.000 աղեղնավոր և պարսավոր, 55.000 հեծյալ, որոնցից 17.000-ը՝ զրահապատ, 15.000 [ծանրազեն] հետևակ և վերջապես 35.000 սակրավոր, կամուրջ պատրաստող, անտառահատ և անհրաժեշտ այլ բանավորներ: 260 հազարանոց այս ահռելի բանակի դեմ խեղճ Լուկուլոսը կարող էր դուրս բերել միայն 24 կոհորտա, բոլորը միասին՝ *առավելագույնը* 10.000 հետևակային, 3000 հեծյալ և *չուրք* 1000 պարսավոր և աղեղնավոր: 6000 մարդուց բաղկացած մի զորամաս գտնվում էր Մուրեմայի տրամադրության

ներքո: Արդյո՞ք հատկանշական չէ, որ հռոմեացի զորավարն ավելի լավ ճանաչում էր թշնամու, քան իր անձնակազմերը և սպառազինությունը, ինչպես դա տեսանելի է դառնում ընդգծված բառերի միջոցով:

Երբ Լուկուլոսը թողել է Պոնտոսը, իր տրամադրության ներքո ունեցել է 12.000 հետևակային և 3000-ից պակաս հեծյալ, եթե հաշվի չառնենք 6000 մարտիկների, որոնց թողել էր Սոմնատիոսի հրամանատարության ներքո՝ Պոնտոսը հսկելու համար¹: Այժմ նա խորհում է, որ ունի 24 կոհորտա կամ 12.000-անոց հետևակ (և ոչ թե *առավելագույնը* 10.000), 3000 հեծյալ, 1000 պարսավոր՝ բացի Մուրեմայի 6000 զինվորից: Ո՞րտեղից էր նա ձեռք բերել այս լրացուցիչ 6000 մարդուն: Այսպիսով, ճիշտ չէ, որ այն պահին, երբ նա սկսել է արշավանքն ընդդեմ Տիգրանի՝ ունեցել է 15.000 մարդ, որոնցից բացի նաև 1000 պարսավոր և Մուրեմայի մոտ գտնվող 6000 մարդուց բաղկացած զորամասը, ամենքը միասին՝ 22.000: Ճշմարտությունը չսիրողների հիշողությունը միշտ կարճ է:

[Լուկուլոսը և պատմիչները] հորինել են նաև դատարկաբանություններ՝ իրենց իմացության պակասը դրանցով քողարկելու համար, այնպես, որպեսզի կարողանան միտումնավոր դիրքերից աղավաղել ավյալները և իրադարձությունները: Չավելատասքերը, որոնք զուգորդում են [դեպքերին], պատիվ չեն բերում իրականության և չափի զգացողությունից զուրկ դրանք հորինողներին:

Տիգրանը վճռել էր մարտնչել: Միևնույն ժամանակ նրան տարհանազում էր [ռազմական] գործողություններին ձեռնամուխ լինելու կապակցությամբ և առաջարկում ջանքեր գործադրել հռոմեացիների պարենային պաշարների ճանապարհները փակելու ուղղությամբ: Բոլոր կողմերից կուտակված իր զորքերին ի տես՝ Տիգրանն ի հայտ էր բերում իր անհամբերությունը: Միևնույն ժամանակ գորավար [Տաքսիլեսը] խիզախում էր վճարել իր կյանքի գնով՝ արքայի բուռն ձգտումին հակադրվելու համար: Թվում էր, թե նախանձից դրդված՝ Միևնույն ժամանակում էր վանել մեծ հաջողության հնարավորությունը: Տիգրանը չի ցանկանում սպասել նրան այն մտավախությամբ, որ վերջինս կկիսի հաղթողի իր փառքը: Տիգրանը բանակով առաջ է ընթանում՝ «իր մերձավորներին ու ընկերներին դժգոհություն հայտնելով առ այն, որ ափսոսում է, որ ինքը պետք է չափվի միայն Լուկուլոսի և ոչ թե Հոմերոսի թուրք զորավարների հետ միանգամից»²:

¹ [Plutarchi, Lucullus, 24].

² [Նույնը, 26]:

Տիգրանն անցել է Տավրոսը և տեսել իր մայրաքաղաքի առջև բանակած հռոմեացիներին: Քաղաքի բնակիչները պատրաստվում էին ծափահարել՝ պաշարողներին սպառնացող նրա կեցվածքի առնչությամբ՝ պարիսպների բարձունքից վերջիններիս մատնացույց անելով հայ զորայիններին: Լուկուլլոսն առաջ է շարժվել Տիգրանին դեմ հանդիման և ճամբարել մի հարթավայրում՝ գետի երկայնքով: Նրա բանակը Տիգրանին թվացել է խիստ փոքրաքանակ և ծիծաղելու առիթ է տվել արքային հաճոյամալու ցանկություն ունեցողներին: Ոմանք ծաղրում էին, այլք վիճակ էին նետում դիակները բաժանելու համար: Թագավորներից և զորավարներից յուրաքանչյուրը նրանից խնդրում էր ամբողջ գործը միայնակ իրականացնելու համձնարարություն, այն դեպքում, երբ նա ինքը՝ Տիգրանը կմնար դրա հանդիսատեսը: Անձամբ Տիգրանը, ցանկանալով հաճոյամալ՝ ասել է այս նշանավոր բառերը. «Եթե հռոմեացիները եկել են որպես դեսպանություն՝ շատ են, իսկ որպես զորք՝ քիչ են»¹:

Տիգրանն իր օրն անց էր կացնում կատակներով: Նա բանակել էր գետի *արևելյան* ափին: Լուկուլլոսն ուղղել է իր բանակը դեպի այն տեղանքը, որտեղ գետը պտույտ էր կատարում դեպի արևմուտք և դառնում էր շատ ավելի ծանծաղուտ: Տիգրանին թվում է, թե նրա հապճեպ ռազմերթը նահանջ է: Դիմելով Տաքսիլեսին, նա ծիծաղելով ասել է. «Ահա հռոմեացիների անպարտելի հետևակը: Չե՞ս ցանկանում դու դրան փախուստի մատնել»: Այդ պահին Լուկուլլոսը շրջվել է դեպի Տիգրանի ճամբարը՝ գետն անցնելու համար: Խիստ զարմացած Տիգրանը երկու կամ երեք անգամ բացականչել է. «Այդ մարդիկ մե՞զ վրա են գալիս»: Նա բանակը դասավորել է մարտակարգով՝ իր վրա է վերցրել կենտրոնը, ձախ թևը հանձնել Աղիարենի, իսկ աջ թևը՝ մարերի թագավորին:

Ճակատամարտը բռնկվել է 68 [69] թ. հոկտեմբերի 6-ին: Տիգրանի ճամբարը գտնվում էր մի բլրի ստորոտում: Լուկուլլոսը երկու կոհորտայով շտապել է գրավել բլուրը: Հասնելով բլրի գագաթին, նա ամբողջ ձայնով բացականչել է. «Հաղթանակը մերն է»: Այս ասելուց հետո, հարձակվել է թշնամու ճամբարի վրա: Տիգրանի բանակը, որը չէր սպասում հռոմեացիներին, բարձր աղաղակներով դիմել է ամենաամոթալի փախուստի, այնպես որ Լուկուլլոսը համարյա առանց վիրավորների և առանց արյան մեկ կաթիլ թափելու, փախուստի է մատնել Տիգրանի բազմաբյուր բանակին: Թշնամու կորուստը հասնում էր ավելի քան 100.000 մարդու, այն դեպքում, երբ Լուկուլլոսն ունեցել է հարյուր վիրավոր և հինգ սպանված:

Հռոմեացի զորավարն այսպես է հավերժացրել իր անունը՝ երկու թագավորի՝ «ամենանշանավորներին և ամենահզորներին», հաղթել է երկու հակադիր միջոցներով՝ սրընթացությամբ և դանդաղաշարժությամբ:

Այս հաղորդման հեղինակն անտարակույս ստեր հորինող է: Նա լավ գիտի, որ ճշմարտությունը թաքցնելու լավագույն միջոցը՝ անսանձելի երևակայության միջոցով հնարված ծիծաղաշարժ մանրամասների մեջ այն կորստի մատնելն է:

Իրավացիորեն հարց է ծագում, թե ի՞նչ միջոցով կարող էր հակառակորդը տեղեկացված լինել այն մասին, թե ի՞նչ էր կատարվում Տիգրանի ճամբարում, նրա մերձավորների շրջանում: Եթե ենթադրենք, որ Տիգրանի կարծեցյալ կատակները, նրա երգիծական բառերն իրոք արտասանվել են, ի՞նչպես կարող էին դրանք մատչելի լինել հռոմեացիներին:

Հնարելը միշտ ավելի դյուրին է, քան իրականությունը վերարտադրելը: Գետը, որի ափին բռնկվել է ճակատամարտը, նույնիսկ իր անվամբ չի կոչվել: Արդյո՞ք դա Տիգրիսն է: Այնուամենայնիվ, մեզ ասում են, որ հենց Տիգրանն անցել է Տավրոսը՝ տեսել է հռոմեացիների ճամբարը Տիգրանակերտի առջև: Այսպիսով, հարկ էր, որ նա անցներ Տիգրիսը և իջներ մինչև մայրաքաղաք, որպեսզի կարողանար տեսնել հռոմեացիներին՝ քաղաքի առջև: Բայց այդ ժամանակ Լուկուլլոսը կարիքը չէր ունենա Տիգրանի բանակի վրա հարձակվելու համար Տիգրիսն անցնելու: Հեռևաբար, դեպի արևմուտք գետի թեքվելու և Լուկուլլոսի զորաշարժի մասին մանրամասները բացարձակապես մտացածին են և նպատակաուղղված երգիծական արտահայտությունը հիմնագործ անելուն, որը ցանկացել են վերագրել Տիգրանին: Նույնիսկ Տիգրանի զրույցների շուրջ տեղեկություններ ունենալուն հավակնող հեղինակը պետք է ավելի լավ կողմնորոշվեր այն տեղանքի հարցում, ուր տեղի է ունեցել այն ճակատամարտը, որը խանդավառությամբ տոգորված նրա պատմության մյուսն է: Մինչդեռ, գրվյալ են կտարում հասկանալու, թե որտեղ է տեղի ունեցել ճակատամարտը՝ Տիգրանակերտ քաղաքի առջև, թե Տիգրիսի ափին:

Չորավարը, որն իր հաղորդագրություններում այդքան բծախնդիր է հակառակորդի անձնակազմերի նկատմամբ, սակայն, ինչ վերաբերում է իր ուժերին՝ խիստ անորոշ է, որոնք նա բնորոշում է «առավելագույնը», «շուրջ» բառերով, չի կարող արժանի լինել մեծ հավատի: Ոչ մեկը չի ցանկանում խոստովանել, որ Լուկուլլոսի արշավանքի պատմությունը, որը հիմնվում է անձամբ նրա ռազմական հաղորդագրությունների վրա, միայն

¹ [Plutarchi, Lucullus, 27].

դատարկ սնապարծություն է, այլ ոչ թե իրական ճակատամարտի արժանահավատ նկարագրություն¹:

Լուկուլլոսի պատմության մեջ ցորենը որոմի կույտից զանազանելու համար մեծ պայծառատեսություն ունենալու հարկը չկա: Իրադարձությունները ներկայանում են հետևյալ կերպ: 69 թ. ամռան սկզբին Լուկուլլոսը Տոմիսայի կամրջով անցել է Եփրատը: Եփրատը, թեպետ վարարել էր գարնանային անձրևների հետևանքով, այդուհանդերձ, Լուկուլլոսին ծանոթադուրով անցնելու հնարավորություն է ընձեռել: Դա պարզապես նշածաղուտով անցնելու հնարավորություն է ընձեռել: Դա պարզապես նշածաղուտով անցնելու հնարավորություն է ընձեռել: Դա պարզապես նշածաղուտով անցնելու հնարավորություն է ընձեռել: Դա պարզապես նշածաղուտով անցնելու հնարավորություն է ընձեռել:

Նա մուտք է գործել Շոփը և գահընկեց արել դրա կառավարիչ Միթրոբարզանեսին (Միթրոբարզանեսի փոխարեն): Այդտեղ նա իմացել է իր գաղտնի դաշնակցի՝ Կորդոսի թագավոր Չարքիննոսի մահապատժի մասին: Վերջինիս դավաճանությանը տեղեկացված Տիգրանը՝ թագավորին պատժել էր՝ իր ամբողջ ընտանիքի հետ միասին դատապարտելով մահվան:

Այս լուրը փոխել է Լուկուլլոսի նախնական ծրագիրը, որը Տիգրանի դեմ ուղղված իր գործողությունների ընթացքում հույս էր տաժում հենվել Կորդոսի վրա: Այդ ժամանակ նա ճանապարհ է ընկել դեպի մայրաքաղաք Տիգրանակերտ, որն Արվաստանում էր, «արաբների երկրում» (Մեքստիլիոսը հարձակվել էր Տիգրանի մոտ գնացող արաբների վրա և նրանց լիոսը հարձակվել էր Տիգրանի մոտ գնացող արաբների վրա և նրանց կանգնեցրել)՝ առանց անցնելու Տիգրիսը: Քաղաքը, նրա կարծիքով, այնպիսին էր, որ կարելի էր առանց բարդության դրա վրա գրոհել: Այն գտնվում էր բուն Հայաստանի սահմաններից դուրս և քաղաքի բնակիչներն այլևայլ էր բուն Հայաստանի սահմաններից դուրս և քաղաքի բնակիչներն այլևայլ էր ծագում ունեցող ու տարբեր ցեղերի պատկանող մարդիկ էին, որոնց Տիգրանն իբր կտրել էր իրենց հայրենիքից և տեղավորել իր նոր հիմնադրված քաղաքում: Նույն տարվա հոկտեմբերի 6-ին մենք նրան տեսնում ենք Տիգրանակերտի մերձակայքում բանակած: Ամենևին հարկ չկա պարծենալ սրընթացությամբ, ինչպես այդ հավաստում է Լուկուլլոսի հաճկատար կենսագիրը:

Տիգրանի պետության հարավային սահմանները վստահված էին հավատարիմ մարդկանց: Տիգրանակերտը գտնվում էր Մանկայոսի հրամանատարության ներքո, Մծրինը՝ թագավորի եղբայր Գուրասի, իսկ ամբողջ Ասորիքը արվել էր փոխարքա Բագադատեսին [Բագարատ] (և ոչ Մագադատեսին): Վերջինս, հավանաբար, Բագադատունիների նշանավոր ըն-

տանիքի նախահայրն է: Մանկայոսը, սրբագրված լինելով «Մամանկայոս» ձևով, կարող էր, հավանաբար, լինել նշանավոր Մամիկոնյանների նախահայրը: Հարկ չկա վստահությանը վերաբերվելու այն տեղեկությանը, ըստ որի Լուկուլլոսի ներխուժման պահին Տիգրանը գտնվում էր Տիգրանակերտում: Ապախոսի դեսպանությունը ներկայացել է Տիգրանին Ատիոքում 70 թվականին: 69 թ. ամռանը, Լուկուլլոսի հայտնվելու ժամանակ, Տիգրանը, ամենայն հավանականությամբ, գտնվում էր իր ամառային նստավայրում՝ Արտաշատում, ուր կարող էր գնացած լինել Փյունիկիայում գործերը կարգավորելուց հետո:

Արտաշատում է նաև, որ նա կարող էր հանդիպում ունեցած լինել Միհրդատի հետ, որը սպասում էր Տիգրանին «ճահճոտ և առողջության համար վնասակար վայրում»:

Այս վայրը պետք է լինի Կարին քաղաքը, ապագա Թեոդոսուպոլիսը. դա Պոնտոսին՝ Միհրդատի թագավորությանը մոտ գտնվող վայր է, որի շրջակայքում ճահիճներ կան:

Լուկուլլոսի ներխուժման լուրն ստանալուն պես, Հայոց թագավորը թողել է Արտաշատը և շարժվել հակառակորդին ընդառաջ: Բիթլիսի կիրճով Տավրոսն անցնելուց հետո, Տիգրանը պետք է ուղղություն վերցնեք դեպի Ամիդ քաղաքը՝ այդ ժամանակ մինչև Տիգրանակերտ քաղաքն առաջացած թշնամու վրա թիկունքից հարձակվելու և նրան՝ պաշարումը վերացնել ստիպելու համար:

Տիգրանի ժամանումը բարդացրել է Լուկուլլոսի վիճակը: Նա ռազմական խորհուրդ է հրավիրում: Ոմանք առաջարկել են վերացնել պաշարումը և գնալ դեպի Տիգրանը: Այլը այդչափ հակառակորդներ հետևում թողնելը համարել են վտանգավոր և համառորեն պնդել, որ պաշարումը շարունակվի:

Հռոմեացի զորավարը հայտարարել է, թե երկու կարծիքն առանձին-առանձին վերցրած վատն են, իսկ միաժամանակ՝ լավ:

Մուրենային համձնարարելով շարունակել պաշարումը 6000 հետևակայինի հետ միասին՝ Լուկուլլոսը վերցրել է բանակի մյուս մասը և շարժվել Տիգրանի դեմ: Նա ճամբարել է «մի ընդարձակ հարթավայրում՝ գետի երկայնքով»: Տիգրանը ճամբարել էր «գետի արևելյան ափին»:

Այս իրադարձությունների մասին մեզ պատմող չորս պատմիչներից և ոչ մեկը¹ չի հիշատակում այս գետի անունը, ինչը վկայում է, որ նրանց պատ-

¹ [Հրոմն անընթացել է: - Մ. թ.]

¹ Պլուտարքոս, Ապպիանոս, Մենեն և Փրոնտինոս:

մությունը սկիզբ է առնում մեկ և միևնույն սկզբնաղբյուրից՝ Լուկուլլոսի ստահող հաղորդագրությունից:

Արդի [հետազոտողները] ենթադրել են, որ ճակատամարտը սանձագերծվել է Տիգրանակերտի առջև, քանզի Պլուտարքոսը հիշատակում է, որ պաշարվածները կարող էին ողջունած լինել Տիգրանի ժամանումը և երկու ճամբարները բաժանող գետը Նիկեփորիոնն էր: Դրա հետ չի կարելի համաձայնել: Այս պարագային կարիքը չկար խորհրդակցելու՝ վճռելու համար այն հարցը, թե արդյո՞ք հարկ էր վերացնել պաշարումը:

Ճակատամարտն, անտարակույս, տեղի է ունեցել Տիգրիսի ափերին, սակայն, թե ի՞նչ վայրում, որոշակիություն չկա: Մենք տեղեկացված ենք, որ հայկական ճամբարը գտնվում էր գետի արևելյան ափին: Տիգրիսը հոսում է հյուսիսից հարավ: Տիգրիսի ուղղությունն այսպիսին է՝ դրա ակունքներից մինչև Ամիդ և այնուհետև, սկսած Բոհտանի հետ միախառնումից: Այսպիսով, ճակատամարտի վայրի համար մենք պետք է ընտրություն կատարենք Տիգրիսի՝ Ամիդի մոտ գտնվող ափի կամ երկու Տիգրիսների միացման ափի միջև: [Թ.] Մոնզենը և նրա հետ մեկտեղ Թ. Ռեյնարը հանգել են վերջին ենթադրությանը: Մենք գերադասում ենք առաջին ենթադրությունը և կարծում, որ ճակատամարտը տրվել է Ամիդի մոտ: Եթե Լուկուլլոսը վճռել է հեռանալ Տիգրանակերտից, դրա գլխավոր պատճառը՝ Տիգրանի կողմից իր նահանջի ճանապարհը հատելու մտավախությունն էր: Նրա պարտության պարագային, հռոմեական բանակը պետք է նահանջեր Ամիդ-Մելիտենե ճանապարհով: Հարկ էր մտածել այդ ճանապարհի անվտանգության մասին: Եթե Տիգրանը գար Բոհտանի կողմից, ապա դրանով հռոմեացիների կացության համար որևէ սպառնալիք չէր կարող առաջանալ, և Լուկուլլոսը կարող էր մնալ այնտեղ, որտեղ գտնվում էր: Եթե նա անհրաժեշտ է համարել նահանջել Տիգրանակերտից, ապա այդ արվել է խանգարելու համար Տիգրանին հատելու Ամիդ-Մելիտենե ճանապարհը: Տիգրանն ակնհայտորեն հետևել է Բիթլիս-Մարտիրոսպոլիս ուղղությանը և ճամբարել Տիգրիսի արևելյան ափին՝ Ամիդի արվարձաններում:

Ճակատամարտի նկարագրությունը հեռու է հստակ լինելուց: Այն նկարագրել են Պլուտարքոսը, Ապպիանոսը¹, Մեննոն [Հերակլեացիին]² և Փրոնտինոսը³, սակայն, նրանց տեղեկությունները վերջին հաշվով հիմնված են Լուկուլլոսի հաղորդագրությունների վրա: Վերջինս կանխամտածված չա-

¹ Appiani Mithridaticae, 8.

² Memnon, 57.

³ Frontini II, 2, 4.

փազանցել է Տիգրանի ուժերը, պնդելով, որ հայոց թագավորը Լուկուլլոսի դեմ դուրս էր բերել 250.000 մարդուց բաղկացած մի բանակ, և որ ճակատամարտի դաշտում նա թողել էր 100.000 մ[արդու]։ Մեննոն [Հերակլեացու] մոտ՝ 250.000 հետևակ և 50.000 հեծյալ, Եվտրոպիոսի մոտ՝ 100.000 հետևակ և 7500 զրահավոր զինվոր։ Ըստ Տիտոս Լիվիոսի՝ մեկ հռոմեացին հարկ էր, որ գործ ունենար քսան թշնամու հետ։

Բոլոր այս թվերը երևակայական են, ինչպես նաև ճակատամարտի մանրամասն նկարագրությունն արժանի չէ որևէ վստահության։

Հռոմեացիները Հայաստանի և հայերի մասին տեղեկություններ գրեթե չեն ունեցել։ Լուկուլլոսը չերկյուղելով մերկացումից, կարծել է, թե կարող է բավարարել իր սնապարծությունը՝ ազատություն տալով իր անկաշկանդ երևակայությանը։

Ահա այն, ինչ պատմում են։ Լուկուլլոսն անցել է գետը և առաջինը շարժվել թշնամու դեմ։ Հայկական զրահավոր հեծելազորը, որի հետ մեծ հույսեր էին կապվել, գտնվում էր մի բլրի ստորոտում։ Լուկուլլոսը կարգադրել է թրակացի և գալատացի իր հեծյալներին գնալ և դրան հարվածել թևից ու «հետ նետել հայկական հեծելազորի նիզակակիրներին՝ իրենց սրերի միջոցով»։ Անձամբ ինքը վերցրել է երկու կոհորտա՝ երկու հազար անձանց, և շտապել գրավելու բլուրը։ Հասնելով բլրի գագաթին, նա գոռացել է ամբողջ ձայնով. «Հաղթանակը մերն է»։

Այս կախարդական բառերն արտասանելուց հետո, հռոմեացի զորավարը հարձակվել է զրահավոր հեծելազորի վրա։ Չմոռանանք, որ դրա թվաքանակը ենթադրաբար հասնում էր 50.000-ի։ Նա յուրայիններին կարգադրել է հարվածել հակառակորդի ազդրերին՝ մարմնի միակ մասերին, որոնք զրահով պաշտպանված չէին։ Սակայն, ո՞ւմ համար էր այս խորհուրդը։ Դրանից օգտվելու կարիքը չի եղել, քանզի հակառակորդները բարձր ադադակներով փախել են «ամենամառթալի ձևով», մխրճվել [իրենց իսկ] հետևակի մեջ և ամբողջ զորքը ճողպրել է. «Այսպիսով, մինչև մարտի բռնվելը, հռոմեացիներն առանց վիրավորների, առանց արյան մեկ կաթիլ հեղելու հսկայական բանակը պարտության են մատնել»։

Հնարավո՞ր է արդյոք, որ մի բլրի, «որի թեքությունը հասել է ավելի քան չորս ասպարեզի», այն է՝ յոթ հարյուր քսան մետրի, ստորոտում ճամբարած՝ 250.000 մարդուց բաղկացած հսկայական բանակը չնկատեր, որ թշնամիները ջանում էին գրավել բլուրը։ Արդյո՞ք հավատ է ներշնչում այն, որ 2000 մարդուց բաղկացած զորամասը կարողանար փախուստի մատնել նման սովոր բանակին, որի կազմում հաշվվում էր 50.000 զրահավոր զինվոր։

Որքան մենք դյուրահավատ լինենք, պետք չէ վստահությամբ վերաբերվել նման բնույթի դատարկաբանություններին: Երկուսից մեկը՝ կամ Տիգրանի բանակն այդքան սովոր չի եղել, որքան այն ներկայացնում են, կամ պատմությունն ամբողջությամբ խեղաթյուրված է: Մենք կարծում ենք, որ թե՛ մեկը և թե՛ մյուսը սխալ են:

Պլուտարքոսը թաքցրել է մեծ կարևորություն ունեցող մի փաստ: Լուկուլլոսի հետ բախվելուց առաջ, Տիգրանը Տիգրանակերտ էր ուղարկել 6000 մարդուց բաղկացած մի զորամաս՝ հռոմեացիների կողմից քաղաքի պաշարման ժամանակ, որին հաջողվել է ճեղքել շրջափակումը, նետածիզների բազմությամբ հետ մղելով պաշարողներին մուտք գործել քաղաք և Տիգրան արքայի կանանց ու զանձերը վերցնելուց հետո, հաջորդ օրն այնտեղից դուրս գալ, և ճեղքելով հռոմեական ուժերի գիծը՝ ժամանել Տիգրանի մոտ¹:

Այս դիպվածը տեղիք է տալիս որոշ մտորումների: Նախ այն վկայում է, որ Լուկուլլոսի ներխուժման պահին Տիգրանը Տիգրանակերտում չէր գտնվում, ինչպես հավաստում է Պլուտարքոսը՝ ակնարկելով, որ Տիգրանը լքել է մայրաքաղաքը: Հակառակ դեպքում, նա իր հետ տարած կլիներ իր կանանց և զանձերը: Այնուհետև, եթե Տիգրանն իր տրամադրության ներքո ունենար նույնիսկ 80.000 զինվորից բաղկացած մի բանակ, որը Մեմնոնի հաղորդած ամենամիակեցված թվաքանակն է, նման վտանգավոր և կարևոր առաքելության համար նա կարող էր ուղարկված լինել ավելի քան 6000 մարդ:

Վերջապես, եթե 6000 մարդուց բաղկացած արագաշարժ զորամասը հասու է եղել նման խիզախ արարքի իրականացման համար, ինչո՞ւ պետք է միևնույն բանակի զլխավոր ուժերը թիկունքով շրջված լինեին դեպի հակառակորդը, առանց նույնիսկ համարձակվելու ուժերը չափել նրա հետ: Սա, իրոք որ, առեղծված է, որի լուծումը հարկ է փնտրել Լուկուլլոսի և նրա հաճկատար պատմիչների մոտ:

Միայն Տիգրանի թագավորական խույրի հետ կապված պատմությունը բավական է վարկաբեկելու համար այն ամենն, ինչ պատմում են Լուկուլլոսի և Տիգրանի մասին: Տիգրանի կարծեցյալ խույրը Լուկուլլոսի ռազմավարի մեջ ընդգրկելու համար հնարել են բավականին տափակ և խիստ պարզամիտ մի պատմություն: Տիգրանը, ի սկզբանե, պետք է, որ յուրայինների հետ փախած լիներ ճակատամարտի դաշտից և հանած լիներ խույրն իր զլխից ու արտասվելով այն հանձնած լիներ իր որդուն՝ կարգադրելով փրկվել՝ ինչպես կարող էր: Երիտասարդը չհամարձակվելով

¹ Memnon, 56; Appian, 85.

զլխին դնել խույրը, պետք է, որ այն ի պահ տված լիներ իր ծառային: Ճակատագրի կամքը վերջինս գերի է ընկել: Այս կերպ, Լուկուլլոսը դարձել է խույրի սեփականատերը¹:

Ցանկանում եք դուք ողբերգական տեսարան: Ահա այն: Միհրդատը չէր աճապարում ժամանել՝ ճակատամարտին մասնակցելու համար, ենթադրելով, որ Լուկուլլոսը պատրաստվում է շարժվել իր համար սովորական դանդաղկոտությամբ: Երբ նա տեղեկացել է ջախջախմանը՝ սկսել է փնտրել Տիգրանին, նրան գտել է բոլորի կողմից լքված, խղճալի վիճակում: Միհրդատն այդ ժամանակ իջել է ձիուց, արտասվել նրա հետ միասին ընդհանուր դժբախտության առիթով, նրան է սվել թագավորական շքախումբը և հույս ներշնչել ապագայի համար:

Ո՞րտեղից են սկիզբ առնում այս գայությունը, անողորությունը, մոլեգնությունը, որոնք կյանքի են կոչում Տիգրանին վերաբերող տափակ գրույցները: Եթե Լուկուլլոսը հաղթել է հայոց թագավորին, նա, ինչպես և բոլոր հաղթողները, կարիք չէր կարող ունենալ իր պարտված հակառակորդի նկատմամբ այդպիսի շարությանը լցվելու:

Կան որոշ բաներ, որոնք վրիպում են մեր հասկացողությունից: Այսպես լեոհանում են շարամաղծությունից, եթե մարդու բերանը գելարանակով է փակված: Արդյո՞ք Տիգրանը հռոմեացի զորավարին պատճառել էր որոշ անախորժություններ:

Մեզ թվում է, որ Տիգրանի [զինված] ուժերի չափազանցությունը հարկ է ընկալել ավելի շուտ հակառակ իմաստով, այն է՝ Լուկուլլոսի հետ ռազմական ընդհարման պահին Տիգրանը չի ունցել մեծ թվով [զինված] ուժեր: Իր հաջողությունը շահավետ լույսի ներքո ներկայացնելու համար, Լուկուլլոսը, հավանաբար, չափազանցել է այն զորքերի թվաքանակը, որոնց հետ վիճակված էր մարտնչել:

Արևելքի կայսրությունները չեն ունեցել [մշտական գործող] կանոնավոր բանակ, քանի որ զորքերը միշտ գտնվել են մարտական վիճակում: Պարսկաստանի թագավորներն իրենց տրամադրության ներքո ունեին միայն մեկ զորամաս, որը կոչվում էր «անմահ» և բաղկացած էր պահակազորից և այն միակ ջոկատից, որը միշտ պատրաստ էր նրանց ծառայել: Այս զորամասի հրամանատարը կոչվում էր hazarapati՝ հազարապետ կամ խիլիարքոս: Արեմենյանները, Պարթևները, Սասանյանները, ինչպես նաև հայ Արշակունիները, ունեին հազարապետի պաշտոն: Անմահների զորամասը հա-

¹ Plutarch, Lucullus, 28.

յերեն կոչվում էր «մատյան գունդ», ինչն, անկասկած, փոխառություն է պարթևերենից:

Տիգրանը թողել է Արտաշատը՝ 10.000-ից բաղկացած իր պահակազորի ուղեկցությամբ: Եթե մարերի և ադիաբենցիների թագավորները եկել էին նրա հետ վերամիավորվելու, ինչպես հավաստիացնում է Պլուտարքոսը, ապա նրանց պահակազորը չէր կարող գերազանցել 10.000-ը: Տիգրանի պահակազորի հետ մեկտեղ՝ [հայերը] կարող էին ունեցած լինել 20.000 զինվոր: Կարելի է հավելել նաև արքունիքին կցված հայ որոշ իշխանների ռազմական ջոկատները: Լուկուլլոսին վիճակված էր դեմ հանդիման ելնելու մի բանակի, որը բյուրեր բացարձակապես չէր ընդգրկում: Իրականության զգացողություն ունեցող Մեմնոնն անհրաժեշտ է համարել Լուկուլլոսի հաղորդած 250.000-ի հասնող անհավանական թվաքանակը նվազեցնել 80.000-ի, այն է՝ մեկ երրորդով: Միևնույն պատճառով կարելի է նվազեցնել նաև Մեմնոնի հաղորդած թվաքանակը:

6000 մարդուց բաղկացած մի մասն անջատվել է հատուկ առաքելության համար: Տիգրանի բանակը չէր կարող շատ ավելի բազմաքանակ լինել, քան իր հակառակորդի բանակը (24):

Թվում է, թե Լուկուլլոսը Տիգրանի վրա հարձակվել է անսպասելիորեն և առավելություն է ձեռք բերել, հավանաբար, հաջողակ մարտավարության շնորհիվ: Նրա հաղթանակն, այդուհանդերձ, ջախջախիչ չի եղել¹: Տիգրանի նահանջը հուսակառու փախուստի բնույթ չէր կրում, ինչպես հավաստում է անձամբ ինքը [Լուկուլլոսը] կամ նրա պատմիչը: Եթե այն այդպիսին լիներ, դժվարությամբ է ըմբռնելի, թե ինչո՞ւ այդ ժամանակ հաղթողը փախուստի մատնված բանակը չի օղակել առավել մոտ տարածությունից՝ Հայաստան մուտք գործելու և մեկ հարվածով նրանց աղետն ավարտին հասցնելու համար: Ինչը կարող է ավելի ոյուրին լինել, քան առանց փորձության ենթարկվելու հետապնդելն այն մարդկանց, «որոնք փախչում էին սարսափով և երկյուղով համակված»: Այդ դեպքում նա կարող էր առավելություն ձեռք բերած լինել սրընթացության շնորհիվ, որով զուր հպարտանում էր՝ «ամենանշանավոր և ամենահզոր թագավոր Տիգրանին» հաղթելու համար:

Պարտվածի հետքերով գնալու փոխարեն Լուկուլլոսը թույլատրել է նրան հանգիստ նահանջել, վերադառնալ և նախապատրաստություններ տեսնել հաղթողին վատրելու համար: Լուկուլլոսը գերադասել է վերադառնալ Տիգրանակերտ: Եթե հարկ լինի դատել զորավարի մասին՝ ըստ

նրա արարքների, այլ ոչ թե ըստ նրա խոսքերի, պետք է մեծ վերապահությամբ վերաբերվել այն ամենին, ինչ պատմում են Տիգրանի հետ Լուկուլլոսի առաջին հանդիպման մասին, եթե ոչ լիովին անուսել այս ամբողջ պարծենկոտությունը:

Տիգրանակերտում [վարձկան] հույն զինվորները լի էին Տիգրանին դավաճանելու վճռականությամբ: Քաղաքի կառավարիչ Մանկայոսը՝ Մամիկոնյանների նախահայրը, նրանց զինաթափել է: Մակայն, այդ նախազգուշությունը խիստ ուշացած էր: Մանկայոսը ցանկանում էր նրանց սրի քաշել, երբ հայտնի է դարձել, որ նրանց պահակազորին վստահված գոտին արդեն հանձնվել է թշնամիներին: Լուկուլլոսը մուտք է գործել Տիգրանակերտ բաց դռներով: Նա քաղաքը գրոհով գրավելու կարիքն այլևս չի ունեցել, ինչպես հավաստիացնում է Պլուտարքոսը, այն գրավվել է ի զին դավաճանության:

Լուկուլլոսը հափշտակել է այնտեղ գտնվող թագավորական գանձերը և քաղաքը հանձնել իր զինվորների կողայուստին: Նա անձամբ հափշտակել է 8000 տաղանդ դրամով (8000×6000 = 48 միլիոն ֆր[անկ]) և, բացի դրանից, յուրաքանչյուր զինվոր ստացել է 800 դրաքմե, ինչը կազմում է գրեթե 15 միլիոն ֆր[անկ]՝ 18.000 զինվորի հաշվարկով:

Լուկուլլոսն իրենց հայրենիք է վերադարձրել հույներին և այլ բարբարոսներին, որոնց [Տիգրանը] պարտադրել էր գալ և բնակություն հաստատել իր նոր մայրաքաղաքում: Նրանց մույնիսկ մատակարարել են ճանապարհորդության ընթացքում. «Այսպիսով, մի քաղաքի ավերումը բազմաթիվ քաղաքների վերածնվելու հնարավորություն տվեց», - նշում է Լուկուլլոսի պատմիչը և չի վարանում նրան փաղաքշել իբրև բարեգործի և հիմնադրի: Անկողմնակալ և ավելի ուղղամիտ դիտորդը կարող էր զորավարին մեղադրած լինել այս հրեշավոր ավերման և ամայացման համար:

Տիգրանը հրավիրել էր մեծ թվով դերասանների՝ [մայրաքաղաքում] իր կառուցած թատրոնի հանդիսավոր բացման համար: Լուկուլլոսը դրանից օգտվել է իր հաղթանակը նշելու համար՝ խաղերի և ներկայացումների միջոցով:

Արբեցած իր վաղանցիկ հաջողությամբ, Լուկուլլոսը երազում էր ուժերը չափել նաև պարթևների թագավորի հետ, հուսալով պարծենալ այն բանով, որ միայն մեկ ռազմարշավի ընթացքում մեկը մյուսի հետևից մարտնչել է երեք թագավորների հետ:

Արաբներից, ծովացիներից, կորովացիներից հետո, որոնք եկել են հայտնելու իրենց հպատակության մասին, ժամանել է մի պատվիրակություն պարթևների թագավորի կողմից, որը հռոմեացիներից հայցում էր

¹ Տիտոս Լիվիոսը, Օրոգիոսը և Փրոմիսիոսը գտնում են, որ Միհրդատը մասնակցել է այս ճակատամարտին:

բարեկամություն և դաշինք: Լուկուլոսը դրականորեն է պատասխանել՝ պարթևների մոտ պատվիրակություն ուղարկելով:

Սակայն, պարզվել է, որ պարթևների թագավորը միաժամանակ Տիգրանից *համեստորեն* խնդրել էր Միջագետքը՝ իբրև նրա հետ դաշինքի փոխհատուցում:

Այդ ժամանակ է, որ Լուկուլոսը վճռել է զնալ պարթևների դեմ՝ արժանանալու համար «արևի տակ երբևէ գոյություն ունեցած երեք ամենահզոր թագավորներին հաղթողի դափնիներին»:

Այդուհանդերձ, հավակնոտ զորավարին վիճակված չէր իրականացնել այդ «համեստ» ձգտումը: Չորքերը հրաժարվել են հետևել նրան: Հարստացած զինվորները ցանկանում էին միայն անվտանգություն և հանգստի պայմաններում իրենց ռազմավարը վայելելու հնարավորություն ունենալ: Լուկուլոսի համբավը փրկելու համար չի խնայվել նույնիսկ հռոմեացի լեգեոնականների պատիվը:

Եթե հարստությունը կարող էր զինվորներին դարձնել ռազմական գործի նկատմամբ անտարբեր, ապա Լուկուլոսը պետք է լիներ դրա առաջին զոհը: Կուտակած լինելով անհամար զանձեր՝ նա, հավանաբար, ամենաշահագրգռվածն էր հանգստի հարցում՝ կարողանալու համար արվել հաճույքների: Ճիշտ չի լինի դրա համար զինվորներին մեղադրելը և պատասխանատվությունը նրանց վրա բարդելը: Մենք կտեսնենք, թե միևնույն զինվորներն ինչպես են համախմբվում Պոմպեոսի դրոշի ներքո:

Իրականում, պարթևների դեմ ուղղված փառաձույթ ծրագիրը Լուկուլոսին չի անհանգստացրել: Նա ջանացել է ձեռք բերել պարթևների թագավորի դաշնակցությունը և նրան ուղղել Տիգրանի դեմ: Նա մատնվել է անհաջողության և հարկադրված է եղել միայնակ վերստին ուղղություն վերցնել դեպի Տիգրանը:

Տիգրիսի ափերին ճակատամարտը տեղի է ունեցել 69 թ. հոկտեմբերի 6-ին: Լուկուլոսը ձմեռն անց է կացրել Տիգրանակերտում՝ որտեղ նրա իրական կամ կարծեցյալ հաղթանակի առիթով կազմակերպվել են տոնակատարություններ:

68 թ. ամռան կեսին նա անցել է Տավրոսը և զնացել բանակելու Արածանի գետի ափին: Պատմիչների տեղեկություններն այս արշավանքի շուրջ նույնքան աղոտ են, որքան առաջինի: Վստահություն չկա առ այն, որ նրանք կարող էին լավ տեղեկացված լինել այն ամենի շուրջ, ինչ տեղի է ունեցել, չնայած ավելորդ մանրամասներին, որոնցով առկեցուն է նրանց պատմությունը: Տավրոսի ստորտի արտերը դեռևս կանաչ էին՝ օդի սառնության պատճառով: Լուկուլոսն իջել է հարթավայր, հայերի կողմից

ենթարկվել անհաջող հարձակման, անկաշկանդ կողոպտել է գյուղերը, հափշտակել Տիգրանի համար նախատեսված ցորենի պաշարները և հակառակորդին սովի մատնել:

Խոստովանելուց հետո, որ հայերը համարձակվել են հարձակվել նրա վրա, և որ նա ետ է մղել նրանց կրկնվող հարձակումները, [պատմագիրները] հավաստում են, առանց մտահոգվելու [առաջացող] հակասությունների մասին, որ Լուկուլոսը նրանց դրոշմ էր մարտի, սակայն, նրան չի հաջողվել «բազմիցս պարտված» հայկական զորքերին դուրս բերել անգործությունից:

Այսպիսով, նա մեկնել է՝ ընտրելով Արտաշատի՝ Տիգրանի թագավորական ոստանի ճամապարհը, նրա հետ մարտնչելու համար: Հռոմեացի զորավարը գնում էր դեպի Արտաշատ, երբ Տիգրանը՝ իր բանակի գլուխն անցած չորս օրում եկել է և բանակել հռոմեացիների առջև: Այս անգամ ևս հակառակորդների ճամբարները բաժանված էին գետով, որն էր Արածանին: Արտաշատ հասնելու համար Լուկուլոսին անհրաժեշտ էր անցնել այս գետը: Նրա տասներկու կոհորտաներն առաջին գծում, և այլք մեկը մյուսի հետևից անցել են Արածանին: Այնտեղ էին շարված Տիգրանի ընտիր զորքերը, բազմաքանակ հեծելազորի հետ մեկտեղ, նրա հետ էր մակ ձիավոր նետաձիգ մարտի, նիզակակիր իբերների զորքը, որին Տիգրանն ամենից շատ էր վստահում: Սակայն, այս օտար զորքը չի արդարացրել արքայի վստահությունը: Հռոմեական հեծելազորի հետ թեթև ընդհարումից հետո, մարերն ու իբերները թիկունքը շրջել են և ճողոպրել: Այդ ժամանակ, առաջ է շարժվել Տիգրանի հեծելազորը, որն ահագոտ էր իր շքեղությամբ և քանակով: Արքան ղեկավարում էր իր լավագույն զինվորներին՝ սակասեցներին: Լուկուլոսը ետ է կանչել հետապնդող իր հեծյալներին և նրանց հետ շարժվել դեպի Տիգրանը: Մինչև ձեռնամարտի դիմելը, նա նրան ահաբեկել է և փախուստի մատնել:

Ավելացնում են, որ «ճակատամարտին մասնակցած երեք թագավորներից ամենախայտառակ ճողոպտողը եղել է Պոնտոսի թագավոր Միհրդատը. նա չի դիմացել հռոմեացիների մարտական աղաղակներին»:

Հաղթողին մնում էր միայն հետապնդել փախուստի մատնված բանակը, սպանել, գերեվարել և տիրանալ ավարին: Նրանք այդպես են վարվել ամբողջ զիշերվա ընթացքում:

Վերջաբանը, սակայն, եղել է նույնքան տխուր, որքան առաջին ճակատամարտի ժամանակ: Իր հաղթանակով քաջալերված Լուկուլոսը խորհում էր ավելի առաջ ընթանալու և թշնամուն ամբողջությամբ ջախջախելու մասին: Սակայն, այս անգամ նրան խանգարել են անսպասելիորեն վրա

հասած ուժգին ցրտերը: Դա աշնանային գիշերահավասարի պահն էր: Չիերը չէին կարողանում ջուր խմել սառցակալած գետակներից և կամ անցնել գետերը, քանի որ սառույցը հանկարծ կտրվում էր և իր սուր ծայրով կտրում ձիերի մկանների ջլերը: Ձիեմորները հարկադրված էին քայլել ձյունով լեցուն արահետներով, ինչը նրանց վերջապես դրդել է ապստամբելու: Ճակատամարտից մի քանի օր անց նրանք ապստամբել են: Լուկուլլոսը զուր էր նրանց խնդրում համբերությամբ զինվել մինչև այն պահը, երբ կկարողանան ավերել Հայաստանի Կարբեդոնը՝ Արտաշատը: Նրա թախանձագին խնդրանքները մնացել են անօգուտ: Չորավարը նրանց դառնությամբ հետ է տարել, այլ ճանապարհով անցել Տավրոսն ու իջել Միդդոնիա, ուր գտնվում էր Մծբին մեծ քաղաքը, որը հույներն անվանում էին Միդդոնիայի Անտիոք:

Այս պատմության մեջ, որն, անտարակույս, ծագում է Լուկուլլոսի հաղորդագրությունից և կրում նրան բնորոշ անհամեստության կնիքը, կան խիստ կասկածելի հանգամանքներ, որոնք հնարավոր չէ թաքցնել: Երթուղին ամենևին հստակ չէ: Ճակատամարտի վայրը ևս թվում է անորոշ, ինչպես նաև առաջին ճակատամարտին: Տիգրանակերտից Արտաշատ գնալու համար հարկ էր անցնել Տավրոսը և դա այդպես է: Բայց արդյո՞ք կարիքը կար անցնելու Արածանի գետը: Եթե Տիգրանի հետ հանդիպումը կայացել է, ինչպես կարծում են արդի [հետազոտողները], Մանակերտի մոտ, Լուկուլլոսը կարիք չէր ունենա ճակատամարտ սկսելու համար անցնել գետը: Այն ճանապարհը, որը Մուշի հարթավայրից, ուր գտնվում էր Լուկուլլոսը Տավրոսից իջնելուց հետո, ձգվում էր դեպի Արտաշատ, անցնում էր Մանակերտ-Դիադին գծով: Դեպի Արտաշատ գնացող Լուկուլլոսը հարկն ուներ միայն հետևելու այս ուղղությանը, առանց անցնելու Արածանին: Նույնը վերաբերում է Տիգրանին: Եթե նա իջել է Արտաշատից մինչև Մանակերտ, պետք է գտնվեր միևնույն ասիին, որտեղ Լուկուլլոսն էր:

Սակայն, մեզ հաղորդում են, որ գետը բաժանում էր երկու ճամբարները: Այս պատճառով, հարկ է ընդունել, որ Լուկուլլոսն առաջ էր ընթացել մինչև Բագրեվանդի (այսօր)՝ Ալաշկերտի) սահմանը և ճամբարել Արածանիի արևելյան բազուկի հարավային ասիին, այսօրվա Ուլ-քիլիսեյի [Բագավան] մոտ:

Չորս օրում Արտաշատից եկած Տիգրանը կարող էր բանակած լինել հակադիր ասիին: Նրա ճանապարհն անցնում էր Արարատի լեռնաշղթայով՝ Իգդիր-Արծափ գծով, միակը, որն Արաքսի հովիտը կապում էր Արածանիի հովտի հետ: Իհարկե, բանակի համար անհնար է չորս օրում Արտաշատից

գնալ Մանակերտ: Այն հազիվ կարող էր հասնել Բագրեվանդի հարթավայր:

Այնուհանդերձ, հավաստի չէ, թե Լուկուլլոսը կարող էր առաջ ընթանալ այդքան հեռու, և որ նա, իրոք, շարժվել է դեպի Արտաշատ: Իսկ այն, ինչ լսում ենք Հայաստանում տարվա եղանակի մասին՝ իր անճշգրտությամբ կարող է մեր հավատը սասանել տեղեկությունների արժանահավատության հանդեպ:

Աշնանային գիշերահավասարի ժամանակաշրջանը, սեպտեմբեր ամիսը, համընկնում է Հայաստանում տարվա լավագույն եղանակներից մեկին, ինչը հակասում է այն ամենին, ինչ հաղորդում է մեր սկզբնաղբյուրը: Ամեն դեպքում, ցրտի չափից դուրս լինելու վտանգի հավանականությունը բացառվում է, տարվա այդ եղանակին Հայաստանում հնարավոր չէր լինի հանդիպել ո՛չ սառած գետերի, ո՛չ սառած մարդկանց, ո՛չ ձյունածածկ արահետների:

Իր նահանջն արդարացնելու համար, որի իրական պատճառը հարկ է դեռևս փնտրել, հռոմեացի զորավարը նպատակահարմար է գտել պատասխանատվությունը բարդել անբարեհաճ եղանակի և դրանով մեկնաբանված՝ անհնազանդ զինվորների վրա:

Եթե մենք չենք ցանկանում մեր հեղինակին մեղադրել մնան լուրջ սխալ թույլ տալու համար, հարկ կլինի ընդունել, որ հայերի հետ Լուկուլլոսը պետք է, որ գործ ունեցած լիներ ոչ թե Բագրեվանդում, այլ որևէ այլ տեղ՝ լեռներում, որտեղ օդն ավելի խստաշունչ է, շատ ավելի սառը, քան հարթավայրերում: Այս լեռները կարող էին լինել միայն Բինգյուլի զանգվածները (Մտրաբոնի Արսը): Ընդունելով այս՝ Լուկուլլոսի արշավանքը կներկայանա այլ լույսի ներքո: Նրա մտադրությունը հանգում էր ոչ թե դեպի Արտաշատ, այլ Հայաստանի վրայով դեպի Պոնտոս՝ իր զորավար Մոնատիոսի մոտ գնալուն: Այս պարագային, Տավրոսի վրայով Մուշի հարթավայր իջնելուց հետո, նա պետք է անցներ Արածանին և Բինգյուլով ճանապարհի հարթեր դեպի Կարենիտիսի (այսօր՝ Էրզրում) տարածաշրջան, իսկ այնտեղից՝ դեպի Պոնտոս: Այս կերպ կարելի է արդարացված համարել գետի անցումին և տարվա վատ եղանակին վերաբերող հիշատակումը:

Ճակատամարտը, որին առնչվում է խոսքը, կարող էր տրված լինել [Արածանի] գետից այն կողմ, լեռների լանջի վրա: Թվում է, թե Լուկուլլոսն ավելի շուտ տանուլ էր տվել, քան հաղթանակ շահել, ինչը կարող էր լինել նրա նահանջի իրական պատճառը: Ճիշտ կլինի անվստահությամբ վերաբերվել հաղթանակին, որի հետևանքով երեք թագավոր՝ Տիգրանը,

մարերի թագավոր Միհրդատը և Պոնտոսի թագավոր Միհրդատ [Եվպատորը], ինչպես փորձում են դրա հանդեպ հավատ ներշնչել, կարող էին մատնված լինել փախուստի, իսկ Պոնտոսի թագավորը՝ ամենախայտառակ ձևով առաջինը թիկունքը շրջած լիներ¹:

Ուշադրության է արժանի այն, որ հենց Միջագետք վերադառնալու համար Լուկուլոսը հարկադրված էր ընտրել այլ ճանապարհ: Այն ճանապարհը, որն Արածանիի հովտից՝ Տավրոսի վրայով ձգվում է Միգդոնիա, անցնում է Բիթլիսի կիրճով: Լուկուլոսն, այսպիսով, Արածանիի հովիտ մուտք գործելու համար հետևել էր այլ ճանապարհի: Դա պետք է լիներ Ամիդ-Բալու գիծը կամ Ամիդ-Մարտիրոպոլիս-Սասուն գիծը, որը Բիթլիսի կիրճից հեռու չէ²:

Վերադառնալով Միջագետք, Լուկուլոսը կանգ է առել կորդվացիների մոտ, որոնց թագավոր Չարբինոսը՝ իր տիրոջը՝ Տիգրանին դավաճանելու համար՝ ամբողջ ընտանիքի հետ մեկտեղ մահվան էր դատապարտվել: Լուկուլոսը մշել է իր դաշմակցի հիշատակը շքեղ հուղարկավորությամբ և կառուցել է տվել թանկարժեք դամբարան: Հավանաբար, բարեկամ ժողովրդի մոտ գալու համար է, որ Լուկուլոսը փոխել է իր ճանապարհը՝ իջնելով Միջագետքի հարթավայր: Բարեկամական ընդունելությունը չի խանգարել Լուկուլոսին կողոպտելու Չարբինոսի ապարանքը և հափշտակելու գանձերն ու 300 հազար մեդիան գորեմը, որն ամբարված էր այդտեղ:

Լուկուլոսի հաջողությանն առնչվող վերջին գործողությունը եղել է Մծբինի գրավումը: Ուժերը Կորդոսում վերականգնելուց հետո, հռոմեացի զորավարը եկել է պաշարելու Մծբինը: Քաղաքը գտնվում էր Գուրասի՝ Տիգրանի եղբոր, հրամանատարության տակ: Քաղաքի պաշտպանությունը հանձնարարվել էր ճարտարագետ Կալլիմաքոսին, որը Լուկուլոսի համար մեծ խոչընդոտներ էր հարուցել դեռևս Ամիսոսի պաշարման ժամանակ: Կայազորն արհաբար ետ է մղել հռոմեացիների հարձակումները, սակայն, տարվա վատ եղանակի պատճառով այն դարձել է նվազ զգոն: Փոթորկալից մի գիշեր Լուկուլոսը գրոհել է և գրավել քաղաքը³:

Այս պահից ի վեր, Լուկուլոսի կարիերան մոտենում է ավարտին: Բախտը նրանից շրջվում է մեկընդմիջտ: Բանակը հրաժարվում է հետևել նրան: Սա խիստ տարօրինակ է: Հաղթանակած բանակը երբեք չի լքում իր զորավարին, եթե նա իրոք նպաստել է նրա ռազմական սխրանքներին: Վատթարագույնն այն էր, որ նույնիսկ Հռոմում դժգոհում էին Լուկուլոսից: Նրան մեղադրում էին հրամանատարի դիրքը չարաշահելու և շահասիրության համար պատերազմը ձգձգելու, Տիգրանի թագավորական նստավայրերը կողոպտելու համար, «կարծեք թե նրան այնտեղ էին ուղարկել թագավորներին կողոպտելու, այլ ոչ թե նրանց դեմ պատերազմելու համար»:

Բախտի շրջադարձը բացատրելու համար Լուկուլոսի պատմիչը նշում է. «Ինչ վերաբերում է զինվորների անբարյացակամությանը, ապա դա նրա վատ բնավորության հետևանքն էր»: Այդքան զովեստներ շայտելուց հետո Լուկուլոսի «բարի և շատ լուսավորյալ հոգու» հասցեին, նա հարկադրված է խոստովանել, որ զորավարն ամենևին հեզ բնավորություն չուներ, և որ «նա արհամարհանքով էր վերաբերվում բոլորին և ուրիշներին դիտում էր, իր համեմատությամբ՝ իբրև ոչնչությունների»: Երբ Լուկուլոսը Տիգրանին ներկայացնում է իբրև շքեղություն սիրող փառասերի, գոռոզի, ժլատի և եսասերի՝ նա հանձին Տիգրանի տեսել և ուրվագծել է իր դիմապատկերը:

Լուկուլոսի հանդեպ ատելությունը համընդհանուր էր: Նույնիսկ նրա աներորդին՝ մեծ Պուրլիոս Կլավդիոս (25), որն այդ ժամանակ հավանաբար գտնվում էր Լուկուլոսի բանակում, գոհ չլինելով իր զբաղեցրած դիրքից, սկսել է զորքերին գրգռել և սաստկացնել նրանց անհնազանդությունն ընդդեմ Լուկուլոսի: Այս երիտասարդը, ինչպես և նրա քույրը՝ Լուկուլոսի կինը, արատավոր բարքերի տեր էին: Վերջինիս մեղադրում էին իր եղբայրների հետ մեղսալի հարաբերության մեջ գտնվելու համար: Չորավարի մայրը ևս վատ համբավ էր վայելում: Չինվորների գրգռվածությունն այն աստիճանի էր հասել, որ նրանք իրենց դատարկ քսակները նետում էին Լուկուլոսի առջև՝ նրան ասելով, թե թո՛ղ ինքը միայնակ մարտնչի թշնամիների դեմ, որոնց հարստությունը յուրացրել էր միայնակ:

Ըստ Լուկուլոսի հանձնիչ թվացող ուղերձների՝ Հռոմում կարծում էին, թե Տիգրանը և Միհրդատը գլխովին ջախջախվել են, երբ այստեղ վրա է հասել լուրն այն մասին, որ այս երկու թագավորները ոչ թե պարտվել էին, այլ ասպատակում էին Կապադովկիան ու Պոնտոսը: Իսկույն ևեթ Լուկուլոսին կարգադրում են իր լիազորությունները հանձնել Պոմպեոսին, որը պետք է

¹ Ըստ Փլեզոն Տրալլացու (*fr. 12*)՝ Տիգրանի կորուստները հասել են 5000 սպանվածի (*C. Müller, Fragmenta historicorum graecorum, t. III, p. 606*): Հետաքրքիր է, որ Ապպիանոսը չի հիշատակում Արտաշատի մասին և նշում է միայն հեծելազորի մարտի մասին (*Mithridatica, 87*): Դիոնիս հայտնի չէ մարտի վայրը (36,7): Ամեն ինչ դրոշմ է կարծելու, որ Պրոտարքոսը չափազանցել է արշավանքի նշանակությունը:

² Ըստ Մեքստոս Ռուփոսի՝ Լուկուլոսը վերադարձել է Միլիտենով:

³ Գրավումը հիշատակել է Եվսեբիոսը (*Chronicon, v. II, 135, ed. A. Shoene, Berlin, 1875*):

հաջորդեր նրան: Սպասելով Պոմպեոսին, Լուկուլլոսը ճամբարել է Կոր-
դուբում՝ 68-67 թթ. ձմեռն այդտեղ անցկացնելու համար¹:

Արածանիի ճակատամարտն այնպիսի բարեպատեհ հետևանքներ չէր
ունեցել Լուկուլլոսի համար, ինչպես դրանք ներկայացնում են, իսկ իրա-
դարձությունները ծավալվել են բոլորովին այլ կերպ. այդ մասին կարելի է
դատել ըստ այն բանի, որ Տիգրանը և Միհրդատը իսկույն Լեթ հարձակման
են անցել և ասպատակել՝ մեկը Փոքր Հայքն ու Պոնտոսը, մյուսը՝ Շոփքը:

Միհրդատն անցել է Եփրատը՝ 8000 մարդուց բաղկացած հայկական մի
գործնասի գլուխն անցած: Բնակչությունը նրան դիմավորել է ուրախու-
թյամբ. օտարի տիրապետությունից վրդովված՝ այն ասպատամբել է և
կոտորել երկրում ցարուցրիվ եղած հռոմեացիներին: Առաջին ճակա-
տամարտը տրվել է Կաբիրայի, երկրորդը՝ Գազիուրայի մոտ: Հռոմեացի
գորավարներ Ֆաբիոսը և Տրիարիոսը պարտվել են և կորցրել 7000 զինվոր,
24 զինվորական տրիբուն ու 150 ցենտուրիոն:

Քիչ անց Կապադովկիայում հայտնվել են Տիգրանը, նրա փեսա
Միհրդատը՝ Մարաստանի թագավորը, և մեկ անգամ ևս վտարել Արիո-
բարզանես թագավորին:

Լուկուլլոսը, որը «պատրվակ բռնելով ձմեռը»՝ ճամբարել էր Կորդուբում,
հենց որ լուր է ստացել Միհրդատի՝ Սոռնատիոսի և Տրիարիոսի հետ
մարտնչելու նախապատրաստությունների մասին, ճանապարհ է ընկել
դեպի Պոնտոս՝ նրանց օգնելու համար: Մինչև Լուկուլլոսի ժամանումը՝
«հաղթանակը կորզելուն նախանձախնդիր» Տրիարիոսը մարտի է բռնվել և
Գազիուրայում պարտվել:

Լուկուլլոսը ժամանել է մի քանի օր անց: Միհրդատը չի ցանակցել
մարտնչել, նա սպասում էր Տիգրանին, որը գալիս էր մեծ բանակի հետ
միասին:

Լուկուլլոսը վճռել է գնալ Տիգրանին ընդառաջ և խանգարել նրան միա-
նալու Միհրդատին: Սակայն, զորքերը հրաժարվել են նրան հետևել:
Ջորավարին մնում էր միայն սպասել իրեն հաջորդող Պոմպեոսին և նրան
փոխանցել իր լիազորությունները: Երկու գորավարների հանդիպումը տեղի
է ունեցել Գալատիայում գտնվող մի գյուղում: Նրանք միմյանցից բա-
ժանվել են ավելի, քան երբևէ թշնամացած: Լուկուլլոսի ռազմական

¹ Plutarchi, Lucullus, 33. Այն, ինչ Պլուտ[արքոսը] պատմում է Լուկուլլոսի Կորդուբ
կատարած այցի մասին (23-րդ գլխում), չի առնչվում 69-68 թթ. ձմեռնը, այլ շատ ավելի ուշ՝
68-67 թթ. ձմեռնը, այն է՝ Լուկուլլոսը մուտք է գործել Կորդուբ Մծրինի գրավումից և ոչ Տիգ-
րանակերտի ճակատամարտից հետո:

հրահանգները հռչակվել են անվավեր: Պոմպեոսը Լուկուլլոսից վերցրել է
նրա զորքերը և թողել միայն 1600 զինվոր՝ նրա հաղթահանդեսի համար:

Լուկուլլոսը գլխահակ ուղևորվել է Հռոմ: Դրանից հետո նա լքել է քա-
ղաքական կյանքը, գնացել իր պերճաշուք ասպարանքները և ապրել ինչպես
մի նորահարուստ՝ վատնելով իր արշավանքների ընթացքում թալանած ան-
համար հարստությունները: Ստոիկ Տուրբերոնն իրավացի է եղել, երբ նրան
անվանել է «տոգա կրող Քսերքսես»:

Լուկուլլոսի կենսագրությունում, ինչպես հարկադրված է խոստովանել
նրա պատմիչը, «ասես հին կատակերգությունում, սկզբում կարդում ես պե-
տական ու ռազմական գործերի մասին, իսկ վերջում՝ զինարքունների,
խնջույքների, երգերով ու ջահերով կատարվող հարբած երթերի և, ընդ-
հանրապես, ամեն կարգի զվարճանքների մասին»:

Նախքան գերեզման իջնելը Լուկուլլոսը կորցրել է մտավոր ունակու-
թյունները և պատմությանը թողել ոչ այլ ինչ, եթե ոչ լուկուլլոսյան խրախ-
ճանքների մասին հուշը: Այսպիսին է եղել Արևելքի երեք ամենահզոր թա-
գավորներից՝ կարծեցյալ հաղթողի տխուր վախճանը:

Պոմպեոսը բեմահարթակ է բարձրացել իր նախորդին հանդիմանելով՝
պատերազմ մղելու համար երկու թագավորների թվացյալ փառքի և
համբավի դեմ, մինչդեռ նրանց իրական հզորության դեմ դեռևս հարկ էր
մարտնչել: Լուկուլլոսը, փոխարենը, կարծում էր, որ Պոմպեոսը եկել է
կռվելու սովերի հետ, ինչպես թշունը, որը նետվում է այլոց կողմից
սպանված աճյունների վրա¹:

Անվիճարկելի էր, որ Լուկուլլոսի կարծեցյալ նվաճման պատրանքը
ցրվել էր ինչպես մշուշը: Հռոմեական արծիվները հարկադրված էին եղել
նահանջել Եփրատից այն կողմ, վերադառնալ իրենց ելման դիրքերը:

66 թ. գարնանը Պոմպեոսը ստանձնել է բանակի հրամանատարու-
թյունը: Լինելով ավելի խորաթափանց, քան Լուկուլլոսը, Պոմպեոսը նախ
ջանացել է թշնամու ճամբարը մասնատել հռոմեական մեթոդով՝ *divide et
impera* (26):

Նա Միհրդատին առաջարկել է հաշտություն՝ նրան, անկասկած, Տիգ-
րանից վանելու համար: Միաժամանակ, նա դեսպանություն է ուղարկել
պարթևների թագավոր Հրահատ [III]-ի (70-57) մոտ՝ առաջարկելով նրան
դաշինք կնքել և փոխարենը խոստանալով՝ Եփրատի սահմանը: Այս
խոստումն ուներ միայն մեկ նպատակ՝ մեկուսացնել Տիգրանին: Իր հերթին
Միհրդատ Պոնտացին հույս չունենալով, որ կարող է Տիգրանին նոր արկա-

¹ Plutarchi, Pompeius, 31.

ծախնդրության մեջ ներքաշել, նույնպես փնտրում էր պարթևների աջակցությունը:

Հրահատն իրեն դրսևորել է բավականին միամտաբար՝ վստահությամբ վերաբերվելով հռոմեացի զորավարի խոստումներին և հրաժարվել Միհրդատ Պոմպեոսի բարեկամությունից: Վերջինս հիասթափված, բանակցությունների մեջ է մտել Պոմպեոսի հետ, սակայն, առանց արդյունքի հասնելու: Պոմպեոսն իրեն զգում էր դրության տերը և արշավել է Պոմոնտի քաղաքի դեմ:

Միհրդատի բանակը բաղկացած էր 30.000 հետևակայինից և երկու կամ երեք հազար հեծյալից: Պոմպեոսի տրամադրության ներքո կար դրանց կրկնակին: Ճակատամարտ սկսելը Միհրդատի համար վտանգավոր էր: Ուտի, մա կարծել է, որ խելամիտ կլինի մահանջել դեպի Հայաստանի սահմանը Լյուկոսի [Գալլ գետ] հովտով: Այն վայրում, որտեղ ավելի ուշ վեր կխոյանա Նիկեայոլիսը, տեղի է ունեցել ճակատամարտ, որի ընթացքում Միհրդատը կրել է առաջին պարտությունը¹:

Նա շարունակել է իր մահանջը և ճամբարել Դաստեյրայի մոտ (այսօր՝ Դաստոլ, Կամախի և Ալմի միջև) և ոչ թե Նիկեայոլիսի, ինչպես կարծում է Թ. Ռեյնախը²: Պոմպեոսը հետապնդել է Միհրդատին և պաշարել նրան, որը դիմադրել է 45 օր: Այնուհետև՝ Միհրդատն աննկատ փախել է և մահանջել երկու օր: Երրորդ օրը հռոմեացիները հարձակվել են նրա վրա և կոտորել 10.000 մարդու: Նա հազիվ է փրկվել ճակատամարտի դաշտից իր 800 քիկնապահների հետ և կանգ առել Սինոբիա [ամրոցում], որտեղ գտնվում էին նրա գանձերը և թանկարժեք կահկարասիքը: Այդտեղից մա երրորդ անգամ ճամապարհ է ընկել դեպի Հայաստան:

Տիգրանը միանգամայն իրավացի է եղել՝ մերժելով ապաստան հատկացնել մեծ արկածախնդրին, որը եղել է նրա անհաջողության հիմնական պատճառը: Ըստ շրջանառվող շշուկի՝ Տիգրանը նույնիսկ խոստացել էր, որ 100 տաղանդի չափով կպարգևատրեր նրան, ով կբերեր Միհրդատի գլուխը: Վերջինս հարկադրված է եղել փրկվել՝ ճողոպրելով Կողքիս:

Պոմպեոսը, ազատագրվելով այդչափ համառ թշնամուց, ուղղություն է վերցրել դեպի Հայաստան, ընթացքով Երզնկա-Էրզրում ճամապարհով: Երբ մա մտել է Արաքսի հովիտ, իր առջև տեսել է Տիգրանի որդուն՝ Տիգրան Կրտսերին: Սա, իհարկե, տեղի է ունեցել Բասենի՝ Ստրաբոնի Փասիանենի,

¹ [Թնագրում հղումը բացակայում է: - Մ. ք.]

² Th. Reinach, op.cit., p. 385.

գավառում, որը գտնվում էր Արաքսի վերին հոսանքի մոտ: Ասում են, որ Տիգրան Կրտսերն է հռոմեական բանակին առաջնորդել դեպի Արտաշատ:

Ջարմանալի է հայ արքայազնին տեսնել կշտամբանքի այդչափ արժանի դերում՝ առանց անհրաժեշտ չափով տեղեկացված լինելու դրա շարժառիթներին: Պատմիչները համերաշխորեն ներկայացնում են նրան՝ իբրև դավաճանելու հակում ունեցողի, որը դավաճանում է՝ դավաճանելուց հաճույք ստանալու համար, որը գործում է միայն իր հոր և իր երկրի թշնամիների օգտին՝ կանգնելով իր աներոջ (27) կամ իր պապի (28), վերջապես հռոմեացիների կողքին՝ և միշտ իր հոր դեմ:

Մեզ հավատացնում են, որ իր ստոր դիրքորոշման համար դավաճան արքայազնը չուներ որևէ այլ շարժառիթ, քան հայրական իշխանության նկատմամբ հավակնությունները: Սա մի բացատրություն է, որը նույնքան կամայական է, որքան և ծամծամված: Յոթանասունամյա Տիգրանը, որը չափազանց մոտ էր գերեզմանին, չէր կարող խիստ անհանգստացնել անհամբեր ժառանգորդին, որպեսզի վերջինս նրա օրերը կրճատելու մպատակով բռնություն գործադրեր կամ ստորության դիմեր: Այլ առիթով Պոմպեոսն իրավամբ կնկատի, որ Տիգրան Կրտսերը «շատ ավելի մոտ էր իր հորը, քան աներոջը»¹: Ինչո՞ւ, ուրեմն, մա պետք է դավաճանած լիներ հորը հանուն ուրիշի շահի:

Կարծեցյալ դավաճանի դժբախտ վախճանը, ինչը պետք է զարդարեր Պոմպեոսի հաղթանակը, ինչին, ասում են, որ մա մպաստել է, վկայում է, որ հարկ չկա առանց քննադատական մոտեցման հավատ ընծայել այն ամենին, ինչ պատմում են Տիգրան Կրտսերի մասին:

Խոսելով Տիգրան [Մեծի] ընտանեկան ողբերգության մասին, պատմիչները չեն հիշատակում նրա որդի Արտավազդին, որը հաջորդել է նրան: Նրանք ճանաչում են Տիգրան Կրտսերին և մեկ այլ որդու, որի անունը չի պահպանվել: Ըստ նրանց պատմության՝ մի օր, երկու որդիների ուղեկցությամբ, Տիգրանը գնացել է որսի և այնպես է ստացվել, որ ընկել է ձիուց և վիրավորվել: Այն դեպքում, երբ Տիգրան Կրտսերը, մնալով հոր մոտ, նրան բարեխոհորեն խմամում էր՝ ըստ իր որդիական պարտքի, մյուս որդին, կարծելով, որ մա արդեն վախճանվել է, շտապել է հափշտակելու թագավորական գահը: Հենց որ թագավորը գիտակցության է եկել, անզույշ որդին պատժվել է՝ դատապարտվելով մահվան, և Տիգրան [Կրտսերը] հռչակվել է գահի ժառանգորդ:

¹ Plutarch, Pompeius, 33.

Միանգամայն պատահական մեկ այլ նշում՝ մեզ տեղեկացնում է Տիգրանի ևս մեկ Չարիաստեր անվամբ (Չարիադրեսի աղավաղումը) որդու գոյության մասին: Վերջինս, մի քանի բարեկամների հետ դավադրություն էր կազմակերպել հոր դեմ և բոլոր դավադիրները երդում էին տվել՝ խնելով փոխադարձաբար իրենց աջ ձեռքից հանված արյունը¹: Թվում է, թե իր հոր հրամանով մահվան դատապարտված անամուն որդին եղել է ինքը Չարենը: Դավադիրները կարող էին ցանկացած լինել որսի ընթացքում սպանել թագավորին, հավանաբար, օգտվելով պատահարից, որի զոհը դարձել է թագավորը՝ ընկնելով ձիուց:

Տիգրանն այսպիսով, ուներ, երեք որդի՝ Չարեն, Տիգրան և Արտավազ: Առայժմ խոսքը դեռևս չի անցնում վերջինին՝ գահի ապագա ժառանգորդին: Քանի որ Չարենը զոհվել էր, մնում էր միայն Տիգրան [Կրտսերը], որն իր հոր կողմից ճանաչվել էր իբրև գահի ժառանգորդ: Որդի Տիգրանին, իբրև իր հորը, ծեր թագավորին, այդչափ սիրով վերաբերվողի ներկայացնելուց հետո, անխոհեմ կլինի նրան մեղադրել դավաճանության և իր երկրի դեմ թշնամական գործադրությունների աննշան հանցանքներում:

Երբ Տիգրան [Մեծը] Լուկուլլոսին վտարելուց հետո առաջ է ընթացել և սկսել ասպատակել Կապադովկիան, նրա որդի Տիգրանն ասպատակել է հոր դեմ: Տիգրանը վերադարձել է արշավանքից՝ պատժելու համար ասպատակին, սակայն, նա, իր հանցակիցների հետ, խուսափել է հոր զայրույթից՝ փախչելով պարթևների թագավոր Հրահատի մոտ, որի դուստրը նրա կինն էր: Հրահատն արշավանք է ձեռնարկել Տիգրանի դեմ իր փեսայի պատճառով: Հայոց թագավորը պարթևական զորքերի ճնշման ներքո նահանջել է դեպի լեռները: Արտաշատը պաշարվել է, սակայն Հրահատը հեռացել է առանց գրավելու քաղաքը: Տիգրան [Մեծը] վերադարձել է: Նրա որդի Տիգրանը հարկադրված է եղել ասպատան որոնել Միհրդատ [Պոնտացու] մոտ, բայց անձամբ Միհրդատն անապաստան էր և վտարված իր երկրից՝ Կողքիսից այն կողմ: Այդ ժամանակ է նա վճռել գնալու Պոմպեոսի մոտ և նրան ծառայելու իբրև ուղեկցող՝ դեպի Արտաշատ:

Պատմիչները պատրաստ են խարազանել իրադարձությունների զարգացման ընթացքն արևելյան արքունիքներում՝ ներքին երկպառակությունները վերագրելով անազնիվ շարժառիթների: Եթե մենք չենք ցանկա-

նում բաժանել այս հռոմեոսական հայացքները և կարծում ենք, որ ազնվությունն ու պարտքի զգացողությունը միայն հռոմեացի զորավարներին վերապահված արտոնություններ չէին, պետք է հայ արքայազնի դիրքորոշման առնչությամբ փնտրենք ավելի լուրջ և համոզիչ շարժառիթ:

Տիգրանի արքունիքում ակնհայտորեն գոյություն է ունեցել մի կուսակցություն, որը հավանություն չէր տալիս արքայի ռազմական գործողություններին Կապադովկիայում և դրանք դիտում էր իբրև վտանգներով լի նոր արկածախնդրություն: Թագավորի որդին, հավանաբար, եղել է այս կուսակցության ղեկավարը: Իբրև պարթևների թագավորի փեսա՝ նա գիտեր, թե ինչ էր տեղի ունենում պարթևական արքունիքում, որ Պոմպեոսը Հրահատ թագավորին կաշառել էր: Հայաստանի վիճակը ճգնաժամային էր: Պարթևներն ասպատակել են Հայաստանը ոչ թե Տիգրան արքայազնին գահ բարձրացնելու նպատակով, այլ Պոմպեոսի հետ գաղտնի համաձայնագրի հիման վրա: Տիգրան Կրտսերն անգոր էր կանգնեցնելու Հրահատի բանակը, սակայն, Արտաշատն, այդուհանդերձ, չի գրավվել: Այդ հանձնարարությունը դրված է եղել Տիգրան [Կրտսերի] վրա, ինչը նշանակում է, որ հայ արքայազնը ստանձնել էր որոշ պարտավորվածություններ մայրաքաղաքի ճակատագրի համար, այն փրկելով պարթևական բանակի կողմից հնարավոր ասպատակումից:

Մինչ այդ, Միհրդատ [Պոնտացու] հետ հարցերը լուծելուց հետո, հռոմեական լեգեոնները հայտնվել են Հայաստանի սահմանում:

Հենց որ հռոմեացի զորավարը ոտքը դրել է հայկական հողի վրա, պատմիչները վերածվում են բանաստեղծների: Նրանք պատմում են այնպիսի բաներ, որոնք մերձենում են լուկուլլոսյան ավանդույթին:

Հավաստիացնում են, որ Պոմպեոսը Հայաստան է մուտք գործել ոչ թե սեփական նախաձեռնությամբ, այլ նրան կանչել է Տիգրան Կրտսերը, որը նրան առաջնորդել է Արտաշատ: Մայրաքաղաքից տասնհինգ մղոն հեռավորության վրա, իր բարեկամների ուղեկցությամբ, Տիգրան [Մեծը] գնացել է հանձնվելու Պոմպեոսին, տեղեկացված, որ զորավարը մեծահոգի է և մեղմ:

Հռոմեական ճամբար նրա հասնելու պահին, [Պոմպեոսի] երկու մականակիրներ մոտեցել են արքային և կարգադրել ցած իջնել ձիուց ու ճամբար մտնել ոտքով: Տիգրանը հնազանդվել է, հանել սուրը, այն տվել քիկնապահներին և հենց որ հասել է Պոմպեոսի մոտ, հանել է նաև խույրն ու դրել հռոմեացի զորավարի ոտքերի մոտ, ծնրադրել նրա առջև և փորձել համբուրել ծնկները:

Պոմպեոսը բռնել է նրա ձեռքը, նստեցրել իր կողքին, իսկ որդուն տեղավորել մյուս կողքին և ասել, որ արքային է թողնում այն ամենը, ինչ նա

¹ Valerius Maximus, IX. 11, extern. 3. "Cum Sariastr adversus patrem suum Tigranen, Armeniae regem ita cum amicis consenserit, ut omnes dexteris manibus sanguinem mitterent, atque eum invicem sorberent". [Տիս նաև] պարսկական արտահայտությունը՝ *sevgan* x^oordan, որտեղից ծագում է հայերեն «երդամն ուտելը» [երդվելու իմաստով]:

ունեցել է մինչև իր ժամանումը, իսկ Ասորիքը, Փյունիկիան, Կորդոքը և Շոփքը՝ Լուկուլլոսի գրաված երկրները, նրան չեն վերադարձվելու:

Պոմպեոսը Տիգրանից նաև պահանջել է հռոմեացիներին վճարել վեց հազար տաղանդ՝ իբրև փոխհատուցում կրած վնասների դիմաց, որոնք նա նրանց պատճառել է: Բացի դրանից, նրա որդին պետք է թագավորներ Շոփքում:

Այս պայմաններով միայն հռոմեացիները պատրաստ կլինեն նրան ողջունելու իբրև թագավորի: Տիգրանը համաձայնել է այն ամենին, ինչ իրեն պարտադրել է մեծահոգի զորավարը և խոստացել, բացի դրանից, բաժանել յուրաքանչյուր զինվորի կես մինա, յուրաքանչյուր հարյուրապետի՝ տասը մինա և յուրաքանչյուր տրիբունի՝ մեկական տաղանդ: Ավելացնում են, որ Տիգրանի որդին՝ Պոմպեոսի կարծեցյալ դաշնակիցը, մնացել է խիստ դժգոհ և հրավիրվելով ճաշկերույթի, պատասխանել է, որ ո՛չ Պոմպեոսի և ո՛չ էլ մյան պատիվների կարիքը չունի և, որ ինքը կզոհվի այլ հռոմեացու:

Պոմպեոսը վրդովվել է և նրան նետել բանա՝ իր հաղթահանդեսի համար: Պարթևների թագավոր Հրահատը միամտություն է ունեցել միջամտելու՝ պահանջելու համար երիտասարդին՝ իր փեսային, և Պոմպեոսին հիշեցնելու՝ իր նվաճումները մինչև Եփրատ սահմանափակելու նրա խոստման մասին: Հաղթանակած զորավարը պատասխանել է, որ իր սահմանները կլինեն նրանք, որոնք կհամարվեն արդարացի:

Ինքնին ակնհայտ է, որ բանաստեղծական այս պատմությունը պատիվ կրերի, հավանաբար, բարոյականություն քարոզող հեղինակի, բայց ոչ թե սբափ և օբյեկտիվ պատմիչի: Պատմիչների ուրվագծած այս պատմությունը հանգում է, ի վերջո, անձամբ Պոմպեոսի վարկածին: Լինելով Լուկուլլոսի արժանի հաջորդը, թվում է, թե Պոմպեոսն իր պաշտոնի հետ մեկտեղ ժառանգել է նաև նրա արատները՝ մեծամտությունը և սնապարծությունը:

Պատմության միտումն ակնբախ է և հանգում է հաղթանակած զորավարի բնավորության մեծահոգությունը և մեղմությունը բացահայտելուն: Իրականում դա պոռոտախոսություն է, որը թաքնվում է նրա արժանիքների քողի տակ: Լուկուլլոսը չի կարող պատսպարվել հանդիմանանքներից՝ իր ավերածությունների և ընչաքաղցության համար: Համանման հանդիմանանքներից Պոմպեոսին ազատագրելու համար, իրադարձություններն աղավաղում են՝ բնահարթակ դուրս բերելով Տիգրան Կրտսերին, որը կանչում է Պոմպեոսին: Ինչը, որ կարող է և պետք է նախապաշարումներից զերծ պատմաբանը շտկի այս ամբողջ պատմության մեջ, այն է, որ Տիգրան (Կրտսերը) կա՛մ իր կամքով, կա՛մ իր հոր կարգադրությամբ է հայտնվել Պոմպեոսի առջև՝ հաշտության շուրջ բանակցություններ վարելու համար:

Այն պահից, երբ Տիգրան [Մեծը] մերժել էր ապաստանել Պոմպեոսի թագավորին, հռոմեացիները պետք է հաշվեին նրա հետ: Պոմպեոսը ոչ մի շահ չուներ հայոց թագավորի խաղաղասիրական առաջարկը մերժելու համար: Հաշտությունը նրա համար կարող էր լինել նույնիսկ ցանկալի՝ եթե նա ծրագրում էր հետապնդել Միհրդատին կամ ներխուժել Իբերիա և Ադվանք:

Ուստի, նա հավանություն է տվել Տիգրանի առաջարկած պայմաններին. վերջինս ճանաչվել է իր տիրույթների տիրակալը և համաձայնվել վճարել ռազմատուգանք:

[Պոմպեոսի ճամբարում] Տիգրանի ընդունելության թատերական տեսարանին որևէ նշանակություն տալը մանկամիտ կլինի, որի ընթացքում, ասում են, թե թագավորն իբր կարող էր հանած լինել խույրը և սուրը՝ դրանք հռոմեացի զորավարի ռոքերի առջև դնելու նպատակով: Նման բնույթի միտումնավոր հերյուրանքը դարձել է սովորական, այն նպատակաուղղված է հաղթողին մեծահոգությամբ օժտելուն. դա յուրօրինակ դիմահարդարում է օրվա հերոսին զարդարելու համար, որը, սակայն, ոչ ավելին է, քան զուցազարդումը կնոջ գեղեցկության համար:

Ոչինչով չի ապացուցվում, որ Տիգրանը՝ մեծ կայսրության հիմնադիրը, կարող էր ընդունակ լինել մյուս անօգտավետ ստորացման: Անկասկած, դժվար է այն հերքելն առանց հակառակն ապացուցող վկայության: Այդուհանդերձ, կան խորհրդածություններ, որոնք ծառանում են վստահության այս չարաշահման դեմ, որ պատմիչներն իրենց թույլ են տվել՝ հորինելով մյուս պատմություններ:

Հայտնի է, որ Արևելքում թագավորի առաջին հատկանիշը համարվում էր հպարտությունը՝ արժանապատվության զգացումը: Ուստի, թագավորներն իրենց համարում էին աստվածներ: Տիգրանը, որն իրեն հռչակել էր աստված, կարո՞ղ էր արդյոք այդքան նվաճումներից հետո բացառություն կազմել իր բնավորությամբ: Նա, ով սանձահարել էր և գահընկեց արել այդքան թագավորների, ավելի լավ, քան որևէ մեկը, գիտեր, որ ստորաքարշությունը ոչնչի չի ծառայում:

Պե՞տք է արդյոք հիշեցնել Տիգրանի որդի Արտավազդի հպարտ դիրքորոշման մասին Կլեոպատրա [VII-ի] հանդեպ՝ հանդգնելու համար, որ Տիգրանն իր որդուն դաստիարակել էր այլ կերպ, այլ ոգով, քան այն, ինչը պատմիչները վերագրում են իրեն: Մենք կարծում ենք, որ հարկ է անվստահությամբ վերաբերել մյուս գեղազարդային տեսարաններին:

Տիգրան Կրտսերին առնչվող միջադեպի, Պոմպեոսի հետ նրա վեճի ակունքները հստակ չեն: Եթե նա Պոմպեոսին մատուցել էր այն ծա-

ռայությունը, որի մասին ասում են, ինչո՞ւ է նա այդչափ դաժան և անշնորհակալ վերաբերմունքի արժանացել: Հաղորդում են, ավելի շուտ՝ տեղ են բողոնում կռահելու, որ որդին ձգտում էր հայրական բազին և հույս էր տաժում ի գին դավաճանության՝ այն ստանալ Պոմպեոսի օգնությամբ: Ի՞նչ պատճառով պետք է հոռմեացի զորավարը նրան մերժեր հատկացնել այն, ինչը նրան էր խոստացվել, թեկուզ և Տիգրանի թագը: Երկուսից մեկը կամ Տիգրան Կրտսերը դավաճան չէր և Պոմպեոսին որևէ ծառայություն չէր մատուցել, կամ Պոմպեոսը եղել է նենգ՝ դրժելով իր խոստումը, ինչպես վարվել է նույն կերպ պարթևների թագավորի հետ՝ անկախ հայտնի վարվել է նույն կերպ պարթևների թագավորի հետ՝ անկախ հայտնի համաձայնագրից: Նրան ձեռնառու էր խաբել Հրահատ թագավորին: Սակայն, ինչը կարող էր լինել հայ արքայազնին կամ հավանական դաշնակցին նենգաբար վերաբերվելու շարժառիթը: Նա նույնիսկ նրան շղթայել է և տարել Հռոմ իր հաղթահանդեսի ընթացքում նրան իբրև գործող անձ ներկայացնելու համար, անկասկած, իբրև Տիգրան թագավորի նկատմամբ իր հաղթանակի ապացույց: Նա նրան տարել է իր ընտանիքի՝ կնոջ և երեխաների հետ միասին:

Այս մշուշապատ պատմությունից կարելի է հանգել այն հետևության, որ երկու Տիգրանները հետամուտ էին միևնույն գործընթացին: Հոր և որդու միջև չի եղել ոչ մի պառակտում, բացի, հավանաբար, նրանց բաժանող տարածայնությունից, այն քաղաքականությանը հետևելու հարցում, որը հարկ էր որդեգրել Հռոմի նկատմամբ: Որդին իր վրա էր վերցրել հորը Պոմպեոսի հետ, արդեն ներկայացված պայմաններով, հաշտեցնելու նախաձեռնությունը: Այնուհետև, հռոմեացի զորավարն առանց որևէ պատճառի և չնայած կնքված հաշտությանը, գերեվարել է երիտասարդ արքայազնին, միայն մեկ մտահոգությունից դրդված՝ իր հաղթահանդեսը նրանով զարդարելու և Տիգրանի հանդեպ իր հաղթանակի շուրջ հավատ ներշնչելու համար: Այդ ժամանակ է, որ խաբված արքայազնը կարող էր արտահայտած լինել իր դժգոհությունը: Արքայազն Տիգրանի դժգոհությունը, մեր կարծիքով, հաջորդել է Պոմպեոսի վարքագծին և եղել է դրա հետևանքը և ոչ թե նախորդել է դրան՝ իբրև պատճառ (29):

Ծովիքն ու Կորդուքը, որոնք, անտարակույս, տրվել էին Տիգրան Կրտսերին, մնացել են նրա հոր տիրապետության ներքո: Պարթևների թագավորը հավանում էր Կորդուքին և երբ փորձել է այն գրավել ուժով, Պոմպեոսը միջամտել է, ուղարկել մի զորամաս և նրան վտարել¹: Այդ նույն Կորդուքի առիթով էր նաև, որ հայերն ու պարթևները վիճաբանում էին, և որ

¹ Plutarchi, Pompeius, 36.

Պոմպեոսը նրանց մոտ է ուղարկել երեք դատավորի՝ միջնորդ լինելու համար¹:

Պոմպեոսն իր զորավարներից մեկին՝ Ափրանիոսին թողել է Հայաստանում վերջինիս հսկելու համար, իսկ ինքը 66 թ. աշնանը գնացել է հետապնդելու Միհրդատին: Պոմպեոսը ճամբարել է գրեթե այնտեղ, որտեղ այժմ գտնվում է Երևանը: Նա ընտրել է Դիլիջանի ճանապարհը՝ Աղստաֆայի հովտով իջնելու համար դեպի Կուրի ափերը: Հռոմեական բանակը պետք է գործ ունենար երկու ժողովուրդների՝ աղվանների և իբերների հետ՝ առանց դժվարության գետն անցնելու համար: Աղվանների թագավոր Օրոյզեսը Պոմպեոսին անցում է տրամադրել, սակայն, քանի որ ձմեռն Աղվանքի տարածքում նրան հանկարծակիի է բերել, նա օգտվել է առիթից, անցնել գետը և հարձակվել հռոմեացիների ճամբարների վրա, այն պահին, երբ նրանք նշում էին Սատուրնալիայի տոնը՝ 66 թ. դեկտեմբերի 17-ին:

Պոմպեոսը ետ է մղել հարձակումը, ներել թագավորին՝ նրա դավաճանության համար և նրա հետ հաշտություն կնքել: Ըստ վարկածներից մեկի՝ հռոմեացիների դեմ Օրոյզեսին հրահրել է Տիգրան Կրտսերը: Սա խիստ հավանական է, այն պատճառով, որ Աղվանքը, ինչպես նաև Իբերիան, մտնում էին Տիգրան [Մեծի] կայսրության մեջ (սակայն, ամբողջությամբ հասկանալի չէ, թե ինչպես է կարողացել գերված արքայազնը աղվանների հետ հարաբերություններ հաստատել): Օրոյզեսի բանակի թիվը հասցնում են 40 հազարի, ինչը թվում է չափազանցված:

65 թ. գարնանը Պոմպեոսը մուտք է գործել Իբերիա, ավելի ստույգ՝ Գոգարենե [Գուգարք] և գրավել Հարմոզիկայի և Սելվսանոբայի բերդամրոցները: Արտոկես թագավորը, որը փախել էր Կուրից այն կողմ, նահանջել մինչև Պելոքոս գետը, ջանացել է կանգնեցնել հակառակորդի առաջընթացը, սակայն, պարտվել է և հանձնվել Պոմպեոսի ողորմածությանը²: Ինը հազար իբեր զոհվել է մարտում, իսկ *տաս հազարը*՝ գերեվարվել:

¹ Plutarchi, Pompeius, 39.

² Անդ, 34; Cassius Dio Cocceianus 36, 45; 37, 1-3. 'Οροζης (Appianus), 'Οροζης (Cassius Dio Cocceianus), Orodes (Eutropius), Horodes (Orosius). Ֆլորոսը սխալմամբ՝ Օրոզես, Կորդուքի արքա և Հորդուս, Աղվանքի արքա: 'Αρτώκης, Artoches (Florus), Artaces (Orosius և Eutropius). Oroizes < hu - raučah, 'Αρτώκη < artawāka՝ նա, ով ճշմարտություն է ասում, հմնտ. Σανδώκης < spantawāka (J. Markwart, Untersuchungen zur Geschichte von Eran, Bd. I, Göttingen, 1896, S. 41):

Պոմպեոսն առաջ է ընթացել Կողքիսով: Միհրդատը ճողոպրել է դեպի հյուսիս՝ Մաքարեսի թագավորություն: Պոմպեոսը գտել է, որ փախստական թշնամուն հետապնդելով այդքան հեռու գնալը խիստ վտանգավոր կլինի:

Այդ պահին Պոմպեոսը տեղեկացել է, որ աղվաններն *ապստամբել էին* երկրորդ անգամ: Այս լուրը, կեղծ կամ ստույգ, ստամալուն պես, նա ետ է վերադարձել և հարձակվել Աղվանքի վրա՝ հետևելով, թվում է, Ախալցխա-վերադարձել և հարձակվել Աղվանքի վրա՝ հետևելով, թվում է, Ախալցխա-Ախալքալաք-Շուրավեր-Կուր ուղղությամբ: Գետն անցնելուց հետո նա երկար ճանապարհ է անցել՝ չոր ու ցամաք երկրով: Խոսքը վերաբերում է Կամբիսեսնե գավառին, հայերեն՝ Կամբեջան: Պոմպեոսն իր համար տասը հազար տիկից բաղկացած ջրի պաշարներ է կուտակել, ինչպես նախկինում Լուկուլլոսն էր պարտադրել, որ իրեն հետևեին՝ ցորեն տանող երեսուն հազար գալատացի, և հարձակվել է *Արաս* [Արազան] գետի մոտ մարտական պատրաստության մեջ գտնվող թշնամիների վրա: Նրանց մեծ բանակը, որն ուներ 60 հազար հետևակ և 12 հազար հեծյալ, գլխավորում էր [Աղվանից] թագավորի՝ Կողիս անվամբ եղբայրը: Պոմպեոսն իր ձեռքով է սպանել Կողիսին, իսկ նրա զորքերը ցրվել են:

Հռոմեական բանակը ճանապարհ է ընկել նվաճելու Վրկանը և Կասպից ծովը, սակայն երեք օրվա ռազմերթից հետո այն կանգ է առել մեծ բանակությամբ թունավոր սողունների առկայության պատճառով: Պոմպեոսը հրաժարվել է ավելի առաջ ընթանալուց և նահանջել է ու հասել Փոքր Հայք՝ 65 թ. աշնան շրջանում¹:

Նրա արշավանքների պատմությանը պակասում է ճշմարտացիությունը: Դրա քննությունն ու վերանայումը դժվարին է անվիճելի տեղեկությունների բացակայության պատճառով: Բայց երբ պատմիչն այնքան հեռու է գնում, որ պատմում է ամազոնուհիների լեռներից գալու մասին՝ աղվաններից օգնելու համար, նա դրանով վարկաբեկում է իր ամբողջ պատմությունը: Աղվանքն ի վիճակի չէր ոտքի հանել 72 հազար մարդու, ոչ էլ 40 հազարի, թվաքանակ, որը նույնքան առասպելական է, որքան Տիգրանի 250 կամ 300 հազարը: Հակառակորդների ուժերը չափազանցվում են, որպեսզի փառաբանեն Պոմպեոսի հաղթանակները:

Երկրորդ արշավանքն Աղվանքում հնարված է ad hoc (30), թվում է, թե այն բանի համար, որ քողարկվի Պոմպեոսի անվճռականությունը Միհրդատին հետապնդելու հարցում: Աղվանական ապստամբության մասին լուրը ևս հնարովի է: Աղվանները, որոնք Պոմպեոսի կողմից նվաճված չէին՝ կարիք չունեին ապստամբելու: Նույնիսկ եթե այդպես պատահած

լիներ, Պոմպեոսն ի՞նչ շահագրգռվածությամբ կունենար կրկին հրատապ ձեռնամուխ լինելու արկածախնդրական արշավանքի Աղվանքում, և դեպի Վրկան մտացածին ռազմերթից հետո, որն, այդուհանդերձ, նույնքան նվազ իրական է, որքան նրա մարտն ամազոնուհիների հետ, շտապ նահանջել Փոքր Հայք, կտրել անցնելով, այսպիսով, մի տարածություն, որը շատ ավելին է, քան 1000 կիլոմետրը: Պոմպեոսը բավականին զգույշ էր ոչ մի նշանակություն չունեցող ապստամբության պատճառով բանակն իր հետ Կովկասի մի ծայրից մյուսը տանելու և նահանջելու համար՝ անցնելու շատ ավելի երկար մի տարածություն¹:

Միանգամայն բնական կլիներ, եթե Պոմպեոսը հասած լիներ Փոքր Հայք՝ ուղղակիորեն իջնելով Կողքիսից՝ Իրերիայով, Աղվանքով և Հայաստանով մի մեծ շրջանց կատարելու փոխարեն: Նրա ներկայությունը հեպտակոնտների մոտ, որտեղ կործանվել են նրա կոնորտաներից երեքը՝ վկայում է այդ ենթադրության օգտին: Դա ապացուցում է, որ Փոքր Հայք հասնելու համար Պոմպեոսը գնացել է Սև ծովի ափամերձ գոտով: Ասպիսը, որտեղ նա կանգ է առել, համանման է Պտղոմեոսի Ասպային և Պետլինգերյան] քարտեզի] Հիսպային ու գտնվում էր Դասկուսայի և Մելիտենեի միջև: Եթե նա Ասպիս եկած լիներ Աղվանքից՝ Հայաստանի վրայով, նա պետք է բարձրանար մինչև հեպտակոնտների երկիրը, իսկ այնուհետև կրկին հասներ իր հենակետին Ասպիսում, ինչն անհավանական է (31):

Կողքիսում՝ Միհրդատ [Եվպատոսի]՝ պատերազմը վերսկսելու նպատակով նախապատրաստություններին տեղեկացված, Պոմպեոսն իջել է Փոքր Հայք, որը Պոմոտոսի թագավորության հենակետն էր և սկսել է ավերել Միհրդատի վերջին բերդամրոցներն ու գանձապահեստները, որոնք դեռևս ոչնչացված չէին՝ չնայած Լուկուլլոսի և Պոմպեոսի պնդումներին: Տալավրան, Քաիմը, Մինորիան, Միմփորիոնը կատաղի դիմադրությունից հետո հանձնվել են ավելի շուտ սովի, քան թշնամու սրի հետևանքով:

Այս բերդամրոցների ավերումն ավարտելուց հետո, 64 թվականի գարնանը Պոմպեոսը գնացել է Ամիսոս: Ինչպես նախկինում Լուկուլլոսը, Պոմպեոսը շտապել է նվերներ և երկրներ բաժանել զորավարներին, որոնցով շրջապատված էր և որոնց թվում կարելի էր հաշվել բարբարոսների 12 (!) թագավորի: Այդ ժամանակ է, որ Կողքիսը տրվել է ոմն Արիստարքոսի, իսկ Գալատիայի Դեյոտարոս իշխանը ստացել է Փոքր Հայքը, խալիբների և տիբարենների երկիրը՝ Փառնակիա և Տրապիզոն քաղաքներով:

¹ Այն, ինչ ասում է Պլուտարքոսն այս արշավանքի մասին, անժանոք է Դիոնիս, որը նշում է միայն դավաճան աղվանների մասին (37, 3):

¹ Plutarchi, Pompeius, 35-36.

Պոմպեոսը չէր կարող, արդուհանդերձ, հանգիստ լինել, քանզի Միհրդատը ողջ էր: Նրա հետ հարցերը վերջնականապես լուծելու համար նա հյուսել է հռոմեական քաղաքականությանը բնորոշ որոգայթներ, կարողացել ծեր մարտնչողի դեմ զինել նրա որդի Փառնակին և մեկնել է Ասորիք: Այդ ժամանակ օրինական թագավորներ չունեցող այս երկիրը Պոմպեոսը հռչակել է հռոմեական պրովինցիա: Այստեղից ի հայտ է գալիս, որ Ասորիքը դեռևս գտնվում էր հայկական տիրապետության ներքո և 64 թվականին է, որ, ըստ էության, այն ազատագրվել է Տիգրանի հպատակությամբ: Պոմպեոսի՝ Ասորիքում գտնվելու ընթացքում, Միհրդատի կողմից մի դեսպանություն է եկել՝ նրան հաշտության առաջարկով դիմելու համար: Անկասկած, Միհրդատը հասկացել է Պոմպեոսի բանսարկություններից բխող վտանգը: Վերջինս պատասխանել է, որ Միհրդատն անձամբ պետք է գա՝ իրեն հնազանդությունը հայտնելու: Միհրդատը համաձայնել է իր փոխարեն ուղարկել իր որդիներից կամ բարեկամներից մեկին¹: Պոմպեոսը մերժել է, վստահ լինելով, որ ինքը նրան կձգի իր որոգայթների մեջ: Իրոք որ, երբ Հրեաստանը հպատակեցնելուց հետո Պոմպեոսը եկել է և ճամբարել Պետրա քաղաքի առջև, Պոմպեոսից ժամանած սուրհանդակը բերել է Միհրդատի մահվան լուրը: Որդու՝ Փառնակի ապստամբությունը 63 թ. նրան դրդել է ինքնասպանության:

Սա Տիգրանի տխուր պատմության կրկնությունն է: Հռոմեացի գերավարը կիրառելով միևնույն գործելամիջոցը հասել է այն բանին, որ բաժանել է որդուն հորից: Փառնակը Միհրդատի ամենասիրելի որդին էր, ինչպիսին էր Տիգրան Կրտսերն իր հոր համար: Բացահայտորեն խոստովանելու փոխարեն, որ ստահող հանձնառությամբ ինքը զայթակղել է երիտասարդ արքայազնին և նրան հեռացրել հորից, Պոմպեոսը գերադասում է Փառնակին մեղադրել անազնվության և իշխանատենչության մեջ, որը կարող էր ցանկացած լինել ազատվել հորից և զավթել իշխանությունը:

Միհրդատի մահվան լուրն ստանալուն պես, Պոմպեոսը բռնել է վերադարձի ճանապարհը և շուտով հասել Հռոմ՝ տոնելու իր հաղթահանողը: Շքեղ հանդիսության ընթացքում առջևից տանում էին տախտակներ, որոնց վրա գրված էին նվաճված երկրների անվանումները՝ Պոմպեոս, Հայաստան,

Կապադովկիա, Պափլագոնիա, Մարաստան, Կողքիս, Իբերիա, Ադվանք, Ասորիք, Կիլիկիա, Միջագետք, Փյունիկիա, Հրեաստան, Արաբիա:

Դրանց վրա կարելի էր կարդալ, որ Պոմպեոսը գրավել է 1000 բերդամրոց և 900 քաղաք: Հասարակական եկամուտները հինգ հազար միլիարդից հասել էին ութ ու կես հազար միլիարդի (32): Հասարակական գանձարանն աճել էր և հասել քսան հազար տաղանդի, չհաշված այն, ինչը բաժանվել էր զինվորներին, յուրաքանչյուրին՝ նվազագույնը 1500 դրաքմե:

Գերիների թվում կարելի էր տեսնել Տիգրան [Մեծի] որդուն, վերջինիս կնոջը և դստերը, անձամբ Տիգրանի կնոջը՝ *Չոսիմային* (33), Միհրդատի քույրերից մեկին և հինգ դուստրերին, իրեր և աղվան պատանդների, Կոմմագենեի թագավորին, հրեաների թագավոր Արիստոբոլոսին¹:

Այս ամենից հետո, զարմանալու հարկ չկա, երբ այս հաղթահանողների ընթացքում կարելի էր լսել, որ «Տիգրանը և Միհրդատը, Լուկուլլոսից հետո, այլևս չեն *[անընթեռնելի բառ]*, Միհրդատը, թուլացած և իր առաջին մարտերի հետևանքով գրեթե ջախջախված, չի համարձակվել նույնիսկ մեկ անգամ իր բանակը ցույց տալ Պոմպեոսին, այլ փախել է մինչև Բոսպոր ու այնտեղ ինքնասպան եղել:

Տիգրանը՝ մերկ և անզեն ծնկի է իջել Պոմպեոսի առջև, հանել է խույրն իր գլխից և դրել Պոմպեոսի ոտքերի առջև, նրան շողջորթելով, այսպիսով, այնպիսի նվերով, որն այլևս իրեն չէր պատկանում, քանզի Լուկուլլոսն այն մեկ անգամ բռնագրավել էր իր հաղթահանողների համար»²:

Տիգրանի հասցեին ցանկացած բնույթի շատախոսությունից և զրպարտություններից հետո, պատմիչը նույնքան անսպասելի, որքան և իրական խոստովանություն է անում, թե Լուկուլլոսը բազմաթիվ մարտերից հետո ի դեմս Տիգրանի հանդիպել է անպարտելի և «*վսեմ քաջությանը օժտված թշնամու*»³ (34):

¹ Թ. Ռեյնաքն այս առիթով նշում է, որ «Միհրդատը Տիգրանը չէր»: Իր փոխարեն որդուն ուղարկելն, ըստ Ռեյնաքի տարօրինակ ըմբռնման, ավելի համարձակ է, քան անձամբ հանձնվելը: Th. Reinach, op. cit, S. 401.

¹ Plutarchi, Pompeius, 45.

² Plutarchi, Cimon et Lucullus, 3.

³ Անդ:

ՑԱՆԿ

ԱՆԿԱՆՈՒԹ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Asdourian Pascal P. Die politischen Beziehungen zwischen Armenien und Rom, von 190 v. Chr. bis 428 n. Chr., Venedig, 1911.

Bloch Gustave. L'Empire romain, Evolution et decadence, Paris, 1922.

Bouche – Leclercq Auguste. Histoire des Seleucides, Paris 1913-1914.

Bouchier E. S. Syria as Roman Province, Oxford, 1916.

Chapot Victor. La frontiere de l'Euphrate de Pompée à la conquête arabe (Bibl. Des Ecoles françaises d' Athènes et de Rome, 99), Rome, 1907.

Charlesworth M. P. Trade-Route and Commerce of the Roman Empire, Cambridge, 1924.

Cumont Franz. Etudes syriennes, Paris, 1917.

Eckhardt K. Die armenischen Feldzüge des Lucullus. Klio, Beiträge zur alten Geschichte, Bd. IX, Leipzig, 1909, p. 400-412; Bd. X, Leipzig, 1910.

Ferrero Guglielmo. Grandeur et decadence de Rome. 6 vols, Paris, 1904-1908.

Frank Tenney. Roman imperialism, New York, 1914.

Frank Tenney. History of Rome, London, 1924.

Haserbock Johannes. Untersuchungen zur Geschichte des Kaisers Septimius Severus, Heidelberg.

Henderson Bernard W. The Life and Principate of the Emperor Nero, London, 1903.

Henderson Bernard W. The Life and Principate of Hadrian, 1923.

Meyer Eduard. Caesars Monarchie und das Principat des Pompejus. 3 Aufl., Stuttgart - Berlin, 1922.

Mommsen Th. Römische Geschichte, Bd. 1-3, Berlin, 1854-1857, Bd. 5, Berlin, 1885.

Reinach Th. Mithradates Eupator, König von Pontos, Leipzig, 1895.

Rostowzeff M. I. The social and economic history of the Roman Empire, Oxford, 1926.

Schneiderwirth Hermann. Die Parther, nach griechische-römische Quelle, Heiligenstadt, 1874.

II. ԿՐԱՍՏՈՍՆ ԸՆԴԴԵՄ ՊԱՐԹԵՎՆԵՐԻ (Ըստ սկզբնաղբյուրների)

Կրաստոսը մի քանի քաղաք է գրավում Միջագետքում և վերադառնում Ասորիք: Օրոդեսը պատվիրակություն է ուղարկում Կրաստոսի մոտ: Չարագուշակ մախանդաններ՝ Եփրատն անցնելիս: Արգարի նենգ պահվածքը: Հռոմեացիների պարտությունը: Կրաստոսը նահանջում է Խառան: Սուրենը առաջարկում է քանակցել: Սուրենի ուխտադրժությունը: Կրաստոսի մահը: Քվեստոր Կասսիոսը վերջ է դնում պատերազմին:

Սկզբնաղբյուրներ. *Plutarchusi, Crassus, 16-33. Appiani Alexandrini Syriaca, 51. De bello civili, II, 18. Justinus M. Juniani Epitoma historiarum Philippicarum Pompeii Trogi, 41-42. Strabonis Geographica, I, 14. XI, 510, 515, 522. XIV, 669. XV, 702, 718, 732. XVI, 743-749. Josephi Flavii Antiquitates Judaicae, XIV, 7, 1, 3. XVIII, 2, 4, 8. De bello Judaico, I, 8, 8, 13. Ciceronis, Epistolae ad familiares, II, 17. Ad Atticum, IV, 13. V, 20. VI, 5. Orosii Pauli Historiarum adversus paganos libri, VI, 13.*

ԿՐԱՍՏՈՍԻ ԱՐԵՍՎԱՆՔԸ

[Հռոմեական քվարկության] 700 ք. [= Ջ. ա. 54 ք.]

Պարթևների քաղաքը Օրոդեսի մասին պատմագիրն ասում է. «Օրոդեսին, որը դեռ գահին նոր հաստատված էր (ἄτε καὶ νεοκατάστατον), կարելի է հեշտությամբ գերեվարել» (*Cassii Dionis Cocceiani, XL, 12*):

Երբ Կրաստոսն ասում է. «αὐτὸς γὰρ τῆ Ἀρμενίᾳ τῆ τοῦ Τιγράνου ποτὲ γενομένη», նա մտադիր էր պատերազմը տեղափոխել «Հայաստան, որը նախկինում պատկանել է Տիգրանին», որպեսզի «Արտավազդը՝ Տիգրանի որդին, որն այդ ժամանակ քաղաքորում էր այնտեղ» *Ἀρταβάζης ὁ τοῦ Τιγράνου παῖς, ὁ τότε αὐτῆς βασιλεύων (Cassii Dio., XL, 16)* իր սեփական երկրի վիճակով մտահոգված, որևէ օգնություն չուղարկի հռոմեացիներին:

Մտանալով Ասորիքը՝ Կրաստոսը երազում էր ամբողջ Արևելքը նվաճելու մասին: Նա հույսի քեղև սլանում էր մինչև Բաղկորիանե, Հնդկաստան և Արտաքին ծով: Քվեսարկված օրենքը ոչինչ չէր բովանդակում պարթևական պատերազմի վերաբերյալ: Մակայն բոլորը գիտեին, որ դա Կրաստոսի միակ

ցանկությունն էր: Նրա ռազմարշավին ուժեղ դիմադրություն կար (1).
ունանք, ժողովրդական տրիբուն Ատեյոսի հետ, դժգոհ էին, որ նա պա-
տերազմի է դուրս գալու այնպիսի մարդկանց դեմ, որոնք ոչնչով մեղավոր
չէին և որոնց հետ [հռոմեացիները] կապված էին դաշնագրերով (Plut.,
Crass., 16):

Կրասսոսը դուրս եկավ արշավանքի և հասավ Ասորիք: Չորքն անցավ
Եփրատը և գրավեց Չենոդոտիա քաղաքը, որի տիրակալն Ապոլլոնիոսն էր
(այսինքն՝ դա հունական քաղաք էր), կողոպտեց քաղաքի հարստություն-
ները և զորքին բույլատրեց իրեն իմպերատոր հռչակել: Առաջ ընթանալու
փոխարեն Կրասսոսը վերադարձավ Ասորիք՝ իր ձեռնային զորանոցները, և
այստեղ գրադվեց ավելի շուտ շահադիտական, քան ռազմավարական գոր-
ծունեությամբ:

Օրեր շարունակ հաշվում էր քաղաքների եկամուտները, կշռում ու չա-
փում Հիերապոլիսի հովանավոր դիցուհու (2) գանձերը, քաղաքներին և իշ-
խանավորներին կարգադրում զորք հավաքել, իսկ հետո՝ դրամի դիմաց,
նրանց ազատում այդ պարտականությունից: Պահվածք, որը նրան պատ-
վազրկում էր և դարձնում արհամարհելի (Plut., Crass., 17):

Այն ժամանակ, երբ Կրասսոսը հավաքում էր իր զորքը Եփրատն
անցնելու համար, ծանուցում ստացվեց պարթևների արքա Օրոդեսից: «Եթե
զորքն ուղարկված է հռոմեական ժողովրդի կողմից, - ասում էր պարթև
արքան, - պատերազմը կլինի դաժան և անզիջում, բայց եթե Կրասսոսը
արշավանքը ձեռնարկել է իր անձնական շահի համար, ինչպես ասում են,
ապա արքան ձեռնպահ է մնում պատերազմից, իսկ հռոմեական զինվոր-
ներին, որոնք ավելի շուտ կալանքի տակ են, քան ծառայության մեջ, ազատ
է արձակում»:

Կրասսոսը դրան հոխորտանքով արձագանքեց, թե պատասխանը կտա
Սելևկիայում: Վազիսեսը պարթևների դեսպանների ավագը, ծիծաղեց և
ձեռքի ավել ցույց տալով Կրասսոսին ասաց. «Ավելի հեշտ այստեղ մագեր
կրուսնեն, քան դու, Կրասսոս, կտեսնես Սելևկիան»:

Կրասսոսը որոշեց մինչև Սելևկիա առաջանալ Եփրատի ընթացքով:
Հայոց թագավոր Արտավազդը (55-30) Կրասսոսի ճամբար ժամանեց 6.000
հեծյալով, որ ընդամենը նրա թիկնապահներն ու ուղեկիցներն էին: Նա
խոստանում էր տալ ևս 10.000 զրահավոր հեծյալ և 30.000 հետևակ: Մա-
կայն Կրասսոսին խորհուրդ էր տալիս Պարթևստան արշավել Հայաս-
տանով. նրա զորքն այստեղ ոչ միայն առատ պարեն կունենար, քանզի դրա
համար կհոգար հենց ինքը՝ Հայոց թագավորը, այլև, բացի դրանից, ապա-
հով կլինե՞ր՝ պաշտպանված լեռներով ու բլուրների անվերջանալի շար-

քերով, որոնք դժվարանցանելի են պարթևների միակ ուժը համարվող հե-
ծելագորի համար:

Կրասսոսը չունկնդրեց այս խելացի խորհրդին և պատասխանեց, որ
կառաջանա Միջագետքով: Արտավազդը քառատրոփ վերադարձավ իր
երկիր (Plut., Crass., 19):

Ջևգմայի մոտ Կրասսոսն անցավ Եփրատը և պատրաստվում էր իջնելու
գետի երկայնքով: Մեկը խորհուրդ տվեց զորքը ետ քաշել դեպի գրավված
մոտակա գյուղը՝ մինչև թշնամու վերաբերյալ ստույգ տեղեկությունների
առկայությունը: Մինչ քննարկում էին այդ տեսակետը, եկավ արաբական
ցեղերից մեկի առաջնորդը՝ Արիամնուս (Աքքար կամ Արգար, Cass. Dio., XL)
անվամբ և առաջարկեց շարժվել հարթավայրով: Կրասսոսը համաձայնեց:
Ճանապարհը սկզբում հեշտ էր, սակայն շուտով դարձավ հոգնեցուցիչ:
Չորսրոտըն ընդարձակ ավազուտներ էին, անտառազուրկ, անջրդի: Մինչև
անընդորկելի հեռուները ձգվող տարածությունը ջրատեց հռոմեացիների
խիզախությունը. նրանց աչքի առաջ անսահման ծովի նման տարածվում
էին ավազի ալիքները, որ զինվորներին խորապես հուսալքում էր: Հռո-
մեացիների մեջ կասկած առաջացավ մատնության վերաբերյալ:

Հայոց թագավոր Արտավազդի հայտնած նոր տեղեկության համաձայն՝
իր վրա հարձակված Օրոդեսի դեմ անզիջում պատերազմի պատճառով
ինքը չէր կարող Կրասսոսին օգնություն ուղարկել, բայց հորդորում էր հնա-
րավորինս շուտ շրջվել դեպի Հայաստան և միանալ հայերին, որպեսզի
միասին կռվեն Օրոդեսի դեմ, իսկ եթե ոչ՝ մշտապես խուսափել այնպիսի
վայրերից, որոնք բարենպաստ են հեծելագորի համար, և շարունակ
ընթանալ լեռնային տարածքներով:

Կրասսոսն այս անգամ ևս զուր տեղը արհամարհեց Արտավազդի
խելացի խորհուրդը (3): Նրա մամակին չպատասխանեց և պատվիրեց հա-
ղորդել, որ ինքը ժամանակ չունի զբաղվելու հայերով, և որ Արտավազդից
վրեժ կլուծի դավաճանության համար (Plut., Crass., 22):

Մյուս խորհրդատուն՝ արաբների առաջնորդը, հռոմեացիների վերաբեր-
մունքից վրդովված՝ հեռացավ: Երբ տեսավ, թե հռոմեացի զինվորներն ինչ-
պես են զանգատվում, որ արաբ ավազակների առաջնորդի պատճառով
զորքն անձայրածիր անապատում է, նա ծիծաղելով ու ծաղրելով նրանց
ասաց. «Դուք զուցե ձեզ պատկերացնում եք հայրենի Կամպանիայում
ճանապարհորդելիս, եթե այդքան կարոտել եք աղբյուրների և առվակների
ջրերին, ծառերի ստվերներին, բաղնիքներին և հյուրանոցներին: Մոռացե՛լ
եք, որ արդեն անցել եք արաբների և ասորիների սահմանը»:

Հռոմեական գործը շուտով հասավ Բալիստոս գետը: Հրամանատարներից շատերն այն կարծիքի էին, որ հարկավոր է այդտեղ էլ կանգ առնել՝ հանգստանալու և զիջելու համար և հակառակորդի զինվորների քիվն ու մարտական դասավորությունն իմանալուց հետո արշավույսին առճակատել նրան: Բայց Կրասսոսը շտապում էր սկսելու գործողությունը և հրամայեց առաջանալ: Նա պարթևներին հանդիպեց Խառանի մոտ: Պարթևական գործի հրամանատարը սպարապետ Սուրենն էր: «Սուրենը չափազանց արտասովոր մարդ էր. հարստությամբ, տոհմիկ ծագումով ու փառքով նա արքայից հետո երկրորդն էր, իսկ արիությամբ ու հնարագիտությամբ գերազանցում էր իր ժամանակակից բոլոր պարթևներին: Ոչ ոք նրան չէր կարող համեմատվել ոչ հասակով և ոչ էլ մարմնի գեղեցկությամբ: Նա արշավանքի էր դուրս գալիս միշտ իր հետ 1000 ուղտ՝ բեռնված իր իրերով, և 200 սայլ, որ տանում էին հարճերին: Նրան ուղեկցում էին զրահապատ 1000 հեծյալ և շատ մեծ թվով թեթևազեններ: Նա ընդհանուր հաշվով ուներ մոտավորապես 10.000 հեծյալ: Տոհմական ծագումով նրան էր պատկանում պարթևական արքային թագադրելու իրավունքը, երբ վերջինս գահ էր բարձրանում» (Plut., Crass., 21, հմմտ. 24):

Սուրենը հարձակվեց Կրասսոսի վրա և խուճապի մատնեց նրան: Կրասսոսի որդին սպանվեց շատ զորապետերի հետ: Կրասսոսն իր գործի մնացորդների հետ փախավ Խառան: Ապա ընկավ պարթևների ձեռքը և նույնպես սպանվեց: Հռոմեացիները կորցրեցին 20.000 սպանված և 10.000 գերի:

Պլուտարքոսը փորձել է մեղմացնել Կրասսոսի սխալը: Ըստ նրա՝ հաղթանակած պարթևները, այլ ոչ թե պարտված Կրասսոսն է հանդիպման առաջարկ արել զինադադարի համար: Կրասսոսը չէր ցանկանում ընդունել պարթևների առաջարկը, սակայն զինվորները պարտադրեցին նրան¹: «Ասացեք բոլորին, որ Կրասսոսը կործանվեց թշնամու խաբեությամբ, և ոչ թե իր համաքաղաքացիների մատնությամբ»:

(Հռոմեացի զորավար Կրասսոսը հետիոտն գնաց Սուրենի մոտ. Սուրենը հրամայեց ձի մատուցել նրան: Կրասսոսն ասաց, որ հանդիպման ժամանակ ամեն մեկը հանդես գա սեփական երկրի սովորությով: Բերեցին ոսկե սանձով զարդարված ձի: Կրասսոսին նստեցրին ձիուն և տարան):

Սուրենը հռոմեացիներին մեղադրում էր, որ նրանք այնքան էլ չեն մտահոգվում պայմանագրերի համար [և հաճախ մոռանում են դրանք] (Plut., Crass., 31):

Պլուտարքոսը փորձել է Կրասսոսին ներկայացնել իբրև մատնության գոհ: Իբր հայերը, արաբները դավաճանել են նրան պարթևների դեմ պայքարում, խաբել են: Իզուր:

Հայոց թագավորը միանգամայն առողջ գիտակցությամբ էր խորհուրդ տվել հռոմեացի զորապետին: Խորհուրդն անկեղծ էր ու լիովին ողջամիտ: Օրոդեսը, Կրասսոսին կարծելով առավել խոհեմ, ավելի փորձառու, Հայաստան էր տեղափոխել բանակի գլխավոր ուժերը:

Պլուտարքոսը ներկայացնում է այսպիսի մի փաստ. Օրոդեսն արշավում է Հայաստանի թագավորի, իսկ Սուրենին ուղարկում Կրասսոսի դեմ: Գոռոզամտությունից մղված՝ Պլուտարքոսը չի կարծում, որ այդ նույն մարդն իբրև հակառակորդ անարգել է Կրասսոսին՝ Հռոմի եռապետերից մեկին, և հեռացել: Նա ցանկանում էր հեռվից դիտել և սպասել ապագա իրադարձություններին, իսկ Սուրենը սովորական մարդ չէր, նա երկրորդն էր արքայից հետո...: Այսպիսով,

1) Արտավազդի ծրագիրն ավելի խելամիտ էր, քան կարծում էր Կրասսոսը: Ապացույցը՝ պարթևների արքան բանակի գլխավոր ուժերով ուղղվեց դեպի Հայաստան՝ անկասկած ենթադրելով այնտեղ հանդիպել Կրասսոսին: Պլուտարքոսին հետաքրքրում է այն հարցը, թե թագավորն ինչու է ամձամբ գնացել ընդդեմ Արտավազդի, Կրասսոսի դեմ մի զորավարի՝ Սուրենին ուղարկելը բավարար համարելով: Արդյո՞ք քամահրանքն է պատճառը, ինչպես կարծում են ոմանք: Պլուտարքոսը այդպես չի մտածում և փորձում է միանգամայն կամայական այլ բացատրություն տալ: Ըստ նրա՝ «վախենալով վտանգից, արքան կամենում էր իրադարձություններին հետևել հեռվից»: Դա կլիներ վատ ռազմավարություն, քանզի տարածությունը մեծ էր, և նա չէր կարողանա ղեկավարել պատերազմի ընթացքը: Մյուս բացատրությունն այն է, որ Սուրենը սովորական մարդ չէր, այլ երկրորդն էր արքայից հետո, և ուրեմն՝ Կրասսոսի արժանի հակառակորդը:

Մրանք պարզունակ ենթադրություններ են: Ճշմարտությունն այն է, որ Օրոդեսը ռազմական գործում Կրասսոսին համարում էր իրենից ավելի փորձառու և ավելի խորաթափանց:

2) Հարկ չկար զուշամալու նաև արաբների առաջնորդի խորհրդից: Նա Օսրոնների թագավորն էր և ոչ մի շահ չունեի դավելու Կրասսոսին: Պարթևների արքայի՝ իր ահեղ հարևանի, պարտությունը նրա համար

¹ «Դուք տեսնում եք, որ ինձ պարտադրում են զնալ և վկաններն եք, թե ինչպիսի ամոթ և բռնություն են ստիպված կրում» (տե՛ս Plut., Crass., 30):

առավել քան ցանկալի էր: Հռոմեացիները ոչ մի վստահություն չէին ներշնչում: Արաբը պիտի որ գործեր գաղտնիորեն:

Բացի այդ, արաբի՝ Կրասսոսի համար նախապատրաստած առաջարկը կամ ծրագիրը աղավաղված է Պլուտարքոսի կողմից: Արաբը հռոմեացի զորավարին իրավացիորեն խորհուրդ էր տալիս շրջվել և գնալ գետի ընթացքով: Սելևկիայի ճանապարհը դժվարին էր ու վտանգավոր: Նա Կրասսոսին առաջնորդեց դեպի մեծ ճանապարհը, որը Ջեզման միացնում էր Մծբինին: Այն գանգառը, թե իբր արաբը հռոմեական զորքը [խաբեությանը] մխրճել է անապատի մեջ, զուտ երևակայության արգասիք է: Պատմագիրը խոստովանում է, որ ճակատամարտը սկսվել է Խառանի մոտակայքում¹: Դա հենց երկրորդ կանգամն էր Ջեզմայից հետո, որ գտնվում էր Բալիսսոս գետի ափին: Ողբերգական նկարագրությունն իրավիճակի, որի մեջ հայտնվել էր զորքը, հավակնոտ հնարանք է: Անշուշտ, չկային Կամպանիայի աղբյուրները, ինչպես հիշատակում է [արաբ առաջնորդը]:

Խառանը գրավված էր հռոմեացիների կողմից, պահազորի հրամանատարը ոմն Կոպոնիոսն էր:

Վերջապես, Կրասսոսի ճամբարում կային բնիկ հույներ (Խառանից): Կրասսոսի որդին՝ երիտասարդ Պուրիոսը, իր ձեռքի տակ ուներ երկու հույն՝ Հիերոնիմոսին և Նիկոմաքոսին, որոնք նրան հորդորեցին փախչել և քաքնվել Իքնեում՝ հռոմեացիներին հարած ոչ հեռու գտնվող քաղաքում: Հեալաբար՝ միշտ կար հնարավորություն ստուգելու արաբների առաջնորդի ցուցումները:

Գոռոզամտության և անմատչելի վերաբերմունքի պատճառով Պոմպեոսի հեղինակությունը Կրասսոսից ավելի ցածր էր. նա խուսափում էր ամբոխից, հեռու էր մնում ֆորումից, իր աջակցությունը խնդրողներից միայն քչերին էր օգնում, այն էլ՝ առանց հոժարության, որպեսզի իր ունեցած հեղինակությունն ամբողջովին օգտագործեր անձնական կարիքների համար:

Կրասսոսն, ընդհակառակը, միշտ պատրաստ էր ծառայություն մատուցելու՝ ոչ անհաղորդ էր, ոչ էլ՝ անմատչելի: Նրան կարելի էր տեսնել ուրիշների համար շարունակ եռանդուն կերպով հոգալիս, և բարյացակամ միջամտությանը գերազանցում էր Մեծն Պոմպեոսին (Plut., Crass., 7):

Պոմպեոսն այսպես էր վարվում անսահման փառասիրությունից դրդված (Plut., Crass., 14):

Մենատորների հարցին, թե արդյոք ինքը մտադիր է իր թեկնածությունն առաջադրել Մենատում, Պոմպեոսը պատասխանեց. «Հնարավոր է՝ այո, հնարավոր է՝ ոչ»: Պոմպեոսը նկատի ուներ այն, որ իր «այո-ն լավ քաղաքացիների համար է, իսկ ոչ-ը՝ վատ»: Պատասխանը թվում է չափազանց սնապարծ ու անբարտավան:

Կատոնի հակադրությունից սարսափահար Պոմպեոսը չի զլանում գործել ոչ անարդարություն, ոչ բռնություն: Իր ախոյանի՝ Դոմիտիոսի դեմ լարած թակարդը պատիվ չի բերում Պոմպեոսին:

Ըստ Պլուտարքոսի՝ Կրասսոսին թվում էր, թե պարթևները բնավ չեն տարբերվում ոչ հայերից, ոչ էլ կապադովկիացիներից, որոնց Լուկուլոսը հաղթել էր կամ կողոպտել ուզածի չափ (Plut., Crass., 18): Նույն Կրասսոսն իր ահաբեկված զինվորներին քաջալերելու համար ասում էր. «Հռոմի մեծ բախտը և փառքը մնում են անասանելի, քանի դեռ շնչում եք ...: Մեծ գործի ձգտողը պետք է տոկա: Ո՛չ առանց արյունահեղության Լուկուլոսը հաղթեց Տիգրանին, իսկ Լուկիոս Կոռնելիոս Սկիպիոնը՝ Անտիոքոսին» (Plut., Crass., 26):

Հայերը զինված էին այնպես, ինչպես պարթևները և մարտաձևով նման էին նրանց: Ըստ Պլուտարքոսի (Plut., Lucul., 26)՝ Տիգրանն իր բանակում ուներ 20.000 մետաձիգ և պարսատիկավոր, [55.000 հեծյալ, 150.000 ծանրագն հետևակայինների]՝ հռոմեացիների 10.000 հետևակայինների և 1000 պարսատիկավորների ու մետաձիգների դեմ, ու պարտվեց: Մինչդեռ Սուրենն իր 10.000 մետաձիգներով հաղթեց Կրասսոսին, որն ուներ 7 լեգեոն:

Պլուտարքոսից հետո, մեր ժամանակների պատմաբանները փորձեցին ամեն կերպ պատճառներ փնտրել Սուրենի հաղթանակի տպավորությունը նվազեցնելու նպատակով: «Նիզակակիր հեծելագործ իր թևերի մեջ առավ հռոմեացիներին և քառատրոփելով նրանց շուրջը՝ մետերով ուժասպառ արեց»: Թ. Մոմզենը մշակել է մի տեսություն, որի համաձայն Սուրենի օգտագործած մեթոդը դարաշրջան է կազմում ռազմական պատմության մեջ: Մարտ՝ հեռվից: Արդյո՞ք հռոմեացիները ծանոթ չէին աղեղին (Th. Mommsen, Römische Geschte, Bd. III, Berlin, 1857, VII, էջ 185):

Կրասսոսի հրամանով թալանվեցին [անընթեռնելի է] Հիերապոլսի Դերկետոյի, Երուսաղեմի Եհովայի և սիրիական շատ տաճարների հարուստ զանձերը: Հպատակ ժողովուրդները հարկադրված էին համակազմ մատակարարել նրան կամ փոխարենը ոսկի տալ:

¹ Հրամանատարներից մեկը՝ Էգնատիոսը, 300 հեծյալների հետ Խառան փախավ կեսգիշերին մոտ (Plut., Crass., 27):

Եվ այսպես՝ լրիվ մարտախմբով Կրասսոսն անցնում է Եփրատը: Պարթև սատրապը ջախջախվում է Իքնեում: Գրավում են մերձակա տարածքները, հաղթանակ ամրագրում Նիկեփորիոնում [անընթեռնելի՝ Callinicon...] (Th. Mommsen, VII, 185):

...Մտահար զենքը և հռոմեացիների զանգվածային կարգուկանոնն առաջին անգամ կզերազանցվեն հեռանետ զենքով և Մուրենի կիրառած մարտակարգով. այդ ժամանակվանից արդեն իսկ նախապատրաստվում էր ռազմական հեղափոխություն, որը պիտի իրագործվեր շատ ավելի ուշ՝ հրազենի կիրառությամբ: Իսկ դա եղավ Միննակա բնակավայրի մոտ, օրը՝ 53 թ. հունիսի 9-ին:

Կրասսոսը պարտված է. փորձում են գտնել մեղավորին: Պատճառն այն չէ, որ հռոմեացի զորավարը անխոհեմ է եղել: Ոչ: Մեղադրում են հայոց թագավորին, արաբների առաջնորդին, հույն Անդրոմաքոսին, որը իբր թե պարթևներին տեղեկացրել էր Կրասսոսի ծրագրի մանրամասներին: Ի վերջո՝ նա պարտվեց, որովհետև պարթևներն իրենց դրսևորեցին որպես փայլուն նետաձիգներ:

Կրասսոսի զլուխն ու ձեռքը ուղարկեցին Հայաստան՝ Օրոդեսին:

Արտավազը կարողացել էր դիմադրություն ցույց տալ Օրոդեսին և նրան հարկադրել խաղաղություն հաստատելու: Բարեկամությունն ամրապնդվեց Օրոդես արքայի որդու՝ Բակուրի հետ Արտավազդի բրոջ ամուսնությամբ: Այդ առթիվ կազմակերպել էին մեծ խնջույք, որի ժամանակ արտասանում էին հույն պոետների ստեղծագործություններից: Օրոդեսին ու Արտավազդին օտար չէին հունարեն լեզուն ու գրականությունը: Արտավազդը անգամ հայտնի էր որպես ողբերգությունների հեղինակ: Գրել է նաև ճառեր ու պատմական երկեր, որոնց մի մասը դեռևս գոյություն ունեին Պլուտարքոսի օրոք:

Երբ բերեցին Կրասսոսի զլուխը, սեղաններն արդեն հավաքել էին, և հույն ողբերգակ դերասան Յասոն Տրալլացին, Կարիա քաղաքից, Ազավեի դերն էր կատարում Եփրիպիդեսի Բաքոստիկներ-ից: Պարթևաց սուրհանդակ Միլլակեսը մտավ խնջույքի սրահ և Կրասսոսի զլուխը նետեց դահլիճի մեջտեղ:

Ներկաներն ուրախության ճիչեր արձակեցին: Այդ պահին Յասոնը վերցրեց Կրասսոսի զլուխը և երգածայնեց նույն ողբերգության հետևյալ տողերը՝

Բարձունքից ենք բերում լեռան

Եղնիկ՝ խոցված մեր փառահեղ հարվածներից:

Հաջողությունն է, ով որսորդ, ուղեկցում քեզ,

Պայտա տար քանկ ավարն այս (4):

(Եփրիպիդես, Բաքոստիկներ, տուն 1168)

Այնուհետև դերասանը երգչախմբի հետ փոխանակեց այս երկխոսությունը.

- **Չեզանից ո՞վ սպանեց նրան:**

- **Ե՛ս սպանեցի, դա ի՛նձ սխրամքն է:**

Այդ պահին տեղից վեր թռավ Պոմպսաթրոսը (Էքսատրոս) [որ սպանել էր Կրասսոսին], խլեց զլուխը և բացականչեց, թե ինքը պիտի հնչեցնի այդ տողերը և ոչ թե Յասոնը: Թագավորը (5), գոհ՝ նվեր շնորհեց նրան, իսկ Յասոնին պարզեց մեկ տաղանդ արծաթ:

Կրասսոսի արշավանքը ողբերգություն էր, իսկ այդ տեսարանը՝ դրա յուրատեսակ էքսոդոսը (6):

Թ. Մոմզեն, էջ 130: Արեմենյանների դարաշրջանից ի վեր առաջին անգամ Արևմուտքը պարտվեց Արևելքից: Հունական ողբերգությունը գրուտեսկային ու արյունահեղ ծաղրերգության էր վերածվում իր այլասերված գավակների ձեռքով:

Մուրենը սպանվեց (7): Օրոդեսը զինավորեց իր տակավին երիտասարդ ու անփորձ որդուն՝ Բակուրին (8): Օսակեսը (Վասա՞կ) նրան օգնում էր իր խորհուրդներով:

51 թ. պարթևները պաշարեցին Անտիոքը:

Օսակեսը (Վասա՞կ) ճաշկերույթ կազմակերպեց զոհվածների [հիշատակին նվիրված]:

Թ. Մոմզեն, էջ 192: Մակայն բոլորի՝ ինչպես բարեկամների, այնպես էլ թշմամիների համար պարզ էր, որ պարթև զինվորը չուներ ավելի մեծ արժանիքներ, քան Արևելքի մյուս զինվորները:

Թ. Մոմզեն, էջ 189: Այդ ժամանակ թափառական կատակերգուների մեծաթիվ խմբերից մեկը, որ հունական պոեզիան ու բեմական արվեստը տարածելու համար շրջագայում էին Ասիայի հեռավոր երկրներում, ներկայացնում էր Բաքոստիկները:

Ողբերգության միջնամասում, երբ Ազավեն բեմ է վերադառնում և բերում իր որդու՝ Թեբեի արքա Պենթևսի հոշոտված զլուխը, դերասանը կիսով չափ հեղինականացված բարբարոսների համար արտասանում է այս հայտնի տունը:

φέρομεν ἐξ ὀρέων
ἔλικα νεότομον ἐπὶ μέλαθρα
Μακαρίαν θήραν

Մենք բերում ենք լեռներից
Այս քաղեղը՝ նոր կտրած,
Լավն է որսը (9):

(*Քարտուհիներ*, տուն 1169-1171)

Այս էր Կրասսոսի արշավանքի վախճանը, որն, իրոք, ավարտվեց ող-
բերգության նման¹ (10):

III. [ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՈՈՍԵԱ-ՊԱՐԹԵՎԱԿԱՆ
ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
(Ջ. հ. II դ.-III դ. սկիզբ)]

Անտոնինոս Պիոս (138-161):

Cass. Dio, 69: Փարասման Իբերացին Հռոմ եկավ կնոջ հետ: Անտո-
նինոսը ընդարձակեց նրա իշխանությունը և թույլատրեց զոհաբերություն
մատուցել Կապիտոլիոնում: Բեյլոնայի (Εὐθείω) տաճարում (1) կանգ-
նեցրեց մի ձիարձան և մասնակցեց այդ տիրակալի, նրա որդու և իբերական
այլ երևելիների զինավարժություններին:

Մարկոս Ավրելիոս (161-180):

Cass. Dio, 71. 161 թ.: Մարկոս Ավրելիոսը կայսերակից ընտրեց Լուկիոս
Վերոսին, նրան ամուսնացրեց իր դստեր՝ Լուկիլլայի հետ և ուղարկեց
գորավիզ լինելու պարթևների դեմ պատերազմում:

162 թ.: «[Պարթևաց] Վաղարշը (2) վերսկսեց պատերազմը: Բոլոր կողմե-
րից շրջափակելով հռոմեական մի ամբողջ լեզեոն, որ Մեվերիանոս հյու-
պատոսի օրոք կայազորային ծառայության մեջ էր Հայկական Ելեզեա
ամրոցում (3), նա նետերի տարափով ոչնչացրեց այդ լեզեոնն ու նրա
առաջնորդներին, և, դեռ ավելին, առաջացավ դեպի Ասորիքի քաղաքները,
որտեղ ահ ու սարսափ տարածեց: Լուկիոսը¹ եկավ Ամտիոք, զգալի թվով
զինվորներ հավաքագրեց և հրամանատարության ներքո ունենալով լա-
վազույն զորավարներին², ինքն էլ ճամբարեց այդ քաղաքում, որպեսզի
կարգուկանոն հաստատի ու կենտրոնացնի պատերազմի համար անհրա-
ժեշտ միջոցներ, և զորքերը վստահեց Կասսիոսին:

¹ Ըստ Հուլիոս Կապիտոլինոսի, *Մարկոս Անտոնինոս* 8 և 20, Վերոս 4, Լուկիոսը ծմնող
հավանաբար անցկացրել է Լավոդիկեայում, իսկ ամառը՝ Անտիոքում և Դափնեում, քազ-
մատեսակ հաճույքների ու խրախուսանքների մեջ, մինչդեռ Անտոնինոսը Հռոմում զանազան
օգտակար միջոցառումներ էր ձեռնարկում պատերազմի համար, *տես նաև՝ Մուիդաս*, Բիբոս:

² *Julii Capitolini, Verus*, 7. *Duces autem confecerunt Parthicum bellum Statius Priscus, Avidius
Cassius et Martius Varus per quadriennium ita ut Babylonem et Armeniam vindicarent*
[Պարթևական պատերազմը չորս տարվա ընթացքում ավարտեցին Ստատիոս Պրիսկոս,
Ավիդիոս Կասսիոս ու Մարտիոս Վերոս զորահրամանատարները՝ և այնպես, որ նվաճեցին
Բաբելոնն ու Հայաստանը]:

¹ *Plut., Crass.*, 33.

165 p.: Վերջին քաջարար դիմադրեց Վաղարշի գրոհին, և քանի որ այս քառազորի դաշնակիցների շրջանում դասալիքություն սկսվեց, նրան էլ հետապնդեց նահանջելիս: Առաջացավ մինչև Մելիկիա և Տիգրան, ավերեց Մելիկիան՝ հրո ճարակ դարձնելով, և գետնին հավասարեցրեց Վաղարշի պալատը Տիգրանում»¹:

Cass. Dio, 71, 2-3.

‘Ο γὰρ Οὐολόγαισος πολέμον ἤρξε, καὶ στρατόπεδόν τε δλον ‘Ρωμαϊκὸν τὸ ὑπὸ Σεβηριανῶ τεταγμένον ἐν τῇ ‘Ελεγειᾷ, χωρὶφ τινὶ τῆς ‘Αρμενίας, περισχῶν παντόθεν αὐτοῖς ἡγεμόσι κατετόξευσε καὶ διέφθειρε, καὶ τῆς Συρίας ταῖς πόλεσι πολὺς ἐπήγει καὶ φοβερός. ‘Ο οὖν Λούκιος ἐλθὼν ἐς ‘Αντιόχειαν καὶ πλείστους στρατιώτας συλλέξας, καὶ τοὺς ἀρίστους τῶν ἡγεμόνων ὕφ’ ἑαυτὸν ἔχων, αὐτὸς μὲν ἐν τῇ πόλει ἐκάθητο διατάττων ἕκαστα καὶ τὰς τοῦ πολέμου χορηγίας ἀθροίζων, Κασσιῶ δὲ τὰ στρατεύματα ἐπέτρεψε. καὶ ὃς ἐπίοντα τε τὸν Οὐολογαῖσον γενναίως ὑπέμεινε, καὶ τέλος ἐγκαταλειφθέντα ὑπὸ τῶν συμμάχων καὶ ὀπίσω ἀναχωρήσαντα ἐπεδίωξε, μέχρι τε Σελευκείας καὶ Κτησιφώντος ἤλασε, καὶ τήν τε Σελεύκειαν διέφθειρεν ἐμπρήσας, καὶ τὰ τοῦ Οὐολογαῖσου βασιλεία τὰ ἐν τῇ Κτησιφῶντι κατέσκαψεν.

Սակայն վերադառնալիս շատ զինվորներ կորցրեց՝ սովի ու հիվանդության պատճառով: Հանձնայն դեպս՝ գործի մնացորդի հետ վերադարձավ Ասորիք: Հետագայում Լուկիանը դավադրություն կազմակերպեց իր աներոջ՝ Մարկոս Ալեքսանդրի դեմ, սակայն մահացավ քույրն (Jo. Xiphilinus):

164 p.: «Մարտիոս Վերոսը Թուրքիայից ուղարկեց Սոսիանոսին Հայաստան բերելու (4): Այդ զորավարն իր զենքի ահուսարսափով և բոլոր հան-

¹ Julii Capitolini, Marcus Antoninus 8. Fuit eo tempore etiam Parthicum bellum, quod Vologaesius paratum sub Pio, Marci et Veri tempore indixit, fugato Attidio Corneliano, qui Syriam tunc administrabat. [Այդ ճյուղն ժամանակ եղավ և Պարթևական պատերազմը, որը Վաղարշը պատրաստում էր դեռ Պիոսի, բայց սկսեց Մարկոսի և Վերոսի օրոք, փախուստի մտածելով Աստիդիոս Կորնելիանոսին, Ասորիքի կառավարչին]: Նույնը, Verus, 6. ... quum interfecto legato, caesis legionibus, Syriis defectionem cogitantibus, Oriens vastaretur. [«երբ սպանվեց լեգատը, կոտորվեցին լեգիոնները, Ասորիքի<իշխանավորները> մտադիր էին անջատվել, և Արևելքը ենթարկվում էր կորստույթի]:

գանձերներից օգտվելու ճարակությամբ ճշգրիտ կատարեց իր առաքելությունը: Ինչ վերաբերում է Մարտիոսին՝ նա ոչ միայն ընդունակ էր զենքով հնազանդեցնելու թշնամիներին (ինչը զորավարի առաքելությունն է), արագորեն նրանց առաջն առնելու կամ խորամանկորեն խաբելու, այլև հավատացնելու համոզիչ խոսքով, գայթակղելու ճոխ մվերներով և հույսի գրավչությամբ: Այն ամենի մեջ, ինչ անում էր և այն ամենի մեջ, ինչ ասում էր, կար շնորհ, որ հանգստացնում էր յուրաքանչյուրի բորբոքվածությունն ու գայրույթը և բորբոքում հույսը: Նա զիտեր նաև շողորորբելու, մվերներ մատուցելու և սեղանի շուրջ հրավիրելու պառ: ‘Դեռ ավելին՝ վարքով դրսևարվող եռանդը, թշնամիների դեմ գրոհներում տոկուն ծրաշարությունը բարբարոսներին հասկացնում էին, որ իրենց ավելի ձեռնասու էր նրա բարեկամությունը, քան ատելությունը: Եվ այսպիսով, ժամանելով Նոր քաղաք (5), որը գրադեցնում էր Պրիսկոսից¹ հետո հաստատված հոսմեական մի կայազոր, և իր խոսքերով ու գործողություններով հանդարտեցնելով խռովության փորձը, նա այդ քաղաքը դարձրեց Հայաստանի մայրաքաղաք»:

Մտիդաս (Suidae Lexicon), v. Մարտիոս

‘Օտի Մարտիոս Բհոս տὸν Θουκυδίδην ἐκπέμπει καταγαγεῖν Σύαιμον εἰς ‘Αρμενίαν՝ ὃς δέει τῶν ὀπλων καὶ τῇ οἰκειᾷ περὶ πάντα τὰ προσπίπτοντα εὐβουλίᾳ τοῦ πρόσω εἶχετο ἐρρωμένως. ἦν δὲ ἱκανὸς ὁ Μάρτιος οὐ μόνον ὀπλοῖς βιάσασθαι τοὺς ἀντιπολέμους ἢ ὀξύτητι προλαβεῖν ἢ ἀπάτη κατασοφίσασθαι, ἤπερ ἐστὶ στρατηγῶν ἀλκῆ, ἀλλὰ καὶ λόγῳ πιθανῶ πείσαι καὶ ὠρεαῖς μεγαλόφροσιν οἰκειώσασθαι καὶ ἐλπιδι ἀγαθῇ δελεάσαι. χάρις τε ἦν ἐπὶ πᾶσι τοῖς πρᾶσσομένοις ὑπ’ αὐτοῦ καὶ λεγομένοις, τὸ μὲν ἀγανακτοῦν ἐκάστου καὶ τὸ θυμούμενον παραμυθουμένη, τὸ δὲ ἐλπίζον ἐτι μᾶλλον αὖξουσα. κολακειᾶς τε δῶρων καὶ τῆς παρὰ τραπέζαις δεξιώσεως καιρὸν ἦδει. οἷς προσὸν τὸ πρὸς τὰς πράξεις σύντονον καὶ τὸ πρὸς τοὺς ἐχθροὺς σὺν ὀξύτητι δραστήριον, αἰρετώτερον ἐδεικνυε τοῖς βαρβάροις εἶναι τῆς φιλίας αὐτοῦ μᾶλλον ἢ τῆς ἐχθρας ἀντιποιεῖσθαι. ἀφικόμενος οὖν ἐς τὴν Καινὴν πόλιν, ἦν φρουρὰ ‘Ρωμαίων κατεῖχεν ἐκ Πρίσκου καταστάσα, νεωτερίζειν

¹ Julii Capitolini, Marcus Antoninus, 9: Gestae sunt res in Armeniae prospere per Statium Priscum, Artaxatis captis. [Հայաստանում հաջողությամբ գործում էր Ստատիոս Պրիսկոսը՝ «նրա օրոք» գրավելի է Արտաշատը]:

πειρωμένους λόγω τε και έργω σωφρονίσας απέφηνε πρώτην είναι της 'Αρμενίας.

Քաղաքը (6) եղբոր՝ Միհրդատի (Մերիթաթի) հետ մեկնեց Հռոմ. եղբոր գերեզմանի վրա նա մեզ համար բողի է մակագրությունը [«...<եւ,>Ավրելիոս Պակարոս, Հայաստանի մեծն արքա, քարադառն գնեցի իմ քաղքը եղբոր Ավրելիոս Միհրդատի համար, որ պարեց ինձ հետ հիսունվեց տարի և երկու ամիս »].

Θ.Κ. | Αύρηλιος Πάκορος βασιλεύς μέγας τής 'Αρμενίας ήγόρακα σαρκοφάγον Αύρη(λίω) Μεριθά|τι άδελφώ γλυκύτάτω ζήσαντι| σὺν έμοι έτη νς' μή<νας> β'

Corpus Inscriptionum Graecorum, 6559. Georg Kaibel n° 1472, 1890.

Թ. Մսնգեմ, Հռոմի պատմություն, հատ. V, գիրք 8-րդ, Զ. հ. 164 ք.:

Մարկոս Ավրելիոսը Կասսիոսին հանձնեց ամբողջ Ասիայի կառավարումը, ինքն անձամբ պատերազմ մղեց Հիստերի բարբարոսների, յազիգների և մարկոմանների դեմ:

172/173 ք.: Տուրտոսոս քաղաքորին վատերուց հետո, քվադներն իրենց տիրակալ ճշանակեցին Արիոգայսոսին:

και τὸν βασιλέα σφῶν Φούρτιον έκβαλόντες 'Αριόγαισον αὐτοὶ έφ' έαυτῶν βασιλέα σφίσιν έστήσαντο.

Արիոգայսոսի դեմ վրդովված՝ Մարկոս Ավրելիոսը հրապարակավ 1000 ոսկեդրամ խոստացավ նրան, ով այդ տիրակալին ողջ կրերի, և 500՝ նրան, ով իրեն ցույց կտա նրա կարած գույքը:

Մյուս դեպքերում նա իրեն մարդասիրաբար էր պահում, նույնիսկ՝ անենառիտերին թշնամիների նկատմամբ:

Փոխանակ սպանել տալու սատրապ Տրդատին (7), որը մեղադրվում էր Հայաստանում հուզումներ առաջացնելու, հենիոքների թագավորին սպանելու և (Տրդատի) գործողությունները դատապարտող Վերոսին¹ սրով սպառնալու համար, նրան պարզապես արքորեց Բրիտանիա:

¹ Խոսքը Մարտինո Վերոսի մասին է, որը 175 ք. Կապադովկիայի կառավարիչն էր (Cass. Dio 72, 22: τής Καππαδοκίας άρχων), իսկ 176 ք. դարձավ Ասորիի կառավարիչը (Յուլիանոսի, 29), կայսրի դեմ Կասսիոսի ընդվզման կապակցությամբ:

Cass. Dio 72.14. καίτοι τά τε άλλα άει ποτε φιλανθρώπως και τοίς πολεμοτάτοις χρώμενος, και Τριδάτην σατράπην τὰ τε έν τή 'Αρμενία ταράζαντα και τὸν τῶν 'Ηνιόχων βασιλέα¹ άποσφάζαντα, τῷ τε Ουήρω έπιτιμῶντι οί περι τούτων τὸ ξίφος έπανατεινάμενον, μη κτείνας άλλ' ές Βρεττανίαν πέμψας (Exc., V. 304).

Ավրելիոս Կոնստանտինոս (180-193, 1 հունվարի):

Մեպոսինոս Մեվերոս (իշխանության համար պայքար Պերտինաքսի՝ սպանված 193 ք. ապրիլին, Դիդիոս Մեվերոս Հուլիանոսի † հունիսի 2-ին, Նիզեի † 194 ք., միջև) 193-211, 4 փետրվարի:

Կարակալա, նրա որդին՝ 211-217, 8 ապրիլի:

195 ք.: Քաղաքացիական պատերազմից հետո Մեվերոսը, «փառատենչությամբ համակված»՝ էպիսուրմիա ծօջղչ, իր գեներն ուղղեց բարբարոսների՝ օսրոնեցիների, ադիաբենցիների և արարների դեմ: Առաջին երկուսը, որոնք ըմբոստացել էին և պաշարել Մծրինը, պարտություն կրեցին Մեվերոսից, իսկ Մեվերոսի հակառակորդ Նիզեի մահվանից հետո դեսպանություն ուղարկեցին ոչ թե իրենց մեղքերի համար ներողություն հայցելու, այլ նրա բարեհաճությունը խնդրելու՝ պատրվակելով, որ իրենք, տվյալ դեպքում, գործել են նրա շահերից ելնելով: Իրոք,- ասում էին նրանք,- նրա պատճառով են սպանել Նիզեի կողմնակից զինվորներին: Նրանք մահն ակնհայտ ուղարկեցին Մեվերոսին՝ խոստանալով վերադարձնել գերիներին և աճյունների մնացորդները: Այդուհանդերձ, չէին ցանկանում ոչ լքել իրենց գրաված վայրերը, ոչ էլ կայազորներ ընդունել: Բնավ չէին ցանկանում: Պահանջում էին, որ իրենց երկրում թողնված բոլոր զինվորները հետ քաշվեն: Այս շարժառիթներով է պատերազմ ձեռնարկվել նրանց դեմ:

Մեվերոսն անցավ Եփրատը և հայտնվեց թշնամական տարածքում: Նա գնաց Մծրին և մնաց այնտեղ: Լատերանոսին, Կանդիդոսին և Լայտոսին ուղարկեց բարբարոսների դեմ, մեկին՝ մի կողմից, հաջորդին՝ մյուս: Հարձակվելով թշնամու վրա՝ նրանք անայացրին տարածքները և քաղաքներ նվաճեցին:

¹ Տրայանոսի օրոք դա 'Αγχιλαός՝ Անքիլոսն էր: Հմմտ. Մալալասի մոտ՝ պարթև թագավորի դեսպանի անունը: Յազիգների թագավորները նույնպես կրում էին իրանական անուններ՝ Βανάδασπος, Ζαντικός (Cass. Dio):

196 թ. Մեվերոսն իր բանակը կրկին բաժանելով երեք զորաբանակի՝ Լայառսի, Անիվիհնոսի և Պորոսի հրամանատարությամբ, ուղղորդեց Ադիաբենեի դեմ: Նրանք այստեղ ներխուժեցին ո՛չ առանց դժվարության: Մեվերոսը արտոնություններ տվեց Մծրինին, որի կառավարումը վստահեց մի «հեծյալի»՝ մեծատոռնիկի, պարծենալով, թե ընդարձակ տարածք է ավելացրել կայսրությանը, իսկ այդ քաղաքը Ասորիքի համար դարձրել է պատվար:

Մակայն իրադարձությունները համոզիչ կերպով ցույց տվեցին, որ այդ ձեռքբերումը հռոմեացիների համար եղել է «շարունակական պատերազմների, ինչպես նաև բազում ծախսերի պատճառ, քանզի այն քիչ բան է բերում և շատ ծախսերի տեղիք տալիս, իսկ մենք, պատերազմի մեջ լինելով մեր հարևանների՝ մարերի ու պարթևների հետ, մարտնչում ենք, այսպես սասած, ամեն պահ, այդ տարածքը պաշտպանելու համար» (Cass. Dion, 75, 1-3):

Այս պատերազմը հազիվ ավարտված՝ Մեվերոսը քաղաքացիական պատերազմի մեջ մտավ Կեսար Ալեքիհնոսի դեմ: Վերջինս պարտությունից հետո ինքնասպան եղավ:

Մյնոսիետև, 198 թ. Մեվերոսն իր զենքն ուղղեց պարթևների դեմ: Մինչևեռ նա զբաղված էր քաղաքացիական պատերազմով, պարթևներն անպատիժ դարձել էին Միջագետքի տերերը և գրավել առանց Լայառսի պաշտպանության մնացած Մծրին քաղաքը, որն էլ փրկեց այն: Լսելով կայսրի ժամանման լուրը՝ պարթևները քաշվեցին իրենց երկիրը («նրանց առաջնորդը Վաղարշն (8) էր, որի եղբայրը Մեվերոսի հետ էր» (ήρχε δὲ αὐτῶν Οὐολόγγαισος, οὐ ἀδελφὸς συνήν τῷ Σεουήρω)): Մեվերոսը կտրեց անցավ Եփրատը, գրավեց Մելիկիան ու Բարելոնը: Գրավեց նաև Տիգրանը և իր զինվորներին թույլատրեց թալանել այն, կոտորեց մեծ քանակով բնակչություն և կենդանի գերեվարեց նոտավորապես 100 հազար մարդու: Այդուհանդերձ չհետապնդեց Վաղարշին և չպահեց Տիգրանը, «սակե նրա արշավանքի միակ նպատակն այդ քաղաքը թալանելն էր» ἄλλ' ὥσπερ ἐπὶ τούτῳ μόνον ἐστρατευκῶς ἴν' αὐτὴν διαρπάσῃ ᾗχετο (Cass. Dio, 76, 9):

Մեվերոսը փորձ կատարեց գրավել Հաարան, սակայն անհաջողության մատնվեց: Ըարժվեց դեպի Պաղեստին, «այնուհետև Վերին Եգիպտոս»՝ բարձրանալով Նեղոսն ի վեր» (και ἐς τὴν Αἴγυπτον τὴν ἄνω διὰ τοῦ Νεῖλου ἀνέπλευσε) և անբողոքությամբ գրավեց այն: Ինչ-որ հիվանդությունն նրան խանգարեց հասնելու Երովպիայի սահմանները: (Cass. Dio, 76, 13):

Անտոնինոս Կարակալլա (211-217):

Cass. Dio, 77, 12.

213 թ.: «Օսրոնեի թագավոր Արգարը, երբ դարձավ իր ազգակիցների առաջնորդը, նրանց զլխավորներին չազատեց տառապանքներից: Արտաբուստ նրանց ստիպում էր ընդունել հռոմեացիների սովորությունները, բայց, իրականում, անսահմանորեն շարաշահում էր իր իշխանությունը նրանց նկատմամբ»:

ὅτι Ἄγβαρος ὁ τῶν Ὀσροηνῶν βασιλεὺς ἐπειδὴ ἄπαξ ἐν κράτει τῶν ὁμοφύλων ἐγένετο, οὐδὲν ὁ τι δεινотάτων τοὺς προέχοντας αὐτῶν οὐκ ἐξείργασατο. λόγῳ μὲν ἐς τὰ τῶν Ῥωμαίων ἦθη μεθίστασθαι ἠνάγκασεν, ἔργῳ δὲ τῆς κατ' αὐτῶν ἐξουσίας ἀπλήστως ἐνεφορεῖτο.

«[Անտոնինոս Կարակալլա կայսրը] օսրոնեցիների թագավոր Արգարին նեղորեն հորդորելով այցելել իրեն իրև բարեկամի, այնուհետև բռնեց նրան, զնրան նետեց և այսկերպ զավթեց Օսրոնեան, որն այլևս թագավոր չուներ» (ήπατηκῶς γὰρ τὸν βασιλέα τῶν Ὀσροηνῶν Αὐγαρον ὡς δὴ παρὰ φίλον αὐτὸν ἦκειν, ἔπειτα συλλαβῶν ἐδόσε, καὶ τὴν Ὀσροηνὴν οὕτως ἀβασίλευτον οὖσαν λοιπὸν ἐχειρώσατο):

Ինչ վերաբերում է Հայաստանի թագավորին (9), որը տարածայնությունների մեջ էր իր իսկ որդիների հետ, նրան ևս բարեկամական նամակներով հրավիրեց՝ իրենց միջև համաձայնություն հաստատելու պատրվակով, և հետը վարվեց այնպես, ինչպես վարվել էր Արգարի հետ: Այդուհանդերձ, հայերը, որ ամենևին չէին ցանկանում անցնել նրա կողմը, զենքի դիմեցին և նրանցից ոչ մեկը բնավ չվստահեց նրան, այնպես որ նա փորձով համոզվեց, թե իր բարեկամների նկատմամբ նեղ գործունեությունը որքան վնասակար է կայսրի համար»:

τὸν δὲ τῶν Ἀρμενίων βασιλέα διαφερόμενον μετὰ τῶν ἰδίων παίδων ἐκάλεσε μὲν φιλικοῖς γράμμασιν ὡς δὴ εἰρηνεύσων αὐτούς, ἔδρασε δὲ καὶ περὶ τούτους ἃ καὶ περὶ τὸν Αὐγαρον. οὐ μὴν καὶ οἱ Ἀρμένιοι προσεχώρησαν αὐτῷ ἄλλ' ἐς ὄπλα ἐχώρησαν καὶ οὐκετ οὐδεὶς αὐτῷ τὸ παράπαν οὐδὲν ἐπίστευσεν, ὥστε καὶ ἔργῳ αὐτὸν ἐκμαθεῖν ὅσον αὐτοκράτορι ζημίωμά ἐστι τό τι ἀπατηλὸν πρὸς φίλους πρᾶξαι (Cass. Dio, 77, 12).

Նա պարծենում էր, որ «պարթևների թագավոր Վաղարշի (10) մահվանից հետո նրա որդիները՝ կոպուս էին գահի համար» (Օսոլոցաիսուս տոս Կոս Բարթոն Բասիլեոս տետելետիսանտոս օի քաիդես քերի տից Բասիլեիաց Էմաչոնտո...)՝ իր անձնական մտադրությանը վերագրելով այն, ինչը պատահականության արգասիք էր, մեծ հաճույք էր ստանում՝ տեսնելով եղբայրների երկպառակությունը և օտարների երկուստեք կոտորածները:

Պարթև արքայորդիների վերաբերյալ չերկնտեց գրելու Մենատին՝ եղբայրներ են և երկպառակության մեջ են, այդ եղբայրների վատ հարաբերությունները մեծ դժբախտություններ կպատճառեն պարթևական թագավորությանը. ասես այդ վատ հարաբերությունները, որ կարող էին բարբարոս պետության կորստյան պատճառ լինել՝ հոսմեական կայսրության փրկությունն էին:

Պատերազմի նախապատրաստություն ընդդեմ հայերի և պարթևների

Զ. հ. 212 ք.: Կարակալյան Ալեքսանդր [Մակեդոնացու] հանդեպ այնպիսի կիրք ուներ, որ կազմեց 16.000 մարդուց բաղկացած փաղանգ, բորբն էլ՝ մակեդոնացիներ, անվանեց Ալեքսանդրի անունով, զինեց այդ զորավարի ժամանակաշրջանում գործածվող զենքերով, այն է՝ եզան անմշակ կաշվից սաղավարտ, կտավատի երեքտակ գործվածքից զրահագեցստ, պղնձե վահան, երկար ճիզակ, կարճ նետ, սոնապաններ և սուր. կրանոց օմոթճեյոն, Թորաչ Լյոսոս տրիմյոտոս, ասպից Կալկոն, ճորս Թաքրոն, ալիմի Բրաչեյա, կրոպիդեց, ճիփոց (Cass. Dio, 77, 7):

214-215 քք. նա ճմեռեց Նիկոմեդիայում, շարային վարժություններով մարզեց մակեդոնական փաղանգին և հայերի ու պարթևների դեմ պատերազմի նպատակով ստեղծեց ռազմական երկու մեծ մեքենա (Cass. Dio, 77, 18):

215 ք.: Արշավանքի ժամանակ պարթևների հետ ընդհարման շարժառիթը եղավ այն, որ Վաղարշը հրաժարվում է իրեն հանձնել իր պահանջած Տրդատին (11), ինչպես նաև ոմն Անտիոքոսին. Էկոտրատեոսանտի ճե աստփ քատա տոն Բարթոն քրոփասից տոս քոլեմոս դոն Դոն Օսոլոցաիսոս տոն

¹ Վաղարշ և Արտավան, 213-227:

տե Կրիդատոն քալ 'Անտիոչոն տյա քետ' աստոս Էչայտիսանտի աստփ օսկ ԷչԷճոքեն (Cass. Dio, 77, 19):

Անտիոքոսը ծագումով Կիլիկիայից էր և սկզբում ձևացնում էր, թե զբաղվում է կինիկյան փիլիսոփայությամբ, ինչը նրան հնարավորություն էր ընձեռել պատերազմի ժամանակ բազմաթիվ ծառայություններ մատուցել զինվորներին. նրանց [սովորեցնում] էր կոփվել ցրտի դեմ՝ նետվելով ձյան մեջ և նրանում թավալվելով, ինչի համար նվերների և պատիվների էր արժանացել Մեվերոսի և հենց իր՝ Անտոնինոսի կողմից:

Սակայն դրանից սնապարծությամբ համակվելով՝ նա միացավ Տրդատին՝ և նրա հետ միասին անցավ պարթևների արքայի կողմը:

Էքարթեյց ճե Էքի տոտոյց տփ Կրիդատոն սոնեչետասոն, քալ քետ' աստոս քրոս տոն Բարթոն դոտոմոլոչե (Cass. Dio 77, 19. Joannis Xiphilini Eritoma, 335. Suidae lexicon: 'Անտիոչոս օ աստոմոլոս «Անտիոքոս փալսստակ»):

«Երբ Պարթևը սարափահար հանձնեց Տրդատին ու Անտիոքոսին, Անտոնինոսն անմիջապես հրաժարվեց իր արշավանքից»: տոս ճե Բարթոս փոթրեոնտոց քալ տոն Կրիդատոն քալ տոն 'Անտիոչոն Էքճոնտոց, ասփդե տիլն ստրատեյան Էն տփ քարատիքա (Cass. Dio, 77, 21):

Բայց Թեոկրիտոսին մի զորագնդի հետ ուղարկելով հայերի դեմ՝ պարտվեց այս ժողովրդից, ինչը տարավ որպես ծանր անհաջողություն: Այս Թեոկրիտոսը, որ ստրուկից է ծնվել և մանկությունից ի վեր պարել բեմի վրա, Անտոնինոսի օրոք հասավ այնպիսի հզորության, որ պրետորության երկու պրեֆեկտները նրա համեմատ ոչինչ էին: Մեկ այլ կեսարացի² ևս՝ Էպագաթոսը, իշխանությամբ ու հանդգնությամբ հավասարվեց նրան: Եվ այսպես, Թեոկրիտոսը մահապատժի ենթարկեց բազմաթիվ քաղաքացիների:

Զ. հ. 216 ք.: Այնուհետև իր բանակն առաջնորդելով պարթևների երկիր, այն պատճառաբանությամբ, թե Արտավանը չի ցանկանում իրեն տալ իր դստերը, որի ձեռքը նա խնդրել էր (Արտավանին, իրոք, քաջ հայտնի էր, որ առերևույթ էր իր դստեր հետ կայսրի անուսնության ցանկությունը, իրականում նա ուզում էր տիրանալ պարթևների թագավորությանը), Ան-

¹ էչ 511: Ըստ Յուստինի [F. Justi, Iranische Namenbuch], այդ Տրդատը Վաղարշ V-ի և Արտավան V-ի հորեղբայրն էր, ուստիև՝ պարթև իշխան. Դա սխալ է: Տրդատը ... [նախապատրաստում անավարտ է. - քարգմ.]:

² Թեոկրիտոսը նույնպես կեսարացի էր՝ Կալսոթեյոց:

տոնինուսը ամայացրեց երկրի մի մեծ տարածք, որ եզերում էր Մարաստանին, հանկարծակի հարձակմամբ խորտակեց նրա ամրոցները, գրավեց Արբելան և բացելով պարթև արքաների գերեզմանները, ցաքուցրիվ արեց նրանց ոսկորները, որովհետև պարթևները նրան չառճակատեցին (Cass. Dio, 79, 1): Ըստ Հերոդիանոսի (IV, 9 et 10), պարթև արքան նախ մերժեց Անտոնինոսի պահանջը, բայց հետո, գայթակղված կայսրի պարզակներից ու երդումներից՝ նրան ընդունեց իր տիրույթներում: Վերջինս դրանից օգտվեց՝ անակնկալ կերպով հարձակվելու և երկիրը ամայացնելու (Aelii Spartiani Vita Hadriani, 6. per Cadusios fines et Babylonios ingressus՝ [«Կադիսիների¹ և բաբելոնացիների սահմաններն անցնելով, հարձակվեց»]):

Բարբարոսները քաշվեցին Տիգրիսից այն կողմ գտնվող լեռները, որպեսզի նախապատրաստվեն պաշտպանության: Կայսրը քողարկեց այդ նահանջը՝ պարծենալով, թե լիովին ջախջախել է նրանց, որոնց անգամ չէր էլ տեսել (ինչպես գրել է նա):

Ը. հ. 217 թ.: Պարթևներն ու մարերը, մեծաթիվ զորք հավաքելով, ահաբեկեցին կայսրին, որովհետև նա քաջ էր՝ սպառնալիքի, և պատրաստ՝ հանդգնության, սակայն թուլամորթ էր կովի մեջ:

217 թ. ապրիլի 8-ին Տիգրիսից մեկնելով Խառան՝ Կարակալլան սպանվեց իր զինվորների կողմից:

Հռոմի նոր կայսր Մակրինոսը՝ ծագումով մավր, ծննդով Կեսարիայից, անհայտ ծնողների որդի էր: Նրա մի ականջը մավրերի նման ծակ էր: Բայց նրա չափավորությունը զուգակշռում էր նրա ստորին ծագումը:

217 թ.: Մակրինոսը տեսնելով, որ Արտավանը չափազանց զայրացած է կատարվածից ու խիստ բորբոքված և մեծաթիվ զորքով ներխուժել է Միջագետք, նախ նրան իր իսկ կամքով, բարեկամական խոսքերով հանդերձ վերադարձրեց գերիներին՝ կոչ անելով խաղաղություն հաստատել և տեղի ունեցածի պատճառը բարդեց Կարակալլայի վրա: Սակայն Արտավանը, ամենևին չցանկանալով ընդունել այդ առաջարկները, միաժամանակ նրան հրահանգեց վերականգնել կործանված ամրոցներն ու քաղաքները, ամբողջությամբ լքել Միջագետքը և հասցված մյուս վճարների, ինչպես նաև արքաների գերեզմաններն ավերելու համար հատուցել՝ Մակրինոսին արհամարհելով որպես անարժան մորելուկի և անչափ զայրանալով նրա վրա: Մակրինոսը անգամ խորհելու ժամանակ չունեցավ՝ շարժվելով իր հակառակորդին ընդառաջ, որն արդեն հասել էր մինչև Մծրին, մարտերից մեկում պարտություն կրեց:

218 թ.: Թե՛ իրեն հատուկ թուլամորթության և թե՛ զինվորների անկարգապահության պատճառով Մակրինոսը չհամարձակվեց շարունակել պատերազմը: Խաղաղության հասնելու համար նա շատ մեծ ծախսեր արեց, փորձում էր նվերներով իր կողմը գրավել ինչպես հենց իրեն՝ Արտավանին, այնպես էլ նրանց, ովքեր հզոր էին իր դիմաց, այնպես որ ծախսերի ամբողջ գումարը կազմեց մոտավորապես 15 միլիոն դրաքմե՛: Արտավանը համաձայնեց բանակցել: Մակրինոսը սենատին չգրեց ճշգրիտ պատմությունն այն ամենի, ինչ տեղի էր ունեցել Արտավանի և իր միջև: Ահա թե ինչու, որոշման համաձայն, զոհաբերություններ մատուցվեցին նրա հաղթանակի պատվին և նրան շնորհվեց «Պարթևական» պատվանունը: Նա չհամաձայնեց՝ անաչելով իրրև մականուն կրել իրեն հաղթած թշնամուց փոխառված անուն:

«Հայոց թագավորի դեմ պատերազմը նույնպես դադարեց: Համաձայնելով ընդունել Մակրինոսի ուղարկած թագը, Տրդատը ետ ստացավ Կարակալլայի [Տարակալասի] կողմից տասնմեկ ամիս բանտարկված մորը, Հայաստանից տարված ամբողջ ավարն ու Կապադովկիայում հոր ունեցվածքը (12)՝ հույս փայփայելով ստանալ նաև ամենամյա տուրք, որ իրեն վճարում էին հռոմեացիները» (13):

218 թ.: καὶ μέντοι καὶ τὰ κατὰ τὸν Ἀρμένιον πολεμωθέντα, ὥσπερ εἶπον, κατέστη, τοῦ [τε] Τιριδάτου πεμφθὲν αὐτῷ τὸ διάδημα παρὰ τοῦ Μακρίνου λαβόντος, καὶ τὴν μητέρα, ἣν ἔνδεκα μῆσιν ὁ Ταραύτας ἐν τῷ δεσμοτηρίῳ κατεσχῆκει, τὴν τε λείαν τὴν ἐκ τῆς Ἀρμενίας ἀλοῦσαν κομισαμένου, καὶ τὰ χωρία ὅσα ὁ πατήρ αὐτοῦ ἐν τῇ Καππαδοκίᾳ ἐκέκτητο, τὸ τε [γὰρ] ἀργύριον δ' κατ' ἔτος παρὰ τῶν Ῥωμαίων εὐρίσκετο, ἐλπίσαντος λήψεσθαι (Cass. Dio, 78, 27).

(Կարակալլան Վաղարշից պահանջել էր Տրդատին: Բայց հայերը զենքը վայր չէին դրել: Տրդատին հաջողվել էր ազատվել գերությունից և այդ ժամանակ նա իշխում էր Հայաստանում):

Պարտված Մակրինոսը 218 թ. հունիսի 8-ին Էպագաթոսի միջոցով իր որդուն ուղարկեց պարթևների արքա Արտավանի մոտ (Cass. Dio, 78, 39):

¹ Կիտոբ[ե՛] է] Carduchi [«կորդվաղիներ» ցեղանվան հետ]:

¹ 50 միլիոն դիմար, տե՛ս Թ. Մոզզեմ, հատ. V, գիրք 10-րդ, էջ 264:

Բազում ժողովուրդների շրջանում ծագած շատ խոռվություններ հանդարտվեցին: Բայց այն, ինչ տեղի ունեցավ Միջագետքում՝ առավել սարսափելի էր և բոլորին հիմնավոր վախ ներշնչեց:

«Արտաքսերքսես [Արտաշես, Արտաշիր] անվամբ մի պարսիկ, երեք ճակատամարտերում պարթևներին հաղթելուց և Երանց արքա Արտավանին սպանելուց հետո (14), շարժվեց դեպի Հատրա քաղաքը, որպեսզի այն հենակետ դարձնի հռոմեացիների դեմ արշավանքների համար: Թեև խորտակեց քաղաքի պարիսպները [և դարաններից բազմաթիվ զինվորներին դուրս նետեց], այնուամենայնիվ մահանջեց Մարաստան, և նվաճելով Երա [ինչպես և Պարթևստանի] զգալի մասը՝ [(որը՝ ուժով, որը՝ սարսափով)] շարժվեց դեպի Հայաստան: Այստեղ պարսկերով տեղացիների, [ինչ-որ] մարերի և Արտավանի զավակների կողմից, ոմանց կարծիքով՝ փախուստի դիմեց, մյուսների կարծիքով՝ հետ քաշվեց, որպեսզի նախապատրաստվի ավելի մեծ արշավանքի»:

227թ. Ἀρταξέρξης γὰρ τις Πέρσης τούς τε Πάρθους τρισὶ μάχαις νικήσας, καὶ τὸν βασιλέα αὐτῶν Ἀρτάβανον ἀποκτείνας, ἐπὶ τὰ Ἄτρα ἐπεστράτευσεν, ἐπιβασίαν ἀπ' αὐτῶν ἐπὶ τοὺς Ῥωμαίους ποιούμενος. καὶ τὸ μὲν τεῖχος διέρρηξεν, συχνούς δὲ δὴ τῶν στρατιωτῶν ἐξ ἐνέδρας ἀποβαλὼν ἐπὶ τὴν Μηδίαν μετέστη, καὶ ἐκείνης τε οὐκ ὀλίγα καὶ τῆς Παρθίας, τὰ μὲν βίᾳ τὰ δὲ καὶ φόβῳ, παραλαβὼν ἐπὶ τὴν Ἀρμενίαν ἤλασε, κἀνταῦθα πρὸς τε τῶν ἐπιχωρίων καὶ πρὸς Μήδων τινῶν τῶν τε τοῦ Ἀρταβάνου παίδων πταίσας, ὡς μὲν τινες λέγουσιν, ἔφυγεν, ὡς δ' ἕτεροι, ἀνεχώρησε πρὸς παρασκευὴν δυνάμεως μείζονος (Cass. Dio, 80).

IV. ԲՅՈՒՋԱՆԴԱ-ՊԱՐՄԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

(V դարի վերջ - VI դարի կես)

ԲՅՈՒՋԱՆԴԱ-ՊԱՐՄԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Սկզբնաղբյուրներ

The Chronicle of Joshua the Stylite, Cambridge, 1882.

Procopii De Bello Persico, ed. Bonnae, Русский перевод С. Дестуника с комментариями Гавриила Дестуника, СПб., 1876.

The Syriac Chronicle known as that of Zachariah of Mitylene, translated into English by F. J. Hamilton, D. D. and E. W. Brooks M. A., London, 1899.

Eustathius Epiphanius (Եվագրիոսի III, 37 և Մալալասի § 399), Dindorfii Historici Graeci Minores I, 354-364 և վարը:

Theophanes, Chronicon, p. 222-229, B.

(Պրոկոպիոսից և Հեռոնից անկախ սկզբնաղբյուրներ):

Հայերի կյանքի բազում կողմերի ճշգրիտ ըմբռնումը՝ տվյալ ժամանակաշրջանում և մատենագրական որոշ հարցերի առնչությամբ, պահանջվում է, ի միջի այլոց, նախևառաջ պարզել այն տիրակալությունների արտաքին քաղաքական իրադարձությունների ընդհանուր ընթացքը, որոնց կազմում էին գտնվում հայերը և որոշել այդ իրադարձությունների նշանակությունը տեղական շահերի տեսակետից: Մեր նպատակն է՝ միայն VI դարի սահմաններում դիտել Բյուզանդիայի և Պարսկաստանի հարատև պայքարը Հայաստանին առավելապես տիրելու համար, որի հետևանքով մույն դարի վերջում Բյուզանդիան ընդարձակեց իր տիրույթները Պարսկահայաստանի տարածքների հաշվին:

Հայկական տարածքները հարևան երկրներից սահմանազատելը, որքան որ դա տարօրինակ թվա, որոշ դժվարություններ է հարուցում այն պատճառով, որ աշխարհագրական և ազգագրական եզրերը միշտ չէ, որ համընկնում էին: Մեր նպատակն է նախևառաջ հաստատել Հայաստանի տարածքային հարաբերությունները հարակից երկրների հետ՝ իր ներքին հասարակական վիճակի, այն է՝ նախարարական կարգի կապակցությամբ,

քանի որ հենց այդ կարգին ենք հանդիպում մեզ հետաքրքրող դա-
րաշրջանում:

Հայաստանն իբրև քաղաքական ամբողջություն այլևս գոյություն չուներ,
բայց որպես ռազմական ուժ ունեցող ավատատիրական երկիր այն չէր
կորցրել իր նշանակությունը նաև թագավորական իշխանության վերա-
նալուց հետո: Հայաստանը կիսող տերությունների հաշվարկները սխալ
գտնվեցին. դրա բաժանումը բնավ չի բերել նրանց ո՛չ խաղաղություն, ո՛չ էլ
հանգստություն: Հայաստանը տակավին անհանգստացնում էր նրանց և
առիթ էր տալիս մշտական գոտություններին համար: Բյուզանդիայի և
Մասանյան հարստության միջև երկարատև պատերազմներն սկսվեցին V
դարի վերջից և ձգվեցին VI և VII դարերի ժամանակամիջոցը՝ ընդհուպ
մինչև Մասանյանների անկումը: Այդ պարագային Հայաստանը հանդես էր
գալիս ոչ որպես չեզոք դիտորդ, ռազմական գործողությունների լուր բե-
մահարթակ, այլ, նախարարական կարգի շնորհիվ, բավականաչափ ուժեր
ունենալով գործողություններ վարելու համար. հաճախ նախարար
ազնվատոհմիկները հանդես են եկել իբրև ռազմական ընդհարումների
նախաձեռնողներ կամ վճռական ազդեցություն են ունեցել անցողարձերի
ելքի վրա: Ուստիև իրադարձությունները, որ տեղի են ունեցել հայկական
տարածքում՝ դրա ճակատագիրը վճռող երկու պետությունների միջև, շատ
ավելի սերտ են ամնչվում հայ ժողովրդի ներքին կյանքին, քան այն սովո-
րաբար լինում է քաղաքական ենթակայության վիճակի պայմաններում:



Երկու կայսրությունների խաղաղ փոխհարաբերությունները, ամ-
րագրված 422 թ. պայմանագրով, V դարի վերջում սկսեցին սասանվել, ա-
վելի և ավելի վերածվելով ներհակության, և Կավատ I-ի (488-496, 498-531)
թագին տիրանալու պահից ակնհայտ թշնամության են վերածում: Ժա-
մանակակից պատմագիրները տարբեր կերպ են մեկնաբանում այդ իրա-
դարձությունների պատճառները: Վարկածներից մեկի համաձայն, պատե-
րազմը սկսվեց պարսից արքայի մեղքով: Գահաժառանգության համար
պարսկական արքունիքում տեղի ունեցած խժոժությունները՝ հեփթաղների
միջամտության շնորհիվ ավարտվեցին Կավատի օգտին: Կավատը նրանց
օգնությամբ վերադարձրեց թագավորությունը և այդ ծառայության համար
պետք է հատուցեր դրամական պարգևներով: Չունենալով պահանջվող գու-
մարը, արքան դիմեց Անաստասիոս կայսրին (491-518) և նրանից պարտ-
քով դրամ խնդրեց: Արքունիքի պաշտոնյաների ազդեցության ներքո կայսրը

մերժեց նրա խնդրանքը: Կայսեր մերձավորներն առաջ էին քաշում այն
գաղափարը, թե բնավ ձեռնառու չէ, «որ պարսիկները հռոմեացիների դրամով
կարգավորեն հեփթաղների հետ իրենց ունեցած գործերը. ընդհակառակը՝
անմիջական շահ կա՝ պահպանել նրանց միջև եղած անհաշտությունը»¹:

Մերժումը ստանալով և չունենալով այլ պատճառ Կավատը, ինչպես
պնդում է Պրոկոպիոս Կեսարացի պատմագիրը, հռոմայեցիներին պատե-
րազմ է հայտարարում:

[Ըստ այլ վարկածի], Չաքարիա Հռետոր Միտիլենացին կամ, ավելի
ճիշտ, իր աշխատության Անանուն շարունակողը չի հիշատակում Կավատի
դրամական մնան պահանջներ: Իր պատմածի համաձայն, պարսից արքա
Պերոզի (459-484) թագավորության և Անաստասիոսի (sic!) կայսրության
13-րդ տարին հոններն իրենց լեռնաշխարհից անցնելով պարսիկների կողմից
պաշտպանվող դուռը՝ (1) ներխուժեցին պարսկական տարածք: Իրենց
ասպատակումներն արդարացնելու համար նրանք հայտարարեցին գորքով
հանդերձ իրենց ընդառաջ դուրս եկած Պերոզին. «Այն ինչ պարսկական
պետությունը վճարում է մեզ որպես տուրք, բավական չէ մեզ՝ բար-
բարոսներիս համար, որոնց Աստված շարտել է հյուսիս-արևմուտք: Իբրև
գիշատիչ գազաններ, մենք ապրում ենք մեր զենքով՝ նետով և սրով, և
սնվում ենք զանազան մսերով: Հոնմի կայսրը (2) իր ուղարկած պատվի-
րակների միջոցով խոստացել է մեզ վճարել [ձեր տված տուրքի] կրկնակին՝
այն դեպքում, եթե մենք խզենք բարեկամական կապերը ձեզ՝ պարսիկներիդ
հետ: Ուստի՝ պատրաստ լինելով [ասպատակելու], մենք եկանք այստեղ
առաջարկությամբ՝ կամ դուք վճարելու եք մեզ այնքան, որքան խոստանում
են հռոմայեցիները, և այդ դեպքում մենք կհաստատենք մեր [հաշտության]
պայմանագիրը ձեզ հետ, կամ, եթե ցանկանում եք՝ մերժեցեք, և այդ
դեպքում դուրս եկեք պատերազմի»²:

Այնուհետև ծագած պատերազմում պարսիկները պարտվեցին, և Պե-
րոզը կյանքով վճարեց իր ուխտադրուժ վարքի համար: Երբ գահը ժա-
ռանգեց Կավատը, պարսկական արքունիքում՝ ազնվականների վերնախա-
վում, ինչպես պնդում է նույն պատմագիրը, բացարձակ վրդովմունք էր
իշխում հռոմայեցիների դեմ, որոնք հոնների ասպատակությունների և հա-
րուստ երկրի ավերման պատճառ էին համարվում³: Նրանց ուխտադրու-

¹ Proc. Caes., De bello Persico, I, 7.

² Zachariah of Mytilene, VII, cap. 3.

³ Անդ:

թյան համար վրեժ առնելու նպատակով է Կավատ թագավորը ձեռնարկել այդ արշավանքը:

Հեսու Ստիլիտեսը (Հեշու Սյունակյաց)՝ Կավատի պատերազմի հատուկ պատմագիրը, կանգ է առնում պատերազմին մախորդող իրադարձությունների վրա: Նրա աշխատության մեջ գտնում ենք նաև որոշ պատմական ցուցումներ, որ շատ արժեքավոր են երկու պետությունների փոխհարաբերությունները պարզելու և պատերազմի իրական պատճառները հասկանալու համար:

Ըստ Հեսուի, 363 թ.՝ Հուլիանոսի (361-363) անհաջող արշավանքից հետո, Հովիանոս կայսրը (363-364) զիջել է Մծբինը պարսիկներին ոչ թե ընդմիշտ, այլ միայն 120 տարով, որի լրանալուց հետո այն պետք է վերադարձվեր տերերին (3): Այդ ժամկետը լրացավ Չենոն կայսեր (474-475, 476-491) օրոք՝ 483 թվականին: Պարսիկները, սակայն, հրաժարվեցին վերադարձնել քաղաքը և այդ հանգամանքը սպառնում էր խաղաղության խախտմամբ [ըշնամություն էր առաջացնում նրանց միջև]: Բացի այդ, նույն պատմագրի խոսքերով, պարսիկների և հույների միջև կնքվել էր մի պայմանագիր, համաձայն որի նրանք պարտավորվում էին ըստ պահանջի՝ այլ երկրների դեմ պատերազմի դեպքում աջակցել միմյանց՝ կարիք ունեցող կողմի ցանկության համաձայն կամ տրամադրելով 300 ընտիր հաղթանդամ զինված հեծյալ, կամ էլ, որպես փոխհատուցում, մուծելով 300 ստատիր ամեն մարդու համար [300×300=90.000]: Բյուզանդացիները երբեք չեն ունեցել պարսիկների օգնության կարիքը. ինչ վերաբերում է պարսից արքաներին, ապա եղել են դեպքեր, երբ նրանք ուղարկում էին իրենց պատվիրակներին և սեփական կարիքների համար դրան էին ստանում՝ բայց ոչ որպես տուրք, ինչպես մտածում են ոմանք¹: Նույն Հեսուի վկայության համաձայն, պարսից Պերոզ արքան քուշան-հոների դեմ պատերազմի կապակցությամբ բազմիցս դրամական աջակցություն էր ստանում հույներից, պատճառաբանելով իր պահանջները նրանով, որ պարսիկները, ջախջախելով հոների ուժերը, վերջիններին զրկում են հռոմեական տարածքներն ամայացնելու հնարավորությունից. ընդ որում հիշեցնում էին հռոմեացիներին Հոնորիոսի և Արկադիոսի օրոք՝ 395 թ. տեղի ունեցած հոների ավերիչ արշավանքը հռոմեական մերձավոր-ասիական տիրույթների վրա: Բյուզանդական դրամի շնորհիվ Պերոզին հաջողվեց ետ մղել հոներին և նույնիսկ զավթել նրանց պատկանող շատ գավառներ²:

¹ Zachariah of Mytilene, cap. VIII.

² Անդ, cap. IX և X:

Պերոզի զոհվելուց հետո, երբ գահին տիրացավ իր եղբայր Վաղարշը (484-488), հոները վերսկսեցին իրենց արշավանքները: Պարսից արքան դրամի համար կրկին դիմեց Չենոն կայսրին: Այս անգամ, սակայն, Չենոնը, զբաղված լինելով Իլլոսի և Լեոնտիոսի ապստամբության ճնշմամբ, մերժեց, ընդ որում ակնարկում էր, որ պարսիկները մինչ այժմ օգտվում են Մծբին քաղաքի եկամուտներից՝ քաղաք, որը վաղուց ի վեր պետք էր հանձնել հռոմայեցիներին¹: Վաղարշի ժառանգորդ Կավատը պնդեց իր մախորդի պահանջը և Չենոնի մոտ նվերներով պատվիրակներ ուղարկեց: Ասորիքի Անտիոքում պատվիրակներն իմացան Չենոնի մահվան մասին [491 թ.] և արդեն ուզում էին հետ վերադառնալ, բայց ստացան Կավատի հրամանը շտապով ներկայանալ նոր կայսր Անաստասիոսին և պահանջել սովորական դրամը [customary money]՝ դրամ, որը նրանք վճարում էին ըստ սովորույթի, իսկ մերժման դեպքում պատերազմ հայտարարել²: Անաստասիոսը պատասխանեց. «Եթե դրամը պարտքով եք խնդրում, ես այն կուղարկեմ: Բայց եթե դուք պահանջում եք ըստ ավանդույթի՝ որպես պիտոյական, ես չեմ ամտեսի հունական գորքը, որ այժմ զբաղված է իսավրացիների դեմ պատերազմով, որպեսզի օգնության հասնեմ պարսիկներին»³:

Հեսու Ստիլիտեսի աղոտ հիշատակած պայմանագրի մասին մի փոքր ավելի պարզ ասում է Հովիանոս Լիդիացին: Ավելորդ չէր լինի ամբողջությամբ մեջբերել մի հատված, որը վերաբերում է մեզ հետաքրքրող հարցին: «Արևածագի կողմը, այնտեղ, որտեղ սկսվում են նեղ գոտիով Կովկասյան լեռները (4), որ ձգվում (5) են Կասպից ծովի ափով, հյուսիսային լանջերում կա անցք, որը բաց է մեզ և պարսիկներին (6) չենթարկվող բարբարոսների համար. նրանք բնակվում են Վրկանի շուրջ և, նրա միջով ներխուժելով, ամայացնում էին պարսկական հողերը, իսկ հյուսիսում՝ հռոմեականները: Քանի դեռ Արտաշատը և այնկողմ գտնվող երկիրը հռոմեական իշխանության ներքո էր, հռոմայեցիները, նստելով այնտեղ, նրանց ետ էին մղում, բայց երբ Հովիանոսի օրոք նրանք հրաժարվեցին ի թիվս այլոց նաև այդ հողերից, պարսիկներն ի վիճակի չեղան պաշտպանելու և՛ իրենց սեփական, և՛ հռոմայեցիներից ետ բերված տարածքները:

¹ Zachariah of Mytilene, cap. XIX.

² Անդ, cap. XXIII.

³ I will not neglect the Greek armies, which are sore put to it in the war with the Isaurians and become a helper of the Persians. Je negligerais point mes troupes tres occupies à faire la guerre aux Isauriens pour voler au secours des Persees.

Երկու Հայաստանները մշտապես տոգորված էին անտանելի տազնապով: Հուլիանոսի օրոք հռոմայեցիների պարտություններից հետո պայմանագիր կնքվեց հռոմեական կողմից պարտորհանների պրեֆեկտ Սալլուստիոսի և բարձրաստիճան պարսիկների (այնուհետև Հազկերտի) միջև, որ երկու պետությունները համատեղ ջանքերով ամրոցներ կառուցեն հիշյալ անցքին կից և դրա միջով արշավող բարբարոսներին ետ մղելու համար այնտեղ պահակագոր տեղակայեն: Քանի որ հռոմայեցիներն ամրոջովին զբաղված էին հյուսիսում և արևմուտքում ընթացող ծանր պատերազմներով, պարսիկները որպես բարբարոսների արշավանքներից առավել տուժողներ, հարկադրված եղան կառուցել ամրոց, իրենց լեզվով կոչվող Վիրապարախ (Βιραπαράχ) և տեղակայեցին այնտեղ պահակագոր, որն արգելում էր հակառակորդի ներխուժումը:

Այս պատճառաբանությամբ պարսիկները հետզհետե գրոհում էին հռոմայեցիների վրա, ասպատակելով Ասորիքն ու Կապադովկիան, նպատակ ունենալով գոնե կողոպտելի միջոցով ստանալ հռոմայեցիներից իրենց կատարած ծախսերի հատուցումը՝ ծախսեր, որ արվել են ընդհանուր շահերի համար: Հենց այդ ժամանակ Թեոդոսիոս I Մեծն ուղարկեց «առաջին» Սպորակիոսին՝ բանակցություններ վարելու պարսիկների հետ: Նրան հազիվ հաջողվեց դրանի ուժով և ճառերի գործությամբ՝ առերես ընդունելով պարսիկների արդարացի լինելը, համոզել նրանց հանդարտվել և բարեկամություն պահպանել: Բայց այդ գործը, վերջնականապես չկարգավորված, ձգձգվում էր նոր ու նոր բանավեճերով և բանակցություններով մինչև Անաստասիոս կայսրը, իսկ նրա օրոք Կավատը սկսեց պատերազմը¹ (7):

Հովհաննես Լիդիացու խոսքերը մեկնաբանության կարիք են զգում: Սպորակիոսի անվան հիշատակումը Թեոդոսիոս I Մեծի օրոք (379-395) ժամանակավրեպ է: Սպորակիոսը՝ Անատոլիոս գորավարի հորեղբայրը, հայտնի պետական գործիչ էր, ապրում էր Թեոդոսիոս II Փոքրի օրոք (408-450) և հյուպատոս էր դարձել 452 թ.: Այդ պատճառով Գ. Ռոուլինսոնը առաջարկում է սրբագրել [Θεοδοσίου] μετζονος որպես μικροս²: Բայց Հովհաննես Լիդիացին Սպորակիոսին կոչում է ὁ πρῶτος, դրանով իսկ ակնհայտորեն ցանկանալով տարբերակել նրան մի այլ Սպորակիոսից, որն ապրում էր Թեոդոսիոս Փոքրի օրոք: Հնարավոր է, որ, ինչպես կարծում է

Յո. Մարկվարտը¹, Հովհաննես Լիդիացու օգտագործած աղբյուրում խոսվում է նախ Ստիլիստոսի դեսպանության մասին, որ ուղարկվել էր 384 թ. Թեոդոսիոս I-ը Պարսկաստան՝ Հայաստանի բաժանման մասին բանակցություններ վարելու նպատակով, բայց Հովհաննեսը շփոթել էր այն այլ ավելի ուշ՝ 441 թ. Թեոդոսիոս II-ի և Հազկերտ II-ի միջև կայացած բանակցությունների հետ, որոնք, թերևս, վարում էր Սպորակիոսը: Հետո և Հովհաննեսի համահունչ վկայությունները լիովին հաստատում են երկու պետությունների միջև եղած պայմանագրի փաստը՝ պայմանագիր, որի համաձայն լեռնային ցեղերի արշավանքներից սահմանամերձ ռազմավարական կետ-անցքերը պետք է պաշտպանվեին համատեղ ուժերով: Վեճ է հարուցում լոկ այն, թե որ ժամանակին է վերաբերում այդ պայմանագիրը, խոսքն արդյո՞ք այն խաղաղության պայմանների մասին էր, որ հաստատվել էին, ինչպես Հովհաննես Լիդիացին է հավաստում, Հովհաննոսի կողմից 363 թվականին:

Այս նույն հարցը թերևս բարձրացվել էր 384 թ. Հայաստանի բաժանման ժամանակ, դրանից մի փոքր առաջ տեղի ունեցած հոնների ներխուժման առիթով²: Հովհաննես Լիդիացու ակնարկները հիմք են տալիս ենթադրելու, որ Թեոդոսիոսի և Հազկերտի օրոք հարցը նորից է վերանայվել, ընդ որում հռոմայեցիները պարտավորվել են պարսիկների հետ կիսել ամրությունների շինարարության և պաշտպանության ծախսերը՝ մարդկանցով կամ դրամով: Հենց այսպիսի համաձայնության վրա էին անշուշտ հենվում այն դրամական պահանջները, որոնք, ինչպես հայտնի է հավաստի աղբյուրներից, մշտապես ներկայացնում էին բյուզանդական կայսրերին պարսից արքաները: Պրիսկոս Պանիացու համաձայն, 464 թ. Լևոն I Թրակացի կայսրին (457-478) ներկայացան պարսից արքայի պատվիրակները, պահանջելով, որ հռոմայեցիները մասնակցեն Կասպից դռան մոտ գտնվող Յուրոպահակ (8) ամրոցի պաշտպանությանը³, կամ դրա դիմաց դրամ վճարեն, կամ կայագոր ուղարկեն: Նույն պահանջը կրկնվեց երկու տարի անց՝ 466 թ., երբ սարագորները՝ ակատիրների և այլ ցեղերի դաշնակցությամբ ասպատակեցին Պարսկաստանը: Պարսկական պատվիրակությունը կրկին

¹ Ioannis Lydi De magistratibus, III, 52, 53.

² G. Rowlinson, The Seventh Great Oriental Monarchy (Sassanian), 1875, p. 353, note 2.

¹ J. Markwart, Eranšahr nach der Geographie des Ps.-Moses Xorenc'i, Abhandlungen der Akademie der Wissenschaft in Göttingen, Phil.-Hist. Klasse, N. F. 3, Berlin, 1901, p. 104f.

² Ըսննի և Գուրիաի (Գոռի) վարքում, Acta Sanctorum, t. VI, Nov. p. 342; J. Markwart, Eranšahr, p. 104.

³ Prisci Fragmenta, Historici Graeci Minores, ed. L. Dindorfius, vol. I, Lipsiae, 1870, Fr. 31.

պահանջեց, «որ իրենց տրվեն կամ դրամ, կամ մարդիկ Յուրոսիպասի (Յուրոսպահակ) ամրոցը պաշտպանելու համար»¹:

Պրիսկոսն ասում է, որ պարսկական պատվիրակությունը հաջողության չի հասել, բայց կան նաև տեղեկություններ, որ հույները երբեմն բավարարում էին նրանց պահանջները: Ստիլիտեսը² վկայում է, որ «պարսիկները պատվիրակներ էին ուղարկում և դրամ ստանում իրենց կարիքների համար» և հիշատակում մի մասնավոր դեպք, երբ Չենոն կայսրը դրամ ուղարկեց և ազատեց հոներից գերեվարված պարսից արքա Պերոզին³: Մի այլ դեպքում Չենոնի մոտ պատվիրակություն ժամանեց Վադարշից՝ դրամի պահանջով, բայց մերժում ստացավ⁴:

Կայսրերի՝ պարսից արքաների խնդրանքների մերթ հարգելը, մերթ մերժելը բխում էր այդ իսկ պայմանագրի անորոշ բնույթից: Ըստ Ստիլիտեսի, պայմանագրի համաձայն երկու կողմերը պետք է օգնեին միմյանց որևէ այլ ժողովրդի դեմ պատերազմի դեպքում: Ըստ Պրիսկոսի, հույները պարտավորվել են աջակցել պարսիկներին Յուրոսիպասից այն կողմ ապրող ժողովուրդների դեմ պայքարում: Համաձայն Հովհաննես Լիդիացու, պայմանագիրը վերաբերում էր Վիրապարախ դռանը: Հոմանական տիրույթները սահմանակից էին միայն Կովկասի դռան (Դարյալի կիրճին): Եվ որքան հոռմեացիներին անհրաժեշտ էր դրանք պաշտպանել թշնամու արշավանքներից, նույնքան անտարբեր էին նրանք երկրորդ՝ պարսկական տարածքին հայող Կասպից դռան ճակատագրի նկատմամբ: Իսկ ինչ վերաբերում էր հոներին, ապա բյուզանդացիներին ուղղակի ձեռնառու էր խրախուսել գոտությունները նրանց և պարսիկների միջև, այլ ոչ թե օգնել վերջիններին:

Պրիսկոսը հայտնում է, որ պարսիկները, խնդրելով դրամական օգնություն հոն-կիդարիտների դեմ, բացատրում էին, որ հոմայեցիները՝ պարսիկների հաղթանակ տանելու դեպքում կստանան այն օգուտը, որ հոներին «թույլ չի տրվի անցնել հոմանական տիրույթները»⁵: Բայց Պրիսկոսը իրավացի չէ. Կասպից ծովից այնպիսի ապրող կիդարիտներից հոմայեցիներին ոչ մի վտանգ չէր սպառնում, և եթե ինքը պարսիկներին այդպիսի պատճառաբանություն է վերագրում, ապա միայն նրանց պա-

հանջների օրինականությունը խարխլելու մպատակով: Եթե պարսկական պատվիրակությունը խոսում էր հոների դեմ պատերազմի մասին՝ Յուրոսիպասի պաշտպանության խնդրի կապակցությամբ, ապա պարզ է, որ նրա պահանջը հենվում էր կայսրերի՝ Կովկասի դռան վերաբերյալ ունեցած պայմանագրային պարտավորությունների, և ոչ կիդարիտների՝ պարսիկներին հնազանդվելուց բխող օգուտի վրա: Ջանի որ բյուզանդացիները միտումնավոր կամ իրենցից անկախ համգամաքմների բերումով չէին կատարել հիշյալ պարտավորությունները, և պաշտպանության ամբողջ ծանրությունը ընկել էր պարսիկների ուսերին, այս վերջինները, կիդարիտների դեմ պատերազմելու համար դրամի կարիքը զգալով, պահանջում էին այն գումարը, որն իրենք ծախսել են Դուռը պաշտպանելու համար: Բյուզանդացիները երբեք կտրականապես չէին մերժել պարսիկների խնդրանքները, այլ տալիս էին քիչ թե շատ անորոշ ու խուսափողական պատասխաններ և փորձում էին դեսպանների միջոցով մի կերպ կարգավորել խնդիրը: Այսպես ձգձգվում էր մինչև Կավատը, որը որոշեց պաշտպանել իր իրավունքը գեների միջոցով: Հարցի մեր այս հանգամանակից բնույթից հետո չի կարելի չհամաձայնել Էդ. Գիբբոնին, որ «պատերազմի դրդապատճառը կամ պատրվակն Անաստասիոսի տնտեսային ժլատությունն էր»¹:

Կավատի արշավանքը

502 թ. օգոստոսին Կավատը, գլխավորելով զորքը, շարժվեց դեպի հյուսիս, անցավ բյուզանդացիների տարածքը և կանգնեց Հայաստանում Թեոդոսուպոլի (Կարինի) առջև: Մի քանի օրո՞ն նա, առանց որևէ դիմադրության հանդիպելու, գրավեց քաղաքը: Այդ տարածքի Կոստանդին անունով կառավարիչը Անաստասիոսի հանդեպ տածած թշնամանքի պատճառով դավաճանեց նրան և հանձնեց քաղաքը: Տիրապետող առյուծների պատվար քաղաքին, պարսիկները կողոպտեցին այն և այրեցին. ավերեցին նաև մերձակա գյուղերը և գերեվարեցին բնակիչներին: Կավատը Կոստանդինին ընդունեց պարսկական ծառայության և ճշմանակեց նրան նայն քաղաքի պարսկական կայագործի պետ²:

Այն կարևոր նշանակությունը, որ հյուսիսում ուներ Թեոդոսուպոլիսը, կարգվում ուներ Անիոը: Մինչ այն պաշտեղը Կավատը որոշեց գրավել

¹ Priscus, Fr. 37.

² Joannes the Stylite, cap. VIII.

³ Ibid., cap. X.

⁴ Նույնը, cap. XVIII.

⁵ Priscus, Fr. 31.

¹ The urticant parsimony of Anastasius was the motive or pretence of a Roman war (Ed. Gibbon: The Decline and Fall of the Roman Empire, vol. 2, chap. 40).

² Joannes the Stylite, cap. XLVIII, Procop., De Aedif. III, 5.

քաղաքն արևելքից և հյուսիսից պաշտպանող ամրոցները՝ Մարտիրոսապոլիսն և Անգղը (Ինգիլենե): Մարտիրոսապոլիսը՝ 5 ինքնավար հայկական սատրապություններից մեկի՝ Ծոփքի (Սոֆանենեի) գլխավոր քաղաքը, ընկած էր սահմանագատող գետի՝ Նիմֆիոսի ափին, Ամիդից մեկ օրվա ճանապարհի հեռավորությամբ: Այդ ժամանակ սատրապը ոմն Թեոդորոսն էր (հայկական իշխաններից էր, քանի որ այդ պաշտոնում նշանակվում էին միայն հայ իշխանները): Երբ պարսկական զորքը մոտեցավ քաղաքին, բնակիչները, համոզված լինելով, որ նույնիսկ կարճ ժամանակով քաղաքը հնարավոր չէ պաշտպանել, սատրապական համազգեստ հագած (9) Թեոդորոսի հետ ներկայացան Կավատին հնազանդության առաջարկով, հանձնեցին նրան քաղաքը և վճարեցին երկու տարվա պետական տուրքը: Պարսից արքան արձակեց բնակիչներին, չպատճառելով նրանց ոչ մի վնաս, քաղաքի կառավարման մեջ ոչինչ չփոխեց և վստահելով սատրապ Թեոդորոսին՝ թողեց նրան իր պաշտոնում, հանձնելով նրան սատրապական իշխանության նշանները¹: [Մտիլիոսի խոսքերից այն մասին, որ Կավատը ավերեց Անգղը և Ծոփքը² կարելի է եզրակացնել, որ Անգղ ամրոցը նույնպես գրավված էր պարսիկների կողմից]:

[Ամիդի պաշարումը, 502 թ. հոկտեմբեր]

Այնուհետև պարսկական զորքը գրոհեց Ամիդի վրա և պաշարեց այն նույն 502 թ. հոկտեմբերի 5-ին: Ամրոջ երեք ամիս պարսիկները պաշարում էին քաղաքը և ոչ մի կերպ չէին կարողանում վերցնել. քաղաքի բնակիչները, քեև պատրաստ չէին ռազմական ընդհարման, արիությամբ ետ էին մղում քաղաքին տիրանալու Կավատի բոլոր փորձերը: Պարսից արքան, արդեն հուսահատված, ուզում էր դադարեցնել պաշարումը, երբ նպաստավոր մի դեպք օգնեց նրանց: Քաղաքի աշտարակներից մեկի մոտակայքում նրանք հայտնաբերեցին խճաքարերով անփութությամբ ծածկված մի հին առվի հուն, որը տանում էր պարսպից ներս³: Այդ գյուտի շնորհիվ պարսիկներին հաջողվեց ներխուժել քաղաք և զենքի ուժով գրավել այն 503 թ. հունվարի 10-ին:

Կավատը դաժան պատիժների ենթարկեց քաղաքի բնակիչներին՝ նրանց համառ դիմադրության համար: Այնուհետև քաղաքում թողնելով

հազար, իսկ ըստ այլ տեղեկությունների՝ երեք հազար մարդ որպես պահակազոր՝ պարսիկ Գլոնեսի հրամանատարությամբ, Կավատը զորքով և զերհներով վերադարձավ իր երկիրը¹: Լուր ստանալով Կավատի կողմից Ամիդի պաշարման մասին, Անաստասիոսը զգալի ռազմական ուժեր է ուղարկում չորս զորավարների՝ Արեոփինդոսի, որը Օլիբրիոս կեսարի փեսան և Թեոդոսիոս II-ի նույնանուն զորավարի թոռն էր և այդ ժամանակ զբաղեցնում էր Արևելքի զորահրամանատարի (*magister militum per Orientem*) պաշտոնը, պալատական զնդերի հրամանատար (*milites palatini*) Կելերի, ինչպես և մայրաքաղաքի զորքերի հրամանատարների (*magistri militum in praesenti*)՝ փռյուզացի Պատրիկիոսի և Անաստասիոս կայսեր եղբորորդի Հյուպատիոսի առաջնորդությամբ:

Անաստասիոսն ըստ երևույթին պարսիկներից վճռական գործողություններ չէր սպասում: Լուր ստանալով Կավատի գրոհի մասին, նա ուղարկում է Հուսիմոս պատրիկին դրամով հանդերձ, հանձնարարելով այն տալ պարսից արքային այն դեպքում, եթե նա դեռևս սահմանի վրա է գտնվում և չի հասցրել ներխուժել հռոմեական տարածք: Բայց Հուսիմոսը, ժամանելով Կապադովկիայի Կեսարիա, իմանում է Անգղ, Ծոփք, Հայաստան և Արաքիա կատարած Կավատի ավերիչ արշավանքների մասին: Նա դրամը թողնում է Կեսարիայում և մեկնում Կավատի մոտ՝ համոզելու նրան ստանալ կայսեր ուղարկած զումարը և վերադառնալ իր տարածքը: Կավատը մերժեց կայսերական պատվիրակի առաջարկությունը և կալանավորեց նրան: Այն ժամանակ, երբ գլխավոր ուժերը պաշարում էին Ամիդը, պարսկական զորքի մի ջոկատ ուղղվեց Կոստանդինե կամ Տելլա՝ պարսիկների դաշնակից՝ Խիրայի արաբների թագավոր Նասանանի հետ համատեղ գործողությունների համար. Նասանան էլ Կավատի հրամանով ընթանում էր դեպի Խառան (Հելլենոպոլիս): Օլիմպիոսը (կամ ըստ Թեոփանեսի՝ Ալիպիոսը), Տելլայի դուքսը, և Եվզենիոսը, Մելիտինեի դուքսը, ժամանելով այնտեղ, 502 թ. նոյեմբերի 19-ին միացյալ ուժերով դիմավորեցին պարսկական զորաբանակին և ջախջախեցին այն: Բայց շուտով վրա հասավ Նասանանի հրամանատարության ներքո գործող արաբների զորագունդը, ջարդեց դուքսերին և ամայացրեց երկիրը Խառանից մինչև Եդեսիա: Օլիմպիոսը փակվեց Կոնստանտինեում, իսկ Եվզենիոսը, բավարար ուժեր չունենալով պարսկական զորքին դիմադրելու համար, իր ջոկատի հետ մահանջեց հյուսիս, ապա գրոհեց Թեոդոսուպոլիսի վրա և գրավեց այն, ոչնչացնելով պարսկական կայազորը:

¹ Procop., De Aedif. III, 2.

² The Chronicle of Joshua the Stylite, cap. L.

³ Sicut Procop., B. P. I, 7:

¹ Procop. B. P. I, 7. Stylite, cap. LIII.

Ամիդը գրավելուց հետո Կավատը ազատ է արձակում Հուսիսհնոսին, որպեսզի նա ամեն ինչի մասին զեկուցի կայսրին (503 թ., ապրիլ): Միևնույն ժամանակ Կավատը կրկին պատվիրակներ է ուղարկում Անաստասիոսի մոտ, պահանջելով կամ իրեն դրան ուղարկել, կամ դուրս գալ պատերազմի: Ի պատասխան՝ Անաստասիոսը մի մեծ զորք զինեց և Արեոբինդոսի, Պատրիկիոսի և Հյուպատիոսի հրամանատարությամբ ուղարկեց ռազմի դաշտը: Արեոբինդոսը, որն այդ ժամանակ *magister militum per Orientem* պաշտոնում էր, գլխավորելով 12 հազար մարդու, ճամբարեց սահմանային գծի վրա՝ Դարայի և Ամուդիանի միջև, Մծբինի դիմաց: Պատրիկիոսը և Հյուպատիոսը, իրենց տրամադրության ներքո ունենալով հիմնական՝ 40 հազարանոց բանակը, շարժվեցին դեպի Ամիդ: Ապիոնը՝ կայսրից միանգամայն վստահված կարևոր մի անձնավորություն, որը նշանակվել էր բանակի մատակարար, հանգրվանեց Եդեսիայում: Քանի որ Արեոբինդոսի ուժերն աննշան էին, Կավատը Սինգարայի լեռներից, որտեղ նա հավաքել էր իր զորքը Ամիդը գրավելուց հետո, ուղարկեց նրա դեմ 20 հազար զինվոր: Արեոբինդոսը հաջողությամբ ետ էր մղում նրանց գրոհները, բայց հակառակորդին օգնության հասան նոր ուժեր՝ պարսիկներից, հուններից և արաբներից կազմված [մի բանակ], Թեոդոսուպոլսի կայսրորդի նախկին պետ՝ Կոստանդինի հրամանատարությամբ, որը վտարվել էր այդտեղից Մելիտենեի դուքս Եվգենիոսի կողմից: Արեոբինդոսը զուր էր խնդրում Պատրիկիոսի և Հյուպատիոսի աջակցությունը: Նրանք շարունակում էին մնալ Ամիդի մոտակայքում, և Արեոբինդոսը, ի վիճակի չլինելով դիմակայել թշնամու գերազանցող ուժերին, թողնում է իր ճամբարը և փրկվում Տելլայում, իսկ այնուհետև նահանջում Եդեսիա:

Տեղեկանալով Արեոբինդոսի ճակատագրին, Պատրիկիոսն ու Հյուպատիոսը զորքը դուրս բերեցին ճամբարներից և շարժվեցին Կավատին ընդառաջ: Թեոդոսուս Հայը, Ծովքի սատրապը, որը Կավատի Մարտիրոպոլսից հեռանալուց հետո լքեց քաղաքը և եկավ Ամիդի մերձակայքում գտնվող բյուզանդական ճամբարը, լազ Փարեսամանեսի հետ միասին Ամիդի շրջակայքում պարսիկներից մի հոտ ոչխար է հափշտակում և քաքնվում: Պարսիկները՝ թվով 400 ընտիր մարտիկներ դուրս են գալիս քաղաքից անասունը ետ բերելու նպատակով. Թեոդոսոսի և Փարեսամանեսի ջոկատը, դուրս գալով դարանից, հարձակվեց նրանց վրա, բոլորին կոտորեց և գերեց նրանց հրամանատար մարզպանին: Քանի որ վերջինս խոստացել էր նրանց հանձնել Ամիդը, Պատրիկիոսն ու Հյուպատիոսը շտապ վերադարձան Ամիդ: Բայց մարզպանը չկատարեց իր խոստումը, քանի որ քաղաքի

բնակիչները նրան չենթարկվեցին, ուստի և խաչ հանվեց բյուզանդական զորավարների հրամանով:

503 թ., օգոստոս: Պարսկական բանակը, ստանալով հոճերից, կադիշ-ցիներից և հայերից կազմված օգնական ուժեր, սկսեց գրոհել Օպադնա քաղաքի ուղղությամբ: Պատրիկիոսը շարժվեց նրանց ընդառաջ, բայց, չդիմանալով պարսիկների անակնկալ գրոհին, գլխովին ջախջախվեց և փախավ Եփրատից այն կողմ գտնվող Սամոսատ քաղաքը: Պարսիկները տիրացան Սիֆրիոն (Աշպարին) ամրոցին և ուղղվեցին Արեոբինդոսի դեմ դեպի Եդեսիա: Ճանապարհին՝ Տելլա քաղաքը վերցնելու անհաջող փորձից հետո 503 թ. սեպտեմբերին Կավատը հասավ Եդեսիա և ճամբարեց քաղաքի դիմաց:

Սկզբից պարսից արքան բանակցություններ սկսեց Արեոբինդոսի հետ և ցանկություն հայտնեց խաղաղության պայմանագիր կնքել նրա հետ, եթե բյուզանդացիները վճարեն 10 հազար լիտր ոսկի և պայմանագրով պարտավորվեն տարեկան մուծել սովորական գումարը: Արեոբինդոսը առաջարկեց նրան միայն 7 հազար լիտր: Կավատը չհամաձայնեց և անցավ պաշարման: Առաջին՝ անհաջող գրոհից հետո Կավատը վերսկսեց բանակցությունները, խոստանալով դադարեցնել պաշարումը 2000 լիտր ոսկու դիմաց, բայց հաջողության չհասավ:

Այդ ժամանակ մայրաքաղաքից նոր զորքեր ժամանեցին պալատական զնդերի հրամանատար (*palatini milites*) Կելերի ղեկավարությամբ: Կելերը ձմեռեց Մաբբուզում՝ Եփրատի ափին, և զարմանը շարժվեց դեպի Բիշ-այն և այդտեղից գնաց Ամիդ (504 թ. մարտ): Պատրիկիոսը, ձմեռելով Մելիտենեում, նույնպես ուղևորվեց Ամիդ: Կավատը, տեղեկացված լինելով Կելերի ժամանելու մասին, դադարեց Եդեսիայի պաշարումը և հեռացավ Բեթ-Արմայե (*Beth-Armayye*), բայց, տեղեկանալով Ամիդի մոտ հակառակորդի զորքերի կուտակման մասին, այնտեղ օգնություն է ուղարկում 10 հազար մարդ:

Բյուզանդական զորահրամանատարները, ի վիճակի չլինելով գրավել Ամիդ քաղաքը, ասպատակում էին պարսկական տարածքը և, կողոպտելով երկիրը և կոտորելով բնակիչներին, զգալի վնաս էին հասցնում: Կելերը, անցնելով Նիմֆիոս գետը, հարձակվեց պարսիկներին հպատակ Արզանենե (*Արձնիք*) հայկական նահանգի վրա և ամայացրեց այն¹: Արեոբինդոսն իր զորաջոկատով ներխուժեց Պարսկահայաստան, կոտորեց մինչև 10.000 հայ և պարսիկ բնակիչներ, գերեվարեց 30.000 կին և երեխա, կողոպտեց և

¹ Procop., 1, 8.

այրեց բազում գյուղեր և հետ դառնալով Ամիդ, իր հետ բերեց 120 հազար գլուխ մանր և խոշոր եղջերավոր անասուն: Պարսիկներին հպատակ հայ Մուշեկեր (Մուշեղ, Մուշեղակ) իր զորքով հանդերձ հանձնվեց և անցավ հռոմայեցիների կողմը¹: Անունից դատելով, Մուշեղը Մամիկոնյանների տոհմական Տարոն գավառի տիրակալ իշխաններից էր՝ գավառ, որ սահմանակից էր ռազմական գործողությունների բատերաբեմին: Նրա՝ բյուզանդացիների կողմն անցնելը, ըստ երևույթին, Արեոբինդոսի արշավանքի արդյունքն էր²:

Ամիդը պաշարող հռոմեական զորքերի ավերիչ ասպատակությունները չափազանց ծանր էին պարսիկների համար: Կավատը 20 հազար զորքով նրանց դեմ ուղարկեց *astabid Bawi-ին* (քոյ - եկան = *Bόαζ*), հանձնարարելով քարեպատեհ առիթի դեպքում խաղաղ բանակցություններ սկսել հակառակորդի հետ: Պարսիկները գիտակցում էին, որ Ամիդը չի կարող երկար պաշտպանվել՝ պարենի ոչ բավարար լինելու պատճառով: Բյուզանդացիները ևս հակված էին խաղաղության: Կորցնելով զինված ուժով քաղաքը գրավելու հույսը, բյուզանդացիները տանջվում էին երկարատև պաշարումից, որ կապված էր ձմեռային եղանակի բոլոր դժվարությունների հետ: Երկու կողմերի միջև սկսվեցին բանակցություններ՝ պարսիկները հազար լիտր ոսկու դիմաց համաձայնեցին վերադարձնել իրենց կողմից գրավված Ամիդը: Հակառակորդի խարդախությունների պատճառով պաշարման ժամանակ զոհված կայազորի պետ Գլունեսի որդին ընդունեց դրամը և 505 թ. քաղաքը հանձնեց հռոմայեցիներին³: Ամիդը գրավելուց հետո հռոմայեցի զորավարը մահանջեց Տելլա, Ռեշ-այն և Եդեսիա՝ ձմեռելու համար: Հաշտության բանակցությունները դեռ չէին հասել ավարտին, ուստի և հաջորդ՝ 506 թ. գարնանը դրանք վերսկսվեցին Կելերի կող-

¹ *Stylite*, cap. 75, 504 թ. հուլիսից հետո:

² Հավանաբար Մուշեղը հենց այն նույն քրիստոնյա իշխանն էր, որի խնդրանքով Կավատը, ինչպես հայտնի է Ջաքարիա Հոնտորը, 502 թ. Ամիդի գրավմանը հաջորդող կոտորածի ժամանակ խնայեց եկեղեցուն՝ ապաստանած 40 մարտիրոսների կյանքը (*Zachariah*, p. 158): Ըստ Ջաքարիայի, նա *Arran* երկրի իշխանն էր, *Abul-Faraj-ը* նրան անվանում է հայոց իշխան (*Gregorii Barhebraei Chronicon Syriacum*, ed. P. Bedjan, Paris, 1890, p. 80): Կարծում եմ, որ հենարավոր է *Arran-ը* դիտել իբրև Մամիկոնյանների տոհմական կավառքի՝ Տարոնի անվանումը (հմմտ. *Մ. Չամչյան*, Հայոց Պատմություն, II, էջ 234, G-H. Lebeau, *Histoire de Bas-Empire*, VII, p. 35): Այս դեպքում Մուշեղի անցումը հռոմայեցիների կողմը պետք է թվագրել Ամիդի հռոմայեցիների կողմից գրավումից հետո [ընկած ժամանակահատվածով], քանի որ Կավատը չէր անսա դավաճանի խնդրանքը (10):

³ *Procop.*, I, 9.

մից: Բայց Bawi-ի մահվան պատճառով բանակցությունները որոշ ժամանակով հետաձգվեցին:

Bawi-ի տեղը զբաղեցրած պարսկական զորապետ Ասպերեդեսը շարունակեց բանակցությունները Կելերի հետ և զինադադար կնքեց յոթ տարի ժամանակով: Խաղաղության պայմանագրի պայմանները հստակ չեն: Համենայն դեպս, պատմագիրներն այդ մասին չունեն և ոչ մի ստույգ տեղեկություն: Հայտնի է միայն, որ բյուզանդացիները որպես Ամիդի փրկագին որոշակի գումար վճարեցին¹, որը ոմանք գնահատում էին 1000 լիտր ոսկի², իսկ ոմանք՝ 1100³ կամ 30 տաղանդ⁴: Յուրապարհակ անցքի մասին կարևոր հարցը, որի պատրվակով և սկսվեց պատերազմը, մնացել է անկախ: Հոն-հեփթաղների դեմ այդ ժամանակ շարունակվող պատերազմի պատճառով պարսիկները շտապեցին զինադադար կնքել, բայց չկար և ոչ մի կասկած, որ այդ պատերազմն ավարտելուց հետո իսկույն, առաջին իսկ բարեպատեհ պահից կրկին բարձրացվելու է կովկասյան անցքերի պաշտպանության հին խնդիրը:

Այդ անցքերից մեկը, որը հին հեղինակները կոչում էին Կասպից դուռ, այժմ՝ Դարիալի կիրճը, գտնվում էր այդտեղ բնակվող հունների տիրակալ Ամբազուկի ձեռքին: Վերջինս, կապված լինելով Անաստասիոսի հետ բարեկամական կապերով, մերձենալով մահվան, դրամի դիմաց Անաստասիոսին առաջարկում է դուռն ու ամրոցը: Կայսրը, լիովին հասկանալով, թե ինչպիսի դժվարություններ կհարուցի այդպիսի ամայի և թշնամական ցեղերով բնակեցված երկրում զորք պահելը, խելամտորեն մերժեց Ամբազուկի առաջարկությունը: Չառամյալ Ամբազուկի վախճանվելուց հետո պարսից արքան, իմանալով հռոմայեցիների հետ նրա գաղտնի հարաբերությունների մասին, վտարում է նրա որդիներին և գրավում դուռը:

Չինադադարը կնքելուց հետո⁵ Անաստասիոսը հոգում էր կայսրության արևելյան սահմանները ամրապնդելու մասին, նկատի ունենալով պարսիկների դեմ պատերազմի հնարավոր վերսկսումը: Նա ամուր պարիսպով շրջապատեց Մծրինից ոչ հեռու գտնվող մինչ այդ աննշան Դարա ավանը, այն դարձրեց քաղաք և կռչեց իր անունով՝ Անաստասիուպոլիս: Նույն նկատառումով ամրացվել էր նաև Թեոդոսուպոլիսը Հայաստանում: Երկու

¹ *Marcell.*, Chron., p. 178.

² *Procop.*, I, 9.

³ *Zacharia*, VII, 5, p. 163.

⁴ *Teophanes*, p. 127.

⁵ *Procop.*, I, 10, իսկ ըստ Հեսուի, զինադադար կնքելուց հետո 505/6 թվականին:

այդ սահմանամերձ կետերը ռազմավարական կարևոր դիրքեր զբաղեցնող հարավում և հյուսիսում, պետք է ծառայեին որպես պատվար և պարսիկների դեմ ռազմական գործողությունների հենակետ: Պարսիկները փորձում էին խանգարել հույների շինարարական աշխատանքները, բայց հաջողության չհասան, քանի որ նրանց ուժերը դեռ շարունակում էին գործել հոների դեմ: Հենց որ վերջիններիս դեմ պատերազմն ավարտվեց, Կավատը պատվիրակություն ուղարկեց Կոստանդնուպոլիս և բողոքեց սահմանային գծի վրա ամրությունների կառուցման կապակցությամբ (422 թ. Թեոդոսիոսի և Հազկերտի օրոք կնքված) պայմանագրի հիման վրա՝ պայմանագիր, համաձայն որի երկու կողմերին խստիվ արգելված էր սահմանամերձ տարածքում նոր ամրություններ կառուցել¹: Անաստասիոս կայսրը, պարսիկների բողոքին ի պատասխան, ուղարկեց մի զգալի զույմար և փորձում էր մերթ սպառնալիքներով, մերթ մեղմ խոսքերով հանդարտացնել նրանց:

Դրանից քիչ անց Անաստասիոսը վախճանվեց և գահ բարձրացավ Հուստինոս I (518-527): Կավատը պատրաստ էր հանդուրժել հոնային-ցիների թույլ տված անօրենությունները և խաղաղ հարաբերություններ պահպանել, միայն թե Հուստինոսը պետք է խոստանար Կավատի մահվանից հետո գահ բարձրացնել իր կրտսեր որդուն՝ Խոսրովին: Կավատը ուներ մի քանի որդի: Դրանցից ավագը՝ Կաոսը, օրինական գահաժառանգն էր, բայց չէր վաստակել հոր հաճությունը. երկրորդ որդին՝ Չանը, որպես մի աչքից զրկված, համաձայն օրենքի, որն արգելում էր ֆիզիկական արատ ունեցող անձանց դառնալ թագավոր, իրավունք չուներ տիրանալու գահին²: Կավատը շատ էր սիրում Ասպերտի քրոջից ծնված իր կրտսեր որդուն՝ Խոսրովին: Գահը նրա համար ապահովելու նպատակով Կավատը դիմում է Հուստինոսին, առաջարկելով նրան որդեգրել Խոսրովին և իր մահվանից հետո նրան համձնել գերագույն իշխանությունը. փոխարենը պարսից արքան համաձայնում է հոնայինցիներին ներել նրանց ամարդար զանգանքները:

Կավատի առաջարկությունները գոհունակությամբ ընդունեցին Հուստինոսն ու իր զարմիկ Հուստինիանոսը: Բայց Պրոկոպոս քվեստորը, որը

¹ Պրոկոպիոսը վերագրում է պայմանագիրը 422 թ. (Procop., B. P. I, 10, I, 2, De aedif. II, 1): Բայց ավելի հավանական է, որ այն կնքվել է Պրոկոպիոսի հիշատակած Անատոլիոսի կողմից, Հազկերտի օրոք՝ 442 թ., տե՛ս G. Rowlinson p. 302:

² Ըստ Թեոփանեսի, նա ուներ չորրորդ որդի, Փեսսարոս, որը մագաղկյանների թեկնածուն էր և զոհվեց այդ աղանդի ջախջախման ժամանակ 529 թ. (տե՛ս Մարյաս): Ըստ ալ-Տարարիի, Կավատն ուներ 10 որդի, II, p. 148:

հայտնի էր իր անշահախնդիր ծառայությամբ և կայսեր վստահված անձերից էր, յուրովի էր ընկալում և մեկնաբանում պարսից արքայի մտադրությունը. նա կասկածում էր նրան հնտորեն քողարկված՝ հռոմեական տերությունը զավթելու ծրագրում. բանն այն է, որ Հուստինոսը զավակներ չուներ և, Պրոկոպի կարծիքով, Խոսրովի որդեգրման դեպքում գահը՝ գահաժառանգական իրավունքով պետք է անցներ նրան¹: Քվեստորը նախագուշացնում էր Հուստինոսին պարսկական արքունիքի խարդավանքներից և իր խորհրդով նրան հետ պահեց Կավատի վստահավոր առաջարկությունն ընդունելուց:

Դրանից հետո երկու տերությունների ներկայացուցիչները հանդիպեցին բուն սահմանին՝ հաշտության դաշնագրի պայմանները հանգամանորեն քննարկելու համար: Հռոմեացիների կողմից ներկայացան Անաստասիոսի զարմիկ Հյուպատիոսը և Պատրիկիոսը՝ magister militum per Orientem, իսկ պարսիկների կողմից Սեոսեսը (Միյավուշը)՝ խիստ կարևոր և ազդեցիկ պաշտոնյա՝ 'Αδρασταδαραν σαλάνης պաշտոնում² և Մերոդեսը՝ գորքի հրամանատարը³: Լիազորվածներին, սակայն, չհաջողվեց վերացնել վիճահարույց կետերը: Ընդ որում, դժվար թե պարսկական արքայազնի որդեգրման հարցն ունենար այն նշանակությունը, որը հակված է նրան վերագրել Պրոկոպիոս պատմագիրը, Պրոկոպի կամխատեսող սպանալիքներն ամեն դեպքում չեն կարող հիմնավորված համարվել⁴:

Բանակցությունների անհաջող ավարտի զլխավոր պատճառներն ավելի շատ կարևոր քաղաքական խնդիրներն էին: Յուրապահակի և Ամրագուկից ետ վերցված Կովկասյան դռան հարցը, շինարարական աշխատանքները

¹ Հռոմեական իրավունքի համաձայն, որդեգիրն անցնում էր որդեգրողի իշխանության տակ և օգտվում էր ժառանգական իրավունքներից, տե՛ս Proc., p. 130:

² 'Αδρασταδαραν σαλάνης - բարձրագույն պաշտոն է, որ սկսվեց Սեոսեսի հետ և նրա հետ էլ անհետացավ. նրանից հետո Պարսկաստանում այս կոչումով պաշտոնյա այլևս չի եղել (Proc. I, 11):

³ Μεβδός - P. A. de Lagarde (Gessammelte Abhandlungen, S. 185) առաջարկեց փոխել Μοβθός-ը ձևով: Μοβθός-ը ունեցել է [«մագիստրոսի իշխանություն»] τῆν μαγιστροῦ ἀρχήν. եթե «մագիստրոս» հասկանալ իրև «գորագլուխ», ապա Պ. Լագարդի արագրումը դժվարահասկանալի է, և Մերոդեսը պետք է դիտել իրև անձնանուն: Հնարավոր է, սակայն, որ «մագիստրոս» այստեղ նշանակում է պարզապես «պետ», կրոնի ներկայացուցիչ՝ պայմանագրերի կնքման հաճախ ներկա էին մերեղները (մոգպետները):

Ըստ Սեմ-Մարտեհի, արևելյան աղբյուրներում Mehbond = ἀρχιμάγειρος, հողանցի պետ, գլխավոր հողարար (Lévesq., VIII, 169):

⁴ [cf. Gibbon?].

Յեռոդոսուպոլիսում և Դարայում՝ հակառակ պայմանագրային որոշման, և վերջապես, հռոմայեցիների կողմից Լազիկայի նորադեպ բռնագրավումը՝ ահա տարածայնության այն կետերը, որոնց լուծելուց հետո միայն կարելի էր ակնկալել հաստատուն խաղաղություն¹: Պարսիկների ներկայացուցիչները, երևում է, պնդում էին հատկապես Լազիկայի ազատման անհրաժեշտությունը: Իրականում Կավատի՝ Խոսրովի որդեգրման առաջարկի մերժումը ոչ թե պատճառ էր բանակցությունների անհաջողության, այլ դրա հետևանքն էր: Այսպիսով, քննարկված կետերի վերաբերյալ փոխհամաձայնությունը չկայացավ, և հին իրադրությունը նոր պատերազմով էր սպառնում: Իբերիայի իրադարձությունները արագացրեցին թշնամական գործողությունների սկիզբը:

Իբերները պարսից արքաների ստորականերն էին: Կավատի օրոք նրանց եկիրը ևս մեկ անգամ դարձել է քրիստոնեության և Սասանյան կրոնական բռնապետության դարավոր պայքարի բեմահարթակ: Կավատը որոշել էր ճնշել քրիստոնեական կրոնի ազատությունը և «Գուրգեն թագավորից պահանջում էր, որ նրանք ընդունեին պարսկական ծեսերը՝ այդ թվում նաև չթաղեին մեռյալներին, այլ թողնեին նրանց ի կերակուր շանց և թռչնոց»²: Իբերիայի ժողովուրդը, որպես ջերմեռանդ քրիստոնյաներ, որոնք, ըստ Պրոկոպիոսի, «բուլբուլից լավ էին պահպանում ծեսերը»³, անցավ Հուստինիանոսի հովանավորության ներքո և խնդրեց նրա աջակցությունը՝ պարսկական բռնության դեմ:

Կայսրը դրամի միջոցով փորձեց համոզել հոներին, որ բնակվում էին Քերսոնեսի և Բոսպորի (Մասսոսպոլիս և Կերչի) միջև ընկած տարածքում, օգնության հասնել իբերներին: Բայց դա նրան չհաջողվեց, և նա Լազիկա ուղարկեց Պետրոս գորավարին հոների մի փոքրիկ ջոկատի հետ միասին՝ Գուրգենին օգնելու համար: Այսպիսի անշունչ օժանդակությունը թույլ չէր տալիս Իբերիայի թագավորին գործելու այն մեծ ուժի դեմ, որն Իբերիա ուղարկվեց Կավատի կողմից «վարիզ» պաշտոնով պարսիկ Բոնս գորավարի հրամանատարությամբ⁴:

¹ Բանակցությունների ապարդյունության համար ինչ-որ չափով մեղադրում էին Սեոսեսի և Հուպատիոսի ներկայացուցիչներին, որոնք, իբր, անձամբ դեմ էին հաշտության: Եթե դա արքունական բանասանճերից չէ, ապա կարելի է ենթադրել, որ Սեոսեսը պայքարում էր Կավատի երկրորդ որդու՝ Չամի թեկնածության համար, որն իր՝ քաջարի մարտիկի համբավով, քազմաթիվ կողմնակիցներ էր ձեռք բերել արքունիքում (Proc. I, 11):

² Proc., P. I, 12, p. 57.

³ Անդ:

⁴ Πέροσην, Οὐαρζζην μὲν τὸ ἀξίωμα, Βόην δὲ δνομα, Proc., B. P. I, 12, p. 58.

Գուրգենը կնոջ և երեխաների հետ միասին, որոնցից ավագը կրում էր Պերամիոս անունը, եղբայրներով և իբերացի ազնվականներով հանդերձ փախավ Լազիկա: Վայրի դժվարանցանելիության շնորհիվ նրան հաջողվեց որոշ ժամանակ մնալ Լազիկայում, սակայն պարսիկների գրոհը ստիպեց նրան թողնել երկիրը և հեռանալ Բյուզանդիա (որտեղ հետ էր կանչվել նաև Պետրոսը): Լազերը, ի վիճակի չլինելով դիմագրավելու պարսիկների հարձակումներին, հրաժարվեցին Իբերիային սահմանամերձ ամրոցների՝ Սկանդայի և Սարապանիսի պաշտպանությունից: Այնտեղ տեղակայված հռոմեական պահակազորը շուտով ստիպված եղավ լքել այս դիրքերը պարենային պաշարների պակասության պատճառով: Պարսկական զորքն անխափան տիրեց ամրոցներին:

Հուստինոս կայսրն իր կողմից երկու բանակ ուղարկեց՝ Հայաստանում և Միջագետքում պարսիկների դեմ գործելու համար: Առաջին բանակը՝ Միտատասի և Բելիսարիոսի հրամանատարությամբ անակնկալ ասպատակեց Պարսկահայաստանը (Պերսարմենիա), ամայացրեց երկիրը, գերեվարեց բազում բնակիչների և հետ դարձավ: Ավերածությունների թիրախ դարձած Հայաստանի սահմանամերձ շրջանները պատկանում էին ազնվատոհմ Կամսարական իշխաններին: Քիչ անց Միտատաս ու Բելիսարիոսը կրկին ներխուժեցին Կամսարականների տիրույթները, բայց այս անգամ հակահարված ստացան քաջարի եղբայրներ՝ Նարսեհ և Հրահատ իշխաններից, որոնք, հռոմայեցիներին ջախջախիչ պարտություն հասցնելով մակատամարտում, ստիպեցին նրանց հետ քաշվել: Այս ճակատամարտը հայտնի է նրանով, որ այստեղ առաջին անգամ հանդես է եկել Բելիսարիոսը, որին մոտ ապագայում վիճակվելու էր դասվել հին դաշաշրջանի ամենամեծ գորավարների շարքը:

Հռոմեական մյուս զորքը, որը ներխուժեց Միջագետք, նույնպես հաջողության չի հասել: Դրա գորագլուխը, թրակացի Լիբելարիոսը, պաշտոնանկ եղավ, և նրա փոխարեն նշանակվեց Բելիսարիոսը¹:

¹ Հուստինոս, 522-527 թթ.: Իրադարձություններից երեքն էլ վերաբերում են Հուստինոս I-ի թագավորության տարիներին և տեղի են ունեցել միջև 527 թ.՝ նրա մահվան տարեթիվը: Աղբյուրներում դրանց ժամանակն ավելի ճշգրիտ չի սահմանվում: Առանձին իրադարձություններն այս կամ այն տարեթվին հարմարեցնելու փորձերը, որոնք կատարում են նոր ժամանակի ուսումնասիրողները, հիմնված են լոկ կոստումների վրա: Բելիսարիոսի՝ դեպի Հայաստան արշավանքը, ըստ Մուրալտի, թվագրվում է 522 թ., Նարսեհի և Հրահատի հաղթանակը՝ 523 թվականին: Ըստ Կլիմտոնի (?) - 526 թ. (Fasti Rom. I, p. 745):

Դեսպերից քիչ անց գահ բարձրացած Հուստինիանոսի հրամանով Բելիսարիոսը նոր ամրոցներ կառուցեց պարսկական սահմանի վրա՝ Մծբինի առջև, Մինդուս տեղանքում: Ընդ որում կրկնվեց այն նույն պատմությունը, որը տեղի է ունեցել Դարայի վերակառուցման ժամանակ: Պարսիկներն աշխատում էին խափանել աշխատանքները նախ սպառնալիքներով, ապա՝ բռնի ուժով: Չնայած մայրաքաղաքից հասած նոր զորավիճ ուժերին, հռոմայեցիները պարտվեցին և նրանց սկսած շինությունները պարսիկները հիմնահատակ կործանեցին:

[Ամնոդիոսի ճակատամարտը 530 թ.]: Հուստինիանոսը Բելիսարիոսին մշանակեց «արևելյան կողմանց զորավար» (στρατηγός τῆς ἑω - magister per Orientem), հրամայելով պարսիկների դեմ պատերազմ վարել: Բելիսարիոսը Դարայում կուտակել էր 25 հազարանոց բանակ: Շուտով երևաց պարսկական բանակը, բաղկացած 40.000 զինվորներից, որը ճամբարեց Ամնոդիոս վայրում՝ Դարայից 20 ասպարեզ հեռավորությամբ: Ընդհանուր հրամանատարն էր Պերոզ պարսիկը՝ Միհրանի ցեղից¹, իսկ առաջնորդներից ամենահայտնիներն էին Պիտիասն ու Վարեսմանը²:

Ճակատամարտից առաջ Բելիսարիոսը և նրա օգնական Հերմոզեսը փորձեցին հաշտության հասնել՝ զրավոր բանակցություններ վարելով պարսիկների հրամանատարի հետ: Խաղաղ առաջարկները, սակայն, մերժվեցին: Պերոզ - Միհրանը հայտարարեց, որ «նա կհավատար նրանց խոսքերին, եթե նրանք հռոմայեցիներ չլինեին, որ հեշտ են խոստանում, բայց չեն կատարում»³: Այնուհետև երկու կողմերն էլ սկսեցին պատրաստվել ճակատամարտի: Չնայած քվակամ զերակշռության⁴, պարսիկները պարտություն կրեցին՝ մարտի դաշտում թողնելով 5000 սպանված-

ների, Վարեսման զորավարին¹ և հեռացան Մծբին²: Ամնոդիոս վայրի հարևանությամբ ճակատամարտը, Դարայի շրջակայքում, եղավ 530 թ., հուլիսին, ինդիկալտնի 8-ին³:

[Սատալայի ճակատամարտը, 530 թ.]: Կավատի՝ Հոմեթական Հայաստան ուղարկած մի այլ բանակի գործողությունները նույնպես հաջողությամբ չպսակվեցին: Բանակը բաղկացած էր պարսիկներին ենթակա հայերից, ալաններին հարևան⁴ սուրհուներից և 3000 հոն-սավիրներից: Պարսիկ Մերմերոսի հրամանատարությամբ⁵ 30.000-ոց մեծ բանակը շարժվեց դեպի Թեոդոսուպոլիս և, ճամբարելով երեք օրվա հեռավորությամբ (630 ասպարեզ = 100-ից մի փոքր ավել «վերստա»), պատրաստվում էին գրոհի: Այդ ժամանակ Հոմեթական Հայաստանի զորավարը Դորոթեոսն էր՝ խելամիտ և ռազմական գործում փորձառու մի մարդ, իսկ գործող բանակի ընդհանուր հրամանատարը Միտասան էր՝ մայրաքաղաքի զորավարներից մեկը և Բելիսարիոսի զինակիցը: Հռոմայեցիները, պարսիկների գրոհի մասին լուրն առնելով, նախապես նրանց ուժերը և դիրքը հետախուզելուց հետո անսպասելիորեն գրոհեցին նրանց ճամբարի վրա և, հասցնելով մեծ կորուստներ, հետ քաշվեցին: Մերմերոսը, հավաքելով ուժերը, ներխուժեց հոմեթական տարածք և անցավ մինչև Սատալա քա-

¹ *Zachariah of Mytilene*, VII: Μισράνης τὸ ἀξίωμα (οὕτω γὰρ τὴν ἀρχὴν καλοῦσι Πέρσαι, Περδόςης δὲ δνομα (Proc., *Bella Persica*, p. 62): Պրոկոպիոսի՝ Միհրան (mirran - *mihran) բառի իբրև պաշտոն կամ կոչում մշանակողի մեկնաբանումը ճիշտ չէ: Միհրան՝ Պերոզի ցեղանունն է, տես *F. Justi* [Iranische Namenbuch, Marburg, 1895], (*Malalas Μηράμ, Teoph. Μηράν*):

² *Πιτιάξης* և *Βαρεσμάνης*: Առաջին անունը՝ «րդեշխ» է, իսկ երկրորդը՝ *Μαρσεβάνης* - մարզպան. հմմտ. *C.-H. Lebeau* VIII, 136 n.3: Լեբոն սխալվում է, կարծելով, որ այդ ժամանակ Հայաստանում մարզպանն էր միականի (*ἑτερόφθαλμος*) Մծեծը:

³ Proc., I, 14, p. 66.

⁴ Ըստ Պրոկոպիոսի, 50.000, ըստ Սալալայի՝ 70.000:

¹ Ըստ Պրոկոպիոսի, Վարեսմանին հարվածեց հոմեթի առաջնորդը՝ Սուրիկան: Մալալասը (p. 453) Սուրիկայի սպանած պարսիկ առաջնորդին Սազ է անվանում (*ἐν αὐτῇ δὲ τῇ συμβολῇ καὶ ἔξαρχος Περσῶν κατεσφάγη δνόματι Σάγος, Σουρσκα τοῦ δοουκὸς καὶ ἔξάρχου* 'Ρωμαίων εἰς μονομαχίαν αὐτὸν προτρεψαμένου) [«նույն ընդհարման ժամանակ սպանվեց և պարսիկների զորավարի <բառացի> էքսարքոս» Սազը, Սուրիկա առաջնորդի և հռոմայեցի էքսարքոսի կողմից կանչվելով մեծամարտի]: Այնուհետև է, որ խոսքը միևնույն անձնավորության՝ Վարեսման Սազի մասին է. անտարակույս է, որ *Βαρεσμάνης*-ը՝ *Μαρσεβάνης* բառն է, իսկ այս պաշտոնով օժտված անձնավորությունը Սազն է: Դրանով հաստատվում է Սեն-Մարտենի կոնախումը: Ըստ Մալալայի (p. 452) և Թեոփիանեսի (I, p. 277), պարսկական զորքի հրամանատարներ էին 1) Միհրանը, 2) պարսից արքայի որդին: Վերը մենք նույնացնում ենք Սազին և Վարեսմանին: Շատ հավանական է, որ Պիտիսայս-րդեշխը՝ արքայազներից մեկն էր: Այս դեպքում նա ոչ թե հայկական մարզի ղեկավար է, այլ կաղիշցիների, որոնց նա, ինչպես երևում է Պրոկոպիոսից, գլխավորում էր Ամնոդիոսի ճակատամարտում:

² Այսպես, համաձայն Մալալայի. ըստ Պրոկոպիոսի, «նրանք չէին ցանկանում նահանջել Դարայից, մինչև Հոմեթիոսը՝ Հուստինիանոսի պատվիրակը, չներկայացավ Կավատի առջև, առաջարկելով խաղաղություն» (Proc., I, 16, p. 79):

³ *Malalas*, p. 452.

⁴ [Proc., I, 15].

⁵ [Ibidem.]

դաքը: Սատալայի մերձակայքում, Օկտաբե գյուղում կանգնած էր հռոմեական զորքը՝ նոս 15.000 մարդ:

Հաշվի առնելով թշնամու թվական գերակշռությունը, Միտտաը խուսափում էր անմիջական ճակատամարտից և, հրամայելով Դորոթեոսին դուրս չգալ քաղաքից, ինքը 1000 հոգիանոց փոքր ջոկատով թաքնվեց քաղաքի շրջակա բլուրների ետևում: Երբ պարսիկները սկսեցին գրոհել քաղաքի վրա, Միտտասի ջոկատը դարանից հարվածեց և նրանց մատնեց կատարյալ խուճապի: Պարսիկները դադարեցրին պաշարումը: Երբ նրանք նահանջում էին, Դորոթեոսը դուրս եկավ քաղաքից և շուտափույթ հարձակվեց նրանց վրա: Պարսիկները հայտնվեցին երկու ջոկատների միջև, մեծ կորուստներ կրեցին և ստիպված եղան լքել հակառակորդի տարածքը և վերադառնալ իրենց սահմանները:

Այդ ժամանակ հռոմայեցիները գրավեցին պարսկական սահմանամերձ Բոլոս ամրոցը և այսպես կոչված Փառանգիոնը, որ հայտնի էր ոսկու հանքով¹:

Դրանից քիչ առաջ նրանք տիրեցին ճաներին՝ ժողովուրդ, որը մինչ այդ ինքնավարությունից էր օգտվում²:

Հուստինիանոսը դժկամությամբ ներքաշվեց պատերազմի մեջ. այդ պատճառով, չնայած որ պարսիկների արշավանքները բարեհաջող ետ են մղվել, նա առաջինն էր ձեռնարկել խաղաղության մասին բանակցությունները: Հուստինոսը, որը դեռ պատերազմից առաջ էր ժամանել Հիերապոլիս, և հապաղում էր այնտեղ մինչև նոր կարգադրություններ ստանալը, կայսեր հրամանով ներկայացավ Կավատին և, բողոքելով նրա թշնամական գործողությունների անհիմն լինելու համար, առաջարկեց խաղաղությամբ ավարտել գործը: Կավատն էլ, իր հերթին, պատերազմի ամբողջ մեղքը բարդեց հռոմայեցիների վրա, մեղադրելով նրանց պայմանագրի պարտավորվածությունների չկատարման մեջ՝ պարտավորվածություններ, որոնք երկու պետությունները հաստատել են Կասպից դռան և սահմանի վրա նոր ամրոցներ կառուցելու առթիվ: Պարսից արքան մերժեց Հուստինոսի՝ խաղաղության մասին առաջարկները, հայտարարելով, որ «պարսիկները զենքը վայր չեն դնի, մինչև հռոմայեցիները

չհամաձայնեն կիսել նրանց հետ Կասպից դռան պաշտպանությունը, կամ ավերել Դարա քաղաքը»¹: Հուստինոսը վերադարձավ անհաջողությամբ:

Հաջորդ՝ 531 թ. գարնանը պարսիկները վերսկսեցին ռազմական գործողությունները:

Այս անգամ որպես պատերազմի թատերաբեմ էր ընտրվել ոչ թե Միջագետքը, այլ Եփրատեսիան [Կոնստանդնուպոլիս]: Նոր արշավանքի նախաձեռնությունն ու ծրագիրը պատկանում էր պարսկական տիրապետության ներքո գտնվող սարակինոսների արքային՝ Ալամունդարոսին: Չտեսնված եռանդով և հարուստ կենսափորձով, ռազմավարության հրաշալի գիտակ, չափազանց նվիրված լինելով պարսիկներին, նա հռոմայեցիների հանդեպ դառն ատելությամբ էր տուչորվում: Հիսուն տարի անընդմեջ նա անպառիտ տազնապեցնում էր հռոմեական պետությունը անվերջ ասպատակումներով: Անակնկալ և սրընթաց հարձակումներով նա ավերում էր հռոմեական տիրույթները Եգիպտոսից մինչև Միջագետք: Ալամունդարոսը, օժտված լինելով արքայական պատվով և իշխանությամբ, որ տարածվում էր բոլոր պարսիկներին հպատակ սարակինոսների վրա, իր ձեռքի տակ ուներ բավականին հզոր բանակ: Հռոմեական սարակինոսներն ի վիճակի չէին դիմագրավելու Ալամունդարոսի արշավանքները, քանի որ նրանց ուժերը տրոհված էին մի քանի ցեղապետերի, այսպես կոչված ֆիլարքոսների միջև: Հուստինիանոս կայսրը համախմբեց սարակինոսների ցեղերը ընդհանրական արքայական իշխանության ներքո և հանձնեց այն Արեթասին, Գաբալայի որդուն, որն Արաբիայի սարակինոսների առաջնորդն էր: Բայց Արեթասը շատ էր զիջում Ալամունդարոսին իր ռազմավարական ունակություններով և չէր կարող նրան ետ պահել հետագա արշավանքներից:

Կավատը բարձր էր գնահատում Ալամունդարոսի արժանիքները: Երբ պարսից արքան մտադրվեց նոր արշավանքի, ճարպիկ սարակինոսը խորհուրդ էր տալիս նրան պատերազմը Միջագետքից տեղափոխել Եփրատեսիա: Միջագետքն ու Օսրոնենն որպես առաջնային սահմանամերձ շրջաններ, իրենց ամրոց-քաղաքներով և այնտեղ կուտակված զորքերով, Ալամունդարոսի կարծիքով, պարսիկների համար իբրև պատերազմի բեմահարթակ հուսալի չէին: Այդ երկրամասեր արշավելը կասկածելի գործ էր, կապված հնարավոր ջախսաջախման բոլոր վտանգների հետ: Մինչդեռ Եփրատից այն կողմ գտնվող տարածքը և հարևան Ասորիքն իր Ամտիոք մայրաքաղաքով հանդերձ, որը կայսրության ամենաբարգավաճ և մար-

¹ Այս ժամանակին է վերաբերում նաև Հրահատի և Նարսեհի՝ հռոմայեցիների կողմն անցնելը և Բյուզանդիա հեռանալը:

² Proc., I, 15.

¹ Proc., 16, p. 81. 16, p. 81.

Մինչդեռ պարսիկների հրամանատարները զբաղված էին Մարտիրոսի պաշարմամբ, Դորոթեոսը՝ Հայաստանի զորավարը (ὁ τῆς Ἀρμενίας στρατηλάτης) գործում էր պարսիկների դեմ հարձակողական եղանակով, հաղթելով մարտերում, վարվում էր նրանց հետ աննայն դաժանությամբ՝ կոտորելով բազմաթիվ բնակիչների՝ ինչպես պարսիկներից, նույնպես և հայերից: Նա գրավեց բազմաթիվ ամրոցներ. ի միջի այլոց, կործանվեց և անառիկ մի բերդամրոց, որ կանգնած էր լեռնակատարին: Նրա մոտ էր տանում միակ նեղ արահետը, որով բնակիչներն իջնում էին դեպի գետը՝ ջուր վերցնելու համար: Այնտեղ, որպես աննապահով վայրում, տեղացի վաճառականները թաքցրեցին իրենց ապրանքը: Իմանալով այդ մասին, Դորոթեոսը պաշարեց դոյակը, պահակազոր դրեց արահետի վրա և սովով ստիպեց պաշարվածներին հանձնվելու: Տիրելով տեղին, նա լուր է ուղարկում կայսրին դոյակում ձեռք բերված զանձերի մասին, որոնք ընդունելու համար կայսրից ուղարկվեց սենեկապետ Նարսեսը¹:

Այդ միջոցին Մարտիրոսի մոտ գտնվող պարսկական ճամբարում լուր են ստացել Կավատի վախճանի և նոր արքայի [Խոսրով I Ամուշիրվան] գահ բարձրանալու մասին: Վախենալով գահաժառանգության հետ կապված հնարավոր խժոժություններից, պարսիկները համաձայնեցին ընդունել Միտատասի խաղաղության առաջարկը, առավել ևս որ տազնապալից լուրեր էին հասնում հոների՝ մոտ ապագայում սպասվող արշավանքի մասին: Պարսիկներն, ըստ երևույթին, դրդում էին հոներին հարձակվել հոռմայեցիների վրա, թեև ի պատասխան Հուստինիանոսի հարցման նրանք մերժեցին հոների ասպատակումներին իրենց հաղորդ լինելը²: Պրոկոպիոսը պատմում է³, որ Հուստինիանոսը, հոների կողմից սպառնացող վտանգի մասին իմանալով գերեվարած պարսիկ լուսեններից, ձեռնառատ պարզեց նրանց և համոզեց գնալ դեպի պաշարված Մարտիրոսիսը և լուր տարածել, որ հոները, հոռմայեցիներից կաշառված, պատրաստվում են զենքը շրջել պարսիկների դեմ: Այս հանգամանքը մեծապես նպաստեց պարսիկների կողմից պաշարումը շուտափույթ վերացնելուն:

Հոների արշավանքների մասին լուրերն անհիմն չէին և իսկապես շուտով այն կատարվեց: Ներխուժելով Կասպից դռան միջով, հոն-սարեյրները թեքվեցին դեպի հոռմեական տիրույթները և ավերիչ ասպատակումով

անցան Հայաստանը և բոլոր երկրները մինչև Եփրատեսիա, Կիլիկիա և Կյուրեստիկոն¹: Դորոթեոսը հրաման էր ստացել ետ մղել հոներին: Լսելով դրա մասին, հոները իսկույն նահանջեցին դեպի իրենց սահմանները: Դորոթեոսը հետապնդեց նրանց և ետ գրավեց ավարի մեծ մասը²:

Հուստինիանոսի ուղարկած դեսպանները շուտով ներկայացան պարսից արքային: Բանակցություններն ընթանում էին դանդաղ և ընդհատումներով: Պարսիկների ներկայացրած պայմանները ծանր էին թվում հոռմայեցիներին: Երկար վիճաբանություններից հետո համաձայնություն կայացավ հետևյալ կետերի վերաբերյալ՝ 1. հոռմայեցիները վճարում են պարսիկներին 110 կենտինար, 2. պատերազմի ժամանակ նվաճված ամրոցները փոխադարձաբար վերադարձվում են: Պարսիկները զիջում են հոռմայեցիներին Լազիկայի Սկանդա և Մարապանիս ամրոցները, իսկ հոռմայեցիների՝ Հայաստանում գրաված Բուրսն ու Փառանգիոնը կրկին անցնում են պարսիկների ձեռքը, 3. հոռմայեցի զորավարներն իրենց ռազմակայանը տեղափոխում են Դարայից Կոստանդինե, 4. իրերներին հայրենիք վերադառնալու կամ Բյուզանդիայում մնալու ազատություն է տրվում, 5. և ավելին, ըստ Մալալասի³, խաղաղությունը կոչված էր վերականգնել վաղեմի բարեկամական հարաբերությունները, որոնք իրենց արտահայտությունն էին գտնում կարիքի դեպքում փոխադարձ օգնության մեջ՝ դրամով կամ մարդկանցով:

Այս պայմաններով⁴ կնքվեց այսպես կոչված «Հավերժ խաղաղությունը» (ἀπέρατον καλοσμένη ειρήνη)՝ Հուստինիանոսի թագավորության 4-րդ տարեդարձին, 532 թ., որը և հաստատվեց հաջորդ՝ 533 թվականին⁵:

«Հավերժ խաղաղությունը», սակայն, չարդարացրեց իր անվանումը: Արևելքում տիրող անդորրը լիակատար ազատություն տվեց Հուստինիանոսին՝ Արևմուտքում նվաճողական քաղաքականություն վարելու համար: Լիբիայում և Իտալիայում պատերազմները բերեցին Հուստինիանոսին ընդարձակ տարածքային ստացվածքներ:

[Լիբիայի նվաճումը 533-534 թթ.]: Վանդալների պետությունը անկում էր ապրում այն պառակտման հետևանքով, որ ամկա էր մի բուռ գոթ տիրակալների և բնիկ բնակչության՝ մավրերի միջև: Իշխանությունը պահ-

¹ Malalas, p. 458 (13).

² Անդ, p. 472.

³ Proc., I, 21.

¹ Հալիսից վերև, Sen - Martine (Lebeau), VIII, p. 175:

² Malalas, p. 472.

³ Malalas, p. 477, հմմտ. Հեստ Ստիլիստեսի հիշատակված պայմանագրի կետը:

⁴ Proc., I, 22. Malalas, p. 477.

⁵ Marcell., Chron., p. 64.

պանելու մասին մտահոգված վանդալական թագավորները թանկ էին գնահատում բյուզանդական կայսրերի հետ բարեկամական կապերը: Հուստինիանոսի հետ հատկապես կապված էր Հիլդերիխը: 530 թ. նրան՝ բյուզանդական արքունիքի հանդեպ տածած համակրանքի համար գահընկեց է անում Գելիմերը, որն ինքնուրույն և Բյուզանդիայից անկախ քաղաքականության ջերմեռանդ կողմնակից էր: Հուստինիանոսն իբրև տապալված Հիլդերիխի պաշտպան, բռնատիրոջին պատերազմ հայտարարեց: Բելիսարիոսը 533-534 թթ. Տրիկամերոնի մոտ կայացած վճռական ճակատամարտում ջախջախեց Գելիմերի ուժերը և Լիբիան միացրեց կայսրությանը:

Հռոմեական զենքի հաջողությունները նախանձ էին ծնում պարսիկների մեջ: Խոսրով I-ը (531-579), որը ակնդետ հետևում էր հռոմայեցիների գործողություններին, վախենում էր Բյուզանդիայի չափից դուրս ընդարձակվելուց՝ նոր նվաճումների հետևանքով: Շնորհավորելով Հուստինիանոսին Լիբիան նվաճելու առթիվ, Խոսրովը կատակելով խնդրում էր իրեն հատկացնել լիբիական ավարի մի մասը, «քանզի եթե պարսիկները հաշտություն չկնքեին, նա չէր հաղթի վանդալներին»¹: Հուստինիանոսը հանգստացրեց Խոսրովին, նրան դրան ուղարկելով:

[Իտալիայի նվաճումը 535-539 թթ.]: Լիբիային տիրանալուց անմիջապես հետո պատերազմ սկսվեց Իտալիայում՝ արևելյան գոթերի դեմ: Նրանց գործերին Հուստինիանոսի միջամտության պատրվակ է ծառայել նույն այն իրարանցումը, որը տեղի է ունեցել նաև Աֆրիկայում: Բյուզանդիայի կողմնակից Անալաստուսն սպանվեց, և գահ բարձրացավ առաջնորդներից մեկը՝ Վիտտիգիսը: Բելիսարիոսի գլխավորությամբ ուղարկված զորքերը 535 թ. գրավեցին Սիկիլիան և ձեռնամուխ եղան Իտալիայի նվաճմանը:

Պատերազմի հաջող ընթացքը առավել գրգռեց Խոսրովին: Նա պատրաստ էր խախտել հաշտությունը և միայն պատշաճ առիթ էր որոնում: Հանգամանքները նպաստեցին նրա մտադրության՝ նրան հայանի դարձան որոշ փաստեր, որոնք կարող էին բավարար հիմք հանդիսանալ խաղաղ հարաբերությունները խզելու համար:

Ստորակա սարակիճոսների ցեղապետերի միջև վեճ ծագեց ընդարձակ արոտավայրերի համար, որոնք գտնվում էին Պալմիրայից հարավ: Արեթասը պնդում էր դրանց հռոմայեցիներին պատկանելը, հղելով դրանց լատիներեն անվանմանը՝ Ստրատա (սալարկված ճանապարհ): Ալամուն-

դարոսն էլ պնդում էր, որ վիճարկվող տարածքը փաստորեն գտնվում էր իր օգտագործման մեջ: Հուստինիանոսից վեճը բննելու համար՝ նշանակված դատավորներն ավելի էին բարդացնում խնդիրը՝ իրենց վրա հրավիրելով Խոսրովի մեղադրանքը նրանում, որ նրանք աշխատում էին կաշառքի օգնությամբ իրենց կողմը քաշել Ալամունդարոսին՝ պարսիկների բարեկամին¹: Պարսից արքան իր դժգոհությունն էր հայտնում նաև գաղտնի քարոզչության համար, որը վարում էին բյուզանդական իշխանությունները բարեկամ հոների մեջ, դրանց պարսիկների դեմ ապստամբեցնելու նպատակով. ընդ որում Խոսրովը հղում էր Հուստինիանոսի սադրիչ նամակներին, որ նրան էին հասցնում իբր իրենք՝ հոները²:

Այդ պահին ժամանած գոթերի պատվիրակությունը ավելի էր գրգռում Խոսրովի կրքերը: Գոթերի թագավոր Վիտտիգիսը, անհաջողությամբ փորձելով Բելիսարիոսի դեմ դաշնակից գտնել գերմանների և լանգոբարդների մեջ, մտադրվել էր Հուստինիանոսի դեմ պատերազմի մեջ ներքաշել պարսից թագավորությունը: Այս նպատակով նա Պարսկաստան է ուղարկում գաղտնի պատվիրակություն, որը երկու լիգուրացի երեցներից էին կազմված³: Պատվիրակները կոչ էին անում Խոսրովին խզել Բյուզանդիայի հետ կնքած հաշտությունը և այն միտքն էին անցկացնում, որ Հուստինիանոսը, բնավորությամբ անհանգիստ և ուրիշի ունեցվածքին տենչացող, փափագում է գավթել ողջ աշխարհը, ուստի և չի կարող դիտվել իբրև պարսիկների բարեկամ: Նա միայն առժամանակ դադարեցրեց պարսիկների դեմ պատերազմը՝ վանդալներին հնազանդեցնելու համար. նրանց թագավորությունը ոչնչացնելով, նա իր հայացքը դարձրեց գոթերի վրա: Կասկածից վեր է, որ, ջախջախելով գոթերի ուժերը, նա չի հապաղելու իր գեներ դարձնել պարսիկների դեմ՝ չէ որ նրա համար բարեկամությունն ու երդումները ոչինչ են:

Այս նկատառումներից ելնելով նա (այսինքն՝ Վիտտիգիսը) համոզում էր Խոսրովին կանխել վտանգը և բաց չթողնել պատերազմ սկսելու բարեպատեհ պահը⁴:

Հայաստանում տեղի ունեցած տագնապալից իրադարձություններն արագացրեցին հարաբերությունների խզումը: Հայ բնակչության մեջ տարածվող քաղաքական խնդրումն անշուշտ պայմանավորված էր Հուս-

¹ Proc., Pers., II, I, p. 157.

² Անդ, p. 156.

³ Proc., Goth. II, 22, P. II. 2.

⁴ Proc., Pers., II, 2.

¹ Proc., P. I, 26.

տինհիանոսի կատարած երկրի կառավարման վերջին ձևափոխություններով (14):

Մատայայի ճակատամարտից հետո, 531 թ. Միտասան և Դորոթեոսը գրադեցրին Պարսկահայաստանի սահմանամերձ ամրոցները՝ Բոլսը և այսպես կոչված Փառանգիոնը, որտեղ պարսիկները ոսկի էին արդյունահանում և մատակարարում էին իրենց արքային¹: Այս կարևոր տեղանքների՝ հռոմայեցիների ձեռքն անցնելը պատահեց դրանց տերերի, տեղացի հայ իշխանների նախաձեռնությամբ: Բոլսը գտնվում էր Կամսարական եղբայրների՝ Նարսեհի, Հրահատի և Իսահակի, տիրապետության ներքո: Պատերազմի սկզբում, երբ Բելիսարիոսն ու Միտասանը ներխուժեցին Պարսկահայաստան՝ Հուստինիանոսի գահ բարձրանալուց քիչ առաջ (հավանաբար՝ 526 թ.)², Ներսեհն ու Հրահատը հաջողությամբ ետ մղեցին նրանց հարձակումը³: Շուտով, սակայն, իրենք անջատվեցին պարսիկներից և իրենց մոր հետ տեղափոխվեցին Բյուզանդիա: Կայսրության գանձապահը, նրանց հայրենակից Նարսեհը, ամենայն ջերմությամբ ընդունեց նրանց և առատորեն պարգևներ շնորհեց: Նրանց օրինակին հետևեց և կրտսեր եղբայրը՝ Իսահակը: Նա գաղտնի բանակցություններ սկսեց հռոմայեցիների հետ՝ իր պահպանության ներքո գտնվող Բոլոս ամրոցը նրանց հանձնելու մասին: Չգուշացնելով հռոմայեցիներին, Իսահակը գիշերը քաբուն բացեց ամրոցի դարպասները և ներս ընդունեց մերձակայքում սպասող զինվորներին: Դրանից հետո նա գնաց իր եղբայրների մոտ⁴:

Ինչ վերաբերում է Բոլոսին հարևան Փառանգիոն տեղանքին, ապա դրա՝ հռոմայեցիների ձեռքն անցնելը, բարդություններ պատճառեց. Փառանգիոնն, ինչպես ասվեց, հարուստ էր ոսկեհանքերով: Դրանք պատկանում էին պետական գանձարանին և տնօրինվում [վարձվում] էին կառավարությունից նշանակված մասնավոր անձանց կողմից (15): Պերոզ արքայի օրոք հանքերը հսկում էր ոմն Վրիվը, ասորու որդին, ցածր ծագման և գործի մեջ անփորձ մի մարդ: Չկարողանալով վարել իրեն վստահված գործը՝ Վրիվը Պերոզի առջև ամբաստանեց Վահան Մամիկոնյանին (16). «Ինձ ի գործ ոսկեհատին չեա ինչ մօտ երթալ. և իւր ժողովեալ զամենայն

ոսկի աշխարհին՝ խորհի երթալ առ կայսր և կամ յաշխարհն Հոնաց, և տուեալ զոսկին՝ կամի խնդրել զունդ և ապստամբել»¹:

Կավատի քաղաքության օրոք և նրա կարգադրությամբ հանքերը տնօրինում էր տեղացի բնակիչներից մեկը, Շմավոնը, որն արդյունահանված ոսկին ուղարկում էր գանձարան: Օգտվելով պատերազմի հանգամանքներից, Շմավոնը որոշեց զրկել Կավատին հանքերի եկամտից: Նա [մույնպես] անցավ հռոմայեցիների կողմը՝ ըստ երևույթին, Մերմերոսի նահանջի ժամանակ: Բյուզանդիայի հովանավորության ներքո դնելով և՛ իրեն, և՛ Փառանգիոնը, Շմավոնն, այնուամենայնիվ, իրեն վերապահեց հանքերի օգտագործման արտոնությունը:

Բյուզանդական կառավարությունը չէր պնդում, որ իրեն հատկացնեն ոսկու հանույթի մասը, բավարարվելով, ըստ երևույթին, այն բանով, որ պարսկական գանձարանը կորցրել է այդպիսի շահութաբեր աղբյուրը: Փառանգիոնի տեղանքի բնական պայմանների շնորհիվ պարսիկները չէին կարող բռնի միջոցներ ձեռնարկել Շմավոնի դեմ, որը գտնվում էր Բյուզանդիայի հովանավորության ներքո²: Բայց Շմավոնն իր ազահությամբ քշմամիներ ձեռք բերեց տեղական հայ վերնախավում: Օգտվելով կայսերական բարեհաճությունից, նա իր կալվածքներն ընդարձակեց հարևանների հաշվին: Պատերազմը դեռ նոր էր բորբոքվում, երբ նա Հուստինիանոսից խնդրեց այլ հայ իշխաններին պատկանող ինչ-որ գյուղեր: Խնդրանքը հարգվեց, և գյուղերը հանձնվեցին իր տնօրինությանը: Վրդովված այդ փաստով, Պերոզի երկու որդիները, գյուղերի օրինական տերերը, վրեժխնդիր լինելով իրենց հասցրած վիրավորանքի համար, սպանում են նրան և փախչում Պարսկաստան: Հուստինիանոսի կարգադրությամբ Շմավոնի եղբորորդին՝ Համազասպը, ժառանգեց հորեղբոր գյուղերին վերաբերող իրավունքները և նշանակվեց Հայաստանի [այդ մասի] տիրակալ:

Շատ ժամանակ չանցած Համազասպը ևս դարձավ կայսրի վստահությունը վայելող և հայկական ծագում ունեցող ոմն Ակակիոսի բանասարկությունների գոհը: Այս վերջինը գաղտնի ամբաստանեց Համազասպին, թե նա հալածում է հայերին և քաբուն կապվել է պարսիկների հետ՝ Թեոդոսուպոլիսը և այլ քաղաքներ նրանց հանձնելու նպատակով: Կայսեր գիտությամբ նա, խաբելով Համազասպին, սպանում է նրան և իր ձեռքը վերցնում Հայաստանի կառավարումը: Ի բնե լինելով չար, նա, մատնելով իր հոգու հատկությունները, անասելի դաժանությամբ էր վարվում բնակ-

¹ Proc., Pers., I, 15.

² [G. Rowlinson, The Seventh Great Oriental Monarchy, p.]

³ Proc., Pers., I, 12, p. 59.

⁴ Անդ, Pers., I, 15, p. 79.

¹ [Ասպար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 117]:

² Proc., Pers., I, 15, p. 78.

չության նկատմամբ, իրեն թույլ էր տալիս ապօրինի դրամական տուրքեր շորթել, և մինչ այդ չլսված հարկ դնել երկրի վրա՝ չորս կենտինար, այն է՝ 400 լիտր ոսկի: Համբերությունը կորցրած հայերը դավադրություն կազմակերպեցին Ակակիոսի դեմ. դրանց թվում էր Արտավան Արշակունին¹: Սպանությունը գործելուց հետո դավադիրները փախան Փառանգոն:

Խռովությունը ճնշելու և կարգ ու կանոն հաստատելու համար մայրաքաղաքից ժամանեց Սիտասը, որին երկրի [ժողովուրդը] քաջ ճանաչում էր դեռևս պարսիկների դեմ մղած պատերազմների ժամանակից: Նա խուսափում էր կտրուկ գործողություններից, աշխատում էր բնակչությանը հանգստացնել խաղաղ միջոցներով և թաքնվողներին վերադարձնել իրենց բնակավայրերը: Նա խոստանում է նրանց բարեխոսել կայսեր առջև Ակակիոսի մտցրած նոր տուրքերը վերացնելու մասին՝ տուրքեր, որոնք ծանր էին նստում ժողովրդի վրա և խռովության հիմնական պատճառ են հանդիսացել: Սակայն Ակակիոսի որդու՝ Արտիոսի (որն, ըստ երևութիւն, հորից ժառանգել էր նրա չար հակումները), զրպարտությունների պատճառով Սիտասի մեղմությունն ու խաղաղարար քաղաքականությունն արքունիքում գոհությամբ չընկալվեց: Հասպտելու համար կայսրից ստացած հանդիմանությունը ստիպեց նրան հարձակողական գործողությունների դիմել: Խնդրի լուծումը ոչուրացնելու համար նա փորձեց իր կողմը քաշել որոշ հայերի՝ խոստանալով մեծ պարգևներ: Ասպետյանները-Բագրատունիները՝ հայկական ազնվական տոհմերի մեջ մարդաշատությամբ և ազդեցությամբ ամենահզորներից մեկը, հակված էին դեպի խաղաղություն (17):

Նրանք հայտնեցին, որ պատրաստ են զենքը վայր դնել և անջատվել իրենց ազգակիցներից այն պայմանով, որ իրենք չեն հալածվելու և անխափան կտիրեն իրենց սեփականությանը: Սիտասը հաճույքով ընդունեց իրեն առաջարկված պայմանները, լիովին համոզված լինելով, որ ազդեցիկ իշխանների հանձնվելուց հետո իրեն կհաջողվի առանց կովի ճնշել ապստամբությունը: Իր խոստումը, սակայն, Սիտասը չկատարեց, նենգորեն տեսնելով իրեն ապավինած հայերի դատաստանը: Հայերը կանգնած էին Օյնոքալակոն տեղանքում (χωρίον Οινόχαλάκων), որտեղ կենտրոնացած էին նրանց ուժերը, և սպասում էին բանակցությունների արդյունքի: Սիտասի ուղղարկած պատասխանը դրական էր: Սակայն, երբ հռոմեական զորքը շարժվեց դեպի հայերի զորաճամբարը, առաջապահ ջոկատը, հանդիպելով որոշ հայերի, թշնամաբար վարվեց նրանց նկատմամբ: Պրոկոպիոսը հավաստում է, որ ջոկատը տեղյակ չէր պայմանա-

վորվածության մասին, բայց չէ որ Սիտասը դրա մասին գիտեր, և այնուամենայնիվ ինքն էլ արատավորեց իրեն, սրի քաշելով ինչ-որ քարանձավում թաքնված կանանց և երեխաների:

Սիտասի խարդավանքը վրդովեց Ասպետյաններին: Նրանք միացան իրենց հայրենակիցներին և հարձակվեցին հռոմայեցիների վրա: Հովհաննեսը և կիրճերով կտրատված լեռնային տեղանքը թույլ չէր տալիս մարտը մի վայրում կենտրոնացնելու: [Յրված] զորքերը գործում էին բաժանաբաժան՝ լեռների ստորոտներում և դիքերում: Սիտասին պատահաբար հանդիպում է հայերի մի փոքր ջոկատ, որը նրանից ձորակով էր բաժանված: Հռոմեական զորավարը մի քանի ռազմիկների հետ հատեց ձորակը և հարձակվեց հայերի վրա: Սրանք մի փոքր նահանջեցին: Սիտասը չհետապնդեց նրանց, բայց մնաց տեղում, իր գեղարդը հողի մեջ խրած: Ռազմիկներից մեկը, հետապնդումից հետո դառնալով իր ընկերների մոտ, չկարողացավ ժամանակին պահել տաքացած ձիուն, զարկվեց գեղարդին և կոտրեց այն: Չորավարը դառնացավ, թերևս դրանում տեսնելով չար նախանշան: Սիտասի կանխազգացումը ճիշտ էր: Հայերը ռազմիկների մեջ ճանաչեցին նրան, քանզի նա պատահաբար չէր հագել սաղավարը և այդ հանգամանքը մատնեց նրա ով լինելը: Հայերը հարձակվեցին նրա վրա, և այն ժամանակ, երբ Սիտասը, իր սուրը մերկացնելով, կրկին հատում էր ձորակը, նրանցից մեկը հասավ նրան և սրով վերք հասցրեց գլխին: Սիտասը շարունակում էր արշավել, բայց Արտավան Արշակունին՝ Հովհաննեսի որդին, նիզակի դիպուկ հարվածով տեղում սպանեց նրան¹: Ըստ Պրոկոպիոսի, ոմանք այդ սպանությունը վերագրում էին Սիմոնին՝ աննշան ծագում ունեցող մի մարդու:

Այսպես զոհվեց Սիտասը, քաջարի ռազմիկը և իր ժամանակի ակաճավոր զորավարներից մեկը: Նրա փոխարեն Հայաստան ժամանեց Բուզեսը: Նա խաղաղ քաղաքականության կողմնակից էր ձևանում, հայերին խոստացել էր կայսեր հետ հաշտեցնել, և այս պատրվակով փորձում էր բանակցություններ սկսել ամենաազդեցիկ իշխանների հետ: Դառն փորձ ունեցած հայերը Բուզեսին չէին վստահում և նրա խոստումները դիտում էին իբրև խաբելու և իրենց դարանակալելու միջոց: Բայց հայ իշխաններից մեկը՝ Հովհաննես Արշակունին, Արտավանի հայրը, բարեկամական հարաբերություններ ունենալով Բուզեսի հետ, ապավինեց նրան, և մի քանի հայ ազնվատոհմիկների ուղեկցությամբ և իր փեսայի՝ Վասակ [Մամիկոնյանի] գլխավորությամբ ուղևորվեց Բուզեսի մոտ: Երբ նրանք հասան հանդիպման

¹ [Proc., II, 27, p. 527?].

¹ Proc., Bella Persica, II, 3.

համար նշանակված վայրը, հռոմեական գործը շրջապատեց նրանց: Վասակը, հասկանալով, թե ինչպիսի ծուղակի մեջ են իրենք ընկել, իզուր հորդորում էր իր աներ Հովհաննեսին փախուստի դիմել: Վասակը հարկադրված էր լքել նրան և մնացածների հետ միասին գաղտնի կերպով փախչել: Պարզվեց, որ հայերը իրավացի էին, երբ չվստահեցին Բուզեսին: Չնայած վաղեմի բարեկամությանը, նա դավաճանաբար սպանեց Հովհաննեսին:

Հայաստանում բռնկվող խռովությունները, դատելով այն ուշադրությամբ, որ նրանց նվիրում է Պրոկոպիոսը, բավական լուրջ բնույթ էին կրում: Իրարանցումներն սկսվեցին Բյուզանդական Հայաստանի այն շրջանում, որտեղ միմյանց էին աղերսվում երեք իշխանական տոհմերի տիրույթները՝ Թեոդոսուպոլիսում նստած վերջին թագակիր Արշակունիների հետնորդները, Սպերի Բագրատունիները և Տայքի Մամիկոնյանները:

Պերոզը, որի որդիները սպանեցին Սիմեոնին (Շմավոնին)¹ իրենց գյուղերը զավթելու համար, հավանաբար, Արշակունի է եղել: Պարսկական անունները ընդունված էին Արշակունիների տոհմում: Տեղադրելով Փռանգիտնը Սպեր մահանգում, հանքերի տեր Սիմեոնին պետք է ըստ ամենայնի ճանաչել իրրև Բագրատունիների՝ Սպերի ժառանգական իշխաններից մեկին: Այս իշխանի անունը հիմք է տալիս Սեն-Մարտենին¹ կարծելու, որ նա հայ չէր, այլ ասորի, թերևս վերոհիշյալ Վրիվի ժառանգորդն էր: Սեն-Մարտենն իրավացի չէր. եթե Շմավոնի անունը հայկական չէ, ապա նրա զարմիկ Համազասպի անունը միանգամայն հայկական է՝ այն սովորաբար կրում էին Մամիկոնյանները: Հնարավոր է, որ Համազասպը Շմավոնի բեռորդին է. այդ դեպքում նա հաստատ Մամիկոնյան է:

Համազասպին կործանեցին Ակակիոսի՝ ծագումով հայի, բայց հայրենիքից օտարացած մի մարդու խարդավանքները²: Նա, ինչպես երևում է, մայրաքաղաքի հայերից էր և վայելում էր Հուստինիանոսի մտերմությունը: Նրա որդի Ադուլիոսը հետագայում ծառայում էր արքունիքում սիլենտիարիոսի պաշտոնում, հնարավոր է, որ նա ևս նման մի ծառայություն էր կատարում: Երկուսն էլ ավելի արժևորում էին կայսեր բարեհաճությունը, քան երկրի շահերը: Որպես Հայաստանի կառավարիչ Ակակիոսը շատ էր չարաշահում իր իշխանությունը, բայց ժողովրդից նոր հարկեր գանձելը

¹ *Lebeau*, VIII, p. 103, n. 2.

² Համազասպի սպանությունը պատահեց մինչև 536 թ., քանի որ այս տարեթվին Ալեկիոսն էր Հայաստանի փոխարարապետը, տե՛ս *Novel. XXI* և *XXXI*: 568

դժվար թե կարելի է վերագրել նրա ինքնակամության: Ըստ երևույթին, այն կապված էր ձևափոխումների հետ, որ իրականացվել են Հայաստանի ռազմական և քաղաքական կառավարման մեջ նրա՝ 536 թ. կատարված նոր բաժանման առթիվ: Եթե հարկերի հավելումը լիներ լույս Ակակիոսի գործը, ապա այն չեղյալ հայտարարելու համար Միտտասը կայսեր թույլտվության կարիքը չէր ունենա: Ակակիոսի հալածանքներն ընդհանուր դժգոհություն առաջացրեցին երկրում:

Ակակիոսի սպանությունից հետո ժողովրդի խռովությունը, տեղափոխվելով քաղաքական ոլորտ՝ ընդարձակվում է: Խլրտումները բացատրվում են [Արևմտյան Հայաստանի] երկու գորեղ տոհմերի միջև ընթացող պայքարով: Փոխհյուպատոսի սպանողների քվում հիշատակվում է Արտավան Արշակունին¹: Հիմք կա մտածելու, որ Ակակիոսի դեմ դավադրության ամբողջ նախաձեռնությունը պատկանում է Արշակունիներին²: Կառավարությունը անբարյացկամությամբ էր վերաբերվում հռչակավոր հարստությանը: Հայերի հայտարարի համաձայն, «Արշակունյաց վերջին թագավորը (18) իր սեփական կամքով զիջեց իր թագավորությունը (19) Թեոդոսիոսին (20), որպեսզի ինքը և իր ազգականները հավիտյանս ապրեն ազատ և ենթակա չլինեն որևէ հարկի»³: Նրանց հավաստիացմամբ, այդ որոշումը ուժի մեջ էր մինչև 532 թ. հռոմայեցիների և պարսիկների միջև տխրահռչակ պայմանագրի կնքումը: Հայաստանի խռովություններն սկսվեցին հենց այս պահից, և դրանցում ղեկավարող դեր էին կատարում հենց Արշակունիները: Անկասկած, Հուստինիանոսի ձեռնարկությունների մեջ կար մի բան, որ նեղում էր հատկապես Արշակունիներին: Մատնանշված պայմանավորվածության ճշգրիտ իմաստը դժվարըմբռնելի է: Անկարելի է [«նրա ազգակիցներ»]՝ օլ

¹ *Proc.*, *Bella Pers.*, II, 27.

² Արշակունիների հզոր հարստությունը, կորցնելով արքայական իշխանությունը, իր քաղաքական նշանակությունից վերջնականապես չէր զրկվել: Վերջին Արշակի մահարաջին կնքած պայմանագրի համաձայն, նրա ժառանգներին ապագայում պետք է բացարձակ ազատություն ապահովվեր: Այդ արտոնությունից նրանք օգտվում էին մի ամբողջ հարյուրամյակ: 530-ական թվականներից բյուզանդական իշխանությունը սկսում է, թերևս նկատի ունենալով նրանց հզորացումը, նեղել նրանց: Հայերի ճառից, որով նրանք ներկայացել են 539 թ. Խոսրովի առջև, երևում է, որ կառավարությունը նրանց վրա հարկ է դրել: Դժվար է մտածել, սակայն, որ Հուստինիանոսը հարկ է դրել <միայն> հայ ազնվականության վրա: Իրականում հարկերը մեծացել են մինչև 4000 գրվանքա ոսկի Ակակիոսի օրոք. և դա բացատրվում է ոչ թե Ակակիոսի անհագորդ կամ ինքնազուլիս լինելու պարագայով, ինչպես մեկնաբանում է Պրոկոպիոսը, այլ գլխավորապես երկրի նոր կազմակերպմամբ (21):

³ *Proc.*, *Pers.* II, 2, p. 136.

κατὰ γένος αὐτῶ (sc. Ἀροάκη) արտահայտությունը հասականալ ամբողջ հայ ժողովրդի իմաստով. ավելի հավանական է, որ այն ավելի նեղ իմաստ ունի և նշանակում է միայն Արշակունյաց տոհմը: Նույնպես անհասկանալի է մնում այն ազատության բնույթը, որ Արշակունիները վերապահեցին իրենց՝ սեփական աթոռը Բյուզանդիային փոխանցելու ժամանակ: Դրա մեջ մտնում էր նաև պետական պարիակներից ազատությունը: Սակայն մենք չգիտենք, թե ինչպիսիք են եղել հարկային հարաբերությունները հայոց նախարարների և Բյուզանդիայի միջև: Ուստի և դժվար է որոշել, թե ինչպիսիք է եղել այն հարկը, որ դրվել է Ակակիոսի օրոք մինչ այդ ազատ Արշակունիների վրա՝ ի դժգոհություն նրանց. եղել է այն պարտադիր այլ նախարարական տոհմների համար, թե մի խստություն էր, որ նախատեսված էր միմիայն Արշակունիների նկատմամբ՝ իրենց հզորության և երկրում ունեցած ազդեցության համեմատ: Դիրքով և նշանակությամբ նրանց գլխավոր մրցակիցներն էին ազնվատոհմ Բագրատունի իշխանները: Սկսվող շարժումը գլխավորում էին Արշակունիները: Նրանց ուժը կոտրելու համար Միտտասը փորձում էր օգտագործել ազնվական տների պայքարն ու պառակտում մտցնել դրանց միջև:

Պրոկոպիոսի հիշատակած Ասպետյանների տոհմը, որ Միտտասն իր մոտ է հրավիրում, Բագրատունիներն են: Նրանք անվանվում են իրենց տոհմական տիտղոսով՝ «ասպետ»¹: Հանգամանքները դասավորվեցին ոչ Միտտասի օգտին՝ Բագրատունիներն ավելի թշնամացան նրա նկատմամբ: Նրա հաջորդը՝ Բուզեսը, շարունակելով պառակտման մույն քաղաքականությունը, փորձում էր գործել Արշակունիների միջոցով: Նրա կանչին արձագանքեց Հովհաննեսն՝ իր փեսա Վասակի հետ: Հայերը միանգամայն հասկանում էին, որ իրենք ի գորու չեն երկար ժամանակ դիմակայելու, որ

վերջիվերջո ստիպված կլինեն հնազանդվել իշխանությանը: Արշակունյաց իշխանները առավելապես շահագրգռված էին իրադրության խաղաղ կարգավորման, քանի որ նրանց գլխավոր տիրույթները գտնվում էին Հայաստանի կայսերական մասում (22):

Բուզեսի նողկալի արարքից հետո հայերը կայսեր հետ հաշտվելու հույսը կտրեցին և, չկարողանալով ապավինել սեփական ուժին, օգնության և հովանավորության համար դիմեցին պարսից արքային: Խոսրովի մոտ ուղարկված պատվիրակությունը գլխավորում էր Վասակը, չափազանց գործունյա մի մարդ, օժտված այն բոլոր արտակարգ ունակություններով, որոնք հատուկ էին Մամիկոնյանների տոհմին:

«Մեզանից շատերը, ով տեր, Արշակունիներն են, այն Արշակի տոհմից, որ պարթևների թագավորությանն օտար չեն՝ երբ պարսիկների իշխանությունը գտնվում էր պարթևների ձեռքում: Նա հռչակավոր արքա եղավ և իր ժամանակիցներին ոչնչով չէր զիջում: Մենք այժմ եկել ենք ձեզ մոտ, մենք, ովքեր բոլորս վերածվել ենք ստրուկների ու փախստականների, ոչ կամովին, այլ բռնի, արտաքուստ հռոմայեցիների պետության կողմից, իսկ ըստ էության, ով արքա, քո կամքով: Ով հնարավորություն է տալիս անարդարություն գործել ցանկացողներին, պետք է արդարացիորեն պատասխան տա իր կատարած գործի համար: Մի քիչ ավելի հնից կպատմեն, որպեսզի դուք հնարավորություն ունենաք հետևելու դեպքերի ընթացքին: Մեր նախնիների վերջին արքա Արշակը կամավոր կերպով իր իշխանությունից հրաժարվեց [հօգուտ] հռոմայեցիների կայսր Թեոդոսիոսի այն պայմանով, որ իր բոլոր տոհմակիցները հավիտյան անկախ ապրեն և ոչ մի դեպքում հարկատու չդառնան: Մենք կարողացանք պաշտպանել սահմանվածը այնքան ժամանակ, մինչև որ դուք կնքեցիք այս չարաքաստիկ հաշտությունը, որը եթե մեկն անվաներ հասարակաց դժբախտություն, սխալված չէր լինի: Որովհետև դրանից հետո, ո՛վ արքա, քեզ խոսքով բարեկամ, բայց գործով թշնամի [Հուստինիանոսը], չմտահոգվելով ոչ բարեկամների և ոչ էլ թշնամիների մասին, մարդկային ամեն ինչ խառնել ու տակնուվրա է արել: Դրանով դու շուտով կհամոզվես, երբ մա վերջնականապես ջախջախի արևմտաքի [ցեղերին]: Նա սահմանվածից ո՞ր մեկը չխախտեց: Նա տակնուվրա չարե՞ց ամեն մի ներդաշնակություն: Նա չէ՞ր, որ մեզ վրա սահմանեց հարկերի անմախաղեպ գումար: Նա չէ՞ր, որ մեր սահմանակից և անկախ ապրող ճաներին ստրկացրեց, իսկ դժբախտ լազերի թագավորի վրա նշանակեց հռոմայեցի կառավարիչ: Այս բոլորը բնության հակառակ են և ոչ մի ձևով հնարավոր չէ արդարացնել: Նա չէ՞ր, որ հոներին ենթակա բուսպորիաների դեմ գորավարներ ուղարկեց

¹ [Տե՛ս Ն. Մանի ստուգարանությունը]: Պրոկոպիոսի վիճեցական հրատարակության մեջ Ἀσπετιανοί փոխարեն տալիս է Ἀπετιανοί (հմմտ. Aspetiani լատիներեն թարգմանությունում): Դեստունիսը, Պրոկոպիոսի ռուսերեն թարգմանիչը, առաջարկում է Ἀπετιανός սրբագրել որպես Ἀπετιανός (II, p. 18, ծան. 9): Սրբագրումն անհաջող է: Նախ, հայերեն «Արեղեան»-ի հունարեն ճշգրիտ տառադարձությունը կլիներ Ἀβελ<ι>ανός: Դեստունիսը օգտվել է Վ. Լանգլուայի թարգմանություններից, իսկ այս վերջինը, ինչպես և այլ ֆրանսիացի հայագետները, հայերեն բառերի տառադարձությունը կատարելիս, մխիթարյանների ազդեցությամբ պահպանում էին արևմտահայերենի վերձանությունը: Բացի այդ, Արեղյանների տոհմը նվաստագույններից էր, և չէր խաղացել որևէ կարևոր դեր ոչ VI դարում, ոչ էլ դրանից առաջ. մինչդեռ Պրոկոպիոսի Ասպետյանները «մարդաշատ և նշանավոր տոհմ է»․ τὸ τῶν Ἀπετιανῶν καλοῦμενον γένος, μέγα τε δὲ καὶ πολυάνθρωπον (Proc., Pers., II, 3, p. 160):

և գրավեց քաղաքը, որի վրա և ոչ մի իրավունք չուներ: [Նա չէ՞ր] եթովպացիների իշխանությունների հետ դաշինք կնքողը, որոնց գոյության մասին հռոմայեցիները չէին էլ լսել: Նա արդեն տիրանում է հոմերիաների հողերին և Կարմիր ծովին, իսկ Փիմիկոնը կցել է հռոմայեցիների պետությանը: Մենք զանց ենք առնում խոսել լիբիացիների և իտալացիների գլխին եկած փորձանքների մասին: Իսկ դու, ո՛վ արքա, ի՞նչ ես մտածում: Գուցե դու քաշվում ես խախտել ստոր կերպով ոտնահարված խաղաղությունը, սպասում ես, որ մա վերջում քեզ էլ հոշոտի: Եթե դու ուզում ես իմանալ, թե ինչպես է վերաբերվում Հուստինիանոսն իրեն հարած մարդկանց, թարմ օրինակը մենք և դժբախտ լազերն ենք, իսկ եթե ուզում ես իմանալ, թե ինչպես է վերաբերվում անժանոթներին և իր նկատմամբ ոչ մի անարդարություն չկատարածներին, ապա հիշիր վանդալներին, գոթերին և մավրուսիոսներին: Մենք դեռ գլխավորի մասին չենք խոսել: Ո՛վ հզոր արքա, մա չէ՞, որ քո ստրուկ Ալամունդարոսոսին հաշտության պայմաններում ցանկացավ խաբեությանը իր կողմը քաշել և քո պետությունից անջատել: Իսկ հոմերին, որոնց մա բոլորովին ծանոթ չէր, ջանաց իր հետ քարեկամացնել՝ քո դեմ: Դրանցից խայտառակ բան երբևիցե տեղի չի ունեցել: Նա արդեն կռահում է, որ կկարողանա արևմտականներին վերջնականապես իրեն հպատակեցնել, դրա համար էլ արդեն պատրաստվում է շարժվել ձեր՝ արևելյանների դեմ, որովհետև արդեն իրեն մնում է պայքարել միայն ու միայն պարսկական պետության դեմ: Այսպիսով, նրա կողմից արդեն խախտվել է խաղաղությունը, մա վերջ է տվել հավիտենական հաշտությանը: Հաշտությունը խախտած են լինում ոչ թե նրանք, ովքեր նախահարձակ են լինում, այլ նրանք, ովքեր հաշտության ժամանակ ոտնձգություններ են կատարում հարևանների դեմ: Ոճիրը ոճիր է, թեկուզ ձեռնարկողին չի հաջողվել այն իրականացնել: Թե պատերազմը ինչով կվերջանա՝ բոլորին պարզ է: Ոչ թե պատերազմի առիթ տվողը, այլ այդ առիթը տվողի դեմ պայքարողը միշտ հաղթական է դուրս գալիս: Մենք պայքարելու ենք ոչ հավասար ուժերի դեմ: Հռոմայեցիների զինվորների մեծ մասը աշխարհի հեռաստաններում է գտնվում, իսկ նրանց երկու լավագույն զորավարներից մեկին՝ Միտտասին մենք սպանել ենք, իսկ Բելիսարիոսին էլ այլևս Հուստինիանոսը չի տեսնի: Նա արհամարհելով նրան, մնացել է Արևմուտքում՝ իր ձեռքում ունենալով իտալացիների իշխանությունը: Այնպես որ, երբ դու շարժվես քնամիների վրա, ոչ մի

դիմադրության չես հանդիպի. մենք, հասկանալի է, կլինենք քո կողմում և տեղանքին քաջատեղյակ՝ կառաջնորդենք քո զորքը»¹:

Ճառը մտածված և հույժ համոզիչ է: Իհարկե, այն, ինչպես և բոլոր այլ ճառերը, որ հանդիպում են Պրոկոպիոսի երկերում, պետք չէ դիտել իբրև իսկական վավերագիր: Դրանք կազմել է ինքը՝ պատմագիրը: Դա շարադրության հատուկ ձև է, որ ընդունված է դասական հեղինակների կողմից: <Բայց թեև> նման ճառերը հորինում են պատմիչները և ներդնում են գործող անձանց շրթներին, դրանց բովանդակությունը արժանահավատության տեսակետից ոչինչ չի կորցնում: Երբեմն հեղինակին ավելի հեշտ է լինում խոսել ուրիշի շրթներով, և մերկացնել փաստերը, և այնպիսի հայացքներ դրսևորել, որոնց մասին մա ինքը ինչ-ինչ պատճառներով չէր խոսի: Հայկական պատվիրակության ճառի փաստական կողմը ճշմարիտ է. նրանում զգացվող դառնությունը համապատասխանում է բուն իրադրությանը, որը պատկերված է ամենայն ճշգրտությամբ: Այն ամենն, ինչ խոսվում է հայերի, լազերի, ճաների, վանդալների և այլ ազգությունների մասին, ճիշտ է և հաստատվում է Պրոկոպիոսի պատմության համապատասխան տեղիներով:

Հետաքրքիր է համեմատել հայերի ճառը Վիտտիգիսի պատվիրակների ճառի հետ: Գլխավոր մտքով և ընդհանրապես ամբողջ ոգով այս ճառերը միանգամայն մույնամուս են և մատնում իրենց հորինող հեղինակին: Այս ճառերում Հուստինիանոսը ներկայացվում է իբրև բնավորությամբ խռովահույզ, անհագուրդ, ուրիշի իրավունքն ու սեփականությունը արհամարհող մի մարդ²: «Հուստինիանոսն, -ասում են գոթերը, -իր բնությամբ լինելով անհանգիստ և փափագելով այն, ինչ նրան չի պատկանում, չի կարող բավարարվել ընդունվածով, բայց դիմում է բոլոր միջոցներին, որպեսզի իրեն հնազանդեցնի բոլոր թագավորությունները և նվաճի ողջ տիեզերքը»: Նույն կերպ նրան բնութագրում են հայերը³. Ամբողջ աշխարհը նրան փոքր է թվում, մա չի կարողանում այնտեղ տեղավորվել: Նրա համար քիչ է ամբողջ մարդկության վրա տիրելը: Նա իր հայացքը հառել է երկինք և հետախուզում է օվկիանոսից վերև գտնվող խորշերը, ցանկանալով ձեռք բերել ինչ-որ ուրիշ երկիր էլ: Ճիշտ է, Պրոկոպիոսն իր կողմից ավելացնում է, որ «Հուստինիանոսին նախատում էին այն արարքների համար, որոնց համար ազնիվ հոգով օժտված թագավորը արժանի է գովասանքի՝ այն է, որ մա

¹ Proc., II, p. 21-25, Wien, 164-167 (23).

² Proc., Pers. II, 2.

³ Ibid., II, 3.

փորձում էր ընդարձակել և փառավորել իր տերությունը»¹: Կասկածից վեր է, սակայն, որ նա այս խոսքերում է կեղծում, և ոչ այն ճառերում, որ նա դնում է Հուստինիանոսի թշնամիների բերանին:

Հայկական պատվիրակությունը ներկայացավ Խոսրովին աշնանը, Հուստինիանոսի տիրապետության տասներեքերորդ տարին, այսինքն՝ 539 թ.: Պատերազմի խնդիրը Խոսրովն առաջարկեց բարձրագույն պաշտոնյաների խորհրդի քննարկման, որտեղ դրա ամօրիվ դրական որոշում կայացվեց:

Հուստինիանոս կայսրը, իմանալով պարսից արքայի ռազմական պատրաստությունների մասին, վաճառելով կանխելու միջոցներ ձեռնարկեց: Նա ուղարկեց իրեն արդարացնող բացատրություններ և հերքեց հարուցված մեղադրանքները: Հուստինիանոսը նախատում էր Խոսրովին այնու, որ նա հորինում է չեղած պատճառներ և սին պատրվակներ է որոնում խաղաղությունը խախտելու համար, և այն կարծիքն էր հայտնում, թե արքային անվայել է հերյուրանքներով ոչնչացնել իր տված երդումը: Հուստինիանոսի պատվիրակներն ամեն ջանք քափում էին Խոսրովին համոզելու խելամտորեն խուսափել կործանարար նախաձեռնությունից, որի ամբողջ պատասխանատվությունն ստանձնելու են պարսիկները²: Հուստինիանոսի հորդորներն ապարդյուն մնացին: Պարսիկները պատրաստվում էին պատերազմի և սպասում էին ձմռան ավարտին:

[Խոսրովի առաջին արշավանքը. 540 թ. գարուն - ամառվա վերջը]: Երբ եկավ գարունը, Խոսրովը մեծ զորքով հանդերձ ներխուժեց հռոմեական տարածքները և այսպիսով խախտեց ստահամբավ «Հավերժ խաղաղությունը»: Չորքն ընթանում էր Եփրատի արևմտյան ափով՝ նույն այն ճանապարհով, որով շարժվում էր Խոսրովի հայրը՝ Կավառը, 531 թվականին: Մտադիր լինելով ամայացնել Ասորիքն ու Կիլիկիան, Խոսրովը շահանգստացրեց հռոմայեցիներին, որոնք զբաղեցնում էին սահմանամերձ ամրոցը, Կիրկեսիոնը³: Պարսկական զորամասերն արագ առաջ ընթացան և Չենոբիա քաղաքի գրավման թուցիկ և անհաջող փորձից հետո հասան Սուրուն: Խփելով զորամարտը, Խոսրովը շարժեց զորքը գրոհի՝ դեպի

¹ [Proc., Hist. arcana].

² [II, 4, p. 170-171].

³ Κιρκήσιον, Եփրատի վրա, Արբորա (ժամանակակից Հաբուրա) գետաբերանի մտակայքում: Նրա ավերակների վրա այսօր գտնվում է Արու Սարայ փոքր քաղաքը, K. Ritter, Erdkunde, XI, 266:

քաղաքը: Կայազորի պետը, Արշակը, ազգությամբ հայ, համառորեն դիմակայեց: Շարելով ռազմիկներին պարիսպների վրա, նա քաջաբար կռվում էր. խիզախ հակահարվածներով մեծ կորուստներ պատճառում թշնամուն և վերջապես ինքը զոհվեց նետից: Երբ հաջորդ օրը պարսիկները վերսկսեցին զոհը, քաղաքի բնակիչները, զորապետի մահից ընկճված, որոշեցին անձնատուր լինել: Իրենց եպիսկոպոսի միջնորդությամբ նրանք բանակցություններ սկսեցին Խոսրովի հետ, խոստանալով այնքան հարկ վճարել, որքան թույլ են տալիս քաղաքի միջոցները, միայն թե նա խնայի բնակիչներին:

Քաղաքը գրավելուց հետո Խոսրովը, անտեսելով պայմանները, հույժ դաժանորեն վարվեց բնակչության հետ՝ քաղաքը հիմնահատակ կործանեց, և գերեվարեց 12.000 հոգի, որոնց փրկագինն իր առաջարկով հետագայում տվեց հարևան քաղաքի՝ Մերգիոպոլիսի, եպիսկոպոսը: Պարսկական զորքը մոտեցավ Հիերապոլիս քաղաքին, որի բնակիչները, ավերումը կանխելու համար, խոստացել են Խոսրովին վճարել 2000 լիտր արծաթ: Դրանը ստանալուց հետո պարսից արքան ուղևորվեց դեպի Բերոյա¹, քանի որ դրա պաշտպանությունը թույլ էր: Այստեղ Խոսրովը հիերապոլսեցիների վճարածի դիմաց կրկնակի դրամ պահանջեց: Բնակիչները նրան համձնեցին ընդամենը 2000 լիտր արծաթ, իսկ մնացած գումարի վճարումից հրաժարվեցին՝ այն չունենալու պատճառով: Անտիոքի եպիսկոպոսի միջնորդության շնորհիվ գործն ավարտվեց առանց արյունահեղության:

Անտիոքի՝ երկրամասի ամենահարուստ քաղաքի բնակիչներն իրենց եպիսկոպոսին ուղարկեցին Խոսրովի մոտ՝ խաղաղություն առաջարկելու: Խոսրովը խոստացավ թողնել հռոմեական տարածքը նրան 10 կենտիմար կամ 1000 լիտր ոսկի վճարելուց իսկույն և եթ: Այդ ժամանակ մայրաքաղաքից Անտիոք եկան պատվիրակները՝ Խոսրովի հետ բանակցություններ վարելու համար, և արգելեցին բնակիչներին դրանով փրկագնել կայսերական քաղաքները: Խոսրովը շարժվեց դեպի Անտիոք, և շուտով պարսկական վրանները տարածվեցին քաղաքի առջև: Մեկ անգամ ևս նա իր պատվիրակի միջոցով հայտնեց քաղաքի փրկագինը տալու իր պայմանները: Մերժում ստանալով՝ զորքերը շրջապատեցին քաղաքը, և չնայած բնակչության համառ դիմակայությանը, գրավեցին այն:

Պարսիկները չխնայեցին քաղաքը. սրի էին քաշում, առանց տարիքը նայելու, կողոպտում էին ունեցվածքը, շատերին գերեվարեցին, անխնա ավերեցին և այրեցին բազմաթիվ շինություններ, այդ թվում և հոյակապ

¹ Ալեքսոպոլ, Հալեք:

եկեղեցիները, որոնց հարուստ սպասքը և մարմարե քանդակներն առանձնացրին՝ Պարսկաստան տանելու համար:

Անտիոքի գրավումից հետո Հուստինիանոսի պատվիրակները կրկին ներկայացան Խոսրովին, նորից բողոքելով պարսիկների անարդար արարքների, երդմնազանցության և պայմանագրի խախտման դեմ: Պատվիրակների ճառերին Խոսրովը պատասխանեց, որ «դրամով վաստակած ժողովուրդների բարեկամությունը, ինչպես և ինքը փողը, որ ծախսվում է, փողի հետ միասին նվազում և անհետանում է»¹:

Խոսրովը նրանց իմաց տվեց, որ ամուր խաղաղության համար անհրաժեշտ է որոշակի գումար, որը հռոմայեցիները պետք է վճարեն նրան ամեն տարի՝ իհարկե, ոչ որպես տուրք, բայց իբրև հատուցում պարսիկներին՝ Կասպից դուռը հսկելու, ինչպես և Դարա քաղաքի համար: Երկար վիճաբանությունից հետո եկան նախնական համաձայնության, ըստ որի հռոմայեցիները պարտավորվում էին Խոսրովին միանվագ վճարել 50 կենտինար, և հավիտյանս՝ ևս 5՝ ամեն տարի, որպեսզի նա լքի հռոմեական տարածքները: Որպեսզի հռոմայեցիները ճիշտ կատարեն պայմանները, Խոսրովը պատանդներ պահանջեց, և սկսեց նահանջը: Նա չընտրեց այն ճանապարհը, որով արշավել էր: Այցելելով Սելևկիա՝ ծովափնյա քաղաքը, նա գնաց Ասորիքի Ապամեա քաղաքը, իբր այն տեսնելու, բայց իրականում՝ կողոպտելու համար: Առանց հենց նոր կնքված պայմանագրից նեղվելու, նա բնակիչներից պահանջեց 1000 լիտր արծաթ. տարավ նաև եկեղեցիներում պահվող արծաթե և ոսկե սպասքը և զանազան թանկարժեք իրեր: Ապամեայից նա ուղևորվեց Քաղկիա²: Բնակիչները, նրա սպառնալիքներից սարսափած, դժվարությամբ հավաքեցին 2 կենտինար ոսկի և դրամով կանխեցին այլապես անխուսափելի պատուհասը:

Վարվալիսսա (այժմ՝ Բելիս) ամրոցից ոչ հեռու, Օվաննա գյուղի հարևանությամբ Խոսրովը անցավ Եփրատը և ուղևորվեց Եդեսիա: Խոսրովը ցանկանում էր հուսահատեցնել քրիստոնյաներին իրենց հավատալիքում, որ քաղաքը անառիկ է, բայց շուտով ստիպված եղավ հրաժարվել այս փորձից: Բնակիչներից ստանալով 2 կենտինար ոսկի, նա հեռացավ: Եդեսիայի մերձակայքում Խոսրովը ստանում է Հուստինիանոսի նամակը, որում նա հաստատում էր խաղաղության պայմանները: Խոսրովն ազատ արձակեց պատանդներին, բայց շարունակում էր հանդիպած քաղաքներից փրկագին պահանջել: Կարբեի և Կոստանդինի բնակիչները նրան շատ

դրամ բերեցին: Հասնելով Դարա, նա պաշարեց այն: Կայագորը, Մարտինոսի գլխավորությամբ, քաջաբար դիմակայեց: Հուսահատվելով հաջողության հասնելու մեջ, Խոսրովը բանակցություններ սկսեց պաշարվածների հետ, 1000 լիտր ոսկի ստացավ և հեռացավ իր երկիրը: Ամառն արդեն վերջանում էր¹:

Մուրմնի գերիների համար 200 [լիտր] ոսկի,
Հիերապոլիս 2000 [լիտր] արծաթ,
Անտիոք՝ կողոպտված է (10. 000),
Ապամեա՝ կողոպտված է,
Քաղկիս՝ 200 ոսկի,
Եդեսիա՝ 200 ոսկի,
Դարա՝ 1000 ոսկի:

Ընդամենը՝
2000 արծաթ
1600 ոսկի
Չհաշված՝ 10.000 Անտիոք (24):

Այդ ժամանակ Իտալիայից Բյուզանդիա ժամանեց Բելիսարիոսը՝ գերեվարված գոթերի թագավոր Վիտտիգիսի հետ: Չմտելով Բյուզանդիայում (540 թ.), գարնանը նա ուղևորվեց Արևելք, պարսիկների դեմ, իր հետ վերցնելով Իտալիայից եկած զորավարներին: Նրանցից մեկին, Վալերիանոսին, հանձնարարվեց գլխավորել հայկական զորքը: Նույն ժամանակ Դարա է ուղարկվել Մարտինիանոսը, որին հանդիպեց Խոսրովն իր նահանջի ճանապարհին²:

.....(25):

Վերջին հանգամանքը ձեռնառու չէր լազերին: Նրանց մեջ օտար զորքի մշտական ներկայությունը շատ անհարմար դրություն էր ստեղծում: Երկրի [Լազիկա] աղքատ բնակչությունն իր միջոցներով ստիպված էր զորք պահել, որից և ոչ մի օգուտ չէր ստանում, և որը, պաշտամության պատրվակով, հայրենիքը կապանքների մեջ էր պահում³: Առավել զգալի էր զորքը

¹ Proc., Pers., II, 10, p. 199.

² [Արաբերեն] Ջենըշրին:

¹ Proc., Pers., II, 13 (540 p.).

² Proc., II, 14.

³ (Proc.).

զխավորող հրամանատարների քմահաճ կառավարումը: Քիչ հոգալով բնակչության բարօրության մասին, սրանք տնօրինում էին նրա ճակատագիրն ըստ իրենց սեփական շահի: Հրամանատարները ճնշում էին բնակչությանը, հալածելով ազատ և անկախ գործունեության ցանկացած դրսևորում: Այս պարագային թագավորական իշխանության հեղինակությունը նսեմանում էր և թագավորի իրավունքները հետզհետե անցնում էին ամենազոր հրամանատարների ձեռքը: Թագավորը, ասում է Պրոկոպիոսը¹, կիսելով սպասավորի ճակատագիրը, սարսափում էր իրեն հրամայող զորավարից: Հրամանատարներից առաջինն իսկ՝ Պետրոսը, իր շահախնդրությամբ և բնակչության նկատմամբ անպարկեշտ վարվեցողությամբ ընդհանուր ամախորժություն է առաջացրել և իր մասին վատ հիշատակ է թողել երկրում: Հաջորդ հրամանատարներից աչքի էր ընկնում հատկապես Հովհաննեսը, Յիբոս մականվամբ², որն իր բացասական հատկություններով գերազանցեց իր նախորդներին:

Ցածր ծագում ունեցող՝ նա զորավարի պաշտոնի է հասել ծառայողական ասպարեզում՝ իր ճարպկության և նպատակին հասնելու համար միջոցների մեջ խտրություն չդնելու ունակության շնորհիվ: Նշանակվելով Լազիկայի զորավար, Հովհաննեսը վատ էր վարվում տեղացի բնակիչների հետ և դրանով ուժեղացնում երկրում արդեն եղած՝ բյուզանդական իշխանությունների համար անբարենպաստ տրամադրությունները: Մեփական շահի և հարստության մասին նկատառումները նրա համար առաջնային էին, և այս նկատառումներից բխող որոշ գործողություններ արմատախիլ էին անում բնակիչների բարեկեցությունը: Լազերը լայն առևտուր էին վարում բյուզանդական ծովափի հետ և, փոխանակելով իրենց երկրի հումքը կենսական ապրանքներով, իրենց համար սնունդ էին ապահովում: Հովհաննեսը մտքին դրեց մտցնել մեծաշնորհ և իր ձեռքը վերցնել ամբողջ առևտուրը: Հուստինիանոսից թախանձելով, նա ստացավ թույլտվություն և կառուցեց Պետրա քաղաքը, որը դարձրեց ներքին և արտաքին առևտրի կենտրոն: Ներմուծման և արտահանման իրավունքը վերցվեց բնակիչներից: Փակվելով Պետրայում իբրև ամբոցում, նա անձամբ տնօրինում էր բոլոր առևտրական գործարքները: Ներմուծվող ապրանքի ընդունումը և արտահանվող ապրանքների թողարկումը կատարում էր նույն ինքը, ընդ որում գները նույնպես նա էր սահմանում՝ իր սեփական հայեցողությամբ³:

¹ (Proc.)

² 'Ιωάννης, ὁ Τζέβος ἐπικαλούμενος, Proc., II, p. 289 և 217.

³ Proc., II, 15, p. 218.

Հովհաննեսի հալածանքները և կայսեր դերի հետզհետե նվազման հետ կապված մտավախությունը՝ որ այն ի վերջո կվերացվի, ստիպեց լազերին խնդրել պարսից արքայի հովանավորությունը: Լազերը զաղտնի պատվիրակություն են ուղարկել Պարսկաստան և հայտնել Խոսրովին իրենց մտադրությունը: Լազերի պատվիրակության շրթներին պատմիչը հետևյալ ճառն է դնում՝ ճառ, որ արտասանվել է Խոսրովի առջև¹ (26):

«Ո՛վ ամենամեծ արքա, լազերին դու համարիր մարդիկ, որոնք մի ժամանակ որևէ պատճառով անջատվելով իրենց բարեկամներից, անցել են անծանոթ մարդկանց կողմը, բայց բախտի բերմամբ առավել մեծ հաճույքով վերադառնում են նրանց մոտ: Կովսերն ի սկզբանե անտի դաշնակից են եղել պարսիկներին, օգուտ են տվել նրանց և բազում փորձությունների [հանդիպել]: Այդ մասին մենք ունենք գրավոր շատ հուշարձաններ, որոնք ներկայումս պահվում են նաև քո արքունիքում: Սակայն հետագայում գուցե մեր նախահայրերի մեղքով, գուցե և ձեր կողմից անուշադրության մատնվելու հետևանքով (որովհետև այդ մասին ոչինչ վստահելի բան ասել չենք կարող), մենք դարձանք հռոմայեցիների դաշնակիցները: Այժմ մենք և Լազիկայի թագավորը հանձնվում ենք պարսիկներին և տալիս ենք մեր երկիրը, իսկ դուք արեք, ինչ որ կամենաք: Խնդրում ենք ձեզ, մեր հարցին մոտեցեք հետևյալ տեսանկյունից. եթե մենք հռոմայեցիներից որևէ վատություն չտեսած ապերախտաբար լքեցինք նրանց և ձեզ մոտ եկանք, իսկույն մերժեք մեր խնդիրը, ենթադրելով, որ կովսերը ձեզ էլ հավատարիմ չեն լինի (նախկին բարեկամության այդպիսի խախտումը ապացույց է այն բանի, թե ինչպես կպահպանեն այն ուրիշների հետ): Բայց եթե մենք անուճով էինք միայն հռոմայեցիների բարեկամները, իսկ իրականում նրանց հավատարիմ ստրուկներ էինք և ճնշվում էինք մեզ բռնատիրոջների կողմից, ապա այդ դեպքում դուք ընդունեցեք մեզ՝ ձեր նախկին դաշնակիցներին, տիրեցեք որպես ձեր ծառաների, որոնք ձեր նախկին բարեկամներն էին, ատեցեք մեր հարևան դաժան բռնատիրությունը, արդարությունը վերականգնելով, արդարություն, որի պաշտպանությունը պարսիկների բնածին գիծն է: Արդարությունը ոչ ոքի հանդեպ անարդարություն չգործելու մեջ չէ միայն, այլև ուրիշների կողմից անարդարության մատնվողներին պաշտպանելու մեջ: Արժե հիշատակել այն ամենի մասին, ինչ որ մենք կրեցինք անիծյալ հռոմայեցիների ձեռքից: Նրանք մեր թագավորի իշխանությունը ձևական դարձրին, փաստական իշխանությունն առնելով իրենց ձեռքը: Թագավորը վերածվել է ծառայի,

¹ Proc., II, 15, p. 219.

վախենում է իրեն հրամայող գորահրամանատարից: Մեր երկրում նրանք հաստատեցին մեծ թվով գորք, ոչ թե թշնամիներից այն պաշտպանելու համար (քանզի մեր հարևաններից և ոչ ոք, բացի հռոմայեցիներից, մեզ մեղություն չի պատճառել), այլ որպեսզի մեզ առնելով կապանքների մեջ, տիրանան մեր ունեցվածքին: Մտադիր լինելով հնարավորին չափ շուտ գրկել մեզ մեր ունեցվածքից, լսիր, ո՛վ արքա, թե ինչպիսի խորամանկության դիմեցին նրանք: Ինչ որ իրենց պետք չէ՝ պարտադրում են լազերին զենե, իսկ ինչ որ Լազիկան ունի նրանց համար պիտանի, ձևականորեն զնում են, իսկ ինչ վերաբերում է զներին, այդ որոշում են տիրողները և ոչ մենք: Ահա այսպիսի ճանապարհով խլում են մեզանից, բացի սննդամթերքից, նաև ամբողջ ոսկին, առևտրի բարեհնչուն անվան տակ, բայց իրականում մեր հանդեպ դաժան բռնությանը: Մեզ վրա տիրում է մի փերեզակ գորահրամանատար, որը հենվելով իր իշխանության վրա, մեր թշնամությունն իր համար ինչ-որ գրադմունք է դարձրել: Ահա այս է ապստամբության ճշմարիտ պատճառը: Մենք այժմ կբացատրենք, թե ինչքան շահավետ է ձեզ համար լազերի խնդիրը ընդունելը: Պարսից իշխանությանը դուք կմիացնեք հնագույն թագավորությունը, որով դուք առավել ևս կհզորացնեք ձեր իշխանությունը, բացի դրանից դուք մեր երկրի վրայով կկարողանաք կապվել հռոմայեցիների ծովի հետ, որտեղ նավեր շինելով, ով արքա, առանց դժվարության կնավարկեք մինչև Բյուզանդիոնի պալատը, որովհետև մեջտեղում ոչ մի արգելք չկա: Դրա վրա կարելի է ավելացնել հետևյալը. արդեն ձեզանից կախված կլինի, որ սահմանակից բարբարոսները ամեն տարի թալանեն հռոմայեցիների երկիրը, որովհետև դուք շատ լավ գիտեք, որ լազերի երկիրը Կովկասյան լեռների առաջ մի պատվար է: Արդ, արդարությունն այդ է հրամայում, օգուտն էլ առկա է, հետևաբար մեր առաջարկները մերժելը սխալ կլինեք»: Դեսպաններն այսքան ասացին:

[Խոսքովի երկրորդ արշավանքը՝ 541 թվական]: Լազ պատվիրակների ճաները հաճելի էին Խոսքովին. դրանք համապատասխանում էին նրա՝ երբեմն պարսիկներին պատկանող Լազիկան հետ նվաճելու ծրագրերին: Պարսից արքան ընդունեց լազերի առաջարկը և սկսեց պատրաստվել արշավանքի: Բյուզանդական իշխանությունների ուշադրությունը շեղելու համար, Խոսքովը լուր տարածեց, իբր թե ուղևորվում է Իբերիա՝ տեղական գործերով, ինչպես և հոների՝ պարսկական տիրույթների վրա կատարած ասպատակումը հետ մղելու համար¹: Խոսքովը մեծ զորքով հանդերձ

անցավ Իբերիան և մուտք գործեց լազերի երկիրը: Ուղեկցողները լազ պատվիրակներ էին, որոնց օգնությամբ պարսիկները կարողացան հաղթահարել լեռնային անտառախիտ տեղանքով պայմանավորված բուրդ դժվարությունները: Նրանք ծառեր էին կտրում և դրանցով պատում էին հեղեղատներն ու ապառաժները. այսպես հարթելով ճանապարհը, նրանք յուրացնում էին գորքի առաջխաղացումը:

Առանց դիմակայության հանդիպելու Խոսքովն անցավ երկրի խորքը: Լազերի թագավոր Գուվազը (Օպսիտեսի գարմիկը) դուրս եկավ պարսկական զորքին ընդառաջ, հայտարարեց իրեն Խոսքովին հնազանդ և հանձնեց իր մայրաքաղաքը և ողջ Լազիկան նրա հովանավորության ներքո¹:

Բյուզանդական զորքերը Հովհաննես Ցիբոսի հրամանատարությամբ տեղակայված էին Պետրայում: Խոսքովը նրանց դեմ մի ստորաբաժանում ուղարկեց, հրամայելով գրոհով վերցնել Պետրան: Ջորաջոկատի պետ է նշանակվել Անիավեղեսը ('Ανιαβέδης): Պետրա քաղաքը, երբեմնի աննշան մի ավան, Հուստինիանոսի օրոք Հովհաննեսի ջանքերով հույժ ամրացվեց և վերածվեց անառիկ ամրոցի: Այն գտնվում էր ծովափին. ցամաքի կողմից վեր էին խոյանում ուղղաբերձ ժայռերը², կապված միմյանց ամուր պարիսպներով: Անիավեղեսը մտտեցավ քաղաքին և պատրաստվում էր սանդուղքը պարսպին հենել: Բայց կայազորը, արտագրոհելով, անսպասելի հարվածով մեծ կորուստներ պատճառեց պարսկական զորաջոկատին և ստիպեց նրան մահանջել քաղաքից: Խոսքովը, գայրանալով, հրամայեց խաչել Անիավեղեսին այն բանի համար, որ նա, լինելով ռազմիկ, պարտություն կրեց առևտրական Հովհաննեսից: Այնուհետև պարսից արքան ինքն իր ամբողջ զորքով հանդերձ պաշարեց քաղաքը: Պարսկական զորքի բազմաթիվ խիզախ գրոհները ապարդյուն էին: Ուստի զորքը սկսեց կանոնավոր պաշարումը: Կայազորն արհաբար դիմակայում էր, բայց նրա համառությունը կտրվեց Հովհաննեսի մահով: Հովհաննեսը, ծոծրակին վերք ստանալուց հետո մահացավ, և պաշարվածները հուսահատվեցին: Երբ պարսիկները սկսեցին ականներ փորել քաղաքի աշտարակների տակ, բնակիչները խելամիտ համարեցին բանակցություններ սկսել Խոսքովի հետ, դրանով իսկ քաղաքը անխուսափելի կործանումից փրկելու համար: Պարսից արքան նրանց կյանքի և ունեցվածքի անվտանգություն խոստացավ: Քաղաքի անկումից հետո նա խլեց

¹ Proc., II, 17.

² «Նրանցից և ստացել է քաղաքն իր անունը՝ Πέτρα» Proc., II, 17, p. 227:

Հովհաննեսի անհամար հարստությունը, բայց ձեռք չտվեց բնակչության ունեցվածքին: Քաղաքի ռազմական ուժերը միացան Խոսրովի զորքին¹:

Այն ժամանակ, երբ Խոսրովը ռազմական գործողություններ էր վարում Լազիկայում, բյուզանդական զորքը գործում էր Հայաստանում և Միջագետքում և որոշ հաջողության էր հասել:

Սկսելով արշավանքը, Խոսրովը կոչ արեց հոներին, որպեսզի նրանք զբաղեցնեն Բյուզանդական Հայաստանում տեղակայված կայսերական զորքերին և թույլ չտան, որ հայանի դառնա Խոսրովի մախաձեռնության և Լազիկայի իրադարձությունների մասին: Եվ հոներն, իրոք, չհապաղեցին ներխուժել Հայաստան: Այստեղ, սակայն, նրանք ուժեղ հակահարված ստացան Վալերիանոսից՝ զորքերի հրամանատարից (ստրատեգոսից), որը հարձակվեց նրանց վրա, գլխովին ջախջախեց և գրեթե ամբողջությամբ ոչնչացրեց նրանց զորաջոկատը²:

Դրա հետ միաժամանակ հարավում՝ Միջագետքում գրոհում էր Բելիսարիոսը: 540 թ. Վիտալիզիսի հետ միասին ժամանելով Իտալիայից, նա ձմեռեց մայրաքաղաքում և 541 թ. գարնանը ուղևորվեց Արևելք: Այստեղ նա զորքերը չափազանց անմխիթար կացության մեջ գտավ: Կարգ ու կանոնն իսպառ բացակայում էին, զինվորների մեծ մասը չուներ զենք ու զրահ, Խոսրովի հաղթարշավն այնպիսի սարսափ հարուցեց, որ ժամանակակցի ասելով, «նրանք պարսիկների լոկ անուրից էին դողում»³:

Չորսվարի հզոր ձայնն ի մի բերեց բանակը, նրան ոգու կայտառությունները չեղեց և վերածեց ցիրուցան եղած ուժերը մեկ միասնական զորքի, որը ի վիճակի էր բարձր պահել բյուզանդական զենքի պատիվը: Կենտրոնացնելով զորքերը, Բելիսարիոսը Դարայում ռազմական խորհրդի է հրավիրում բոլոր զորահրամանատարներին՝ առաջիկա գործողությունները քննարկելու և ծրագրելու համար:

Բելիսարիոսը տեղեկություն չուներ, թե ինչ է կատարվում Լազիկայում: Լրտեսները զեկուցեցին, որ Խոսրովը մի այլ երկրամասում (իր պետության ծայրամասում) զբաղված է հոների դեմ պատերազմով: Նրանց զեկույցները, ինչպես տեսանք, հիմնված էին ասեկոսների վրա, որ միտումնավոր տարածում էին իրենք՝ պարսիկները: Այս զեկույցների ազդեցության ներքո խորհուրդը որոշեց գրոհ սկսել թշնամու տարածքի վրա: Չորքերը շարժվեցին Դարայից և վստահորեն ուղղվեցին Մծքին: Այստեղ էին

¹ Proc., II, 17.

² Proc., Anecd., II, 22-24.

³ Proc., II, 16. p. 222.

գտնվում պարսկական պատկանելի ուժեր՝ Նավեդեսի (Ναβέδης)՝ պետական կարևոր պաշտոնյայի գլխավորությամբ¹, որ պատրաստ էին հետ մղելու բյուզանդական զորքերի հարձակումը: Այս պատճառով Բելիսարիոսը վստահավոր համարեց մերձենալ քաղաքին և կանգ առավ դրանից ոչ հեռու: Բելիսարիոսի բանակի առաջապահ ջոկատները մի փոքր ավելի մոտեցան Մծքինին: Նավեդեսը հնոտրեն օգտվեց նրանց անզգուշությունից և այնժամ, երբ նրանք զինաթափ վայելում էին անհոգ հանգիստը, դուրս եկավ քաղաքից և շեշտակի հարձակվեց նրանց վրա: Նրանք այնքան անզգուշ գտնվեցին, որ կովի բռնվեցին և անհաջողության մատնվեցին, բայց Բելիսարիոսը ժամանակին կանխեց պարսիկների գրոհը և ջոկատը փրկեց գլխովին ոչնչացումից: Նավեդեսը, հետապնդվելով թշնամու զորքերից, նահանջեց և նորից փակվեց քաղաքում:

Բելիսարիոսը չպաշարեց քաղաքը, քանի որ հույս չուներ այն գրավելու: Նա որոշեց առաջ շարժվել և վնասել հակառակորդին իր իսկ տարածքում: Մծքինից մեկ օրվա ճանապարհի հեռավորության վրա գտնվում էր Միսավրանոնը², մարդաշատ առաջապահ ամրոցը: Ընտիր հեծելազորի մի

¹ Ναβέδην στρατηγόν...δς δὴ μετὰ γε τὸν Χοσρόην αὐτὸν δόξεν τε καὶ τῷ ἄλλῳ ἀξιώματι πρῶτος ἐν Πέρσαις εἶναι δοκεῖ [Նավեդես գորավարը ... որը Խոսրովից հետո առաջինն էր համարվում պարսիկների մեջ փառքով և այլ պատվով]: [Առանձին բերքիկի վրա.] Պ. Լազարոն իրավամբ համադրում է Նաբեժոց քառը հայերեն «նահապետ»-ի հետ, որն, իր կարծիքով, նշանակում է առհասարակ առաջնորդ. Gesam. Abh. 191: Justi-ն կապում է դրա հետ նաև Anahbedh - Ա. Մորդմանի թագավորի անունը Ալ-Բիրունիի մոտ (101, 23 (109), Namensbuch):

Համաձայն Պրոկոպիոսի, Նավեդեսը իր փառքով և պաշտոնով Խոսրովից հետո առաջինն է Պարսկաստանում: Պ. Լազարոն պնդում է, որ Պրոկոպիոսը Նավեդես քառը դիտում է ոչ իբրև անձնանուն: Պ. Լազարոն իրավացի չէ. նա հիմնվում է Պրոկոպիոսի՝ պաշտոնի մեկնաբանման վրա: Մինչևեռ դժվար թե Նավեդեսը Խոսրովից հետո առաջին պաշտոն զբաղեցներ: Բելիսարիոսը դիտավորությամբ չափազանցեց նրա արժանիքները, որպեսզի իր զորքը հետ պահի հետագա գրոհից, որը կարող էր տխուր հետևանքներ ունենալ. տե՛ս Proc., II, p. 229; Достунис, II, p. 126 (27):

² [Մատիտով.] Միսավրանոնի պաշարումը՝ 541 թ.: [Առանձին բերքիկի վրա.] Σισαυράων. Σισαύριον Proc., Σισαρθάνων Theoph. Sim. B. 60, 17. Գտնվում էր Մծքինից հյուսիս-արևելք, լեռնոտ, բայց արգավանդ մի երկրում, որ կոչվում էր Հոմեական դաշտ. ենթադրվում է, որ դա այժմյան Ռումեյլն է, Մծքինից դեպի Մոսուլ տանող ճանապարհին. Forbiger, Σισαύριον քառի ներքո, Pauly, R. Enc. VI, 1219. Ritter, Erdk. XI, p. 401, 402, 418, 430. cf. Достунис, II, p. 130, прим. 3.

փոքր ջոկատ էր պաշտպանում քաղաքը՝ ազնվատոհմ պարսիկ Բլես-խամեսի գլխավորությամբ¹։ Բյուզանդացիները պաշարեցին ամրոցը։

Առաջին գրոհը պարսիկները ետ մղեցին՝ մեծ վնաս հասցնելով հարձակվողներին։ Բելիսարիոսը համոզվեց, որ քաղաքը դժվար է գրավել, բայց թիկունքում այսպիսի մի ամրություն թողնել ու առաջ շարժվելն էլ չափազանց վտանգավոր էր։ Նա շարունակեց ամրոցի պաշարումը, իսկ սարակիճոսների առաջնորդ Արեթասին հրամայեց իր ջոկատով հանդերձ ասպատակել Ասորիքը, ամայացնել թշնամու երկիրը և, հետախուզելով նրա ուժերը, վերադառնալ գլխավոր ռազմաճամբար։ Միսավրանոնի բնակիչները շուտով սկսեցին ընկճվել պաշարումից, քանի որ զգում էին պարենի պակասը։ Իմանալով այդ մասին գերի պարսիկներից, Բելիսարիոսը նրանց առաջարկեց հանձնվել՝ [հետևյալ] պայմաններով ... (28)։ Առաջարկն ընդունվեց։ Բելիսարիոսը տիրեց ամրոցին և հիմնահատակ քանդեց դրա պարիսպները։ Քրիստոնյա բնակչությունն ազատ արձակվեց, իսկ Բլեսխամեսը պարսիկների հետ միասին ուղարկվեց Բյուզանդիա։

Այն ժամանակ Արեթասը տեղափոխվեց Տիգրիսի այն կողմը և սրընթաց ասպատակումով անցավ արգավանդ և անպաշտպան երկրով մեկ, կողոպտելով այն առանց որևէ դիմակայության հանդիպելու։ Մակայն նա չենթարկվեց Բելիսարիոսի հրամանին և չվերադարձավ նրա մոտ, վախեցնելով, որ վերջինս իրենից խլելու է հարուստ ռազմավարը։

Արեթասի հետ միասին չի վերադարձել նաև բյուզանդական մի այլ փոքր ջոկատ, որի հրամանատարը, խարված լինելով Արեթասից, այլ ճանապարհով նահանջեց դեպի Բյուզանդիայի սահմանը։

Բելիսարիոսը, իրավիճակին անտեղյակ, անհանգստացած էր ջոկատի և Արեթասի ճակատագրով։ Տագնապով սպասելով նրանց վերադարձին, զորքը որոշ ժամանակ հապաղեց Միսավրանոնի մոտակայքում։ Անտվոր լինելով Միջագետքի տապին, ռազմիկները վարակվում էին ծանր տենդով. զորքի մեկ երրորդ մասը, այս հիվանդությամբ ախտահարված, կիսամեռ վիճակում պառկած էր։ Ի լրումն չարյաց, լիբանական գնդերը խնդրեցին, որ նրանց տուն արձակեն, որպեսզի կարողանան իրենց հողերը պաշտպանել սարակիճոսների առաջնորդ Ալամունդարոսի սպասվող ասպատակումներից և կողոպուտից։ Այս պարագային թշնամու տարածքում գտնվելը հույժ վտանգավոր էր դառնում։ Բելիսարիոսը հրավիրեց ռազմական խորհուրդ, որը որոշում կայացրեց Դարա վերադառնալու մասին։ Որոշումը կա-

տարվեց, որից հետո Բելիսարիոսը, կայսեր պահանջով, վերադարձավ մայրաքաղաք։

Արշավանքի ապարդյունությունը Բյուզանդիայում աշխույժ բամբասանքներ առաջացրեց։ Իրադրությունից անտեղյակ մարդիկ դրա համար մեղադրում էին հռչակավոր զորավարին։ Հետագայում Պրոկոպիոսն ինքը, փոխելով իր վերաբերմունքը Բելիսարիոսի նկատմամբ, փոխեց և այս արշավանքի նկատմամբ իր տեսակետը¹։ Նա կարծում էր, որ Բելիսարիոսը պետք է անցներ Տիգրիսի մյուս ափը. այդ դեպքում նա առանց որևէ դիմադրության հանդիպելու ավարառության կենթարկեր ամբողջ Պարսկաստանն ընդհուպ մինչև Տիգրոն։ Պրոկոպիոսը հանդգնում է պնդել, որ Բելիսարիոսին՝ Պարսկաստանը հետագա խորանալուց հետ է պահել իր չափազանց կապվածությունը կնոջ հետ, որին նա չէր ուզում թողնել միայնակ։ Պատմագիրը, բորբոքվելով, հավանաբար մոռացել է իր իսկ հայտնած փաստերի մասին, որ արդարացնում են Բելիսարիոսի զործողությունները։ Ցավալի է, սակայն, որ պատմագիրն իրեն այնքան է վարկաբեկում, որ թույլ է տալիս զրպարտություն բարդել մի մարդու վրա, որն իր ժամանակի ռազմավարության հպարտությունն էր։

Խոսքովը, զբաղված լինելով Լազիկայում, ոչ մի պատկերացում չունեց իր բացակայությամբ հարավում կատարվող իրադարձությունների մասին։ Պետրան արդեն գրավված էր, երբ նա իմացել է Միջագետքում՝ բյուզանդական զորքի ռազմական գործառնությունների մասին։ Խոսքովն իսկույն թողնում է Լազիկան և զորքը տանում է Պարսկաստան։ Պրոկոպիոսը հետագայում² անհիմն նախատում էր Բելիսարիոսին, որ նա չի կտրել պարսկական զորքի նահանջի ճանապարհը։

[Խոսքովի երրորդ արշավանքը 542 թվական]։ Բարեհաջող վերադառնալով Լազիկայից, Խոսքովը հաջորդ տարվա գարնանն իսկ կրկին արշավանք է սկսում, թվում է, թե Արեթասի պատճառած ավերումների համար Բյուզանդիայից վրեժ լուծելու նպատակով։ Ըստ իր արդյունքի, սակայն, այս արշավը լուրջ ցուցադրական և հետախուզական նշանակություն ունեցավ։ Պարսկական զորքը շարժվում էր ճիշտ այն ճանապարհով, որն ընտրվել էր առաջին արշավանքի համար։ Խոսքովն արագորեն բարձրացավ հյուսիս՝ Եփրատի արևմտյան ափով։ Մերզիպոլիսի մոտակայքում նրա մոտ եկավ Կանդիդոս եպիսկոպոսը, ներողություն խնդրելով այն քանի համար, որ նա չի հասցրել կատարել իր խոստումը՝

¹ [Մատիսով]։ Justi = cf. Balosagan (?) 2) Βλησθένος, p. 232, Βλησθένος, Proc., Bella Gothica II, p. 291; Βλησθένος, Anecd., 2.

¹ Proc., Anecd. II, 22.

² Ibid.

Սուրոնի բնակիչների փրկագինը տալու վերաբերյալ: Այն կատարելու համար, նա առաջարկեց Խոսրովին վերցնել Սերգիոսի տաճարի գանձերը: Դրանից դժգոհ, Խոսրովը, քաղաքի ունեցվածքը ստուգելու պատրվակով մարդիկ է ուղարկում քաղաք՝ այն գրավելու գաղտնի հանձնարարությամբ: Բնակիչները, զգուշացված լինելով պարսիկների մտադրության մասին, նրանց քաղաք չթողեցին: Քաղաքը բռնի ուժով գրավելու մի քանի անհաջող փորձերից հետո Խոսրովը շարունակեց իր ուղին և անցավ Եփրատեսիան:

Երկրները, որոնց տարածքով արշավում էր զորքը, արդեն հյուծված էին առաջին արշավանքի շորթումներով, ուստի Խոսրովը նրանց ոչ մի վնաս չպատճառեց: Նա ավելի շատ ձգտում էր դեպի հարուստ Պաղեստինը. նրան հրապուրում էին Երուսաղեմի առասպելական գանձերի մասին գրույցները: Երկրամասում գտնվող բյուզանդական զորավարները սարսափից կողպվեցին իրենց ամրոցներում և Խոսրովին հակազոռհելու մասին չէին էլ մտածում: Բելիսարիոսին, որն ինչպես տեսանք, դրանից առաջ մայրաքաղաք կանչվեց, Հուստինիանոսը կրկին ուղարկեց պարսիկների դեմ: Կայսերական ճեպընթաց ձեռնարկով, որոնք կոչվում էին «վերեղներ» (βερέδαι)¹ նա շտապով հասավ Եփրատեսիա, հավաքեց ռազմական ուժերը և ճամբարեց Եվրոպոսում: Բելիսարիոսի հայտնվելուն պես Խոսրովը դադարեցրեց իր առաջխաղացումը: Նա բյուզանդացի զորավարի մոտ ուղարկեց Վարդան անունով արքունական քարտուղարներից մեկին², որը հայտնի էր իբրև նրբամիտ մարդ, և նրա միջոցով դժգոհություն հայտնեց, թե Հուստինիանոսը տակավին հապաղում է վավերացնել կնքված հաշտության պայմանները: Պրոկոպիոսի հավաստմամբ, սակայն, իրականում Վարդանի գաղտնի առաքելությունը կայանում էր զորավարի անձի և ուժերի հետախուզման մեջ:

Բելիսարիոսը շատ սրամիտ և խորամանկ կերպով վարվեց Վարդանի նկատմամբ: Նա առանձնացրեց 6000 ընտիր հաղթանդամ ռազմիկ և որս անելու պատրվակով նրանց հետ հեռացավ գլխավոր զորաճամբարից: Միաժամանակ նրա կարգադրությամբ հայ Ակակիոսը, Ադուլիոսի որդին, որը ժամանակին ծառայում էր արքունիքում սիլենտիարիոսի պաշտոնում³, իսկ այդ պահին հայկական գնդի զորավարն էր, 1000 հեծյալով հանդերձ

¹ St'u Lagarde, Gesamte Abh., p. 76 n. 1.

² Βαρδάνην δνομα - Վարդան, II, 20, p. 243: Անունից դասելով, քարտուղարը ծագումով հայ էր:

³ [Proc., p. 243].

անցել է Եփրատի մյուս ափը և այնտեղ սպառնական դիրք գրավել, իբր Խոսրովի նահանջի դեպքում ճանապարհը փակելու մտադրությամբ: Պարսկական պատվիրակին Բելիսարիոսն ընդունեց ամայի տեղում խփած հասարակ վրանում, շրջապատված պահազորով, որը կազմված էր հաղթանդամ ռազմիկներից՝ քրակացիներից, իլլիրիացիներից, գոթերից, էրուլներից, վանդալներից և մավրուսիաններից, և խոսեց նրա հետ արժանապատիվ լեզվով՝ առանց որևէ պատճառի հաշտությունը խախտած Խոսրովի հայտարարությունների անհիմն լինելու մասին: Այս հանգամանքները ցանկալի ազդեցություն գործեցին պարսից արքայի պատվիրակի վրա: Վերադառնալով Խոսրովի մոտ, նա զեկուցեց, որ խոսել է մի այնպիսի զորավարի հետ, որը բոլոր մարդկանցից արի և իմաստուն է, որ ինքը զինվորներ է տեսել, որոնց նման երբեք չի տեսել, որ տեսարանն ու կարգը հիացրեց իրեն և [պարսից արքան] Բելիսարիոսին ճակատամարտում հավասարվել չի կարող, այն պատճառով, որ ջախջախելով Բելիսարիոսին, արքան հաղթելու է միմիայն կայսեր ստրուկին, իսկ պարսկական ժողովուրդը, որ հռոմայեցիները, պարսկելու դեպքում, հեշտությամբ ապաստան կգտնեն իրենց երկրում և իրենց ամրոցներում, բայց եթե դժբախտություն պատահի պարսիկներին, չի լինելու և մեկը, որ [պարսության] լուրը հասցնի պարսկական աշխարհ»¹:

Խոսրովը ենթարկվեց Վարդանի հորդորներին և իսկույն անցավ Եփրատի մյուս ափը: Նա պատվիրակներ ուղարկեց Բելիսարիոսի մոտ հայտարարելու, որ ինքը հետ է քաշում զորքերը այն պայմանով, որ Բելիսարիոսն արագացնի խաղաղության հաստատումը: Ի պատասխան դրա Խոսրովը Բելիսարիոսից պատանդներ ստացավ և սկսեց նահանջել: Խոսրովի արշավանքի ավարտն ընդամուր առմամբ շահեկան եղավ Բյուզանդիայի համար:

Բելիսարիոսի ուժերն անհամեմատ փոքր էին, քան Խոսրովի հոյակապ բանակը: Չնայած դրան, պարսից արքան խուսափեց ճակատամարտից և հեռացավ առանց ընդհարումների: Այս հանգամանքը պատմագիրները Բելիսարիոսի ճարպիկ ռազմավարությանն են վերագրում: Պրոկոպիոսն ասում է, որ Խոսրովը նահանջեց իբր խաղաղասիրությունից դողված, բայց իրականում նա փախուստի է դիմել, վախենալով Բելիսարիոսի բախտավոր կամ արի լինելուց, կամ էլ խաբված նրա խաղախությամբ: Առանց մեծ զորավարի անձնական հատկությունների նշանակությունը նսեմացնելու և

¹ Proc., II, 21, p. 245.

նրա հանճարին պատշաճը հատուցելով հանդերձ կարելի է, այնուամենայնիվ, ենթադրել, որ հզոր արքայի անակնկալ մահանջում, ըստ երևույթին, ոչ պակաս դեր են խաղացել ժամատախտի համաճարակի մասին լուրերը՝ ժամատախտ, որը, աղբյուրների համուր համաձայնությամբ, բռնկվել է նույն 542 թվականին¹: Այն սկսվեց Եգիպտոսում և հետզհետե տարածվեց և այլ երկրներ: Պաղեստինը որպես Եգիպտոսին հարևան երկիր, առաջինը զոռ դարձավ մեծ համաճարակի: Անկասկած, այս հանգամանքն է, որ հետ պահեց Խոսրովին Պաղեստինն ասպատակելու գայթակղությունից²:

¹ Ըստ Եվազրիսի (Hist. Eccl. IV, 29) այն բռնկվել է Անտիոքի՝ պարսիկների կողմից նվաճվելուց (540 թ.) երկու տարի անց: Պրոկոպիոսը նույնպես վերագրում է դրա հայտնվելը այդ ժամանակին, պատմելով դրա մասին անմիջապես Խոսրովի արշավանքից հետո:

² Խոսրովի նահանջի՝ ժամատախտից կախված լինելու մասին ենթադրությունը պատկանում է Գ. Ռոուլինսոնին (The seventh monarchy, p. 401): Այն պաշտպանվում է նաև Շալիզելի կողմից (Eran. Alt. III, 434): Դեստոնիսը կարծում է, որ Ռոուլինսոնի ենթադրությունը քիչ հավանական է: Սակայն նրա առարկությունը, որի համաձայն ժամատախտը տարածվեց և քափանցեց Պարսկաստան արդեն Խոսրովի նահանջից հետո, և սկսվեց միայն նրա՝ Աղեքրիզանոն [Ատրպատական] անցնելու ժամանակ, ըստ էության չի հերքում Գ. Ռոուլինսոնի ենթադրությունը: Կարևորն այն չէ, թե երբ է ժամատախտը տարածվել Պարսկաստանում, այլ՝ դրա հայտնվելու պահը որպես այդպիսին: Իսկ պատմագիրներն այն վերագրում են 542 թ., և դա կասկածից վեր է [ըստ Clinton, F.R. I, 778, 542 թ. ամառը]: Այդպիսի համաշխարհային աղետի լուրը կարող էր ստիպել Խոսրովին վերադառնալ իր երկիրը՝ այն Պարսկաստան ներմուծելու դեմ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու համար: Այս ոգով և արտահայտվում է Ռոուլինսոնը. Chosroës may well have hesitated to confront this terrible foe. He did not ultimately escape it; but he might hope to do so, and it would clearly have been the height of imprudence to have carried out his intention of invading of Palestine when the plague was known to be raging there. («Խոսրովն իրավամբ չէր համարձակվում հանդիպել այդ սարսափելի աղետին: Ի վերջո, նա չկարողացավ խուսափել դրանից. բայց նա, թերև, այդպիսի հույս ուներ. և անշուշտ, կատարյալ անմտություն կլիներ, եթե նա շարունակեր տածել իր՝ Պաղեստին ներխուժելու մտադրությունն այն ժամանակ, երբ հայտնի եղավ, որ ժամատախտն այնտեղ արդեն մոլեգնում է »):

Առավել ուշադրության արժանի է Դեստոնիսի այլ առարկությունը: Հայտնի է, որ Պրոկոպիոսը Anecd. («Գաղտնի պատմության») մեջ ամեն կերպ աշխատում է նսեմացնել Բելիսարիոսի վաստակը, մեղադրելով նրան, ի թիվս այլոց, նրանում, որ նա երկշտության պատճառով չհետապնդեց Խոսրովին. մինչդեռ նա Բելիսարիոսի դեմ կործանաբար կռվան կունենար, եթե Խոսրովի անորայի փախուստի պատճառը վերագրեր ժամատախտին և դրանով իսկ հերոսին պակասեցներ կաներ: Դրանում Դեստոնիսը ապացույց է տեսնում այն բանի, որ ոչ մի ժամատախտ այդ ժամանակ չի եղել: Բայց նրա եզրակացությունը սխալ է: Ժամատախտի 588

[Պատերազմի շորորդ տարին, 543 թ., Հայաստանում]: Հաջորդ տարին պատերազմական գործողությունները վերսկսվեցին, տեղափոխվելով Միջագետքից Հայաստան: Խոսրովը Տիգրանից ուղևորվեց Աղեքրիզանոն, այն տեղանքը, որտեղ գտնվում էր պարսիկների հռչակավոր սրբավայրը՝ մեծ ատրուշանը (պիրիոնը) անմարելի հավերժական հրով: Այստեղ նա պատրաստություններ է տեսնում Պարսկական Հայաստանի վրայով Բյուզանդիա արշավելու համար: Նավեղեսը՝ Միջագետքի զորքի հրամանատարը, նույնպես տեղափոխվեց Հայաստան: Ռազմաբեմի փոփոխումն ու զինուժերի տեղափոխումը հարավից դեպի հյուսիս բացատրվում է բյուզանդամետ շարժման առաջացմամբ: Այն ժամանակից, երբ կայսերական կառավարմամբ դժգոհ հայերն անցան պարսիկների կողմը, արդեն երեք տարի էր անցել, բայց հայերի դրությունը չլավացավ և սպասելիքները չարդարացվեցին: Այդ միջոցին պարսիկները չկարողացան կտրել բյուզանդացիների հզորությունը և հայերին որևէ եական օգուտ չբերեցին: Հուսահատված իրենց սպասելիքներում, հայերը, Խոսրովի երրորդ արշավանքից հետո, որն ավարտվեց նահանջով, լքեցին պարսիկներին և անցան իրենց մախկին բնամու կողմը:

Նրանց միջև հաշտություն կայացավ, որից հետո [հայերի ներկայացուցիչները] Վասակի՝ [Հովհաննես Արշակունու աներորդու] հետ միասին գնացին մայրաքաղաք՝ կայսեր մոտ: Այդ ժամանակներին, հավանաբար, վերագրելի է և Արտավան Արշակունու հեռանալը Հայաստանից՝ Արտավան, որը հետագայում նշմարվեց Բյուզանդիոնում (29):

Խոսրովի ակնկալվող հարձակումը հետ մղելու նպատակով Հուստինիանոսը նրա մոտ սուրհանդակ ուղարկեց տեղեկացնելու, որ շուտով պատվիրակներ են ժամանելու հաշտության բանակցություններ վարելու համար: Պատվիրակները, սակայն, հապաղեցին ճանապարհին՝ նրանցից մեկի հիվանդության պատճառով: Այդ ժամանակ ժամատախտը հասցրեց ներխուժել Պարսկաստան. այս հանգամանքն ավելի էր տրամադրում Խոսրովին դեպի հաշտություն: Նա չսպասեց պատվիրակներին. սարսափելով ժամատախտից, առավ իր ամբողջ զորքը և հետ քաշվեց Ատրիք, որը դեռ վարակված չէր ահավոր հիվանդությամբ: Բանակցություններ վարելը վստահվեց Նավեղեսին, Պարսկահայաստանի զորահրամանատարին (30):

Հաշտության կնքումն արագացնելու համար Նավեղեսը դիմեց Դավիթ Հայոց կաթողիկոսի (31) միջնորդության և նրան ուղարկեց Վալերիանոսի՝

542 թ. հայտնվելն անառարկելի է: Թեոփանեսը 542 թ. է վերագրում դրա՝ նույնիսկ Բյուզանդիայում հայտնվելը:

Բյուզանդական Հայաստանի գորահրամանատարի մոտ: Կաթողիկոսն իր եղբոր ուղեկցությամբ ժամանեց Վալերիանոսի մոտ և խորհուրդ տվեց շտապել՝ հաշտությունը կնքելու համար: Նշելով իր բարյացակամությունը և իր՝ որպես քրիստոնյա եկեղեցուն առաջնորդի՝ կայսրին մփրվածությունը, բայց միաժամանակ չհերքելով և իր՝ Խոսրովի վրա ունեցած ազդեցությունը, կաթողիկոսը հավաստիացնում էր, որ եթե պատվիրակներն իր հետ ուղևորվեն Պարսկաստան, ապա սպասելի է, որ հաշտությունը կկնքվի Բյուզանդիոնի համար ամենապատվոք պայմաններով: Կաթողիկոսի եղբայրը, սակայն, տեսակցություն ունեցավ Վալերիանոսի հետ և քաբուն փոխանցեց նրան, որ Խոսրովի խաղաղամտությունը ներկայումս բացատրվում է դժվարին կացությամբ, որում նա հայտնվել է գահին տենչացող որդու խռովության¹, ինչպես և ժանտախտի պատճառով, որը հասել և կապել է նրան և ամբողջ բանակը:

Իրադարձություններին Հայոց կաթողիկոսի և նրա եղբոր խառնվելու փաստն ավելի հավանական է դարձնում վերը հայտնած կռահումն այն մասին, որ սպառնացող ռազմական գործողությունները կապված էին հայկական գործերի հետ: Կաթողիկոսը, որպես քրիստոնյա եկեղեցու առաջնորդ, առավելապես ապրում էր խաղաղության շնորհիվ և ջանադրաբար դրա մասին էր հոգում: Բայց նրա եղբայրը, մեզ անհայտ, վերջերս Խոսրովից դեպի Հուստինիանոսը հայերին նորից վանող հանգամանքների բերումով, գործում էր հակառակ ուղղությամբ:

Վալերիանոսը կաթողիկոսին հետ ուղարկեց, խոստանալով, որ ինքը կատարելու է նրա ցանկությունը և շուտով պատվիրակներ է ուղարկելու: Իրականում, սակայն, նա ձգձգում էր պատվիրակության առաքումը և Հուստինիանոսին զեկուցեց այն բոլորը, ինչ իմացել էր Խոսրովի ճգնաժամի մասին: Ի պատասխան զեկույցի հետևեց Հուստինիանոսի հրամանը՝ դադարեցնել բանակցությունը և գրոհել թշնամու վրա:

Արևելյան բանակի զորքերը գրավոր հրահանգներ են ստացել իսկույն գորահավաք կատարելու և դեպի թշնամու սահմանները շարժվելու մասին՝ Պարսկահայաստան ներխուժելու համար: Վալերիանոսն իր ուժերը կենտրոնացրեց Թեոդոսուպոլսից ոչ հեռու, իր հետ ունենալով նաև Նարսեհ (Կամսարականին), որը հայերից և էրուլներից կազմված մի զորաջոկատի հրամանատար էր:

Magister militum per Orientem, արևելյան բանակի գորահրամանատար Մարտինոսը, որն այս պաշտոնին էր նշանակված Բելիսարիոսի՝ հետ

կանչվելուց հետո, զորքերը շարժեց դեպի Կիթարիզոն ամրոցը, որը Թեոդոսուպոլսից չորս օրվա հեռավորության վրա էր, և որի կայագորի պետը Նարսեհի եղբայրն էր՝ Իսահակը, և ճամբարեց այստեղ: Այդտեղ են եկել նաև Ակակիոսի որդի Ադոլֆոսը, Լազիկայի նախկին կառավարիչ Պետրոսը և այլ առաջնորդներ:

Էրուլների գնդերը Ֆիլեմուսի և Բերոսի հրամանատարությամբ տեղակայվեցին Խորզանենի գյուղերում, Կիթարիզոնից ոչ հեռու: Եվ վերջապես, կայսեր եղբայրը՝ Հուստոսը, Գուրգենի որդի Պերանիոսի և այլ զորավարների հետ միասին մտան Մարտիրոպոլսի շրջանը և կանգ առան Փասոն ամրոցի մոտակայքում:

Բոլոր զորքերը միասին կազմում էին 30.000 մարդ: Հրամանատարների միջև առանձնապես համահոխություն չէր նկատվում. գրոհի ծրագիրը քննարկելու համար նրանք ռազմական խորհրդի չհավաքվեցին, այլ իրենց մարդկանց միջոցով էին շփվում: Ընդհանուր քիմի բացակայությունն ու հրամանատարների՝ միմյանցից անջատ գործելու ձգտումը կործանարար եղավ պատերազմի ընթացքի և արդյունքների համար: Պետրոսը, որ կանգնած էր Կիթարիզոնի մոտ, սեփական նախաձեռնությամբ սկսեց գրոհն ու ներխուժեց պարսիկների երկիրը առանց մյուս զորավարներին նախազուշացնելու: Նրա օրինակը գայթակղեց էրուլներին: Նրանցից հետո շարժվեց Մարտինոսը, իսկ Վալերիանոսը հետևեց նրան: Հակառակորդի տարածքում նրանք համախմբվեցին և ռազմական շարքերով ուղևորվեցին դեպի Դվին, Պարսկահայաստանի աթոռանիստը, հարուստ և մարդաշատ քաղաքը: Այստեղ կանգնած էր Նավեղեսը՝ չնչին զորքով. զլխավոր ուժերը Խոսրովը տարել է Ասորիք: Լսելով թշնամու գրոհի մասին, նա թողեց Դվինը և իր զորքերի հետ միասին հետ քաշվեց Անգոն գյուղը (32): Այն գտնվում էր գահավեժ և դժվարանցանելի լեռան ստորոտին: Լեռան լանջի վրա վեր էր խոյանում նույնանուն անառիկ մի ամրոց: Նավեղեսն ուներ ընդամենը 4000 մարդ. զլխավորապես նա իր հույսը դրեց իր դիրքի անմատչելիության վրա: Մեծաբեկորներով և սայլերով նա փակեց դեպի գյուղ տանող ուղիները, այն ավելի անխոցելի դարձնելու համար. զորքի առաջին շարքի առջև խրամատ փորել տվեց, իսկ հյուղակներում դարան դրեց հետևակը՝

¹ Խոսրը Ամատոզադի ապստամբության մասին է, որը, սակայն, քվագրվում է 551 թվականով:
590

¹ [Procop., II, 25].

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Հատոր 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

(X-VI դարեր Զ. ա.)

(էջ 31)

Գրված է 1939-1941 թթ. Բրյուսելում: Աշխատանքի ստեղծման հանգամանքների, ծավալի, նյութերի ընդգրկման ու շրջանների մասին ընդարձակորեն տե՛ս աստ, էջ 5-22:

Գրքի ֆրանսերեն բնագիրը հրատարակության է պատրաստել Հովհաննես Չավրյանը, իսկ վերջինիս մահվանից հետո հրատարակության հետ կապված աշխատանքներն իրականացրել է Արշակ Չոպանյանը: Լույս է տեսել 1946 թ. Փարիզում [«Histoire d'Arménie. Les origines du X^e siècle au VI^e (Av. J. C.)». Préface de René Grousset de L'Académie Française. Imprimerie de Navarre, Paris, 1946, 446 page]:

Աշխատանքն անավարտ է: Հրատարակիչները (հավանաբար Հ. Չավրյանը) որպես հավելված ավելացրել են մահ Ն. Ադոնցի արխիվում առկա քիչ քե շատ ավարտուն տպավորություն թողնող «Հայերի ծագումը», «Ասորական արշավանքներն Ուրարտուի դեմ», «Հայաստանը և ցեղերի պայքարը Արևելքում», «Մի հին պաշտամունքի հետքերը Հայաստանում» և «Վաղ շրջանի փոխառություններ հայերենում» հոդվածները:

1972 թ. «Հայաստան» հրատարակչությունը լույս է ընծայել սույն աշխատության հայերեն թարգմանությունը [տե՛ս Նիկողայոս Ադոնց, Հայաստանի պատմություն: Ակունքները (X-VI դդ. Զ. ա.). Հայերի ծագումը, հոդվածներ, Երևան, 1972, 432 էջ]: Թարգմանությունն իրականացրել է Վ. Պ. Սեդրոսյանը, խմբագրել է Գ. Խ. Սարգսյանը:

Արտատպվում է այս հրատարակությունից՝ Ն. Վ. Հարությունյանի և Օ. Ս. Վարդազարյանի բնագրային համեմատություններով ու լրացումներով: Վերջինիս է պատկանում մահ հունարեն հատվածների հայերեն թարգմանությունը:

Մեր ծանոթագրությունները, որոնց հերթական համարներն առնված են կլոր () փակագծերի մեջ, տրվում են ծանոթագրությունների բաժնում:

1. Ն. Ադոնցի սույն աշխատությունը գրվել է մինչև 1930-ական թվականները գիտական շրջանառության մեջ գտնվող նյութերի հիման վրա: Վերջին 50 տարիներին պատմական Հայաստանի տարբեր հատվածներում կատարված հնագիտական պեղումները զգալիորեն հարստացրել են մեր հնագույն պատմության և մշակույթի ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը: Նորահայտ նյութերի հետ մեկտեղ շրջանառության մեջ մտան ավանդական պատկերացումներից արմատապես տարբերվող նոր մեկնաբանություններ և տեսակետներ: Հայաստանի մախապատմական շրջանի մասին լույս է տեսել հսկայածավալ գրականություն, շատ հարցեր վերանայվել են (ընդհանրացող ձևով և գրականության հղումներով, տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», ԳԱ հրատ., հատ. I, Երևան, 1971, էջ 57-153: Ս. Ա. Եսայան, Հայաստանի հնագիտություն, հատ. I, Երևան, 1992: Ս. Հ. Մարդարյան, Հայաստանը քաղաքակրթության օրրան, Երևան, 2004 և այլն): - էջ 31:

2. Հայաստանի հնագույն շրջանի գրավոր հուշարձանները ներկայումս շատ մեծ թիվ են կազմում, ընդ որում, դրանք դասակարգվում են ըստ ժամանակագրության և գրահամակարգի տեսակի: Դրանց բոլորի մասին մանրամասն տե՛ս Ա. Ե. Մովսիսյանի «Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը» (Երևան, 2003) և «Հայկական մեհենագրություն» (Երևան, 2003) մենագրությունները: - էջ 44:

3. Բարեբախտաբար, ներկայումս բավականին սկզբնաղբյուրներ ունենք Հայաստանի Զ. ա. III հազարամյակի պատմության վերաբերյալ, որոնք ամփոփ կարելի է տեսնել Ա. Ե. Մովսիսյանի՝ «Հայաստանը Զ. ա. երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների)» գրքում (Երևան, 2005), ինչպես նաև «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիայի» I հատորում (Երևան, 2007): - էջ 46:

4. Հետագա ուսումնասիրությունները պարզեցին, որ տեքստը վերաբերում է ոչ թե Զ. ա. II հազարամյակի սկզբին իշխած Սարգոն Աշուրացուն, այլ Սարգոն Ակկադացուն (տե՛ս E. Weidner, Das Reich Sargons von Akkad, «Archiv für Orientforschung», Graz, 1952-1953, v. 16, s. 1-24, հմմտ. «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հատ. I, էջ 50-54): - էջ 47, ծան. 1:

5. Ն. Ադոնցի ժամանակներին հաջողա՞ծ տասնամյակներում հայտնաբերված արձանագրությունները և կատարված ուսումնասիրությունները ենթադրել են տալիս, որ Արմանին Հայաստանի հնագույն անվանումներից է: Արմանի երկրի ուսումնասիրության պատմությունը գրականության հանգամանալի հղումներով

տե՛ս Ա. Ե. Մովսիսյան, Հայաստանը Զ. ա. երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), էջ 32-43, 64-67: - էջ 48:

6. Տե՛ս սույնի հայերեն թարգմանության վերջին հրատարակությունը՝ Ն. Ադոնց, Վաղ շրջանի փոխառություններ հայերենում, Ն. Ադոնց, Երկեր հինգ հատորով, հատ. Գ, Հայերենագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2008, էջ 387-397, տե՛ս նաև նույն հատորի 458-րդ էջի ծանոթագրությունները: - էջ 49, ծան. 3:

7. Ն. Ադոնցը վկայակոչում է 1930-ական թվականներին գիտության մեջ տարածում գտած տեսակետները, որոնց մի մասը վերանայվել է: Մասնավորապես ժամանակակից գիտության մեջ խտրիները համարվում են ոչ հնդեվրոպական, ինքնուրույն լեզվաընտանիքի պատկանող ժողովուրդ (մանրամասն տե՛ս G. Wilhelm, The Hurrians, Warminster, 1989): - էջ 50:

8. Հնդեվրոպական նախահայրենիքի եվրոպական տեղորոշման հարցը ներկայումս վերանայված է: Առավել հավանականությամբ այն տեղորոշվում է Հայկական լեռնաշխարհում, Փոքր Ասիայի արևելքում և Իրանական սարահարթի հյուսիս-արևմուտքում (հարցին նվիրված լավագույն ուսումնասիրություններից տե՛ս T. B. Гамк-релидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. 1-2, Тбилиси, 1984, տե՛ս նաև նույնի անգլերեն լրացված հրատարակությունը՝ T. Gamkrelidze, V. Ivanov, Indo-European Language and the Indo-Europeans, Berlin-New York, 1995): Բավանյան թերակղզուց հայերի կարծեցյալ գաղթի տեսությունը ներկայումս լիովին մերժված է: Հիմնահարցի պատմությունը՝ մանրամասն հղումներով տե՛ս Լ. Ա. Բարսեղյան, Հայ ժողովրդի ծագման և կազմավորման հարցերը պատմագիտության մեջ (Երևան, 1996) գրքում: - էջ 50:

9. Զ. ա. XVII-XIII դարերի Միտաննի պետության ռազմաքաղաքական պատմության հարցերը՝ գրականության հանգամանալի հղումներով, տե՛ս Г. М. Аветис-ян, Государство Митанни (военно-политическая история в XVII-XIII вв. до н. э.), Ереван, 1984. - էջ 53:

10. Հայաստանի վերաբերյալ ստեղծված ոչ այնքան ստվար գրականության ցանկից կառանձնացնենք Գր. Ղափանցյանի՝ «Хайаса-колыбель армян» (Երևան, 1947), և Գ. Բ. Զահուկյանի՝ «Хайасский язык и его отношение к индоевропейским языкам» (Երևան, 1964) մենագրությունները, ինչպես նաև Վ. Ի. Խաչատրյանի՝ «Хайаса и Наири», [«Լրաբեր», ՀԳԱ ակադեմիայի (հասարակ. գիտ.), 1973, № 11] և «Наири и Армина» (անդ, 1976, № 8) հոդվածները: - էջ 55:

11. Ներկայացված արքայացանկերի ժամանակագրությունը զգալիորեն տարբերվում է ներկայումս քաղաքացիություն ստացած ցանկերից (տե՛ս Հ. Մ. Ավետիսյան, Հայկական լեոնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պարտությունը մ. թ. ա. XVII-IX դդ., Երևան, 2002, էջ 156-164): - էջ 55:

12. Զ. ա. XI-VII դարերի Շուպրիա երկրի պատմության մանրամասները տե՛ս Գ. Ն. Սարգսյանի՝ «Страна Шубриа» մենագրությունում (Երևան, 1989): - էջ 75:

13. Հայկական լեոնաշխարհի մասին ասուրա-բաբելական արձանագրությունների մի ժողովածու XX դարակեսին հրատարակել է Ի. Մ. Դյակոնովը (տե՛ս **И. М. Дьяконов**, *Ассиро-вавилонские источники, по истории Урарту*, «Вестник древней истории», 1951, № 2-4): Ներկայումս հայտնի են դարձել անհամեմատ մեծ թվով արձանագրություններ, որոնք այժմ հրատարակության է պատրաստում Ե. Հ. Գրեկյանը (դրանցից մի քանիսը տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հատ. 1, Երևան, 2007, էջ 92-138): - էջ 90:

14. Ուրուտտրիի այսօր հայտնի առաջին հիշատակությունը վերաբերում է Զ. ա. XIII դարին (Սալմանասար I-ի արձանագրություններում): Հիշատակությունը տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հատ. 1, էջ 92, 94): - էջ 90:

15. Ն. Ադոնցի աշխատության այս գլխում հանգամանորեն վկայակոչվում են իր ժամանակի հայտնի Վանի թագավորության 193 սեպագիր արձանագրությունները: Դրանք թիվն այսօր անցնում է 600-ից: Ն. Ադոնցից հետո լույս տեսած Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների ժողովածուներն են՝ **F. W. König**, *Handbuch der chaldischen Inschriften*, I-II, Graz, 1955-1957: **Г. А. Меликишвили**, *Урартские клинообразные надписи*, М., 1960. լրացումները՝ **Г. А. Меликишвили**, *Урартские клинообразные надписи*, «Вестник древней истории», 1971, № 3-4): **Н. В. Арутюнян**, *Корпус урартских клинообразных надписей*, Ереван, 2001: - էջ 173:

16. Ինչպես նշվեց նախորդ՝ 15-րդ ծանոթագրությունում, այսօր գիտությանը հայտնի են ուրարտական 600-ից քիչ ավելի արձանագրություններ: Հասկանալի է, որ դրանց թիվն ավելի է, քանզի դասակարգված չեն Արևմտյան Հայաստանի՝ այսօր Թուրքիայի տարածքում գտնվող արձանագրություններից շատերը: Ուրարտական արձանագրությունների ամբողջական նոր, լրացված ժողովածու է պատրաստում հրատարակելու իտալացի արևելագետ Մ. Սալվինին. այն կրելու է «Urartian Cuneiform texts» անվանումը: - էջ 213:

17. Վանի թագավորության արքայացանկն ու ժամանակագրությունը (հատկապես Զ. ա. VII դարի վերաբերյալ) շատ կողմերով այսօր էլ վիճելի են մնում (առավել ճշգրտված ցանկը տե՛ս Պ. Հ. Հովհաննիսյան, Հայկական արքայատոհմերի և Ամենայն Հայոց կաթողիկոսների ցանկեր, «Հայաստանի ազգային ատլաս», հատ. II, Երևան, 2008, էջ 226-227): - էջ 226:

18. Ուրարտուի և նրա տիրապետության ներքո գտնվող երկրամասերի, գավառների ու բնակավայրերի տեղադրման ու տեղանունների մասին առավել ամբողջական պատկերացում կարող են տալ Ն. Վ. Հարությունյանի («Топонимика Урарту», Ереван, 1985), Հ. Հ. Կարազոզյանի («Հայկական լեոնաշխարհը սեպագիր աղբյուրներում», հատ. I, գիրք 1. սեպագիր տեղանուններ, Երևան, 1998) մենագրությունները: - էջ 246:

19. Ն. Ադոնցի ձեռագիր բնագրի 206-րդ էջն այստեղ ընդհատվում է (ծանոթագրությունը Հ. Չավրյանի): - էջ 252:

20. Վանի թագավորության դիցարանին նվիրված վերջին լավագույն ուսումնասիրություններից տե՛ս Մ. Հ. Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990: - էջ 256:

21. Արևի աստծո անվան «Արդինի» ընթերցումը վերանայվել է, և այժմ ընդունված է «Շիվինի» ընթերցումը: - էջ 256:

22. Խուրիերենի և ուրարտերենի լեզվական աղերսակցության վերաբերյալ նորագույն ուսումնասիրություններից տե՛ս Մ. Լ. Խաչիկյանի՝ «Хурритский и урартский языки» ուսումնասիրությունը (Երևան, 1985): - էջ 301:

23. Ն. Ադոնցի այս խոսքերը հստակորեն ցուցում են, որ «Հին Հայաստանի պատմությունը» մնացել է անավարտ: Այն տեքստը, որ այժմ գտնվում է շրջանառության մեջ և որն այժմ վերահրատարակվում է, գերծ է Մարաստանի հետ կապված իրադարձությունների նկարագրությունից: - էջ 314:

24. Տրվում է ըստ Աստվածաշնչի արևելահայերեն նոր թարգմանության՝ «Աստուածաշունչ մատենա Հին և Նոր կտակարանների», Մ. Էջմիածին, 1999: - էջ 316:

25. Վ. Պ. Մեղրոսյանն ամենուր օգտագործում է «Մեդիա», «մեդացիներ» և նույն արմատով հռոմված ձևեր: Դրանք փոխարինում ենք, բացառյալ անհրաժեշտ դեպքերի, ըստ հայկական ավանդույթի ընդունված՝ «Մարաստան», «մարեր» հասկացություններով: - էջ 320:

26. Հայագիտության մեջ կարծիք է հայտնվել, թե Պրոտոքիսարը նույն ինքը՝ Պարույր Սկայարդին է (տե՛ս Գ.ր. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 217: «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, ՀԳԱ ակադեմիայի հրատ., Երևան, 1971, էջ 432-433): Սակայն առկա նյութը նման նույնացման համար հնարավորություն չի տալիս: - էջ 323.

27. Դեպի Ուրարտու, Ասորեստան և Փոքր Ասիայի երկրներ կիսմերձերի և սկյութների կազմակերպած արշավանքների մասին մանրամասն տե՛ս Ս. Տ. Երեմյան, Կիսմերական և սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը թռչվորների դեմ, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 89-115: - էջ 324:

28. Մարական բազավորների ցանկն ըստ պատմագիտության մեջ ընդունված տեսակետի հետևյալն է՝

Դեովկես (Դեյոկես)	727-675
Փրատորտես	675-653
Կիաքսար (Կվաքսարես)	625-585
Աստիագես (Աժդահակ)	585-550

(տե՛ս G. G. Cameron, History of Early Iran, New-York, 1936, p. 232. И. М. Дьяконов, История Мидии, М.-Л., 1956, стр. 20. Э. Бижерман, Хронология древнего мира, М., 1975, стр. 193): - էջ 336, ծան. 1:

29. Ն. Ադոնցի թողնում առկա է «Մարական կայսրություն. կազմավորումը, զարգացումը» խորագիրը կրող ռուսերեն 28 էջանոց անավարտ (թե՛ էջերը կորսված) մի աշխատություն (տե՛ս պահարան I, գրողը է, թղթածրար Ա-8): Փաստն ինքնին վկայում է, որ նյութը պատմաբանին հետաքրքրել է շարունակաբար: - էջ 337:

30. Ջսենովիցի «Անաբասիսի» հայերեն թարգմանությունում սույն ցեղանունը ներկայացված է սկյութներն ավելի ճիշտ ձևով (տե՛ս Ջսենովից, Անաբասիս, թարգմանությունը Միսոն Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 103, հմմտ. էջ 105): - էջ 338:

31. Մեկ անգամ ևս ակնարկվում է աշխատանքի հետագա ծրագիրն ու ընդգրկման ծավալը: Այնքան է, որ նախատեսված էր ամփոփել մարական և Աքեմենյան պատմաշրջաններում «իշխած մի քանի հայ բազավորների մասին հիշատակությունները», բնականաբար, վերլուծություններով ու եզրակացություններով

ներով հանդերձ: Ցավոք, ո՛չ աշխատանքի հետագա շարադրանքում և ո՛չ էլ թողնված նյութերում նման տեղիների չհանդիպեցինք: - էջ 339:

32. Որոշ ուսումնասիրողներ հակված են Արտոքմես անունը ընթերցել Արտաշես (տե՛ս Ս. Կրկյաշարյան, Երվանդունիների արքայատոհմը Հայաստանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 4, էջ 185 և այլն): - էջ 340:

32ա. Աստվածաշնչի հունարեն նոր քննական բնագրում տողն ընդունել է հետևյալ տեսքը՝ Παραγγελιατε 'επ' αυτην βασιλειαις Αραρατ παρ εμου και τοτς 'Ασχαναζαίοις: - էջ 347, ծան. 3:

33. Ն. Ադոնցի այս հղումը վրիպակ է, Ստրաբոնի բնագրում այդպիսի բան վկայված չէ: - էջ 350, ծան. 1:

34. Իրականում՝ Ստրաբոն, 7a, 1.36.14՝ Παρορθηλία: 'Ορβισήνη, 'Οδβαλισήνη տեղանունները նույնպես վկայված չեն: - էջ 350, ծան. 1:

35. Ստրաբոնի բնագրում այդպիսի նույնացում չկա: - էջ 355, ծան. 2:

36. Հայագիտության մեջ տիրապետում է այն կարծիքը, թե իբր այս «Արմեն» բազավորը Երվանդ I Սակավյակացն է (Կ. Թումանով, Գ. Տիրացյան, Ս. Երեմյան, Գ. Մարգարյան և այլն): Նկատելի է, որ Ն. Ադոնցը նման որևէ նույնացում չի կատարել, հավանաբար դրա համար չունենալով որևէ կովան: - էջ 368:

37. Դեռևս Գրիգոր Մագիստրոսն է Տիգրան անունը համարել պարսկական և փորձել ստուգաբանել իբր «Մեծ և ծանր» (տե՛ս Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 60): Թեև Հր. Աճառյանը ևս Տիգրանը համարում է իրանական անուն, սակայն խոստովանում է, որ ճիշտ մեկնությունը իրեն հայտնի չէ: Հետևաբար անվան պարսկական ծագման հարցին պետք է մոտենալ թեականորեն: - էջ 370:

38. Տիգրան անունով մի պարսիկ զորավար էլ հայտնի է VII դարում, որ պարսից Խոսրով II Փարվեզ արքայի կողմից ուղարկվեց Գայլ Վահանի որդի Սմբատի դեմ, բայց սպանվեց (տե՛ս Յովհան Մամիկոնեան, Պատմություն Տարաունյ, «Մատենագիրք Հայոց», Ե հատոր, է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1102-1106): - էջ 370:

39. Խոսքն այսօր Բրիտանական բանգարանում պահվող աստղաբաշխական օրագրի մի սեպագրական բեկորի մասին է, որը ծագում է Բաբելոնից: Առաջին անգամ սույն վավերագրի մասին հիշատակել է Վ. Բելքը (1899), որից և օգտվել է

Ն. Ադոնցը: Վերջինիս փորձերը ստուգել սույն վավերագրի գոյությունը՝ որևէ արդյունք չեն տվել: Բարեբախտաբար վավերագրի ինքնագիրը (սեպագրական պատճենները) տեսել և հետազոտել է Գ. Խ. Սարգսյանը: Վավերագիրը քվազովում է Բ. ա. 82 ք. ապրիլի 21 - հունիսի 17-ով և ունի մեզ հետաքրքրող հետևյալ տողերը՝

«Տիգրանը, (քաղաք) Արմինիի թագավորի որդին, դեպի (քաղաք) x [...] արշավանք կատարեց.....»:

Այստեղ խոսքը վերաբերում է Տիգրան Մեծի որդի Տիգրան Կրտսերին, որը արշավանքի է դուրս եկել 82 քվականին: Հետևաբար, Տիգրան Կրտսերը չէր կարող լինել Տիգրան Մեծի և Միհրդատ Եվպատորի դուստր Կլեոպատրայի որդին (մանրամասնությունները տես Գ. Խ. Саркисян, Свидетельство поздневавилонской клинописной хроники об Армении времён Тиграна II, «Պատմաբանասիրական հանդես», 1991, № 2): - Էջ 371:

40. Այսօր հայագիտության մեջ աներկբայելիորեն ընդունվում է Երվանդունիների թագավորական հարստության փաստը, որ նախորդել է Արտաշեսյաններին [հարցի դրվածքը՝ սկզբնաղբյուրների և գրականության հղումներով տես Գ. Տիրացյան, Երվանդունիները Հայաստանում, «Տեղեկագիր» ՀԳԱ ակադեմիայի (հասարակ. գիտ.), 1958, № 6, էջ 53-71: Կ. Թումանով, Հայաստանի Օրոնդյանները, Վիեննա, 1970 և այլն]: Ն. Ադոնցը ինքը ևս նախնական ուսումնասիրություններով հանգել էր Աքեմենյանների օրոք Հայաստանում Երվանդունիների թագավորական հարստության աներկբա գոյության իրողությանը [այդ մասին տես նրա ձեռագիր անավարտ (11 էջ) «Երվանդունիները Հայաստանում Աքեմենյանների օրոք» ուսումնասիրությունը, Համազգայինի Բեյրութի գրական արխիվ, պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան I, գրոց Գ, թղթածրար Ա-8]: - Էջ 371:

41. Աքեմենյանների ծագումնաբանության ու սկզբնական շրջանի ճշգրտված տոհմաձառը տես Մ. Ա. Դանդամաևի աշխատություններում [«Иран при первых Ахеменидах» (Մ., 1963), «Политическая история Ахеменидской державы» (Մ., 1985)]: - Էջ 374:

42. Ն. Ադոնցի աշխատության այս կարևորագույն հատվածը մնացել է անավարտ: Այժմ դժվար է անգամ երևակայել, թե կականավոր հայագետն ընդհանրացնող ի՞նչ հետևությունների էր հանգելու, և կամ ի՞նչ նյութեր էր ընդգրկելու հիմնահարցն ըստ ամենայն ներկայացնելու համար: Թերևս մոտավոր պատկերացում կարող են տալ Ադոնցի բողոնի որոշ նյութեր: Այսպես, մենք հնարավոր ենք համարում սերտ աղերսակցությունն այս անավարտ գլխի բովանդակությանը՝ հետևյալ նյութերի՝

ա. Արմենների երթուղին՝ Փոյուզիայից - Ուրարտու:

Ֆրանսերեն, ձեռագիր: Նախապես եղել է մի ընդարձակ ուսումնասիրություն, որից պահպանվել են միայն 47-55, 82-95-րդ էջերը՝ ընդամենը 23 էջ (տես Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան I, գրոց Ը, թղթածրար Ա-8):

բ. Հայաստանը Մարական կայսրության կազմավորումից մինչև Կոմաքսայի ճակատամարտը՝ Տիրիբագոսի և Օրոնտեսի օրոք:

Ֆրանսերեն, ձեռագիր: Սկսվում է 56-րդ և ավարտվում 81-րդ էջով, ընդամենը 25 էջ (տես անդ, գրոց Բ, թղթածրար 2):

Դժվար չէ կռահել, որ նախորդի հետ նախապես եղել է մեկ ամբողջության մաս՝ էջ 47-81, ընդամենը 40 էջ:

գ. Երկրամաս և ազգաբնակչություն. 13-րդ և 18-րդ սատրապությունների կազմավորումը, հարկերը:

Ֆրանսերեն, ձեռագիր, 18 էջ. թողնում է ավարտուն տպավորություն (տես անդ):

դ. Հին Հայաստանի բնակչությունն ու տնտեսությունը (Աքեմենյանների օրոք):

Հայերեն, ձեռագիր, բազմաթիվ չհամարակալված էջեր, խառնիխտոն նյութեր (տես անդ):

Բնական է ենթադրել, որ «Հայաստանի պատմության» ֆրանսերեն հրատարակիչ Հ. Չավրյանը ծանոթ է եղել այս նյութերին, միգուցե դրանք տեսել ամբողջական, ոչ բզկտված վիճակում, բայց առաջնորդվելով ինչ-ինչ նկատառումներով՝ դրանք չի ընդգրկել իր խմբագրած հատորում: Ե՞րբ է տեղի ունեցել պատրաստի հատվածների կորուստը, ի՞նչ պայմաններում և ինչո՞ւ, այժմ հնարավոր չէ պարզել: - Էջ 381.

43. Այս և հաջորդ երեք հոդվածները գրքի ֆրանսերեն բնագրի խմբագրի (Հ. Չավրյան) կամայական ցանկությամբ են տեղ գտել «Հայաստանի պատմությունը» հատորում: Հավանաբար դրանք ինքնուրույն ուսումնասիրություններ են գրված այլ նպատակով և այլ ծրագրով: Անշուշտ այս հանգամանքով պետք է բացատրել բացահայտ կրկնությունները (երբեմն էջերով) ու նյութի շարադրման այլ մեկնակերպը: - Էջ 385:

44. Տարակուսանքի տեղիք է տալիս «Հայաստանի և հարակից շրջանների տեղադրումների բառարանի» հեղինակների այն պնդումը, թե իբր Ն. Ադոնցը Անիաշքահիան նույնացրել է Անանավանքի հետ (հատ. 1, Երևան, 1986, էջ 283): Ն. Ադոնցը

ո՛չ այս և ո՛չ էլ այլ ուսումնասիրություններում նման նույնացում չի կատարել: Ընդհակառակը՝ նա հստակորեն շեշտում է, թե «Անստանի տեղը հայտնի չէ»: - Էջ 399, ծան. 1:

45. Ֆրանց Բոպպի «Համեմատական քերականության» առաջին հրատարակությունում (1833-1852) հայերենը քննված չէր: Հայերենին լայնորեն տեղ է հատկացված գրքի երկրորդ հրատարակության մեջ (տե՛ս F. Bopp, Vergleichende Grammatik des Sanskrit, Zend, Armenischen, Griechischen, Lateinischen, Litauischen, Altshavischen, Gothischen und Deutschen, Berlin, 1857-1861): - Էջ 406:

46. «Հ. Հյուբշմանի երկրում դեռևս կան մարդիկ, որոնք այսօր էլ հայերի ծագման հարցն են բարձրացնում» - 1930-ական թվականների սկզբներին թուրքական լոբիստական քաղաքականության արդյունքում նացիստական Գերմանիայում այն կարծիքն էր տարածում ստացել, թե իբր հայերը պատկանում են ոչ արիական ժողովուրդների ընտանիքին, և որ նրանք ունեն սեմական ծագում: Հայերի ծագման սեմական վարկածը և նրանց հայտնվելը ոչ արիական՝ ստորակարգ ժողովուրդների ցուցակում, հսկայական դժբախտություններ կարող էր բերել աստանդական հայությանը: Ն. Ադոնցի վերը բերված մտահոգ խոսքերն աղերսվում են այս իրողությանը:

Հակահայ շարժումը Գերմանիայում կանխելու և հայերի՝ ոչ արիական պատկանելության վարկածը հերքելու նպատակով Բեռլինի համալսարանի պրոֆեսոր Ա. Արեդյանը՝ եվրոպական նշանավոր գիտնականների (Յո. Մարկվարտ, Յո. Ստրրեիզովսկի, Պ. Ռոբբախ, Կ. Ռոթ և ուրիշներ) համագործակցությամբ, 1934 թ. Պոտսդամում հրատարակում է «Armeniertum-Ariertum» («Հայկականություն - Արիականություն») գիրքը (երկրորդ հրատարակությունը, Շտուտգարտ, 1942): Այս գրքի հիման վրա գերմանական կառավարությունը պաշտոնապես ընդունել է հայերի արիական ծագումը և Գերմանիայում բնակվող հայերին տվել արիական պատկանելությունը փաստող վկայագիր: - Էջ 406:

47. Հողվածի վերջին մասն ունի շեշտված հրապարակախոսական բնույթ և համահունչ է Ն. Ադոնցի՝ Հայկական հարցին նվիրված ուսումնասիրություններին (տե՛ս Ն. Ադոնց, Հայկական հարց, կազմել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պ. Հ. Հովհաննիսյանը, Երևան, 1996): - Էջ 409:

48. «Մի հին պաշտամունքի հետքեր Հայաստանում» խորագիրը կրող սույն ուսումնասիրությունը նախապես ֆրանսերենով լույս է տեսել գիտական պարբերականում (N. Adontz, Les vestiges d'un ancien culte en Arménie), տե՛ս «Annuaire de l'Institut de philologie et d'histoire Orientales et Slaves», t. IV, Bruxelles, 1936, p. 501-515, ապա վերահրատարակվել 1946 թվականին (NAHA): Հայերեն է թարգմանել Վ. Պ. Սեդրոսյանը և գետեղել ՆՀԱՊ-ում (էջ 370-382):

Սույն աշխատանքը թեև ինքնուրույն, առանձին հետազոտություն է, սակայն բազմաթիվ աղերսներ ունի Ն. Ադոնցի համաբնույթ այլ ուսումնասիրությունների հետ (հմմտ. Ն. Ադոնց, Հին հայոց աշխարհայացքը, Երկեր, հատ. 1, Երևան, 2006, էջ 13-78: II. Алонц, Богиня Кибела, տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 18, Երևան, 2008, էջ 187-215): - Էջ 410:

49. Կոտեսիասի բնագրում (հր. Յո. F. 1b. 128) այս կնոջ անունը Միմմայ (Σίμμα) է: - Էջ 417:

50. Անկասկած տպագրական սխալ է, պետք է լինի 1917 թվականին: Խոսքը վերագրում է 1917 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Վանի շրջակայքում Ն. Ադոնցի հնագիտական արշավախմբի գործունեությանը: Արշավախմբի արդյունքների մասին տե՛ս «Հորիզոն», օրաթերթ, Թիֆլիս, 1917, 16 հուլիսի, 3 սեպտեմբերի: - Էջ 418, ծան. 2:

51. Նկատի ունի մատենագիր Համան Արևելցուն: - Էջ 421:

52. «Մի հին պանշտամունքի հետքեր Հայաստանում» ուսումնասիրությանը, գրքի ինչպես ֆրանսերեն հրատարակությունում, նույնպես և հայերեն թարգմանությունում, հետևում է «Վաղ շրջանի փոխառություններ հայերենում» հոդվածը (ՆՀԱՊ, էջ 382-392): Ժամանակին խմբագրական հանձնաժողովը հաշվի առնելով սույն հոդվածի գուտ լեզվաբանական ուղղվածությունը՝ այն գետեղել է Ն. Ադոնցի հայերենագիտությանը նվիրված հատորում (տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հատ. Գ, Երևան, 2008, էջ 387-397): - Էջ 423:

53. Տե՛ս նաև Գ. Խ. Սարգսյանի սույն «Վերջաբանի փոխարեն»-ի երկրորդ հրատարակությունը (Գ. Խ. Սարգսյան, Պատմագիտական հետազոտություններ, Երևան, 2006, էջ 188-190): - Էջ 424:

[ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ]

(Հատվածներ, նյութեր երկրորդ և երրորդ հատորներից)

I. ՀԱՅԱՍՏԱՆԸ Զ. Ա. IV-I ԴԱՐԵՐՈՒՄ

(էջ 431)

Գրված է 1939-1941 թթ. Բրյուսելում: Աշխատանքի ստեղծման հանգամանքների, ծավալի, նյութերի ընդգրկման ու շրջանների մասին ընդարձակորեն տե՛ս աստ, էջ 5-22:

Չեռագրի ֆրանսերեն բնագիրը, որ խորագրված է «Արևելքը Մակեդոնական կայսրության օրոք», գտնվում է Համազգայինի Բեյրութի գրական պահոցի պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդում (պահարան I, գրոց Բ, թղթածրար 2, 142 էջ):

Նյութի բովանդակությունն ու խորագիրը միմյանց չեն համապատասխանում: Մակեդոնացիների պատմաշրջանին վերաբերում է միայն առաջին փոքր մասը՝ մինչև Արտաշես I-ը (տե՛ս աստ, էջ 429-443): Մնացյալը վերաբերում է Արտաշես I, Տիգրան I, Արտավազդ I և Տիգրան II Մեծ արքաների գործունեությանը (տե՛ս աստ, էջ 443-508): Ենթադրելի է, որ ձեռագրի մաքրագրման ընթացքում ու այն հրատարակության պատրաստելիս Ն. Ադոնցը հստակեցնելու և կարգավորելու էր խորագրերը և, բնականաբար, հարթելու էր նկատվող հակասությունը: Մենք նյութը խորագրել ենք ու բաժանել մասերի, հիմք ընդունելով բովանդակությունը: Ուստի արդարացվում է նյութի ընդհանուր խորագրի մեր առաջարկած տարբերակը՝ «Հայաստանը Զ. ա. IV-I դարերում»:

Չեռագիր ֆրանսերեն բնագիրը գրված է 16×24 մեծության վանդակավոր 142 թերթերի վրա: Չեռագիրը հիմնականում դյուրընթեռնելի է, սակայն կան էջեր, որ անհրաժեշտ է եղել վերծանել: Ուսումնասիրության գիտական ապարատը Ն. Ադոնցը գլխավորապես տվել է կամ բուն շարադրանքում և կամ առանձին թերթերի վրա: Սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների խորագրերն ու հեղինակների ազգանվան ձևերը տվել է հակիրճ հապավումներով՝ հիմնականում հեղինակների սկզբնատառերով կամ գրքերի կրճատ ներկայացված խորագրերով: Այդ բոլորը, ինչպես ընդունված կարգն է, իջեցվել են տողատակ, հնարավորության դեպքում վերականգնվել են հեղինակների անվանատառերն ու գրքերի վերնագրերը, հրատարակության թվականները, վայրերն ու մեջբերումների էջահամարները:

Ֆրանսերեն բնագիրը հայերեն է թարգմանել պատմական գիտությունների թեկնածու Վ. Ա. Պողոսյանը: Նրան են պատկանում բնագրային սրբագրումներն ու ուղղումները: Հեղինակների անունների և երկասիրությունների վերնագրերի հապավված ձևերի վերականգնումը՝ նրան և խմբագրին: Հունարեն և լատիներեն հատվածները համեմատել և թարգմանել է փիլիսոփայական գիտությունների թեկնածու Օ. Ս. Վարդապարյանը, որը կատարել է նաև ամբողջ այս հատվածի խմբագրումը:

Ն. Ադոնցի բնագրից դուրս կատարված բոլոր հավելումները, որ արված են հույժ անհրաժեշտության դեպքում, առնված են ուղիղ [] փակագծերի մեջ, իսկ մեր ծանոթագրությունները, որոնց հերթական համարները

առնված են կլոր () փակագծերի մեջ, տրվում են ծանոթագրությունների բաժնում:

1. Նկատի ունի Զվինտոս Կուրտիոսին: - էջ 433:

2. Ալեքսանդր Մակեդոնացու դեմ մարտնչող պարսկական զորամասերի կազմում է գտնվել նաև հայոց բանակը, որն, ի դեպ, պարսիկներից ու մարերից հետո քանակությամբ երրորդն էր: Հայերը գործում մասնակցություն են ունեցել ինչպես Խստոսի, նույնպես և Գավգամելայի ճակատամարտերին: Ալեքսանդր Մակեդոնացու դեմ ուղղված ռազմական գործողությունների ընթացքում հայոց բանակի դերակատարության հարցը բացահայտված է Մ. Օհանյանի «Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը» գրքում (Երևան, 2003): - էջ 433:

3. Ալեքսանդր Մակեդոնացու վերաբերյալ ստեղծվել է բազմալեզու վիթխարի գրականություն, որից կառանձնացնելիք ընդամենը մի քանիսը, որոնք, մեր կարծիքով, առավել ճշգրտորեն են բացահայտել մեծ զորավարի իրական նկարագիրը՝ **С. А. Жебелев, Александр Великий, Петроград, 1922. С. И. Ковалев, Александр Македонский, Ленинград, 1937. Ф. Шахермайр, Александр Македонский, Москва, 1986** և այլն: Առանձնակի հետաքրքրություն ունեն Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան քաղաքականության հարցերին նվիրված հետևյալ գրքերը՝ **А. С. Шюфман, Восточная политика Александра Македонского, Казань, 1976. Б. Г. Гафуров, Д. И. Цибукчицис, Александр Македонский и Восток, Москва, 1986** և այլն: - էջ 434:


4. Կուրտիոս Ռուփոսի երկի նոր՝ քննական բնագրում ընդունվել է «Ariarathes» ընթերցումը: - 436, ծան. 2.

5. Հայոց թագավորի անվան այս Արդոատես ձևը վեճերի առիթ է տվել: Վիճաբանական էր հատկապես, թե նա որտեղ է թագավորել՝ Մեծ Հայքում, թե՞ Փոքր Հայքում: Ուսումնասիրողներից շատերը (Ի. Դրոյզեն, Յո. Մարկվարտ, Հ. Մանանդյան, Գ. Մարգսյան և ուրիշներ) կարծում են, թե Արդոատեսը Օրոնտեսի աղճատված տարբերակն է և ըստ այդմ էլ գտնում են, թե սա եղել է Հայաստանի սատրապ այն Օրոնտեսը, որը մասնակիցն է Գավգամելայի ճակատամարտի և որը 331-330 թթ. իրեն հայտարարել է Հայաստանի թագավոր:

Ուսումնասիրողներին, ցավոք, առայսօր անձանք մնացած Ն. Ադոնցի հիմնակի կռահումը գայիս է ամրապնդելու Արդոատես - Արոանդես - Օրոնտես - Երվանդ անվանաձևերի նույնացման հիմքերը: - էջ 441, ծան. 1:

6. Արոանդես (= Օրոնտես) քազավորի որդու և հաջորդի անունը վկայված է Կոմմագենեի Անտիոքոս I-ի արձանագրությունում: Յավոք, արձանագրությունը եղծված է, և այժմ հնարավոր է ընթերցել միայն Արոանդեսի հաջորդի անվան վերջավորությունը՝ «... դանես»: Ուսումնասիրողները պարզել են, որ այս քազավորի կառավարման տարիները ընկնում են Ք. ա. III դ. առաջին չորս տասնամյակներին (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», ՀԳԱ ակադեմիայի հրատ., հատ. 1, Երևան, 1971, էջ 511): Ն. Ադոնցի երկերի սույն Դ հատորում լույս տեսնող «Հայոց քննական պատմության» 2-րդ հատորի նյութերը ցույց են տալիս, որ պատմաբանը լիովին ընդունել է Երվանդունիների արքայատոհմի գոյությունը Հայաստանում և անգամ առաջարկել նրա արքայացանկը (տե՛ս աստ, էջ 444, նաև էջ 605-606, ծան. 5-7): - էջ 442:

7. Պահպանված վկայությունների համադրության միջոցով Ն. Ադոնցը առաջարկում է Երվանդյանների արքայատոհմի հետևյալ տոհմածառը՝



Առավել հետաքրքիր է Ն. Ադոնցի տեսակետն այն մասին, որ Սամոսն ու Արշամը պատկանում են Երվանդունիների արքայատոհմին և եղել են Հայոց ընդհանրական քազավորներ և ոչ թե միայն Ծովքի, ինչպես ընդունված է հայագիտության մեջ: - էջ 445:

8. Տվյալ հատվածում, թեև Ստրաբոնի խոսքը վերաբերում է III դ. վերջերի Օրոնտեսին (Երվանդ Վերջին), սակայն Ն. Ադոնցը առաջարկում է հատվածը սրբագրել ի նկատի ունենալով Գավգամելայի ճակատամարտի մասնակից սատրապ Օրոնտեսին (Երվանդ III): - էջ 445:

9. Անտիոքոս III Սելևկյանի (223-187) և ժամանակի հայկական քազավորությունների փոխհարաբերությունների մասին մանրամասն տե՛ս Գ. Խ. Սարգսյան, Անտիոքոս Գ Սելևկյանը և հայկական պետությունները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 1: - էջ 446:

10. Սելևկյանների պետությանը նվիրված ուսումնասիրություններից առանձնանում է Է. Բիկկերմանի ընդհանրացնող մենագրությունը («Государство Селевкидов», М., 1985): Տե՛ս նաև Հայաստանի և Սելևկյանների պետության փոխհարաբերությունների պատմության նվիրված միակ մենագրությունը (Ժ. Գ. Էլչիբեկյան, Հայաստանը և Սելևկյանները, Երևան, 1979): - էջ 447:


11. Ք. ա. 165 թ. հայ-սելևկյան պատերազմի վերաբերյալ առանձին մանրամասներ է հաղորդում IV դարի քրիստոնեական եկեղեցու նշանավոր հայրերից Հիերոնիմոսը, որը դրանք քաղել է III դ. հույն պատմագիր Պորփյուրից: Այդ տեղեկությունների վերլուծությունը տե՛ս Գ. Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966: - էջ 452:

12. Այն տպավորությունն է ստացվում, որ Ն. Ադոնցն արդեն նախապես անդրադարձել է այս հատվածում հիշատակվող գործող անձերին (Տերիաուշմ, Ուդիաստես, Փոքր Հայքի սատրապ Միհրդատ և այլն): «Մենք այն կարծիքն ենք հայտնել», «Մենք առիթն ունեցանք մատնանշելու» արտահայտածները դրա վառ ապացույցն են: Սակայն որտե՞ղ է նա կարծիք հայտնել, որտե՞ղ է մատնանշել, դժվար է որոշակի բան ասել: Առկա նյութն այդ հնարավորությունը չի տալիս: Ուրեմն, ենթադրելի է, որ նա առանձին անդրադարձել է նաև Փոքր Հայքի Ք. ա. IV-II դարերի իրադարձություններին, որոնց մասին եղած նյութը, սակայն, մեզ մնում է անձանոթ: - էջ 456:

13. Խոսքը Սելևկյան Դեմետրիոս I Սոտեր քազավորի (162-150) մասին է: - էջ 456:

14. Կիկերոնի «Ի պաշտպանություն Պուրիոս Սեստիոսի» ճառը, որ արտասանել է 56 թ. փետրվարին, հստակորեն ցուցում է, որ այդ ժամանակ Տիգրան Մեծը դեռևս գործող քազավոր էր՝ «Տիգրանը..., որ այժմ քազավորում է Հայաստանում»: - էջ 457, ծան. 5:

15. Արտաշեսյան արքայացանկի նման տարբերակ, որ միանգամայն հակադիր էր ավանդական արքայացանկին, Ն. Ադոնցն առաջին անգամ բերել է դեռևս 1908 թ. իր «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» ռուսերեն մենագրությունում՝



(տե՛ս **Н. Адоиц**, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, стр. 427-428):

Վերջին տարիներին Արտաշեսյանների ծագումնաբանական ծառի տարբերակներ են առաջարկել Գ. Խ. Մարգարյանը («Свидетельство позднеаввалонской хроники об Армении времён Тиграна II», «Պատմա-բանասիրական հանդես», 1991, № 2), Ռ. Լ. Մանասերյանը («Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ», Երևան, 1987, 2007), Վ. Մաթևոսյանը («Արտաշես Ա-ի և իր հաջորդներու ժամանակագրության մասին», «Հանդես ամսօրյա», 1998, էջ 281-290), Հ. Պ. Հակոբյանը («Տիգրան Մեծ», Երևան, 2005): - էջ 458:

16. Վրիպակ է այդ ժամանակ Կապադովկիայի թագավորն էր Արիոբարզանես I Հռոմեասերը (95-62): - էջ 459:

17. Այս մեջբերումը, թեև անմիջապես չի առնչվում բուն շարադրանքին, բայց լրացուցիչ հանգամանք է մատնանշում, որը, թեևս պետք է զարգացում ունենար «Զննական պատմության» ավարտուն բնագրում: - էջ 459, ծան. 2:

18. Հղելով Փավստոս Բուզանդին՝ Ն. Ադոնցը չի ներկայացրել ասելիքը: Անշուշտ, խոսվելու էր Արշակ II-ի հրամանով սպարապետ Վասակ Մամիկոնյանի կողմից վեց տարի շարունակ Գամիք-Կապադովկիան ասպատակելու և թալանելու մասին (տե՛ս Փաւստոս Բիւզանդ, Դ, գլ. Ժա): Միգուց արեւսներ է փնտրել Տիգրան

II-ի կապադովկիական արշավանքների (93, 92, 74, 67-66 թվականներ) և վերը նշված 350-ական թվականներին Վասակ Մամիկոնյանի կազմակերպած ասպատակության միջև: Երկու դեպքերում էլ խոսքը նույն Կապադովկիան ավերածության ու թալանի ենթարկելու մասին է: - էջ 460, ծան. 8:

19. «Հռոմատյաց» մականվամբ հայտնի հույն հռետոր ու փիլիսոփա Մետրոբորոս Սկեպսիացին եղել է Տիգրան Մեծի պալատական պատմագիրը և գրել «Տիգրանի պատմությունը» վերտառությամբ մի երկասիրություն, որը մեզ չի հասել: - էջ 472:

20. Casus belli (լատիներեն) - պատերազմի առիթ: - էջ 472:

21. Ն. Ադոնցի բնագրում՝ քրմապետ: - էջ 473:

22. Տիգրանակերտի տեղադրության վերաբերյալ ստեղծվել է պատկանելի գրականություն (Կ. Լեման-Հաուպտ, Հ. Կիպերտ, Հ. Տաշյան, Հ. Աստուրյան, Հ. Մանուկյան, Գ. Մարգարյան, Երվանդ Քասունի և այլք): Չմայած այդ հանգամանքին՝ հարցը կարող է լրացուցիչ պրպատումների: Տե՛ս վերջին լավագույն ուսումնասիրությունը, համապատասխան սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների ցուցումներով՝ Բ. Հ. Հարությունյան, Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղադրության հարցի շուրջ, «Հայկազյան հայագիտական հանդես», հատ. ԺԴ, Բեյրութ, 1994: - էջ 477:

23. Ուսումնասիրողները գտնում են, որ այստեղ խոսքը Ամուղարյա (Արաքս) գետի ափերին բնակվող սակառաուկ («սև սկյութներ») կոչվող ցեղերի մասին է: - էջ 478:

24. Սկզբնաղբյուրների ուշադիր համադրության և հատկապես չեզոք պատմագիր Մեմոն Հերակլեսցու «Պոնտական Հերակլեսայի պատմություն» երկասիրության շնորհիվ հնարավոր է որոշել Տիգրանակերտի ճակատամարտի մասնակիցների զինված ուժերի մոտավոր թվաքանակը: Հայկական բանակն ունեցել է առավելագույնը՝ 80 հազար զինվոր, իսկ հռոմեականը՝ 45 հազար, որից հռոմայեցիները՝ 24 հազար հետևակ և 1340 հեծյալ, դաշնակիցները (գալատացիներ, քրակացիներ, մակեդոնացիներ, բյութանացիներ)՝ 20 հազարից ոչ պակաս (տե՛ս Պ. Մապաղյան, Լուկուլլոսի զինվորներուն թիվը Տիգրանակերտի ճակատամարտին (ըստ դրամագիտական տվյալների), «Հայկազյան հայագիտական հանդես», 1973, հատ. Դ, էջ 97-102: Պ. Հ. Հովհաննիսյան, Հայկական բանակը Տիգրան Մեծի օրոք (թվաքանակի խնդիրը). «Հայկական բանակ-15», հանրապետական գիտաժողովի զեկուցումների դրույթներ, Երևան, 2007, էջ 26-27): - էջ 488:

25. Պուրլիոս Կլավդիոսը Լուկուլոսի բանագնաց Ապպիոս Կլավդիոսի ավագ եղբայրն էր, 58 թ. ժողովրդական տրիբուն Հռոմում: - Էջ 495:

26. Dividi et impera (լատիներեն) - Բաժանի՛ր և տիրի՛ր: - Էջ 497:

27. Ակնարկում է պարթևաց Հրահատ III թագավորին: - Էջ 499:

28. Ինչպես արդեն նշել ենք (աստ, էջ 599-600, ծան. 39) Տիգրան Կրտսերը չէր կարող լինել Միհրդատ Եվպատորի բռնը, քանզի 82 թ. որպես զորահրամանատար նա արշավել է Մելկիա, իսկ Տիգրան Մեծի և Կլեոպատրայի ամուսնությունը կարող էր տեղի ունենալ 94 թ. ոչ շուտ, այսինքն՝ նրանց զավակ լինելու պարագային Տիգրան Կրտսերը 82 թ. կարող էր լինել ընդամենը 12 տարեկան: - Էջ 499:

29. Տիգրան Կրտսերի կերպարի և գործունեության աղոմցյան գնահատականները լինելով չափազանց ինքնատիպ, այնուհանդերձ, կարոտ են լրացուցիչ փաստարկումների: Մուշեղ Իշխանը, որը 1940 թ. եղել է Ն. Աղոմցի սանը Բրյուսելի համալսարանում, իր ուսուցչապետին նվիրված հուշերում գրում է, թե իրենց անձնական գրույցներից մեկի ժամանակ պրոֆեսորը «Տիգրան Կրտսերին կը նկատեր հաշտարար քաղաքականության կուսակցապետ, ով երբ տեսավ, թե Պոմպեոսը մեկ կողմն է և անոր դաշնակից պարթևները մյուս կողմն Տիգրան Մեծը առին երկու կրակի միջև, գնաց հռոմեացիներուն հետ հաշտություն կնքելու» (Մուշեղ Իշխան, Պրոֆ. Նիկողայոս Աղոմց. հուշեր և տպավորություններ, տե՛ս Մուշեղ Իշխան, Երեք Մեծ հայեր, Բեյրութ, 1952, էջ 15-16): Ի դեպ, նկատենք, որ նույն 1940 թ. է Աղոմցը շարադրել «Քննական տեսության» մեզ հետաքրքրող հատվածները:

Տիգրան Կրտսերի հետագա ճակատագրի վերաբերյալ տե՛ս լեհ պատմաբան Թ. Լուպոլկոյի «Об интересе римского народного трибуна к армянским делам» հոդվածը («Բանբեր Երևանի համալսարանի», 1980, № 3): - Էջ 504:

30. Ad hoc (լատիներեն) - Տվյալ առիթով: - Էջ 506:

31. Անկասկած է, որ եթե Պոմպեոսի պոնտական և անդրկովկասյան երթուղիների ուսումնասիրությամբ հանդես եկած Հ. Հ. Մանանդյանը («Маршруты понтийского похода Помпея и путь отступления Митридата в Колхиду, տե՛ս «Вестник древней истории», 1940, № 3-4) և Ստ. Լիսիցյանը («Պոմպեոսի ուղին Անդրկովկասում», տե՛ս Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հատ. XXIII, Երևան, 1946) ծանոթ լինեին Ն. Աղոմցի այս հետաքրքիր եզրահանգումներին, ապա նրանք ավելի ճշգրտորեն ու առարկայորեն կարող էին վերարտադրել այդ արշավանքների երթուղիները: - Էջ 507:

32. Համապատասխանաբար 50 միլիոն և 85 միլիոն դրամ: - Էջ 509:

33. Կարծիք է հայտնվել, թե Պլուտարքոսի բնագրի այս հատվածն աղճատված է և խոսքը վերաբերում է ոչ թե Տիգրան Մեծի, այլ Տիգրան Կրտսերի կնոջը (տե՛ս Հ. Պ. Հակոբյան, Տիգրան Մեծ, Երևան, 2005, էջ 193): - Էջ 509:

34. Տիգրան II-ին նման գնահատական է տվել նաև վաղ կայսերական ժամանակաշրջանի պատմագիր Վելլետո Պատերկուլոսը՝ «Ժամանակի հզորագույն թագավոր», «Քաղաքագրներից մեծագույն» (տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հատ. 1, Երևան, 2007, էջ 361):

Այժմ տպագրվող այս բնագիրը, որ գրվել է ուղիղ 70 տարի առաջ, ցավոք, անժամոք է մնացել պատմաբաններին և եթե բարեպատեհ առիթ լիներ գրվելուց հետո այն տպագրելու, ապա Արտաշեսյանների պատմաշրջանի շատ իրողություններ այսօր այլ կերպ կմատուցվեին ու կմեկնաբանվեին:

Ն. Աղոմցը Տիգրան II Մեծին է նվիրել նաև նույն 1940 թվականին գրված «Միհրդատ Եվպատոր և Տիգրան Մեծ» նոթը (տե՛ս Ն. Աղոմց, Երկեր, հատ. Ա, Երևան, 2006, էջ 156-168): Չնայած ակնհայտ աղերսակցությանը, երկուսն էլ ինքնուրույն, անկախ երկասիրություններ են: Եվ ընդհանրապես, հրատարակվող բնագրի ուշադիր ընթերցումը թողնում է այն տպավորությունը, որ գործ ունենք նախնական մի տարբերակի հետ, որը պետք է հետազոյում վերախմբագրվեր ու վերաշարադրվեր: Բայց դա, հասկանալի պատճառներով, տեղի չի ունեցել:

Բացի արդեն տպագրված բնագրից, պատմաբանի թողնում առկա են նաև նույն թեմային նվիրված «Լուկուլոսի և Պոմպեոսի արշավանքները Հայաստան ըստ Դիոն Կասիոսի» թերի ուսումնասիրությունը (20 էջ), ինչպես նաև «Տիգրան Մեծն ըստ Մոմզենի և Ռեյնաքի» (40 էջ), «Անտիկ սկզբնաղբյուրներից քաղված վկայություններ Տիգրան Մեծի վերաբերյալ» (60 էջ): Բոլորն էլ ֆրանսերեն են, սևագիր (տե՛ս պրոֆ. Ն. Աղոմցի ֆոնդ, պահարան I, զգրոց Բ, թղթածրար 2): - Էջ 509:

II. ԿՐԱՍՍՈՍՆ ԸՆԴԴԵՄ ՊԱՐԹԵՎՆԵՐԻ (Ըստ սկզբնաղբյուրների)

(էջ 513)

Գրված է 1940-1941 թվականներին, Բրյուսելում: Ֆրանսերեն բնագիրը գտնվում է Համազգայինի Բեյրութի պահոցի պրոֆ. Ն. Աղոմցի ֆոնդում (պահարան I, զգրոց Բ, թղթածրար 2): Բնագիրը, որն ունի 23×30 սմ մեծություն, գրված է 11 թերթիկների վրա: Լինելով սևագիր տարբերակ, գրված է անփույթ ձեռագրով, ուղեկցող հապավումներով ու ջնջումներով:

Տպագրվում է Ս. Ս. Խաչատրյանի թարգմանությամբ:

Ներկայացված բնագիրը կանոնավոր շարադրանք չէ, այլ նախապատաստական նյութ՝ «Քննական պատմության» շարադրվելիք երկրորդ հատորի համար: Այս և հաջորդ նյութը հրատարակում ենք, որպեսզի պատկերացում կազմվի Ն. Ադոնցի ստեղծագործական լաբորատորիայի, պատմության շարադրման նրա մեթոդի, աշխատանքի, դրա փուլերի մասին: Թեև այս բնագրում վերլուծական կողմը թերի է, սակայն հաճախ պատմաբանն արտահայտում է տեսակետներ, որոնք չափազանց կարևոր են տեղի ունեցող իրադարձություններն ըմբռնելու, ճիշտ գնահատելու և կողմնորոշվելու համար:

Այսպիսով, այս բնագրերն ատաղձ են առավել ամբողջական պատմություն շարադրելու ճանապարհին: Դրանք, ինչպես Ադոնցի յուրաքանչյուր տող, նախադասություն, միտք ունեն ազգային-մշակութային արժեքի ճշմանակություն և հետևաբար թանկ են ու անգնահատելի:

1. Կրասսոսի Պարթևական արշավանքի գաղափարը պաշտպանել է Հուլիոս Կեսարը, որը Գալլիայից հատուկ նամակով հավանություն է տվել դրան: Դեռ ավելին, Կրասսոսի որդուն՝ Պուլիոսին, որն իր մոտ էր ծառայում, 1000 ընտիր հեծյալների ուղեկցությամբ ուղարկել է Կրասսոսին օգնության (Plut., Crass., 16-17): - Էջ 514:

2. Հիերապոլիսի (Սրբազան քաղաք) հովանավոր դիցուհին Դերկետոն էր: - Էջ 514:

3. Անգամ Պլուտարքոսն է խոստովանում, որ Կրասսոսի հակազդեցությունը Արտավազդ II-ի դիրքորոշման նկատմամբ «անխտեմ էր» (Plut., Crass., 22): - Էջ 515:

4. Եվրիպիդեսի «Բաքոստիհներից» այս հատվածը Ն. Ադոնցը հունարենից թարգմանել է ֆրանսերեն, իսկ մեր թարգմանիչն այն վերաթարգմանել է հայերեն, և, բնականաբար, բուն բնագիրն ինչ-որ չափով աղճատվել է: Համեմատության համար բերում ենք «Բաքոստիհների» Ա. Թովչյանի հին հունարենից կատարված թարգմանությունը՝

Ազավե

Մենք լեռներից տուն ենք բերում
Նոր կտրված այս քաղեղը,
Այս ավարը երանելի:

Երգչախումբ

Ո՞վ հարվածեց առաջինը:

Ազավե

Ե՛ս, և ի՛մն է այդ պատիվը:

Տե՛ս Եվրիպիդես, Բաքոստիհներ. Հին հունարենից թարգմանեց Արամ Թովչյանը, Երևան, 1995, էջ 57: - Էջ 521:

5. Ուսումնասիրողների կարծիքով ակնարկը Հայոց թագավոր Արտավազդ II-ի մասին է: Արտավազդի ժամանակաշրջանի Հայոց պատմության վերաբերյալ վերջին լավագույն ուսումնասիրություններից տե՛ս Գ. Խ. Սարգսյանի «Հայաստանը Արտավազդ Բ-ի և նրա հաջորդների ժամանակաշրջանում»՝ «Հայ ժողովրդի պատմության» I հատորում (Երևան, 1971) գետեղված բաժինը (էջ 603-626) և Ռ. Լ. Մանասերյանի՝ «Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ» մենագրությունը (Երևան, 1997): - Էջ 521:

6. Էքստոզս - Ողբերգության ավարտական՝ բեմից «դուրս գալու» երգը: - Էջ 521:

7. Սուրենն սպանվել է Օրոդես II-ի (57-38) կարգադրությամբ, որը նախանձում էր իր գորավարի վաստակած փառքին և երկյուղում, թե վերջինս կարող էր գրավել գահը: - Էջ 521:

8. Բակուրը սպանվել է 38 թ.՝ հռոմեացիների դեմ Հյուսիսային Սիրիայում մղված ճակատամարտերից մեկի ժամանակ: - Էջ 521:

9. Հմմտ. 612-րդ էջ, ծան. 4: - Էջ 522:

10. Հավանաբար «Կրասսոսն ընդդեմ պարթևների (ըստ սկզբնաղբյուրների)» հատվածի շարունակությունն է կազմել «Մարկոս Անտոնիոս» 12 էջանոց ֆրանսերեն թերավարտ ուսումնասիրությունը (տե՛ս պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան I, զգրոց Բ, թղթածրար Ա/7: - Էջ 522:

III. [ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՈՈՄԵԱ-ՊԱՐԹԵՎԱԿԱՆ
ՀԱԿԱՍՏԱՐՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
(Ք. հ. II դ.-III դ. սկզբը)]

(էջ 523)

Գրված է 1940-1941 թվականներին Բյուսեյում: Ֆրանսերեն բնագիրը գտնվում է Համազգայինի Բեյրութի գրական պահոցի՝ պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդում (պահարան I, զգրոց Բ, թղթածրար 2):

Բնագիրը, որն ունի 23×30 սմ մեծություն, գրված է 15 թերթիկների վրա: Տպագրվում է Ս. Ս. Խաչատրյանի թարգմանությամբ:

Տպագրության հանգամանքների մասին տե՛ս աստ, էջ 611:

II-III դարերի իրադարձություններին նվիրված այս նյութից բացի, թողնում առկա են նաև Ք. հ. I դարի Հայոց պատմությանը վերաբերող «Հայ Արշակունիների թագավորության կազմավորումը. Ք. հ. 12-66 թթ.» (ֆրանսերեն, 40 էջ), «Հայ-պարթևական հարաբերությունները. Ք. հ. 16-

66 քք.» (Ֆրանսերեն, 60 էջ), «Տրդատ I Արշակունու ճանապարհորդությունը Հռոմ և Արտաշատի նորոգումը» (Ֆրանսերեն, 7 էջ) նյութերը, որոնց հրատարակումը նպատակահարմար չգտանք՝ բազմաթիվ էջերի կորուստների պատճառով: Այնուհանդերձ, իրողությունն ապացուցում է, որ սա այն պակասող օղակն է, որ նկատվում է Ք. ա. IV-I դարերի և Ք. հ. II-III դարերի միջև:

1. Խոսքը ռազմի աստված Էմիևի (Արես) տաճարի մասին է: - էջ 523:
2. Նկատի ունի Պարթևաց Վաղարշ III թագավորին (148-191): - էջ 523:
3. Հայաստանի Ելեգիա, քնակավայր Կարինի մոտ, այժմ՝ Իլիջա: - էջ 523:
4. Սոհեմոսը Ասորիքի Էմեսա քաղաքի արքայիկն էր և շատավիղը Երվանդունյաց արքայատոհմի: Հայաստանում գահակալել է Տիգրան անվամբ (140-161, 164-185): - էջ 524:
5. Խոսքը Արտաշատի փոխարեն Հայաստանի մայրաքաղաք հռչակված Վաղարշապատի մասին է: - էջ 525:
6. Հայոց թագավոր Բակուր I Արշակունի (161-163): Գահընկեց արվելուց հետո տեղափոխվել է Հռոմ, որտեղ ընդունել է «Ավրելիոս» կայսերական պատվանունը: - էջ 526:
7. Ուսումնասիրողների կարծիքով այս սատրապ (նախարար) Տրդատը Մովսես Խորենացու հիշատակած (գիրք Բ, գլ. կգ) Տրդատ Բագրատունին է: - էջ 526:
8. Խոսքը Պարթևաց Վաղարշ IV արքայի (191-208) մասին է: - էջ 528:
9. Ալեքանդրում է Հայոց Խոսրով I թագավորին (198-216): - էջ 529:
10. Այս հատվածում խոսքը վերաբերում է Վաղարշ V-ին (208-215): - էջ 529:
11. Հավանաբար խոսքը Հայոց թագավոր Խոսրով I-ի որդի Տրդատ II-ի (217-252) մասին է: - էջ 530:
12. Խոսքն, անշուշտ, Կապադովկիայում գտնվող հայ Արշակունիներին պատկանող կավածքների մասին է: - էջ 533:
13. Ալեքանդր վերաբերում է ամենամյա այն գումարին, որ հռոմեացիները վճարում էին Հայոց թագավորին՝ Կովկասյան անցքերի պաշտպանության համար (տե՛ս J. Marquart, *Eranšahr nach der Geographie des Ps.-Moses Xorenac'i*, Berlin, 1901, էջ 95): - էջ 533:

14. Իրադարձությունները վերաբերում են 224-226 քք., երբ Արտաշիր Սասանյանը տապալելով Արտավան V Արշակունուն, Պարսկաստանում հաստատեց Սասանյանների արքայատոհմը: - էջ 533:

IV. ԲՅՈՒՋԱՆԴԱ-ՊԱՐԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

(V դարի վերջ - VI դարի կես)

(էջ 535)

Գրված է 1940-1941 թվականներին, Բրյուսելում: Ռուսերեն քնագիրը գտնվում է Համազգայինի Բեյրութի գրական պահոցի պրոֆ. Ն. Աղոնցի ֆոնդում (պահարան I, գրքոց Ժ, թղթածրար Ա-8):

Բնագիրն ունի 23×30 սմ մեծություն, գրված է 96 վանդակավոր թերթիկների վրա:

Տպագրվում է Օ. Ս. Վարդապարյանի թարգմանությամբ:

Տպագրության հանգամանքների մասին տե՛ս աստ, էջ 611:

1. Նկատի ունի ճորս պահակը: - էջ 537:

2. Այստեղ և այնուհետև Հռոմ, Հռոմեական կայսրություն, հռոմայեցիներ անվանումները պետք է հասկանալ Բյուզանդիա, Բյուզանդական կայսրություն, բյուզանդացիներ: - էջ 537:

3. Նկատի ունի 363 թ. կնքված «Ամոթայի» պայմանագիրը: - էջ 538:

4. Ն. Աղոնցի առաջարկած թարգմանության տարբերակներն են՝ ա. «նեղ սկզբուն», բ. «Կովկասյան լեռների սկզբի նեղ գոտում»: Անշուշտ, խոսքը Դերբենդի մասին է: - էջ 539:

5. Ն. Աղոնցն առաջարկում է նաև «քաժանվուն» տարբերակը: - էջ 539:

6. Ն. Աղոնցն առաջարկում է նաև «անհայտ» տարբերակը: - էջ 539:

7. Հեղինակային թարգմանությունը բառացի չէ: - էջ 540:

8. Ամրոցի անվանումը տարբեր հեղինակների կողմից տարբեր կերպ է արտասանվում. *Ἰουρελααχ* (Const. Porph.), *Βιραπαράχ* (Jo. Lydus): - էջ 541:

9. «Սատրապական համազգեստ» - Բյուզանդական կայսրության կազմում գտնվող հարավ-արևմտյան հայկական նահանգներն անվանվում էին սատրա-

պություններ (թվով հինգ), իսկ նահանգի կառավարիչ-նախարարը՝ սատրապ: Պրոկոպիոս Կեսարացին արժեքավոր ու եզակի վկայություն ունի սատրապներին տրվող նշանակների ու համազգեստի մասին. «Ինչ վերաբերում է Մյուս Հայքին, որ գտնվում է Եփրատ գետից այս կողմ և տարածվում է մինչև Ամիդ քաղաքը, այնտեղ իշխում էին հինգ հայ սատրապներ, որոնց իշխանությունը ժառանգական էր և ցմահ: Նրանք հռոմայեցիների կայսրից ստանում էին միմիայն նշանակներ: ... Դա բրոյա քղամիդ էր, սակայն ոչ թե ոչխարի բրոյից, այլ ծովից հավաքված: Այդ բուրդը բուսնում է պինճու կոշված ծովային կենդանիների վրա: Ծիրանիի այն մասը, որի վրա սովորաբար գցվում էր բեհեզը, ոսկուց էր: Քղամիդի վրա ամրացված էր լինում ոսկե ճարմանդ՝ մեջտեղում թանկագին քար: Այդ ճարմանդից ոսկե շրթառով կախվում էր երեք հակիճք: [Քղամիդից բացի] կար նաև մետաքսյա պատմուճան, ամենուրեք պաճուճված ոսկե զարդերով, որոնց պլումիա են անվանում, և մինչև ծունկը հասնող կարմիր կոշիկներ, որոնք սովորաբար հագնում են հռոմայեցիների և պարսից թագավորները» (տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին»): 5. Բյուզանդական աղբյուրներ. Ա. Պրոկոպիոս Կեսարացի, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 190-191): Սատրապական Հայաստանի մասին մամրամասն տե՛ս **Н. Адошц, Армения в эпоху Юстиняна. Политическое состояние на основе нахарарского строя, СПб., 1908, стр. 28-45:** - էջ 544:

10. Ն. Աղոնցի բնագրում՝ էջի ներքևի մասում անկյունագծով առկա է հետևյալ նշումը. «**Արշը՝ Արգանենե, ինքնավար սատր:**» - էջ 548, ծան. 2:

11. Նախադասության շարունակությունը ջնջված է հեղինակի կողմից: - էջ 559:

12. Պրոկոպիոսի երկում. **ἐς χωρίον μὲν Ἀτταχᾶς ἦλθον:** - էջ 559, ծան. 2:

13. Ծանոթագրությանը կից Ն. Աղոնցը մատիտով ավելացրել է՝ «Գուցե Բոլսի՝ Իսակիոս [Կամսարականի] օրոք գրավման տարբերակն է, ինչպես հայտնում է Պրոկոպիոսը»: - էջ 560, ծան. 1:

14. Այդ բարեփոխումների մասին մամրամասն տե՛ս Ն. Աղոնցի «**Армения в эпоху Юстиняна**» մեծագրության 6-8-րդ գլուխները: - էջ 564:

15. Փառանգիոնի ոսկու հանքերի մասին տե՛ս Ն. Աղոնց, Հայաստանի ոսկե-հանքը (Ն. Աղոնց, Երկեր հինգ հատորով, հատ. Ա, Պատմագիտական ուսումնասիրություններ, աշխատասիրությամբ՝ Պ. Հ. Հովհաննիսյանի, Երևան, 2006, էջ 141-155): - էջ 564:

16. Խոսքը վերաբերում է 481-484 թթ. հակապարսկական ապստամբության առաջնորդ Վահան Մամիկոնյանին: - էջ 564:

17. Հաջորդող նախադասությունը ջնջված է, սակայն հնարավոր է ընթերցել՝ «**Պրոկոպիոսը նրանց անվանում է տոհմական տիտղոսով՝ Ἀσπετιανοί, ձևի փոխարեն, ըստ նրանց ժառանգական «ասպետ» պաշտոնի:**» - էջ 566:

18. Նկատի ունի Հայոց Արշակ III թագավորին (378-389): - էջ 569:

19. Այդ ակտը հավանաբար տեղի է ունեցել 389 թվականին: - էջ 569:

20. Խոսքը Թեոդոսիոս I Մեծի (379-395) մասին է: - էջ 569:

21. Բնագրի տվյալ էջի լուսանցքում Ն. Աղոնցը տվել է Բյուզանդական Հայաստանի կառավարիչների հետևյալ ցանկը՝

1. Համազասպ [մինչև 536 թվականը]
2. Ակակիոս 536-538
3. Միտտաս 538
4. Բուզես 539

Նույնը կրկնվում է նաև ստորին լուսանցքում: - էջ 569, ծան. 2:

22. Ինչպես ակներև է Ն. Աղոնցի թողոնի նյութերից, նրան շարունակել է հետաքրքրել հայ Արշակունիների ճակատագիրը՝ Հայաստանի առաջին բաժանումից (387) և պետականության անկումից (428) հետո: Պատմաբանը ձեռնարկել է «Վերջին հայ Արշակունիների ճակատագիրը» խորագիրը կողմ հատուկ ուսումնասիրության ստեղծմանը, որից ցավոք թողոնում առկա է ընդամենը մեկ էջ (տե՛ս Համազասպի Ռեյրոթի գրական պահոց, պրոֆ. Ն. Աղոնցի ֆոնդ, պահարան Ժ, գրքոց Ա, թղթածրար 8): Հնարավոր չէ անգամ ենթադրել, թե ի՞նչ ծավալ է ունեցել անհետացած այդ աշխատությունը, պատմաբանը կարողացել է կատարել իր առջև դրված խնդիրը, թե ոչ: Միայն հայտնի է, որ ժամանակին (1929) նա հատուկ ուսումնասիրություն է ցվիրել վերջին Արշակունիներից Արտավանին (տե՛ս էջ 619, ծան. 29): Բացի այդ, Ն. Աղոնցի թողոնում առկա է «Հուտտիանոսի ժամանակաշրջանի նշանավոր հայերը» ռուսերեն անավարտ մի աշխատանք (ձեռագիր, 70 էջ) բաղկացած հետևյալ բաժիններից՝

1. Արտավազդ Մամիկոնյան
2. Արտավան Արշակունի
3. 548 թ. դավադրությունը
4. Ներսես և Իսահակ Կամսարականներ

5. Վարագտիրոց [Բագրատունի]
6. Հայկական հեծելազորը Իտալիայում
7. Իսահակ Կամսարականն ու նրա բանակը
8. Գլակ Հայ
9. Հովհաննես Արշակունի

(տե՛ս Համազգայինի Բեյրութի գրական պահոց, պրոֆ. Ն. Ադունցի ֆոնդ, պահարան Թ, գրոց Ա, թղթածրար 8):

Ընդգծումներն անմիջապես աղերսվում են վերջին Արշակունիներին և հետևաբար կարող էին մաս կազմել ցավալիորեն կորսված «Վերջին հայ Արշակունիների ճակատագիրը» աշխատության: - էջ 571:

23. Մույն և ստորև բերվող մյուս հատվածները տրվում են Հր. Բարթիկյանի թարգմանությամբ (տե՛ս Պրոկոպիոս Կեսարացի, էջ 83-85): - էջ 573, ծան. 1:

24. Նույնը՝ էական տարբերություններով, լայն թողնված լուսանցքի վրա՝ «Խոսքովն իր հերթին գերիներ է տանում: Կարբեի և Կոստանդինի բնակիչները զգալի դրամ բերեցին: Հասնելով Դարա, նա համայրեց զումարը: Հռոմեացիները Մարտինոսի հրամանատարությամբ եռանդուն դիմակայում էին: Խոսքովը, չհուսալով հասնել հաջողության, բանակցություններ սկսեց պաշարվածների հետ, ստացավ 1000 լիտր արծաթ և հեռացավ իր երկիրը: Ամառն արդեն վերջանում էր, այսինքն՝ 540 թվականի» (Proc., Pers. II, 13):

Սուրոնի գերիների համար 200 [լիտր] ոսկի,
 Հիերապոլիս՝ 2000 [լիտր] արծաթ,
 Վերիա՝ 2000 լիտր արծաթ,
 Անտիոք՝ կողոպտված է (10.000),
 Խաղաղության համար՝ 5000 լիտր ոսկի,
 Ապամեա՝ կողոպտված է,
 Քաղկիս՝ 200 ոսկի,
 Եղեսիա՝ 200 ոսկի,
 Դարա՝ 1000 ոսկի:

Ընդամենը՝
 5600 լիտր ոսկի
 5000 լիտր արծաթ
 10.000 (Անտիոք): - էջ 577:

25. Շարադրանքն այստեղ ընդհատվում է: - էջ 577:

26. Ն. Ադունցի բնագրում ճառը բացակայում է: Տրվում է ըստ հղման (թարգմանությունը՝ Հր. Բարթիկյանի, տե՛ս Պրոկոպիոս Կեսարացի, էջ 116-118): - էջ 579:

27. Մատիտով ավելացված է՝ «nabed» - նահապետ, nahadar - նախարար: - էջ 583, ծան. 1:

28. Շարադրանքն ընդհատվում է և պայմաններին վերաբերող հատվածը չի տրվում: - էջ 584:

29. Ն. Ադունցը Արտավան Արշակունու հետագա գործունեությանն է նվիրել հատուկ ուսումնասիրություն (տե՛ս Ն. Ադունց, Երկեր, հատ. Ա, էջ 198-217): - էջ 589:

30. Ստորին լուսանցքում՝ մատիտով դարձյալ շեշտվում է նույն նախադասությունը. «Նավեղեսը Դվինում աթոռանիստ ունեցող Հայոց կաթողիկոսին ուղարկեց Վալերիանոսի Բյուզանդական Հայաստանի զորահրամանատարի մոտ»: - էջ 589:

31. Այդ ժամանակ Հայոց կաթողիկոսն էր Քրիստափոր Ա Տիրառիջցին (539-545): - էջ 589:

32. Խոսքը հավանաբար Մաղկոտն գավառի Անզղ գյուղաքաղաքի մասին է: - էջ 591:

Յ Ա Ն Կ Ե Ր .

* Կազմեցին Օլգա Վարդապետյանը և Զրիտինե Յախչյանը:

ԱՆՉՆԱՆՈՒՆՆԵՐԻ

- Արգար II, Օսրոննի թագավոր - 513, 529
 Արգար VIII, Օսրոննի թագավոր - 559
 Արել L. - 116
 Արեղյան Ա. - 602
 Արիանի(նի), իշխան - 239
 Արիդենոս (Աբյուդենոս), մատենագիր - 153-155
 Արրադատաս, թագավոր - 369
 Արրահամ, Աստվածաշնչ. - 163
 Արուլիտես, Օքսաթրեսի հայր - 432
 Ազաթանգեղոս - 347, 350, 354, 420-422
 Ազավե, առասպ. - 520, 521, 612
 Ազդիստիս, դից. - 412, 413, տե՛ս Ազդեստիս
 Ազուսի, անձնանուն - 112
 Ազուսի, թագավոր - 100
 Ադա-Իդրի, թագավոր - 111
 Ադադ, դից. - 105, 106, 109, 113, 256, 422
 Ադադ-Էզեր, թագավոր - 100
 Ադադ-Նիրարի (Ադադնիրարի) I, թագավոր - 49, 55, 74, 75, 88, 92, 93, 116-118, 127, 229, 330
 Ադամյան Հ. - 7
 Ադերգուդունբադես, զորավար - 559
 Ադինի, թագավոր - 100
 Ադուլիս, Ակակիսի որդի - 566, 568, 586, 591
 Ադոնիս, դից. - 417, 421
 Ադոնց Ն. - 5-18, 21, 22, 25-30, 176, 424-427, 593-613, 615-619
 Ադրամելեք (Ադրամելոս, Ադրամելոս, Արդի, Արադ-Նիցիլի), արքայագն - 153-155
 Ադրաստոս, առասպ. - 343
 Ազա, թագավոր - 125, 126, 229
 Ազարեք, պարսից զորավար - 558
 Ազնավուրյան Գ. - 15
 Աբարա, դից. - 417, տե՛ս Իշտար
 Աթարգատիս, դից. - 414, 417, տե՛ս Աստարտե, Իշտար
 Ածդահակ - 363, 371, տե՛ս Աստիագես
 Ալամունդարոս, թագավոր - 557, 558, 562, 563, 572, 584
 Ալբինոս, կեսար - 528
 Ալդի, դից. - 256, 349
 Ալեքսանդր, Ալեքսանդր Մեծի որդի - 439, 446
 Ալեքսանդր Մեծ Մակեդոնացի - 19, 340, 350, 352, 357, 431, 433-436, 440, 447, 530, 605
 Ալիաթթես (Ալիատես), թագավոր - 317, 322, 335
 Ալիպիս (Օլիմպիս), դուքս - 545
 Ակետաս, Պերդիկկասի եղբայր - 437
 Ախատաբիշա, արքայադուստր - 140, 342
 Ախշերի, թագավոր - 159, 160, 164, 229, 321, 323, 328
 Ախունի, թագավոր - 100
 Ակակիս, Բյուզանդական Հայաստանի կառավարիչ - 565, 566, 568-570, 586, 591, 617
 Ակդեստիս, դից. - 411, 412, տե՛ս Ազդիստիս
 Ակինյան Ն. - 7
 Ակուսիլոքոս, մեծատոհմիկ - 449
 Ահուրամազդա, դից. - 381
 Աճառյան Հր. - 599
 Ամալասուստա, թագուհի - 562
 Ամբազուկ, հոգեբան տիրակալ - 549, 551

Ամբարիդ, թագավոր - 140
Ամբրիս, Խուլիի որդի - 342
Ամենֆիս III, փարավոն - 54, 299
Ամիտաշի, թագավոր - 126
Ամմարապի (Ամմարա'ալ), թագավոր - 93, 95
Ամմունա, թագավոր - 52
Ամյունտաս, զորավար - 436, 441,
Ամփիկրատես, հռետոր - 95, 471, 476
Ամփիմաքոս, զորավար - 438
Անալուկուն, կուսակալ - 151
Անահիտ, Անահիտիս, դից. - 410, 419,
420, 474
Անանուն, մատենագիր - 414
Անաստասիոս, կայսր - 536, 537, 539,
540, 543, 545, 546, 549-551
Անատոզադ, ապստամբ - 590
Անատոլիոս, զորավար - 540, 550
Անարիակայի պատգամախոս - 357
Անդարիա, կուսակալ - 164, 231
Անդրեաս, մատենագիր - 347
Անդրեաս Ֆ., պատմաբան - 133, 354
Անդրոմաքոս, Կրաստոսի ուղեկից -
520
Անքարատլի, թագավոր - 72
Անիավեղես, զորավար - 581
Անիլիոնոս, զորավար - 528
Անիկու, դից. - 212
Անիտոս, թագավոր - 51
Անիստի Շուպրիացի, թագավոր - 95,
113, 162
Անմաիլա, թագավոր - 48
Աննիա, թագավոր - 62-64, 69
Անտիգենես, ժառանգորդ - 438
Անտիգոնոս, Ալեքսանդր Մեծի զորավար - 357, 358, 434-441
Անտիոքիս, Անտիոքոս IV-ի քույր -
450, 451, 453, 454
Անտիոքոս, փախստակ - 530, 531
Անտիոքոս, Փիլիպպոս I-ի որդի - 460
Անտիոքոս I Երվանդունցի, Կոմմագենի թագավոր - 443, 606
Անտիոքոս III Մեծ, թագավոր - 445,
446, 450, 607

Անտիոքոս IV Եպիփանես, թագավոր
- 446, 449, 450-453, 479
Անտիոքոս Հիերաքս, Սելևկոս II-ի
եղբայր - 442, 443
Անտիպատրոս, Ալեքսանդր Մեծի
ժառանգորդ - 436-439
Անտիպատրոս, մատենագիր - 352
Անտոնինոս Պիոս, Հռոմի կայսր -
523, 524
Անտոնիոս, տե՛ս Մարկոս Անտոնիոս
Անտոնյան Ա. - 10
Անուշավան, նահապետ - 415
Անքիալոս, թագավոր - 527
Աշինոտ, անձնանուն - 177
Աշտուր (Աշուր), դից. - 87, 99, 102,
105-107, 110, 113, 127, 130, 131,
135, 144, 160, 161, 165, 166, 195,
231, 248, 256, 262, 302, 373
Աշտուրի, թագավոր - 125, 126
Աշտուրնասիրպալ III, թագավոր - 78,
259
Աշուտ, անձնանուն - 177
Աշուտ II Երկաթ, թագավոր - 20
Աշտուախիմի, իշխան - 235
Աշրուտ, անձնանուն - 177
Աշուրբանիպալ, թագավոր - 138, 154-
156, 163-169, 214, 225, 231, 322,
328, 332, 334, 336, 344, 373
Աշուրբելվալա, թագավոր - 90
Աշուր-բելու-դան, կուսակալ - 150,
151
Աշուրդան, զորավար - 330
Աշուրդան, թագավոր - 119, 220
Աշուրդուպպու, թագավոր - 123
Աշուրետիլիանի, թագավոր - 169
Աշուր-իլու-մուրալլիծու, թագավոր -
153
Աշուրնադիմշուն, փոխարքա - 153,
155
Աշուրնասիրպալ II, թագավոր - 41,
93-96, 98-101, 113, 214, 216, 217,
230, 247, 341, 390, 393
Աշուրնիրարի III, թագավոր - 219-
221
Աշուրնիրարի V, թագավոր - 119, 213

Աշուր-շուն-ուշաքշի, թագավոր - 153
Աշուր-շիսուա, կուսակալ - 138-140,
150, 151, 243
Աշուրուբալլիա (Աշտուրբալլիա) II, թագավոր - 55, 74, 169, 314, 325-327
Ապամ (Նապատ), դից. - 355
Ապիոն, պալատական - 546
Ապոլլոն, դից. - 410
Ապոլլոնիոս, Ջենոդոտիա քաղաքի
տիրակալ - 514
Ապոլլոնիոս Հոդոսցի, բանաստեղծ -
308, 312
Ապալիանոս, պատմագիր - 483, 484,
494
Ապալիոս Կրավդիոս, Լուկուլոսի
աներորդի - 457, 465-467, 469-
473, 483, 610
Ասարիսարդոն (Ալ'սերդիս), թագավոր - 48, 81, 86, 153-165, 170, 214,
231, 240, 320-323, 328, 332, 334,
336
Ասաու, թագավոր - 107, 112, տե՛ս
Մաու
Ասքիբարես, մարերի առաջնորդ -
336
Ասիա (Ասիե), թագավոր - 110, 112,
տե՛ս Սիե-նի
Ասկանիոս, առասպ. - 341
Ասողիկ, պատմագիր - 84, 388
Ասպանդա, մարերի առաջնորդ - 336
Ասպերեղես (Ասպերեղ), զորավար -
549, 550, 559
Աստարտե, դից. - 414, 417, տե՛ս Իշ-
տար, Աթարգատիս
Աստիագես (Աժդահակ), մարաց թագավոր - 328, 332, 333, 335-337,
362-364, 371, 598, տե՛ս Իշտու-
վեգու
Աստուրյան Հ. - 609
Ասու, թագավոր - 102
Ասքանագ, Աստվածաշնչ. - 345-347,
տե՛ս Իշկուզի (Իշկուզգի)
Ավետիսյան Հ. Մ. - 596
Ավդիոս Կասսիոս, քվեստոր - 513,
523, տե՛ս Կասսիոս

Ավրելիոս, պատվանուն - 614
Ավրելիոս Կամմոդոս Անտոնինոս,
Հռոմի կայսր - 526, 531
Ավրելիոս Պակորոս - 526, տե՛ս
Բակուր I
Ատեյոս, տրիբուն - 514
Ատիս, դից. - 412-415, 417, 418, 421,
422
Ատիս, Կրեստոսի որդի, առասպ. - 343
Ատոսաս, Բարդիսյայի քույր և կին -
377
Ատտի, դից. - 422
Ատտիդիոս Կորնելիանոս, Ասորքի
կառավարիչ - 524
Ատրոպատես, զորավար - 432, 436
Արա Գեղեցիկ, նահապետ - 118, 413-
416, 418, 421
